

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՄԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

***Միրելի Աշակերտի Հիշողությունները
և Նամակները
Հովհաննեսի Ավետարանը,
Հովհաննեսի I, II և III Նամակները***

ԲՈՒ ԱԹԼԻ
ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ
(ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

*ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, ՀԱՏՈՐ 4*

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ, ՄԱՐՇԱԼ, ՏԵԽԱՍ
2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի խոսքը: Ինչպե՞ս կարող է այս մեկնաբանությունը օգնել ձեզ.....	5
Աստվածաշունչը ճիշտ կարդալու ուղեցույց:Ստուգված ճշմարտության ինքնուրույն ուսումնասիրություն...7	
Մեկնաբանություն	
Հովհաննեսի Ավետարանի Ներածություն.....	15
Հովհաննես 1.....	23
Հովհաննես 2.....	57
Հովհաննես 3.....	72
Հովհաննես 4.....	98
Հովհաննես 5.....	119
Հովհաննես 6.....	135
Հովհաննես 7.....	164
Հովհաննես 8.....	179
Հովհաննես 9.....	197
Հովհաննես 10.....	206
Հովհաննես 11.....	216
Հովհաննես 12.....	232
Հովհաննես 13.....	250
Հովհաննես 14.....	263
Հովհաննես 15.....	285
Հովհաննես 16.....	295
Հովհաննես 17.....	307
Հովհաննես 18.....	321
Հովհաննես 19.....	337
Հովհաննես 20.....	352
Հովհաննես 21.....	363
Ներածություն I Հովհաննես.....	370
I Հովհաննես 1.....	376
I Հովհաննես 2.....	389
I Հովհաննես 3.....	409
I Հովհաննես 4.....	432
I Հովհաննես 5.....	444
II Հովհաննես.....	461
III Հովհաննես.....	471
Հավելված 1: Հունարեն լեզվի քերականական կառուցվածքի համառոտ սահմանումները.....	481
Հավելված 2: Տեքստային քննադատություն.....	491
Հավելված 3: Բացատրական բառարան.....	495
Հավելված 4: Վարդապետական սկզբունքներ.....	505

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբ(<i>Archē</i>), Հովհ. 1:1.....	26
Տիրոջ հրեշտակը, Հովհ. 1:5	28
Հավատք, հավատամք, վստահություն, Հովհ. 1:7.....	29
Վկայել Հիսուսին, Հովհ. 1:8	31
Ճանաչել, Իմանալ, Հովհ. 1:10.....	32
Մարմին (<i>sarx</i>), Հովհ. 1:14.....	34
Փառք (<i>doxa</i>), Հովհ. 1:14.....	35
Շնորհք (<i>hesed</i>), Հովհ. 1:14.....	36
Հավատալ, Վստահել, Հավատք և Հավատարմությունը ՀԿ-ում, Հովհ. 1:14.....	36
Պողոսի կարծիքը Մովսեսական Օրենքի մասին, Հովհ. 1:17.....	40
Փարիսեցիներ, Հովհ. 1:24.....	45
Առաքյալների Անունները, Հովհ. 1:45	51
Հիսուս Նազովրեցի, Հովհ. 1:45.....	52
Ամեն, Հովհ. 1:51.....	54
Երկինքներ, Հովհ. 1:51	55
Գինի և Ուժեղ Խմիչք, Հովհ. 2:3.....	59
Հնագույն Սերձավոր Արևելքի կշիռները և ծավալները, Հովհ. 2:7	62
Զատիկ, Հովհ. 2:13.....	66
Հովհաննեսն օգտագործում է «Հավատալ» Բայը, Հովհ. 2:23; 8:24; 11:27.....	70
Սինեդրիոն, Հովհ. 3:1.....	74
Աստծո Թագավորությունը, Հովհ. 3:3	78
Շունչ, Քամի, Հոգի, Հովհ. 3:8.....	80
Անտրոմորֆիկ լեզու՝ Աստծուն նկարագրելու համար, Հովհ. 3:16.....	83
Նախասահմանություն (Կավիմիզմ) Եվ Մարդու Ազատ Կամք (Արմիմիանիզմ), Հովհ. 3:16.....	85
Կնիք, Հովհ. 3:33.....	94
Ռասիզմ, Հովհ. 4:4	100
Հին Կտակարանի Մարգարեություն, Հովհ. 4:19	105
Նոր Կտակարանի Մարգարեություն, Հովհ. 4:19.....	109
Հայր, Հովհ. 4:23	113
Մեսիա, Հովհ. 4:25.....	113
Աստծո Կամքը, Հովհ. 4:34	115
Բժշկություն, Հովհ. 5:14	123
Աններելի Մեղքը, Հովհ. 5:21	126
Ուղարկված (<i>apostellō</i>), Հովհ. 5:24	127
Ժամը, Հովհ. 5:25.....	128
Վաղ Եկեղեցու <i>Kerygma-ն</i> , Հովհ. 5:39	132
Օգտագործվող Մետաֆորամները Պաղեստինում Հիսուսի Օրերում, Հովհ. 6:7	138
Տասներկու Թիվը, Հովհ. 6:13	140
Աստծո Անունները, Հովհ. 6:20.....	141
Քրիստոնյայի Վստահությունը կամ Ապահովությունը, Հովհ. 6:37.....	148
Ճշմարտություն, Հովհ. 6:55.....	153
Հավիտյան (<i>olam</i>), Հովհ. 6:58.....	155
Համբարձում, Հովհ. 6:63.....	157
Հոգի (<i>Pneuma</i> , Նոր Կտակարանում), Հովհ. 6:63.....	158
Հավատորացություն, Հովհ. 6:64	159
Համարձակություն (<i>Parrhēsia</i>), Հովհ. 7:4.....	166
Դիվական, Հովհ. 7:20	170
Համբերելու Կարիք, Հովհ. 8:31.....	187
Գնոստիցիզմ, Հովհ. 8:40.....	191
Հունարեն Բայի Ժամանակաձևերը «Փրկություն» բառի համար, Հովհ. 9:7.....	199
Խոստովանություն, Հովհ. 9:22-23	201
Կործանում (<i>Apollumi</i>), Հովհ. 10:10.....	209
Օծումը Աստվածաշնչում, Հովհ. 11:2	218
Սգո Ծեսեր, Հովհ. 11:20.....	221
Կանայք Աստվածաշնչում, Հովհ. 11:28.....	223
Թաղման Արարողակարգերը, Հովհ. 11:44.....	227

Անձնական Չարը, Հովհ. 12:31	242
Պատերազմ Երկնքում, Հովհ. 12:31	244
Սիրտ, Հովհ. 12:40.....	247
«Պատվիրան» Բառի Օգտագործումը Հովհաննեսի Գրվածքներում, Հովհ. 12:50.....	249
Զատիկ Արարողակարգը Առաջին Դարում Հուդայականության մեջ, Հովհ. 13:2.....	253
Իսկարիովտացի, Հովհ. 13:26	259
Որտե՞ղ են գտնվում մահացածները, Հովհ. 14:3.....	266
Արդյունավետ Աղոթք, Հովհ. 14:13-14	272
Տիրոջ Անունը, Հովհ. 14:14.....	273
Հիսուսը և Հոգին, Հովհ. 14:16.....	275
<i>Kosmo</i> (Աշխարհ), Հովհ. 14:17.....	276
Այն Օրը, Հովհ. 14:20	277
Երրորդությունը, Հովհ. 14:26.....	279
Սուրբ Հոգին Որպես Անձ, Հովհ. 14:26.....	281
Խաղաղություն, Հովհ. 14:27.....	282
Կրակ, Հովհ. 15:6.....	289
Լուսավորում, Հովհ. 16:13	300
Ընտրություն, Հովհ. 17:2.....	310
«Ճշմարիտ» Հովհաննեսի Գրվածքներում, Հովհ. 17:3.....	311
Սուրբ, Հովհ.17:11.....	315
Ընտրություն/Նախասահմանություն և Աստվածաբանական Բալանսը, Հովհ. 18:2	324
Հիսուս Նագովրեցին, Հովհ. 18:5.....	325
Պալատի Ժամապահը, Հովհ. 18:28	331
Պոնտացի Պիղատոս, Հովհ. 18:29	332
Կանայք, Ովքեր Հետևեցին Հիսուսին, Հովհ. 19:25.....	345
Թաղման Համեմունքներ, Հովհ. 19:39.....	350
Հարությունից հետո Հիսուսը Հայտնվեց, Հովհ. 20:16	356
Կերպար, Չև (<i>Tupos</i>), Հովհ. 20:25.....	359
Հովհաննու 1 Համեմատած I Հովհաննու հետ 1, I Հովհ. 1:1	379
<i>Koinōnia</i> , I Հովհ. 1:3.....	380
Քրիստոնեությունը Դա Համագործակցություն է, I Հովհ. 1:3	381
«Մնալ, կենալ» Հովհաննեսի գրվածքներում, I Հովհ. 2:10	395
Ճանաչել, Իմանալ, I Հովհ. 2:13	398
Մարդկային իշխանություններ, I Հովհ.2:15	399
Այս դարը և գալիք դարը, I Հովհ. 2:17	402
Սուրբը, I Հովհ. 2:20	404
Նորկտակարանյան տերմիններ Քրիստոսի վերադարձի համար, I Հովհ. 2:28	411
Արդարություն, I Հովհ. 2:29	413
Նոր Կտակարանի ապացույցը անձի փրկության համար, I Հովհ. 3:1	416
Սրբացում, I Հովհ. 3:5.....	421
Աստծո Որդին, I Հովհ. 3:8.....	422
Աղոթք, անսահմանափակ և սահմանափակ, I Հովհ. 3:22	428
Արդյո՞ք քրիստոնյաները պետք է դատեն միմյանց, I Հովհ. 4:1	434
Հունարեն տերմիններ «փորձություն, փորձ» և նրանց նշանակության երանգները, I Հովհ. 4:1	434
Բոբի ավետարանչական շեղումները, I Հովհ.4:15.....	441
Վստահություն, I Հովհ.5:13	450
Բարեխոսական աղոթք, I Հովհ. 5:14	452
Ո՞րն է մահացու մեղքը, I Հովհ. 5:16.....	455
Երեց, II Հովհ. հ. 5:1	464
Եկեղեցի (<i>Ekklesia</i>), III Հովհ. հ. 6.....	476

Հեղինակի խոսքը: Ինչպե՞ս կարող է այս մեկնաբանությունը օգնել ձեզ

Աստվածաշնչյան մեկնաբանությունը դա մտային և հոգևոր գործընթաց է, որը փորձում է հասկանալ հեղինակի ներշնչվածության չափը բուն հեղինակի մոտ, այնպես որ Աստծո պատգամը հասկանալի և կիրառելի լինի մեր օրերում:

Հոգևոր գործընթացը որոշիչ է, բայց նաև դժվար է այն սահմանել: Դա իր մեջ ներառում է բաց լինել Աստծո առաջ և հեշտությամբ ընդունել Աստծո ասածները: Մարդու մեջ պետք է լինի ծարավ (1)Նրա հանդեպ, (2) Նրան ճանաչելու, և (3) Նրան ծառայելու հանդեպ: Այս գործընթացը ներգրավում է աղոթք, խոստովանություն և կյանքի փոխելու պատրաստակամությունը: Սուրբ Հոգին մեկնաբանության գործընթացում որոշիչ դեր է խաղում, բայց ինչու՞ անկեղծ, աստվածապաշտ քրիստոնյաները Աստվածաշունչը տարբեր կերպ են հասկանում: Դա մեր համար մնում է գաղտնիք:

Գործընթացի մտային կողմը նկարագրել հեշտ է: Մենք պետք է լինենք հետևողական և նախապատվությունը տանք տեքստին, այլ ոչ թե անձնական կամ եկեղեցական համոզմունքներին: Մենք բոլորս էլ գտնվում ենք որոշակի պատմական պայմանների շրջանակներում: Մեզինից ոչ ոք չի կարող լինել օբյեկտիվ և չեզոք մեկնաբան: Այս մեկնաբանությունը առաջարկում է ուշադիր և տրամաբանական մոտեցում, որը հիմնված է մեկնաբանության երեք սկզբունքների վրա, որոնք կօգնեն մեզ խուսափել մոլորություններից:

Առաջին սկզբունք

Առաջին սկզբունքը ամփոփվում է նրանում, որ պետք է հաշվի առնել պատմական իրավիճակը, երբ գրվել է համապատասխան գիրքը, որը առիթ է հանդիսացել հեղինակի համար գրելու տվյալ գիրքը: Բուն հեղինակն ուներ նպատակ և պատգամ՝ փոխանցելու մարդկանց: Տեքստը չի կարող մեզ համար նշանակել մի բան, որը երբեք չի նշանակել բուն, ներշնչված հեղինակին: Դա հասկանալու բանալին ոչ թե մեր պատմական, զգացմունքային, մշակույթային, անձնական կամ եկեղեցական կարիքն է, այլ հեղինակի մտադրությունը: Կիրառությունը սերտ կապված է մեկնաբանության հետ, բայց ճիշտ մեկնաբանությունը միշտ պետք է նախորդի կիրառությանը: Հարկ է հստակ ընդգծել, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր տեքստ ունի մեկ և միայն մեկ իմաստ: Դա այն իմաստն է, որը հենց բուն աստվածաշնչյան հեղինակը, գտնվելով Սուրբ Հոգու գործության ներքո, մտադրվել է փոխանցել իր ժամանակակիցներին: Իսկ հենց այդ իմաստն էլ կարող է ունենալ լայն կիրառություն տարբեր մշակույթներում և իրավիճակներում: Բայց բոլոր կիրառությունները պետք է կապակցված լինեն գլխավոր ճշմարտության հետ, որը փոխանցում է մեզ հեղինակը: Այդ իսկ պատճառով, այս ուսուցողական սերտողության մեկնաբանությունը կազմված է այնպես, որ կտա անհրաժեշտ պատկերացում աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրքի մասին:

Երկրորդ սկզբունք

Երկրորդ սկզբունքը գրական բաժինները ճիշտ որոշելու համար է: Յուրաքանչյուր աստվածաշնչյան գիրք իրենից ներկայացնում է մեկ ամբողջական փաստաթուղթ: Մեկնաբաններն իրավունք չունեն առանձնացնել ճշմարտության մեկ ասպեկտ՝ մերժելով մյուսները: Ուստի, մենք պետք է հակված լինենք հասկանալու աստվածաշնչյան ամբողջ գրքի նպատակը, նախքան գրական բաժինների առանձին մեկնաբանելը: Գրքի առանձին մասերը—գլուխներ, պարբերություններ, կամ համարներ —չեն կարող նշանակել այն ինչ չի նշանակում ամբողջ բաժինը: Մեկնաբանությունը պետք է ամբողջի դեղուկտիվ մոտեցումից զնա դեպի մասերի ինդուկտիվ մոտեցմանը: Ուստի այս սերտողության մեկնաբանությունը կօգնի վերլուծել յուրաքանչյուր գրական բաժնի կառուցվածքը ըստ պարբերությունների: Գրքի գլուխների և համարների բաժանումները ներշնչված չեն, բայց օգնում են մեզ որոշել տեքստի կառուցվածքային սահմանները:

Մեկնաբանությունը պարբերության մակարդակի վրա—ոչ թե նախադասության, արտահայտության կամ բառի կարող է հանդիսանալ իբրև բանալի, բացահայտելու աստվածաշնչյան հեղինակի մտադրության իմաստը: Պարբերությունները հիմնված են ընդհանուր թեմայի վրա, հաճախ կոչվում է թեմա կամ թեմատիկ նախադասություն: Պարբերության մեջ յուրաքանչյուր բառ, արտահայտություն, բառակապակցություն և նախադասություն ինչ որ կերպ կապված է այս ընդհանուր թեմային: Դրանք սահմանափակում, ընդարձակում, բացատրում են և/կամ հարցադրում: Ընդհանրապես միակ ճշմարիտ կերպը՝ հետևել հեղինակի մտքին պարբերությունից պարբերություն, աստվածաշնչյան գրքի մի բաժնից մյուսին: Այս մեկնաբանության սերտողությունը նախատեսված է օգնել մարդկանց՝

Ժամանակակից անգլերեն թարգմանությունները համեմատելու համար: Այս թարգմանություններն ընտրվել են, որովհետև նրանք հետևեցին թարգմանության տարբեր մոտեցումներին:

1. Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերստուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Սիոթյան կողմից (UBS⁴): Այս թարգմանությունը պարբերությունների է բաժանվել ժամանակակից գիտնականների կողմից:
2. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV) -սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է *Textus Receptus* (համընդհանուր ընդունված տեքստ): Այս թարգմանության պարբերությունների բաժանումները ավելի երկար են քան մյուս թարգմանություններինը: Այս երկար բաժինները օգնում են ավելի հեշտ տեսնել ընդհանուր թեմաները:
3. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV)- կատարելագործված բառացի թարգմանություն է: Սա կազմում է միջանկյալ կետ հետևյալ երկու ժամանակակից թարգմանությունների միջև: Այս թարգմանության պարբերությունների բաժանումները բավականին օգտակար են թեմաները ճիշտ որոշելու համար:
4. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)- դիմամիկ հավասարագոր թարգմանություն է հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Սիոթյան կողմից: Սա փորձում է Աստվածաշունչը թարգմանել այնպես, որ ժամանակակից անգլիախոս ընթերցողը կամ քարոզիչը կարողանա հասկանալ հունարեն տեքստի իմաստը: Հաճախ, հատկապես Ավետարաններում, պարբերությունների բաժանումը ավելի շատ կապված է խոսացողի հետ քան թեմայի, այնպես ինչպես NIV (Նոր Սիջագալյին Թարգմանություն) է: Մեկնաբանության այսպիսի մոտեցումը օգտակար չէ: Հետաքրքիր է նշել, որ թե UBS⁴ և թե TEV հրատարակված են նույն կազմակերպության կողմից, բայց նրանց պարբերությունների բաժանումները տարբեր են:
5. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)- դիմամիկ հավասարագոր թարգմանություն է, հիմնված ֆրանսերեն կաթոլիկ թարգմանության վրա: Սա շատ օգտակար է համեմատած եվրոպական մոտեցման հետ պարբերությունների բաժանումների առումով:
6. 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգված թարգմանությունը (NASB), որը բառացի թարգմանություն է: Այս մեկնաբանության մեջ ես օգտվել եմ այս թարգմանությունից:

Երրորդ սկզբունք

Երրորդ սկզբունքը կայանում է Աստվածաշնչի տարբեր թարգմանություններ կարդալու մեջ, որպեսզի կարողանալ ընկալել լայնամասշտաբ հնարավոր իմաստը (իմաստային դաշտ/semantic) որ կարող են ունենալ աստվածաշնչյան բառերն ու արտահայտությունները: Հաճախ հունարեն արտահայտությունը կամ բառը կարելի է հասկանալ մի քանի ձև: Այս տարբեր թարգմանությունները օգնում են նկատել այդ առանձնահատկությունները և օգնում հասկանալ ու բացատրել հունարեն ձեռագրերի տարբերությունները: Սրանք չեն ազդում վարդապետական հարցերի վրա, բայց օգնում են մեզ ավելի մոտ լինել բնագրին:

Այս մեկնաբանությունը ուսումնասիրողին առաջարկում է մեթոդ, բավականին արագ ստուգելու իր սեփական հասկացողությունը տեքստի վերաբերյալ: Այն չի նշանակում ինչ որ միանշանակ մեկնաբանություն, այլ ավելի հակված է տալ լրացուցիչ տեղեկություն և մտաբերելու կարողություն: Հաճախ, այլ աստվածաշնչյան հնարավոր մեկնաբանություններ օգնում են մեզ ձեռքագատվել սեփական տեսակետներից և չլինել այդքան սահմանափակ, դոգմատիկ և աղանդավորական: Մեկնաբանները պետք է պատկերացում ունենան հնարավորինս շատ մեկնաբանությունների մասին, որպեսզի գիտակցեն, թե որքան երկիմաստ կարող են լինել հին տեքստերը: Ապշեցուցիչ է, թե ինչքան քիչ համաձայնություն կա քրիստոնյաների միջև, որոնք իրենց համար Աստվածաշունչը հռչակում են որպես ճշմարտության աղբյուր:

Ժամանակին այս սկզբունքները օգնել են ինձ հաղթահարել շատ համոզմունքներ, բառացիորեն պարտադրելով ինձ ծայրաստիճան ուշադիր վերաբերվելու հին բնագրերին և ձեռագրերին: Հույս ունեմ, որ դրանք օրինություն կլինեն նաև ձեզ համար:

Բոր Աթլի

Արևելյան Տեխասի Սկրտական Համալսարան
Հունիս 27, 1996

ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԿԱՐԴԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԱՏՈՒԳՎԱԾ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Կարո՞ղ ենք մենք ճանաչել ճշմարտությունը: Որտե՞ղ է այն գտնվում: Կարո՞ղ ենք այն ստուգել տրամաբանությամբ: Կա՞ր արդյոք գերագույն հեղինակություն: Կա՞ր արդյոք իրականում ինչ որ անկասկած և կատարյալ մի բան, որը կարող է շարժել մեր կյանքը և ամբողջ աշխարհը: Ո՞րն է կյանքի իմաստը: Ինչու՞ ենք մենք այստեղ: Ու՞ր ենք գնում: Այս հարցերն այն հարցերն են, որոնց շուրջ լրջորեն խորհել են մտավորականները և որոնք հանգիստ չեն տվել մարդկային բանականությանը ժամանակի սկզբից սկսած (Ժող. 1:13-18; 3:9-11): Ես հիշում եմ իմ անձնական որոնումները իմ սեփական կյանքի կենտրոնի համար, ինչի շուրջ ամեն ինչ պետք է պատվի: Ես Հիսուսին, որպես իմ կյանքի Տեր ու Փրկիչ ընդունել եմ փոքր հասակում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիք վկայությունների վրա: Երբ ես չափահաս դարձա, իմ և իմ աշխարհի մասին հարցերը նույնպես մեծացան: Պարզ մշակույթային և կրոնական կիշները իմաստ չմտցրեցին այն գործնական կյանքի փորձառության մեջ, որի մասին ես կարդացել կամ առընչվել եմ: Դա շփոթության, փնտրությունների, կրքոտ ցանկությունների ժամանակն էր, և հաճախ անհույս լինելու զգացողությունը, որը գոյություն ուներ դաժան, իրական աշխարհում, որտեղ ես ապրում էի:

Շատերը պնդում էին, որ իրենք ունեն այս հիմնական հարցերի պատասխանները, բայց ուշադիր և երկար մտածելուց հետո, ես հայտնաբերեցի, որ այդ պատասխանները հիմնված էին (1) անձնական փիլիսոփայությունների, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառությունների, կամ (4) հոգեբանական պատկերացումների վրա: Իսկ ինձ հարկավոր էր որոշ պնդումներ, որոշակի ապացույցներ, խելացի փաստարկներ, որի վրա կարող էի կառուցել իմ աշխարհայացքը, իմ ամբողջականության կենտրոնը, իմ կյանքի իմաստը:

Ես այդ ամենը ձեռք բերեցի Աստվածաշնչի ինքնուրույն սերտողության ժամանակ: Ես սկսեցի փնտրել ապացույցներ վստահելի լինելու մասին, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական վստահելիությունը, ինչը հաստատվում էր հնէաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշգրիտ իրականացումը, (3) 1600 տարիների ընթացքում գրված աստվածաշնչյան պատգամի համաձայնեցվածությունն ու միասնականությունը, և (4) մարդկանց անձնական վկայությունները, որոնց կյանքերը ամբողջությամբ փոխվել էին Աստվածաշնչի հետ շփվելուց հետո: Քրիստոնեությունը, որպես հավատքի միացյալ համակարգ, ունի կարողություն լուծելու մարդկային կյանքի բարդ հարցերն ու խնդիրները: Այդ ամենը միասին ոչ միայն ինձ տվեց հստակ աշխարհայացքի համակարգ, այլ աստվածաշնչյան հավատքի փորձառություն, որն իմ կյանքում բերեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել էի իմ կյանքի այդ ամբողջականության կենտրոնը՝ Քրիստոսը, որին ես ճանաչեցի Սուրբ Գրքի միջոցով: Դա հիասքանչ փորձառություն էր, զգացմունքային թեթևացում: Սակայն ես մինչև հիմա հիշում եմ այն ցնցումն ու ցավը, երբ իմ առջև բացվեցին այն փաստերը, թե ինչքան շատ հիմնավորված, բայց տարբեր մեկնաբանություններ կան, երբեմն նույնիսկ նույն եկեղեցիների և աստվածաբանական դպրոցների միջև: Աստվածաշնչի ներշնչվածությունը կամ վստահելիությունը հաստատելը ընթացքի վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս կարող եմ վստահել կամ մերժել տարբեր և իարարամերժ մեկնաբանությունները հասկանալու համար շատ բարդ աստվածաշնչյան տեքստերը, եթե նրանցից ամեն մեկը առանձին ներկայացնում է դրա հեղինակությունը և վստահության արժանի լինելը:

Այս առաջադրանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հավատքի ուխտագնացությունը: Ես գիտեի, որ իմ հավատքն առ Քրիստոս բերել էր ինձ մեծ խաղաղություն և ուրախություն: Իմ միտքը փափագում էր գտնել ինչ որ բացարձակ ճշմարտություններ (1) իմ մշակույթի արժեքների հետ կապված (փոստ-մոդեռնիստական); (2) իրար բախվող կրոնական համակարգերի դոգմատիզմը (աշխարհի կրոններ); և (3) հարանվանական գոռոզամտություն: Իմ որոնումների ընթացքում իրական վստահելի մոտեցումների հին գրականության մեկնաբանության ժամանակ, ես զարմանալի կերպով հայտնաբերեցի իմ սեփական շփոթությունները՝ պատմական, մշակույթային, հարանվանական և գործնական փորձառության հետ կապված: Ես հաճախ կարդացել եմ Աստվածաշունչը, որպեսզի գտնեմ պնդումներ իմ կարծիքների և տեսանկյունների համար: Ես օգտագործեցի այն որպես դոգմայի աղբյուր, որպեսզի գրոհեմ ուրիշների վրա, վերահաստատելով իմ սեփական անհուսալի և անկայուն կարծիքները: Այնքան ցավալի էր ինձ համար ընդունել այդ փաստը:

Չնայած, ես երբեք չեմ կարող ամբողջությամբ օբյեկտիվ լինել, ես կարող եմ Աստվածաշունչի ավելի լավ ընթերցող լինել: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները ճանաչելով և ընդունելով դրանց առկայությունը: Ես դեռևս ազատագրված չեմ դրանցից, բայց դիմադրել եմ իմ տկարությունները: Սեկնաբանը հաճախ Աստվածաշունչը ճիշտ ընթերցելու ամենավատ թշնամին է:

Թույլ տվեք ինձ, սիրելի ընթերցող, թվարկել կանխակարծիքներից մի քանիսը, որոնց վրա է հիմնված Աստվածաշունչի իմ ուսումնասիրությունը, որպեսզի դուք կարողանաք ինձ հետ միասին ստուգել դրանք:

I. Կանխակարծիքներ

- Ա. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն միակ ճշմարիտ Աստծո միակ ներշնչված հայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բուն աստվածային հեղինակի (Սուրբ Հոգու) մտադրության լույսի ներքո, մարդ-գրողների միջոցով, որոնք ապրել են որոշակի պատմական իրավիճակներում:
- Բ. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է սովորական մարդու համար և բոլոր մարդկանց համար: Աստված գտավ այնպիսի միջոց, որպեսզի հատակ մեզ ասի այն ամենը, ինչ եղել է տվյալ պատմական և մշակութային կոնտեքստի մեջ: Աստված չի թակցնում ճշմարտությունը - Նա ուզում է, որ մենք հասկանանք: Ուստի, այն պետք է մեկնաբանվի այն օրերի լույսի ներքո և ոչ թե մեր օրերի: Աստվածաշունչը չպետք է մեզ համար նշանակի մի բան, որը չի նշանակել առաջին ընթերցողի կամ լսողի համար: Այն հասկանալի է ամենահասարակ մարդու համար, և իր մեջ պարունակում է սովորական մարդկային հաղորդակցության ձևեր և մեթոդներ:
- Գ. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչն ունի ամբողջական, միավորված պատգամ և նպատակ: Այն չի հակասում ինքն իրեն, չնայած որ իր մեջ պարունակում է դժվար և պարադոքսալին հատվածներ: Այսպիսով, Աստվածաշունչի լավագույն մեկնաբանը հենց ինքն՝ Աստվածաշունչն է:
- Դ. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (բացի մարգարեություններից) ունի մեկ և միայն մեկ իմաստ՝ հիմնված բուն, ներշնչված հեղինակի մտադրության վրա: Չնայած մենք երբեք չենք կարող բացարձակ վստահ իմանալ հեղինակի մտադրությունը, շատ ցուցիչներ կօգնեն մեզ որոշել դրանք.
 1. գրական ժանրը՝ ընտրված պատգամի փոխանցման համար
 2. պատմական կոնտեքստը և/կամ որևէ իրավիճակ, որը առիթ է հանդիսացել տեքստը գրելու համար
 3. ամբողջ գրքի գրական կոնտեքստը, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժին
 4. գրական բաժինների կառուցվածքի ուրվագիծը կամ պլանը, կապված ամբողջ պատգամի հետ
 5. յուրահատուկ քերականական առանձնահատկություններ պատգամը փոխանցելու համար
 6. ընտրված բառեր՝ պատգամը ներկայացնելու համար
 7. գուգահեռ հատվածներ


Այս պահերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը միանգամայն անհրաժեշտ է աստվածաշնչյան տեքստի ուսումնասիրության համար: Բայց նախքան Աստվածաշունչի ճիշտ ընթերցանության իմ մեթոդը բացատրելը, թույլ տվեք նկարագրել մի քանի ոչ պիտանի մեթոդներ, որոնք օգտագործվում են մեր օրերում, ստեղծելով մեկնաբանության բազմազանություն, որոնցից պետք է համառորեն խուսափել:

II. Անհամապատասխան կամ ոչ պիտանի մեթոդներ


- Ա. Անտեսելով աստվածաշնչյան գրքերի գրական կոնտեքստը, և օգտագործելով յուրաքանչյուր նախադասություն, արտահայտություն կամ նույնիսկ առանձին բառեր, իբրև հաստատված ճշմարտություն, որը ոչ մի կապ չունի հեղինակի մտադրության կամ ավելի լայն կոնտեքստի հետ: Սա հաճախ կոչվում է «անհրաժեշտ ապացույցներ տեքստի մեջ»:
- Բ. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փոխարինելով ենթադրյալ պատմական կոնտեքստով, որն ունի շատ քիչ կամ ընդհանրապես չունի հիմք բուն տեքստից:
- Գ. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, այն կարդալ որպես առավոտյան լրագիր, որը հիմնականում գրված է ժամանակակից անհատ քրիստոնյաների համար:
- Դ. Անտեսելով գրքերի պատմական կոնտեքստը, փորձել այլաբանորեն մեկնաբանել այն, փոխելով տեքստի իմաստը փիլիսոփայական/աստվածաբանական քննարկման, որը ոչ մի կապ չունի առաջին ունկնդիրների և բուն հեղինակի մտադրությանը:
- Ե. Անտեսելով ուղերձի իմաստը, փոխարինելով ինչ որ մեկի սեփական աստվածաբանական

համակարգի հետ, սիրած վարկածի կամ կենսական նպատակահարմարությամբ, որը ոչ մի կապ չունի բուն հեղինակի նպատակի և պատգամի իրական իմաստի հետ: Այսպիսի բան հաճախ պատահում է Աստվածաշնչի սկսնակ ընթերցողների հետ, օգտագործելով այս օրինակը սեփական հեղինակությունը պնդելու համար: Սա հաճախ վերաբերվում է որպես «ընթերցողի արձագանքը» (ինչ է այն նշանակում ինձ համար) մեկնաբանությանը:

Բոլոր գրավոր ինֆորմացիայի մարդկային հաղորդակցության մեջ գոյություն ունի ամենաքիչը երեք կապակցված բաղադրիչներ:



Անցյալում Աստվածաշնչի ընթերցանության տարբեր մեթոդներ կենտրոնացել են երեք բաղադրիչներից մեկի վրա: Բայց որպեսզի իրապես հաստատվի Աստվածաշնչի եզակի ներշնչվածությունը, այս սխեման ավելի հարմար է:



Իրականում, բոլոր երեք բաղադրիչները պետք է ներգրավված լինեն մեկնաբանության գործընթացի մեջ: Երբ իմ առջև դրված է առաջադրանք, գտնել ինչ որ մի բանի պնդում, իմ ամբողջ մեկնաբանությունը կենտրոնացվում է առաջին երկու բաղադրիչների վրա՝ բուն հեղինակը և տեքստը: Հնարավոր է այս ամենի մեջ կիսով չափ առկա է իմ ոչ ճիշտ գործածումը, որի հետ ես ստիպված եմ եղել բախվել (1) տեքստերին չհիմնավորված այլաբանական կամ հոգևոր իմաստ տալ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանություն (ինչ է այն նշանակում ինձ համար): Չարաշահում կարող է ծագել յուրաքանչյուր փուլում: Մենք միշտ պետք է ստուգենք մեր շարժառիթները, համոզմունքները, ուսումնասիրության մեթոդները և գործնական կիրառությունները: Բայց ինչպե՞ս այս ամենը հսկել, եթե չորվի մեկնաբանության հստակ սահմաններ, հստակ չափանիշներ: Եվ հենց այս իրավիճակում է հեղինակի մտադրությունը և տեքստի կառուցվածքը ներկայացնում են մի շարք չափանիշներ, որոնք թույլ են տալիս ինձ որոշել հնարավոր մեկնաբանության թույլատրելի սահմանները:

Այսպիսով Աստվածաշնչի ընթերցանության այս ոչ պիտանի մեթոդների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության և մեկնաբանության այն մի քանի հնարավոր մոտեցումները, որոնք տալիս են որոշակի վստահության աստիճան և տրամաբանորեն չեն հակասում իրար:

III. Աստվածաշնչի ճիշտ ընթերցանության հնարավոր մեթոդները

Այստեղ ես չեմ քննարկում մեկնաբանության հատուկ ժանրերի յուրահատուկ մեթոդներ, այլ ներկայացնում եմ ընդհանուր հերմենևտիկական սկզբունքներ, որ ընդունելի են ամեն տեսակ աստվածաշնչյան տեքստերի համար: Լավ գիրք է տարբեր ժանրերի մեկնաբանության առանձնահատկությունների մասին «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր բոլոր արժեքներով» Գորդոն Ֆի և Դուգլաս Ստուարտ, տպագրված Չոնդերվան» (*How To Read The Bible For All Its Worth*, by Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդի մեջ, նախևառաջ, կենտրոնանում եմ այն ընթերցողի վրա, ով ինքնուրույն չորս անգամ կարդում է աստվածաշնչյան տեքստը, և ամեն անգամ թույլ տալիս, որ Սուրբ հոգին մեկնաբանի դրա նշանակությունը: Այդ կերպ, Սուրբ Հոգին տեքստը և ընթերցողը հայտնվում են առաջին տեղում և ոչ թե երկրորդական: Այս մոտեցումը նաև պաշտպանում է ընթերցողին մեկնաբանների կողմից հասցվելիք մեծ ներգործությունից: Մի անգամ այսպիսի արտահայտություն եմ լսել «Աստվածաշունչը շատ լույս է սփռում մեկնաբանությունների վրա»: Եվ սա չի նշանակում, որ տեքստի ուսումնասիրության համար բավարար չեն մեկնաբանությունները, բայց դրանք կարելի է օգտագործել զգույշ և համապատասխան ժամանակին:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնաբանությունների համար պնդումներ գտնել հենց տեքստից: Երեք բնագավառներ, որոնք տալիս են մեզ, համենայնդեպս, որոշակի վստահություն:

1. հեղինակի
 - ա. պատմական կոնտեքստը
 - բ. գրական կոնտեքստ
2. հեղինակի կողմից ընտրված
 - ա. քերականական կառուցվածքներ (շարահյուսություն)
 - բ. այն ժամանակվա բառային կիրառությունը
 - գ. ժանր
3. մեր հասկացողությունը
 - ա. համապատասխան զուգահեռ հատվածներ

Մեր մեկնաբանությունը պետք է լինի բանական և տրամաբանական: Աստվածաշունչը մեր միակ հավատքի և ճիշտ գործնական ապրելակերպի աղբյուրն է: Ցավալի է, որ քրիստոնյաները հաճախ չեն համաձայնվում այն բանի հետ, ինչ սովորեցնում է Աստվածաշունչը, կամ ինչ որ նա պնդում է: Այդ դեպքում մենք մեզ դատապարտության ենք ենթարկում, եթե մի կողմից մենք համառորեն պնդում ենք նրա ներշնչված լինելը, բայց անմիջապես հայտարարում ենք, որ հավատացյալները չեն կարող համաձայնվել Սուրբ Գրքի հստակ ուսմունքի կամ պահանջների հետ:

Ընթերցանության չորս շրջանները անհրաժեշտ են այն բանի համար, որ կարողանանք տեսնել բոլոր անհրաժեշտ առանձնահատկությունները ճիշտ մեկնաբանելու համար:

- Ա. Ընթերցանության առաջին շրջան
1. Մեկ շնչով կարդացեք գիրքն ամբողջությամբ: Կարդացեք այն ևս մեկ անգամ ուրիշ թարգմանությունով, ցանկալի է ուրիշ թարգմանության տեսության տեսանկյունից
 - ա. բառացի (NKJV, NASB, NRSV)
 - բ. դինամիկ հավասարագոր (TEV, JB)
 - գ. վերապատմում (Living Bible, Amplified Bible)
 2. Գտեք ամբողջ գրվածքի կենտրոնական նպատակը: Որոշեք նրա թեման:
 3. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական բաժինը, գլուխը, պարբերությունը կամ նախադասությունը, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման:
 4. Որոշեք ստեղծագործության գրական ժանրը
 - ա. Հին Կտակարան
 - (1) Եբրայերեն պատմություն
 - (2) Եբրայերեն պոեզիա (իմաստուն գրականություն, սաղմոս)
 - (3) Եբրայերեն մարգարեություն (արձակ, բանաստեղծական)
 - (4) Օրենսգիրք
 - բ. Նոր Կտակարան
 - (1) Պատմություններ (Ավետարաններ, Գործք)
 - (2) Առակներ (Ավետարաններ)
 - (3) Նամակներ/թղթեր
 - (4) Վախճանաբանական գրականություն
- Բ. Ընթերցանության երկրորդ շրջան
1. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ քննարկվող հարցերը:
 2. Ընդգծեք գլխավոր թեմաները, մեկ նախադասությամբ շարադրեք դրանց բովանդակությունները:

3. Համեմատեք ձեր եզրակացությունը այս ամենի մասին սերտողության գրականության հետ:
- Գ. Ընթերցանության երրորդ շրջան
1. Նորից կարդացեք գիրքն ամբողջությամբ, փորձելով գտնել պատմական իրավիճակը և հատուկ իրավիճակը, որն առիթ է հանդիսացել այդ գիրքը գրվելու համար:
 2. Թվարկեք պատմական առանձնահատկությունները, որոնք նշված են տվյալ Աստվածաշնչի տվյալ գրքում
 - ա. հեղինակը
 - բ. գրվելու տարեթիվը
 - գ. ում համար է գրվել
 - դ. ինչի համար է գրվել
 - ե. մշակույթային կոնտեքստի առանձնահատկությունները, որոնք կապված են գրվելու նպատակի հետ
 - զ. ակնարկ պատմական մարդկանց և իրադարձությունների մասին
 3. Ընդարձակեք ձեր ուսումնասիրությունը պարբերության մակարդակի վրա և հատկապես գրքի այն հատվածը, որն ուզում եք մեկնաբանել: Սիշտ գտեք և ընդգծեք գրական բաժինը: Սա կարող է լինել մի քանի գլուխներ կամ պարբերություններ: Դա կօգնի ձեզ հասկանալ հեղինակի տրամաբանությունն ու տեքստի կառուցվածքը:
 4. Ստուգեք պատմական իրավիճակի մասին ձեր եզրակացությունները՝ օգտագործելով տեղեկատու ձեռնարկներ:
- Դ. Ընթերցանության չորրորդ շրջան
1. Կարդացեք ուսումնասիրվող հատվածը կրկին մի քանի թարգմանություններով
 - ա. բառացի (NKJV, NASB, NRSV)
 - բ. դինամիկ հավասարագոր (TEV, JB)
 - գ. վերապատմում (Living Bible, Amplified Bible)
 2. Փնտրեք գրական կամ քերականական կառուցվածքներ
 - ա. կրկնվող արտահայտություններ, Եփ. 1:6,12,13
 - բ. կրկնվող քերականական կառուցվածքներ, Հռ. 8:31
 - գ. հակասող գաղափարներ
 3. Պարզեք հետևյալ պահերը
 - ա. կարևոր, բանալի տերմիններ
 - բ. անսովոր տերմիններ
 - գ. կարևոր քերականական կառուցվածքներ
 - դ. բարդ բառեր, արտահայտություններ և նախադասություններ
 4. Փնտրեք համապատասխան զուգահեռ հատվածները
 - ա. փնտրեք ամենահստակ ուսուցանող հատվածը ձեր թեմային համապատասխան, օգտվելով
 - (1) «սիստեմատիկ աստվածաբանություն» գրքերից
 - (2) ուսուցողական Աստվածաշնչեր մեկնաբանություններով և տեղեկատվական նյութերով
 - (3) համաբարբառներից
 - բ. Փնտրեք հնարավոր պարադոքսային զույգեր նույն թեմային պատկանող: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ կան «դիալեկտիկական զույգերի» մեջ; հարանվանական շատ բախումներ առաջանում են տեքստը կիսով չափ ընդունելու համար: Ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և մենք պետք է փնտրենք ամբողջ պատգամը որպեսզի պահենք մեր մեկնաբանության մեջ սուրբգրային հավասարակշռությունը:
 - գ. Փնտրեք զուգահեռներ նույն գրքի մեջ, նույն հեղինակի մոտ և նույն ժանրի տեքստերի մեջ; Աստվածաշունչը իր իսկ սեփական լավագույն մեկնաբանն է, որովհետև այն ունի մեկ հեղինակ՝ Սուրբ Հոգին:
 5. Օգտվեք լրացուցիչ ուսուցողական նյութերից, ստուգելու համար ձեր դիտարկումները պատմական կոնտեքստի և կոնկրետ դեպքի շուրջ, կապված գիրքը գրելու հետ
 - ա. ուսուցողական Աստվածաշնչեր
 - բ. աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - գ. աստվածաշնչյան ներածություններ

- դ. աստվածաշնչյան մեկնաբանություններ (այս փուլում թույլ տվեք հավատացյալներին անցյալի և ներկայի օգնել ձեզ և ուղղել ձեր անձնական սերտոդությունը):

IV. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Հիմա մենք կնայենք կիրառության հարցերին: Դուք բավականին ժամանակ ծախսեցիք, որպեսզի հասկանաք տեքստի սկզբնական նշանակությունը; հիմա ձեր առջև դրված է առաջադրանք դա ճիշտ կիրառել ձեր կյանքում, ձեր մշակույթում: Ես որոշում եմ աստվածաշնչյան տեքստ հեղինակությունը որպես «այն բանի հասկացողություն, թե ինչ է ասել հեղինակն իր ժամանակին, և դրա կիրառությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բուն հեղինակի մտադրության մեկնաբանությանը, թե ժամանակի մեջ և թե տրամաբանությամբ: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի հատվածը մեր օրերում մինչև որ չհասկանանք թե ինչ նշանակություն ուներ դա այն ժամանակվա մարդկանց համար, ում համար որ գրվել է դա: Չի կարելի աստվածաշնչյան տեքստին իմաստ տալ, որը երբեք չի բովանդակել:

Այստեղ ձեր ուղեցույցը կլինի մանրամասն ուսումնասիրությունը պարբերությունների մակարդակով (ընթերցանության ցիկլ #3): Կիրառությունը պետք է կատարվի պարբերության մակարդակով և ոչ թե բառի: Բառերն ունեն նշանակություն միայն կոնտեքստում, արտահայտություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում, նախադասություններն ունեն իմաստ միայն կոնտեքստում: Միակ ներշնչված անձը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում դա բուն հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Սուրբ Հոգու լուսավորությամբ: Բայց լուսավորումը ներշնչանք չէ: «Այսպես է ասում Տերը» ասելու համար մենք պետք է ամբողջությամբ ենթարկվենք բուն հեղինակի մտադրությանը: Կիրառությունը պետք է կապված լինի հիմնականում ամբողջ գրվածքի, հատուկ գրական բաժնի և պարբերության մակարդակի մտքի զարգացումը ընդհանուր մտադրության հետ:

Թույլ մի տվեք մեր օրերի խնդիրներն ու պահանջները մեկնաբանեն Աստվածաշունչը, թող Աստվածաշունչը խոսի: Իհարկե, դա մեզանից շատ ջանք է պահանջում, որ կարողանանք տեքստից սկզբունքներ քաղել: Եվ դրանք կգործեն միայն այն ժամանակ, երբ տեքստը հաստատի դա: Դժբախտաբար, շատ անգամ մեր սկզբունքներից շատերը հենց «մերն են», և ոչ թե այն ինչ տեքստն իրականում պարունակում է:

Աստվածաշունչը կիրառելու ժամանակ, շատ կարևոր է հիշել, որ (բացի մարգարեությունից) ամեն մի աստվածաշնչյան տեքստ ունի միայն մեկ իմաստ: Այդ իմաստը կապված է բուն հեղինակի մտադրությանը, որը ներկայացնում է իր օրերի ճգնաժամերն ու կարիքները: Շատ հնարավոր կիրառություններ կարող են դուրս բերվել այս մեկ իմաստից: Տեքստի կիրառությունը հիմնված կլինի կոնկրետ մարդկանց կարիքներից, բայց պետք է կապված լինի բուն հեղինակի տված իմաստին:

V. Սուրբ Հոգու դերը մեկնաբանության մեջ

Մինչև այս պահը ես քննարկել եմ տրամաբանական և տեքստային գործընթացը, որպես կարևոր հիմք՝ աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու և կիրառելու համար: Հիմա թույլ տվեք համառոտ շարադրել մեկնաբանության գործընթացի հոգևոր կողմը: Այստեղ ինձ շատ են օգնում հետևյալ քայլերը

- Ա. Աղոթք Սուրբ Հոգու օգնության համար (հմմտ. I Կոր. 1:26-2:16).
- Բ. Աղոթք անձնական ներման և գիտակցական մեղքից մաքրվելու համար (հմմտ. I Հովհ. 1:9).
- Գ. Աղոթք Աստծուն ճանաչելու մեծ ցանկություն ունենալու համար (հմմտ. Սաղ. 19:7-14; 42:1; 119:1).
- Դ. Բացահայտված ճշմարտության անհապաղ կիրառում քո սեփական կյանքում
- Ե. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Շատ դժվար է պահել հավասարակշռությունը տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև: Հետևյալ մեջբերումներն օգնել են հավասարակշռության մեջ պահել այդ երկուսը

- Ա. Ջեյմս ՌԻ. Սայր «Սուրբ Գրքի Աղավաղում», էջ 17-18 (James W. Sire, *Scripture Twisting*, pp. 17-18):

«Լուսավորումը պայծառացնում է բոլոր Աստծո ժողովրդի միտքը, և ոչ թե միայն ինչ որ հոգևոր բարձր խավի: Աստվածաշնչյան քրիստոնեության մեջ չկա գուրու դասակարգ, ոչ հատուկ լուսավորվածներ, ոչ հատուկ մարդիկ, որոնց միջոցով է միայն ճիշտ մեկնաբանությունը տրվում: Եվ քանի որ Սուրբ Հոգին է տալիս հատուկ պարգևներ իմաստության, գիտության և հոգևոր խորաթափանցության, Նա չի նշանակում այդ պարգևներով օժտված քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր

մեկնաբանողները: Բայց Իր ժողովրդից ամեն մեկը պատասխանատու է սովորելու, խորհելու և մտածելու ամեն ինչ Աստվածաշնչի միջոցով, որը հեղինակություն է բոլորի համար և նաև նրանց համար, ում Աստված տվեց բացառիկ կարողություններ: Ամփոփելով ասեմ, որ ամբողջ այս գրքի ընթացքում ես պնդում եմ, որ Աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է ամբողջ մարդկությանը, այն հանդիսանում է անձեռնմխելի հեղինակություն ամեն ինչում, ինչի մասին որ խոսում է, որ այն չբացահայտված գաղտնիք չէ, բայց կարող է բավականին լավ հասկանալի լինել սովորական մարդու համար՝ ցանկացած մշակույթ ներկայացնող»:

Բ. Կյորկեգորա, Բերնարդ Ռ-ամ «Բողոքական Աստվածաշնչյան մեկնաբանություն», էջ 75 (Kierkegaard, found in Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*, p. 75):

Համաձայն Կյորկեգորայի Աստվածաշնչի քերականական, լեքսիկոնային և պատմական սերտողությունը անհրաժեշտ էր, բայց նախևառաջ կարևոր է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Որպեսզի Աստվածաշունչը կարդացվի որպես Աստծո Խոսք, պետք է կարդալ այն սաստիկ վախենալով, ծածուկ, լարված սպասումով, Աստծո հետ հարաբերություն ունենալով: Աստվածաշունչ կարդալ չմտածելով կամ անփութորեն, կամ ակադեմիական և մասնագիտական մոտեցմամբ, նշանակում է Աստվածաշունչը չկարդալ որպես Աստծո Խոսք: Բայց երբ մարդը կարդում է այն, որպես սիրային նամակ, այդժամ նա իրականում կարդում է այն որպես Աստծո Խոսք»:

Գ. Հ.Հ. Ռոլուեյ «Աստվածաշնչի պատշաճությունը», էջ 19 (H. H. Rowley in *The Relevance of the Bible*, p. 19):

«Աստվածաշնչի ոչ մի մտային հասկացություն, որքան էլ որ այն ամբողջական լինի» չի կարող բացահայտել նրա բոլոր գանձերը: Այսպիսի հասկացողությամբ չի կարելի չարաշահել, քանի որ այն հանդիսանում է անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, որը ապահովում է ամբողջական հասկացողությունը: Բայց, որպեսզի ամբողջական լինի, այն պետք է հոգևոր գանձերը առաջնորդի հոգևոր հասկացողության: Իսկ հոգևոր հասկացողության համար անհրաժեշտ է ավելին քան միայն մտային զգոնությունը: Հոգևոր բաները կարելի է տեսնել միայն հոգևոր տեսողությամբ, դրա համար Աստվածաշունչ ուսումնասիրող մարդը պետք է գտնվի հոգևոր զգայունության իրավիճակում, ունենա խիստ փափագ Աստծուն փնտրելու, որպեսզի իրեն հանձնի Աստծուն, եթե նա ուզում է անցնել իր գիտական հետազոտությունը այս ամենահարուստ ժառանգության բացահայտմանը հասնելով»:

VI. Այս մեկնաբանության մեթոդը

«Մեկնաբանության ուղեցույց»-ը նախատեսված է Աստվածաշնչի ձեր մեկնաբանության գործընթացի մեջ օգնել ձեզ հետևյալ կերպ

Ա. Հակիրճ պատմական ակնարկ, որը ներկայացնում է աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրք: «Ընթերցանության #3 շրջանը» անելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:

Բ. Յուրաքանչյուր գլխի վերջում ներկայացվում է կոնտեքստի տեսությունը: Սա կօգնի ձեզ տեսնելու, թե ինչ կառուցվածք ունի գրական բաժինը:

Գ. Յուրաքանչյուր գլխի կամ գրական բաժնի սկզբում պարբերության բաժանումները և պատկերավոր վերադիրները ներկայացված են մի քանի ժամանակակից թարգմանություններով

1. Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերստուգված սրբագրություն, հրատարակված Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից (UBS⁴)
2. 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB),
3. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV)
4. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV)
5. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV)
6. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն: Նրանք պետք է հաստատվեն կոնտեքստի հիման վրա: Համեմատելով մի քանի ժամանակակից թարգմանություններ, որոնք կատարված են տարբեր թարգմանչական տեսությունների և աստվածաբանական տեսանկյուններից, մենք կարող ենք վերլուծել բուն հեղինակի մտքի ենթադրյալ կառուցվածքը: Յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ գլխավոր ճշմարտություն: Սա կոչվել է «գլխավոր թեմա» կամ «տեքստի կենտրոնական միտք»: Այս միացնող միտքը բանալին է ճիշտ պատմական և քերականական

մեկնաբանության: Երբեք չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել հիմնվելով մեկ պարբերությունից փոքր հատվածի վրա: Նաև հիշեք, որ յուրաքանչյուր պարբերություն կապված է իրեն շրջապատող պարբերությունների հետ: Ահա թե ինչու պարբերության համար կարևոր է ունենալ ամբողջ գրքի պլանը: Մենք պետք է կարողանանք հետևել թեմայի տրամաբանական զարգացմանը ըստ ներշնչված հեղինակի:

- Դ. Բոք Ատլեի մոտեցումն այսօրին է, որ ճիշտ մեկնաբանություն ստանալու համար պետք է կատարել համար առ համար սերտողություն: Սա ստիպում է մեզ հետևել բուն հեղինակի մտքերին: Նշումները մեզ օգտակար տեղեկություն են տալիս մի քանի բաժիններում, դրանք են՝
1. գրական կոնտեքստ
 2. պատմական, մշակութային առանձնահատկություններ
 3. քերականական ինֆորմացիա
 4. բառային սերտողություն
 5. կարևոր զուգահեռ հատվածներ
- Ե. Որոշակի դեպքերում մեկնաբանության մեջ, 1995-ի Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշնչի վերստուգած թարգմանությունը (NASB), լրացված է մի քանի այլ ժամանակակից թարգմանությունների հղումներով:
1. Հակոբ Թագավորի Նոր Թարգմանություն (NKJV), -սա բառացի թարգմանություն է, հիմնված հին հունարեն ձեռագրերի ավանդության վրա, որը կոչվում է *Textus Receptus* (համընդհանուր ընդունված տեքստ):
 2. Նոր Վերստուգված Ստանդարտ Թարգմանություն (NRSV), որը բառացի տարբերակն է Եկեղեցիների Ազգային Խորհրդի կողմից, որը Վերստուգված Ստանդարտ Թարգմանությունն է:
 3. Ժամանակակից Անգլերեն Թարգմանություն (TEV), դիմադիկ հավասարազոր թարգմանություն է հրատարակված ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության Միության կողմից:
 4. Երուսաղեմի Աստվածաշունչ (JB), որը անգլերեն թարգմանություն է հիմնված ֆրանսերեն կաթոլիկ դիմադիկ հավասարազոր թարգմանության վրա
- Չ. Նրանք, ովքեր հունարեն կարդալ չեն կարող, համեմատելով անգլերեն թարգմանությունները կկարողանան լուծել շատ խնդիրներ, որոնց հետ առնչվում են տեքստն ուսումնասիրելու ժամանակ
1. ձեռագրային տարբերակներ
 2. բազմիմաստ բառեր
 3. քերականորեն բարդ տեքստեր և կառուցվածք
 4. երկիմաստ, անորոշ տեքստեր
- Չնայած անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, նրանք նշում են տեքստի այն հատվածները, որոնք պահանջում են ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրություն:
- Է. Յուրաքանչյուր գլխի վերջում կան կարևոր հարցեր քննարկման համար, որոնք կօգնեն կենտրոնացնել ձեր ուշադրությունը այդ գլխի ընդհանուր թեմաների մեկնաբանության արդյունքների վրա:

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

- Ա. Մաթևոսն ու Գուկասը սկսում են Հիսուսի ծննդով, Մարկոսը սկսում է Նրա մկրտությունով, իսկ Հովհաննեսը սկսում է մինչև արարչագործությունը:
- Բ. Հովհաննեսը ներկայացնում է Հիսուս Նազովրեցու ամբողջական աստվածությունը առաջին գլխի հենց առաջին իսկ համարից և կրկնում այս կարևոր միտքը ամբողջ Ավետարանի ընթացքում («Մեսիական գաղտնիքը»):
- Գ. Ակնհայտ կերպով Հովհաննեսն իր Ավետարանը զարգացնում է Սինոպտիկ Ավետարանների հիմնական հաստատումների լույսի ներքո: Նա փորձում է լրացնել և մեկնաբանել Հիսուսի կյանքն ու ուսմունքները վաղ եկեղեցու կարիքների լույսի ներքո (ուշ առաջին դարում):
- Դ. Հովհաննեսը Հիսուս Մեսիայի մասին իր ունեցած տեղեկությունը կառուցում է հետևյալ իրադարձությունների շուրջ
1. յոթ հրաշքները/նշանները և դրանց մեկնությունները
 2. 27 հարցազույցները և/կամ երկխոսությունները անհատների հետ
 3. որոշակի պաշտամունքի և տոն օրերի վրա
 - ա. Շաբաթը
 - բ. Չատիկը (հմմտ. գլուխներ 5-6)
 - գ. Տաղավարահարացը (հմմտ. գլուխներ 7-10)
 - դ. Նավակատիք (հմմտ. 10:22-39)
 4. «Ես Եմ» արտահայտությունները
 - ա. կապված աստվածային անվան հետ (YHWH)
 - 1) Ես եմ (4:26; 8:24,28; 13:19; 18:5-6)
 - 2) Աբրահամի լինելուց առաջ եմ Ես (8:54-59)
 - բ. կանխատեսված պատմությունների հետ
 - 1) Ես եմ կյանքի հացը (6:35, 41, 48, 51)
 - 2) Ես եմ աշխարհի լույսը (8:12)
 - 3) Ես եմ ոչխարների դուռը (10:7, 9)
 - 4) Ես եմ բարի հովիվը (10:11, 14)
 - 5) Ես եմ հարությունը և կյանքը (11:25)
 - 6) Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը (14:6)
 - 7) Ես եմ ճշմարիտ որթը (15:1, 5)
- Ե. Հովհաննեսի և մյուս Ավետարանների միջև եղած տարբերությունները
1. Չնայած ճիշտ է, որ Հովհաննեսի հիմնական նպատակը աստվածաբանական է, նրա օգտագործած պատմությունն ու աշխարհագրությունը բացարձակապես ճշգրիտ է և մանրամասն: Սինոպտիկ ավետարանների և Հովհաննեսի Ավետարանի միջև եղած տարբերությունների ստույգ պատճառն անորոշ է
 - ա. վաղ հուդայական ծառայությունը (վաղ Տաճարի մաքրելը)
 - բ. Ժամանակագրությունը և Հիսուսի կյանքի վերջին շաբաթը
 - գ. նպատակասլաց աստվածաբանական վերակառուցումը
 2. Օգտակար կլինի մի պահ ուշադրություն դարձնել և քննարկել Հովհաննեսի և Սինոպտիկ Ավետարանների միջև ակնհայտ տարբերությունը: Թույլ տվեք մեջբերել George Eldon Ladd from *A Theology of the New Testament* տարբերությունների մասին.

- ա. «Չորրորդ Ավետարանը այնքան տարբերվում է Մինոպտիկներից, որ հարցը պետք է անկեղծորեն բախվի, թե արդյոք այն ճշգրտորեն պատմում է Հիսուսի ուսմունքները, կամ թե քրիստոնեական հավատքն այնքան է փոխել ավանդույթը, որը պատմությունը կուլ է գնացել աստվածաբանական մեկնաբանության մեջ» (էջ 215):
- բ. «Այն լուծումը, որը ամենամոտոն է ձեռքի տակ, այն է, որ Հիսուսի ուսմունքները արտահայտվում են Հովհաննեսի բառապաշարի մեջ: Եթե սա է ճիշտ լուծումը, և եթե մենք պետք է եզրակացնենք, որ Չորրորդ Ավետարանը գրվել է Հովհաննեսի բառապաշարով, այս կարևոր հարցն է առաջ գալիս. Որքանով է Չորրորդ Ավետարանի աստվածաբանությունը Հովհաննեսինը, իսկ որքանով Հիսուսինը: Որքանով է Հիսուսի ուսմունքն այդքան ձուլվել Հովհաննեսի մտքում, որը մենք ունենք որպես Հովհաննեսի մեկնաբանություն, այլ ոչ թե Հիսուսի ուսուցման ճշգրիտ ներկայացում» (էջ 215):
- գ. Լադդը նաև մեջբերում է Օլբրայթի Նոր հայտնագործությունները Պաղեստինում և Հովհաննեսի Ավետարանը, *The Background of the New Testament and Its Eschatology* խմբագրված W. D. Davies և D. Daube
 .Հովհաննեսի և սինոպտիկների միջև ուսուցման մեջ որևէ հիմնարար տարբերություն չկա: Նրանց միջև եղած հակադրությունը կայանում է ավանդույթի համակենտրոնացման մեջ Քրիստոսի ուսմունքների որոշ առումներով, մասնավորապես, որոնք, կարծես, հիշեցնում են Էսսենների ուսմունքը առավել սերտորեն:
 Բացարձակապես ոչինչ չկա ցույց տալու համար, որ Հիսուսի ուսմունքներից որևէ մեկը խեղաթյուրված է կամ կեղծված, կամ էլ նրանց կարևոր նոր տարր է ավելացվել: Այն, որ վաղ եկեղեցու կարիքները ազդել են Ավետարանում ընտրված տարբեր ներգրավելու համար, մենք կարող ենք հեշտությամբ ընդունել, բայց հիմք չկա ենթադրելու, որ այդ Եկեղեցու կարիքները պատասխանատու են աստվածաբանական նշանակության ցանկացած գյուտերի կամ նորարարությունների համար:
 Նոր Կտակարանի գիտնականների և աստվածաբանների տարօրինակ ենթադրություններից մեկն այն է, որ Հիսուսի միտքն այնքան սահմանափակ էր, որ Հովհաննեսի և Մինոպտիկների միջև ցանկացած ակնհայտ հակադրություն պետք է լինի վաղ քրիստոնեական աստվածաբանների տարբերությունները:
 Յուրաքանչյուր մեծ մտածող և անձնավորություն պետք է տարբեր կերպ մեկնաբանվի տարբեր ընկերների և լսողների կողմից, որոնք կընտրեն այն, ինչ նրանք տեսել և լսել են ե (էջ 170-171):
- դ. Եվ կրկին Ջորջ Է. Լադդից.
 .Նրանց միջև եղած տարբերությունն այն չէ, որ Հովհաննեսը աստվածաբանական է մյուսները ոչ, այլ բոլորը աստվածաբանական են տարբեր ձևերով: Թարգմանված պատմությունը կարող է ավելի ճշգրիտ ներկայացնել իրավիճակի փաստերը, քան պարզապես միջոցառումների ժամանակացույցը: Եթե Հովհաննեսը աստվածաբանական մեկնաբանություն է, դա դեպքերի մեկնաբանություն է, որոնք Հովհաննեսը համոզված է եղել, որ տեղի են ունեցել պատմության մեջ: Ակնհայտ է, որ Մինոպտիկ

Ավետարանների մտադրությունը չէ հայտնել Հիսուսի *ipsissima verba* (ճշգրիտ բառերը) և Նրա կյանքի իրադարձությունների կենսագրությունը: Նրանք Հիսուսի դիմանկարներն են և նրա ուսմունքների ամփոփումները: Մատթևոսը և Ղուկասը ազատ են զգում վերափոխելու Մարկոսի նյութը և Հիսուսի ուսուցումը զգալի ազատությամբ հաղորդելու համար: Եթե Հովհաննեսը ավելի շատ ազատություն օգտագործեր, քան Մատթևոսն ու Ղուկասը, այն է, որ նա ցանկանում էր Հիսուսի ավելի խորը և վերջնական դիմանկարը ցույց տալ (էջ 221-222):

ՀԵՂԻՆԱԿԸ

- Ա. Ավետարանը անանուն է, սակայն հուշում է Հովհաննեսի հեղինակությունը
1. ականատես հեղինակ (տես 19:35)
 2. ,սիրելի աշակերտե արտահայտությունը (թե Պոլիկրատը և թե Իռենաոսը նրան ճանաչում են որպես Հովհաննես Առաքյալ)
 3. Զեբեդեոսի որդին, Հովհաննեսը, երբեք չի անվանվել անունով
- Բ. Ավետարանից ակնհայտ է պատմական կարգը, հետևաբար, հեղինակության հարցը մեկնաբանության մեջ կարևոր գործոն չէ: Ներշնչված հեղինակի հաստատումը վճռական է:
- Հովհաննես Ավետարանի հեղինակությունն ու ամսաթիվը չի ազդում ներշնչման վրա, այլն մեկնաբանության: Մեկնաբանները պատմական իրադարձություն են փնտրում, ինչը պատճառ դարձավ գիրքը գրելուն: Պետք է համեմատել Հովհաննեսի դուալիզմը, հետևյալի հետ
1. հրեական երկու շրջանները
 2. Արդարության Կումրանի ուսուցիչը
 3. Զրադաշտական կրոնը
 4. Գնոստիկ միտքը
 5. Հիսուսի եզակի տեսակետը
- Գ. Վաղ ավանդական տեսակետն այն է, որ Զեբեդեոսի որդին՝ Հովհաննես Առաքյալը, մարդկային, ականատես աղբյուրն է: Սա պետք է հստակեցվի, քանի որ երկրորդ դարի արտաքին աղբյուրները կարծես ուրիշներին են կապում Ավետարանի ստեղծման հետ
1. Հավատացյալները և Եփեսոսի երեցները խրախուսում էին ծերացող Առաքյալին գրելու համար (Յուսեբիոսը մեջբերում է Կլեմենտ Ալեքսանդրիացուն)
 2. Առաքյալներից Անդրեասը (Մուրատորիան հատվածը, 180-200թթ. Հռոմից)
- Դ. Որոշ ժամանակակից գիտնականներ ենթադրել են մեկ այլ հեղինակ՝ հիմնվելով Ավետարանի ոճի և թեմաների նյութերի վրա: Շատերը, որպես տարեթիվ ենթադրում են երկրորդ դարի կեսը (115թ-ից առաջ)
1. գրված է Հովհաննեսի աշակերտների կողմից (Հովհաննեսի ազդեցության ներքո), որոնք հիշում էին նրա ուսմունքները (J. Weiss, B. Lightfoot, C. H. Dodd, O. Cullmann, R. A. Culpepper, C. K. Barrett)
 2. գրված է Երեց Հովհաննեսի կողմից (Ասիայի մի շարք առաջատար առաջնորդներից մեկը, որը ազդեցություն է ունեցել Հովհաննես առաքյալի աստվածաբանության և տերմինաբանության վրա), որը բերված է Պապիասի

(70-146թթ.) անձանոթ հատվածից, որը թարգմանվել է Յուսաբեռուի կողմից (280 -339թթ.)

- Ե. Հովհաննեսի փաստերը, որպես Ավետարանի նյութի հիմնական աղբյուրը
1. ներքին ապացույցներ
 - ա. հեղինակը գիտեր հրեա ուսմունքներն ու ծեսերը և կիսում է նրանց հինկտակարանյան աշխարհայացքը
 - բ. հեղինակը գիտեր Պաղեստինի ու Երուսաղեմի վիճակը մինչև 70թ.
 - գ. հեղինակը պնդում է, որ ականատես է եղել
 - 1) 1:14
 - 2) 19:35
 - 3) 21:24
 - դ. հեղինակը եղել է առաքելական խմբի անդամ, քանի որ ծանոթ է.
 - 1) ժամանակի և վայրի մանրամասներին (գիշերային դատավարությունները)
 - 2) թվերի մանրամասներին (2: 6 ջրի կարասները և 21:11 ձուկը)
 - 3) անձանց մանրամասներին
 - 4) հեղինակը գիտեր իրադարձությունների մանրամասները և նրանց արձագանքը
 - 5) հեղինակը կարծես թե նշվում է որպես սիրելի աշակերտ
 - ա) 13: 23,25
 - բ) 19: 26-27, 34-35
 - գ) 20: 2-5,8
 - դ) 21: 7, 20-24
 - 6) հեղինակը, կարծես, Պետրոսի հետ միասին նեղ շրջանի մեջ է
 - ա) 13:24
 - բ) 20: 2
 - գ) 21: 7
 - 7) Ջեբեղեռուի որդի՝ Հովհաննեսի անունը, երբեք չի հայտնվում այս Ավետարանում, ինչը կարծես անսովոր է թվում, քանի որ նա եղել է Առաքելական ներքին շրջանակի մեջ
 2. Արտաքին ապացույցներ
 - ա. Ավետարանը հայտնի է
 - 1) Իռենեոսը (120-202թթ.), որը համագործակցում էր Պոլիկարպի հետ, ճանաչում էր Հովհաննես Առաքյալին (տես, Eusebius' *Historical Eccleasticus* 5: 20: 6-7)- .Տիրոջ աշակերտ Հովհաննեսը, ով հենվել էր Նրա կրծքին և ինքն է թողել Ավետարանը Եփեսոսում, Ասիայումն (*Haer*, 3: 1: 1, մեջբերված Eusebius *Hist. Eccl.* 5: 8: 4):
 - 2) Կլեմենտ Ալեքսանդրիացին (153-217թթ.) - Հովհաննեսը, ում հորդորեցին ընկերները և Հոգին աստվածորեն գործեց, կազմեց հոգևոր Ավետարանն (Eusebius *Historical Eccleasticus* 6: 14: 7)
 - 3) Ջասթին Նահատակը (110-165թթ.) իր *Dialogue with Trypho* 81: 4
 - 4) Տերտուլիան (145-220թթ.)
 - բ. Հովհաննեսի հեղինակությունը հաստատվեց վաղ վկաների կողմից
 - 1) Պոլիկարպ (70-156թթ., գրված Իրանեոսի կողմից), որը Չմյունխայի եպիսկոպոսն էր (155թ.)

- 2) Պապիասը (70-146թթ., արձանագրված Հռոմի և Յուսեփոսի հակա- Մարկոնիտի նախաբանի կողմից), որը Փռուզիայի Հիերապոլիսի եպիսկոպոսն էր և տեղեկացրեց, որ Հովհաննես առաքյալի աշակերտն է եղել

- Ձ. պատճառները, որոնք օգտագործվում են կասկածելի ավանդական հեղինակության համար
 1. Ավետարանի կապը գնոստիկ թեմաների հետ
 2. 21-րդ գլուխի ակնհայտ հավելվածը
 3. Ժամանակագրական անհամապատասխանությունները Սինոպտիկների հետ
 4. Հովհաննեսը իրեն չէր ասի «սիրելի աշակերտ»
 5. Հովհաննեսի Հիսուսը տարբեր բառապաշարներ և ժանրեր է օգտագործում, քան Սինոպտիկները
- Է. Եթե ենթադրենք, որ դա Հովհաննես առաքյալն էր, ապա ինչ կարող ենք ենթադրել այդ մարդու մասին:
 1. Նա գրեց Եփեսոսից (Իրենեսոսը ասում է «Եփեսոսից Ավետարանը թողեց»)
 2. Նա գրեց, երբ ծեր էր (Իրենեսոսն ասում է, որ ապրել է մինչև Տրայանայի թագավորությունը, 98-117 թթ.),

ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Եթե մենք ենթադրենք, որ Հովհաննես Առաքյալը
 1. մինչև 70թ., երբ Երուսաղեմը ոչնչացվեց հռոմեացի զենեթալ՝ (հետագայում կայսր) Տիտոսի կողմից
 - ա. Հովհ. 5: 2 «Այժմ Երուսաղեմում Ոչխարաց դռան մոտ մի ավազան կա, որ Եբրայերեն Բեթհեզդա է կոչվում, որ հինգ սրահ ունի»:
 - բ. առաքյալների խմբին շարունակաբար օգտագործում է «աշակերտներ» տիտղոսը
 - գ. ենթադրվում է, որ ավելի ուշ գնոստիկ տարրերը հայտնաբերվել են Մեռյալ ծովի մագաղաթներում, որոնք ցույց են տալիս, որ դրանք առաջին դարի աստվածաբանական ժարգոնի մաս են եղել
 - դ. 70թ.Տաճարի և Երուսաղեմի ոչնչացման մասին ոչինչ չի հիշատակվում
 - ե. Հայտնի ամերիկյան հնագետ Օլբրայթը Ավետարան տարեթիվ է համարում 70-ականների վերջը կամ 80-ականների սկիզբը:
 2. ավելի ուշ, առաջին դարում
 - ա. Հովհաննեսի զարգացրած աստվածաբանությունը
 - բ. Երուսաղեմի անկումը չի նշվում, քանի որ տեղի է ունեցել ավելի քան քսան տարի առաջ
 - գ. Հովհաննեսի օգտագործումը գնոստիկ տեսակի ձևակերպման և շեշտադրումը
 - դ. եկեղեցու վաղ ավանդույթները
 - 1) Իրենիստուս
 - 2) Եուսեփոս
- Բ. Եթե մենք ընդունում ենք «Հովհաննես երեցին», ապա ամսաթիվը գալիս է երկրորդ դարի կեսին: Այս տեսությունը սկսեց Դիոնիսոսի՝ Հովհաննես Առաքյալի

հեղինակության մերժումով (գրական պատճառներ): Եուսեբիոսը, որը մերժեց Հայտնության Գրքի Հովհաննես Առաքյալի հեղինակությունը աստվածաբանական պատճառներով, զգում էր, որ ինքը գտել է մեկ այլ «Հովհաննես» ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում Պապիասի մեջբերման մեջ (*Historical Eccleasticus* 3: 39: 5,6), որը թվարկում է երկու «Հովհաննեսներ» (1) Առաքյալը և (2) Երեցը :

ՄՏԱՑՈՂՆԵՐԸ

- Ա. Ի սկզբանե գրվել է Փոքր Ասիայի հռոմեական նահանգի եկեղեցիներին, հատկապես Եփեսոսի:
- Բ. Նագովրեցի Հիսուսի կյանքի և անձի այս պատմության խորիմաստ պարզության և խորության պատճառով, սա դարձավ սիրելի Ավետարան՝ հելլենիստական հեթանոսական հավատացյալների և գնոստիկ խմբերի համար:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Ա. Ավետարանը ինքն է հաստատում իր ավետարանչական նպատակը, 20: 30-31
 1. հրեական ընթերցողների համար
 2. հեթանոս ընթերցողների համար
 3. նորաստեղծ գնոստիկ ընթերցողների համար
- Բ. Թվում է, որ այն ունի ապոկրֆետիկ հարված
 1. Հովհաննես Մկրտչի մոլեռանդ հետևորդների դեմ
 2. սկսնակ գնոստիկ կեղծ ուսուցիչների դեմ (հատկապես Նախաբանը); այս գնոստիկ կեղծ ուսմունքները նաև ձևավորում են այլ Նորկտակարանյան գրքեր:
 - ա. Եփեսացիս
 - բ. Կողոսացիս
 - գ. Հովվական նամակները (I Տիմոթեոս, Տիտոս, II Տիմոթեոս)
 - դ. I Հովհաննես (I Հովհ. կարող է գործել որպես Ավետարանի համար ծածկագիր)
- Գ. Հնարավորություն կա, որ 20:31 նպատակի պնդումը կարելի է հասկանալ որպես քաջալերանք հաստատականության վարդապետության, ինչպես նաև ավետարանչության համար, այնպես, որ հետևողականորեն օգտագործումը ՆԵՐԿԱԺԱՄԱՆԱԿՈՎ փրկությունը նկարագրելու համար է: Այս իմաստով Հովհաննեսը, ինչպես Հակոբոսը, կարող է հավասարակշռել Պողոսի աստվածաբանության չափից շատ ուշադրությունը Փոքր Ասիայի որոշ խմբերի վրա (տես Բ Պետրոս 2:15-16): Զարմանալի է, որ վաղ եկեղեցական ավանդույթը Հովհաննեսին է կապում Եփեսոսի հետ, այլ ոչ թե Պողոսին (տես F. F. Bruce's *Peter, Stephen, James and John: Studies in Non-Pauline Christianity*, էջ 120-121):
- Դ. Վերջաբանը(գլուխ 21) կարծես թե պատասխանում է վաղ եկեղեցու կոնկրետ հարցերին
 1. Հովհաննեսը լրացնում է Մինոպտիկ Ավետարանների պատմությունները: Այնուամենայնիվ, նա կենտրոնանում է Հրեաստանի ծառայությանը, հատկապես Երուսաղեմի:
 2. Հավելվածում նկարագրված երեք հարցերը, գլուխ 21
 - ա. Պետրոսի վերականգնումը

- բ. Հովհաննեսի երկարակեցությունը
- գ. Հիսուսի ուշացած վերադարձը

Ե. Հովհաննեսին ոմանք համարում են չկարևորող սակրամենտալիզմ, դիտավորյալ անտեսելով և չարձանագրելով կամ քննարկելով գաղտնիքները, չնայած գլուխ 3 (մկրտության համար) և 6-րդ գլխում (Տերունական ընթրիքի) կատարյալ իմաստալից հնարավորությունների:

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՈՒՐՎԱԳԾԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Փիլիսոփայական / աստվածաբանական նախաբան (1: 1-18) և գործնական վերջաբան (գլուխ 21)

Բ. Յոթ հրաշք նշաններ, Հիսուսի ծառայության ժամանակ (գլուխներ 2-12) և դրանց մեկնաբանումը.

- 1. Կանայում հարսանիքի ժամանակ ջրի վերածելը գինու (2: 1-11)
- 2. Կափառնայում ազնվականի որդու բժշկումը (4: 46-54)
- 3. Երուսաղեմի Բեթեսդա լողավազանի կաղ մարդու բուժում (5: 1-18)
- 4. Գալիլեայում մոտ 5000 հոգու կերակրվելը (6: 1-15)
- 5. Գալիլեա ծովի վրայով քայլելը (6: 16-21)
- 6. Երուսաղեմում իծնե կույրի բժշկումը (9: 1-41)
- 7. Բեթանիայում Ղազարոսի հարությունը (11: 1-57)

Գ. Զրույցներ և երկխոսություն անհատների հետ

- 1. Հովհաննես Մկրտիչը (1: 19-34, 3: 22-36)
- 2. աշակերտները
 - ա. Անդրեաս և Պետրոս (1: 35-42)
 - բ. Փիլիպոս և Նաթանայել (1: 43-51)
- 3. Նիկոդեմոսը (3: 1-21)
- 4. Մամարացի կին (4: 1-45)
- 5. Հրեաները Երուսաղեմում (5: 10-47)
- 6. Ժողովուրդը Գալիլեայում (6: 22-66)
- 7. Պետրոսը և աշակերտները (6: 67-71)
- 8. Հիսուսի եղբայրները (7: 1-13)
- 9. Հրեաները Երուսաղեմում (7: 14-8: 59, 10: 1-42)
- 10. Աշակերտները վերնատանը (13: 1-17: 26)
- 11. Հրեական կալանք և դատավարություն (18: 1-27)
- 12. Հռոմեական դատավարությունը (18: 28-19: 16)
- 13. հետհարության զրույցներ, 20: 11-29
 - ա. Մարիամի հետ
 - բ. Տասը Առաքյալների հետ
 - գ. Թոմասի հետ
- 14. վերջբան երկխոսություն Պետրոսի հետ, 21: 1-25
- 15. (7: 53-8: 11, շնացող կնոջ պատմությունը, ի սկզբանե Հովհաննեսի Ավետարանի մաս չի եղել):

Դ. Որոշ երկրպագության / տոնական օրեր

- 1. Շաբաթերը (5: 9, 7:22, 9:14, 19:31)

2. Զատիկները (2:13, 6: 4, 11:55; 18:28)
3. Տաղավարահարաց տոները (գլուխ 8-9)
4. Նավակատիք (լույսերի փառատուն, տես 10:22)

Ե. «Ես եմ» հայտարարության օգտագործումը

1. «Ես եմ, որ Եմ» (4:26; 6:20, 8: 24,28,54-59, 13:19; 18: 5-6,8)
2. «Ես եմ կյանքի հացը» (6: 35,41,48,51)
3. «Ես եմ աշխարհի լույսը» (8:12, 9: 5)
4. «Ես եմ ոչխարների դուռը» (10: 7,9)
5. «Ես եմ բարի հովիվը» (10: 11,14)
6. «Ես եմ հարությունը և կյանքը» (11:25)
7. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» (14: 6)
8. «Ես եմ ճշմարիտ որթատունկը» (15: 1,5)

ԸԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ (տես էջ 4)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (Ժանրը)

ԸԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 4)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ^a	NKJV	NRSV	TEV	NJB
Բանը Մարմին եղավ 1:1-5	Հավիտենական Խոսքը 1:1-5	Նախաբան 1:1-5	Կյանքի Խոսքը 1:1-5	Նախաբան 1:1-18
1:6-13	Հովհաննեսի վկայությունը Ճշմարիտ Լույսը 1:6-13	1:6-9 1:10-13	1:6-9 1:10-13	
1:14-18	Բանը Մարմին եղավ 1:14-18	1:14-18	1:14 1:15 1:16-18	
Հովհաննես Սկրտիչի վկայությունը 1:19-28	Անապատի ձայնը 1:19-28	Հովհաննեսի վկայությունը 1:19-23 1:24-28	Հովհաննես Սկրտիչի պատգամը 1:19 1:20 1:21ա 1:21բ 1:21գ 1:22ա 1:22բ 1:23 1:24-25 1:26-27 1:28	Հովհաննեսի վկայությունը 1:19-28
Աստծո Գառը 1:29-34	Աստծո Գառը 1:29-34	1:29-34	Աստծո Գառը 1:29-31 1:32-34	1:29-34
Առաջին աշակերտները 1:35-42	Առաջին աշակերտները 1:35-42	Հիսուսի առաջին աշակերտների վկայությունը 1:35-42	Հիսուսի առաջին աշակերտները 1:35-36 1:37-38ա 1:38բ 1:39 1:42բ	Առաջին աշակերտները 1:35-39
Փիլիպպոսի և Նաթանայելի կանչը 1:43-51	Փիլիպպոս և Նաթանայել 1:43-51	1:43-51	Հիսուսը կանչում է Փիլիպպոսին և Նաթանայելին 1:43-45 1:46ա 1:46բ 1:48ա 1:48բ 1:49 1:50-51	1:43-51

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

*Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և վերլուծել է առաջին գլուխը: Ամեն մի պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Այս թեման յուրաքանչյուր թարգմանված տարբերակում ձևավորվում է իր իսկ ձևով: Կարդալով տեքստը, հարցեր տվեք ինքներդ ձեզ, թե թարգմանություններից, որ մեկն է ավելի համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձեր հասկացողությանը:

Յուրաքանչյուր գլխի ժամանակ դուք նախ պետք է կարդաք Աստվածաշունչը և փորձեք որոշել թեմաները (պարբերությունները): Հետո ձեր հասկացողությունը համեմատեք ժամանակակից թարգմանությունների հետ: Միայն այդ ժամանակ, երբ հասկանաք հեղինակի մտադրությունը, հետևելով նրա տրամաբանությանն ու շարադրանքին, դուք կկարողանաք ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Միայն հեղինակն է ներշնչված – ընթերցողներն իրավունք չունեն փոխել կամ խեղաթյուրել նրա պատգամը/ ուղերձը: Աստվածաշնչի ընթերցողներն պարտավոր են կիրառել ներշնչված ճշմարտությունը ժամանակակից իրավիճակի և իրենց կյանքերի մեջ:

Բոլոր տեխնիկական տերմիններն ու հասպտումները ամբողջությամբ ներկայացված են Հավելված 1,2 և 3 –ում:

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ և ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏԸ 1-18 հհ.

- Ա. Պոենի/հիմնի/հավատքի հանգանակության աստվածաբանական ուրվագիծը
1. Հավիտենական, Աստվածային, Արարչի, Փրկիչ Քրիստոս, հհ. 1-5 (Հիսուսը որպես Խոսք)
 2. մարգարեական վկայությունը Քրիստոսի մասին, հհ. 6-9,15 (Հիսուսը որպես Լույս)
 3. մարմին հագած Քրիստոսը ցույց է տալիս Աստծուն, հհ. 10-18 (Հիսուսը որպես Որդի)
- Բ. 1-18 հհ. աստվածաբանական կառուցվածքը և կրկնվող թեմաները
1. Հիսուսի նախագոյությունը, Նա միշտ եղել է Հոր Աստծո հետ (1ա)
 2. Հիսուսը միշտ ունեցել է խորը և մտերմիկ հարաբերությունը Հոր Աստծո հետ (1բ, 2, 18գ)
 3. Հիսուսը ունի նույն էությունը ինչ Հայր Աստվածը (1գ, 18բ)
 4. Հայր Աստծո միջոցը փրկագնման և որդեգրման համար (12-13)
 5. մարմնավորում, Աստված մարդացավ (9, 14)
 6. հայտնություն, Աստված ամբողջությամբ բացահայտված է և հասկանալի (18դ)
- Գ. Հին եբրայերեն և հունարեն նշանակությունները *logos* (բառ) տերմինի
1. Հին եբրայերեն
 - ա. արտասանված բառի գորությունը (Ես. 55:11; Սաղ. 33:6; 107:20; 147:15,18), ինչպես Արարչագործության ժամանակ (Ծննդ. 1:3,6,9,11,14,20,24, 26,29) և նախահայրերի օրհնություններ մեջ (Ծննդ. 27:1; 49:1)
 - բ. Առակաց 8:12-23 «Իմաստություն» մարմնավորված է որպես Աստծո անդրանիկ և ամբողջ արարչագործության ստեղծման միջոց (հմմտ. Սաղ. 33:6 և անկանոն գիրք *Սողոմոնի Իմաստությունը*, 9:9)
 - գ. Թարգումները (թարգմանություններ և մեկնաբանություններ արամեերեն լեզվով) *logos* –ը փոխարինում են «Աստծո Խոսքը» արտահայտությունով, քանի որ անտրոպոմորֆիկ/մարդանմանաբանության տերմինների օգտագործումը շատ անհարմար էր
 2. Հունարեն
 - ա. Հերակլեյտոս – աշխարհը անընդհատ գտնվում էր շարժման և փոփոխման մեջ; անդեմ աստվածային և անփոփոխ *logos* –ը ամենը միացրեց իրար և սկսեց ղեկավարել փոփոխության գործընթացը
 - բ. Պլատոն – անդեմ աստվածային և անփոփոխ *logos* –ը ամբացրեց մոլորակների շարժումը իրենց երկնային ընթացքի մեջ և հաստատեց տարվա եղանակները
 - գ. ստոյիկյաններ – նրանց պատկերացումով *logos*–ը «աշխարհային դատողություն» էր կամ ամեն ինչի կառավարողը, բայց մասամբ անդեմ էր
 - դ. Փիլոն – նա անձնավորեց *logos*-ի գաղափարը որպես «քահանայապետ, ով մարդկային հոգիները ներկայացնում է Աստծո առաջ» կամ «կամուրջ մարդու և Աստծո միջև» կամ էլ «ղեկ, որով կառավարում է տիեզերքը» (*kosmocrater*):
- Դ. Չարագացած գնոստիկ աստվածաբանական/փիլիսոփայական տարրերը 2-րդ դարում Թ.Հ.
1. օնոթլոգիական (հավիտենական) և անտագոնիստիկ դուալիզմը Հոգու և նյութի միջև
 2. նյութը չար է և հաստատական; Հոգին բարի է
 3. Գնոստիկ համակարգը ընդունում է մի շարք հրեշտակային մակարդակներ (*aeons*) բարձր, բարի աստծո և ավելի ցածր աստծո միջև, որը կարող էր նյութ ստեղծել: Ոմանք նույնիսկ (ինչպես Մարկիոնը) պնդում էին, որ այս ավելի ցածր աստվածը Հին Կտակարանի ԵՃՈՎԱՆ էր:
 4. Փրկություն կարելի է ստանալ միայն
 - ա. գաղտնի գիտություն ունենալով կամ գաղտնագիրը իմանալով, որը թույլ կտա մարդուն անցնել այս բոլոր հրեշտակային մակարդակների միջով՝ Աստծուն միանալու իրենց ճանապարհին
 - բ. յուրաքանչյուր մարդու մեջ դրված աստվածային կայծի շնորհիվ, բայց որի մասին նա չգիտի այնքան ժամանակ, մինչև որ չի ստանում գաղտնի գիտությունը
 - գ. հայտնության հատուկ անձնական գործոնի օգնությամբ, որը մարդուն տալիս է այս գաղտնի գիտությունը (Քրիստոսի Հոգին)
 5. Մտային այսպիսի համակարգը պնդում էր Հիսուսի աստվածությունը, բայց ուրանում Նրա իրական և հարատև մարմնավորումը և կենտրոնական փրկարար տեղը:
- Ե. Պատմական առանձնահատկությունները

1. Համարներ 1-18-ը *logos* տերմինի օգտագործման պատճառով, փորձում է ներկայացնել միառժամանակ երկու խմբի մարդկանց՝ երբայերեն և հունարեն մտածելակերպերը:
 2. Գնոստիցիզմի հերետիկոսությունը հանդիսանում է փիլիսոփայական աստառ Հովհաննու Ավետարանի այսպիսի բարձր աստիճանի ներածության կառուցվածքի համար: Հովհաննու I թուղթը կարող է ուղեկցող թուղթը լինել Հովհաննու Ավետարանի: Մտածելակերպի աստվածաբանական համակարգը, որը կոչվում էր «գնոստիցիզմ» չի հանդիպում որևէ գրավոր աղբյուրներում մինչև 2-րդ դարը, բայց սկզբնական գնոստիկ թեմաներ են հայտնաբերվել Սեոյալ Ծովի մագաղաթներում և Ֆիլոնի մեջ:
 3. Սինոպտիկ Ավետարաններում (հատկապես Մարկոսում) Հիսուս Քրիստոսի աստվածության քողը չի բացվում (մեսիական գաղտնիքը) մինչև Գողգոթան, բայց Հովհաննեսը, գրելով ավելի ուշ, զարգացնում է վճռական թեմաներ Հիսուսի մասին որպես ամբողջությամբ Աստված և ամբողջությամբ մարդ (Մարդու Որդի, հմմտ. Եզ. 2:1 և Դան. 7:13) հենց առաջին գլխում:
- Ձ. Տես Հատուկ Թեմա : «Ավետարան ըստ Հովհաննեսի 1 գլուխը համեմատած Հովհ. I թղթի հետ»:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:1-5
¹Սկզբումն էր Բանը. եւ Բանն Աստուծոյ մօտ էր. եւ Բանն Աստուած էր:² Նա սկզբումն Աստուծոյ մօտ էր:
³Ամեն ինչ նորանով եղաւ, եւ առանց նորան ոչինչ չեղաւ, ինչ որ եղաւ:⁴Նորանով էր կեանքը, եւ կեանքը մարդկանց լոյսն էր:⁵Եւ լոյսը խաւարումը լոյս է տալիս. եւ խաւարը չիմացաւ նորան:

1:1 «Սկզբում» Սա անդրադարձնում է Ծննդոց 1:1 և նաև օգտագործված է I Հովհ. 1:1, որը վերաբերվում է մարմնավորմանը: Հնարավոր է, որ I Հովհ. թուղթը փակում է Ավետարանը: Երկուսն էլ խոսում են գնոստիցիզմի մասին: 1-5 համարները հաստատում են Հիսուս Քրիստոսի աստվածային նախագոյությունը մինչև արարչագործությունը (հմմտ. 1:15; 8:56-59; 16:28; 17:5; II Կոր. 8:9; Փիլ. 2:6-7; Կող. 1:17; Եբր. 1:3; 10:5-8):

- Նոր Կտակարանը նկարագրվում է որպես
1. նոր ստեղծագործություն, առանց մեղքի (այն է, Ծննդ. 3:15 կատարված մարդկության համար)
 2. նոր նվաճում (Խոստացյալ Երկիր)
 3. նոր ելից (կատարված մարգարեություն)
 4. նոր Մովսես (օրենք տվող)
 5. նոր Հեսու (հմմտ. Եբր. 4:8)
 6. նոր ջրի հրաշք (հմմտ. Եբր. 3-4)
 7. նոր մանանա (հմմտ. Հովհ. 6)

և այլն, հատկապես Երբայեցիս թղթում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԿԻՉԲԸ (ARCHE)

Անգլերեն լեզվում կա «domain» բառը, որը համապատասխանում է հունարեն *archē* տերմինին, որը և նշանակում է «սկիզբ, աղբյուր» կամ «ծագումը» ինչ որ մի բանի.

1. ստեղծագործության կարգ ու կանոնի կամ հերթականության սկիզբը (հմմտ. Հովհ. 1:1; I Հովհ. 1:1; Եբր.1:10)
2. ավետարանի սկիզբը (հմմտ. Մարկ. 1:1; Փիլ. 4:15; II Թես. 2:13; Եբր. 2:3)
3. առաջին վկաները կամ ականատեսները (հմմտ. Դուկ. 1:2)
4. նշանների սկիզբը (հրաշքներ, հմմտ. Հովհ. 2:11)
5. առաջին սկզբունքները (հմմտ. Եբր. 5:12)
6. ավետարանի ճշմարտություններին վստահելու սկիզբը (հմմտ. Եբր. 3:14)
7. սկիզբը, Կող. 1:18; Հայտ. 3:14

Այս տերմինը նաև օգտագործվում է հետևյալ իմաստով «իշխանություն» կամ «կառավարություն, հեղինակություն, տերություն»:

1. մարդկային իշխանություններ
 - ա. Դուկ. 12:11
 - բ. Դուկ. 20:20

- գ. Հն.13:3; Տիտոս 3:1
- 2. հրեշտակային իշխանություններ
 - ա. Հն. 8:38
 - բ. I Կոր. 15:24
 - գ. Եփ. 1:21; 3:10; 6:12
 - դ. Կող. 1:16; 2:10,15
 - ե. Հուդա 6հ.

Այս կեղծ վարդապետները արհամարհանքով էին վերաբերվում իշխանությունների հետ, թե երկրային և թե երկնային: Նրանք հակաօրինականության կողմնակիցներ էին: Նրանք իրենց ցանկություններն ու ձգտումները վեր դասեցին Աստծուց, հրեշտակներից, քաղաքացիական իշխանություններից, և եկեղեցու առաջնորդներից:

- **«Էր»** (երեք անգամ) Սա ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ (հմմտ. հհ. 1,2,4,10) որը կենտրոնանում է անցյալում շարունակական գոյության վրա: Այս ԺԱՄԱՆԱԿԸ օգտագործվում է Լոգոսի նախագոյությունը ցույց տալու համար (հմմտ. 8:57-58; 17:5,24; II Կոր. 8:9; Կող. 1:17; Եբր. 10:5-7): Սա հակադրվում է հհ. 3, 6, և 14-ի ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿԻՆ:

- **«Քանը»** Հունարեն *logos* տերմինը վերաբերվում է պատգամին, և ոչ թե մի բառի: Այս կոնտեքստում սա տիտղոս է, որը հույներն օգտագործում են նկարագրելու համար «աշխարհի բանականությունը» իսկ հրեաներն այն օգտագործում էին որպես համանմանություն «Իմաստություն» բառի հետ: Հովհաննեսն ընտրել էր այս տերմինը, հաստատելու համար, որ Աստծո Խոսքը թե անձ է և թե պատգամ: Տես կոնտեքստային ներըմբռնումներ, Գ.

- **«Աստուծոյ մօտ էր»** Այս արտահայտության իմաստը կարելի է ասել այսպես նաև «դեմ առ դեմ»: Այն պատկերում է մտերմիկ հարաբերություն: Այն նաև ցույց է տալիս մեկ աստվածային բնության գաղափարը, որը հանդես է գալիս երեք անձերով (տես Հատուկ Թեմա: Երրորդություն 14:26): Նոր Կտակարանը պնդում է այն պարադոքսը, որ Հիսուս Քրիստոսը առանձին անձ է, բայց միևնույն ժամանակ Հոր հետ մեկ է:

- **«Քանն Աստուած էր»** Այստեղ բայը ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ էր, ինչպես համար 1ա. «Աստված» (*Theos*) բառի սկզբում ՀՈՒ ԶԿԱ (որը ցույց է տալիս ԵՆԹԱԿԱՆ, տես Ֆ.Ֆ. Բրյուս «Հարցերի պատասխանները» էջ 66 (F. F. Bruce, *Answers to Questions*, p. 66), բայց *Theos* -ը դրված է հունարեն արտահայտության սկզբում՝ ընդգծելու համար: Այս համարը և հ.18-ը խիստ պնդում են Լոգոսի նախագոյության ամբողջական աստվածությունը (հմմտ. 5:18; 8:58; 10:30; 14:9; 17:11; 20:28; Հն. 9:5; Եբր. 1:8; II Պետ. 1:1): Հիսուսն ամբողջությամբ Աստված է և ամբողջությամբ Մարդ (հմմտ. I Հովհ. 4:1-3): Նա նույնը չէ ինչ Հայր Աստվածը, բայց Նա ունի նույն աստվածային էությունը ինչ Հայրը:

Նոր Կտակարանը բավականին պարզ պնդում է Հիսուս Նազովրեցու ամբողջական աստվածությունը, բայց և ընդգծում է Հայր Աստծո անհատականությունը: Մեկ աստվածային էության մասին խոսվում է Հովհ. 1:1; 5:18; 10:30,34-38; 14:9-10; և 20:28, իսկ նրանց տարբերությունների մասին՝ Հովհ. 1:2,14,18; 5:19-23; 8:28; 10:25,29; 14:11,12,13,16.

1:2 Այս համարը զուգահեռ է հ. 1 և նորից ընդգծում է ցնցող, միաստվածության տեսանկյունից, ճշմարտություն այն մասին, որ Հիսուսը, որը ծնվել էր 6-5մ.թ., միշտ գոյություն է ունեցել Հոր Աստծո հետ միասին, և ուստի Ինքը Աստված է:

1:3 **«Ամեն ինչ նորանով եղաւ»** Լոգոսը Հոր վստահված անձն էր արարչագործության ժամանակ թե տեսանելի և թե անտեսանելի (հմմտ. հ. 10; I Կոր. 8:6; Կող. 1:16; Եբր. 1:2): Նրա դերը նման է իմաստությանը Սաղ. 33:6 և Առ. 8:12-23 (եբրայերենում «իմաստություն» ԻԳԱԿԱՆ սեռի ԳՈՅԱԿԱՆ է):

- **«Եւ առանց նորան ոչինչ չեղաւ»** Այս արտահայտությունը հրեշտակների հավիտենական լինելու գնոստիկ կեղծ ուսմունքի հեքքումն է, բարձր, բարի աստվածության և ավելի քիչ հոգևոր էակների միջև, որը և ստեղծել է նյութը՝ մատերիան (տես Կոնտեքստային ներըմբռնումներ, Գ.):

1:4 «Նորանով էր կեանքը» Այս արտահայտությունը ընդգծում է, որ «կյանքը» ինքնին առաջացել է Որդուց՝ Բանից: Հովհաննեսը օգտագործում է «*zoe*» տերմինը, որը վերաբերվում է հարուցյալ կյանքին, հավիտենական կյանքին, Աստծո կյանքին (հմմտ. 1:4; 3:15,36; 4:14,36; 5:24,26,29,39,40; 6:27,33,35,40,47,48,51,53, 54,63,65, և այլն): Մեկ ուրիշ հունարեն տերմին *bios*, որը նույնպես նշանակում է «կյանք», օգտագործվում է երկրային, կենսաբանական կյանքի համար (հմմտ. I Հովհ.2:16):

▪ «**Եւ կեանքը մարդկանց լոյսն էր**» Լույսը համընդհանուր տարածված փոխաբերություն էր, որը Հովհաննեսը օգտագործում է Աստծո ճշմարտությունն ու գիտությունը նկարագրելու համար (հմմտ. Հովհ. 3:19; 8:12; 9:5; 12:46): Ուշադրություն դարձրեք, որ կյանքը բոլոր մարդկանց համար էր: Լույսի և խավարի թեմաները հաճախ հանդիպում են Մեռյալ ծովի մագաղաթներում: Հովհաննեսը հաճախ իր մտքերն արտահայտում է երկակի (հակադիր) տերմինների և կատեգորիաների օգնությամբ:

1:5 «**զոյսը լոյս է տալիս**» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ է, որը նշանակում է շարունակվող գործողություն: Հիսուսը միշտ գոյություն է ունեցել, բայց հիմա Նա պարզ հայտնվում է աշխարհին (հմմտ. 8:12; 9:5; 12:46): Հին Կտակարանում ֆիզիկապես կամ մարդկային կերպարանքով Աստծո հայտնվելը հաճախ կատարվում էր հրեշտակի միջոցով (հմմտ. Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16; Ել. 3:2,4; 13:21; 14:19; Գատ. 2:1; 6:22-23; 13:3-22; Չաք. 3:1-2): Ոմանք պնդում են, որ այդ ամենը եղել է Լոգոսի գործերը՝ մինչև Նրա մարմնավորվելը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՐՈՋ ՀՐԵՇՏԱԿԸ

Ակնհայտ է, որ աստվածությունը ցույց է տալիս Իրեն ֆիզիկապես մարդկային կերպարանքով Հին Կտակարանում: Երրորդության մեջ հարց է առաջանում, թե Երրորդության, որ անձն է կատարում այս դերը: Քանի որ Հայր Աստվածը (ԵՀՈՎԱՆ) և Իր Հոգին միանշանակ մարմնավոր չեն, հավանական է թվում, որ այդ մարդկային կերպարանքներում եղել է դեռ չմարմնավորված Մեսիան:

1. Տիրոջ հրեշտակը որպես հրեշտակ
 - ա. Ծննդ. 24:7,40
 - բ. Ելից 23:20-23; 32:34
 - գ. Թվ. 22:22
 - դ. Գատ. 5:23
 - ե. II Թագ. 24:16
 - զ. I Մնաց. 21:15-30
 - է. Չաք. 1:12-13
2. Տիրոջ հրեշտակը որպես աստվածահայտնություն
 - ա. Ծննդ. 16:7-13; 18:1-19:1; 22:11-15; 31:11,13; 48:15-16
 - բ. Ելից 3:2,4; 14:19 (13:21)
 - գ. Գատ. 2:15; 6:22-24; 13:3-23
 - դ. Ովս. 12:3-4
 - է. Չաք. 3:1-5

- **NASB, NKJV** “խավարը չհասկացավ նրան”
- NRSV** “խավարը չհաղթեց նրան”
- TEV** “խավարը երբեք չի հանգել”
- NJB** “և խավարը չի կարողացել հաղթել նրան”

Այս տերմինի արմատի նշանակությունը (*katalambanō*) «բռնել, գրկել, տիրել, սեղմել (ձեռքի մեջ) կառչել»: Ուստի, այն կարող է նշանակել (1) տիրել այնպես, որ հաղթել (հմմտ. Մաթ. 16:18) կամ էլ (2) տիրել այնպես, որ հասկանալ կամ ըմբռնել: Հովհաննեսը կարող էր օգտագործել այս ոչ մեկ միտք ունեցող տերմինը՝ երկու իմաստն էլ փոխանցելու համար: Հովհաննեսի Ավետարանը առանձնահատուկ է երկիմաստ արտահայտություններով (օր., «վերստին ծնված և/կամ «վերից ծնված» 3:3 և «քամի» և/կամ «հոգի» 3:8):

ԲԱՅԸ (*katalambanō*) հանդիպում է միայն երկու անգամ Հովհաննեսի գրվածքներում (8:3,4-ի միջադեպը բնագրում չկա): 1:5-ում խավարը չի կարող հասկանալ/հաղթել և 12:35 խավար, որ մերժում է լույսը (Հիսուս/ավետարան):

Մանֆրեդ Թ. Բրաուչ, «Սուրբ Գրքի աղավաղում» (Manfred T. Brauch, *Abusing Scripture*), էջ 35, բնութագրում է մարդու վիճակը.

1. կորած, Գուկ. 15
2. խավար, Հովհ. 1:5
3. թշնամություն, Հռ. 5:10
4. բաժանում, Եփ. 2:15-17
5. անաստվածություն, Հռ. 1:18
6. օտարացում, հեռացում Աստծո կյանքից, Եփ. 4:17-18
7. մարդու մեղքի լավագույն ամփոփումը գտնվում է Հռ. 1:18-3:23

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:6-8

⁶ Սի մարդ եղաւ Աստուածանից ուղարկուած, անունը Յովհաննէս: ⁷ Սա վկայութեան համար եկաւ, որ այն Լոյսի համար վկայէ. որ ամենքը նորանով հաւատան: ⁸ Նա չէր լռյսը, այլ որ Լոյսին համար վկայէ:

1:6-8 Այս համարներում և հ. 15-ում (միջանկյալ պարզաբանում) արձանագրված է Հովհաննես Սկրտիչի վկայությունը Հիսուսի մասին: Նա հինկտակարանյան վերջին մարգարեն էր: Այս համարների բովանդակությունը շատ դժվար է պատկերացնել պոետիկ տեսքով: Այդ իսկ պատճառով գիտնականների միջև բանավեճերը վերաբերվում էին այն բանին, թե նախաբանը պոետիկ է թե՞ արձակ:

Հովհաննես Սկրտիչը Հին Կտակարանի վերջին մարգարեն էր (իր պատգամի և ապագայի մասին կանխագուշակման առումով): Նա այն նշանն էր, որի մասին կանխագուշակված էր Մաղ. 3:1 և 4:5 (հմմտ. Հովհ. 1:20-25): Շատ հնարավոր է, որ Հովհաննես առաքյալը հենց այդ պատճառով է հհ. 6-8 դրել, որովհետև վաղ եկեղեցում սխալ կարծիք կար Հովհաննես Սկրտիչի անձի և դերի մասին (հմմտ. Գուկ. 3:15; Գործք 18:25; 19:3): Հովհաննեսը, գրելով ավելի ուշ քան սինոպտիկ ավետարանների հեղինակները, տեսավ այս խնդրի զարգացման հետագա ընթացքը:

Հետաքրքիր է նշել, որ Քրիստոսը նկարագրված է ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ բայով (ընդգծված է Նրա նախագոյությունը), այնինչ Հովհաննեսը նկարագրված է ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ (գործողությունը կատարվել է անցյալում իր ժամանակին) բայով և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ (պատմական իրադարձությունը անցյալում է, որի արդյունքները ներկայում նկատվում են և հետևողական) բայերով (հմմտ. հ. 6): Հիսուսը միշտ գոյություն է ունեցել:

1:7 «որ ամենքը նորանով հաւատան» Սա նպատակ արտահայտող նախադասություն է: Հովհաննեսի Ավետարանը, ինչպես և բոլոր Ավետարանները (եզակի, յուրահատուկ քրիստոնեական ժանր), հանդիսանում է ավետարանչական կոչ: Սա փրկության հիանալի առաջարկ է բոլոր նրանց, ովքեր իրապես դավանում են Քրիստոսի հավատքին, որը աշխարհի լույսն է (հմմտ. հ. 12; Հովհ. 3:16; 4:42; 20:31; I Տիմ. 2:4; Տիտոս 2:11; II Պետ. 3:9; I Հովհ. 2:1; 4:14):

1:7,12 «հաւատան» Այս ԲԱՅԸ օգտագործված է 78 անգամ Հովհաննու Ավետարանում և 24 անգամ Հովհաննու թղթերում: Հետաքրքիր է, որ Հովհաննու Ավետարանում ոչ մի տեղ չի օգտագործված որպես ԳՈՅԱԿԱՆ այլ միայն որպես ԲԱՅ: Հավատքը դա նախ և առաջ մտային կամ զգացմունքային արձագանք չէ Աստծո կանչին, այլ մարդու կողմից ինքնակամ ջանք: Այս հունարեն տերմինը անգլերեն լեզվում թարգմանվում է երեք տարբեր տերմիններով՝ «believe» (հավատալ, վստահել, կարծել), «trust» (հավատ, վստահություն, հույս, վստահել) և «faith» (հավատք, վստահություն, դավանանք): Այստեղ այս բառը զուգահեռ է «ողջունել Նրան» (հմմտ. հ. 11), և «ընդունել Նրան» (հմմտ. հ. 12) արտահայտություններին: Փրկությունը Աստծո ձրի պարգևն է և Քրիստոսի կատարած գործը, բայց այն պետք է ընդունվի մարդու կողմից: Փրկությունը ուխտի հարաբերությունն է, որն իր մեջ պարունակում է թե արտոնություններ և թե պատասխանատվություններ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՔ (PISTIS [գոյական], PISTEUŌ, [բայ], PISTOS [ածական])

Ա. Սա շատ կարևոր տերմին է Աստվածաշնչում (հմմտ. Եբր. 11:1,6): Սա Հիսուսի վաղ քարոզների նյութն էր (հմմտ. Մարկ. 1:15): Գոյություն ունի ամենաքիչը երկու նոր ուխտի պահանջներ: ապաշխարություն և հավատք (հմմտ. 1:15; Գործք 3:16,19; 20:21):

Բ. Տերմինի ստուգաբանությունը

1. Հին Կտակարանում «հավատք» տերմինը նշանակում էր անձնվիրություն, նվիրվածություն

կամ հուսալիություն և Աստծո բնության նկարագիրն էր և ոչ թե մեր:

2. Այն առաջացել է եբրայերեն (*emun, emunah*) տերմինից, որը նշանակում էր «վստահ լինել կամ կայուն, հաստատ մնալ»: Մարդու փրկարար հավատքը դա մտային համաձայնություն է (որոշակի ճշմարտությունների ընդունմամբ), բարոյական կյանք (ապրելակերպ), և ամենակարևորը դա մարդկային փոխհարաբերություն է (քարիացակամություն ուրիշի հանդեպ) և ինքնակամ նվիրում (որոշում) այդ անձի նկատմամբ:

Գ. Տերմինի կիրառությունը Հին Կտակարանում
Պետք է նշել այն, որ Աբրահամի հավատքը գալիք Մեսիային հավատալը չէր, այլ Աստծո խոստմանը, որ նա զավակ և սերունդներ կունենա (հմմտ. Ծննդ. 12:2; 15:2-5; 17:4-8; 18:14): Աբրահամը արձագանքեց այս խոստմանը՝ Աստծուն վստահելով: Նա դեռ ուներ կասկածներ և խնդիրներ այս խոստման մասին, որը տևեց 13 տարի իրականանալու համար: Նրա անկատար հավատքը, ինչևէ ընդունվեց Աստծո կողմից: Աստված կամենում է գործել փչացած մարդ արարածների հետ, ովքեր հավատքով արձագանքում են Իրեն և Իր խոստումներին, եթե այն նույնիսկ անգամ մանանեխի հատիկի չափ է (հմմտ. Մաթ. 17:20):

Դ. Տերմինի կիրառությունը Նոր Կտակարանում
«Հավատաց» տերմինը առաջացել է հունարեն (*pisteuō*) տերմինից, որը նաև կարող է թարգմանվել «հավատալ», «հավատք», կամ «վստահություն»: Օրինակ, որպես գոյական Հովհաննու Ավետարանում չի հանդիպում, բայց որպես բայ հաճախ է օգտագործվում: Հովհ. 2:23-25 գոյություն ունի որոշակի անորոշություն ժողովրդի անկեղծության մեջ Հիսուս Նազովրեցուն որպես Մեսիա ընդունելու առումով: Ուրիշ օրինակներ, երբ «հավատալ» տերմինը օգտագործվում է մակերեսորեն Հովհ. 8:31-59 և Գործք 8:13, 18-24: Ծճմարիտ աստվածաշնչյան հավատքն ավելին է քան սկզբնական արձագանքը: Դրան անպայման պետք է հետևի աշակերտության գործընթացը (հմմտ. Մաթ. 13:20-22, 31-32):

Ե. Օգտագործվում է ՆԱԽԳԻՐԻՆԵՐՈՎ

1. *eis* նշանակում է «մեջ»: Այս հատուկ քերականական կառուցվածքը ընդգծում է հետևյալ միտքը, երբ հավատացյալներն իրենց վստահություն/հավատքը դնում են Հիսուսի վրա
ա. Նրա անվանը (Հովհ. 1:12; 2:23; 3:18; I Հովհ. 5:13)
բ. Նրան (Հովհ. 2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45,48; 17:37,42; Մաթ. 18:6; Գործք 10:43; Փիլ. 1:29; I Պետ. 1:8)
գ. Ինձ (Հովհ. 6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
դ. Որդուն (Հովհ. 3:36; 9:35; I Հովհ. 5:10)
ե. Հիսուսին (Հովհ. 12:11; Գործք 19:4; Գաղ. 2:16)
զ. Լույսին (Հովհ. 12:36)
է. Աստծուն (Հովհ. 14:1)
2. *en* նշանակում է «մեջ» ինչպես Հովհ. 3:15; Մարկ. 1:15; Գործք 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» ինչպես, Մաթ. 27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռ. 4:5,24; 9:33; 10:11; I Տիմ. 1:16; I Պետ. 2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ առանց ՆԱԽԳԻՐԻ Ինչպես Գաղ. 3:6; Գործք 18:8; 27:25; I Հովհ. 3:23; 5:10
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ, որ» ցույց է տալիս էությունը այն բանի, թե ինչին հավատալ
ա. Հիսուսն Աստծո Սուրբն է (Հովհ. 6:69)
բ. Հիսուսը - ԵՍ ԵՄ (Հովհ. 8:24)
գ. Հիսուսը Հոր մեջ է և Նա Հոր մեջ (Հովհ. 10:38)
դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ. 11:27; 20:31)
ե. Հիսուսն Աստծո Որդին է (Հովհ. 11:27; 20:31)
զ. Հիսուս ուղղարկված էր Հոր կողմից (Հովհ. 11:42; 17:8,21)
է. Հիսուսը մեկ է Հոր հետ (Հովհ. 14:10-11)
ը. Հիսուսը եկավ Հորից (Հովհ. 16:27,30)
թ. Հիսուսն իրեն ճանաչեցնում է Հոր ուխտի անվան հետ, «ԵՍ ԵՄ» (Հովհ. 8:24; 13:19)
ժ. Մենք կապրենք Նրա հետ (Հռ. 6:8)
ի. Հիսուս մեռավ և հարություն առավ (I Թես. 4:14)

1:8 Հնարավոր է, որ Հովհաննես առաքյալը, ով գրել է ավելի շատ թղթեր քան մյուս ավետարանների հեղինակները, ճանաչում էր խնդիրը, որը զարգացել էր Հովհաննես Սկրտիչի հետևորդների միջև, ովքեր չէին լսել կամ ընդունել Հիսուսին (հմմտ. Գործք 18:25-19:7):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՎԿԱՅԵԼ ՀԻՍՈՒՄԻՆ

ԳՈՅԱԿԱՆԸ (*marturia*) և դրա ԲԱՅԸ (*martureō*) բանալի տերմիններ են Հովհաննու ավետարանում:

1. Հովհաննես Սկրտիչը (հմմտ. Հովհ. 1:7,8,15; 3:26,28; 5:33)
2. Հիսուսն Ինքը (հմմտ. Հովհ. 3:11; 5:31; 8:13-14)
3. Սամարացի կինը (հմմտ. Հովհ. 4:39)
4. Հայր Աստվածը (հմմտ. Հովհ. 5:32,34,37; 8:18; I Հովհ. 5:9)
5. Սուրբ Գիրքը (հմմտ. Հովհ. 5:39)
6. ամբողջ Ղազարոսի հարության ժամանակ (հմմտ. Հովհ. 12:17)
7. Հոգին (հմմտ. Հովհ. 15:26-27; I Հովհ. 5:10,11)
8. աշակերտները (հմմտ. Հովհ. 15:27; 19:35; I Հովհ. 1:2; 4:14)
9. ինքը հեղինակը (հմմտ. Հովհ. 21:24)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:9-13

⁹Այն էր ճշմարիտ Լոյսը, որ ամեն մարդի լուսատրում է, որ գալիս է աշխարհքը: ¹⁰Աշխարհքում էր, և աշխարհքը նորանով եղաւ, և աշխարհքը նորան չճանաչեց: ¹¹Իրանների մեջ եկաւ, և իրանները նորան չընդունեցին: ¹²Բայց որոնք որ նորան ընդունեցին, իշխանութիւն տուաւ նորանց Աստուծոյ որդիներ լինելու՝ նորանց, որ նորա անունին հաւատում են: ¹³Որոնք ոչ արինից և ոչ մարմնի կամքից, և ոչ մարդի կամքից, այլ Աստուածանից ծնուեցան:

1:9 «Ճշմարիտ Լոյսը» Այստեղ «ճշմարիտ» բառը օգտագործված է որպես «իրական կամ անխարդախ, իսկական» և ոչ միայն կեղծիքի հակադարձ իմաստով: Հենց այսպիսի իմաստ ունեին բոլոր կեղծ աստվածաբանները առաջին դարում: Այս ԱԾԱԿԱՆԸ հաճախ օգտագործվում է Հովհաննեսի գրվածքներում (հմմտ. 3:35; 4:23,37; 6:32; 7:28; 15:1; 17:3; 19:35 և I Հովհ. 2:8; 5:20 և 10 անգամ Հայտնության գրքում): Տես Հատուկ Թեմա: Ծճմարտություն 6:55 և Աշխարհ 14:17: Հիսուսն է աշխարհի լոյսը (հմմտ. 3:19; 8:12; 9:5; 12:46; I Հովհ. 1:5,7; 2:8,9,10): Հավատացյալները պետք է անդրադարձնեն Նրա լոյսը (հմմտ. Փիլ. 2:15): Սա կտրուկ հակադիր է իրական խավարին, որը ստեղծված հաջորդականության մեջ՝ ըմբոստության պատճառով

1. մարդիկ
2. հրեշտակներ

▪ «որ գալիս է աշխարհքը» Հովհաննեսը հաճախ օգտագործում է այս արտահայտությունը նկարագրելու համար այն, որ Հիսուսը թողեց երկինքը, հոգևոր աշխարհը և եկավ ժամանակի և տիեզերքի ֆիզիկական աշխարհ (հմմտ. 6:14; 9:39; 11:27; 12:46; 16:28): Այս համարում սա վերաբերվում է Հիսուսի մարմնավորմանը: Սա դուալիզմի օրինակ է Հովհաննեսի գրականության մեջ (այն է, վերևում – ներքևում):

- NASB “լուսավորում է ամեն մարդու”
- NKJV “տալիս է լույս ամեն մարդու”
- NRSV “լուսավորում է ամեն մեկին”
- TEV “փայլում է բոլոր մարդկանց վրա”
- NJB “որ լույս է տալիս ամենքին”

Այս արտահայտությունը կարելի է հասկանալ երկու ձևով: Նախ, հունական մշակույթի կոնտեքստով, այն վերաբերվում է յուրաքանչյուր մարդու մեջ ներքին լույսի հայտնությանը՝ աստվածային կայծ: Այս համարը հենց այսպես են մեկնաբանում քվակերները: Ինչևէ, այսպիսի գաղափար երբեք չի հայտնվում Հովհաննու ավետարանում: Հովհաննեսի համար «լոյսը» երևան է բերում մարդկության չարը (հմմտ. 3:19-21):

Երկրորդը, այն չի վերաբերվում բնական հայտնությանը (այն է, Աստված հայտնի է բնության միջոցով [հմմտ. Սաղ. 19:1-5; Հռ. 1:19-20] կամ ներքին բարոյական իմաստը [հմմտ. Հռ. 2:14-15]), բայց

Աստծո առաջարկը մարդկությանը ձեռք բերել լուսավորում և փրկություն Հիսուս Քրիստոսի միջոցով, որպես միակ ճշմարիտ Լույս:

1:10 «աշխարհքը» *kosmos* տերմինը Հովհաննեսը օգտագործում է երեք տարբեր տեղերում

1. ֆիզիկական աշխարհ, տիեզերք (1:10,11; 11:9; 16:21; 17:5,24; 21:25)
2. ամբողջ մարդկությունը (1:10,29; 3:16,17; 4:42; 6:33; 12:19,42; 18:29)
3. մեղավոր մարդիկ, ովքեր ապրում և արարում են առանց Աստծո (7:7; 15:18-19; I Հովհ. 2:15; 3:1,13)

Այս կոնտեքստում համընկնում է տարբերակ #2-ը: Տես Հատուկ Թեմա 14:17.

▪ **«աշխարհքը նորան չճանաչեց»** Ոչ ընկած հեթանոս ազգերը և ոչ էլ ընտրյալ հրեա ազգը չճանաչեցին Հիսուսին որպես խոստացված Մեսիան: «Ճանաչել, իմանալ» տերմինը արտահայտում է երբայերեն իղիմա, որը նշանակում է խորը և մտերմիկ հարաբերություն, և ոչ թե միայն փաստերի մտային իմացություն (հմմտ. Ծննդ. 4:1; Եր. 1:5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՃԱՆԱԶԵԼ, ԻՄԱՆԱԼ (հիմնականում օգտագործված է 2 Օրինացում որպես օրինակ)

Երբայերեն բառը «ճանաչել, իմանալ» ունի մի քանի իմաստ (իմաստային բաժիններ) *Qal*.

1. հասկանալ բարին ու չարը - Ծննդ. 3:22; 2 Օրին. 1:39; Ես. 7:14-15; Հովնան 4:11
2. ճանաչել հասկանալով – 2 Օրին. 9:2,3,6; 18:21
3. ճանաչել փորձառելով - 2 Օրին. 3:19; 4:35; 8:2,3,5; 11:2; 20:20; 31:13; Հեսու 23:14
4. մտածել, կարծել, համարել - 2 Օրին. 4:39; 11:2; 29:16
5. իմանալ անձնապես
 - ա. անձ- Ծննդ. 29:5; Ել. 1:8; 2 Օրին. 22:2; 33:9
 - բ. աստված - 2 Օրին. 11:28; 13:2,6,13; 28:64; 29:26; 32:17
 - գ. ՅԱՀՎԵ - 2 Օրին. 4:35,39; 7:9; 29:6; Ես. 1:3; 56:10-11
 - դ. սեքսուալ – Ծննդ. 4:1,17,25; 24:16; 38:26
6. սովորած հմտություն կամ գիտելիք - Ես. 29:11,12; Ամովս 5:16
7. լինել իմաստուն - 2 Օրին. 29:4; Առ. 1:2; 4:1; Ես. 29:24
8. Աստծո իմացությունը
 - ա. Մովսեսի մասին - 2 Օրին. 34:10
 - բ. Իսրայելի մասին - 2 Օրին. 31:21,27,29

1:11 «Իրանների մեջ եկա, եւ իրանները նորան ընդունեցին» «Իրաններ» արտահայտությունը հ.11-ում օգտագործված է 2 անգամ: Առաջին դեպքում ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ քերականական ձև է և նշանակում է (1) ամբողջ արարչագործությունը կամ էլ (2) Հուդայի կամ Երուսաղեմի աշխարհագրական տարածքը: Երկրորդում ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ քերականական ձև է և նշանակում է հրեա ժողովուրդը:

1:12 «Բայց որոնք որ նորան ընդունեցին» Սա ցույց է տալիս մարդու բաժինը փրկության մեջ (հմմտ. հ. 16): Մարդիկ պետք է արձագանքեն Աստծո շնորհքի առաջարկին Քրիստոսով (հմմտ. 3:16; Հռ. 3:24; 4:4-5; 6:23; 10:9-13; Եփ. 2:8-9): Անշուշտ, Աստված գերիշխան է, բայց Նա Իր գերիշխանության մեջ նախաձեռնություն ցուցաբերեց և հաստատեց պայմանական ուխտի հարաբերություն ընկած մարդկության հետ: Մեղավոր մարդը պետք է ապաշխարի, հավատա, հնազանդվի և համբերի հավատքի մեջ:

Այս գաղափարը «ընդունելով» աստվածաբանորեն զուգահեռ է «խոստովանելով» իմաստին, որը պահանջում է հրապարակային հավատքի դավանություն Հիսուսին որպես Քրիստոս (հմմտ. Մաթ. 10:32; Գուկ. 12:8; Հովհ. 9:22; 12:42; I Տիմ. 6:12; I Հովհ. 2:23; 4:15): Փրկությունը պարզ է, որը պետք է ընդունել և գիտակցել:

Նրանք ովքեր «ընդունում են» Հիսուսին (1:12) ընդունում են Հորը, ով ուղարկեց Նրան (հմմտ. 5:43; 13:20): Փրկությունը անձնական հարաբերություն է Երրորդության հետ:

▪ **«իշխանութիւն տուաւ»** Այս հունարեն տերմինը (այն է, *exousia*) կարող է նշանակել (1) իրավական հեղինակություն կամ (2) իրավունք կամ արտոնություն (հմմտ. 5:27; 17:2; 19:10,11): Հիսուսի որդիության և

աստվածային առաքելության շնորհիվ, մեղավոր մարդը կարող է իմանալ Աստծուն և ճանաչել Նրան որպես Աստված և Հայր:

▪ **«Աստուծոյ որդիներ լինելու»** Նոր Կտակարանի գրողները հաճախ օգտագործում են ընտանեկան փոխաբերություններ՝ քրիստոնեությունը նկարագրելու համար, (1) Հայր; (2) Որդի; (3) զավակներ; (4) վերստին ծնված; և (5) որդեգրություն: Քրիստոնեությունը ընտանիքի մմանություն է, և ոչ թե արտադրանքի (երկնքի տոմս, ապահովագրություն կրակից): Քրիստոսով հավատացյալները դարձել են նոր վախճանաբանական «Աստծո ժողովուրդը»: Որպես զավակներ մենք պետք է արտացոլենք Հոր կերպարը, ինչպես արեց «միակ» (հմմտ. հ. 14; 3:16) Որդին (հմմտ. Եփ. 5:1; I Հովհ. 2:29; 3:3): Ինչպիսի ցնցող տիտղոս մեղավորների համար (հմմտ. 11:52; Հռ. 8:14,16,21; 9:8; Փիլ. 2:15; I Հովհ. 3:1,2,10; 5:2; Ովս. 1:10-ը մեջբերված Հռ. 9:26; և II Կոր. 6:18):

Հետաքրքիր է և այն, որ զավակներ/որդիներ բառը օգտագործված է երկու տարբեր հունարեն տերմիններով, դրանցից մեկը Հիսուսի համար (*huios*), իսկ մյուսը (*teknon, tekna*) հավատացյալների համար: Քրիստոնյաները Աստծո զավակներն են, բայց նրանք նույն կատեգորիայի մեջ չեն ինչ Աստծո Որդին՝ Հիսուսը: Նրա հարաբերությունը եզակի է, բայց միանման:

«Եկեղեցի» (*ekklesia*) բառը չկա Մարկոսի, Դուկասի կամ Հովհաննեսի Ավետարանում: Նրանք օգտագործում են ընտանեկան փոխաբերություններ նոր դինամիկ անհատական և ընդհանուր Հոգու հաղորդակցությունը:

▪ **«հաւատում են»** Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԵՐԲԱՅ Է, որը նշանակում է «նրանք, ովքեր շարունակում են հավատալ»: Այս տերմինի ստուգաբանական արմատը օգնում է հաստատել ժամանակավոր իմաստ: Հին եբրայերենում այն վերաբերվում էր մի մարդու, ով գտնվում էր կայուն վիճակում: Հետո այն սկսեցին օգտագործել փոխաբերական իմաստով այն մարդու համար, ով հուսալի էր, ապահով, նվիրված կամ վստահելի: Հունարեն ամարժեքը թարգմանվում է անգլերեն մի քանի տերմիններով “faith” (հավատք, հավատք առ Աստված, կրոնական հավատք), “believe” (հավատալ, վստահել), “trust” (հավատք, վստահությունհույս, ապավեն): Աստվածաշնչյան հավատքը կամ վստահությունը հիմնականում դա մի բան չէ, որ մենք անում ենք, այլ մեկն է, ում մենք վստահում և ապավինում ենք: Աստծո հուսալիությունն ու ապավինությունն է կենտրոնականը և որ թե մերը: Մեղավոր մարդը վստահում է Աստծո հուսալիությանը, հավատում է Նրա հավատարմությանը, հավատում է Նրա սիրեցյալ Որդուն: Ամեն ինչի կենտրոնը ոչ թե մարդու հավատքի առատությունը կամ ուժը չէ, այլ այդ հավատքի օբյեկտ: Տես Հատուկ թեմա 1:7 և 2:23:

▪ **«նորա անունին»** Հին Կտակարանում մարդու անունը շատ կարևոր էր: Դա հույսով լի մարգարեություն էր, որ մարդը կունենա այնպիսի բնավորության գծեր ինչպիսին անունն է: Հավատալ «անվանը» նշանակում է հավատալ և ընդունել նրան (հմմտ. 2:23; 3:18; 20:31; I Հովհ. 5:13): Տես Հատուկ թեմա. Տիրոջ Անունը 15:16.

1:13

NASB, NKJV,

NRSV

TEV

NJB

“որոնք ծնվել են ոչ արյունից, ոչ մարմնի կամքից, ոչ էլ մարդու կամքից”
“նրանք չդարձան Աստծո զավակներ բնական միջոցներով, այսինքն ծնվելով և լինելով մարդկային հոր զավակներ”
“որը ծնվել է ոչ թե մարդկային գենոֆոնդից կամ մարմնի կամ մարդու կամքի համաձայն”

Որոշ վաղ եկեղեցու հայրեր (այն է, Երանոս, Օրիգեն, Տերտուլիան, Ամբրոս, Ջերոմ, Օգոստինոս) այս արտահայտությունը կապել են Հիսուսի հետ (այն է, ԵԶԱԿԻ), բայց անհամար հունարեն տեքստային փաստերը ունեն ՀՈԳՆԱԿԻ (այս բառի ՀՈԳՆԱԿԻՆ գտնվում է միայն այստեղ Նոր Կտակարանում; UBS⁴ գնահատում է սա որպես “A”), որը նշանակում է այս համարը վերաբերվում է Հիսուսին հավատացողներին (հմմտ. 3:5; I Պետ. 1:3,23), ուստի, այն վերաբերում է ոչ թե արտոնություն ունեցող որևէ ազգի կամ էլ մարդու ընտանեկան ամուսնական հարաբերություններին (բռց. «արյուն»), այլ Աստծո ընտրությանը, ովքեր հավատում են Իր Որդուն (հմմտ. 6:44,65): Համարներ 12-ը և 13-ը պարզ ցույց է տրված Ուխտի հավասարակշռությունը Աստծո գերիշխանության և մարդու արձագանքի կարիքի միջև:

Հունարեն ԲԱՅԸ (ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ) դրվում է հունարեն նախադասության վերջում՝ ընդգծելու համար: Սա ընդգծում է Աստծո նախաձեռնող և

գերիշխան դերը վերստին ծնունդի մեջ (այն է, «բայց Աստուծոյ», որը վերջին արտահայտության մասն է, հմմտ. 6:44,65):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:14-18

¹⁴Եւ Բանը մարմին եղաւ՝ եւ բնակուեց մեր մէջ. եւ նորա փառքը տեսանք՝ ինչպէս Հօրից եղած միածնի փառք՝ շնորհքով եւ ճշմարտութիւնով լիքը: ¹⁵Յովհաննէսը վկայում է նորա համար. եւ աղաղակեց եւ ասեց, Սա էր, որի համար ասում էի, թէ Ինձանից յետոյ եկողը, ինձանից առաջ եղաւ. որովհետեւ ինձանից առաջ էր: ¹⁶Եւ նորա լուսինիցը մենք ամենքս առանք շնորհք շնորհքի տեղ: ¹⁷Որովհետեւ օրէնքը Մովսէսի ձեռովը արուեցաւ. շնորհքը եւ ճշմարտութիւնը Յիսուս Բրիստոսի ձեռովն եղաւ: ¹⁸Աստուծուն ոչ ով երբէք չէ տեսել. բայց միածին Որդին, Հօր ծոցումը լինողը, նա պատմեց:

1:14 «Բանը մարմին եղաւ» Այսպէս Հովհաննէսը քանդում է գնոստիկների կեղծ վարդապետությունը, ովքեր փորձում էին հեղինակական հեթանոս մտածելակերպը խառնել քրիստոնեության հետ: Հիսուսն ամբողջությամբ մարդ էր և ամբողջությամբ Աստված (հմմտ. I Հովհ. 4:1-3) Էմմանուելի մասին արված խոստման իրականացնողը (հմմտ. Ես. 7:14): Աստված մարդկային կերպարանք առավ և բնակվեց մեղավոր մարդկության մեջ (բառացիորեն, «խփեց Իր վրանը»): «Մարմին» տերմինը Հովհաննէսի Ավետարանում երբեք չի վերաբերվում մարդու մեղավոր բնությանը, ինչպէս Պողոսի գրվածքներում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍԱՐՄԻՆ (SARX)

Սա վերաբերում է մարդկային իմաստությանը կամ աշխարհիկ չափանիշներին (հմմտ. I Կոր. 1:20; 2:6,8; 3:18): Պողոսն օգտագործում է «մարմին» տերմինը (*sarx*) մի քանի ձևերով իր գրվածքներում:

1. մարդու մարմինը (հմմտ. Հռ. 2:28; I Կոր. 5:5; 7:28;)
2. մարդկային սերունդ (այն է, հայր-որդի, հմմտ. Հռ. 1:3; 4:1; I Կոր. 10:18;)
3. մարդկությունը որպես մեկ ամբողջ (հմմտ. I Կոր. 1:26,29)
4. մարդու տկարությունը մեղքի պատճառով Ծննդ. 3 (հմմտ. Հռ. 6:19; 7:18)

▪ «բնակուեց մեր մէջ» Բառացիորեն՝ «բնակություն հաստատել»: Այն ուներ հրեական ֆոն՝ անապատում թափառելու ժամանակը և խորանը (հմմտ. Հայտ. 7:15; 21:3): Հետագայում հրեաներն այս փորձառությունը անվանեցին «մեղրամիս» ՅԱՀՎԵԻ և Իսրայելի միջև: Աստված երբեք այդքան մոտ չի եղել Իսրայելի որքան այն ժամանակ: Հրեական տերմինը հատուկ աստվածային ամպի համար, որը առաջնորդում էր Իսրայելին այս ժամանակաշրջանում կոչվում էր “*Shekinah*,” իսկ եբրայերեն տերմինը՝ «բնակվել...հետ»:

▪ «նորա փառքը տեսանք» Հին Կտակարանի *kabod* (փառքը) անձնավորվել, մարմնավորվել էր: Այս բառերը վերաբերվում են (1) ինչ որ բան կատարված Հիսուսի կյանքում, օրինակ այլակերպությունը կամ համբարձումը (այն է, առաքելական վկայություն, հմմտ. II Պետ. 1:16-17) կամ (2) գաղափար, որ անտեսանելի ՅԱՀՎԵՆ հիմա տեսանելի և ամբողջությամբ հայտնի է: Սա նույն շեշտադրումն է ինչպէս I Հովհ. 1:1-4, որը նաև ընդգծում է Հիսուսի մարդկության ամբողջականությունը, ի տարբերություն գնոստիկների կեղծ ուսմունքների, որոնք շեշտը դնում են հոգու և նյութի միջև թշնամական հարաբերությունների:

Հին Կտակարանում ամենատարածված եբրայերեն բառը «փառք»-ի համար (*kabod*) ի սկզբանե առաջացել է առևտրական տերմինից(որը վերաբերվում էր կշեռքի երկու նժարներին), որի իմաստը նշանակում էր «ծանր լինել»: Այն ինչը ծանր էր, արժեքավոր էր կամ ուներ ներհատուկ արժանիք: Հաճախ այս բառին ավելացվում էր պայծառության գաղափարը, որպեսզի նկարագրվեր Աստծո մեծությունը (այն է, սկզբում Սինա լեռան վրա, *Shekinah*-ը փառքի ամպը, ամպի սյունը, վախճանաբանական լույսը, հմմտ. Ելից 13:21-22; 24:17; Ես. 4:5; 60:1-2): Սիայն Նա է արժեքավոր և պատվելի: Նա չափից շատ պայծառ է և հիասքանչ մեղավոր մարդու համար, որ կարողանար տեսնել (հմմտ. Ելից 33:17-23; Ես. 6:5): Ծճմարտապես Աստված կարող է ճանաչվել միայն Բրիստոսի միջոցով (հմմտ. Եր. 1:14; Մաթ. 17:2; Եբր. 1:3; Հակ. 2:1): «Փառք» տերմինը ինչ որ երկիմաստ է:

1. այն կարող է զուգահեռ լինել «Աստծո արդարությունը» արտահայտությանը
2. այն կարող է վերաբերվել Աստծո «սրբությանը» կամ «կատարելությանը»

- այն կարող էր վերաբերվել Աստծո պատկերին, որով ստեղծվել էր մարդը (հմմտ. Ծննդ. 1:26-27; 5:1; 9:6), որն էր հետագայում ապականվեց ըմբոստության պատճառով (հմմտ. Ծննդ. 3:1-22), բայց վերականգնվեց Քրիստոսի միջոցով (հմմտ. 2 Կոր.3:18):

Առաջին անգամ Հին Կտակարանում այս տերմինը օգտագործվեց ՅԱՀՎԵ-ի ներկայությունը (ամառ) Իր ժողովրդի հետ անապատում թափառելու ժամանակը նկարագրելու համար (հմմտ. Ելից 16:7,10; Գև. 9:23; Թվ. 14:10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՌՔ (DOXA)

«Փառք»-ի աստվածաշնչյան գաղափարը դժվար է սահմանել: Հավատացյալների փառքը այն է, որ նրանք հասկանում են ավետարանը և փառքը Աստծո մեջ, և ոչ թե իրենց (հմմտ. 1:29-31; Եր. 9:23-24):

Հին Կտակարանում ամենաընդունված եբրայերեն բառը «փառք» բառի համար իրականում կոմերցիոն/առևտրային տերմին էր կապված կշեռքի հետ («լինել ծանր»): Այն, որը ծանր էր՝ արժեքավոր էր կամ ուներ ներքին/հատուկ արժեք: Հաճախ բառին ավելացվում էր պայծառության գաղափարը արտահայտելու համար Աստծո վեհափառություն/մեծությունը (հմմտ. Ելից. 19:16-18; 24:17; Ես. 60:1-2): Միայն Նա է արժանի և պատվավոր: Նա չափից շատ պայծառ է նայելու համար ընկած մարդկության համար (հմմտ. Ելից 33:17-23; Ես. 6:5): ԵՀՈՎԱ-ն կարող է միայն ճշմարտապես իմացվել Քրիստոսի միջոցով (հմմտ. Եր. 1:14; Մաթ. 17:2; Եբր. 1:3; Հակ. 2:1):

Փառք» տերմինը որոշ չափով երկիմաստ/անորոշ է; (1) այն կարող է նման լինել/զուգահեռ «Աստծո արդարությանը»; (2) այն կարող է վերաբերել Աստծո «սրբությանը» կամ «կատարելությանը» կամ (3) այն կարող էր վերաբերել Աստծո կերպարին, ինչպիսին ստեղծվեց մարդկությունը (հմմտ. Ծննդ. 1:26-27; 5:1; 9:6), բայց որը հետո աղավաղվեց ապստամբության/ըմբոստության միջոցով/պատճառով (հմմտ. Ծննդ. 3:1-22): Այն առաջին անգամ օգտագործվում է ԵՀՈՎԱ-յի ներկայությունը Իր ժողովրդի հետ անապատում թափառելու ժամանակ/ընթացքում Ել. 16:7,10; Գև. 9:23; և Թվ. 14:10.

- **NASB, NKJV** “փառքը ինչպես Հորից եղած միածին”
- NRSV** “փառքը ինչպես հոր միակ որդի”
- TEV** “փառքը, որը նա ստացավ որպես Հոր միակ Որդի”
- NJB** “փառքը, որ նա է որպես Հոր միակ Որդին”

Այս տերմինը «միայն» (*monogenēs*) նշանակում է «եզակի, միակը իր տեսակի մեջ» (հմմտ. 3:16,18; 1 Հովհ. 4:9, տես Ֆ.Ֆ. Բրյուս, «Հարցերի պատասխանները» էջ24-25 (F. F. Bruce, *Answers to Questions*),: Վուլգատի մեջ այն թարգմանված է «միածին» և դժբախտաբար, շատ հին անգլերեն թարգմանությունները հետևել են սրան (հմմտ. Գուկ. 7:12; 8:42; 9:38; Եբր. 11:17): Շեշտը դրված է եզակիության և միակության վրա, և ոչ թե սեռերի փոխհարաբերության:

▪ «**Հօրից**» Հին Կտակարանը ներկայացնում է Աստծո ընտանեկան մտերմիկ փոխաբերությունը որպես Հայր:

- Իսրայել ազգը հաճախ նկարագրվում է որպես ԵՀՈՎԱՅԻ «որդի» (հմմտ. Ովս. 11:1; Մաղ. 3:17)
- նույնիսկ ավելի շուտ, 2 Օրինացում, օգտագործվում է Աստծո նմանեցումը Հոր հետ (1:31)
- Այս նմանությունը հաստատվում է Մաղ. 103:13 և զարգացվում Մաղ. 68:5 (որբերի Հայր)
- շատ է հանդիպում մարգարեական գրքերում (հմմտ. Ես. 1:2; 63:8; Իսրայելը որպես որդի, Աստված որպես Հայր, 63:16; 64:8; Եր. 3:4,19; 31:9):

Հիսուսը վերցնում է այս նմանությունը և ավելի խորացնում այն ամբողջությամբ ընտանեկան հաղորդակցության մեջ, հատկապես Հովհաննեսի Ավետարանում 1:14,18; 2:16; 3:35;4:21,23;5:17,18,19,20,21,22,23,26,36,37,43,45;6:27,32,37,44,45,46,57; 8:16,19,27,28,38,42,49,54; 10:15,17,18,25,29,30,32,36,37,38;11:41;12:26,27,28,49,50;13:1;14:2,6,7,8,9,10,11,12,13,16,20,21,23,24,26,28,31 ; 15:1,8,9,10,15,16,23,24,26; 16:3,10,15,17 ,23,25,26,27,28,32; 17:1,5,11,21,24,25; 18:11; 20:17,21:

▪ «**Չնորհրդով եւ ճշմարտութիւնով լիքը**» Այս բառակապակցությունը առաջացել է հինկտակարանյան *hesed* (ուխտի սերը և անճնվիրություն) և *emeth* (վստահելի, հուսալի) տերմիններից, որոնք օգտագործվում են և ընդարձակվում Ել. 34:6; Նեե. 9:17; Մաղ. 103:8, երկուսը միասին հայտնվում են Առ. 16:6: Սա նկարագրում է Հիսուսի կերպարը (հմմտ. հ. 17) հինկտակարանյան ուխտի տերմիններում: Տես Հատուկ Թեմա: Ճշմարտություն 6:55 և 17:3:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԲԱՐՈՒԹՅՈՒՆ, ՍԵՐ, ԱՆՁՆՎԻՐՈՒԹՅՈՒՆ (HESED)

Այս տերմինը ունի լայն ստուգաբանական բացատրություն.

- Ա. կապված մարդկանց հետ
 - 1. ողորմություն մարդկանց հանդեպ (օր., I Թագ. 20:14; II Մնաց. 24:22)
 - 2. ողորմություն աղքատի և կարիքավորի հանդեպ (օր., Միք. 6:8)
 - 3. կապվածություն, մտերմություն, սեր (հմմտ. Եր. 2:2; Ովս. 6:4)
 - 4. վայելչություն (հմմտ. Ես. 40:6)
- Բ. կապված Աստծո հետ
 - 1. ուխտի սեր և անձնվիրություն
 - ա. փրկելով թշնամիներից և նեղություններից (օր., Եր. 31:3; Եզրաս 27:28; 9:9)
 - բ. կյանքը պահեց մահից (օր., Հոբ 10:12; Սաղ. 86:13)
 - գ. շտապել հոգևոր կյանքում (Սաղ. 119:41,76,88,124,149,150)
 - դ. փրկագնում մեղքից (հմմտ. Սաղ. 25:7; 51:3)
 - ե. ուխտերը պահելու մեջ (II Մնաց. 6:14; Նեեմ. 1:5; 9:32)
 - 2. նկարագրում է աստվածային հատկանիշը (Ելից 34:6; Միք. 7:20)
 - 3. Աստծո բարությունը, քաղցրությունը
 - ա. առատ (Նեեմ. 9:17; Սաղ. 103:8)
 - բ. բազմողորմ (Ելից 20:6; 2 Օրին. 5:10; 7:9)
 - գ. հավիտենական (I Մնաց. 16:34,41; II Մնաց. 5:13; 7:3,6; 20:21; Եզր. 3:11)
 - 4. բարի գործեր (II Մնաց. 6:42; Սաղ. 89:2; Ես. 55:3; 63:7; Ողբ 3:22)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՔ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ (אמת)

- I. Նախաբան

Պետք է նշել, որ այս աստվածաբանական հասկացողության կիրառությունն այնքան կարևոր է Նոր Կտակարանում, բայց այնքան էլ պարզ չի սահմանվում Հին Կտակարանում: Անշուշտ, կա այնտեղ, բայց ներկայացված է միայն բանալի հատվածներում և անձերի մեջ:
Հին Կտակարանի կապակցումները

 - 1. անհատը և համայնքը
 - 2. անձնական հանդիպումը և ուխտի հնազանդությունը

Հավատքը թե անձնական հանդիպում է և թե առօրյա ապրելակերպ: Այն ավելի հեշտ է նկարագրել անձի մեջ քան թե բառերով (այն է, բառային սերտողություն): Այս անձնական ասպեկտը լավագույնս ներկայացված է

 - 1. Աբրահամը և իր սերունդը
 - 2. Դավիթը և Իսրայելը

Այս մարդիկ հանդիպեցին Աստծուն և նրանց կյանքերը ամբողջովին փոխվեցին (ոչ թե կատարյալ կյանքեր, այլ շարունակական հավատքի կյանք): Փորձությունները ցույց տվեցին իրենց հավատքի տկարություններն ու ուժերը, բայց սերտ, հուսալի հարաբերությունը շարունակվեց ժամանակի ընթացքում: Այն փորձվեց և գտվեց, բայց այն շարունակվեց, որպես ապացույց նրանց նվիրվածության և ապրելակերպի:

Ա. Սա շատ կարևոր տերմին է Աստվածաշնչում (հմմտ. Եբր. 11:1,6): Սա Հիսուսի վաղ քարոզների նյութն էր (հմմտ. Մարկ. 1:15): Գոյություն ունի ամենաքիչը երկու նոր ուխտի պահանջներ: ապաշխարություն և հավատք (հմմտ. 1:15; Գործք 3:16,19; 20:21):

Բ. Տերմինի ստուգաբանությունը

 - 1. Հին Կտակարանում «հավատք» տերմինը նշանակում էր անձնվիրություն, նվիրվածություն կամ հուսալիություն և Աստծո բնության նկարագիրն էր և ոչ թե մեր:
 - 2. Այն առաջացել է եբրայերեն (*emun, emunah*) տերմինից, որը նշանակում էր «վստահ լինել կամ կայուն, հաստատ մնալ»: Մարդու փրկարար հավատքը դա մտային համաձայնություն է (որոշակի ճշմարտությունների ընդունմամբ), բարոյական կյանք (ապրելակերպ), և ամենակարևորը դա մարդկային փոխհարաբերություն է

(բարիացականություն ուրիշի հանդեպ) և ինքնական նվիրում (որոշում) այդ անձի նկատմամբ:

Գ. Տերմինի կիրառությունը Հին Կտակարանում
Պետք է նշել այն, որ Աբրահամի հավատքը զայիք Մեսիային հավատալը չէր, այլ Աստծո խոստմանը, որ նա զավակ և սերունդներ կունենա (հմմտ. Ծննդ. 12:2; 15:2-5; 17:4-8; 18:14): Աբրահամը արձագանքեց այս խոստմանը՝ Աստծուն վստահելով: Նա դեռ ուներ կասկածներ և խնդիրներ այս խոստման մասին, որը տևեց 13 տարի իրականանալու համար: Նրա անկատար հավատքը, ինչևէ ընդունվեց Աստծո կողմից: Աստված կամենում է գործել փչացած մարդ արարածների հետ, ովքեր հավատքով արձագանքում են Իրեն և Իր խոստումներին, եթե այն նույնիսկ անգամ մանանեխի հատիկի չափ է (հմմտ. Մաթ. 17:20):

II. Հիմնական արմատը օգտագործվել է

Ա. յա (BDB 52)

1. ԲԱՅ

ա. *Qal* հիմք - աջակցել, պաշտպանել, պահել, սնուցել, կերակրել (4 Թագ. 10:1,5; Եսթեր 2:7, ոչ աստվածաբանական կիրառություն)

բ. *Niphal* հիմք – համոզվել կամ հաստատել, հիմնել, պնդել, հավատարիմ լինել կամ վստահելի, հուսալի

(1) մարդկանց, Ես. 8:2; 53:1; Եր. 40:14

(2) իրեր, Ես. 22:23

(3) Աստծուն, 2 Օրին. 7:9,12; Ես. 49:7; Եր. 42:5

գ. *Hiphil* հիմք – հաստատ կանգնել, հավատալ, վստահել

(1) Աբրահամը հավատաց Աստծուն, Ծննդ. 15:6

(2) Իսրայելացիք Եգիպտոսում հավատացին Ել.4:31;14:31(ժխտվում է 2 Օրին.1:32)

(3) Իսրայելացիք հավատացին ԵՀՈՎԱՅԻՆ, ով խոսեց Մովսեսի միջոցով Ել. 19:9; Սաղ. 106:12,24

(4) Աքազը չվստահեց Աստծուն, Ես. 7:9

(5) ով որ հավատա նրան Ես. 28:16

(6) հավատալ նշանակում է վստահել Աստծուն Ես. 43:10-12

2. ԳՈՅԱԿԱՆ (արական) - հավատարմություն (2 Օրին. 32:20; Ես. 25:1; 26:2)

3. ՍԱԿԲԱՅ – ճշմարիտ, Ես համամիտ եմ, թող այդպես լինի (Հմմտ. 2 Օրին. 27:15-26; 3 Թագ. 1:36; I Սնաց. 16:36; Ես. 65:16; Եր. 11:5; 28:6): Սա հոգևոր կիրառությունն էր «ամեն» բառի Հին և Նոր կտակարաններում

Բ. յա (BDB 54) ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ ամրություն, հավատարմություն, ճշմարտություն

1. մարդկանց Ես. 10:20; 42:3; 48:1

2. Աստծո Ել. 34:6; Սաղ. 117:2; Ես. 38:18,19; 61:8

3. ճշմարտության 2 Օրին. 32:4; 3 Թագ. 22:16; Սաղ. 33:4; 98:3; 100:5; 119:30; Եր. 9:4; Ջաբ. 8:16

Գ. յա (BDB 53), հաստատականություն, կայունություն, հավատարմություն

1. ձեռքերի, Ել. 17:12

2. Ժամանակի, Ես. 33:6

3. մարդկանց, Եր. 5:3; 7:28; 9:2

4. Աստծո Սաղ. 40:11; 88:12; 89:2,3,6,9; 119:138

III. Գաղափարի կիրառությունը ըստ Պողոսի

Ա. Պողոսը ԵՀՈՎԱՅԻ և Հին Կտակարանի մասին իր նոր հասկացողությունը հիմնում է իր անձնական հանդիպումը Հիսուսի հետ Դամասկոսի ճանապարհին (հմմտ. Գործք 9; 22; 26):

Բ. Նա գտավ հինկտակարանյան հենարան իր նոր հասկացողության համար երկու բանալի հատվածներում, որոնք օգտագործում են յա արմատը:

1. Ծննդ. 15:6 - Աբրահամի անձնական հանդիպումը նախաձեռնված էր Աստծո կողմից (Ծննդոց 12-22): Պողոսն այս մասին ակնարկում է Հռոմեացիս 4 և Գաղատացիս 3-ում:

2. Ես. 28:16 – նրանք, ովքեր հավատում են դրան (այն է, Աստծո ստուգած և ամուր տեղադրած անկյունաքար) երբեք չեն

ա. Հռ. 9:33 «ամաչի» կամ «հուսահատվի»

բ. Հռ. 10:11 «ամաչի»

3. Ամբ. 2:4 – նրանք, ովքեր ճանաչում են հավատարիմ Աստծուն պետք է ապրեն հավատարիմ

կյանքով (հմմտ. Եր. 7:28): Պողոսն օգտագործում է այս տեքստը Հռ.1:17-ում և Գաղ. 3:11-ում (մաս տես Եբր. 10:38):

IV. Գաղափարի կիրառությունը ըստ Պետրոսի

Ա. Պետրոսը կապակցում է

1. Ես. 8:14 – 1 Պետ. 2:8(գլորման քար)
2. Ես. 28:16 – 1 Պետ. 2:6(անկյունաքար)
3. Սաղ. 111:22 – 1 Պետ. 2:7(անարգված քար)

Բ. Նա օգտագործում է յուրահատուկ լեզու, որը նկարագրում է Իսրայելին «ընտիր ազգ, քաղաքական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ»

1. 2 Օրին. 10:15; Ես. 43:21
2. Ես. 61:6; 66:21
3. Ելից 19:6; 2 Օրին. 7:6

իսկ հիմն օգտագործում է այն Քրիստոսով եկեղեցու հավատքի համար:

V. Գաղափարի կիրառությունը ըստ Հովհաննեսի

Ա. Տերմինի կիրառությունը Նոր Կտակարանում

«Հավատաց» տերմինը առաջացել է հունարեն (*pisteuō*) տերմինից, որը մաս կարող է թարգմանվել «հավատալ», «հավատք», կամ «վստահություն»: Օրինակ, որպես գոյական Հովհաննու Ավետարանում չի հանդիպում, բայց որպես բայ հաճախ է օգտագործվում: Հովհ. 2:23-25 գոյություն ունի որոշակի անորոշություն ժողովրդի անկեղծության մեջ Հիսուս Նազովրեցուն որպես Մեսիա ընդունելու առումով: Ուրիշ օրինակներ, երբ «հավատալ» տերմինը օգտագործվում է մակերեսորեն Հովհ. 8:31-59 և Գործք 8:13, 18-24: Ճշմարիտ աստվածաշնչյան հավատքն ավելին է քան սկզբնական արձագանքը: Դրան անպայման պետք է հետևի աշակերտության գործընթացը (հմմտ. Մաթ. 13:20-22,31-32):

Բ. Օգտագործվում է ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ

1. *eis* նշանակում է «մեջ»: Այս հատուկ քերականական կառուցվածքը ընդգծում է հետևյալ միտքը, երբ հավատացյալներն իրենց վստահություն/հավատքը դնում են Հիսուսի վրա
 - ա. Նրա անվանը (Հովհ. 1:12; 2:23; 3:18; I Հովհ. 5:13)
 - բ. Նրան (Հովհ. 2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45,48; 17:37,42; Մաթ. 18:6; Գործք 10:43; Փիլ. 1:29; I Պետ. 1:8)
 - գ. Ինձ (Հովհ. 6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
 - դ. Որդուն (Հովհ. 3:36; 9:35; I Հովհ. 5:10)
 - ե. Հիսուսին (Հովհ. 12:11; Գործք 19:4; Գաղ. 2:16)
 - զ. Լույսին (Հովհ. 12:36)
 - է. Աստծուն (Հովհ. 14:1)
2. *en* նշանակում է «մեջ» ինչպես Հովհ. 3:15; Մարկ. 1:15; Գործք 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» ինչպես, Մաթ. 27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռ. 4:5,24; 9:33; 10:11; I Տիմ. 1:16; I Պետ. 2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ առանց ՆԱԽԴԻՐԻ ինչպես Գաղ. 3:6; Գործք 18:8; 27:25; I Հովհ. 3:23;5:10;
5. *hoti*, որը նշանակում է «հավատալ, որ» ցույց է տալիս էությունը այն բանի, թե ինչին հավատալ
 - ա. Հիսուսն Աստծո Սուրբն է (Հովհ. 6:69)
 - բ. Հիսուսը - ԵՍ ԵՄ (Հովհ. 8:24)
 - գ. Հիսուսը Հոր մեջ է և Նա Հոր մեջ (Հովհ. 10:38)
 - դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ. 11:27; 20:31)
 - ե. Հիսուսն Աստծո Որդին է (Հովհ. 11:27; 20:31)
 - զ. Հիսուս ուղղարկված էր Հոր կողմից (Հովհ. 11:42; 17:8,21)
 - է. Հիսուսը մեկ է Հոր հետ (Հովհ. 14:10-11)
 - ը. Հիսուսը եկավ Հորից (Հովհ. 16:27,30)
 - թ. Հիսուսն իրեն ճանաչեցնում է Հոր ուխտի անվան հետ, «ԵՍ ԵՄ» (Հովհ. 8:24; 13:19)
 - ժ. Մենք կապրենք Նրա հետ (Հռ. 6:8)
 - ի. Հիսուս մեռավ և հարություն առավ (I Թե. 4:14)

Աստվածաշնչյան հավատքը մարդու արձագանքն է Աստծո խոսքին/խոստմանը: Աստված է միշտ նախաձեռնողը (այն է, Հովհ.6:44,65), բայց Աստծո հետ հաղորդակցվելու համար մարդիկ պետք է

արձագանքեն.

Ա. վստահել

Բ. ուխտի հնազանդություն

Աստվածաշնչյան հավատքը

1. անձնական հարաբերություն (ներքին հավատք)

2. աստվածաշնչյան ճշմարտության հաստատում (հավատքը Աստծո հայտնության մեջ)

3. համապատասխան հնազանդությամբ արձագանքել դրան(ամենօրյա հավատք)

Աստվածաշնչյան հավատքը երկինք գնալու ուղեգիր չէ, ոչ էլ ապահովագրություն: Այն անձնական հարաբերություն է: Դա արարչագործության նպատակն է և մարդը, որը ստեղծվել է Աստծո պատկերով և նմանությամբ (հմմտ. Ծննդ. 1:26-27):

Հարցը մտերմիկ հարաբերությունն է: Աստված փափագում է մտերմություն, և ոչ թե որոշակի աստվածաբանական չափանիշ: Բայց Սուրբ Աստծո հետ հաղորդակցվելու համար պահանջվում է, որ զավակները ցուցաբերեն «ընտանեկան» առանձնահատկություն (այն է, սրբություն, հմմտ. Դև. 19:2; Մաթ. 5:48; I Պետ. 1:15-16): Անկումը (հմմտ. Ծննդ. 3) ազդեց մեր ճիշտ արձագանքելու կարողության վրա: Ուստի, Աստված գործեց մեր օգտին(հմմտ. Եզ. 36:27-38), տալով մեզ «նոր սիրտ» և «նոր հոգի», որը կտա մեզ կարողություն, հավատքի և ապաշխարության միջոցով հաղորդակցվել Նրա հետ և հնազանդվել Նրան:

Երեքն էլ անհրաժեշտ են: Երեքն էլ պետք է լինեն անպայման: Նպատակն է ճանաչել Աստծուն (թե երբայական և թե հունական իմաստներով) և անդրադարձնել Նրա կերպարը մեր կյանքերում: Հավատքի նպատակը մեկ օր երկնքում հայտվելը չէ, բայց ամեն օր Քրիստոսանման լինել:

Մարդկային հավատարմությունը արդյունքն է (ՆԿ), և ոչ թե հիմք (ՀԿ) Աստծո հետ հարաբերություն ունենալու համար; մարդու հավատքը Նրա հավատարմությանը; մարդու վստահությունը Նրա հուսալիությանը: Նոր Կտակարանի փրկության տեսանկյան սիրտը այն է, որ մարդիկ պետք է արձագանքեն սկբնականում և շարունակաբար Աստծո շնորհքին և ողորմությանը, որը երևում է Քրիստոսի մեջ: Նա սիրեց, Նա ուղարկեց, Նա ապահովվեց, մենք պետք է արձագանքենք հավատքով և հավատարմաբար (հմմտ. Եփ. 2:8-9 և 10):

Հավատարիմ Աստվածն ուզում է, որ հավատարիմ մարդիկ ցույց տան Իրեն անհավատ աշխարհում և նրանց առաջնորդեն անձնական հավատքի Նրա հետ:

1:15 «որովհետև ինձանից առաջ էր» Հովհաննես Մկրտիչի այս խոսքերը խիստ պնդում են Հիսուսի նախագոյությունը (հմմտ. 1:1; 8:56-59; 16:28; 17:5; II Կոր. 8:9; Փիլ. 2:6-7; Կող. 1:17; Եբր. 1:3; 10:5-8): Նախագոյության և կանխագուշակող մարգարեության վարդապետությունները հաստատում են, որ կա Աստված պատմության վրա և հետևում, և ով գործում է պատմության մեջ: Սա աստվածաշնչյան աշխարհայացքի անբաժանելի մասն է կազմում:

1:16-18 Հովհաննեսի Ավետարանի առանձնահատկություններից մեկն այն է, թե ինչպես հեղինակը իր մեկնաբանությունները դնում է պատմական իրադարձությունների, երկխոսությունների կամ ուսուցողական բաժինների նկարագրության մեջ: Հաճախ անհնարին է նկատել տարբերությունը Հիսուսի, ուրիշ անձերի և Հովհաննեսի խոսքերի միջև: Շատ աստվածաբան գիտնականներ պնդում են, որ հհ. 16-19 Հովհաննես հեղինակի մեկնաբանություններն են (հմմտ. 3:14-21):

1:16 «լիութինիցը» Հունարեն տերմին *pleroma*. Կեղծ գնոստիկ վարդապետները օգտագործում էին այն նկարագրելու համար հրեշտակային «էոնները» բարձր աստծո և ավելիցածր հոգևոր էակների միջև: Հիսուսն է միակ միջնորդը (այն է, ճշմարիտ և միակ լիությունը) Աստծո և մարդու միջև (հմմտ. Կող. 1:19; 2:9; Եփ. 1:23; 4:13): Այստեղ կրկին թվում է, որ Հովհաննես առաքյալը գրոհում է իրականության մասին վաղ գնոստիկ կարծիքի վրա:

■ **NASB, NRSV** “և շնորհք շնորհքի վրա”

NKJV “և շնորհք շնորհքի փոխարեն”

TEV “տալով մեզ մեկ օրհնություն մյուսի հետևից”

NJB “մի պարզև փոխարինելով մյուսին”

Մեկնաբանող հարցն այն է, թե ինչպես հասկանալ «շնորհքը»: Դա

1. Աստծո ներումը Քրիստոսում փրկության հետ կապված
2. Աստծո ողորմությունը քրիստոնեական կյանքի համար
3. թե՞ Աստծո ողորմությունը նոր ուխտի մեջ Քրիստոսի միջոցով

Բանալի միտքը «շնորհքն» է, Աստծո շնորհքը հիանալի կերպով տրվել է Հիսուսի մարմնավորման մեջ: Հիսուսը Աստծո «այո»ն է ընկած մարդկությանը (հմմտ. II Կոր. 1:20):

1:17 «**օրենքը**» Մովսեսական Օրենքը վատը չէր, բայց կատարում էր նախապատրաստական գործ և ամբողջական չէր, որպեսզի մարդու փրկություն ապահովեր (հմմտ. 5:39-47; Գաղ. 3:23-29; Հռ. 4): Եբրայեցիս թողթը նույնպես հակադրում և համեմատում է Մովսեսի և Հիսուսի գործը, հայտնությունը, ուխտը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԻ ԿԱՐԾԻՔԸ ՄՈՎՍԵՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Այն բարի է և Աստծուց է (հմմտ. Հռ. 7:12,16)

- Ա. Արդարացման և ոչ էլ Աստծո կողմից ընդունվելու միջոց չէ այն (այն կարող է նաև անեծք լինել, հմմտ. Գաղ. 3)
- Բ. Այն նաև Աստծո կամքն է հավատացյալների համար, որովհետև այն Աստծո ինքնա հայտնությունն է (Պողոսը հաճախ մեջբերում է Հին Կտակարանից՝ հանդիմանելու և/կամ քաջալերելու հավատացյալներին)
- Գ. Հավատացյալները տեղեկացվում են Հին Կտակարանից (հմմտ. Հռ. 4:23-24; 15:4; I Կոր. 10:6,11), բայց չեն փրկվում Հին Կտակարանով (հմմտ. Գործք 15; Հռ. 4; Գաղ. 3; Եբրայեցիս)
- Դ. Այն գործում է նոր ուխտի մեջ
 1. ցույց տալու համար մարդու մեղավոր վիճակը (հմմտ. Գաղ. 3:15-29)
 2. ուղեցույց է հանդիսանում փրկվածների համար հասարակության մեջ ապրելու համար
 3. քրիստոնյաներին տալու բարոյական որոշումներ

Այս աստվածաբանական սպեկտորն է անեծքից օրհնության և հարատևության փոխվելն է, որ որոշակի խնդիրներ է ստեղծում երբ փորձում ես հասկանալ Պողոսի կարծիքը Մովսեսական Օրենքի մասին: Ջեյմս Ստյուարտը իր «Մարդը Քրիստոսի մեջ» գրքում [A Man in Christ, James Stewart] ցույց է տալիս Պողոսի պարադոքսալ մտածելակերպն ու գրվածքները:

«Դուք որպես կանոն կցանկանայիք, որ մարդը, որն ինքն է կառուցում մտքերի և վարդապետության համակարգ, իր օգտագործած տերմինների իմաստը ինչքան հնարավոր է ճշգրիտ ֆիքսեր: Դուք կակնակելիք, որ նա լուրջ մտադրություններ ունենար, որքան հնարավոր է ստույգ արտահայտություն դարձնելու իր հիմնական գաղափարները: Դուք կպահանջեիք, որ ձեր հեղինակի կողմից մեկ անգամ և որոշակի իմաստով օգտագործված բառը, պահպաներ իր իմաստը ամբողջ նյութի շարադրանքի ընթացքում: Բայց եթե այսպես նայենք Պողոսի գործին, կհիասթափվենք: Նրա ոճաբանությունից շատերը հոսուն են, և ոչ թե խիստ և կոնկրետ. . . «Օրենքը սուրբ է» գրում է նա, « Ես հավանում եմ Աստծո օրենքը ներսի մարդով (հմմտ. Հռ. 7:12,22) բայց հստակ է *nomos-ի* մեկ ուրիշ ասպեկտ, որը նրան մղում է ասելու, «Քրիստոսը մեզ ազատեց օրենքի անեծքից (հմմտ. Գաղ. 3:13)» (էջ 26):

- «**շնորհք**» Սա վերաբերում է Աստծո սիրուն անարժան, մեղավոր մարդկության համար (հմմտ. Եփ. 2:8): Այս տերմինը շնորհք (*charis*), այնքան կարևոր է Պողոսի գրվածքներում, օգտագործվում է միայն Հովհաննեսի Ավետարանի այս հատվածում (հմմտ. 1:14,16,17): Նոր Կտակարանի գրողները, ներշնչանքի ներքո, ազատ էին օգտագործելու իրենց սեփական բառապաշարը, նմանությունները և փոխաբերությունները:

Հիսուսը իրականացրեց «նոր ուխտը» Եր. 31:31-34; Եզ. 36:22-38.

- «**ճշմարտություն**» Այստեղ այս բառը օգտագործված է որպես (1) հավատարմություն կամ (2) ճշմարտություն ի հակառակ կեղծիքի (հմմտ. 1:14; 8:32; 14:6): Ուշադրություն դարձրեք, որ շնորհքն ու ճշմարտությունը եկան Հիսուսի միջոցով (հմմտ. հ. 14): Տես Հատուկ Թեմա 17:3.

- «**Հիսուս**» Նախաբանում առաջին անգամ օգտագործվում է Մարիամի Որդու մարդկային անունը: Նախագոյ Որդին հիմա մարմնավորված Որդին է:

1:18 «Աստուծուն ոչ ով երբեք չէ տեսել» Ոմանք ասում են, որ սա հակասում է Ելից 33:20-23-ին: Ինչևէ, Ելիցի հատվածում օգտագործված եբրայերեն տերմինը վերաբերում է «հետևանք, արդյունք, մայրամուտի շողք» և ոչ թե Աստծո ֆիզիկական տեսքը: Այս հատվածի շեշտադրումն այն է, որ միայն Հիսուսն է ամբողջությամբ հայտնում Աստծուն (հմմտ. 14:8): Ոչ մի մեղավոր մարդ Աստծուն չի տեսել (հմմտ. 6:46; I Տիմ. 6:16; I Հովհ. 4:12,20):

Այս համարը ընդգծում է Աստծո յուրահատուկ հայտնությունը Հիսուս Նագովրեցու մեջ: Նա է ամբողջական և միակ աստվածային ինքնաբացահայտումը: Ճանաչել Հիսուսին նշանակում է ճանաչել Աստծուն: Հիսուսը Հոր Աստծո գերագույն հայտնությունն է: Չկա ուրիշ միջոց Աստծուն հստակ հասկանալու համար Նրանից բացի (հմմտ. Կող. 1:15-19; Եբր. 1:2-3): Հիսուսը «տեսնում է» Հորը իսկ հավատացյալները «տեսնում են» Հորը Նրա միջոցով (Նրա կյանքը, խոսքերը և գործերը): Նա է անտեսանելի Աստծո ամբողջական և վերջնական հայտնությունը (հմմտ. Կող. 1:15; Եբր. 1:3):

-
- NASB “միածին Աստվածը”
- NKJV “միածին Որդին”
- NRSV “Աստծո միակ Որդին”
- TEV “Միակ Որդին”
- NJB “միակ Որդին է”

Ուշադրություն դարձրեք *monogenēs* 1:14-ում: Հիսուսն ամբողջությամբ Աստված է և ամբողջությամբ մարդ: Տես ամբողջ ծանուցումը 1:1.

Այստեղ հունարեն ձեռագրում կա շեղում: *Theos* Աստված գրված է վաղ հունարեն մագաղաթներում P⁶⁶, P⁷⁵, B, և C, իսկ «Որդի» բառը փոխարինված է «Աստված» բառին միայն MSS A և C³ ձեռագրերում: UBS⁴ ձեռագիրը տալիս է «Աստված» «B» վարկանիշ (գրեթե հավանական): Շատ հնարավոր է, որ «Որդի» տերմինը մտցրել են արտագրողները, ավելի լավ հիշվելու համար «միածին Որդին» արտահայտությունը Հովհ. 3:16,18 և I Հովհ. 4:9 (հմմտ. Բրյուս Մ. Մեցգեր «Հունարեն Նոր Կտակարանի տեքստային մեկնաբանությունը» [Bruce M. Metzger’s *A Textual Commentary on the Greek New Testament*] էջ 198): Սա Հիսուսի ամբողջական և լրիվ աստվածության ուժեղ հաստատումն է: Հնարավոր է, որ այս համարը ունի երեք տիտղոսներ Հիսուսի համար (1) միածին, (2) Աստված, և (3) Հոր ծոցում լինողը:

Շատ հետաքրքիր հարցի քննարկման հնարավոր տարբերակ կա այս տեքստի մասին Բարթ Ռ. Էրմանի «Սուրբ Գրքի ուղղափառ խեղաթյուրում» գրքում [Bart D. Ehrmans’ *The Orthodox Corruption of Scripture*], էջ 78-82:

- «Հոր ծոցումը լինողը» Այս արտահայտության իմաստը շատ նման է «Աստծո հետ» արտահայտության իմաստին հհ. 1 և 2: Խոսքը խորը և մտերմիկ հարաբերությունների մասին է: Այն կարող էր վերաբերել (1) Նրա նախագոյության հարաբերությանը կամ (2) Նրա վերականգնված հարաբերությանը (այն է, Համբարձումը):

-
- NASB “Նա բացատրել է Նրան”
- NKJV “Նա հռչակել է Նրան”
- NRSV, NJB “ով նրան հայտնի արեց”
- TEV “նա նրան հայտնեց”

Ժամանակակից անգլերեն լեզվում կա «էկզեջիզիս» տերմինը, որը առաջացել է հունարեն բառից օգտագործված 1:18-ում, որը նշանակում է ամբողջական և վերջնական հայտնություն: Հիսուսի հիմնական առաջադրանքներից մեկը Հորը բացահայտելն էր (հմմտ. Հովհ. 14:7-10; Եբր. 1:2-3): Տեսնել և ճանաչել Հիսուսին նշանակում է տեսնել և ճանաչել Հորը (մեղավորներին սիրող, տկարին օգնող, անարգվածին ընդունող, երեխաներին և կանանց աջակցող):

Հունարենում տերմինը օգտագործվում էր նրանց համար, ովքեր բացատրում կամ մեկնաբանում էին պատգամը, երազը կամ փաստաթուղթը: Այստեղ նորից Հովհաննեսը հնարավոր է օգտագործում է մի բառ, որը ուներ յուրահատուկ իմաստ թե հրեաների և թե հեթանոսների համար (ինչպես *Logos* հ.1-ում): Հովհաննեսը փորձում էր կապվել թե հրեաների և թե հույների հետ իր նախաբանով: Բառը կարող էր նշանակել

1. հրեաների համար, անձ ով բացատրում կամ մեկնաբանում է Օրենքը

2. հույների համար, անձ ով բացատրում կամ մեկնաբանում է չաստվածներին: Հիսուսի, և միայն ու միայն Հիսուսի միջոցով մարդը ամբողջությամբ տեսնում և հասկանում է Հորը:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Տվեք *logos* տերմինի սահմանումը և դրա հին կրոնական, աշխարհիկ և աստվածաշնչյան կիրառությունները:
2. Ինչու՞ է Հիսուսի նախագոյության վարդապետությունը այդքան կարևոր:
3. Ո՞րն է մարդու բաժինը փրկության մեջ: Ինչպե՞ս է մարդն ընդունում Հիսուսին:
4. Ինչու՞ էր անհրաժեշտ, որ Բանը մարմին դառնար:
5. Ինչու՞ է այդքան դժվար ուրվագծել այս հատվածը:
6. Թվարկեք տարբեր աստվածաբանական ճշմարտություններ, որոնք նկարագրում են Հիսուսին (ամենաքիչը 8).
7. Ինչու՞ է համար 18-ը այդքան կարևոր:

19-51 համարների կոնտեքստի ներդրումումը

- Ա. Այս հատվածը, կապված Հովհաննես Սկրտիչի գործունեության հետ, առընչվում է երկու սխալ հասկացողություններ հետ, որոնք գոյություն են ունեցել վաղ եկեղեցում.
1. պատկերացում Հովհաննես Սկրտիչի մասին, որը քննարկվում է հհ.6-9, 20,21,25; և 3:22-36;
 2. պատկերացում Հիսուս Քրիստոսի անձի մասին, որի մասին խոսվում է հհ. 32-34: Գնոստիցիզմի այս նույն հերետիկոսությունը նմանապես հարձակվում է I Հովհ. 1. I Հովհ. հնարավոր է Հովհաննու Ավետարանի ամփոփիչ նամակն է:
- Բ. Հովհաննու Ավետարանը լռում է Հովհաննես Սկրտիչի կողմից Հիսուսի մկրտության մասին: Հովհաննեսի Ավետարանում Քրիստոսի կյանքին վերաբերող եկեղեցական արարողակարգերից՝ մկրտության և հաղորդության մասին պատմությունները ակնառու կերպով բացակայում են: Ամենաքիչը երկու հնարավոր բացատրություններ կան հետևյալ հանգամանքների համար.
1. վաղ եկեղեցում աճող սակրամենտալիզմը պատճառ հանդիսացավ Հովհաննեսի համար չտալ ավելորդ իմաստ՝ քրիստոնեության այս ասպեկտի: Նրա Ավետարանը կենտրոնանում է փոխհարաբերությունների վրա, և ոչ թե ծեսերի: Նա չի քննարկում կամ արձանագրում երկու խորհուրդներն ընդհանրապես մկրտությունն ու Տերունական Ընթրիքը: Բայց շատ սպասված մի բանի բացակայությունը նպաստում է ավելի շատ ուշադրություն դարձնելուն:
 2. Հովհաննեսը իր Ավետարանը գրել է ավելի ուշ, քան մյուս ավետարանները, և Քրիստոսի կյանքի իր պատմությունը նա օգտագործեց որպես լրացում մյուսներին: Քանի որ բոլոր սինոպտիկ ավետարանները պատմում են այդ իրադարձությունների մասին, Հովհաննեսը միայն տալիս է լրացուցիչ տեղեկություն շրջապատող իրավիճակի մասին: Այդպիսի մոտեցման օրինակ կարող է լինել վերնատանը կատարվող երկխոսություններն ու իրադարձությունները (գլուխներ 13-17) բայց ոչ բուն ընթրիքը:
- Գ. Տվյալ հատվածում հատուկ ուշադրություն է դարձվում Հովհաննես Սկրտիչի վկայությանը՝ Հիսուսի Անձի վերաբերյալ: Այստեղ Հովհաննեսը հետևյալն է ասում քրիստոսաբանության մասին.
- Հիսուսը Աստծո Գառն է (հ. 29) Հիսուսն այսպես է անվանվում միայն այստեղ և

Հայտնության գրքում
Հիսուսը նախագոյ է (հ. 30)
Հիսուսը Սուրբ Հոգու ստացողն ու սովորն է (հ. 33)
Հիսուսը Աստծո Որդին է (հ. 34)

- Գ. Հիսուսի անձի և ծառայության մասին ճշմարտությունները հռչակվում են անձնական վկայությունների միջոցով
Հովհաննես Սկրտիչ
Անդրեաս և Սիմոն
Փիլիպոս և Նաթանայել
Սա դառնում է տարածված գրական ոճաձև ամբողջ Ավետարանի ընթացքում: Այն պարունակում է քսանյոթ երկխոսություն կամ վկայություն Հիսուսի մասին կամ Հիսուսի հետ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:19-23

¹⁹Եւ այս է Յովհաննէսի վկայութիւնը, երբոր Հրէաներն Երուսաղէմից քահանաներ ու Ղեսացիներ ուղարկեցին նորա մօտ, որ հարցնեն նորան, թէ Դու ո՞վ ես: ²⁰Եւ նա խոստովանեց եւ չուրացաւ. եւ խոստովանեց, թէ Ես չեմ Քրիստոսը: ²¹Եւ նորան հարցրին. Ապա ո՞վ, Եղիա՞ն ես. եւ նա ասեց. Չեմ. մարգարէ՞ն ես դու. եւ նա պատասխանեց, Ոչ: ²²Արդ ասեցին նորան. Ապա ո՞վ ես, որ պատասխան տանք մեզ ուղարկողներին. ի՞նչ ես ասում քեզ համար: ²³Ասեց. Ես եմ անապատումը կանչողի ձայնը, թէ Ուղղեցեք Տիրոջ ճանապարհը, ինչպէս Եսայիա մարգարէն ասեց:

1:19 «Հրէաներն» Հովհաննէսի Ավետարանում սա վերաբերում է (1) Հուդայի բնակիչներին, ովքեր թշնամաբար էին վարվում Հիսուսի հետ կամ (2) միայն հրեա կրոնական առաջնորդները (հմմտ. 2:18; 5:10; 7:13; 9:22; 12:42; 18:12; 19:38; 20:19): Որոշ աստվածաբան գիտնականներ պնդել են, որ մի հրեան մյուս հրեային չի դիմում այս նսեմացուցիչ ձևով: Ինչևէ, հրեական ընդդիմությունը քրիստոնեության դեմ ավելի խստացավ Յամնիայի ժողովից հետո 90թ. Ք.Հ.

«Հրեա» բառը հիմնականում առաջացել է Հուդայի ցեղին պատկանող ինչ-որ մեկի անունից: Ք.Ա. 922թ. տասներկու ցեղերի բաժանումից հետո, հարավային երեք ցեղերի անունը կոչվեց Հուդա: Երկու հրեական թագավորություններ՝ Իսրայելը և Հուդան, գերության տարվեցին, բայց միայն քչերը, հիմնականում Հուդայից, վերադարձան Կյուրոսի հրամանից հետո 538թ. Ք.Ա. Հետագայում տերմինը դարձավ Հակոբի սերունդների տիտղոսը, ովքեր ապրում էին Պաղեստինում և ցրված էին Միջերկրականի տարածքով: Հ

Հովհաննէսի Ավետարանում տերմինը մեծամասամբ բացասական է, բայց նրա հիմնական օգտագործումը երևում է 2:6 և 4:22:

▪ **«քահանաներ ու Ղեսացիներ»** Ակնհայտ է, որ Հովհաննես Սկրտիչը նույնպես քահանայական սերնդից էր (հմմտ. Գուկ.1:5): «Ղեսացիներ» բառը հանդիպում է Հովհաննէսի Ավետարանում մեկ անգամ միայն այստեղ: Հավանական է, նրանք տաճարի պահապաններն էին: Այնտեղ գոյություն ունեւ օրինական հատուկ խումբ «փաստ որոնողներ», որոնց Երուսաղէմից ուղարկել էին կրոնական հեղինակությունները (հմմտ. հ. 24): Քահանաներն ու Ղեսացիները սովորաբար սաղուկեցիներն էին, իսկ դպիրները՝ փարիսեցիները (հմմտ. հ. 24): Այս երկու խմբերն էլ ներգրավված էին Հովհաննես Սկրտիչին հարցակոխ անելու մեջ: Քաղաքական և կրոնական հակառակորդները միավորեցին իրենց ուժերը՝ հակառակվելու Հիսուսի և Նրա հետևորդների դեմ:

▪ **«Դու ո՞վ ես»** Այս նույն հարցը տրվեց Հիսուսին 8:25-ում: Հովհաննեսը և Հիսուսը սովորեցրեցին և գործեցին այնպես, որ անհանգստություն առաջացրեցին օրինական հրեա առաջնորդների մոտ, որովհետև նրանք հասկացան, որ այս երկուսն էլ ունեին հինկտակարանյան վախճանաբանական թեմաներ և պահեր: Այս հարցը, այդ կերպով, արտացոլում էր հրեական ակնկալիքը վերջին ժամանակի մասին, Նոր Դարի անձերի հայտնվելուն:

1:20 «Եւ նա խոստովանեց եւ չուրացաւ. եւ խոստովանեց» Այս արտահայտությունը ուժեղ, եռակի մերժում է, որ նա սպասված, խոստացյալ Մեսիան էր (Քրիստոս): «Խոստովանել» տես Հատուկ Թեմա 9:22.

▪ **«Քրիստոսը»** «Քրիստոս» բառը հին եբրայերեն *māšîah* տերմինի հունարեն թարգմանությունն է, որը

նշանակում էր «օծյալ»: Հին Կտակարանում օծելու գաղափարը կերպ էր, ընդգծելու Աստծո հատուկ կանչն ու սպառազինումը հատուկ առաջադրանքի համար: Թագավորները, քահանաները և մարգարեները օծված էին: Օծումը կապում էին նաև այն Անձի հետ, ով պետք է գար և հռչակեր նոր դարաշրջանի արդարության սկիզբը: Շատերը կարծում էին, թե Հովհաննես Սկրտիչն էր այդ խոստացյալ Մեսիան (հմմտ. Գուկ. 3:15) քանի որ նա ՅԱՀՎԵ-ի առաջին ներշնչված մարգարեն էր Հին Կտակարանի մարգարե - հեղինակներից ավելի քան չորս հարյուր տարի անց: Այստեղ ես ցանկանում եմ ներառել Դան. 9:26 «Մեսիա» իմ մեկնաբանությունները:

Դանիել 9:26

NASB “Մեսիան”
NKJV “Մեսիա”
NRSV “օծյալը”
TEV “Աստծո ընտրյալ առաջնորդը”
NJB “Օծյալը”

Այս համարի մեկնաբանության դժվարությունը կայանում է նրանում, որ հնարավոր իմաստներ կան, որոնք համակցվում են Մեսիա կամ Օծյալ տերմինի հետ (BDB 603):

1. օգտագործվում էր հրեա թագավորների համար (օր. I Թագ. 2:10; 12:3)
2. օգտագործվում էր հրեա քահանաների համար (օր. Գև. 4:3,5)
3. օգտագործվում էր Կյուրոսի համար (հմմտ. Ես. 45:1)
4. #1 և #2 կապակցված են Սաղ. 110 և Չաք. 4
5. օգտագործվում էր Աստծո Դավիթական Թագավորի հատուկ գալստյան համար, որը բերելու է արդարություն նոր դարաշրջանում
 - ա. Հուդայի ցեղից (հմմտ. Ծննդ. 49:10)
 - բ. Հեսսեի տնից (հմմտ. II Թագ. 7)
 - գ. համընդհանուր թագավորություն (հմմտ. Սաղ. 2; Ես. 9:6; 11:1-5; Միք. 5:1-4)

Ես, ինքս, հակված եմ «օծյալ»-ի նույնացումը Հիսուս Նազովրեցու հետ, քանի որ

1. 2-րդ գլխում ներկայացնում է հավիտենական Թագավորությունը չորրորդ կայսրության ժամանակ
2. 7:13-ում ներկայացնում է «մարդու որդուն», որին տրվեց հավիտենական թագավորություն
3. 9:24 փրկության հատվածները, որոնք ցույց են տալիս մեղավոր, ընկած աշխարհի պատմության վերջնակետը
4. Նոր Կտակարանում Հիսուսը մեջբերում է Դանիելի Գրքից (հմմտ. Մաթ. 24:15; Մարկ. 13:14)

1:21 «Ապա ո՞վ, Եղիա՞ն ես» Քանի որ Եղիան չէր մահացել , այլ երկինք էր տարվել կենդանի (հմմտ. 4 Թագ. 2:1), ապա շատերը սպասում էին, որ նա կվերադառնա Մեսիայից առաջ (հմմտ. Մաղ. 3:1; 4:5): Հովհաննես Սկրտիչն իր գործերով և արտաքինով շատ նման էր Եղիային (հմմտ. Չաք. 13:4):

▪ **«Չեմ»** Հովհաննես Սկրտիչը իրեն չէր տեսնում Եղիայի վախճանաբանական դերի մեջ, բայց Հիսուսը նայում էր նրա գործունեությանը, որպես Մաղաքիայի մարգարեության իրականացում (հմմտ. Մաթ. 11:14; 17:12):

▪ **«մարգարե՞ն ես դու»** Մովսեսը կանխագուշակեց, որ իրեն նման մեկը (ուն նա կոչեց «Մարգարեն») նրա ետևից է գալու (հմմտ. 2 Օրին. 18:15,18; Հովհ. 1:25; 6:14; 7:40; Գործք 3:22-23; 7:37): Նոր Կտակարանում այս տերմինը օգտագործված է երկու իմաստով (1) ոմն վախճանաբանական կերպար, Մեսիայից զատ (հմմտ. 7:40-41) կամ (2) հենց այնպիսի անձ , ով նման էր Մեսիային (հմմտ. Գործք 3:22):

1:23 «Ես եմ անապատումը կանչողի ձայնը» Սա մեջբերում է Մեպտուազինդից Ես.40:3-ը, որը զուգահեռ է Մաղ. 3:1:

▪ **«Ուղղեցեք Տիրոջ ճանապարհը»** Սա մեջբերում է (Ես. 40:3) Եսայա մարգարեության գրքի գրական բաժնից (գլուխներ 40-54) որտեղ գրված են «Ծառայի երգերը» (հմմտ. 42:1-9; 49:1-7; 50:4-11; 52:13-53:12): Սկզբում դրանք ուղղված են ամբողջ Իսրայելին, բայց 52:13-53:12-ում ստանում են անհատական իմաստ: «Ուղիղ ճանապարհ» հասկացողությունը առաջացել է թագավորական այցին պատրաստվելու արարողության իմաստից: «Ուղիղ» տերմինը կապված է «արդարություն» բառի ստուգաբանությանը: Տես

Հատուկ Թեմա I Հովհ. 2:29:

Շատ հավանական է, որ Հովհաննես առաքյալի ամբողջ այս պարբերության աստվածաբանական միտումը այն բանի համար էր, որ փոքրացներ Հովհաննես Սկրտիչի կարևորությունը, քանի որ առաջին դարում հայտնվեցին մի քանի հերետիկոսներ, ովքեր իրենց հոգևոր առաջնորդ էին համարում Հովհաննես Սկրտիչին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:24-28

²⁴Եւ ուղարկուածները Փարիսեցիներիցն էին: ²⁵Եւ նորան հարցրին եւ ասեցին. Ապա ի՞նչու ես մկրտում, եթէ դու ոչ Քրիստոսն ես եւ ոչ Եղիան, եւ ոչ մարգարէն: ²⁶Յովհաննէսը պատասխանեց նորաց եւ ասեց. Ես ջրով եմ մկրտում. բայց ձեր միջումը կայ մեկը, որին դուք չգիտէք: ²⁷Նա է ինձանից յետոյ եկողը, որ ինձանից առաջ եղաւ. որ ես արժանի չեմ, նորա կօշիկների կապը արձակելու: ²⁸Սա Բեթաբարայումն եղաւ Յորդանանի այն կողմին ուր որ Յովհաննէսը մկրտում էր:

1:24 «ուղարկուածները Փարիսեցիներիցն էին» Այս տեքստը երկիմաստ է: Այն կարող է նշանակել (1) փարիսեցիները մարդիկ ուղարկեցին Հովհաննեսին հարցեր տալու համար (հմմտ. հ. 19) կամ էլ (2) հարց տվողները փարիսեցիներ էին, որն այնքան էլ ընդունված չէ, եթե հաշվի առնենք այն փաստը, որ քահանաների մեծամասնությունը սադուկեցիներ էին (հմմտ. հ. 9): Թվում է սա մի ուրիշ խմբի մարդկանց մասին էր քան հ. 19-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐ

- I. Այս տերմինը առաջացել է հետևյալ բառերի որևէ մեկից.
 - Ա. «առանձնացված լինել» - այս խումբը ձևավորվել է մակաբայեցիների ժամանակաշրջանում (սա ամենատարածված կարծիքն է):
 - Բ. «բաժանել» - սա նույն եբրայերեն արմատի մեկ ուրիշ նշանակություն է: Կարծիք կա, որ այն կարող էր նշանակել «մեկնաբանել» (հմմտ. II Տիմ. 2:15):
 - Գ. «պարսկական» - Հնարավոր է, առաջացել է արամեերեն արմատից: Փարիսեցիների ուսմունքներից մի քանիսը շատ ընդհանրություններ ունեն պարսկական գրադաշտական դուալիզմի հետ:
- II. Փարիսեցիները որպես խմբավորում կամ կուսակցություն կազմավորվել են մակաբայեցիների ժամանակաշրջանում «հասիդիսներից» [Hasidim] (բարեպաշտներ): Մի քանի տարբեր խմբեր, ինչպես նաև էսսենները, առաջացել են հակահելլենիստական արձագանքից Անտիոք IV Եպիփանեսի դեմ: Առաջին անգամ փարիսեցիների մասին հիշատակվում է Յուստինոս Ֆլավիայի «Հրեական հնությունները» 8.5.1-3 գրքում:
- III. Փարիսեցիների հիմնական վարդապետությունները
 - Ա. Հավատք գալիք Մեսիայի վրա, որի վրա ազդեց միջկտակարանյան հրեական ապոկալիպտիկ գրականությունը, ինչպիսին օրինակ I Ենովք:
 - Բ. Աստված ակտիվ ներգործում է առօրյա կյանքում: Սրանով նրանք տարբերվում էին սադուկեցիներից: Շատ փարիսեական ուսմունքներ ուղակիորեն տարբերվում էին սադուկեցիների վարդապետություններից:
 - Գ. Մահից հետո կյանքը կախված է երկրային կյանքից, որը ներգրավում է վարձք կամ պատիժ (հմմտ. Դան. 12:2):
 - Դ. Հին Կտակարանի և բանավոր ավանդույթի (Թալմուդ) հեղինակությունը: Նրանք փորձում էին կատարել հինկտակարանյան Աստծո օրենքներն այնպես, ինչպես մեկնաբանվել և կիրառվել են ռաբբիների կողմից (Շամայ, պահպանողական դպրոց և Հիլել, լիբերալ): Բաբբիական մեկնաբանությունը հիմնված էր երկու ռաբբիների միջև տեղի ունեցող երկխոսության վրա, նրանցից մեկը պահպանողական էր, իսկ մյուսը լիբերալ: Այս բանավոր քննարկումները Մուրբ Գրքի շուրջ գրի են առնվել բաբելոնյան Թալմուդում և անավարտ պաղեստինյան Թալմուդում: Նրանք հավատում էին, որ Մովսեսը ստացել է այս բանավոր մեկնաբանությունները Սինա լեռան վրա: Պատմականորեն այս քննարկումները սկսվել են Եզրասի օրոք և «մեծ ժողովարանի» մարդկանց կողմից (հետագայում այն կոչվեց Մանհեդրին):
 - Ե. Մանրակրկիտ ուսումնասիրած գիտություն հրեշտակների մասին: Սա իր մեջ ընդգրկում է թե բարի և թե չար հոգևոր էակներին: Սա առաջացել է պարսկական դուալիզմից և միջկտակարանյան հրեական գրականությունից:

1:25 «Ապա ի՞նչու ես մկրտում» Հին հուդայականության մեջ ընդհանուր առմամբ ընդունված էր նորահավատների մկրտությունը, այն հեթանոսների ովքեր ցանկանում էին դարձի գալ հուդայականության հավատքի, բայց հենց հրեաների համար մկրտվելը միանգամայն անսովոր բան էր (ինքնամկրտությունը և տաճարի պաշտամունքից առաջ լվացվելու արարողությունը ընդունված էր Կումրանի խմբավորմանը պատկանող հրեաների մոտ): Այս տեքստը հնարավոր է ենթադրում է մեսիական իմաստ Ես. 52:15; Եզ. 36:25; Չաք. 13:1:

▪ «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ընդունվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար:

▪ «դու ոչ Քրիստոսն ես եւ ոչ Եղիան, եւ ոչ մարգարէն» Այս արտահայտությունը հետաքրքիր է նայել Մեռյալ Ծովի մագաղաթների լույսի ներքո: Էսսեների տեսանկյունից, այս երեք կերպարները հանդիսանում են երեք տարբեր մեսիական անձեր: Հետաքրքիր է նաև այն, որ որոշ վաղ եկեղեցու առաջնորդներ հավատում էին, որ Եղիան գալու է ֆիզիկական մարմնով Քրիստոսի Երկրորդ գալուստից առաջ(հմմտ. Ոսկեբերան, Ջերոմ, Գրիգոր և Օգոստինոս):

1:26 «Ես ջրով եմ մկրտում» Այստեղ օգտագործված ներգոյական հոլովը կարող է նաև լինել գործիական հոլով: Ընտրված տարբերակը պետք է զուգահեռ լինի հ.33-ում «Հոգի» բառի հետ:

▪ «բայց ձեր միջումը կայ մեկը» Կան մի քանի տեքստային տարբերակներ կապված «կանգնած է» ԲԱՅ-ի ԺԱՄԱՆԱԿ-ի հետ: UBS⁴ թարգմանությունը դասակարգում է ՎԱՂԱԿԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ որպես «B» կատեգորիա (գրեթե վստահելի տարբերակ): Բրյուս Մ. Մեթսգերը պնդում է, որ ՎԱՂԱԿԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ բնորոշ է Հովհաննեսին և նշանակում է եբրայերեն ոճով այսպես «կա մեկը ով կանգնել է ձեր մեջ» (էջ 199):

1:27 «որ ես արժանի չեմ, նորա կոշիկների կապը արձակելու» Սա ծառայի առաջադրանքն է, հանել կոշիկները իր տիրոջ ոտքերից, երբ նա տուն է մտնում(համարվում էր ամենացածր, ամենա նվաստացուցիչ գործը, որ կարող էր ծառան անել): Բարբիական հուդայականության մեջ կար այսպիսի օրենք, որ ռաբբիի աշակերտը պետք է պատրաստ լիներ ծառայի ցանկացած գործ կատարել, բացի մեկից՝ քանդել և հանել իր վարդապետի կոշիկները: Այստեղ չի նշվում նաև դրանք տեղը դնելու կարևորությունը, որտեղ կոշիկները պահվում էին: Այս ամենը փոխաբերություն էր, որը ցույց էր տալիս ծայրահեղ խոնարհություն:

1:28 «Բեթարարայումն» Ջեյմս Թագավորի/King James թարգմանության մեջ է գրված այս անունը և (MSS Ն², C²) թարգմանության մեջ: Փոխարինումը եղել է այն պատճառով, որ KJV-ի թարգմանիչները վստահել են Օրիգենի կարծիքին, որը սխալ էր հասկացել այդ քաղաքի տեղանքը(և հակված էր այլաբանորեն վերաբերվելու այդ տեղին): Ծիշտ տարբերակը Բեթանիա է (Բողոմենի պապիրուս, P⁶⁶)—այն գյուղ չէր Երուսաղեմի հարավային կողմում (հմմտ. 11:18), այլ քաղաք՝ Երիթովի դիմաց, Հորդանան գետի մյուս ափին (արևելյան կողմը):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:29-34
²⁹Հետեւյալ օրը Յովհաննէսը տեսնում է Յիսուսին իրան մօտ գալիս, եւ ասում է. Ահա Աստուծոյ Գառը, որ վեր է առնում աշխարհքի մեղքը:³⁰Սա է, որի համար ես ասում էի, թէ Ինձանից յետոյ մի մարդ է գալիս, որ ինձանից առաջ եղաւ, որովհետեւ ինձանից առաջ էր:³¹Եւ ես նորան չը գիտէի. այլ որ նա յայտնի լինի Իսրայէլին, նորա համար ես եկայ ջրով մկրտելու:³²Եւ վկայեց Հովհաննէսը եւ ասեց թէ Տեսնում էի Հոգին, որ աղանու պէս վայր էր գալիս երկնքիցը և նորա վերայ մնում:³³Եւ ես չգիտէի նորան. բայց նա որ ինձ ուղարկեց ջրով մկրտելու, նա ասեց ինձ թէ Որի վերայ որ տեսնես Հոգին վայր է գալիս եւ նորա վերայ մնում, նա է Սուրբ Հոգով մկրտողը:³⁴Եւ ես տեսայ եւ վկայեցի թէ Սա է Աստուծոյ Որդին:

1:29 «Ահա Աստուծոյ Գառը» Չատիկի տոնը հեռու չէր (հմմտ. 2:13): Ուստի սա հավանական է վերաբերվում է Չատիկի գառանը, որը խորհրդապատկերում է ազատագրում (այն է, փրկություն) Եզիպտոսի գերությունից (հմմտ. Ելից 12): Հովհաննէսը Հիսուսի մահն էլ է կապում նույն օրվա հետ, երբ Չատիկի գառը մորթվեց (այն է, «Նախապատրաստման Օր»): Ինչևէ, կարելի է նաև այլ կերպ

մեկնաբանել:

այն կարող է վերաբերվել Տառապող Ծառային Ես. 53:7

այն կարող է վերաբերվել կենդանուն, որը մացառներում եղջյուրներով բռնվել էր Ծննդ. 22:8

այն կարող է վերաբերվել տաճարում ամեն օր կատարվող զոհաբերությանը, որը կոչվում էր «մշտնջենավոր ողջակեզ»(հմմտ. Ելից 29:38-46):

Սրանցից որ մեկն էլ որ լինի, բոլոր դեպքերում էլ գառը զոհաբերության համար էր նշանակված (հմմտ. Մարկոս 10:45):

Այս գորավոր փոխաբերությունը կապված Հիսուսի զոհաբերվող մահվան մասին, երբեք չի օգտագործվում Պողոս առաքյալի կողմից և միայն շատ հազվադեպ Հովհաննեսի կողմից (հմմտ. 1:29,36; նաև տես Գործք 8:32 և I Պետ. 1:19): Հունարեն «փոքր գառ» տերմինը (փոքր, որովհետև այն ընդամենը մեկ տարեկան էր, զոհաբերության համար ընդունված տարիք) օգտագործված է Հովհ. 21:15 և քսանութ անգամ Հայտնության գրքում:

Գոյություն ունի ևս մեկ հնարավոր նշանակություն՝ կիրառված Հովհաննես Սկրտիչի կողմից, միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ «գառը» հանդիսանում էր հաղթած ռազմիկ: Չոհաբերության ասպեկտը նույնպես գոյություն ունի, բայց գառը որպես դատավոր է հանդես գալիս (հմմտ. Հայտ. 5:5-6,12-13):

▪ **«որ վեր է առնում աշխարհքի մեղքը»** «Վեր է առնում կամ վերցնում է» տերմինը բառացի նշանակում է «վերցնել իր վրա և հեռացնել, տանել հեռու»: Այս ԲԱՅԸ շատ նման է Գլ.16 «ազատ արձակվող նոխազ»-ի գաղափարին: Այս փաստը, որ խոսքը աշխարհի մեղքի մասին է, ցույց է տալիս, որ Գառան առաջադրանքը համաշխարհային մասշտաբով է (հմմտ. հ. 9; 3:16; 4:42; I Տիմ. 2:4; 4:10; Տիտոս 2:11; II Պետ. 3:9; I Հովհ. 2:1; 4:14): Ուշադրություն դարձրեք, որ «մեղք» բառը ԵԶԱԿԻ է, և ոչ թե ՀՈԳՆԱԿԻ: Հիսուսը լուծել է աշխարհի «մեղքի» խնդիրը:

1:30 «որ ինձանից առաջ եղաւ» Հ.15-ում ասվածը կրկնվում է՝ ընդգծելու համար: Սրանով նորից ընդգծվում է Մեսիայի նախա-գոյությունը և աստվածությունը (հմմտ. Հովհ. 1:1, 15; 8:58; 16:28; 17:5,24; II Կորն. 8:9; Փիլ. 2:6-7; Կող. 1:17; Եբր. 1:3):

1:31 «այլ որ նա յայտնի լինի Իսրայելին» Սա Հովհաննեսին բնորոշ արտահայտություն է (հմմտ. 2:11; 3:21; 7:4; 9:3; 17:6; 21:14; I Հովհ. 1:2; 2:19,28; 3:2,5,8; 4:9), իսկ Սինոպտիկ Ավետարաններում հազվագյուտ է հանդիպում, միակ դեպքը Մարկոս 4:22: Այստեղ եբրայերեն «իմանալ» տերմինի բառախաղ է, որը նշանակում է ավելիխորը անձնական հարաբերություններ ինչ-որ մեկի հետ, քան պարզապես ունենալ փաստեր նրա մասին: Հովհաննեսի մկրտությունը ուներ երկու նպատակ, (1) պատրաստել մարդկանց և (2) հայտնել Մեսիային:

Այս «բացահայտել, հրապարակել» (*phaneroō*) ԲԱՅԸ թվում է փոխարինում է «հայտնել, երևան բերել» (*apokaluptō*) Հովհաննեսի գրվածքում: Հիսուսը պարզ բերում է մարդուն լույս/տեսողություն և Աստծո պատգամը:

1:32-33 Այստեղ եռակի շեշտադրություն կան այն կարևոր փաստի վրա, որ Հովհաննեսը տեսավ Հոգուն, որը իջնում էր և մնում Հիսուսի վրա:

1:32 «Հոգին, որ աղանու պէս վայր էր գալիս երկնքիցը» Սա Եսայի մարգարեի (զուխներ 40-66) ձևն էր Մեսիային ճանաչելու մեջ (հմմտ. Ես. 42:1; 59:21; 61:1): Բայց սա ընդհանրապես չի նշանակում, որ Հիսուսը Հոգի չուներ մինչ այդ պահը: Դա Աստծո հատուկ ընտրության և սպառազինության խորհրդանիշն էր: Եվ այն առաջին հերթին պետք էր ոչ թե Հիսուսին, այլ Հովհաննես Սկրտիչին:

Հրեական աշխարհայացքում կար երկու դարաշրջան (տես Հատուկ Թեմա I Հովհաննես 2:17), ընթացիկ չար դարը և գալիք արդարության դարը: Նոր դարը կոչվում էր Հոգու դար: Այս տեսիլքը Հովհաննես Սկրտիչին պետք է հայտներ (1) հենց այս մարդն է Մեսիան և (2) նոր դարը եկել է:

- **«աղանի»** Այս տերմինը օգտագործում էին որպես
 1. րաբբիական խորհրդանիշ Իսրայելի համար (այն է, Ովսիա 7:1)
 2. Ծննդ. 1:2 Հոգին, որը շրջում էր (անգլերեն թարգմանության մեջ «թխսել») ջրերի վրա, իգական սեռի թռչուն է
 3. փոխաբերություն, որը նկարագրում է Հոգու իջնելը (Հոգին - թռչուն չէ)

- «մնում» Տես Հատուկ Թեմա: «Կենալ, մնալ» Հովհաննեսի գրվածքներում, I Հովհ. 2:10.

1:33 «ես չգիտի նորան» Սա պարզապես նշանակում է, որ Հովհաննես Սկրտիչը չգիտեր Հիսուսին որպես Մեսիա, և ոչ թե Նրան ընդհանրապես չէր ճանաչում: Անշուշտ, որպես բարեկամներ նրանք մեկ անգամ չէ, որ հանդիպել էին ընտանեկան կամ կրոնական հավաքությունների ժամանակ տարիներ շարունակ:

- «նա որ ինձ ուղարկեց ջրով մկրտելու, նա ասեց ինձ» Աստված խոսեց Հովհաննեսի հետ ինչպես Նա դա արեց Հին Կտակարանի մյուս մարգարեների հետ: Հովհաննեսը պետք է, որ ճանաչեր Մեսիային այս յուրահատուկ գործողությունների միջոցով, որոնք տեղի ունեցան Նրա մկրտության ընթացքում:

Հովհաննեսի մկրտությունը ակնարկում էր կրոնական իշխանություն: Երուսաղեմից եկած պաշտոնական պատվիրակությունը (հմմտ. հհ. 19-28) ուզում էր իմանալ այս իշխանության աղբյուրը: Հովհաննես Սկրտիչը այդ իշխանությունը վերագրեց Հիսուսին: Հիսուսի Հոգու մկրտությունը գերազանց է Հովհաննեսի ջրային մկրտությունից: Հիսուսի ջրային մկրտությունը կդառնա նշան Հոգու մկրտության, վերամիավորելով նոր դարաշրջանը:

- «նա է Սուրբ Հոգով մկրտողը» I Կորն. 12:13-ից ելնելով թվում է թե այս գաղափարը վերաբերվում է մարդու առաջին մուտքը Աստծո ընտանիք: Հոգին հանդիմանում է մեղքի համար, բերում է դեպի Քրիստոսը, մկրտում է Քրիստոսի մեջ և նոր հավատացյալ է ձևավորում Քրիստոսում (հմմտ. Հովհ. 16:8-13): Տես Հատուկ Թեմա: Սուրբը I Հովհ. 2:20.

1:34 «ես տեսայ եւ վկայեցի» Այս երկու բայերն էլ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են, որը նշանակում է գործողության ամբողջական իրականացում անցյալում: Սա շատ նման է I Հովհ. 1:1-4.

- «Սա է Աստուծոյ Որդին» Այս նույն տիտղոսը օգտագործվում է Նաթանայելի կողմից Հովհ. 1:49: Այն նաև օգտագործվում է սատանայի կողմից Մաթ. 4:3: Շատ հետաքրքիր հունարեն ձեռագիր տարբերակ կա P⁵ և Ն^{*}, որտեղ « Աստծո Որդի» արտահայտության փոխարեն գրված է «Աստծո Ընտրյալ»: «Աստծո Որդի» արտահայտությունը շատ տարածված է Հովհաննու Ավետարանում: Բայց, եթե մեկը հակված է տեքստային քննադատության ռացիոնալ կանոնների վերլուծությանը, որի համաձայն բնօրինակին ամենամոտն է ճշմարիտը, ապա շատ քիչ հավանականություն կա այլընտրանքային թարգմանության, չնայած որ ձեռագրի վկայությունը սահմանափակված է: Գորդոն Ֆին իր հոդվածում քննարկում է այս տեքստային տարբերակը «Նոր Կտակարանի տեքստային քննադատություն» [Gordon Fee “The Textual Criticism of the New Testament” (Աստվածաշնչի մեկնաբանություն մեկնաբանների համար)] էջ 419-433:

«Հովհ.1:34-ում, Հովհաննես Սկրտիչն ասում է. «Սա է Աստծո Որդին» (KJV, RSV) թե՞ «Սա է Աստծո Ընտրյալը» (NEB, JB): Անգամ ամենաինն ձեռագրերում կան տարածայնություններ: «Որդի» բառը գտնվում է ավելի հավաստի ալեքսանդրյան աղբյուրներում (P⁶⁶, P⁷⁵, B, C, L cop^{bo}) ինչպես նաև մի քանի OL ձեռագրերում (aur, c, flg) և ավելի ուշ սիրիական օրինակներում, այնինչ «Ընտրյալ» բառը արձանագրված է ալեքսանդրյան ձեռագրերում P⁵, Ն, cop^{sa} ինչպես նաև OL ձեռագրերում և հին սիրիական օրինակներում:

«Վերջին հաշվով, այս հարցը պետք է լուծվի ներքին հիմքերի հիման վրա: Ինչ վերաբերվում է արտագրելու ժամանակ այսպիսի տարբերակի ճշմատացիության բացատրության առկայությանը, մի բան հստակ է, որ դա արված է դիտավորյալ, և ոչ մի պատահականություն չկա այստեղ (հմմտ. Բարտ Գ. Էրման, «Սուրբ Գրքի օրթոդոքս խեղաթյուրումը» [Bart D. Ehrman’s *The Orthodox Corruption of Scripture*], էջ 69-70): Բայց ինչու՞ համար էր երկրորդ դարի արտագրողը փոխում տեքստը, որպեսզի աջակցեր քրիստոսաբանության որդեգրության տեսակին, թե՞ նա պարզապես օրթոդոքս գրող էր, որը հասկանալով, որ «Ընտրյալ» բառը կարող է հենակետ լինել որդեգրության համար, փոփոխություններ մտցրեց օրթոդոքս նպատակների համար: Շատ հավանական է, որ այստեղ ավելի մոտ է վերջին ենթադրությունը, և հատկապես այն առումով, որ «Որդի» բառը ուրիշ ոչ մի տեղ Ավետարանում չի փոխված, որ համապատասխանի որդեգրությանը հարող հայացքների կարծիքի հետ:

«Բայց վերջնական որոշումը պետք է ընդունվի էկզեգետիկայի օգնությամբ: Քանի որ այն, ինչ ասաց Հովհաննես Սկրտիչը, անկասկած ունեւ մեսիական բնույթ և այն չէր հռչակում քրիստոնեական աստվածաբանությունը, հարց է առաջանում, «ինչպիսի մեսիական իմաստ էր այն արտահայտում, որի

մասին խոսվում է Մար. 2:7 կամ էլ Ես. 42:1: Չարչարվող կամ գատկի Գառան լույսի ներքո, որը գտնվում է Հովհ. 1:29, կա մեծ տարակուսանք, որ «Ընտրյալ»-ը համապատասխանում է Ավետարանի կոնտեքստին (Էջ 431-432):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:35-42

³⁵Հետեւեալ օրը դարձեալ կանգնած էր Յովհաննէսը, եւ նորա աշակերտներիցը երկուսը:³⁶Եւ մտիկ տուաւ Յիսուսին, որ ման էր գալիս, եւ ասեց. Ահա Աստուծոյ Գառը: ³⁷Եւ այն երկու աշակերտները լսեցին նորանից՝ որ խօսում էր, եւ գնացին Յիսուսի ետեւից:³⁸Յիսուսն էլ դարձաւ նորանց տեսաւ, որ գնում էին իր ետեւից, եւ ասեց նորանց. Ի՞նչ էք ուզում. նորանք ասեցին նորան. Ռաբբի, (որ թարգմանուած ասվում է՝ վարդապետ.) ո՞րտեղ ես կենում:³⁹Նորանց ասեց. Եկէք եւ տեսէք. եկան եւ տեսան թէ որտեղ էր կենում. եւ այն օրը նորա մօտ մնացին. Ժամն էլ տասի մօտ էր:⁴⁰Անդրեասը՝ Միմօն Պետրոսի եղբայրն՝ այն երկուսից մէկն էր, որ Յովհաննէսիցը լսեցին եւ նորա ետեւից գնացին:⁴¹Սա առաջ գտնում է իր Միմօն եղբորն եւ նորան ասում. Մեսիան գտել ենք, (որ թարգմանվում է Քրիստոս):⁴²Եւ բերաւ նորան Յիսուսի մօտ. Յիսուսն էլ նորան մտիկ տուաւ եւ ասեց. Դու Միմօնն ես՝ Յովնանի որդին. դու պիտի կոչուիս Կեփաս, (որ թարգմանվում է Պետրոս):

1:35 «նորա աշակերտներիցը երկուսը» Տպավորություն է ստեղծվում, որ Մարկ. 1:16-20-ում այս երկու աշակերտների կանչը տարբերվում է սրանից: Եվ պարզ չէ, թե որքան ժամանակ էր անցել Հիսուսի և Իր գալիլեացի աշակերտների հանդիպումից: Հիսուսի ժամանակներում գոյություն ունեւ հստակ կանոն փուլերի հաջորդականությունը որոշելու համար, որ մարդը պետք է անցներ ռաբբիի լիարժեք հետևորդը լինելու համար: Այդ հերթականությունը հստակ գրված էր ռաբբիների գործերում, բայց ավետարանական պատմություններում այն հստակ չէ: Նշված երկու աշակերտները Անդրեասն (հմմտ. հ. 40), ու Հովհաննէս Առաքյալն էին (որը երբեք իրեն անունով չի կոչում Ավետարանում):

Աշակերտ տերմինը կարող է նշանակել (1) սովորող, լսող և/կամ (2) հետևորդ, շարունակող: Առաջին անգամ Հիսուս Քրիստոսին, որպես խոստացյալ հրեական մեսիա, հավատացողները կոչվեցին այս անունով: Շատ կարևոր է իմանալ, որ Նոր Կտակարանը կոչ է անում մարդկանց դառնալ Հիսուսի աշակերտ, և ոչ միայն ապաշխարել ու ընդունել Աստծուն (հմմտ. Մաթ. 13; 28:18-20): Քրիստոնեությունը դա նախնական որոշում է (ապաշխարություն և հավատք), որին հետևում է շարունակական հնազանդություն առ Աստված ամբողջ կյանքի ընթացքում և հավատքի մեջ հարատևում: Քրիստոնեությունը ապահովագրություն չէ հրդեհից կամ երկնքի ուղեգիր, այլ ամենօրյա փոխհարաբերություն Հիսուսի հետ, որպես ընկեր և որպես Տեր:

1:37 «երկու աշակերտները լսեցին նորանից՝ որ խօսում էր» Հովհաննէս Սկրտիչը մատնացույց էր անում Քրիստոսին, մարդկանց հայացքներն ուղղելով Նրա վրա, ընդգծելով Նրա անհամեմատելի մեծությունը (հմմտ. 3:30):

1:38 «Ռաբբի, (որ թարգմանուած ասվում է՝ վարդապետ.)» Առաջին դարում հուդայականության մեջ տարածված տիտղոս էր, որով կոչում էին նրանց, ովքեր ունեին ընդունակություն մանրամասն բացատրելու նշանակություններն ու կիրառությունները Մովսեսական Օրենքի և Բանավոր Ավանդության (Թալմուդ): Բառացիորեն այս տերմինը նշանակում է «իմ տեր»: Հովհաննէս Առաքյալը այն օգտագործում է «ուսուցիչ» բառին որպես համազոր (հմմտ. 11:8,28; 13:13-14; 20:10): Այն փաստը, որ Հովհաննէսը բացատրում է իր տերմինը (հմմտ. հհ. 38,41,42) ցույց է տալիս այն, որ նա գրում էր հեթանոսներին:

▪ **«ո՞րտեղ ես կենում»** Ամենայն հավանականությամբ, այս հարցը հանդիսանում էր միանգամայն սովորական բան ուսուցչի և աշակերտի միջև կոնկրետ հարաբերություններ հաստատելու գործընթացում: Նրանց հարցը նշանակում է, որ այս երկու մարդիկ ուզում էին ավելի շատ ժամանակ անցկացնել Հիսուսի հետ, քան միայն ճանապարհին մի քանի հարց տվող (հմմտ. հ. 39):

1:39 «Ժամն էլ տասի մօտ էր» Հայտնի չէ, թե Հովհաննէսն օգտագործում է հռոմեական ժամանակը, սկիզբը (1) կեսօրին ժամը 12:00 կամ (2) առավոտյան, կամ էլ հրեական ժամանակով, սկիզբը երեկոյան ժամը 6:00 (արևամուտ, մայրամուտ): Եթե համեմատենք Հովհ.19:14 և Մարկ. 15:25, ապա կունենանք հռոմեական ժամանակ: Բայց եթե նայենք Հովհ.11:9, ապա այստեղ խոսքը գնում է հրեական ժամանակի

մասին: Այստեղ, ավելի շուտ հռոմեական ժամանակ է, ըստ տարբերակ 2, այն է մոտ ցերեկը ժամը 4:00 մոտ էր:

1:40 «երկուսից մեկն էր, որ Յովհաննեսիցը լսեցին» Հեղինակը (Հովհաննես Առաքյալը) երբեք իր անունը չի տալիս Ավետարանում (այն է, 21:2): Հնարավոր է, որ երկու աշակերտներից մեկը, ով լսեց Հովհաննես Սկրտիչի այս հռչակումը, Հովհաննեսն էր՝ Չեբեդիուսի որդին (այն է, Մաթ. 4:21; Մարկ.1:19):

1:41

- NASB “Նա առաջ գտավ իր եղբորը”
- NKJV, NRSV “Նա առաջ գտավ իր եղբորը”
- TEV “Միանգամից նա գտավ”
- NJB “առաջին բանը, որ Անդրեասն արեց”

Չեռագրի տարբերությունը ազդում է թարգմանության և մեկնաբանության վրա: Հնարավոր տարբերակներ.

1. առաջին բանը, որ արեց Անդրեասը
2. առաջին մարդը, ում գտավ Անդրեասը
3. Անդրեասը առաջինն էր, ով գնաց և վկայեց

- «Մեսիան (որ թարգմանվում է Զրիստոս)» Տես ծանուցում 1:20

1:42 «Յիսուսն էլ նորան մտիկ տուաւ» Այս տերմինը վերաբերվում է «լարված հայացք»-ին:

- «Միմօնն ես՝ Յովհաննի որդին» Նոր Կտակարանում Պետրոսի հոր անվան հետ կա խառնաշփոթություն: Մաթ. 16:17 Պետրոսը կոչվում է «Հովհաննի որդի» (*‘Iōnas*), բայց այստեղ նա կոչվում է «Հովհաննեսի որդի» (*‘Iōannēs*): Հովհաննես անունը գտնվում է P⁶⁶, P⁷⁵, Տ և L ձեռագրերում: B ձեռագրում նույն անունն է, բայց միայն մեկ «ո»-ով (*‘Iōanēs*): Հովհաննես անունը հանդիպում է A, B³, K և ավելի ուշ հունարեն ձեռագրերի մեծամասնության մեջ: Թվում է, թե այս հարցը չունի հստակ պատասխան: Արամերենից թարգմանված անունների արտասանության տարբերակները ընդունված և շատ պարզ բնույթ են կրում:

- «դու պիտի կոչուիս Կեփաս, (որ թարգմանվում է Պետրոս)» Կեփաս տերմինը արամերեն տերմին է վեմ, ժայռ (*kepa*) բառի համար, որը հունարեն հնչում է որպես *kephas*: Անունը մարդուն հիշեցնում էր կայունության, ուժի, հավերժականության և հուսալիության մասին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 1:43-51

⁴³Հետեւեալ օրը կամեցաւ Յիսուսը դուրս գնալ Գալիլեա. եւ գտնում է Փիլիպպոսին, եւ ասում նորան. Իմ ետեւից եկ:⁴⁴Փիլիպպոսն էլ Բեթսայիդայիցն էր: Անդրեասի եւ Պետրոսի քաղաքիցը:⁴⁵Փիլիպպոսն էլ գտնում է Նաթանայէլին եւ ասում նորան. Նա որի մասին գրեց Մովսէսն օրէնքումը, եւ մարգարէներն էլ, գտանք՝ Յովսէփի որդի Յիսուսին՝ Նազարէթիցը:⁴⁶Եւ Նաթանայէլը նորան ասեց. Կարելի՞ որ Նազարէթիցը մի բարի բան լինի. Փիլիպպոսը նորան ասեց. Եկ եւ տես:⁴⁷Յիսուսը տեսաւ Նաթանայէլին իրան մօտ գալիս՝ եւ ասեց նորա համար. Ահա ճիշդ Իսրայէլացի. որի մէջ նենգութիւն չկայ:⁴⁸Նաթանայէլն ասում է նորան. Ի՞նչ տեղից ես ճանաչում ինձ. Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորան. Փիլիպպոսը դեռ քեզ չկանչած քեզ տեսայ որ թզնու տակն էիր.⁴⁹Նաթանայէլը պատասխանեց եւ ասեց. Ռաբբի, դու Աստուծոյ Որդին ես. Դու ես Իսրայէլի թագաւորը:⁵⁰Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորան. Որովհետեւ ես ասեցի քեզ թէ թզնու տակ տեսայ քեզ, հաւատո՞ւմ ես. սորանցից էլ աւելի մեծ բաներ կտեսնես:⁵¹Եւ նորան ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, այսուհետեւ կտեսնէք երկինքը բացուած, եւ Աստուծոյ հրեշտակներին մարդի Որդու վերայ ելնելիս եւ իջնելիս:

1:43 «Հետեւեալ օրը» Ամբողջ Ավետարանի մեջ Հովհաննեսը ներկայացնում է ժամանակագրական նշաններ (հմմտ. 1:29,35,43; 2:1; և այլն): Ընդհանուր կոնտեքստը (1) սկսում է հ. 19, որը կարող է լինել առաջին օրը; (2) հհ. 29,35,43 ունի «հաջորդ օրը»; և (3) 2:1 ունի «երրորդ օրը»:

▪ **«կամեցաւ Յիսուսը դուրս գնալ»** Հովհաննէսը նկարագրում է Հիսուսի ծառայության վաղ շրջանը Հուդայում, որը չկա սինոպտիկ ավետարաններում: Հովհաննէսի Ավետարանը կենտրոնանում է Հիսուսի ծառայությունը Հուդայում և մասնավորապէս Երուսաղէմում: Այստեղ, ինչևէ, Նա ուզում է գնալ Գալիլէա, հավանական է Կանայի հարսանիքին մասնակցելու համար (Հովհ. 2):

▪ **«Իմ ետեից եկ»** Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ բայ է: Սա ռաբբիական կանչ էր լինելու մշտական աշակերտ: Հրեաներն ունեին հստակ ուղեցույց, որը սահմանում էր հարաբերությունը ռաբբիի և նրա հետևորդի միջև:

1:44 **«Փիլիպպոսն էլ Բեթսայիդայիցն էր»** Այս քաղաքի անունը նշանակում է «ձկնորսության տուն»: Սա նաև Անդրեասի և Պետրոսի տունն էր:

1:45 **«Նաթանայէլ»** Սա հրեական անուն է, որը նշանակում է «Աստված տվել է»: Սինոպտիկ Ավետարաններում նա երբեք հանդես չի գալիս այս անունով: Ժամանակակից գիտնականները ենթադրում են, որ նա այն մեկն է «Բարթոլոմէոս» անունով մարդը, բայց սա մնում է որպէս ենթադրություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ				
	Մաթևոս 10:2-4	Մարկոս 3:16-19	Լուկաս 6:14-16	Գործք 1:12-18
Առաջին սումբ	Սիմոն (Պետրոս) Անդրեաս (Պետրոսի եղբայր) Հակոբոս (Չեբեդիոսի որդի) Հովհաննէս (Հակոբոսի եղբայր)	Սիմոն (Պետրոս) Հակոբոս (Չեբեդիոսի որդի) Հովհաննէս (Հակոբոսի եղբայր) Անդրեաս	Սիմոն (Պետրոս) Անդրեաս (Պետրոսի եղբայր) Հակոբոս Հովհաննէս	Պետրոս Հովհաննէս Հակոբոս Անդրեաս
Երկրորդ սումբ	Փիլիպպոս Բարթոլոմէոս Թովմաս Մատթեոս (մաքսավորը)	Փիլիպպոս Բարթոլոմէոս Մատթեոս Թովմաս	Փիլիպպոս Բարթոլոմէոս Մատթեոս Թովմաս	Փիլիպպոս Թովմաս Բարթոլոմէոս Մատթեոս
Երրորդ սումբ	Հակոբոս (Ալփեանի որդի) Թադէոս Սիմոն (Կանանացի) Հուդա (Իսկարիովտացի)	Հակոբոս (Ալփեանի որդի) Թադէոս Սիմոն (Կանանացի) Հուդա (Իսկարիովտացի)	Հակոբոս (Ալփեանի որդի) Սիմոն (նախանձահույզը) Հուդա (Հակոբոսի որդի)	Հակոբոս (Ալփեանի որդի) Սիմոն (նախանձահույզը) Հուդա (Հակոբոսի որդի)

▪ **«օրէնքումը, եւ մարգարէներն էր»** Սա վերաբերվում է հինկտակարանյան կանոնի երեք բաժիններից երկուսին՝ Օրենք, Մարգարեներ և Գրվածքներ (որը վերջնականապէս ընդունվեց Յամնիում 90 մ.թ.): Բայց «Օրենք և Մարգարեներ» անունով կոչել են և ամբողջ Հին Կտակարանը:

▪ **«Յովսէփի որդի Յիսուսին՝ Նազարէթիցը»** Այս արտահայտությունը պետք է հասկանալ հրեական կիրառության լույսի ներքո: Այդ ժամանակ Հիսուսն ապրում էր Նազարէթում, իսկ ընտանիքի հայրը Հովսէփն էր: Սա չի մերժում այն փաստը, որ Հիսուսը ծնվել է Բեթլեհեմում (հմմտ. Միքիա 5:2), ոչ էլ Իր կուսական ծնունդը (հմմտ. Ես. 7:14): Տես հետևյալ Հատուկ Թեման

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՍՈՒՄ ՆԱԶՈՎՐԵՑԻ կամ ՀԻՍՈՒՄԸ ՆԱԶԱՐԵԹԻՑ

Կան մի քանի տարբեր հունարեն տերմիններ, որ օգտագործվում է Նոր Կտակարանում, որը հստակ մատնացույց է անում Հիսուս Քրիստոսին:

Ա. Նորկտակարանային տերմիններ

1. Նազարեթ – քաղաք Գալիլիայում (հմմտ. Գուկ. 1:26; 2:4,39,51; 4:16; Գործք 10:38): Այս քաղաքի մասին չի հիշատակվում ժամանակակից աղբյուրներում, բայց այն հայտնաբերվել է ավելի ուշ արձանագրություններում:

Հիսուսի համար Նազարեթից լինելը շնորհ, հաճոյախոսություն չէր (հմմտ. Հովհ. 1:46):

Հիսուսի խաչի վրայի նշանն ուներ այս քաղաքի անունը, որը ցույց էր տալիս Իր հանդեպ ունեցած հրեաների արհամարհանքը:

2. *Nazarēnos* - ամենայն հավանականությամբ այս բառը աշխարհագրական տեղանքի անուն է (հմմտ. Գուկ 4:34; 24:19):
3. *Nazōraios* – կարող է նշանակել քաղաքի անուն, բայց նաև կարող է օգտագործվել է հին եբրայերեն «ճյուղ» Մեսիական տերմինի համար (*netzer*, հմմտ. Ես. 4:2; 11:1; 53:2; Եր. 23:5; 33:15; Չաք. 3:8; 6:12; Նոր Կտակարանում Հայտ. 22:16): Գուկասն այս բառն օգտագործում է 18:37 և Գործք 2:22; 3:6; 4:10; 6:14; 22:8; 24:5; 26:9:
4. Կապված է #3 *nāzir*, որը նշանակում է «երդումով կապված»

Բ. Այս տերմինների պատմական կիրառությունը Նոր Կտակարանից դուրս:

1. Այդպես կոչում էին հրեական համայնքներում գտնվող հերետիկոսների խմբին(արամեերեն *nāsōrayyā*), որոնք զոյություն ունեին մինչև քրիստոնեությունը:
2. Հրեական միջավայրերում Հիսուս Քրիստոսին հավատացողներին այդպես էին նկարագրում (հմմտ. Գործք 24:5,14; 28:22 *nosri*):
3. Սիրիական (Արամեական) եկեղեցիներում հավատացյալներին դիմելու ընդունված տերմին էր: Հավատացյալները «քրիստոնյա» անվանվում էին հունական եկեղեցիներում:
4. Որոշ ժամանակ անց, Երուսաղեմի անկումից հետո փարիսեցիները Յամնիայում վերակազմավորեցին և ուժեղ թափով հրահրում էին բաժանումներ ժողովարանի և եկեղեցու միջև: «Տասնութ օրհնությունները» (the Eighteen Benedictions) աշխատությունում, Բերակոտի (*Berakoth*) 28բ-29ա տեքստում գտնվում է քրիստոնեաներին անիծելու տիպիկ բանաձևը, որտեղ հավատացյալներին անվանում են «նազովրեցիներ»:

«Թող որ բոլոր նազովրեցիներն ու հերետիկոսները անհետանան մեկ ակնթարթում; ջնջվեն կյանքի գրքից և հավատարիմների կողքին չպիտի դասվեն»:

Գ. Հեղինակի կարծիքը

Ես զարմացած եմ այսքան շատ քանակությամբ տարբերակների համար, որ այս բառն ունի, չնայած Ես գիտեմ որ նման բան մեկ անգամ չի հանդիպում Հին Կտակարանում: Օրինակ «Հիսուս» բառը հին եբրայերենում ունի մի քանի տարբեր արտասանություններ: Բայց և այնպես, (1) սերտ կապը մեսիական տերմինի «Ճյուղ»-ի հետ; (2) միացված բացասական իմաստի հետ; (3) բացակայող կամ շատ քիչ հաստատումը Գալիլիա քաղաքի մասին, այս ամենը մղում է ինձ մնալ որոշ անորոշության մեջ դրա իրական իմաստը պնդելու համար; և (4) այն հնչում է չար ոգու բերանից վախճանաբանական իմաստով («Դու եկել ես՞ մեզ կործանելու»):

Ամբողջական բիբլիոգրաֆիական/ մատենագրություն բառային սերտողության համար կարող եք օգտվել հետևյալ գրքից, Կոլին Բրաուն «Նոր Կտակարանի աստվածաբանության նոր միջազգային բառարան» (Colin Brown (հրատ.), *New International Dictionary of New Testament Theology*), հատ. 2, էջ. 346 կամ Ռայմոնդ Ե. Բրաուն, *Ճնմնը*, էջ 209-213, 223-225 (Raymond E. Brown, *Birth*):

1:46 «Նաթանայելը նորան ասեց. Կարելի՞ որ Նազարեթիցը մի բարի բան լինի» Անշուշտ Փիլիպպոսն ու Նաթանայելը շատ լավ գիտեին Հին Կտակարանի մարգարեությունները; Մեսիան պետք է գա Բեթլեհեմից (հմմտ. Միքիա 5:2) և ոչ թե հեթանոս Գալիլեայի Նազարեթից (բայց հնարավոր է նրանք ուշադրություն չեն դարձրել Ես. 9:1-7) :

1:47

NASB, NKJV,

NRSV “որի մեջ խորամանկություն չկա”

TEV “ոչ մի կեղծիք չկա նրանում”

NJB “որի մեջ խաբեություն չկա”

Այս բառերը բնութագրում են Նաթանայելին, որպես ուղիղ, պարզ, առանց նենգության և գաղտնի մտքերի տեր մարդու (հմմտ. Սաղ. 32:2), ընտրյալ ժողովրդի՝ Իսրայելի ճշմարիտ ներկայացուցիչ:

1:48 «Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորան. Փիլիպպոսը դեռ քեզ չկանչած քեզ տեսայ որ քզենու տակն էիր» Ակնհայտ է, որ Հիսուսն օգտագործեց Իր գերբնական գիտությունը (այն է, 2:24-25; 4:17-19,29; 6:61,64,71; 13:1,11,27,28; 16:19,30; 18:4) Նաթանայելին հասկացնելու համար, որ Ինքը Մեսիան էր:

Դժվար է հասկանալ, թե ինչպես են գործել Հիսուսի աստվածությունն ու մարդկությունը: Որոշ տեքստերում անկարելի է որոշել Հիսուսն օգտագործում էր Իր «գերբնական» գորությունը, թե՞ մարդկային կարողությունները: Այստեղ «գերբնական» կարողությունն է:

1:49 «Նաթանայելը պատասխանեց եւ ասեց. Ռաբբի, դու Աստուծոյ Որդին ես. Դու ես Իսրայելի թագաւորը» Ուշադրություն դարձրեք երկու տիտղոսներին: Երկուսն էլ ունեն ազգային մեսիական նշանակություն (այն է, Սաղմոս 2): Այս առաջին աշակերտները Հիսուսին ընդունում էին ըստ առաջին դարի հուդայականության կատեգորիայի: Նրանք ամբողջությամբ չհասկացան Նրա անձը և գործը որպես Չարչարվող Ծառա (հմմտ. Ես. 53) և դա այդպես էր մինչև հարությունից հետո:

1:51

NASB “ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ”

NKJV “ճշմարիտ, ես ասում եմ ձեզ”

NRSV “Շատ ճիշտ եմ ասում ձեզ”

TEV “Ես ճշմարիտ եմ ասում ձեզ”

NJB “Ամեն ճշմարտությունով”

Բառացիորեն ասվում է «Ամեն, Ամեն»: Հիսուսի այս տերմինի կրկնակի օգտագործումը գտնվում է միայն հովհաննեսի Ավետարանում, որտեղ այն հայտնվում է 25 անգամ: «Ամեն» բառը հին հրեական *emeth* (հավատք) տերմինի ձևն է, որը նշանակում է «լինել ամուր, պինդ, կայուն հուսալի» (տես Հատուկ Թեմա 1:14): Հին Կտակարանում այն օգտագործվում էր որպես փոխաբերություն կայունության և վստահության արժանի լինելու համար: Այս սկզբեց թարգմանվել որպես «հավատք» կամ «հավատարմություն»: Ինչևէ, ժամանակի ընթացքում «ամեն» բառը սկսվեց օգտագործվել որպես պնդում: Նախադասության սկզբում այն կատարում էր եզակի գործողություն՝ ուշադրության էր գրավում բացառիկ կարևոր և Հիսուսի կողմից ասված վստահելի բառերի և հայտարարությունների վրա (հմմտ. 1:51; 2:3,5,11; 5:19,24,25; 6:26,32,47,53; 8:34,51,58; 10:1,7; 12:24; 13:16,20,21,38; 14:12; 16:20,23; 21:18):

Ուշադրություն դարձրեք քերականական փոփոխությանը ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ (թե ԳԵՐԱՆՈՒՆԸ և թե ԲԱՅԸ): Պետք է որ այս բառերը ուղղված լինեն այնտեղ գտնվող բոլոր մարդկանց:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՄԵՆ

1. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. «Ամեն» տերմինը եբրայերեն
 - 1. ճշմարտություն (*emeth*, BDB 49)
 - 2. ճշմարտասիրություն (*emun, emunah*, BDB 53)
 - 3. հավատք կամ հավատարմություն
 - 4. վստահություն (*dmn*, BDB 52) բառից է:
- Բ. Դրա ստուգաբանությունը անձի ֆիզիկական կայուն վիճակից է: Հակառակը կլինի մեկը, որը անկայուն, սայթաքող (հմմտ. 2 Օրին. 28:64-67; 38:16; Սաղ. 40:2; 73:18; Երեմ. 23:12) կամ գլորվող է (հմմտ. Սաղ. 73:2): Այս բառացի կիրառումից զարգացավ փոխաբերական ծավալումը հավատարիմ, վստահելի, օրինապահ և անկախ բառերի (հմմտ. Ծննդ. 15:16; Ամբակ.2:4):
- Գ. Հատուկ կիրառություններ
 - 1. սյուն, 4 Թագ. 18:16 (1 Տիմ. 3:15)
 - 2. հավաստիացում, վստահություն, Ելից 17:12
 - 3. հաստատում, Ելից 17:12
 - 4. կայունություն, Ես. 33:6; 34:5-7
 - 5. ճշմարիտ, 3 Թագ. 10:6; 17:24; 22:16; Առակ. 12:22
 - 6. անսասան, 2 Մնաց. 20:20; Ես. 7:9
 - 7. հուսալի, ամուր, հաստատուն (Թորա), Սաղ. 119:43; 142, 151, 168
- Դ. Հին Կտակարանում երկու ուրիշ եբրայերեն տերմիններ են օգտագործված գործուն հավատքի համար:
 - 1. *bathach* (BDB 105), վստահություն
 - 2. *yra* (BDB 431), վախ, հարգանք, երկրպագություն (հմմտ. Ծննդ. 22:12):
- Ե. Վստահություն կամ վստահելի իմաստով զարգացավ եկեղեցական /պատարագային կիրառությունը, որը օգտագործվել է մյուսին հաստատելու համար ճիշտ կամ վստահելի դրույթը (հմմտ. 2 Օրին. 27:15-26; Նեեմ. 8:6; Սաղ. 41:13; 70:19; 89:52; 106:48):
- Զ. Այս տերմինը հասկանալու աստվածաբանական բանալին մարդու հավատարմությունը չէ, այլ ՅԵՀՈՎԱՅ-ի (հմմտ. Ել. 34:6; 2 Օրին. 32:4; Սաղ. 108:4; 115:1; 117:2; 138:2): Ընկած մարդկության միակ հույսը ՅԱՀՎԵ-ի ողորմած և հուսալի հավատարիմ ուտխն ու Նրա խոստումներն են: Նրանք, ովքեր ճանաչում են ՅԵՀՈՎԱՅ -ին պետք է Նրան նմանվեն (հմմտ. Ամբ. 2:4): Աստվածաշունչը պատմություն է և նաև Աստծո Իր պատկերի մարդու մեջ վերականգնման գործընթացի արձանագրությունը (հմմտ. Ծննդ. 1:26-27): Փրկությունը մարդուն նորից տալիս է կարողություն ունենալու մտերիմ հարաբերություն Աստծո հետ: Ահա թե ինչի համար ենք մենք ստեղծվել:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

- Ա. Նոր Կտակարանի ժամանակաշրջանում «ամեն» բառը օգտագործվել է որպես վերջնական ծիսակարգային հաստատում որոշակի դրույթի վստահելիության վերաբերյալ (հմմտ. I Կոր. 14:16; II Կոր. 1:20; Հայտ. 1:7; 5:14; 7:12):
- Բ. Նոր Կտակարանի ժամանակաշրջանում տերմինը օգտագործվել է որպես աղոթքի ավարտ (հմմտ. Հռ. 1:25; 9:5; 11:36; 16:27; Գաղ. 1:5; 6:18; Եփ. 3:21; Փիլ. 4:20; II Թես. 3:18; I Տիմ. 1:17; 6:16; II Տիմ. 4:18):
- Գ. Միայն Հիսուսն օգտագործեց այս տերմինը (հաճախ կրկնակի անգամ Հովհաննեսի Ավետարանում) ընդգծելու համար որոշակի կարևոր պնդում, միտք (հմմտ. Դուկ 4:24; 12:37; 18:17,29; 21:32; 23:43):
- Դ. Այն օգտագործվում է որպես տիտղոս Հիսուսի համար Հայտ. 3:14 (հավանական է Եհովայի տիտղոսը Ես. 65:16):
- Ե. Հավատարմության կամ հավատքի, վստահելի կամ վստահություն գաղափարը արտահայտվում է հունարեն *pistos* կամ *pistis տերմինով*, որը թարգմանվում է անգլերեն որպես վստահություն, հավատք:

- **«գործ, դուր»** Այս երկուսն էլ ՀՈԳՆԱԿԻ են: Հիսուսը խոսքը ուղղում է բոլոր այնտեղ կանգնածներին, և այլ կերպ ասած ամբողջ մարդկությանը:
- **«երկինքը բացուած»** Այս արտահայտությունը ունի հինկտակարանյան աստվածհայտնության ազդանշան:
 1. Եզեկիել, Եզ. 1:1
 2. Հիսուս, Մար. 3:16; Մարկ. 1:10; Գուկ. 3:21
 3. Ստեփանոս, Գործք 7:56
 4. Կռռնելիոս, Գործք 10:11
 5. Երկրորդ Գալուստը, Հայտ. 19:11
 Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐՔԱՅ է, որը նշանակում է, որ նրանք մնացին բացված: «Երկինք» տերմինը ՀՈԳՆԱԿԻ է, որովհետև երբայերենում այն ՀՈԳՆԱԿԻ է: Այն կարելի է հասկանալ որպես (1) երկրի վերևը եղած մթնոլորտը, ինչպես Ծննդ. 1 կամ էլ (2) հենց Աստծո ներկայության վայրը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԿԻՆՔՆԵՐԸ

Հին Կտակարանում «երկինք» տերմինը սովորաբար ՀՈԳՆԱԿԻ է (այսինքն, *shamayim*, BDB 1029): Երբայերեն տերմինը նշանակում է «բարձրություն»: Աստված բնակվում է բարձրուքում: Այս գաղափարը արտացոլում է Աստծո սրբությունը և տրանսցենդենցիան:

Ծննդոց 1: 1-ում ՀՈԳՆԱԿԻ «երկինքներ ու երկիր» դիտվում է որպես Աստծո ստեղծած (1) այս մոլորակի վերևում գտնվող մթնոլորտը կամ (2) բոլոր իրականությունը (այսինքն, հոգևոր և ֆիզիկական): Այս հիմնական հասկացությունից են այլ տեքստերը վերցրել, ասելով, որ երկնքի մակարդակներ կան «երկինքների երկինքը» (հմմտ.Սաղ.68:33) կամ «երկինքը և երկինքների երկինքը» (տես 2 Օրին. 10:14; III Թագ. 8:27; Նեեմ 9: 6; Սաղ. 148: 4): Ռաբբիները մտածում էին, որ կարող է լինել

1. երկու երկինք (այսինքն, R. Judah, Hagigah 12)
2. երեք երկինք (Test. Levi 2-3, Ascen. of Ես. 6-7, Midrash Tehillim Սաղ. 114: 1)
3. հինգ երկինք (III Baruch)
4. յոթ երկինք (R. Simonb. Lakish; II Enoch 8; Ascen. of Ես. 9:7)
5. տասը երկինք (II Enoch 20:3, 22:1)

Այս բոլորը նախատեսված էր ցույց տալու Աստծո առանձնացումը ֆիզիկական արարչագործությունից և / կամ Նրա տրանսցենդենտ լինելը: Ռաբբիական հուդայականության մեջ ամենատարածված երկնային թիվը յոթն էր: A. Cohen, *Everyman's Talmud* (էջ 30) ասում է, որ դա կապված էր աստղագիտության ոլորտների հետ, բայց ես կարծում եմ, որ դա վերաբերում է յոթը կատարյալ թիվ լինելուն (այսինքն ստեղծագործության յոթ օրերը ներկայացնում են Աստծո հանգիստը Ծննդ. 1):

Պողոսը, II Կոր. 12: 2-ում հիշատակում է «երրորդ» երկինքը (հունական *myanos*), որպես Աստծո անձնական, փառահեղ ներկայության ճանաչման միջոց: Պողոսը անձնական հանդիպում ունեցավ Աստծու հետ:

- **«Աստուծոյ հրեշտակներին ելնելիս և իջնելիս»** Այս խոսքերը ակնարկում են Հակոբի օրհնության փորձառությունը Բեթելում (հմմտ. Ծննդ. 28:10): Հիսուսը պնդում է, որ երբ Աստված խոստացավ կատարել Հակոբի բոլոր կարիքները, Նա հոգ էր տանում Իր Աստվածային խոստումների իրականացման համար:
- **«Մարդի Որդի»** Այս անունը Հիսուսն Ինքն է Իր համար ընտրել: Հին երբայերենում այս արտահայտությունը վերաբերվում էր սովորական մարդուն (հմմտ. Սաղ. 8:4; Եզ. 2:1): Բայց ի շնորհիվ նրա օգտագործման Գան. 7:13-ում, այն ձեռք է բերել աստվածային հատկանիշներ: Այս տերմինը չուներ ոչ ազգայնական և ոչ էլ ռազմական հնչերանգ, որովհետև այն չէր օգտագործվում ռաբբիների կողմից: Հիսուսն ընտրեց այն, քանի որ նրանում միավորված էին Իր բնության երկու ասպեկտները (մարդկային և

աստվածային, հմնտ. I Հովհ. 4:1-3): Հովհաննեսը նշում է, որ Հիսուսը օգտագործեց այդ արտահայտությունը 13 անգամ:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ի՞նչու Երուսաղեմի խորհուրդը հարցնում է Հովհաննես Սկրտիչին, թե արդյոք նա հինկտակարանյան երեք հայտնի կերպարներից մեկը չէ:
2. Որոշեք, թե ինչպիսի քրիստոսաբանական հայտարարություն է անում Հովհաննես Սկրտիչը Հիսուսի մասին 19-30հ-ում:
3. Ի՞նչու Սինոպտիկ Ավետարանների և Հովհաննեսի Ավետարանի մեջ գոյություն ունեն տարբերություններ աշակերտներին կանչելու մանրամասնությունների մեջ:
4. Ի՞նչ էին հասկանում այս մարդիկ Հիսուսի մասին: Ուշադրություն դարձրեք այն տիտղոսներին, որով դիմում էին Հիսուսին (հ. 38)
5. Ինչպե՞ս կոչեց Իրեն Հիսուսը: Ի՞նչու

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Կանայի հարսանիքը	Ձուրը գինի դարձավ	Կանայի հարսանիքը	Կանայի հարսանիքը	Կանայի հարսանիքը
2:1-11	2:1-12	2:1-11	2:1-3 2:4 2:5 2:6-10 2:11	2:1-10 2:11-12
2:12		2:12	2:12	
Տաճարի մաքրելը	Հիսուսը մաքրում է տաճարը	Տաճարի մաքրելը		Տաճարի մաքրելը
2:13-22	2:13-22	2:13-22	2:13-17 2:18 2:19 2:20 2:21-22	2:13-22
Հիսուսը ճանաչում է բոլոր մարդկանց	Սրտեր իմացողը		Հիսուսը գիտի մարդու բնությունը	Հիսուսը Երուսաղեմում
2:23-25	2:23-25	2:23-25	2:23-25	2:23-25

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐՇԱՐՔՈՆՈՒՄ 2:1-11

- Ա. Հիսուսն այնքան տարբեր էր Իր օրերի մյուս կրոնական առաջնորդներից: Նա կերավ և խմեց հասարակ մարդկանց հետ: Ի տարբերություն Հովհաննես Մկրտիչի, որը մեկուսացված էր անապատում, Հիսուսը հրապարակային անձ էր՝ հասարակ մարդկանցով շրջապատված:
- Բ. Նրա առաջին նշանը այնքան տնական և այնքան ընտանեկան էր: Հիսուսին բնորոշ է ճշմարիտ հոգատարությունն ու խնամքը հասարակ մարդկանց կյանքում, իսկ մյուս կողմից՝ Նրա բարկությունը ինքնա-արդարացնող կրոնավորների հանդեպ: Հիսուսի ազատությունը տալիս էր նախապատվությունը մարդկանց, և ոչ թե ավանդություններին կամ ծեսերին, չնայած որ Նա հարգում էր մշակույթային սովորությունները:
- Գ. Սա այն յոթ նշաններից առաջինն էր, որը Հովհաննեսը օգտագործում է՝ հայտնելու Հիսուսի կերպարն ու գործությունը (գլուխներ 2-11).
 1. ջուրը գինի (2:1-11)
 2. տղայի բժշկումը (4:46-54)
 3. կաղ մարդու բժշկումը (5:1-18)
 4. բազմությանը կերակրելը (6:1-15)
 5. ջրի վրայով քայլելը (6:16-21)
 6. կույր մարդուն բժշկելը (9:1-41)
 7. Դազարոսին հարություն տալը (11:1-57)

ԲԱՈՒ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 2:1-11

¹Եւ երբորդ օրը հարսանիք էր Գալիլեայի Կանայումը, եւ Յիսուսի մայրն այնտեղ էր:²Յիսուսն էլ կանչուեցաւ այն հարսանիքը եւ նորա աշակերտներն էլ:³Եւ երբոր գինին պակասեց, Յիսուսի մայրն ասեց նորան. Գինի չունին:⁴Յիսուսը նորան ասեց, Քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ, կին. իմ ժամանակը դեռ չէ հասել:⁵Նորա մայրն ասեց սպասատրներին. Ինչ որ ասէ ձեզ, արէք:⁶Այնտեղ վեց քարէ կարասներ կային Հրէաների մաքրուելու համար, որոնցից ամեն մէկը երկու կամ երեք մար էին տանում:⁷Յիսուսը նորանց ասեց. Այդ կարասները ջրով լցրէք. եւ նորանց լցրին մինչեւ վերը:⁸Եւ նորանց ասեց. Հիմա առէք եւ տարէք սեղանապետին. եւ նորանք տարան:⁹Եւ երբոր վերակացուն այն գինի դառած ջուրը ճաշակեց, (եւ չգիտէր թէ ինչ տեղից է. բայց սպասատրները գիտէին՝ որ ջուրը լցրել էին) սեղանապետը փեսային կանչեց:¹⁰Եւ նորան ասեց. Ամեն մարդ առաջ լաւ գինին է տալիս. եւ երբոր արբեման, այն ժամանակ վատը. դու լաւ գինին մինչեւ հիմա պահեցիր:¹¹Նշանների սկիզբը Յիսուսն այս արաւ Գալիլեայի Կանայումը. եւ իր փառքը յայտնեց. եւ նորա աշակերտները հաւատացին նորան:

2:1 «հարսանիք էր» Գլուխական հարսանիքները գլխավոր սոցիալական իրադարձություններ էին: Հաճախ ներգրավված էր լինում ամբողջ համայնքը և այն կարող էր տևել մի քանի օր:

- «Կանայումը» Այս տերմինը նշված է միայն Հովհաննեսի Ավետարանում (2:1,11; 4:46; 21:2): Մենք որոշ բաներ գիտենք այդ մասին,
 1. Նաթանայելի հայրենիքն էր
 2. Հիսուսի առաջին հրաշքի վայրը
 3. մոտ էր Կափառնայումին

- Կան ենթադրյալ չորս տեղանքներ (AB, հատոր 1, էջ 827)
1. Աին Քանա/Ain Qana, Նազարեթից մեկ մղոն դեպի հյուսիս
 2. Կաֆր Կաննա/Kafr Kanna, Նազարեթից մոտ երեք մղոն հյուսիս-արևելք
 3. Խիրբեթ Քանա/Khirbet Qana, Նազարեթից մոտ ութ ու կես մղոն հյուսիս, բլրի վրա
 4. Կանա Ատրքիս հարթավայրի վրա, նշված Յուսուփոսի կողմից (*Կյանք*, 86, 206):

Հարթավայրի տեղանքը թվում է համընկնում է Կանա անվան հետ, որը եբրայերեն նշանակում է «եղեգ»:

▪ «Յիսուսի մայրն այնտեղ էր» Ամենայն հավանականությամբ Հիսուսի մայրն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում հարսանեկան արարողության պատրաստության մեջ: Սա երևում է այն բանից, որ (1) նա պատվերներ էր տալիս սպասավորներին (հմմտ. հ. 5) և (2) մտահոգված էր սեղանը թարմացնելու համար (հմմտ. հ. 3): Հնարավոր է, որ նրանք բարեկամներ էին կամ ընտանիքի մտերիմ ընկերներ:

2:3 «Գինի չունին» Համաձայն հին հրեական սովորության հյուրերին պարտադիր տրվում էր գինի: Այս գինին, ակնհայտ է, լավ թթվեցրած էր, ինչը երևում է (1) սեղանապետի խոսքերից, հհ. 9-10; (2) գոյություն ունեցող հրեական սովորությունները Հիսուսի օրերին կամ (3) հիգիենիկ գործընթացների կամ քիմիական հավելումների պակասը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԱԼԿՈՀՈԼԻ ԵՎ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

I. Աստվածաշնչյան տերմիններ

Ա. Հին Կտակարան

Yayin - Սա ընդհանուր տերմին է գինու համար (BDB 406), որն օգտագործվում է 141 անգամ: Ստուգաբանությունն անորոշ է, քանի որ դա չունի հրեական արմատ: Դա միշտ նշանակում է թթվեցրած մրգահյութ, սովորաբար խաղողի: Որոշ բնորոշ հատվածներ Ծննդ. 9:21; Ելից 29:40; Թվոց 15: 5,10:

Tirosh - Սա «նոր գինին» է (BDB 440): Մերձավոր Արևելքի կլիմայական պայմաններից ելնելով թթվեցումը շուտ է սկսվել, հյութ քամելուց վեց ժամ անց: Այս տերմինը վերաբերվում է գինու թթվեցման գործընթացին: Որոշ բնորոշ հատվածները, տես Բ Օրին. 12:17; 18: 4; Ես. 62: 8-9; Ովս. 4:11.

Asis – Սա ակնհայտորեն ալկոհոլային խմիչքներ է («քաղցր գինի», BDB 779, օրինակ Հովել 1: 5, Ես. 49:26):

Sekar – Սա տերմինը «թունդ խմիչք» (BDB 1016): Եբրայերեն արմատն օգտագործվում է «հարբած» կամ «հարբեցող» տերմինի մեջ: Դրա վրա ինչ - որ բան է ավելացված է, որպեսզի այն ավելի հարբեցնող լինի: Այն զուգահեռ է *yayin* (տես Առ. 20:1, 31:6, Ես. 28: 7):

Բ. Նոր Կտակարան

Oinos – *yayin*-ի հունարեն համարժեքը

Neos oinos (նոր գինի)- *tirosh*-ի հունարեն համարժեքը (հմմտ. Մարկ. 2:22)

Gleuchos vinos (քաղցր գինի, *asis*) - գինի թթվեցման վաղ փուլում (հմմտ. Գործք 2:13)

II. Աստվածաշնչյան օգտագործում

Ա. Հին Կտակարան

1. Գինին Աստծո պարգևն է (Ծննդ 27:28, Սաղ. 104: 14-15; Ժող. 9: 7, Ովս. 2: 8-9; Հով. 2: 19,24; Ամովս 9:13; Ջաք. 10: 7):

2. Գինի զոհաբերության արարողության մի մասն է (Ելից 29:40, Ղևտ. 23:13, Թվոց 15: 7,10; 28:14, 2Օր. 14:26; Դատ. 9:13):

3. Գինին օգտագործվում է որպես դեղորայք (II Թագ. 16: 2, Առ. 31: 6-7):

4. Գինի կարող է իսկական խնդիր լինել (Նոյ - Ծննդ 9:21; Դովտ - Ծննդ 19: 33,35; Սամսոն - Դատ. 16:19, Նաբաղը - I Թագ. 25:36, Ուրիան - II Թագ. 11 : 13; Ամնոնը - II Թագ. 13:28; Էլան - III Թագ. 16: 9; Բենասդադ - III Թագ. 20:12, իշխանները - Ամովս 6: 6 և տիկնայք - Ամովս 4):

5. Գինին կարելի է չարաշահել (Առ. 20:1, 23: 29-35: 31: 4-5; Ես. 5: 11,22; 19.14; 28: 7-8, Ովսէէ 4:11):

6. Գինին արգելվում էր որոշակի խմբերի (քահանաներին ծառայության ժամանակ, Ղևտ. 10: 9; Եզեկ. 44.21; Ուղտավորները, Թվ. 6 և իշխանները, Առ. 31: 4-5, Եսայի 56: 11-12; Ովսէէ 7: 5):

7. Գինին օգտագործվում է վախճանաբանական իմաստով (Ամովս 9:13; Հովել 3:18; Ջաք.

9:17):

Բ. Միջաստվածաշնչյան

1. Չափավոր գինին շատ օգտակար է:
2. Ռաբբիներն ասում են «Գինին բոլոր դեղերից մեծագույնն է, որտեղ գինին բացակայում է, դեղերն են անհրաժեշտ դառնում» (BB 58b):

Գ. Նոր Կտակարան

1. Հիսուսը մեծ քանակությամբ ջուրը փոխեց գինու (Հովհ. 2: 1-11):
2. Հիսուսը գինի խմեց (Մատթ. 11: 18-19, Ղուկ. 7: 33-34, 22: 17):
3. Պետրոսը մեղադրվում է հարբեցողության մեջ «նոր գինի» Պենտեկոստեին (Գործք 2:13):
4. Գինի կարող է օգտագործվել որպես դեղամիջոց (Մարկ. 15:23; Ղուկ. 10:34; I Տիմ. 5:23):
5. Առաջնորդները չպետք է չարաշահող լինեն: Սա չի նշանակում լրիվ ձեռնպահ մնալ (I Տիմ. 3: 3,8; Տիտոս 1: 7, 2: 3, I Պետ. 4: 3):
6. Գինին օգտագործվում է վախճանաբանական իմաստով (Մատթ. 22:1; Հայտն. 19: 9):
7. Հարբեցողությունն արտահայտում էր ավստասնք ինչ որ առիթի դեպքում (Մատթ. 24:49, Ղուկ. 12:45, 21:34, I Կորնթ. 5: 11-13; 6:10; Գաղ. 5:21; I Պետ. 4: 3, Հռոմ. 13 : 13-14):

III. Աստվածաբանական ներըմբռնում

Ա. Դիալեկտիկական լարվածություն

1. Գինին Աստծո պարզն է:
2. Հարբեցողությունը մեծ խնդիր է:
3. Հավատացյալները, որոշ մշակույթներում, պետք է սահմանափակեն իրենց ազատությունները հանուն ավետարանի (Մատթ. 15: 1-20, Մարկ 7: 1- 23; Ա Կոր. 8-10; Հռ. 14):

Բ. Տրված սահմաններից դուրս գալու միտում

1. Աստված է բոլոր լավ բաների աղբյուրը
2. Ընկած մարդկությունը չարաշահել է Աստծո բոլոր պարզները՝ հանելով դրանք Աստծո կողմից տրված սահմաններից դուրս:

Գ. Չարաշահումը մեր մեջ է և ոչ թե իրերի: Ֆիզիկական ստեղծագործության մեջ ոչ մի չար բար չկա (հմմտ. Մարկ. 7: 18-23; Հռ. 14: 14,20, I Կոր. 10: 25-26, I Տիմ. 4: 4; Տիտոս 1:15):

IV. Առաջին դարի հրեական մշակույթն ու խմորումը/թթվեցումը

Ա. Խմորումը սկսվում է շատ շուտ, խաղողը ճզմելուց մոտավորապես 6 ժամ անց

Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ երբ մի փոքր փրփուր է հայտնվում մակերեսին (դա խմորումի նշան է), այն ենթակա է գինու-տասանորդի (*Ma aseroth* 1: 7): Այն կոչվում էր «նոր գինի» կամ «քաղցր գինի»:

Գ. Հիմնական խմորումը/թթվեցումը ավարտվում է մեկ շաբաթ հետո:

Դ. Երկրորդական խմորումը տևում էր մոտ 40 օր: Այս վիճակում դա համարվում է «հնացած գինի» և կարող էր առաջարկվել զոհասեղանի ծառայության ժամանակ (*Edhuyyoth* 6:1):

Ե. Գինին, որը հանգստացել էր իր նստվածքի մեջ (հին գինի) համարվում էր լավը, բայց նախքան օգտագործելը պետք էր լավ քամել:

Զ. Գինին համարվում էր պատրաստ կամ տարիքով թթվեցումից սովորաբար մեկ տարի հետո: Երեք տարի էր ամենաերկար ժամանակահատվածը, որ գինին կարող էր ապահով պահվել: Այն կոչվում էր «հին գինի» և պետք է բացվեր ջրով:

Է. Միայն վերջին 100 տարիների ընթացքում ստերիլ միջավայրի և քիմիական հավելումների պատճառով խմորումը կամ թթվեցումը երկարել է: Հին աշխարհը չի կարող կանգնեցնել թթվեցման բնական գործընթացը:

V. Եզրափակիչ մտքեր

Ա. Համոզվեք, որ ձեր փորձառությունը, աստվածաբանությունը և աստվածաշնչյան

մեկնաբանությունը չեն արժեգրկում Հիսուսին և առաջին դարի հրեական/քրիստոնեական մշակույթը: Նրանք ակնհայտորեն ոչ ամբողջապես չխմող էին:

- Բ. Ես չեմ քարոզում ալկոհոլի սոցիալական օգտագործումը: Սակայն, շատերը չափազանցել են Աստվածաշնչի դիրքորոշումը այս թեմայի շուրջ և այժմ պնդում են, որ բարձրակարգ արդարությունը հիմնված է մշակութային / հարանվանական կողմնակալության վրա:
- Գ. Ինձ համար Հռ. 14 և I Կոր. 8-10 գլուխները տալիս են պատկերացում և ուղեցույց հիմնված սիրո և հարգանքի վրա, դեպի մեր հավատակիցները և ավետարանի տարածումը մեր մշակույթներում, ոչ անձնական ազատությունը, ոչ էլ դատապարտող քննադատությունը: Եթե Աստվածաշունչը միակ աղբյուրն է հավատքի և գործունեության, ապա մենք պետք է վերանայենք այդ հարցը:
- Դ. Եթե մենք հակված ենք ամբողջական չափավորությանը որպես Աստծո կամք, ինչ ենք ենթադրում Հիսուսի մասին, ինչպես նաև այն ժամանակակից մշակույթները, որոնք պարբերաբար օգտագործում են գինի (օրինակ Եվրոպա, Իսրայել, Արգենտինա):

2:4 «կին» Անգլերեն սա խիստ է հնչում, բայց դա եբրայերեն իդիոմա էր՝ հարգանքի կոչում (տես 4:21; 8:10; 19:26; 20:15):

- **NASB** “Ի՞նչ է դա անում մեզ հետ”
NKJV “Ի՞նչ գործ ունի ձեր մտահոգությունը Ինձ հետ”
NRSV “Ի՞նչն է մտահոգում ինձ ու քեզ”
TEV “դու չպետք է ինձ ասես ինչ անել”
NJB “Ի՞նչ ես ուզում ինձնից”

Սա եբրայերեն իդիոմա է, բառացիորեն «ինձ ինչ քեզ ինչ» (հմմտ. Գառ. 11:12; II Թագ. 16:10; 19:22; III Թագ. 17:18; IV Թագ. 3:13; II Մնաց. 35:21; Մաթ. 8:29; Մարկ. 1:24; 5:7; Գուկ. 4:34; 8:28; Հովհ. 2:4): Հավանական է սա Հիսուսի նոր հարաբերության սկիզբն էր Իր ընտանիքի հետ (հմմտ. Մաթ. 12:46; Գուկ. 11:27-28):

- **«Իմ ժամանակը դեռ չէ հասել»** Սա ցույց է տալիս Հիսուսի ինքնահասկացողությունը Իր նշանակված նպատակի մասին (հմմտ. Մարկ. 10:45): Հովհաննեսն օգտագործում է այս «ժամ» տերմինը մի քանի ձևերով:
 1. ժամանակի համար (հմմտ. 1:39; 4:6,52,53; 11:9; 16:21; 19:14; 19:27)
 2. վերջին ժամանակի համար (հմմտ. 4:21,23; 5:25,28)
 3. Իր վերջին օրերի համար (ձեռքակալում, պատիժներ, մահ, հմմտ. 2:4; 7:30; 8:20; 12:23,27; 13:1; 16:32; 17:1)

2:5 «Ինչ որ ասե՞ք, արե՞ք» Մարիամը չի հասկանում Հիսուսի մեկնաբանությունները, թե ինչու է լիովին անտեսում Իր գործողությունը այս իրավիճակում:

- 2:6**
- NASB** “հրեական մաքրման սովորության համար”
 - NKJV** “մաքրման ձևերի համաձայն”
 - NRSV** “հրեական մաքրման ծեսերի համար”
 - TEV** “հրեաները ունեն ծիսական լվացման մասին կանոններ”
 - NJB** “հրեաների քավության համար սովորություն”

Այս ջրի կարասներն օգտագործվում էին արարողակարգերի լվացումների՝ ոտքերի, ձեռքերի, պարագաների և այլնի համար: Հովհաննեսն այս մեկնաբանությունն անում է, որպեսզի օգնի հեթանոսներին՝ հասկանալ այդ միջավայրը:

2:6-7 «վեց քարէ կարասներ» Ինչպէս հաճախ Հովհաննէսի Ավետարանում, սա կարծես նշան է երկակի նպատակներով.

1. օգնել ամուսնացող զույգին
2. այն ի վերջո, մի նշան էր, որը ցույց էր տալիս Հիսուսին, որպէս հուդայականության կատարող: Այս վերջին արտահայտությունների պատճառները կարող են լինել
 - ա. 6 թիվը խորհրդանշական է մարդկային ջանքի
 - բ. Հիսուսի խնդրանքը դրանք մինչև եզր լրացնելու, կարծես թե ունի խորհրդանշական իմաստ, պարզապէս ավելի շատ գինի չտրամադրելու համար
 - գ. հսկայական քանակությամբ գինին, ինչը չափազանց անհնարին էր տեղական հարսանեաց խնջույքի համար
 - դ. գինին խորհրդանշի էր նոր շրջանի առատության (հմմտ. Եր. 31:12; Ովս. 2:22; 14:7; Հովել 3:18; Ամովս 9:12-14):

▪ «ամեն մեկը երկու կամ երեք մար էին տանում» Օգտագործված չափը երբայերեն *bath* տերմինն է: Կային երեք տարբեր չափերի *baths*, որոնք օգտագործվում էին Հիսուսի օրերում, այնպէս որ չափն անորոշ է, բայց այս հրաշքն ընդգրկում էր հսկայական քանակությամբ գինի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՆԱԳՈՒՅՆ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԿՇԻՌՆԵՐԸ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԸ (ԶՍՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ)

Հին գյուղատնտեսական տնտեսագիտության առևտրի մեջ կարևոր էին օգտագործված կշիռներն ու չափումները: Աստվածաշունչը հորդորում է հրեաներին արդար լինել իրենց հարաբերություններում միմյանց հետ (հմմտ Ղև. 19: 35-36, 2 Օր. 25: 13-16; Առ. 11:1, 16:11, 20:10): Իրական խնդիրը ոչ միայն ազնվությունն էր, այլ Պաղեստինում օգտագործվող ոչ ստանդարտացված պայմաններն ու համակարգերը: Թվում է, որ եղել են երկու տեսակի կշիռներ; յուրաքանչյուր չափի «թեթև» և «ծանր» (տես *The Interpreter's Dictionary of the Bible*, հատոր 4, էջ 831): Նաև Եգիպտոսի տասնորդական համակարգը (բազա 10) գոյություն ունի է Միջագետքի վաթսուհարյուրիկ հետ (բազա 6):

Օգտագործված «չափեր» և «գումարներ» շատերը հիմնված էին մարդու մարմնի մասերի, կենդանիների բեռների և ֆերմերի բեռնարկղերի վրա, որոնցից ոչ մեկը ստանդարտացված չէր: Հետևաբար, տրամագրերը գնահատում են մոտավոր և նախնական են: Ամենադյուրին ճանապարհը ցույց տալ կշիռներն ու չափումները հարաբերական աղյուսակի վրա:

- I. Ծավալի կամ տարողության տերմիններ, որոնք առավել հաճախ են օգտագործվում
 - Ա. Սորուն մարմինների չափ
 1. Քոռ կամ խօմեր (BDB 330, հնարավոր է «էշր բեռ», BDB 331), օր. Ղև. 27:16; Ովս.3:2
 2. Քոռ/լեթեխ/Letekh (կամ lethech, BDB 547, հնարավոր է ակնարկում է Ովս. 3: 2)
 3. Արդու (BDB 35), օրինակ, Ելից 16:36; Ղևտ. 19:36; Եզեկ. 45: 10-11,13,24
 4. Գրիվ (BDB 684), օրինակ, Ծննդ. 18: 6; I Թագ. 25:18; III Թագ. 18:32; IV Թագ. 7: 1,16,18
 5. Օմեր (BDB 771 II, հնարավոր է, «մի խուրձ» [ընկած ցորենի շարք] BDB 771 I), օրինակ, Ելից 16: 16,22,36; Ղև. 23: 10-15
 6. Հիմեն (BDB 798, արդու «տասներորդ մասը»), օր. Ելից 29:40; Ղև. 14:21; Թվ. 15: 4; 28: 5,13
 7. կապճի(կամ Kab, BDB 866), հմմտ IV Թագ. 6:25
 - Բ. Հեղուկ Չափման Միջոցներ
 1. Քոռ (BDB 499) օր. Եզ. 45:14 (կարող է լինել չոր միջոց, հմմտ II Մնաց. 2:10, 27: 5)
 2. Մար (BDB 144 II), օր. III Թագ. 7: 26,38; II Մնաց. 2:10; 4: 5; Ես. 5:10; Եզ. 45: 10- 11,14
 3. Հիմեն (BDB 228), օրինակ, Ելից 29:40; Ղևտ. 19:36; Եզեկ. 45:24
 4. լօզ (BDB 528), հմմտ. Ղևտ. 14: 10,12,15,21,24
 - Գ. Աղյուսակ (վերցված Roland deVaux, *Ancient Israel*, h. 1, էջ 201 և *Encyclopedia Judaica*

Հրեական Հանրագիտարան, հ. 16, էջ 379):

խօսեր (չոր) = Քոռ (հեղուկ կամ չոր)	1							
արդու (չոր) = մար (հեղուկ)	10	1						
գրիվ (չոր)	30	3	1					
հիմեն (հեղուկ)	60	6	2	1				
օմեր / հիմեն (չոր)	100	10	-	-	1			
կապճի / kab (չոր)	180	18	6	3	-	1		
լօգ (հեղուկ)	720	72	24	12	-	4	1	

II. Առավել հաճախ օգտագործվող քաշի տերմիններ

Ա. Երեք ամենատարածված կշիռներն են տաղանդը, սիկղ և կերատ

1. Հին Կտակարանում ամենամեծ քաշը տաղանդն է: Ելից 38: 25-26 մենք սովորում ենք, որ մեկ տաղանդը հավասար է 3000 սիկղ (այսինքն «կլոր քաշ» BDB 503):
2. Սիկղ տերմինը (BDB 1053, «քաշ») օգտագործվում է այնքան հաճախ, որ այն ենթադրվում է, այլ ոչ թե հաստատվում տեքստում: Կան մի քանի սիկղի արժեքներ նշված ՀԿ-ում:
 - ա. «առևտրային ստանդարտ» (NASB Ծննդ. 23:16)
 - բ. «սրբարանի սիկղ» (NASB Ելից 30:13)
 - գ. «Ըստ թագավորի քաշի» (NASB II Թագ. 14:26), որը կոչվում է նաև «արքայական կշիռ» - ի փղի պապիրուսի:
3. Կերատ (BDB 176 II) գնահատվում է 20 մեկ սիկղի համար (տես Ելից 30:13, Ղև. 27:25; Թվոց 3:47; 18:16, Եզ. 45:12): Այդ գործակիցները տատանվում են Միջագետքից Եգիպտոս: Իսրայելը հետևում էր ավելի տարածված քանանական (Ուգարիթ/Ugarit) գնահատման միավորին:
4. Մնաս (BDB 584) գնահատվում է 50 կամ 60 սիկղ: Այս տերմինը հիմնականում նշված է հինկտակարանյան ուշ գրքերում (այսինքն, Եզ. 45:12, Եզրաս 2:69, Նեեմ. 7: 70-71): Եզեկիելն օգտագործում է 60-ից մինչև 1 հարաբերակցությունը, իսկ Քանանում օգտագործվում է 50-ից մինչև 1 հարաբերակցությամբ:
5. Բեկա (BDB 132, «կես սիկղ», տես Ծննդ. 24:22) օգտագործվում է միայն երկու անգամ ՀԿ-ում (տես Ծննդ. 24:22, Ելից 38:26) և գնահատվում է կես սիկղ: Նրա անունը նշանակում է «բաժանել»:

Բ. Աղյուսակ

1. Հնգամատյանի հիման վրա					
տաղանդ	1				
մնաս	60	1			
սիկղ	3000	50	1		
բեկա	6000	100	2	1	
կերատ,	60,000	1,000	20	10	
2. Եզեկիելի հիման վրա					
տաղանդ	1				
մնաս	60	1			
սիկղ	3,600	60	1		
բեկա	7,200	120	2	1	
կերատ	72.000	1.200	20	10	1

2:8

- NASB “տնօրենը”
- NKJV “խնջույքի տերը”
- NRSV “գլխավոր տնօրենը”
- TEV “խնջույքի պատասխանատուն”
- NJB “խնջույքի նախագահը”

Այս անձը կարող է լինել կամ (1) պատվավոր հյուր, որը փառատունի պատասխանատուն էր կամ (2) ստրուկ, որը պատասխանատու էր հյուրերին ծառայելու:

2:10 Բանն այն է, որ սովորաբար լավագույն գինին մատուցում էին սկզբում: Այն բանից հետո, երբ հյուրերն արբում էին, վատ գինին էր մատուցվում: Բայց այստեղ լավագույնը վերջում էր: Սա կարծես հակադրություն է հուդայականության մեջ հին ուխտի (հին գինու) և Հիսուսի մեջ նոր ուխտի (նոր գինու) միջև (հմմտ. Եբրայեցիս գիրք): Հիսուսի տաճարի մաքրումը (հմմտ. 2:13-25, ըստ երևույթին, տեղադրված էր ժամանակագրական կարգից դուրս Հովհաննեսի աստվածաբանական նպատակների պատճառով), կարող է խորհրդանշում է այս ճշմարտությունը:

2:11 «Նշանների սկիզբը» Հովհաննեսի Ավետարանը կառուցված է յոթ նշանների և դրանց մեկնաբանության շուրջ: Սա առաջինն է: Տես Հատուկ թեման: *Archē* 1: 1.

▪ **«Եւ իր փառքը յայտնեց. եւ նորա աշակերտները հաւատացին նորան»** Հիսուսի փառքի (տես նշում 1:14) դրսևորումը (տես նշում ԲԱՅԻ վրա 1:31) հրաշքի (ներ) նպատակն էր: Այս հրաշքը, ինչպես շատ ուրիշներ, թվում էր, պետք է ուղղված լիներ հիմնականում Իր աշակերտներին: Սա չի վերաբերում իրենց նախնական հավատքի գործողությանը, այլ Նրա անձին և գործին շարունակաբար հասկանալուն: Նշանները հայտնում են Մեսիայի իրական անձն ու գործը: Անորոշ, թե հյուրերը երբևէ գիտեին ինչ է տեղի ունեցել:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 2:12
¹²Սորանից յետոյ Յիսուսն իջաւ Կափառնայում, ինքն եւ իր մայրը եւ իր եղբայրները եւ իր աշակերտները. Եւ շատ օրեր չ՛մնացին այնտեղ:

2:12 «Կափառնայում» Նազարեթի անհավատությունից հետո (հմմտ. Ղուկ. 4:16-30) սա դարձավ Հիսուսի հավաքատեղին Գալիլիայում (հմմտ. Մաթ. 4:13; Մարկ. 1:21; 2:1; Ղուկ. 4:23,31; Հովհ. 2:12; 4:46-47):

Սա յուրիսակ հայացք է՝ ուղղված Հիսուսի ծառայությանը իր ընտանիքի հանդեպ, Կանայում տեղի ունեցած հրաշքի լույսի ներքո:

ԿՈՆՏԵՔՍՏԻ ՆԵՐՈՍԲՈՒՄ 2:13-25

Ա. Եղել են շատ քննարկումներ նորկտակարանյան աստվածաբան գիտնականների միջև, թե քանի անգամ Հիսուսը մաքրեց տաճարը: Հովհաննեսն արձանագրում է մաքրումը Հիսուսի ծառայության բավական վաղ շրջանում, իսկ Մինոպտիկ Ավետարանները (Մատթ. 21:12; Մարկ. 11:15 և Ղուկ.19:45) նկարագրում են մաքրումը Հիսուսի կյանքի վերջին շաբաթվա ընթացքում: Հիմնվելով երկու տվյալների տարբերությունների վրա, հնարավոր է լինել տաճարի երկու մաքրում, ոչ թե մեկ:

Սակայն անշուշտ, հնարավոր է, որ Հովհաննեսը կառուցում է Հիսուսի գործողությունները աստվածաբանական նպատակներով (այսինքն, Հովհաննեսը պնդում է

Հիսուսի աստվածությունը գլխում 1-ում): Ավետարանագիրներից յուրաքանչյուրը ներշնչանքի ներքո ունեցել է ազատություն ընտրելու, հարմարեցնելու, դասավորելու և ամփոփելու Հիսուսի գործողություններն ու ուսմունքները: Ես չեմ հավատում, թե նրանք ունեին ազատություն Հիսուսի բերանը խոսքեր դնելու կամ իրադարձություններ հորինելու: Պետք է հիշել, որ Ավետարանները ժամանակակից կենսագրություններ չեն, այլ ավետարանչական հետապնդումներ՝ ուղղված ընտրված ընթերցողներին: Ավետարանները ժամանակագրականորեն չեն դասավորված, ոչ էլ արձանագրել են Հիսուս բոլոր խոսքերը (և ոչ էլ ամփոփումներ): Մա չի նշանակում, թե դրանք ճշգրիտ չեն: Արևելյան գրականությունը հիմնված է տարբեր մշակութային ակնկալիքների վրա ավելի քան արևմտյան գրականությունը: Տես, Gordon Fee և Douglas Stuart, *How To Read the Bible For All Its Worth*, էջ 127-148.

- F. Տաճարի մաքրումը համապատասխանում է Հովհաննեսի ընդհանուր աստվածաբանական նպատակին այն է, Հիսուսը նախ գործ է ունենում հրեա ազգի հետ: Սա կարելի է տեսնել Նիկողեմոսի հետ նրա քննարկման ժամանակ 3-րդ գլխում (ուղղափառ հուդայականություն): Մակայն 4-րդ գլխում Հիսուսը սկսում է առնչվել ավելի լայն խմբի հետ (նույնիսկ հերետիկոսական խումբ աղանդավորական հուդայականության մեջ) սկսելով սամարացի կնոջից:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 2:13-22
¹³Եւ Հրէաների զատիկը մօտ էր, եւ Յիսուսը ելաւ Երուսաղէմ: ¹⁴Եւ տաճարումը գտաւ եզներ եւ ոչխարներ եւ աղանիներ ծախողներին, եւ սեղանաւորներին նստած: ¹⁵Եւ չուանից խարազան շինեց, եւ ամենին տաճարիցը դուրս հանեց՝ ոչխարներն էլ եւ եզներն էլ, եւ սեղանաւորների պղինձները ցրուեց եւ տախտակները կործանեց: ¹⁶Եւ աղանի ծախողներին ասեց. Դորանց վեր առէք այստեղից. իմ Հօր տունը մի շինէք առուտորի տուն: ¹⁷Եւ նորա աշակերտները յիշեցին, թէ գրուած է, Քո տան նախանձը կերաւ ինձ: ¹⁸Արդ Հրէաները պատասխանեցին եւ ասեցին նորան. Ի՞նչ նշան ես ցոյց տալիս մեզ, որ անում ես այդ: ¹⁹Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորանց. Քանդեցէք այդ տաճարը, եւ երեք օրում կ'կանգնեցնեմ նորան: ²⁰Հրէաներն էլ ասեցին. Այս տաճարը քառասունեւվեց տարում շինուեցաւ, եւ դու երեք օրումը կ'կանգնեցնես՝ ո՞րքան: ²¹Բայց նա իր մարմնի տաճարի համար էր ասում: ²²Արդ երբոր նա մեռելների միջից յարութիւն առաւ, նորա աշակերտները յիշեցին, թէ նա ասեց նորանց այս բանը. Եւ հաւատացին գրքին՝ եւ այն խօսքին որ ասեց Յիսուսը:

2:13 «զատիկը» Այս ամենամյա տոնը նկարագրված է Ելից 12-ում և Բ Օրին. 16: 1- 6: Այս տոնը միակ միջոցն է, որով մենք իմանում ենք Հիսուսի ծառայության մասին: Մինուպտիկ Ավետարաններում ենթադրվում է, որ Հիսուսը ծառայել է ընդամենը մեկ տարի (այսինքն, մի զատիկի մասին է նշված): Մակայն Հովհաննեսը նշում է երեք Զատիկ (1) 2:13,23 (2) 6: 4 և (3) 11:55; 12:1; 13: 1; 18: 28,39; 19:14: Հնարավոր է կա նաև չորրորդը՝ 5:1-ում: Մենք չգիտենք, թե որքան է տևել Հիսուսի ակտիվ հրապարակային ծառայությունը, բայց Հովհաննեսի Ավետարանը ենթադրում է, որ դա եղել է առնվազն երեք տարի և, հնարավոր է չորս կամ նույնիսկ հինգ:

Հովհաննեսն իր Ավետարանը կառուցել է հրեական տոների շուրջ (Զատիկ, Տաղավարահարաց և Բաղարջակերաց, տես Richard N. Longenecker, *Biblical Exegesis in the Apostolic Period*, 2nd ed., էջ 135-139):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԶԱՏԻՎ

- I. Բացման մտքեր
- Ա. Եգիպտացիների դատաստանի և Իսրայելի ազատագրման այս աստվածային գործողությունը փորձաքարը է ՅԱՀՎԵԻ սիրո ու Իսրայելը որպես ազգ հաստատելու գործում (այսինքն, հատկ. մարգարեների համար):
- Բ. Ելիցը Աբրահամին տված ՅԱՀՎԵԻ խոստման յուրահատուկ կատարումն է Ծննդ. 15: 12-21: Զատիկը նշում է էլիցը:
- Գ. Սա վերջին և առավել տարածված (աշխարհագրորեն, այսինքն Եգիպտոս և Գոշեն) և ավերիչ (մարդկանց և անասունների առաջնեկների մահը) տասը պատուհասներից է ՅԱՀՎԵԻ-ի կողմից ուղարկված Եգիպտոսում Մովսեսի միջոցով:
- II. Ինքնին տերմինը (BDB 820, KB 947)
- Ա. ԳՈՅԱԿԱՆԻ իմաստն անորոշ է
1. կապված է «պատուհաս»ի հետ որով «հարվածել» (այսինքն, Ելից 11: 1); ՅԱՀՎԵԻ հրեշտակը խփեց մարդկանց և անասունների անդրանիկներին:
- Բ. ԲԱՅԻ իմաստը
1. «կաղալ» (տես Բ Թագ. 4: 4), որն օգտագործվում է իմաստով «ցատկել նշված տները» (այսինքն, Ելից 12: 13,23,27, BDB 619 է, հայտնի ստուգաբանություն)
 2. «պարել» (տես Գ Թագ. 18:21)
 3. Աքքադերեն - «հանդարտեցնել»
 4. Եգիպտերեն - «հարվածել» (տես Ա. 1.)
 5. գուգահեռ ԲԱՅԵԲ Ես. 31: 5, «պահակ կանգնել» (տես REB Ելից 12:13)
 6. վաղ քրիստոնեական հայտնի հնչյունային խաղ եբրայերեն *pasah* և հունարեն *pasch* ի «տառապել, չարչարվել» միջև
- Գ. Հնարավոր պատմական նախադեպեր
1. հովվի զոհաբերությունը նոր տարվա համար
 2. բիդուիների զոհաբերությունը և հաղորդության կերակուր վրանների տեղափոխման պահին գարնանային արոտավայրերում` չարը կանխելու համար
 3. զոհաբերությունը` քոչվոր մարդկանց մեջից չարիքը քշելու համար
- Դ. Պատճառները դժվար են ոչ միայն վստահ լինել բառի իմաստի վրա, այլև դրա ծագմանը, քանի որ այնքան շատ բազմազան առանձնահատկություններ կան Զատիկի վերաբերյալ, որոնք հայտնաբերվել են հին ծիսակարգերում:
1. գարնան ամիս
 2. անորոշ ԳՈՅԱԿԱՆԻ ստուգաբանում
 3. կապված գիշերային հսկումների հետ
 4. արյան օգտագործում
 5. հրեշտակների / դևերի պատկերներ
 6. հատուկ սնունդ
 7. գյուղատնտեսական տարրեր (բաղաբջ հաց)
 8. ոչ քահանաներ, ոչ զոհասեղան, տեղական ուշադրության կենտրոնացում
- III. Իրադարձություն
- Ա. Իրադարձությունն ինքն արձանագրված է Ելից 11-12
- Բ. Ամենամյա տոնակատարությունը նկարագրված է Ելից 12 և համակցված է ութօրյա տոնակատարության հետ` Բաղաբջակերաց տոնի հետ:
1. Սկզբում դա տեղական իրադարձություն էր, տես Ելից 12: 21-23; 2 Օրին. 16: 5 (տես Թվոց 9)

- ա. ոչ քահանա
- բ. ոչ հատուկ զոհասեղան
- գ. հատուկ արյան օգտագործում
- 2. Այն դարձավ իրադարձություն կենտրոնական սրբարանում
- 3. տեղական զոհաբերության այս համադրությունը (այսինքն, գառան արյունը հիշատակ շրջանցելով այդ մահվան հրեշտակի) և բերքի տոնը կենտրոնական սրբարանում, որն իրականացվել է մոտավոր ամսաթվերով *Աբիբ* կամ *Նիսանի* 14-ին և 15-21
- Գ. բոլոր մարդկանց և անասունների անդրանիկների խորհրդանշական սեփականությունը և փրկագնումը նկարագրված է Ելից 13-ում:

IV. Պատմական փաստեր

- Ա. Առաջին Չատիկը, որ տոնել են Եգիպտոսում, Ելից 12
- Բ. Քորեբ / Սինայի լեռան մոտ, Թվոց 9
- Գ. Առաջին Չատիկը, որ տոնել են Քանանի երկրում (Գաղգաղա), Հետու 5: 10-12
- Դ. Սողոմոնի տաճարի նվիրաբերման ժամանակ, III Թագ. 9:25 և I Մնաց. 8:12 (հավանաբար, բայց ոչ թե հատուկ հաստատված)
- Ե. Եգեկիայի թագավորության ժամանակ, II Մնաց. 30
- Զ. Հովսիայի բարեփոխումների ժամանակ, IV Թագ. 23: 21-23; II Մնաց. 35: 1-18
- Է. ծանուցում IV Թագ. 23:22 և II Մնաց. 35:18 նշում է, որ Իսրայելը անտեսում է պահել այս ամենամյա տոնը:

V. Կարևորությունը

- Ա. Մա պահանջվող երեք տարեկան տոներից մեկն է (տես Ելից 23: 14-17; 34: 22-24; 2 Օր. 16:16):
 - 1. Չատիկ/ բաղարջակերաց տոն
 - 2. Շաբաթների տոն
 - 3. Տաղավարահարաց տոն
- Բ. Մովսեսի նախանշան հանդիսացող օրը կդիտվի կենտրոնական սրբարանում (ինչպես մյուս երկու տոները) 2 Օրինացում:
- Գ. Հիսուն օգտագործեց ամենամյա Չատիկի առիթը (կամ նախօրեի) հայտնելու Նոր Ուխտի՝ հաց ու գինիի խորհրդանիշը, սակայն չի օգտագործել գառը:
 - 1. հաղորդության կերակուր
 - 2. փրկագնող զոհաբերություն
 - 3. շարունակական նշանակություն հետագա սերունդներին

▪ **«Յիսուսը ելաւ Երուսաղէմ»** Հրեաները միշտ խոսել են Երուսաղեմի մասին այս աստվածաբանական առումով ավելի, քան աշխարհագրական կամ տեղագրական իմաստով:

2:14 «Եւ տաճարումը» Հերովդես Մեծի (Իդումացի, որն իշխել է Պաղեստինում 37-4 մ.թ.ա.) տաճարը բաժանված էր յոթ տարբեր գավիթների: Դրսի գավիթը հեթանոսների համար էր, որտեղ վաճառականները հիմնել էին իրենց խանութները՝ տեղավորելու նրանց, ովքեր ուզում էին զոհաբերություններ մատուցել և բերել հատուկ զոհաբերություններ:

▪ **«Եզներ եւ ոչխարներ եւ աղանիներ»** Մարդիկ ճամփորդելով երկար տարածություն պետք է ձեռք բերեին զոհաբերության համար ընդունելի կենդանիներ: Սակայն քահանայապետի ընտանիքը վերահսկում էր այդ խանութները գնումները և մեղադրվում կենդանիների անչափ բարձր գների համար: Մենք նաև գիտենք, որ եթե մարդիկ բերում էին իրենց սեփական կենդանիներին,

քահանաները կարող էին որակագրկելով ասել, որ կենդանին ունի ֆիզիկական արատ: Այդ իսկ պատճառով նրանք ստիպված էին ձեռք բերել իրենց կենդանիներին այս դիլերներից:

▪ **«սեղանաւորներին»** Կան երկու անհրաժեշտ բացատրություններ այս անձանց համար (1) միակ մետաղադրամը, որն ընդունում էր տաճարը սիկդն էր: Քանի որ հրեական սիկդը վաղուց դադարել էր մետաղադրամ լինելուց, տաճարը ընդունում էր միայն Տիրոսի սիկդը Հիսուսի օրերում, կամ (2) Հռոմի կայսեր պատկերով ոչ մի մետաղադրամ չէր թույլատրվում: Կար իհարկե վճար:

2:15 «Եւ չուանից խարազան շինեց, եւ ամենին տաճարիցը դուրս հանեց» Հիսուսի զայրույթը կարելի է տեսնել այս դրվագում: Այն վայրը, որտեղ ՅԱՀՎԵՆ կարող էր հայտնի լինել, այլևս պաշտամունքի և հայտնության վայրում չէր: Զայրույթը կամ բարկությունը ինքնին մեղք չէ: Պողոսի արտահայտությունը Եփես. 4:26 հնարավոր է կապված է այդ արարքի հետ: Կան որոշ բաներ, որ պետք է զայրացնեն մեզ:

2:16 «Դորանց վեր առեք այստեղից» Սա հզոր ԱՕՐԻՍՏ ԱԿՏԻՎ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է, «այդ ամենը դուրս հանեք այստեղից»:

▪ **«իմ Հօր տունը մի շինեք առուտուրի տուն»** Սա ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել արդեն ընթացքի մեջ եղած գործողությունը: Մյուս Ավետարանները (այսինքն, Մաթ. 21:13; Մարկ. 11:17, Ղուկ. 19:46) մեջբերում են Ես. 56: 7 և Երեմ. 7:11 այս պահին, սակայն, Հովհաննեսի մեջ այս հինկտակարանյան մարգարեությունները նշված չեն: Սա կարող է լինել հնարավոր ակնարկ Մեսիական մարգարեության Զաք. 14:21

2:17 «Եւ նորա աշակերտները յիշեցին» Այս արտահայտությունը ենթադրում է, որ նույնիսկ Հիսուսի ծառայության և Հոգու օգնության լույսի ներքո այս մարդիկ տեսան Հիսուս գործողությունների հոգևոր ճշմարտությունը ավելի ուշ (տես հ. 22; 12:16; 14:26):

▪ **«թե գրուած է»** Սա ԿԱՏԱՐՅԱԼ ԿԱՄ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՊԱՄԻՎ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ Է, որը բառացիորեն նշանակում է «կանգնած»: Դա բնորոշ միջոց է հաստատելու Հին Կտակարանի ներշնչված լինելը (տես 6: 31,45; 10:34; 12:14; 20:30): Սա մեջբերում է Սաղ. 69:9 LXX-ի մեջ: Այս սաղմոսը, ինչպես Սաղմոս 22-ը, համապատասխանում Հիսուսի խաչելությանը: Հիսուսի նախանձախնդրությունը Աստծու և Նրա ճշմարիտ երկրպագության հանդեպ կհանգեցնի Նրա մահվանը, որը Աստծո կամքն է (տես Ես. 53: 4,10; Ղուկ. 22:22, Գործք 2:23; 3:18; 4:28):

2:18

- NASB** “Ինչ նշան կարող եք ցույց տալ մեզ ձեր իշխանությունը հաստատելու համար”
- NKJV** “Ինչ նշան եք ցույց տալիս մեզ, քանի որ այս բաներն եք անում”
- NRSV** “Ինչ նշան կարող եք ցույց տալ մեզ այս բանը անելու համար”
- TEV** “Ինչ հրաշք կարող եք անել ցույց տալու մեզ, որ ունեք իրավունք դա անելու”
- NJB** “Ինչ նշան կարող եք ցույց տալ մեզ, որ դուք պետք է այդպես վարվեք”

Սա կենտրոնական հարց էր հրեաները վերաբերում Հիսուսի. Փարիսեցիները պնդում էին, որ Իր իշխանությունը կամ գործությունը դիվային է (տես 8:48-49,52, 10:20): Նրանք ակնկալում էին, որ Մեսիան է անի որոշ բաներ որոշ ձևերով: Երբ նա չկատարեց այս կոնկրետ գործողությունները, նրանք սկսեցին կասկածել Նրան (տես Մարկ.11.28; Ղուկ. 20:2), ինչպես արեցին նույնիսկ Հովհաննես Մկրտիչը:

2:19 «Քանդեցէք այդ տաճարը, եւ երեք օրում կ'կանգնեցնեմ նորան» Հունարեն տաճար բառը (*hieron*) և հհ. 14 և 15 վերաբերվում են տաճարի տարածքին, իսկ (*naos*) տերմինը և հհ. 19,20, 21 վերաբերվում են ներքին սրբարանին: Այս մտքերի վերաբերյալ եղել է շատ քննարկումներ: մասին հայտարարությանը: Ակնհայտորեն Մատթ. 26:60; Մարկ.14:57-59; Գործք 6:14 սա վերաբերվում է Հիսուսի խաչելությանը և հարությանը: Մակայն այս կոնտեքստում այն նաև պետք է առնչվի ինչ - որ կերպ տաճարի հետ, որը քանդվում է մ.թ. 70-ի Տիտոսի կողմից (տես Մատթ. 24:1-2): Այս երկու մտքերը կապված են ճշմարտությանը, որ Հիսուսը ստեղծել է նոր հոգևոր երկրպագություն՝ կենտրոնացած Իր վրա և ոչ թե հին հուդայականության (տես 4:21-24): Կրկին Հովհաննեսն օգտագործում է բառ երկու իմաստներով:

2:20 «Այս տաճարը քառասունվեց տարում շինուեցաւ» Հերովդես Մեծը ընդլայնեց և ձևափոխեց երկրորդ տաճարը (սկսած Ջորաբաբելի օրոք, տես Անգէ) փորձել է հաշտեցնել հրեաներին իր եղովմացի լինելովը: Հովսեփոսը պատմում է մեզ, որ այն սկսվել է 20 կամ 19 մ.թ.ա. Եթե սա ճիշտ է, դա նշանակում է, որ այս հատուկ միջադեպը տեղի է ունեցել 27- 28 մ.թ. Մենք նաև գիտենք, որ այդ աշխատանքը շարունակվել է տաճարում մինչև 64 մ.թ. Այս տաճարը դարձել էր մեծ հրեական հույսը (տես Երեմիա 7): Դա կփոխարինվի Հիսուսով՝ Նոր Տաճարով: Հովհ. 1:14-ում Նա պատկերված է որպես խորան իսկ հիմա՝ տաճար: Ինչպիսի ցնցող փոխաբերություններ աստղծագործ, հյուսն Նագովրեցու համար: Աստված և մարդը այժմ հանդիպում են և հաղորդակցվում Հիսուսով:

2:21 «Բայց նա իր մարմնի տաճարի համար էր ասում» Այն ժամանակ, երբ Հիսուսն ասաց այս խոսքերը աշակերտները չհասկացան դա (տես հ. 17): Հիշեք, որ Հովհաննեսը գրում է տասնամյակ անց.

Հիսուսը գիտեր, թե ինչու Նա եկավ: Այստեղ կարծես թե առնվազն երեք նպատակ կա

1. բացահայտել Աստծուն
2. ճշմարիտ մարդկության օրինակը ցույց տալ
3. Իր անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն

Հենց այս վերջին նպատակն է, որ այս համարը սովորեցնում է (տես Մարկ. 10:45, Հովհ. 12: 23,27; 13:1-3, 17: 1):

2:22 «նորա աշակերտները յիշեցին, թէ նա ասեց նորանց այս բանը» Հաճախ Հիսուսի խոսքերն ու գործերը ի շահ աշակերտների էին ավելի, քան նրանց, ում հասցեագրված էին: Այն ժամանակ նրանք ոչ միշտ էին հասկանում:

▪ **«Եւ հաւատացին գրքին»** Չնայած տեքստը չի պնդում, որ սուրբգրային համարը, հավանական է Սաղմոս 16:10 հարության տեքստն է, որն ակնարկում է Հիսուսը (տես Գործք 2:25-32; 13:33-35): Այս նույն տեքստը (կամ աստվածաբանական հասկացությունը-հարություն) նշված է Հովհաննես 20 :9:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 2:23-25
²³ Եւ երբոր Երուսաղէմումն էր զատկի տօնին, շատ մարդիկ հաւատացին նորա անունին. Տեսնելով նորա այն նշանները, որ անում էր: ²⁴ Բայց Յիսուս ինքն իր անձը չէր հաւատում նորանց. Որովհետեւ ինքն ամենը գիտէր: ²⁵ Եւ որովհետեւ պետք չէր որ մէկը վկայէր մարդի համար. որովհետեւ ինքը գիտէր թէ ինչ կար մարդումը:

2:23 «շատ մարդիկ հաւատացին նորա անունին» Տերմինը «հավատացին» հունարեն (*pisteō*) տերմինից է առաջացել, որը կարող է նաև թարգմանվել «հավատալ», «հավատք» կամ «վստահություն»: ԳՈՅԱԿԱՆԸ չի հանդիպում Հովհաննեսի Ավետարանում, բայց ԲԱՅԸ հաճախ է օգտագործվում: Այս կոնտեքստում կա անորոշություն՝ ամբոխի նվիրվածությունը Հիսուս

Նագովրեցուն, որպես Մեսիայի: Այսպիսի մակերեսային «հավատալ» տերմինի օգտագործման այլ օրինակներ Հովհ. 8: 31-59 և Գործք 8:13, 18-24: Ճշմարիտ աստվածաշնչյան հավատքն ավելին է, քան նախնական պատասխանը: Այն պետք է հետևել աշակերտության գործընթացի միջոցով (հմմտ. Մատթ. 13: 20-22,31-32):

Ըստ երևույթին, այդ մակերեսային հավատացյալները մղվում էին դեպի Հիսուսը Նրա հրաշքներ պատճառով (հմմտ. 2:11; 7:31): Նրանց նպատակն էր հաստատել Հիսուսի անձն ու գործը: Սակայն, պետք է նշել, որ հավատքը Հիսուսի գորավոր գործերի նկատմամբ, երբեք համարժեք չէ համառ հավատքին (հմմտ. 4:38; 20:29): Հավատքի օբյեկտը պետք է լինի Հիսուսը (հմմտ 20: 30-31): Հրաշքներ ինքնաբերաբար նշան չեն Աստծուց (հմմտ. Մատթ. 24.24; Հայտն. 13.13; 16.14; 19.20): Հիսուսի գործերը մարդկանց Իրեն հավատալու համար էին նախատեսված (հմմտ. 2.23, 6.14, 7.31, 10.42); հաճախ մարդիկ տեսան այն նշանները սակայն հրաժարվեցին հավատալ (տես 6:27; 11:47; 12:37):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՎՀԱՆՆԵՍԸ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է «ՀԱՎԱՏԱԼ» ԲԱՅՐԸ (ԳՈՅԱԿԱՆԸ հազվադեպ է)

Հովհաննեսը հիմնականում միացնում է «հավատալ»-ը ՆԱԽԴԻՐԻ հետ

1. *eis* նշանակում է «մեջ»: Այս եզակի կառուցվածքն ընդգծում է այն փաստը, որ հավատացյալները իրենց վստահությունն / հավատքը առ Հիսուս
 - ա. Նրա անվանը (Հովհ. 1:12, 2:23, 3:18, I Հովհ. 5:13)
 - բ. Նրան (Հովհ. 2:11, 3: 15,18; 4:39, 6:40, 7: 5,31,39,48, 8:30, 9:36, 10:42, 11: 45,48; 12: 37,42)
 - գ. Ինձ (Հովհ. 6:35; 7:38, 11: 25,26, 12: 44,46, 14: 1,12, 16: 9, 17:20)
 - դ. Նրան, որին Նա ուղարկեց (Հովհ. 6: 28-29)
 - ե. Որդուն (Հովհ. 3:36, 9:35; Ա Հովհ. 5:10)
 - զ. Հիսուսին (Հովհ. 12:11)
 - է. Լույսի (Հովհ. 12:36)
 - ը. Աստծուն (Հովհ. 12:44, 14: 1)
2. *en* նշանակում է «-ին», ինչպես Հովհ. 3:15 (Մարկ. 1:15)
3. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ առանց ՆԱԽԴԻՐԻ (Հովհ. 4:50, Ա Հովհ. 3:23; 5:10)
4. *hoti*, որը նշանակում է «հավատալ, որ» տալիս է բովանդակություն, թե ինչին հավատալ: Որոշ օրինակներ
 - ա. Հիսուսը, Աստծու Սուրբն է (6:69)
 - բ. Հիսուսը Ես եմ-ն է (8:24)
 - գ. Հիսուսը Հոր մեջ և Հայրը Նրա մեջ (10:38)
 - դ. Հիսուսը Քրիստոսն է (11:27, 20:31)
 - ե. Հիսուսը Աստծո Որդին է (11:27, 20:31)
 - զ. Հիսուսն ուղարկվել էր Հոր կողմից (11:42, 17: 8,21)
 - է. Հիսուսը մեկ է Հոր հետ (14: 10-11)
 - ը. Հիսուսը եկավ Հոր մոտից (16: 27,30)
 - թ. Հիսուսը իրեն նույնացրեց Հոր ուխտի անունով «Ես եմ» (8:24; 13:19)

Աստվածաշնչյան հավատքը թե մարդու մեջ է և թե պատգամի: Այն վկայվում է հնազանդությամբ, սիրով և հաստատակամությամբ:

2:24-25 Սա հունարենում մեկ նախադասություն է: «Վստահել» կարևոր տերմինը (բառ. ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ «հավատալ» հերքվում է) օգտագործվում է այս կոնտեքստում՝ նկարագրելու համար Հիսուսի գործողությունները և վերաբերմունքը: Այն նշանակում է ավելին քան նախնական համաձայնություն կամ էմոցիոնալ պատասխան: Նախադասությունը նաև պնդում է Հիսուսի իմացությունը մարդու սրտի անօրեն և չար լինելը (արտացոլում է Աստծու գիտությունը, հմմտ. Ծննդ 6:11-12,13, Մաղ.14:1-3): Պարբերությունը պատկերազարդ նկարագրվում է Նիկողեմոսի

կողմից գլխում 3-ում: Նույնիսկ «Պարոն Կրոնականը» անկարող էր իր սեփական ջանքերով, գիտելիքներով, չափանիշներով կամ սերունդով ընդունվել Աստծո կողմից: Արդարությունը գալիս է միայն Հիսուսին հավատալով / վստահելով (հմմտ. Հռ. 1:16-17, 4):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ Հիսուսը ջուրը գինի դարձրեց: Ի՞նչ էր դա խորհրդանշում:
2. Նկարագրեք ամուսնական սովորույթները Հիսուսի օրերում:
3. Կարո՞ղ եք նկարել Հերովդեսի տաճարի հատակագիծը: Կարո՞ղ եք ցույց տալ վաճառողների և գնորդների հավանական գտնվելու վայրը:
4. Ինչու՞ Սինոպտիկ Ավետարանները չեն արձանագրել տաճարի այս նախնական մաքրումը:
5. Արդյո՞ք Հիսուսը կանխագուշակեց Հերովդեսի տաճարի կործանումը:
6. Մահմանել և բացատրել հունարեն բառը, որը թարգմանվում է «վստահություն», «հավատալ» և «հավատք»:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսը և Նիկողեմոսը	Նոր Ծնունդ	Հիսուսը և պաշտոնական հուղայականությունը	Հիսուսը և Նիկողեմոսը	Զրույց Նիկողեմոսի հետ
3:1-15	3:1-21	3:1-10	3:1-2 3:3 3:4 3:5-8 3:9 3:10-13	3:1-8 3:9-21
3:16-21		3:11-15 3:16 3:17-21	3:14-17 3:18-21	
Հիսուսը և Հովհաննես Մկրտիչը	Հովհաննես Մկրտիչը մեծարում է Քրիստոսին	Հովհաննեսի հետագա վկայությունը	Հիսուսը և Հովհաննեսը	Հովհաննեսը վկայում է առաջին անգամ
3:22-30	3:22-36	3:22-24 3:25-30	3:22-24 3:25-26 3:27-30	3:22-24 3:25-36
Նա, ով գալիս է երկնքից			Նա, ով գալիս է երկնքից	
3:31-36		3:31-36	3:31-36	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի բո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն

- 3. Երրորդ պարբերություն
- 4. և այլն

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:1-3
¹Եւ Փարիսեցիներիցը մի մարդ կար՝ անունը Նիկողեմոս՝ Հրեաների իշխան: ²Սա գիշերը Յիսուսի մօտ եկաւ եւ ասեց նորան. Ռաբբի, զիտենք որ Աստուածանից վարդապետ ես եկել. Որովհետեւ ոչ ով չէ կարող այդ նշաններն անել՝ որ դու ես անում, եթէ Աստուած նորա հետ չ'իյնի: ³Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորան. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ. Եթէ մէկը վերստին չ'ծնուի կարող չէ Աստուծոյ արքայութիւնը տեսնել:

3:1 «Փարիսեցիներիցը» Այս քաղաքական / կրոնական կուսակցությունների արմատները տանում են Մակքաբայեցիների ժամանակաշրջան: Նրանց անունը, հավանաբար, նշանակում է «առանձնացված»: Նրանք անկեղծ էին և նվիրված Աստծո օրենքներին սահմանված և բացատրված էր բանավոր ավանդության մեջ (Թալմուդ): Ճիշտ այնպես ինչպես այսօր, նրանցից ոմանք ճշմարիտ ուխտի մարդիկ էին (Նիկողեմոս, Հովսեփ Արիմաթացին), բայց ոմանք ինքնավստահ էին, օրինապաշտ, դատապարտող էին, «տեսանելի» ուխտավորներ (հմմտ. Ես. 6:9-10, 29:13): Միբայց քանակին է: «Նոր ուխտը» (Երեմ. 31:34) կենտրոնանում է ներքին մտիվացիայի վրա (այսինքն, նոր սիրտ, նոր միտք, սրտի վրա գրված օրենք): Դա արդեն ցույց տվեց, որ մարդու գործունեությունը անբավարար է, ինչպես միշտ: 2 Օրին. 10:16; 30:6 սրտի թլփատումը փոխաբերություն է անձնական վստահության / հավատքի համար, որը տալիս է հնազանդության և երախտագիտության կյանք:

Կրոնական պահպանողականությունը և / կամ լիբերալիզմը կարող են լինել տգեղ բաներ: Աստվածաբանությունը պետք է ծագի սիրուց և հավատից: Տես Հատուկ Թեմա Փարիսեցիներ 1: 24:

- **«Նիկողեմոս»** Ջարմանալի է Պաղեստինում ապրող հրեայի համար ունենալ միայն մեկ հունական անունը (ինչպես Փիլիպպոսն ու Անդրեասը, տես 1: 40,43), որը նշանակում է «ժողովրդի հաղթող» (հմմտ 7: 50; 19: 39):

▪
NASB, NKJV “հրեաների իշխան”
NRSV, NJB “հրեաների առաջնորդ”
TEV “հրեական առաջնորդ”

Այս կոնտեքստում, սա տեխնիկական արտահայտություն է Մինեդրիոնի անդամների համար (այլ կոնտեքստերում, այն կարող է նշանակել տեղական ժողովարանի առաջնորդ), հրեաներից բաղկացած յոթանասուն անդամ ունեցող բարձր աստյան Երուսաղեմում: Դրա իշխանությունը միանգամայն սահմանափակվում էր հռոմեացիների կողմից, բայց դա դեռ մեծ խորհրդանշական նշանակություն ուներ հրեա ժողովրդի համար: Տես Հատուկ Թեմա ստորև

Թվում է հավանական, որ Հովհաննեսն օգտագործում Նիկողեմոսին, որպես առաջին դարի ուղղափառ հուդայականության ներկայացուցիչ: Նրանք, ովքեր կարծում էին թե հոգևորապես հասուն են, նրանք ստիպված էին նորից սկսել: Հիսուսին հավատալը, ոչ թե կանոնները պահելն է (նույնիսկ աստվածահաճո կանոնները, տես Կող. 2: 16-23), և ոչ էլ ռասայական պատկանելությունն է (տես 8: 31-59) որոշում մարդու քաղաքացիությունը Թագավորությունում: Աստծո պարզև Բրիստոսում, ոչ թե անկեղծ, ագրեսիվ մարդկային կրոնականությունը, դուռ է դեպի աստվածային ընդունելության: Հիսուսին ճանաչելը, որպես Աստծուց ուղարկված ուսուցիչ, չնայած, որ ճիշտ է Նիկողեմոսի համար բավարար չէր: Անձնական վստահությունը, բացառիկ վստահությունը,

վերջնական վստահությունն առ այն, որ Հիսուսն է Մեսիան՝ մեղավոր մարդկության միակ հույսն է (տես 1:12):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԻՆԵՐԻՌՆԸ

I. Տեղեկատվության աղբյուրները

Ա. Նոր Կտակարանը

Բ. Փլավիոս Հովսեպոսի *Antiquities of the Jews*

Գ. Թավմոտի Միշնա հատվածը (այսինքն, Tractate “Sanhedrin”)

Ցավոք Նոր Կտակարանը և Հովսեպոսը համամիտ չեն ռաբբիների գրվածքների հետ, որոնք կարծես թե հաստատում են Երուսաղեմում երկու Սինեդրիոնների առկայությունը, մեկը քահանայության (այսինքն՝ սադդիդյան), որը ղեկավարվում էր քահանայապետի կողմից և զբաղվում էր քաղաքացիական և քրեական արդարադատությամբ, իսկ երկրորդը՝ վերահսկվում էր փարիսեցիների և դպիրների կողմից, որոնք հետաքրքրված էին կրոնական և ավանդապաշտական հարցերով:

Այնուամենայնիվ, ռաբբիական գրվածքները գալիս են 200մ.թ. և արտացոլում են մշակութային իրավիճակը Երուսաղեմի անկումից հետո, 70մ.թ. Հռոմի գեներալ Տիտոսի ժամանակաշրջանից: Հրեաները վերականգնել են իրենց կրոնական կյանքը Ջամնիա կոչվող քաղաքում, այնուհետև (այսինքն, 118մ.թ.) տեղափոխվել են Գալիլեա:

II. Տերմինաբանությունը

Այս դատական մարմնի ճանաչման հետ կապված խնդիրը ներառում է տարբեր անուններ, որոնցով դրանք հայտնի են: Երուսաղեմի հրեական համայնքում դատական մարմինների նկարագրության համար օգտագործվում են մի քանի բառեր:

Ա. *Gerousia* - «սենատ» կամ «խորհուրդ»: Սա ամենահին տերմինն է, որն օգտագործվել է պարսկական ժամանակաշրջանի վերջում (այսինքն, Հովսեպոս *Antiquities* 12.3.3 և *II Maccabees* 11:27): Այն օգտագործվում է Ղուկասի կողմից Գործք 5:21-ում, «Սինեդրիոնի» հետ միասին: Գուցե այդ տերմինը հունախոս ընթերցողների համար բացատրելու միջոց է եղել (տես I Մակար. 12:35):

Բ. *Synedrion* - «Սինեդրիոն»: Սա համադրություն է *syn* (հետ միասին) և *hedra* (նստավայր, նստարան) բառերի: Ջարմանալիորեն այս տերմինը օգտագործվում է արամերենում, բայց արտացոլում է հունարեն բառ: Մակքաբայեցիների ժամանակաշրջանի վերջում սա դարձավ Երուսաղեմի հրեաների բարձրագույն աստիճանը (տես Մատթ. 26:56; Մարկ. 15:1; Ղուկ. 22:66; Հովհ. 11:47; Գործք 5: 27): Խնդիրն այն է, երբ նույն տերմինաբանությունը օգտագործվում է Երուսաղեմից դուրս տեղական դատական խորհուրդներում (տես Մատթ. 5:22; 10:17):

Գ. *Presbyterion* - «ավագանու խորհուրդ» (տես Ղուկ. 22:66): Սա հինկտակարանյան նշանակություն էր ցեղային առաջնորդների համար: Այնուամենայնիվ, այն վերաբերում էր Երուսաղեմի բարձրագույն աստիճանին (տես Գործք 22:5):

Դ. *Boul* - Այս «խորհուրդ» տերմինը օգտագործվում է Հովսեպոսի կողմից (այսինքն, *Wars* 2.16.2, 5.4.2, բայց ոչ ՆԿ), նկարագրելու մի քանի դատական մարմիններ. 1) Հռոմի Սենատը, 2) տեղական հռոմեական դատարանները. 3) Երուսաղեմի հրեական բարձրագույն դատարանը և (4) տեղական հրեական դատարանները: Հովսեպոսի Արիմաթիացին նկարագրվում է որպես Սինեդրիոնի անդամ, այս տերմինի ձևով (այսինքն, *bouleut*, ինչը նշանակում է «խորհրդատու», Մարկ.15:43, Ղուկ.23:50):

III. Պատմական զարգացում

Սկզբում Եզրասը, ինչպես ասվում է, հետ-գերության ժամանակաշրջանում ստեղծեց Մեծ Ժողովարան (տես Targum Երգ Երգոց 6: 1), որը, կարծես, դարձել է Հիսուսի օրերի Սինեդրոնը:

- Ա. Միշնան (այն է, Թալմուդը) գրում է, որ Երուսաղեմում եղել են երկու խոշոր դատարաններ /ատյաններ (տես Sanh. 7:1):
1. 70 (կամ 71) անդամներից բաղկացած մեկը (*Sand.* 1:6-ը նույնիսկ նշում է, որ Մովսեսը առաջին Մինեդրիոնը ստեղծեց Թվոց 11, հմմտ. Թվոց 11: 16- 25):
 2. Մեկը կազմված էր 23 անդամներից (սակայն դա կարող է վերաբերել տեղական ժողովարանի դատարաններին):
 3. Որոշ հրեա գիտնականներ հավատում են, որ Երուսաղեմում եղել են երեք 23-ական անդամ ունեցող Մինեդրիոններ: Երբ երեքը միավորվեցին, երկու ղեկավարների հետ միասին կազմեցին 71 անդամներից բաղկացած «Մեծ Մինեդրիոնը» (այն է *Nasi* և *Av Bet Din*):
 - ա. Մեկ քահանայություն (այսինքն, սադուկեցիներ)
 - բ. Մեկ օրինական (այսինքն, փարիսեցիները)
 - գ. Մեկ արիստոկրատական (այսինքն, երեցներ)
- Բ. Հետզերության ժամանակաշրջանում վերադարձող Դավիթի սերունդը Ջորաբաբելն էր իսկ վերադարձող Ահարոնի սերունդը՝ Հեսուն: Ջորաբաբելի մահից հետո Դավիթի սերունդը չի շարունակվել, այնպես որ դատական վճռի կայացման դերը փոխանցվել է բացառապես քահանաներին (տես I Մակաբ.12:6) և տեղացի երեցներին (տես Նեեմ. 2:16; 5: 7):
- Գ. Դատական որոշումների այս քահանայական դերը արձանագրված է Դիոդորոսի կողմից 40: 3: 4-5 հելլենիստական ժամանակաշրջանում:
- Դ. Կառավարության մեջ քահանայական այս դերը շարունակվեց Սելևուկի ժամանակաշրջանում: Հովսեպոսը մեջբերում է Անտիոքոս «Մեծ» III (223-187մ.թ.ա.), *Antiquities* 12.138-142:
- Ե. Այս քահանայական իշխանությունը շարունակվեց Մակաբայեցիներ ժամանակաշրջանում, ըստ Հովսեպոսի *Antiquities* 13.10.5-6; 13.15.5.
- Զ. Հռոմեական ժամանակաշրջանի ընթացքում Միրիայի կառավարիչը (այն է, Գաբիւնյոսը, 57-55մ.թ.ա.) ստեղծեց հինգ մարզային «Մինեդրիոններ» (այն է Հովսեպոսի *Antiquities* 14.5.4 և *Wars* 1.8.5»), սակայն դա հետագայում հանվեց Հռոմի կողմից (47մ.թ.ա.):
- Է. Մինեդրիոնը քաղաքական բախում է ունեցել Հերովդեսի հետ (օր., *Antiquities* 14.9.3-5), որը 37մ.թ.ա. փոխհատուցել է և բարձրագույն ատյանից շատերին սպանել (այն է, Հովսեպոս *Antiquities* 14.9.4, 15.1.2):
- Ը. Հռոմի դատախազության ներքո (այն է 6-66մ.թ.) Հովսեպոսը պատմում է մեզ (հմմտ. *Antiquities* 20.200, 251), որ Մինեդրիոնը դարձյալ զգալի ուժ և ազդեցություն է ձեռք բերել (տես Մարկ. 14:55): Նոր Կտակարանում կան երեք դատավարություններ, որտեղ Մինեդրիոնը, Քահանայապետի ընտանիքի ղեկավարությամբ իրականացնում է արդարություն:
 1. Հիսուսի դատավարությունը (տես Մարկ.14: 53-15: 1 Հովհ. 18: 12-23, 28-32)
 2. Պետրոսը և Հովհաննեսը (հմմտ. Գործք 4: 3-6)
 3. Պողոսը (տես Գործք 22:25-30)
- Թ. Երբ հրեաները ապստամբեցին 66 մ.թ., Հռոմեացիները հետագայում ավերեցին հրեա հասարակությանը և Երուսաղեմը 70 մ.թ.: Մինեդրիոնը մշտապես լուծարվեց, թեև Ջամնայում փարիսեցիները փորձեցին բարձրագույն դատական դատարանը (այսինքն, *Beth Din*) վերադարձնել հրեական կրոնական (բայց ոչ քաղաքացիական կամ քաղաքական) կյանք:

IV. Անդամակցություն

- Ա. Երուսաղեմի բարձրագույն դատարանի առաջին աստվածաշնչյան հիշատակումը գտնվում է II Մնաց.19: 8-11: Այն կազմված էր (1) ղևտացիներից, 2) քահանաներից և 3)

ընտանիքների ղեկավարներից (այն է, ծերեր, I Մակար.14:20, II Մակար. 4:44):

Բ. Մակքաբայեցիների շրջանում այն գերակշռում էր (1) սաղուկեցիների քահանայական ընտանիքները և 2) տեղական արիստոկրատիան (տես I Մակար. 7:33, 11:23, 14:28): Ավելի ուշ այս ժամանակահատվածում ավելացվեցին «դպիրները» (Մովսեսական օրենսգետները, սովորաբար փարիսեցիները), որոնք, ըստ երևույթին, Ալեքսանդր Ժաննետուսի կնոջ Մալոմեի կողմից (76-67մ.թ.ա.): Նա նույնիսկ ասել է, որ փարիսեցիները գերակշռող խումբ են կազմել (այսինքն, Հովսեփոս *Wars of the Jews* 1.5.2):

Գ. Հիսուսի օրերում դատարանը կազմված էր

1. քահանայապետների ընտանիքները
2. հարուստ ընտանիքների տեղացի տղամարդիկ
3. դպիրներ (տես 11:27, Դուկ. 19:47)

V. Խորհրդատվության աղբյուրները

Ա. *Dictionary of Jesus and the Gospels*, IVP, էջ 728-732

Բ. *The Zondervan Pictorial Encyclopedia of the Bible*, հատոր 5, էջ 268-273

Գ. *The New Schaff-Herzog Encyclopedia of Religious Knowledge*, հատոր 10, էջ 203-204

Դ. *The Interpreter's Dictionary of the Bible*, հատոր 4, էջ 214-218

Ե. *Encyclopedia Judaica*, հատոր 14, էջ 836-839

3:2 «գիշերը» Ռաբբիներն ասում էին, որ գիշերը Օրենքի ուսումնասիրման լավագույն ժամանակն էր, քանի որ խանգարողներ չկային: Հնարավոր է, Նիկողեմոսը չէր ուզում տեսնվել Հիսուսի հետ, ուստի գիշերով եկավ Նրա մոտ (հավանաբար նրա հետ կային ուրիշ մարդիկ):

Մի բան, որ միշտ զարմացնում է Հովհաննեսի գրվածքներում, թե որքան հաճախ է թարգմանիչը ենթադրում կրկնակի իմաստի մասին: Հովհաննեսը բնութագրվում է կրկնվող հակադրությամբ՝ լույս և խավար (տես NET Աստվածաշունչը, էջ 1898, # 7):

▪ **«Ռաբբի»** Հովհաննեսի Ավետարանում դա նշանակում է «ուսուցիչ» (տես 1:38; 4:31; Մարկ. 9:5, 11:21): Հրեա առաջնորդների անհանգստությունն այն էր, որ Հիսուսը չէր հաճախում ռաբինիստական աստվածաբանական դպրոցներից մեկը: Նա չունեի Թալմուդական ուսում՝ Նազարեթում տեղական ժողովարանի ուսումից հետո:

▪ **«Աստուածանից ես եկել»** Այս հատվածը նախադասության մեջ սկզբում է տեղադրված՝ շեշտադրման համար: Սա, հնարավոր է, վերաբերում է 2 Օրինացի մարգարեությանը 18:15, 18: Նիկողեմոսը ճանաչեց Հիսուսի գործերի և խոսքերի գորությունը, բայց դա չէր նշանակում, որ Նա հոգևորապես Աստծո հետ ուղիղ էր:

▪ **«Եթե Աստուած նորա հետ չ'լինի»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ իրականություն:

3:3,5,11 «Ճշմարիտ ճշմարիտ» Սա բառացիորեն «Ամեն, ամեն» է: Այն հինկտակարանյան «հավատք» բառից է: Այն «ամուր, հաստատ լինել» կամ «վստահ լինել» արմատից է: Հիսուսն այն օգտագործել է նշանակալի հայտարարություններ անելու համար: Այն նաև հետագայում օգտագործվեց որպես ճշմարիտ հայտարարությունների, դրույթների հաստատման ձև: Նախնական կրկնապատկումը յուրահատուկ է Հովհաննեսի Ավետարանին: Այս «ամեն» բառի կրկնվող կրկնությունները ցույց են տալիս Հիսուսի և Նիկողեմոսի երկխոսության փուլերը: Տես Հատուկ Թեմա: Ամեն 1:51:

3:3 «Եթէ մէկը» Սա նույնպէս ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, ինչպէս Նիկոդեմոսի հայտարարությունը, 3: 2:

▪
NASB, NKJV,
TEV “նորից ծնված”
NRSV, NJB “վերից ծնված”

Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: (*anōthen*) բառը կարող է նշանակել

1. «ֆիզիկապէս երկրորդ անգամ ծնված»
2. «ծնված սկզբից» (տես Գործք 26: 4)
3. «վերից ծնված», որը համապատասխանում է այս կոնտեքստին (տես 3: 7,31; 19:11)

Սա, հավանաբար, Հովհաննէսի օգտագործած տերմինների մէկ այլ օրինակ է, որոնք ունեն երկու իմաստ (կրկնակի ներդնող), որոնցից երկուսն էլ ճշմարիտ են (տես *Bauer, Arndt, Gengrich and Danker's New Testament in Greek-English Lexicon*, էջ 77): 4-րդ համարից ակնհայտ է, որ Նիկոդեմոսը հասկացավ, որ դա # 1տարբերակն է: Հովհաննէսն ու Պետրոսը (այսինքն, I Պետ. 1:23) օգտագործում են այս ընտանեկան փոխաբերությունը փրկության համար, ինչպէս որ Պողոսն օգտագործում է որդեգրում տերմինը: Հիմնական ուշադրությունը Հոր գործերի վրա է՝ ծնել (տես 1: 13): Փրկությունը Աստծո պարզն ու գործն է (հմմտ. 1: 12-13; Հռ. 3: 21-24; 6:23; Եփ. 2: 8-9):

▪ «կարող չէ տեսնել» Այս իդիոմատիկ արտահայտությունը զուգահեռ է հ.5-ում, «չի կարող մտնել»:

▪ «Աստուծոյ արքայութիւնը» Հովհաննէսի Ավետարանում այս արտահայտությունը օգտագործվում է ընդամենը երկու անգամ (տես հ.5): Մա Սինոպտիկ Ավետարաններում բանալի արտահայտություն է: Հիսուսի առաջին և վերջին քարոզները, և Նրա առակներից շատերը առնչվում էին այս թեմային: Այն վերաբերում է Աստծո թագավորությանը մարդկանցն սրտերում: Զարմանալի է, որ Հովհաննէսը այս արտահայտությունն օգտագործում է միայն երկու անգամ (բայց ոչ առակներում): Տես ստորև Հատուկ Թեման: Հովհաննէսի համար «յաւիտենական կեանքը» հիմնական տերմին է և փոխաբերություն:

Այս արտահայտությունը վերաբերում է Հիսուսի ուսմունքների վախճանաբանական (վերջին ժամանակի) հարվածին: Այս «արդեն, բայց դեռ ոչ» աստվածաբանական պարադոքսը վերաբերում է հրեական գաղափարի երկու ժամանակաշրջաններին՝ ներկա չար ժամանակները և գալիք արդարության ժամանակաշրջանը, որը կբացվի Մեսիայի կողմից: Հրեաները սպասում էին միայն մէկ հոգով հզոր ռազմական առաջնորդի գալստյանը (ինչպէս Դատավորացը ՀԿ): Հիսուսի երկու գալուստները երկու ժամանակաշրջանների համընկնումն է: Աստծո արքայությունը կոտրում մտնում է մարդկության պատմության մեջ՝ Բեթլեհեմի մարմնացումով: Մակայն Հիսուսը եկավ ոչ թե որպէս Հայտնություն 19-ի ռազմական նվաճող, այլ որպէս Տառապող Ծառա (այն է Եսայիա 53) և խոնարհ առաջնորդ (տես Զաք. 9:9) եկավ: Հետևաբար, Թագավորությունը բացված է (Մատթ. 3: 2; 4:17; 10: 7; 11:12;12:28; Մարկ. 1:15; Դուկ. 9: 9,11; 11:20; 21:31-32), բայց չի ավարտվել (տես Մատթ. 6:10; 16:28;26:64):

Հավատացյալներն ապրում են այս երկու դարաշրջանների միջև եղած լարվածության մեջ: Նրանք ունեն հարությալ կյանք, բայց նրանք դեռ մնում են ֆիզիկապէս մահկանացու: Նրանք ազատվում են մեղքի զորությունից, բայց նրանք դեռ մեղք են գործում: Նրանք ապրում են վախճանաբանական լարվածության մեջ արդեն բայց դեռ ոչ:

Հովհաննէսի Ավետարանում արդեն բայց դեռ ոչ օգտակար արտահայտության մասին կարելի է գտնել Frank Stagg's *New Testament Theology*

«Հովհաննէսի Ավետարանը հորդորում է գալիք ապագայի մասին (14: 3,18,28; 16: 16,22) և այն հստակորեն խոսում է հարության և վերջին դատաստանի մասին «վերջին օրը» (5:28; 6:39,44,54;

11:24; 12:48); բայց նաև այս Չորրորդ Ավետարանում ներկա են իրողություններ հավիտենական կյանքի, դատաստանի և հարության մասին (3:18, 4:23, 5:25, 6:54, 11:23, 12: 28,31;14:17;17:26)»(Էջ311):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏԾՈ ՔԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հին Կտակարանում ՅԱՀՎԵԻ մասին մտածում էին, որպես Իսրայելի Թագավոր (հմմտ. I Թագ. 8:7; Սաղ. 10:16; 24:7-9; 29:10; 44:4; 89:18; 95:3; Ես. 43:15; 4:4,6) և Մեսիային, որպես իդեալական թագավոր (հմմտ. Սաղ. 2:6; Ես.9:6-7; 11:1-5): Բեթլեհեմում Հիսուսի ծնունդը (6-4 Զ.Ա.) Աստծո թագավորությունը մտավ մարդկության պատմության մեջ նոր գործությունով և փրկությունով (նոր ուխտ, հմմտ. Եր. 31:31-34; Եզ. 36:27-36): Հովհաննես Սկրտիչը հռչակեց թագավորության մոտ լինելը (հմմտ. Մաթ. 3:2; Մարկ. 1:15): Հիսուսը հստակ սովորեցրեց, որ թագավորություն գտնվում է Իր մեջ և Իր ուսմունքների մեջ (հմմտ. Մաթ. 4:17,23; 9:35; 10:7; 11:11-12; 12:28;16:19; Մարկ. 12:34; Դուկ. 10:9,11; 11:20; 12:31-32; 16:16; 17:21): Բայց և նաև Աստծո թագավորությունը ապագայում է (հմմտ. Մաթ. 16:28; 24:14; 26:29; Մարկ. 9:1; Դուկ. 21:31; 22:16,18):

Մարկոս և Դուկաս սինոպտիկ/նույնաման Ավետարաններում, զուգահեռ հատվածներում մենք հանդիպում ենք «Աստծո թագավորություն» արտահայտությունը: Հիսուսը հաճախ սովորեցրեց ներկա պահին մարդկանց սրտերում Աստծո թագավորության մասին, որը մի օր պետք է հաստատվի ամբողջ երկրում: Սա արտացոլված է Հիսուսի աղոթքում Մաթ. 6:10: Մաթևոսի Ավետարանը, որը գրվել է հրեաների համար, այս արտահայտության մեջ չկա Աստծո անունը (Երկնքի Արքայություն), իսկ քանի որ Մարկոս և Դուկաս Ավետարանները գրվել են հեթանոսների համար, օգտագործել են Աստծո անունը, որն ավելի ընդունված է եղել:

Այս բանալի արտահայտությունը շատ հաճախ հանդիպում է սինոպտիկ Ավետարաններում: Հիսուսի առաջին և վերջին քարոզները, և Իր առակներից շատերը առընչվում են այս թեմային : Սա խոսում է Աստծո այն թագավորության մասին , որը հիմա մարդկանց սրտերում է: Չարմանալի է, որ Հովհաննեսն այս արտահայտությունն օգտագործումը ընդամենը երկու անգամ (և ոչ մի անգամ Հիսուսի առակներում): Հովհաննեսի Ավետարանում բանալի տեմինը և փոխաբերությունը «հավիտենական կյանքն» է:

Այս լարվածության պատճառը Քրիստոսի երկու գալուստներն են: Հին Կտակարանը կենտրոնանում էր Աստծո Մեսիայի միայն մեկ գալստյան վրա որպես ռազմավար, դատավոր, փառավոր գալուստ, բայց Նոր Կտակարանը ցույց է տալիս, որ Նա առաջին անգամ եկավ որպես Տառապող Ծառա Ես. 53 և հեզ թագավոր Չաք. 9:9: Հրեական երկու ժամանակաշրջանները, անօրենության շրջանը և արդարության նոր շրջանը մասամբ իրար ծածկում են, մասնակի կերպով հասնակնում են: Հիմա Հիսուսը թագավորում է հավատացյալների սրտերում, բայց կգա օրը երբ Նա կթագավորի ամբողջ արարչագործության վրա: Նա կգա այնպես, ինչպես կանխագուշակված է Հին Կտակարանում: Հավատացյալներն ապրում են «արդեն» բայց «դեռ ոչ» վիճակում, կապված Աստծո թագավորության հետ (հմմտ. Գորդոն Ֆի և Դուգլաս Ստյուարտ, «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ ճոխությամբ» Gordon D. Fee and Douglas Stuart's *How to Read The Bible For All Its Worth*, էջ. 131-134):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:4-8

⁴Նիկողեմոսը նորան ասեց. Մարդ ի՞նչպես կարող է ծնուիլ՝ որ ծեր է. Մի՞ թե կարող է երկրորդ անգամ իր մօր արգանդը մտնել եւ ծնուիլ: ⁵Յիսուսը պատասխանեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ. եթէ մէկը ջրից եւ Հոգուց չ'ծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել: ⁶Մարմնիցը ծնուածը մարմին է. եւ Հոգուցը ծնուածը հոգի է: ⁷Մի գարմանար՝ որ ասեցի քեզ թէ Պէտք է ձեզ վերստին ծնուիլ: ⁸Քամին որտեղ ուզում է՝ փչում է, եւ նորա ձայնը լսում ես. Բայց չգիտես թէ ո՞ր տեղից է գալիս եւ ո՞ր տեղ է գնում. Այսպէս է ամեն Հոգուցը ծնուածը:

3:5 «եթէ մէկը ջրից եւ Հոգուց չ'ծնուի» Սա ևս մեկ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է: Կարող է լինել հակադրություն (այնքան բնորոշ Հովհաննեսի գրվածքներին)

- 1. Ֆիզիկականի և հոգևորի միջև («հոգի» ՀՈՐ չկա)
- 2. Երկրայինի և երկնայինի միջև

Այս հակադրությունը ենթադրում է հ.6

«Ջրի» իմաստի տեսություններն են

1. ռաբբիներն օգտագործում են այն տղամարդու սերմի համար
2. երեխայի ծնվելու՝ պտղաշրի համար
3. Հովհաննեսի մկրտությունը խորհրդանշող ապաշխարության համար (տես 1:26; 3:23)
4. Հինկտակարանյան ժամանակաշրջանի նշանակությամբ արարողակարգային ջրի սրսկումը Հոգու կողմից (տես Եզեկ 36:25-27)
5. Քրիստոնյայի մկրտությունը (չնայած Նիկոդեմոսը չէր կարող հասկանալ այդպես, առաջինը հիշատակվել է Հուստինի և Իրենեոսի կողմից)

Կոնտեքստի #3 տեսության մեջ-Հովհաննեսի ջրային մկրտությունը և Հովհաննեսի հայտարարությունը Մեսիայի Սուրբ Հոգով մկրտվելու մասին պետք է լինի առավել ակնառու իմաստը: Ծնված, այս կոնտեքստում, փոխաբերական է և մենք չպետք է թույլ տանք, որ Նիկոդեմոսի տերմինների թյուրիմացությունը գերիշխի մեկնաբանությանը: Հետևաբար, # 1 տեսությունը տեղին չէ: Թեև Նիկոդեմոսը չէր հասկացել Հիսուսի խոսքերը, երբ խոսքը վերաբերում էր հետագա քրիստոնեական մկրտությանը, Հովհաննես Առաքյալը հաճախ միջամտում է իր աստվածաբանությունը Հիսուսի պատմական խոսքերի մեջ (տես հհ.14-21): 2-րդ տեսությունը կհամապատասխաներ Հովհաննեսի դուալիզմին՝ վերև և ներքև, Աստծո թագավորությունը և երկրային թագավորությունը: Այս տերմինները սահմանելիս պետք է պարզել, արդյոք դրանք հակասական են (# 1 կամ # 2) թե լրացնող (# 4):

D. A. Carson, *Exegetical Fallacies*- ը նշում է մեկ այլ տարբերակ, որ երկու խոսքերն էլ վերաբերում են մեկ ծնունդի՝ վախճանաբանական ծնունդ Եզ. 36: 25-27, որը նկարագրում է «նոր ուխտը» Եր. 31: 31-34 (էջ 42):

F. F. Bruce, *Answers to Questions*, նաև տեսնում է Եզեկիելի ՀԿ ակնարկը Հիսուսի խոսքերի հետևում: Այն կարող է նույնիսկ հղում լինել նորադարձի մկրտությանը, որը պետք է անի նաև Նիկոդեմոսը ռաբբի ուսուցիչը (էջ 67):

▪ **«Աստուծոյ արքայութիւնը»** Մի հին հունարեն ձեռագիր (այսինքն, MS Տ) և շատ եկեղեցու հայրերը ունեն «երկնքի արքայություն» արտահայտությունը, որը տարածված է Մատթևոսի Ավետարանում: Այնուամենայնիվ, «Աստծո արքայություն» արտահայտությունը հանդիպում է հ.3-ում (3 և 5 համարները միակ տեղերն են, որտեղ հանդիպում է այս արտահայտությունը Հովհաննեսի Ավետարանում): Հովհաննեսը, գրելով հեթանոսներին (ինչպես Մարկոսն ու Ղուկասը), չի օգտագործում հրեական բազմախոսություններ Աստծո անվան համար:

3:6 Մա կրկին ուղղահայաց դուալիզմ է (վերև և ներքև), որն այնքան տարածված է Հովհաննեսի Ավետարանում (տես հ.11):

3:7 «քեզ . . . քեզ» Առաջինը ԵԶԱԿԻ է, որը վերաբերում է Նիկոդեմոսին, իսկ երկրորդը՝ ՀՈԳՆԱԿԻ, որը վերաբերում է ընդհանուր սկզբունքին, որը կիրառելի է բոլոր մարդկանց համար (նույն խաղը ԵԶԱԿԻ և ՀՈԳՆԱԿԻ հ.11-ում):

Մեկը փորձում է դա մեկնաբանել հրեաների հավակնության լույսի ներքո՝ վստահելու իրենց ռասայական ծագմանը (տես 4:12; 8:53): Հովհաննեսը, գրելով առաջին դարի վերջում, ակնհայտորեն առնչվում է Գնոստիցիզմին, ինչպես նաև հրեական ռասայական ամբարտավանությանը:

▪ **«Պէտք է»** Հունարեն *dei* ԲԱՅԸ (գրակ. «անհրաժեշտ է») (BAGD 172), ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) օգտագործվում է երեք անգամ 3-րդ գլխում (տես հհ.7,14,30): Դա նշանակում է այնպիսի բաներ, որոնք պետք է առաջ շարժվեն՝ Աստծո ծրագրի համար (տես 4:24; 9: 4; 10:16; 12:34; 20):

3:8 Կա բառախաղ երբայերեն (և արամերեն) (*ruach*) բառի և հունարեն (*pneuma*) բառի շուրջ, որը նշանակում է «քամի», «շունչ» և «հոգի»: Բանն այն է, որ քամին ազատություն ունի, ինչպես Հոգին: Ոչ ոք չի կարող տեսնել քամին, բայց նրա հետևանքները: Այնպես էլ Հոգին: Մարդկության փրկությունը նրա վերահսկողության տակ չէ, այլ գտնվում է Հոգու հսկողության ներքո (տես Եզեկիել 37): Հնարավոր է, որ հհ. 5-7 նույնպես արտացոլում են այս նույն ճշմարտությունը: Փրկությունը Հոգու նախաձեռնության համադրությունն է (հմմտ. 6: 44,65) և անհատական անձի հավատքի / ապաշխարության արձագանքը (տես 1:12, 3: 16,18):

Հովհաննեսի Ավետարանը բացառապես կենտրոնանում է Հոգու անձի և գործի վրա (տես 14:17,25-26, 16:7-15): Նա տեսնում է արդարության նոր դարաշրջանը, որպես Աստծո Հոգու դարաշրջան:

Համար 8 ընդգծում է գաղտնիքը, թե ինչու են որոշ մարդիկ հավատում, երբ լսում են ավետարանը իսկ ուրիշները ոչ: Հովհաննեսը պնդում է, որ ոչ ոք չի կարող հավատալ, եթե Հոգին նրան չդիպչի (տես 1:13, 6:44,65): Այս համարը ամրապնդում է այդ աստվածաբանությունը: Այնուամենայնիվ, ուխտի արձագանքի հարցը (այսինքն, աստվածային առաջարկի մարդու ընդունելը) դեռևս ենթադրում է, որ Հոգին դիպչում է բոլորին: Ինչու ոմանք հրաժարվում են հավատալ, դա անօրինության մեծ խորհուրդն է (այսինքն, մեղքի եսակենտրոնությունը): Ինչքան մեծանում են, այնքան ավելի շատ են ուսումնասիրում իմ Աստվածաշունչը, այնքան ավելի շատ են ծառայում Աստծո ժողովրդին, այնքան ավելի շատ են գրում «առեղծված» ամբողջ կյանքի ընթացքում: Մենք բոլորս ապրում ենք մարդկային ապստամբության խավար մառախուղում (այսինքն, I Կոր 13:12): Կարողանալով բացատրել կամ այլ կերպ ասած, սիստեմատիկ աստվածաբանություն զարգացնելը այնքան կարևոր չէ, որքան վստահել Աստծուն Քրիստոսով: Հորը երբեք չի ասել «ինչու»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՇՈՒՆՉ, ՔԱՄԻ, ՀՈԳԻ

Երբայերեն *ruach* տերմինը (BDB 924) և հունարեն *pneuma* տերմինը (տես Հովհ.3: 5, 8) կարող է նշանակել «հոգի», «շունչ» կամ «քամի» (տես Հովհ. 3: 5, 8): Հոգին հաճախ ասոցացվում է արարչագործության հետ (տես Օննդ.1: 2, Հոբ 26:13, Սաղ. 104:29-30, 147: 14-18): Հին Կտակարանը հստակ չի սահմանում Աստծո և Հոգու միջև եղած հարաբերությունները: Հոբ 28:26-28; Սաղ. 104:24 և Առ. 3:19; 8: 22-23 Աստված օգտագործեց իմաստություն (ԻԳԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ) բոլոր բաները ստեղծելու համար: Նոր Կտակարանում Հիսուսը համարվում է Աստծո կատարողը արարչագործության մեջ (տես Հովհ.1: 1-3, Ա Կորնթ.8: 6, Կող. 1: 15-17, Եբր. 1: 2-3): Ինչպես փրկագնման դեպքում, այնպես էլ ստեղծագործության մեջ Աստծո բոլոր երեք անձերն էլ ներգրավված են: Օննդոց 1-ը ինքնին չի ընդգծում որևէ երկրորդական պատճառ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:9-15

⁹Նիկողեմոսը պատասխանեց եւ ասեց նորան. Այդ ի՞նչպէս կարող է լինիլ: ¹⁰Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորան. Դու եւ Իսրայելի վարդապետը, եւ այս չ՛գիտե՞ս: ¹¹Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ, թէ ինչ որ գիտենք՝ իօտում ենք, եւ ինչ որ տեսանք՝ վկայում ենք. եւ մեր վկայութիւնը չէք ընդունում: ¹²Եթէ երկրաւոր բաներն ասեցի ձեզ, եւ չէք հաւատում, ապա ի՞նչպէս կ՛հաւատաք, եթէ երկնաւոր բաներն ասեմ: ¹³Եւ ոչ ով վեր չ՛ելաւ երկինքը, եթէ ոչ երկնքից իջնողը՝ մարդի Որդին՝ նա որ երկնքումն է: ¹⁴Եւ ինչպէս Մովսէսն օձը բարձրացրեց անապատումը, այնպէս պէտք է մարդի Որդուն բարձրացուիլ. ¹⁵Որ ամեն նորան հաւատացողը չ՛կորչի, այլ յաւիտենական կեանքն ունենայ:

3:9-10 Նիկողեմոսը պետք է հասկանար Հիսուսի խորհրդանշական տերմինաբանությունը 1) հուդայականության նորադարձի մկրտության և 2) Հովհաննես Մկրտչի քարոզչության լույսի ներքո:

Սա կարող էր լինել մարդկային գիտելիքի նպատակաուղղված նվաստացում: Նույնիսկ Նիկողեմոսը, որը հրեաների իշխան էր, լիովին չէր հասկանում հոգևոր բաները: Հովհաննեսի

Ավետարանը գրվել էր Գնոստիցիզմի դեմ պայքարելու համար, հերետիկոսություն, որը շեշտեց մարդկային գիտելիքը որպես փրկության միջոց: Միայն Հիսուսն է ճշմարիտ լույսը (տես հ.9) բոլորի համար, ոչ թե միայն էլիտար խմբի:

3:11 «ինչ որ գիտենք՝ խօսում ենք» Այս ՀՈԳՆԱԿԻ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ վերաբերում են Հիսուսին և Հովհաննես

Առաքյալին (հմմտ հ. 11), կամ Հիսուսին և Հորը, որը ավելի լավ է համապատասխանում կոնտեքստին (հ.12): Ավետարանը ենթադրություն չի, այլ աստվածային հայտնություն:

▪ **«մեր վկայութիւնը չէք ընդունում»** Հովհաննեսը հաճախ օգտագործում է ընդունել / ստանալ (*lamban*) տերմինները և դրա ՆԱԽԴԻՐՆԵՐԻ միացությունները աստվածաբանական իմաստով:

1. ընդունել Հիսուսին
 - ա. բացասաբար (1:11; 3:32; 5:47)
 - բ. դրական (1:12; 3:11,33; 5:43; 13:20)
2. ընդունել Հոգին
 - ա. բացասաբար (14:17)
 - բ. դրական (7:39)
3. ընդունել Հիսուսի խոսքերը
 - ա. բացասաբար (12:48)
 - բ. դրական (17:8)

Տես Հատուկ Թեմա: Վկայել Հիսուսին 1:8.

3:12 «Եթէ. . . եթէ» Առաջինը ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է, որ ճշմարիտ է հեղինակը տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Երկրորդը՝ ԵՐՐՈՐԴԻ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, որը նշանակում է պոստենցիալ գործողություն:

▪ **«ձեզ»** ԴԵՐԱՆՈՒՆԸ և ԲԱՅԵՐԸ ՀՈԳՆԱԿԻ են: Նիկողեմոսը հնարավոր է եկել էր աշակերտների կամ ուրիշ փարիսեցիների հետ, երբ եկավ Հիսուսի մոտ, կամ սա կարող է ընդհանուր միտք է (այսինքն, Նիկողեմոսը որպես խմբի ներկայացուցիչ) բոլոր անհավատ հրեաների համար, ինչպես հհ. 7 և 11:

3:13 Սա համարը նախատեսված է հաստատելու Հիսուսի Հոր հայտնություն է որպես ճշմարիտ, ամբողջական, անմիջական և եզակի (տես 1: 1-14): Սա ևս մեկ օրինակ է Հովհաննեսի ուղղահայաց դուալիզմի՝ երկինքը և երկիրը, ֆիզիկականը և հոգևորը, Նիկողեմոսի ծագումը և Հիսուսի ծագումը (հմմտ 1:51; 6: 33,38,41,50,51,58,62): Այս համարը պնդում է (1) աստվածությունը, (2) նախագոյությունը և (3) Երրորդության հավիտենական Երկրորդ Անձի մարմնավորումը (Երրորդություն Տես Հատուկ Թեմա 14:26):

▪ **«մարդի Որդին»** Սա է Հիսուսի ինքնորոշումը. Առաջին դարի հուդայականության մեջ չկար ազգայնական, ռազմատենչ, Մեսիական ազդեցություն: Տերմինը գալիս է Եզ. 2: 1 և Սաղ. 8:4, որտեղ դա նշանակում էր «մարդ արարած» իսկ Դան. 7:13 դա ենթադրում էր աստվածությունը: Տերմինը համատեղում է Հիսուսի անձնավորության պարադոքսը՝ 100% Աստված և 100% մարդ (տես 1 Հովհ. 4: 1-3):

3:14-21 Դժվար է հաստատ իմանալ, թե որտեղ է ավարտվում Հիսուսի և Նիկողեմոսի գրույցը, և սկսվում Հիսուսի կամ Հովհաննես Առաքյալի հետագա մեկնաբանությունները: Հնարավոր է, որ

Մինտպոիկ Ավետարանները արձանագրում են Հիսուսի հրապարակային ուսուցողական ծառայությունը, մինչդեռ Հովհաննեսն արձանագրում է Նրա անհատական ուսուցումները Իր աշակերտների հետ: 14-21 համարները կարող են ուրվագծվել հետևյալ կերպ.

1. հհ. 14-15-ը վերաբերում է Հիսուսին
2. հհ. 16-17-ը վերաբերում է Հորը
3. հհ. 18-21-ը վերաբերում է մարդկությանը

Հիշեք, որ Հիսուսը կամ Հովհաննեսը չեն ազդում հայտարարությունների ճշմարտացիության վրա:

3:14 «ինչպես Մովսեսն օձը բարձրացրեց» Սա հղում է Թվոց 21: 4-9, որոնք պատմում են դատաստանի փորձառության մասին Անապատում թափառելու ժամանակ: Կենտրոնական ճշմարտությունն այն է, որ մարդիկ պետք է վստահեն և հնազանդվեն Աստծո խոսքին, նույնիսկ եթե դրանք լիովին չեն հասկանում: Աստված միջոց տվեց, որ իսրայելացիները փրկվեն օձի խայթոցից, եթե միայն հավատան: Այս համոզումնքը վկայում է նրանց հնազանդությունը Նրա խոսքին / խոստմանը (տես Թվոց 21: 8):

▪ **«բարձրացրեց»** Այս հունարեն բառը (հմմտ. 8:28; 12:33,34) հաճախ թարգմանվել է «բարձրացված» (տես Գործք 2:33; 5:31; Փիլ. 2: 9) և կա մեկ ուրիշ տերմին, որը Հովհաննեսն օգտագործում է երկու իմաստով (կրկնակի *entender*, տես 1:5; 3:3,8): Քանի որ Աստված խոստացավ ազատել օձի կծածի մահից նրանց, ովքեր հավատային Աստծո խոսքին և նայեին բրոնզե օձին, այնպես էլ նրանք, ովքեր հավատան Աստծո խոսքին (Քրիստոսի մասին ավետարանին՝ իսաչի վրա բարձրացվածին) և վստահեն Հիսուսին կազատվեն (կփրկվեն): (սատանա, մեղք) չարի խայթոցից (կարդա 12: 31-32):

3:15-18 «ամեն» (հ. 15) «ամեն» (հ. 16) «նա ով» (հ. 18) Աստծո սերը բոլոր մարդկանց համար հրավերք է (հմմտ. Ելից 55:3-3; Եզեկ 18:23,32; Հովհ. 1:29, 3:16, 6: 33,51; II Կորնթ.5:19; I Տիմ. 2: 4, 4:10, Տիտոս 2:11; II Պետրոս 3:9, I Հովհ. 2: 2, 4:14): Փրկության առաջարկը համընդհանուր է, բայց նրան ընդունելը՝ ոչ:

3:15 «հաւատացողը» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Հավատքը շարունակական վստահություն է: Տեսեք ծանուցում 1: 12 և Հատուկ Թեմաներ 1: 7 և 2: 23:

▪ **«նորան»** Սա վերաբերում է ոչ միայն Հիսուսի մասին փաստերին (աստվածաբանական ճշմարտություններին), այլև Նրա հետ ունեցած անձնական հարաբերություններին: Փրկությունը հետևյալն է 1) հավատքի ուղերձ, 2) ընդունող և հնազանդվող անձ և (3) կյանք, որը պետք է այդ մարդը ապրի:

Այստեղ քերականական ձևը անսովոր է: Սա ԴԵՐԱՆՈՒՆ է *en* ՆԱԽԴԻՐԻ հետ, որը գտնվում է միայն այստեղ Հովհաննեսի Ավետարանում; սովորաբար դա *eis* ՆԱԽԴԻՐՆ է: Հնարավոր է, որ այն պետք է կապված լինի «հավիտենական կյանք ունենալու» հետ (տես *The New Testament in Basic English* by Harold Greenlee):

3:15,16 «գալիտենական կեանքն» Այս հունարեն (*zoē*) տերմինը վերաբերում է որակին և քանակին (տես 5:24): Մաթ. 25:46 նույն բառն օգտագործվում է հավիտենական բաժանման համար: Հովհաննեսի Ավետարանում *zoē* (օգտագործվում է 33 անգամ, հիմնականում 5 և 6 գլուխներում) սովորաբար (ֆիզիկական կյանքի համար օգտագործված ԲԱՅՑ, այսինքն, 4: 50,51,53) վերաբերում է հարությանը, վախճանաբանական կյանքին կամ Նոր դարաշրջանի կյանքին, Աստծո կյանքին:

Հովհաննեսը եզակի է Ավետարանների մեջ իր շեշտադրմամբ «հավիտենական կյանքի» վրա: Դա Ավետարանի հիմնական թեման և նպատակն է (տես 3:15, 4.33, 5.38; 6: 54.68, 10.28; 12:25; 17: 2,3)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:16-21

¹⁶Որովհետև Աստուած այնպես սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ. Որ ամեն նորան հաւատացողը չ'կորչի, այլ յաւիտենական կեանքն ունենայ: ¹⁷Որովհետև Աստուած իր Որդին չ'ուղարկեց աշխարհքը, որ աշխարհքին դատէ, այլ որ աշխարհքը նորանով փրկուի: ¹⁸Նորան հաւատացողը չի դատապարտուիլ, իսկ չ'հաւատացողն արդէն դատապարտուած է. Որովհետև չ'հաւատաց Աստուծոյ միածին Որդու անունին: ¹⁹Եւ սա է դատաստանը, որ լոյսն եկաւ աշխարհքը, եւ մարդիկ խաւարն աւելի սիրեցին քան թէ լոյսը, որովհետև նորանց գործերը չար էին: ²⁰Որովհետև ամեն չար գործողը ատում է լոյսին, եւ չէ գալիս դէպի լոյսը, որ նորա գործերը չ'յանդիմանուին: ²¹Իսկ ճշմարտութիւն գործողը գալիս է դէպի լոյսը, որ նորա գործերը յայտնուին, ու Աստուծով գործուեցան:

3:16 «Աստուած այնպէս սիրեց» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾՍԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է (ինչպէս «տվեց» ԲԱՅՇ), որն այստեղ խոսում է անցյալում ավարտված գործի մասին (Աստված ուղարկեց Հիսուսին): 16-17 համարները հիմնականում Հոր սիրո մասին է (հմմտ. I Հովհ. 4: 7-21, մասնավորապէս հհ.9-10): «Սիրեց» *agapa* տերմինն է: Դասական հունարենում շատ բան չի օգտագործվել: Առաջին եկեղեցին վերցրեց այն և լրացրեց այն հատուկ իմաստով: Որոշակի կոնտեքստերում այն վերաբերում է Հոր կամ Որդու սիրուն, սակայն այն բացասական է օգտագործվում մարդու սիրո համար (տես 3:19; 12:43; Ա Հովհ. 2:15): Դա աստվածաբանորեն հոմանիշ է Հին Կտակարանի *hesed* հետ, որը նշանակում է Աստծո ուխտի նվիրվածությունը և սերը: Հովհաննէսի օրերում Կոյնէ հունարենում *agapa* և *phile* տերմինները հիմնականում հոմանիշ են (3:35 համեմատեք 5:20-ի հետ):

Թարգմանիչները պետք է հիշեն, որ Աստծուն նկարագրելու համար օգտագործվող բոլոր բառերը խոսում են մարդկային (անտրոպոմորֆիկ) բառապաշարով: Մենք պետք է օգտագործենք այն բառերը, որոնք նկարագրում են մեր աշխարհը, մեր զգացմունքները, մեր պատմական հեռանկարը, փորձել նկարագրել հավիտենական, սուրբ, եզակի, հոգևոր Էակին (Աստծուն): Բոլոր մարդկային բառապաշարը որոշ չափով նմանատիպ է կամ փոխաբերական: Այն ինչը հայտնվել է, անկասկած ճիշտ է, բայց ոչ վերջնական: Ընկած, ժամանակավոր, սահմանափակ մարդկությունը չի կարող հասկանալ վերջնական իրականությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (ԱՆՏՐՈՊՈՄՈՐՖԻԿ ԼԵԶՈՒ)

- I. Այս տեսակ լեզուն շատ տարածված է Հին Կտակարանում (որոշ օրինակներ)
 - Ա. Ֆիզիկական մարմնի մասեր
 - 1. աչքեր - Ծննդ. 1: 4,31; 6:8; Ելից 33:17; Թվոց 14:14; 2 Օրին. 11:12; Զաք. 4:10
 - 2. ձեռքեր - Ելից 15:17; Թվոց 11:23; 2 Օրին. 2:15
 - 3. թև, բազուկ - Ելից 6:6; 15:16; Թվոց 11:23; 2 Օրին. 4:34; 5:15
 - 4. ականջներ - Թվոց 11:18; I Թագ. 8:21; IV Թագ. 19:16; Սաղ. 5: 1; 10:17; 18: 6
 - 5. դեմք, երես - Ելից 32:30; 33:11; Թվոց 6:25; 2 Օրին. 34:10; Սաղ. 114: 7
 - 6. մատ - Ելից 8:19; 31:18; 2 Օրին. 9:10; Սաղ. 8: 3
 - 7. ձայն - Ծննդ. 3: 8,10; Ելից 15:26; 19:19; 2 Օրին. 26:17; 27:10
 - 8. ոտքեր - Ելից 24:10; Եզեկ. 43: 7
 - 9. մարդկային կերպարանք - Ելից 24:9-11; Սաղ. 47; Ես. 6:1; Եզեկ. 1:26
 - 10. Տիրոջ հրեշտակը (Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31: 11,13; 48:15-16; Ելից 3: 4,13-21;
 - Բ. Ֆիզիկական գործողություններ
 - 1. խոսելով որպես ստեղծագործության մեխանիզմ - Ծննդ. 1: 3,6,9,11,14,20,24,26
 - 2. Եղեմում քայլելը (այսինքն, ձայնը) - Ծննդ. 3: 8; 18:33; Ամբ. 3:15
 - 3. Նոյան տապանի դուռը փակելը - Ծննդ. 7:16
 - 4. զոհերը հոտոտելը - Ծննդ. 8:21; Ղևտ. 26:31; Ամովս 5:21

5.	ներքև իջնելը - Ծննդ. 11:5; 18:21; Ելից 3: 8; 19: 11,18,20
6.	Մովսեսին թաղելը - 2 Օր. 34:6
Գ.	Մարդկային զգացմունքներ (որոշ օրինակներ)
1.	զոջալ / ապաշխարել - Ծննդ. 6: 6,7; Ելից 32:14; Դատ. 2:18; I Թագ. 15: 29,35;
2.	զայրույթ - Ելից 4:14; 15:7; Թվոց 11:10; 12:9; 22:22; 25: 3,4; 32: 10,13,14; 2 Օրին.
3.	նախանձ - Ելից 20:5; 34:14; 2 Օրին. 4:24; 5:9; 6:15; 32: 16,21; Հեսու 24:19
4.	ատել / զզվել - Ղև. 20:23; 26:30; 2 Օրին. 32:19
Դ.	Ընտանեկան տերմիններ (որոշ օրինակներ)
1.	Հայր
ա.	Իսրայելի - Ելից 4:22; 2 Օրին. 14:1; 39: 5
բ.	թագավորի - II Թագ. 7: 11-16; Սաղ. 2: 7
գ.	հայրական գործողությունների փոխաբերություններ - 2 Օրին. 1:31; 8:5;
2.	Ծնող - Ովսեե 11:1-4
3.	Մայր - Սաղ. 27:10 (կերակրող մոր նման); Ես. 49:15; 66: 9-13
4.	Երիտասարդ հավատարիմ սիրեկան- Ովսեե 1-3
II.	Այս տեսակ լեզվի օգտագործման պատճառները
Ա.	Անհրաժեշտ է Աստծուն բացահայտել իրեն մարդկանց: Աստծո մասին շատ
Բ.	Աստված վերցնում է մարդկային կյանքի առավել իմաստալից կողմերը և դրանք
Գ.	Չնայած անհրաժեշտ է, Աստված չի ուզում սահմանափակվել որևէ ֆիզիկական
Դ.	Վերջնական անտրոպոմորֆիզմը Հիսուսի մարմնացումն է: Աստված դարձավ

▪ **«այնպես»** Սա բառացիորեն «այնպիսի ձևով» է (այսինքն, 7:46, 11:48, 18:22): Այն արտահայտում է ոչ թե զգացմունք, այլ մեթոդ: Աստված ցույց տվեց Իր սերը (կարդա Հռ. 5: 8), տալով (հ.16) և ուղարկելով (հ.17, երկուսն էլ ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են), Իր Որդուն՝ մեռնելու մարդկության համար (տես Ես.53; Հռ.3:25, II Կորնթ., 5:21, I Հովհ. 2: 2):

▪ **«աշխարհքը»** Հովհաննեսն օգտագործեց այս հունարեն *kosmos* տերմինը մի քանի իմաստներով (տես ծանուցում 1:10 և Հատուկ Թեմա 13: 1):
 Այս համարը նաև հերքեց գնոստիկ դուալիզմը հոգու (Աստծո) և նյութի միջև: Հույները հակված էին չարիքը նյութին վերագրել: Նրանց համար նյութը (այսինքն՝ մարդկային մարմինը) բոլոր մարդկանց մեջ աստվածային օջախի բանտն է: Հովհաննեսը չի ընդունում նյութը կամ մարմնը որպես չարիք: Աստված սիրում է աշխարհը (մոլորակը, տես Հռ.8: 18-22) և մարդկանց (մարմինը, հմմտ. Հռ. 8:23): Սա կարող է լինել մեկ այլ կանխամտածված երկիմաստություն (կրկնակի *entender*), որը հատուկ է Հովհաննեսին (տես 1: 5, 3: 3,8):

▪ **«միաձին Որդին»** Սա նշանակում է «եզակի, մի տեսակի, յուրահատուկ»: Դա չպետք է ընկալվի որպես «միակ ծնվածը» (1) սեռական իմաստով կամ 2) այն իմաստով, որ այլ երեխաներ չկան: Պարզապես չկան Հիսուսի պես երեխաներ: Տես ամբողջական ծանուցումը 1: 14:

▪ **«ամեն նորան հաստացողը»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը շեշտում է նախնական և շարունակական հավատքը: Տես Հատուկ Թեմա 1:14 և 2:23: Այս հաստատումը կրկնվում է հ. 15-ից շեշտադրման համար: Ծնորհակալություն Աստծուն «ով որ»-ի համար: Սա պետք է հավասարակշռի ցանկացած չափազանցություն հատուկ խմբի վրա (ռասայական, մտավոր կամ աստվածաբանական): Այն չէ, որ «Աստծո ինքնիշխանությունը» և «մարդկային ազատ կամքը» փոխադարձ բացառիկ են; նրանք երկուսն էլ ճիշտ են: Աստված միշտ նախաձեռնում է արձագանքը և սահմանում օրակարգ (տես 6:44,65), սակայն Նա իր հարաբերությունները կառուցել է մարդկանց

հետ ուխտի միջոցով: Նրանք պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել Նրա առաջարկին և պայմաններին: *Phile*

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ (ԿԱԼՎԻՆԻԶՄ) ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏ ԿԱՄՔ (ԱՐՄԻՆԻԱՆԻԶՄ)

Տիտոս 2:11 հավասարակշռում է ընտրության մասին ՆԿ ուրիշ հատվածները: Ես կարծում եմ, որ աստվածաբանորեն օգտակար կլինի գետեղել իմ մեկնաբանական նյութերը Հռոմեացիս 8:29 և 9, ինչպես նաև Եփեսացիս 1:

I. Հռոմեացիս 8:29-Պողոսն օգտագործում է «կանխագիտություն» (*proginōskō*, «նախապես իմանալ») երկու անգամ, այստեղ և 11:2-ում: 11:2-ում այն վերաբերում է Իսրայելի հանդեպ ունեցած Աստծո սիրուն, որն Աստված ուներ ժամանակներից առաջ: Հիշեք, որ «ճանաչել, իմանալ» տերմինը երբայերեւում կապված էր ինտիմ, մտերմիկ, անձնական հարաբերությանը, և ոչ թե ինչ որ մեկի մասին փաստեր ունենալուն (հմմտ. Ծննդ. 4:1; Եր. 1:5): Այստեղ պատկերված են իրար կապակցված մի շարք իրադարձություններ (հմմտ. Հն.8:29-30): Այս տերմինը կապված է նախասահմանության հետ: Ինչևէ, պետք է հստակ սահմանել, որ Աստծո կանխագիտությունը ընտրության հիմքը չէ, եթե դա այդպես լիներ, ապա ընտրությունը կհիմնվեր ապագայում մեղավոր մարդկության արձագանքի վրա, որը կնշանակեր, որ ընտրությունը կախված է մարդու գործերից ու վարքից: Այս տերմինը նաև հանդիպում է Գործք 26:5; I Պետ. 1:2,20 և II Պետ. 3:17:

Ա. «կանխագիտություն» (*proginōskō*, «նախապես իմանալ») Երկու տերմիններն էլ «կանխագիտություն» (*proginōskō*) կամ «նախասահմանություն» (*proorizō*) բարդ բառեր են, կազմված «առաջուց, մինչև, նախօրոք» (*pro*) նախդիրից և ուստի պետք է թարգմանվի «իմանալ նախապես», «նախապես սահման դնել» կամ «նախապես չափել»: Նոր Կտակարանում նախասահմանության մասին որոշ չափով հստակ հատվածներն են Հն. 8:28-30; Եփ. 1:3-14 և Հն. 9: Այս տեքստերը միանշանակ ընդգծում են Աստծո գերիշխանությունը: Նա է ամեն բանի լիիրավ հսկողը, ներառյալ մարդու պատմությունը: Գոյություն ունի աստվածային փրկության ծրագիր, որը իրականանում է ժամանակի մեջ: Ինչևէ, այս ծրագիրը պատահական կամ ընտրողական չէ: Այն հիմնված է ոչ միայն Աստծո գերիշխանության և կանխագիտության վրա, այլ Նրա անփոփոխ կերպարի, որի մեջ մտնում է սերը, ողորմությունը և անարժան շնորհքը:

Մենք պետք է գգույշ լինենք մեր արևմտյան (ամերիկյան) ինդիվիդուալիզմ/անհատապաշտություն կամ մեր ավետարանչական նախաձավորության համար, չգունավորելու համար այս ճշմարտությունը: Մենք նաև պետք է հսկենք այն, որ չհայտնվենք պատմական աստվածաբանական կոնֆլիկտի մեջ Օգոստինոսի և Պելագիոսի կամ կալվինիզմի և արմինիականության միջև:

Բ. «նախասահմանված» (*proorizō*, «սահմաններ սահմանելուց առաջ») Նախասահմանությունը մի վարդապետություն չէ, որը նշանակում է սահմանափակել Աստծո սերը, շնորհքն ու ողորմությունը, և ոչ էլ դուրս մղել որոշ բաներ ավետարանից: Նրա նշանակությունը ամրապնդում է հավատացյալներին՝ շարունակելով ձևավորել նրանց աշխարհայացքը: Աստված բոլոր մարդկանց համար է (հմմտ. I Տիմ. 2:4; II Պետ. 3:9): Աստված է հսկում ամեն բան: Ո՞վ կամ ի՞նչը կարող է մեզ բաժանել Նրանից (հմմտ. Հն. 8:31-39): Նախասահմանությունը ձևավորում է երկու կերպերից մեկ կյանքին նայելու համար: Աստված նայում է ամբողջ պատմությանը որպես ներկայում կատարվող գործողություն: Մարդիկ սահմանափակ են ժամանակի մեջ: Մեր հեռանկարային և մտային կարողությունները սահմանափակ են: Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև չկա հակասություն: Սա ուխտի յուրահատկությունն է, այսպես է կառուցված այն: Եվ սա մեկ ուրիշ օրինակ է այն բանի, որ աստվածաշնչյան ճշմարտությունը տրվում է ներքին դիալեկտիկական հակասությունով: Աստվածաշնչյան վարդապետությունները սովորաբար ներկայացվում են տարբեր տեսանկյուններից: Նրանք հաճախ թվում են պարադոքսալիկ: Ճշմարտությունը հավասարակշռություն է թվացյալ հակառակ գույգերի միջև: Մենք չպետք է դիտավորյալ հեռացնենք այդ լարվածությունը, ընտրելով երկուսից միայն մեկը: Մենք նաև չպետք է մեկուսացնենք որևէ աստվածաշնչյան ճշմարտություն միայն իր սեփական սահմաններով և մտքերով:

Կարևոր է նաև ավելացնել, որ ընտրության նպատակը ոչ միայն երկինքն է մեր մահից հետո, այլ քրիստոսանմանությունը հիմա ներկայում (հմմտ. Հռ.8:29; Եփ. 1:4; 2:10): Մենք ընտրվել ենք «սուրբ և անարատ» լինելու համար: Աստված գերադասում է մեզ փոխել այնպես, որ ուրիշները կարողանան տեսնել այդ փոփոխությունները և Քրիստոսի հավատքով արձագանքեն Աստծո կանչին: Նախասահմանությունը անձնական առանձնաշնորհում չէ, այլ պատասխանատվություն ուխտի համաձայն: Սա հատվածի գլխավոր ճշմարտությունն է: Սա է քրիստոնեության նպատակը: Սրբությունը Աստծո կամքն է բոլոր հավատացյալների համար: Աստծո ընտրությունը դա քրիստոսանման լինելն է (հմմտ. Եփ. 1:4), և ոչ թե հատուկ դիրք: Աստծո պատկերը, որը տրվել է մարդուն արարչագործության ժամանակ, (հմմտ. Ծննդ. 1:26; 5:1,3; 9:6) պետք է վերականգնվի:

Գ. «Կերպարանակից անել Իր Որդու պատկերին»- Աստծո գերագույն նպատակը մեղքի պատճառով կորած կերպարի վերականգնումն է: Հավատացյալները պետք է քրիստոսանման լինեն (հմմտ. Եփ. 1:4):

II. Հռոմեացիս 9

Ա. Հռոմեացիս 9-ը Նոր Կտակարանի ամենաուժեղ հատվածներից մեկն է Աստծո սուվերենության մասին (այն է, ուրիշ էակ, Եփ. 1:3-14) մինչ գլուխ 10-ը հստակ և շարունակաբար ընդգծում է մարդու ազատ կամքը (հմմտ. «յուրաքանչյուրը» հ. 4; «ով որ» հհ. 11,13; «բոլորը» հ. 12 {երկու անգամ}): Պողոսը երբեք չի փորձում հաշտեցնել այս աստվածաբանական լարվածությունը: Նրանք երկուսն էլ ճշմարտություն են: Աստվածաշնչյան վարդապետություններից շատերը ներկայացված են պարադոքսալ կամ դիալեկտիկական գույգերով: Աստվածաբանության համակարգերից շատերը տրամաբանական են, բայց ունեն հակում ապացուցելու տեքստը աստվածաշնչի ճշմարտության միայն մեկ տարրը: Ինչպես Օգոստինոսիանիզմը և կալվինիզմը, նմանապես կիսա-պեդագոգանիզմն ու արմինիանիզմը ունեն ճշմարտության տարրեր և սխալներ: Վարդապետությունների միջև գոյություն ունեցող աստվածաշնչյան լարվածությունը գերադասելի է նայել հիմնավորված տեքստին դոգմատիկ, ռացիոնալ, աստվածաբանական համակարգը, որը Աստվածաշունչը դնում է որոշակի մեկնաբանական սահմանների մեջ:

Բ. Այս նույն ճշմարտությունը հաստատված է Հռ. 8:29-30 և Եփ.1:4,11: Այս գլուխը Նոր Կտակարանում Աստծո գերիշխանության ամենաուժեղ արտահայտությունն է: Այն որ Աստված պատասխանատու է Իր ամբողջ արարչագործության և դրա փրկագնման համար չի կարող վեճի առարկա լինել: Այս մեծ ճշմարտությունը երբեք չպետք է փոքրացնել և ոչ էլ կողքով անցնել: Ինչևէ, պետք է հավասարակշռությունը պահվի ուխտի Աստծո ընտրության որպես միջոց մարդ արարածի հետ հաղորդակցության, Իր պատկերով ստեղծված. Անշուշտ ճիշտ է, որ որոշ հինկտակարանային ուխտեր, ինչպես Ծննդ.15, անպայմանական են և ընդհանրապես կախված չեն մարդու արձագանքից, բայց մյուս ուխտերը պայմանական են՝ կախված մարդու արձագանքից (օր. Եդեմ, Նոյ, Մովսես, Գավթի): Աստված Իր ստեղծագործության համար ունի փրկության ծրագիր և ոչ մի մարդ չի կարող ազդել այս ծրագրի վրա: Աստծո կամքով որոշ անհատներ մասնակցում են Իր ծրագրերի իրականացմանը: Մասնակցության այս հնարավորության մեջ կա աստվածաբանական ճնշում գերիշխանության (Հռ. 9) և մարդու ազատ կամքի միջև (Հռ. 10):

Ճիշտ չէ վերցնել աստվածաշնչյան մեկ համար և անտեսել մյուսները: Վարդապետությունների միջև կա լարվածություն, որովհետև արևելյան մտածելակերպ ունեցող մարդիկ ճշմարտությունը ներկայացնում են դիալեկտիկական կամ լարվածությամբ լցված գույգեր: Ցանկացած վարդապետություն պետք է փոխկապակցված լինի մյուս վարդապետությունների հետ: Ճշմարտությունը դա ճշմարտությունների մոզայկա է:

III. Եփեսացիս 1

Ա. Ընտրությունը հիանալի վրադապետություն է: Բայց ընտրությունը դա ֆավորիտ/սիրելի լինելը չէ, այլ որ հավատացյալը լինի ճանապարհ, գործիք կամ միջոց, որը կնպաստի ուրիշների փրկությանը: Հին Կտակարանում տերմինը հիմնականում օգտագործվում էր ծառայության համար; Նոր Կտակարանում այն հիմնականում օգտագործվում է փրկության համար, որին հաջորդում է ծառայությունը: Աստվածաշունչը երբեք չի հաշտեցնում թվացյալ կոնֆլիկտը Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև, բայց հաստատում է երկուսն էլ: Աստվածաշնչյան լարվածության լավ օրինակ կարող է լինել Հռ. 9-ը Աստծո գերիշխան ընտրության վերաբերյալ և Հռ. 10-ը մարդու անհրաժեշտ արձագանքի մասին

(հմմտ. 10:11,13):

Այս աստվածաբանական լարվածության բանալին կարելի է գտնել Եփ. 1:4: Հիսուսը Աստծո ընտրյալ Մարդն է և բոլոր մարդիկ ըստ հնարավորին ընտրված են Նրանում (Կարլ Բարտ): Հիսուսն Աստծո «այո»-ն է՝ ուղղված մեղավոր մարդու կարիքին (Կարլ Բարտ): Եփեսացիս 1:4 օգնում է հստակեցնել այս վիճելի հարցը, պնդելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (քրիստոսանմանություն): Ավետարանում մեզ հաճախ գրավում է հավատացյալի շահն ու արտոնությունը, բայց մենք հակված ենք անտեսելու մեր պատասխանատվությունները: Աստծու կանչը (ընտրություն) թե երկրային կյանքի համար է, և թե հավիտենականության:

Աստվածաշնչյան վարդապետություններն ունեն սերտ համագործակցություն միմյանց հետ, և նրանցից ոչ մեկը անհատապես և անկախ հանդես չի գալիս: Ինչպես օրինակ համաստեղությունը և մեկ առանձին աստղը: Աստված ներկայացնում է Իր ճշմարտությունները արևելյան ժանրով և ոչ թե արևմտյան: Եվ մենք չպետք է հեռացնենք լարվածությունը, որ կան որոշ վարդապետական ճշմարտությունների մեջ, որ ակնհայտ գոյություն ունեն երկու դիալեկտիկական (պարադոքսալ) կողմերում. (Աստծո գերազանցությունը և Աստծո ներունակությունը; Հավատացյալների ապահովությունը և համբերատարության կարիքը; Հիսուսը հավասար է Հորը և Հիսուսը ենթարկվում է Հորը; Քրիստոնեական ազատություն և քրիստոնեական պատասխանատվությունը ուխտի գործընկերոջը և այլն):

«Ուխտ»-ի աստվածաբանական հասկացողությունը միավորում է Աստծո գերիշխանությունը (Ով միշտ նախաձեռնում և կանոններ է հաստատում) պարտադիր նախասկզբնական և շարունակական ապաշխարությունը և հավատքի արձագանքը մարդկանց կողմից: Չգուշացեք փնտրելուց հաստատող տեքստ պարադոքսի միայն մեկ կողմը և նվազեցնել մյուսի իմաստը: Չգուշացեք հաստատելու միայն ձեր սիրելի վարդապետությունը կամ աստվածաբանական համակարգը:

Բ. «Նա մեզ ընտրեց» Եփ. 1:4 ԱՕՐԻՍՏ ՉԵՁՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը շեշտում է ԵՆԹԱԿԱՆ: Սա կենտրոնանում է ժամանակներից առաջ Հոր ընտրության վրա: Աստծո ընտրությունը չպետք է ընկալվի դետերմինիզմի իսլամական իմաստով, ոչ էլ ծայրահեղ կալվինիստական իմաստով, ինչպես որոշները հակառակվում են մյուսներին, բայց վավերական իմաստով: Աստված խոստացավ փրկել մեղավոր մարդկությանը (հմմտ. Ծննդ.3:15): Աստված կանչեց և ընտրեց Աբրահամին՝ բոլոր մարդկանց ընտրելու համար (տես Ծննդ. 12:3; Ելից 19:5-6): Աստված Ինքը ընտրեց բոլոր մարդկանց, ովքեր կհավատան Քրիստոսին: Աստված միշտ առաջինն է նախաձեռնում փրկությունը (տես Հովհ. 6:44,65): Այս տեքստը և Հռոմեացիս 9 աստվածաշնչյան հիմք են նախասահմանության վարդապետության համար, ընդգծված Օգոստինոսի և Կալվինի կողմից:

Աստված ընտրեց հավատացյալներին ոչ միայն փրկելու (արդարացում), այլ նաև սրբացման համար (հմմտ. Կող. 1:12): Սա կարող է վերաբերել (1) մեր դիրքորոշումը Քրիստոսում (II Կորն.5:21) կամ 2) Աստծո ցանկությունը վերաբարձրել Իր կերպարը Իր զավակների մեջ (տես 2:10; Հռ.8:28-29; Գաղ.4:19): Աստծո կամքը Իր զավակների համար հետևյալն է՝ մի օր նրանց տեսնել երկնքում և քրիստոսանման լինել ներկայում:

«Նրանում» բանալի գաղափար է Եփ. 1:4-ում: Հոր օրհնությունները, շնորհքը և փրկությունը հորդում են Քրիստոսի միջոցով (տես Հովհ.14:6): Ուշադրություն դարձրեք այս քերականական ձևի կրկնողությանը (ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՒՆՎ ՏԵՂԻ ՊԱՐԱԳԱ) հ.3, «Քրիստոսում» հ.4, «Նրանում» հ.7, «Նրանում» հ.9, «Նրանում» հ.10, «Քրիստոսում», «Նրանում» հ.12, «Քրիստոսում» և հ.13 «Նրանում» (երկու անգամ): Հիսուսն Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկությանը (Կարլ Բարտ): Հիսուսն ընտրյալ է և բոլոր մարդիկ պոտենցիալ կերպով ընտրվում են Քրիստոսի միջոցով:

«Նախքան աշխարհի ստեղծվելը» արտահայտությունը նաև օգտագործվում է Մաթ.25:34; Հովհ. 17:24; I Պետ.1:19-20 և Հայտ. 13:8: Այն ցույց է տալիս Երրորդության փրկագնման գործունեությունը նույնիսկ մինչև Ծննդ.1:1: Մարդիկ սահմանափակ են իրենց ժամանակի զգացողությունով; ամեն ինչ մեզ համար անցյալ, ներկա և ապագա է, բայց ոչ Աստծո համար:

Նախասահմանության նպատակը սրբությունն է, ոչ թե արտոնությունը: Աստծո կանչը

Աղամի մի քանի զավակներին ընտրելը չէ, այլ բոլորին: Այդ կանչը այն է, ինչ Աստված նախատեսեց մարդկությանը լինելու Իր նման (տես I Թես.5:23; II Թես. 2:13); Իր կերպարին (տես Ծննդ. 1:26-27): Սուրբ կյանքի փոխարեն նախասահմանությունը դարձնել աստվածաբանական դավանանք դա ողբերգություն է: Հաճախ մեր աստվածաբանությունները ավելի բարձր են խոսում քան աստվածաշնչյան տեքստը:

«Անբիծ, անարատ» (*amōmos*) կամ «արատ չունենալ» տերմինը օգտագործվում է (1) Հիսուսի (տես Եբր. 9:14; I Պետ. 1:19); (2) Ջաքարիայի և Եղիսաբեթի (հմմտ. Դուկ. 1:6); (3) Պողոսի (տես Փիլ. 3:6); և (4) բոլոր ճշմարիտ քրիստոնյաների համար (տես Փիլ. 2:15; I Թես. 3:13; 5:23): Աստծո անփոխարինելի կամքը յուրաքանչյուր քրիստոնյայի համար ոչ միայն սպասվող երկինքն է, բայց ներկայում քրիստոսանման լինելը (տես Հռ. 8:29-30; Գաղ. 4:19; I Պետ. 1:2): Հավատացյալները պետք է արտացոլեն Աստծո առանձնահատկությունները մեղավոր, ընկած աշխարհին ավետարանչության նպատակով:

Քերականորեն «սիրով» արտահայտությունը այս համարում կարող է խոսել հ.4 կամ հ.5-ի հետ: Ինչևէ, երբ այս արտահայտությունն օգտագործվում է ուրիշ տեղ Եփեսացի թղթում, այն միշտ վերաբերում է Աստծո հանդեպ ունեցած մարդու սիրուն (տես 3:17; 4:2,15,16):

Գ. Եփեսացի 1:5 «Նա նախասահմանեց մեզ» արտահայտությունը ԱՕՐԻՍՍ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սա հունարեն «նախքան» և «նշան անել» բարդ տերմին է: Այն վերաբերվում է Աստծո նախասահմանած փրկարար ծրագրին (տես Դուկ. 22:22; Գործք 2:23; 17:31; Հռ.8:29-30): Նախասահմանությունը մարդկության փրկության հետ կապված մի քանի ճշմարտություններից մեկն է: Դա աստվածաբանական օրինակի կամ հարակից ճշմարտությունների շարք է: Սա երբեք չի կարելի ընդգծել առանձին: Աստվածաշնչյան ճշմարտությանը տրվել են մի շարք լարվածությամբ լի, պարադոքսալ գույգեր: Հարանվանությունը հակված է եղել վերացնել աստվածաշնչյան լարվածությունը՝ ընդգծելով միայն դիալեկտիկական ճշմարտություններից մեկը (նախասահմանությունը և մարդու ազատ կամքը; Հավատացյալների ապահովությունը և սուրբերի համբերատարության կարիքը; աղամական մեղքը և կամավոր մեղքը; անմեղությունը և քիչ մեղանշելը; անմիջապես հռչակված սրբացումը և պրոգրեսիվ սրբացումը; հավատքը և գործերը; քրիստոնյայի ազատությունը և քրիստոնյայի պատասխանատվությունը; տրանսցենդենտը և ներհատկությունը):

Աստծո ընտրությունը հիմնված չէ մարդու կանխատեսության վրա, այլ Նրա շնորհալի, ողորմած կերպարի վրա (հմմտ. հհ. 9 և 11): Նա ցանկանում է, որ բոլորը (ոչ միայն որոշ հատուկ մարդիկ, ինչպիսիք են գնոստիկները կամ ժամանակակից ծայրահեղ կալվինիստները) փրկվեն (տես Եզ. 18:21-23,32; Հովհ.3:16-17; Ա Տիմ.2:4; 4:10; Տիտոս 2:11; II Պետ. 3:9): Աստծո շնորհքը (Աստծո կերպարը) այս հատվածի աստվածաբանական բանալին է (հմմտ. հհ.6,7,9), ինչպես Աստծո ողորմությունն է նախասահմանության այլ հատվածի բանալին, Հռ. 9-11:

Մեղավոր մարդկության միակ հույսը Աստծո շնորհքն ու ողորմությունն է (հմմտ.Ես.53:6 և մի քանի ուրիշ հինկտակարանյան մեջբերումներ Հռ. 3:9-18):

Այս առաջին աստվածաբանական գլուխները մեկնաբանելու համար կարևոր է հասկանալ, որ Պողոսը շեշտում է այն բաները, որոնք ամբողջովին կախված չեն մարդուց՝ նախասահմանություն (գլուխ 1), շնորհք (գլուխ 2), և փրկության Աստծո հավիտենական ծրագիրը խորհուրդ 2:11-3:13): Սա կեղծ ուսուցիչների հակակշռող շեշտադրումն է մարդկային արժանիքների և հայարտության վրա:

▪ «Ն'կորչի» Ենթադրվում է, որ ոմանք կկորչեն (ԱՕՐԻՍՍ ՉԵԶՈՔ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ): Նրանց կորուստը (*amollumi*, ԱՕՐԻՍՍ ՉԵԶՈՔ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ) անմիջականորեն կապված է Հիսուսի հանդեպ հավատքի պակասության հետ (տես 11:25): Աստված չի առաջացնում, չի ուղղում կամ չի բերում նրանց անհավատությունը (տես Եզ.18:23,32; I Տիմ.2: 4; II Պետ. 3:9):

Շատերը փորձել են այս տերմինը բառացիորեն ընկալել և այդպիսով ենթադրել չարերի ոչնչացումը: Դա հակասում է Դան. 12: 2 և Մատթ. 25:46: Սա անկեղծ հավատացյալների լավ օրինակ է արևելյան իիստ պատկերավոր գրականությունը հարկադրաբար մտցնել արևմտյան մեկնաբանական ֆորմատի մեջ (բառացի և տրամաբանական): Այս տերմինի լավ քննարկման համար տես Robert B. Girdlestone's *Synonyms of the Old Testament*, էջ 275-277: Տես Հատուկ Թեմա: Ոչնչացում, կործանում (*apolummi*) 10:10:

Կրկին ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Հովհաննեսը մտածում և գրում երկակի կատեգորիաներում (այսինքն, կորչել և հավիտենական կյանք): Հիսուսի ուսմունքների բառապաշարն ու աստվածաբանական կառուցվածքը շատ տարբեր են Սինոպտիկ Ավետարանների և Հովհաննեսի միջև: Ջարմանայի է, թե որքան ազատություն ունեին (աստվածային առաջնորդությամբ, այսինքն, ներշնչանք) Ավետարանի գրողները նախապատրաստելով ավետարանչական պրեզենտացիայի մեջ Հիսուսին իրենց ընտրած հանդիսատեսին: Տես Gordon Fee և Douglas Stuart, *How To Read The Bible For All Its Worth*, էջ 127-148:

3:17 «աշխարհքին դատե» Հովհաննեսի Ավետարանում կան մի քանի հատվածներ, որոնք պնդում են, որ Հիսուսը եկավ որպես Փրկիչ, ոչ թե Դատավոր (տես 3: 17-21, 8:15, 12:47): Մակայն Հովհաննեսի Ավետարանում այլ հատվածներ կան, որոնք պնդում են, որ Հիսուսը եկավ դատելու, կդատի (տես 5: 22-23, 27; 9:39, ինչպես նաև ՆԿ մյուս հատվածները, Գործք 10:42; 17:31; II Տիմոթ. 4: 1; I Պետ. 4: 5):

Որոշ աստվածաբանական մեկնաբանություններ հերթականությամբ

1. Աստված դատավճիռ կայացրեց Հիսուսի հանդեպ, ինչպես Նա արարեց ստեղծագործության և փրկագնման հետ որպես պատվի նշան (տես 5:23)
2. Հիսուսը առաջին անգամ չեկավ դատելու, այլ փրկելու համար (տես 3:17), բայց այն, որ մարդիկ մերժում են Իրեն, նրանք դատում են իրենք իրենց
3. Հիսուսը կվերադառնա որպես Թագավորների Թագավոր և Դատավոր (տես 9:39)

3:18 Այս համարը կրկնում է Քրիստոսի միջոցով ձրի փրկության թեման ընդդեմ ինքնակամ դատաստանի: Աստված մարդուն չի ուղարկում դժոխք: Նրանք իրենք են իրենց ուղարկում: Հավատքն ունի շարունակական արդյունքներ («հավատալով», ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) և նաև անհավատությունը («դատապարտված», ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ և «չի հավատացել», ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ): Տես Հատուկ Թեմա 2:23 և 9: 7:

3:19-21 «մարդիկ խաւարն աւելի սիրեցին քան թէ լոյսը» Շատ մարդիկ, ովքեր լսել են ավետարանը ու մերժել այն, ոչ թե մտավոր կամ մշակութային պատճառներով, այլ առաջին հերթին բարոյականության համար (տես Հոբ 24:13): Լույսը վերաբերում է Քրիստոսին (տես 1:9; 8:12; 9:5; 12:46) և Նրա պատգամին՝ Աստծո սիրո, մարդկության կարիքի, Քրիստոսի կատարած գործի և անհրաժեշտ արձագանքի մասին: Սա 1: 1-18-ից սկսած կրկնվող շարժառիթ է:

3:19 «սա է դատաստանը» Դատաստանը, ինչպես փրկությունը, և ներկա իրողությունն է (տես 3:19; 9:39) և գալիք վախճան (տես 5: 27-29; 12: 31,48): Հավատացյալներն ապրում են արդեն իսկ (իրականացված վախճանաբանություն) և բայց ոչ դեռ (ավարտված վախճանաբանություն) ժամանակաշրջանում: Քրիստոնեական կյանքը ուրախություն է և սարսափելի պայքար: Դա հաղթանակ է մի շարք պարտություններից հետո, հավաստիացում, բայց և հաստատականության մասին մի շարք նախազգուշացումներ:

3:21 «ճշմարտություն գործողը» Քանի որ «Լույսը» (տես հհ.19, 20[երկու անգամ], 21), ակնհայտ հղում է Հիսուսի մասին, հնարավոր է, որ «ճշմարտությունը» նույնպես մեծատառով լինի: Robert Hanna *A Grammatical Aid to the Greek New Testament* մեջբերում է N. Turner *Grammatical Insights into the New Testament*, որը թարգմանում է այն որպես «մարդ, որը ճշմարտության աշակերտ է» (էջ 144):

Աստվածաբանորեն այս համարը արտահայտում է նույն ճշմարտությունը, ինչպես Մատթ.7: Հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկանիշներ: Մարդը չի կարող իսկապես հանդիպել Աստծուն Քրիստոսում, լցվել Սուրբ Հոգով և մնալ նույնը: Սերմնացանի առակը կենտրոնանում է պտուղ բերելու վրա, ոչ թե բողբոջելու (տես Մատթ. 13; Մարկ. 4; Դուկ. 8. Նաև Հովհաննեսի

քննարկումները 15:1-11): Աշխատողները չեն վաստակում փրկությունը, այլ նրանք դրա վառ ապացույցն են (տես Եփ. 2: 8-9, 10):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ի՞նչ է նշանակում «նորից ծնվել, վերստին ծնունդ» արտահայտությունը:
2. Ի՞նչ եք կարծում, 5-րդ համարի «ջուրը» ինչին է վերաբերում և ինչու:
3. Հովհ. 3:16-ը մարդկության հանդեպ Հոր սիրո մասին թե՞ Հիսուսի:
4. Ինչպե՞ս է Կալվինիզմը կապվում Հովհ. 3:16:
5. Արդյո՞ք «կործանում» նշանակում է ոչնչացում:
6. Սահմանել «լույսը»:

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՈՄԲՈՒՆՆԵՐԸ 22-36 ՀԱՄԱՐՆԵՐԻ

Ա. Հովհաննեսն ընդգծում է Հիսուս Քրիստոսի ամբողջական աստվածության մասին, որը փոխանցվում է Ավետարանի հենց սկզբից՝ երկխոսության և անձնական հանդիպումների միջոցով: Այս գլուխը շարունակում է այդ ձևաչափը:

Բ. Հովհաննեսը, գրելով իր Ավետարանը առաջին դարի վերջում, առնչվում է այն հարցերի, որոնք զարգացել էին Մինոպոլիս Ավետարանները գրվելիս: Նրանցից մեկը գործ ունի մեծ ընթացիկ և ակնհայտ վաղ հերետիկոսության հետ, կապված Հովհաննես Մկրտչի հետ (տես Գործք 18: 24-19: 7): Հատկանշական է, որ 1: 6-8, 19-36 և 3: 22-36 Հովհաննես Մկրտիչը հաստատում է Հիսուս Լազովրեցու հետ ունեցած իր հարաբերությունները և պնդում է Հիսուսի Մեսիական դերը:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:22-24
²²Սորանից յետոյ եկաւ Յիսուսը եւ նորա աշակերտները Հրէաստանի երկիրը. Եւ այնտեղ նորանց հետ մնում եւ մկրտում էր: ²³Եւ Յովհաննէսն էլ Այննոնումն էր մկրտում՝ Սաղեմի մօտ. Որովհետեւ այնտեղ շատ ջուր կար. Եւ գալիս էին եւ մկրտվում էին: ²⁴Որովհետեւ Յովհաննէսը դեռ բանտի մէջ չէր գցուած:

3:22 «եկաւ... Հրէաստանի երկիրը» Այս վաղ ծառայությունը, ինչպես Հրէաստանում, այնպես էլ Գալիլեայում, չի քննարկվում Մինոպոլիս Ավետարաններում: Ավետարանները Քրիստոսի ժամանակագրական կենսագրականը չեն: Տես Gordon Fee and Douglas Stuart, *How to Read the Bible For All Its Worth*, էջ 127-148:

- **«նորանց հետ մնում»** Հիսուսը քարոզեց բազմությանը, բայց շատ ընդհանրություններով շփվեց իր աշակերտների հետ: Նա Ինքն Իրեն թափեց նրան առաջ: Այս մեթոդաբանությունը երկու հրաշալի գրքերի ուշադրության կենտրոնում է Robert E. Coleman, *The Master Plan of Evangelism* և *The Master Plan of Discipleship*, որոնցից երկուսն ընդգծում են Հիսուսի անձնական ներգրավվածությունը փոքր խմբի հետ:

- **«եւ մկրտում էր»** Մենք սովորում ենք 4: 2-ից, որ Հիսուսը ինքը չի մկրտել, այլ Իր աշակերտները: Հիսուսի ուղերձը սկզբում շատ նման էր Հովհաննես Մկրտչի պատգամին: Դա ապաշխարության և պատրաստման մասին հինկտակարանյան պատգամն էր: Այստեղ նշված մկրտությունը քրիստոնեական մկրտությունն է, այլ մկրտություն, որը խորհրդանշում է ապաշխարությունը և հոգևոր ընկալումը:

3:23 «Յովհաննէսն էլ Այեւնտումն էր մկրտում՝ Սաղեմի մօտ» Այս տեղանքի գտնվելու վայրն անորոշ է:

1. ոմանք կարծում են, որ դա Փերեայում էր՝ տրանսհորդանանյան շրջանում
 2. ոմանք կարծում են, որ այն գտնվում էր հյուսիս-արևելյան Սամարիայում
 3. ոմանք կարծում են, որ այն գտնվում էր Միլվբեմ քաղաքից երեք մղոն հեռավորության վրա
- Որովհետև «*aenon*» կարծես նշանակում է «հոսք, հոսանք, վտակ», # 3 համապատասխանում է լավագույնը: Ինչ որ էլ լինի ճշգրիտ տեղը, Հիսուսը ծառայում էր Հրեաստանում իսկ Հովհաննեսը Նրանից մի փոքր հեռու էր դեպի հյուսիս:

3:24 «Որովհետև Յովհաննէսը դեռ բանտի մէջ չէր գցուած» Անորոշ է, թե ինչու է այս ժամանակագրական օրինակը ավելացված այստեղ: Ոմանք ասում են, որ սա Հովհաննեսի ժամանակագրությունը սինխրոնիզացնելու փորձն է Մինոպոլիսների հետ (Մատթ. 14:1-12; Մարկ. 6:14-29): Այն գործում է որպես Քրիստոսի կյանքում այս հանդիպման ժամադրման միջոց:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:25-30
²⁵Արդ Յովհաննէսի աշակերտները Հրէաների հետ վեճ ունեցան մաքրութեան համար: ²⁶Եւ Յովհաննէսի մօտ եկան եւ ասեցին նորան. Ռաբբի, նա որ Յորդանանի այն կողմումն էր քեզ հետ, որի համար դու վկայեցիր, ահա նա մկրտում է, եւ ամենքը նորա մօտ են գալիս: ²⁷Յովհաննէսը պատասխանեց եւ ասեց. Մարդ չէ կարող ոչինչ վեր առնել, եթէ երկնքիցը տրուած չ'լինի նորան: ²⁸Դուք ինքներդ վկայում էք ինձ համար, որ ասեցի ձեզ, թէ Ես Քրիստոսը չեմ, այլ թէ նորա առաջից ուղարկուած եմ: ²⁹Հարսն ունեցողն է փեսայ. բայց փեսայի բարեկամը, որ կանգնած է եւ լսում է նորան, ուրախութիւնով ուրախանում է փեսայի ձայնի համար. Արդ իմ այս ուրախութիւնը լցուած է: ³⁰Նորան պէտք է աճել, եւ ինձ փոքրանայ:

3:25 «Յովհաննէսի աշակերտները Հրէաների հետ վեճ ունեցան» «Քննարկում» (NASB, NRSV, NJB) «վեճերի» կամ «առձակատման» համար ուժեղ տերմին է: Որոշ հին հունարեն ձեռագրերը ունեն ՀՈԳՆԱԿԻ «հրեաներ»: Հին հունարեն ձեռագրերը հավասարապես բաժանված են, քանի որ ԵԶԱԿԻՆՆ ավելի անսովոր է (այսինքն, MSS P²⁵, Տ², A, B, L, W), դա հավանաբար բնօրինակ է: UBS⁴ տալիս է «B» վարկանիշ (գրեթե որոշակի): Հին դպիրների միտումն էր ներդաշնակեցնել և սահուն դարձնել տեքստը: Նաև հետաքրքիր է նշել, որ հավանաբար Հովհաննեսի աշակերտներն են առաջ քաշել այս փաստարկը:

- NASB, NKJV,
 NRSV, NJB “մաքրության մասին”
 TEV “մաքրության ծեսի համար”

Այս վեճի ուշադրության կենտրոնում եղել են մի քանի տեսություններ (NKJV):

1. Հնարավոր է, որ Հովհաննեսի հետևորդները քննարկում էին Հովհաննեսի և Հիսուսի մկրտությունների միջև եղած հարաբերությունները, քանի որ դրանք կապված էին լվացումների մասին հրեական ավանդությանը: Նույն տերմինը օգտագործվում է 2: 6:
2. ոմանք կարծում են, որ այն վերաբերում է անմիջական կոնտեքստին, որտեղ Հիսուսը սովորեցնում էր, որ Իր կյանքն ու ծառայությունը լիովին կատարեցին հուդայականությունը
 - ա. 2: 1-12, Կանայի հարսանիքը
 - բ. 2: 13-22, տաճարի մաքրումը
 - գ. 3: 1-21, քննարկումը Նիկոդեմոսի՝ հրեաների իշխանի հետ
 - դ. 3:22-36, հրեաների լվացումներն ու Հովհաննես Մկրտիչի և Հիսուսի մկրտությունները:

Այն փաստը, որ կոնտեքստը հատկապես չի ընդարձակում այս մասնավոր քննարկումը, ընդգծում է այն փաստը, որ նա ևս մեկ հնարավորություն տվեց Հովհաննես Մկրտիչին՝ վկայելու Հիսուս Նազովրեցու գերազանցության մասին:

3:26 «որի համար դու վկայեցիր, ահա նա մկրտում է, եւ ամենքը նորա մօտ են գալիս»

Աշակերտները հիշեցին Հովհաննեսի վաղ վկայությունը Աստծո Գառան մասին (տես 1: 19-36) և նրանք, թերևս, մի փոքր նախանձում էին Հիսուսի հաջողությանը (հիպերբոլա/չափազանցություն): Հիսուսը զգայուն էր նաև ցանկացած մրցակցության հոգու նկատմամբ (տես 4: 1):

3:27 «Մարդ չէ կարող ոչինչ վեր առնել, եթե երկնքիցը տրուած չ'լինի նորան» Սա շատ պարզ ենթադրություն է, որ հոգևոր հարցերում մրցակցություն չկա: Ամեն ինչ, որ տրված է հավատացյալներին՝ Աստծո շնորհքով է: Այնուամենայնիվ, շատ քննարկումներ են եղել «այն» և «նրան» իմաստի շուրջ:

1. ոմանք ասում են, որ «նրան» վերաբերում է հավատացյալին, իսկ «այն» խոսում է փրկության համար Քրիստոսին գալու մասին (Աստված նախաձեռնում է, մարդիկ կարող են միայն արձագանքել, տես Հովհ. 6:44-65)
2. մյուսները հավատում են, որ «նրան» վերաբերում է Հիսուսին, իսկ «այն» վերաբերում է հավատացյալներին (տես Հովհ. 6:39; 10:29; 17:2,9, 11, 24)

Այս երկու տեսակետների միջև տարբերությունն այն է, որ «տրված» տերմինը վերաբերում է կամ անհատ հավատացյալների փրկությանը կամ, որ բոլոր հավատացյալները Աստծո կողմից պարզև են տրված Հիսուսին (տես 17:2):

3:28 «Ես Քրիստոսը չեմ» Հովհաննես Մկրտիչը մասնավորապես հաստատում է, ինչպես նա արեց 1:20, որ նա Մեսիան չէ, այլ ճանապարհ պատրաստողը: Սա ակնհայտ ենթադրություն է մարգարեական հատվածների Մաղ. 3: 1; 4: 5-6, զուգակցված Ես. 40-ի հետ (տես Հովհ. 1:23): Տես ծանուցում «Մեսիա» 1:41

3:29 «Հարսն ունեցողն է փեսայ» Հատկանշական է, որ հինկտակարանյան շատ հղումներ կան այս ամուսնության փոխաբերության վերաբերյալ, որը նկարագրում է Աստծո և Իսրայելի միջև փոխհարաբերությունները (տես Ես. 54:5; 62: 4,5; Եր. 2: 2; 3:20; Եգ. 16: 8; 23: 4; Ովս.2:21): Պողոսը նաև օգտագործում է այն Եփ. 5:22: Քրիստոնեական ամուսնությունը կարող է հանդիսանալ ուխտի փոխհարաբերությունների լավագույն ժամանակակից օրինակ:

▪ «Արդ իմ այս ուրախութիւնը լցուած է» ԳՈՅԱԿԱՆ «ուրախություն» և ԲԱՅ «ուրախանալ» օգտագործվում են երեք անգամ այս համարում: Մրցակցող հոգի ունենալու փոխարեն, Հովհաննէս Մկրտիչը ակնհայտորեն ճանաչում էր իր տեղը և ուրախանում էր Հիսուսով:

3:30 «Նորան պէտք է աճել, եւ ինձ փոքրանալ» Այստեղ կարևոր է «պէտք է» (*dei*) տերմինը: Այն արդէն օգտագործվել է 3:14 և 4:4: Դա Հովհաննէսի ինքնիրեն հասկանալու հավաստումն է, որպէս ուղղակի Հիսուսի մեծ ու ավելի կարևոր ծառայության ճանապարհը պատրաստող:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 3:31-36
³¹Վերելից եկողն ամենից վեր է. երկրիցը լինողը երկրիցն է եւ երկրիցն է խօսում. երկնքից եկողն ամենից վեր է. ³²Ինչ որ տեսաւ եւ լսեց, նա է վկայում. Եւ նորա վկայութիւնը ոչ ով չէ ընդունում:
³³Նորա վկայութիւնն ընդունողը և կնքեց, թէ Աստուած ճշմարիտ է: ³⁴Որովհետեւ նա որին Աստուած ուղարկեց, Աստուծոյ բանն է խօսում. Որովհետեւ Աստուած Հոգին չափով չէ տալիս: ³⁵Հայրը սիրում է Որդուն, եւ ամեն բան նորա ձեռն է տուել: ³⁶Որդուն հաւատացողը յաւիտենական կեանք ունի. Իսկ Որդուն չ'հնազանդողը կեանքը չի տեսնիլ, այլ Աստուծոյ բարկութիւնը մնում է նորա վերայ:

3:31-36 Մեկնաբանների միջև շատ քննարկումներ են եղել, թե արդյոք այդ համարները

1. Հովհաննէս Մկրտչի շարունակական բանավոր պնդումներն են
2. Հիսուսի խոսքերն են (տես 3: 11-12)
3. Հովհաննէս Առաքյալինն է

Այս համարները վերադառնում են 16-21 համարների թեմաներին:

3:31 «Վերելից եկողն» Հատկանշական է, որ Մեսիային տրված երկու տիտղոսները ընդգծում են Նրա նախագոյությունը և կատարյալ աստվածությունը (ենթադրվում է հ.31), և Նրա մարմնավորումն ու Աստծո կողմից տրված առաքելությունը (ենթադրվում է հ.34): «Վերելից» տերմինն այն նույն տերմինն է, որը կիրառվում է «կրկին ծնված» կամ «ծնված վերելից» արտահայտության մեջ, հ.3:

Այս Աստծո տիեզերքի և մարդկության երկրային տիրույթի վերև և ներքև դուալիզմը բնորոշ է Հովհաննէսին: Այն տարբերվում է Մեռյալ Ծովի մագաղաթների վախճանաբանական դուալիզմից: Այն նաև տարբերվում է հոգևոր և նյութական գնոստիկ դուալիզմից: Հովհաննէսի Ավետարանում ստեղծագործությունն ու մարդկային մարմինը ինքնին չար կամ մեղավոր չեն:

▪ «ամենից վեր է . . . ամենից վեր է» Այս համարի առաջին հատվածը վերաբերում է Հիսուսի աստվածությանը և նախագոյությանը՝ երկնքից եկած (տես 1: 1-18; 3: 11-12): Համարի երկրորդ մասը հաստատում է, որ Նա տիրում է Աստծո ստեղծագործության վրա: Անորոշ է հունարեն տեքստից, արդյոք «բոլորը» ԱՐԱԿԱՆ է թե ՉԵԶՈՔ, վերաբերում է բոլոր մարդկանց, թե ամեն ինչին: Որոշ հին հունարեն տեքստերում երկրորդ «ամենից վեր»-ը բացակայում է: UBS⁴ չի կարող որոշել իր ներգրավվածությունը, սակայն տեքստային քննադատությունների ենթադրությունները (տես Հավելված 2) նախընտրում են ընդգրկել դրանք:

-
- NASB “նա ով երկրից է երկրից է խոսում”
- NKJV “նա ով երկրից է երկրային է և երկրից է խոսում”
- NRSV “Նա ով երկրից է երկրին է պատկանում և խոսում է երկրային բաների մասին”
- TEV “նա ով երկրից է երկրին է պատկանում և խոսում է երկրային բաների մասին”
- NJB “նա ով երկրից է երկրային է և խոսում է երկրային ձևով”

Սա Հովհաննէսի մասին բացասական հայտարարությունն է: Երկիր տերմինը այստեղ (*gē*, 12:32; 17:4; I Հովհ. 5: 8, բայց 76 անգամ Հայտնության Գրքում) նույնը չէ, ինչ որ «աշխարհ» տերմինը (*kosmos*), որը հաճախ բացասաբար է օգտագործվում Հովհաննէսի կողմից: Սա պարզապես

հաստատում է, որ Հիսուսը խոսեց այն մասին, ինչ Նա գիտի՝ երկինք, իսկ բոլոր մարդիկ խոսում են այն մասին, ինչ նրանք գիտեն՝ երկիր: Ուստի, Հիսուսի վկայությունը շատ ավելի մեծ է, քան որևէ երկրային մարգարե կամ քարոզիչ (տես Եբր. 1: 1-4):

3:32 «Ինչ որ տեսաւ եւ լսեց, նա է վկայում» Այս համարում գոյություն ունի ԲԱՅԱԶԵՎԵՐԻ քառախաղ (1) «տեսել է» ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ: 2) «լսեց» ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ: և (3) «վկայում է» ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ: Հիսուսը Աստծո վերջնական հայտնությունն է (հմմտ. 1 Կորնթ. 8: 6; Կող.1: 13-20, Եբր. 1:2-3): Նա խոսում է (1) Հայր Աստծո և (2) Իր աստվածության հետ ունեցած Իր անձնական փորձառությունից:

▪ **«Եւ նորա վկայութիւնը ոչ ով չէ ընդունում»** Սա արևելյան չափազանցություն է, քանի որ հհ. 23-26-ը ցույց է տալիս, որ շատերն էին գալիս Նրա մոտ: Այս արտահայտությունը վերաբերում է հուդայականությանը որպես ամբողջություն (տես 3:11), այլ ոչ թե անմիջական կոնտեքստը:

3:33 «Նա ով» Սա ցույց է տալիս, Աստծու համընդհանուր, անսահմանափակ սերը բոլոր մարդկության հանդեպ: Աստծո ավետարանի հետ կապված խոչընդոտներ չկան, անձը պետք է ապաշխարի և հավատա (հմմտ Մարկ.1:15; Գործք 20:21), սակայն առաջարկը բաց է բոլորի համար (հմմտ 1:12; 3:16-18; Եզ.18: 23,32; Հովհ. 3:16; 4:42; I Տիմ. 2: 4; Տիտոս 2:11; II Պետ. 3: 9; I Հովհ. 2: 1; 4:14):

▪ **«վկայութիւնն ընդունողը»** Համար 33 ԱՕՐԻՍՏ ԴԵՐԲԱՅ է, իսկ հ. 36 ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅ: Սա ցույց է տալիս, որ փրկության համար Աստծուն ապավինելը ոչ միայն նախնական որոշում է, այլ դա նաև աշակերտության կյանք: Այս նույն հաստատումը ընդունելու անհրաժեշտության մասին նախկինում հաստատվել է 1:12 և 3:16-18: Ուշադրություն դարձրեք, դիտարկե՛ք ընդունել վկայությունը (հ. 33) և շարունակել քայլել դրանում միջև (հ. 36): «Ընդունել» տերմինը, ինչպես «հավատք» տերմինը ունի երկու ընկալում ՆԿ-ում:

1. անձամբ ընդունել Քրիստոսին և քայլել Նրա հետ
2. ընդունել ճշմարտությունները և վարդապետությունները, որոնք ներգրավված են Ավետարանում (տես Հուդա 3,20)

▪
NASB “դրել է իր կնիքը, որ Աստված ճշմարիտ է”
NKJV, NRSV “հավաստիցարել է, որ Աստված ճշմարիտ է”
TEV “սրանով պնդում է, որ Աստված ճշմարիտ է”
NJB “վկայում է, որ Աստված ճշմարիտ է”

Եբր հավատացյալներն անձնապես վստահում են Քրիստոսին, նրանք պնդում են, որ Աստծո պատգամը Իր մասին, աշխարհի, մարդկության, և Իր Որդու, ճշմարիտ է (հմմտ. Հռ. 3: 4): Սա հերթական թեման է Հովհաննեսի Ավետարանում (հմմտ. 3:33; 7:28; 8:26; 17: 3; I Հովհ.5:20): Հիսուսը ճշմարիտ է, որովհետև Նա ի վերջո բացահայտում է մեկ ճշմարիտ Աստծուն (տես 3: 7,14; 19:11):

«Կնիք» ԲԱՅԻ համար(ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) տես Հատուկ Թեմա հետևյալը.

ՀԱԿՈՒԿ ԹԵՄԱ: ԿՆԻՔ
Կնիքը հնում եղել է վավերացման կերպ
1. ճշմարտության (հմմտ. Հովհ. 3:33)
2. սեփականության (հմմտ. Հովհ. 6:27; II Տիմ. 2:19; Հայտ. 7:2-3)
3. անվտանգության կամ պաշտպանության (հմմտ. Հովհ. 4:15; Մաթ. 27:66; Հռ. 15:28; II Կոր. 1:22; Եփ. 1:13; 4:30)
4. սա նաև կարող է Աստծո խոստման կապված Նրա պարզևի հետ նշան լինել (հմմտ.

Հո. 4:11 և I Կոր. 9:2).

Այս նշանի նպատակն է ինքնությունը ճանաչել որպես Աստծո ժողովուրդ, որպեսզի Աստծո բարկությունը չհասնի նրանց: Սատանայի կնիքը ցույց է տալիս իր ժողովրդի պատկանելիությունն է, ովքեր ենթակա են Աստծո բարկությանը: Հայտնության գրքում «նեղություն» (այն է, *thlipsis*) երբ միշտ անհավատները հալածում են հավատացյալներին, այն ինչ ցասում/բարկությունը (այն է, *orgē* կամ *thumos*) միշտ Աստծո դատաստանն է անհավատների դեմ, որ նրանք ապաշխարեն և դառնան հավատք առ Քրիստոս: Դատաստանի այս դրական նպատակը շատ լավ երևում է 2Օրին. 27-28-ի անեծքների/օրհնությունների ուխտի մեջ:

«Կենդանի Աստված» արտահայտությունը բառախաղ է հիմնված ՅԱՀՎԵ-ի անվան վրա (հմմտ. Ել. 3:14; Սաղ. 42:2; 84:2; Մաթ. 16:16): Նմանատիպ բառախաղ հաճախ հանդիպում է աստվածաշնչյան երդումների մեջ «կենդանի է Տերը»:

3:34 «նա որին Աստուած ուղարկեց, Աստուծոյ բանն է խօսում» Գոյություն ունեն երկու զուգահեռ մտքեր հ. 34, որոնք ցույց են տալիս, որ Հիսուսի իշխանությունը գալիս է Աստծուց:

1. Աստված է ուղարկել Նրան
2. Նա ունի Հոգու լիությունը

▪ **«Որովհետև Աստուած Հոգին չափով չէ տալիս»** Այս հայտարարությունը բառացիորեն բացասական է, բայց անգլերեն ընթերցողների համար դրական ձևը գրավում է իմաստը: Այս Հոգու լիությունը հասկանալու երկու տարբեր ձևեր կան, ոմանք հավատում են, որ

1. Հիսուսը տալիս է Հոգու լիությունը հավատացյալներին (տես 4: 10-14; 7: 37-39)
2. որ Հոգու լիությունը վերաբերում է Մեսիային՝ Աստծո պարզին (տես հ.35)

Ռաբբիները օգտագործում էին «չափ» տերմինը՝ նկարագրելու Աստծո ներշնչելը մարգարեներին: Ռաբբիները նաև ավելացրին, որ ոչ մի մարգարե չունի Հոգու ամբողջ չափը: Հետևաբար, Հիսուսը գերազանց է մարգարեներից (տես Եբր.1:1-2) և այդպիսով Աստծո լիակատար հայտնությունն է:

3:35 «Հայրը սիրում է Որդուն» Այս հաստատումը կրկնվում է 5:20 և 17:23-26-ում: Հավատացյալների հարաբերությունները Աստծո հետ հիմնված է Մեսիայի հանդեպ ունեցած Նրա սիրո վրա (միակ Որդին, տես Եբր.1:2; 3:5-6; 5:8; 7:28): Նշենք այս կոնտեքստում նշված պատճառները, թե ինչու են մարդիկ հավատում Հիսուսին, որպես Մեսիա:

1. քանի որ Նա վերսից է և վեր է ամենքից (տես հ.31)
2. քանի որ Նա Աստծուց է ուղարկվել՝ փրկելու առաքելությամբ (հ.34)
3. քանի որ Աստված շարունակում է Նրան տալ Հոգու լիությունը (հ.34)
4. որովհետև Աստված սիրում է Նրան (հ.35)
5. քանի որ Աստված ամեն ինչ հանձնեց Նրա ձեռքը (հ.35)

«Մեր» բառի համար կան մի քանի հունարեն բառեր, որոնք նշանակում են տարբեր մարդկային փոխհարաբերություններ: *Agapaō* և *phileō* ունեն իմաստաբանական համընկնում: Երկուսն էլ օգտագործվում են՝ նկարագրելու համար Հոր սերը Որդու հանդեպ:

1. 3:35; 17: 23,24,26 - *agapaō*
2. 5:20 - *phileō*

Այստեղ, կարծես, կոնտեքստային տարբերություն կա Պետրոսի հետ Հիսուսի երկխոսության մեջ 21:15-17: Հիշեք, «կոնտեքստ, կոնտեքստ, կոնտեքստ», ոչ թե բառապաշարը կամ բառարանն է որոշում բառային իմաստները:

▪ **«ամեն բան նորա ձեռն է տուել»** Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սա եբրայերեն իդիոմա է գործության կամ մյուսի նկատմամբ իշխանության համար (այսինքն, 10:28; 13:3; Գործք 4:28; 13:11): Սա չափազանց հետաքրքիր արտահայտություն է և ունի բազմաթիվ զուգահեռներ (տես Հովհ. 13:3; 17:2; Մատթ. 11:27; 28:18; Եփես 1:20-22; Կող.2:10; I Պետ.3: 22):

3:36

NASB “Նա ով հավատում է Որդուն հավիտենական կյանք ունի, բայց նա ով չի հնազանդվում Որդուն կյանք չի տեսնի”

NKJV “Նա ով հավատում է Որդուն հավիտենական կյանք ունի, իսկ նա ով չի հավատում Որդուն կյանք չի տեսնի”

NRSV “Ով որ հավատում է Որդուն հավիտենական կյանք ունի, ով որ անհնազանդ է Որդուն կյանք չի տեսնի”

TEV “Ով էլ որ հավատա Որդուն հավիտենական կյանք ունի, ով էլ որ անհնազանդ լինի Որդուն կյանք չի տեսնի”

NJB “Ցնկացած մարդ ով հավատում է Որդուն հավիտենական կյանք ունի, բայց ցանկացած մարդ ով մերժում է հավատալ Որդուն երբեք կյանք չի տեսնի”

Այս բոլոր ԲԱՅԵՐԸ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ են, որոնք խոսում են ընթացիկ գործողությունների մասին: Հավատքը ավելին է, քան մեկ անգամվա որոշում, անկախ նրանից, թե որքան անկեղծ կամ զգացմունքային էր դա (տես Մատթ. 13:20): Սա հաստատում է, որ առանց Հիսուսին ճանաչելու, չես կարող ճանաչել Հորը (տես Հովհ.12: 44-50 և I Հովհ.5:10): Փրկությունը գալիս է միայն Որդու՝ Հիսուսի հետ շարունակական փոխհարաբերությունների միջոցով (տես 10:1-18; 14:6):

ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ ոչ միայն խոսում է ընթացիկ գործողությունների մասին, այլև փրկության ներկայիս իրականության: Դա մի բան է, որ հիմա հավատացյալներն ունեն, բայց դա լիովին չի ավարտվել: Սա երկու դարաշրջանների «արդեն» «բայց ոչ դեռ» դուալիզմն է (տես Հատուկ Թեմա: Այս դարաշրջանը և գալիք դարաշրջանը, I Հովհ. 2:17): Տես Հատուկ Թեմա: Փրկության համար օգտագործված Բայերի ժամանակաձևերը 9: 7:

Հետաքրքիր է նաև նկատել այս համարի «հավատալ» և «ենթարկվել» հակադրությունը: Ավետարանը ոչ միայն այն մարդն է, ում մենք ընդունում ենք և ճշմարտությունը, որը մենք ընդունում ենք, այլև այն կյանքը, որ մենք ապրում ենք (տես Դուկ. 6:46; Եփ. 2:8-10):

▪ «այլ Աստուծոյ բարկութիւնը մնում է նորա վերայ» Սա Հովհաննեսի գրվածքներում միակ տեղն է (բացառությամբ 5 անգամ Հայտնության Գրքում), որտեղ հայտնվում է «բարկություն» (*org_*) տերմինը: Գաղափարը տարածված է և սովորաբար վերաբերում է «վճիռ, դատաստան» տերմինին: Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: «Հավատք», «հնազանդություն» և «բարկություն» շարունակական ներկա իրողություններ են, որոնք կկատարվեն ապագայում: Սա նույն լարվածությունն է, որ գոյություն ունի Աստծո Թագավորության «արդեն» և «բայց ոչ դեռ» միջև: Աստծո բարկության մասին լիարժեք աստվածաշնչային քննարկման համար կարդացեք Հո. 1: 18-3: 20:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչպե՞ս է Հիսուսի վաղ պատգամը նման Հովհաննես Մկրտչին:
2. Արդյո՞ք այս մկրտությունը նույնն է, ինչ որ քրիստոնեական մկրտությունը:
3. Ինչու՞ են Հովհաննես Մկրտչի խոսքեր այսքան շատ ընդգծվում Հովհաննեսի Ավետարանի սկզբի գլուխներում:

4. Նկարագրեք այն հակադրությունների քանակն ու տեսակները, որ հեղինակն օգտագործում է՝ նկարագրելու Հովհաննես Մկրտչի և Հիսուսի միջև եղած հարաբերությունները:
5. Ինչպե՞ս է հ.33 «ընդունել» տերմինը կապվում հ. 36 «հավատալ» տերմինի հետ:
Ինչպե՞ս է հ.36 «չհնազանդվել» տերմինը կապված այս քննարկման հետ:
6. Թվարկեք նշված պատճառների քանակը, թե ինչու մարդիկ պետք է հավատան Հիսուս Նազովրեցուն, որպես իրենց միակ փրկության հույսը (31-33 համարները):
7. Բացատրեք, թե ինչու՞ հ. 36 «բարկություն» տերմինը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅ:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ ԳԼՈՒԽ 4

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսը և սամարացի կիները	Սամարացի կիները հանդիպում է իր Մեսիային	Հիսուսը և սամարացիները	Հիսուսը և սամարացիները	Հիսուսը սամարացիների մեջ
4:1-6	4:1-26	4:1-6	4:1-4 4:5-6	4:1-10
4:7-15		4:7-15	4:7-8 4:9 4:10 4:11-12 4:13-14	4:11-14
4:16-26		4:16-26	4:15 4:16 4:17ա 4:17բ-18 4:19-20 4:21-24 4:25	4:15-24 4:25-26
	Սպիտակած հունձք		4:26	
4:27-30	4:27-38	4:27-30	4:27 4:28-30	4:27-30
4:31-38		4:31-38	4:31 4:32 4:33	4:31-38
4:39-42	Աշխարհի Փրկիչը 4:39-42	4:39-42	4:34-38 4:39-40 4:41-42	4:39-42
Ազնվականի որդու բժշկվելը 4:43-45	Ընդունվում է Գալիլիայում 4:43-45	Հիսուսը և հեթանոսները 4:43-45	Հիսուսը բժշկում է ազնվականի որդուն 4:43-45	Հիսուսը Գալիլիայում 4:43-45
4:46-54	Ազնվականի որդու բժշկվելը 4:46-54	4:46-54	4:46-48 4:49 4:50-51 4:52-53 4:54	Թագավորական պաշտոնյայի որդու բժշկվելը 4:46-53 4:54

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԳՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇԲՐՈՒՄՆԵՐԸ 1-54 ՀԱՄԱՐՆԵՐՈՒՄ

Ա. Կա նպատակային կառուցվածք 3 և 4 գլուխներում

1. Պարոն Կրոնավորը (Նիկողեմոս) ընդդեմ տիկին մերժվածի (ջրհորի մոտի կինը)
2. Երուսաղեմի վրա հիմնված հուդայականությունը (ուղղափառ) ընդդեմ սամարացի հուդայականության (հերետիկոսական)

Բ. Հիսուսի անձի և գործերի մասին ճշմարտությունների հետագա զարգացումը

1. երկխոսություն սամարացի կնոջ հետ (հհ. 1-26);
2. երկխոսություն իր աշակերտների հետ (հհ. 27-38);
3. գյուղացիների վկայությունը (հհ. 39-42);
4. ընդունելություն Գալիլեացիների կողմից (հհ. 43-45);
5. Հիսուսի նշան/ հրաշք իշխանությունը հիվանդության նկատմամբ, հհ. 46-54:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:1-6

¹Եւ երբոր Տէրն իմացաւ, որ Փարիսեցիները լսեցին, թէ Յիսուսը աւելի աշակերտներ է անում եւ մկրտում քան թէ Յովհաննէսը, ²(Թէպէտեւ Յիսուսը ինքը չէր մկրտում՝ այլ նորա աշակերտները.) ³Հրեաստանի երկիրը թողեց եւ դարձեալ եկաւ Գալիլեա: ⁴Եւ պէտք էր որ Սամարիայի միջովն անցներ: ⁵Արդ նա Սամարիայի մի քաղաքն եկաւ, անունը Սիւքար, այն տեղի մօտ, որ Յակոբը տուաւ իր որդի Յովսէփին: ⁶ Եւ Յակոբի մի աղբիւրը կար այնտեղ. Եւ Յիսուսը ճանապարհիցը վաստակած այն աղբիւրի վերայ նստեց. Եւ ժամը վեցին դէմ էր:

4:1 «Տէրն» Հովհաննէսն իր մտքում վերհիշելով միջադեպը (Հոգու միջոցով) տարիներ անց, օգտագործում է «Տէր» և «Հիսուս» բառերը նույն նախադասության մեջ, որը վերաբերվում է մեկ անձի:

Մի քանի հունարեն ձեռագրերում «Հիսուս» բառը երկու անգամ է հ. 1 (այն է Ն, D, NRSV, NJB, REB), բայց «Տէր» բառը MSS P^{66, 75}, A, B, C, L (NASB, NKJV):

Սակայն, նույնիսկ ավելի լավ ձեռագիր վավերացումը «Տէր» բառի համար UBS⁴ դնում է «Հիսուս» տեքստում և տալիս է «C» վարկանիշ (բարդ է որոշելը):

▪ «Փարիսեցիները» Տես Հատուկ Թեմա 1:24.

▪ «լսեցին, թե Յիսուսը ասելի աշակերտներ է անում եւ մկրտում քան թե Յովհաննէսը» Հիսուսը լքեց այս տարածքը Իր և Հովհաննէս Մկրտիչի հետևորդների միջև հնարավոր լարվածության պատճառով, որը հրահրվեց փարիսեցիների կողմից: Մինուպտիկ Ավետարաններն ասում են, որ Նա լքեց, որովհետև Հերովդես Անտիպասը ձերբակալել էր Հովհաննէս Մկրտիչին (տես Մատթ. 4:12; Մարկ. 1:14; Ղուկաս 3:20):

4:2 «Յիսուսը ինքը չէր մկրտում» Սա չի թերագնահատում մկրտությունը (տես Մատթ. 28:19; Գործք 2:38; 8:12; 16:33; 22:16), բայց մարդկության եսակենտրոն բնության ճանաչումը (այսինքն, «Ես մկրտվել եմ Հիսուսի կողմից» կամ Պողոսի, տես I Կորնթ. 1:17): Ըստ երևույթին, Հիսուսը մկրտել է Իր ծառայության սկզբում (տես 3:22), սակայն ավելի ուշ դադարել: Հովհաննէսը շտկում է փարիսեցիների կեղծ հայտարարությունները:

4:3 «Հրեաստանի երկիրը թողեց եւ դարձեալ եկաւ Գալիլեա» Սրանք երկու ԱՕԸԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են, օգտագործվում է ընդգծելու Հիսուսի աշխարհագրական շարժումները:

4:4 «պէտք էր որ Սամարիայի միջովն անցնէր» «Պետք էր» հունարեն *dei* ԲԱՅՆ է, որն օգտագործվում է մի քանի անգամ այս կոնտեքստում (հմմտ 3:7,14,30): Այն սովորաբար թարգմանվում է «պէտք է» կամ «անհրաժեշտ է»: Այս երթուղու մեջ կա աստվածային նպատակ Հիսուսի համար: Դա ամենակարճ երթուղին է: Հովսեպոսը պատմում է մեզ, որ Գալիլիացի հրեաները սովորաբար օգտագործում էին այս երթուղին: Սակայն Հուդայի հրեաները ատում էին սամարացիներին և չէին քայլում նրանց երկրի միջով, քանի որ նրանք իրենց համարում էին կրոնական խառնածին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՌԱՍԻՉՄ

I. Ներածություն

Ա. Սա համընդհանուր արտահայտություն էր ընկած մարդու կողմից իր հասարակության մեջ/ներսում: Սա մարդու էզոն/ես է, աջակցելով ինքն իրեն ուրիշների հետևում/ի լրումն ուրիշների: Ռ-ասիզմը դա, շատ կերպերով, ժամանակակից երևույթ/ֆենոմեն է, այնինչ ազգասիրությունը (կամ ցեղային/tribalism) ավելի հին արտահայտություն է:

Բ. Ազգասիրությունը/հայրենասիրությունը սկսեց Բաբելոնի աշտարակաշինությունից (Ծննդ. 11) և որը սկզբնապես կապված էր Նոյի երեք որդիների հետ, որից այսպես կոչված ռասաները/ցեղերը զարգացան (Ծննդ. 10): Ինչևէ, Սուրբ Գրքից ակնհայտ է, որ մարդկությունը մեկ աղբյուրից է առաջացել (այն է, Աստծո հատուկ արարչագործությունը Ադամ և Եվա, հմմտ. Ծննդ. 1-3; Գործք 17:24-26):

Գ. Ռ-ասիզմը դա շատ կանխակալ կարծիքներից/չարիքներից մեկն է: Մյուսներն են/դրանցից են (1) կրթական պճնայամոլությունը/սնոբիզմ; (2) սոցիալ-տնտեսական գոռոզությունը /ամբարտավանությունը; (3) ինքնա-արդար կրոնական օրինականությունը; և (4) դոգմատիկ /դավանաբանական քաղաքական ընդունումը/հաստատումը:

II. Աստվածաշնչյան Նյութ

Ա. Հին Կտակարան

1. Ծննդ. 1:27- Մարդը, արու և էգ, ստեղծվեց Աստծո պատկերով և նմանությամբ, որը նրանց եզակի/հատուկ է դարձնում: Դա նաև ցույց է տալիս նրանց անհատ արժեքը և արժանապատվությունը/բարձր կոչումը (հմմտ. Հովհ. 3:16):

2. Ծննդ. 1:11-25 -Արձանագրում է «. . . իր տեսակի պես. . .» արտահայտությունը տաս անգամ: Սա օգտագործվել է հիմնավորելու ռասայական խտրականությունը: Ինչևէ, կոնտեքստից հայտնի է, որ սա վերաբերում է կենդանիներին և բույսերին և ոչ թե մարդուն:

Ծննդ. 9:18-27 -Սա օգտագործվել է հիմնավորելու ռասայական իշխանությունը/ազդեցությունը:

Պետք է հիշենք, որ Աստված չանիծեց Քանանին: Նոյը՝ նրա

3. հայրը, անիծեց իրեն՝ հարբած թմրությունից արթնանալուց հետո: Աստվածաշունչը երբեք չի նշում, որ Աստված համաճանեցրեց այդ անեծքը: Եթե նույնիսկ Նա դա աներ, սա չի ազդում սևամորթ ռասայի վրա: Քանանը նրանց հայրն էր, ովքեր բնակվեցին Պաղեստինում և Եգիպտոսում պատի արվեստը ցույց է տալիս, որ նրանք սևամորթ չեն եղել:
4. Հեսու 9:23 – Սա օգտագործվել է ապացուցելու համար, որ մի ռասան/ցեղը կծառայի մյուսին: Ինչևէ, կոնտեքստում Գարավոնացիները նույն ռասայական տոհմից են ինչ հրեաները:
5. Եզրաս 9-10 և Նեեմ. 13 – Մրանք հաճախ օգտագործվել են ռասայական իմաստով, բայց կոնտեքստը ցույց է տալիս, որ ամուսնությունները դատապարտելի էին ոչ թե ռասայի պատճառով (նրանք Նոյի նույն որդուց էին, Ծննդ 10), այլ կրոնական պատճառներով:

Բ. Նոր Կտակարան

1. Ավետարաններ

ա. Հիսուսն օգտագործեց հրեաների և սամարացիների միջև եղած ատելությունը մի քանի օրինակներով, որոնք ցույց են տալիս ռասայական ատելությունը անհարմար է:

- (1) Բարի Սամարացու առակը (Ղուկ. 10:25-37)
- (2) կինը ջրհորի մոտ (Հովհ. 4:4)
- (3) երախտապարտ բորոտը (Ղուկ. 17:7-19)

բ. Ավետարանը բոլոր մարդկանց համար է

- (1) Հովհ. 3:16
- (2) Ղուկ. 24:46-47
- (3) Եբր. 2:9
- (4) Հայտ. 14:6

գ. Թագավորությունը կներգրավի ամբողջ մարդկությանը

- (1) Ղուկ. 13:29
- (2) Հայտ. 5

2. Գործք

ա. Գործք 10 հստակ հատված է Աստծո տիեզերական սիրո և ավետարանի տիեզերական պատգամի մասին:

բ. Պետրոսը ենթարկվում է հարձակման իր գործողությունների համար Գործք 11-ում և այս խնդիրը չի լուծվում մինչև Երուսաղեմի Խորհուրդը Գործք 15-ում հետո այն լուծում է ստանում: Առաջին դարի հրեաների և հեթանոսների միջև եղած լարվածությունը շատ լարված էր/ինտենսիվ:

3. Պողոս

ա. Քրիստոսում չկան արգելքներ

- (1) Գաղ. 3:26-28
- (2) Եփ. 2:11-22
- (3) Կող. 3:11

բ. Աստված մարդկանց միջև աչառություն չի անում

- (1) Հռ. 2:11
- (2) Եփ. 6:9

4. Պետրոս և Հակոբոս

ա. Աստված մարդկանց միջև աչառություն չի անում, I Պետ. 1:17

բ. Քանի որ Աստված աչառություն չի անում, ուրեմն Իր ժողովուրդն էլ չպետք է անի, Հակ. 2:1

5. Հովհաննես

ա. Ամենաուժեղ դրույթներից մեկը հավատացյալների պատասխանատվության վերաբերյալ գտնվում է I Հովհ. 4:20

III. Եզրափակում/ամփոփում

Ա. Ռասիզմը, կամ այդ հասկացողության լայն իմաստով, ցանկացած կանխակալ բնավորության ամբողջությամբ անհամապատասխան է Աստծո զավակներին: Ահա մեջբերում Հենլի Բառնետի (*Henlee Barnette*) կողմից, որը խոսեց Գլորիետայի ժողովում /ֆորում, Նյու-Մեքսիկոյում, Քրիստոնեական կյանքի հանձնաժողով 1964թ.: «Ռասիզմը հերետիկոսական է որովհետև դա ոչ աստվածաշնչյան և ոչ

- քրիստոնեական, էլ չասած ոչ գիտական»:
- Բ. Այս խնդիրը քրիստոնեաներին հնարավորություն է տալիս ցույց տալ իրենց Քրիստոսանման սերը, ներողամտությունը և հասկացողությունը կորսված աշխարհին: Քրիստոնեա մերժումը այս բնագավառում ցույց է տալիս անհասունություն և դա չարի համար հնարավորություն է դանդաղեցնել/ արգելակել հավատացյալի հավատքը, վստահությունը և աճը: Դ-ա նաև խոչընդոտ է հանդիսանում կորսված մարդկանց համար՝ մոտենալու Քրիստոսին:
- Գ. Ի՞նչ կարող եմ ես անել: (Այս բաժինը վերցված է Քրիստոնեա Կյանքի Իրավասություն գրքույկից/բրոշյուր վերնագրված՝ «Ռասայական Հարաբերություններ»):

«ԱՆՁՆԱԿԱՆ ՍԱԿԱՐԳԱԿԻ ՎՐԱ»

Ընդունել քո սեփական պատասխանատվությունը խնդիրները լուծման մեջ կապված ռասայի և Աղոթքի, Աստվածաշնչի սերտողության և ուրիշ ռասային պատկանող անձանց հետ շփվելու միջոցով, ջանալ/աշխատել ազատել քո կյանքը ռասայական նախապաշարմունքից: Արտահայտիր քո համոզմունքները ռասայականության մասին, մասնավորապես այնտեղ որտեղ ռասայական ատելություն հրահրողները ոչ մի պատժի չեն արժանանում:

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ»

Ընդունիր ընտանիքի ազդեցության կարևորությունը ուրիշ ազգերի հանդեպ ճիշտ դաստիարակություն և վերաբերմունք ունենալ:

Փորձիր գտնել հնարավորություններ ընկերական հարաբերություններ ստեղծելու տարբեր ազգեր ներկայացնող ընտանիքների միջև:

«ԸՈ ԵԿԵՂԵՑՈՒՄ»

Քարոզչության և աստվածաշնչյան ճշմարտության ուսմունքի միջոցով կապված ազգային փոխհարաբերությունների հետ, համայնքը կարող է մղվել օրինակ հանդիսանալու ամբողջ հասարակության համար:

Վստահ եղիր, որ երկրպագությունը, պաշտամունքը, հաղորդակցությունը և ծառայությունը եկեղեցու միջոցով բաց է բոլորի համար, նույնիսկ ինչպես Նոր Կտակարանի եկեղեցիներում ռասայական, ազգային խոչընդոտներ չկային (Եփ. 2:11-22; Գաղ. 3:26-29):

«ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ»

Օգնիր ամբողջությամբ հաղթահարել ազգային խտրականությունը աշխատանքի ոլորտում:

Գործիր բոլոր տեսակի հասարակական կազմակերպությունների միջոցով իրավունքների հնարավորությունների հավասարությունը պաշտպանելու համար, հիշելով, որ ազգային խնդիրների դեմ պետք է պայքարել, և ոչ թե մարդկանց: Սրա նպատակը պետք է լինի իրար հասկանալու մակարդակի բարձրացումը և ոչ թե դառնության զգացողության:

Եթե ճիշտ ես գտնում, կազմակերպիր մտահոգ քաղաքացիներից կազմված հատուկ կոմիտե, հասարակության մեջ հաղորդակցության միջոցներ ստեղծելու նպատակով, ընդհանուր մասսան կրթելու և հատուկ գործունեություն ծավալելու նպատակով՝ ազգային հարաբերություններ հաստատելու համար:

Աջակցիր օրենսդրությանն ու օրենսգետներին, օրենքներ ընդունելու ժամանակ, ուղղված ռասայական արդարության և հակառակ կեցիք նրանց, ովքեր հրահրում են անարդարություն քաղաքական նկատառումներով:

Հավանություն տուր իշխանավորներին օրենքը պաշտպանելու դեպքում առանց խտրականության:

Խուսափիր բռնությունից, այլ ձգտիր օրենքը հարգելուն, ամեն հնարավոր բան անելով որպես քրիստոնյա-քաղաքացի, որպեսզի վստահ լինես, որ իրավասու մարմինները չդառնան գործիք նրանց ձեռքին, ովքեր հրահրում են խտրականություն:

Օրինակ եղիր Քրիստոսի հոգին ու միտքը ցուցաբերելով բոլոր մարդկանց հետ փոխհարաբերությունների մեջ:

- **«Մամարիայի միջով»** Կար մեծ ատելություն սամարացիների և հրեաների միջև, որը գալիս է մ.թ.ա. ութերորդ դարից: 722 մ.թ.ա. Հյուսիսային տասը ցեղերը, որոնց մայրաքաղաքը Մամարիան էր, գերի են տարվել Ասորեստանի կողմից և բնակեցրեց Մարաց քաղաքներում (հմմտ. Գ Թագ. 17:6): Այլ

գերեվարված մարդիկ վերաբնակեցվեցին հյուսիսային Պաղեստինում (տես Գ Թագ. 17:24): Տարիներ շարունակ այդ հեթանոսները ամուսնանում էին մնացած իսրայելացի բնակչության հետ: Հրեաները սամարացիներին համարում էին կրոնական խառնածիններ և հերետիկոսներ (հմմտ. Եզրաս 4: 1-4): Սա տալիս է կոնտեքստ հ.9 համար:

4:5 «Սամարիայի մի քաղաք անունը Միվքար, այն տեղի մօտ, որ Յակոբը տուաւ իր որդի Յովսեփին» (հմմտ. Ծննդ. 33:18, 19; Հեսու 24:32): Շատերը ենթադրում են, թէ Միվքարը Սյուքեմն է, թէն դա չի հաստատվում Նոր Կտակարանում:

4:6 «Յակոբի մի աղբիւրը կար այնտեղ» Սա, իրոք, փորված ջրամբար էր մոտ 100ոտնաչափ խորությամբ: Դա հոսող ջուր չէր (աղբյուր), բայց հավաքավում էր անձրևաջրերից: Այն երբեք չի հիշատակվում Հին Կտակարանում, բայց անունը կապված է Նահապետական ավանդույթի տարածքի հետ:

▪ **«Յիսուսը ճանապարհիցը վաստակած»** Մենք այստեղ հստակ տեսնում ենք Հիսուսի մարդկային բնույթը (հմմտ. Ղուկ. 2:52), բայց Նա երբեք չհոգնեց մարդկանց սիրելուց:

▪
NASB, NKJV,
JB “մոտավորապես ժամը վեցն էր”
NRSV, TEV “մոտավորապես կեսօրին էր”
Շատ քննարկում կա, թե որ ժամանակի հաշվարկի մեթոդն է Հովհաննեսն օգտագործում իր Ավետարանում: Որոշ տեղերում հրեական ժամանակ է, իսկ որոշներում հռոմեական: Հրեաները օրը սկսել են ժամը 6-ին (հռոմեացիները՝ կեսօրին), հետևաբար, Հիսուսը եկավ ջրհորի մոտ օրվա ամենաթեժ պահին՝ կեսօրին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:7-14
⁷Արդ Սամարիայից մի կին եկաւ, որ ջուր հանէ. Յիսուսը նորան ասեց. Ինձ ջուր տուր խմեմ: ⁸Որովհետեւ նորա աշակերտները քաղաքն էին գնացել, որ կերակուր առնեն: ⁹Սամարացի կինն էլ ասեց նորան. Դու որ Հրեայ ես, ի՞նչպէս ես ինձանից ջուր ուզում խմել, որ մի Սամարացի կին եմ. Որովհետեւ Հրեաները չեն խառնվում Սամարացիների հետ: ¹⁰Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորան, Եթէ Աստուծոյ պարգեւը գիտենայիր, եւ թէ ով է նա, որ քեզ ասում է, թէ Տուր ինձ խմել, ապա դու նորանից կ'իսնդրէիր, եւ նա կենդանի ջուր կ'տար քեզ: ¹¹Կինը նորան ասեց. Տէր, դու դոյլ էլ չ'ունիս, եւ հորը խոր է. Ապա ո՞րտեղից ունիս կենդանի ջուրը: ¹²Մի թէ դու աւելի մեծ ես քան է մեր հայր Յակոբը, որ այս հորը տուաւ մեզ. Եւ ինքը սորանից խմեց, եւ նորա որդիքը եւ նորա անասունները: ¹³Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորան, Ամեն այդ ջրիցը խմողը դարձեալ կ'ծարաւի. Բայց ով որ խմէ այն ջրիցը որ ես կ'տամ նորան, նա յաւիտեան չի ծարաւիլ: ¹⁴Այլ այն ջուրը, որ ես կ'տամ նորան, ջրի աղբիւր կ'լինի նորանում, որ յաւիտենական կեանքի համար կ'ըղխէ:

4:7 «Արդ Սամարիայից մի կին եկաւ» Այս կինը մենակ էր եկել հեռու ջրհորի մոտ օրվա անսովոր ժամանակին, գյուղում իր սոցիալական դիրքի պատճառով:

▪ **«Ինձ ջուր տուր խմեմ»** Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որն իր մեջ հրատապություն ունի:

4:8 Այս համարը հարթակ է պատրաստում Հիսուսի առանձին գրույցի համար՝ հուղայականության հերետիկոսական աղանդին պատկանող մերժված կնոջ հետ: Մա ևս մեկ փակագծերի մեջ բերված գրություն է Հովհաննեսի կողմից:

4:9 «**Դու որ Հրեայ ես, ի՞նչպես ես ինձանից ջուր ուզում խմել, որ մի Սամարացի կին եմ**» Հրեաներին նույնիսկ չէին թույլատրում խմել այն դուլից, որից սամարացիներն էին խմում (հմմտ. Ղև.15): Հիսուսն էր անտեսելով երկու մշակութային արգելքները՝ (1) խոսում է սամարացու հետ և (2) խոսում է կնոջ հետ հանրության առջև:

▪ «(Որովհետև Հրեաները չեն խառնվում Սամարացիների հետ)» Փակագծերը (NASB, NRSV), որը ևս մեկ բացատրական լրացում է Հովհաննեսի Ավետարանում, բացակայում է MSS Տ* և D, բայց առկա է P^{63,66,75,76}, Տ¹, A, B, C, L: UBS⁴ տալիս է իր ընդգրկումը «A» վարկանիշ (որոշակի):

4:10 «Եթէ» Մա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է «չի համապատասխանում իրականությանը»: Հայտարարություն է արվում, որը կեղծ է առանձնացնել մի եզրակացություն, որը նույնպես չի համապատասխանում իրականությանը:

Մա միակ «պարզ» բառի օգտագործումն է Հովհաննեսի Ավետարանում: Այստեղ դա վերաբերվում է Հիսուսին, որպես Աստծո պարզ (տես 3:16), որը տալիս է հավիտենական կյանք: Հովհ.7: 38-39 և Գործքում օգտագործվում է Սուրբ Հոգու տալը (տես Գործք 2:38, 8:20, 10:45, 11:17): Ուշադրության կենտրոնում է անարժան Աստծո շնորհքը, որը բացահայտվում է Քրիստոսի և Հոգու մեջ:

▪ «**կենդանի ջուր**» Այս տերմինն ունի հինկտակարանյան փոխաբերական ֆոն (տես Մաղ. 36: 9; Ես. 12: 3; 44: 3; Եր. 2:13; 17:13; Չաք. 14: 8): Հիսուսն օգտագործում է «կենդանի ջուր» տերմինը որպես «հոգևոր կյանք»-ի հոմանիշ: Սակայն, սամարացի կինը մտածեց, որ նա նկատի ունի հոսող ջուրը, ի տարբերություն ջրամբարի անձրևաջրի: Դա բնորոշ է Հովհաննեսի Ավետարանին, որ Հիսուսը (աշխարհի լոյսը) պարբերաբար սխալ էր հասկացվում (օր. Նիկողեմոսը): Երկրային, մեղավոր հարթությունում չի ընկալվում երկնայինը (օր. Հիսուսի պատգամը):

4:11 «Տեր» Մա հունարեն *kurios* տերմինն է իր ԿՈՉԱԿԱՆ ձևով՝ *kurie*: Այն կարող է օգտագործվել որպես քաղաքավարի դիմելաձև՝ պարոն, սեր (sir) կամ որպես աստվածաբանական արտահայտություն (Տեր), վկայակոչելով Հիսուսին, որպես ամբողջությամբ Աստված, ինչպես 1հ. և Հռ. 10:13: Այստեղ դա քաղաքավարի դիմելաձև է:

4:12 «Մի՞թե դու աւելի մեծ ես քան է մեր հայր Յակոբը» Քերականությունն ակնկալում է «ոչ» պատասխան: Մա ակնհայտ հեզնական հայտարարություն է: Սամարացի կինը պնդում էր իր ծագման մեծությունը; սամարացիները նկատի ունեին Հակոբի Եփրեմին ու Մանասեին: Հետաքրքիրն այն է, որ Հիսուսի գերազանցությունն այն էր ինչ պնդում էր:

Այս խոսակցությունն անդրադառնում է երկու աստվածաբանական հարցերի

1. Աստված / Հիսուսի սերը վտարանդիներ հանդեպ (այսինքն սամարացիները, կանայք)
2. Հիսուսի գերազանցությունը հուղայականության և ռասայական հպարտության վրա

4:13-14 «Բայց ով որ խմե այն ջրիցը որ ես կ'տամ նորան, նա յաիտեան չի ծարաիլ» Մա, թերևս, ունեցել է Մեսիական հետևանքներ (հմմտ. Ես. 12:3; 48:21; 49:10): Այս արտահայտությունը ուժեղ կրկնակի բացասական է: Կա ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ բառախաղ: 13 համարի ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԸ ենթադրում է կրկին ու կրկին խմելը, իսկ 14 համարի ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԸ ենթադրում է միանվագ խմելը:

4:14 «ջրի աղբիւր կ'լինի նորանում, որ յաւիտենական կեանքի համար կ'բղխէ» Սա ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է «շարունակաբար ցատկելով» (հմմտ. Ես. 58:11 և Հովհ. 7:38): Անապատում բնակվող մարդկանց համար, ջուրը կյանքի խորհրդանիշ էր և աստվածային տրամադրում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:15-26

¹⁵Կինը նորան ասեց. Տէր, տուր ինձ այն ջուրը, որ չ'ծարաւիմ, եւ չ'գամ այստեղ ջուր հանելու: ¹⁶Յիսուսը նորան ասեց. Գնա կանչիր քո մարդին, եւ եկ այստեղ: ¹⁷Կինը պատասխանեց եւ ասեց. Ես մարդ չ'ունիմ. Յիսուսը նորան ասեց. Լաւ ասեցիր թէ Մարդ չ'ունիմ. ¹⁸Որովհետեւ դու հինգ մարդ ես ունեցել, եւ նա որ հիմա ունիս, քո մարդը չէ. Դա ճշմարիտ ասեցիր: ¹⁹ Կինը նորան ասեց. Տէր, տեսնում եմ որ դու մարգարէ ես: ²⁰Մեր հայրերը այս սարումը երկրպագութիւն արին. Եւ դուք ասում էք, թէ Երուսաղէմումն է այն տեղն, ուր պէտք է երկրպագութիւն անել: ²¹ Յիսուսը նորան ասեց. Կին, հաւատա ինձ, որ ժամանակ կ'գայ, որ այն ժամանակ ոչ այս սարումը կ'երկրպագէք Հօրը, եւ ոչ էլ Երուսաղէմումը: ²²Դուք երկրպագում էք նորան, որ դուք չ'գիտէք. Մենք երկրպագում ենք նորան, որ գիտենք. որովհետեւ փրկութիւնը Հրեաներիցն է: ²³Բայց ժամանակ կ'գայ, եւ հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով եւ ճշմարտութիւնով կ'երկրպագեն Հօրը, որովհետեւ Հայրն էլ այսպէս է ուզում իր երկրպագողներին: ²⁴ Աստուած Հոգի է, եւ նորան երկրպագողները պէտք է հոգով եւ ճշմարտութիւնով երկրպագեն: ²⁵ Կինն ասեց նորան. Գիտեմ, որ Մեսիան պիտի գայ (որ Քրիստոս է կոչվում). Երբոր նա կ'գայ, ամեն բան կ'պատմէ մեզ: ²⁶ Յիսուսը նորան ասեց. Ես եմ, որ քեզ հետ խօսում եմ:

4:15 Այդ կինը, ինչպէս Նիկողեմոսը, դեռեւ Հիսուսին հասկանում է շատ ֆիզիկական (բառացի) մակարդակով: Սա անսովոր չէր, նույնիսկ աշակերտների համար: Նրանք հաճախ սխալ էին մեկնաբանում Հիսուսին՝ բաց թողնելով Նրա փոխաբերական լեզուն (տես Հովհ. 4: 31-33; 11: 11-13):

4:16 UBS⁴ չի էլ նշում այն հավանականությունը, որ «Հիսուս» անունը ավելացված է (տես NKJV, NRSV, NJB, REB): NET Աստվածաշունչը տալիս է ձեռագրի ապացույց իր ներառման համար (էջ 1903, այսինքն, MSS Ն^{*c}, A, C², D, L և W, բայց դա բացակայում է MSS P^{66,75}, B, C): Դպիրներն հակված էին տեքստը դարձնել հստակ և ավելի հեշտ հետևող:

▪ «Գնա կանչիր» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որին հետևում է ԱՕՐԻՍՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ:

4:17 «Ես մարդ չ'ունիմ» Մեղք պէտք է հանդիմանվի: Հիսուսը չի արդարացնում, բայց և չի էլ դատապարտում:

4:18 «դու հինգ մարդ ես ունեցել» Հիսուսն օգտագործում է գերբնական գիտելիքներ ցնցելու կնոջը ֆիզիկական ոլորտից դեպի հոգևոր ոլորտ (տես 1:48):

4:19 «տեսնում եմ որ դու մարգարէ ես» Կինը դեռ չէր հասել Մեսիական փոխըմբռնման: Նա փորձում էր ծածկել իր Աստծո հետ ունեցած հարաբերությունների լուրջ խնդիրը՝ օգտագործելով հաճոյախոսություն (ինչպէս Նիկողեմոսը 3: 2):

Այլ մեկնաբաններ սա տեսնում են, որպէս Մեսիական համարներ Բ Օր. 18: 15-22:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ
I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
Ա. Սկզբնական պնդումներ
1. Հավատացյալ համայնքը չի համաձայնում, թէ ինչպէս պէտք է մեկնաբանել

մարգարեությունը: Այլ ճշմարտություններ են ստեղծվել որպես ուղղափառ դիրքորոշում դարերի ընթացքում, բայց ոչ այս մեկը:

2. Կան ՀԿ մարգարեության մի քանի լավ սահմանված փուլերը

ա. նախամիապետական

(1) ֆիզիկական անձինք, որոնք կանչվել են մարգարեներ

(ա) Աբրահամ - Օննդ. 20: 7

(բ) Մովսես - Թվ. 12: 6-8; Բ Օր. 18:15; 34:10

(գ) Ահարոն - Ելից 7: 1 (Մովսեսի խոսնակը)

(դ) Մարիամ - Ելից 15:20

(ե) Մովդադ և Ելդադ - Թվ.11: 24-30

(զ) Դեբորա - Դատ. 4: 4

(է) անանուն - Դատ. 6: 7-10

(ը) Սամուել - Ա Թագ. 3:20

(2) հիշատակումներ մարգարեների մասին որպես խումբ- Բ Օր. 13: 1-5; 18: 20-22

(3) մարգարեական խումբ կամ զիլդիա/գունդ - Ա Թագ. 10: 5-13; 19:20; Գ Թագ. 20: 35,41; 22: 6,10-13. Դ Թագ. 2: 3,7; 4: 1,38; 5.22; 6: 1 և այլն:

(4) Մեսիան կոչվում էր մարգարե Բ Օր. 18: 15-18

բ. չգրված միապետական (դիմում են թագավորին):

(1) Գադ - Ա Թագ. 22: 5; Բ Թագ. 24:11; Ա Մնաց. 29:29

(2) Նաթան - Բ Թագ. 7: 2; 12:25; Գ Թագ. 1:22

(3) Աքիա - Գ Թագ. 11:29

(4) Յեու - Գ Թագ. 16: 1,7,12

(5) անանուն - Գ Թագ. 18: 4,13; 20: 13,22

(6) Եղիա - Գ Թագ. 18 - Դ Թագ. 2

(7) Միքիա - Գ Թագ. 22

(8) Եղիսե - Դ Թագ. 2: 8,13

գ. դասական գրված մարգարեներ (դիմում են ժողովրդին, ինչպես նաև թագավորին) Եսայիայից- Մադաքիա (բացառությամբ Դանիելի)

Բ. Աստվածաշնչյան Տերմիններ

1. *Ro'eh* = «տեսանող» Ա Թագ. 9: 9. Այս հղում ինքնին ցույց է տալիս անցումը դեպի *nabi* տերմինի: *Ro'eh* վերցված է «տեսնել» ընդհանուր տերմինից: Այս անձը գիտակցել է Աստծո ճանապարհները և ծրագրերը և Աստծո կամքը պարզելու հարցում խորհուրդ են տվել նրան դիմել:

2. *Hozeh* = «տեսանող» Բ Թագ. 24:11: Դա հիմնականում հոմանիշ է *Ro'eh*-ին: Դա «տեսնել» տերմինի հազվագյուտ ձևերից է: Դերբայական ձևն առավել հաճախ է օգտագործվում՝ անդրադառնալով մարգարեներին (այսինքն «ահա»):

3. *Nabi'* = «մարգարե» ծագել է աքքադերեն *Nabu* ԲԱՅԻՑ = «կանչել» և արաբերեն *Naba'a* = «հայտարարել»: Սա առավել տարածված տերմին է Հին Կտակարանում, որը բնութագրում է մարգարեին: Այն օգտագործվում է ավելի քան 300 անգամ: Ճշգրիտ ստուգաբանությունն անորոշ է, բայց «կանչել»-ը այժմ թվում է, լավագույն տարբերակն է: Հնարավոր է, որ լավագույն ըմբռնումը գալիս է ՅԱՀՎԵԻ նկարագրությունից՝ Մովսեսի կապը փարավոնի հետ Ահարոնի միջոցով (տես Ելից 4: 10-16; 7: 1; Բ Օր. 5: 5: Մարգարեն նա է, ով խոսում է Աստծուց Իր ժողովրդին (Ամովս 3: 8; Երեմ. 1: 7,17; Եզեկ. 3: 4):

4. Բոլոր երեք տերմինները, որոնք օգտագործվում են մարգարեի պաշտոնի համար Ա Մնաց. 29:29; Սամուել - *Ro'eh*, Նաթան - *Nabi'* և Գադ - *Hozeh*:

5. 'ish ha - 'elohim «Աստծո մարդ» արտահայտությունը նաև ավելի լայն նշանակություն ունի Աստծո խոսնակի համար: Այն օգտագործվում է մոտ 76 անգամ ՀԿ «մարգարեի» իմաստով:
6. «Մարգարե» տերմինը ունի հունական ծագում: Այն առաջացել է (1) *pro* = «առաջ» կամ «համար» և (2) *phemi* = «խոսել»:

II. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ

- Ա. «Մարգարեություն» տերմինն ուներ ավելի լայն իմաստային դաշտ եբրայերենում, քան անգլերենում: Հետուի պատմական գրքերը մինչև Թագավորաց գրքերը (բացառությամբ, Հռութի), հրեաների կողմից պիտակավորված են որպես «նախկին կամ վաղ մարգարեներ»: Թե Աբրահամը (Ծննդ. 20: 7; Սաղ. 105: 5) և թե Մովսեսը (Բ Օր. 18:18) նշված են որպես մարգարեներ (նաև Մարիամը Ելից 15:20): Հետևաբար, զգուշացեք ենթադրություն անել անգլերեն սահմանումից:
- Բ. «Մարգարեությունը կարող է իրավաչափորեն սահմանվել որպես պատմությունը հասկացող, որն ընդունում է նշանակությունը միայն աստվածային մտահոգության, աստվածային նպատակի, աստվածային մասնակցության առումով»- *Interpreter's Dictionary of the Bible*, հատոր 3, էջ 896:
- Գ. «Մարգարեն ոչ փիլիսոփա է, ոչ էլ սիստեմատիկ աստվածաբան, այլ ուխտի միջնորդ, որը Աստծո խոսքը մատուցում է Իր ժողովրդին, որպեսզի ձևավորի նրանց ապագան՝ բարեփոխելով նրանց ներկան» - «Մարգարեներ և Մարգարեություն», *Encyclopedia Judaica*/ Հրեական Հանրագիտարան հատոր 13, էջ 1152:

III. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Ա. Մարգարեության միջոցով Աստված խոսում է Իր ժողովրդի հետ, ուղղորդելով նրանց ներկան և հույս տալով, որ վերահսկում է նրանց կյանքերն ու համաշխարհային իրադարձությունները: Նրանց ուղերձը հիմնականում կորպորատիվ է՝ հավաքական: Այն կոչված է սաստելու, հանդիմանելու, խրախուսելու, հավատք և ապաշխարություն ծնելու, և տեղեկացնելու Աստծո ժողովրդին Իր մասին և Իր ծրագրերի: Նրանք Աստծու ժողովրդին պահում են Աստծո ուխտերին հավատարիմ: Հավելելով ասենք, որ հաճախ այն օգտագործվում է Աստծո ընտրությունը խոսնակին հստակ հայտնելու համար (Բ Օրին. 13: 1-3; 18: 20-22): Մա, վերջ ի վերջո, պետք է վերաբերվի Մեսիային:
- Բ. Հաճախ, մարգարեն վերցնում էր իր օրերի պատմական կամ աստվածաբանական ճգնաժամը և դա կանխատեսում վախճանաբանական իմաստով: Պատմության այս վերջը ժամանակի տեսակետը եզակի է Իսրայելում և իր աստվածային ընտրության և ուխտի խոստումներին իմաստով:
- Գ. Մարգարեի պաշտոնը թվում է, հավասարակշռում է (Երեմ. 18:18) և զավթում է Քահանայապետի պաշտոնը որպես Աստծո կամքն իմանալու միջոց: Ուրիմն ու Թումիմը փոխանցում էին Աստծո խոսնակի բանավոր ուղերձը: Մարգարեի պաշտոնը թվում է Իսրայելում անցել է Մադաքիայից հետո: Այն նորից չի հայտնվում 400 տարի անց Հովհաննես Մկրտիչով: Անորոշ է, թե ինչպես է Նոր Կտակարանի «մարգարեության» պարզևր առնչվում Հին Կտակարանի հետ: Նոր Կտակարանի մարգարեները (Գործք 11: 27-28; 13: 1; 14: 29,32,37; 15:32; I Կորնթ. 12: 10,28-29; Եփես. 4:11) նոր հայտնության կամ աստվածաշնչի հայտնողները չեն, այլ ուխտի իրավիճակներում Աստծո կամքի կանխատեսողներ:
- Դ. Մարգարեությունը բացառապես կամ հիմնականում կանխատեսող բնույթ չունի: Կանխատեսումը մեկ կերպ է հաստատելու իր պաշտոնը և իր պատգամը, բայց պետք է նշվի, որ «ոչ պակաս, քան 2% - ը ՀԿ մարգարեության Մեսիական է: Ոչ պակաս, քան 5% մասնավորապես նկարագրում է Նոր Ուխտը: Ոչ պակաս, քան 1% վերաբերում է սպասվող

իրադարձություններին»(Fee and Stuart, *How to Read the Bible For All Its Worth*, էջ 166):

- Ե. Մարգարեներն Աստծուն ներկայացնում են ժողովրդին, իսկ քահանաները մարդկանց են ներկայացնում Աստծուն: Սա ընդհանուր դրույթ է: Կան բացառություններ, ինչպիսիք Ամբակումն է, ով հարցերով է խոսում Աստծո հետ:
- Զ. Պատճառներից մեկը, որ դժվար է հասկանալ մարգարեներին, այն է, որ մենք չգիտենք, թե ինչպես են կառուցված նրանց գրքերը: Դրանք ժամանակագրականորեն չեն դասավորված: Նրանք, կարծես, թեմատիկ են, սակայն միշտ չէ, որ այդպես է: Հաճախ չկա ակնհայտ պատմական միջավայր, ժամկետներ կամ հստակ բաժանում պատգամների միջև: Այդ գրքերը դժվար են (1) կարդալ մեկ շնչով (2) ուրվագծել ըստ թեմայի և (3) պարզել կենտրոնական ճշմարտությունը կամ հեղինակային մտադրությունը յուրաքանչյուր պատգամում:

IV. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Հին Կտակարանում կարծես թե «մարգարե» և «մարգարեություն» գաղափարի զարգացում կա: Վաղ Իսրայելում կար մարգարեների ընկերություն, որը գլխավորում էր ուժեղ խարիզմատիկ առաջնորդ, օրինակ Եղիան կամ Եղիսեն: Երբեմն «մարգարեների որդիներ» արտահայտությունը օգտագործվում էր այս խմբի համար (Դ Թագ. 2): Մարգարեները բնութագրվում էին էքստազի ձևերով (Ա Թագ. 10: 10-13; 19: 18-24):
- Բ. Սակայն, այդ ժամանակն արագ անցավ դեպի անհատ մարգարեների: Կային այնպիսի մարգարեներ (թե ճշմարիտ և թե կեղծ) ովքեր հանդես էին գալիս թագավորի հետ և ապրում էին պալատում (Գադ, Նաթան): Բացի այդ, եղել են անկախ, երբեմն Իսրայելի հասարակությունից բոլորովին անկապ (Ամովս): Նրանք եղել են թե տղամարդ և թե կին (Դ Թագ. 22:14):
- Գ. Մարգարեն հաճախ հայտնում էր ապագան, պայմանավորված մարդու անմիջական պատասխանի հետ: Հաճախ մարգարեի խնդիրն էր բացել Աստծո տիեզերական ծրագիրը Իր ստեղծագործության համար, որի վրա չի ազդում մարդու արձագանքը: Այս տիեզերական վախճանաբանական ծրագիրը յուրահատուկ է Հին Մերձավոր Արևելքում մարգարեների շրջանում: Կանխատեսումը և Ուխտի հավատարմությունը մարգարեական պատգամների երկվորյակ կենտրոնական մտքերն են (հմմտ. Fee and Stuart, էջ 150): Սա ենթադրում է, որ մարգարեները հիմնականում ուշադրություն էին դարձնում կենտրոնական մտքի վրա: Նրանք սովորաբար, բայց ոչ բացառապես, ուղերձով դիմում էին ժողովրդին:
- Դ. Մարգարեական նյութի մեծ մասը բանավոր էր ներկայացվում: Ավելի ուշ դա խմբավորվեց ըստ թեմայի, ժամանակագրության կամ այլ Մերձավոր արևելյան գրականության օրինակների, որոնք չեն հասել մեզ: Քանի որ դա բանավոր էր, այն կառուցված չէր գրավոր արձակի տեսքով: Սա դժվարացնում էր գիրքը ուղիղ կարդալը և դժվար էր հասկանալ առանց կոնկրետ պատմական ֆոնի:
- Ե. Մարգարեները օգտագործել են մի քանի օրինակներ՝ իրենց պատգամները փոխանցելու համար:
 - 1. Դատարանի տեսարան - Աստված Իր ժողովրդին տանում է դատարան, հաճախ դա ամուսնալուծության դեպք է, որտեղ ՅԱՀՎԵՆ մերժում է իր կնոջը (Իսրայելին) իր անհավատարմության համար (Ովսեէ 4; Միքիա 6):
 - 2. Թաղման արարողություն - այս տեսակ պատգամի հատուկ չափման միավոր և դրան բնորոշ «վայ» արտահայտությունը առանձնացնում է՝ տալով դրան հատուկ ձև (Եսայիա 5; Ամբակում 2):
 - 3. Ուխտի օրհնության ազդարարում - Ուխտի պայմանական բնույթն ընդգծվում է, իսկ հետևանքները, թե դրական և թե բացասական, ասված են ապագայի համար (Բ

Օրին. 27-28):

V. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ՕԳՏԱԿԱՐ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ

- Ա. Գտեք բուն մարգարեի (խմբագրի) մտադրությունը՝ նշելով յուրաքանչյուր պատգամի պատմական և գրական կոնտեքստը: Մովորաբար դա իր մեջ ունենում է Իսրայելի Մովսիսական Ուխտի խախտելը այս կամ այն կերպ:
- Բ. Կարդալ և մեկնաբանել ամբողջ պատգամը, ոչ թե պարզապես մի մասը. ուրվագծել այն ըստ բովանդակության: Տեսեք, թե ինչպես է դա առընչվում շրջակա պատգամների հետ: Փորձեք ուրվագծել ամբողջ գիրքը:
- Գ. Ենթադրենք հատվածի բառացի մեկնաբանությունը մինչև ինչ - որ բան տեքստում ինքնին չմատնանշի փոխաբերական իմաստը, ապա այլաբանական լեզուն դարձրեք արձակ:
- Դ. Վերլուծել խորհրդանշական գործողությունը պատմական և զուգահեռ հատվածների լույսի ներքո: Հիշեք, որ այս հին Մերձավոր Արևելյան գրականություն ոչ արևմտյան է և ոչ էլ ժամանակակից գրականություն:
- Ե. Զգուշությամբ մոտեցեք կանխատեսմանը:
 - 1. Արդյո՞ք նրանք բացառապես հեղինակի օրվա համար են:
 - 2. Արդյո՞ք նրանք հետագայում իրագործվեցին Իսրայելի պատմության մեջ:
 - 3. Արդյո՞ք նրանք դեռ գալիք իրադարձություններ են:
 - 4. Արդյո՞ք նրանք ունեն ժամանակակից իրականացում և նաև գալիքի իրականացում:
 - 5. Թույլ տվեք, որ Աստվածաշնչի հեղինակները, և ոչ թե ժամանակակից, առաջնորդեն ձեր պատասխանները:
- Զ. Հատուկ մտահոգություններ
 - 1. Արդյո՞ք կանխատեսումը որակավորվում է պայմանական պատասխանով:
 - 2. Արդյո՞ք համոզիչ է, թե ում է մարգարեությունը հասցեագրված (և ինչու):
 - 3. Արդյո՞ք կա հավանականություն թե աստվածաշնչորեն և / կամ պատմականորեն բազմակի իրականացման համար:
 - 4. ՆԿ հեղինակները ներշնչանքով կարողացան տեսնել Մեսիային ՀԿ շատ տեղերում, որոնք ակնհայտ չեն մեզ համար: Նրանք կարծես, օգտագործում են տիպաբանություն կամ բառախաղ: Քանի որ մենք ներշնչված չենք, ավելի լավ է այս մոտեցումը թողնենք նրանց:

VI. ՕԳՏԱԿԱՐ ԳՐՔԵՐ

- Ա. *A Guide to Biblical Prophecy* by Carl E. Amending և W. Ward Basque
- Բ. *How to Read the Bible for All Its Worth* by Gordon Fee և Douglas Stuart
- Գ. *My Servants the Prophets* by Edward J. Young
- Դ. *Plowshares and Pruning Hooks: Rethinking the Language of Biblical Prophecy and Apocalyptic* by D. Brent Sandy
- Ե. *New International Dictionary of Old Testament Theology and Exegesis*, հատոր 4, էջ 1067-1078

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

- I. Սա նույնը չէ, ինչ չին Կտակարանի մարգարեությունը, որն ունի ռաբբիական հասկացողություն հայտնության ներշնչվածության մասին ստացած ՅԱՀՎԵ-ից (հմմտ. Գործք 3:18,21; Հռ. 16:26): Միայն մարգարեները կարող էին Սուրբ Գիրք գրել
 - Ա. Մովսեսը կոչվում էր մարգարե (հմմտ. 2 Օրին. 18:15-21)
 - Բ. Պատմական գրքերը (Հեսու – Թագավորաց գրքեր [բացի Հռութից]) կոչվում էին «վաղ մարգարեներ» (հմմտ. Գործք 3:24):
 - Գ. Մարգարեները փոխարինեցին Քահանայապետին, որպես ինֆորմացիայի աղբյուր Աստծուց (հմմտ. Եսայա -Մաղաքիա):
 - Դ. Եբրայական Կանոնի երկրորդ բաժանումը կոչվում է «Մարգարեները» (հմմտ. Մաթ. 5:17;

- 22:40; Գուկ. 16:16; 24:25,27; Հն. 3:21):
- II. Նոր Կտակարանում մարգարեության գաղափարը օգտագործվում է մի քանի իմաստով
- Ա. Հին Կտակարանի մարգարեները և նրանց ներշնչված հայտնությունը (հմմտ. Մաթ. 2:23; 5:12; 11:13; 13:14; Հն. 1:2)
- Բ. պատգամ, որն ավելի շատ ուղղված է անհատին, քան թե մարդկանց խմբին (Հին Կտակարանի մարգարեները հիմնականում խոսեցին Իսրայելին)
- Գ. Հովհաննես Մկրտիչը (հմմտ. Մաթ. 11:9; 14:5; 21:26; Գուկ. 1:76) և Հիսուսը, որպես Աստծո թագավորության հռչակողներ (հմմտ. Մաթ. 13:57; 21:11,46; Գուկ. 4:24; 7:16; 13:33; 24:19): Հիսուսը պնդեց, որ Ինքն ավելի մեծ է քան մարգարեները (հմմտ. Մաթ. 11:9; 12:41; Գուկ. 7:26):
- Դ. Նոր Կտակարանի մյուս մարգարեները
1. Հիսուսի երկրավոր կյանքը, ինչպես արձանագրված է Գուկասի Ավետարանում (այն է, Մարիամի հիշողությունները)
 - ա. Եղիսաբեթ (հմմտ. Գուկաս 1:41-42)
 - բ. Ջաքարիա (հմմտ. Գուկ. 1:67-79)
 - գ. Սիմեոն (հմմտ. Գուկ. 2:25-35)
 - դ. Աննա (հմմտ. Գուկ. 2:36)
 2. ծաղրական կանխագուշակություններ (հմմտ. Կայափա, Հովհ. 11:51)
- Ե. անձ, որը հռչակում է ավետարանը (համապատասխան պարզևների ցանկը I Կոր. 12:28-29; Եփ. 4:11)
- Չ. դեռևս շարունակվող պարզև եկեղեցում (հմմտ. Մաթ. 23:34; Գործք 13:1; 15:32; Հն. 12:6; I Կոր. 12:10,28-29; 13:2; Եփ. 4:11): Երբեմն սա կարող է վերաբերվել կանանց (հմմտ. Գուկ. 2:36; Գործք 2:17; 21:9; I Կոր. 11:4-5):
- Է. Վախճանաբանական գիրք՝ Հայտնություն (հմմտ. Հայտ. 1:3; 22:7,10,18,19)
- III. Նոր Կտակարանի մարգարեներ
- Ա. Նրան չեն տալիս ներշնչված հայտնություն այն իմաստով, ինչպես Հին Կտակարանի մարգարեներն էին անում (այն է, Սուրբ Գիրքը): Այսպիսի պնդումը հնարավոր է «հավատք» տերմինի շնորհիվ (այն է, ավարտված ավետարան), ինչպես օգտագործվում է Գործք 6:7; 13:8; 14:22; Գաղ. 1:23; 3:23; 6:10; Փիլ. 1:27; Հուդա 3,20: Այս գաղափարը պարզ է դառնում Հուդա 3 ամբողջ արտահայտությունից «որ մրցիք սրբերին միանգամ աւանդուած հաւատքովը»: «Միանգամ աւանդուած» հավատքը վերաբերվում է քրիստոնեական ճշմարտություններին, վարդապետություններին, գաղափարներին, աշխարհայացքի ուսմունքներին: Ընդգծված «մեկ անգամ տրված» արտահայտությունը հանդիսանում է աստվածաշնչյան հիմք՝ աստվածաբանորեն սահմանափակելով Նոր Կտակարանի գրվածքների ներշնչվածությունը և թույլ չտալով ավելի ուշ կամ ուրիշ գրվածքներ համարվեն հայտնություն: Նոր Կտակարանում կան շատ «մոխրագույն գոնա» ներ, որոնք անորոշ են, անհաստատ, սակայն հավատացյալները հավատքով պնդում են, որ ամեն բան ինչ անհրաժեշտ է «հավատքի» և «գործնական կյանք» ապրելու համար կա Նոր Կտակարանում: Այս գաղափարը ուրվագծվել է այսպես կոչված «հայտնության եռանկյունի» անունով:
1. Աստված Իրեն հայտնել է ժամանակի -տարածություն պատմության մեջ (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ)
 2. Նա ընտրել է որոշակի մարդկանց, որպեսզի արձանագրեին և բացատրեին Իր գործողությունները (ՆԵՐՇՆՉԱՆՔ)
 3. Նա տվել է Իր Հոգին մարդկանց սրտերն ու մտքերը բացելու համար, որպեսզի հասկանան այս գրվածքները — ոչ բացարձակ և վերջնական ձևով, այլ բավարար փրկության համար և արդյունավետ Քրիստոնեական կյանքի համար (ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ)
- Հիմնական միտքն այն է, որ ներշնչանքը սահմանափակվում է Սուրբ Գրքի հեղինակներով: Ուրիշ հեղինակային գրվածքներ, տեսիլքներ կամ հայտնություններ չկան: Կանոնը փակված է: Մենք ունենք ամբողջ ճշմարտությունը՝ Աստծուն ճիշտ արձագանքելու համար: Այս ճշմարտությունն ավելի լավ տեսանելի է, երբ համեմատում ենք աստվածաշնչյան հեղինակներին և տեսնում թե որքան համահունչ են, սակայն

տարածայն են անկեղծ և աստվածահաճո հավատացյալները: Ժամանակակից գրողներից կամ քարոզիչներից ոչ մեկը չունի այն աստվածային առաջնորդության աստիճանը, որ ունենին Սուրբ Գրքի հեղինակները:

- Բ. Նոր Կտակարանի մարգարեները որոշ ձևերով նման են Հին Կտակարանի մարգարեներին.
 1. գալիք իրադարձությունների կանխագուշակում (հմմտ. Պողոս, Գործք 27:22; Ագաբոս, Գործք 11:27-28; 21:10-11; ուլիշ անանուն մարգարեներ, Գործք 20:23)
 2. վճռի հռչակում (հմմտ. Պողոս, Գործք 13:11; 28:25-28)
 3. սիմվոլիկ/խորհրդավոր գործողություն, որը հստակ պատկերում է որոշակի իրադարձություն (հմմտ. Ագաբոս, Գործք 21:11)
- Գ. Նրանք իրոք երբեմն հռչակում են Ավետարանի ճշմարտությունները կանխագուշակության ձևով (հմմտ. Գործք 11:27-28; 20:23; 21:10-11), բայց սա չէ հիմնական իմաստը: I Կորնթացիս գրքում եղած մարգարեությունը հիմնականում Ավետարանը փոխանցելու համար է(հմմտ. 14:24,39):
- Գ. Նրանք հանդիսանում են այն կարևոր , իր ժամանակին համապատասխանող միջոցները, որի միջոցով Սուրբ Հոգին բացահայտում է Աստծո ճշմարտության գործնական կիրառությունը յուրաքանչյուր նոր իրավիճակի, մշակույթի կամ ժամանակաշրջանի համար (հմմտ. I Կոր. 14:3):
- Ե. Նրանք բավականին ակտիվ գործում էին «Պողոս»-յան եկեղեցիների վաղ ժամանակաշրջանում (հմմտ. I Կոր. 11:4-5; 12:28,29; 13:29; 14:1,3,4,5,6,22,24,29,31, 32,37,39; Եփ. 2:20; 3:5; 4:11; I Թես. 5:20) և հիշատակված են *Didache* մեջ (գրված առաջին կամ երկրորդ դարի վերջին, տարեթիվն անորոշ է) և երկրորդ և երրորդ դարի մոնտանիզմի մեջ հյուսիսային Աֆրիկայում:

IV. Արդյո՞ք Նոր Կտակարանի պարզևները դադարեցրել են իրենց գործելը

- Ա. Այս հարցին դժվար է պատասխանել: Ճիշտ եզրահանգման գալու համար, նախ և առաջ պետք է հասկանալ հոգևոր պարզևների նպատակը: Արդյո՞ք դրանք մտադրված են եղել Ավետարանի ճշմարտության վաղ քարոզչությունն իրականացնելու համար , թե՞ այսօր էլ շարունակում են միջոց հանդիսանալ ծառայության մեջ, թե եկեղեցում և թե կորսված աշխարհին հասնելու համար:
- Բ. Որտե՞ղ պետք փնտրել այս հարցի պատասխանը: Եկեղեցու պատմության մեջ թե՞ միանշանակ Նոր Կտակարանում: Այն մասին, թե հոգևոր պարզևները ժամանակավոր էին, Նոր Կտակարանում ցուցում չկա: Նրանք, ովքեր փորձում են օգտագործել I Կոր. 13:8-13 հիմնավորելու համար այս հարցը, չարաշահում են հեղինակի մտադրությունը տվյալ հատվածի վերաբերյալ, որը հաստատում է, որ բացի սիրուց ամեն բան պետք է անցնի և վերջանա:
- Գ. Ես հակված եմ ասելու, որ քանի որ Նոր Կտակարանը, և ոչ թե եկեղեցու պատմությունն է, գերագույն հեղինակությունը, ապա հավատացյալներին պետք է պնդել, որ հոգևոր պարզևների գործածումը շարունակվում է: Ինչևէ, ես հավատում եմ, որ մշակույթն ազդում է մեկնաբանության վրա: Որոշ պարզ տեքստեր այլևս կիրառելի չեն (այն է, սուրբ համբույր,կանայք գլուխները ծածկելը, տնային պաշտամունքները և այլն): Եթե մշակույթն ազդում է տեքստ վրա, ապա ինչու՞ եկեղեցու պատմությունը չի կարող իր ներգործությունն ունենալ նրա վրա:
- Դ. Պարզապես սա այն հարցն է, որին չի կարելի որոշակի, հստակ պատասխանել: Որոշ հավատացյալների պարզևների գործածությունը դարադրելու կողմն են, որոշներն էլ դեմ: Այստեղ, ինչպես նաև շատ ուրիշ դեպքերում, մեկնաբանության հետ կապված վերջնական ենթադրությունները, վճռորոշ դեր են խաղում քրիստոնյայի սրտում: Նոր Կտակարանը անորոշ է, երկիմաստ և մշակույթային: Դժվարն այն է, թե ինչպես որոշել, որ տեքստերն են մշակույթային/ պատմական և որոնք՝ հավիտենական (հմմտ. Գործքն Ֆիի և Գուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչն իր ամբողջ արժողությամբ» գիրքը [Fee and Stuart's *How to Read the Bible for All Its Worth*], էջ. 14-19 և 69-77): Սա հենց այն դեպքն է, երբ հանդիպում են ազատության և պատասխանատվության քննարկումները, որոնք գտնվում են Հռ. 14:1-15:13 և I Կոր. 8-10, և շատ կարևոր են: Թե ինչպես ենք մենք պատասխանում այս հարցին ունի կարևոր նշանակություն երկու պատճառներով, Յուրաքանչյուր հավատացյալ պետք է քայլի իր ունեցած հավատքի յուսի ներքո: Աստված

նայում է մեր սրտերին ու դրդապատճառներին: Յուրաքանչյուր հավատացյալ պետք է թույլ տա մյուս հավատացյալներին քայլել իրենց ունեցած հավատքի հասկացողության համաձայն: Աստվածաշնչյան սահմանների մեջ պետք է լինի փոխադարձ հանդուրժողականություն: Աստված ուզում է որ մենք սիրենք միմյանց ինչպես Ինքն է սիրում:

Ե. Ամփոփելով ասենք, որ քրիստոնեությունը հավատքի և սիրո կյանք է, և որ թե կատարյալ աստվածաբանության: Աստծո հետ ունեցած կապը, որը մեծ ազդեցություն է թողնում ուրիշների հետ ունեցած մեր հարաբերությունների վրա, ավելի կարևոր է քան որոշակի հստակ տեղեկություն ունենալը կամ հավատքի կատարյալ վիճակը:

4:20 «Մեր հայրերը» Սա վերաբերում է Աբրահամին և Հակոբին (տես Ծննդ. 12: 7; 33:20): Նա հաստատում է ուխտի մեջ ընդգրկվելու իր զգացողությունը (տես 8: 31-59):

▪ **«այս սարումը երկրպագութիւն արին»** Սա վերաբերվում է աստվածաբանական փաստարկին, թե Աստծուն (ՅԱՀՎԵ) որտեղ պետք է երկրպագեն: Հրեաներն ասում էին Մորեա լեռան վրա (հրեական Տաճարի կողմը), իսկ սամարացիները՝ Քորազիմ սարի (սամարական տաճարն ավերվել է 129 մ.թ.ա. Հովհաննես Հիրկանոսի կողմից):

Մեր օրերում դա կլինի փորձ մարդկանց կողմից, որոնց մենք վկայում ենք, խուսափելու Քրիստոսի հետ ունեցած իրենց հարաբերության հարցից, բերելով աստվածաբանական շրջանցումներ: Մարդիկ սիրում են ուսումնասիրել կրոն և փիլիսոփայություն, քանի դեռ դա չի ազդում նրանց վրա անձնապես (հմմտ. 3: 19-21):

4:21 «Ժամանակ կ'գայ, որ այն ժամանակ ոչ այս սարումը կ'երկրպագէք Հօրը, եւ ոչ էլ Երուսաղէմումը» Սա պետք է որ ցնցող հայտարարություն լիներ թե նրա և թե Իր աշակերտների համար: Խնդիրը որտեղը չէ, այլ ով:

4:22 «որովհետեւ փրկութիւնը Հրեաներիցն է» Սա հաստատում է Մեսիայի ծագումը (տես Ծննդ. 12: 2-3; 49: 8-12; Ես. 2: 3; Հռոմ. 9: 4-5):

4:23 «Բայց ժամանակ կ'գայ, եւ հիմա է» Սա կարող է ակնարկ լինել Մաղ. 1:11 համընդհանուր պաշտամունքի մասին: Ակնհայտ է, որ Հիսուսը բերեց հավիտենական կյանքի պարզը իր կյանքի ընթացքում, ինչպես նաև Իր մահից հետո: Այս միտքը արտացոլում է լարվածությունը, որը գոյություն ունի Մեսիայի երկու Գալուստների միջև: Երկու հրեական ժամանակաշրջանները (տես Հատուկ Թեմա I Հովհ. 2:17) այժմ համընկել են: Հոգու Նոր Ժամանակաշրջանը ներկա է, բայց մենք դեռևս ապրում ենք չարի և մեղքի հին ժամանակաշրջանում:

Հիսուսն, անշուշտ, պնդում է, որ նոր ժամանակաշրջանը սկսվել էր Իրենով: Հոգու ժամանակաշրջանը, Մեսիական ժամանակաշրջանը, արդեն հանդիսավոր կերպով բացված է:

▪ **«հոգով եւ ճշմարտութիւնով»** «Հոգի» տերմինը (տես Հատուկ Թեմա 3: 8) խոսում է պաշտամունքի մասին, որը հիմնված չի տեղի կամ ֆիզիկականի վրա: «Ճշմարտություն» տերմինը օգտագործվել է հունական աշխարհում խոսելու հոգեկան գաղափարի մասին, իսկ եբրայերեն ֆոնը հավատարմության կամ հավաստիության մասին է: Տես Հատուկ Թեմաները Ճշմարտություն 6:55 և 17: 3:

▪ **«Հօրը»** Նոր Կտակարանում շատ անսովոր էր Աստծուն «Հայր» կոչել առանց ավելացնելու հղում Հիսուսին որպես Իր միածին Որդու:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՅՐ

Հին Կտակարանը ներկայացնում է մտերմիկ ընտանեկան փոխաբերություն Աստված որպես Հայր; Իսրայել ազգը հաճախ նկարագրվում է որպես Եհովայի «որդի» (հմմտ. Ովս. 11:1; Մադ. 3:17) նույնիսկ ավելի շուտ 2 Օրինացում օգտագործվում է Աստված որպես Հայր նմանությունը (1:31) 2 Օրինաց 32 Իսրայելը կոչվում է «փր որդիները» իսկ Աստված կոչվում է «ձեր հայրը» այս նմանությունը հաստատվում է Սադ. 103:13 և զարգանում Սադ. 68:5 (որբերի հայրը) այն ընդունված էր մարգարեություններում (հմմտ. Ես. 1:2; 63:8; Իսրայելը որպես որդի, Աստված որպես Հայր, 63:16; 64:8; Եր. 3:4,19; 31:9):

Հիսուսը խոսեց արամերեն, որը նշանակում է, որ շատ տեղերում, որտեղ հայտնվում է «Հայր» բառը, հունարենով, *Pater*, այն կարող է վերաբերել արամերեն *Abba* (հմմտ. 14:36): Այս հայտնի տերմինը «Daddy» կամ «Papa» անդրադարձնում է Հիսուսի մտերմությունը Հոր հետ; Սա հայտնելով Իր հետևորդներին նա քաջալերում է մեզ մեր մտերմությունը Հոր հետ: «Father» տերմինը օգտագործվում էր միայն Հին Կտակարանում Եհովայի համար, բայց Հիսուսն այն օգտագործում է հաճախ: Սա մեծ հայտնություն է մեր նոր հարաբերությունը Աստծո հետ Քրիստոսի միջոցով:

▪ **«որովհետև Հայրն էլ այսպես է ուզում իր երկրպագողներին»** Աստված ակտիվորեն փնտրում է կորսված մարդկությանը (տես Ես. 55; Եզեկ. 18: 23,32; Դուկ. 19:10; Հովհ. 1:12; 3:16):

4:24 «Աստուած Հոգի է» Կան մի քանի կարճ մտքեր Հովհաննեսի գրվածքներում, որը նկարագրում է Աստծո բնույթը (1) Աստված սեր է (2) Աստված լույս է (3) Աստված հոգի է: Սա կարող է նշանակել (1) ոչ ֆիզիկական, (2) չի սահմանափակվում մեկ վայրի մեջ (3) կապված չէ ժամանակի հաջորդականության հետ կամ (4) երկնայինը ընդդեմ երկրայինի:

4:25 «Մեսիանս պիտի գայ» Մեսիա տերմինը հանդիպում է միայն երկու անգամ ՆԿ, երկուսն էլ Հովհաննեսի Ավետարանում (տես 1:41; 4:25):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԵՍԻԱ

Սա վերցված է իմ Դանիել 9: 6-ի մեկնաբանության նյութից: Այս համարը մեկնաբանելու դժվարությունն այն է, որ հնարավոր իմաստներ են կապված Մեսիա կամ Օծյալ տերմինի հետ (BDB 603):

1. օգտագործվում էր հրեա թագավորների համար (օր. I Թագ. 2:10, 12: 3)
2. օգտագործվում էր հրեա քահանաների համար (օր. Դև. 4: 3,5)
3. օգտագործվում էր Կյուրոսի համար (տես Ես. 45: 1)
4. # 1 և # 2 համակցված են Սադմոս 110 և Զաքարիայի 4
5. օգտագործվում էր Աստծո հատուկ գալստյան համար, Դավիթական թագավորը բերելու է արդարութեան նոր դարաշրջան
ա. Հուդայի ցեղից (տես Ծննդ. 49:10)
բ. Հեսեի տնից (հմմտ. II Թագ. 7)
գ. համընդհանուր թագավորում (հմմտ. Սադմոս 2; Ես. 9: 6; 11: 1-5; Միք. 5: 1-4)

Ես անձամբ հակված եմ «օծյալը» նույնականացնել Հիսուս Նազովրեցու հետ, քանի որ

1. հավիտենական Թագավորության ներկայացնելը 2-րդ գլխում չորրորդ կայսրության ընթացքում
2. «մարդու որդու» ներկայացնելու 7:1-ում, որին տրվում է հավիտենական թագավորությունը
3. փրկության մասին մտքերը 9:24-ում, որը մատնանշում է ընկած, մեղավոր աշխարհի պատմության գագաթնակետը
4. Հիսուսը մեջբերում է Դանիելի գրքից ՆԿ (տես Մատթ. 24:15; Մարկ. 13:14)

▪ **«Երբոր նա կ'գայ, ամեն բան կ'պատմէ մեզ»** Սա ցույց է տալիս, որ սամարացիները սպասում էին Մեսիային: Սա նաև ցույց է տալիս, որ նրանք տեսան, որ Մեսիան գալիս է հայտնելու Աստծո ամբողջականությունը:

4:26 «Ես եմ, որ քեզ հետ խօսում եմ» Սա հնարավոր է ակնարկում է Ես. 52: 6: Դա մի պարզ, բաց հաստատում է Իր Աստվածության մասին (այնքան տարբեր է Սինոպտիկ Ավետարաններից): Դա մի բառախաղ է «Ես եմ» արտահայտության, որը արտացոլում է Հին Կտակարանի Աստծո Ուխտի անունը՝ ՅԱՀՎԵ (տես Ելից 3:12, 14): Հիսուսն օգտագործեց Աստծո այս ՀԿ անունը, վկայակոչելով ՅԱՀՎԵԻ ինքնահայտնությունը տեսանելիորեն եւ հստակ Հիսուսի մեջ (հմմտ. Հովհ. 8:24, 28, 58; 13:19, 18: 5 համեմատել Ես. 41: 4, 43: 10; 46: 4): Այս մասնագիտացված «Ես եմ» արտահայտության օգտագործումը պետք է տարբերակված լինի հայտնի Հովհաննեսի «Ես եմ» արտահայտություններից, 6:35, 51; 8:12; 10: 7, 9, 11, 14; 11:25; 14: 6; 15: 1, 5, որոնց հաջորդում են որակավորված ԳՈՅԱԿԱՆՆԵՐ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:27-30
²⁷ Եւ սորա վերայ եկան նորա աշակերտները, եւ զարմանում էին, որ կնկայ հետ խօսում էր. Բայց ոչ որ չ'ասեց, Ի՞նչ էս ուզում, կամ ի՞նչ էս խօսում դորա հետ: ²⁸ Կինն էլ իր կուժը թողեց, եւ գնաց քաղաք, եւ մարդկանց ասեց. ²⁹ Եկեք տեսեք մի մարդ, որ ինձ ասեց բոլորը ինչ որ գործել եմ. Արդեօք նա՞ է Քրիստոսը: ³⁰ Եւ դուրս ելան քաղաքիցը, եւ նորա մօտ էին գալիս:

4:27 «Եւ զարմանում էին, որ կնկայ հետ խօսում էր» Մշակութային սա պարզապես չի արվում միայն ուղղափառ հրեաների կողմից:

▪ **«Բայց ոչ որ չ'ասեց, Ի՞նչ էս ուզում, կամ ի՞նչ էս խօսում դորա հետ»** Սա ականատեսի մեկնաբանություն է Հովհաննեսից: Նա պետք է որ լավ հիշեր այս ցնցող դեպքը:

4:28 «Կինն էլ իր կուժը թողեց» Սա այնպիսի մի գեղեցիկ վկայություն է, պատմականորեն նշված, որը ցույց է տալիս այս կնոջ հուզմունքը, քանի որ նա շտապեց վերադառնալ գյուղ՝ այդ մասին պատմելու համար (հմմտ. հհ. 29-30):

4:29 «Արդեօք նա՞ է Քրիստոսը» Քերականական ձևը ակնկալում է «ոչ» պատասխան, բայց կոնտեքստը ցույց է տալիս, որ նա, իրոք, հավատաց Նրան: Կոնտեքստը պնդում է քերականությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:31-38
³¹ Եւ այն միջոցին աշակերտները խնդրում էին նորան եւ ասում. Ռաբբի, կեր: ³² Նա էլ ասեց նորանց. Ես կերակուր ունիմ ուտելու, որ դուք չ'գիտեք: ³³ Աշակերտներն էլ իրար ասում էին. Արդեօք մի մարդ դորան բան բերաւ ուտելու: ³⁴ Յիսուսն ասեց նորանց. Իմ կերակուրը նա է, որ ինձ ուղարկողի կամքն անեմ, եւ նորա գործը կատարեմ: ³⁵ Մի՞ թե՞ դուք չեք ասում, թե՛ Դեռ չորս ամիս կայ, եւ հունձքը կ'գայ. Ահա էս ասում եմ ձեզ. Բարձրացրեք ձեր աչքերը, եւ տեսեք արտերը, որ սպիտակացել են եւ արդեն հնձին հասել: ³⁶ Եւ հնձողը վարձք է առնում, եւ յաւիտենական կեանքի մեջ պտուղ ժողովում. Որ սերմողը եւ հնձողը իրար հետ ուրախանան: ³⁷ Որովհետեւ սորանում ճշմարիտ է այն խօսքը, թե՛ Ուրիշ է սերմողը, եւ ուրիշ է հնձողը: ³⁸ Ես ուղարկեցի ձեզ հնձել այն, որ դուք չ'աշխատեցիք. Ուրիշներն աշխատեցին, եւ դուք նորանց աշխատանքի մեջը մտաք:

4:32 Սա նա մեկ դուալիզմի ակնարկ է՝ երկնք -երկրի, հոգևոր -ֆիզիկական: Հիսուսի միսիան ավետարանչական էր, հայտնություն տվող: Մարդիկ էին / են առաջնահերթությունը:

4:34 «Իմ կերակուրը նա է, որ ինձ ուղարկողի կամքն անեմ, եւ նորա գործը կատարեմ» Հովհաննէսի 17 հատակ արտահայտում է, թէ ինչպէս էր Հիսուսը հասկանում Հոր կամքը Իր կյանքում (տես Մարկ. 10:45; Ղուկ. 19:10, Հովհ. 6:29):

Հակադրություն, որ Հիսուսն ուղարկված է վերից՝ հենց Հոր Աստծո ներկայությունից, և որ Նրա առաքելությունն է հայտնել Հորը և անել Հոր գործը: Սա ուղղահայաց դուալիզմ է, որն այնքան բնորոշ է Հովհաննէսին (վերև-ներքև, հոգի-մարմին):

Կան երկու տարբեր տերմիններ, որոնք օգտագործվում են Հիսուսը ուղարկված լինելու համար:

1. *pempō* (4:34, 5: 23,24,30,37; 6: 38,39,40,44; 7: 16,18,28,33; 8: 16,18,26,29; 9 4, 12: 44,45,49; 14:24, 15:21, 16: 5)
2. *apostellō* (3: 17,24; 5: 36,38; 6: 29,57; 7:29, 8:42, 10:36, 11:42, 17: 3,18,21,23,25 ; 20:21)

Սրանք հոմանիշներ են, ինչպէս ցույց է տալիս 20:21: Այն նաև ցույց է տալիս, որ հավատացյալները նույնպէս ուղարկված են մեղավոր, ընկած աշխարհ, որպէս Հոր ներկայացուցիչներ՝ փրկագնման նպատակով (տես II Կորնթ. 5: 13-21):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏՈՒ ԿԱՄՔԸ (*thelēma*)

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

- Հիսուսը եկավ Հոր կամքը կատարելու համար (հմմտ. 4:34; 5:30; 6:38)
- վերջին օրը հարություն տալու բոլոր նրանց, ում Հայրը տվեց Որդուն (հմմտ. 6:39)
- որ բոլորը հավատան Որդուն (հմմտ. 6:29,40)
- պատասխանված աղոթքը Աստծո կամքին է համապատասխանում (հմմտ. 9:31 և I Հովհ. 5:14)

ՍԻՆՈՊՏԻԿ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐ

- Աստծո կամքը կատարելը էական է և կարևոր (հմմտ. 7:21)
- Աստծո կամքը կատարելը մարդուն Քրիստոսով եղբայր և քույր է դարձնում (հմմտ. Մաթ. 12:5; Մարկ. 3:35)
- Աստծո կամքը չէ որևէ մեկին կորցնելը (հմմտ. Մաթ. 18:14; I Տիմ. 2:4; II Պետ. 3:9)
- Գողգոթան Հիսուսի համար Հոր Աստծո կամքն էր (հմմտ. Մաթ. 26:42; Ղուկ. 22:42)

ՊՈԳՈՍԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ

- բոլոր հավատացյալների հոգևոր հասունությունն ու ծառայությունը (հմմտ. Հռ. 12:1-2)
- հավատացյալները ազատված են այս չար ներկա ժամանակաշրջանից (հմմտ. Գաղ. 1:4)
- Աստծո կամքը Իր փրկարար ծրագիրն էր (հմմտ. Եփ. 1:5,9,11)
- հավատացյալները փորձառու և ապրում են Հոգով լեցուն կյանք (հմմտ. Եփ. 5:17)
- որպէսզի հավատացյալները լցվեն Աստծո գիտությամբ (հմմտ. Կող. 1:9)
- որպէսզի հավատացյալները դառնան կատարյալ և ամբողջական (հմմտ. Կող. 4:12)
- որպէսզի հավատացյալները սրբանան (հմմտ. I Թես. 4:3)
- որպէսզի հավատացյալները գոհանան ամեն բանում (հմմտ. I Թես. 5:18)

ՊԵՏՐՈՍԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ

- որպէսզի հավատացյալները ճիշտ վարվեն (այն է, հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին) և այդպիսով լռեցնեն հիմար մարդկանց՝ առիթ ստեղծելով ավետարանչության համար (հմմտ. I Պետ. 2:15)
- որպէսզի հավատացյալները տառապանք կրեն (հմմտ. I Պետ. 3:17; 4:19)
- որպէսզի հավատացյալները չսպրեն եսակենտրոն կյանքով (հմմտ. I Պետ. 4:2)

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ

- որպէսզի հավատացյալները մնան հավիտյան (հմմտ. I Հովհ. 2:17)
- բանալի պայմաններ հավատացյալների համար, որպէսզի Աստված պատասխանի աղոթքներին (հմմտ. I Հովհ. 5:14)

4:35 «Ղեռ չորս ամիս կայ, եւ հունձքը կ'գայ» Սա այլաբանական արտահայտություն է, որ ցույց է տալիս, որ հոգևոր պատասխանի հնարավորությունը հիմա էր: Մարդիկ փրկվում էին Նրան հավատալով Հիսուսի կենդանության օրոք էլ, և ոչ միայն հարությունից հետո:

4:36-38 «Ուրիշ է սերմողը, եւ ուրիշ է հնձողը» Այս համարները վերաբերվում են մարգարեների կամ, հնարավոր է, Հովհաննես Մկրտիչի ծառայությանը: Սա օգտագործվում է I Կորնթ. 3: 6-8 Պողոսի ծառայության և Ապողոսի ծառայության հարաբերությունների համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:39-42
³⁹Եւ Սամարացիների այն քաղաքիցը շատերը հաւատացին նորան այն կնկայ խօսքի համար, որ վկայում էր, թէ Ասեց ինձ բոլորը ինչ որ գործել էի: ⁴⁰ Արդ երբոր Սամարացիները նորա մօտ եկան, նորան աղաչեցին, որ իրանց մօտ մնայ. Եւ երկու օր մնաց այնտեղ: ⁴¹ Եւ էլ շատերը հաւատացին նորան՝ նորա խօսքի համար: ⁴² Եւ այն կնկան էլ ասում էին, թէ Այլ եւս քո խօսքերի պատճառով չենք հաւատում. Որովհետեւ մենք ինքներս լսեցինք, եւ գիտենք որ ճշմարտապէս սա է աշխարհի Փրկիչը Քրիստոսը:

4:39 «Սամարացիների այն քաղաքիցը շատերը հաւատացին նորան» Հովհաննեսն օգտագործում է «հավատալ» ԲԱՅՆ մի շարք այլ տերմինների հետ համատեղ. «հավատալ» (*en*), « հավատալ, որ» (*hoti*), և, առավել հաճախ, «հավատալ դեպի» (*eis*) կամ հույս դնել (հմմտ 2 : 11,23; 3: 16,18,36; 6: 29,35,40; 7: 5,31,38, 48; 8:30; 9: 35,36; 10:42, 11: 25,26 , 45,48, 12: 11,37,42,44,46, 14: 1,12; 16: 9; 17:20): Իրականում սամարացիները հավատացին կնոջ վկայությանը (հ. 39), բայց երբ լսեցին Հիսուսին նրանք անձամբ ստացան Նրա վկայությունը (հ. 41-42): Հիսուսը եկավ Իսրայելի կորած ոչխարների համար, բայց Նրա ավետարանը ողջ մարդկության համար էր՝ Սամարացիներ, սիրիա-փյունիկացի կանայք և հռոմեացի զինվորներ (հմմտ Հռոմ. 10:12; Ա Կորնթ. 12:13; Գաղ. 3: 28-29 ; Կող. 3:11): Տես Հատուկ Թեմա 2:23.

▪ **«այն կնկայ խօսքի համար, որ վկայում էր»** Եթե Աստված օգտագործեց այս հերետիկոս և անբարոյական կնոջ վկայությունը, Նա կարող է նաև օգտագործել իմը և ձերը: Այս համարը ցույց է տալիս անձնական վկայության նշանակությունը: Տես Հատուկ Թեմա: Հիսուսի վկաները 1: 8

4:40

NASB, NRSV “հարցրեցին”
NKJV “աղաչեցին”
TEV, NJB “խնդրեցին”

Սա ուժեղ հունարեն տերմին է և պետք է թարգմանվի «ստիպել, համոզել» կամ «աղաչել»: Այս տերմինի ինտենսիվությունը կարելի է տեսնել իր օգտագործման մեջ հ. 47 (տես, Ղուկ. 4:38):

4:42 «աշխարհի Փրկիչը» Այս նույն ունիվերսալ տիտղոսը օգտագործվում է I Հովհ. 4:14. Այն օգտագործվում է նաև համընդհանուր իմաստով՝ Աստծո սերը ողջ մարդկության հանդեպ (հմմտ. I Տիմ. 2: 6, Եբր. 2: 9, I Հովհ. 2: 2): Ծննդ. 3:15 խոստումը կատարվել է: Առաջին դարում այս արտահայտությունը հաճախ օգտագործվում էր Կեսարի համար: Հռոմեական հալածանքը տեղի է ունեցել այն պատճառով, որ քրիստոնյաներն օգտագործել են այս տիտղոսը բացառապես Հիսուսի համար: Այս տիտղոսը նաև ցույց է տալիս, թե ինչպես են ՆԿ հեղինակները վերագրել Հայր Աստծո կոչումները Որդուն. Տիտ. 1: 3 - Տիտ. 1: 4; Տիտ. 2:10 - Տիտ. 2:13; Տիտ. 3: 4 - Տիտ. 3: 6.

Հրեաները մերժեցին Հիսուսին (հմմտ 1:11), բայց սամարացիները արագ և հեշտությամբ ընդունեցին Նրան (տես 1:12):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:43-45
⁴³ Եւ երկու օրից յետոյ այնտեղից դուրս եկաւ գնաց Գալիլէա: ⁴⁴ Որովհետեւ Յիսուսն ինքը վկայեց, թէ Մարգարէն իր հայրենիքումը պատիւ չ'ունի: ⁴⁵ Բայց երբոր Գալիլէա եկաւ, Գալիլէացիներն ընդունեցին նորան. տեսնելով այն բոլորն, որ տօնին արաւ. Երուսաղէմումը. Որովհետեւ նորանք էլ եկել էին այն տօնին:

4:43 Այս համարը ցույց է տալիս, որ Հիսուսը տեղափոխվում էր ավելի ազատ և ավելի հաճախ Հրեաստանի և Գալիլեայի միջև, քան կարելի է ենթադրել Մինուպտիկ Ավետարաններից:

4:44 Սա շատ անսովոր համար է, քանի որ այն չի տեղավորվում նախորդ կոնտեքստում: Այն կարող է վերաբերել Գալիլեայի ծառայությանը, որը նոր պետք է սկսվեր (տես 4: 3): Այս ասացվածքը նաև գտնվում է Մատթ. 13:57; Մարկ. 6: 4; Ղուկ. 4:24: Մինուպտիկ Ավետարաններում դա վերաբերվում է Գալիլեային, բայց այստեղ դա վերաբերվում է Հրեաստանին:

Կարելի է ասել, որ գալիլեացիները նույնպես «ընդունել էին» Հիսուսին, բայց նրանցից շատերը չէին հետևում Նրան և հետագայում լքեցին Նրան: «Հավատալ» և «ընդունել» նշանակում է ավելի քան նախնական ընդունելություն (տես Սերմնացանի առակը, Մատթ. 13: 18-23; Մարկ. 4: 12-20, Ղուկ. 8: 11-15): Տես Հատուկ Թեմա: Համբերելու անհրաժեշտությունը 8:31.

4:45 «Գալիլեացիներն ընդունեցին նորան» Նրանք արդեն փորձառել էին Հիսուսի ուսմունքներն ու հրաշքներ առաջին Զատիկին Երուսաղեմ այցի ժամանակ: Սա ենթադրում է, որ նրանք հավատացել էին Հիսուսին, որպես Աստծո Մեսիա (հմմտ. 1:12) գոնե ամենաքիչ չափով (տես հ. 48):

▪ «Որովհետև նորանք էլ եկել էին այն տօնին» NET Աստվածաշունչը նշում է սա որպես հեղինակի ևս մեկ չակերտավոր մեկնաբանություն, ինչպես արել են բոլորը հ.44 (հմմտ. NRSV, NIV):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 4:46-54

⁴⁶Եւ Յիսուսը դարձեալ եկաւ Գալիլեայի Կանան, ուր ջուրը զինի արաւ. Մի ազնուական մարդ կար, որի որդին Կափառնայումի մեջ հիւանդ էր: ⁴⁷Նա լսելով թէ Յիսուսը Հրեաստանիցն եկել է Գալիլեա, եկաւ նորա մօտ եւ աղաչում էր, որ իջնէ եւ իր որդուն բժշկէ. Որովհետև մեռնելու մօտ էր: ⁴⁸Յիսուսն էլ նորան ասեց, Եթէ նշաններ եւ հրաշքներ չ'տեսնէք չէք հաւատալ: ⁴⁹Ազնուականը նորան ասեց. Տէր, իջիր դեռ քանի որ չէ մեռել երեխաս: ⁵⁰ Յիսուսը նորան ասեց. Գնա, քո որդին կենդանի է. Եւ մարդը հաւատաց այն խօսքին՝ որ Յիսուսը նորան ասեց, եւ գնաց: ⁵¹Եւ դեռ որ իջնում էր, նորա ծառաները նորան դիմաւորեցին եւ աւետիս տուին եւ ասեցին թէ Քո տղան կենդանի է: ⁵²Նա էլ նորանց հարցնում էր այն ժամի համար, որ նորանում սկսեց լաւանալ. Եւ նորան ասեցին թէ Երէկ ժամը եօթին տենդը թողեց նորան: ⁵³ Այն ժամանակ հայրն իմացաւ, թէ նոյն ժամին է, որ Յիսուսը նորան ասեց թէ Քո որդին կենդանի է. Եւ հաւատաց ինքը եւ նորա բոլոր տունը: ⁵⁴ Սա դարձեալ երկրորդ նշանն արաւ Յիսուսը, երբոր Հրեաստանիցն եկաւ Գալիլեա:

4:46

NASB, NRSV,

NJB “թագավորական պաշտոնյա”

NKJV

“ազնվական”

TEV

“իշխանավոր պաշտոնյա”

Սա կառավարական պաշտոնյա էր, որը ծառայում էր Հերովդես ընտանիքում:

4:48 «Եթէ նշաններ եւ հրաշքներ չ'տեսնէք՝ չէք հաւատալ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է ուժեղ ԿՐԿՆԱԿԻ ԲԱՅԱՍԱԿԱՆՈՎ: Հիսուսը դիմում է այս մարդուն ՀՈԳՆԱԿԻՈՎ: Հրեաները նշաններ էին փնտրում (հմմտ 2:18; 6: 2, 30; Մատթ. 12:38, 16: 1): Բայց Հերովդեսի այս ծառան հավատաց նախքան նշան տրվելը:

4:49 «Երեխաս» Երեք համարներում Հովհաննեսն օգտագործում է երեք տարբեր տերմիններ.

1. հ. 49 – *paidion* (NASB, «երեխաս»)

2. հ. 50 – *hyiōs* (NASB, «որդի»)

3. h. 51 – *pais* (NASB, «որդի»)

Ակնհայտ է, որ այդ տերմիններն օգտագործվել են հոմանիշներով:

4:50 Այս համարը բռնում է Հովհաննես Ավետարանի էությունը՝ հավատալ Հիսուսին, հավատալ Նրա խոսքերին, հավատալ Նրա գործերին, հավատալ Նրա Անձին: Այս մարդու հավատքը հաստատվում է Նրան հավատալով՝ առանց Հիսուսի խոստումները տեսնելու:

4:53 «Եւ հաւատաց ինքը եւ նորա բոլոր տունը» Սա բազմաթիվ օրինակներից առաջինն է, որտեղ մեկ անձի հավատքը ազդում է ամբողջ ընտանիքի վրա:

1. Կռոնելիոս (Գործք 10: 44-48)
2. Լիդիա (Գործք 16:15)
3. փիլիպեցի բանտապետը (Գործք 16: 31-34)
4. Կրիսպոս (Գործք 18: 8)
5. Ստեփանես (I Կորնթ. 1:16)

Շատ քննարկումներ են եղել է այս տեսակ ընտանիքներով դարձի գալու մասին, բայց պետք է պնդել, որ բոլոր անդամները պետք է անձամբ ընդունեն Հիսուսին: Մերձավոր Արևելքում շատ ավելի ցեղային է և ընտանեկան, քան ժամանակակից մշակույթներում: Ճիշտ է նաև, որ մեր կյանքում ուրիշների կարևորությունները ազդում են մեր ընտրությունների վրա:

4:54 Առաջին հրապարակային նշանը Կանայի հարսանեկան խնջույքի ժամանակ էր (հմմտ. 2:1-11).

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ Հիսուսը լքեց Հուդայի տարածքը:
2. Արդյո՞ք Հովհաննեսն օգտագործում է հռոմեական ժամանակ թե՞ հրեական:
3. Ինչու՞ է Հիսուսի գրույցը սամարացի կնոջ հետ այդքան կարևոր:
4. Ինչպե՞ս է 20 համարը ազդում հարանվանությունների հարաբերությունների միջև այսօր:
5. Բացատրե՞ք 26 համարի Հիսուսը ցնցող արտահայտությունը:
6. Արդյո՞ք Գալիլեացիները ցուցաբերում են ճշմարիտ հավատք:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 5

ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Լողավազանի մոտ բժշկվածը	Մարդ, որը բժշկվեց Բեթեզդա լողավազանի մոտ	Կաղ մարդու բժշկվելը Շաբաթ օրը	Լողավազանի մոտ բժշկվածը	Հիվանդ մարդու բժշկվելը Բեթեզդա լողավազանի մոտ
5:1-9ա	5:1-15	5:1 5:2-9ա	5:1-6 5:7 5:8-9ա	5:1-9ա
5:9բ-18		5:9բ-18	5:9բ-10 5:11 5:12 5:14 5:16 5:15-17	5:9բ-18
Որդու Իշխանությունը	Պատվել Հորը և Որդուն 5:16-23	Հիսուսի կապը Աստծո հետ 5:19-24	5:18 Որդու Իշխանությունը 5:19-23	5:19-47
5:19-29	Կյանքը և Դատաստանը Որդու միջոցով է 5:24-30	5:25-29	5:24-29	
5:30		Ապացույց Հիսուսի հարաբերությունները Աստծո հետ 5:30	Վկայել Հիսուսին 5:30	
Վկայել Հիսուսին	Քառապատիկ վկայություն 5:31-47	5:31-38 Հիսուսը հանդիմանում նրանց, ովքեր հրաժարվում են Իր առաջարկից 5:39-47	5:31-40	
5:41-47			5:41-47	

ԸԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:1-9ա

1Սորանից յետոյ տօն էր Հրեաների. Եւ Յիսուսը վեր ելաւ Երուսաղէմ: 2 Եւ Երուսաղէմում Ոչխարաց դռան մօտ մի աւազան կայ, որ Եբրայեցերէն Բեթհեզդա է կոչվում, որ հինգ սրահ ունի: 3 Նորանցում խիստ շատ հիւանդներ կային՝ պառկած. Կոյրեր, կաղեր, չորացածներ, [որ ջրի շարժուելուն էին սպասում: 4 Որովհետեւ Տիրոջ հրեշտակը ժամանակ ժամանակ վայր էր գալիս այն աւազանը եւ ջուրը շարժում. Եւ ջրի շարժուելուց յետոյ նորա մէջ առաջ մտնողը բժշկվում էր՝ ինչ հիւանդութիւն էր որ ունենար:] 5 Եւ այնտեղ մի մարդ կար, որ երեսուն եւ ութ տարի էր հիւանդութեան մէջ: 6 Երբոր Յիսուսը նորան պառկած տեսաւ, եւ գիտաց, թէ արդէն շատ ժամանակից է, նորան ասեց. Կամենո՞ւմ ես առողջ լինիլ: 7 Հիւանդը պատասխանեց նորան. Տէր, մարդ չ'ունիմ, որ երբոր ջուրը շարժվում է՝ ինձ աւազանի մէջ գցէ. Եւ մինչեւ որ ես գալիս եմ, ուրիշն ինձանից առաջ իջնում է մէջը: 8 Յիսուսը նորան ասեց. Վեր կաց, մահիճդ առ եւ ման եկ: 9 Եւ մարդն իսկոյն ողջացաւ, եւ վեր առաւ իր մահիճը եւ ման էր գալիս.

5:1 «տօն» Որոշ հին հունական երկաթագիր ձեռագրեր, Ն և C, ունեն «տօնը», բայց ձեռագրերի մեծ մասի մեջ «տոն» (P⁶⁶, P⁷⁵, A, B և D): Կային երեք տարեկան տոներ, որոնք պարտադիր էին հրեական արական սեռի ներկայացուցիչների մասնակցությամբ, եթե ընդհանրապես դա հնարավոր էր (տես Ղև.23): (1) Զատիկը (2) Պենտեկոստե և (3) Տաղավարահարաց տոնը: Եթե սա վերաբերում է Զատիկին, ապա Հիսուսը երկրի վրա ծառայեց չորս տարի երեքի փոխարեն (հմմտ. 2:13,23; 6:4; 12:1): Ըստ ավանդության ասվում է, որ Հիսուսը ծառայել է երեք տարի Հովհաննեսի մկրտությունից հետո: Սա պարզվում միայն գատիկի տոների քանակով նշված Հովհաննեսի Ավետարանում:

▪ **«Յիսուսը վեր ելաւ Երուսաղէմ»** Ասվում է, որ Հիսուսը տոների ժամանակ գնացել է Երուսաղէմ մի քանի անգամ Հովհաննեսի Ավետարանում (հմմտ. 2:13, 5:1, 7:10, 12:12):

Երուսաղէմը կառուցվել է յոթ բլուրների վրա և ավելի բարձր, քան շրջակա երկիրը: Այնպես որ «գնաց մինչև/վեր ելավ» արտահայտությունը կարող է ֆիզիկապես ճիշտ լինել: Սակայն թվում է, որ դա եղել է նախապատվության փոխաբերական իդիոմա: Երուսաղէմը Տաճարի պատճառով երկրի բարձրադիր և կենտրոնական (միջակետ) հատվածում էր:

5:2 «Ոչխարաց դռան մօտ» Այս «հոտի դուռը» Երուսաղէմի պատի հյուսիսարևելյան մասում էր: Դա նշվում է Նեեմիայի քաղաքի պատերի վերանվիրագործման և վերակառուցման մեջ (տես Նեեմ. 3:1, 32, 12:39):

■

NASB, NKJV “ջրավազան, որը երբայերեն Բեթհեզդա է կոչվում”

NRSV “եբրայերեն Բեթ-հեզդա է կոչվում”

TEV “եբրայերեն Բեթհեզդա է կոչվում”

NJB “եբրայերեն Բեթհեզդա է կոչվում”

Կան այս անվան մի քանի այլընտրանքային արտասանության ձևեր: Հովսեփոսը նաև կոչել է այն եբրայերեն անունով «Bethzatha/Բեթսադա», որը Երուսաղեմի այս հատվածի անունն էր: Հունարեն ձեռագրերում այն նաև կոչվում է «Բեթսայիդա»: Կուրանի պղնձե գլաններում այն կոչվում է «Բեթեզդա/Bethesda», որը նշանակում է «տղորմության տուն» կամ «կրկնակի գարնան տուն»:

Այսօր այն հայտնի է որպես Սուրբ Աննի/Աննայի լողավազան (ներ):

Հիսուսի օրերում Պաղեստինի հրեաները խոսում էին արամերեն, այլ ոչ թե եբրայերեն: Հովհաննեսի Ավետարանում երբ ասում է «եբրայերեն» ի նկատի ունի արամերեն (տես 5: 2, 19:13,17,20; 20:16; Հայտն. 9:11; 16:16): Հիսուսի բոլոր արտահայտությունները ինչպես, օրինակ,

1. *Talitha kum* /Տալիթա Կումի, Մարկ. 5:41
2. *Ephphatha* /Եփփաթա, Մարկ. 7:34
3. *Eloi, Eloi, lama sabachthani*/ Էլի Էլի լամա սաբաքթանի, Մարկ. 15:34 արամերեն էին:

5:4 Սա համարը (3բ-4) ավելի ուշ արված դպիրի մեկնաբանությունն է, որը փորձում է բացատրել

1. բոլոր հիվանդ մարդկանց ներկայությունը լողավազանի մոտ
2. ինչու էր այս մարդը այդքան երկար ժամանակ այնտեղ
3. ինչու էր ուզում, որ ինչ-որ մեկն իրեն իջեցնի ջուրը, հ. 7

Ակնհայտ է, որ դա հրեական ժողովրդական հեքիաթ էր: Դա Հովհաննեսի Ավետարանի բնօրինակի մեջ չի եղել: Ինչու՞ այս համարն ընդգրկված չէ, փաստում է, որ

1. դա P⁶⁶, P⁷⁵, Ն, B, C *, D ձեռագրերում չկա
2. դա նշված է աստղիկով ավելի քան 20 լրացուցիչ ուշ հունարեն ձեռագրերում, ցույց տալով, որ այս տեքստը չի համարվել բնագիր
3. կան մի քանի ոչ Հովհաննեսյան տեքմիններ այս կարճ համարում

Այն ընդգրկված է մի քանի վաղ հունարեն երկաթագիր ձեռագրերում A, C³, K և L: Այն նաև ընդգրկված է Դիատեսարոնում/Ավետարանի Համաբարբառում (մոտ մ.թ. 180) և Տերտուլիանի գրվածքներում (մ.թ. 200), Ամբրոսի, Ոսկեբերանի և Կիրիլի գրվածքներում: Սա ցույց է տալիս իր հնությունը, բայց չի ընդգրկվում ներշնչված Ավետարանի բնագրում: Այն ընդգրկված է KJV, NASB (1995 թ. Update, փակագծերով) և NKJV, բայց բացակայում է NASB (1970), NRSV, NJB, REB, NET Աստվածաշնչում և NIV:

Ավետարանական տեքստային քննադատի կողմից ձեռագիր տարբերակի լավ քննարկում, տես Gordon Fee, *To What End Exegesis?*, էջ 17-28:

5:5-6 Թե ինչու է Հիսուսն ընտրել տվյալ մարդուն անհայտ է մեզ: Հնարավոր է, որ նա եղել է այնտեղ ամենաերկարը: Այս մարդուց քիչ հավատք է պահանջվում: Ակնհայտ է, որ Հիսուսը փորձում էր առճակատում նախաձեռնել հրեա առաջնորդների հետ: Սա էլ նրան հնարավորություն տվեց Իր Մեսիական պահանջը: Ես.35:6 վախճանաբանական հատվածը կապված էր Մեսիական այդ բուժման հետ:

Հիսուսի հրաշքներից շատերը չեն արվել հիմնականում անհատի համար, այլ ներկաների համար

1. աշակերտների
2. հրեա իշխանավորների

3. բազմության

Ավետարանները ընտրում են որոշակի հրաշքներ՝ հստակ հայտնելու, թե ով էր Հիսուսը: Այս իրադարձությունները Իր ամենօրյա գործողությունների ներկայացուցիչն են: Նրանք ընտրված են ցույց տալու

1. Նրա անձը
2. Նրա կարեկցանքը
3. Նրա գործունեությունը
4. Նրա իշխանությունը
5. Նրա հստակ հայտնությունն Հորից
6. Նրա հստակ բացահայտումը Մեսիական ժամանակաշրջանի

5:8 «Վեր կաց, մահիճդ առ եւ ման եկ» Սա մի շարք հրամաններ է:

1. ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. հետևում է ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. հետո մեկ ուրիշ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Ծղոտե ներքնակը բարձի կտոր էր, որ աղքատները օգտագործում էին քնելու համար: Այս հիվանդ, կաղ և կաթվածահար մարդկանց համար դա ծառայում էր որպես նստաբարձ օրվա ընթացքում (հմմտ. Մարկ. 2:4,9,11,12, 6:55, Գործք 9:33):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:9բ-18
9բ. եւ օրը շաբաթ էր: 10 Հրէաներն էլ ասեցին բժշկուածին. Շաբաթ է. ե արժան չէ քեզ, որ մահիճդ վեր առնես: 11 Նա պատասխանեց նորանց. Նա՛ որ ինձ բժշկեց, նա ասեց ինձ. Մահիճդ առ եւ ման եկ: 12 Արդ հարցրին նորան եւ ասեցին. Ո՞վ է այն մարդը, որ քեզ ասեց. Մահիճդ առ եւ ման եկ: 13 Բայց բժշկուածը չ՛գիտէր թէ ո՞վ է. Որովհետեւ Յիսուսը այն տեղի ամբոխի պատճառովը խոյս տուաւ: 14 Սորանից յետոյ Յիսուսը նորան գտաւ տաճարումը՝ եւ նորան ասեց. Ահա առողջացար, այլ եւս չ՛մեղանչես, որ էլ աւելի չար բան չ՛լինի քեզ: 15 Մարդը գնաց եւ Հրէաներին պատմեց, թէ Յիսուսն է, որ նորան առողջացրել է: 16 Եւ նորա համար Հրէաները Յիսուսին հալածում էին, եւ ուզում էին նորան սպանել, որ շաբաթ օրն անում էր այն բանը: 17 Եւ Յիսուսը պատասխանեց նորանց. Իմ Հայրը մինչեւ հիմա գործում է, եւ ես էլ գործում եմ: 18 Նորա համար Հրէաներն էլ աւելի ուզում էին սպանել նորան. Որ ոչ թէ միայն շաբաթ օրն էր քանդում, այլ Աստուծուն էլ իրան Հայր էր ասում, իր անձն Աստուծուն հաւասար անելով:

5:9բ «եւ օրը շաբաթ էր» Հրեա առաջնորդները նույնիսկ չէին էլ ուրախանում մարդու բժշկության համար, այլ նրանք վիրավորում էին Հիսուսին՝ Բանավոր Ավանդույթը խախտելու համար (հետագայում ամրագրված է Թալմուդում) կապված Շաբաթի հետ (հմմտ հհ. 16, 18, Մատթ.7:1-23):

Շաբաթ օրը Հիսուսի բժշկումները կարելի է բացատրել երկու տարբերակով.

1. Նա բժշկեց ամեն օր, բայց հակասությունները զարգանում էին Շաբաթի բժշկումներից
2. Նա ընտրեց այս հարցը, որը առաջացրել էր հակասություն, որպես հնարավորություն կրոնական առաջնորդների հետ աստվածաբանական երկխոսության մեջ մտնելու համար:

Հիսուսը հաճախ բուժեց Շաբաթ օրը (տես Մատթ. 12: 9-14, Մարկ. 1: 29-31, 3:1-6, Ղուկ. 6: 6-11, 14:1-6, Հովհ. 5: 9-18; 9:14): Հիսուսը դևեր հանեց Շաբաթ օրը (հմմտ. Մարկ 1:21-28) Ղուկաս 13:10-17): Հիսուսը պաշտպանեց աշակերտներին Շաբաթ օրը ուտելու համար (հմմտ. Մատթ. 12: 1-8, Մարկ 2: 23-28): Հիսուսը հակասական թեմաների շուրջ խոսակցություններ էր նախաձեռնում ժողովարանում Շաբաթ օրը (հմմտ. Ղուկ. 4: 16-30; Հովհ. 7: 14-24):

5:13 «Յիսուսը խոյս տուաւ» Բառացիորեն «թեքել գլուխը մի կողմի վրա»: Հիսուսը սովորական հրեա էր: Նա պարզապես հավելեց ամբոխի մեջ:

5:14

NASB, NRSV,

NJB

“այլևս չմեղանչես”

NKJV

“Մեղք չգործես”

TEV

“ուրեմն դադարիր մեղք գործելուց”

Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է ԲԱՑԱՍԱԿԱՆ մասնիկով, որը հաճախ նշանակում է դադարեցնել արդեն ընթացքի մեջ եղած գործողությունը, սակայն այս կոնտեքստում դա կարծես քիչ հավանական է (հմմտ. NET Աստվածաշունչը, էջ 1907 # 8): Առաջին դարի հրեա աստվածաբանները հիվանդությունը կապում էին մեղքի հետ (տես Հակ. 5:14-15): Սա չի բացատրում բոլոր հիվանդությունները, ինչպես որ Հիսուսը գործում է իծնե կույրի հետ, (հմմտ. Հովհ. 9) և Հիսուսի խոսքերը Ղուկ. 13: 1-4:

Հիսուսը դեռ առնչվում էր այս մարդու հոգևոր կյանքի հետ: Մեր գործողությունները արտացոլում են մեր սիրտն ու հավատքը: Աստվածաշնչյան հավատքը թե օբյեկտիվ է և թե սուբյեկտիվ, թե հավատք և թե գործողություն:

Այսօր եկեղեցում նման շեշտադրում կա ֆիզիկական բժշկության վրա: Աստված, անշուշտ, դեռ բժշկում է: Բայց աստվածային բժշկությունը պետք է հանգեցնի ապրելակերպի և նախապատվությունների հոգևոր փոփոխության: Լավ հարց է «ինչու՞ եք ուզում բժշկվել»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴՅՈ՛Ք ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՈՒ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ Է ԵՂԵԼ ԲՈԼՈՐ ԺԱՍԱՆԱԿՆԵՐՈՒՄ

1. Բժշկությունը Հիսուսի և առաքյալների ծառայության կարևոր ասպեկտն էր:
2. Այն նախատեսված էր հիմնականում հաստատելու իրենց արմատապես նոր պատգամը Աստծո և Նրա թագավորության մասին:
3. Այն ցույց է տալիս Աստծո սիրտը վիրավորված մարդկանց հանդեպ:
4. Աստված չի փոխվել (Մաղ.3:6) և նա շարունակում է սեր ցուցաբերել բժշկության մեջ:
5. Կան օրինակներ, որտեղ բժշկություն չի կայացել:
 - ա. Պողոսը, II Կորնթ. 12:7-10
 - բ. Տրոփիմոսը II Տիմ. 4:20
6. Մեղքն ու հիվանդությունը կապված էին ռաբբիների և Հակոբոսի մեջ (տես Հովհ.9: 2, Հակ.5: 13-18):
7. Բժշկությունը Նոր Ուխտի երաշխիքը չէ: Դա Քավության մասը չէ, նկարագրված Եսայի 53-ում և Մաղմոս 103:
8. Կա ճշմարիտ խորհուրդ, թե ինչու ոմանք բուժվում են իսկ ոմանք ոչ:
9. Հնարավոր է, որ թեև բժշկությունը առկա է բոլոր ժամանակներում, կար գգալի աճ Հիսուսի ապրած օրերում. այս աճը կրկին տեղի կունենա մինչև իր վերադարձը:

5:15 «Մարդը գնաց եւ Հրեաներին պատմեց» Հրեական իշխանություններին տեղեկացնելու նրա ճշգրիտ շարժառիթը անորոշ է:

1. թվում է թե արարքը անմտություն է, մանրուք, որը ցույց է տալիս, որ բուժումը միշտ չէ, որ սկսվում է հավատքով կամ ավարտվում հավատքով
2. Հիսուսն ասաց նրան դա անել (հմմտ. Մատթ. 8: 4, Մարկ. 1:44, Ղուկ. 5:14; 17:14):

5:16 «որ շաբաթ օրն անում էր այն բանը» ԲԱՅԸ ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է, ինչը ցույց է տալիս շարունակական գործողություն անցյալ ժամանակում: Սա չէր Հիսուսի առաջին (կամ վերջին) Շաբաթ օրվա բժշկությունը:

5:17

NASB

“Բայց Նա պատասխանեց նրանց”

NKJV, REV,

NRSV, NIV

“Բայց Հիսուսը պատասխանեց նրանց”

NJB

“Նրա պատասխանը նրանց”

Դպիրները, որոնք արտագրել են վաղ հունարեն ձեռագրերը ունեին միտում

1. պարզեցնել քերականությունը
2. դերանունների կոնկրետացում
3. ստանդարտացնել արտահայտությունները

Դժվար է իմանալ, թե որ ձևն է հ. 17-ի բնօրինակը

1. «բայց Նա...» - P⁷⁵, Ն, B, W
2. «բայց Յիսուսը...» - P⁶⁶, A, D, L
3. «բայց տերը... » կամ «Տէր Յիսուսը »- Սիրիական թարգմանություններ

UBS⁴ տալիս է տարբերակ # 2 «C» վարկանիշը (Բարդ է որոշել):

▪ «Իմ Հայրը մինչևի հիմա գործում է, եւ ես էլ գործում եմ» Սրանք երկուսն էլ ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ (deponent) ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ են: Հիսուսը պնդում էր, որ Հայրը չի դադարել Շաբաթ օրը բարիք գործելուց և ոչ էլ Որդին (այս համար վերաբերյալ լավ քննարկում կարելի է գտնել Manfred Brauch, *Abusing Scripture*, էջ 219): Սա, իսկական իմաստով, եղել է Հիսուսի յուրահատուկ կապը Հոր հետ հասկացողության հաստատումն է (հմմտ. հհ. 19-29):

Հրեական միաստվածության գաղափարը (տես 2Օրին.6: 4) գործնականում արտահայտվում էր «մեկ պատճառ» իրադարձությունների բացատրությունը այս աշխարհում (տես Դատ. 9:23; Յոբ 2:10; Ժող. 7:14; Ես. 45:7, 59:16, Ողբ 3:33-38, Ամովս 3: 6): Բոլոր գործողությունները ի վերջո մեկ ճշմարիտ Աստծո գործերն են: Երբ Հիսուսը պնդեց աշխարհում Աստծո գործողությունների երկակի միջնորդությունը, Նա պնդեց աստվածային պատճառականություն դուալիզմը: Սա է Երրորդության դժվար խնդիրը: Մեկ Աստված, բայց երեք անձերում (հմմտ. Մատթ. 3:16-17; 28:19; Հովհ. 14:26; Գործք 2: 33-34; Հռոմ. 8: 9-10; I Կորնթ. 12: 4-6 , II Կորնթ. 1:21-22; 13:14; Գաղ.4:4, Եփես.1:3-14; 2:18, 4:4-6; Տիտոս 3:4-6, I Պետ. 1:2): Տես Հատուկ Թեմա: Երրորդությունը 14:26:

5:18 «Նորա համար Հրեաներն էլ աւելի ուզում էին սպանել նորան» Կա երկու պատճառ, որ հրեաները ցանկանում էին սպանել Հիսուսին.

1. Նա հրապարակավ քանդեց (բառ. «արձակել»)-ԱՆԿԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, տես Մատթ. 5:19) Բանավոր Ավանդույթը (Թալմուդը) Շաբաթի վերաբերյալ
2. Նրա արտահայտությունները ցույց տվեցին, որ նրանք հասկանում էին Իրեն, երբ պնդում էր Իր հավասարությունը Աստծո հետ (տես 8:58-59, 10:33, 19: 7)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:19-23
¹⁹ Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորանց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ թէ Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չ'տեսնէ Հօրն անելիս. Որովհետեւ ինչ որ նա անում է, հենց Որդին էլ այն բանը նորա նման է անում: ²⁰ Որովհետեւ Հայրը սիրում է Որդուն, եւ ամեն բան ցոյց է տալիս նորան, որ ինքն անում է, եւ սորանցից էլ աւելի մեծ մեծ գործեր ցոյց կ'տայ նորան, որ դուք զարմանաք: ²¹ Որովհետեւ ինչպէս որ Հայրը մեռելներին յարուցանում է եւ կենդանի անում, այնպէս էլ Որդին, որոնց որ կամենում է, կենդանի է անում: ²² Որովհետեւ Հայրը ոչ մէկին էլ չէ դատում, այլ ամեն դատաստանը տուաւ Որդուն. ²³ Որ ամենքը պատուեն Որդուն, ինչպէս որ պատուում են Հօրը. Որդուն չ'պատուողը՝ Հօրն էլ չէ պատուում, որ ուղարկեց նորան:

5:19,24,25 «Ճշմարիտ ճշմարիտ» Սա բառացիորեն «Ամեն, ամեն» է: «Ամեն» տերմինը թարգմանված է եբրայերենից: Այն բնագրում նշանակում էր վստահության արժանի: Դա օգտագործվել է հաստատելու ճշմարտությունը: Հիսուսը միակն է, ով օգտագործել է այս բառը արտահայտության սկզբում: Նա օգտագործում էր դա որպես կարևոր նախաբան իր արտահայտությունների ժամանակ: Հովհաննեսը միակն է, ով արձանագրել է այս տերմինի կրկնողությունը: Տես Հատուկ Թեմա Ամեն 1:51:

5:19 «Որդին» Կա «Որդու» տերմինի աստվածաբանորեն կարևոր կրկնողություն առաջիկա մի քանի համարներում: Այս կարճ կոնտեքստում այն օգտագործվում է ութ անգամ: Այն ցույց է տալիս Հիսուսի յուրահատուկ պատկերացումը Հոր հետ ունեցած Իր հարաբերությունը և արտացոլում է «Մարդի Որդին» և «Աստծո Որդին» անունները:

- **«Որդին իրանից կարող չէ ոչինչ անել»** Ինչպես հաճախ ճշմարիտ է, ՆԿ-ը ներկայացնում է Հիսուսի պարադոքսալ արտահայտությունները: Որոշ տեքստերում
 1. Նա մեկ է Հոր հետ (տես 1:1, 5:18, 10: 30,34-38, 14: 9-10; 20:28)
 2. Նա առանձին է Հորից (տես, 1: 2,14,18, 5: 19-23; 8:28; 10: 25,29, 14: 10,11,12,13,16,17: 1-2)
 3. Նա անգամ ենթարկվում է Նրան (տես 5: 20,30; 8:28; 12:49, 14:28, 15:10,19-24, 17: 8)

Սա թերևս նրա համար է, որ ցույց տա, որ Հիսուսն ամբողջությամբ Աստված է, բայց առանձին, հստակ անձ և աստվածության հավիտենական դրսևորումը:

Մեկնաբանության մեջ, խմբագրված John Raymond E. Brown, *The Jerome Biblical Commentary*, լավ միտք է ասվում.

«Ենթակայության եզրակացությունը չպետք է հեռացվի այստեղից ընկալելով Հիսուսի խոսքերը որպես կարծես վերաբերվում են միայն նրա մարդկային բնությանը...:Այն նաև բաց է թողնում Հովհաննեսյան Քրիստոսաբանության նուրբ կետը: Ավելի շուտ, Հիսուսը պնդում է գործունեության բացարձակ ներդաշնակությունը Հոր և Որդու միջև, որը, իհարկե, արմատապես պահանջում է էության կամ բնության ինքնություն; նույն գործընթացը օգտագործվում է 16:12, որը վերաբերվում է Սուրբ Հոգու կապը Որդու հետ: Բայց ամբողջ այս Ավետարանի ընթացքում մենք երբեք չենք գտնում Երրորդության մասին որևէ թեզիս՝ արստրակտ աստվածաբանության վերաբերյալ; նրան միշտ մոտեցել են իր առնչությունը փրկության վարդապետության/ստերիոլագիա տեսանկյունից» (էջ 434):

- **«Թե որ չ'տեսնէ Հօրն անելիս»** Մարդը երբեք չի տեսել Հորը (հմտ. հ. 37 և 1:18), բայց մարդու Որդին հաստատում է Իր մտերիմ, անձնական, ներկա իմացությունը Նրա մասին (տես 1:1-3):

- **«Որովհետեւ ինչ որ նա անում է, հենց Որդին էլ այն բանը նորա նման է անում»** Հիսուսի գործողությունների և ուսմունքների մեջ մարդիկ հստակ տեսնում են անտեսանելի Աստծուն (տես Կող.1:15; Եբր.1: 3):

5:20 «Հայրը սիրում է Որդուն, եւ ամեն բան ցոյց է տալիս նորան, որ ինքն անում է» Սրանք երկուսն էլ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ԵՆ, որոնք խոսում են շարունակական գործողության մասին: Սա հունարեն սեր *phileō* տերմինն է: Կարելի էր ենթադրել *agapeō*, ինչպես 3:35-ում: Այս երկու բառերը սեր բառի համար ունեին լայն իմաստային համընկնում Կոյնե հունարենի հետ (տես D. A. Carson, *Exegetical Fallacies*, 2nd ed., էջ 32-33 և F. F. Bruce, *Answers to Questions*, էջ 73):

- **«աւելի մեծ մեծ գործեր»** Կոնտեքստում սա վերաբերում է մահացած մարդուն կենդանացնելուն (հհ. 21,25-26) և սպասվելիք դատաստանին (հհ. 22,27):

▪ «որ դուք զարմանաք» Այս ՆՊԱՏԱԿԻ ՊԱՐԱԳԱՆ հստակ ցույց է տալիս, որ հրաշքների նպատակն է, որ հրեաները (ՀՈԳՆԱԿԻ դուք) հավատան Միածին Որդուն (հմմտ. հ.23 Գործք 13:41 [Ամբ.1:5]):

5:21 «Հայրը մեռելներին յարուցանում է... այնպես էլ Որդին» Հին Կտակարանում ՅԱՀՎԵՆ միակն է, ով կարող է կյանք տալ (տես 2Օրին.32:39): Այն փաստը, որ Հիսուսը կարող է հարուցանել մեռածին համարժեք է ՅԱՀՎԵՆ հետ հավասար լինելու արտահայտությանը (հմմտ. հ. 26):

Հիսուսը հավիտենական կեանք է տալիս հիմա (հմմտ. II Կորնթ. 5:17; Կող. 1:13), որը կապված է կյանքի ֆիզիկական դրսևորում հետ նոր ժամանակաշրջանում հ. 26 (հմմտ. I Թես.4:13-18): Թվում է, թե Հովհաննեսի ընդլայնված հանդիպումը Հիսուսի հետ անհատական հիմունքներով է, իսկ ապագայում դեռևս սպասվում է հավաքական իրադարձություն (երկուսն էլ թե դատաստանը և թե փրկությունը):

▪ «այնպես էլ Որդին, որոնց որ կամենում է, կենդանի է անում» Ու՛մ է Որդին ընտրում կյանք տալու համար: Կոնտեքստում սա կալվինիզմը ապացուցող-տեքստ չէ, բայց պնդում է, որ Հիսուսին հավատալը կյանք է բերում (տես 1:12; 3:16): Լարվածությունը գալիս է 6:44,65-ից: Արդյո՞ք Հոգին է ընտրում «բոլորին» թե «ոմանց»: Ես կարծում եմ ակնհայտ է, որ ընկած մարդկությունը չի կարող նախաձեռնել հոգևոր քայլեր, բայց ես աստվածաշնչորեն նվիրված եմ այն փաստին, որ նրանք պետք է արձագանքեն (և շարունակեն արձագանքել) Հոգու կանչին ապաշխարությամբ, հավատքով, հնազանդությամբ և տոկունությամբ: Իրական խորհուրդն այն է, թե ինչու ոմանք, ովքեր լսում են ավետարանը ասում են «Ոչ»: Ես այն կոչում եմ «անհավատության խորհուրդ»: Իրականում դա թե Ավետարանների «աններելի մեղքն» է և թե I Հովհ. «մեղք, որը դեպի մահ է»: Տես Հատուկ Թեմա I Հովհաննես 5:16:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԷԿՋԵԳԵՏԻԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ «ԱՆՆԵՐԵԼԻ ՄԵՂՔԸ» ՄԵԿՆԱԲԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Ա. Հիշեք, որ Ավետարանները արտացոլում են հրեական միջավայր
 1. Երկու տեսակ մեղքեր(հմմտ. Ղև. 4:2,22,27; 5:15,17-19; Թվ.15:27-31; 2Օրին. 1:43; 17:12-13)
 - ա. ոչ դիտավորյալ/ոչ միտումնավոր
 - բ. դիտավորյալ, միտումնավոր
 2. Նախա-պենտեկոստեական հրեական միջավայր (այսինքն, ավետարանի կատարումը և Հոգին դեռ չէր դրսևորվել)
- Բ. Նշենք Մարկ. 3: 22-30 գրական կոնտեքստը
 1. անհավատություն Հիսուսի սեփական ընտանիքի կողմից (տես 3: 31-32)
 2. անհավատություն փարիսեցիների կողմից (հմմտ. 2:24; 3:1,6,22)
- Գ. Համեմատեք զուգահեռները, որտեղ «մարդու Որդին» տիտղոսը փոխվում է «մարդկանց որդիներին»
 1. Մատթ. 12: 22-37 (այսինքն, 12:32, «խոսք Մարդու Որդու դեմ»)
 2. Ղուկաս 11: 14-26; 12: 8-12 (այսինքն, 12:10, «խոսք Մարդու Որդու դեմ»)
 3. Մարկ. 3:28 (այսինքն, «մարդկանց որդիներին ամեն մեղքերը կթողվեն»)

5:22 Խիստ ԿՐԿՆԱԿԻ ԲԱՅԱՍԱԿԱՆ և ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅՑ ընդգծում են այն փաստը, որ դատաստանը չի կատարվել Որդուն (հմմտ. 5:27; 9:39 Գործք 10:42; 17:31, II Տիմ. 4:1, I Պետ. 4:5): Ակնհայտ պարադոքսը այս համարի և Հովհ. 13:17 միջև բացատրվում է նրանով, որ Հիսուսն այդ «վերջին օրերի ընթացքում» ոչ մեկին չի դատում, այլ մարդիկ իրենք իրենց են դատում Հիսուս

Քրիստոսի հանդեպ ունեցած իրենց արձագանքով: Հիսուսի վախճանաբանական դատաստանը(անհավատների) հիմնված է Իրեն ընդունելու կամ մերժելու վրա:

Հավիտենական կյանքն ընդդեմ դատաստանի թեման էր 3:17-21,36: Երբ մերժվում է Աստծո սերը Քրիստոսի մեջ, հայտնվում է Աստծո ցատումը: Կան միայն երկու տարբերակներ: Կա միայն մեկ ճանապարհ դեպի հավիտենական կյանք՝ հավատք դեպի Քրիստոսը (տես 10: 1-18, 14: 6, I Հովհ. 5: 9-12):

5:23 «Որ ամենքը պատուեն Որդուն» Ներառական «բոլորը» տերմինը կարող է վերաբերել վախճանաբանական դատաստանի տեսարանին (հմմտ. Փիլ. 2: 9-11):

▪ **«Որդուն չ'պատուողը՝ Հօրն էլ չէ պատուում, որ ուղարկեց նորան»** Այս արտահայտությունը շատ նման է I Հովհ. 5:12. Ոչ ոք չի կարող իմանալ Աստծուն, եթե չգիտի Նրա Որդուն և ընդհակառակը, ոչ ոք չի կարող պատվել կամ փառաբանել Հորը, եթե չի պատվում և փառաբանում Որդուն:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:24-29
²⁴ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. թե իմ խօսքը լսողը, եւ ինձ ուղարկողին հաւատացողը, յաւիտենական կեանք ունի. Եւ դատաստան չի մտնիլ, այլ մահիցը փոխուեցաւ դէպի կեանք: ²⁵ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ թէ ժամանակ կ'գայ՝ եւ հիմա է, որ մեռելներն Աստուծոյ Որդու ձայնը կ'լսեն, եւ լսողները կ'ապրին: ²⁶ Որովհետեւ ինչպէս որ Հայրն իր անձումը կեանք ունի, այնպէս էլ Որդուն տուաւ՝ որ իր անձումն կեանք ունենայ: ²⁷ Եւ նորան իշխանութիւն տուաւ, որ դատաստան էլ անէ. որովհետեւ մարդի Որդի է: ²⁸ Մորա վերայ մի զարմանաք. Որովհետեւ ժամանակ կ'գայ, որ ամենքը՝ որ գերեզմաններումն են, նորա ձայնը կ'լսեն: ²⁹ Եւ դուրս կ'գան նորանք որ բարի են գործել՝ դէպի կեանքի յարութիւնը, եւ նորանք որ չար են արել՝ դէպի դատաստանի յարութիւնը:

5:24 «Ճշմարիտ ճշմարիտ» Հիսուսի խոսքերի Հովհաննեսի յուրօրինակ կրկնողությունը (տես հ.25) առանձնահատուկ ներածություն է կարևոր արտահայտություններ համար: Տես Հատուկ Թեմա1:51

▪ **«թե իմ խօսքը լսողը, եւ ինձ ուղարկողին հաւատացողը, յաւիտենական կեանք ունի»** Սրանք երեք ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԱԾԱՆՅՅԱԼՆԵՐ ԵՆ: Այստեղ շեշտը Հոր վրա ունեցած հավատքի վրա է (տես Հատուկ Թեման 2:23), որ իրականացվում է Որդուն հավատալով (հմմտ. I Հովհ. 5: 9-12): Մինոպտիկներում հավիտենական կյանքը հաճախ գալիք իրադարձություն է, որին պետք է հուսալ հավատքով, բայց Հովհաննեսի Ավետարանում դա ներկա իրականություն է (այսինքն 8:51; 11:25): Հնարավոր է, որ «լսում է» տերմինը արտացոլում է եբրայերեն *shema* տերմինը, որը նշանակում է «լսել որպեսզի ենթարկվել» (հմմտ. 2 Օրին. 6: 4):

▪ **«ինձ ուղարկողին»** *apostellō* ԲԱՅՑ (ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) «apostle/առաքյալ» բառի արմատական ձևն է (հմմտ. հհ. 36-37): Այն օգտագործվում էր ռաբբիների կողմից որպես «մեկը, ուղարկված որպես պաշտոնական ներկայացուցիչ հանձնարարված առաքելությամբ»: Այս տերմինը օգտագործվում է հաճախ Հովհաննեսի Ավետարանում՝ Հայրը ուղարկում է Որդուն որպես Իր ներկայացուցիչ: Տես նշում 4:34

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՒՂԱՐԿՎԱԾ(APOSTELLŌ)
Այստեղ օգտագործված է հասարակ հունարեն բառ «ուղարկել» (այն է, *apostellō*): Այս տերմինն ունի մի քանի աստվածաբանական կիրառություններ
Ա. Ռաբբիներն օգտագործում էին այն մի մարդու համար, որը կանչված և ուղարկված էր ինչ որ մեկի կողմից, որպես իր պաշտոնական ներկայացուցիչ, ինչպես օրինակ մեր

- անգլերեն «դեսպան»ը (հմմտ. II Կոր. 5:20):
- Բ. Ավետարանները հաճախ օգտագործում են այս տերմինը, երբ ասվում է, որ Հիսուսն ուղարկվեց Հոր կողմից: Հովհաննեսի ավետարանում տերմինը ընդունում է մեսիական հնչերանգ (հմմտ. Մաթ. 10:40; 15:24; Մարկ. 9:37; Դուկ. 9:48 և հատկապես Հովհ. 4:34; 5:24,30,36,37,38; 6:29,38,39,40,57; 7:29; 8:42; 10:36; 11:42; 17:3,8,18,21,23,25; 20:21): Եվ այն նաև օգտագործվում է Հիսուսի կողմից, երբ Նա ուղարկում է հավատացյալներին (հմմտ. Հովհ. 17:18; 20:21)
 - Գ. Նոր Կտակարանում օգտագործվում է աշակերտների համար
 - ա. 12 աշակերտների նեղ շրջանը (հմմտ. Դուկ. 6:13; Գործք 1:21-22)
 - բ. առաքյալների օգնականների և գործընկերների հատուկ խումբը
 1. Բարնաբաս (հմմտ. Գործք 14:4,14)
 2. Անդրոնիկոս և Յունիա (KJV, Junia, հմմտ. Հռ. 16:7)
 3. Ապոդոս (հմմտ. I Կոր. 4:6-9)
 4. Հակոբոս՝ Տիրոջ եղբայր (հմմտ. Գաղ. 1:19)
 5. Միլվանոս և Տիմոթեոս (հմմտ. I Թեմ. 2:6)
 6. հավանական է Տիտոս (հմմտ. II Կոր. 8:23)
 7. հավանական է Եպափրոդիտոս (հմմտ. Փիլ. 2:25)
 - գ. պարզև, որը գոյություն ունի եկեղեցում և մեր օրերում (հմմտ. I Կոր. 12:28-29; Եփ. 4:11)
 - Դ. Պողոսն օգտագործում է այս առաքյալի տիտղոսը իր համար իր նամակներից շատերի մեջ, որպես պնդում/հաստատում Աստծո կողմից տրված իշխանության, որպես Քրիստոսի ներկայացուցիչ (հմմտ. Հռ. 1:1; I Կոր. 1:1; II Կոր. 1:1; Գաղ. 1:1; Եփ. 1:1; Կող. 1:1; I Տիմ. 1:1; II Տիմ. 1:1; Տիտոս 1:1):

▪ **«այլ մահիցը փոխուեցաւ դէպի կեանք»** Սա ԿԱՏԱՐՅԱԼ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է այն, որը տեղի է ունեցել անցյալում և հիմա դարձել է իրականություն: Աստծու Թագավորությունը ներկա է, բայց և ապագայում, այնպես էլ հավիտենական կյանքը (տես հհ. 25-26, I Հովհ.3:14): Համար 25-ը ուժեղ արտահայտություն է, որ Թագավորությունը ներկա է հիմա:

5:25 «Թէ ժամանակ կ'գայ՝ եւ հիմա է» Սա լեզվի տեսակ է, որ բնութագրում է Հովհաննեսի գրվածքները: Բառերն ու արտահայտությունները հաճախ ունեն երկու իմաստ: Այս դեպքում «ժամ» նշանակում է.

1. փրկության ժամ
2. դատաստանի ժամ

Ժամանակը թե ներկայում և թե ապագայում (տես հ. 29; 6:39,44,54): Այն, ինչ անում է մեկը Հիսուսի հետ հիմա որոշում է, թե ինչ տեղի կունենա նրան հետ ապագայում: Փրկությունն ու դատաստանը երկուսն էլ ներկա իրականություն են և ապագայի իրականացում (տես հ. 28):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԺԱՍՆ

- «ժամ» տերմինը օգտագործվում է մի քանի տարբեր ձևերով Ավետարաններում, որպես
1. ժամանակի հղում (տես Մատթ. 8:13; Դուկ. 7:21; Հովհ. 11: 9)
 2. փոխաբերություն փորձության և փորձանքի ժամանակի համար (տես Մատթ.10:19, Մարկ. 13:11, Դուկ. 12:12)
 3. փոխաբերություն, որ Հիսուսը սկսում է Իր ծառայությունը (հմմտ. Հովհ.2: 4; 4:23)
 4. փոխաբերություն դատաստանի օրվա համար (այսինքն, Երկրորդ Գալուստը, հմմտ. Մատթ. 24: 36,44, 25:13; Մարկ. 13:32; Հովհ. 5: 25,28)
 5. փոխաբերություն Հիսուսի չարչարանքների համար (տես Մատթ. 26:45, Մարկ 14: 35,41; Հովհ. 7:30; 8:20; 12:23,27, 13:1, 16:32, 17: 1)

▪ **«Էւ հիմա է, որ մեռելներն Աստուծոյ Որդու ձայնը կ'լսեն»** Համար 25-ը խոսում է հոգևոր մահվան մասին է, հ.29 խոսում է բոլոր ֆիզիկապես մահացածների հարության մասին: Աստվածաշունչը խոսում է երեք տեսակի մահվան մասին.

1. հոգևոր մահ (տես Ծննդոց 3)
2. Ֆիզիկական մահ (տես Ծննդոց 5)
3. հավիտենական մահ (տես Եփ.2:2, Հայտ.2:11, 20:6,14) կամ կրակե լիճ, դժոխք (*Gehenna*/Գեհեն)

Սա հազվագյուտ արտահայտություններից է «Աստծո Որդի»: Տես Հատուկ Թեմա I Հովհ. 3: 8: Պատճառներից մեկը, որ այս արտահայտությունը չի օգտագործվում ավելի հաճախ, այն է, որ հունական կրոնական տեսակետով աստվածները (Օլիմպոս) իրենց կին կամ կողակից են ընտրել մարդկանց միջից: Հիսուսի կարգավիճակը որպես Աստծո Որդի չի արտացոլում սեռական սերունդ կամ ժամանակի հաջորդականություն, այլ մտերիմ հարաբերություն: Սա հրեական ընտանեկան փոխաբերություն է: Հիսուսը հաստատում էր Իր Աստվածությունը այդ հրեա առաջնորդներին շատ հստակ և կոնկրետ ձևով, օգտագործելով ՀԿ կատեգորիաները (տես 5: 21,26):

5:26 «Որովհետեւ ինչպէս որ Հայրն իր անձումը կեանք ունի» Սա հիմնականում Ելից 3:14-ի ՅԱՀՎԵ տերմինի նշանակությունն է: Աստծո Ուխտի անվան այս ձևը գալիս է եբրայերեն «լինել» ԲԱՅԻՑ: Սա նշանակում է միշտ կենդանի, միայն կենդանի Մեկը: Տես Հատուկ Թեմա Աստվածության Անունները 6:20.

ՀԿ-ում միայն ՅԱՀՎԵՆ ուներ «կյանք» (հմմտ I Տիմ. 1:17; 6:16) և միայն Նա կարող էր տալ այն ուրիշներին (օր. Հոբ 10:12, 33:4, Սաղ. 36:9): Հիսուսը պնդում է, որ ՅԱՀՎԵՆ այս նույն եզակի իշխանությունը տալիս է Նրան:

▪ **«այնպէս էլ Որդուն տուա՛ որ իր անձումն կեանք ունենայ»** Սա Հիսուսի Աստվածության ուժեղ հաստատումն է (տես 1:4, I Հովհ. 5:11):

5:27 Պատճառը, որ Հիսուսը կարող է (*exousia*, ունի իշխանություն, հմմտ. 10:18, 17:2, 19:11), դատել արդարացիորեն այն է, որ Նա լիովին Աստված է, բայց նաև լիովին մարդ: Չկա ՈՐՈՇԻՉ ՀՈԴ «մարդու Որդի» արտահայտության հետ (հմմտ. Եզեկ. 2:1 և Սաղ. 8:4): Նա լիովին ճանաչում է մեզ (հմմտ. Եբր. 4:15), Նա լիովին ճանաչում է Աստծուն (հմմտ. 1:18; 5:30):

Չարմանալի է, որ կոնտեքստում, որտեղ Հիսուսը Իրեն կոչում է «որդի» (հմմտ. հ.19 [երկու անգամ], 20,21,22,23 [երկու անգամ], 25,26), հ.27 օգտագործված է «մարդու որդի» կոչումը (սակայն առանց սովորական ՈՐՈՇԻՉ ՀՈԴԻ): Սակայն նույն շրջադարձը (1) 3:13,14 ընդդեմ 3:16,17,18,35,36; (2) 6:27,53 ընդդեմ 6:40 և (3) 8:28 ընդդեմ 8:35,36. Հիսուսն օգտագործեց Իր երկու կոչումները փոփոխաբար:

5:28 «Սորա վերայ մի զարմանաք» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործողություն, որն արդեն ընթացքի մեջ է: Քանի որ Հիսուսի նախորդ ցնցող խոսքերը այդ հրեա առաջնորդներին էին, Նրա հաջորդ արտահայտությունը նույնպես պետք է ցնցեր նրանց:

▪ **«ամենքը՝ որ գերեզմաններումն են, նորա ձայնը կ'լսեն»** Սա կարծես, արտացոլում է Մեսիայի կանչը Երկրորդ Գալստյան ժամանակ (հմմտ. I Թես. 4:16); Ղազարոսը (տես 11:43) այս իրադարձության օրինակն/պարադիգմ է: Սա չի ժխտում II Կոր.5:6,8-ի ճշմարտությունը: Այն պնդում է տիեզերական դատաստանը և Որդու իշխանությունը:

Այս կոնտեքստի մեծ մասը վերաբերվում է հոգևոր կյանքի իրականությանը այստեղ և այժմ (հասկացվում է, վախճանաբանություն): Սակայն այս արտահայտությունը նաև պնդում է վերջին ժամանակի գալիք վախճանաբանական իրադարձությունը: Այս լարվածությունը Աստուծո

թագավորության արդեն և դեռ ոչի միջև է, որ բնութագրում է Հիսուսի ուսմունքները Մինուպտիկ Ավետարաններում, բայց հատկապես Հովհաննեսի Ավետարանում:

5:29 Աստվածաշունչը խոսում է թե չարերի և թե արդարների հարության մասին (հմմտ. Դան. 12:2, Մատթ. 25:46, Գործք 24:15): Շատ հատվածներ ընդգծում են միայն արդարների հարությունը (տես Հոբ 19: 23-29, Ես. 26:19, Հովհ. 6: 39-40,44,54, 11: 24-25, I Կորնթ. 15: 50-58):

Սա չի վերաբերվում գործերի վրա հիմնված դատաստանին, այլ հավատացյալների ապրելակերպի դատաստանին (տես Մատթ.25:31-46; Գաղ. 5:16-21): Աստծո Խոսքի մեջ և աշխարհում կա մի ընդհանուր սկզբունք՝ մարդիկ հնձում են այն, ինչ ցանել են (տես Առ. 11: 24-25; Գաղ.6:6): Կամ հինկտակարանյան մեջբերումը «Աստված կհատուցի մարդկանց ըստ իրենց գործերի» (հմմտ. Մաղ. 62:12, 28:4, Հոբ 34:15, Առ. 24:12; Մատթ. 16:27; Հո. 2: 6-8, I Կորնթ. 3: 8, II Կորնթ. 5:10; Եփես. 6: 8 և Կող. 3:25):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:30

³⁰Ես ինձանից չեմ կարող ոչինչ անել. Ինչպէս լսում եմ՝ այնպէս եմ դատում, եւ իմ դատաստանն արդար է. որովհետեւ իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հօր կամքը:

5:30 Հիսուսը, մարմնավորված Աստծո *Logos*-ը է ենթարկվել և հնազանդվել է Հորը: Հնազանդվելու այս ուժեղ շեշտադրումը նաև հայտնվում է հ.19 («Որդին չի կարող ոչինչ անել»): Սա չի նշանակում, որ Որդին զիջում է, այլ որ Երրորդությունը լիազորել է փրկության առաջադրանքները երեք տարբեր անձերի՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու միջև:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 5:31-47

³¹Եթէ ես ինձ համար վկայեմ իմ վկայութիւնը ճշմարիտ չէ: ³²Ուրիշն է որ ինձ համար վկայում է. Եւ ես գիտեմ որ ճշմարիտ է այն վկայութիւնը, որ վկայում է ինձ համար: ³³Դուք ուղարկեցիք Յովհաննէսի մօտ. եւ նա վկայութիւն տուաւ ճշմարտութեանը: ³⁴Իսկ ես ոչ թէ՛ մարդկանցից եմ առնում վկայութիւնը. Այլ սա ասում եմ, որ դուք ապրիք: ³⁵Նա այն ճրագն էր՝ որ վառվում էր եւ լոյս էր տալիս. եւ դուք կամեցաք մի առ ժամանակ ուրախանալ նորա լոյսովը: ³⁶Բայց ես աւելի մեծ վկայութիւն ունիմ քան թէ Յովհաննէսը, այսինքն այն գործերն, որ Հայրն ինձ տուաւ, որ կատարեմ նորանց. Նոյն այն գործերն՝ որ գործում եմ, ինձ համար վկայում են, թէ Հայրն ուղարկեց ինձ: ³⁷Եւ ինձ ուղարկող Հայրն ինքն ինձ համար վկայեց. Դուք ոչ նորա ձայնը լսեցիք երբեք, եւ ոչ նորա կերպարանքը տեսաք. ³⁸Եւ ոչ նորա խօսքն ունիք բնականօրէն ձեզանում. Որովհետեւ այն որ նա ուղարկեց դուք չէք հաւատում նորան: ³⁹Քննեցէք գրքերը որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանք, եւ նորանք են որ ինձ համար վկայում են: ⁴⁰Եւ դուք չէք կամենում ինձ մօտ գալ, որ կեանք ունենաք: ⁴¹Ես մարդկանցից փառք չեմ առնում: ⁴²Բայց ճանաչում եմ ձեզ, որ Աստուծոյ սէրը չ'ունիք ձեր անձերումը: ⁴³Ես իմ Հօր անունովն եկայ, եւ ինձ չէք ընդունում. Եթէ ուրիշը գայ իր անունովը, նորան կ'ընդունիք: ⁴⁴Ինչպէս կարող էք դուք հաւատալ, որ իրարից էք փառք առնում, եւ այն փառքը որ միայն Աստուածանից է, չէք որոնում: ⁴⁵Մի կարծէք, թէ ես Հօր մօտ ամբաստանութիւն կ'անեմ ձեզանից. կայ որ ձեզանից ամբաստանութիւն է անում՝ Մովսէսը, որի վերայ դուք ձեր յոյսը դրել էք: ⁴⁶Որովհետեւ եթէ դուք Մովսէսին հաւատայիք, ինձ էլ կ'հաւատայիք. որովհետեւ նա ինձ համար գրեց: ⁴⁷Բայց եթէ նորա գրածներին չէք հաւատում, ինչպէս իմ խօսքերին կ'հաւատաք:

5:31 Հին Կտակարանում հարցը հաստատվում էր երկու վկաների անհրաժեշտությամբ (տես Թվ. 35:30, 2 Օր.19:15): Այս կոնտեքստում Հիսուսը տալիս է հինգ վկայություն Իր մասին.

1. Հայր (հհ. 32,37)
2. Հովհաննես Մկրտիչը (հ. 33, հմմտ 1: 19-51):

3. Հիսուսի գործերը (տես հ. 36)
4. Աստվածաշունչը (տես հ. 39)
5. Մովսեսը (հմմտ. հ.46), որը խոսում Բ Օրին. 18:15-22

Տես Հատուկ Թեմա 1: 8.

- **«Եթե»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը խոսում է պոստենցիալ գործողության մասին:

- **«Իմ վկայությունը ճշմարիտ չէ»** Սա կարծես հակասում 8:14: Կոնտեքստը ցույց է տալիս, որ այս արտահայտությունները արված են տարբեր պարամետրերով: Այստեղ Հիսուսը ցույց է տալիս, որ կան բազմաթիվ այլ վկաներ, բայց 8:14-ում Նա պնդում է, որ միայն Նրանն է անհրաժեշտ: «Ճշմարիտ» տես Հատուկ Թեմա: Ճշմարտությունը Հովհաննեսի Ավետարանում 6:55.

5:32 «Ուրիշն է որ ինձ համար վկայում է» Սա վերաբերում է Հայր Աստծուն (հմմտ I Հովհ. 5: 9), *allos* տերմինի օգտագործման պատճառով, որը նշանակում է «մեկ այլ նույն տեսակի» - ի հակադրություն *heteros*, որը նշանակում է «մեկը տարբեր տեսակի» չնայած այս տարբերությունը հետզհետե մոռացվել է Կոյնե հունարենում: Տես Հատուկ Թեմա. Հիսուսի վկաները 1:8.

5:33 «Դուք ուղարկեցիք Յովհաննեսի մօտ» Սա վերաբերում է Հովհաննես Մկրտիչին (տես 1:19)

5:34 «Այլ սա ասում եմ, որ դուք ապրիք» Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ Է: ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՈՐ Ենթադրում է Աստուծո կամ Հոգու գործը (հմմտ. 6:44,65): Հիշեք, որ Ավետարանները ավետարանական հոչակումներ են (այսինքն, տրակտատ կրոնական թեմայով) և ոչ թե պատմական կենսագրություններ: Կա ավետարանական նպատակ այն ամենում, ինչ արձանագրված է (տես 20:30-31):

5:35 «Նա այն ճրագն էր» Սա ևս մեկ շեշտադրում է լույսի մասին, այստեղ Հովհաննեսի նախապատրաստական խոսքն է (տես 1:6-8):

5:36 «Նոյն այն գործերն՝ որ գործում եմ, ինձ համար վկայում են» Հիսուսի գործողությունները Մեսիայի մասին հինկտակարանյան մարգարեությունների կատարումներն են: Նրա օրերում հրեաները պետք է ճանաչեին այդ հրաշքի նշանները՝ կույրի բժշկվելը, աղքատներին կերակրելը, կաղին վերականգնելը (տես Ես. 29:18, 32: 3-4, 35:5-6, 42:7): Հիսուսի ուսմունքների գործությունը, արդարության ապրելակերպը, կարեկցանքը և գորավոր հրաշքները (տես 2:23, 10: 25,38, 14:11, 15:24) հստակ վկայություն են տալիս, թե ով էր Նա, որտեղից էր Նա եկել և ով ուղարկեց Նրան:

5:37 «Ինքն ինձ համար վկայեց» «Նա»-ն վերաբերում է Հորը: Կոնտեքստում այս արտահայտությունը կարծես վերաբերվում է ՀԿ-ին (հմմտ. Եբր. 1:1-3): Սա կարող է ներառել ՀԿ-ի բոլոր Մարգարեական համարները (հմմտ. հ. 39):

- **«Դուք ոչ նորա ձայնը լսեցիք երբեք, եւ ոչ նորա կերպարանքը տեսաք»** Հիսուսը պնդում էր, որ թեև հրեաները պետք է իմանային Աստծուն Սուրբ Գրքերի և պաշտամունքի անձնական փորձառության միջոցով, նրանք իրականում չէին ճանաչում Նրան ընդհանրապես (հմմտ. 8:43, Ես. 1:1-15, 6: 9-10; 29:13; Եբեմ. 5:21):

ՀԿ-ում Աստծուն տեսնելը մահ էր բերում: Միակ մարդը, ով խոսեց ՅԱՀՎԵԻ հետ դեմ առ դեմ Մովսեսն էր և նույնիսկ անգամ հանդիպումը եղել է ամպ քողի միջոցով: Շատերը կարծում էին, թե Ելից 33:23 հակասում է Հովհ. 1:18: Սակայն երբայերեն տերմինները Ելիցում նշանակում է «փառքից հետո» ոչ ֆիզիկական ձևը:

5:38 «նորա խօսքն ունիք բնակուած ձեզանում» Սրանք երկու հզոր փոխաբերություններ են Հովհաննեսի գրվածքներում: Աստծո խոսքը (*logos/լոգոս*) պետք է ընդունվի, եթե ընդունեց (հմմտ. 1:27) պետք է մնա (կենալ, հմմտ. Հովհ. 8:31, 15:4,5,6,7,10, I Հովհ. 2:6,10, 14,17,24,27,28, 3: 6,14,15,24): Հիսուսը Աստծո ամբողջական հայտնությունն է (տես Հովհ. 1: 1-18; Փիլիպ. 2: 6-11; Կող. 1:15-17; Եբր. 1: 1-3): Փրկությունը հաստատվում է շարունակական հարաբերության միջոցով (եբրայերեն իմաստը «իմանալ, գիտենալ», հմմտ. Ծննդ. 4:1, Երեմ. 1:5) և ավետարանի ճշմարտությունների հաստատումով (հունարեն իմաստը «իմանալ, գիտենալ», հմմտ. II Հովհ. 9):

Այս տերմինը «կենալ, մնալ» օգտագործվում է մտերմիկ, անձնական հարաբերություններ հաստատակամության հետ իմաստով: Կենալը ճշմարիտ փրկության վիճակ է (հմմտ. գլուխ 15): Այն օգտագործվում է մի քանի իմաստներով Հովհաննեսում:

1. Որդին Հոր մեջ (հմմտ. 10:38; 14:10,11,20,21; 17:21)
2. Հայրը Որդու մեջ (հմմտ. 10:38; 14:10,11,21; 17:21,23)
3. հավատացյալները Որդու մեջ (հմմտ. 10:56; 14:20,21; 15:5; 17:21)
4. հավատացյալները Որդու և Հոր մեջ (հմմտ. 14:23)
5. հավատացյալները աշխարհի մեջ (հմմտ. 5:38; 8:31; 15:7; I Հովհ. 2:14).

Տես Հատուկ Թեմա I Հովհ. 2:10.

5:39 «Քննեցեք գրքերը» Սա կարող է լինել ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ կամ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: Քանի որ այն գտնվում է վկաների ցուցակում, որը հրեաները մերժել էին, դա հավանաբար ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է:

Այստեղ հրեա առաջնորդների ողբերգությունն է: Նրանք ունեին Գրքերը, կարդում էին, ուսումնասիրում, անգիր սովորում դրանք, բայց և թողել էին այն մարդուն, ում են նրանք մատնացույց էին անում: Առանց Հոգու, նույնիսկ Սուրբ Գրքերը անարդյունավետ են: Ճիշտ կյանքը գալիս միայն անձնական, հնազանդ հավատքի հարաբերությունից (այսինքն, 2Օր. 4: 1, 8:13, 30: 15-20; 32: 46-47):

▪ **«Էս նորանք են որ ինձ համար վկայում են»** Սա վերաբերվում է հինկտակարանյան գրվածքներին, որը իրականացնում է Հիսուսը (այսինքն, 1:45, 2:22, 5:46, 12: 16,41; 19:28, 20: 9): Պետրոսի վաղ քարոզների մեծ մասը (հմմտ. Գործք 3:18; 10:43) և Պողոսը (հմմտ. Գործք 13:27, 17: 2-3, 26: 22-23,27) Գործքում օգտագործում են կատարված մարգարեությունն որպես Հիսուսի Մեսիայի վկայություն: Բոլորը բայց մի հատված (I Պետ. 3: 15-16), որը հաստատում է Գրքի հեղինակությունը գտնվում է ՆԿ-ում (տես I Կորնթ. 2: 9-13, I Թեսաղ. 2:13; Բ Տիմ. 3:16; I Պետ. 1: 23-25, Բ Պետ. 1: 20-21), վերաբերվում է ՀԿ-ին: Հիսուսը պարզ տեսնում էր Իրեն որպես ՀԿ-ի իրականացում և նպատակ (և պատշաճ մեկնաբան, հմմտ Մատթ. 5:17-48):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՎԱՂ ԵԿԵՂԵՑՈՒ KERYGMA-Ն

1. Հին Կտակարանում Աստծո տված խոստումները կատարվել են Հիսուս Մեսիայի գալուստով (Գործք 2:30; 3:19,24; 10:43; 26:6-7,22; Հռ.1:2-4; 1Տիմ.3:16; Եբր.1:1-2; 1Պետ.1:10-12; 2Պետ.1:18-19)
2. Հիսուսը օծվեց որպես Մեսիա Աստծո կողմից Իր մկրտության ժամանակ (Գործք 10:38)
3. Հիսուսը սկսեց Իր ծառայությունը Գալիլեիայում Իր մկրտությունից հետո (Գործք 10:37)
4. Իր ծառայությունը բնութագրվում էր բարիք գործելով և զորավոր գործեր անելով Աստծո զորությամբ (Մարկ. 10:45; Գործք 2:22;10:38)
5. Մեսիան խաչվեց համաձայն Աստծո նպատակի (Մարկ.10:45; Հովհ.3:16; Գործք 2:23; 3:13-15, 18; 4:11; 10:39; 26:23; Հռ.8:34; 1Կորն.1:17-18; 15:3; Գաղ.1:4; Եբր. 1:3; 1Պետ.1:2,19; 3:18; 1Հովհ. 4:10)
6. Նա հարություն առավ մեռելներից և հայտնվեց Իր աշակերտներին (Գործք 2:24, 31-32; 3:15, 26; 10:40-41; 17:31; 26:23; Հռ.8:34; 10:9; 1Կորն.15:4-7, 12; 1Թեսաղ.1:10; 1Տիմ.3:16; 1Պետ. 1:2; 3:18,21)
7. Հիսուսը մեծարվեց Աստծո կողմից և տրվեցավ «Տեր»անունը (Գործք 2:25-29, 33-36; 3:13; 10:36; Հռոմ. 8:34; 10:9; 1Տիմ. 3:16; Եբր. 1:3; 1Պետ. 3:22)

8. Նա սովեց Սուրբ Հոգին ձևավորելու Աստծո նոր համայնքը (Գործք 1:8; 2:14-18, 38-39; 10:44-47; 1Պետ.1:12)
9. Նա նորից կգա դատելու և վերականգնելու ամեն բան (Գործք 3:20-21; 10:42; 17:31; 1Կորն.15:20-28; 1Թեա. 1:10)
10. Ով որ լսում է պատգամը պետք է ապաշխարի և մկրտվի (Գործք 2:21,38; 3:19; 10:43,47-48; 17:30; 26:20; Հռոմ. 1:17; 10:9; 1Պետ

Այս սխեման ծառայում է որպես վաղ եկեղեցու հիմնական հռչակումը, չնայած որ Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ բաց են թողել մի մաս կամ ընդգծել են ուրիշ մանրամասնություններ իրենց քարոզչության մեջ: Ամբողջ Մարկոսի Ավետարանը մանրամասն հետևում է Պետրոս առաքյալի քարոզներին: Ըստ ավանդույթի Մարկոսը գրել է իր Ավետարանը, այն կառուցելով Պետրոսի քարոզների վրա, որոնք քարոզվել են Հռոմում: Թե Մատթևոսը և թե Դուկասը հետևում են Մարկոսի հիմնական կառուցվածքին:

5:41-44 Այս համարները կարծես արտացոլում են այն փաստը, որ հրեա կրոնական առաջնորդները վայելում էին ծափահարություններ իրենց հասակակիցներից: Նրանք ցնծում էին մեջբերելով ռաբբիներին անցյալից, բայց հոգևոր կուրության պատշառով նրանք բաց էին թողել բոլոր ուսուցիչներից մեծագույնին, ով նրանց մեջ էր: Սա Հիսուսի ուժեղ ուրացումներից մեկն էր առաջին դարի ռաբբիական հուդայականության (նաև առակը Մատթ. 21: 33-46, Մարկ. 12: 1-12, Դուկ. 20: 9-19):

5:41

- NASB, NRSV “Ես մարդկանցից փառք չեմ առնում”
- NKJV “Ես մարդկանցից պատիվ չեմ առնում”
- TEV “Ես չեմ փնտրում մարդկային փառաբանություն”
- NJB “Մարդկային փառքը ոչինչ է ինձ համար”

«փառք» *doxa* տերմինը, դժվար է թարգմանել հետևողականորեն (տես Հատուկ Թեմա 1:14): Այն արտացոլում է եբրայերեն «փառք» *kabodh*, որն օգտագործվում էր որպես միջոց, արտահայտելու Աստծո պայծառ, փայլուն ներկայությունը (հմմտ. Ելից 16:10; 24:17, 40:34, Գործք 7:2) և գովաբանել և պատվել Աստծուն Իր բնույթի և գործողությունների համար: Լավ համար, որը համատեղում է այդ լրացուցիչ իմաստները II Պետ. 1:17.

Աստծո ներկայության և առանձնահատկության այս փայլուն ասպեկտը կապված է

1. հրեշտակներ (տես Դուկ. 2: 9; Բ Պետ. 2:10)
2. Հիսուսի գերազանցությունը (տես Հովհ. 1:14; 8:54, 12:28, 13:31, 17: 1-5,22,24, I Կոր. 2: 8; Փիլ. 3:17)
3. հավատացյալների բաղդատումը, ածանցյալը (տես Հռոմ. 8:18,21, I Կորնթ. 2: 7; 15:43. II Կորնթ. 4:17; Կող. 3: 4, I Թեա. 2:12; Բ Թեսաղ. 2:10; Եբր. 2:10; I Պետ. 5: 1,4):

Հետաքրքիր է նաև նշել, որ Հովհաննեսը վերաբերվում է Հիսուսի խաչելությանը որպես Նրա փառավորում (տես 7:39, 12:16,23; 13:31): Այնուամենայնիվ այն կարող է նաև թարգմանվել որպես «պատիվ» կամ «գոհություն» (հմմտ. Դուկ. 17:18; Գործք 12:23, Հռոմ. 4:20; I Կորնթ. 10:31, II Կորնթ. 4:15; Փիլ. 1:11; 2:11; Հայտն. 11:13, 14: 7, 16: 9, 19: 7): Ահա թե ինչպես է այն օգտագործվում այս կոնտեքստում:

5:43 «Ես իմ Հօր անունովն եկայ, եւ ինձ չէք ընդունում» Ողջ Հովհաննեսի Ավետարանում, Հիսուսին հավատալու կենտրոնացումը սահմանված աստվածաբանական դավանանք չէ, այլ անհատական հանդիպումը Նրա հետ (այսինքն, հհ. 39-40): Հավատքը սկսվում է Նրան վստահելու որոշմամբ: Սա սկսում է աշակերտության աճող անձնական հարաբերություն, որը գազաթնակետին է հասնում վարդապետական հասունությամբ և Քրիստոսանման ապրելակերպի ձևաչափերով:

- **«Եթե ուրիշը գայ իր անունովը»** Սա ԵՐԲՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է:
- **«նորան կ'ընդունիք»** Սա ռաբբիների ուսումնական մեթոդներով բառախաղ է՝ համեմատելով ուսուցիչներին տարբեր ռաբբիական դպրոցների Թալմուդից:
Michael Magill, *New Testament TransLine*, ունի լավ մեջբերում.
«Հրեա առաջնորդները կընդունեն մարդ ուսուցչի կամ ռաբբիի, ով չի պնդի, որ ուղարկված է Աստծո կողմից: Մարդ ուսուցչի հետ, նրանք փոխադարձ հասակակիցների հարաբերությունների մեջ են, փոխանակելով փառքը հավասար հիմունքներով: Աստծո կողմից ուղարկված մարգարեի հետ նրանք պետք է լինեն ստորադաս դիրքում, լսելով և հնազանդվելով: Դա միշտ եղել է արմատական, թե ինչու Աստծո մարգարեները մերժվել են միշտ» (էջ 318):

5:44 Տես ծանուցում 17:3.

5:45-47 Հիսուսը հաստատում էր, որ Մովսեսի գրվածքները Իրեն էին բացահայտում: Սա թերևս հղում է Բ Օրին. 18: 15-22: 45 համարում Աստվածաշունչը անձնավորված է որպես մեղադրող: Այն նշանակված էր որպես ուղեցույց (տես Դուկ. 16:31): Ուղեցույցը մերժվել է, դառնում է հակառակորդ (տես Գաղ. 3: 8-14, 23-29):

5:46,47 «Եթե ...եթե» Համար 46-ը ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է «հակասում այն փաստին», որը պնդում է, որ հրեա առաջնորդները իրականում չէին հավատում նույնիսկ Մովսեսի գրվածքներին և որ Հիսուսը (այդ վախճանաբանական Մովսեսը [այսինքն, Մարգարեն Բ Օրին. 18: 15-19]) կլինի նրանց դատավորը վերջին օրը: 47 համարի «եթե»-ն ներկայացնում է ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, որը ենթադրվում է որպես ճշմարտություն (NIV ունի «քանի որ»):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ 4-րդ համարը բացակայում է մեր ժամանակակից թարգմանություններում:
2. Ինչու՞ Հիսուսը բժշկեց այս առանձնահատուկ մարդուն:
3. Եղե՞լ է հավատք այս մարդու բուժման մեջ: Արդյո՞ք ֆիզիկական բժշկությունը ենթադրում է հոգևոր բժշկություն:
4. Նրա հիվանդությունը կապվա՞ծ էր նրա անձնական մեղքի հետ: Արդյո՞ք բոլոր հիվանդությունները կապված են մեղքի հետ:
5. Ինչու՞ էին հրեաները ցանկանում սպանել Հիսուսին:
6. Թվարկեք Աստծո գործողությունները Հին Կտակարանում որոնք վերաբերվում են Հիսուսին:
7. Հավիտենական կյանքը այսօրվա իրականություն է թե՞ ապագայի հույս:
8. Վերջին դատաստանը հիմնված է գործերի թե՞ հավատքի վրա: Ինչու՞

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 6

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ³	NKJV	NRSV	TEV	NJB
Հինգ հազարին կերակրելը 6:1-15	Հինգ հազարին կերակրելը 6:1-14	Հինգ հազարին կերակրելը 6:1-15	Հիսուսը կերակրում է հինգ հազարին 6:1-6 6:7 6:8-9 6:10-13 6:14-15	Հացերի հրաշքը 6:1-4 6:5-15
Ջրի վրայով քայլելը 6:16-21	Հիսուսը քայլում է ծովի վրայով 6:15-21	Հիսուսը քայլում է ծովի վրայով 6:16-21	Հիսուսը քայլում է ջրի վրայով 6:16-21	Հիսուսը մոտենում է Իր աշակերտներին ջրերի վրայով քայլելով 6:16-21
Հիսուս Կյանքի Հացը 6:22-33	Հացը Երկնքից 6:22-40	Հիսուս Կյանքի Հացը 6:22-24 6:25-40	Մարդիկ փնտրում են Հիսուսին 6:22-24 Հիսուս Կյանքի Հացը 6:25 6:26-27 6:28 6:29 6:30-31 6:32-33 6:34 6:35-40	Բախումը ժողովարանում Կափառնայում 6:22-27 6:28-40
6:34-40	Մերժվեց իրենների կողմից 6:41-51	6:41-51	6:41-42 6:43-51	6:41-51
6:41-51	6:41-59	6:52-59	6:52 6:53-58 6:59	6:52-58 6:59-63
6:52-59	Աշակերտներից շատերը հեռանում են 6:60-71	6:60-65	Հավիտենական կյանքի խոսքերը 6:60 6:61-65	6:64-66 Պետրոսի դավանանքը 6:67-71
Հավիտենական կյանքի խոսքերը 6:60-65	6:60-71	6:66-71	6:66-67 6:68-69 6:70-71	6:66-67 6:67-71

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՑԻՆ ՆԵՐՐՄԲՈՒՆՄԵՆՐԸ ՀՈՎՀԱՆՆՈՒ 6:1-71

Ա. Հովհաննեսի Ավետարանը չի արձանագրում Տիրոջ Ընթրիքը, չնայած 13-17 գլուխներում արձանագրված է Վերնատան երկխոսությունը և աղոթքը: Այս բացթողումը կարող է լինել միտումնավոր: Երկրորդ դարի եկեղեցին խորհուրդները սկսեց դիտել սրբազան իմաստով: Նրանք դա համարեցին որպես շնորհքի ուղիներ: Հովհաննեսը հնարավոր է արձագանքում է ծիսական տեսակետին՝ չարձանագրելով Հիսուսի մկրտությունը կամ Տիրոջ ընթրիքը:

Բ. Հովհաննես 6-րդ գլուխը հինգ հազարի կերակրման կոնտեքստում է: Սակայն շատերն այն օգտագործում են սովորեցնելու Eucharist-ի ծիսական տեսակետը: Սա է Հռոմեական կաթոլիկ գոյափոխության վարդապետության աղբյուրը (հհ.53-56):

Հարցը հետևյալն է, թե ինչպես է 6-րդ գլխում Eucharist-ը ցույց տալիս Ավետարանների երկակի բնույթը: Ակնհայտ է, որ Ավետարանները վերաբերվում են Հիսուսի խոսքերին ու կյանքին, սակայն դրանք գրվել են տասնամյակներ անց և հայտնել անհատի հեղինակների հավատքի համայնքը: Այնպես որ, կան հեղինակային մտադրության երեք մակարդակները.

1. Հոգին
2. Հիսուսն ու լսողները
3. ավետարանի գրողներն ու նրանց ընթերցողները

Ինչպե՞ս մեկնաբանել: Միակ ստուգելի մեթոդը պետք է լինի կոնտեքստուալ, քերականական, բառային մոտեցումով, տեղեկացված պատմականորեն և ոչ թե հակառակը:

Գ. Մենք պետք է հիշենք, որ լսարանը հրեական էր, իսկ մշակութային ֆոնն այն էր, որ ռաբբիներն ակնկալում էին Մեսիային որպես սուպեր Մովսես (տես հհ. 30, 31), հատկապես՝ Ելիցի փորձառությունների հետ կապված ինչպես «մանանա»: Ռաբբիներն օգտագործում են Մադ. 72:16 որպես ապացուցող տեքստ: Հիսուսի արտասովոր մտքերը (տես հհ. 60 62, 66) կոչված էին հակազդելու՝ բազմության կեղծ Մեսիայի սպասելիքների վրա (տես հհ. 14 -15):

Դ. Եկեղեցու վաղ հայրերից ոչ բոլորն էին համաձայն, որ այս հատվածը վերաբերում է Տիրոջ Ընթրիքին: Կղեմես Ալեքսանդրացին, Օրիգենեսը և Եվսեբիոս երբեք չեն նշել Տերունական ընթրիքի մասին այս հատվածում իրենց քննարկումների ժամանակ:

Ե. Այս հատվածի փոխաբերությունները շատ նման են Հիսուսի խոսքերին օգտագործված «ջրհորի մոտի կնոջ» հետ Հովհ. 4-ում: Երկրային ջուրն ու հացը օգտագործվում են որպես փոխաբերություններ հավիտենական կյանքի և հոգևոր իրողությունների համար:

Զ. Այս հացի բազմապատկումը միակ հրաշքն է, որ արձանագրված է բոլոր չորս Ավետարաններում (Մատթ. 14: 13-21; Մարկ. 6: 32-44; Դուկ. 9: 10-17):

Է. Michael Magill, *New Testament TransLine* (էջ 325) ունի հետաքրքիր դիտարկում կապված տարբեր խմբերի հետ Կափառնայում և դրանց կապը Հիսուսի ցնցող խոսքերին:

1. ամբոխը, հ. 24
2. հրեաները, հհ. 41,52
3. աշակերտները, հհ. 60,66
4. Տասներկուսը, հ. 67

Հիսուսն արդյունավետորեն

1. կանգնեցրեց ամբոխին, որը փորձում էր իրեն թագավոր կարգել, քանի որ Նա կերակրեց նրանց (6:15)
2. մարտահրավեր նետեց հրեա ղեկավարությանը Իր արմատական անձնական պահանջներով
3. ստիպեց շատ մակերեսային հետևորդների հեռանալ
4. կոչ արեց Տասներկուսին շարունակել և խորացնել հավատքը (6: 68-69)

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:1-14

¹ Սորանից յետոյ Յիսուսը գնաց Գալիլեայի Տիբերեա ծովի միւս կողմը: ² Եւ շատ ժողովուրդ գնում էր նորա ետեւից. Որովհետեւ տեսնում էին նորա նշանները, որ անում էր հիւանդների վերայ: ³ Յիսուսն էլ վեր ելաւ սարը, եւ նստեց իր աշակերտների հետ այնտեղ: ⁴ Եւ Հրեաների գատիկի տօնը մօտ էր: ⁵ Յիսուսն էլ իր աչքերը բարձրացրեց եւ տեսաւ, որ շատ ժողովուրդ էր գալիս իրան մօտ. Ասեց Փիլիպպոսին. Ի՞նչ տեղից հաց առնենք, որ դորանք ուտեն: ⁶ Բայց այս ասեց՝ նորան փորձելով. Որովհետեւ ինքը գիտէր թէ ինչ պիտի անէր: ⁷ Փիլիպպոսը պատասխանեց նորան. Երկու հարիւր դահեկանի հաց բաւական չէ դորանց, որ ամեն մէկը մի քիչ առնէ: ⁸ Նորա աշակերտներից մէկը, Անդրէասը՝ Սիմօն Պետրոսի եղբայրն՝ ասեց նորան. ⁹ Այստեղ մէկ տղայ կայ, որ հինգ գարի հաց ունի եւ երկու փոքր ձուկ. բայց սա ի՞նչ է այդչափ մարդկանց համար: ¹⁰ Յիսուսն էլ ասեց. Մարդկանցը նստեցրէք. Եւ շատ խոտ կար այն տեղը. Եւ մարդիկը նստեցին համարով իբր հինգ հազար: ¹¹ Եւ Յիսուսը հացերն առաւ՝ գոհացաւ եւ բաժանեց աշակերտներին, եւ աշակերտներն էլ նստողներին, նոյնպէս էլ ձկներիցը որչափ որ կամեցան: ¹² Եւ երբոր կշտացան, ասեց իր աշակերտներին. Ժողովեցէք աւելացած կտորները որ բան չ'կորչի: ¹³ Եւ ժողովեցին, եւ կտորներիցը տասներկու կողով լցրին այն հինգ գարի հացիցը, որ ուտողներիցն աւելացաւ: ¹⁴ Բայց մարդիկն՝ երբոր տեսան այն նշանն որ արաւ Յիսուսը, ասում էին թէ Սա է ճշմարտապէս այն մարգարէն որ պիտի աշխարհք գար:

6:1 «Գալիլեայի Տիբերեա ծովի» Այս ջրային հատվածը հայտնի էր մի քանի այլ անուններով: Հին Կտակարանում այն կոչվում էր Քեներեթ, (տես Թվոց 34:11): Այն նաև հայտնի էր որպես Գեննեսարեթ Ղուկաս 5: 1 և հռոմեական անունով, Տիբերիայի ծովը Հովհաննես 21:1. Սա ցույց է տալիս, որ Հովհաննեսի Ավետարանը Պաղեստինից դուրս ապրող մարդկանց համար էր (տես 6: 4,6,64,71):

6:2 Ուշադրություն դարձրեք, թե ինչու էր ամբոխը հետևում Նրան:

6:3 Հիսուսն օգտագործեց ջրի և բլրի բնական ուժեղացումը՝ Իր ձայնը արձագանքելու համար: Այն փաստը, որ Նա «նստեց» ցույց է տալիս, որ սա պաշտոնական ուսուցումն էր իր աշակերտների հետ: Հետաքրքիր է, արդյոք լեռը նշված է հիշեցնելու Մովսեսական տեսարանը Մաթ.5-7-ի պես:

Այսպիսի լայնածավալ ուսուցումների ժամանակ, Հիսուսը հաճախ իր խոսքն ուղղում էր տարբեր խմբերի ամբոխի մեջ: Իր ոտքերի մոտ էին իր աշակերտները, նրանց հետևում հետաքրքրասեր, հարուստ և հասարակ «ցամաքի ժողովուրդը» և փոքր խմբերով կրոնական առաջնորդները (փարիսեցիները, օրենսագետները, սադուկեցիները, հնարավոր է նույնիսկ Էսսենները):

6:4 «Եւ Հրեաների զատիկի տօնը» Հիսուսի հրապարակային ծառայության ժամանակն իմանալու միակ կերպը դա Ջատիկն է, որի մասին նշված է Հովհաննէսի Ավետարանում (առաջինը 2:13, երկրորդը 6: 4, իսկ երրորդը 11:55 և 13:1): Եթէ Հովհ. 5: 1 նույնպէս խոսում է Ջատիկի մասին, ապա մենք ունենք առնվազն երեք ու կէս կամ չորս տարվա հրապարակային ծառայություն: Այնքան շատ քան կա, որ մենք չգիտենք Հիսուսի կյանքի մասին (տես 20:30; 21:25):

6:6 «Բայց այս ասեց՝ նորան փորձելով» Սա հունարեն տերմինը այստեղ «փորձել» (*peirazō*) բառի համար սովորաբար կրում է չար իմաստ (տես Հատուկ Թեման I Հովհ. 4: 1, տես Մատթ. 4: 1): Սա լավ օրինակ է ցույց տալու, որ ժամանակակից թարգմանիչները փորձում են ուժով ՆԿ խոսքերը տեղավորել մեկ սահմանման մեջ: Koine հունարենը կորցնում էր դասական հունարեն քերականական և լեզվական առանձնահատկություններից շատերը (տես ծանուցում 5:20):

- Հիսուսը փորձում էր Փիլիպպոսին, բայց ինչպե՞ս
1. իր հավատքն առ Հիսուս որպէս հոգատար, կարեկցող
 2. իր ՀԿ գիտելիքները (հմմտ. Թվ. 11:13, Մովսէսի հարցը Աստծուն՝ սնունդ տրամադրելու մասին):
 3. ամբոխի մասին իր խնամքի և մտահոգության համար:

6:7

NASB, NKJV, JB “Երկու հարյուր դահեկան արժեքի”
NRSV “վեց ամսվա աշխատավարձ”
TEV “Երկու հարյուր արծաթե մետաղադրամներ”

Մի դահեկանը մշակի և զինվորի մեկ օրվա աշխատավարձն էր (տես Մատթ. 20:2): Սա կլինէր գրեթէ տարեկան աշխատավարձի երկու-երրորդը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐԸ ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ ՀԻՄՈՒՄԻ ՕՐԵՐՈՒՄ	
I.	Պղնձե մետաղադրամներ
Ա.	Ստակ/ <i>cherma</i> - քիչ արժեք ունեցող (տես Հովհ. 2:15)
Բ.	Ստակ/ <i>chalchos</i> - քիչ արժեք ունեցող (տես Մատթ. 10: 9; Մարկ 12:41)
Գ.	Դանկ/ <i>assarion</i> - Հռոմեական պղնձե մետաղադրամ արժե մոտ մի դինարի 1/16 (տես Մատթ. 10:29)
Դ.	Նաքարակիտ/ <i>kodrantēs</i> - Հռոմեական պղնձե մետաղադրամ արժե մի դինարի 1/64 (տես Մատթ. 5:26)
Ե.	Լուսա/ <i>lepton</i> - հրեական պղնձե մետաղադրամ արժե մոտ մի դինարի 1/128 (հմմտ. Մարկ 12:42, Ղուկաս 21: 2)
Զ.	<i>quadrans</i> / գրոշ/ <i>farthing</i> - Հռոմեական պղնձե մետաղադրամ քիչ արժեք ունեցող
II.	Արծաթե մետաղադրամներ
Ա.	Սիկո արծաթ/ <i>arguros</i> («արծաթե մետաղադրամ») - շատ ավելի արժեքավոր է, քան պղնձե կամ բրոնզե մետաղադրամը (տես Մատթ. 10: 9; 26:15)
Բ.	Դահեկան/ <i>dēnarius</i> - հռոմեական արծաթե մետաղադրամ, որն արժե մի օրվա աշխատանքը (տես Մատթ. 18:28, Մարկ. 6:37)
Գ.	Դրամ/ <i>drachmē</i> - հունական արծաթե մետաղադրամ, որն համարժեք է մեկ <i>dēnarius</i> (հմմտ. Ղուկ. 15: 9)
Դ.	Երկդրամեան/ <i>di-drachmon</i> - կրկնակի դրամ/ <i>drachmas</i> , որն հավասար է հրեական սիկլի/S shekel (տես Մատթ. 17:24)
Ե.	Սատեր/ <i>statrē</i> - արծաթե մետաղադրամ, որն արժե մոտ չորս դահեկան/ <i>dēnarii</i> (տես Մատթ. 17:27)
III.	Ոսկի մետաղադրամներ - <i>chrysolos</i> («ոսկի մետաղադրամներ») - ամենա արժեքավոր

մետաղադրամները (տես Մատթ. 10: 9)

IV. Մետաղների կշիռների ընդհանուր տերմինները

Ա. Մնաս/*mnaa* - լատիներեն *mina*, մետաղի քաշ, որն համարժեք է 100 դինարի/*dnarii* (տես Ղուկ. 19:13)

Բ. Քանքար կամ տաղանդ/*talanton* - հունարեն քաշի միավոր (տես Մատթ. 18:24, 25: 15,16,20,24,25,28)

1. արծաթը արժե 6000 դինարի/*dēnarii*

2. ոսկին արժե 180,000 դինարի/*dēnarii*

Գ. Սիկղ/*sheqel* - հրեական չԿ արծաթի քաշ (տես Ծննդ. 23:15, 37:28, Ելից 21:32)

1. *pim* - 2/3 սիկղ/ shekel

2. *beka* - S սիկղ/ shekel

3. *gerah* - 1/20 սիկղ/ shekel

Ավելի մեծ միավորներ

1. Մնաս/ *maneh* - 50 սիկղ/ shekel

2. Քանքար կամ տաղանդ/*kikkar* - 3,000 սիկղ/ shekel

6:8-9 «Անդրեասը՝ Միմոն Պետրոսի եղբայրն» Այս կոնտեքստը Հիսուսի ունակության և անձի հանդեպ ունեցած Անդրեասի պարզ հավատքի և վստահության մասին մի գեղեցիկ պատկեր է:

6:9 «հինգ գարի հաց» Սա համարվում էր ամենաեժան և քիչ ցանկալի հաց: Դա աղքատների կերակուր էր: Հիսուսը չօգտագործեց Իր զորությունները թանկ սնունդ տրամադրելու համար:

6:10 «Մարդկանցը նստեցրեք» Այս մշակույթի մարդիկ սովորաբար ուտում էին կամ հատակին նստած կամ էլ հենվում էին ցածր «Ս» ձև ունեղոց սեղանի շուրջ:

- **«Եւ շատ խոտ կար այն տեղը»** Սա ականատեսի առաքելական (լրացում) մեկնաբանությունն է:
- **«Եւ մարդիկը նստեցին համարով իբր հինգ հազար»** Իրականում սխալ է սա անվանել « հինգ հազարի կերակրում», քանի որ, ըստ երևույթին, այդ օրը եղել են ավելի շատ մարդիկ: Հինգ հազարը կլոր թիվ է և վերաբերում է չափահաս տղամարդկանց (այսինքն 13-ից բարձր) և չի ներառում կանանց և երեխաներին (տես Մատթ. 14:21): Մակայն անորոշ է թե քանի կանայք ու երեխաներ են եղել կամ կարող էին լինել այնտեղ (հմմտ Մատթ. 14:21):

6:11 «Եւ հացերն առաւ՝ գոհացաւ եւ բաժանեց» Բազմապատկման հրաշքը պետք է տեղի ունեցած լիներ Հիսուսի ձեռքերում: Հրեաների Մեսիական հույսի կոնտեքստում այս դեպքը կլինի ակնկալվող նշանը, որ Հիսուսը հոգաց սնունդը, ինչպես Մովսեսը՝ մանանան:

Հունարեն «գոհություն» (*eucharisteō*) տերմինը հետագայում դարձավ Վերջին Ընթրիքի անունը (տես I Կորնթ. 11: 23-24): Արդյոք դա Հովհաննեսն օգտագործում է այստեղ մտքում ունենալով ապառնի, տեխնիկական սահմանում: Մնացած Ավետարանները, որոնք չունեն ակնարկներ Eucharist-ին օգտագործում են ուրիշ տերմին (*eulogeō*, տես, Մատթ. 14:19, Մարկ. 6:41): Նրանք օգտագործում են *eucharisteō* տերմինը (տես Մատթ. 15:36, Մարկ. 8: 6; Ղուկ. 17:16; 18:11), բայց ոչ թե հետևողականորեն Վերջին Ընթրիքի տեսարանում: Նրանք օգտագործում են նույն տերմինը նկարագրելու Հիսուսի գոհության աղոթքը վերնատանը (տես Մատթ. 26:27; Մարկ. 14:23 և Ղուկ. 22: 17-19): Հետևաբար, քանի որ կիրառումը միասնական չէ, անհրաժեշտ էր, որ Հովհաննեսը իր ակնարկն աներ ավելի կոնկրետ, եթե հետագայում ընթերցողները կցանկանային մեկնաբանել այս Eucharistic տեսարանը:

6:12 «չ'կորչի» Տես Հատուկ Թեմա. *Apollumi* 10:10.

6:13 «Եւ ժողովեցին, եւ կտորներիցը տասներկու կողով լցրին» «Զամբյուղ» տերմինը վերաբերում է մեծ կողովանման զամբյուղի: Հատկանշական է, որ Հիսուսը չվատնեց որևէ ավելացած սնունդ: Ոչ էլ Նա փոխեց հացի բնույթը (կամ տեսակը):

Արդյոք «տասներկու» տերմինը ունի սիմվոլիկ նշանակություն: Հաստատ չենք կարող ասել: Այն մեկնաբանվել է որպես հղում Իսրայելի ցեղերին (Հիսուս բավարարում է ՀԿ) կամ մեկ զամբյուղ յուրաքանչյուր աշակերտի համար (Հիսուսը բավարարում և ապահովում է Իր աշակերտներին), սակայն դա կարող է նաև լինել ականատեսի մանրամասնում (ինչպես հ. 19):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԱՄՆԵՐԿՈՒ ԹԻՎԸ

Տասներկուսը միշտ եղել է կազմակերպության խորհրդանշական թիվ

Ա. Աստվածաշնչից դուրս

1. Կենդանակերպի տասներկու նշանները
2. տարվա տասներկու ամիսները

Բ. Հին Կտակարանում (BDB 1040 գումարած 797)

1. Հակոբի որդիները (հրեա ցեղերը)
2. արտացոլվում են
 - ա. խորանի տասներկու սյուները Ելից 24: 4
 - բ. քահանայապետի լաջապանակի տասներկու քարերը (որոնք ցեղերն են) Ելից 28:21
 - գ. խորանի սուրբ վայրի տասներկու հացերը Ղև. 24: 5
 - դ. Քանանի տասներկու լրտեսները Թվ. 13 (յուր. ցեղից մեկական)
 - ե. տասներկու գավազանները (ցեղային ստանդարտները), Կորիսի ապստամբության ժամանակ Թվ. 17: 2
 - զ. Հեսուի տասներկու քարերը Հեսու 4: 3,9,20
 - է. Սողոմոնի վարչակազմի տասներկու վարչական շրջանները Գ Թագ. 4: 7
 - ը. Եդիայի ՅԵՀՆՎԱ-յի զոհասեղանի տասներկու քարեր Գ Թագ. 18:31

Գ. Նոր Կտակարանում

1. ընտրյալ տասներկու առաքյալները
2. տասներկու կողով հացը (յուր. Առաքյալի համար մեկական) Մատթ. 14:20
3. տասներկու գահերը, որի վրա ՆԿ աշակերտներն են նստելու (վկայակոչելով Իսրայելի 12 ցեղերիը) Մատթ. 19:28
4. հրեշտակների տասներկու գնդերը Հիսուսին փրկելու համար Մատթ. 26:53
5. Հայտնության սիմվոլները
 - ա. 24 երեցները 24 գահերին 4: 4
 - բ. 144000 (12x12,000) 7: 4; 14: 1,3
 - գ. կնոջ թագի վրայի տասներկու աստղերը 12: 1
 - դ. Տասներկու դռները, տասներկու հրեշտակներ՝ տասներկու ցեղերը 21:12
 - ե. Նոր Երուսաղեմի տասներկու հիմնաքարերը և նրանց վրա Տասներկու Առաքյալների անունները 21:14
 - զ. տասներկու հազար ասպարեզ 21:16 (նոր քաղաքի՝ Նոր Երուսաղեմի չափը)
 - է. պարիսպը 144 կանգուն 21: 17
 - ը. մարգարիտե տասներկու դարպասները 21:21
 - թ. ծառերը նոր Երուսաղեմում տասներկու տեսակի մրգերով (յուր. ամսվա համար մեկական) 22: 2

6:14 «այն մարգարեն» Սա ակնարկում է Մեսիական հղում Բ Օրին. 18: 15-22 (տես Գործք 3:22, 7:37): Ամբոխը ճանաչում էր Հիսուսի իշխանությունը, բայց սխալ էր հասկանում Նրա առաքելության և նշանների բնությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:15

¹⁵ Յիսուսն էլ իմանալով թե գալու են իրան յափշտակեն, որ թագաւոր շինեն իրան, դարձեալ մինակ գնաց սարը:

6:15 Ամբոխը հուզված էր Հիսուսի ուտելիք տրամադրելու Մեսիական հրաշքից: Այս համարը կարող է վերաբերել չարի գայթակղությանը Մատթ. 4: 3.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:16-21

¹⁶ Եւ երբ որ իրիկուն եղաւ, նորա աշակերտները իջան ծովի եզրը. ¹⁷ Եւ նաւը մտնելով գնացին ծովի այն կողմը՝ Կափառնայում. Եւ արդէն մթնել էր, եւ Յիսուսը չէր եկել նորանց մօտ: ¹⁸ Եւ ծովն էլ սաստիկ քամու փշելուցը յուզվում էր: ¹⁹ Եւ երբոր թիավարելով քսանեւհինգ կամ երեսուն ասպարեզի չափ առաջ էին գնացել, տեսան Յիսուսին ծովի վերայ քայլելով գալիս, որ նաւին մօտենում էր եւ վախեցան: ²⁰ Նա էլ ասեց նորանց. Ես եմ մի վախեցնաք: ²¹ Եւ կամենում էին նորան ընդունել նաւի մէջ. Եւ նաւը շուտով հասաւ այն երկիրը, որ գնում էին:

6:17 «Կափառնայում» Սա էր Հիսուսի գլխավոր ուղղությունը Իր Գալիլեայի ծառայության ընթացքում՝ Իր հայրենի քաղաքի Նազարեթի անհավատության պատճառով (տես Ղուկ.4: 28-29):

6:19 «Եւ երբոր թիավարելով քսանեւհինգ կամ երեսուն ասպարեզի չափ առաջ էին գնացել» Նրանք մոտավորապէս լճի կեսն անցել էին, երբ Հիսուսը քայլելով մոտեցավ նրանց ջրի վրայով: Մաթևոսը ընդլայնում է այս պատմությունը՝ ներառելով Պետրոսի ջրի վրայով քայլելը:

▪ **«վախեցան»** Այս աշակերտները Հիսուսին դեռևս գնահատում էին երկրային չափանիշներով: Աշակերտների վախն արտահայտվում է Մարկ. 6:49. Այս «նշանները» ստիպեցին նրանց վերանայել, թե ով էր Նա:

6:20 «Ես եմ» Սա բառիս բուն իմաստով (*egō eimi*) «Ես եմ» (տես 4:26; 8: 24,28,54-59; 13:19; 18: 5-6), որը արտացոլում է Աստծո ուխտի անունը ՀԿ-ում,՝ ԵՀՈՎԱՆ Ելից 3: 12-15: Հիսուսը տեսանելի «Ես եմ» է, Աստծո լրիվ ինքնաբացահայտումը, մարմնավորված Աստծո Լոգոսը (բառ), ճշմարիտ և միակ Որդին: Տես Դ. կետը Հատուկ Թեման ստորև.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ

- Ա. ԷԼ (*El*) (BDB 42, KB 48)
1. Սկզբնական նշանակությունը ընդհանրական հին տերմինի աստվածության համար անորոշ է, չնայած որ շատ գիտնականներ ենթադրում են, որ այն առաջացել է աքքադական արմատներից, «ուժեղ լինել» կամ «գորեղ, գորավոր լինել» (հմմտ. Ծննդ. 17:1; Թվ. 23:19; 2 Օրին. 7:21; Սաղ. 50:1):
 2. Քանանական դիցարանում բարձր աստվածը *Էլ* է (*Ras Shamra* –յի տեքստերը)
 3. Աստվածաշնչում *Էլ* բառը սովորաբար չի օգտագործվում որպես բաղադրիչ մաս ուրիշ բառեր կազմելու համար: Այսպիսի բառակապակցությունները դարձան միջոց Աստծուն բնութագրելու համար:
 - ա. Էլ-Էլիոն (*El-Elyon*) («Բարձրյալ Աստված»), Ծննդ. 14:18-22; 2 Օրին. 32:8; Ես. 14:14
 - բ. Էլ- Ռոի (*El-Roi*) («Աստված, որ տեսնում է» կամ «Աստված, որ Իրեն հայտնում է»), Ծննդ. 16:13
 - գ. Էլ-Շադայ (*El-Shaddai*) («Ամենակարող Աստված» կամ «Աստված Ամենաողորմած»)

- կամ «Լեռան Աստված», Ծննդ. 17:1; 35:11; 43:14; 49:25; Ել. 6:3
- դ. Էլ- Օլամ (El-Olam) («Հավիտենական Աստված»), Ծննդ. 21:33: Այս անունը աստվածաբանորեն կապված է Դավիթին տված Աստծո խոստման հետ, II Թագ. 7:13,16
- ե. Էլ- Բերիտ(El-Berit) («Ուխտի Աստված»), Գատ. 9:46
4. Էլը օգտագործվում է բառերի և արտահայտությունների հետ՝ բնութագրելով Աստծուն
- ա. ՅԱՀՎԵ (YHWH) Սաղ. 85:8; Ես. 42:5
- բ. Էլոհիմ (Elohim) Ծննդ. 46:3; Հոբ 5:8, «Ես եմ Աստված El, Աստվածը Elohim քո հոր»
- գ. Շադայ (Shaddai) Ծննդ. 49:25
- դ. «նախանձոտ» Ել. 34:14; 2 Օրին. 4:24; 5:9; 6:15
- ե. «ողորմած» 2 Օրին. 4:31; Նեե. 9:31; «հավատարիմ» 2 Օրին. 7:9; 32:4
- զ. «զորավոր և ահարկու» 2 Օրին. 7:21; 10:17; Նեե. 1:5; 9:32; Գան. 9:4
- է. «գիտություն» I Թագ. 2:3
- ը. «իմ զորավոր բերդը» II Թագ. 22:33
- թ. «ինձ համար վրեժխնդիր եղող» II Թագ. 22:48
- ժ. «սուրբը» Ես. 5:16
- ի. «հզոր» Ես. 10:21
- լ. «իմ վրկություն» Ես. 12:2
- խ. «մեծ և հզոր» Եր. 32:18
- ծ. «հատուցող» Եր. 51:56
5. Բոլոր հիմնական հին կտակարանային Աստծո անունների կապակցությունները հանդիպում են Հեսու 22:22 (Էլ, Էլոհիմ, ՅԱՀՎԵ» կրկնողաբար)
- Բ. Էլիոն (Elyon)
1. Մրա հիմնական նշանակությունն է «բարձր», «մեծարված, փառաբանված» կամ «վեր բարձրացված» (հմմտ. Ծննդ. 40:17; 3 Թագ. 9:8; 4 Թագ. 18:17; Նեեմ. 3:25; Եր. 20:2; 36:10; Սաղ. 18:13):
2. Այն օգտագործվում է որպես զուգահեռ Աստծո մի քանի ուրիշ անունների/ տիտղոսների համար:
- ա. Էլոհիմ (Elohim) – Սաղ. 47:1-2; 73:11; 107:11
- բ. ՅԱՀՎԵ (YHWH) – Ծննդ. 14:22; II Թագ. 22:14
- գ. Էլ – Շադայ(El-Shaddai) – Սաղ. 91:1,9
- դ. Էլ (El) - Թվոց 24:16
- ե. Էլահ (Elah) – հաճախ օգտագործված է Գան. 2-6 և Եզրաս 4-7, իլլիար (illair) բառի հետ միասին (արամեերեն «Բարձր Աստված») Գան. 3:26; 4:2; 5:18,21
3. Անունը հաճախ օգտագործվել է ոչ իսրայելացիների կողմից
- ա. Մելքիսեդեկ, Ծննդ. 14:18-22
- բ. Բաղասամ, Թվոց 24:16
- գ. Մովսես, խոսելով ազգերի մասին 2 Օրին. 32:8
- դ. Նոր Կտակարանում Գուկասի Ավետարանը, գրելով հեթանոսներին, նաև օգտագործվում է հունարեն համազորը Hupsistos (հմմտ. 1:32,35,76; 6:35; 8:28; Գործք 7:48; 16:17)
- Գ. Էլոհիմ (հոգնակի թիվ), Էլոահ (եզակի թիվ), հիմնականում օգտագործվել են պոեզիայի մեջ:
1. Այս տերմինը չի հանդիպում Հին Կտակարանից դուրս:
2. Այս բառով կոչում են և Իսրայելի Աստծուն և մյուս ազգերի աստվածներին (հմմտ. Ել. 12:12; 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստվածության հավատքի էր պատկանում (հմմտ. Հես. 24:2):
3. Այն կարող է վերաբերվել Իսրայելի դատավորներին (հմմտ. Ել. 21:6; Սաղ. 82:6):
4. Էլոհիմ տերմինը նաև օգտագործվում է ուրիշ հոգևոր արարածների համար (հրեշտակներ, դևեր) ինչպես 2 Օրին. 32:8 (LXX); Սաղ. 8:5; Հոբ 1:6; 38:7: Այն կարող է վերաբերվի մարդկանց/մարդկային դատավորներին (հմմտ. Ել. 21:6; Սաղ. 82:6):
5. Աստվածաշնչում սա Աստծո առաջին անունն է/տիտղոսը (հմմտ. Ծննդ. 1:1): Այն օգտագործվում է բացառապես մինչև Ծննդ. 2:4, որտեղ միացվում է ՅԵՀՈՎԱ բառի հետ:

Այն հիմնականում (աստվածաբանորեն) վերաբերվում է Աստծուն, որպես Արարիչ, Պահպանող և Աղբյուր ամբողջ կյանքի այս մոլորակում գոյություն ունեցող (հմմտ. Սաղ. 104): Այն հոմանիշ է Էլ բառին (հմմտ. 2 Օրին. 32:15-19): Այն կարող է նաև գուգահեռ լինել ՅԵՀՈՎԱ-յին, ինչպես Սաղ. 14 (Էլոհիմ) ճիշտ Սաղ.53 նման է (ՅԵՀՈՎԱ), բացառությամբ տարբեր գործածությունը Աստծո անունների:

6. Չնայած իր հոգնակի թվի կառուցվածքին, և նաև ուրիշ աստվածների համար օգտագործումով, այս տերմինը հաճախ օգտագործվում է հենց Իսրայելի Աստծո համար, բայց սովորաբար հանդես է գալիս եզակի թվով, ցույց տալով իր մոնոթեիստական կիրառությունը:
7. Այս բառը հնչում է ոչ-իսրայելացիների շուրթերից, բայց որպես Աստծո անուն:
 - ա. Մեքիսեդեկ, Ծննդ. 14:18-22
 - բ. Բաղամ, Թվոց 24:2
 - գ. Մովսես, երբ նա խոսում է ազգերի մասին, 2 Օրին. 32:8
8. Տարօրինակ է, որ այդ տարածված անունը Իսրայելի մոնոթեիստիկ Աստծո հոգնակի թվով է: Չնայած չկա կոնկրետ հասկացողություն, ահա վարկածները.
 - ա. Եբրայերեն լեզվում շատ գոյականներ ունեն հոգնակի թիվ , հաճախ օգտագործվում են միտքն ընդգծելու համար: Սրան շատ մոտ է ավելի հին եբրայերեն քերականական կանոնը, որը կոչվում է «գերազանցության հոգնակի թիվ», որտեղ հոգնակի թիվը օգտագործվում է կոնկրետ հասկացողությունն ավելի ամրապնդելու համար:
 - բ. Սա կարող է վերաբերվել հրեշտակների խորհրդին, որոնց հետ Աստված հանդիպում է երկնքում և որն Իր շրջապատող միջավայն է (հմմտ. 3 Թագ. 22:19-23; Հոբ 1:6; Սաղ. 82:1; 89:5,7):
 - գ. Սա նույնիսկ հնարավոր է, որ սա անդրադարձնում է Նոր Կտակարանի հայտնությունը Սեկ Աստծո երեք անձերում: Ծննդ. 1:1 Աստված ստեղծում է; Ծննդ. 1:2 Սուրբ Հոգին փչում է և Նոր Կտակարանից Հիսուսը Հոր Աստծո կատարողն էր արարչագործության մեջ (հմմտ. Հովհ. 1:3,10; Հռ. 11:36; I Կոր. 8:6; Կող. 1:15; Եբր. 1:2; 2:10):

Դ. ՅԵՀՈՎԱ

1. Այս անունը արտացոլում է աստվածությունը որպես Ուխտի Աստված, Աստված որպես Փրկիչ, Ազատարար: Մարդիկ խախտում են ուխտը, բայց Աստված հավատարիմ է մնում Իր խոսքին, խոստմանը, ուխտին (հմմտ. Սաղ. 103):

Այս անունն առաջին անգամ հանդիպում է Էլոհիմ բառի հետ միասին Ծննդ. 2:4: Ծննդ. 1-2 գլուխներում չկան արարչագործության երկու նկարագրություն, այլ դրա երկու կարևոր կողմերը (1) Աստված որպես տիեզերքի Արարիչ (ֆիզիկական աշխարհի) և (2) Աստված որպես մարդկության զարմանալի Արարիչ: Ծննդ. 2-4 գլուխներում սկսվում է հատուկ հայտնությունը մարդկության արտոնյալ դիրքի և նպատակի մասին արարչագործության մեջ, ինչպես նաև մեղքի խնդիրն ու ըմբոստությունն Աստծո դեմ այս եզակի դիրքից ելնելով:
2. Ծննդ. 4:26 ասվում է «մարդիկ սկսեցին կանչել ՏԻՐՈՋ անունը» (ՅԵՀՈՎԱ): Բայց, Ելից 6:3-ի իմաստը ենթադրում է, որ վաղ ուխտի մարդիկ (նախահայրերն ու նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն որպես Էլ-Շադայ: ՅԵՀՈՎԱ անունը բացատրվում է միայն մեկ անգամ Ելից 3:13-16, բացի. հ. 14-ից: Ինչևէ, Մովսեսի գրվածքներում կոնկրետ բառերը հաճախ բացատրվում են լայնատարած բառախաղերով, և ոչ թե ստուգաբանորեն/ etymologies (հմմտ. Ծննդ. 17:5; 27:36; 29:13-35): Գոյություն են ունեցել մի քանի թեորիաներ այս անվան նշանակության վերաբերյալ (վերցված է IDB, հատ. 2, էջ. 409-11)
 - ա. արամերեն արմատից, «ցուցաբերել կրքոտ սեր»
 - բ. արամերեն արմատից, «փչել» (ՅԵՀՈՎԱ ինչպես փոթորիկ Աստված)
 - գ. Ուգարիթական (քանանական) արմատից «խոսել»
 - դ. փյունիկյան ձեռագրից, ՊԱՃԱՌ-ԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, որը նշանակում է «Նա, ով պահում է, ուժ է տալիս» կամ «Նա, ով հաստատում է»
 - ե. եբրայերեն Qal (Քվալ) բառի ձևից « մեկը, Ով կա, գոյություն ունի», կամ «մեկը, Ով ներկա է» (ապառնի ժամանակով, «Մեկը, ով կլինի»)

- գ. եբրայերեն Hiphil (Հիփիիլ) բառի ձևից « մեկը, որը հանդիսանում է գոյության աղբյուրը»
 - է. եբրայերեն արմատից «ապրել» (օր., Ծննդ. 3:20), որը նշանակում է «հավիտյան կենդանի», մեկը, որ իրապես կենդանի է»
 - ը. Ելից. 3:13-16 կոնտեքստից ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՍԱՆԱԿ օգտագործվում է ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՍԱՆԱԿՈՎ, «ես կշարունակեմ լինել այն, ինչ եղել եմ ինչ որ մի ժամանակ» կամ «ես կշարունակեմ լինեմ այն, ինչ միշտ եղել եմ» (հմմտ. J. Wash Watts, A Survey of Syntax in the Old Testament, էջ. 67-Ջ.Վոշ Վոթս, «Հին Կտակարանի Շարահյուսության Ակնարկը» ՅԵՀՈՎԱ բառի լրիվ անվանումը հաճախ հանդես է գալիս հապավումով կամ հնարավոր է որպես բնագրի ձև
 - (1) Yah (օր., Hallelu – yah, Հալելու-յա)
 - (2) Yahu (Յահու) (անուններում, օր., Isaiah, Եսայա)
 - (3) Yo (յո) (անուններում, օր., Joel, Յովել)
3. Ուշ հուդայականության ժամանակաշրջանում այս ուխտի անունը դարձավ այնքան սուրբ (the tetragrammaton), որ հրեաները վախենում էին այն նույնիսկ արտասանել, որ հանկարծ պատվերը չդրժեին Ել. 20:7; 2 Օրին. 5:11; 6:13: Ուստի նրանք փոխարինեցին եբրայերեն բառը «սեփականատեր», «տեր», «ամուսին», «տիրակալ»—adon (ադոն) կամ adonai (ադոնայ) («իմ տեր»): Հին Կտակարանի ընթերցանության ժամանակ, երբ հասնում էին ՅԵՀՈՎԱ բառին, նրանք դրա փոխարեն արտասանում էին «Տեր»: Դրա համար ՅԵՀՈՎԱ բառի փոխարեն անգլերեն թարգմանություններում գրված է ՏԵՐ:
4. Նաև, ինչպես նաև Էլ-ի հետ, ՅԱՀՎԵ անունը հաճախ կապակցվում է ուրիշ բառերի հետ՝ տալով հատուկ նշանակություն Իսրայելի Ուխտի Աստծո որոշակի առանձնահատկությանը: Քանի որ այսպիսի տարբերակները շատ են, ահա դրանցից մի քանիսը;
- ա. YHWH - Yireh (ՅԱՀՎԵ - Յիրե) (ՅԱՀՎԵ-ն կապահովվի, կհայթայթի), Ծննդ. 22:14
 - բ. YHWH - Rophekha (ՅԱՀՎԵ - Ռոֆեքխա) (ՅԱՀՎԵ-ն քո բժիշկն է), Ել. 15:26
 - գ. YHWH - Nissi (ՅԱՀՎԵ - Նիսսի) (ՅԱՀՎԵ իմ դրոշակն է), Ել. 17:15
 - դ. YHWH - Meqaddishkem (ՅԱՀՎԵ-Մեքադիշկեմ) (ՅԱՀՎԵ- Նա, որ քեզ սրբացնում է), Ել. 31:13
 - ե. YHWH - Shalom (ՅԱՀՎԵ - Շալոմ) (ՅԱՀՎԵ-ն Խաղաղություն է), Գատ. 6:24
 - զ. YHWH - Sabbaoth (ՅԱՀՎԵ - Սաբաոթ) (ՅԱՀՎԵ- Ջորաց Աստված), I Թագ. 1:3,11; 4:4; 15:2; հաճախ մարգարեական գրքերում)
 - է. YHWH - Ro'I (ՅԱՀՎԵ - Ռո'ի) (ՅԱՀՎԵ-ն իմ հովիվն է), Սաղ. 23:1
 - ը. YHWH - Sidqenu (ՅԱՀՎԵ - Սիդկենյու) (ՅԱՀՎԵ-ն մեր արդարությունը), Եր. 23:6
 - թ. YHWH - Shammah (ՅԱՀՎԵ - Շամմահ) (ՅԱՀՎԵ-ն այնտեղ է), Եզ. 48:35

6:21 «Եւ նաւր շուտով հասաւ այն երկիրը, որ գնում էին» Ըստ երևույթին սա ևս մեկ հրաշք երևույթ էր (տես 22-25), քանի որ Մարկոսի Ավետարանը վկայում է, որ իրենք թիավարել էին լճի կես ճանապարհը (տես Մարկ 6:47): Մակայն, դա չի հիշատակվում մյուս Ավետարաններում (այսինքն, Մատթ. 14:32 կամ Մարկ. 6:51):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:22-25
²² Հետեւեալ օրն այն ժողովուրդը, որ ծովի այն կողմին էր, տեսնելով որ ուրիշ նաւ չ'կար այնտեղ մէկիցը ջուկ որ նորա աշակերտները նորա մէջ մտան. Եւ որ Յիսուսը իր աշակերտների հետ նաւը չէր մտած, բայց միայն նորա աշակերտները գնացին: ²³ (Բայց Տիբերեայիցը ուրիշ նաւեր եկան այն տեղի մօտ, ուր հացը կերան Տիրոջ գոհանալովը): ²⁴ Արդ երբոր ժողովուրդը տեսաւ, որ Յիսուսն այնտեղ չէ, եւ ոչ էլ նորա աշակերտները, իրանք էլ նաւերը մտան եւ եկան Կափառնայում, Յիսուսին որոնելով: ²⁵ Եւ երբոր նորան ծովի այն կողմին գտան, նորան ասեցին. Ռաբբի, ե քք եկար այստեղ:

6:23 «Տիրերիա» Այս քաղաքը կառուցել է Հերովդես Անտիպասը մ.թ 22 և դարձավ նրա մայրաքաղաքը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:26-34

²⁶ Յիսուսը պատասխանեց նորանց եւ ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Դուք ինձ որոնում էք՝ ոչ թէ նորա համար որ նշաններ տեսաք, բայց որ հացիցը կերաք եւ կշտացաք: ²⁷ Գործեցէք ոչ թէ կորչելու կերակուրի համար, այլ այն կերակուրի, որ մնացող է յաւիտենական կեանքի մեջ, որ մարդի Որդին կ'տայ ձեզ. որովհետեւ Աստուած Հայրը կնքեց նորան: ²⁸ Արդ նորան ասեցին. Ի՞նչ անենք, որ Աստուծոյ գործերը գործենք: ²⁹ Յիսուսն էլ պատասխանեց եւ նորանց ասեց. Մա է Աստուծոյ գործը, որ հաւատաք նորան, որին նա ուղարկեց: ³⁰ Եւ նորան ասեցին. Ապա դու ի՞նչ նշան ես անում, որ տեսնենք եւ հաւատանք, ի՞նչ ես գործում: ³¹ Մեր հայրերը անապատումը մանանան կերան. Ինչպէս գրուած է թէ Երկնքիցը հաց տուաւ նորանց ուտելու: ³² Յիսուսն էլ նորանց ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ոչ թէ Մովսէսը տուաւ ձեզ այն հացը երկնքից, այլ իմ Հայրը տալիս է ձեզ երկնքից ճշմարիտ հացը: ³³ Որովհետեւ Աստուծոյ հացը նա է՝ որ երկնքիցն է իջնում, եւ որ աշխարհքին կեանք է տալիս: ³⁴ Նորանք էլ ասեցին. Տէր, ամեն ժամանակ տուր մեզ այդ հացը:

6:26,32,53 «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ» «Ամեն», «Ամէն»: Սա երբայերեն արտահայտություն է, որն ունի երեք հստակ կիրառումներ:

1. Հին Կտակարանում բառն օգտագործվում էր որպես «վստահություն»: Դրա փոխաբերական իմաստը նշանակում էր «լինել հաստատ» և օգտագործվում էր՝ նկարագրելու հավատքն առ ԵՀՈՎԱ:
 2. Օգտագործելով այս բառը Հիսուսը տալիս էր կարևոր և նշանակալի հայտարարության ներածությունը: Մենք չունենք այլ ժամանակակից օգտագործման «ամեն» այս կերպ:
 3. Վաղ եկեղեցում, ինչպես և ՀԿ, այն դարձավ հաստատման կամ համաձայնության տերմին:
- Տես Հատուկ Թեմա: Ամեն 1:51:

- «**բայց որ հացիցը կերաք**» Նրանց շարժառիթները ֆիզիկական էին և անմիջական, ոչ թե հոգևոր և հավիտենական:
- «**եւ կշտացաք**» Այս տերմինը նշանակում էր «ազահաբար ուտել, փորը լցնել», դա հաճախ օգտագործվում էր կենդանիների համար (հատկապես կովերի):

6:27 «Գործեցէք ոչ թէ» Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է, ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, ինչը սովորաբար նշանակում է դադարեցնել արդեն իսկ ընթացքի մեջ եղող գործողությունը: Այս հաստատման հինկտակարանյան պատմության սկիզբը, Եսայիա 5: Սույն խոսակցությունն ունի բազմաթիվ նմանություններ ջրհորի մոտի կնոջ հետ, Հովհ. 4:

- «**կորչելու**» Տես Հատուկ Թեմա: *Apollumi* 10:10.
- «**կնքեց նորան**» Սա բառացիորեն նշանակում էր «կնքված»: Սա իսկության, սեփականության, իշխանության և անվտանգության նշան էր (տես NEB և Մատթ. 28:18; Հովհ. 17:2): TEV և NIV այն թարգմանում են որպես «հաստատում», քանի որ այն օգտագործվում է պնդելու՝ Հայր Աստծո հավանությունը Հիսուսի ծառայության: Տես Հատուկ Թեմա: Կնիք 3:33, որտեղ այն կարող է վերաբերել Սուրբ Հոգուն:

6:28 «Ի՞նչ անենք, որ Աստուծոյ գործերը գործենք» Սա առաջին դարի հուդայականության կենտրոնական կրոնական հարցն էր (հմտ. Դուկ. 18:18): Կրոնական հրեան պետք է ուղիղ լիներ

Աստծո հետ հիմնվելով (1) իր սերնդաբանության և (2) Մովսեսական օրենքի կատարման վրա, ինչպես որ այն մեկնաբանվում էր Բանավոր Ավանդությամբ (Talmud):

6:29 «որ հաստատք նորան, որին նա ուղարկեց» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, որին հաջորդում է ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ: «Հավատալ» բառը շատ կարևոր է հասկանալու համար նորկտակարանյան ուսմունքները փրկության մասին: Տես Հատուկ Թեմա 2:23. Բառի առաջնային կողմնորոշումն էր կամային վստահությունը: Հունարեն *pistis* բառային խումբը կարող է թարգմանվել որպես «հավատալ», «վստահություն» կամ «հավատք»: Մարդու հավատքի կենտրոնացումը պետք է լինի «Նրան» (տես 1:12; 3:16), ոչ թե մարդկային անկեղծության, նվիրվածության, ոչ էլ խանդավառության վրա: Այս հատվածի անմիջական կողմնորոշում անձնական հարաբերությունն է Հիսուս Քրիստոսի հետ, ոչ ուղղափառ աստվածաբանությունը Նրա մասին, ակնկալվող կրոնական ծիսակատարությունը, ոչ էլ նույնիսկ բարոյական ապրելակերպը: Այս ամենը օգտակար է, բայց ոչ առաջնային: Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը փոխում է իրենց հարցի ՀՈԳՆԱԿԻ «գործեր»-ը ԵԶԱԿԻ «գործ»-ի:

«Ուղարկեց» տես Հատուկ Թեմա: Ուղարկել (*Apostellō*) 5:24:

6:30-33 Պետք է հիշել, որ այս խումբը նոր էր մասնակցել հինգ հազարի կերակրման հրաշքին: Նրանք արդեն ունեին իրենց նշանը: Ռաբբունական հուդայականությունը կարծում էր, թե Մեսիան կկրկնի որոշակի ՀԿ գործողությունները, ինչպիսիք են մանանա ուղարկելը (հմմտ. Բ. Բարուք 29: 8): Ռաբբիններն օգտագործում էին Սաղ. 72:16 որպես ապացուցող տեքստի Մեսիայի տեսակի «Մուպեր Մովսես» տեսակետին (տես I Կորնթ. 1:22):

Կա մի կարևոր քերականական առանձնահատկություն «հավատալ Իրեն» հ.29 և «հավատալ Քեզ» միջև հ. 30: Առաջին կենտրոնացումը Հովհաննեսի, հավատալով Հիսուսին, սովորական կառուցվածքի վրա է: Դա անձնական կենտրոնացում է: Երկրորդ կենտրոնացումը, հավատալով Հիսուսի խոսքերին կամ պնդումներին, որը բովանդակության կենտրոնացում է: Հիշեք, որ Ավետարանը թե անձ է և թե պատգամ: Տես Հատուկ Թեմա 2:23.

6:31 «Ինչպես գրուած է» Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՍԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Դա ստանդարտ քերականական ձև էր ներկայացնելու ՀԿ աստվածաշնչյան մեջբերումները: Դա իդիոմա էր՝ հաստատելով ՀԿ ներշնչանքն ու իշխանությունը: Այս մեջբերումը կարող էր վերաբերել մի քանի ՀԿ տեքստերից մեկին կամ համադրությանը, Սաղ. 78:24, 105: 40; Ելից 16: 4,15 կամ Նեեմ. 9:15:

6:32 Հիսուսն անդրադառնում է հրեաների ավանդական աստվածաբանությանը: Նրանք պնդում էին, որ Մեսիան պետք է Մովսեսի պես կատարի հրաշագործություններ Բ Օրին. 18: 15,18: Հիսուսը շտկում է նրանց ենթադրությունը մի շարք մտքերում:

1. Աստված, ոչ թե Մովսեսը, տվեց մանանան
2. մանանան չի եղել երկնային ծագման, չնայած նրան, որ մարդիկ կարծում էին, որ դա եղել է (տես Սաղ. 78: 23-25)
3. Ճշմարիտ երկնային հացը Հիսուսն էր, որը անցյալի գործողություն չէր, այլ ներկա իրականությունն

6:33 «որ երկնքիցն է իջնում» Սա հերթական թեման է Հովհաննես-ում (տես 3:13): Սա Հովհաննեսի ուղղահայաց դուալիզմն է: Այս կոնտեքստում Հիսուսի ծագումը հայտարարվում է յոթ անգամ (հմմտ 6: 33,38,41,42,50,51,58): Այն ցույց է տալիս Հիսուսի նախագոյությունը, աստվածային ծագումը (տես հհ. 33,38,41,42,50,51,58 և 62): Այն նաև բառախաղ է «մանանայի» մասին, որը եկել էր երկնքից, ինչպես Հիսուսը ճշմարիտ շացն էր, Կյանքի հացը:

Սա բառացիորեն «Աստծո այն հացն է, որ իջնում է երկնքից»: Այստեղ ԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ-ը վերաբերվում է (1) «հացին» կամ (2) մարդուն, Հիսուսին: Հաճախ Հովհաննես-ում այդ երկիրն աստուծոնները նպատակապես են (երկիրն աստուծոն):

▪ **«որ աշխարհին կեանք է տալիս»** Սա է նպատակը, որի համար Հիսուսը եկավ (տես 3:16; Մարկ. 10:45; II Կորնթ. 5:21): Նպատակն է «նոր կյանք», «հավիտենական կյանք», «նոր դարի կյանք», «Աստծո տեսակի կյանք» կորած և ապստամբ աշխարհին, ոչ թե ինչ-որ հատուկ խմբի (Հրեա / հեթանոս, ընտրված / չընտրված, պահպանողական / լիբերալ), այլ բոլորին:

6:34

NASB, NKJV “Տեր”

NRSV, TEV,

NJB, NET Bible,

NIV, REB “Պարոն”

Այս երկու տերմիններն արտացոլում են *kurios-ի* տարբեր իմաստային կիրառումներ: Այս կոնտեքստում երկրորդ տարբերակը կարծես ամենաճիշտն է: Ամբողջ չէր հասկանում Հիսուսին կամ Նրա խոսքերը: Նրանք չեն ընկալում նրան որպես Մեսիա (նաև տես 4:14; 5: 7):

▪ **«ամեն ժամանակ տուր մեզ այդ հացը»** Սա նման է այն արտահայտությանը, որը ջրհորի մոտի կինն ասաց Հովհ. 4:14: Այս հրեաները չէին էլ հասկանում Հիսուսի հոգևոր փոխաբերությունները: Սա հերթական թեման է Հովհաննես-ում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:35-40

³⁵ Յիսուսն էլ նորանց ասեց. Ես եմ կեանքի հացը. ինձ մօտ եկողը չի սովիլ, եւ ինձ հաւատացողը երբեք չի ծարաւիլ: ³⁶ Բայց ես ասեցի ձեզ, թէ տեսաք էլ ինձ, եւ չէք հաւատում: ³⁷ Այն ամենը որ Հայրն ինձ տալիս է, ինձ մօտ կ'գայ. եւ ինձ մօտ եկողին ես դուրս չեմ հանիլ: ³⁸ Որովհետեւ ես իջայ երկնքիցը, որ ոչ թէ իմ կամքն անեմ, այլ ինձ ուղարկողի կամքը: ³⁹ Սա է ինձ ուղարկող Հօր կամքը, որ այն ամենը որ նա ինձ տուաւ. Նորանից չ'կորցնեմ. Այլ յետին օրումը յարուցանեմ նորան: ⁴⁰ Եւ սա է ինձ ուղարկողի կամքը. որ ամեն ով որ տեսնէ Որդուն եւ հաւատայ նորան, յաւիտենական կեանք ունենայ. Եւ ես յետին օրումը կ'յարուցանեմ նորան:

6:35 «Ես եմ կեանքի հացը» Սա այն «Ես եմ» արտահայտություններից մեկն է, որն այնքան բնորոշ է Հովհաննեսին (հմմտ. 6:35,41,48,51, 8:12; 10:7,9,11,14, 11:25, 14:6 ; 15:1,5): Հովհաննեսի Ավետարանը կենտրոնանում է Քրիստոսի անձի վրա: Սա կապված է հրեաների Մարգարեական սպասումների հետ՝ երկնային մանանա և նոր օրենք տվողի, որը կբերի նոր ելք (մեղքից): Տես ծանուցում 8:12:

▪ **«ինձ մօտ եկողը չի սովիլ, եւ ինձ հաւատացողը երբեք չի ծարաւիլ»** Սրանք երկու ուժեղ ԿՐԿՆԱԿԻ ԲԱՅԱՍԱԿԱՆՆԵՐ ԵՆ հունարենում «երբեք ու երբեք» (տես հ. 37): Կա զուգահեռ կապ «գալիս է» և «հավատում է»-ի միջև (հմմտ. 7: 37-38, նման է «տեսնում է» և «լսում է»): Նրանք երկուսն էլ ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅԵՐ են: Հավատացյալների գալն ու հավատալը մեկ անգամվա որոշում չէ, այլ եղբայրության, բարեկամության, ընկերության և հետևելու ապրելակերպի սկիզբ:

▪ **«սով. . . ծարաւ»** Անօթությունն ու ծարավը հաճախ օգտագործվում էին՝ նկարագրելու հոգևոր իրականությունը (տես Մաթ. 42: 1; Ես. 55: 1, Ամովս 8: 11-12; Մատթ. 5: 6):

6:36 «տեսաք էլ ինձ» Որոշ հնագույն վկաներ (MSS Տ, A և շատ Հին լատիներեն, Վուլգատ և սիրիական տարբերակներ) բաց են թողել «Ինձ» դերանունը, կարծես թե Հիսուսի հայտարարությունը

վերաբերվում է Իր նշանին (այսինքն, ամբոխին կերակրելը): ԴԵՐԱՆՈՒՆԸ ընդգրկված է այնքան շատ հունարեն ձեռագրերում և տարբերակներում, որ UBS⁴ չէր կարող որոշել, թե որն է բնօրինակը:

6:37 «Այն ամենը որ Հայրն ինձ տալիս է, ինձ մօտ կ'գայ» Այս հատվածի հիմնական շեշտը Աստծո գերիշխանության վրա է: Այս աստվածաբանական ճշմարտության երկու բնորոշ հատվածները Հո. 9 և Եփես. 1: 3-14 են: Հետաքրքիրն այն է, որ երկու կոնտեքստերում մարդկության արձագանքը պարտադիր է: Հռոմեացիս 10 ունի բոլոր յոթ ներառական արտահայտությունները: Մա նաև տեսնում ենք Եփեսացիս 2 գլխում, որտեղ Աստծո շնորհքի քննարկումներ հհ. 1-7 -ում են, հավատքով արձագանքելու հարցը հհ. 8,9: Նախասահմանության վարդապետությունը փրկության համար է և ոչ թե խոչընդոտ չփրկվածի: Վարդապետությունը բացելու բանալին սերն է և Աստծո շնորհքը, ոչ թե հավիտենական վճիռները: Ուշադրություն դարձրեք, որ բոլոր նրանց, ում Աստված տալիս է Հիսուսին նաև «զալիս» են Նրան: Աստված միշտ նախաձեռնող է (տես հհ. 44,65), բայց մարդիկ պետք է արձագանքեն (տես 1:12; 3:16): Տես Հատուկ Թեմա 3:16:

▪ **«Եւ ինձ մօտ եկողին ես դուրս չեմ հանիլ»** Մա ևս մեկ ուժեղ ԿՐԿՆԱԿԻ ԲԱՅԱՍԱԿԱՆ է: Մա ընդգծում է այն ճշմարտությունը, որ Աստված կանչում է և ողջունում բոլորին Իրեն Քրիստոսի միջոցով (տես Եզեկ. 18: 21-23; 30-32; I Տիմ. 2: 4; II Պետ. 3: 9): Աստված միշտ նախաձեռնող է (տես հհ. 44,65), բայց մարդիկ պետք է արձագանքեն (տես Մարկ. 1:15; Գործք 20:21): Ի՛նչ հրաշալի հատված փրկության վստահության մասին (տես Հռոմ 8: 31-39):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍ ԱՊԱՀՈՎՎՈՒԹՅՈՒՆԸ

Վստահությունը (1) աստվածաշնչյան ճշմարտությունն է, (2) հավատացյալի հավատքի փորձառությունը և (3) ապրելակերպ:

Ա. Աստվածաշնչյան հիմք վստահության համար

1. Հայր Աստծո բնութագիրը
 - ա. Ծննդոց 3:15; 12: 3
 - բ. Սաղմոս 46:10
 - գ. Հովհաննես 3:16; 10: 28-29
 - դ. Հռոմեացիս 8: 38-39
 - ե. Եփեսացիս 1: 3-14; 2 5,8-9
 - զ. Փիլիպեցիս 1: 6
 - է. II Տիմեթես 1:12
 - ը. Ա. Պետրոս 1: 3-5
2. Որդի Աստծո գործը
 - ա. Նրա քահանայական աղոթքը, Հովհ. 17: 9-24, հատկապես հ. 12
 - բ. Նրա փոխանորդ զոհաբերությունը
 - 1) Հռոմեացիս 8:31
 - 2) II Կորնթացիս 5:21
 - 3) I Հովհաննես 4: 9-10
 - գ. Նրա շարունակական բարեխոսությունը
 - 1) Հռոմեացիս 8:34
 - 2) Եբրայեցիս 7:25
 - 3) I Հովհաննես 2: 1
3. Հոգի Աստծո հնարավորությունը
 - ա. Նրա կանչը, Հովհ. 6: 44,65
 - բ. Նրա կնքելը
 - 1) II Կորնթացիս 1:22; 5: 5

2) Եփեսացիս 1: 13-14; 4:30

գ. Նրա անձնական վստահությունը

1) Հռոմեացիս 8: 16-17

2) I Հովհաննես 5: 7-13

Բ. Հավատացյալի ուխտի անհրաժեշտ պատասխանն է

1. նախնական և շարունակական ապաշխարություն և հավատք

ա. Մարկ. 1:15

բ. Հովհ. 1:12

գ. Գործք 3:16; 20:21

դ. Հռ. 10: 9-13

2. հիշելով, որ փրկության նպատակը քրիստոսանմանությունն է

ա. Հռ. 8: 28-29

բ. Եփեսացիս 1: 4; 2:10; 4:13

3. հիշելով, որ այդ վստահությունը հաստատվում է կենսակերպի միջոցով

ա. Հակոբոս

բ. I Հովհաննես

4. հիշելով, որ այդ վստահությունը հաստատվում է ակտիվ կամ գործուն հավատքով և տոկունությամբ

ա. Մարկ. 13:13

բ. Ա. Կորնթացիս 15: 2

գ. Եփրայեցիս 3:14; 4:14

դ. II Պետրոս 1:10

ե. Հուդա հհ. 20-21

6:38 «Որովհետև ես իջայ երկնքիցը» Սա ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ է, որը վերաբերում է Մարմնավորմանը (հմմտ. Հովհ. 1: 1; Եփես. 4: 8-10) և դրա արդյունքները մնում են: Այն նաև ցույց է տալիս Հիսուս երկնային ծագումը (տես հհ. 41,62):

▪ **«որ ոչ թե իմ կամքն անեմ, այլ ինձ ուղարկողի կամքը»** ՆԿ պնդում է, թե Երրորդության միությունը (տես Հատուկ Թեմա 14: 6), օրինակ, 14:8-9 և թե երեք անձերի անհատականությունը (տես 14: 8-9): Այս համարը Հովհաննեսի շարունակվող շեշտադրության մի մասն է Հիսուսի հնազանդությունը Հորը: Տես ամբողջական ծանուցումը 5:19: Տես Հատուկ Թեմա: Ուղարկել (*Apostellō*) 5:24:

6:39 «որ այն ամենը որ նա ինձ տուաւ. Նորանից չ'կորցնեմ» Կա ակնհայտ փոխհարաբերություն ՉԵԶՈՔ ԵԶԱԿԻ «ամենը որ» հ.37 և ՉԵԶՈՔ ԵԶԱԿԻ հ.39: Հովհաննեսը օգտագործում է այս անսովոր ձևը մի քանի անգամ (տես 17: 2,24): Սա, ըստ երևոյթին, ընդգծում է կորպորատիվ ամբողջությունը (տես հհ. 40,45):

Սա Աստծո պահող իշխանության մեծ խոստումն է, քրիստոնյայի վստահության աղբյուրը (տես Հովհ.10:28 29; 17: 2,24, տես Հատուկ Թեմա I Հովհ. 5:13): Ուշադրություն դարձրեք, որ հ.37ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԸ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ Է, իսկ հ. 39 ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ: Աստծո պարզեր մնում է: Նաև վերջին երկու պնդումները հ. 39 երկուսն էլ ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ են, Հիսուսը չի կորցնում որևէ մեկին, որոնց Հայրը տվեց Նրան (հհ. 37 և 39) և վերջին օրը Նա բարձրացնելու է բոլոր նրանց, ովքեր տրված են Իրեն (տես հ. 44): Այստեղ են աստվածային խոստումները (1) ընտրության և (2) համբերության:

Վերջին օրվա այս հասկացությունը (դրական և բացասական) կոչվում է մի քանի անուններով:

1. վերջին օրերը- 6: 39,40,44,54; 11:24, 12:48, II Տիմ. 3: 1; I Պետ. 1: 5; II Պետ. 3: 3

2. վերջին անգամ- I Հովհ. 2:18; Հուդա 18
3. այդ օրը- Մատթ. 7:22; II Տիմ. 1: 12,18; 4: 8
4. մի օր- 17:31
5. մեծ օրը- Հուդա հ. 6
6. օրը- Ղուկ. 17:30; I Կորնթ. 3:13; I Թես. 5: 4; Եբր. 10:25
7. Նրա օրը- Ղուկ. 17:24
8. Տիրոջ օրը- I Թեսաղ. 5: 2; II Թեսաղ. 2: 2
9. Քրիստոսի օրը- Փիլիպ. 1:10; 2:16
10. Տեր Հիսուս Քրիստոսի օրը- I Կորնթ. 1: 8; 5: 5
11. Տեր Հիսուսի օրը - II Կորնթ. 1:14
12. Քրիստոս Հիսուսի օրը- Փիլիպ. 1:16
13. մարդու Որդու օրը- Ղուկաս 17:24 (տես նաև # 7)
14. դատաստանի օրը- Մատթ. 10:15, 11: 22,24; 12:36, II Պետ. 2: 9; 3: 7; I Հովհ. 4:17
15. բարկության օրը - Հայտ. 6:17
16. Աստծո մեծ օրը - Հայտ. 16:14

▪ **«Այլ յետին օրումը յարուցանեմ նորան»** Սա վերաբերվում է հավատացյալների հարության օրվան իսկ անհավատների Դատաստանի օրվան (տես հհ. 40,44,54, 5: 25,28; 11:24 և I Կորնթ. 15): Frank Stagg-ը այս մտքի վերաբերյալ ունի օգտակար արտահայտություն իր *A New Testament Theology* գրքում:

«Հովհաննեսի Ավետարանը ազդեցիկ է ապագայում գալստյան մասին ասում (14: 3,18, 28, 16: 16,22) և դա հստակ խոսում է «վերջին օրվա» հարության և վերջնական դատաստանի մասին (5:28, 6:39, 44,53, 11:24, 12:48), և ամբողջ այս Չորրորդ Ավետարանում հավիտենական կյանքը, դատաստանը և հարությունը ներկա իրողություններ են (3:18; 4:23; 5:25; 6:54; 11:23; 12: 28,31; 13:31; 14:17, 17:26)» (էջ 311):

6:40 «սա է ինձ ուղարկողի կամքը» Սա Հիսուսի պատասխանն է հ. 28 հարցին «Ինչ անենք, որ կարողանանք գործել Աստծո խոսքերը»: Տես Հատուկ Թեմա: Աստծո Կամքը 4:34:

▪ **«որ ամեն ով որ տեսնե Որդուն»** ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԵՐԸ «տեսնել» և «հավատալ» գուցահեռ են (ինչպես «գալ» և «հավատալ» - ը հ. 35, ինչպես «տեսնել» և «լսել»): Սրանք շարունակական գործողություններ են, ոչ թե մեկ անգամյա իրադարձություններ: «Տեսնել» տերմինը նշանակում է «սևեռուն հառել» մի բանի այնպես որ հասկանաս կամ ճանաչես այն:

Ես, իհարկե հավանում եմ «բոլորը, ամենը» տերմինը (*pas*), տեսեք

1. որ ամենքը նրանով հավատան, 1:7
2. ամեն մարդի լուսավորում է, 1:9
3. ամեն նրան հավատացողը հավիտենական կյանքն ունենա, 3:15
4. որ ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա, 3:16
5. որ ամենքը պատվեն Որդուն, 5:23
- 6.-9. Հովհաննես 6:37,39,40,45
10. ամեն ով որ կենդանի է և ինձ հավատում է, հավիտյան չի մեռնիլ, 11:26
11. Եվ ես երբոր բարձրանամ երկրիցը, ամենքին կքաշեմ ինձ մոտ, 12:32
12. ամեն ինձ հավատացողը խավարի մեջ չմնա, 12:46

Սա է գերիշխանության խորհուրդը (տես հհ. 38-39; 17: 2,24 ի դեմ ազատ կամքի): Երկուսն էլ ինչ - որ կերպ ճշմարիտ են: Ինձ համար «ուխտի» աստվածաբանական գաղափարը նրանց լավագույնս է միավորում:

▪ **«հաւատայ նորան»** Հիշեք, որ փրկությունը հիմնականում անձնական հարաբերություն է, ոչ թե դավանանք, ճիշտ աստվածաբանություն կամ բարոյական ապրելակերպ (տես 3:16; 11: 25-26): Շեշտը անձի հավատքի վրա է և ոչ թե ինտենսիվության: Տես Հատուկ Թեմա 2:23.

Ուշադրություն դարձրեք, որ շեշտի հավասարակշռությունը դրված է Աստծո գերիշխան ընտրության վրա հհ. 37, 39,44,65 և մարդու հավատքով արձագանքի վրա հ.37,40: Այս աստվածաշնչյան լարվածությունը պետք է պահպանվի: Աստծու գերիշխանությունը և մարդու ազատ կամքը ձևավորում են աստվածաշնչյան ուխտի գույգ ասպեկտները:

▪ **«յաիտենական կեանք ունենայ»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, մի պահանջվում է պատասխան (տես I Հովհ. 5:11): Նաև նշեմ, որ հ. 39 կորպորատիվ է, իսկ հ. 40 անհատական: Սա փրկության պարադոքսն է:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:41-51
⁴¹ Հրեաներն էլ տրտնջում էին նորանից, որ ասեց, թե Ես եմ երկնքից իջած հացը: ⁴² Եւ ասում էին. Չե՞ որ սա Յիսուսն է Յովսէփի որդին, որի հօրը եւ մօրը ճանաչում ենք. Ապա սա ի՞նչպէս է ասում, Ես երկնքիցն եմ իջել: ⁴³ Յիսուսն էլ պատասխանեց եւ ասեց նորանց. Մի տրտնջաք իրար հետ: ⁴⁴ Ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ, եթէ Հայրն՝ որ ինձ ուղարկեց՝ չ'քաշէ նորան. Եւ ես յետին օրումը կ'յարուցանեմ նորան: ⁴⁵ Գրուած է մարգարէների մէջ թէ Եւ ամենքն Աստուածանից սովորած կ'լինին. Արդ ամեն ով որ Հօրիցը լսում եւ սովորում է, գալիս է ինձ մօտ: ⁴⁶ Իբր չէ թէ մէկը տեսել է Հօրը. բայց միայն նա, որ Աստուածանից է. Նա տեսել է Հօրը: ⁴⁷ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ինձ հաւատացողը յաիտենական կեանք ունի. ⁴⁸ Ես եմ կեանքի հացը: ⁴⁹ Ձեր հայրերը մանանան կերան անապատումը, եւ մեռան. ⁵⁰ Սա է այն հացը, որ երկնքիցն է իջնում որ եթէ մէկը սորանից ուտէ, չի մեռնիլ: ⁵¹ Ես եմ կենդանի հացն, որ երկնքիցն է իջել:

6:41 «Հրեաներն էլ տրտնջում էին» Սա ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ է, ինչը ենթադրում է, որ նրանք սկսեցին տրտնջալ կամ տրտնջում էին կրկին ու կրկին: Սա գուցահեռ է անապատում թափառելու ժամանակահատվածին (տես Ելից և Թվոց): Այդ ժամանակվա իսրայելացիները նաև մերժեցին Սովսեսին՝ Աստծո ներկայացուցչին, ով նաև նրանց համար ուտելիք հայթայթեց:

6:42 Սա ցույց է տալիս, որ հրեաները հասկացան Հիսուսի խոսքերն Իր մասին: Նա հստակ օգտագործում է հրեական իդիոմաներ՝ ցույց տալով իր նախագոյությունն ու աստվածությունը: Գալիլեացի հյուսն Հիսուսի խոսքերը շարունակում են ցնցել: Հիսուսն այսպիսի ուժեղ արտահայտություններ է անում իր մասին: Որ Նա

1. մարմնացած Աստծո Որդին է, որը բերում է հավիտենական կեանք Իր խոսքերով և գործերով
2. կանխամտածված ստախոս է
3. խելագար (վերցված Josh McDowell, *Evidence That Demands a Verdict*)

Հիսուսի պահանջների ճշմարտացիությունը քրիստոնեության հարցն է:

6:43 «Մի տրտնջաք իրար հետ» Սա ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել արդեն իսկ ընթացքի մեջ եղած գործողությունը:

6:44 «Ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ, եթէ Հայրն՝ որ ինձ ուղարկեց՝ չ'քաշէ նորան» Աստված միշտ նախաձեռնող է (տես հ. 65 և 15:16): Բոլոր հոգևոր որոշումները Սուրբ Հոգու ներգործության արդյունք են և ոչ թե մարդկության կրոնականության (հմմտ. Ես. 53:6): Աստծո գերիշխանությունը և լիազորված մարդու արձագանքը անքակտելիորեն կապված են միասին Աստծո կամքով և ողորմածությամբ: Սա է ՀԿ ուխտի գաղափարը:

«Աստված քաշում է» սրա հավասարակշռությունը գտնվում է 12:32, որտեղ Հիսուսը «բոլոր մարդկանց քաշում է Իրեն»: Այս քաշելը հակադարձում է ՀԿ օրինակը, երբ Աստծո ժողովրդը չարձագանքեց Իր մարգարեական խոսքին (օրինակ, Ես. 6: 9-13 ; 29:13, Երեմիա): Աստված այժմ խոսում է Իսրայելի հետ ոչ թե մարգարեների միջոցով, այլ Իր Որդու միջոցով ողջ մարդկության հետ (տես Եբր. 1: 1-3): Տես Հատուկ Թեմա: Ուղարկել (*Apostellō*) 5:24:

6:45 «Գրուած է մարգարեների մէջ» Սա մեջբերում է Ես. 54:13 կամ Երեմ. 31:34, որոնք նկարագրում են «Նոր Ուխտի» ներքին (ներսից, նոր միտք) ասպեկտը:

▪ **«Արդ ամեն ով որ Հօրիցը լսում եւ սովորում է, զայիս է ինձ մօտ»** Անհնար է պնդել, թե Աստծուն ճանաչում եմ, բայց Հիսուսին մերժում եմ (տես I Հովհ. 5: 1-12):

6:46 «Իբր չէ թէ մէկը տեսէ է Հօրը» Հիսուսի պնդումն այն է, որ միայն Իրենով կարելի է իրապես հասկանալ և ճանաչել Աստծուն (տես Հովհ. 1:18; 14:6,9): Նույնիսկ Մովսէսը երբեք իսկապես չտեսավ ԵՀՈՎԱՅԻՆ (տես ծանուցում 5:32):

6:47 Այս համարն ամփոփում է Հիսուսի ձրի փրկության առաջարկը բոլոր մարդկությանը («Ով հավատա», ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, «հավիտենական կյանք» տես հհ. 51,58, 3: 15,16,36; 5:24; 11:26; 20:31): Հիսուսն է Աստծո միակ ճշմարիտ հայտնությունը, միակ ճշմարիտ դուռը դեպի Աստված (ավետարանի բացառիկությունը/ exclusivism, տես 10: 1-6,7-9, 14: 6), բայց սա հասանելի է Ադամի բոլոր որդիներին և դուստրերին (inclusivism ավետարանի կատարում 1: 4,7,12; 3:16; 3:15, 12: 3):

6:50 Այս համարը, ինչպես 31-35-ը, մի խաղ է հացի, ֆիզիկական հացի (մանանա) և երկնային հացի (Հիսուս) մասին: Մեկը տալիս և պահում է ֆիզիկական կյանքը, բայց պետք է կրկնել և, ի վերջո, չի կարող կանգնեցնել մահը: Իսկ մյուսը տալիս և պահում է հավիտենական կեանքը, բայց պետք է ընդունել և սնուցել ու անհապաղ դադարեցնում է հոգևոր մահը (կոտրված հաղորդակցություն Աստծո հետ, մտերմիկ հաղորդակցություն մեղքի և եսի հետ):

6:51 «Ես եմ կենդանի հացն» Սա Հովհաննեսի Ավետարանի հայտնի «Ես եմ» արտահայտություններից մեկն է (տես 6: 35,48,51): Սա Հիսուսի գրական մեթոդն է՝ ուշադրության կենտրոնացում Իր անձի վրա: Փրկությունը, ինչպես և հայտնությունը, ի վերջո անձ է:

▪ **«Իմ մարմինն է, որ ես նորան աշխարհքի կեանքի համար կ'տամ»** Այս փոխաբերությունն ընդգծում է, որ Հիսուսն Ինքը և ոչ թե ինչ - որ սնունդ, մեր կենտրոնական անհրաժեշտությունն է: Այս արտահայտությունը ակնհայտորեն հղում է դեպի հետ 1:14:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:52-59
⁵² Եթէ մէկն այս հացիցն ուտէ, յաւիտեան կ'ապրի. եւ այն հացն՝ որ ես կ'տամ՝ իմ մարմինն է, որ ես նորան աշխարհքի կեանքի համար կ'տամ: ⁵³ Հրեաներն էլ իրար հետ կովում էին եւ ասում. Սա ի՞նչպէս կարող է իր մարմինը տալ մեզ ուտելու համար: ⁵⁴ Յիսուսն էլ նորանց ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, եթէ մարդի Որդու մարմինը չ'ուտէք եւ նորա արիւնը չ'խմէք, կեանք չ'ունիք ձեր անձերումը: ⁵⁵ Իմ մարմինը ուտողը եւ իմ արիւնը խմողը յաւիտենական կեանք ունի. Եւ ես յետին օրումը կ'յարուցանեմ նորան: ⁵⁶ Որովհետեւ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնը ճշմարիտ խմելիք է: ⁵⁷ Իմ մարմինն ուտողը եւ իմ արիւնը խմողը մնում է ինձանում, եւ ես նորանում: ⁵⁸ Ինչպէս ինձ ուղարկեց կենդանի Հայրը, եւ ես կենդանի եմ Հօր համար. Այնպէս էլ նա որ ինձ ուտում է, կենդանի կ'լինի ինձ համար: ⁵⁹ Սա է այն հացը՝ որ երկնքիցն է իջել. Ոչ թէ ինչպէս ձեր հայրերը մանանան կերան եւ մեռան. Այս հացն ուտողը յաւիտեան կ'ապրի:

6:52

NASB “վիճում էին”

NKJV “կռվում էին”

NRSV “քննարկում էին”

TEV “բարկանալով վիճում էին”

NJB “վիճում էին”

ԱՆԿՍՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ նշանակում էր ինչ-որ բանի սկիզբը կամ շարունակությունը անցյալ ժամանակում: Սա ուժեղ հունարեն տերմին է կռվելու համար (տես Գործք 7:26; II Տիմ. 2: 23-24; Տիտ. 3: 9) և օգտագործվում է փոխաբերաբար II Կորնթ. 7: 5 և Հակ. 4: 1-2-ում:

▪ «Սա ի նչպես կարող է իր մարմինը տալ մեզ ուտելու համար» Հովհաննեսի Ավետարանում Հիսուսը խոսում է փոխաբերական լեզվով, որը պարբերաբար սխալ էր ընկալվում բառացի իմաստով, (1) Նիկողեմոսը 3: 4; (2) Սամարացի կինը 4:11; (3) հրեական բազմությունը 6:52 և (4) աշակերտները 11:11:

6:53-57 53 և 54 համարների ԲԱՅԵՐԸ շատ հետաքրքիր են: 53h-ում «ուտել»-ը և «խմել»-ը ԱՕՐԻՍՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆԵՐ ԵՆ, որոնք խոսում են կամային պոտենցիալ նախաձեռնող գործողության մասին: 54h-ի «ուտել» և «խմել» ԲԱՅԵՐԸ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐ ԵՆ, որոնք ընդգծում են շարունակական գործողություն (տես հհ. 56,57,58): Թվում է, որ սա հաստատում է այն փաստը, որ մարդը պետք է սկզբում արձագանքի Հիսուսին և շարունակի արձագանքել (հմտ. հ.44):

Այն պետք է հիշել, որ այս հատվածը բառացիորեն հասկանալը կնշանակի թյուրըմբռնել հրեական սարսափը արյուն խմելու մասին (տես Ղևտ. 17: 10-14): Հիսուսի ակնհայտ ակնարկները մանանայի մասին անապատին մեջ (տես հ. 58) և օգտագործել դրանք որպես բառացի արտահայտություններ Eucharist-ի հետ կապված դա մանիպուլյացիա է պատմական իրավիճակի և գրական կոնտեքստում եկեղեցական նպատակների համար:

6:54 «մարմինը...արիւնը» Սա հրեական այլաբանական միջոց է, որը վերաբերվում է ամբողջ անձին, ինչպես «սիրտ»-ը:

6:55 «ճշմարիտ կերակուր...ճշմարիտ խմելիք» Սա Հովհաննեսին բնորոշ տերմինի օգտագործման ձև է ճշմարիտ / ճշմարտություն (տես հատուկ թեման ստորև): Հովհաննեսը, գրելով ուշ, քան մյուս ՆԿ գրողները, տեսել է մի քանի հերետիկոսությունների զարգացումը (գերշեշտադրում Հովհաննես Մկրտչի վրա, գերշեշտադրում սակրամենտալիզմի վրա, գերշեշտադրում մարդկային գիտելիքի վրա՝ Գնոստիցիզմ):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ» (ԳԱՂԱՓԱՐԸ) ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ինչ-որ իմաստով Հովհաննեսը համատեղում է «ճշմարտության» *alētheia* եբրայերեն ֆոնը և հունական ֆոնը, ինչպես նա արեց *logos* -ի հետ (տես 1: 1-14): Եբրայերեն *emeth* (BDB 53) նշանակում է այն, ինչը ճիշտ է կամ արժանահավատ (հաճախ Սեպտուագիդում ասոցացվում է *pisteuō*-ի հետ): Հունարենում, այն ասոցացվում էր Պլատոնի իրականությունը անիրական հետ, երկնայինը երկրայինի հետ: Սա համապատասխանում է Հովհաննեսի դուալիզմին: Աստված հստակ հայտնել է Իրեն (*alētheia* ստուգաբանությունը է բացահայտել, հստակորեն հասկանալի) Իր Որդու մեջ: Սա արտահայտվում է մի քանի ձևերով,

1. ԳՈՅԱԿԱՆ, *alētheia*, ճշմարտություն
ա. Հիսուսը յի է շնորհքով ու ճշմարտությամբ (տես 1: 14,17 - ՀԿ ուխտի տերմիններ)

- բ. Հիսուսը Հովհաննես Մկրտչի վկայության կենտրոնում է (տես 1: 32-34; 18:37 - վերջին ՀԿ մարգարեն)
- գ. Հիսուսը խոսում է ճշմարտությունը (տես 8: 4,44,45,46 - հայտնությունը անձնական է)
- դ. Հիսուսն է ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը (հմմտ. 14: 6)
- ե. Հիսուսը սրբացնում է նրանց ճշմարտության մեջ
- զ. Հիսուսն է (Լոգոսը, 1: 1-3) ճշմարտությունը (տես 17:17)
- 2. ԱՄԱԿԱՆ, *alēthēs*, ճիշտ է, արժանահավատ
 - ա. Հիսուսի վկայությունը (տես 5: 31-32; 7:18; 8: 13-14)
 - բ. Հիսուսի դատաստանը (տես 8:16)
- 3. ԱՄԱԿԱՆ, *alēthinus*, իրական
 - ա. Հիսուսն է ճշմարիտ լույսը (տես 1: 9)
 - բ. Հիսուսն է ճշմարիտ հացը (տես 6:32)
 - գ. Հիսուսն է ճշմարիտ որթատունկը (տես 15: 1)
 - դ. Հիսուսն է ճշմարիտ վկայությունը (տես 19:35)
- 4. ՄԱԿԲԱՅ, *alēthōs*, ճշմարտապես
 - ա. Սամարացին վկայում է Հիսուսի մասին որպես աշխարհի Փրկիչ (տես 4:42)
 - բ. Հիսուսն է ճշմարիտ հացն ու ջուրը, ի տարբերություն մանանայի Մովսեսի օրերում (տես 6:55)

Ճշմարտություն տերմինը և դրա ածանցյալները նաև արտահայտում են ուրիշների վկայությունը Հիսուսի մասին, *alēthēs*,

- ա. Հովհաննես Մկրտչի վկայությունը ճշմարիտ է (տես 10:41)
- բ. Հովհաննեսի (Ավետարանի հեղինակը) վկայությունը ճշմարիտ է (տես 19:35; 21:24)
- գ. Հիսուսը որպես ճշմարիտ մարգարե (տես 6:14; 7:40)

ՀԿ և ՆԿ ճշմարտության մասին լավ քննարկում կարող էք կարդալ, George E. Ladd's *A Theology of the New Testament*, էջ 263-269:

6:56 «մնում է ինձանում, եւ ես նորանում» Այս նույն ճշմարտությունը հաստատված է Հովհ. 15: 4-7; I Հովհ. 2: 6,27,28; 3: 6,24, տես Հատուկ Թեմա: Կենալ, մնալ I Հովհ. 2:10: Սա շարունակական ՆԿ շեշտադրություն է սրբերի համբերության մասին (տես Գաղ. 6: 9; Հայտ. 2: 7,11,17,26, 3: 5,12,21, տես Հատուկ Թեմա 8:31): Ճշմարիտ պատասխանը վավերացվում է շարունակական արձագանքով: Համբերության այս շեշտադրումը բացակայում է ամերիկյան ավետարանականությունից: Մարդը պետք է ոչ միայն սկսի հավատքով, այլ նաև ավարտի հավատքով (Եբրայեցիս 11): Ջոնաթան Էդվարդսը ասել է, «Իհարկե ընտրության ապացույցը՝ այն պահել մինչև վերջ»: Կոներն ասել է, որ «Ընտրված մարդու փրկությունը դա հավիտենականությունից մինչև հավիտենականություն է՝ որոշված Աստծո մտքում և նպատակի մեջ, բայց դա պայմանավորված է հավատքով ու հավատք, որը համբերում և հաղթում է»:

6:57 «կենդանի Հայրը» Այս արտահայտությունը եզակի է, բայց գաղափարը հաճախ է օգտագործվում Աստվածաշնչում: Կան մի քանի տարբեր եղանակներ մեկնաբանելու ծագումը Աստծո այս տիտղոսի համար:

1. Ուխտի Աստծո հիմնական անունը (Ելից 3: 12,14-16; 6: 2-3, տես Հատուկ Թեման 6:20)
2. Աստծո երդումները «Կենդանի եմ ես» կամ Աստծո անունը «Կենդանի է Տերը» (տես Թվեր 14: 21,28; Ես. 49:18, Երեմ. 4: 2)
3. որպես Աստծո նկարագրություն (տես Մաղ. 42: 2; 84: 2; Հեսու 3:10; Երեմ. 10:10; Դան. 6: 20,26; Ովս. 1:10; Մատթ. 16: 16; 26:63, Գործք 14:15; Հռոմ. 9:26; II Կորնթ. 3: 3; 6:16; Ա Թեսաղ. 1: 9, Ա Տիմ. 3:15; 4:19; Եբր. 3: 12; 9:14; 10:21; 12:22; Հայտն. 7: 2)

4. Հովհ. 5:26 մտքերը, որ Հայրն ունի կյանք Ինքն իր մեջ և այն տվել է Որդուն, իսկ 5:21 որտեղ Հայրը հարություն է տալիս մեռածին, ինչպես Որդին է անում :

6:58 Սա Հին Կտակարանի և Նորի համեմատությունն է, Մովսեսի ու Հիսուսի: (Տես Եբրայեցիս գիրքը, Գլուխները 3, 4):

- «**հայրերը կերան և մեռան**» Սա կարող է նաև ծառայել որպես փրկությունը սերնդի միջոցով մերժելու աստվածաբանական գործառույթ (տես 8: 33-39) կամ Մովսեսական օրենքի միջոցով (Թորա):
- «**յաւիտեան**» Տես Հատուկ Թեմա ստորև

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԻՏՅԱՆ(ՕԼԱՄ)

Եբրայերեն *’olam* բառի ստուգաբանությունը (BDB 761) անորոշ է (NIDOTTE, հատոր 3, էջ 345): Այն օգտագործվում է մի քանի իմաստներով (սովորաբար որոշվում է կոնտեքստով): Մրանք միայն ընտրված օրինակներ են:

1. հին բաներ
 - ա. ժողովուրդներ, մարդիկ, Ծննդ. 6: 4; Ա Թագ. 27: 8; Երեմ. 5:15; 28: 8
 - բ. վայրեր, Ես. 58:12, 61: 4
 - գ. Աստված, Սաղ. 93: 2; Առ. 8:23; Ես. 63:16
 - դ. բաներ, Ծննդ. 49:26; Հոբ 22:15; Սաղ. 24: 7,9; Ես. 46: 9
 - ե. ժամանակ, Բ Օրին. 32: 7; Ես. 51: 9; 63: 9,11
2. ապագա ժամանակը
 - ա. մեկի կյանքը, Ել. 21: 6; Բ Օրին. 15:17, Ա Թագ. 1:22; 27:12
 - բ. չափազանցություն թագավորի համար, Գ Թագ. 1:31; Սաղ. 61: 7; Նեեմ. 2: 3
 - գ. շարունակական գոյություն
 - (1) երկիրը, Սաղ. 78:69, 104: 5; Ժող. 1: 4
 - (2) երկինքը, Սաղ. 148: 6
 - դ. Աստծո գոյությունը
 - (1) Ծննդ. 21:33
 - (2) Ել. 15:18
 - (3) Բ Օրին. 32:40
 - (4) Սաղ. 93: 2
 - (5) Ես. 40:28
 - (6) Երեմ. 10:10
 - (7) Դան. 12: 7
 - ե. ուխտը
 - (1) Ծննդ 9: 12,16; 17: 7,13,19
 - (2) Ելից 31:16
 - (3) Ղևտ. 24: 8
 - (4) Թվոց 18:19
 - (5) II Թագ. 23: 5
 - (6) Սաղ. 105: 10
 - (7) Ես. 24: 5; 55: 3; 61: 8
 - (8) Երեմ. 32:40, 50: 5
 - զ. հատուկ ուխտ Դավիթի հետ
 - (1) II Թագ. 7: 13,16,25,29; 22:51, 23: 5

- (2) 3 Թագ. 2: 33,45; 9: 5
- (3) II Մնաց. 13: 5
- (4) Սաղ. 18:50, 89: 4,28,36,37
- (5) Ես. 9: 7; 16: 5; 37:35; 55: 3
- է. Աստծո Մեսիան
 - (1) Սաղ. 45: 2; 72:17, 89: 35-36; 110: 4
 - (2) Ես. 9: 6
- ը. Աստծո օրենքները
 - (1) Ելից 29:28, 30:21
 - (2) Ղևտ. 6: 18,22; 7:34; 10:15, 24: 9
 - (3) Թվոց 18: 8,11,19
 - (4) Սաղ. 119: 89,160
 - (5) Ես. 59:21
- թ. Աստծո խոստումները
 - (1) II Թագ. 7: 13,16,25; 22:51
 - (2) Գ Թագ. 9: 5
 - (3) Սաղ. 18:50
 - (4) Ես. 40: 8
- ժ. Աբրահամի հետնորդները և Խոստացյալ երկիրը
 - (1) Ծննդ 13:15; 17:18, 48: 4
 - (2) Ելից 32:13
 - (3) I Մնաց. 16:17
- ի. ուխտի տոները
 - (1) Ելից 12:14, 17,24
 - (2) Ղևտ. 23: 14,21,41
 - (3) Թվոց 10: 8
- լ. հավիտենական հավերժություն
 - (1) 3 Թագ. 8:13
 - (2) Սաղ. 61: 7-8; 77: 8; 90: 2; 103: 17; 145: 13
 - (3) Ես. 26: 4; 45:17
 - (4) Դան. 9:24
- խ. Սաղմուններն ասում, թե ինչ կանեն հավատացյալները հավիտյան
 - (1) կգոհանան, Սաղ. 30:12, 79:13
 - (2) կկենան Նրա ներկայության մեջ, Սաղ. 41:12, 61: 4,7
 - (3) կվստահեն Նրա ողորմածությանը, Սաղ. 52: 8
 - (4) կփառաբանեն Տիրոջը, Սաղ. 52: 9
 - (5) փառաբանություններ կերգեն, Սաղ. 61: 7; 89: 1
 - (6) կհռչակեն Նրա արդարության, Սաղ. 75: 9
 - (7) կփառաբանեն Նրա անունը, Սաղ. 86:12, 145: 2
 - (8) կօրհնեն Նրա անունը, Սաղ. 145: 1
- 3. թե հետ և թե առաջ ժամանակի մեջ («հավիտենականությունից հավիտենականություն»)
 - ա. Սաղ. 41:13 (գովաբանություն առ Աստված)
 - բ. Սաղ. 90: 2 (Աստված Ինքը)
 - գ. Սաղ. 103: 17 (Տիրոջ սիրառատ ողորմությունը)

Հիշեք, կոնտեքստը որոշում է տերմինի իմաստի չափը: Հավիտենական ուխտերը և խոստումները պայմանական են (այսինքն, Երեմիա 7): Եղեք ուշադիր կարդալով ձեր ժամանակակից

տեսակետը ժամանակի մասին կամ ձեր ՆԿ սիստեմատիկ աստվածաբանությունը ամեն չԿ օգտագործման յուրաքանչյուր խոսքի մեջ: ՆԿ ունիվերսալիզացում է չԿ խոստումները:

6:59 Հիսուսը գործածում էր Իր օրերի հուղայականությունը: Նա սովորեց ժողովարանի դպրոցում, Նա երկրպագեց ժողովարանում և նա ուսուցանեց ժողովարանում: Նա իրականացրեց օրենքի բոլոր սպասելիքները:

Ժողովարանները հիմնականում սկսեցին բաբելոնյան գերության ընթացքում (մ.թ. 605-538): Հրեաները սկսեցին հատուկ պաշտամունքի և դասավանդման վայրերը, ուր որ կային տասը հրեա տղամարդիկ: Դրանք դարձան հրեական մշակույթի և սովորույթների պահպանները: Երբ հրեաները վերադարձան Հրեաստան և Տաճարի ծառայություններին, նրանք պահպանեցին այդ տեղական կենտրոններ:

6-րդ գլխում մեզ հայտնի չէ, թե երբ Հիսուսը մտավ ժողովարան Կափառնայում (տես հ. 24):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:60-65

⁶⁰ Այս ասեց ժողովարանումը երբ որ Կափառնայումի մեջ սովորեցնում էր: ⁶¹ Եւ նորա աշակերտներից շատերը որ լսեցին, ասեցին. Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել դորան: ⁶² Բայց երբոր Յիսուսը գիտաց իր անձնումը, թէ իր աշակերտները տրտնջում էին դորա համար, նորանց ասեց. Դա գայթակղեցնում է ձեզ: ⁶³ Ապա ի նչ էք մտածելու եթէ մարդի Որդին տեսնէք՝ վեր գնալիս, ուր որ առաջ էր: ⁶⁴ Հոգին է կենդանացնողը, մարմինը ոչինչ օգուտ չէ տալիս. Այն բանն որ ես ձեզ հետ խօսեցի, հոգի է եւ կեանք է: ⁶⁵ Բայց ձեզանից կան ոմանք, որ չեն հաւատում, որովհետեւ Յիսուսը սկզբիցը գիտէր թէ ով են չ'հաւատացողները, եւ ով է նա՝ որ պիտի մատնէր նորան:

6:60 «Եւ նորա աշակերտներից շատերը» Այս «աշակերտ» տերմինի օգտագործումն ունի լայն իմաստ: Հովհաննեսի Ավետարանում այս տերմինը և «հավատալ» երկուսն էլ օգտագործվում են (1) ճշմարիտ հետևորդներ (հ. 68) և (2) ժամանակավոր հետևորդներ (հ. 64, տես 8: 31-47):

▪ «լսեցին» Կա բառախաղ «լսել» (*akouō*) բառի մեջ: Նրանք լսեցին Հիսուսի խոսքերը, սակայն նրանք այդպես էլ չհասկացան դրանք և չգործեցին դրանց համաձայն: Այս առումով այս հունարեն տերմինը գործում է ինչպես Եբրայերեն *shema*-ն (տես 2 Օր. 4: 1, 5: 1, 6: 3,4; 27: 9-10):

6:62 Սա թերի ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է առանց եզրակացության: Ենթադրվում է, որ նրանք պետք է տեսնեն այն (տես Գործք 1): Հիսուսի մահից / հարությունից / համբարձումից և Հոգու գալուստից հետո, Հիսուսի ուսմունքներից և գործողություններից հետո նրանց կիմաստավորեր:

▪ «վեր գնալիս, ուր որ առաջ էր» Սա շարունակական շեշտադրումն է Հիսուսի որպես «երկնքից իջնող»: Դա խոսում է նրա նախագոյության մասին Հոր հետ երկնքում և Նրա մտերմիկ հարաբերությունը Հոր հետ երկնքում (տես 17: 5,24):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Կան մի շարք տարբեր հունարեն բառեր օգտագործված նկարագրելու Հիսուսի համբարձումը վերադարձ երկինք:

Գործք 1: 2,11,22; *analambanō*, վերցվել, վերանալ (տես I Տիմոթ. 3:16), որը նաև օգտագործվում է Սեպտուագիտում Դ Թագ. 2: 9,11 Եղիայի երկինք տեղափոխվելը և նաև Ա Մակաբայեցիս 2:58

1. Գործք 1: 9, *epairō*, բարձրացնել, բարձրացնել վերև, բարձրացվել
2. Ղուկաս 9:51, *analēpsis* (ձև # 1)
3. *diistēmi*, մեկնել

4. Հովհ. 6:62, *anabainō*, բարձրանալ

Այս իրադարձությունը արձանագրված չէ Մատթեոսի կամ Մարկոսի Ավետարանում: Մարկոսի Ավետարանը ավարտվում է 16: 8, բայց երեք ուշ ընդօրինակված ձեռագրերից մեկը նկարագրում է այդ իրադարձությունը 16:19-ում (այսինքն, *analambanō*):

6:63 Այս համարը 6-րդ գլխի ավելի մեծ կոնտեքստի պատճառով կարող է վերաբերել մի հակադրության՝ հին ուխտի և նոր ուխտի միջև, Մովսես Հիսուս (տես հ. 58; II Կորնթ. 3: 6, տես այդ երկու ուխտերի համեմատությունները Եբրայեցի գրքում):

▪ «Հոգին է կենդանացնողը» Սա մեկն է բազմաթիվ արտահայտությունների, որոնք օգտագործվում են թե Հիսուսի և թե Սուրբ Հոգու համար:

1. Հոգին կենսատու ջուր է (7: 38-39)
2. Հիսուսը կենդանի ջուր է (4: 10-14)
3. Սուրբ Հոգին ճշմարտության Հոգին է (14:17; 15:26; 16:13)
4. Հիսուսն է ճշմարտությունը (14: 6)
5. Հոգին է Մխիթարիչը (14: 16,26; 15:26; 16: 7)
6. և Հիսուսը Մխիթարիչ է (I Հովհ. 2: 1)

Տես Հատուկ Թեմա 14:16.

Ուշադրություն դարձրեք, որ այս համարում «հոգին» (*pneuma*) օգտագործվում է երկու մասնագիտացված իմաստներով:

1. Սուրբ Հոգին (տես 1: 32,33; 3:34; 7:39; 14:17; 15:26; 16:13)
2. հոգևոր (տես 4:24; 11:33; 13:21)

Հովհաննու 3: 5,6,8 դժվար է իմանալ, թե որն է նշանակում: Լինելով Հովհաննեսը, հնարավոր է երկուսն էլ:

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ՀՈԳԻՆ (*PNEUMA*) ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Հունարեն «հոգի» տերմինը Նոր կտակարանում օգտագործվում է մի քանի առումներով: Ահա մի քանի ներկայացուցչական դասակարգումներ ու օրինակներ.

Ա. Եռյակ Աստծո

1. Հոր (տես Հովհ. 4:24)
2. Որդու (տես Հռոմ. 8: 9-10; II Կորնթ. 3:17; Գաղ., 4: 6, Ա Պետ. 1:11):
3. Սուրբ Հոգու (տես Մարկ 1:11; Մատթ. 3:16; 10:20; Հովհ. 3: 5,6,8; 7:39; 14:17; Գործք 2: 4, 5: 9; 8: 29,35; Հռ. 1: 4, 8: 11,16; Ա Կորնթ. 2: 4,10,11,13,14; 12: 7)

Բ. մարդկային կյանքի ուժի

1. Հիսուսի (տես Մարկ. 8:12; Հովհ. 11: 33,38; 13:21)
2. մարդկության (տես Մատթ. 22:43, Գործք 7:59, 17:16, 20:22, Հռոմ. 1: 9; 8:16; I Կորնթ. 2:11; 5: 3-5; 7 : 34; 15:45, 16:18, II Կորնթ. 2:13; 7:13; Փիլիպ. 4:23; Կող. 2: 5)

Գ. հոգևոր ոլորտում

1. հոգևոր էակներ
 - ա. բարի (այսինքն, հրեշտակները, տես Գործք 23: 8-9; Եբր. 1:14)
 - բ. չարը (այսինքն, դիվային, տես Մատթ. 8:16, 10: 1; 12: 43,45; Գործք 5:16; 8: 7; 16:16, 19: 12-21; Եփես. 6:12)
 - գ. ուրվականներ (տես Ղուկաս 24:37)
2. հոգևոր զանազանություն (տես Մատթ. 5: 3; 26:41; Հովհ. 3: 6, 4:23, Գործք 18:25, 19:21, Հռոմ. 2:29, 7: 6, 8: 4,10 , 12:11, Ա Կորնթ. 14:37)
3. հոգևոր բաներ (տես Հովհ. 6:63; Հռոմ. 2:29; 8: 2,5,9,15; 15:27, Ա Կորնթ.

- 9:11; 14:12)
4. հոգևոր պարզվածք (տես I Կորնթ. 12: 1; 14: 1)
 5. Հոգու ներշնչանք (տես Մատթ. 22:43, Ղուկաս 2:27; Եփես. 1:17)
 6. հոգևոր մարմին (տես I Կորնթ. 15: 44-45)
- Դ. Բնութագրում է
1. աշխարհի վերաբերմունքը (տես Հռոմ. 8:15, 11: 8; Ա Կորնթ. 2:12)
 2. մարդկանց մտածողության գործընթացը (տես Գործք 6:10, Հռոմ. 8: 6, Ա Կորնթ. 4: 2)
- Ե. Ֆիզիկական ոլորտում
1. քամին (տես Մատթ. 7: 25,27; Հովհ. 3: 8; Գործք 2: 2)
 2. շունչը (տես Գործք 17:25, II Թեսաղ. 2: 8)

Ակնհայտ է, որ այս տերմինը պետք է մեկնաբանվի իր անմիջական կոնտեքստի լույսի ներքո: Կան տարբեր ձևի իմաստներ, որը կարող է վերաբերվել (1) ֆիզիկական աշխարհին; (2) անտեսանելի աշխարհին; (3) ինչպես նաև այս ֆիզիկական աշխարհի կամ հոգևոր ոլորտի անձանց:

Սուրբ Հոգին այդ Եռյակ Աստծո մասն է, որը գերազանց ակտիվ գործում է պատմության այս փուլում: Հոգու նոր դարը եկել է: Բոլորը, ինչ որ բարի է, սուրբ, ճիշտ և ճշմարիտ վերաբերում է Նրան: Նրա ներկայությունը, պարզվածքը և ծառայությունը չափազանց կարևոր է ավետարանի հետագայի և Աստծու թագավորության հաջողության համար (տես Հովհ. 14 և 16): Նա ուշադրությունը իրեն չի հրավիրում, այլ Քրիստոսին (տես Հովհ. 16: 13-14): Նա դատապարտում է, հանդիմանում, համոզում, մկրտում և հասունացնում է բոլոր հավատացյալներին (տես Հովհ. 16: 8-11):

6:64 Այս տեսանելի բայց կեղծ հետևորդների խումբը կրճատվեց կեղծ հետևորդով- Հուդա (տես հհ. 70-71; 13:11: Անշուշտ խորհուրդ է ներգրավված հավատքի մակարդակներում:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՎԱՏՈՒՐԱՑՈՒԹՅՈՒՆ/ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ (APHISTEMI)

Այս հունարեն տերմինը *aphistēmi* ունի լայն իմաստային դաշտ: Այնուամենայնիվ, անգլերեն «հավատուրացություն» տերմինը առաջացել է այս տերմինից և դրա օգտագործումը կասկածի տակ է դնում ժամանակակից ընթերցողներին: Կոնտեքստը, ինչպես միշտ, բանալին է և ոչ թե առկա սահմանումը:

Սա բարդ տերմին է բաղկացած *apo* նախդիրից, որը նշանակում է «-ից» կամ «հետոից» և *histēmi* «նստել», «կանգնել» կամ «շտկել»: Ուշադրություն դարձրեք հետևյալ (ոչ աստվածաբանական) կիրառություններին.

1. տեղափոխել կամ տեղաշարժել, հեռանալ ֆիզիկապես
 - ա. Տաճարից, Ղուկաս 2:37
 - բ. տնից, Մարկոս 13:34
 - գ. մարդուց, Մարկոս 12:12; 14:50; Գործք 5:38
 - դ. բոլոր բաներից, Մատթ. 19: 27,29
2. հեռացնել քաղաքականորեն, Գործք 5:37
3. հեռացնել հարաբերորեն, Գործք 5:38; 15:38, 19: 9; 22:29
4. հեռանալ իրավաբանորեն (ամուսնալուծություն) Բ Օրին. 24: 1,3 (LXX) և ՆԿ, Մատթ. 5:31; 19: 7; Մարկ. 10: 4; Ա Կորնթ. 7:11
5. հեռացնել պարտքը, Մատթ. 18:24
6. լքելով ցույց տալ անտարբերություն, Մատթ. 4:20; 22:27, 4:28; 16:32
7. լքելով ցույց տալ մտահոգություն, Հովհ. 8:29; 14:18
8. թույլ տալ կամ թույլտվություն, Մատթ. 13:30, 19:14, Մարկ. 14: 6; Ղուկ. 13: 8

Աստվածաբանական իմաստով ԲԱՅՆ ունի նաև լայն կիրառություն:

1. չեղյալ հայտարարել, ներում, ներել մեղքի հանցանքը, Ելից 32: 32 (LXX); Թվոց 14:19; Հոբ 42:10 և ՆԿ, Մատթ. 6: 12,14-15; Մարկ. 11: 25-26
2. զերծ մնալ մեղքից, II Տիմ. 2:19
3. անտեսել զատվելով
 - ա. Օրենքից, Մատթ. 23:23, Գործք 21:21
 - բ. հավատքից, Եզեկ. 20: 8 (LXX); Ղուկ. 8:13; II Թես. 2: 3; Ա Տիմ. 4: 1; Եբր. 2:13

Ժամանակակից հավատացյալները բազմաթիվ աստվածաբանական հարցեր են տալիս, որ ՆԿ գրողները երբեք չեն մտածել այդ մասին: Դրանցից մեկը վերաբերվում է ժամանակակից հակվածությանը՝ հավատք առանց հավատարմության:

Աստվածաշնչում կան անձինք, ովքեր ներգրավված են Աստծո ժողովրդի մեջ և ինչ-որ բան է տեղի ունենում:

I. Հին Կտակարան

- Ա. Նրանք, ովքեր լսեցին տասներկուսի (տասը) լրտեսների բերած լուրը, Թվոց 14 (տես Եբր. 3: 16-19)
- Բ. Կորիսը, Թվոց 16
- Գ. Հեղիի որդիները, Ա Թագ. 2, 4
- Դ. Սավուղ, Ա Թագ. 11-31
- Ե. Սուտ մարգարեներ (օրինակներ)
 1. 2 Օրին. 13: 1-5, 18: 19-22 (կեղծ մարգարեին ճանաչելու կերպերը)
 2. Երեմիա 28
 3. Եզեկիել 13: 1-7
- Զ. Կեղծ մարգարեուհիներ
 1. Եզեկիել 13:17
 2. Նեեմիա 6:14
- Է. Իսրայելի չար առաջնորդները (օրինակներ)
 1. Երեմիա 5: 30-31; 8: 1-2; 23: 1-4
 2. Եզեկիել 22: 23-31
 3. Միքիա 3: 5-12

II. Նոր Կտակարան

- Ա. Այս հունարեն տերմինը բառացիորեն *apostasize* է: Հին և Նոր Կտակարանները երկուսն էլ հաստատում են չար և կեղծ ուսմունքի ինտենսիվացումը նախքան Երկրորդ Գալուստը (տես Մատթ. 24:24, Մարկ. 13:22, Գործք 20: 29,30; II Թեսաղ. 2: 9-12; II Տիմ. 4: 4): Այս հունարեն տերմինը կարող է արտացոլել Հիսուսի խոսքերը սերմնացանի առակում Մատ. 13; Մարկ. 4 և Ղուկ. 8: Այս կեղծ ուսուցիչները ակնհայտորեն քրիստոնյաներ չեն, բայց նրանք ներսից էին (տես Գործք 20: 29-30; 1 Հովհ. 2:19), սակայն, նրանք կարողանում են հրապուրել և գրավել մարմնավոր հավատացյալներին (տես Եբր. 3:12):

Աստվածաբանական հարցը հետևյալն է, կեղծ ուսուցիչները երբևէ եղե՞լ են հավատացյալ: Դժվար է պատասխանել, քանի որ կային կեղծ ուսուցիչներ տեղական եկեղեցիներում (տես I Հովհ. 2:18-19): Հաճախ մեր աստվածաբանական կամ հարանվանական ավանդույթները պատասխանում են այս հարցին առանց հղում անելու հատուկ սուրբգրային համարներ (բացառությամբ ապացույց-տեքստի մեթոդով՝ մեջբերելով մի համար կոնտեքստից դուրս, ենթադրաբար ապացուցելու համար մեկի կողմնակալությունը):

- Բ. Տեսանելի հավատք
 1. Հուդա, Հովհ. 17:12
 2. Սիմոն Մոզր, Գործք 8

3. Որոնց մասին խոսվում է Մատթ. 7: 13-23
4. Որոնց մասին խոսվում է Մատթ. 13; Մարկ. 4; Դուկ. 8
5. Հրեաները Հովհաննեսի Ավետարանում 8: 31-59
6. Աղեքսանդրոսը և Հիմենոսը, Ա Տիմ. 1: 19-20
7. Որոնց մասին խոսվում է I Տիմ. 6:21
8. Հիմենոսը և Փիլետոսը, II Տիմ. 2: 16-18
9. Դեմաս, II Տիմ. 4:9
10. Կեղծ ուսուցիչները, II Պետրոս 2: 19-22; Հուդա հհ. 12-19
11. հակաքրիստոսներ, Հովհ. 2: 18-19

Գ. Անպտուղ հավատք

1. I Կոր. 3: 10-15
2. II Պետ. 1: 8-11

Մենք հազվադեպ ենք մտածում այս տեքստերի մասին, որովհետև մեր սիստեմատիկ աստվածաբանությունը (Կալվինիզմ, Արմինիանիզմ և այլն) թելադրում է լիազորված պատասխանը: Խնդրում եմ նախապես չդատել ինձ, քանի որ առաջ եմ բերել այս թեման: Իմ մտահոգությունը պատշաճ հերմենևտիկ վերլուծություն կատարելն է: Մենք պետք է թույլ տանք, որ Աստվածաշունչը խոսի մեզ հետ և ոչ թե փորձենք ձուլել այն նախադրված աստվածաբանության հետ: Սա հաճախ ցավոտ և ցնցող է, քանի որ մեր աստվածաբանության մեծ մասը հարանվանական է, մշակութային կամ հարաբերական (ծնող, բարեկամ, հոգևոր հովիվ) ոչ թե աստվածաշնչյան: Ոմանք, ովքեր Աստծո ժողովրդի մեջ էին, պարզվում է այլևս Աստծո ժողովրդի մեջ չեն (օրինակ, Հռոմ. 9: 6):

6:65 Սա արտահայտում է նույն ճշմարտությունը ինչպես 44h: Մեղավոր մարդկությունը չի փնտրում Աստծուն իր սեփական նախաձեռնությամբ (տես Հռոմ. 3: 9-18 մի շարք ՀԿ մեջբերումներ, որոնք ընդգծում են մարդկության մեղավոր լինելը և ապստամբությունը):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 6:66-7:1

⁶⁶ Եւ ասեց, Նորա համար ասեցի ձեզ թէ ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ, եթէ իմ Հօրիցը տրուած չ'լինի նորան: ⁶⁷ Մորանից յետոյ նորա աշակերտներից շատերը ետ գնացին, եւ այլեւս ման չէին գալիս նորա հետ: ⁶⁸ Յիսուսն էլ ասեց այն տասներկուսին, Մի՞թէ դուք էլ ուզում էք գնալ: ⁶⁹ Միմօն Պետրոսն էլ պատասխանեց նորան. Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յալիտենական կեանքի խօսքեր ունիս դու: ⁷⁰ Եւ մենք հաւատացինք եւ ճանաչեցինք, թէ դու եւ Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին: ⁷¹ Յիսուսը պատասխանեց նորանց. Չէ՞ որ եւ ձեզ տասներկուսիդ ընտրեցի, եւ ձեզանից մէկը սատանայ է: ⁷² Եւ սա Իսկարիովտացի Միմօնեան Յուդայի մասին էր ասում. Որ նա էր մատնելու նորան. Եւ ինքը տասներկուսից մէկն էր:

6:67 «տասներկուսին» Առաքյալների մասին այս հավաքական տերմինը առաջին անգամն է օգտագործվում Հովհաննեսի Ավետարանում (հմմտ. 6: 70,71; 20:24): Տես Հատուկ Թեմա 6:13

6:68 «Միմօն Պետրոսն էլ պատասխանեց» Պետրոսը խոսնակն է Տասներկուսի համար (տես Մատթ. 16:16): Սա չի նշանակում, որ նրանք նրան տեսնում էին որպես իրենց առաջնորդ (տես Մարկ 9:34, Դուկ. 9:46, 22:24):

▪ «յալիտենական կեանքի խօսքեր ունիս դու» Քրիստոնեությունը թե (1) ճշմարտությունը պարունակող պատգամ է, «հավիտենական կյանքի խոսքեր», և թե (2) ճշմարտությունն արտահայտող անձ է՝ Հիսուս: Ուրեմն Ավետարանը թե պատգամ է և թե անձ: *pistis* տերմինը կարող է վերաբերել թե (1) պատգամին (տես Հուդա 3,20) և թե (2) անձին (տես Հովհ. 1:12, 3: 15-16): Տես Հատուկ Թեմա 2:23.

6:69 «Եւ մենք հաւատացինք եւ ճանաչեցինք» Սրանք երկուսն էլ ԿԱՏԱՐՅԱԼ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են: Փրկությունը 53h-ում ԱՕՐԻՍԾ ԺԱՄԱՆԱԿ է, անցյալում ավարտված գործողություն: Փրկությունը 40,53,54,56 և 57hh-ում ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ է, շարունակական գործընթաց: Այստեղ Փրկությունը ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ-ով է, որը նշանակում է անցյալ, գազաթնակետին հասած գործողություն, որը դարձել է կայուն, հաստատուն վիճակ: Ճշմարիտ փրկությունը ներառում է բոլոր Հունարեն ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ: Տես Հատուկ Թեմա: Հունարեն Բայերի Ժամանակաձևերը օգտագործված Փրկության համար 9: 7:

- **NASB, NRSV,**
 - NJB** “**Դու ես Աստծո Սուրբը**”
 - NKJV** “**Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին**”
 - TEV** “**Դու ես Սուրբը՝ ով եկել է Աստծուց**”

Կա մի ձեռագրի խնդիր այս մտքի շուրջ: Ավելի կարճ տեքստին (NASB, NRSV, NJB), աջակցում է հին հունարեն P⁷⁵, Տ, B, C*, D, L, և W ձեռագրեր: Ավելի ուշ դպիրներն ակնհայտորեն տեղադրեցին լրացուցիչ բառեր Մարթայի խոստովանությունից 11:27 կամ Պետրոսի 16:16: UBS⁴ ավելի կարճ տեքստին տալիս է «A» վարկանիշ (որոշակի):

«Աստծո Սուրբը» արտահայտությունը ՀԿ Մեսիական կոչում կամ տիտղոս է: Այն ակնարկվում է Դուկաս 1:35 և Գործք 3:14: Սա այն անունն է, որով դևը դիմեց Հիսուսին Մարկոս 1:24; Դուկ. 4:34: Տես Հատուկ Թեմա: I Հովի 2:20. Սա ևս մեկ հավատքի խոստովանություն է Տասներկուսի կողմից, նման Մատ. 16:

6:70 «Զէ՞ որ ես ձեզ ընտրեցի» Սա ևս մեկ շեշտադրում է աշակերտների աստվածային ընտրության մասին (տես հ. 44 և 65): Ուշադրություն դարձրեք Հիսուսի հարցին հ. 67. Աստվածային ընտրությունը և մարդկային կամքը պետք է մնա աստվածաշնչյան լարվածության մեջ: Ուխտի հարաբերության մեջ կան երկու կողմեր:

- «**Եւ ձեզանից մէկը սատանայ է**» Ինչպիսի ցնցող հայտարարություն: Սա չի վերաբերում այն աշակերտներին, ովքեր ետ դառան ճանապարհից (տես հ. 66), այլ տասներկու ընտրյալ առաքյալներից մեկին, ովքեր դավանել էին Իրեն: Շատերը սա կապել են 13: 2 կամ 27-ի հետ: Կան մի քանի հարցեր, թե ինչպես ենք հասկանում այս համարը (1) Ինչու՞ Հիսուսն ընտրեց սատանային և (2) ինչ է տերմինը նշանակում այս կոնտեքստում:

Առաջին հարցը կապված է կանխատեսող մարգարեության հետ (հմտ 17:12; Մաղ. 41: 9): Հիսուսը գիտեր, թե ինչ է Հուդան անելու: Հուդան աններելի մեղքի գերագույն օրինակն է: Նա մերժեց Հիսուսին Նրա հետ մի քանի տարիներ լինելուց, լսելուց և տեսնելուց հետո:

- Երկրորդ հարցն ունի երկու հնարավոր իմաստներ.
 1. ոմանք կապել են դևի հետ (օգտագործվել է, սատանան առանց ՀՈՂԻ Գործք 13:10 Հայտ. 20: 2) մտնելով Հուդայի մեջ (տես 13: 2,27)
 2. հնարավոր է տերմինն օգտագործվել է ընդհանրացված (առանց ՀՈՂԻ, ինչպես I Տիմ. 3:11; II Տիմ. 3: 3 և Տիտոս 2: 3)

Հուդան մեղադրող էր ՀԿ իմաստով, ինչպիսին սատանան էր (տես, Հատուկ Թեմա 12:31): Հունարեն տերմինը նշանակում է զրպարտող կամ բամբասող, խոսք տանող բերող: Հունարեն տերմինը բարդ է «շարտել վրայով»:

6:71 «Իսկարիովտացի Միմոնեան» Այս բառի վերաբերյալ կան մի քանի տեսություններ (տարբեր հունարեն ձեռագրերում բառը այլ կերպ է արտասանվում): Այն կարող է վերաբերել

1. մարդ Կարիոտից, քաղաք Հուդայում

2. մարդ Կարտանից, քաղաք Գալիլիայում
3. կաշվե պայուսակ, որն օգտագործվում է որպես դրամապանակ
4. երբայերեն բառը «խեղդել»
5. հունարեն բառը մարդասպանի դանակ

Եթե # 1 ճշմարիտ է, ապա Տասներկուսից միայն նա էր Հուդայից: Եթե # 5 ճշմարիտ է, ապա նա եղել է նախանձավոր ինչպես Միմոնը:

Վերջերս մի գիրք է գրվել, որը մեկնաբանում է Հուդային դրական լույսի ներքո: Գիրքը կոչվում է Հուդա, մատնիչ թե՛ Հիսուսի բարեկամ/ *Judas, Betrayer or Friend of Jesus?* William Klassen, Fortress Press, 1996: Իմ խնդիրն այն է, որ այն Հովհաննեսի Ավետարանի մեկնաբանությունները լուրջ չի ընդունում:

▪ «մատնելու» Այս հունական տերմինը լայնորեն է թարգմանվել և շատ կոնտեքստերում այն չեզոք է: Սակայն, կապված Հիսուսին իշխանություններին հանձնելու հետ, Հուդան իր վրա է վերցնում չարաբաստիկ ենթատեքստեր: Տես ծանուցում 18: 1.

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՅԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Արդյո՞ք Հովհաննու 6-րդ գլուխը Տիրոջ Ընթրիքի քննարկումն է: Ինչու՞ կամ ինչու՞ ոչ:
2. Ո՞րն էր Հիսուսի պնդումը, երբ Նա ասաց. «Ես եմ կենաց հացը»:
3. Ինչու՞ Հիսուսն այդպիսի ցնցող հայտարարություններ արեց այս ամբոխին:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 7

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսի եղբայրների անհավատությունը	Հիսուսի եղբայրների չվատահելը	Հիսուսը, Կյանքի ջուրը	Հիսուսը և նրա եղբայրները	Հիսուսը բարձրանում է Երուսաղեմ տոնի համար և սովորեցնում է այնտեղ
7:1-9	7:1-9	7:1-9	7:1-9	7:1
Հիսուսը Տաղավարահարսց տոնին	Երկնային գիտնականը		Հիսուսը տաղավարների տոնին	7:2-9
7:10-13	7:10-24	7:10-13	7:10-11 7:12-13	7:10-13
7:14-24		7:14-18 7:19-24	7:14-15 7:16-19 7:20 7:21-24	7:14-24
Արդյո՞ք սա Քրիստոսն է:	Կարո՞ղ է սա Քրիստոսը լինել		Արդյո՞ք Նա Մեսիան է	Մարդիկ քննարկում են Մեսիայի ծագումը
7:25-31	7:25-31	7:25-31	7:25-27 7:28-29 7:30-31	7:25-27 7:28-29 7:30
Սպասավորներ ուղարկվեցին Հիսուսին ձերբակալելու	Հիսուսը և կրոնական առաջնորդները		Սպասավորներ ուղարկվեցին Հիսուսին ձերբակալելու	Հիսուսը կանխագուշակում է Իր հեռանալու մոտ լինելը
7:32-36	7:32-36	7:32-36	7:32-34 7:35-36	7:31-34 7:35-36
Կենդանի ջրի գետեր	Սուրբ Հոգու խոստումը		Կենսատու ջրի աղբյուրներ	Կենդանի ջրի խոստումը
7:37-39	7:37-39	7:37-39	7:37-39	7:37-38 7:39
Բաժանումներ մարդկանց մեջ	Ո՞վ է Նա:		Բաժանումներ մարդկանց մեջ	Թարմ հայտնագործություններ Մեսիայի ծագման մասին
7:40-44	7:40-44	7:40-44	7:40-44	7:40-44
Իշխանությունների անհավատությունը	Մերժված իշխանությունների կողմից		Հրեա Իշխանությունների անհավատությունը	
7:45-52	7:45-52	7:45-52	7:45 7:46 7:47-49 7:50-51 7:52	7:45-52

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՑԻՆ ՆԵՐՐՄԲՈՒՆՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆՈՒ 1-52

Ա. 5 և 6 գլուխներում Զատկի տոնն է: 7: 1-ից մինչև 10:21-ը Տաղավարահարաց (7:2):

Բ. Տաղավարահարաց տոնը հիմնականում նշանակում է գոհություն հայտնել հունձքի համար (կոչվում է Բերքահավաքի տոն, հմտ. Ելից 23:16, 34:22): Դա նաև Ելիցի փորձառությունը հիշելու ժամանակն էր (կոչվում է Տաղավարների տոն, տես Ղև. 23:29- 44 և 2 Օր. 16:13-15): Այն տեղի է ունեցել Տիշրի 15-ին, որը համապատասխանում է մեր սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին:

Գ. 7 և 8 գլուխներ ցույց են տալիս հրեաների ստեղծած թշնամանքը Հիսուսի դեմ Շաբաթը չպահելու համար (5:16) և Իրեն ԵՀՈՎԱՅԻ հետ նույնացնելու համար (5:18):

Ուշադրություն դարձրեք, թե քանի անգամ են տեքստերը նշում նրանց փորձելու մասին

1. ձերբակալել Նրան, 7: 30,32,44; 10:39
2. սպանել Նրան, 7: 1,19,25; 8: 37,40 (նաև 11:53)

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:1-9

¹ Եւ սորանից յետոյ Յիսուսը ման էր գալիս Գալիլեայի մեջ. Որովհետեւ չէր կամենում Հրէաստանումը ման գալ, որովհետեւ Հրէաները որոնում էին սպանել նորան: ² Եւ Հրէաների տաղաւարահարաց տօնը մօտիկ էր: ³ Եւ նորա եղբայրներն ասեցին նորան. Այստեղից դուրս ել եւ գնա Հրէաստան, որ քո աշակերտներն էլ տեսնեն քո գործերը, որ գործում ես. ⁴ Որովհետեւ ոչ ով չ'կայ որ թագուն մի բան անէ, եւ ուզէ ճանաչուած լինել. Եթէ դու այդ բաները գործում ես, քո անձը յայտնիր աշխարհքին: ⁵ Որովհետեւ իր եղբայրներն էլ չէին հաւատում նորան: ⁶ Յիսուսն էլ ասեց նորանց. Իմ ժամանակը դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է. ⁷ Աշխարհքը կարող չէ ձեզ ասել. Բայց ինձ ատում է, որ ես նորա համար վկայում եմ, թէ նորա գործերը չար են: ⁸ Դուք գնացեք այն տօնին, եւ դեռ չեմ գնում այն տօնին, որովհետեւ իմ ժամանակը դեռ լրացած չէ: ⁹ Սա որ նորանց ասեց, մնաց Գալիլեայումը:

7:1 «սորանից յետոյ» Սա գրական միջոց է գործողության տեղը փոխելու համար, այլ ոչ թե ժամանակավոր նշում (տես 5: 1, 6: 1, 7: 1; 21: 1):

▪ «Հրէաները որոնում էին սպանել նորան» Հովհաննեսի Ավետարանում «հրեաները» հաճախ ունի չարաբաստիկ ենթատեքստ (հմտ. 1:19; 2:18,20, 5:10,15,16, 6:41,52; 7: 1,11,13,35, 8:22,52,57, 9:18,22; 10:24,31,33, 11:8; 19:7,12; 20:19): Նրանց ատելությունն ու սպանիչ նպատակը արձանագրված է մի քանի անգամ (տես 5:16-18; 7:19,30,44; 8:37,40,59; 10: 31,33,39; 11: 8,53):

7:2 «Հրէաների տաղաւարահարաց տօնը» Սա նաև կոչվում է Վրանների/Տաղավարահարաց տոն (տես Ղև. 23: 34-44; 2 Օր. 16: 13-17), քանի որ հնձի ժամանակ գյուղացիներն ապրում էին փոքր

կացարաններում դաշտերում, ինչը հիշեցնում է հրեաներին իրենց Ելիցի փորձառությունը: Այս տոնի ծեսն ու պատարագը միջավայր է ապահովում Հիսուսի ուսմունքների համար 7: 1-10: 21, ինչպես դա արեց Չասկի տոնը 5-6գլուխներում:

7:3 «նորա եղբայրներն» 2:12-ից հետո սա առաջին հիշատակումն է Հիսուսի ընտանիքի մասին: Ակնհայտ է, որ նրանք չէին հասկանում Նրա դրդապատճառը, մեթոդը կամ նպատակը:

▪ **«Այստեղից դուրս եկ եւ գնա Հրեաստան»** Սա վերաբերվում է ամենամյա ուխտավորների քարավանին (տես Դուկ. 2:41-44), ովքեր հեռացան Գալիլեայից և ճանապարհորդեցին դեպի Երուսաղեմ: Հիշեք, որ Հովհաննեսի Ավետարանը կենտրոնանում է Հիսուսի ծառայության վրա Երուսաղեմում:

7:4 «ճանաչուած լինել» ստորև Տես Հատուկ Թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԱՐՉԱԿՈՒԹՅՈՒՆ/ՔԱԶՈՒԹՅՈՒՆ (PARRESIA)

Այս հունարեն տերմինը «բոլոր» (*pan*) և «խոսք» (*rhēsis*) բաղադրյալ ձևն է: Այս խոսքի ազատությունը կամ համարձակությունը հաճախ ուներ հետևյալ իմաստ՝ համարձակություն ընդդիմությանը կամ մերժման մեջ (հմմտ. Հովհ. 7:13; I Թես. 2: 2):

Հովհաննեսի գրվածքներում (օգտագործվում է 13 անգամ) այն հաճախ նշանակում է հրապարակային հայտարարություն (տես Հովհ. 7:4, նաև Պողոսի գրվածքներում, Կոր. 2:15): Սակայն, երբեմն դա պարզապես նշանակում է «հայտնապես» (տես Հովհ. 10:24; 11:14, 16: 25,29):

Գործք Առաքելոցում Առաքյալները խոսում են Հիսուսի մասին նույն ձևով (համարձակությամբ), ինչպես Հիսուսը խոսեց Հոր և Նրա պլանների և խոստումների մասին (տես Գործք 2:29, 4: 13,29,31; 9: 27-28; 13:46, 14: 3; 18:26, 19: 8; 26:26, 28:31): Պողոսը նաև աղոթք է խնդրում, որ կարողանա համարձակորեն քարոզել ավետարանը (տես Եփես. 6:19; I Թես. 2: 2) և ապրել ավետարանը (տես Փիլ. 1:20):

Պողոսի Քրիստոսի վրա ունեցած վախճանաբանական հույսը տվեց նրան համարձակություն և վստահություն քարոզելու ավետարանը ներկա չար ժամանակներում (հմմտ. II Կորնթ. 3: 11-12): Նա նաև ուներ վստահություն, որ Հիսուսի հետևորդները գործելու են համապատասխանաբար (տես II Կորնթ. 7: 4):

Այս տերմինն ունի ևս մեկ ասպեկտ: Եբրայեցիսն օգտագործում է մի յուրահատուկ իմաստով համարձակություն Քրիստոսում՝ մոտենալու Աստծուն և խոսելու Նրա հետ (տես Եբր. 3: 6, 4:16; 10: 19,35): Հավատացյալները լիովին ընդունված են և ողջունելի Հոր հետ մտերմիկ հարաբերություն մեջ Որդու միջոցով:

Նոր Կտակարանում այն օգտագործվում է մի քանի առումներով

1. վստահություն, խիզախություն կամ հավաստիացում կապված
 - ա. մարդկանց հետ (տես Գործք 2:29, 4: 13,31; II Կորնթ. 3:12; Եփես. 6:19)
 - բ. Աստծո հետ (տես I Հովհ. 2:28; 3:21; 4:12; 5:14; Եբր. 3: 6, 4:16; 10:19)
2. խոսել բացահայտորեն, անկեղծորեն կամ միանշանակ (տես Մարկ 8:32; Հովհ. 7: 4,13; 10:24; 11:14; 16:25; Գործք 28:31)
3. խոսել հրապարակայնորեն (տես Հովհ. 7:26; 11:54; 18:20)
4. առնչվող ձևը (*parrhēsiazorai*) օգտագործվում է դժվարին պայմաններում համարձակորեն քարոզելու համար (տես Գործք 18:26, 19: 8; Եփ. 6:20; I Թես. 2: 2)

Այս կոնտեքստում դա վերաբերվում է վախճանաբանական վստահությանը: Հավատացյալները չեն վախենում Քրիստոսի Երկրորդ Գալուստից, նրանք ողջունում են այն վստահ ոգևորությամբ, քանի որ նրանք մնում են Քրիստոսի մեջ և ապրում են Քրիստոսանման կյանքով:

▪ **«Եթե»** Մա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է, որ ճշմարիտ է հեղինակային տեսանկյունից:

▪ **«քո անձը յայտնիր աշխարհքին»** Հիսուսը վերցրեց նրանց օգտագործած «աշխարհ» տերմինը հ. 4 և այն մեկնաբանեց հ.7: Աշխարհը չէր ընդունում և համակրում Նրան, այլ թշնամական (տես 15:18-19; 17:14; I Հովհ. 3:13), քանի որ Նա բացահայտեց նրանց ապստամբությունն ու մեղքը (հմմտ. 3: 19-20):

Հիսուսի եղբայրները ուզում էին, որ Հիսուսն Իրեն բացահայտի (այսինքն, հրաշքներ), բայց Հիսուսի ճանապարհը տարբերվում էր նրանցից (խաչը): Այստեղ է, որ Ես. 55: 8-11 մարգարեությունը հայտնվում է հստակ ուշադրության կենտրոնում:

7:5 «Որովհետև իր եղբայրներն էլ չէին հաւատում նորան» Մա ևս մեկ խմբագրական մեկնաբանություն է հեղինակի կողմից: Պետք է, որ շատ դժվար լինեք Հիսուսին որպես Մեսիայի ընդունելը, երբ մեծացել են նույն տանը (տես Մարկ. 3: 20-21): Հիսուսը հոգ էր տանում իր եղբայրների ու քույրերի համար: Հարությունից հետո Նրա հայտնվելու պատճառներից մեկն էլ Իրեն նրանց հայտնելն էր: Նրանք հավատացին (տես Գործք 1:14): Հակոբոսը դարձավ Երուսաղեմի եկեղեցու առաջնորդը: Եվ երկուսն էլ թե Հակոբոսը և թե Հուդան գրքեր են գրել, որոնք ներառված են ՆԿ կանոնում:

7:6 «Իմ ժամանակը դեռ հասած չէ» «Ժամանակ» բառը (*kairos*) հայտնվում է միայն այստեղ (երկու անգամ) և հ 8 Հովհաննեսի Ավետարանում և նամակներում: BAGD տալիս է երեք հիմնական ենթատեքստ.

1. - ընդունելի ժամանակ (այսինքն, II Կորնթ. 6: 2)
- մի պատեհ ժամանակ (այսինքն, Ղուկաս 4:13)
- նշանակված ժամանակ (այսինքն, Մարկ 13:33, Գործք 3:20; I Պետ. 1:11):
2. պատշաճ կամ բարենպաստ ժամանակ
- պատշաճ ժամանակ (այսինքն, Մատթ. 24:45; Ղուկաս 1:20)
- ֆիքսված ժամանակ (այսինքն, Հովհ. 7: 8; II Տիմոթ. 4: 6)
3. վախճանաբանական ժամանակ (այսինքն, Մատթ. 8: 9; Ղուկ. 21: 8; Հռոմ. 13:11, I Թեա. 5: 1; II Թեա. 2: 6)

2 և 3 համարները ունեն իմաստային համընկնում:

Հիսուսը հասկացել էր Իր առաքելությունը (հմմտ. 12:23, 13:1; 17:1-5): Այս ավետարանական դեպքերի համար կար աստվածային ժամանակացույց, որը պետք է բացահայտվեր (տես Ղուկ. 22:22, 7:30, 8:20, Գործք 2:23; 3:18; 4:28):

7:7 «Աշխարհքը» Տես Հատուկ Թեմա: *Kosmos* 14:17.

7:8

- NASB** “Դուք գնացեք տոնին, Ես չեմ գալիս տոնին”
NKJV “Դուք գնացեք այն տոնին, ես դեռ չեմ գնում այն տոնին”
NRSV, NJB “Դուք գնացեք այս տոնին: Ես չեմ գալիս այդ տոնին”
TEV “Դուք գնացեք տոնին: Ես չեմ գալիս այդ տոնին”

Մի քանի հին հունական ձեռագրեր (Տ, D և K) չունեն «դեռ» ՄԱԿԲԱՅԸ: Թվում է եղել է դեռ վաղ ընդօրինակված ձեռագիր, որը փորձում է հեռացնել ակնհայտ հակասությունը հհ. 8 & 10 միջև: ՄԱԿԲԱՅԸ ներառված է MSS P⁶⁶, P⁷⁵, B, L, T և W (NKJV, 20-րդ դարի Նոր Կտակարան, NIV):

Այս հակիրճ միտքը կարելի է հասկանալ այսպես

1. Ես չեմ գալիս ձեզ հետ (ոչ էլ ձեր նպատակների համար)
2. Ես գնում եմ ուր-որյա տոնի կեսին (բացահայտելու տոնական սիմվոլների միջոցով)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:10-13

¹⁰ Երբոր նորա եղբայրները գնացին, այն ժամանակ ինքն էլ գնաց այն տունին, ոչ թե յայտնի, այլ իբր գաղտնաբար:¹¹ Եւ Հրեաները որոնում էին նորան այն տունումը եւ ասում, Ո՞ր տեղ է նա:¹² Եւ ժողովուրդների մեջ շատ զրոյց կար նորա համար. ոմանք ասում էին թէ Բարի մարդ է. Ուրիշներն էլ ասում էին. Ոչ, այլ ժողովրդին մոլորեցնում է:¹³ Սակայն ոչ ով համարձակ չէր խօսում նորա վերայ՝ Հրեաների վախի համար:

7:11 «Հրեաները» Այս գլխում կան չորս առանձին խմբեր, որոնք համագործակցում են Հիսուսի հետ:

1. Նրա եղբայրները
2. «հրեաները» - կրոնական առաջնորդները
3. «ամբոխը» - ուխտավորները, որոնք եկել էին Տաղավարահարաց տունին
4. «Երուսաղեմի ժողովուրդը», - որոնք տեղացիներ էին, ովքեր գիտեին աստիճանին ու

Հիսուսին սպանելու նրանց ծրագրերը:

7:12 «Եւ ժողովուրդների մեջ շատ զրոյց կար նորա համար» Սա բնորոշ է, թե ինչ է ավետարանը անում ամեն ամբոխի հետ: Այն ցույց է տալիս մարդկության մեջ առկա փոխըմբռնման տարբեր հոգևոր ունակություններն ու մակարդակները (տես 7: 40-44):

- **«ժողովրդին մոլորեցնում է»** *planaō* ԲԱՅԸ օգտագործվում է
 1. կեղծ ուսուցիչներ (այսինքն, Մատթ. 24:11, II Տիմոթ. 3:13; I Հովհ. 1: 8; 2:66; 3: 7)
 2. կեղծ մեսիաններ (այսինքն, Մատթ. 24: 4-5,24; Հովհաննեսի Ավետարանում հրեաները այսպես էին կարծում Հիսուս մասին (տես Հովհ. 7: 12,47; Մատթ. 27:63):
 3. իրենք իրենց խաբող մարդիկ (տես I Կորնթ. 3:18; I Հովհ. 1: 8) կամ
 4. խաբվածներ (տես I Կորնթ. 6: 9; 15:33; Գաղ. 6: 7; Հակ. 1:16

Բառը օգտագործվում էր մոլորակների համար, որոնք չէին հետևում համաստեղությունների կանոնավոր ուղեծրերին: Նրանք կոչվում էին «թափառողներ»:

7:13 «Հրեաների» Այս ամբողջ բազմությունը հրեաներ էին: Սա պարզ ցույց է տալիս Հովհաննեսի այս տերմինի մասնագիտացված օգտագործումը՝ անդրադառնալով կրոնական առաջնորդներին Երուսաղեմում: Տես ծանուցում 7: 1:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:14-18

¹⁴ Եւ երբոր տունն արդէն կէս եղաւ, Յիսուսը վեր ելաւ տաճարը եւ սովորեցնում էր: ¹⁵ Եւ Հրեաները զարմանում էին եւ ասում. Սա ի՞նչպէս գիտէ գիրքերը առանց սովորած լինելու: ¹⁶ Յիսուսը պատասխանեց նորանց եւ ասեց. Իմ վարդապետութիւնն իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է: ¹⁷ Եթէ մէկը կամենում է նորա կամքն անել, նա կ'իմանայ այս վարդապետութեան համար, թէ արդեօք Աստուածանի՞ց է, կամ եթէ ես իմ անձիցն եմ խօսում: ¹⁸ Իր անձիցը խօսողը, իր անձի փառքն է որոնում. Բայց նա որ իրան ուղարկողի փառքն է որոնում, նա ճշմարիտ է եւ անիրաւութիւն չ'կայ նորանում:

7:14 «Եւ երբոր տունն արդէն կէս եղաւ» Ճշգրիտ պատճառը, թե ինչու էր Հիսուսը սպասում մինչև այս պահը անորոշ է, բայց կարելի էր ենթադրել, որ դա ժամանակ է տվել ուխտավորներին և քաղաքաբնակներին՝ քննարկելու Իր և Իր ծառայության մասին: Այն նաև ժամանակ է տվել հրեա առաջնորդներին բացահայտ բացահայտելու իրենց թշնամանքը (տես հ. 13):

- **«սովորեցնում էր»** Հիսուսի խոսքը բնութագրվում է
 1. ուսուցանող, Մատթ. 4:23; 5: 2,19; 7:29, և այլն Հովհ. 6:59; 7: 14,28,35; 8: 20,28

2. քարոզող, Ղուկաս 4:18; 7:22; 9: 6; 20: 1

Դրանք կարծես օգտագործվում են հոմանիշորեն այն է, Հիսուսը սովորեցնում է Աստծո ճշմարտությունները Նրա ստեղծած մարդկությանը: Հայտնությունը միշտ կոչված էր տեղեկացնելու և բարեփոխելու: Այն պահանջել է որոշում կայացնել ապրելակերպի առաջնահերթությունների փոփոխության ուղեկցությամբ: Ճշմարտությունը փոխում է ամեն ինչ:

7:15 «Մա ի՞նչպես գիտե գիրքերը առանց սովորած լինելու» Մա պարզապես նշանակում է, որ Նա չի հաճախել պաշտոնական ռաբունական դպրոցներից որևէ մեկը, ոչ էլ եղել է նշված ռաբբիներից մեկի աշակերտը: «Այս մարդը կամ սա» արտահայտության օգտագործումը ունի անհարգալից իմաստ (տես 18: 17,29):

Հիսուսի ուսմունքը հաճախ զարմացնում է իր ունկնդիրներին՝ (տես Մարկ. 1: 21-22, Ղուկաս 4:22) (1) բովանդակության և (2) ձևի պատճառով: Ռաբբիները միմյանց էին մեջբերում անում; Հիսուսը՝ Աստծուն:

7:16 Հիսուսը դարձյալ ուշադրություն հրավիրեց ոչ միայն Իր հնազանությունը (տես ծանուցում 5:19) Հոր հանդեպ, այլ նաև Իր ուրույն իմացությունը Հոր մասին: Նրանք ունեին երկրային ուսուցիչներ; Նա ուներ երկնային Վարդապետ:

7:17 «Եթե» Մա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ կամ հնարավոր գործողություն: Մա է ավետարանի համընդհանուր առաջարկի (տես 1:12; 3:16) և Աստծո ինքնիշխանության պարադոքսը (տես 6: 44,65): Հոգին պետք է բացի սիրտը (տես 16: 8-13):

7:18 Հիսուսը պնդում է Իր սեփական յուրահատկությունը, ի տարբերություն ընկած մարդկությանը (1). Նա չի փնտրում Իր իսկ փառքը, (2) Նա փնտրում է Հոր փառքը, (3) Նա ճշմարիտ է և (4) Նա անմեղ է:

- **«իրան ուղարկողի փառքն»** Տես ծանուցում 1:14.
- **«անիրաւութիւն չ'կայ նորանում»** Հիսուսը կարող էր մահանալ մեր փոխարեն, քանի որ Նա պետք չունէր մեռնելու Իր մեղքերի համար (II Կորնթ. 5:21): Հիսուսի անմեղությունը կարևոր աստվածաբանական թեմա է: Այս թեման արտահայտվում է հաճախ ու տարբեր ձևերով:
 1. Ղուկաս 23:41
 2. Հովհաննես 6:69; 7:18; 8:46; 14:30
 3. Փիլիպ. 2: 7-8
 4. Եբր. 4.15; 7.26; 9:14
 5. I Պետ. 1:19; 2:22 (Եսայի 53: 9)
 6. I Հովհաննես 2:17; 3: 5,7

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:19-24
¹⁹ Չէ՞ որ Մովսէսը տուաւ ձեզ օրէնքը, եւ ձեզանից ոչ ով չէ կատարում օրէնքը: ²⁰ Ի՞նչու էք ուզում ինձ սպանել. Ժողովուրդը պատասխանեց եւ ասեց. Դէւ ունիս. Ո՞վ է ուզում քեզ սպանել: ²¹ Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորանց. Մի գործ գործեցի, եւ ամենքդ զարմացել էք: ²² Նորա համար Մովսէսը ձեզ տուաւ թլփատութիւնը, (ոչ թէ Մովսէսիցն է, այլ հայրերիցը.) եւ շաբաթ օրը մարդ էք թլփատում: ²³ Եթէ մարդ շաբաթ օրումը թլփատութիւն է ընդունում, որ Մովսէսի օրէնքը չ'քանդուի, ինձ բարկանում էք, որ ես ամբողջ մարդ բժշկեցի շաբաթ օրը: ²⁴ Աչքի երեսութով մի դատէք, այլ ուղիղ դատաստան արէք:

7:19 Քերականական կառուցվածքը ակնկալում է «այո» պատասխան:

▪ «Եւ ձեզանից ոչ ով չէ կատարում օրէնքը» Սա պետք որ ցնցող հայտարարությունը լիներ այդ հրեաների համար, որոնք եկել էին մասնակցելու տոնին Երուսաղեմում:

Մովսեսի Օրենքը հստակ արգելում է կանխամտածված սպանությունը, սակայն դա հենց այն էր, ինչ պլանավորում էին առաջնորդները: Տեղի մարդիկ զիտեին սա, բայց չէին կամենում դադարեցնել իրենց ծրագրերը կամ նույնիսկ դժգոհել:

▪ «Ի՞նչու էք ուզում ինձ սպանել» 20-րդ համարի հարցը չի գալիս կրոնական առաջնորդներից, այլ ուխտավորների ամբոխից, ովքեր ոչինչ չգիտեին Նրան սպանելու դավադրության մասին: Ավելի ուշ, հ. 25, Երուսաղեմի ժողովուրդը իմացավ Հիսուսին սպանելու դավադրության մասին:

Կրոնական առաջնորդները նաև մեղադրում էին Հիսուսին դիվահար լինելու մեջ, որպեսզի բացատրեին Նրա իշխանությունը և ներըմբռնումը (հմմտ Մատթ. 9:34, 11:18, 12:24, Մարկոս 3:22, 30; Հովհ. 8:48 52; 10 : 20 21):

7:20 «Դեւ ունիս» Ակնհայտ է, որ բոլոր նրանք, ովքեր հանդիպել էին Հիսուսին, զիտեին որ Նա ուներ հոգևոր զորությունը: Հարց էր, որտեղից էր գալիս այդ զորությունը: Հրեա առաջնորդները չէին կարող ուրանալ Հիսուսի «նշանները/հրաշքները», ուստի նրանք դա վերագրում էին Սատանայի և դիվական զորությանը (հմմտ. 8: 48-49,52, 10:20):

Այս կոնտեքստում Տաղավարահարաց տոնին եկած ուխտավորների ամբոխը օգտագործում է նույն արտահայտությունը, բայց մի այլ իմաստով: Նրանք պնդում են, որ Հիսուսը գործում է ոչ ուսցիոնալ, պարանոյիդ ձևով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԴԻՎԱԿԱՆ (ԱՆՄԱՔՈՒՐ ՈԳԻ)

Ա. Հնագույն ժողովուրդները հեթանոսներ էին: Նրանք մարդու հատկությունները վերագրում էին բնության, կենդանիների և բնական օբյեկտների ուժերին: Կյանքը բացատրվում էր այդ հոգևոր անձանց և մարդկության միջև եղած փոխգործակցության միջոցով:

Բ. Այս մարմնացումը դարձավ բազմաստվածություն/polytheism (շատ աստվածներ): Մովորաբար դիվայինը (*genii*) փոքր կամ ցածր աստվածներ էին կամ կիսաստվածներ/demigods (բարի կամ չար), որոնք ազդում էին մարդկային կյանքերի վրա:

1. Միջագետք, քառս և հակամարտություն
2. Եգիպտոս, դասակարգ և գործողություն
3. Քանան, տես W. F. Albright's *Archaeology and the Religion of Israel*, հինգերորդ հրատարակչություն, էջ 67-92

Գ. Հին Կտակարանը չի հաստատում կամ զարգացնում փոքր աստվածների, հրեշտակների կամ դևերի թեման, հավանաբար, այն պատճառով, որ այնտեղ միաստվածության գաղափարը խիստ ընդունված էր (տես Ելից 8:10; 9:14; 15:11; Բ Օրին. 4:35 , 39; 6: 4, 33:26; Սաղ. 35:10, 71:19, 86: 6; Ես. 46: 9; Երեմ. 10: 6-7; Միք. 7:18): Սա նշում է հեթանոս ազգերի կեղծ աստվածներին (*Shedim*, տես 2 Օր. 32:17; Սաղ. 106: 37) և նշում դրանցից մի քանիսի անունները:

1. *Se'im* (այծամարդ, սատիր կամ մագոտ դևեր/այծեր, տես Ղևտ. 17: 7, II Մ'նաց. 11:15)
2. *Lilith* /Լիլիթ (իգական, գայթակղող, հրապուրող դև, տես Ես. 34:14)
3. *Mavet* (եբրայերեն տերմին մահվան համար օգտագործվում էր քանանական անդրշիրմյան աստծո համար, *Mot*, տես Ես. 28: 15,18; Երեմ. 9:21; ու հնարավոր է Բ Օրին. 28:22):
4. *Resheph* (ժանտախտ, պատուհաս, տես 2 Օր. 33:29; Սաղ. 78:48, Ամբ. 3: 5)
5. *Dever* (ժանտախտ, համաճարակ, տես Սաղ. 91: 5-6; Ամբ. 3: 5)

6. *Az'azel* (անունը անորոշ է, բայց հնարավոր է, անապատի դև կամ լինի տեղի անուն, տես, Ղևտ. 16:8, 10, 26)

(Այս օրինակները վերցված են *Encyclopaedia Judaica*, հատոր 5, էջ 1523)

Սակայն, չկա դուալիզմ կամ հրեշտակային անկախությունը ԵՀՈՎԱՅԻՑ Հին Կտակարանում: Սատանան ԵՀՈՎԱՅԻ ծառան է (տես Հոբ 1-3; Զաքարիա 3), ոչ թե անկախ, ինքնուրույն թշնամի (տես A. B. Davidson, *A Theology of the Old Testament*, էջ 300- 306):

Դ. Հուդայականությունը զարգացավ բաբելոնյան գերության ընթացքում (586-538 մ.թ.ա): Սրա վրա աստվածաբանորեն ազդել է պարսից զրադաշտության անձնավորված դուալիզմը, բարի, բարձր աստուածը կոչվում էր *Mazda* կամ *Ormazd* իսկ չար հակառակորդը՝ *Ahriman*: Դա թույլ տվեց հետգերության հուդայականության մեջ անձնավորված դուալիզմ ԵՀՈՎԱՅԻ և Իր հրեշտակները և սատանայի և նրա հրեշտակների կամ դևերի միջև:

Անձնավորված չարը հուդայական աստվածաբանության մեջ բացատրվում է և լավ փաստագրված է Alfred Edersheim's *The Life and Times of Jesus the Messiah*, հատ. 2 հավելված XIII (էջ 749-863) և XVI (էջ 770-776): Հուդաիզմ անձնավորում է չարը երեք ձևերով

1. Սատանա կամ Sammael
2. չար մտադրություն (*yetzer hara*) մարդկության մեջ
3. Մահվան հրեշտակը

Էդերշեյմ/Edersheim բնութագրում է դրանք որպես (1) Մեղադրող, (2) Փորձիչ և (3) Պատժող (հատոր 2, էջ 756): Կա մի նշանավորված աստվածաբանական տարբերություն հետ-ելիցի հուդայականության և չարի նորկտակարանյան ներկայացման և բացատրության միջև:

Ե. ՆԿ, հատկապես Ավետարանները, պնդում են չար հոգևոր էակների գոյությունը և ընդդիմությունը մարդկության և ԵՀՈՎԱՅԻ դեմ (հուդայականության մեջ սատանան մարդու թշնամին էր, բայց ոչ Աստծո): Նրանք հակառակ են Աստծո կամքին, կանոնին և թագավորությանը:

Հիսուսը հանդիմանեց և արտաքսեց այդ դիվային էակներին, նաև կոչելով (1) անմաքուր հոգիներ (տես Ղուկաս 4:36; 6:18) կամ (2) չար հոգիներ (տես Ղուկաս 7:21; 8: 2) մարդ արարածներից: Հիսուսը հստակ տարբերակեց հիվանդության (ֆիզիկական և մտավոր) և դիվականի միջև: Նա ցույց տվեց Իր ուժը և հոգևոր խորաթափանցությունը՝ ճանաչելով և քշելով այդ չար հոգիներին: Նրանք հաճախ ճանաչում էին Նրան և փորձում էին դիմել Նրան, բայց Հիսուսը մերժեց իրենց վկայությունը, պահանջելով նրանցից լռել և վռնդում էր նրանց: Պիղծ հոգիներին սանձելը նշան է սատանայի արքայության պարտությանը:

Զարմանալիորեն տեղեկատվության պակաս կա ՆԿ առաքյալների նամակներում այս թեմայի մասին: Դևեր հանելը երբեք չի նշվում որպես հոգևոր պարզ, ոչ էլ մեթոդաբանություն կամ ընթացակարգը է տված ապագա ծառայող կամ հավատացյալ սերունդների համար:

Զ. Չարը իրական է. չարը անձնական է; չարը ներկա է: Ոչ նրա ծագումը և ոչ էլ նրա նպատակը չի բացահայտվել: Աստվածաշունչը պնդում է նրա իրականությունը և ազդեցիկորեն հակառակվում է նրա ազդեցությանը: Իրականում չկա ոչ մի վերջնական դուալիզմ: Աստված է գերագույն հսկողություն իրականացնողը; չարը պարտված է և դատապարտված; և հեռացվելու է արարչագործությունից:

Է. Աստծու ժողովուրդը պետք է դիմադրի չարին (տես Հակ. 4:7): Նրանք չեն կարող կառավարվել դրանով (տես I Հովհ. 5:18), բայց նրանք կարող են գայթակղվել և նրանց վկայությունն ու ազդեցություն կարող է վնասվել (տես Եփես. 6: 10-18): Չարը քրիստոնյայի աշխարհընկալման բացահայտված մասն է: Ժամանակակից քրիստոնյաները իրավունք չունեն վերանայել չարը (ապ-առասպելացնել Ռուդոլֆ Baltmann) ապ-անձնավորել չարը (սոցիալական

կառույցները Paul Tillich), ոչ էլ փորձել բացատրել այն ամբողջությամբ հոգեբանական առումով (Sigmund Freud): Նրա ազդեցությունը համատարած է, բայց պարտված: Հավատացյալները պետք է քայլել Քրիստոսի հաղթանակով:

7:22

NASB, NKJV “(ոչ թե Մովսեսից է, այլ հայրերից)”

NRSV “(դա, իհարկե, ոչ թե Մովսեսից է, այլ նախահայրերից)”

TEV “(թեև Մովսեսը չէ, այլ ձեր նախնիները, ովքեր սկսեցին այն)”

NJB “—ոչ թե որ սկսեց նրանից, այն հետ է գնում դեպի նախահայրեր—”

Թլփատության ծիսակարգը չի սկսվում Մովսեսի օրենքով (տես Ելից 12:48, Ղևտ. 12: 3), սակայն տրվեցավ Աբրահամին որպես ԵՀՈՎԱՅԻ հետ հատուկ ուխտի նշան (տես Ծննդ 7: 9 -14, 21: 4; 34:22):

▪ «Եւ շաբաթ օրը մարդ էք թլփատում» Հիսուսի փաստարկի էությունն այն էր, որ նրանք պատրաստ էին մի կողմ դնել իրենց Շաբաթի կանոնները, այնպես որ մի երեխա կարողանար թլփատվել (տես *Shab* 132ա, *Sabh.* 18: 3; 19: 1-6), բայց պատրաստ չէին մի կողմ դնել իրենց Շաբաթի կանոնները, որ մարդը կարողանար ամբողջական լինել: Հատկանշական է գիտակցել, որ Հիսուսն օգտագործում էր տրամաբանությունը և ռաբբունական հուղայականության մտածելակերպը ամբողջ այս բաժնում:

7:23 «Եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է որպես ճշմարտություն գրողի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար:

▪ «ինձ բարկան՞ում էք, որ ես ամբողջ մարդ բժշկեցի շաբաթ օրը» Սա վերաբերվում է կամ 5:1-9-ում արձանագրված Հիսուսի բժշկությանը կամ էլ չգրված բժշկությանը տոնի ժամանակ:

Հունարեն «բարկացած» (*cholaō*) բառը հազվագյուտ բառ է, որը հանդիպում է միայն այստեղ ՆԿ: Այն անհրաժեշտության դեպքում կարելի է գտնել բոլոր հունական գրականության մեջ (BAGD, էջ 883 և Մ.Մ., էջ 689): Այն կապված է «լեղի» բառի հետ (*cholē*, տես Մատթ. 27:34): Պատճառը, թե ինչու է Հիսուսն օգտագործում այս բառը, (այսինքն, լրացուցիչ իմաստով) անորոշ է: Այն կարող է նշանակել «աստվածային գայրույթ» այն իմաստով, որ նրանք մտածում էին թե պաշտպանում են Աստծո կամքը և Աստծո օրենքները, որը Հիսուսը խախտում էր:

7:24 «Աչքի երեւութով մի դատեք, այլ ուղիղ դատաստան արեք» Սա ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է բացասական մասնիկով, ինչը նշանակում է դադարեցնել գործընթացում գտնվող գործողությունը: Դրան հաջորդում է ԱՕՐԻՍ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, որը ենթադրում է հրատապություն: Սա կարող է լինել ակնարկ Ես. 11: 3:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:25-31

²⁵ Արդ Երուսաղեմացիներից ոմանք ասում էին. Չէ՞ որ սա նա է, որին ուզում են սպանել: ²⁶ Եւ անհա համարձակ խօսում է, եւ ոչինչ չեն ասում դորան. մի գուցէ իրաւ իշխաններն էլ իմացան, որ սա է ճշմարտապէս Քրիստոսը: ²⁷ Բայց սորան գիտենք, թէ որ տեղից է. Իսկ Քրիստոսն երբոր գայ, ոչ որ չի գիտենալ թէ որ տեղից է: ²⁸ Յիսուսն էլ՝ սովորեցնելիս աղաղակեց տաճարումն ասելով՝ Ինձ էլ գիտեք եւ գիտեք էլ թէ ինչ տեղից եմ. Եւ ես իմ անձիցը չեմ եկել. Այլ ճշմարիտ է ինձ ուղարկողը որին դուք չ'գիտեք: ²⁹ Իսկ ես գիտեմ նորան, որովհետեւ նորանից եմ, եւ նա ուղարկեց ինձ: ³⁰ Եւ ուզում էին բռնել նորան. Բայց ոչ ով ձեռք չ'ձգեց նորա վերայ. Որովհետեւ նորա ժամը դեռ չէր հասել: ³¹ Եւ ժողովրդից շատերը հաւատացին նորան եւ ասում էին թէ երբոր Քրիստոս գայ, արդե՞օք դորանցից ասելի նշաններ կ'անէ, քան որ սա արաւ:

7:25 «Զէ՞ որ սա նա է, որին ուզում են սպանել» Այս հարցի քերականական ձևը ակնկալում է «այո» պատասխան (տես 5: 17; 7: 19): Սա մի շարք հարցերից առաջինն է մինչև հ. 36):

7:26

NASB, REV,

NET “Նա խոսում է հրապարակավ”

NKJV “Նա խոսում է համարձակ”

NRSV, NJB “նա խոսում է հայտնի”

Տես Հատուկ Թեմա: Համարձակություն (*parrhēsia*) 7:4

▪

NASB “Իշխանները իրականում չիմացան, որ դա Քրիստոսն է, այնպես չէ”

NKJV “Արդյոք իշխանները գիտեն, որ դա իսկապես Քրիստոսն է”

NRSV “Կարող է արդյոք իշխանությունները իսկապես գիտեն, որ սա Մեսիան է”

TEV “Կարող են արդյոք նրանք իմանալ, որ նա Մեսիան է”

NJB “Կարող է արդյոք իշխանությունները ճանաչել են, որ նա Քրիստոսն է”

Այս քերականական կառուցվածքը ակնկալում է «ոչ» պատասխան: Մակայն, այն արտահայտում է հնարավորություն (տես 1:31; 4:29):

7:27 «սորան գիտենք, թե որ տեղից է. Իսկ Քրիստոսն երբոր գայ, ոչ ոք չի գիտենալ թե որ տեղից է»
Սա վերաբերում է ռաբունական Մեսիական ավանդույթին, հիմնված Մաթ. 3: 1, որ Մեսիան հանկարծակի հայտնվելու է տաճարում: Սա գտնվում է I Ենոք 48: 6 և IV Եզրաս 13: 51-52:

7:28 Այս համարում Հիսուսը երկու միտք է արտահայտում,

1. որ Աստված ուղարկեց Իրեն (հմտ. 3: 17,34, 5: 36,38, 6:29, 7:29, 8:42, 10:36, 11:42, 17: 3,18,21,23 , 25; 20:21)

2. որ նրանք չեն ճանաչում Աստծուն (տես 5: 37,42; 8: 19,27,54-55, 16: 3)

Հովհաննեսն արձանագրում է, որ Հիսուսը «աղաղակեց» (տես 7:37; 12:44; Մատթ. 8:29): Հիսուսը բարձրացրեց իր ձայնը, որ լսվի: Ինչ-որ իմաստով, սա գործում է գրական իմաստով ինչպես Հիսուսն սկզբում օգտագործում է «Ամեն» կամ «Ճշմարիտ, ճշմարիտ»: Նա ուզում էր ընդգծել այդ հեզնական արտահայտությունները: Համար 29-ը ցույց է տալիս խնդիրը: Նրանք կարծում են, թե Նա Գալիլեայից է (տես հ. 41), բայց իրականում, Նա երկնքից է:

▪ **«Ճշմարիտ է ինձ ուղարկողը»** Հայրը ճշմարիտ է (տես 3:33; 8:26; I Հովհ. 5:20) և այնպես էլ Որդին (տես 7:18; 8:16): Տես Հատուկ Թեմա 6:55.

7:29 «ես գիտեմ նորան, որովհետև նորանից եմ, եւ նա ուղարկեց ինձ» Սա ևս մեկ ուղղահայաց դուալիզմի օրինակ է Հովհաննեսի Ավետարանում: Այս արտահայտությունները համարվում էին հայհոյանք հրեա առաջնորդների կողմից և հաստատում էին Հիսուսին սպանելու անհրաժեշտությունը: Տես Հատուկ Թեմա: Ուղարկել (*Apostellō*) 5:24:

7:30 «ուզում էին բռնել նորան» Սա ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ ԲԱՅ է, որը ենթադրում է (1) նրանք սկսեցին ջանք գործադրել ձերբակալելու Նրան, կամ (2) նրանք փորձեցին կրկին ու կրկին ձերբակալել Նրան, բայց նրանք չէին ուզում խոռվություն առաջացնել ուխտավորների շրջանում, ովքեր հավատում էին Նրան, որ Մեսիան է:

▪ **«Որովհետև նորա ժամը դեռ չէր հասել»** Սա հերթական մարգարեական իդիոմա է, որը հաստատում է աստվածային ժամանակացույցը (տես 2: 4, 7:6,30; 8:20, 12:23,27; 13:1; 17: 1):

7:31 «Եւ ժողովրդից շատերը հաւատացին նորան» Դա ճշմարիտ հավատք էր Հիսուսի հանդէպ, չնայած որ այն լի էր սխալ պատկերացումներով՝ Իր Մեսիական առաջադրանքի մասին: Ոչ ոք չունի «կատարյալ» հավատք (տես Նոյը, Աբրահամը, Մովսէսը, Դավիթը, Տասներկուսը): Տես Հատուկ Թեմա 2:23.

Այս միշտ տեղի է ունենում այն ժամանակ, երբ ավետարանն է ներկայացվում: Ոմանք հավատում են, որոշները կասկածում, իսկ ոմանք էլ բարկանում: Այստեղ է առեղծվածի խաչմերուկը

1. աստվածային ընտրություն
2. մարդու մեղավորություն

Այստեղ խորհուրդ կա է: Ես միշտ ցնցված եմ տեսնելով անհավատություն այսքան լույսի ներկայության մեջ: Սա, թերևս, Հիսուսի խոսքերի սկիզբն է՝ ընտանիքի անդամների միմյանց դեմ լինելը: Ոմանց ավետարանը բերում է խաղաղություն իսկ որոշներին հակամարտություն:

▪ **«Երբոր Քրիստոս գայ, արդեօք դորանցից աւելի նշաններ կ'անէ, քան որ սա արաս»** Հունարեն քերականական ձևը ակնկալում է «ոչ» պատասխան:

A Theology of the New Testament, George E. Ladd գրքում կա հետաքրքիր մեկնաբանություն «նշաններ»-ի օգտագործման մասին՝ խրախուսելու Հիսուսին հավատալու համար:

«Նշաններ հավատք հարաբերության հարցը հեշտ չէ, քանի որ դրանք կարծես նայում են երկու տարբեր ուղղություններով: Երբեմն, նշանները նրա համար են, որ առաջնորդեն մարդկանց Հիսուսին հավատալու (2:23 6:14; 7:31; 10:42): Իսկ մյուս կողմից, կային մարդիկ, ովքեր տեսնում էին այդ նշանները և չէին հավատում (6:27; 11:47, 12:37): Բացի այդ, առիթի դեպքում Հիսուսը հանդիմանում է հրեաներին, քանի որ նրանք չէին հավատում, քանի դեռ չէին տեսնում նշաններ (4:48; 6:30): Այս հարցի պատասխանը պետք է գտնել նշանների և հավատքի մի տեսակ լարվածության մեջ: Այն պահանջում է հավատք ճանաչելու նշանների ճշմարիտ իմաստը և դրանց վկայությունը Հիսուսի մասին, նրանց համար, ովքեր որ չեն հավատում, նշանները պարզապես անիմաստ հանճարներ են: Նրանք, ովքեր արձագանքում են հավատքին, նշանները հավատքը հաստատող և խորացնող միջոցներ են: Հասկանալի է, որ Հիսուսի նշանները նախատեսված չեն հավատք պարտադրել համար: Սակայն, մյուս կողմից, Հիսուսի գործերը բավարար վկայություն են նրանց, ովքեր կարող են տեսնել, թե ինչ է կատարվում իր առաքելության մեջ: Հիսուսի գործերը կծառայեն որպես դատապարտման և կույր մարդկանց իրենց մեղավորության մեջ հաստատման միջոց » (Էջ 274):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:32-36
³² Եւ Փարիսեցիները լսեցին ժողովրդից, որ այդ բաները տրտնջում էին նորա համար. Եւ Փարիսեցիները եւ քահանայապետներն սպասաւորներ ուղարկեցին, որ բռնեն նորան:³³ Յիսուսն էլ ասեց նորանց. Դեռ մի քիչ ժամանակ ձեզ հետ եմ, եւ գնում եմ ինձ ուղարկողի մօտ:³⁴ Ինձ կ'որոնէք եւ չէք գտնիլ, եւ որտեղ որ ես եմ, դուք չէք կարող գալ:³⁵ Հրեաներն էլ իրար ասեցին. Դա ո՞րտեղ է գնալու, որ մենք չ'գտնենք դորան. Արդեօք Հելլենացիների ցրուած ժողովուրդների մօտն է գնալու եւ Հելլենացիներին է սովորեցնելու:³⁶ Ի՞նչ է այն խօսքն, որ ասեց թէ Ինձ կ'որոնէք եւ չէք գտնիլ, եւ որտեղ որ ես եմ, դուք չէք կարող գալ:

7:32 «Փարիսեցիները եւ քահանայապետներն» Սա վերաբերվում է Սինեդրիոնի անդամներին (տես Հատուկ Թեմա 3: 1): Կար միայն մեկ քահանայապետ, բայց հռոմեացիների նվաճումից հետո, պաշտոնը դարձավ քաղաքական ընտիր պատառ մի քանի հարուստ հրեական ընտանիքների համար և փոխանցվում էր ընտանիքի անդամից մյուսին:

▪ **«սպասաւորներ ուղարկեցին, որ բռնեն նորան»** Սա վերաբերում է «Տաճարի Ոստիկանին» որոնք ղևտացիներ էին: Նրանք ունեին սահմանափակ իշխանություն տաճարի տարածքից դուրս (հմմտ. 7: 45,46; 18: 3,12,18,22):

7:33 «Դեռ մի քիչ ժամանակ ձեզ հետ եմ» Սա ընդհանուր արտահայտություն է Հովհաննեսի Ավետարանում (հմմտ. 12:35; 13:33; 14:19, 16:16-19): Հիսուսը գիտեր, թե ով էր Նա, ինչ է պատահելու Իր հետ, և երբ (տես 12:23, 13:1; 17:1-5):

▪ **«գնում եմ ինձ ուղարկողի մօտ»** Սա վերաբերում է Հիսուսի փրկագնման առաքելության եզրափակիչ իրադարձություններին՝ խաչելությունը, հարությունը, համբարձումը և նախագոյության փառքի վերականգնումը (տես 17: 1-5; Գործք 1):

7:34 Այս ձևակերպումը շատ նման է Հիսուսի քննարկմանը աշակերտների հետ վերնատանը (13:33, տես 7:36 և 8:21): Սակայն, այստեղ խոսքը վերաբերում է անհավատներին (այսինքն, ամբոխը, Երուսաղեմացիք, և հրեական ղեկավարությունը):

7:35-36 «Արդեօ՞ք Հելլենացիների ցրուած ժողովուրդների մօտն է գնալու եւ Հելլենացիներին է սովորեցնելու» Հունարեն քերականական կառուցվածքը ակնկալում է «ոչ» պատասխան: Սա ևս մեկ հեզնանքի օգտագործում է: Սա միշտ եղել է Աստծո կամքը (տես Ծննդ. 3:15, 12: 3; Ես.2:2-4): Տաղավարահարաց տոնի ընթացքում զոհաբերվում էին յոթանասուն ցուլ աշխարհի ժողովուրդների համար: Հրեաները պարտավոր էին աղոթել և լույս լինել հեթանոսների համար: Սա կարող է արտացոլեն այս արտահայտության մշակութային պարամետրերը: «Հույները» տերմինը օգտագործվում էր «հեթանոսներ» իմաստով: *disperia* տերմինը վերաբերվում էր հրեա ժողովրդին, որոնք ապրում էին հեթանոս երկրներում (տես Հակ. 1:1, I Պետ. 1:1): Սա ևս մեկ օրինակ է, երբ ամբոխը չի չհասկանում Հիսուսի փոխաբերական լեզուն:

Սա ևս մեկ օրինակ է Հիսուսի ուղղահայաց դուալիզմի: Ամբոխը սխալ էր հասկացել Նրան, որովհետև Նրա արտահայտությունները մեկնաբանում էր բառացիորեն «վերև» և «ներքև» Նրա ուսմունքների կատեգորիաների փոխարեն: Նա եկել էր Հորից և վերադառնալու էր Հոր մօտ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:37-39

³⁷ Եւ տօնի վերջին մեծ օրումը Յիսուսը կանգնած էր, աղաղակեց եւ ասեց. Եթէ մէկը ծարաւ է, թող ինձ մօտ գայ, եւ խմէ: ³⁸ Ինձ հաւատացողը, ինչպէս գիրքն ասում է, Նորա փորիցը կենդանի ջրերի գետեր կ'բղխին: ³⁹ Սա ասեց այն Հոգու համար, որ ընդունելու էին նորա հաւատացողները, որովհետեւ դեռ Սուրբ Հոգին տրուած չէր, որովհետեւ Յիսուսը դեռ չէր փառաւորուած:

7:37 «տօնի վերջին մեծ օրումը» Հարց էր, թե արդյոք դա եղել է յոթօրյա տոն (տես 2 Օր. 16:13) թե ութօրյա (տես Ղևտ. 23:36; Նեեմ. 8:17; II Մակաբ. 10:60 և Հովսեպոսը): Ըստ երևույթին, Հիսուսի օրերում դա եղել է ութօրյա տոն, սակայն վերջին օրը ջուր չի վերցվել Մելովամի ավազանից և թափվել զոհասեղանի հիմքին, ինչպես դա արվել է յոթօրյայի ընթացքում: Այս արարողության մասին մենք սովորում ենք Tractate Sukkah Թալմուդից, որը մեջբերված է Ես. 12:3: Սա կարող է լինել պատկերավոր աղոթք անձրևի համար, հունձքի համար:

- **«Եթէ»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն:
- **«մէկը ծարաւ է»** Համընդհանուր Հիսուսին հավատալու հրավերք է: Տես ծանուցում 7:17
- **«թող ինձ մօտ գայ, եւ խմէ»** Հիսուսն օգտագործում է նույն փոխաբերությունը 4: 13-15: Սա հնարավոր է վերաբերվում է Հիսուսին, որպես Մեսիական Վեմ, որը ջուր մատակարարեց (տես I

Կորնթ. 10: 4): Այն ակնհայտորեն կապված է ՀԿ հրավերքին Ես. 55:1-3 և մշակութային հնարավորություն խորհրդանշականորեն ջուր թափելը տոնի ընթացքում:

Որոշ վաղ հին հունարեն ձեռագրեր դուրս են թողել «ինձ»-ը (տես MSS P⁶⁶, Տ* և D): Այն ընդգրկված է P^{66c}, P⁷⁵, Տ^c, L, T, W և ենթադրված կոնտեքստով: UBS⁴ տալիս է դրա ներառումը է «Բ» վարկանիշում (գրեթե): Հովհաննեսի Ավետարանը մարդկանց հորդորում է վստահել Նրան: Ավետարանը ունի անհատական ուշադրության կենտրոնացում:

7:38 «Ինձ հաստացողը» Ուշադրություն դարձրեք, որ սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ է: Սա ցույց է տալիս, որ շեշտվում է շարունակվող փոխհարաբերություններ հավատքով ինչպես Հովհաննեսի 15-ի «կենալը»: Տես Հատուկ Թեմա Հունարեն Բայի Ժամանակաձևերը Փրկության համար 9: 7:

▪ **«Ինչպես գիրքն ասում է»** Դժվար է բացահայտել կոնկրետ գրվածք այս մեջբերման համար: Դա կարող է լինել Ես. 12: 3; 43: 19-20; 44: 3; 58:11, Եզեկ. 47: 1; Հովել 3:18; Ջաք. 13: 1; կամ 14: 8, որոնք փոխաբերական իմաստով վերաբերում են վախճանաբանական ջրին, որպես Աստծո ներկայության խորհրդանիշ: Այս դեպքում նոր դարաշրջանի գյուղատնտեսական օրհնության խոստացյալ ջուրը փոփոխվել է նոր ուխտի ներքին բնույթի փոխաբերության: Հոգին գործելու է սրտում և մտքում (տես Եզեկ. 36: 27-38):

▪ **«Նորա փորհցը կենդանի ջրերի գետեր կ'բղխին»** Եղել են մի քանի վարկածներ նախորդող ԴԵՐԱՆՈՒՆԻՆ

1. Հիսուսն Ինքը (հմմտ. վաղ եկեղեցու հայերը)
2. անհատական հավատացյալները, ովքեր վստահելի էին Քրիստոսին
3. Երուսաղեմ, Արամերեն «նրա» կարող է նշանակել «իր(իզական)» և կարող է վերաբերել քաղաքին (սա ռաբբիների դիրքորոշումն է, Եզեկ. 47: 1-12 և Ջաք. 14: 8):

Կա մի լավ հակիրճ, պարզեցված երկու տեսությունների քննարկում, թե ինչպես կարելի կետադրել հհ. 37բ և 38 ա-ի NIDOTTE, հատ. 1, էջ 683:

Հիսուսն Իրեն կոչել է կենդանի ջուր (տես 4:10): Այժմ այս կոնտեքստում Սուրբ Հոգին է (տես հ. 39) ապահովում և արտադրում կենդանի ջուր Հիսուսի հետևորդների մեջ: Սա զուգահեռ է Հոգու գործին՝ ձևավորելով Քրիստոսին հավատացյալի մեջ (տես Հո. 8:29; Գաղ. 4:19; Եփես. 4:13):

7:39 «որովհետև դեռ Սուրբ Հոգին տրուած չէր, որովհետև Յիսուսը դեռ չէր փառաորուած» Ըստ երևութին, սա արտացոլում է Հովհաննեսի ուշ մտածելակերպը (այսինքն, խմբագրական մեկնաբանություն) այս մտքի նշանակության վերաբերյալ (տես 16:7): Այն նաև ցույց է տալիս Գողգոթայի և Պենտեկոստեի նշանակությունը և երկուսն էլ դիտվում են որպես «փառք» (հմմտ. Հովհ. 3:14, 12:16,23, 17:1,5): Կան մի քանի ձեռագիր տարբերակներ, որոնք փորձում են բացատրել, թե ինչ ինկատի ունի Հովհաննեսը այս կարճ հայտարարությամբ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:40-44
⁴⁰ Արդ ժողովրդից շատերը, երբոր այս խօսքը լսեցին, ասում էին. Սա ճշմարտապես այն մարգարեն է: ⁴¹ Ուրիշներն ասում էին. Սա Քրիստոսն է. Եւ էլ ուրիշներն ասում էին. Մի թե՛ Քրիստոսը Գալիլեայիցը կ'գայ: ⁴² Չէ՞ որ գիրքն ասում է, Քրիստոսը Դաւիթի սերունդիցը եւ Բեթլեհեմ գիւղիցը կ'գայ, որտեղ Դաւիթն էր: ⁴³ Եւ տարածայնութիւն եղաւ ժողովրդի մեջ նորա համար: ⁴⁴ Եւ նորանցից ոմանք կամեցան բռնել նորան. Բայց ոչ ոք ձեռք չ'ձգեց նորա վերայ:

7:40 «Սա ճշմարտապես այն մարգարեն է» Սա ակնարկում է Մեսիական խոստումը տրված Մովսեսին, որը գտնվում է Բ Օրին. 18:15,18: Շատերը ճանաչում էին Հիսուսին որպես մարգարե (հմմտ. 4:19, 6:14, 9:17, Մատթ. 21:11): Նրանք ընդունում էին Հիսուսի իշխանությունը, բայց սխալ էին

հասկանում Նրա անձն ու գործը: Իսլամը նաև օգտագործում է այս տիտղոսը/կոչումը Հիսուսի համար, բայց սխալ է հասկանում Նրա պատգամը:

7:41 «Ուրիշներն՝ ասում էին. Սա Քրիստոսն է» Սա ցույց է տալիս, որ «Քրիստոս» տերմինը համարժեք է եբրայերեն «Մեսիայի» բառին, որը նշանակում է «օծյալ»: ՀԿ թագավորները, քահանաները և մարգարեները օծվում էին, որպես Աստծո կոչման և վերագրման նշան: Տես Հատուկ Թեմա: Օծելը Աստվածաշնչում 11: 2:

▪ **«Եւ էլ ուրիշներն ասում էին. Մի՞թէ Քրիստոսը Գալիլեայիցը կ'գայ»** Հունարեն քերականական կառուցվածքը ակնկալում է «ոչ» պատասխան այս հարցին: Բայց ի՞նչ կասեք Ես. 9: 1-ի մասին:

7:42 Այս հարցի քերականական կառուցվածքն ակնկալում է «այո» պատասխան:

▪ **«Դաւիթի սերունդիցը»** (Տես II Թագ. 7; Մատթ. 21: 9; 22:42)

▪ **«Բերլեհեմ գիւղիցը կ'գայ, որտեղ Դաւիթն էր»** Սա ևս մեկ հեզնանքի օգտագործում է (տես Միքիա 5: 2-3 և Մատթ. 2: 5-6):

7:43 Հիսուսը և Իր պատգամը միշտ բաժանում էին առաջացնում (հմմտ. 7: 48-52, 9:16, 10:19, Մատթ. 10: 34-39, Ղուկաս 12: 51-53): Սա է սերմնացանի առակի խորհուրդը (տես Մատթ. 13): Ոմանք ունեն հոգևոր ականջներ իսկ ոմանք ոչ (տես Մատթ. 10:27, 11:15, 13: 9,15 (երկու անգամ), 16,43; Մարկոս 4: 9,23; 7:16; 8:18; Ղուկաս 8: 8; 14:35):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 7:45-52

⁴⁵ Եւ սպասաւորները եկան քահանայապետների եւ Փարիսեցիների մօտ. Եւ սորանք ասեցին նորանց. Ի՞նչու համար նորան չ'բերիք: ⁴⁶ Սպասաւորները պատասխանեցին. Երբէք մի մարդ այսպէս չ'խօսեց ինչպէս այս մարդը: ⁴⁷ Փարիսեցիներն էլ պատասխանեցին եւ ասեցին. Մի՞թէ դուք էլ մոլորուեցիք: ⁴⁸ Մի՞թէ իշխաններիցն կամ Փարիսեցիներից մէկը հաւատա՞ց նորան: ⁴⁹ Այլ այդ ռամիկ ժողովուրդը, որ օրէնքը չ'գիտէ, անիծուած են: ⁵⁰ Նիկողեմոսը, որ գիշերը նորա մօտ էր եկել, նորանցից մէկը լինելով, ասեց նորանց. ⁵¹ Մի՞թէ մեր օրէնքը մի մարդի դատում է, եթէ առաջ չ'լսէ նորանից եւ չ'գիտենայ, թէ ինչ է գործում: ⁵² Պատասխանեցին եւ ասեցին նորան. Մի՞թէ դու էլ ես Գալիլեայիցը. Քննիր եւ տես, որ Գալիլեայիցը մարգարէ դուրս չէ եկել:

7:46 «Սպասաւորները պատասխանեցին. Երբէք մի մարդ այսպէս չ'խօսեց ինչպէս այս մարդը» Կրկին Հովհաննէսի հեզնանքը: Սա շատ զարմանալի վկայություն է:

1. նրանք չեն նշում իրենց վախը ամբոխից, որը կլինէր լավ արդարացում նրանց համար
2. այդ Տաճարի սպասավորները միակարծիք էին Հիսուսի մասին, իսկ ամբոխը բաժանված էր
3. այդ մարդիկ սովոր էին հետևել պատվերներին, և ոչ թե տալ իրենց կարծիքները:

7:48 «Մի՞թէ իշխաններիցն կամ Փարիսեցիներից մէկը հաւատա՞ց նորան» Հունարեն քերականական կառուցվածքը երկու համարներում էլ 47 և 48 ակնկալում է «ոչ» պատասխան: «Իշխաններ» տերմինը վերաբերում է աստյանին: Այստեղ մենք ունենք Սաղուկեցիներին ու Փարիսեցիներին (ամբողջ Մինեդրիոնը), ովքեր սովորաբար շատ թշնամաբար էին միմյանց հանդեպ, համախմբելով իրենց ընդդիմություններին Հիսուսի դեմ (տես 11: 47,57; 18: 3):

7:49 «Այլ այդ ռամիկ ժողովուրդը, որ օրէնքը չ'գիտէ, անիծուած են» Սա վերաբերում է «հողի ժողովրդին» (*'am hā' āres*) որոնց կրոնական առաջնորդները վերնից էին նայում, քանի որ նրանք չէին

կատարում բոլոր Բանավոր Ավանդույթները (տես 2 Օր. 27:26): Հովհաննեսի հեզնանքը շարունակում է երևալ հ.51, որտեղ Նիկողեմոսը մատնանշում է նրանց, որ նրանք նույնպես խախտում են օրենքը՝ Հիսուսի հետ սխալ վարվելով:

Oh, կրոնականացման ողբերգություն: Հենց նրանք էին, որ անհիծում էին (*eparatos*, գտնվում է միայն այստեղ ՆԿ-ում) հասարակ մարդկանց՝ անհիծելով իրենք իրենց: Եթե լույսը դարձել է խավար, որքան մեծ է խավարը: Եղեք զգույշ, ժամանակակից, պահպանողական, կրթված հավատակիցներ:

7:51 «Մի՞ թե մեր օրենքը մի մարդի դատում է, եթե առաջ չ'լսե նորանից եւ չ'գիտենայ, թե ինչ է գործում» Հունարեն քերականական կառուցվածքը ակնկալում է «ոչ» պատասխան (տես Ելից 23: 1; 2 Օր. 1:16):

7:52 «Մի՞ թե դու էլ ես Գալիլեայիցը» Սա ցույց է տալիս Սինեդրիոնի հուզական ընդդիմությունը Հիսուսի դեմ:

▪ **«Քննիր եւ տես»** Քննելը ուներ իմաստ Սուրբ Գրքերը ուսումնասիրելու հուղայականության մեջ (տես 5:39): Սա եւ մեկ անգամ ցույց է տալիս Հովհաննեսի հեզնանք օգտագործումը: Ի՞նչ կասեք Եղիայի (տես, 3 Թագ. 17: 1) ու Հովնանի (տես 4 Թագ. 14:25), Ովսիայի և Նաումի մասին: Նրանք պետք է նկատի ունենային «այդ» մարգարեն Բ Օրին. 18: 15,19; Ծննդ. 49:10; II Թագ. 7:

7:53-8:11 Տես ծանուցումը 8-րդ գլխի սկզբում:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ո՞րն է տոնի ֆոնը Հիսուսի խոսքերին 7-րդ գլխում:
2. Նկարագրեք և բացատրեք «Տաղավարահարաց Տոնի» նպատակը:
3. Ինչու էին կրոնական առաջնորդներն այնքան թշնամաբար Հիսուսի հանդեպ:
4. Թվարկեք տարբեր խմբերի, որոնք մեկնաբանում են Հիսուսի մասին այս գլխում:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ ԳԼՈՒԽ 8

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ^d	NKJV	NRSV	TEV	NJB
Շնության մեջ բռնված կինը 7:53-8:11	Շնացող հանդիպում է Աշխարհի Լույսին 7:53-8:12	Շնության մեջ բռնված կինը 7:53-8:11	Շնության մեջ բռնված կինը 7:53-8:11	Շնացող կինը 7:53-8:11
Հիսուսը, Աշխարհի Լույսը 8:12-20	Հիսուսը պաշտպանում է Իր ինքնավկայումը 8:13-20	Հիսուսը, Աշխարհի Լույսը 8:12-20	Հիսուսը, Աշխարհի Լույսը 8:12 8:13 8:14-18 8:19ա 8:19բ 8:20	Հիսուսը, Աշխարհի Լույսը 8:12 Քննարկում Հիսուսի իր վկայության մասին 8:13-18 8:19ա 8:19բ 8:20
Ուր Ես եմ գնում, դուք չեք կարող գալ 8:21-30	Հիսուսը կանխատեսում է Իր հեռանալը 8:21-29 Ճշմարտությունը պիտի ազատե ձեզ 8:30-36	8:21-30	Դուք չեք կարող գնալ, ուր Ես եմ գնում 8:21 8:22 8:23-24 8:25ա 8:25բ-26 8:27-29 8:30	8:21 8:22-24 8:25ա 8:25բ-26 8:27-29 8:30
Ճշմարտությունը պիտի ազատե ձեզ 8:31-38	Ճշմարտությունը պիտի ազատե ձեզ 8:31-36	8:31-33 8:34-38	Ճշմարտությունը պիտի ազատե ձեզ 8:31-32 8:33 8:34-38	Հիսուսը և Աբրահամը 8:31-32 8:33-38
Ձեր Հայրը սատանան 8:39-47	Ձեր Հայրը սատանան 8:37-47	8:39-47	8:39 8:39բ-41ա 8:41բ 8:42-47	8:39-41ա 8:41բ-47
Աբրահամից առաջ էի Ես եմ 8:48-59	Աբրահամից առաջ էի Ես եմ 8:48-59	8:48-59	Հիսուսը և Աբրահամը 8:48 8:49-51 8:52-53 8:54-56 8:57 8:58 8:59	8:48-51 8:52-56 8:57-58 8:59

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի

ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇԲՐՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՃԱՆՆՈՒ 7:53-8:11

Ա. Հովհ. 7: 53-8: 11 Հովհաննեսի Ավետարանի բնօրինակի մասը չէր

Բ. Ապացույցներ, որ այս հատվածը (հունարենում մեկ նախադասություն) բաց է թողնված Ավետարանից

1. Արտաքին ապացույցներ

ա. բացակայում է ամենահին հունարեն ձեռագրերում

1) պապիրուս - P⁶⁵ (վաղ երրորդ դար), P⁷⁵ (երրորդ դար)

2) ունցիա - Տ (չորրորդ դար), B (չորրորդ դար), ամենայն հավանականությամբ բացակայում է A և C-ից: Մրանք վնասվել են այս հատվածում Հովհաննեսի Ավետարանում, բայց երբ ձեռագրի ողջ մնացած թերթիկները չափվում են, այս հատվածի համար տեղ չի մնում:

բ. շատ ուշ հունարեն ձեռագրեր, որոնք ներառում են այն, նշում են այն հատուկ նշանով կամ խորհրդանշանով, օրինակ աստղանիշով, ցույց տալու, որ դա չի եղել բնօրինակում

գ. այն հայտնվում է մի քանի տարբեր տեղերում, տարբեր ուշ ձեռագրերում

1) Հովհ. 7:36-ից հետո

2) Հովհ. 7:44-ից հետո

3) Հովհ. 7:25-ից հետո

4) Ղուկաս 21:38-ից հետո

5) Ղուկաս 24:53-ից հետո

դ. բացակայում են հնագույն թարգմանություններում

1) հին լատինական

2) հին սիրիական

3) Պեշիթայի/Peshitta վաղ օրինակները (ուշ սիրիական)

ե. այս տեքստի մասին չկա մեկնաբանություն որևէ հույն հայրերի կողմից (մինչև տասներկուերորդ դարը)

զ. այն առկա է ձեռագիր D-ում (Bezae), վեցերորդ դարի արևմտյան ձեռագրում, Լատինական Վուլգատում և Պեշիթայի ավելի ուշ հրատարակություններում:

2. Ներքին ապացույցներ

ա. բառապաշարը և ոճը շատ ավելի նման է Ղուկասին քան Հովհաննեսին: Այն տեղադրված է որոշ հույն ձեռագրերում Ղուկասի 21:38-ից հետո, իսկ մյուսներում 24:53-ից հետո:

բ. այն ամբողջովին խախտում է Հիսուսի քննարկումը հրեա առաջնորդների հետ կոնտեքստը Տաղավարահարաց տոնից հետո, 7: 1-52; 8: 12- 59:

գ. գուգահեռներ չկան Մինոպտիկ Ավետարաններում

3. Լիակատար տեխնիկական քննարկման համար տես Bruce M Metzger's *A Textual Commentary on the Greek New Testament*, էջ 219-221:

- Գ. Այս պատմությունը կարող է լինել իսկական բանավոր ավանդույթ՝ վերցված Հիսուսի կյանքից: Սակայն Հիսուսի կյանքից կան շատ պատմություններ, որ ավետարանագիրները որոշեցի չարձանագրել (Հովհ.20:30-31): Դա ավետարանագիրներն իրենք էին ոգեշնչված: Հետագայում դպիրները իրավունք չունեին ընդգրկելու Հիսուսի կյանքից պատմություն, նույնիսկ այն դեպքում, եթե վավերական է, որ չի ընդգրկվել ներշնչված հեղինակի կողմից: Միայն բնօրինակի հեղինակներն ունեին ներքնաբերում Սուրբ Հոգու առաջնորդության ներքո ընտրելու, կազմակերպելու և վերամշակելու Հիսուսի գործերն ու խոսքերը: Այս հատվածը բնօրինակ չէ և, հետևաբար, ոգեշնչված չէ և չպետք է ընդգրկվի մեր Աստուածաշնչում:
- Դ. Ես ընտրեցի չմեկնաբանել այս հատվածը, քանի որ ես չեմ կարծում, որ դա Հովհաննեսի գրչով է գրված և հետևաբար, ներշնչված տեքստի մաս չի կազմում (նույնիսկ անգամ եթե պատմական է):

ԲԱՈՒ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:12-20

¹²Արդ Յիսուսը դարձեալ խօսեց նորանց հետ եւ ասեց. Ես եմ աշխարհքի լոյսը. Ով որ իմ ետեւից գայ, նա խաւարումը չի գնալ, այլ կեանքի լոյսը կ'ընդունի: ¹³Փարիսեցիներն էլ ասեցին նորան. Դու ես քո անձի համար վկայում. քո վկայութիւնը ճշմարիտ չէ: ¹⁴Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորանց. Թէեւ ես վկայեմ իմ անձի համար, իմ վկայութիւնը ճշմարիտ է. Որովհետեւ զիտեմ թէ որտեղից եկայ եւ որտեղ եմ գնում. բայց դուք չ'զիտեք, թէ որտեղից եմ գալիս, եւ որտեղ եմ գնում: ¹⁵Դուք մարմնի համեմատ էք դատում. ես չեմ դատում ոչ մէկին էլ: ¹⁶Եւ եթէ ես դատեմ էլ, իմ դատաստանը ճշմարիտ է. որովհետեւ ես միայն չեմ, այլ ես եւ ինձ ուղարկող Հայրը: ¹⁷Եւ ձեր օրէնքումն էլ գրուած է թէ Երկու մարդկանց վկայութիւնը ճշմարիտ է: ¹⁸Ես եմ, որ ինձ համար վկայում եմ, եւ վկայում է ինձ համար ինձ ուղարկող Հայրը: ¹⁹Եւ ասում էին նորան. Ո՛ր է քո Հայրը. Յիսուսը պատասխանեց. Ոչ ինձ զիտեք, եւ ոչ իմ Հօրը. եթէ ինձ զիտենայիք, իմ Հօրն էլ կ'զիտենայիք: ²⁰Այս բանը Յիսուսը գանձատան մէջ խօսեց նորանց հետ տաճարումը սովորեցնելիս. Եւ ոչ ով չ'բռնեց նորան. Որովհետեւ դեռ նորա ժամը չէր հասել:

8:12 «Արդ Յիսուսը դարձեալ խօսեց նորանց հետ» «Բազմությունը» նշված չէ սույն գլխում: Հնարավոր է Տաղավարահարաց տոնը ավարտվել էր և Հիսուսը մնաց Տաճարի տարածքում՝ փորձելով փաստել և վկայել հրեա առաջնորդներին:

Սակայն, քանի որ Հիսուսն օգտագործեց տոնի ջրի արարողությանը՝ Իրեն հայտնելու համար այս բաժնում: Նա օգտագործում է տոնի լուսավորման արարողությունը՝ Իրեն հայտնելու համար: Դա, անշուշտ, հնարավոր է, որ 8: 12-10: 21-ը դեռևս սահմանված էր Տաղավարահարաց Տոնի վերջին օրը(Տաղավարներ):

▪ **«Ես եմ լոյսը»** 6, 7 և 8 գլուխները կարծես թե կապված են Իսրայելի պատմության ժամանակաշրջանի «անապատի դեգերումների» հետ , այն փոխաբերությունների աղբյուրը, որը Հիսուսն օգտագործում է Իր համար.

1. 6-րդ գլխում օգտագործում է «մանանան» և «կեանքի հացը»
2. 7-րդ գլխում օգտագործում է «ջուր» և «կենդանի ջուր»
3. 8-րդ գլխում օգտագործում է «լույս» և «*Shekinah* փառքը»:

Այս լույսի փոխաբերությունը կրկնվում է Հովհաննեսի Ավետարանում (տես 1: 4- 5, 8- 9; 3:19- 21; 9: 5; 12:46):

Եղել են որոշ բանավեճեր, թե ինչին է սա վերաբերում:

1. խավարի հնագույն վախը
2. Աստծո կոչումը ՀԿ (տես Մաղ. 27: 1; Ես. 62:20, I Հովհ. 1: 5)
3. Տաղավարահարաց տոնի ֆոնը, մոմակալների լուսավորությունը կանանց գավիթում
4. ակնարկում է *Shekinah* ամպի փառքը անապատում թափառելու ժամանակ, որը խորհրդանշում է Աստծո ներկայությունը
5. Մեսիական կոչումները ՀԿ (տես Ես. 42: 6, 49: 6; Դուկ. 2:32).

Ռաբբիները նաև օգտագործում են «լույս» որպես կոչում Մեսիայի համար: Հսկայական լամպերի լուսավորումը կանանց գավիթում Տաղավարահարաց Տոնին ակնհայտ միջավայր է Հիսուսի հայտարարության համար:

Լույսի Մեսիական իմաստները և հատուկ հղումները 1:4,8 համընկնում են Տաճարի արարողության հետ, երբ Հիսուսը շարունակում է բացահայտել Իր իրական ծագումը:

Սա յոթ «Ես եմ» արտահայտություններից մեկն է Հովհաննեսի Ավետարանում (հաջորդում է ստորոգյալ)

1. Ես եմ Կեանքի Հացը (6: 35,41,46,51)
2. Ես եմ Աշխարհի Լույսը (8:12; 9: 5; հմմտ 1: 4,9; 12:46)
3. Ես եմ Ոչխարների Դուռը (10: 7,9)
4. Ես եմ Բարի Հովիվը (10: 11,14)
5. Ես եմ Հարությունը և Կյանքը (11:25)
6. Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը (14: 6)
7. Ես եմ Ճշմարիտ Որթը (15: 1,5)

Այս եզակի արտահայտությունները, գտնվում են միայն Հովհաննեսի Ավետարանում, որոնք ցույց են տալիս Հիսուսի անձը: Հովհաննեսը կենտրոնանում է փրկության այս անձնական ասպեկտներին: Մենք պետք է վստահենք Նրան:

▪ **«աշխարհքի»** Այս տերմինը (*kosmos*, տես Հատուկ Թեմա 14:17) ցույց է տալիս Հիսուս Քրիստոսի ավետարանի համընդհանուր շրջանակը (տես 3:16):

▪ **«Ով որ իմ ետեւից գայ»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Պետք է հիշել, որ քրիստոնեությունը հիմնականում դավանանք կամ աստվածաբանություն չէ, այլ անձնական հարաբերություն, որին հաջորդում է աշակերտության ապրելակերպ (տես Մատթ. 28:18-20; I Հովհ. 1: 7):

▪ **«նա խաւարումը չի գնալ»** Սա ակնարկում է սատանայի աստվածաբանական գաղափարը «կուրացնելով չփրկվածների աչքերը» (տես II Կորնթ. 4: 4): Կա ուրիշ ակնարկ ՀԿ հատվածների, որոնք խոսում են Աստծո խոսքի մասին, օրինակ «ճրագ իմ ոտքերի և լույս իմ ճանապարհին» (տես Մաղ. 119: 105):

Նրանք, ովքեր ընդունում են «Լույսը» պետք է ապրեն ուրիշ կյանքով (տես I Հովհ. 1: 7):

▪ **«կեանքի լույսը»** Հիսուսն ունի Աստծո կյանքը և այն տալիս է Իր հետևորդներին (տես Մատթ. 5:14) նրանց, ում Աստված է տվել Նրան:

8:13 «Փարիսեցիներն» Տես Հատուկ Թեմա 1:24.

▪ **«Քո վկայությունը ճշմարիտ չէ»** Հրեաները պնդում էին իրավական տեխնիկական ապացույցներ (այսինքն պահանջում էին երկու վկա, տես Թվոց 35:30, 2 Օր.17: 6, 19:15- 21): Հիսուսն ավելի վաղ

խոսել էր հենց այս առարկության մասին (տես Հովհ. 5: 31) և տվել մի քանի վկայություններ: Այս կոնտեքստում Նրա վկայությունը Հայրն է:

8:14,16 «Եթէ. . . եթէ» Սրանք երկուսն էլ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ են, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Ամբողջ 8-րդ գլխի պայմանների մեծ մասը այս տեսակի են:

▪ **«գիտեմ թե որտեղից եկայ եւ որտեղ եմ գնում»** Սա ևս մեկ «վերնից ներքև» դուալիզմ է: Հիսուսն ուներ գիտակցված հիշողությունը Հոր հետ ունեցած Իր նախագոյության մասին, Իր առաքելությունը հասկանալու, և մարգարեական ժամանակացույցի զգացում (տես Հովհ. 1: 1-4; 14-18, 7: 28-29; 13: 1; 17: 5):

▪ **«բայց դուք չ'գիտեք, թե որտեղից եմ գալիս, եւ որտեղ եմ գնում»** Սա պետք է վերաբերի 7-րդ գլխին: Նրանք չգիտեին Հիսուսի ծննդավայրը (տես հհ. 41-42) և ոչ էլ գիտեին, թե ուր է գնում (հմմտ. 7: 34-36; 8:21): Տես Հատուկ Թեմա: Հիսուսի վկայությունները 1: 8:

8:15 «Դուք մարմնի համեմատ էք դատում» Սա նույնպես ակնարկում է 7-րդ գլուխը (տես հ. 24): Տես Հատուկ Թեմա: Մարմին (*sarx*) 1:14:

▪ **«ես չեմ դատում ոչ մեկին էլ»** Ոմանք տեսնում են հակասություն այստեղ Հովհ. 3:17 և 9:39 միջև: Հիսուսը չեկավ դատելու, այլ կյանք տալու: Հենց սա է Նրա գալստյան փաստը, նրանք ովքեր մերժում են Նրան դատապարտվում են (տես 3: 18-21):

8:16-18 Սա կրկին դատարանում անհրաժեշտ երկու վկաների հարցն էր (տես Թվոց 35:30, 2 Օր.17:6; 19:15): Հիսուսը չունի անորոշ տերմիններ, հաստատում Իր մեկությունը Հոր հետ (տես 7:29, 14: 9): Տես Հատուկ Թեմա Հիսուսի վկայությունները 1: 8:

8:16

NASB (1970),

NJB, REB

“Նա ով ինձ ուղարկեց”

NASB (1995),

NKJV, NRSV,

NIV

“Հայրը, որ ինձ ուղարկեց”

Ճիշտ այնպես, ինչպես որ կա անհամաձայնություն NASB երկու հրատարակությունների միջև այնպես էլ կա անհամաձայնություն UBS^{3,4} միջև

1. UBS³ տալիս է «Հայր»-ը «C» վարկանիշ (MS P^{39,66,75}, Ն², B, L, T, W)

2. UBS⁴ տալիս «Հայր»-ը «A» վարկանիշ (MSS Ն^{*}, D և որոշ հին Ավելի ուշ և սիրիական տարբերակները չեն նկատել այն)

Հիսուսը երբեք միայնակ չէ: Հայրը միշտ Նրա հետ է (տես հհ. 16:29; 16:32), բացառությամբ հնարավոր է խաչի վրա (տես Մարկ. 15:34):

Մտերմիկ փոխհարաբերության ուրախությունն ու ամբողջացումը փրկության էությունն է: Ստեղծագործության նպատակ էր, որ Աստված ունենար մեկին, ում հետ կհաղորդակցվեր, դրա համար էլ Նա (այսինքն Քրիստոսը, տես Հովհ. 1: 3; I Կորնթ 8: 6; Կող. 1:16; Եբր. 1: 2) ստեղծեց նրանց ԵՃՈՎԱՅԻ պատկերով և նմանությամբ (տես Ծն. 1: 26,27): Այս մտերմիկ փոխհարաբերության կորուստը մեղքի պատիժն է: Դրա վերականգնումը Հիսուսի առաքելության նպատակն է:

8:19 «Ո՞ր է քո Հայրը» Նրանք դեռևս Հիսուսին հասկանում էին ֆիզիկական, բառացի մակարդակով: Նրանց կանխակալ և հպարտ մտքերը փակ էին ճշմարտության համար (տես հ. 27): Սա թյուրիմացությունը Հովհաննեսի Ավետարանի բնորոշ գրական գիծն է:

▪ **«Եթե ինձ գիտենայիք, իմ Հօրն էլ կ'գիտենայիք»** Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է: Այն հաճախ անվանում են «հակասում փաստին»: «Եթե Ինձ ճանաչեիք, ինչը դուք չեք, ապա դուք պետք է իմանայիք իմ Հորը, որ դուք չեք»: Այս թեման կրկնվում է 5:37, տես ամբողջական ծանուցում 7:28: Դժվար է ուրվագծել Հովհաննեսի Ավետարանը, քանի որ այն նման է կրկնվող նախշերով գոբելենի կամ կրկնվող մեղեդիներով սիմֆոնիայի:

8:20 «Յիսուսը գանձատան մեջ խօսեց» Սա համարը, ըստ երևույթին, մեկ այլ խմբագրական մեկնաբանություն է ականատեսի կողմից: Գանձատունը առանձին շենք չէր: Ռաբունական ավանդույթն (*Shekalim* 6) ասում է, որ կային տասներեք շեփորաձև բեռնարկղեր, յուրաքանչյուրը նշանակված էր կոնկրետ նպատակի համար, որը գտնվում էր կանանց գավիթում (տես Մար. 12:41), որտեղ հսկայական լամպեր էին վառվում Տաղավարահարաց տոնի ժամանակ:

▪ **«դեռ նորա ժամը չէր հասել»** Տես ծանուցում 2:4.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:21-30

²¹ Յիսուսը դարձեալ ասեց նորանց. Ես գնում եմ, եւ ինձ կ'որոնէք. եւ ձեր մեղքի մեջ կ'մեռնիք. Որտեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող գալ: ²² Հրեաներն էլ ասում էին. Մի՞ թէ ինքն իրան կ'սպանէ, որ ասում է, թէ Որտեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող գալ: ²³ Եւ ասեց նորանց. Դուք ներքեւիցն էք, եւ վերեւիցն եմ. դուք այս աշխարհքիցն էք, եւ այս աշխարհքիցը չեմ: ²⁴ Արդ ես ասեցի ձեզ, թէ Ձեր մեղքի մեջ կ'մեռնիք. որովհետեւ եթէ չ'հաւատաք թէ ես եմ, ձեր մեղքի մեջ կ'մեռնիք: ²⁵ Եւ նորանք ասեցին նորան. Դու ո՞վ ես. Եւ Յիսուսն ասեց նորանց. Այն, որ սկզբից ձեզ հետ խօսում եմ: ²⁶ Շատ բան ունիմ ձեզ համար խօսելու եւ դատելու. Բայց ինձ ուղարկողը ճշմարիտ է. եւ ես ինչ որ նորանից լսեցի, այն եմ խօսում աշխարհքի մեջ: ²⁷ Չ'իմացան, թէ Հօր համար էր ասում նորանց: ²⁸ Յիսուսն էլ ասեց նորանց. Երբոր մարդի Որդին կ'բարձրացնէք, այն ժամանակ կ'իմանաք, թէ ես եմ. Եւ իմ անձիցը ոչինչ չեմ անում. այլ ինչպէս իմ Հայրը սովորեցրեց ինձ, այն եմ խօսում: ²⁹ Եւ ինձ ուղարկողն ինձ հետ է. ինձ մինակ չէ թողել Հայրը, որովհետեւ ես միշտ նորան հաճելի բաներն եմ անում: ³⁰ Երբոր նա այս բաները խօսում էր, շատերը հաւատացին նորան:

8:21-22 «Որտեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող գալ...Մի՞ թէ ինքն իրան կ'սպանէ» 22-րդ համարի հարցը ակնկալում է «ոչ» պատասխան: Կոնտրաստից ակնհայտ է, որ թեև նրանք սխալ էին հասկացել Իր արտահայտությունը (տես 7: 34-36), նրանք դա կապում էին Իր մահվան հետ: Հովսեպոսից մենք սովորում ենք, որ ինքնասպանությունը դատապարտելի է և արժանի դժոխքի ամենացածր տեղին: Նրանց հարցը, ըստ երևույթին, նշում է, որ սա այն տեղն էր, որտեղից պետք է լիներ են Հիսուսը նրանց կարծիքով:

8:21 «ձեր մեղքի մեջ կ'մեռնիք» Սա բառացիորեն «ձեր մեղքի մեջ կ'մեռնեք»: «Մեղք» տերմինը ԵԶԱԿԻ է հ. 21 և ՀՈԳՆԱԿԻ հ. 24: Սա հիմնականում վերաբերում է Հիսուսին որպես Քրիստոսի իրենց մերժելուն (տես հ. 24): Սա, իրոք, աններելի մեղքը է Մինապտիկ Ավետարաններում: Նրանց առաջնորդները մերժում են Հիսուսին մեծ լույսի ներկայությամբ Իր խոսքերից ու նշաններից:

Տես հետևյալ նշումները Մարկոսի Ավետարանի իմ մեկնաբանությունից:

Մարկ 3:29 «Ով որ Սուրբ Հոգուն հայհոյե» Սա պետք է հասկանալ իր նախապենտեկոստեի պատմական միջավայրում: Այն օգտագործվում էր Աստծո

ճշմարտությունը մերժելու իմաստով: Այս համարի ուսուցումը սովորաբար կոչվել է «աններելի մեղք է»: Այն պետք է մեկնաբանվի հետևյալ չափանիշների լույսի ներքո.

1. Հին Կտակարանում «կանխամտածված» և «ոչ միտումնավոր» մեղքերի միջև տարբերությունը (տես Թվ. 15: 27-31)
2. Հիսուսի սեփական ընտանիքի անհավատությունը հակադրվում է փարիսեցիների անհավատության հետ այս կոնտեքստում
3. ներման դրույթները հ. 28
4. Ավետարանի գուգահեռների միջև եղած տարբերությունները, մասնավորապես «մարդու որդու» փոխելը (հմմտ. Մատթ. 12:32; Ղուկ. 12:10) «մարդկանց որդիների» հետ (հմմտ. Մատթ. 12:31; Մար. 3:28):

Վերը նշվածի լույսի ներքո, այս մեղքը գործվում է նրանց կողմից, ովքեր մեծ լույսի և հասկացողության ներկայության մեջ, դեռևս մերժում են Հիսուսին որպես Աստծո հայտնության և փրկության միջոց: Նրանք ավետարանի լույսը փոխել են սատանայի խավարի հետ (տես Մարկ 3:30): Նրանք մերժում են Հոգու քաջելը և համոզելը (հմմտ. Հովհ. 6: 44,65): Աններելի մեղքն այն չէ, թե մի խոսքի կամ արարքի համար Աստված մերժում է քեզ, այլ երբ գիտակցաբար անհավատությամբ շարունակաբար մերժում ես Աստծուն Քրիստոսով (այսինքն, դպիրները և Փարիսեցիները):

Այս մեղքը կարող է համարվել միայն նրանց, ովքեր ունեցել են ավետարանի լույսը: Նրանք, ովքեր լսել են Հիսուսի մասին պատգամը հստակ է, որ առավել պատասխանատու են մերժման համար: Սա հատկապես ճիշտ է ժամանակակից մշակույթների համար, որոնք ունեն շարունակական մուտք դեպի ավետարանը, բայց մերժում են Հիսուս (այսինքն, Ամերիկյան, արևմտյան մշակույթը):

8:23 «Ղուք ներքելիցն էք, ես վերելիցն եմ» Սա ևս մեկ ուղղահայաց դուալիզմի օրինակ է Հովհաննեսի Ավետարանում (այսինքն, ներքև- վերև, հմմտ. 7: 35-36; 18:36):

Հովհաննեսի հակադրությունը, Հիսուսի, որ վերևից է, և հրեաների, որոնք ներքևից են միջև, ձևավորում է դուալիզմ, որը յուրահատուկ է Ավետարաններում: Մինուպտիկ Ավետարանները (Մատթեոս, Մարկոս, Ղուկաս) հակադրում են երկու հրեական ժամանակաշրջան՝ չար ներկա ժամանակաշրջանը և արդարության գալիք ժամանակաշրջանը: Այս տարբերությունը նկարագրվում է հորիզոնական դուալիզմ և ուղղահայաց դուալիզմ տերմիններով: Արդյո՞ք Հիսուսը երկուսն էլ սովորեցնում է տարբեր միջավայրերում: Հնարավոր է, որ Մինուպտիկները արձանագրել են Հիսուսի հանրային ուսուցումները, իսկ Հովհաննեսը արձանագրել է Հիսուսի մասնավոր ուսմունքները իր աշակերտներին:

▪ **«դուք այս աշխարհիցն էք»** Աշխարհը գտնվում է չարի իշխանության տակ (տես II Կորնթ. 4: 4; Եփես. 2: 2 և I Հովհ. 5:19): Աշխարհ (*kosmos*) բառի համար տես Հատուկ Թեմա 14:17.

8:24 «եթէ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն:

- NASB, NKJV “դուք հավատումեք, որ Ես եմ Նա”
NRSV, JB “հավատաք, որ Ես եմ նա”
TEV “հավատաք, որ ‘Ես եմ, որ Եմ’”
NJB “հավատաք, որ Ես եմ Նա”

Սա Հիսուսի Իր իսկ աստվածային բնության ինքահասկացողության ամենաուժեղ արտահայտություններից մեկն է (կամ հնարավոր է, որ այս կոնտեքստում «Մեսիան» ռեֆերենտ է):

Նա օգտագործում է ՀԿ կոչումը ԵՀՈՎԱՅԻ համար (հմմտ. «Ես եմ» Ելից 3:14): Սա տարբերվում է հայտնի «Ես եմ» արտահայտություններից Հովհաննեսի Ավետարանում: Սա չունի ստորոգյալ (հմմտ. 4:26; 6:20; 8:24,25,58, 13:19, 18: 5,6,8): Տես Հատուկ Թեմա: Հովհաննեսի օգտագործումը «Հավատալ» 2:23.

8:25 «Դու ո՞վ ես» Հրեական իշխանությունները փնտրում են իրավական հիմքեր սրբապղծության, հայհոյանքի մեղադրանքի համար (տես Մատթ. 26: 57-68; Մարկ. 14: 53-65): Նրանք ցանկանում էին Նրան սպանել: Նրանք չեն փնտրում Նրան տեղեկությունների համար այլ դատապարտման:

Հիսուսը հստակ հայտնում է Իրեն Հովհաննեսի Ավետարանում (ի տարբերություն Սինոպտիկների): Նրա խոսքերը (այսինքն, հ. 24) և Նրա գործերը (այսինքն, շաբաթ օրը բժշկելը) հստակ ցույց է տալիս Իր հեղինակությունը:

-
- NASB** “Ինչ ասել եմ ես ձեզ սկզբից”
- NKJV** “Պարզապես ինչ ես ասել եմ ձեզ սկզբից”
- NRSV** “Ինչու եմ խոսում ձեզ հետ”
- TEV** “Ինչ ես ասել եմ ձեզ հենց սկզբից”
- NJB** “Ինչ ես ասել եմ ձեզ սկզբից”

Ի սկզբանե հունարեն ձեռագիրը չի ունեցել տարածքներ բառերի միջև: Հետևաբար, հունարեն տառերը կարելի է բաժանել տարբեր տեղերում և ստանալ բառեր, որոնք համապատասխանում են կոնտեքստին: Թարգմանությունների շեղումը կապված չէ ձեռագրի տարբերակից, այլ բառի բաժանումից: Ահա տարբերակները.

1. *hote* - Ես ասել եմ ձեզ սկզբից (NASB, NKJV, TEV, NJB, NIV)
2. *ho ti* - որպես բացականչության սեմական իդիոմա - որ ես խոսում եմ ձեր բոլորի հետ (NRSV, TEV ծանուցում)

Դա, թերևս, Հովհաննեսի բառախաղերից մեկն է, որ «սկիզբ» տերմինն օգտագործվում է Սեպտուագինդի թարգմանության մեջ Ծննդ 1: 1 (արարչագործությունը) և Հովհ. 1: 1 (Նրա ծառայությունը): Հիսուսը «սկզբից» է և այս ամենը պատմել է նրանց խոսքերով և գործերով:

8:26-27 Այս թեմաները կրկնվում են Հովհաննեսի Ավետարանում շեշտադրումներով.

1. Հայրն ուղարկեց Բնձ (հմմտ. 3: 17,34; 4:34, 5: 36,38; 6: 29,44,47, 7: 28-29; 8: 16,26,42, 10:36; 11:42, 12:49, 14:24, 15:21, 17: 3,18,21,23,25; 20:21)
2. Հայրը ճշմարիտ է (տես 3:33; 7:28)
3. Հիսուսի ուսմունքները Հորից են (հմմտ. 3:11; 7: 16-17; 8: 26,28,40, 12:49, 14:24, 15:15)
4. Հիսուսը հայտնում է Հորը (հմմտ. 1:18; 8: 26-29, 12: 49-50, 14: 7,9)

▪ «**աշխարհքիցը**» Տես ծանուցում 1:10.

8:27 Մեկ այլ խմբագրական մեկնաբանություն հեղինակի կողմից: Եթե նրանք հասկացել էին Նրա հստակ փոխաբերական և խորհրդանշական լեզուն, նրանք, ինչպես և մյուս հրեաները, պիտի փորձեին սպանել Նրան (հմմտ. 5:18; 8:59; 10:33): Նրա պնդումները չէ, որ թաքնված էին:

8:28 «Երբոր մարդի Որդին կ'բարձրացնէք» Սա ՀԿ ակնարկ է Թվ. 21: 4-9, որը քննարկվում է Հովհ. 3:14: Այս տերմինը, ինչպես շատ տերմիններ Հովհաննեսի Ավետարանում, ուներ կրկնակի իմաստ: Այն կարող է նշանակել «բարձրացվել» ինչպես խաչի վրա (տես 3:14; 12: 32,34), բայց այն հաճախ օգտագործվում է «բարձրացած» իմաստով ինչպես Գործք 2:33, 5:31, Փիլիպ. 2: 9: Հիսուսը գիտեր, որ Նա եկավ մեռնելու (տես Մարկ. 10:45):

▪ **«մարդի Որդին»** Մա Հիսուսի ինքնությունը ընտրած կոչումն է, քանի որ այն չունի որևէ ռազմատենչ կամ ազգայնական հետևանքներ ռաբունական հուդաիզմի ներսում: Հիսուսն ընտրեց այս անունը, քանի որ այն միացնում է երկու հասկացությունները՝ մարդկության (տես Եզեկ. 2: 1; Մաղ 8: 4) և Աստվածության (տես Դան. 7:13):

▪ **«այն ժամանակ կ'իմանաք, թե ես եմ»** Նույնիսկ աշակերտները (և Իր ընտանիքը) ամբողջությամբ չհասկացան մինչև (հմմտ. 7:39) Պենտեկոստեն: Հոգին եկավ աչք բացելու գործությունով բոլոր նրանց, ովքեր ունեին հոգևոր աչքեր և ականջներ:

Յուրահատուկ քերականական պնդման համար «Ես եմ *Նա*» տես ծանուցում հ.24: Նրանք կ'իմանան,

1. Ով է *Նա* (այսինքն, Մեսիան)
2. որ *Նա* հայտնում է Հորը (հմմտ. 5: 19-20)
3. որ *Նա* և Հայրը մեկ են (հ. 29)

8:29 «ինձ մինակ չե՞ թողել Հայրը» Հիսուսի հաղորդակցությունը Հոր հետ անընդհատ էր (տես 8:16; 16:32): Մա է պատճառը, որ խաչի վրայի ընդհատված կապը, այնքան դժվար էր Նրա համար (տես Մարկ 15:34):

8:30 «շատերը հաւատացին նորան» Այս հատվածում «հավատալ» տերմինը ունի լայնածավալ կիրառությամբ հասկացողություն: Թվում է, սա վերաբերվում է որոշ ունկնդիրների մակերեսային հավատքին (տես Մատթ. 13; Մարկ. 4): Նրանք պատրաստ էին ընդունելու, որ *Նա* էր Մեսիան, հիմնվելով իրենց հասկացողությանը, թե ինչ է դա նշանակում: 8:30- 58 կոնտեքստը հստակ ցույց է տալիս, որ նրանք ճշմարիտ հավատացյալներ չէին (տես 2:23-25): Հովհաննեսի Ավետարանում կան հավատքի մի քանի մակարդակներ, ոչ բոլորն են տանում փրկության: Տես Հատուկ Թեմա 2:23.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:31-33

³¹Եւ Յիսուսն իրան հաւատացած Հրէաներին ասեց. Եթէ դուք իմ խօսքի մէջ կենաք, ճշմարտապէս իմ աշակերտներն էք: ³²Եւ ճշմարտութիւնը կ'ճանաչէք. Եւ ճշմարտութիւնը կ'ազատէ ձեզ: ³³Պատասխանեցին նորան. Մենք Աբրահամի զաւակ ենք, եւ ոչ որի երբէք չենք ծառայել. Դու ի՞նչպէս ես ասում, թէ ազատ կ'լինիք:

8:31 «Եթէ դուք կենաք» Մա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Այս շեշտադրումը շարունակական հավատքի վրա հստակ նաև Հովհ. 15: Մա բացակայող տարր է ավետարանչական ավետարանի հոչակման մեջ: Խոսքին պետք է հավատալ (տես 5:24), հնազանդվել և կենալ նրանում կամ կիրառել: Տես Հատուկ Թեմա: Կենալ, մնալ I Հովհ. 2:10.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՄԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԻՔ

Աստվածաշնչյան վարդապետությունները, կապված քրիստոնեական կյանքի հետ, դժվար է բացատրել, որովհետև դրանք ներկայացվում են տիպիկ արևելյան դիալեկտիկական գույգերով: Այս գույգերը թվում են իրար հակասող, բայց երկուսն էլ աստվածաշնչյան են: Արևմուտքի քրիստոնյաները հակված են ընտրելու մեկ ճշմարտությունը և մերժելու և արժեզրկելու մյուս ճշմարտությունը, իրեն հակասող: Թույլ տվեք բացատրեն օրինակներով.

- Ա. Փրկությունը դա միայն Քրիստոսին վստահելու նախասկզբնական որոշումն է, թե՞ սրբացման գործընթաց ամբողջ կյանքի ընթացքում, որպես Քրիստոսի աշակերտ:
- Բ. Փրկությունը դա գերիշխան Աստոծ շնորհքի ընտրությունն է, թե՞ մարդու հավատքի արդյունքն ու ապաշխարության արձագանքն Աստծո կանչին:
- Գ. Փրկությունը դա մեկ անգամ ստացած, անհնարին կորցնել, թե՞ հավատացյալը

պետք է շարունակաբար ջանք թափի դրան հասնելու և պահելու համար:

Համբերության թեման թննարկման առիթ է հանդիսացել հավատացյալների համար ամբողջ եկեղեցու պատմության ընթացքում: Խնդիրը սկսվում է Նոր Կտակարանում հանդիպող ակնհայտ իրարամերժ տեքստերից.

- Ա. վստահություն տվող և երաշխավորող համարներ
 - 1. Հիսուսի պնդումները (Հովհ. 6:37; 10:28-29)
 - 2. Պողոսի պնդումները (Հռ. 8:35-39; Եփ. 1:13; 2:5,8-9; Փիլ. 1:6; 2:13; II Թես. 3:3; II Տիմ. 1:12; 4:18)
 - 3. Պետրոսի պնդումները (I Պետ. 1:4-5)
- Բ. տեքստեր համբերելու համար
 - 1. Հիսուսի պնդումները (Մաթ. 10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ. 13:13; Հովհ. 8:31; 15:4-10; Հայտ. 2:7,17,20; 3:5,12,21)
 - 2. Պողոսի պնդումները (Հռ. 11:22; I Կոր. 15:2; II Կոր. 13:5; Գաղ. 1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ. 2:12; 3:18-20; Կող. 1:23)
 - 3. Եբրայեցիս թղթի հեղինակի պնդումները (2:1; 3:6,14; 4:14; 6:11)
 - 4. Հովհաննեսի պնդումները (I Հովհ. 2:6; II Հովհ. 9)
 - 5. Երկնային Հոր պնդումները (Հայտ. 21:7)

Աստվածաշնչյան փրկության աղբյուրը գերիշխան Եռյակ Աստծո սիրո, ողորմության և շնորհքի արտահայտությունն է: Ոչ մեկ մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (հմմտ. Հովհ. 6:44,65): Աստված անում է առաջին քայլը և հաստատում բոլոր կանոնները, բայց և պահանջում, որ մարդիկ արձագանքեն Իր կանչին՝ հավատքով և ապաշխարությամբ, թե մեկ անգամ սկզբում և թե շարունակաբար ամբողջ կյանքի ընթացքում: Աստված հարաբերություններ է հաստատում մարդու հետ ուխտի հիման վրա: Փրկված լինել- դա թե արտոնություն է, և թե պատասխանատվություն:

Փրկությունը առաջարկվում է բոլոր մարդկանց: Հիսուսի մահը լուծեց ընկած արարչագործության մեղքի խնդիրը: Աստված հոգացել է փրկության ճանապարհը և ուզում է, որ նրանք, որ ստեղծված են Իր պատկերով և նմանությամբ, արձագանքեն Իր սիրուն և ինչ որ առաջակվում է Հիսուսի միջոցով:

Եթե ցանկանում եք ավելի շատ բան իմանալ այս հարցի մասին, ոչ կալվինիստական տեսանկյունից, կարող եք կարդալ հետևյալ գրքերը

- 1. Դեյլ Մուդի «Ճշմարտության Խոսքը» (Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ 348-365))
- 2. Հովարդ Մարշալ «Պահված Աստծո Չորությամբ» (Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969)
- 3. Ռոբերտ Շենք «Կյանք Որդու մեջ» (Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961)

Աստվածաշունչը խոսում է երկու տարբեր խնդիրների մասին այս բնագավառում (1) ապահովագրության երաշխիք ապրելու անպտուղ և եսասեր կյանքով (2) քաջալերելով նրանց, ովքեր ծառայության մեջ են և պայքարում են անձնական մեղքի դեմ: Խնդիրն այն է, որ սխալ խմբերը վերցնում են սխալ պատգամը և սահմանափակ աստվածաշնչյան հատվածների հիման վրա աստվածաբանական համակարգեր շինում: Որոշ քրիստոնյաներ պետք ունեն միայն փրկության վստահությանը վերաբերող հատվածներ, մյուսներին նախագգուշացուներ և զգոնություն: Ո՞ր խմբին ես պատկանում դու:

▪ **«Իմ խօսքի մեջ, ճշմարտապես իմ աշակերտներն էք»** Հիսուսն ընդգծեց հնազանդ կենցաղավարությունը (Իր պատվիրաններին, տես հհ. 51,52,55, 14: 15,21,23,24, 15: 10,20; 17: 6; Ղուկ. 6:46, II Հովհ. 9): Ինչ-որ իմաստով այս համարը արտացոլում է *shema*, եբրայերեն բառը, որը նշանակում է «լսել, այնպես անել» (այսինքն, 2 Օր. 6: 4-6):

8:32 «Կ՛ճանաչեք» Սա օգտագործվում է ՀԿ իմաստով «իմանալ, գիտենալ, ճանաչել», որը նշանակում է «անձնական փոխհարաբերություն» և ոչ թե «ճանաչողական ճշմարտության» իմաստով (հմմտ. Ծննդ. 4:1; Երեմ. 1:5): Ճշմարտությունը անձ է: Այս համարը, որը շատ հաճախ հայտնվում է ուսումնական հաստատություններում, չի վերաբերվում կուտակված մարդկային գիտելիքներին: Որը բաժանում և պարտադրում կամ կապում է, ոչ թե ազատում է մարդկանց:

Այստեղ ասված «ճշմարտությունը» Հիսուս Քրիստոսի ավետարանն ու անձն է: Նրանից ջոկ չկա ճշմարտություն, խաղաղություն կամ հույս:

8:32,40,44,45,46 «ճշմարտութիւնը» Սա կոնտեքստի բանալի գաղափարն է: Այս տերմինը ունի երկու ենթատեքստ:

1. արժանահավատություն
2. ճշմարտություն - սուտ

Երկու ենթատեքստերն էլ ճշմարիտ են Հիսուսի կյանքի և ծառայության մասին: Նա ավետարանի թե բովանդակությունն է և թե նպատակը: Ճշմարտությունը հիմնականում անձ է: Հիսուսը հայտնում է Հոր անձը: Սա համարը հաճախ դուրս է բերվում կոնտեքստից և օգտագործվում կրթական միջավայրերում: Փաստերը, նույնիսկ ճշմարիտ փաստերը, նույնիսկ շատ իրական փաստեր, անվճար չեն տրվում (տես Ժող. 1:18): Տես Հատուկ Թեմա ճշմարտությունը 6:55 եւ 17: 3:

8:32 «կ'ազատե՞ք ձեզ» Հավատացյալներն ազատ են օրինապաշտությունից, ծիսապաշտությունից և կենտրոնացված, մարդկային կրոնականության կատարումից: Այդուհանդերձ ազատ հավատացյալները իրենց կապում են հանուն ավետարանի (տես Հռոմ. 14: 1-15:6, I Կորնթ. 8-10):

8:33 «Մենք Աբրահամի զուակ ենք, եւ ոչ որի երբէք չենք ծառայել» Զարմանալի է, թե ինչքան կույր կարող է լինել ռասայական հպարտությունը: Ինչ կասե՞ք Եգիպտոսի, Սիրիայի, Բաբելոնի, Պարսկաստանի, Հունաստանի և Հռոմի մասին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:34-38

³⁴Յիսուսը պատասխանեց նորանց. ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ամեն ով որ մեղք է գործում, մեղքի ծառայ է: ³⁵Օտառն էլ յաւիտեան չէ կենում տան մեջ. Որդին կենում է յաւիտեան: ³⁶Ուրեմն և եթէ Որդին ազատե՞ք ձեզ, յիրաւի ազատ կ'լինիք: ³⁷Գիտեմ որ Աբրահամի զուակ էք. բայց ուզում էք ինձ սպանել. Որովհետեւ իմ խօսքը տեղ չ'ունի ձեզանում: ³⁸Ես ինչ որ տեսայ իմ Հօր մօտ, խօսում եմ. Եւ դուք՝ ինչ որ ձեր հօրիցը տեսաք, անում էք:

8:34 «ամեն ով որ մեղք է գործում, մեղքի ծառայ է» Հիսուսը փորձում էր նրանց առաջնորդել հոգևոր իրականության մեջ իր նախորդ արտահայտության մեջ նշելով «որպեսզի դուք ազատ լինեք» հ. 32, որը հ.33 ցույց է տալիս, որ նրանք սխալ էին հասկացել: Այս արտահայտությունը կապված է Հիսուսի ուժեղ մեղադրանքների հետ հհ. 21 և 24: Նրա դատապարտումները այդ հետևորդներին լրիվ տեղին էր հհ. 44-47:

Քանի որ Frank Stagg-ը նշում է *New Testament Theology* -ի մեջ, որ «մարդու վիճակի հեգնանքը այն է, որ կապվածությունը իր ազատ լինելու փորձի արդյունքն է» (էջ 32):

Այստեղ ԲԱՅՑ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, «անում է/գործում է», - որը նշանակում է շարունակական մեղք: Շարունակական մեղքը վկայում է, որ անձը չի «ճանաչում» ճշմարտությունը (Հիսուսին): Այս նույն ճշմարտությունն արտահայտվում է ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐՈՎ «մեղանչել» I Հովհ. 3: 6,9:

Հարցն այս է «Արդյո՞ք հավատացյալները դեռևս մեղք գործում են»: Պատասխանը պետք է լինի «այո» (հմմտ. Հռ. 7; I Հովհ): Քրիստոնյաները պայքարում են մեղքի դեմ:

NET Աստվածաշունչը (էջ 1921 #21) տալիս է լավ մեկնաբանություն, որ Հովհաննեսի Ավետարանի կոնտեքստուալ մեղքը դա «անհավատությունն է» (աններելի մեղքը): Սա ոչ թե բարոյական կոնտեքստ է, այլ «հավատք դեպի փրկություն կոնտեքստ»: I Հովհ. «մեղքը» նաև անհավատությունն է (մեղք դեպի մահ):

8:35 Այս համարը ուղղակիորեն չի առնչվում հ. 34, հապա հ. 36-ի հետ: Հիսուսն է ճշմարիտ որդին և ոչ թե ռաբունական հուդայականության Մովսեսը (տես Եբր. 1: 2; 3: 6, 5: 8; 7:28): Միայն Նրան հավատարմով կարողը մարդը ազատ լինել, այլ ոչ թե կանոնների և ծիսակատարությունների անվերջ կատարումով (հմմտ հ. 32):

▪ **«յաւիտեան»** Տես Հատուկ Թեմա 6:58.

8:36 «եթէ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը խոսում է պոտենցիալ գործողության մասին:

8:37 «բայց ուզում էք ինձ սպանել» (հմմտ. 5:18; 7:1,19; 8:37,40; 11:53)

▪ **«Որովհետեւ իմ խօսքը տեղ չ'ունի ձեզանում»** Այս արտահայտությունը կարելի է հասկանալ մի քանի իմաստներով: Օգտակար ուսումնասիրության օգնություն է *The Bible in Twenty Six Translations/ Աստվածաշունչը քսանվեց թարգմանություններով*:

1. «որովհետեւ իմ խօսքը, ձեր մեջ չունի ազատ ճանապարհ»– American Standard Version
2. «ձեր մեջ որևէ հիմք չի ստանում»– *The New Testament Henry Alford*
3. « ձեր մեջ չկա առաջընթաց»– *The New Testament: A New Translation James Moffatt*
4. « ձեր մեջ տեղ չգտավ»– *The Emphasized New Testament: A New Translation J. B. Rotherham*
5. «որովհետեւ իմ խոսքերը ձեր սրտերում տեղ չի գտնում»– *The Four Gospels E. V. Rieu*

Կրկին, խնդիրը ավետարանը ընդունելը կամ չընդունելն է: Դա փրկության խնդիր է, ոչ թե բարոյական առաջընթաց:

8:38 «Ես ինչ որ տեսայ» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը վերաբերում է Հիսուսի նախագոյությանը և ընթացիկ հաղորդակցությանը Հոր հետ (տես հ. 40,42):

▪ **«Եւ դուք՝ ինչ որ ձեր հօրիցը տեսաք, անում էք»** Առաջին հիշատակումը «հոր» բառի կարող է լինել հղում հրեական ավանդույթին (տես Ես. 29:13): Սակայն, հհ. 41-44 ԵՆԹԱԿԱՆ որակավորված է սատանային/դևիկ: Ենթադրաբար «Մովսեսին» սատարող նրանց գործողությունները, շարժառիթները և բառերը հստակ ցույց են տալիս իրենց հոգևոր կողմնորոշումը: Մարդիկ չեն / չեն կարող նախաձեռնել հոգևոր հարթությունում: Կան երկու ազդեցության (ոչ դուալիզմի) աղբյուրներ - Աստված / Քրիստոս / Հոգի կամ Սատանա / և Իր: Թե ինչպես է մարդն արձագանքում ավետարանին (տես 1:12, 3:16, 10: 1-18, 14: 6) բացահայտում է հոգևոր կողմնորոշումը:

Այս արտահայտության հետ կապված կա որոշ տեքստային տարբերակ:

1. «հայր» բառի երկու հղումներն էլ կարող են վերաբերվել ԵՀՈՎԱՅԻՆ (չկա ԴԵՐԱՆՈՒՆ «քո»-ն)
2. ԲԱՅՑ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, ոչ թե ՍԱՀՄԱՆԱԿԱՆ

(տես Bruce M. Metzger, *A Textual Commentary on the Greek New Testament*, էջ 225):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:39-47
³⁹Պատասխանեցին եւ ասեցին նորան. Մեր Հայրն Աբրահամն է. Յիսուսը նորանց ասեց. Եթէ Աբրահամի որդիք լինէիք, Աբրահամի գործերը կ'գործէիք: ⁴⁰Բայց հիմա ուզում էք ինձ սպանել, մի մարդի, որ ճշմարտութիւնն եմ խօսել ձեզ. որ Աստուածանից լսեցի. Այդ բանն Աբրահամը չ'արաւ: ⁴¹Դուք ձեր հօր գործերն էք անում. Եւ ասեցին նորան. Մենք պոռնկութիւնից չենք ծնուած. մէկ Հայր ունինք, այսինքն Աստուած. ⁴² Յիսուսն էլ նորանց ասեց. Եթէ ձեր հայրն Աստուած լինէր, ինձ կ'սիրէիք. որովհետեւ ես Աստուածանից դուրս ելայ եւ եկայ. Որովհետեւ ոչ թէ իմ անձիցն եկայ, այլ նա ուղարկեց ինձ: ⁴³ Ի՞նչու համար իմ խօսքը չէք իմանում. Նորա համար որ դուք չէք կարող իմ խօսքը լսել: ⁴⁴ Դուք ձեր սատանայ հօրիցն էք, եւ կամենում էք ձեր հօր ցանկութիւններն անել. Նա

սկզբիցը մարդասպան էր, եւ ճշմարտութեան մէջ չ'կեցաւ, որովհետեւ ճշմարտութիւն չ'կայ նորանում. Երբոր սուտն է խօսում, իրաններիցն է խօսում, որովհետեւ ստախօս է եւ ստութեան հայրը: ⁴⁵Բայց եւ, որովհետեւ ճշմարտութիւն եմ խօսում, ինձ չէք հաւատում: ⁴⁶Ձեզանից ո՞վ կարող է ինձ մեղքի համար յանդիմանել. Բայց եթէ ճշմարտութիւնն եմ ասում, ի՞նչու չէք հաւատում ինձ: ⁴⁷Աստուածանից լինողը Աստուծոյ խօսքերը լսում է. Նորա համար դուք չէք ականջ դնում, որ Աստուածանից չէք:

8:39 «Մեր Հայրն Աբրահամն է» Հիսուսը հաստատեց նրանց ֆիզիկական ծագում Աբրահամից, սակայն նշեց, որ իրենք ունեին սատանայի ընտանեկան հատկանիշներ (հմմտ. հհ. 38,44): Անձնական հավատքի հարաբերությունը, և ոչ թէ ռասայական ինքնությունն է հրեաներին ուղիղ դարձնում Աստծո հետ (հմմտ. 2 Օրին. 6: 5,13; Հռ. 2: 28-29, 9: 6):

▪ **«Եթէ»** Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է (պայմանական նախադասության պայման պարունակող մասը - ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՄԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ *ei* հետ) ձևով, բայց դա կարող է գործել որպէս ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ (հմմտ. հհ. 19 և 42): Հունարեն ձեռագիր տարբերակները փորձել են հեռացնել այս խառը պայմանական ձևը փոխելով առաջին ԲԱՅԸ ԱՆԿԱՏԱՐ ձևի: Եթէ այդպէս է, այն կարելի է կարդալ այսպէս «Եթէ դուք Աբրահամի որդիները լինեիք, որը չէք, ապա դուք պետք է անեիք այն, ինչ արեց Աբրահամը, բայց դուք չէք»: UBS⁴ տալիս է խառը պայմանական «Բ» վարկանիշի ձև (գրեթէ վստահելի):

8:40 «մի մարդի» Հիսուսը ոչ միայն հասկացել էր Իրեն որպէս ԵՀՈՎԱՅԻ ներկայացուցիչ, հավասար աստվածային էությանը ԵՀՈՎԱՅԻ հետ, այլև որպէս իսկական մարդու: Այս պնդումը հերքել է գնոստիկ կեղծ ուսուցիչների հոգու և ֆիզիկական բաների միջև հավիտենական դուալիզմի պնդումը (հմմտ. Ա Հովհ. 1: 1-4; 4: 1-4):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԳՆՈՍՏԻՑԻԶՄ

Ա. Այս հերետիկոսության մասին ունեցած մեր գիտելիքների մեծ մասը գալիս է երկրորդ դարի գնոստիկական գրվածքներից: Սակայն դրա գաղափարները ներկա էին առաջին դարում (Մեռյալ ծովի ձեռագրերը) և Հովհաննես Առաքյալի գրվածքներում:

Բ. Եփեսոսի (Ա Տիմոթեոս), Կրետեի (Տիտոս) և Կողոսայի (Կողոսացիներ) խնդիրը սկսվող Գնոստիցիզմի և օրինապաշտական հուղայականության հիբրիդ էր:

Գ. Երկրորդ դարի Վալենտինիանոսի և Կերենտինյան Գնոստիցիզմի որոշ սկզբունքներ:

1. Նյութն ու հոգին համահավիտենական էին (օնթոլոգիական/գոյաբանական դուալիզմ): Նյութը չար է, հոգին բարի: Աստված հոգի է և չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել ձուլածո չար նյութի հետ:
2. Աստծո և նյութի միջև կան ճառագայթումներ (եոններ կամ հրեշտակային մակարդակներ): Վերջինը կամ ամենացածրը Հին Կտակարանի ԵՀՈՎԱՆ էր, որը ձևավորեց կամ կազմեց տիեզերքը (*kosmos*):
3. Հիսուսը էմանացիա/ճառագայթում էր, ինչպէս ԵՀՈՎԱՆ, բայց ավելի բարձր, ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք Նրան ամենաբարձրն են համարում, բայց պակաս Աստծուց և, իհարկէ, ոչ մարմնավորված Աստված (տես Հովհ.1:14): Քանի որ նյութը չար է, Հիսուսը չէր կարող ունենալ մարդկային մարմին և լինել աստվածային: Նա հայտնվել է որպէս մարդ բայց, իրականում միայն որպէս հոգի (հմմտ. I Հովհ. 1: 1-3; 4: 1-6):
4. Փրկությունը ձեռք էր բերվում Հիսուսին հավատալով գումարած հատուկ գիտելիքներ, որը միայն հայտնի է հատուկ անձանց: Գիտելիքը (գաղտնաբառերը) անհրաժեշտ էր փոխանցել երկնային ուղորտների միջոցով: Հրեական

լեզալիզմը/օրինապաշտությունը նույնպես պահանջում էր հասնել Աստծուն:

Դ. Գնոստիկ կեղծ ուսուցիչները պաշտպանում էին երկու հակադիր էթիկական համակարգերի:

1. Ոմանց համար, ապրելակերպը բոլորովին կապ չուներ փրկության հետ: Նրանց համար, փրկությունը և հոգևորությունը ամփոփված էին գաղտնի գիտելիքներում (գաղտնաբառեր) հրեշտակային ուղորտների միջոցով (*eons*):
2. Մյուսների համար, ապրելակերպը ծայրաստիճան անհրաժեշտ էր փրկության համար: Այս գրքում կեղծ ուսուցիչներն ընդգծում են ճգնաժամի ապրելակերպը որպես ճշմարիտ փրկության ապացույց (տես 2: 16-23):

Ե. Լավ հղում ունի *The Nag Hammadi Library* հեղինակ James M. Robinson and Richard Smith գիրքը:

8:41

- NASB, NKJV “Մենք պոռնկությունից չենք ծնվել”
- NRSV “Մենք ապօրինի զավակներ չենք”
- TEV “Մենք իսկական զավակներն ենք”
- NJB “Մենք ապօրինությունից ծնված չենք”

Սա հնարավոր է կապված է հ.48 մեղադրանքի հետ («դու Մամարացի ես»): Թվում է, հրեաները պնդում էին, որ Հիսուսը անօրինական որդի էր, ոչ թե գտարյուն հրեա: Ավելի ուշ ռաբունական աղբյուրները ասացին, որ Հիսուսը ծնվեց մի հռոմեացի զինվորից:

▪ **«մեկ Հայր ունինք, այսինքն Աստուած»** Այս արտահայտությունը արտացոլում է հինկտակարանյան խիստ մոնոթեիզմը (հմմտ. 2 Օր. 4:35,39; 6:4-5) արտահայտվում է ծնողական տերմիններով (հմմտ. 2 Օրենք 32: 6; Ես. 1: 2; 63:16; 64 : 8): Այստեղ էր երկրնտրանքը կամ դիլեման; այդ հրեա առաջնորդները պնդում էին Աստծո մեկությունը (հմմտ. 2 Օրենք 6: 4-5) և, որ հնազանդությունը Մովսիսական օրենքին բերեց ճիշտ փոխհարաբերություն Աստծո հետ (հմմտ. 2 Օրենք 6: 1-3,17, 24-25): Հիսուսն եկավ պնդելով, որ մեկ է Աստծո հետ: Հիսուսը պնդում էր, որ Աստծո հետ ուղիղ լինելը հիմնված չէր օրենքը կատարելու վրա, այլ Իր վրա ունեցած անձնական հավատքով: Նրանց շփոթությունն ու դժկամությունը հասկանալի է, բայց այստեղ է, որ Հոգու ներըմբռնումը և Հիսուսի գորավոր գործերը հավատք են բերում:

8:42 «Եթե» Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է «չի համապատասխանում իրականությանը»: «Եթե Աստված լիներ ձեր Հայրը, որ Նա չէ, պիտի սիրեիք ինձ, որը դուք չեք» (հմմտ. հ. 47):

8:43 «Նորա համար որ դուք չեք կարող իմ խօսքը լսել» Սա վերաբերվում է հոգևոր ընկալունակությանը և փոխըմբռնմանը: Նրանք չունեին հոգևոր ականջներ (հմմտ. Ես. 6:9-10; Մաթ. 11:15; 13:9,15-16,43; Մարկ. 4:9,23; 7:16; 8:18; Ղուկ. 8:8; 14:35; Գործք 7:51; 28:26-27):

8:44 «Դուք ձեր սատանայ հորիցն էք» Ինչ զարմանալի արտահայտություն ուղղված Իր օրերի կրոնական առաջնորդներին (հմմտ. հ. 47): Այս հասկացությունը ընտանիքի բնութագրերի գաղափար է, որն արտահայտվում է եբրայերեն իդիոմայով «... որդիները» (Հմմտ. Մաթ. 13:38; Գործք 13:10; Ա Հովհ. 3: 8,10):

«Սատանա» Տես Հատուկ Թեմա 12:31

▪ **«սկզբիցը մարդասպան էր»** Սա չի նշանակում, որ չարը հավիտյան էր (այսինքն, դուալիզմը ինչպես Զրադաշտության մեջ), բայց այն արտացոլում է Ադամի և Եվայի հոգևոր փորձության

գաղափարը՝ օձի մեջ բնակվող սուտ հոգու կատարած գործի միջոցով (տես Ծննդոց 3): Ուշադրություն դարձրեք նպատակային հակադրությանը Աստծո, որը ճշմարիտ է, ճշմարտություն է և սատանայի միջև:

8:46 «Ձեզանից ո՞վ կարող է ինձ մեղքի համար յանդիմանել» Կոնտեքստում սա վերաբերվում է կեղծ վկայությանը: Սատանան սուտ է խոսում, բայց Հիսուսը խոսում է ճշմարտությունը: Հիսուսը կոչ է անում այդ հրեա առաջնորդներին հերքել իր դրույթները կամ ուսմունքները, որոնք ապացուցում են նրա կեղծ լինելը: Այս կոնտեքստում այս արտահայտությունը կարծես թե չի վերաբերվում Հիսուսի անմեղությանը, որպես աստվածաբանական վարդապետություն:

Հովհաննեսի Ավետարանում «մեղքը» ավելի ընկած աշխարհում Աստծո դեմ ապստամբած չարի սկզբունք է, քան մեղքի կոնկրետ արարք: Մեղքը ամեն ինչ է, Հիսուսը ոչ: Վերջնական «մեղքը» անհավատությունն է (հմմտ. 16: 9):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 8:48-59
⁴⁸Հրեաները պատասխանեցին եւ ասեցին նորան. Չէ՞ որ մենք լաւ ենք ասում, թէ դու Սամարացի ես, եւ դէռ ունիս: ⁴⁹Յիսուսը պատասխանեց. Ես դէռ չ'ունիմ, այլ իմ Հօրը պատուում եմ, եւ դուք անպատուում էք ինձ: ⁵⁰Եւ ես իմ փառքը չեմ որոնում. Կայ որոնողը եւ դատողը: ⁵¹Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Եթէ մէկն իմ խօսքը պահէ, նա մահ չի տեսնիլ յաւիտեան: ⁵²Հրեաներն էլ ասեցին նորան. Հիմա իմացանք, որ դէռ ունիս. Աբրահամը մեռաւ եւ մարգարէներն էլ. Եւ դու ասում ես Եթէ մէկն իմ խօսքը պահէ, մահ չի ճաշակիլ յաւիտեան: ⁵³Մի՞թէ դու անէլի մեծ ես քան մեր հայր Աբրահամը, որ մեռաւ եւ մարգարէներն էլ մեռան. Դու քեզ ո՞վ ես անում: ⁵⁴Յիսուսը պատասխանեց. Եթէ ես իմ անձը փառաւորեմ, իմ փառքը ոչինչ է. Հայրն է ինձ փառաւորողը, որի համար դուք ասում էք, թէ ձեր Աստուածն է. ⁵⁵Եւ դուք չէք ճանաչում նորան. Բայց ես գիտեմ նորան. Եւ եթէ ասեմ, թէ ես չ'գիտեմ նորան, ձեզ նման ստախոս կ'լինիմ. Բայց ես գիտեմ նորան, եւ նորա խօսքը պահում եմ: ⁵⁶Աբրահամ՝ ձեր հայրը ցանկացաւ, որ իմ օրը տեսնէ, եւ տեսաւ, եւ ուրախացաւ էլ: ⁵⁷Հրեաները նորան ասեցին. Դու դէռ յիսուն տարեկան չես, եւ Աբրահամի՞ն տեսար: ⁵⁸ Յիսուսը նորանց ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Աբրահամի լինելուց առաջ եմ ես: ⁵⁹Եւ նորանք քարեր վեր առան, որ նորա վերայ գցեն. Բայց Յիսուսը ծածկուեցաւ, եւ դուրս ելաւ գնաց տաճարից՝ [նորանց միջովն անցնելով. Եւ այսպէս գնաց:]

8:48 «դու Սամարացի ես, եւ դէռ ունիս» Կա հավանականություն, որ ճշմարիտ կոնտեքստային իմաստը արտացոլվում է արամեերեն բառով՝ թարգմանված հունարեն «սամարացի» բառը, որը նշանակում է «դների գլխավոր»: Հիսուսը խոսեց արամեերեն: Եթե դա այդպես է, ապա այն համապատասխանում է կրոնական առաջնորդների կողմից արված մշտական մեղադրանքին, որ Հիսուսի իշխանությունը չար գերբնական աղբյուրից էր գալիս: Հնարավոր է նաև, որ երբ ասում են, թե մեկը սատանա ուներ նշանակում է, որ նրանք ստում էին (տես հ. 52): Ասել, որ Հիսուսը սամարացի էր (տես 4: 9) կամ դև ուներ (հմմտ. 7:20; 8: 48,49,52, 10: 20,21, տես Հատուկ Թեմա 12:31) միջոց էր ասելու, որ պետք չէ լսել Նրան կամ արձագանքել Նրա պատգամին: Այս ապա, ինչպես և «Մեր հայր Աբրահամը», - ևս մեկ արդարացում էր չարձագանքել Հիսուսին կամ Նրա պատգամին:

8:49 Մարդ չի կարող հավատալ Հորը իսկ Որդուն ոչ (հմմտ. I Հովհ. 5:9-12); մարդ չի կարող ճանաչել Հորը և Որդուն չպատվել (հմմտ. 5:23): Չնայած երկու առանձին ներքին անձեր, բայց Նրանք մեկ են (հմմտ. 10:30; 17:21-23):

8:50 «իմ փառքը» Տես ծանուցում 1:14.

8:51,52 «Եթէ...Եթէ» Սրանք երկուսն էլ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ են, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Ուշադրություն դարձրեք, որ հնազանդությունը կապված է հավատքին (տես տեքստերի ցանկը հ.48):

▪ **«նա մահ չի տեսնիլ յաիտեան»** Սա խիստ ԿՐԿՆԱԿԻ ԲԱՑԱՄԱԿԱՆ է: Անշուշտ սա վերաբերվում է հոգևոր մահվանը (հմմտ. հհ. 21,24), ոչ թե ֆիզիկական (հմտ. 5:24; 6:40, 47; 11:25-26): Այն կարող է վերաբերվել մահվան վախին (հմմտ. I Կոր. 15:54-57):

«Մահվան» գաղափարը (*thanatos*) Աստվածաշնչում արտահայտվում է երեք փուլերով

1. հոգևոր մահ, Ծննդ. 2:17; 3:1-24; Ես. 59:2; Հռ. 7:10-11; Հակ. 1:15 (Աստծո հետ հարաբերությունը խզված է)
2. ֆիզիկական մահ, Ծննդ. 3:4-5; 5 (մոլորակի հետ հարաբերությունը խզված է)
3. հավիտենական մահ, «երկրորդ մահը», Հայտ. 2:11; 20:6,14; 21:8 (Աստծո հետ խզված հարաբերությունը դառնում է մշտական)

Մահը Աստծո ամենաբարձր ստեղծագործության համար Իր կամքի հակառակն է (տես Ծննդոց 1: 26-27):

8:52 Սա ցույց է տալիս, որ նրանք սխալ էին հասկացել Հիսուսի միտքը (հմմտ. հ. 51): Նրանք կարծում էին, թե դա վերաբերվում է Աբրահամի և մարգարեների ֆիզիկական կյանքին:

8:53 Այս հարցն ակնկալում է «ոչ» պատասխան: Ինչպիսի ցնցող արտահայտություն: Բայց սա հենց այն, ինչ Հիսուսը պնդում էր:

1. Նա ավելի մեծ էր քան Աբրահամը, հ. 53
2. Նա ավելի մեծ էր քան Հակոբը, 4:12
3. Նա ավելի մեծ էր քան Հովնանը, Մաթ. 12:41; Ղուկ. 11:32
4. Նա ավելի մեծ էր քան Հովհաննես Մկրտիչը 5:36; Ղուկ. 7:28
5. Նա ավելի մեծ էր քան Սողոմոնը, Մաթ. 12:42; Ղուկ. 11:31

Ամբողջ Եբրայեցիա թողթը ցույց է տալիս Հիսուսի գերազանցությունը Մովսեսից, նոր ուխտը հնից (տես Եբրայեցիա թղթի իմ մեկնաբանությունը անվճար օնլայն տարբերակով www.freebiblecommentary.org):

▪ **«Ղու քեզ ո՞վ ես անում»** Հենց սա է միտքը: Հիսուսը հստակ պնդում է եզրակացությունը հհ. 54 և 58 և նրանք փորձում են քարկոծել Նրան հայեցողության համար (տես հ. 59):

8:54 «Եթէ» Եվս մեկ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, որը նշանակում է պոտենցիալ գործողություն:

▪ **«փառաւորեն»** Այստեղ սա օգտագործված է պատվելու իմաստով (հմմտ. Հռ. 1:21; I Կոր. 12:26):

8:55 «գիտեմ. . . գիտեմ» Այս համարում անգլերեն տերմինը թարգմանում է երկու հունարեն տերմիններ *ginōskō* և *oida*, որոնք այս կոնտեքստում կարծես հոմանիշներ են (հմմտ. 7:28-29): Հիսուսը ճանաչում է Հորը և հայտնում է Նրան Իր հետևորդներին: Աշխարհը (անգամ հրեաները) չեն ճանաչում կամ չգիտեն Հորը (հմմտ. 1:10; 8:51; 10:3; 17:25):

8:56 «Աբրահամ՝ ձեր հայրը» Սա զարմանալի արտահայտություն է: Հիսուսն Իրեն հեռացնում է «Հրեաներից», «Օրենքից» (հմմտ. 8:17), «Տաճարից» և անգամ Աբրահամ նահապետից: Կա հստակ բաժանում Հին Կտակարանից:

▪ **«ցանկացաւ, որ իմ օրը տեսնել»** Սա ԱՕԲԻՍ ՉԵԶՈՔ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Ի՞նչ գիտեր Աբրահամը Մեսիայի մասին: Մի քանի թարգմանություններ սա թարգմանում են ապառնի ժամանակով: Այս տարբերակները վերցված են *The Bible in Twenty-Six Translations*-ից:

1. «Ցնծում է, որ նա կարող է տեսնել»– *The Emphasized New Testament: A New Translation* J. B. Rotherham
2. «Ուրախանում է, որ նա պետք է տեսնի իմ օրը» – Revised Standard Version
3. «Չափազանց երջանիկ էր տեսնելու հեռանկարով» – *The Berkeley Version of the New Testament* Gerrit Verkuyl
4. «Տեսնելով իմ գալուստ»– *The New Testament: An American Translation* Edgar J. Goodspeed
5. «ուրախ էր իմանալ իմ օրը» – *The New Testament in the Language of Today* William F. Beck

Բացի այդ, *The Analytical Greek Lexicon Revised*, խմբագրված Harold K. Moulton-ի կողմից թվարկում է ԲԱՅՇ, որ Մեպտուազիսնում նշանակում է «ջերմորեն փափագել» (էջ 2):

▪ **«տեսաւ, եւ ուրախացաւ էլ»** Սա վերաբերվում է երկուսից մեկին:

1. որ Աբրահամը, իր կյանքի ընթացքում, ուներ Մեսիայի տեսիլք (հմմտ. II Եզրաս 3:14)
2. որ Աբրահամը ողջ էր (երկնքում) և գիտակցում Մեսիայի գործը երկրի վրա (տես Եբր. 11:13)

Հիսուսի արտահայտության ամբողջ միտքն այն է, որ հրեա ազգի Հայրը անհամբեր սպասում էր Մեսիական դարաշրջանին մեծ ուրախութեամբ, սակայն ներկա «սերունդը» հրաժարվեց հավատալ և ուրախանալ: Աբրահամը հավատացյալների հայրն է (տես Հռոմ 2: 28-29), այլ ոչ թե անհավատների:

8:57 Կրկին Հիսուսի ունկնդիրները սխալ էին հասկացել Նրա խոսքերը իրենց բառապաշտության պատճառով: Այս շփոթմունքը նպատակային էր: Նրանք չէին տեսնում, որովհետև չէին ուզում տեսնել կամ, հնարավոր է, չէին կարող տեսնել:

8:58 «Աբրահամի լինելուց առաջ եմ ես» Սա հայեցողություն էր հրեաների համար և նրանք փորձեցին քարկոծել Հիսուսին (տես Ելից 3:12, 14): Նրանք ամբողջությամբ հասկացան Նրա ասածը, որ Նա նախագոյ Աստված էր (տես 4:26; 6:20; 8:24,28,54-59; 13:19; 18: 5,6,8):

8:59 «Եւ նորանք քարեր վեր առան, որ նորա վերայ գցեն» Հիսուսի խոսքերը շատ պարզ էին: Նա Մեսիան էր և Նա մեկ էր Հոր հետ: Այս հրեաները, ովքեր հ. 31-ում հավատացել են Նրան, այժմ պատրաստ են Նրան քարկոծելու հայեցողության համար (տես Ղև. 24:16): Դա այնքան դժվար էր այդ հրեաների համար ընդունելու Հիսուսի արմատական նոր պատգամը:

1. Նա չգործեց այնպես ինչպես ակնկալում էին Մեսիայից
2. Նա մարտահրավեր նետեց նրանց սրբազան բանավոր ավանդույթներին
3. Նա շփոթեցրեց նրանց խիստ մոտթեիզմը
4. Նա պնդում էր, որ սատանան էր, ոչ թե ԵՀՈՎԱՆ, նրանց «հայրը»

Մարդը պետք է «քարկոծի» կամ «ընդունի» Նրան: Չկա միջին տարբերակ:

▪ **«Բայց Յիսուսը ծածկուեցաւ, եւ դուրս ելաւ գնաց տաճարից»** Սա այն համարներից մեկն է, որը թարգմանիչներին գցում է տարաձայնության մեջ (և ավելացնել արտահայտություններ հունական տեքստ), թե արդյոք

1. սա հրաշք էր (հմմտ. Ղուկ. 4:30 և տեքստային լրացումներ այստեղ)
2. Հիսուսը խառնվեց և կորավ ամբոխի մեջ, որովհետև Նա նման էր մյուս բոլոր ներկա գտնվող հրեաներին

Կար աստվածային ժամանակացույց: Հիսուսը գիտեր, որ Ինքն եկել էր մեռնելու և նա գիտեր թե ինչպես էր, երբ և որտեղ: Նրա «ժամը դեռ չէր հասել»:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Արդյոք Հովհ. 7:53-8:11 Հովհաննեսի Ավետարանի բնօրինակի մաս է կազմում:
Ինչու՞ և ինչու՞ ոչ:
2. Ո՞րն է Հիսուսի «Ես եմ աշխարհի լոյսը» արտահայտության ֆոնը:
3. Ինչու՞ էին փարիսեցիներն այդքան հակադրվում Հիսուսին:
Բացատրեք հ.30-ի «հավատալ» տերմինի օգտագործումը հետևյալ կոնտեքստի լույսի ներքո:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 9

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Իծնե կոյրի բժշկումը 9:1-12	Իծնե կոյրը ստանում է տեսողություն 9:1-12	Հիսուսը ցույց է տալիս Իրեն որպես Կյանքի Լույս 9:1-12	Հիսուսը բժշկում է իծնե կոյրին 9:1-2 9:3-5 9:6-7 9:8 9:9ա 9:9բ 9:10 9:11 9:12ա 9:12բ	Իծնե կոյրի բժշկումը 9:1-5 9:6-7 9:8-12
Փարիսեցիները քննում են բժշկությունը 9:13-17	Փարիսեցիները արտաքսում են բժշկված մարդուն 9:13-34	9:13-17	Փարիսեցիները քննում են բժշկությունը 9:13-15 9:16ա 9:16բ 9:17ա 9:17բ	9:13-17
9:18-23		9:18-23	9:18-19 9:20-23	9:18-23
9:24-34		9:24-34	9:24 9:25 9:26 9:27 9:28-29 9:30-33 9:34	9:24-34
Հոգևոր կուրություն 9:35-39	Ճշմարիտ տեսողություն և ճշմարիտ կուրություն 9:35-41	9:35-41	Հոգևոր կուրություն 9:35 9:36 9:37 9:37 9:39	9:35-39
9:40-41			9:40 9:41	9:40-41

ԸԹԵՐՑՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ և ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏԸ 1-41 հհ.

- Ա. Կույրերին բժշկելը շատ հաճախ կատարվող հրաշք էր, որը Հիսուսը կատարեց Իր երկրային ծառայության ընթացքում, բայց Նա դա անում էր տարբեր կերպերով:
- Բ. Կույրի բժշկումը մեսսիական նշան էր (հմմտ. Ես. 29:18; 35:5; 42:7; Մաթ. 11:5): Այս բժշկությունների կարևորությունը երևում է անմիջական կոնտեքստից, որտեղ Հիսուսը հայտնում է, որ ԻՆՔՆ է «Աշխարհի Լույսը» (հմմտ. 8:12 և 9:5): Հրեաները նշան ուզեցին; նրանք ունեին մի քանիսը: Միայն ՅԵՋՈՎԱՆ կարող է աչքեր բացել:
- Գ. Այս գլխում կա մի առակ, որտեղ խոսվում է մարդու ֆիզիկական կուրության և փարիսեցիների հոգևոր կուրության մասին (հմմտ. հհ. 39-41; Մաթ. 6:23):

ԲԱՈՒ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9:1-12

¹Եւ անցկենալիս մի մարդ տեսաւ ծնունդից կույր: ²Եւ նորա աշակերտները հարցրին նորան եւ ասեցին. Ռաբբի, ո՞վ է մեղանչել, սա՞ թէ իրան ծնողքը, որ կոյր է ծնուել: ³Յիսուսը պատասխանեց. Ոչ դա է մեղանչել, եւ ոչ էլ իրան ծնողքը. այլ որ Աստուծոյ գործերը յայտնի լինին դորանում: ⁴Ինձ պէտք է նորա գործերը գործել, որ ինձ ուղարկեց, քանի որ օր կայ. զիշերը գալիս է, որ այն ժամանակ ոչ ով կարող չէ գործել: ⁵Քանի որ աշխարհքումն եմ, լոյս եմ աշխարհքի. ⁶Այս ասելով թքեց գետինը, եւ թուփցըր ցելս շինեց, եւ ցելսը քսեց կոյրի աչքերի վերայ: ⁷Եւ նորան ասեց. Գնա լուացուիր Սիլովամի աւազանումը, (որ թարգմանվում է՝ Ուղարկուած.) եւ նա գնաց լուացուեցաւ, եկաւ եւ տեսնում էր: ⁸Բայց դրացիները եւ նորանք որ առաջուց տեսել էին նորան, որ կոյր էր, ասում էին՝ Չէ՞ որ սա է այն մտտող մուրացողը. ⁹Ուրիշներն ասում էին, թէ Նա է. ուրիշներն էլ, թէ Նորան մնան է. բայց ինքն ասում էր թէ Ես եմ: ¹⁰Եւ նորան ասում էին. Ապա աչքերդ ի՞նչպէս բացուեցան: ¹¹Նա պատասխանեց եւ ասեց. Մի մարդ՝ անունը Յիսուս, ցելս շինեց եւ աչքերիս քսեց, եւ ինձ ասեց. Գնա Սիլովամի աւազանը, եւ լուացուիր. գնացի եւ լուացուեցայ, եւ տեսնում եմ: ¹²Եւ նորան ասեցին. Ու՞ր է նա. ասեց. Չգիտեմ:

9:1 «ծնունդից կույր» Սա միակ օրինակն է, որտեղ բժշկվում է իծնե կույրը: Յանկացած տեսակի խաբեություն կամ սուտ բացատվում էր այստեղ:

9:2 «նորա աշակերտները» 6-րդ գլխից հետո առաջին անգամն է նշվում Իր աշակերտների մասին: Խոսքը կամ (1) հրեա-աշակերտների մասին էր, որոնց մասին խոսվում է 7:3 կամ էլ (2) Տասներկուսի:

- «ո՞վ է մեղանչել, սա՞ թէ իրան ծնողքը, որ կոյր է ծնուել» Այս հարցը ծնել է շա աստվածաբանական քննարկումներ: Բայց մենք պետք է նայենք դրան հին հուդայականության տեսանկյունից, և ոչ թե արևելյան կրոնների: Կան մի քանի հնարավոր տարբերակներ
 1. սա վերաբերվում է ներազանդային մեղքերին, որի թեորիան առաջ էին քաշում ռաբբիները հիմնվելով Ծննդ. 25:22
 2. սա վերաբերվում է ծնողների մեղքերին կամ անմիջական նախահայրերի մեղքին, որը ազդել է չծնված երեխայի վրա (հմմտ. Ել. 20:5; 2 Օրին. 5:9)
 3. սա վերաբերվում է մեղքի և հիվանդության միջև եղած կապին, որն ամբողջությամբ համապատասխանում էր ռաբբիների աստվածաբանությանը (հմմտ. Հակ. 5:15-16; Հովհ. 5:14)

Այս տեքստը ոչ մի ընդհանուր բան չունի վերամարմնավորման արևելյան ցիկլային աստվածաբանության հետ կամ *կարմայի* անվիլի հետ: Այստեղ գուտ հրեական իրավիճակ է տիրում: Այս հարցի շուրջ ավելի մանրամասն հետազոտության համար տես Ջեյմս Ու. Սայրսի «Մուրբ Գրքի խեղաթյուրումները» [James W. Sire's *Scripture Twisting*], էջ 127-144:

9:3 Այս համարում Հիսուսը պատասխանում է աշակերտների հարցին հ. 2-ում: Մի քանի ճշմարտություններ են բացահայտվում (1) մեղքն ու հիվանդությունը չեն կապվում իրար հետ ավտոմատ կերպով և (2) խնդիրները հաճախ առիթ են հանդիսանում Աստծո օրհնության համար:

9:4 «Ինձ. . ինձ» Ակնհայտ է այս դերանունների անհամաձայնությունը: Մի քանի հունարեն ձեռագրերում փոխված է կամ առաջինը, կամ էլ երկրորդը՝ քերականական համաձայնեցում բերելու համար: Բայց, առանց կասկածանքի, նրանք պարզ արտացոլում են աստվածաբանական իմաստը, որ Հիսուսն է Լույսը աշխարհի, իսկ մենք էլ պետք է արտացոլենք այդ լույսը մեր օրերում (հմմտ. Մաթ. 5:14):

- **«գիշերը գալիս է»** Այս արտահայտության համեմատությունը հ. 5-ի հետ ցույց է տալիս, որ սա փոխաբերություն է: «Գիշեր» բառի տակ կարելի է հասկանալ
 1. գալիք դատաստանը
 2. ավետարանչության հնարավորության շրջանի ավարտը
 3. Հիսուսի մերժումն ու խաչելությունը

9:5 «Քանի որ աշխարհքումն են» Թվում է, թե սա վերաբերվում է մարմնավորման ժամանակահատվածին՝ Բեթլեհեմից մինչև Գողգոթա/Չիթենյաց լեռ: Հիսուսն այստեղ էր միայն սահմանափակ ժամանակով: Իր ունկընդիրները պետք է հիմա արձագանքեն Իր պատգամին: Այս արտահայտությունը աստվածաբանորեն զուգահեռ է հ. 4-ին:

Չարմանալի է թե քանի անգամ է օգտագործվում «Ես են»-ը այսպիսի կոնտեքստում:

- **«լոյս են աշխարհքի»** Հովհաննեսը հաճախ օգտագործում է հոգևոր իրականություններին վերաբերվող փոխաբերություններ, ինչպիսիք են «լոյս» և «խավար» բառերը: Հիսուսը որպես «աշխարհի լույսը» (հմմտ. 1:4-5, 8-9; 3:17-21; 8:12; 9:5; 12:46) կարող է արտացոլել հինկտակարանյան մեսսիական առընչություններ (հմմտ. Ես. 42:6; 49:6; 51:4; 60:1,3): Տես ծանուցում 8:12.

9:6 «թուփիցը ցեխ շինեց» Թուփը հրեաների մոտ տնական դեղամիջոց էր: Այն թույլատրվում էր օգտագործել Շաբաթ օրը (հմմտ. հ. 14): Ավետարաններում երեք օրինակ կա, որտեղ Հիսուսն օգտագործում է թուփը (հմմտ. Մարկ. 7:33; 8:23; և այստեղ): Օգտագործելով այս ընդունված և նույնիսկ ակնկալվող բուժմեթոդը Հիսուսը ֆիզիկապես քաջալերում էր այս մարդու հավատքը, բայց նաև ազատորեն մարտահրավեր էր նետում փարիսեցիների ավանդություններին և օրենքներին:

9:7 «Միլովամի առաջանումը» Մեկովամ նշանակում է «Մեկը, ով ուղարկված է եղել կամ Ուղարկվածը»: Ավագանը օգտագործվում էր Տաղավարահարաց Տոնի ծիսակատարությունների համար:

- **«(որ թարգմանվում է՝ Ուղարկուած.)»** «Ուղարկված» տերմինը կապված էր այն փաստի հետ, որ ավագանի ջուրը խողովակներով հանվում էր Գ-իհոնի աղբյուրից, որը գտնվում էր Երուսաղեմի պարիսպներից դուրս: Ռաբբիները այդ բառի մեջ դնում էին մեսսիական իմաստ: Սա մեկ ուրիշ խմբագրական մեկնաբանություն է հեղինակի կողմից:
- **«լուացուեցաւ»** Սա նրա հավատքի քայլն էր: Նա գործեց ըստ Հիսուսի խոսքերի: Բայց սա դեռ «փրկարար հավատք» չէր (հմմտ. հհ. 11,17,36,38): Սա հավատք էր, որը գործընթացի մեջ էր: Բոլոր ավետարաններից, Հովհաննեսը հայտնում է հավատքի «մակարդակները»: Գլուխ 8-ը ցույց է տալիս մի խմբի, ովքեր «հավատացին», բայց ոչ դեպի փրկության (հմմտ. Մաթ. 4; Մարկ. 13; սերմնացանի առակը):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԵՐԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ՝ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՐԱԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ
Փրկությունը դա արդյունք չէ, այլ հարաբերություն: Այն չի ավարտվում այն պահին երբ մարդն

ընդունում է Հիսուսին, այլ հենց այդ պահին է սկսվում այն: Սա կրակից ապավոհագրություն չէ, ոչ էլ երկինք գնալու տոմս, այլ մի կյանք, որը պահանջում է աճել Քրիստոսի մեջ Նրան նմանվելու պայմանով: Ամերիկայում մենք մի ասացվածք ունենք «գույգերն ինչքան երկար են միմյանց հետ ապրում այնքան ավելի են իրար նմանվում»: Սա է փրկության նպատակը:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՕՐԻՍՏ)

- Գործք 15:11
- Հռոմեացիս 8:24
- II Տիմոթեոս 1:9
- Տիտոս 3:5
- Հռոմեացիս 13:11 (ԱՕՐԻՍՏԻ միացությունը և կողմնորոշումը ԱՊԱՌՆԻԻ վրա)

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿ (ՎԱՂԱԿԱՏԱՐ/ԿԱՏԱՐՅԱԼ)

- Եփեսացիս 2:5,8

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ (ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ)

- I Կորնթացիս 1:18; 15:2
- II Կորնթացիս 2:15
- I Պետրոս 3:21

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՊԱՌՆԻ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎԻ ԲԱՅ ըստ կոնտեքստի)

- Հռոմեացիս 5:9,10; 10:9,13
- I Կորնթացիս 3:15; 5:5
- Փիլիպեցիս 1:28;
- I Թեսաղոնիկեցիս 5:8-9
- Եբրայեցիս 1:14; 9:28
- I Պետրոս 1:5,9

Ուստի փրկությունը սկսում է նախնական հավատքի որոշմամբ, այսինքն երբ առաջին անգամ սկսում ես հավատալ (հմմտ. Հովհ. 1:12; 3:16; Հռ. 10:9-13), բայց սա պետք է շարունակվի հավատքի կյանքի ողջ ընթացքում (հմմտ. Հռ. 8:29; Գաղ. 3:19; Եփ. 1:4; 2:10), որը մի օր կավարտվի տեսանելի կերպով (հմմտ. I Հովհ. 3:2): Այս վերջնական փուլը կոչվում է փառավորում: Այս ամենը կարելի է արտահայտել հետևյալ կերպ.

1. Նախնական կամ սկզբնական փրկություն- արդարացում (փրկություն մեղքի պատժից)
2. Պրոգրեսիվ կամ առաջընթաց փրկություն - սրբացում (փրկություն մեղքի իշխանությունից)
3. Վերջնական փրկություն - փառավորում (փրկություն մեղքի ներկայությունից)

9:8 «Պրացիները» Այս գլխում հիշատակվում է այս հրաշքի երեք խմբի վկաներ. (1) նրա հարևանները (հ. 8); (2) հենց ինքը (հ. 11); և (3) նրա ծնողները (հ. 18): Այս բժշկության հետ կապված կային տարածայնություններ հարևանների, ինչպես նաև փարիսեցիների մեջ:

▪ **«Չէ՞ որ սա է այն նատող մուրացողը»** Հունարենում այսպիսի հարցադրումը ակնկալում է «այո» պատասխան:

9:9 «Ես եմ» Սա նույն իդիոման կամ բարբառն է, որը Հիսուսն օգտագործում է 4:26; 6:20; 8:24,28,58; 13:19; 18:5,6,8: Այս կոնտեքստը ցույց է տալիս, որ այն միշտ չէ, որ ունեցել է աստվածային իմաստ: Շատ նմանատիպ անորոշություն կա այս գլխում *kurios* տերմինի հետ կապված, հ. 36 (պարոն) և հ.38 (Տեր):

9:11-12 Այս երկխոսությունը ցույց է տալիս, որ այս մարդու բժշկությանը անմիջապես չի հետևում հոգևոր փրկություն: Այս մարդու հավատքը շարունակում է զարգանալ Հիսուսի հետ հետագա հանդիպումների շնորհիվ (հմմտ. հ. 35):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9:13-17

¹³ Փարիսեցիների մօտ տարան նորան, որ մի ժամանակ կոյր էր:¹⁴ Եւ շաբաթ օր էր, երբոր Յիսուսը ցեխը շինեց եւ նորա աչքերը բացաւ:¹⁵ Փարիսեցիները դարձեալ հարցնում էին նորան, թէ ինչպէս տեսաւ. եւ նա նորանց ասեց. Յեխ դրաւ իմ աչքերի վերայ, եւ լուացուեցայ, եւ տեսնում եմ:¹⁶ Եւ Փարիսեցիներից ոմանք ասեցին. Այն մարդն Աստուածանից չէ, որ շաբաթը չէ պահում. ուրիշներն ասում էին, Ի՞նչպէս կարող է մի մեղաւոր մարդ այսպիսի նշաններ անել. եւ բաժանմունք կար նորանց մէջ:¹⁷ Դարձեալ ասեցին կոյրին. Դու ի՞նչ ես ասում նորա համար, որ աչքերդ բացաւ եւ նա ասեց, թէ Մարգարէ է:

9:13 «նրանք» Այստեղ ի նկատի ունի հարևաններին:

▪ «Փարիսեցիների» Հովհաննեսի Ավետարանում հրեական առաջնորդները հանդես են գալիս երկու տարբեր տերմիններով: Նրանք սովորաբար անվանվում են «հրեաները» (հմմտ. հհ. 18, 22): Ինչևէ, այս գլխում նրանք կոչվում են փարիսեցիներ հհ. 13, 15, 16 և 40: Տես Հատուկ Թեմա 1:24

9:14 «Եւ շաբաթ օր էր, երբոր Յիսուսը ցեխը շինեց» Հրեական առաջնորդների ավանդական օրենքներ (Բանավոր Ավանդությունները համակարգված են Թալմուդի մեջ) այս մարդու կարիքից վեր են դասվում (հմմտ. 5:9; 9:16; Մաթ. 23:24): Կատարվածը հավասար էր նրան, որ կարծես թէ Հիսուսը դիտավորյալ ինչ-որ բան ձեռնարկեց շաբաթ օրը, որպեսզի աստվածաբանական քննարկման մեջ մտնի այս առաջնորդների հետ: Տես ծանուցում 5:9

9:16 Հնարավոր է փարիսեցիները Հիսուսին մեղադրելու համար առաջնորդվում էին 2Օրին.13:1-5:

▪ «եւ բաժանմունք կար նորանց մէջ» Սրա պատճառը միշտ Հիսուսն էր (հմմտ. 6:52; 7:43; 10:19; Մաթ. 10:34-39).

9:17 «Մարգարէ է» Այս գլուխը ցույց է տալիս այս մարդու հավատքի զարգացումը (հմմտ. հհ. 36, 38): «Մարգարէ» տես Հատուկ Թեմա 4:19.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9:18-23

¹⁸ Եւ Հրէաները չէին հաւատում նորա համար, թէ կոյր էր եւ բացուեցաւ. մինչեւ որ աչքը բացուածի ծնողներին կանչեցին.¹⁹ Նորանց հարցրին եւ ասեցին. Մա՞ է ձեր որդին, որի համար ասում էք դուք, թէ Կոյր ծնուեցաւ. ապա ի՞նչպէս է հիմա տեսնում:²⁰ Նորա ծնողները պատասխանեցին եւ ասեցին. Գիտենք, որ սա է մեր որդին, եւ թէ կոյր ծնուեցաւ.²¹ Բայց թէ հիմա ի՞նչպէս է տեսնում, չգիտենք, կամ ո՞վ բացաւ նորա աչքերը, մենք չգիտենք. ինքը չափահաս է. իրան հարցրէք. թող ինքը խօսի իրան համար:²² Նորա ծնողներն այս ասեցին, որովհետեւ Հրէաներիցը վախենում էին. որովհետեւ Հրէաները արդէն միասին որոշել էին, որ եթէ մէկը Քրիստոս դառնէ նորան, ժողովարանիցը դուրս լինի:²³ Նորա համար նորա ծնողներն ասեցին, թէ Ինքը չափահաս է, իրանից հարցրէք:

9:22-23 «եթէ մէկը Քրիստոս դառնէ նորան» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Ծնողները պարզապես վախենում էին այս հրեա առաջնորդներից: Կան մի քանի վկաներ, ովքեր պնդում էին այս բժշկությունը. (1) հարևանները (հհ. 8-10); (2) հենց ինքը (հհ. 11-17, 24-33); և (3) նրա ծնողները (հհ. 18-23):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ, ԴԱՎԱՆԱՆՔ

Ա. Խոստովանություն կամ դավանանք բառի համար կան մույն հունարեն արմատը ունեցող երկու ձևեր, *homolegeō* և *exomologeō*: Բարդ տերմինը, որ Հակոբոսն օգտագործում է *homo* (մույն) բառի հիմքից, *legō* (խոսել), և *ex* (-ից): Դրա հիմնական իմաստն է «ասել մույն բանը, համաձայնվել ինչ որ մի բանի հետ»: *ex* նախածանցը ավելացված է, որպեսզի ընդգծի հրապարակային հռչակման գաղափարը

Բ. Այս խմբի մեջ մտնող բառերի անգլերեն թարգմանությունը

1. «praise» - փառաբանել, գովերգել, ներբողել

2. «agree» - համաձայնվել
 3. «declare» - հայտարարել, հռչակել, հրապարակել
 4. «profess» - բացահայտ կերպով հայտարարել, դավանել
 5. «confess» - խոստովանել, դավանել
- Գ. Այս բառերի խումբն ունի երկու արտաքին հակադիր տեսանկյուններ
1. փառաբանել (Աստծուն)
 2. խոստովանել մեղքը
- Այսպիսի կապակցություն կարող էր լինել, երբ մարդը գիտակցեց Աստծո սրբությունը և միառժամանակ զգաց իր մեղավոր վիճակը: Այս ճշմարտություններից մեկը գիտակցելու համար պետք է երկուսն էլ ընդունել:
- Դ. Նոր Կտակարանում այս բառախմբի գործածությունը
1. խոստանալ (հմմտ. Մաթ. 14:7; Գործք 7:17)
 2. համաձայնվել կամ ինչ որ մի բանի թույլատրություն (հմմտ. Հովհ 1:20; Գուկ. 22:6; Գործք 24:14; Եբր. 11:13)
 3. փառաբանել (հմմտ. Մաթ. 11:25; Գուկ. 10:21; Հն. 14:11; 15:9)
 4. հաստատել, համաձայնվել
 - ա. մարդու հետ (հմմտ. Մաթ. 10:32; Գուկ. 12:8; Հովհ. 9:22; 12:42; Հն. 10:9; Փիլ. 2:11; I Հովհ. 2:23; Հայտ. 3:5)
 - բ. ճշմարտության հետ (հմմտ. Գործք 23:8; II Կոր. 11:13; I Հովհ. 4:2)
 5. հայտարարել հրապարակավ (իրավաբանական իմաստը ձևափոխվում է կրոնական հաստատման, հմմտ. Գործք 24:14; I Տիմ. 6:13)
 - ա. առանց հանցանքի խոստովանության (հմմտ. I Տիմ. 6:12; Եբր. 10:23)
 - բ. հանցանքի խոստովանություն (հմմտ. Մաթ. 3:6; Գործք 19:18; Եբր. 4:14; Հակոբոս 5:16; I Հովհ. 1:9)

9:22 «ժողովարանիցը դուրս լինի» Ակնհայտ է, որ ծնողները վախենում էին վտարված, մերժված լինելուց(հմմտ. 12:42; 16:2): Այս գործելակերպը տանում է մինչև Եզրասի ժամանակաշրջան(հմմտ. 10:8): Ռաբբիական գրականությունից գիտենք, որ եղել են երեք տեսակի արտաքսումներ. (1) մեկ շաբաթով (2) մեկ ամսով կամ (3) ցմահ:

Հովհաննեսը, գրելով առաջին դարի վերջում, լավ գիտեր թե ինչ էր նշանակում ժողովարանից վտարվել՝ Հիսուսին որպես Քրիստոս դավանելու համար: Այս պատմական «անեծք ֆորմուլաները» մշակվել են փարիսեցիների կողմից 70թ. Ք.Հ.:

▪ **«ժողովարանիցը դուրս լինի»** Սա պաշտամունքից վտարվելու լուրջ գործողություն էր (հմմտ. 12:42; 16:2):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9:24-34

²⁴ Յետոյ երկրորդ անգամ կանչեցին այն մարդին, որ կոյր էր, եւ նորան ասեցին. Աստուծուն փառք տուր. մենք գիտենք, որ այն մարդը մեղաւոր է:²⁵ Նա էլ պատասխանեց եւ ասեց. Թէ մեղաւոր է, ես չգիտեմ. մի բան գիտեմ, որ կոյր էի եւ հիմա տեսնում եմ:²⁶ Եւ դարձեալ ասեցին նորան. Ի՞նչ արաւ քեզ. ի՞նչպէս բացաւ աչքերդ:²⁷ Նորանց պատասխանեց. Արդէն ձեզ ասեցի եւ չլսեցիք. ի՞նչու էք դարձեալ կամենում լսել. մի՞թէ դուք էլ էք կամենում նորան աշակերտ լինել:²⁸ Նորանք նախատեցին նորան եւ ասեցին. Դու ես նորա աշակերտ. իսկ մենք Մովսէսի աշակերտներն ենք:²⁹ Մենք գիտենք, որ Աստուած Մովսէսի հետ խօսեց. բայց սորան չգիտենք թէ ո՞րտեղից է:³⁰ Մարդը պատասխանեց եւ նորանց ասեց. Հէնց դա է զարմանալին որ դուք չգիտէք թէ ո՞ր տեղից է, եւ նա իմ աչքերը բացաւ:³¹ Եւ գիտենք, որ Աստուած մեղաւորներին չէ լսում. այլ եթէ մէկը աստուածապաշտ է՝ եւ նորա կամքը կատարում է, նորան լսում է:³² Աշխարհքի սկզբից հետէ չէ լսուած որ մէկը կոյր ծնուածի աչքերը բացած լինի:³³ Եթէ սա Աստուածանից չէր, ոչինչ չէր կարող անել:³⁴ Պատասխանեցին եւ նորան ասեցին. Դու բոլորովին մեղքի մէջ ես ծնուել, եւ դու՞ ես մեզ սովորեցնում. եւ դուրս արին նորան:

9:24 «Աստուծուն փառք տուր» Սա երդման ֆորմուլա էր, որը հաստատում էր ինչ որ մեկի վստահելի լինելը (հմմտ. Հեսու 7:19):

9:25 Այս պատասխանը պետք է վերաբերվի հ. 16: Բժշկված մարդը ցանկություն չունե՞ր աստվածաբանական վիճաբանության մեջ մտնելու, բայց նա պնդում է Հիսուսին հանդիպելու արդյունքները:

9:27 «մի՞թե դուք էլ եք կամենում նորան աշակերտ լինել» Հունարեն քերականական կառուցվածքը այստեղ ենթադրում է «ոչ» պատասխանը, բայց ինքնին հարցի մեջ կա սուր հեզմանք, որը ցույց է տալիս այս կույր մուրացկանի արտասովոր խելքի մասին:

9:28ա «Դու ես նորա աշակերտ» Հարց է ծագում, թե այս գլխի որ մասում այս մարդը դարձավ հավատացյալ: Թվում է, թե սկզբում Հիսուսի բժշկությունը կապված չէր այս մարդու հավատքի հետ՝ Իրեն որպես Մեսսիա ընդունելով, այլ միայն ավելի ուշ Հիսուսն Իրեն ներկայացրեց այդ մարդուն, որպես Մեսսիա (հմմտ. հհ. 36-38): Այս դրվագը ցույց է տալիս, որ ֆիզիկական բժշկությունը պարտադիր կերպով չի բերում փրկություն:

9:28բ-29 Սա ցույց է տալիս դժվարությունները, որոնց բախվում էին կրոնական առաջնորդները: Նրանք փորձում էին Բանավոր Ավանդության (Թալմուդ) մանրամասն և կոնկրետ մեկնաբանությունները հավասարեցնել Մովսեսի ներշնչված հայտնության հետ: Նրանց աչքերը կուրացած էին իրենց աստվածաբանական պնդումներից կամ նախապաշարումներից (հմմտ. Մաթ. 6:23): Նրանք մարդկանց ավանդությունների աշակերտներն էին (հմմտ. Ես. 29:13):

9:29 «սորան չգիտենք թե ո՞ր տեղից է» Սա ևս մեկ օրինակ է Հովհաննեսի հեզմանքի (հմմտ. 7:27-28; 8:14): Հիսուսը Հոր մոտից էր եկել (հմմտ. 8:42; 15:3; 16:28), բայց իրենց կուրության պատճառով աշակերտները չգիտեին

1. Նրա ծագումը
2. Նրա ծնվելու վայրը

9:30 «Հենց դա է զարմանալին որ դուք չգիտեք թե ո՞ր տեղից է, եւ նա իմ աչքերը բացաւ» Սա ևս մեկ օրինակ է նախկին կույր մուրացկանի սուր մտքի և կծու հեզմանքի, որոնք օգտագործում է փարիսեցիների տրամաբանությունը հերքելու համար:

9:31-33 Այս անուս կույր մարդն ուներ ավելի կայուն և պահպանողական աստվածաբանություն քան կրոնական առաջնորդները:

9:33 «Եթէ» Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է «հանգամանքի կամ փաստի հակասում»: Սա այսպես պետք է հասկացվեր. «Եթե այս մարդը Աստծուց չէր եկել(իսկ Նա եկել էր Աստծուց), ապա ուրեմն Նա չէր կարող անել այն ամենը ինչ անում էր (իսկ Նա կարող է):

9:34 «Դու բոլորովին մեղքի մեջ ես ծնուել» Հետաքրքիր է նշել, որ ռաբբիական հուդայականության մեջ բացակայում է «մեղքի ծագման» գաղափարը (հմմտ. Հոբ 14:1,4: Սաղ. 51:5): Ծննդոց 3 գլխում մարդու մեղանչելը չի ընդգծված ռաբբիական հուդայականության մեջ: Հրեաները պնդում էին, որ յուրաքանչյուր մարդու մեջ կար չարի և բարու մտադրությունը (*yetzer*): Այստեղ փարիսեցիները պնդում էին, որ այս բժշկված մարդու վկայությունն ու դատողությունը վստահելի չեն, քանի որ նա մեղավոր էր, որի ապացույցն էլ հենց ի ծնե կույր լինելն էր:

▪ **«դուրս արին նորան»** «Նրան դուրս վռնդեցին» սա է այս արտահայտության բառացի իմաստը: Խոսքը (1) անդամությունից կամ տեղական ժողովարան հաճախելուց զրկելն էր, կամ էլ (2) տվյալ հավաքույթից դուրս վտարվելու մասին էր: Կոնտեքստից ելնելով ավելի հավանականը 2 տարբերակն է:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 9:35-41
³⁵ Յիսուսը լսեց, որ նորան դուրս արին. եւ նորան գտաւ եւ ասեց նորան. Դու հաւատու՞մ ես Աստուծոյ Որդուն:³⁶ Նա պատասխանեց եւ ասեց. Տէր, ո՞վ է նա՝ որ հաւատամ նորան:³⁷ Յիսուսն էլ նորան ասեց. Տեսար էլ նորան. եւ քեզ հետ խօսողն էլ նա ինքն է:³⁸ Եւ նա ասեց. Հաւատում եմ, Տէր, եւ երկրպագեց

նորան: ³⁹ Եւ Յիսուսն ասեց. Ես դատաստանի համար եկայ այս աշխարհքը, որ չտեսնողները տեսնեն, եւ տեսնողները կուրանան: ⁴⁰ Եւ Փարիսեցիներից ոմանք, որ նորա հետ էին, լսեցին այս, եւ ասեցին նորան. Մի՞թէ մենք էլ կոյր ենք: ⁴¹ Յիսուսը նորանց ասեց. Եթէ կոյր լինէիք, մեղք չէիք ունենալ. բայց հիմա ասում էք, թէ Տեսնում ենք. նորա համար ձեր մեղքերը մնում են:

9:35

NASB, NRSV,

TEV, NJB

NKJV

“Դու հավատու՞մ ես Մարդու Որդուն”

“Դու հավատու՞մ ես Աստծո Որդուն”

Հին հունարեն երկաթագիր ձեռագրերում A և L «Աստծո Որդի», բայց P⁶⁶, P⁷⁵, Տ, B, D, և W «Մարդու Որդի»: Հովհաննեսի Ավետարանի մեջ օգտագործված և հիմնվելով ունեցած ձեռագրերով «Մարդու Որդի» տարբերակը ավելի գերադասելի է, և հավանական է այն համապատասխանում է բնագրին: UBS⁴ գնահատում է «մարդ» որպես “A”: Քերականորեն այսպիսի հարցադրումը ակնկալում է «այո» պատասխան:

9:36

NASB, NKJV, “Տեր”

NRSV, TEV,

NJB

“Տեր կամ պարոն”

Այս գլխում կարող ենք հետևել, թե ինչպես է զարգանում այս մարդու հավատքը, առաջ ընթանալով և արձագանքելով Հիսուսի կանչին

1. մարդ (հ. 11)
2. մարգարե (հ.17)
3. հարգալից դիմելածն «Տեր կամ պարոն» (հ. 36)
4. և վերջում «Տեր» այս բառի աստվածաբանական բուն իմաստով (հ. 38)

36 և 38-ում նույն հունարեն բառն է: Միայն կոնտեքստը կարող է որոշել ճիշտ իմաստը: Տես Հատուկ Թեմա. Աստծո Անունները 6:20. Հունարեն *Kurios* կարող է նշանակել եբրայերեն *Adon*, որը դարձավ YHWH-ի բանավոր փոխարինողը:

9:38 Սա պատմության կուլմինացիոն պահն է՝ գազաթնակետը, քանի որ սա վերաբերում է բժշկված մարդու փրկությանը: Չարմանալի է, որ այս համարը բաց է թողնված մի քանի հին հունարեն ձեռագրերում (P⁷⁵, Տ, W) և Դիատեսսարոնում (վաղքրիստոնեության շրջանի չորս Ավետարանների ժողովածուն): Այս համարում կան երկու շատ հազվագյուտ տերմիններ, (1) արտահայտությունը թարգմանված է «նա ասաց» հանդիպում է միայն այստեղ և 1:23-ում և (2) «նա երկրպագեց» տերմինը, որը ամբողջ Հովհաննեսի Ավետարանում հանդիպում է միայն այստեղ: Այս համարն ընդգրկված է ժամանակակից շատ թարգմանություններում:

9:39 «Ես դատաստանի համար եկայ այս աշխարհքը» Թվում է, թե սա համապատասխանում է 5:22, 27-ի հետ որտեղ խոսվում է վերջին ժամանակի (վախճանաբանության) դատաստանի մասին: Ինչևէ, կարծես թե սա հակասում է 3:17-21-ի և 12:47, 48-ի հետ: Այս ամենը կարող է բերել մեկ ընդհանուր հայտարարի այն փաստը, որ Հիսուսը եկավ մարդկության փրկության համար, բայց այն մարդիկ ովքեր մերժում են Նրա կանչը ինքնաբերաբար դատում են իրենք իրենց:

▪ «որ չտեսնողները տեսնեն, եւ տեսնողները կուրանան» Սա դարձավ մարգարեության կրկնակի իրականացում, հատկապես Եսայա մարգարեությունից

1. հպարտ իսրայելացիները չեն հասկանա Աստծո պատգամը (հմմտ. Ես. 6:10, 42:18-19; 43:8; Եր. 5:21; Եզ. 12:2)
2. աղքատները, լքվածները, ֆիզիկապես արատավորները, ովքեր կապաշխարեն և կխոնարհվեն՝ կհասկանան (հմմտ. Ես. 29:18; 32:3-4; 35:5; 42:7, 16)

Հիսուսն աշխարհի լույսն է, բոլոր նրանց համար, ովքեր ուզում են տեսնել (հմմտ. 1:4-5, 8-9)

9:40 «Մի՞թէ մենք էլ կոյր ենք» Հունարենում այսպիսի շարահյուսությամբ նախադասությունը ակնկալում է «ոչ» պատասխան (հմմտ. Մաթ. 15:14; 23-24): Այս վերջին մի քանի համարները ցույց են տալիս, որ այս

գլխում առակի տեսքով պատմվում է հոգևոր կուրության մասին, որը չի բժշկվում (անհավատության աններելի մեղքը, տես Հատուկ Թեմա 5:21), և ֆիզիկական կուրության, որը հնարավոր է բժշկել:

9:41 Այս համարը արտահայտում է ընդհանուր ճշմարտություն, հիմնական սկզբունք (հմմտ. 15:22,24; Հռ. 3:20; 4:15; 5:13; 7:7,9): Մարդիկ պատասխանատու են իրենց ունեցած լույսի համար:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Այս գլխում հիմնականում խոսվում է ֆիզիկական բժշկության թե՞ հոգևոր բժշկության մասին: Ֆիզիկական կուրություն թե՞ հոգևոր կուրություն
2. Ինչպե՞ս կարող էր այս մարդը մեղանչել մինչև իր ծնվելը:
3. Այս գլխի ո՞ր հատվածում է մարդը ստանում փրկություն:
4. Հիսուսը եկավ աշխարհը դատելու թե՞ փրկելու համար:
5. Բացատրեք «Մարդու Որդի» տերմինի ծագումը:
6. Թվարկեք այն պահերը, երբ կույր մարդը հրեա առաջնորդներին պատասխանելիս հեզմանք է օգտագործում:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 10

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	JB
Առակ ոչխարների գավիթի մասին	Հիսուսը ճշմարիտ Հովիվ	Հիսուսը Հովիվ, ով տալիս է Իր Կյանքը	Հովիվի առակը	Բարի Հովիվը
10:1-6	10:1-6	10:1-6	10:1-5 10:6 Հիսուսը Բարի Հովիվ	10:1-5 10:6
Հիսուսը Բարի Հովիվ	Հիսուսը Բարի Հովիվ			
10:7-18	10:7-21	10:7-10 10:11-18	10:7-10 10:11-16 10:17-18	10:7-18
10:19-21		10:19-21	10:19-20 10:21	10:19-21
Հիսուսը մերժվեց հրեաների կողմից	Հովիվը ճանաչում է Իր ոչխարներին		Հիսուսը մերժվում է	Հիսուսը հռչակում է Իրեն որպես Աստծո Որդի
10:22-30	10:22-30	10:22-30	10:22-24 10:25-30	10:22-30
10:31-39	10:31-39	10:31-39	10:31-32 10:33 10:34-38 10:39	10:31-38 10:39
10:40-42	10:40-42	10:40-42	10:40-42	Հիսուսը հեռանում է Հորդանանի մյուս կողմը 10:40-42

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:1-6

¹ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ով որ դռնովը չէ մտնում ոչխարների գալիքը, այլ ուրիշ կողմից է վեր ելնում, նա գող է եւ աւազակ:² Բայց դռնովը մտնողը, ոչխարների հովին է:³ Դռնապանը նորա համար բաց է անում. եւ ոչխարները նորա ձայնը լսում են, եւ նա իր ոչխարներն իրանց անունովը կանչում է, եւ նորանց դուրս է հանում:⁴ Եւ երբոր իր ոչխարները դուրս է հանում, նորանց առաջից գնում է, եւ ոչխարները գնում են նորա ետեւից. որովհետեւ նորա ձայնը ճանաչում են:⁵ Բայց օտարի ետեւից չեն գնում. այլ նորանից փախչում են, որովհետեւ օտարների ձայնը չեն ճանաչում:⁶ Այս առակը Յիսուսը ասեց նորանց. բայց նորանք չգիտէին թէ ինչ էր այն որ խօսում էր նորանց հետ:

10:1 «Ճշմարիտ ճշմարիտ» Տես ծանուցում 1:49.

▪ **«այլ ուրիշ կողմից է վեր ելնում, նա գող է եւ աւազակ»** Ուշադրություն դարձրեք այն բանին, որ գավիթում կան ոչխարներ, որոնք չեն պատկանում բարի հովիվին (հմմտ. 7:21-23 և «Յորենի և Որոմի Առակը», Մաթ.13:24-30): Խնդիրը կայանում է նրանում, որ ոմանք փորձում են հասնել և արժանանալ իրենց գործերով մի բանի, որը Աստված ձրի առաջարկում է ձեռք բերել Հիսուս Քրիստոսի միջոցով (հմմտ. 3:14-16): Գլուխ 9-ի փարիսեցիները լավ օրինակ են:

10:2 **«Բայց դռնովը մտնողը, ոչխարների հովին է»** Այս գլխում կա փոխաբերությունների շատ պարզ խառնուրդ: Հիսուսը որպես ոչխարների գավիթի դուռ, հ. 7, և նաև ոչխարների հովիվ (հհ. 11 և 14): Ինչևէ, այս փոխաբերությունների խառնուրդը միակը չէ Հովհաննեսի Ավետարանում և Նոր Կտակարանում:

1. Հիսուսն է հացը և հաց տվողը (հմմտ. հհ. 6:35,51)
2. Հիսուսն է ճշմարտությունը և ճշմարտություն խոսացողը (հմմտ. հհ. 8:45-46 և 14:6)
3. Հիսուսն է ճանապարհը և Նա է ցույց տալիս ճանապարհը (14:6)
4. Հիսուսն է զոհը և զոհաբերություն բերողը (հմմտ. Եբրայեցիս թուղթ)

«Հովիվ(ոչխարների)» տիտղոսը Հին Կտակարանում միաժամանակ տիտղոս էր հանդիսանում Աստծո և Մեսիայի համար (հմմտ. Սաղ. 23; Սաղ. 80:1; Ես. 40:10-11; I Պետ. 5:1-4): Երեմիա 23, Եզեկիել 34 և Եսայա 56:9-12-ում հրեա առաջնորդները կոչվում են «կեղծ/անհավատարիմ հովիվներ»: «Հովիվ(ոչխարների)» տերմինը համապատասխանում է «հովիվ(մարդկանց)» տերմինին (հմմտ. Եփ. 4:11; Տիտոս 1:5,7):

10:3 **«ոչխարները նորա ձայնը լսում են»** Ճանաչելը և հնազանդվելը հիմնված են փոխադարձ հարաբերության վրա: Հովհաննեսի թե «լսելը» (հմմտ. 4:42; 5:24,25,28-29; 8:47; 10:16,27; 18:37) և թե «տեսնելը» (հմմտ. 3:3; 12:40; 20:8) հիմնված են Հիսուսին որպես Քրիստոս հավատալու/վստահելու վրա:

▪ **«նա իր ոչխարներն իրանց անունովը կանչում է»** Հիսուսն անձնապես ճանաչում է Իր ոչխարներին, այն էլ ամեն մեկին անհատապես (ինչպես ԵՀՈՎԱՆ է, հմմտ. 10:29-31): Հաճախ հովիվներն իրենց անասուններին մականուններով էին կոչում, անգամ մեծ հոտերում:

Աստվածաբանորեն ցնցող է, երբ Հիսուսը կանչում է Իր ճշմարիտ ոչխարներին կեղծ ոչխարն երից՝ հրեա ազգի միջից: Ուխտի ժողովուրդը Աստծո ճշմարիտ ժողովուրդը չէին: Սա Նոր Ուխտի արմատական սկանդալ/բամբասանքն էր: Հավատքն է, և ոչ թե տոմսային պատկանելությունը, որոշում ապագան: Հավատքը անձնական է և ոչ թե ազգային:

Հրեա առաջնորդները, որոնք հակառակվում էին Հիսուսին, Աստծո ժողովրդի մասը չէին կազմում (հմմտ. հ. 26):

▪ **«եւ նորանց դուրս է հանում»** Վերաբերվում է ոչ միայն փրկությանը, այլ նաև ամենօրյա առաջնորդությանը (հմմտ. հհ. 4 և 9):

10:4 Հավանական է սա ընդունված էր, երբ գիշերը մի քանի տարբեր հոտեր մի գավիթի մեջ էին քշում: Առավոտյան յուրաքանչյուր հովիվ կանչում է և ոչխարները գալիս են իր մոտ:

10:5 Եկեղեցին բոլոր ժամանակներում բախվել է կեղծ կամ անհավատարիմ հովիվների հետ (հմմտ. I Տիմ. 4:1-3, II Տիմ. 4:3-4; I Հովհ. 4:5-6; II Պետ. 2):

10:6 «Այս առակը Յիսուսը ասեց նորանց» Այն բառը, որը այստեղ թարգմանված է որպես «առակ» (*parabolē*), ընդունված տերմին չէր, չնայած այն առաջացել է նույն արմատից (*paroimian*): Այս ձևը հանդիպում է միայն այստեղ և 16:25,29 և II Պետ. 2:22: Եվ չնայած սա ուրիշ ձև է, բայց սա հոմանիշ է ավելի տարածված «առակ» տերմինի (օգտագործված Մինուպտիկ Ավետարաններում: Սովորաբար «առակ» տերմինը նշանակում է ընդհանուր մշակույթային երևույթի կողքին դնել հոգևոր ճշմարտություն՝ այն ավելի լավ հասկանալու համար: Ինչևէ, նրանով կարելի է ճշմարտությունը թաքցնել հոգևոր կույր աչքից (հմմտ. 16:29; Մարկ. 4:11-12):

▪ **«բայց նորանք չգիտեին»** Եթե գլուխ 10-ի դեպքերը ժամանակի առումով համապատասխանում են գլուխ 9-ին, ապա «նրանք» բառը վերաբերվում է փարիսեցիներին: Նրանք ասում էին, թե տեսնում են (հմմտ. 9:41), բայց չէին տեսնում (հմմտ. 10:20): Կրոնը կարող է արգելք լինել, ոչ թե կամուրջ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:7-10
⁷ Յիսուսը դարձեալ նորանց ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թե Ես եմ ոչխարների դուռը:⁸ Ամենքը՝ որ ինձանից առաջ եկան, գողեր են եւ աւազակներ. եւ ոչխարներն էլ նորանց շտեցին:⁹ Ես եմ դուռը. եթէ մէկն ինձանով ներս մտնէ, կապրի. եւ կը մտնէ եւ դուրս կգայ, եւ արօտ կը գտնէ:¹⁰ Գողը չէ գալիս, բայց միայն որ գողանայ եւ սպանէ եւ կորցնէ. ես եկայ որ կեանք ունենան, եւ էլ աւելի ունենան:

10:7 «Ես եմ ոչխարների դուռը» Սա հայտնի «Ես եմ» յոթ դրույթներից մեկն է Հովհաննեսի Ավետարանում: Այս փոխաբերությունը ընդգծում է , որ Հիսուսն է միակ ճշմարիտ ճանապարհը (հմմտ. 8, 10; 14:6): Հաճախ սա կոչում են Ավետարանի սկանդալային էքսկլյուզիվիզմ (բացառիկություն): Եթե Աստվածաշունչը Աստծո ինքնա-հայտնությունն է, ապա կա Աստծո հետ հաշտվելու միայն մեկ ճանապարհ՝ Հիսուս Քրիստոսին հավատալ (հմմտ. Գործք 4:12; I Տիմ. 2:5): Տես ծանուցում 8:12.

10:8 «Ամենքը՝ որ ինձանից առաջ եկան, գողեր են եւ աւազակներ» Դատելով գլուխներ 9 և 10-ի կոնտեքստից, Տաճարի Նավակատիքի տոնին Հանուկա (հմմտ. 10:22), հնարավոր է, որ սա վերաբերվում է Մակաբայեցիների մեսսիական պահանջներին և նրանց միջկտակարանյան ժամանակաշրջանի սերունդներին: Ինչևէ, միանգամայն հնարավոր է այս ասվածը վերաբերվում է հինկտակարանյան տեքստերին, որոնք խոսում են կեղծ հովիվների մասին(հմմտ. Ես. 59:9-12; Երեմիա 23; Եզեկիել 34; և Չաբարիա 11)):

Բարձրակարգ պատկերավոր լեզուն և երկիմաստ ենթադրյալները մոլեցին վաղ դպիրներին փոխել կամ ընդարձակել կոնկրետ տեքստը, փորձելով այդ կերպ բացատրել դրա իմաստը: Մի ձեռագրում (D) պարզապես բաց է թողնված «բոլորը» ընդհանրացված տերմինը իսկ մի քանի վաղ ձեռագրերում (P⁴⁵, P⁷⁵, S^{*}) բացակայում է «ինձանից առաջ» արտահայտությունը:

10:9 «Եթէ մէկն ինձանով ներս մտնէ, կապրի» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆ է ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԱՊԱՆՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ: Հիսուսն է Աստծու մոտ տանող միակ ճանապարհը (հմմտ. 14:6): «Փրկված» ԲԱՅԸ այս կոնտեքստում, հավանական է ունի հինկտակարանյան իմաստ՝ ֆիզիկական փրկություն (այն է, ոչխարները ապահով են): Այնուամենայնիվ, Հովհաննեսը հաճախ օգտագործում է երկիմաստ տերմիններ, որոնք մասամբ լրացնում են միմյանց: Ուստի հոգևոր փրկության գաղափարը այս կոնտեքստից չի վերցվում (հմմտ. հ. 42):

10:10 «Գողը» Սա ցույց է տալիս կեղծ, անհավատարիմ հովիվների թաքնված շարժառիթները: Այստեղ նաև երևում է չարի նպատակները: Վարձու հովիվների անբարեխղճության և անտարբերության մասին խոսվում է հհ.12-13:

▪ **«կորցնէ»** Տես Հատուկ Թեմա ստորև

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿՈՐԾԱՆՈՒՄ (APOLLUMI)

Այս տերմինն ունի լայն իմաստային դաշտ, որը պատճառ է հանդիսացել աստվածաբանության մեջ շատ շփոթությունների, կապված վերջին դատաստանի և մեղավորների ոչնչացման հետ: Բառի հիմնական բառացի իմաստը, որը ծագել է *apo* և *ollumi*, նշանակում է ավերել, վերացնել, կործանել, ոչնչացնել:

Խնդիրը կապված է այս տերմինի պատկերավոր նշանակության հետ: Սա կարելի է պարզ տեսնել «Նոր Կտակարանի հունարեն-անգլերեն բառարան» հիմնված իմաստաբանության վրա», հատոր 2, էջ 30 [*Low and Nida's Greek-English Lexicon of the New Testament, Based On Semantic Domains*]: Այնտեղ թվարկված են այս տերմինի մի քանի նշանակություններ:

1. կործանել (օր. Մաթ. 10:28; Գուկ. 5:37; Հովհ. 10:10; 17:12; Գործք 5:37; Հն. 9:22 հատ.1, էջ 232)
2. չստանալ (օր. Մաթ. 10:42, հատ. 1, էջ 566)
3. կորցնել (օր. Գուկ. 15:8, հատ. 1, էջ 566)
4. չիմանալ գտնվելու վայրը (օր. Գուկ. 15:4, հատ. 1, էջ 330)
5. մահանալ (օր. Մաթ. 10:39, հատ. 1, էջ 266)

Գերհարդ Կիթելը «Նոր Կտակարանի աստվածաբանական բառարան»-ում, հատոր 1, էջ 394 [*Gerhard Kittel, Theological Dictionary of the New Testament*], փորձում է ընդգծել բառի տարբեր կիրառումները՝ թվարկելով չորս իմաստները:

1. կործանել կամ սպանել (օր. Մաթ. 2:13; 27:20; Մարկ. 3:6; 9:22; Գուկ. 6:9; I Կոր. 1:19)
2. կորցնել կամ տառապել կորցնելուց (օր. Մարկ. 9:41; Գուկ. 15:4,8)
3. կործանվել, պատժվել (օր. Մաթ. 26:52; Մարկ. 4:38; Գուկ. 11:51; 13:3,5,33; 15:17; Հովհ. 6:12,27; I Կոր. 10:9-10)
4. կորել (օր. Մաթ. 5:29-30; Մարկ. 2:22; Գուկ. 15: 4,6,24,32; 21:18; Գործք 27:34)

Հետո Կիթելը ասում է. «ընդհանուր առմամբ մենք կարող ենք պնդել, որ 2 և 4 կետերը վերաբերվում են այս աշխարհին, ինչպես Սինոպտիկ Ավետարաններում, իսկ 1 և 3 կետերը՝ գալիք աշխարհին, ինչպես Պողոսի և Հովհաննեսի մոտ (էջ 394):

Այստեղ շփոթմունք կա: Տերմինն այնքան լայն իմաստային նշանակություն ուներ, որ նորկտակարանյան տարբեր հեղինակներ այն օգտագործել են զանազան կերպերով: Ինձ դուր է գալիս այն, ինչ ասում է Ռոբերտ Բ. Գյոդլսթունը «Հին Կտակարանի հոմանիշները», էջ 275-277 [*Robert B. Girdlestone, Synonyms of the Old Testament*]:

Այս տերմինը նա կապում է այն մարդկանց հետ, ովքեր մեռած են բարոյապես և սպասում են Աստծուց հավիտյան բաժանմանը, ի տարբերություն այն մարդկանց, ովքեր ճանաչում են Քրիստոսին և ունեն հավիտենական կյանք Նրանում:

Վերջին խումբը «փրկվածներն են» իսկ առաջինը «կորսվածները»:

Անձամբ ես չեմ կարծում, որ այս տերմինը նշանակում է ամբողջական ոչնչացում (հմմտ. է. Ֆյուդջ, «Կրակ, որը լափում է») [*E. Fudge, The Fire That Consumes*]: «Հավիտենական» տերմինը վերաբերվում է թե հավիտենական պատժին, և թե հավիտենական կյանքին Մաթ. 25:46: Թերագնահատել մեկը, նշանակում է թերագնահատել երկուսն էլ:

▪ «**ես եկայ որ կեանք ունենան, եւ էլ աւելի ունենան**» Այս արտահայտությունը շատ հաճախ մեջբերում են որպես նյութական բարիքների խստում, բայց կոնտեքստում այն նշանակում է անձնապես ճանաչել Հիսուսին և հոգևոր օրհնությունները, որն Ինքն է բերում, և ոչ թե նյութական բարգավաճ կյանք (սա զուգահեռ է 4:14 և 7:38): Այս կյանքում չկա ավելի մի բան քան ճանաչել և ունենալ ճշմարիտ կյանքը:

Սինոպտիկ Ավետարանները գրում են այն, որ Հիսուսը հատուկ ուշադրություն է ցույց տալիս Աստծո թագավորությանը, իսկ Հովհաննեսի Ավետարանը նկարագրում է Նրա կենտրոնացումը հավիտենական կյանքի վրա: Մարդը կարող է այն ունենալ հիմա: Թագավորությունը սկսվել է:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:11-18

¹¹ Ես եմ բարի հովիւր. բարի հովիւն իր անձը դնում է ոչխարների համար:¹² Բայց վարձկանը որ հովիւ չէ, որ ոչխարներն իրանը չեն, տեսնում է գայլին գալիս, եւ թողում է ոչխարները եւ փախչում. եւ գայլը յափշտակում է նորանց եւ ցրվում է ոչխարներին:¹³ Եւ վարձկանը փախչում է, որովհետեւ վարձկան է, եւ ոչխարների համար հոգս չունի:¹⁴ Ես եմ բարի Հովիւր, եւ ես իմիններին ճանաչում եմ, եւ իմիններիցն էլ

ճանաչվում են:¹⁵ Ինչպես Հայրն է ինձ ճանաչում, ես էլ ճանաչում եմ Հօրը, եւ իմ անձը դնում եմ ոչխարների համար:¹⁶ Եւ ուրիշ ոչխարներ էլ ունեն, որ այս գաւիթիցը չեն, եւ նորանց էլ պէտք է բերեն. եւ իմ ձայնին կլսեն, եւ մի հօտ ու մի հովիւ կլինին:¹⁷ Նորա համար իմ Հայրը սիրում է ինձ, որ իմ անձը դնում եմ, որպէս զի դարձեալ առնեն նորան:¹⁸ Ոչ ով նորան վեր չէ առնում ինձանից. այլ ես ինքս եմ ինձանից դնում նորան. ես իշխանութիւն ունիմ նորան դնելու եւ իշխանութիւն ունիմ նորան դարձեալ առնելու. այս պատուէրն առայ իմ Հօրիցը:

10:11,14 «Ես եմ բարի հովիւը» Սա Մեսիայի համար օգտագործվող հինկտակարանյան տիտղոսն էր(հմմտ. Եզ. 34:23; Չաք. 11; I Պետ. 5:4) և ԵՀՈՎԱՅԻ համար (հմմտ. Սաղ. 23:1; 28:9; 77:20; 78:52; 80:1; 95:7; 100:3; Ես. 40:11; Եր. 23:1; 31:10; Եզ. 34:11-16):

Հունարենում կան երկու տերմիններ, որոնք կարելի է թարգմանել «բարի, լավ, արժանի, բարեկիրթ»;
(1) *agathos*, որը սովորաբար օգտագործվում է Հովհաննեսի Ավետարանում առարկաների կամ հասկացողությունների համար, և (2) *kalos*, որն օգտագործվում էր Մեպտուազիմում, որպես բարին ընդդէմ չարի հասկացողությամբ: Նոր Կտակարանում այն ունի «գեղեցիկ», «ազնիվ», «բարոյական» և «արժանի» իմաստներ: Այս երկու տերմիններն օգտագործված են միասին Գուկ. 8:15-ում: Տես ծանուցում 8:12.

10:11 «բարի հովիւն իր անձը դնում է ոչխարների համար» Սա վերաբերում է Քրիստոսի՝ փոխանորդ գոհի կատարած գործին, Նրա չարչարանքներին՝ մարդկության մեղքերը քավելու համար (հմմտ. հհ. 11,15,17,18): Նա կամավոր տվեց Իր կյանքը մեղավոր մարդկության համար (հմմտ. Ես. 52:13-53:12; Մարկ. 10:45; II Կոր. 5:21): Ճշմարիտ կյանքը, առատ կամ էլ ավելի կյանքը միայն գալիս է Նրա մահովը:

Բրյուս Մ. Մեցգերայի «Հունարեն Նոր Կտակարանի տեքստային մեկնաբանությունը» գրքում [Bruce M. Metzger's *A Textual Commentary on the Greek New Testament*] այս համարի մասին կա հետաքրքիր մանրամասնություն.

«իր անձը դնել» արտահայտության փոխարեն», որը առանձնահատուկ է Հովհաննեսի Ավետարանին (10:15,17; 13:37,38; 15:13; I Հովհ. 3:16), որոշ աղբյուրներում (P⁴⁵, Ն*, D) այն փոխարինված է «իր կյանքը տալ» արտահայտությամբ, որը հանդիպում է Սինոպտիկ Ավետարաններում (Մաթ. 20:28; Մարկ. 10:45)» (էջ 230):

10:14 «ես իմիններին ճանաչում եմ, եւ իմիններիցն էլ ճանաչվում եմ» Սա երբայերեն «իմանալ, ճանաչել» բառն է (տես Հատուկ Թեմա 1:10): Ինչպես Որդին ճանաչում է Հորը և Հայրը՝ Որդուն, այնպես էլ Հիսուսը ճանաչում է նրանց, ովքեր հավատում են Իրեն և ճանաչում են Նրան: Նրանք «տեսել են» և «լսել» (հմմտ. հ. 4) և արձագանքել են (հմմտ. 1:12; 3:16): Քրիստոնությունը անձնական հարաբերություն է (հմմտ. 17:20-26):

10:15 «Ինչպէս Հայրն է ինձ ճանաչում, ես էլ ճանաչում եմ Հօրը» Սա կրկնվող թեմա է Հովհաննեսի Ավետարանում: Հիսուսը խոսում և գործում է, հիմնվելով Հոր հետ ունեցած Իր մտերմիկ հարաբերության վրա:

Չարմանալի նմանություն կա հհ. 14-15, այն է, որ Հոր և Որդու մտերմությունը համեմատվում է Որդու և հետևորդների մտերմության հետ (հմմտ. 14:23): Հովհաննեսն ընդգծում է հին երբայերեն «իմանալ» բառի իմաստը, որը նշանակում է մտերմիկ հարաբերություն և ոչ թե փաստերի կամ ինֆորմացիայի իմացություն: Հիսուսը ճանաչում է Հորը, և ովքեր գիտեն/ճանաչում են Հիսուսին գիտեն Աստծուն:

10:16 «Եւ ուրիշ ոչխարներ էլ ունեն, որ այս գաւիթիցը չեն» Սա ակնարկում է Ես. 56:6-8: Ըստ կոնտեքստի սա վերաբերվում է (1) սամարացիներին (հմմտ. 4:1-42) կամ էլ (2) հեթանոսներից կազմված եկեղեցուն (հմմտ. 4:43-54): Սա խոսում է բոլոր նրանց միաբանության մասին, ովքեր ճշմարտապես հավատում են Հիսուս Քրիստոսին: Նոր Ուխտը միավորում է հրեաներին ու հեթանոսներին (հմմտ. Եփ. 2:11-3:13; նաև տես I Կոր. 12:13; Գաղ. 3:28; Կող. 3:11)! Ծննդոց 3:15 և Հովհաննես 3:16

▪ «եւ մի հօտ ու մի հովիւ կլինին» Սա միշտ եղել է Աստծո նպատակը (հմմտ. Ծննդ. 3:15, 12:3; Ելից 19:5-6): Այս միության աստվածաբանական ասպեկտը քննարկվում է Եփ. 2:11-3:13 և 4:1-6:

10:17 «Նորա համար իմ Հայրը սիրում է ինձ» Ինչպես ոչ որ չպարտադրեց Որդուն դնելու Իր կյանքը, այնպես էլ ոչ որ չպարտադրեց Հորը տալու Իր Որդուն: Սա չպետք է մեկնաբանել այնպես, որ կարծես թե Հայրը վարձատրեց Հիսուս մարդուն իր հնազանդության համար (այս հերետիկոսությանը հաճախ անվանում են որդեգրություն, տես բացատրական բառարան):

▪ **«որ իմ անձը դնում եմ, որպես զի դարձեալ առնեմ նորան»** Այստեղ խոսքը հարության մասին է: Սովորաբար Նոր Կտակարանում խոսվում է, որ Որդուն հարություն տվողը Հայրն է (հմմտ. հ.18բ), ցույց տալու համար, որ Հայրն ամբողջությամբ ընդունում և հավանություն է տալիս Հիսուսին և Նրա կատարած գոհաբերությանը: Բայց այստեղ հաստատվում է, որ Հիսուսն Ինքը ուներ անհրաժեշտ իշխանությունը և գորությունը՝ հարությունը իրականացնելու համար:

Այս արտահայտությունը գերազանց հնարավորություն է ցույց տալու, որ Նոր Կտակարանը հաճախ փրկության գործը վերագրում է Երրորդության բոլոր երեք անձերին:

1. Հայր Աստվածը հարություն տվեց Հիսուսին (հմմտ. Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռ. 6:4,9; 10:9; I Կոր. 6:14; II Կոր. 4:14; Գաղ. 1:1; Եփ.1:20; Կող. 2:12; I Թես. 1:10)
2. Որդի Աստվածը հարություն տվեց Իրեն (հմմտ. Հովհ. 2:19-22; 10:17-18)
3. Հոգի Աստվածը հարություն տվեց Հիսուսի (հմմտ. Հռ. 8:11)

10:18 «ես իշխանութիւն ունիմ» Այս նույն տերմինը օգտագործված է 1:12-ում: Այն կարելի է թարգմանել որպես «իշխանություն, հեղինակություն», «օրինական իրավունք» կամ «ուժ, գորություն»: Այս համարը ցույց է տալիս Հիսուսի գորությունն ու իշխանությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:19-21

¹⁹ Արդ դարձեալ բաժանմունքը եղաւ Հրէաների մէջ այս խօսքերի համար:²⁰ Եւ նորանցից շատերն ասում էին թէ Դեւ ունի, եւ գժվում է. ի՞նչու էք ականջ դնում դորան:²¹ Ուրիշներն ասում էին. Այս խօսքերը դիւահարի խօսքեր չեն. մի՞թէ դեր կարող է կոյրի աչքերը բանալ:

10:19 Հիսուսի մասին վիճելի կարծիքները, որոնք կարելի է տեսնել հետևյալ համարներում 6:52; 7:12,25,43; 9:8-9, 16; 10:19-21; 11:36-37, շարունակում են ծագել ամբողջ Հովհաննեսի Ավետարանի ընթացքում: Գաղտնիքը այն բանի, թե ինչու՞ ո՞ւմանք ընդունում են ավետարանը, իսկ ուրիշներն էլ մերժում, արտացոլում է ներքին լարվածությունը նախասահմանության և մարդու ազատ կամքի միջև:

10:20 «Դեւ ունի, եւ գժվում է» Սա սովորական մեղադրանք էր Հիսուսի դեմ երկու տարբեր տեսանկյուններից.

1. այս համարում, ինչպես նաև 7:20, մեղադրողները փորձում էին համոզել, որ Հիսուսը մտալիս հիվանդ էր
2. այս նույն մեղադրանքը օգտագործել են փարիսեցիները՝ փորձելով բացատրել Հիսուսի գորության և իշխանության աղբյուրը (հմմտ 8:48,52)

10:21 Կա երկու հարց հ. 21-ում.

1. հ. 21ա ունի *ouk*, որը ակնկալում է «այո» պատասխան
2. հ. 21բ ունի *mē*, որը ակնկալում է «ոչ» պատասխան

Տես Ջեյմս Հյուեթ «Նոր Կտակարանի հունարեն», էջ 171 [James Hewett, *New Testament Greek*, p171]:

Այս համարը ցույց է տալիս, թե ինչքան դժվար, բարդ ու կեղծ կանոններ կան Կոյնե հունարենում:

Կոնտեքստը, և ոչ թե քերականական կառուցվածքն է վերջնական որոշողը:

Կույր բժշկունը Մեսիական նշան էր (հմմտ. Ելից 4:11; Սաղ. 146:8; Ես. 29:18; 35:5; 42:7): Կարծիք է ստեղծվում, որ այստեղ ցույց է տրված Իսրայելի կուրությունը (հմմտ. Ես. 42:19) այնպես ինչպես գլուխ 9-ում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:22-30

²² Այն ժամանակ Երուսաղեմումը նաւակատիք տօն եղաւ, եւ ձմեռն էր:²³ Եւ Յիսուսը ման էր գալիս տաճարումը Սողոմոնի սրահի մէջ:²⁴ Հրէաներն էլ նորան շրջապատեցին եւ ասեցին նորան. Մինչեւ ե՞րբ ես պահում մեր հոգիները տարակուսանքի մէջ. եթէ դու ես Քրիստոսը, համարձակ ասիր մեզ:²⁵ Յիսուսը

պատասխանեց նորանց. Ասեցի ձեզ, եւ չէք հաւատում. այն գործերը որ իմ Հօր անունովը գործում են, նորանք վկայում են ինձ համար:²⁶ Բայց դուք չէք հաւատում. որովհետեւ իմ ոչխարներիցը չէք, ինչպէս որ ասեցի ձեզ:²⁷ Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, եւ ես ճանաչում եմ նորանց, եւ իմ ետեւից գալիս են:²⁸ Եւ ես յախտեանական կեանք եմ տալիս նորանց, եւ նորանք յախտեան չեն կորչիլ, եւ ոչ ով չի յափշտակիլ նորանց իմ ձեռիցը:²⁹ Իմ Հայրը որ նորանց տուաւ ինձ, ամենից մեծ է, եւ ոչ ով կարող չէ իմ Հօր ձեռիցը յափշտակել նորանց:³⁰ Եւ եւ Հայրը մի ենք:

10:22 «նաւակատիք տօն» Յուսուփոսը սա անվանում է «Լույսերի տոն»: Մեր օրերում այն հայտնի է որպէս Հանուկկա: Տոնվում էր ութ օր, դեկտեմբերի կեսերին, ի հիշատակ Երուսաղեմի տաճարի մաքրման՝ Հուդա Մակաբայեցու ռազմական հաղթանակի շնորհիվ Ք.ա.164թ.: Ք.ա.168թ. Սելևկյանների առաջնորդ Անտիոք IV Եպիփանեսը, փորձում էր ստիպել հրեաներին կատարել հեթանոսական ծեսեր (հմմտ. Գան. 8:9-14): Նա Երուսաղեմի տաճարը դարձրել էր հեթանոսների սրբավայր, և անգամ Սրբության Սրբոցում տեղադրել էր Ձևսին նվիրված զոհասեղան: Հուդա Մակաբայեցին՝ Մոդին քահանայի յոթ որդիներից մեկը, պարտության է մատնում սիրիացի կուսակալին և մաքրում և նորից սրբացնում տաճարը (հմմտ. I Մակ. 4:36-59; II Մակ. 1:18):

Հովհաննեսն օգտագործում է հուդայականության տոները, որոնք առիթ էին Հիսուսի համար, օգտագործելով նրանց սիմվոլները/խորհրդանիշները, Իրեն հայտնելու հրեա առաջնորդներին, Երուսաղեմի բնակիչներին և ուխտավորների ամբոխներին (հմմտ. գլուխներ 7-11):

▪ **«Մողոմնի սրահի մեջ»** Սա փակ տարածք էր «կանանց գավիթի» արևելյան կողմի երկայնքով, որտեղ Հիսուսը հաճախ սովորեցնում էր: Ըստ Յուսուփոսի այս սրահը պահպանվել է բաբելոնյան կործանումից Ք.ա. 586թ.:

10:23 «ձմեռն էր» Սա ականատեսի մանրամասն նկարագրություն է:

10:24 «եթէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ընդունվում է որպէս ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Այս կոնտեքստում կան մի քանի ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ (հմմտ. հհ. 24, 35, 37, և 38): Օգտագործվելով հ.24-ում ցույց է տալիս, թե ինչպէս այս քերականական կառուցվածքը կարող է փոխանցել գրական իմաստ: Այս փարիսեցիները իրականում չէին էլ հավատում, որ Հիսուսն է Մեսիան: Նրանք պարզապէս ծաղրում էին նրան:

▪ **«համարձակ ասիր մեզ»** Այս համարում կան մի քանի պահեր, որոնք պետք է քննարկվեն: Նախ, Հիսուսը սովորեցրեց առակներով, օգտագործեց պատկերավոր լեզու և երկիմաստ մտքեր: Տաճարի ամբոխը ցանկանում էր, որ Հիսուսը պարզ արտահայտվեր: Տես Հատուկ Թեմա: «Համարձակություն» *Parrhēsia* 7:4.

Երկրորդը, Հիսուսի օրոք հրեաները չէին սպասում, որ Մեսիան մարմնացած Աստված կլինի: Հիսուսը մի քանի անգամ միանգամայն պարզ հիշատակեց Իր միությունը Հոր հետ (հմմտ. 8:56-59), բայց տվյալ կոնտեքստում Նրանից պահանջում էին կոնկրետ խոստովանություն՝ Իր Մեսիա լինելու մասին: Հրեաները ակնկալում էին, որ Օծյալը գործի Մովսեսի պես (հմմտ. 2 Օրին. 18:15,19): Հիսուսը վարվեց ճիշտ այնպէս ինչպէս գլուխ 6-ում: Իր գործերով Նա իրականացրեց Հին Կտակարանի մարգարեությունները, հատկապէս կուրյին բժշկել (գլուխ 9): Այս մարդիկ ունեին բոլոր անհրաժեշտ փաստերն ու վկայությունները: Խնդիրը կայանում էր նրանում, որ Հիսուսը չէր համապատասխանում իրենց ավանդական ռազմային և ազգային սպասումներին՝ կապված Մեսիայի հետ:

10:25 «այն գործերը որ իմ Հօր անունովը գործում են, նորանք վկայում են ինձ համար» Հիսուսը պնդում էր, որ Իր գործերը հաստատում են Իր հայտարարությունների ճշմարտացիությունը (հմմտ. 2:23; 5:36; 10:25,38; 14:11; 15:24).

10:26 Ինչպիսի ցնցող հայտարարություն:

10:28 «Ես յալիտենական կեանք եմ տալիս նորանց» Հավիտենական կյանք հասկացողությունը ունի թե որակական և թե քանակական առանձնահատկություն: Այն կյանք է նոր դարում: Այն հիմա հասանելի է Հիսուս Քրիստոսին հավատալով(հմմտ. 3:36; 11:24-26):

▪ **«նորանք յալիտեան չեն կորչիլ, եւ ոչ ով չի յափշտակիլ նորանց իմ ձեռիցը»** Այստեղ ԿՐԿՆԱԿԻ ԺԵՏԱԿԱՆ Է ԱՕՐԻՍ ԺԱՍՆԱԿԱԶԵՎ ՉԵԶՈՔ ՍԵՌ՝ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ բայ է: Ամբողջ Նոր Կտակարանում սա ամենախիստ հատվածներից մեկն է, որը վերաբերվում է հավատացյալի փրկության վստահությանը (հմմտ. 6:39): Միանգամայն ակնհայտ է, որ միայն մենք ինքներս կարող ենք մեզ բաժանել Աստծո սիրուց (հմմտ. Հռ. 8:38-39; Գաղ. 5:2-4): Վստահությունը (տես Հատուկ Թեմա I Հովհաննես 5:13) պետք է հավասարակշիռ լինի համբերության հետ (տես Հատուկ Թեմա 8:31): Վստահությունը պետք է հիմնված լինի Երրորդության կերպարի և գործերի վրա:

Հովհաննեսի Ավետարանը հաստատում է նրանց հավատքը, ովքեր շարունակում են մնալ Քրիստոսին հավատալու մեջ: Այն սկսվում է ապաշխարությամբ և դառնում հավատքի կյանքի ապրելակերպ: Աստվածաբանական խնդիրը ծագում է այն ժամանակ, երբ Աստծո հետ ունեցած այս անձնական հարաբերությունը դառնում է առարկա, որը մերն է («մեկ անգամ փրկված՝ միշտ փրկված»): Հավատքի մեջ մնալն է ճշմարիտ փրկության ապացույցը (հմմտ. Եբրայեցիս, Հակոբոս և I Հովհաննես):

10:29

NASB, NKJV “Իմ Հայրը, որ նրանց Ինձ տվեց, ամենից մեծ է”

NRSV “Այն ինչ իմ Հայրը տվել է ինձ ավելի մեծ է քան մնացած բոլորը”

TEV “Այն ինչ իմ Հայրը տվել է ինձ ավելի մեծ է քան ամեն ինչ”

NJB “Հայրը, այն ինչ նա տվել է ինձ, ավելի մեծ է քան ցանկացած մեկը”

Հարցն այն է, թե «ավելի մեծ» արտահայտության մեջ որն է օբյեկտը.(1) ժողովուրդը, որին Աստված տվել է Հիսուսին (NRSV, TEV) թե՞ (2) Աստված (NASB, NKJV, NJB): Այս համարի երկրորդ մասը ենթադրում է, որ ինչ որ մեկը կփորձի գողանալ Հիսուսի հետևորդներին: Աստվածաբանական տեսանկյունից երկրորդ տարբերակը թվում է ամենամոտը: Տես Հատուկ Թեմա «Փրկության վստահություն»

Սա հիանալի հատված է հավատացյալի փրկության վստահության վերաբերյալ, որը հիմնված է Հոր ամենակարողության վրա: Հավատացյալի պաշտպանվածությունը, ինչպես մնացած բոլոր աստվածաշնչյան ճշմարտությունները, ներկայացված է լցված ներքին լարվածությամբ և ուխտի հարաբերությունների օրինակով: Հավատացյալների հույսը և փրկության վստահությունը Երրորդության առանձնահատկությունն է, Նրա ողորմությունն ու շնորհքը: Բայց և այնպես հավատացյալը պետք է շարունակի մնալ հավատքի մեջ: Փրկությունը սկսվում է, երբ Հոգով առաջնորդվելով անձը որոշում է կայացնում ապաշխարելու և հավատալու: Այն նաև պետք է շարունակվի խոստովանությամբ, հավատքով, հնազանդությամբ և համբերությամբ: Փրկությունը արտադրանք չէ (կյանքի ապահովագրություն, երկինք գնալու տոմս), այլ զարգացող և աճող անձնական հարաբերություններ Աստծո հետ Քրիստոսի միջոցով:

Աստծո հետ ունեցած ճիշտ հարաբերությունների համոզիչ ապացույցը հանդիսանում է փոխված և հավատքի ու ծառայության փոխվող կյանքը (հմմտ. Մաթ. 7): Աստվածաշնչյուն շատ քիչ բան կա ասված մարմնավոր քրիստոնյաների մասին (հմմտ. I Կոր. 2-3): Քրիստոնյայի համար քրիստոսանման լինելը հիմա է, և ոչ թե երկնքում մահանալուց հետո: Այն մարդիկ ովքեր աճում են հոգևոր կյանքում, ծառայում են և անգամ պայքարում են մեղքի դեմ, նրանց համար Աստվածաշնչյուն չկա երաշխիքի պակաս, որ ապահով են և վստահ փրկության վրա: Բայց, չկա պտուղ չկա նաև արմատ: Փրկությունը միայն շնորհքով է, միայն հավատքով, բայց ճշմարիտ փրկությունը պետք է արտահայտվի «բարի գործերով» (հմմտ. Եփ. 2:10; Հակ. 2:14-26):

10:30-33 «Ես եւ Հայրը մի ենք» Սա ամենաուժեղ մտքերից մեկն է, որ Հիսուսը թե Մեսիան է և թե Աստված (հմմտ. 1:1-14; 8:58; 14:8-10, հատկ. 17:21-26, որը նաև օգտագործում է «մեկ» բառը): Հրեաներն ամբողջությամբ հասկանում էին Նրա ասածները, բայց դա համարում էին հայեցողություն (հմմտ. հ. 33; 8:59): Նրանք պատրաստվում էին նրան քարկոծել համաձայն Գև. 24:16.

Քրիստոսի անձի շուրջ եղած վաղ շրջանի բանավեճը (այն է, *Arius* – առաջինը ծնված; *Athanasius* – ամբողջությամբ Աստված) հ. 30 և 14:9 հաճախ օգտագործվել է Աթանասիոսի կողմից (տես «Քեմբրիջի

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:31-39

³¹Հրեաները դարձեալ քարեր վեր առան, որ նորան քարկոծեն:³² Յիսուսը նորանց պատասխանեց. Շատ քարի գործեր ցոյց տուի ձեզ իմ Հօրիցը. նորանցից ո՞ր գործի համար էք ինձ քարկոծում:³³ Հրեաները պատասխանեցին եւ ասեցին. Բարի գործի համար քեզ չենք քարկոծում, այլ հայհոյութեան համար. եւ որ դու մարդ լինելով՝ քո անձն Աստուած ես անում:³⁴ Յիսուսը նորանց պատասխանեց. Գրուած չէ՞ ձեր օրէնքումը, թէ Ես ասեցի՝ Աստուածներ էք:³⁵ Եթէ նորանց Աստուածներ է ասում, որ Աստուծոյ խօսքն եղաւ նորանց. (եւ կարելի չէ որ գիրքը եղծանուի):³⁶ Ապա նորան որ Հայրը սրբեց եւ ուղարկեց աշխարհք, դուք ասու՞մ էք, թէ Հայհոյում ես, որ ասեցի թէ Աստուծոյ Որդի եմ:³⁷ Եթէ իմ Հօր գործերը չեն գործում, մի հաւատաք ինձ:³⁸ Ապա եթէ գործում եմ, թէեւ ինձ էլ չհաւատաք, զոնէ գործերին հաւատացէք, որ ճանաչէք եւ հաւատաք, թէ Հայրն ինձանում է եւ ես նորա մէջ:³⁹ Դարձեալ ուզում էին նորան բռնել, բայց նորանց ձեռքը դուրս եկաւ:

10:31 Այս համարը վերաբերվում է Հիսուսի հայտարարությանը հ. 30-ում: Հիսուսը պատասխանում է նրանց բոլոր մեղադրանքներին շատ անսովոր ռաբբիական փաստարկներով: Սա հիմնականում բառախաղ է *Elohim* բառի շուրջ, որը հինկտակարանյան տերմինն է ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ, որը նշանակում է Աստված (հմմտ. Ծննդ. 1), բայց այն հաճախ օգտագործում էին թե հրեշտակների և թե մարդկային առաջնորդների (դատավորների) համար: Տես Հատուկ Թեմա Աստվածություն 6:20.

10:32 Բարի (*kalos*) Հովիվը գործում է բարի (*kalos*) գործերը հորից:

10:33 «**հայհոյութեան համար**» Հիսուսը գիտեր, որ նրանք լրիվ հասկացել էին Իր ասածը այն մասին, որ Ինքն ու Հայրը մեկ են:

10:34 «**ձեր օրէնքումը**» Հիսուսը մեջբերում է Սաղմոսներից, բայց կոչում է այն «Օրենքը» (այն է Թորա նշանակում է «ուսմունքներ», հմմտ. 12:34; 15:25; Հռ. 3:9-19): «Օրենք» տերմինը սովորաբար վերաբերվում է Մովսեսի գրվածքներին (Թորա), Ծննդոց - 2 Օրինաց: Սա ցույց է տալիս տերմինի ավելի լայն նշանակությունը, որը ծածկում է ամբողջ Հին Կտակարանը:

▪ «**Աստուածներ էք**» Հիսուսը մեջբերում է Սաղ. 82:6: *elohim* բառը վերաբերվում է մարդկային դատավորներին (տես *Elohim* Հատուկ Թեմա 6:20): Այս դատավորները (չնայած անօրեն) կոչվում են «Բարձրյալի որդիներ»: Այս հրեաները հարձակվում էին Հիսուսի վրա, որովհետև չնայած Նա մարդ էր, բայց Իրեն հռչակում էր (1) Աստծո Որդի և (2) Աստծո հետ Մեկ: Բայց և ուրիշ մարդկանց էլ (հմմտ. Ելից 4:16; 7:1; 22:8,9; Սաղ. 82:6; 138:1) կոչում էին «աստվածներ»:

Հիսուսի ռաբբիական փաստարկը թվում է հետևում է հետևյալ շարքին; Սուրբ գիրքը ճշմարիտ է, մարդիկ կոչվում են *elohim*, ուստի ինչու էք ինձ հայհոյող կոչում , այն բանի համար, որ ինձ Աստծո Որդի եմ կոչում: Եբրայերեն *Elohim* տերմինը ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ է, բայց Հին Կտակարանի Աստվածը թարգմանվում է ԵԶԱԿԻ ԹՎՈՎ և օգտագործված բայը նույնպես ԵԶԱԿԻ ԹՎՈՎ: Տես Հատուկ Թեմա Աստծո անունները 6:20. Սա բառախաղ է, որը տիպիկ է Հովհաննես առաքյալին, (1) տերմին, որն ունի երկակի իմաստ, և (2) հունարեն հարց, որը ենթադրում է «այո» պատասխան:

10:35 «**(եւ կարելի չէ որ գիրքը եղծանուի)**» Հովհաննեսը հաճախ մեկնաբանում է Հիսուսի ասածները: Տվյալ դեպքում պարզ չէ, թե այս միտքը Հիսուսինն է թե՞ Հովհաննեսինը: Եվ քանի որ երկուսի խոսքերն էլ ներշնչված են, ապա դա նշանակություն չունի: Նրանց գլխավոր իմաստը՝ Սուրբ Գրքի հուսալիության ապացույցն է: Հիսուսն ու առաքյալները Հին Կտակարանն ու իրենց մեկնաբանությունները դիտում էին որպես Աստծո ճշմարիտ խոսք (հմմտ. Մաթ. 5:17-19; I Կոր. 2:9-13; I Թես. 2:13; II Տիմ. 3:16; I Պետ. 1:23-25; II Պետ. 1:20-21; 3:15-16):

Եպիսկոպոս Հ. Չ. Մուուլին իր «Եպիսկոպոս մոուլիի կյանքը» գրքում [H. C. G. Moule in *The Life of Bishop Moule*] ասում է.

«Նա [Քրիստոս] բացարձակապես վստահում էր Աստվածաշնչին և չնայած նրան, որ նրանում կան անհասկանալի և շփոթեցուցիչ մտքեր, որոնք շատ խնդիրներ են առաջացնում ինձ

համար, ես առաջ եմ շարժվում, բայց ոչ թե կուրորեն այլ հարգանքով վստահելով Գրքին՝ հետևելով Նրա օրինակին» (Էջ 138):

10:36 Այս համարում Հիսուսը հաստատում է, որ Հայրն ընտրեց (կամ «ընծայեց», «նվիրագործեց» կամ «օրհնեց») Նրան և ուղարկեց Նրան (որպես Մեսիա): Ուրեմն Նա ունի իրավունք կոչվելու «Աստծո Որդի»: Ինչպես Իսրայելի դատավորները Աստծո ներկայացուցիչներն էին (հմմտ. Սաղ. 82:6), այնպես էլ Նա ներկայացնում է Հորը խոսքով և գործով: Տես Հատուկ Թեմա: Ուղարկել (*Apostellō*) 5:24.

10:37 Սա հենց այն է, ինչի մասին խոսում է հհ. 19-21: Հիսուսի հրաշքները արտացոլում էին Աստծո գործունեությունը:

10:37,38 «Եթէ. . եթէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է: Հիսուսն անում էր Հոր գործերը: Եվ եթե դա այդպես է, ուրեմն նրանք պետք է հավատային Նրան՝ չկասկածելով, որ Ինքն ու Հայրը մեկ են (հմմտ. հհ. 30,38): Տես Հատուկ Թեմա: «Մնալ, կենալ» I Հովի. 2:10.

10:39 Սա այն մի քանի դեպքերից մեկն է, երբ Հիսուսը խուսափեց նրանցից, ովքեր փորձում էին վնասել Իրեն (հմմտ. Գուլ. 4:29-30; Հովի. 8:59): Պարզ չէ, թե այդպիսի փախուստները հանդիսացել են (1) հրաշագործ իրադարձություն, թե (2) դա տեղի է ունեցել ի շնորհիվ Հիսուսի ֆիզիկական արտաքինի, որը ոչնչով չէր տարբերվում մյուս մարդկանցից, որը և թույլ տվեց Նրան արագ խառնվել ամբողջին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 10:40-42

⁴⁰ Եւ դարձեալ գնաց Յորդանանի այն կողմը, այն տեղը, որ Յովհաննէսն էր առաջուց եւ մկրտում էր. եւ այնտեղ էր կենում:⁴¹ Եւ շատերը նորա մօտ եկան եւ ասում էին. թէ Յովհաննէսը ոչ մի նշան չգործեց:⁴² Բայց բոլորն ինչ որ Յովհաննէսը նորա համար ասեց, ճշմարիտ էր. եւ այնտեղ շատերը հաւատացին նորան:

10:40 Այս Հորդանանի այն կողմը տարածքը գտնվում է Երիթրոփի դիմաց, Բեթանիա քաղաքից ոչ հեռու:

10:41 Կրկին Հովհաննէսը գրում է Հովհաննէս Սկրտիչի հաստատումը Հիսուսի մասին (հմմտ. 1:6-8,19-42; 3:22-30; 5:33): Սա կարող էր հակազդել որոշ հերետիկոսություններին, որոնք զարգացել էին Հովհաննէս Սկրտիչի շուրջ:

10:42 Ինչպես հրեա առաջնորդները մերժեցին Հիսուսին, այնպես էլ շատ հասարակ մարդիկ (հողի մարդիկ) հավատքով արձագանքեցին Նրան (հմմտ. 2:23; 7:31; 8:30): Տես Հատուկ Թեմա 2:23.

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորոյթյան մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ է Հովհաննէսն այդքան հաճախ խառնում իր փոխաբերությունները (օրինակ. «Հիսուսը թե ոչխարների փարախի դուռն է և թե բարի հովիվը»):
2. Ո՞րն է Հովհաննէսի Ավետարանի 10-րդ գլխի հինկտակարանյան ֆոնը կամ նախադրյալը:
3. Ի՞նչ կարևորություն կա Հիսուսի «Իր կյանքն է դնում» արտահայտության մեջ:
4. Ինչու՞ էին հրեաները շարունակում մեղադրել Հիսուսին դիվահար լինելու մեջ:
5. Ինչու՞ Հիսուսի գործած գործերն այդքան կարևոր են:
6. Ինչպիսի՞ կապ կա «հավատացյալի փրկության վստահության» և «սուրբերի համբերության» միջև:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 11

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ^d	NKJV	NRSV	TEV	NJB
Ղազարոսի մահը 11:1-16	Ղազարոսի մահը 11:1-16	Ղազարոսի հարությունը 11:1-6 11:7-16	Ղազարոսի մահը 11:4 11:5-7 11:8 11:9-11 11:12 11:13-15 11:16	Ղազարոսի հարությունը 11:1-4 11:5-10 11:11-16
Հիսուսն է հարությունը և կյանքը 11:17-27	Ես եմ հարությունը և կյանքը 11:17-27	11:17-27	Հիսուսն է հարությունը և կյանքը 11:17-19 11:20-22 11:23 11:24 11:25-26 11:27	11:17-27
Հիսուսը լացում է 11:28-37	Հիսուսը և մահը, Վերջին թշնամին 11:28-37	11:28-37	Հիսուսը լացում է 11:28-31 11:32 11:33-34ա 11:34բ 11:35-36 11:37	11:28-31 11:32-42
Ղազարոսը կյանքի եկավ 11:38-44	Ղազարոսը հարություն առավ մեռելներից 11:38-44	11:38-44	Ղազարոսը կյանքի է գալիս 11:38-39ա 11:39բ 11:40-44	11:43-44
Հիսուսին սպանելու դավը 11:45-53	Հիսուսին սպանելու դավը 11:45-57	11:45-53	Դավ Հիսուսի դեմ 11:45-48 11:49-52 11:53-54	Հրեա առաջնորդները որոշում են Հիսուսի մահը 11:45-54
11:54		11:54		Զատիկը մոտենում է
11:55-57		11:55-57	11:55-57	11:55-57

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ

նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՓՈՓՈՒՄ

11-րդ գլխի աստվածաբանական նշանակությունն է,

1. Հիսուսի գործության և իշխանության ցուցադրումը շարունակվում է:
2. Ղազարոսի մահը Աստուծո ծրագրի մեջ է՝ տալով Հիսուսին փառավորվելու հնարավորություն (հմմտ. 9: 3):
3. Մարթայի երկխոսությունը Հիսուս հետ հնարավորություն է ընձեռում նրան մեծ խոստովանության և Հիսուսի հետագա Հայտնությանը (այսինքն, հարությունը և կյանքը, հ.25):
4. Հիսուսը տալիս է հավիտենական կյանք հիմա (հասկանալի է վախճանաբանորեն): Սա խորհրդանշում է Ղազարոսի հարությունը: Հիսուսն էր վերահսկում մահը:
5. Նույնիսկ ի դեմս այս հզոր հրաշքի, անհավատությունը շարունակվում է (այսինքն աններելի մեղքը, Տես Հատուկ Թեման 5.21):

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:1-16

1 Եւ մի հիւանդ կար, անունը Ղազարոս, Բեթանիայիցը, Մարիամի եւ նորա քոյր Մարթայի զհղիցը: 2 Մարիամն էլ նա էր, որ Տիրոջը իւղով օծեց եւ նորա ոտները սրբեց իր մազերովը. Որի եղբայրը Ղազարոսը հիւանդ էր: 3 Եւ նորա քոյրերն ուղարկեցին նորա մօտ եւ ասեցին. Տէր, ահա նա որին դու սիրում ես՝ հիւանդացել է: 4 Յիսուսն էլ երբոր լսեց, ասեց. Այն հիւանդութիւնը մեռնելու համար չէ, այլ Աստուծոյ փառքի համար. Որ Աստուծոյ Որդին նորանով փառաւորուի: 5 Եւ Յիսուսը սիրում էր Մարթային եւ նորա քրոջը եւ Ղազարոսին: 6 Եւ երբոր լսեց, թէ նա հիւանդ է, այն ժամանակ երկու օր մնաց այն տեղը, ուր որ էր. 7 Ապա նորանից յետոյ ասեց աշակերտներին. Եկէք դարձեալ գնանք Հրէաստան: 8 Աշակերտներն ասեցին նորան. Ռաբբի, հիմա Հրէաներն ուզում էին քեզ քարկոծել. Եւ դարձեալ այնտե՞ղ ես գնում: 9 Յիսուսը պատասխանեց. Չէ՞ որ օրը տասներկու ժամ ունի. եթէ մէկը ցերեկը ման գայ, չի սահիլ. Որովհետեւ այս աշխարհքի լոյսը տեսնում է: 10 Իսկ եթէ մէկը զիշերը ման գայ, կ'սահի. Որովհետեւ լոյս չ'կայ նորանում: 11 Այս ասեց, եւ սորանից յետոյ ասեց նորանց. Մեր Ղազարոս բարեկամը քնեց. Բայց կ'գնամ, որ զարթնեցնեմ նորան: 12 Եւ նորա աշակերտներն ասեցին նորան. Տէր, թէ որ քնել է՝ կ'առողջանայ: 13 Բայց Յիսուսը նորա մահուան համար էր ասել. Նորանք էլ կարծում էին, թէ քուն քնելու համար էր ասում: 14 Այն ժամանակ Յիսուսը յայտնի ասեց նորանց. Ղազարոսը մեռաւ: 15 Եւ ես ուրախ եմ ձեզ համար, որ ես այնտեղ չէի, որ դուք հաւատաք ինձ. Բայց գնանք նորա մօտ: 16 Եւ ասեց Թովմասը (Երկուորեակ կոչուածը) աշակերտակիցներին. Մենք էլ գնանք նորա հետ մեռնենք:

11:1 «Եւ մի հիւանդ կար» Սա ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ է: Սա նշանակում է, որ նա հիվանդ է եղել երկար ժամանակ: Սակայն ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ կարող է մեկնաբանվել որպես «սկսել էր հիվանդանալ»:

- «Ղազարոս» Սա եբրայերեն «Եղիազար» անունն է, որը նշանակում է «Աստված օգնում է» կամ «Աստված օգնական»: Հովհաննեսը ենթադրում է, որ ընթերցողները գիտեին Հիսուսի Մարիամի,

Մարթայի և Ղազարոսի հետ ունեցած բարեկամության մասին (հմմտ. Ղուկաս 10:38-42, ինչը միայն հիշատակվում է Մինոպտիկ Ավետարաններում):

- **«Բեթանիայիցը»** Սա ուրիշ տեղանք է այն Բեթանիայից, որը նշված 1:28 և 10:40, որը մոտ էր Երիթովին Հորդանան գետի կողմից: Այս Բեթանիան մոտ երկու կիլոմետր հարավ-արևելք է Երուսաղեմից, նույն լեռնաշղթայի կողմը ինչպես Ձիթենյաց լեռը: Սա Հիսուսի սիրելի վայրն էր Երուսաղեմում եղած ժամանակ:
- **«Մարիամի»** Սա երբայերեն «Միրիամ» անունն է:
- **«Մարթայի»** Սա արամերեն «տիրուհի» տերմինն է: Անսովոր է, որ Մարթան, որը ավագ քույրն է, չի նշվում առաջինը, կարող է կապված է Ղուկաս 10:38-42:

11:2 «Մարիամն էլ նա էր, որ Տիրոջը իւղով օձեց եւ նորա ոտները սրբեց իր մազերովը» Համար 2-ը ևս մեկ խմբագրական լրացում է Հովհաննեսի կողմից (այսինքն, TEV, NET): Սա խոսում է Մարիամի նվիրվածության մասին (հմմտ.12:2-8), որը զուգակցվում է, թե Մատթևոսի (հմմտ. 26:6-13) և Մարկոսի հետ (հմմտ. 14:3-9): Կինը, որը նշված է նմանատիպ օձման պատմության մեջ Ղուկաս 7: 36, ուրիշ կին է:

Այս համարը նկարագրում է մի դեպք, որը դեռ չի արձանագրվել Ավետարանում: Այն արձանագրված է 12-րդ գլխում: Շատերը ենթադրում են, որ սա նշանակում է, որ Հովհաննեսը ենթադրում է, որ իր ընթերցողները գիտեն այս ընտանիքի մասին այլ աղբյուրներից:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՕԾՈՒՄԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ (BDB 603)

- Ա. Օգտագործվում է բարեկարգման համար (հմմտ. 2 Օրին. 28:40, Հռութ 3: 3, II Թագ. 12:20, 14:2, II Մնաց. 28:15; Դան. 10:3, Ամովս 6:6, Միք. 6:15)
- Բ. Օգտագործվում է հյուրերի համար (հմմտ. Սաղ. 23:5, Ղուկ.7: 38,46; Հովհ. 1: 2)
- Գ. Օգտագործվում է ապաքինման համար (հմմտ Ես. 6:1, Երեմ. 51:8; Մարկ. 6:13; Ղուկ. 10:34; Հակոբոս 5:14) [օգտագործվում է հիգիենիկ առումով Եզեկ. 16:9]
- Դ. Օգտագործվում է թաղման նախապատրաստման համար (հմմտ. Ծննդ. 50:2, II Մնաց. 16:14; Մարկ. 16:1, 12:3,7; 19:39-40)
- Ե. Օգտագործվում է կրոնական իմաստով (օբյեկտի, հմմտ. Ծննդ. 28:18,20; 31:13 [սյուն] Ելից 29:36 [զոհասեղանը] Ելից 30:26; 40: 9-16; Ղևտ. 8:10-13; Թվոց 7: 1 [խորանը])
- Զ. Օգտագործվում է դեկավարներ նշանակելու ժամանակ
 1. Քահանաներ
 - ա. Ահարոն (Ելից 28:41; 29:7; 30:30)
 - բ. Ահարոնի որդիներ (Ելից 40:15; Ղև.7:36)
 - գ. Ստանդարտ արտահայտություն կամ անվանում(Թվոց 3:3; Ղև. 16:32)
 2. Թագավորներ
 - ա. Աստծո կողմից (հմմտ. I Թագ. 2:10; II Թագ. 12:7; 4 Թագ. 9:3,6,12; Սաղ. 45:7; 89:20)
 - բ. մարգարեների կողմից (հմմտ.I Թագ. 9:16; 10:1; 15:1,17; 16:3,12-13; 3Թագ. 1:45; 19:15-16)
 - գ. քահանաների կողմից (հմմտ. 3 Թագ. 1:34,39; 4 Թագ. 11:12)
 - դ. ձերերի կողմից (հմմտ. Դատ. 9:8,15; II Թագ. 2:7; 5:3; 4 Թագ. 23:30)
 - ե. Հիսուս որպես մեսիական թագավոր(հմմտ. Սաղ.2:2; Ղուկ.4:18 [Ես.61:1]; Գործք 4:27; 10:38; Եբր. 1:9 [Սաղ. 45:7])
 - զ. Հիսուսի հետևորդները(հմմտ. II Կոր. 1:21; I Հովհ. 2:20,27 [chrisma])
 3. հնարավոր է մարգարեների (հմմտ. Ես. 61:1)

4. աստվածային ազատագրում անհավատ գործիքներին (մարդկանց)
 - ա. Կյուրոս (հմմտ. Ես. 45:1)
 - բ. Տյուրոսի թագավոր(հմմտ. Եզեկ. 28:14, որտեղ նա օգտագործում է Եդովմի փոխաբերությունները)
5. տերմին կամ տիտղոս «Մեսիա» նշանակում է «Օծյալ» (BDB 603)

11:3 «քոյրերն ուղարկեցին նորա մօտ եւ ասեցին» Նրանք լուր ուղարկեցին Հիսուսին, որը Պիրեայում էր, Յորդանանի մյուս կողմում:

- «նա՝ որին դու սիրում ես՝ հիւանդացել է» Սա ցույց է տալիս Հիսուսի յուրահատուկ հարաբերությունը այս ընտանիքի հետ: Սա հունարեն *phileō* տերմինն է: Սակայն, Կոյնե հունարենում *phileō* և *agapaō* տերմինները փոխարինելի են (հմմտ հ.5, 3:35, 5:20):

11:4 «Այն հիւանդութիւնը մեռնելու համար չէ, այլ Աստուծոյ փառքի համար» Սա ենթադրում է, որ Հիսուսը գիտեր, որ Ղազարոսը հիվանդ էր: Նա թույլ է տալիս նրան մահանալ, որպեսզի Հայրը կարողանար ցույց տալ Իր իշխանությունը Նրա միջոցով՝ նրան մեռելներից հարություն տալով: Հիվանդությունը և տառապանքը երբեմն Աստծո կամքի մեջ են (հմմտ. 9: 3, Հոբ, II Կոր. 12:7-10):

- «Աստուծոյ փառքի» Հիսուսի գործերը հայտնում են «Աստծո փառքը»: Տես նշում է 1:14.
- «Որ Աստուծոյ Որդին նորանով փառաւորուի» ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ արտահայտությունը «Աստծո» չկա հնագույն հունական պապիրուսե ձեռագրերում P⁴⁵ կամ P⁶⁶: Հիվանդությունը փառք կրերի թե Հորը և թե Որդուն: Հիսուսի փառքը, այս դեպքում շատ տարբեր է, քան կարելի է ակնկալել: Ողջ Հովհաննեսի Ավետարանում տերմինը վերաբերվել է Հիսուսի խաչելությանն ու Նրա փառավորմանը: Ղազարոսի վերակենդանացումը կհանգեցնի հրեական ղեկավարությանը Հիսուսի մահվան պահանջին:

11:5 Մեկ այլ խմբագրական մեկնաբանություն Հովհաննեսի կողմից (հմմտ. հ.36):

11:6 «այն ժամանակ երկու օր մնաց այն տեղը, ուր որ էր» Հիսուսը հետաձգեց մինչև Ղազարոսը մահացավ: Հիսուսը չէր խաղում սիրելիներ: Այս հիվանդության մեջ կար աստվածային նպատակ (հմմտ. հ.15, 9: 3):

11:7 «նորանից յետոյ ասեց աշակերտներին. Եկեք դարձեալ գնանք Հրէաստան» Հետևյալ քննարկումը ցույց է տալիս, որ աշակերտները շատ լավ գիտակցում էին, որ հրեաները, ուզում էին քարկոծել Հիսուսին (հմմտ. հ. 8; 8:54, 10:31,39): Աշակերտները ցուցաբերում էին հավատի ու վախի տարօրինակ խառնվածք (հմմտ հ.16): Թովմասը հաճախ հանդես է գալիս որպես կասկածամիտ աշակերտ, սակայն այստեղ նա պատրաստ էր մեռնել Հիսուսի հետ (հմմտ. հ.16): Michael Magill, *NT TransLine* (էջ 345 # 43) լավ դիտարկում է անում, որ «եկեք գնանք» հ.7 փոփոխվել է «բայց ես գնում եմ» -ի հ.11: Աշակերտները վախենում էին և կասկածում, բայց Հիսուսը վստահ էր: Թովմասն է, որ միանում է Հիսուսին (եկեք գնանք) հ.16-ում:

11:9-10 Սա կարող է կապող ճանապարհ լինել 8:12 և 9:4-5 գլուխների հետ (հմմտ.12:35): Համար 9 ա ակնկալում է «այո» պատասխան:

Կա ակնհայտ հակադրություն Աստծո կամքին հետևողների (այսինքն, Հիսուսը) և չհետևողների (հ. 10, հրեաները) միջև: Հիսուսը սխալ չի գործում, գնալով այնտեղ ուր Աստված է տանում են Նրան, քանի որ Նա է աշխարհի լույսը:

Այս հակադրությունը լույսի և խավարի միջև բնորոշ էր հրեական Իմաստուն գրականությանը և Կուրմանի գրվածքներին (այսինքն, որ «Լույսի որդիները Խավարի որդիների դեմ» կամ «պատերազմի Լույսի որդիները խավարի որդիների դեմ»):

▪ **«Եթե...եթե»** Սրանք երկուսն էլ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ, որոնք նշանակում են պոտենցիալ գործողություն:

11:11«Մեր Ղազարոս բարեկամը քնեց» ԲԱՅՈՒ ՎԱՂԱԿԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Աշակերտները հաճախ սխալ էին հասկանում Հիսուսին, քանի որ Նրան չափից շատ բառացիորեն էին ընկալում (հմմտ. հ.13): Հիսուսի օգտագործած այս փոխաբերությունը մահվան համար է, որը արտացոլում է ՀԿ օգտագործումը (հմմտ. 2 Օրին. 31:16; II Թագ. 7:12; 3 Թագ. 1:21, 2:10, 11:21,43; 14:20 և այլն): Անգլերեն «գերեզմանոց» տերմինը գալիս է նույն արմատից, ինչպես հունարեն «քնել» տերմինը:

11:12 «Եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ընդունվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար:

▪ **«կ'առողջանայ»** Սա բառացիորեն «փրկվել» տերմինն է իր ՀԿ օգտագործման իմաստով, որպես «ֆիզիկական ազատում» (հմմտ. Հակ. 5:15): Կրկին աշակերտները սխալ հասկացան Հիսուսին, քանի որ նրանք Նրա փոխաբերական լեզուն (այսինքն, քնել) հասկացան բառացիորեն: Հիսուսի ունկնդիրների այս թյուրիմացությունը բնորոշ է Հովհաննեսի Ավետարանին (այսինքն, հհ. 23-24): Նա վերևից է, նրանք ներքևից: Առանց Հոգու օգնության (այն է Պենտեկոստե) նրանք չեն կարող հասկանալ:

11:13 Մեկ այլ խմբագրական մեկնաբանություն Հովհաննեսի կողմից:

11:14 «Ցիսուսը յայտնի ասեց նորանց» Տես Հատուկ Թեմա: *Parrhēsia* 7:4.

11:15 «Եւ ես ուրախ եմ ձեզ համար, որ ես այնտեղ չէի, որ դուք հաւատաք ինձ» Հիսուսը պնդում է, որ Ղազարոսի հարությունը չի եղել բարեկամական կապերից ելնելով, կամ էլ Մարիամի և Մարթայի սգալու պատճառով, այլ (1) աշակերտների հավատքը բարձրացնելու (հ.14) և (2) հրեական ամբոխի հավատքը խրախուսելու համար (հ.42): Հավատքը գործընթաց է Հովհաննեսի Ավետարանում: Երբեմն այն զարգանում է (այսինքն, աշակերտները, տես 2:11), երբեմն, ոչ (այսինքն, անցորդները, տես 8:31-59):

11:16 Այս համարը հստակորեն ցույց է տալիս Թովմասի հավատքը: Նա պատրաստ էր մեռնել Հիսուսի հետ: Աշակերտները պետք է տեսնեին Հիսուսի իշխանությունը մահվան վրա, մարդկության մեծ վախը:

Թովմաս անունը արտացոլում է արամերեն «երկվորյակ» բառը (այլ խմբագրական մեկնաբանություն), ինչպես Երկվորյակը հունարենում: Մինոպտիկները նշում են նրան որպես Առաքյալ (տես Մատթ.10:3, Մարկ. 3:18, Ղուկաս 6:15): Հովհաննեսի Ավետարանը նրա մասին հաճախ է խոսում (հմմտ. 11:16, 14:5, 20:24-29, 21:2): Տես Հատուկ Թեմա «Առաքյալների Անունների ցանկը» 1:45:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:17-27
¹⁷ Ցիսուսն էլ եկաւ նորան արդէն չորս օր գերեզմանի մէջ դրուած գտաւ: ¹⁸ Եւ Բեթանիան մօտ էր Երուսաղէմին տասնեւիինգ ասպարեզի չափով: ¹⁹ Եւ Հրէաներից շատերը եկել էին Մարթայի եւ Մարիամի մօտ, որ մխիթարեն նորանց իրանց եղբոր մասին: ²⁰ Արդ, երբոր Մարթան լսեց, թէ Ցիսուսը

գալիս է, գնաց նորան դիմաւորելու. Բայց Մարիամը տանը նստած էր: ²¹ Եւ Մարթան ասեց Յիսուսին. Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ: ²² Բայց հիմա էլ գիտեմ, թէ ինչ որ Աստուածանից խնդրես, Աստուած կ'տայ քեզ: ²³ Յիսուսը նորան ասեց. Քո եղբայրը յարութիւն կ'առնէ: ²⁴ Մարթան նորան ասեց. Գիտեմ որ յարութիւն կ'առնէ յարութիւնումը՝ յետին օրը: ²⁵ Յիսուսը նորան ասեց. Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ինձ հաւատացողը թէեւ մեռնի էլ, կ'ապրի: ²⁶ Եւ ամեն ով որ կենդանի է եւ ինձ հաւատում է, յաիտեան չի մեռնիլ. Հաւատո՞ւմ ես սորան: ²⁷ Նորան ասեց. Այո, Տէր, ես հաւատացել եմ, թէ դու ես Քրիստոսն՝ Աստուծոյ Որդին, որ պէտք է աշխարհք գայիր:

11:17 «նորան արդէն չորս օր գերեզմանի մեջ դրուած գտաւ» Ռաբբիներն ասում էին, որ մարդու հոգին մնում է ֆիզիկական մարմնի մոտ երեք օր: Հիսուսը չղանդադեցրեց մինչև չորս օրը հավաստիացնելով, որ Ղազարոսը իսկապէս մեռած է և դրանից դուրս բոլոր ռաբբիական հույսերը:

11:18«տասնեւինգ ասպարէզի չափով» Այս համարը մեկ այլ խմբագրական մեկնաբանություն է Հովհաննէսի կողմից: Բառացիորեն սա «տասնեւինգ ասպարէզի չափ»:

11:19 «Հրեաներից շատերը եկել էին Մարթայի եւ Մարիամի մօտ» Սա ոչ բնորոշ չեզոք օգտագործման ձևն է «հրեաներ» տերմինի, որը սովորաբար Հովհաննէսի Ավետարանում վերաբերում է Հիսուսի թշնամիներին: Սակայն, այս կոնտեքստում է, այն վերաբերում է պարզապէս Երուսաղեմի բնակիչներին, ովքեր ճանաչում էին այս ընտանիքին (տես հ. 31,33,45):

11:20 «Բայց Մարիամը տանը նստած էր» Հրեաների սգալու ընդունված դիրքը հատակին նստած էր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍԳՈ ԾԵՍԵՐ

Իսրայելացիները արտահատել են սիրելիի մահվան վիշտը և անհատական ապաշխարությունը, ինչպէս նաև խմբակային հանցագործությունները մի քանի եղանակներով.

1. պատռել հանդերձները, արտաքին խալաթը, Ծննդ. 37:29,34; 44:13; Դատ. 11:35; II Թագ. 1:11; 3:31; 3 Թագ. 21:27; Հոբ 1:20
2. քուրձ հագնել Ծննդ. 37:34; II Թագ. 3:31; 3 Թագ. 21:27; Եր. 48:37
3. կոշիկները հանել II Թագ. 15:30; Ես. 20:3
4. ձեռքերը դնել գլխին II Թագ. 13:9; Եր. 2:37
5. գլխին հող լցնել Հեաու 7:6; I Թագ. 4:12; Նեեմ. 9:1
6. Հողի վրա նստել Ողբ 2:10; Եզ. 26:16(պարկել գետնին, II Թագ. 12:16); Ես. 47: 1
7. կուրծքը ծեծել I Թագ. 25:1; II Թագ. 11:26; Նեեմ. 2:7
8. մարմինը կտրտել 2 Օրին. 14:1; Եր. 16:6; 48:37
9. ծով պահել II Թագ. 1:16,22; 3 Թագ. 21:27
10. ողբալ II Թագ. 1:17; 3:31; II Մնաց. 35:25
11. ճաղատություն (մազերը պոկել կամ սափրել), Եր. 48:37
12. մորուքը կարճ կտրել Եր. 48:37
13. ծածկել գլուխը կամ երեսը II Թագ. 15:30; 19:4

11:21,32 «Եւ Մարթան ասեց...եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ» Սա ԵՐԿԴՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է «հակասում է փաստին»: Հետևաբար դա պէտք է հասկանալ այսպէս «Եթէ դու այստեղ լինէիր մեզ հետ, բայց դու չէիր, եղբայրս չէր մեռնի, ինչը եղավ»: Հիսուսին ուղղված Մարթայի և Մարիամի հայտարարությունները (հմտ հ. 32) հենց այսպէս էին: Նրանք պէտք է քննարկեին այս թեման հաճախ սգի այդ չորս օրերին: Այս երկու կանայք բավականին ազատ էին զգում իրենց Հիսուսին արտահայտելու իրենց քողարկված հիասթափությունը, որ նա չէր եկել ավելի վաղ:

11:22 «Բայց հիմա էլ գիտեմ, թե ինչ որ Աստուածանից խնդրես, Աստուած կ'տայ քեզ» Անորոշ է, որ հենց Մարթան էր հարցնում Հիսուսին գործել, քանի որ հ.39 նա զարմացել էր Ղազարոսի վերակենդանացմամբ:

11:23-24 «Քո եղբայրը յարութիւն կ'առնէ» Մարթան ուներ նույն աստվածաբանական տեսակետը մահից հետո կյանքի վերաբերյալ ինչ որ փարիսեցիները, որոնք հավատում էին մարմնով հարությանը վերջին օրում: Կա որոշ սահմանափակ ՀԿ Աստվածաշնչյան փաստ այս տեսակետի վերաբերյալ (տես Դան. 12:2, Հոր 14:14, 19:25-27): Հիսուսը փոխում է այս հրեական պատկերացումը Իր գործության և իշխանության հաստատմանը (հմմտ հ. 25, 14:6):

11:24 «յետին օրը» Չնայած ճիշտ է, որ Հովհաննեսն ընդգծում է փրկության անհետաձգելիությունը (հասկանալի է վախճանաբանական), նա դեռևս ակնկալում է վերջին- ժամանակի իրականացում: Սա արտահայտվում է մի քանի ձևերով.

1. դատաստան / հարության օր (հմմտ 5:28-29, 6:39-40,44,54, 11:24, 12:48):
2. «ժամը» (հմմտ 4:23, 5:25,28; 16:32)
3. Քրիստոսի երկրորդ գալուստը (տես 14:3, հնարավոր է, որ 14:18-19,28 և 16:16,22 վերաբերում են Հիսուսի հետհարության հայտնվելուն և ոչ թե վախճանաբանական գալստյանը)

11:25 «Յիսուսը նորան ասեց. Ես եմ յարութիւնը եւ կեանքը» Սա Հիսուսի յոթ «Ես եմ» դրոյթներից մեկն է: Ի դեմս Ղազարոսի մահվան, Մարթան քաջալերված էր հավատալու, որ նա ապրում է: Այս հույսը արմատավորված է Հոր և Հիսուս անձի և իշխանության մեջ (տես 5:21): Տես նշում է 8:12.

Զարմանալիորեն վաղ պապիրուսե ձեռագիրը (այսինքն P⁴⁵) և որոշ Հին Լատիներեն, սիրիական տարբերակները և Դիաթեսարոնը բաց են թողել «և կյանքը» բառերը: UBS³ տալիս է նրանց ներգրավվումը "B" վարկանիշ, բայց UBS⁴ տալիս է "A" գնահատականը (հավանական):

11:26 «Եւ ամեն ով որ կենդանի է եւ ինձ հաւատում է, յաւիտեան չի մեռնիլ» Կան մի քանի էական շարահյուսական հատկանիշներ այս տեքստում.

1. ունիվերսալ/հավաքական ԴԵՐԱՆՈՒՆ «բոլորը, ամենը»
2. ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅՆԵՐ, որոնք ցույց են տալիս շարունակական հավատքի անհրաժեշտությունը (հհ. 25 & 26)
3. ուժեղ կրկնակի բացասական կապ մահվան հետ « ոչ երբեք, երբեք չի մեռնի», որը ակնհայտորեն վերաբերում է հոգևոր մահվանը:

Հովհաննեսի Ավետարանում հավիտենական կյանքը ներկա իրականություն է հավատացյալների համար և ոչ միայն ինչ որ ապագա իրադարձություն: Ղազարոսը կարծես հաստատում է Հիսուսի խոսքերը: Հովհաննեսի համար հավիտենական կյանքը ներկա իրականություն է:

11:27 «Այո, Տէր, ես հաւատացել եմ, թէ դու ես Քրիստոսն՝ Աստուծոյ Որդին, որ պէտք է աշխարհք գայիր» Այս մասին ասվում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՈՎ: Սա հզոր խոստովանություն է իր անձնական հավատքի առ Հիսուս, որպես խոստացված Մեսիա: Այն աստվածաբանորեն համարժեք է Պետրոսի խոստովանությանը Կեսարիայում (տես Մատթեոս 16):

Նա օգտագործում է մի քանի տարբեր անուններ իր հավատքը արտահայտելու համար.

1. Քրիստոսը (որը Մեսիայի հունարեն թարգմանությունն է, Օծյալը)
2. Աստծո Որդին (որը Մեսիայի ՀԿ անվանումն է)
3. Նա, ով գալիս է (մեկ այլ ՀԿ կոչում Աստծո խոստացյալի, ով բերելու է արդարութեան նոր դարաշրջան, տես 6:14):

Հովհաննեսն օգտագործում է երկխոսությունը, որպես գրական տեխնիկական միջոց ճշմարտությունը փոխանցելու համար: Կան մի քանի Հիսուս հավատքի խոստովանություններ Հովհաննեսի Ավետարանում (տես 1:29,34,41,49, 4:42, 6: 44,69; 9: 35-38; 11:27): Տես Հատուկ Թեմա Հավատքի օգտագործումը Հովհաննեսի Ավետարանում, 2:23:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:28-29

28 Եւ երբոր այս ասեց, գնաց թագուն կանչեց իր Մարիամ քրոջը, եւ ասեց. Վարդապետը եկել է եւ կանչում է քեզ: 29 Նա երբոր լսեց, շուտով վերկացաւ, եւ եկաւ նորա մօտ:

11:28 «Վարդապետ» Անգլերեն NASB սերտողության Աստվածաշունչը (էջ 1540) ունի մեծ մեկնաբանություն «զգալի նկարագրություն տրված կնոջը: Ռաբբիները չէին ուսուցանում կանանց (տես 4:27), բայց Հիսուսը հաճախակի սովորեցրեց նրանց» :

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԱՆԱՅՔ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

I. Հին Կտակարան

Ա. Մշակութորեն կանայք համարվում էին սեփականություն, գույք

1. ընդգրկվել է սեփականության, գույքի ցանկում (Ելից 20:17)
2. ստրուկ կանանց կամ աղախինների պես էին վարվում (Ելից 21: 7-11)
3. կանանց ուխտերը/երդումները չէյլալ էին համարվում սոցիալապես պատասխանատու տղամարդկանց կողմից (Թվոց 30)
4. կանայք, որպես պատերազմական ավար (Բ Օրինաց 20:10-14; 21:10-14).

Բ. Գործնականում կար ընդհանրություն

1. Աստծո Իր պատկերով արու և էգ ստեղծեց (Ծննդոց 1: 26-27)
2. պատվել հորն ու մորը (Ելից 20:12 [2 Օր.5:16])
3. հարգել հորն ու մորը (Ղև. 19: 3, 20: 9)
4. տղամարդիկ ու կանայք կարող էին Ուխտավորներ լինել (Թվ. 6: 1-2)
5. դուստրերը ժառանգության իրավունք ունեն (Թվ. 27: 1-11)
6. ուխտի ժողովրդի մասն են (Երկրորդ Օրինաց 29: 10-12)
7. հետևել հոր և մոր ուսումնունքին (Առակաց 1:8; 6:20)
8. Եմանի որդիներն ու դուստրերը (Ղևիի ընտանիքից) գլխավորում էին երաժշտությունը Տաճարում (I Մնաց. 25: 5-6)
9. որդիներն ու աղջիկները պիտի մարգարեանան նոր դարում (Հովել 2: 28-29)

Գ. Կանայք առաջնորդության դերերում

1. Մովսեսի քույր Մարիամը կոչվում էր մարգարեուհի (Ելից 15: 20-21 նաև Միքիա 6: 4):
2. Աստծո կողմից օժտված կանայք ձեռքերով մանեցին Խորանի համար (Ելից 35: 25-26):
3. մի կին Դեբորա անունով նույնպես մարգարեուհի (տես Դատ. 4:4), որը գլխավորում էր բոլոր ցեղերին (Դատ. 4: 4-5, 5: 7)
4. Ողոն մարգարեուհի էր, որին Հովսիա թագավորը վկայակոչ կարդալ և մեկնաբանել նոր հայտնաբերված «Օրենքի Գիրքը» (4 Թագ. 22:14; 2 Մնաց. 34: 22-27)
5. Եսթեր թագուհին, մի աստվածավախ կին, որը փրկեց հրեաներին Պարսկաստանում

II. Նոր Կտակարան

Ա. Մշակութորեն կանայք թե հուդայականության մեջ և թե հունա-հռոմեական աշխարհում երկրորդ կարգի քաղաքացիներ էին, շատ քիչ իրավունքներով կամ

արտոնություններով (բացառությամբ Մակեդոնիայի):

Բ. Կանայք առաջնորդության դերերում

1. Եղիսաբեթ և Մարիամ, աստվածավախ կանայք հասանելի են Աստծուն (Ղուկ.1-2)
2. Աննա, աստվածավախ կին ծառայում է տաճարում (Ղուկ. 2:36)
3. Լիդիա, հավատացյալ և տնային եկեղեցու առաջնորդ (Գործք 16: 14,40):
4. Փիլիպպոսի չորս կույս աղջիկները մարգարեուհիներ էին (Գործք 21: 8-9):
5. Փիբե, սպասավոր Կենքրայի եկեղեցում (Հռոմ. 16:1)
6. Պրիսկիլան (Priscilla) Պողոսի գործընկեր և Ապողոսի ուսուցիչը (Գործք 18:26, Հռոմ. 16: 3)
7. Մարիամը, Տրիփանոսը, Տրիփոսը, Պերսիդեն, Յուլիան, Ներեոսի քույրը, Պողոսի մի խումբ կին գործընկերներ (Հռոմ. 16: 6-16)
8. Յունիա (KJV), հնարավոր է կին առաքյալ (Հռոմ. 16: 7)
9. Եվոդիան և Սյունտիքը, Պողոսի գործընկերներ (Փիլիպ. 4: 2-3)

III. Ինչպե՞ս է ժամանակակից հավատացյալը հավասարակշռում իրարամերժ աստվածաշնչյան օրինակները:

Ա. Ինչպե՞ս կարելի է որոշել պատմական կամ մշակութային ճշմարտությունները, որոնք կիրառելի են միայն բնագիր կոնտեքստում, հավիտենական ճշմարտությունները վավեր են բոլոր ժամանակների բոլոր եկեղեցիների, բոլոր հավատացյալների համար:

1. Մենք պետք է մտադրությունը բուն ներշնչված հեղինակի շատ լուրջ:
Աստվածաշունչը Աստծո Խոսքն է և գործնական հավատքի միակ աղբյուրը:
2. Մենք պետք է գործ ունենանք ակնհայտ պատմականորեն պայմանավորված ներշնչված տեքստերի հետ:

ա. Իսրայելի աղանդները (այսինքն, ծես և պատարագ) և (հմմտ. Գործք 15; Գաղ. 3)

բ. առաջին դարի Հուդաիզմ

գ. Պողոսի ակնհայ պատմականորեն պայմանավորված մտքերը I Կորն.-ում

- (1) հեթանոսական Հռոմի իրավական համակարգը (I Կոր. 6)
- (2) մնալ ստրուկ (I Կոր. 7: 20-24)
- (3) ամուրիություն (I Կոր. 7: 1-35)
- (4) կույսերը (I Կոր. 7: 36-38)
- (5) կուռքին զոհաբերած կերակուր (I Կոր. 8, 10: 23-33)
- (6) Տիրոջ ընթրիքին անարժանաբար մոտեցում (I Կոր. 11)

3. Աստված լիարժեք և հստակ բացահայտեց Իրեն մի կոնկրետ մշակույթի, կոնկրետ օրվա մեջ: Մենք պետք է լրջորեն մոտենանք հայտնությանը, բայց ոչ պատմական հարմարեցման իր ամեն առումով: Աստծո Խոսքը գրվել է մարդկային բառերով, ուղղված որոշակի մշակույթի որոշակի ժամանակ մեջ:

Բ. Աստվածաշնչյան մեկնաբանությունը պետք է փնտրի բնօրինակի հեղինակի մտադրությունը: Ի՞նչ էր նա ասում է իր օրերում: Սա ֆունդամենտալ և կարևոր է պատշաճ մեկնաբանության համար: Բայց հետո մենք պետք է կիրառենք այն մեր օրերում: Այժմ, ահա խնդիրը կանանց լիդերության (իրական մեկնաբանական խնդիրը կարող է սահմանել տերմինը: Արդյո՞ք միայն հովիվների ծառայությունն է համարվում առաջնորդություն: Արդյո՞ք սպասավորները/սարկավագուհիներ կամ մարգարեուհիները համարվում էին առաջնորդներ): Միանգամայն պարզ է, որ Պողոսը I Կորնթ. 14: 34-35 և I Տիմ. 2: 9-15 հաստատում է, որ կանայք չպետք է առաջնորդի դեր կատարեն հրապարակավ պաշտամունքի ժամանակ: Բայց ինչպե՞ս կարող եմ կիրառել դա այսօր: Ես չեմ ուզում, որ Պողոսի մշակույթը կամ իմ մշակույթը լռեցնի Աստծու Խոսքն ու կամքը: Հնարավոր է, որ

Պողոսի օրը չափազանց սահմանափակ էր, բայց նաև իմ օրը կարող է լինել շատ բաց: Ես անհարմար եմ զգում ասելով, որ Պողոսի խոսքերը և ուսմունքները պայմանական են, առաջին դարի, տեղական իրավիճակային ճշմարտություններ: Ո՞վ եմ ես, որ թույլ տամ, իմ միտքը կամ իմ մշակույթը ժխտի ներշնչված հեղինակին:

Սակայն ի՞նչ անում, երբ կան կին առաջնորդների աստվածաշնչյան օրինակներ (անգամ Պողոսի գրվածքներում, տես Հռ.16): Լավ օրինակ է Պողոսի քննարկումը հրապարակավ պաշտամունքի մասին I Կոր. 11-14: I Կոր. 11: 5-ում Նա կարծես թույլ է տալիս կանանց քարոզելու և աղոթելու հրապարակավ պաշտամունքի ժամանակ իրենց գլուխները ծածկած, սակայն 14: 34-35 նա պահանջում է, որ նրանք լուռ մնան: Կային սպասավորուհիներ/սարկավագուհիներ (տես Հռոմ.16:1) և մարգարեուհիներ (տես Գործք 21: 9):

Շենց այս բազմազանությունն է, որ տալիս է ինձ ազատություն բացահայտելու Պողոսի մեկնաբանությունները (ինչը վերաբերում է կանանց սահմանափակումներին), թե ինչպես է սահմանափակում առաջին դարի Կորնթոսի և Եփեսոսի: Այս երկու եկեղեցիներում էլ կային խնդիրներ կապված կանանց նոր-հիմնադրված ազատությունը իրականացնելու հետ (cf. Bruce Winter, *After Paul Left Corinth*), որը կարող էր դժվարություններ առաջացնել եկեղեցու համար՝ հասնելու իրենց հասարակությանը Քրիստոսի համար: Նրանց ազատությունը պետք է սահմանափակվեր, որպեսզի ավետարանը կարողանար ավելի արդյունավետ լինել:

Իմ օրը Պողոսի ճիշտ հակառակ օրն է: Իմ օրերում ավետարանը կարող է սահմանափակվել, եթե պարզ է, վերապատրաստված կանանց չի թույլատրվել ավետարանը բաժնեկցել, չի թույլատրվել առաջնորդել: Ո՞րն է հրապարակավ պաշտամունքի վերջնական նպատակը: Արդյո՞ք դա ավետարանչությունն և աշակերտությունն չէ: Կարո՞ղ է Աստված փառավորվել և գոհություն ստանալ կին առաջնորդների միջոցով: Աստվածաշունչը որպես ամբողջություն կարծես թե ասում է «այո»:

Ես ուզում եմ զիջել Պողոսին. իմ Աստվածաբանությունը հիմնականում Պողոս-յան է: Ես չեմ ուզում չափազանց ազդվել կամ աղավաղվել ժամանակակից ֆեմինիզմի միջոցով: Սակայն, ես զգում եմ, որ եկեղեցին դանդաղում է արձագանքել ակնհայտ աստվածաշնչյան ճշմարտություններին, ինչպես ստրկության, ռասիզմի, մոլեռանդության և սեքսի աննպատակահարմարությանը: Այն նաև դանդաղում է համապատասխան արձագանքել կանանց իրավունքների ոտնահարմանը ժամանակակից աշխարհում: Աստված Քրիստոսով ազատում է ծառային ու կնոջը: Ես համարձակվում եմ թույլ չտալ, որ մշակույթ ազդի տեքստի վրա:

Եվս մեկ միտք. որպես մեկնաբան ես գիտեմ, որ Կորնթոսը շատ քայքայված եկեղեցի էր: Խարիզմատիկ պարզները արժեքավորում և ցուցամոլություն էին անում: Հարավոր է կանայք նույնպես բռնված էին սրանում: Ես նաև կարծում եմ, որ Եփեսոսը կեղծ ուսուցիչների ազդեցության տակ էր, որոնք օգտվելով առիթից կանանց օգտագործում էին որպես փոխանորդ խոսնակներ Եփեսոս տնային եկեղեցիներում:

- Գ. Առաջարկություններ հետազոտության ընթացքի համար
How to Read the Bible For All Its Worth by Gordon Fee and Doug Stuart (pp. 61-77)
Gospel and Spirit: Issues in New Testament Hermeneutics by Gordon Fee
Hard Sayings of the Bible by Walter C. Kaiser, Peter H. Davids, F. F. Bruce, and Manfred T. Branch (pp. 613-616;665-667)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:30-37

³⁰ Յիսուսը դեռ չէր եկել գիւղը, այլ այն տեղն էր, ուր որ Մարթան եկաւ նորա առաջը: ³¹ Բայց Հրէաները, որ տանը նորա հետ էին եւ նորան մխիթարում էին, երբոր Մարիամին տեսան, թէ շուտով վերկացաւ եւ գնաց, նորա ետեւից գնացին. Ասելով թէ Գերեզմանն է գնում, որ այն տեղ լայ: ³² Բայց երբոր Մարիամ այն տեղ եկաւ, ուր Յիսուսն էր, եւ տեսաւ նորան, նորա ոտներն ընկաւ եւ ասեց նորան. Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ: ³³ Յիսուսն էլ երբոր նորան տեսաւ որ լաց էր լինում, եւ նորա հետ եկած Հրէաներն էլ՝ որ լաց են լինում, իր հոգովը խռովեց եւ յուզուեց: ³⁴ Եւ ասեց. Ո՞ւր դրիք նորան. Նորան ասեցին. Տէր, եկ եւ տես: ³⁵ Յիսուսը արտասուեց: ³⁶ Հրէաներն ասում էին. Տես ի նչպէս էր սիրում նորան: ³⁷ Նորանցից էլ ոմանք ասում էին. Մի՞ թէ սա որ կոյրի աչքերը բացաւ, չէր կարող անել՝ որ սա էլ չ'մեռներ,

11:30 Սա եւ մեկ առաքյալ հեղինակ-ականատեսի մանրամասնություն է:

11:33

NASB “Նա խորապէս հուզվեց հոգով և անհանգստացավ”

NKJV “Նա հոգու մեջ խռովեց և անհանգստացավ”

NRSV “Նա շատ հուզված էր հոգով և խորապէս ցնցված”

TEV “Նրա սիրտը շոշափվեց, և նա խորապէս ցնցվեց”

NJB “Հիսուսը մեծապէս տառապում էր, և խորը ցնցում ապրում”

Սա բառացիորեն «փնչացնել հոգով»: Այս իդիոման սովորաբար օգտագործվում է զայրույթի ժամանակ (հմմտ Դան.11:30 [LXX]; Մարկ. 1:43, 14:5): Սակայն այս կոնտեքստում թարգմանությունը նախընտրում է խոր զգացմունքները (տես հ. 38): Չնայած նրան, որ որոշ մեկնաբաններ տեսնում են այս ուժեղ զգացմունքները, հնարավոր է զայրույթ, ուղղված մահվան վրա, Հիսուսն իսկապէս ուներ մարդկային զգացմունքներ (հմմտ հհ. 33,35,36,38) և դրանք ցույց է տալիս իր ընկերներին:

11:35 «Յիսուսը արտասուեց» Սա ամենակարճ համարն է Աստվածաշնչում: Մահը չէր Աստծո կամքը այս մոլորակի համար: Դա մարդկային ապստամբության արդյունքն է: Հիսուսը իր սիրելիի համար կորստի ցավ է զգում: Նա զգում է Իր բոլոր հետևորդների կյանքի փորձառությունները:

Հիսուսի լացը հանգիստ էր, անձնական բնույթի, այլ ոչ թէ հասարակական սուղ ու շիվան, որի մասին նշված է հ. 33:

11:37 Այս հարցը ակնկալում է «այո» պատասխան: Սա Մարթայի կարծիքն էր հ. 21-ում և Մերինը հ. 32:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:38-44

³⁸ Եւ Յիսուսը դարձեալ խռոված եկաւ գերեզմանը. Եւ այն մի քարայր էր, եւ մի քար նորա վերայ դրուած: ³⁹ Յիսուսը ասեց. Այդ քարը վեր առէք. Մեռելի քոյրը՝ Մարթան ասեց նորան. Տէր, արդէն հոտած է. Որովհետեւ չորս օրուայ է: ⁴⁰ Յիսուսը նորան ասեց. Չ'ասեցի՞ քեզ, որ եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը կ'տեսնես: ⁴¹ Եւ քարը վեր առան, ուր որ մեռելը դրուած էր. Յիսուսն էլ իր աչքերը դէպի վեր բարձրացրեց եւ ասեց. Հայր, գոհանում եմ քեզանից, որ ինձ լսեցիր: ⁴² Եւ ես գիտէի, որ միշտ լսում ես ինձ. բայց այս շրջակայ ժողովրդի համար ասեցի, որ հաւատան թէ դու ուղարկեցիր ինձ: ⁴³ Եւ այս ասելով՝ մեծ ձայնով աղաղակեց. Ղազարոս, դուրս եկ: ⁴⁴ Եւ մեռելը դուրս եկաւ՝ ոտները եւ ձեռքերը պատանով կապած, եւ երեսը վարշամակով պատած: Յիսուսը նորանց ասեց. Արձակեցէք դորան, եւ թողէք գնայ:

11:38 «քարայր» Այս ընթացքում պաղեստինյան գերեզմանները կամ

1. բնական քարանձավներ էին (Baba Bathra 6: 8)

2. քարանձավներ են փորել ժայռերի մեջ և կնքվել շրջանաձև քարերով գլանվածք մեջ խրամատներում
3. հորեր են փորվել գետնի մեջ և ծածկել խոշոր քարերով

Հնագիտական ուսումնասիրություններից էլնելով Երուսաղեմի տարածքում տարբերակն # 1 համապատասխանում է լավագույնս:

11:39 «քարը վեր առեք» Մի մեծ քար գլորվում էր ակոսի մեջ և այս մեթոդը օգտագործվում էր գերեզմանները կնքելու ավագակախմբերից և կենդանիներից:

- «Որովհետև չորս օրուայ է» Սա հունարեն իդիոմա է, բառիս բուն իմաստով «չորս օրվա մարդ է»:

11:40 «եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է, որ գործողությունը հնարավոր է: Այս համարը հարց է, որն ակնկալում է «այո» պատասխան:

- «Աստուծոյ փառքը» Աստծո փառքը հայտնվեց Հիսուսի գործողություններում (հմմտ. հ. 4): Տես լիարժեք նշում 1:14:

11:41 «Յիսուսն էլ իր աչքերը դեպի վեր բարձրացրեց» Հրեական աղոթքի նորմալ կեցվածքը ձեռքերն ու աչքերը (բաց) երկինք բարձրացրած էր: Սա աղոթքի իդիոմա է (տես 17:1):

- «որ ինձ լսեցիր» Հիսուսը «լսում» է Հորը (տես 8:20,40; 15:15) և Հայրը «լսում» է Նրան: Նրանք, ովքեր «լսում են» Հիսուսին ունեն հավիտենական կյանք: Սա շարունակվող բառախաղ է «տեսնել» և «լսել» որպես զուգահեռ «ստանալ» (1:12) և «հավատալ» (3:16): Ղազարոսը «լսեց» Հիսուսի ձայնը և վերադարձավ կյանքի:

11:42 Սա հաստատում է Հիսուսի աղոթքի և հրաշքի նպատակը: Հիսուսը հաճախ հրաշքներ էր կատարում խրախուսելու համար աշակերտների հավատքը, և այս դեպքում նախաձեռնում հավատք հրեաների մեջ Երուսաղեմում:

Աստվածաբանորեն Հիսուսը դարձեալ մեծարում է Հոր հեղինակությունն ու առաջնայնությունը Իր գործերում (հմմտ. 5:19.30; 8:28; 12.49; 14.10): Այս հրաշքը բացահայտում է Հիսուսի մտերիմ հարաբերությունը Հոր հետ: Տես Հատուկ Թեմա Ուղարկել (*Apostellō*) 5:24.

11:43 «մեծ ձայնով աղաղակեց. Ղազարոս, դուրս եկ» Ասվում է, որ եթե Հիսուսը մասնավորապես չնշեր Ղազարոսի անունը, ամբողջ գերեզմանները կբացվեին:

11:44 Մարմինները պատրաստվում էին թաղման ջրով լվացումից հետո, ապա փաթաթվում շերտերով կտավով, ցողվում համեմունքներով, որոնք օգնում էին բույրի հարցում: Դիակները պետք է թաղվեին քսանչորս ժամվա ընթացքում, քանի որ հրեաները չէին անուշահոտում իրենց մեռելին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

I. Միջագետք

Ա. Ճիշտ հուղարկավորությունը շատ կարևոր էր մահից հետո երջանիկ կյանքի համար:

Բ. Միջագետքյան անեծքի օրինակ է «Թող երկիրը չընդունի ձեր դիակները»:

II. Հին Կտակարան

Ա. Ճիշտ հուղարկավորությունը շատ կարևոր էր (հմմտ. Ժող. 6: 3):

Բ. Դա արվում էր շատ արագ (հմմտ. Սառան Ծննդ. 23 և Ռաբել Ծննդ.35:19 և տես 2 Օրին. 21:23):

Գ. Միայլ հուղարկավորությունը մերժման և մեղքի նշան էր:

1. 2 Օրինաց 28:26
2. Եսայա 14:20
3. Երեմիա 8:2; 22:19

Դ. Հուղարկավորությունը արվել է, եթե հնարավոր է ընտանեկան դամբարանում տան տարածքում:

Ե. Չկար գնոտում ինչպես Եգիպտոտում: Մարդը հողից է և պետք է վերադառնա հողին (օր. Ծննդ. 3:19; Սաղ. 103: 14, 104: 29):

Զ. Ռաբբիական հուղայականության մեջ դժվար էր հավասարակշռել պատշաճ հարգանքը և մարմնի մշակումը պղծության հանդիսավոր հայեցակարգը կապված դիակների հետ:

III. Նոր Կտակարան

Ա. Մահից հետո հուղարկավորությունը կատարվում էր արագ, սովորաբար քսանչորս ժամվա ընթացքում: Հրեաները հաճախ հսկում էին գերեզմանը երեք օր, հավատալով, որ հոգին կարող է վերադառնալ մարմնին այդ ժամանակահատվածում (տես Հովհ. 11:39):

Բ. Հուղարկավորության մեջ մտնում էր մարմնի մաքրումն ու փաթաթումը համեմունքներով (հմմտ. Հովհ. 11:44, 19: 39-40):

Գ. Չկային տարբերակիչ հրեա կամ քրիստոնյա թաղման ընթացակարգեր կամ նյութեր տեղադրված գերեզմանի մեջ առաջին դարում Պաղեստինում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:45-46

⁴⁵ Եւ Հրէաներից շատերը, որ Մարիամի մօտ էին եկել եւ տեսան ինչ որ արաւ Յիսուսը, հաւատացին նորան: ⁴⁶ Բայց նորանցից ոմանք գնացին Փարիսեցիների մօտ, եւ ասեցին նորանց ինչ որ Յիսուսն արաւ:

11:45 «Եւ Հրէաներից շատերը. . . հաւատացին նորան» Սա հաստատված թեմա է Ավետարանում (հմմտ. 20:30-31): Այս արտահայտությունը դառնում է օրինաչափություն (տես 2:23; 7:31; 8:30; 10:42; 11:45, 12:11,42): Սակայն, գրեթե է նույնությամբ կրկնում է, որ հավատքը Հովհաննեսի Ավետարանում ունի մի քանի մակարդակներ, և միշտ չէ, որ փրկարար հավատք է (տես 2: 23-25, 8: 30): Տես Հատուկ Թեմա 2:23:

11:46 «նորանցից ոմանք գնացին Փարիսեցիների մօտ, եւ ասեցին նորանց ինչ որ Յիսուսն արաւ» Զարմանալի է հոգևոր կուրության աստիճանը ի դեմս նման հրաշալի ուսուցման և հզոր հրաշքների: Սակայն Հիսուսը բաժանում է բոլոր խմբերին, ովքեր վստահում են Իրեն և նրանք, ովքեր մերժում են Իր մասին ճշմարտությունը: Նույնիսկ սրա նման հզոր հրաշքը չի բերում հավատք (տես Ղուկ. 16:30-31):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:47-53

⁴⁷ Եւ քահանայապետները եւ Փարիսեցիները աստեան ժողովեցին, եւ ասեցին. Ի՞նչ անենք, որ այդ մարդը շատ նշաններ է անում: ⁴⁸ Եթէ դորան այդպէս թողենք, ամենքը կ'հաւատան դորան, եւ Հռովմայեցիք կ'գան վեր կ'առնեն մեր երկիրն էլ եւ ազգն էլ: ⁴⁹ Եւ նորանցից մէկը՝ Կայիափան, որ այն տարուայ քահանայապետն էր, ասեց նորանց. Դուք ոչինչ չ'գիտէք, ⁵⁰ Եւ չէք էլ մտածում, որ լաւ է մեզ համար՝ որ մէկ մարդ մեռնի ժողովրդի համար, քան թէ բոլոր ազգը կորչի: ⁵¹ Բայց սա իրանից չ'ասեց. Այլ որովհետեւ այն տարուայ քահանայապետն էր, մարգարէացաւ՝ թէ Յիսուսը պիտի մեռնէր ազգի համար: ⁵² Եւ ոչ թէ միայն ազգի համար, այլ որ նա Աստուծոյ ցրուած որդիքն էլ մեկտեղ ժողովէ: ⁵³ Արդ այն օրից հետէ խորհուրդ արին, որ նորան սպանեն:

11:47 «Եւ քահանայապետները եւ Փարիսեցիները աստեան ժողովեցին» Սա վերաբերում է Աստուծոյ Սինեդրիոն, հրեաների Գերագոյն դատարանին Երուսաղէմում: Այն ունեցել է 70 տեղական անդամներ: Քահանայապետները իրենց քաղաքական, կրոնական համոզմունքներով հայտնի էին որպէս սադուկեցիներ, որոնք ընդունում էին միայն Մովսէսի գրվածքները և հերքում էին հարությունը: Փարիսեցիները ավելի հայտնի էին, օրինապաշտ կրոնական խումբ, որ հաստատում էր (1) ամբողջ ՀԿ (2) հրեշտակների ծառայությունը (3) և մահից հետո կյանք: Զարմանալի է, որ այդ երկու թշնամական խմբերը համախմբվում էին ցանկացած նպատակի համար: Տես հատուկ Թեմա Փարիսեցիներ 1:24: Տես Հատուկ Թեմա: Սինեդրիոնը 3:1:

- **«որ այդ մարդը շատ նշաններ է անում»** Հիսուսին «այս մարդը» դիմելաձևը նսեմացուցիչ էր, որը կերպ էր չնշելու Նրա անունը: Նաև զարմանալի է, որ նման մեծ հրաշքների ներկայությամբ, ինչպէս Ղազարոսի հարությունն է, որ իրենց կանխակալ կարծիքները ամբողջությամբ կուրացրել էին իրենց աչքերը (տես Բ Կորնթ. 4:4):

11:48 «Եթէ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է, որ գործողությունը հնարավոր է:

- **«ամենքը կ'հաւատան դորան»** Խանդը, ինչպէս նաև աստվածաբանական անհամաձայնությունը Հիսուսի անձի շուրջ, իրենց անվստահության և վախի աղբյուրն էր: «ամենքը» կարող են լինել նույնիսկ սամարացիներն ու հեթանոսները (հմմտ. 10:16): Կար նաև իրենց վախի քաղաքական ասպեկտը (այսինքն Հռոմի վերահսկումը):

- **«Հռովմայեցիք կ'գան վեր կ'առնեն մեր երկիրն էլ եւ ազգն էլ»** Սա Հովհաննէսի Ավետարանի հեզնական մարգարեություններից մեկն է, որովհետև սա բառացիորեն կատարվեց մ.թ. 70 Հռոմի գնդերալ (հետագայում կայսեր) Տիտոսի ներքո:

Հռոմեական տիրապետության քաղաքական իրականության անբաժանելի մասն էր հրեական վերջի ժամանակի (վախճանաբանական) հույսը: Նրանք հավատում էին, որ Աստված կուղարկի կրոնական/ռազմական գործիչ, ինչպէս դատավորները ՀԿ-ում, Հռոմից իրենց ֆիզիկապէս ազատագրելու համար: Մի քանի Մեսիական հավակնորդներ սկսեցին ապստամբություններ Պաղեստինում՝ հենց այս ակնկալիքները իրականացնելու համար:

Հիսուսը պնդում էր, որ Իր թագավորությունը չի եղել աշխարհիկ/քաղաքական թագավորում (տես 18:36), այլ հոգևոր թագավորություն, որ պետք է ունենար գլոբալ իրականացում ապագայում (այսինքն, հայտնությունը): Նա հայտարարում էր, որ կատարում էր հինկտակարանյան մարգարեությունները, բայց ոչ բառացի, հրեական, ազգայնական իմաստով: Սրա համար էլ Նա մերժվել է շատ հրեաների կողմից Իր օրում:

11:49 «Կայիափան, որ այն տարուայ քահանայապետն էր» Քահանայապետությունը ցմահ պաշտոն էր, որն անցնում էր երեխաներին (հմմտ. Ել.28), բայց հռոմեացիների նվաճումից հետո այն վաճառվում էր ամենաբարձր գնով, քանի որ շահավետ առևտուրը հասանելի էր Ձիթենյաց լեռան և տաճարի տարածքում: Կայիափան քահանայապետը էր մ.թ. 18-36 (մ.թ. 6-15 Աննա Քահանայապետ փեսան):

11:50-52 Սա Հովհաննէսի ևս մեկ հեզնանքի օրինակ է: Կայիափան քարոզում է ավետարանը:

11:50 «մեկ մարդ մեռնի ժողովրդի համար» Հինկտակարանյան հրեական տեսակետն էր «նյութական, մարմնավոր, ֆիզիկական»: Մի մարդ (լավ կամ վատ) կարող է ազդել ամբողջ վրա (այսինքն Ադամ/Եվա, Աքան): Այս հասկացությունը եկավ որպէսզի ուժեղացնի զոհաբերության համակարգը, հատկապէս Քավության Օրը (Ղև.16), երբ մեկ անմեղ կենդանի կրում էր ազգի մեղքը: Սա դառնում է

Մեսիական գաղափար, որը երևում է Եսայի 53-ում: ՆԿ-ում Ադամ/Քրիստոս տիպաբանությունը, Հռոմ.5:12-21, արտացոլում է այս գաղափարը:

11:51

NASB, REV,

NET “որ Հիսուսը պատրաստվում էր մեռնել”

NKJV, NIV,

REB “որ Հիսուսը պիտի մեռներ”

NRSV “որ Հիսուսը մեռնելու էր”

NJB “որ Հիսուսը մեռնում էր”

The NIDOTTE, հատոր 1, էջ 326, ունի *mellō* ԲԱՅԻ աստվածաբանական կիրառության լավ մեկնաբանություն («պիտի», «պետք է», «որպեսզի վստահ լինել»), երբ օգտագործվում է Աստծո կամքը Քրիստոսի փրկարար գործի համար:

1. Մարկոս 10:32
2. Մաթեոս 17: 22
3. Ղուկաս 9: 31,44; 24.21; Գործք 26.23
4. Հովհաննես 7.39; 11:51; 12:33; 14:22; 18:32

Այն օգտագործվում է նաև Հուդայի դավաճանության անհրաժեշտության դեպքում

1. Ղուկաս 22:23
2. Հովհաննես 6:71; 12: 4

Ղուկասը Գործքում դա օգտագործում է մարգարեական իրականացման համար (այսինքն, Գործք 11:28, 24:15, 26:22): Բոլոր փրկարար իրադարձությունները Աստծո ձեռքում էին (հմմտ Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29):

11:52 «այլ որ նա Աստուծոյ ցրուած որդիքն էլ մեկտեղ ժողովէ» Սա, կարծես, խմբագրական մեկնաբանություն է Հովհաննեսի կողմից, որը կարող էր զուգահեռ լինել 10:16: Այն կարող է վերաբերել

1. հրեաներ, ովքեր ապրում էին Պաղեստինից դուրս
2. կես հրեաներ, ինչպես սամարացիները
3. հեթանոսներ

Տարբերակ 3, կարծես լավագույնն է: Որն էլ լինի, Հիսուսի մահը կրեթի միասնություն «հավատացյալ» մարդկությանը (հմմտ. 1:29; 3:16, 4:42, 10:16):

11:53 «Արդ այն օրից հետե խորհուրդ արին, որ նորան սպանեն» Սա հերթական թեման է Հովհաննեսի Ավետարանում (հմմտ. 5:18; 7:19, 8:59, 10:39, 11:8):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:54

⁵⁴ Յիսուսն էլ համարձակ չէր ման գալիս Հրեաների մեջ. Այլ այն տեղից գնաց մի երկիր, անապատի մօտ, Եփրայեմ ասուած քաղաքը. Եւ այնտեղ կենում էր իր աշակերտների հետ:

11:54 «Յիսուսն էլ համարձակ չէր ման գալիս Հրեաների մեջ» 12-րդ գլուխը Հիսուսի վերջին փորձն է կրոնական առաջնորդների հետ առընչվելու:

Այս Ավետարանում «հրապարակավ» թարգմանված տերմինը (հմմտ. 7:26, 11:54, 18:20), սովորաբար նշանակում է «խիզախորեն»: Տես Հատուկ Թեմա 7: 4.

- «Եփրայեմ ասուած քաղաքը» Այս քաղաքը հնարավոր է գտնվում է Սամարիայում Բեթելի մոտ (տես 2 Մնաց. 13:19):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 11:55-57

⁵⁵ Եւ Հրէաների գատիկը մօտ էր, եւ այն գաւառից շատերը գատկից առաջ վեր ելան Երուսաղէմ, որ իրանց անձերը սրբեն: ⁵⁶ Եւ որոնում էին Յիսուսին, եւ իրար ասում էին՝ տաճարումը կանգնած. Ինչպէս է երեւում ձեզ. Մի՞թէ այս տօնին չի գալ. Բայց քահանայապետները եւ Փարիսեցիները հրաման էին տուել, որ՝ եթէ մէկը գիտենայ թէ ուր է, իմաց տայ, որ բռնեն նորան:

11:55-57 Այս համարները շաղկապում են 11 և 12 գլուխները միասին:

11:55 «**իրանց անձերը սրբեն**» Սա վերաբերում է մաքրման ծիսական ծեսերին Չատիկի նախապատրաստման համար: Կա բանավեճ, թե որքան երկար է Հիսուսը սովորեցրել, քարոզել և ծառայել Պաղեստինում: Մինուպտիկ Ավետարանները կառուցված են այնպես, որ մեկ կամ երկու տարի հնարավոր է դա եղած լինի: Սակայն Հովհաննեսն ունի մի քանի Չատիկներ (ամենամյա տոն): Իհարկե երեքը նշված են (տես 2:13; 6:4 և 11:55) առնվազն չորրորդը ենթադրվում է «խնջույք» 5:1:

11:57 Սա ևս մեկ խմբագրական մեկնաբանություն է Հովհաննեսի կողմից:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ Հիսուսը թույլ տվեց, որ Ղազարոսը մահանա:
2. Ու՞մ էր ուղղված հրաշքը:
3. Ո՞րն է տարբերությունը հարության և վերակենդանացման:
4. Ինչու՞ էին Հրեա առաջնորդներն այնպես ցնցված Ղազարոսի հարությամբ:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 12

ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Օծություն Բեթանիայում	Օծություն Բեթանիայում	Օծություն Բեթանիայում	Հիսուսը օծվում է Բեթանիայում	Օծություն Բեթանիայում
12:1-8	12:1-8	12:1-8	12:1-6 12:7-8	12:1-8
Դավադրություն Ղազարոսի դեմ	Ղազարոսին սպանելու դավադրությունը		Դավադրություն Ղազարոսի դեմ	
12:9-11	12:9-11	12:9-11	12:9-11	12:9-11
Հաղթական մուտքը Երուսաղեմ	Հաղթական մուտքը	Ծաղկազարդ	Հաղթական մուտքը Երուսաղեմ	Մեսիան մտնում է Երուսաղեմ
12:12-19	12:12-19	12:12-19	12:12-13 12:14 12:15 12:16 12:17 12:18-19	12:12-19
Որոշ հույներ փնտրում են Հիսուսին	Պտղաբեր ցորենի հասկը	Հիսուսի հրապարակային ծառայությունը ավարտեց	Որոշ հույներ փնտրում են Հիսուսին	Հիսուսը կանխագուշակում է Իր մահն ու հաջորդող փառավորումը
12:20-26	12:20-26	12:20-26	12:20-21 12:22-26	12:20-28ա
Մարդի Որդին պետք է բարձրանա	Հիսուսը կանխատեսում է Իր խաչի մահը		Հիսուսը խոսում է Իր մահվան մասին	
12:27-36ա	12:27-36	12:27-36ա	12:27-28ա 12:28բ 12:29 12:30-33 12:34 12:35-36ա	12:28բ 12:29-32 12:33-36ա
Հրեաների անհավատությունը	Ո՞վ հավատաց մեր տված լուրին		Մարդկանց անհավատությունը	
12:36բ-43		12:36բ-43	12:36բ-38	12:36բ Ամփոփում: Հրեաների անհավատությունը
	12:37-41		12:39-40 12:41	12:37-38 12:39-40 12:41
	Քայլել Լույսի մեջ		12:42-43	12:42-50
Հիսուսի Խոսքի դատաստանը	12:42-50		Հիսուսի Խոսքի դատաստանը	
12:44-50		12:44-50	12:44-50	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՑԻՆ ՆԵՐՐՄԲՈՒՆՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՃԱՆՆՈՒ 1-50

Ա. Բոլոր չորս Ավետարանները արձանագրել են Հիսուսի օծվելը կնոջ կողմից: Հետևաբար, այս դեպքը պետք է կարևոր նշանակություն ունենար ավետարանի հեղինակների համար: Մակայն, Մարկ. 14: 3-9, Մատթ. 26: 6-13 և Հովհ. 12: 2-8 նույնացնում է նրան որպես Մարիամ Բեթանիայից, Ղազարոսի քույրը, իսկ Ղուկ.7:36-50 նույնացնում է նրան մեղավոր կնոջ հետ Գալիլեայում:

Բ. Գլուխ 12 եզրափակում է Հիսուսի հրապարակային ծառայությունը (տես հ. 29): Նա կրկին ու կրկին անգամ փորձել էր հրեա առաջնորդներին հավատքի բերել: Գլուխ 11 Նա փորձեց Երուսաղեմի քաղաքաբնակներին հավատքի բերել:

Գ. Այս գլխում հինգ խմբի մարդիկ են նշված:

1. ամբոխը, որոնք ականատես են եղել Ղազարոսի հարությանը, հ. 17
2. բազմությունը Երուսաղեմից հ. 9
3. ուխտավորների ամբոխը, որոնք եկել էին Ջատկի տոնին, հհ. 12,18,29,34
4. հնարավոր է հեթանոսների բազմությունը, հ. 20
5. հնարավոր է հրեա առաջնորդների բազմությունը, ովքեր հավատացին Նրան, հ. 42

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:1-8

¹ Եւ Յիսուսը զատկից վեց օր առաջ եկաւ Բեթանիա, որտեղ մեռած Ղազարոսն էր, որին մեռելներից յարութիւն տուաւ: ² Եւ այնտեղ հացկերութիւն արին նորա համար. Եւ Մարթան ծառայում էր, եւ Ղազարոսը նորա հետ սեղան նստողներից մէկն էր: ³ Մարիամն էլ մի լիտր նարդոսի ազնիւ մեծագին իւղ առաւ, Յիսուսի ոտները օծեց, եւ իր մազերովը սրբում էր նորա ոտները. Եւ տունը լցուեցաւ իւղի հոտովը: ⁴ Եւ ասեց նորա աշակերտներից մէկը՝ Յուդա Սիմօնեան Իսկարիովտացին, որ նորան մատնելու էր՝ ⁵ Ինչու համար այդ իւղը երեք հարիւր դենարի չ'ծախուեցաւ, եւ աղքատներին տրուեցաւ: ⁶ Բայց սա ասեց, ոչ թէ որովհետեւ աղքատների համար նորա հոգն էր. Այլ որ գող էր՝ եւ քսակը ուներ, եւ ընկածը պահում էր: ⁷ Յիսուսն էլ ասեց. Թոյլ տուր դորան, նա իմ պատանքի օրուան համար էր պահել այդ: ⁸ Որովհետեւ աղքատներին միշտ ձեզ հետ ունիք. Բայց ինձ միշտ չունիք:

12:1 «զատկից վեց օր առաջ» Սա տարբերվում է Մատթ. 26:2 ժամանակագրական հերթականությունից: Այն պետք է հիշել, որ Ավետարաններում առաջնային կենտրոնացումը ժամանակագրությունը չէ, այլ Հիսուսի ներկայացուցչական գործողությունները, որոնք արտացոլում են ճշմարտություն Նրա անձի և գործի մասին: Ավետարանները կենսագրականներ չեն, այլ ավետարանչական տրակտատներ/բրոշյուրներ թիրախային խմբերի համար:

12:2 «նրանք» Սա, կարծես, վերաբերվում Բեթանիայի քաղաքաբնակներին, որոնք Հիսուսին և Իր աշակերտներին ընթրիք տվեցին ի պատիվ Ղազարոսի հարության: Մակայն, Մատթ. 26:6 սա տեղի է ունենում Սիմոն քորոտի տանը:

12:3 «մի լիտր» Սա լատիներեն տերմին էր, որը վերաբերվում էր հռոմեական ֆունտին, որն էլ հավասար էր 12 ունցիա/ozs: Այս թանկարժեք համեմունքը կարող էր լինել Մարիամի հարսանիքի օժիտը: Շատ չամուսնացած կանայք կրում էին այս տեսակի օճանելիքի սրվակներ իրենց պարանոցների շուրջ:

-
- NASB “մի ֆունտ մաքուր նարդոսի շատ թանկարժեք օճանելիք”
- NKJV “մի ֆունտ, շատ թանկ նարդոսի յուղ”
- NRSV “մեկ ֆունտ թանկարժեք օճանելիք, պատրաստված մաքուր նարդոսից”
- TEV “մաքուր նարդոսից պատրաստած շատ թանկարժեք օճանելիքի մի ամբողջ բույր”
- NJB “մի ֆունտ շատ թանկ քսուք, մաքուր նարդոսից”

Շատ վարկածներ են եղել ԱՇՄԿԱՆԻ իմաստի շուրջ (1) ազնիվ/մաքուր; (2) հեղուկ կամ (3) տեղի անուն: Օճանելիքն ինքնին անուշաբույր-հիմալայան արմատից էր, որը շատ թանկ էր: Տես James M Freeman, *Manners and Customs of the Bible*, էջ 379-380:

▪ **«Յիսուսի ոտները օճեց»** Մյուս Ավետարանները տալիս են այս նույն իրադարձության պատմությունը (հավանաբար Մարիամի երախտագիտությունը՝ Ղազարոսին հարություն տալու համար, հ. 2) խոսելով մի կնոջ մասին, որը օճեց Նրա գլուխը: Ըստ երևույթին, Մարիամը օճեց նրա ամբողջ մարմինը՝ գլխից մինչև ոտքերը: Թե ինչու էին Հիսուսի ոտքերը ենթարկվում, որովհետև նա հենվել էր Իր ձախ արմունկին ցածր սեղանի շուրջ:

Սա Հովհաննեսի երկակի մտքերից մեկն է: Այս համեմունքն օգտագործվում էր՝ պատրաստելու մարմինը թաղման համար (տես 19:40): Մարիամը հնարավոր է ավելի լավ էր հասկացել Հիսուսի պատգամը Իր մահվան մասին, քան աշակերտները (տես հ. 7): Տես Հատուկ Թեմա: Օծություն 11: 2:

▪ **«Եւ տունը լցուեցաւ իւղի հոտովը»** Ինչպիսի պատկերավոր վկայություն (խմբագրական) մանրամասնություն: Հովհաննեսը հստակ հիշում է այդ պահը:

12:4 «Յուդա Իսկարիովտացին» «Իսկարիովտացի» տերմինը ունի երկու հնարավոր ստուգաբանություններ (1) քաղաք Հուդայում (Kerioth տես Հեսու 15:25) կամ (2) տերմին «մարդասպանի դանակ» համար: Բոլոր ավետարանների հեղինակներից միայն Հովհաննեսն է, որ ունի դաժան արտահայտություններ Հուդայի մասին (տես հ. 6): Տես ամբողջական ծանուցումը 6: 70-71:

▪ **«մատնելու էր»** Սա ևս մեկ խմբագրական մեկնաբանություն է: Այս տերմինը սովորաբար չունի այս իմաստը: Դա բառացիորեն նշանակում է «հանձնել» կամ «մատնել» դատական իմաստով կամ վստահել ինչ-որ բան մեկին: Տես ծանուցում 18: 2:

12:5 «երեք հարիւր դէնարի» Մի դահեկանը մեկ օրվա մի զինվորի և բանվորի աշխատավարձն էր, հետևաբար, սա գրեթե մեկ տարվա աշխատավարձն էր:

12:6 Այս համարը մեկ այլ խմբագրական մեկնաբանություն է: Հովհաննեսը ավելի քան որևէ այլ Ավետարանի հեղինակ, դատապարտում է Հուդային:

- **NASB, NKJV** “գանձանակը”
- NRSV** “ընդհանուր քսակը”
- TEV** “քսակը”
- NJB** “ընդհանուր ֆոնդը”

Այս բառը նշանակում է «փոքր արկղ»: Այն ի սկզբանե օգտագործվում էր երաժիշտների կողմից, որոնք պահում էին իրենց երաժշտական գործիքների մուշտուկները:

▪ **«Էւ ընկածը պահում էր»** Հունարեն տերմինը նշանակում է «տանել, կրել»: Այն օգտագործվում է երկու տարբեր իմաստներով՝ (1) նա կրում էր արկղը, բայց (2) նա նաև կրում էր արկղի պարունակությունը: Այս արտահայտությունը նրա համար էր, որ ցույց տա Հուդայի մտահոգությունը աղքատների համար հ. 5, որն էլ իրոք պատրվակ էր գողանալու համար:

12:7 Սա տարօրինակ համար է: Սա ակնհայտորեն կապում է այս առատաձեռնության և նվիրվածության գործողությունը նմանատիպ ընթացակարգի հետ, որն արվում էր թաղման ժամանակ (տես 19:40): Սա Հովհաննեսի ևս մեկ մարգարեական դրույթներից է:

12:8 «Որովհետև աղքատներին միշտ ձեզ հետ ունիք» Սա կապված է Բ Օրին. 15: 4,11: Սա թերագնահատող դիտողությունն էր աղքատների մասին, բայց շեշտը Հիսուս Մեսիայի ներկայության վրա էր (տես հ. 35; 7:33; 9: 4): Հին Կտակարանը եզակի է Հին Մերձավոր Արևելքի գրականության շրջանում աղքատների իրավունքների և խնամքի մասին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:1-8
⁹ Եւ Հրէաներից շատ ժողովուրդ գիտաց, թէ նա այնտեղ է, եւ եկան, ոչ թէ միայն Յիսուսի համար, այլ որ Ղազարոսին էլ տեսնեն, որին մեռելներից յարութիւն տուաւ: ¹⁰ Քահանայապետներն էլ խորհուրդ արին, որ Ղազարոսին էլ սպանեն: ¹¹ Որովհետև Հրէաներից շատերը նորա պատճառովը գնում էին եւ հաւատում էին Յիսուսին:

12:9 «Եւ Հրէաներից շատ ժողովուրդ գիտաց, թէ նա այնտեղ է» Սա «հրեաներ» տերմինի անսովոր օգտագործման ձև է Հովհաննես-ում: Սովորաբար դա վերաբերում է Հիսուսին հակառակվող կրոնական առաջնորդներին: Սակայն 11:19, 45; 12:17, կարծես վերաբերվում է Երուսաղեմի քաղաքաբնակներին, որոնք Ղազարոսի ընկերներն էին և եկել էին նրա թաղմանը:

12:10 «Քահանայապետներն էլ խորհուրդ արին, որ Ղազարոսին էլ սպանեն» Նրանք ցանկանում էին հեռացնել ապացույցները: Նրանց շարժառիթներն էին վախը (տես 18:48) և նախանձը (տես 11:48; 12:11):

Նրանք պետք է որ մտածեին, որ Հիսուսի հարության գործողությունը մեկուսացված, հազվագյուտ իրադարձություն էր: Այդ հրեա առաջնորդների կուրությունն ու կողմնակալությունը արտացոլում են մեղավոր մարդկության խավարը:

12:11 Սա հետ է տանում դեպի 11:45: Տես Հատուկ Թեմա: Հովհաննեսի «հավատալ» բայի օգտագործումը 2:23:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:12-19
¹² Նորա հետեւեալ օրը շատ ժողովուրդ, որ եկել էին տօնին, երբոր լսեցին, թէ Յիսուսը գալիս է Երուսաղեմ, ¹³ Արմաւի ծառերի ճղեր առան, եւ դուրս գնացին նորա առաջին, աղաղակում էին. Ովսաննայ, օրհնեալ է նա որ Տիրոջ անունովը գալիս է, Իսրայելի թագաւորը: ¹⁴ Եւ Յիսուսը մի աւանակ գտաւ, եւ նորա վերայ նստեց. Ինչպէս գրուած է թէ ¹⁵Մի վախենար, Միօնի աղջիկ, ահա քո

Թագաւորը գալիս է՝ էշի աւանակի վերայ նստած: ¹⁶ Եւ նորա աշակերտներն առաջ չ'իմացան այս բաները. բայց երբ որ Յիսուսը փառաւորուեցաւ՝ այն ժամանակ յիշեցին, թէ այս նորա համար գրուած էր. Եւ այն բանը արին նորան: ¹⁷ Եւ ժողովուրդը՝ որ նորա հետ էր, վկայում էր, թէ Ղազարոսին գերեզմանիցը դուրս կանչեց. Եւ մեռելներից յարութիւն տուաւ նորան: ¹⁸ Եւ նորա համար էլ ժողովուրդը գնաց նորա առաջին, որ լսեցին թէ նա արել էր այն նշանը: ¹⁹ Բայց Փարիսեցիներն իրար մէջ ասում էին. Տեսնո՞ւմ էք, որ ոչինչ օգուտ չ'ունիք. Ահա աշխարհքը նորա ետեւից գնաց:

12:12-19 Սա Հովհաննէսի Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղէմ պատմության տարբերակն է (տես Մատթ. 21: 1-11, Մարկ. 11: 1-11; Ղուկաս 19: 29-38):

12:12 «**շատ ժողովուրդ, որ եկել էին տօնին**» Կային երեք պարտադիր տոն օրեր հրեա տղամարդկանց համար (տես Ելից 23: 14-17; Ղևտացոց 23; 2 Օր. 16:16): Պաղեստինից (սփյուռք) դուրս ապրող հրեաների կյանքի ցանկությունն էր տոներին ներկա գտնվել Երուսաղէմում: Այս տոների ընթացքում Երուսաղէմի բնակչության թիվը երեքից հինգ անգամ ավելանում էր: Այս արտահայտությունը վերաբերվում էր այս հետաքրքրասեր ուխտավորների հսկայական թվին, որոնք լսել էին Հիսուսի մասին և ցանկանում էին տեսնել Նրան (տես 11:56):

12:13 «**Արմաւի ծառերի ճղեր**» Սա անսովոր հունարեն արտահայտություն է արմավենու ճյուղերի համար: Ոմանք կարծում են, որ մի ժամանակ արմավենիներն աճել են Չիթենյաց լեռան լանջերին (այսինքն, Հովսեպոսը), իսկ մյուսները կարծում են, որ դրանք ներկրվել են Երիքովից: Նրանք կարծես եղել են հաղթանակի խորհրդանիշ (տես Հայտն 7: 9): Ամեն տարի դրանք օգտագործվել են Տաղավարահարաց Տոնի (տես Ղևտ. 23:40) և Զատկի Տոնի ծիսակատարություն ժամանակ (ավանդույթ Մակաբայեցիների ժամանակներից):

▪ «**աղաղակում էին**» Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԵՎ է, որը ներկայացնում է (1) կրկնվող գործողություն անցյալ ժամանակում կամ (2) գործողության սկիզբ անցյալ ժամանակում:

▪ «**Ովսաննայ**» Այս տերմինը նշանակում էր «փրկիր հիմա» կամ «փրկիր խնդրում եմ» (հմմտ Սաղ. 118: 25-26): Զատկի ծեսի ընթացքում արտասանվում էր Ալելուիաների Սաղմոսները (տես Սաղ. 113-118) տեղի էր ունենում, երբ ուխտավորները երթով գնում էին դեպի Տաճար: Այս գործողություններից և արտահայտություններից շատերը կրկնվում էին ամեն տարի Զատիկին: Բայց այս տարի, մասնավորապես, նրանք գտել էին իրենց վերջնական իմաստը Հիսուսի մէջ: Ամբոխը զգաց դա: Փարիսեցիները ճանաչեցին դա:

▪ «**նա որ Տիրոջ անունովը գալիս է**» Սա այն է, ինչ Հիսուսը պնդում էր: Նա ուղարկված էր: Նա ներկայացնում էր ԵՀՈՎԱՅԻՆ:

▪
NASB “անգամ Իսրայելի թագավորը”
NKJV, NRSV,
TEV, NJB “Իսրայելի թագավորը”

Այս արտահայտությունը սաղմոսից չէ, այլ ավելացվել է ամբոխի կողմից: Թվում է, թե սա ուղղակի հղում է Հիսուսին որպես խոստացյալ Մեսիական Թագավոր 2 Թագ. 7 (տես 1:49; 19:19):

12:14 «**աւանակի**» Ավանակները Իսրայելի թագավորների արքայական ռազմական հեծկան կենդանին էր (տես, 3 Թագ. 1: 33,38,44): Միայն թագավորն էր հեծում իր էշին, հետևաբար, շատ կարևոր է, որ Հիսուսը հեծեր այնպիսի էշ վրա, որը մինչ այդ երբեք հեծած չի եղել (տես Մարկոս 11: 2):

12:14-15 «Ինչպէս գրուած է» Սա մեջբերում է Ջաք. 9: 9. Էշի ավանակը խոսում է ոչ միայն Մեսիական թագավորության, այլև խոնարհության մասին: Հիսուսը չեկավ որպէս հրեական ակնկալիքների հաղթող ռազմական գործիչ, այլ Տառապող Ծառա, Եսայի 53 էշի ավանակի վրա հեծած:

12:16 «Եւ նորա աշակերտներն առաջ չ'իմացան այս բաները» Սա Հովհաննէսի ևս մեկ վկայության, ցավալի հիշողություններից է: Սա հերթական թեմա է(տես 2:22; 10: 6; 16:18; Մարկոս 9:32; Ղուկաս 2:50, 9:45, 18:34): Միայն Համբարձումից և Պենտեկոստեից հետո նրանց հոգևոր աչքերը ամբողջությամբ բացվեցին:

▪ **«բայց երբ որ Յիսուսը փառաւորուեցաւ՝ այն ժամանակ յիշեցին»** Սա Սուրբ Հոգու ծառայություններից մեկն էր (տես 14:26 և 2:22):

Այս համարը նաև ցույց է տալիս, որ Ավետարանի հեղինակները իրենց Ավետարանները կառուցել են հարուցյալ Քրիստոսի անձնական փորձառության վրա: Մինոպտիկները ներկայացնում են Հիսուսին պատմական զարգացման մեջ և թաքցնում են Նրա փառքը մինչև իրենց նյութի գազաթնակետը, բայց Հովհաննէսը գրում է իր ողջ Ավետարանը փառավորված Մեսիայի լույսի ներքո: Ավետարանները արտացոլում են այս ներշնչված մարդկանց ավելի ուշ հիշողություններն ու հավատքի համայնքի կարիքները: Հետևաբար, կան երկու պատմական պարամետրեր (Հիսուսի և Ավետարանի հեղինակների), որոնք երկուսն էլ ներշնչված են:

▪ **«փառաւորուեցաւ»** Տես ծանուցում 1:14.

12:17 Տես Հատուկ Թեմա: Հիսուսի վկաները 1:8: Տես կոնտեքստային ներըմբռնումները, C.

12:19 «Փարիսեցիներն իրար մէջ ասում էին» Սա ևս մեկ մարգարեական նախանշան է: Այն վերաբերվում է (1) հրեաներին, 11:48; 12:11 և (2) հեթանոսներին, հ.հ. 20-23: Այն արտացոլում է երկու պատմական պարամետրերը՝ Հիսուսի կյանքն ու վաղ եկեղեցին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:20-26

²⁰ Եւ կային ոմանք Հելլենացիք՝ նորանցից, որ եկել էին այնտեղ, որ երկրպագեն այն տօնումը: ²¹ Նորանք եկան Փիլիպպոսի մօտ որ Գալիլէայի Բեթսայիդայիցն էր, նորան խնդրում էին եւ ասում. Տէր, կամենում ենք Յիսուսին տեսնել: ²² Փիլիպպոսը գալիս է Անդրէասին ասում. Անդրէասը եւ Փիլիպպոսը ասում են Յիսուսին: ²³ Յիսուսն էլ պատասխանեց նորանց՝ եւ ասեց. Ժամը հասաւ, որ մարդի Որդին փառաւորուի: ²⁴ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. եթէ ցորենի հատը հողի մէջ չ'ընկնի եւ մեռնի, ինքը մինակ կ'մնայ. Բայց եթէ մեռնի, շատ պտուղ կ'բերէ: ²⁵ Իր անձը սիրողը՝ կ'կորցնէ նորան, եւ իր անձն ատողը այս աշխարհքումը, յաւիտենական կեանքի մէջ կ'պահէ նորան: ²⁶ Եթէ մէկը ծառայէ ինձ, թող նա իմ ետեւից գայ. Եւ ուր ես եմ, այնտեղ էլ իմ պաշտօնեան կ'լինի. Եթէ մէկը ծառայէ ինձ, Հայրը կ'պատուէ նորան:

12:20 «ոմանք Հելլենացիք» Այս օգտագործվել է հեթանոսների իմաստով, ոչ հատուկ էթնիկ հույների:

▪ **«Եւ կային՝ նորանցից, որ եկել էին այնտեղ, որ երկրպագեն այն տօնումը»** ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԸ ենթադրում է, որ նրանք սովորություն ունեին գնալու տոնին: Նրանք կամ (1) Աստվածավախ էին կամ (2) Դռան նորահավատներ: Առաջինը կանոնավոր երկրպագողներ էին ժողովարանում իսկ երկրորդը պաշտոնապես հրեական հավատքի դարձի եկածներն էին:

12:21 «նորան խնդրում էին» Սա ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ է, որը նշանակում է (1) նրանք հարցնում էին կրկին ու կրկին կամ (2) նրանք սկսեցին հարցնել: Նրանք ուզում էին մասնավոր հարցազրույց Հիսուսի հետ: Ըստ երևույթին, սա վերջին մարգարեական ժամացույցի սլաքն էր Հիսուսի մահից առաջ (տես հ. 23):

12:22 Փիլիպոսը (ձիեր սիրող) և Անդրեասը (առնական) միակ երկու Առաքյալներն են, որ ունեն հունական անուններ: Թերևս սա թույլ է տվել այդ հույներին (այսինքն, հեթանոսներին) զգալու, կարծես թե նրանք կարող են իրենց մոտենալ:

12:23 «Ժամը հասաւ» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ է: Հովհաննէսը հաճախ օգտագործում է «Ժամը» տերմինը, որը վերաբերվում է խաչելությանն ու հարությանը, որպէս Հիսուսի առաքելության իրադարձությունների զագաթնակետ (տես 12:27, 13: 1, 32; 17: 1): Հիսուսն ասաց, որ Նա եկել է Իսրայելի կորած ոչխարների համար (տես Մատթ. 15:24): Այժմ Նրա պատգամը հասնում էր հեթանոսներին:

- **«մարդի Որդին»** Սա արամերեն արտահայտություն է, որը պարզապէս նշանակում է «մարդ արարած» (հմմտ Մաթ 8: 4; Եզեկ. 2: 1): Մակայն, այն օգտագործվում է Դան. 7:13 Աստվածության մասին ավելացված իմաստով: Սա Հիսուսի ինքնակոչ տիտղոսն է, որը համատեղում է Իր երկու բնությունները՝ մարդ և Աստված (տես I Հովհ. 4: 1 3):

- **«փառատրուի»** Հիսուսի մահը միշտ վերաբերվում է «Իր փառքին»: «Փառք» տերմինը օգտագործվում է մի քանի անգամ այս կոնտեքստում (տես հհ. 28 [երկու անգամ], 32 և 33): Այն հաճախ օգտագործվում է մատնանշելու Հիսուսի մահն ու հարությունը (հմմտ. 13: 1,32; 17: 1): Տես ծանուցում 1:14.

12:24 «Եթե ցորենի հատը հողի մէջ չ'ընկնի եւ մեռնի» Սա ֆենոմենոլոգիական կամ նկարագրական լեզու է, բաներ, որոնք հայտնվում են հինգ իմաստներով: Մեկ սերմը կարող է արտադրել բազմաթիվ սերմեր (տես 15: 2,4,5,8,16, I Կորնթ. 15:36): Նրա մահը շատերի բերեց իսկական կյանքի (տես Մարկ. 10:45):

- **«Եթե»** Կա մի շարք ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ այս կոնտեքստում, որը նշանակում է պոտենցիալ գործողություն (տես հհ. 24,26,32,47):

12:25 «Իր անձը սիրողը՝ կ'կորցնէ նորան» Սա բառախաղ է հունարեն *psych* տերմինի, որը վերաբերվում է մարդու անձի կամ կյանքի ուժի էությանը (հմմտ. Մատթ. 10:39, 16: 24-25; Մարկ 8: 34-35; Ղուկ. 9: 23-24): Ով որ վստահում է Քրիստոսին նրան նոր կյանք է տրվում: Այս նոր կյանքը Աստծո պարզն է ծառայության համար, այլ ոչ թե անձնական օգտագործման: Հավատացյալները այս նոր կյանքի տնտեսներն են: Մենք ազատված ենք մեղքի ստրկությունից՝ դառնալով Աստծո ծառաները (տես Հռոմ. 6: 1-7: 6):

10-րդ գլխում կեղծ հովիվները փորձեցին «փրկել» իրենց կյանքը՝ փախչելով: Բայց Հիսուսը դնում է Իր կյանքը, նույնպես էլ պետք է հավատացյալներն անեն (տես II Կորնթ. 5: 12-15; Գաղ. 2:20):

- **«կ'կորցնէ նորան»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Տերմինը (տես Հատուկ Թեմա 10:10), նշանակում է «ոչնչացնել», մեկ այլ բառ երկու իմաստներով: Սա «հավիտենական կյանքի» հակառակն է: Եթե մեկը չի հավատում Քրիստոսին, սա է միակ այլընտրանքը: Այս կործանումը ոչնչացում չէ, այլ Աստծո հետ անձնական հարաբերության կորուստը (որը էլ դժիքի էությունն է)

▪ «**աստղը**» Սա երբայերեն համեմատության իդիոմա է: Աստված պետք է լինի առաջնահերթությունը (հմմտ. Հակոբի կանայք, Ծննդ. 29: 30,31; 2 Օր. 21:15, Եսավն ու Հակոբը, Մադ. 1: 2- 3; Հռ. 10-13; մեկի ընտանիքը, Ղուկաս 14:26):

▪ «**կեանքի**» Սա հունարեն *zo_* տերմինն է: Այն պարբերաբար օգտագործվում է Հովհաննես Ավետարանում, որը վերաբերվում է (1) հոգևոր կյանքին (2) հավիտենական կեանքին (3) նոր կյանքին և (4) հարության կյանքին: Ճշմարիտ կյանքը ազատությունը է «ես»-ի, բռնապետությունից, որն էլ հանդիսանում է մեղքի մեջ ընկնելու էությունը:

12:26 «Եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն:

▪ «**թող նա իմ ետևից գայ**» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է, որը խոսում է շարունակական հարաբերությունների մասին (տես Հովհ. 15): Համբերատարությունը անտեսված աստվածաշնչյան թեմա է (տես Հատուկ Թեմա: Համբերության անհրաժեշտությունը 8:31): Այս թեման հաճախ աստվածաբանորեն շփոթում են Աստծո գերիշխանության և մարդու կամքի հետ: Սակայն լավ է տեսնել փրկությունը, որպես ուխտի փորձառություն: Աստված միշտ նախաձեռնում է (տես 6: 44,65) և սահմանում օրակարգը, սակայն Նա նաև պահանջում է, որ մարդկությունը արձագանքի Իր առաջարկին՝ ապաշխարի և հավատա (հմմտ. Մարկ 1:15; Գործք 20:21), այնպես էլ որպես նախնական որոշման մասին եւ ողջ կյանքի ընթացքում աշակերտ: Համբերությունը վկայում է, որ մենք ճանաչում ենք Նրան (տես Մատթ. 10:22, 13: 20-21; Գաղ. 6: 9; I Հովհ. 2:19; Հայտն. 2: 7,11,17,26; 3: 5, 12,21):

Քրիստոնեական վարդապետությունը, լինելով հիմնված Աստվածաշնչի վրա, հաճախ հանդես է գալիս պարադոքսալ, լարվածությամբ լի գույգերով: Արևելյան գրականություն բնութագրվում է այս փոխաբերական, հակապատկեր մտքի օրինաչափություններով: Հաճախ ժամանակակից արևմտյան ընթերցողները ստիպված կանգնում են պարադոքսների կամ / ընտրության առաջ, երբ դրանք երկուսն էլ են / ու ճշմարտություններ:

Որպեսզի պատկերացնեք իմ մեկնաբանությունները, ես ընդգրկել եմ մի հատված իմ Աստվածաշնչի Մեկնաբանություն սեմինարից՝ վերնագրելով աստվածաշնչյան պարադոքսներ.

«Աստվածաշնչյան պարադոքսներ.

1. Այս ներըմբռնումը եղել է առավել օգտակար անձամբ ինձ համար, որպես մեկը, ով սիրում և վստահում է Աստվածաշնչին որպես Աստծո Խոսք: Փորձելով լրջորեն մոտենալ Աստվածաշնչին ակնհայտ դարձավ, որ տարբեր տեքստեր հայտնում են ճշմարտությունը ընտրված կարգով, ոչ սիստեմատիկորեն: Մեկ ներշնչված տեքստ չի կարող չեղյալ հայտարարել կամ արժեզրկել մեկ այլ ներշնչված տեքստ: Ճշմարտություն գալիս է ամբողջ Սուրբ Գիրքն իմանալուց (ամբողջ Սուրբ Գիրքը, այլ ոչ պարզապես ոմանք, ներշնչված է, տես II Տիմոթ. 3: 16-17), մեջբերում չանելով ոչ մի հատված (ապացույց-տեքստ):

2. Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ (արևելյան գրականություն) ներկայացված են դիալեկտիկական կամ պարադոքսալ գույգերով (հիշեք Նկ հեղինակներին, բացի Ղուկասից, երբայերեն մտածողներ են, գրելով հասարակ հունարենով): Իմաստուն Գրականությունը և Պոետիկ գրականությունը ներկայացնում են ճշմարտությունը զուգահեռ գծերով: Հակադիր զուգահեռության գործառույթները նման են պարադոքսի: Այս սինթետիկ զուգահեռության գործառույթները նման են զուգահեռ հատվածների: Ինչ - որ կերպ երկուսն էլ հավասարապես ճշմարիտ են: Այս պարադոքսները ցավալի են մեր նվիրական, պարզունակ ավանդույթներին:

- ա. նախասահմանություն - մարդկային ազատ կամք
- բ. հավատացյալի ապահովվածությունը - համբերության անհրաժեշտությունը
- գ. սկզբնական մեղքը - կամային մեղքը
- դ. Հիսուսը որպես Աստված - Հիսուսը որպես մարդ
- ե. Հիսուսը հավասար է Հոր հետ - Հիսուսը կատարում է Հոր կամքը
- զ. Աստվածաշունչը որպես Աստծո Խոսք - մարդկային հեղինակություն
- է. անմեղություն (կատարելիություն, տես Հո. 6) - քիչ մեղք գործել
- ը. նախնական ակնթարթային արդարացում և սրբացում - պրոգրեսիվ սրբություն
- թ. արդարացում հավատքով (Հո. 4) - արդարացում հաստատված գործերով (տես Հակ. 2: 14-26)
- ժ. Քրիստոնեական ազատություն (տես Հոմ. 14: 1-23, I Կորնթ 8: 1-13, 10: 23-33) - քրիստոնեական պատասխանատվություն (տես Գաղ. 5: 16-21; Եփ. 4: 1)
- ի. Աստծո գերազանցությունը - Նրա ներհատկությունը
- լ. Աստված որպես վերջնականապես անճանաչելի - ճանաչելի Սուրբ Գիրք և Քրիստոս
- լւ. Պողոսի շատ փոխաբերությունները փրկության համար
 - (1) որդեգրում
 - (2) սրբագործում
 - (3) արդարացում
 - (4) փրկագնում
 - (5) փառավորում
 - (6) նախասահմանություն
 - (7) հաշտեցում
- ծ. Աստծո թագավորությունը ներկայում - գալիք վախճանը
- կ. ապաշխարությունը որպես Աստծո նվեր - ապաշխարությունը որպես պատասխան փրկությանը (տես Մարկ 1:15; Գործք 20:21)
- հ. ՀԿ հարատև, անփոփոխ է - ՀԿ անցել է և անվավեր է (տես Մատթ. 3: 17-19; 5:21-48; Հո. 7; Գաղ. 3)
- ձ. հավատացյալները ծառաներն են / ստրուկներ կամ զավակներ / ժառանգները »

▪ «ուր ես եմ, այնտեղ էլ իմ պաշտօնեան կ'լինի» Այս թեման կրկնվում է 14: 3; 17:24, II Կորնթ. 5: 8; Փիլիպ. 1:23; I Թեա. 4:17: Քրիստոնեությունը հիմնականում անճանական հարաբերություն է Աստծո հետ: Նպատակը հարաբերությունն է՝ Նրա ներկայությունը, Նրա մտերմությունը:

Մենք ստեղծվել ենք Աստծո հետ հարաբերություն ունենալու համար (տես Ծննդոց 1: 26-27): Փրկությունը Եդեմի պարտեզում կոտրված հարաբերության վերականգնումն է: Հովհաննեսն ընդգծում է, որ այս հարաբերությունը հիմա վերականգնվել է:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:27-36ա

²⁷ Հիմա իմ անձը խոռված է. Եւ ի՞նչ ասեմ. Հայր, ազատիր ինձ այս ժամիցը. սակայն իսկ սորա համար եկայ այս ժամի մէջ: ²⁸ Հայր, փառաւորիր քո անունը: Եւ երկնքիցը ձայն եկաւ, թէ Փառաւորեցի էլ եւ դարձեալ կ'փառաւորեմ: ²⁹ Եւ ժողովուրդը, որ կանգնած էր եւ լսում էր, ասում էին, Որոտմունք եղաւ. Ուրիշներն ասում էին. Հրեշտակ խօսեց նորա հետ: ³⁰ Յիսուսը պատասխանեց եւ ասեց. Այս ձայնը ոչ թէ ինձ համար եղաւ, այլ ձեզ համար: ³¹ Հիմա դատաստան է այս աշխարհքի. հիմա այս աշխարհքի իշխանը դուրս կ'զցուի: ³² Եւ ես երբոր բարձրանամ երկրիցը, ամենքին կ'քաշեմ ինձ մօտ: ³³ Եւ այս ասում էր, որ ցոյց տայ, թէ ինչպիսի մահով պիտի մեռնի: ³⁴ Ժողովուրդը պատասխանեց նորան. Մենք օրէնքիցը լսեցինք, թէ Քրիստոսը յաւիտեան

կ'լենայ. Եւ դու ինչպէս ես ասում, թէ պէտք է մարդի Որդին բարձրանայ. Ո՞վ է այն մարդի Որդին: ³⁵ Յիսուսն էլ ասեց նորանց. Մի քիչ ժամանակ դեռ լոյսը ձեզ հետ է. գնացեք, քանի որ լոյսն ունիք, որ խաւարը ձեզ չ'հասնէ. Եւ խաւարումը գնացողը չ'գիտէ, թէ ո՞ւր է գնում: ³⁶ Քանի որ լոյսն ունիք, հաւատացեք լոյսին, որ լոյսի որդիք լինիք:

12:27 «Իմ անձը խռոված է» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Կատարողը (Հայրը, Սատանան, հանգամանքները և այլն) չի արտահայտվում: Սա շատ ուժեղ տերմին է և օգտագործվում է մի քանի եղանակներով ՆԿ-ում.

- ա. Հերովդեսի վախը (Մատթ. 2: 3)
- բ. աշակերտների վախը (Մատթ. 14:26)
- գ. Հիսուսի չկարգավորված անհանգստությունը (Հովհ. 12:26; 13:21)
- դ. Եկեղեցին Երուսաղեմում (Գործք 15:24)
- ե. կեղծ ուսուցիչների պառակտումը Գաղատիայի եկեղեցիներում (Գաղ. 1: 7)

Սա Հովհաննեսի կերպն էր կապված Հիսուսի մարդկային պայքարի հետ առաջիկայում սպասվող Իր խաչելության տրավմայի (տես Մարկ. 14: 32): Հովհաննեսը չի արձանագրում Հիսուսի հոգեվարքը Գեթսեմանում, բայց սա նույն դեպքն է:

▪ «ազատիր ինձ այս ժամիցը» Կա շատ քննարկում այս արտահայտության ճշգրիտ իմաստի մասին: Արդյո՞ք սա աղոթք է (այսինքն, Մատթ. 26:39): Արդյո՞ք սա զարմանալի արձագանք է, թե ինչ չպէտք է արվի (NET Bible):

▪ «սակայն իսկ սորա համար եկայ այս ժամի մեջ» Հիսուսի կյանքը ընթանում էր ըստ աստվածային ծրագրի (տես Ղուկ. 22:22, Գործք 2:23; 3:18; 4:28), որը Հիսուսը լիովին հասկացել էր (տես Մատթ. 20:28; Մարկ. 10:45):

12:28 «փառաւորիք քո անունը» Հայրը պատասխանում է հ. 28: Այս «փառավորի» տերմինը շատ մակերեսային է: Այն կարող է վերաբերվել

- 1. նախագո փառքը (տես 17: 5)
- 2. Հիսուսի հայտնությունը Հորը (տես 17: 4)
- 3. Հիսուսի խաչելությունը և հարությունը (տես 17: 1)

Տես ծանուցում 1:14.

▪ «Եւ երկնքիցը ձայն եկաւ» Ռաբբիները սա կոչում են *bath-kol*: Մաղաքիայի ժամանակից սկսած մարգարեական ձայն չի եղել Իսրայելում: Եթե Աստծո կամքը պէտք է հաստատվի, ապա դա պէտք է արվի երկնքից ձայն լսելով: Ավետարանը արձանագրում է, որ Աստված խոսեց երեք անգամ Հիսուսի կյանքի ընթացքում:

- 1. Հիսուսի մկրտության ժամանակ, Մատթ. 3:17
- 2. այլակերպության ժամանակ, Մատթ. 17: 5
- 3. այստեղ այս համարում

12:29 «Եւ ժողովուրդը, որ կանգնած էր եւ լսում էր, ասում էին» Կան երկու մեկնաբանություններն, թե ինչ է եղել (1) ամպրոպ էր: Այսպէս էր Աստված խոսում ՀԿ-ում (տես II Թագ. 22:14, Հոբ 37: 4; Մաղ. 29: 3, 18:13 104: 7) կամ (2) հրեշտակը խոսեց Նրա հետ: Սա նման է Մավուդի փորձառության շփոթությանը Գործք 9: 7; 22: 9:

12:30 «Յիսուսը պատասխանեց եւ ասեց. Այս ձայնը ոչ թէ ինձ համար եղաւ, այլ ձեզ համար» Այս արտահայտությունը սեմիթական համեմատություն է: Սա նշանակում է, որ դա եղել է ոչ միայն նրանց համար, բայց հիմնականում նրանց համար (տես 11:42):

12:31 «Հիմա դատաստան է այս աշխարհքի» Սա գուգահեռ կառուցվածք է հետևյալ արտահայտությամբ («այս աշխարհի իշխանը դուրս կնետվի»): Ժամանակը, երբ դա տեղի է ունեցել, նշված չէ (տես հաջորդող Հատուկ Թեման):

Ես, անշուշտ, համաձայն եմ F. F. Bruce, *Answers to Questions* (էջ 198), որ հ. 31-ը մեկ օրինակ է, թե ինչ է C. H. Dodd կոչում «իրականացված վախճանաբանություն»: Հովհաննեսի համար, Հիսուսն արդեն բերել է փրկություն հավատացյալներին և դատաստան անհավատներին: Ինչ-որ իմաստով սա նման է քերականական ձևի, որը կոչվում է «ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ»: Ապագան այնքան վստահ է, որը արտահայտվում է կարծես արդեն տեղի է ունեցել:

▪ **«այս աշխարհքի իշխանը»** Սա վերաբերվում է անձնական չարի ուժին (տես 14:30; 16:11) հայտնի երբայերենում որպես «սատանա» կամ «հակառակորդ» (տես Հոր 1-2) կամ հունարենում որպես «դև» կամ «զրպարտիչ» (տես Մատթ. 4:1,5,8,11; 13:39, 25:41; Հովհ. 6:70; 8:44; 13: 2; II Կորնթ. 4: 4; Եփես. 2: 2): Այս երկու անունները հունարենից են Մատթ. 4: 1-11 և Հովհ. 13:2,27: Նա զգվել է երկնքից, այնպես որ նա չկարողանա շարունակել մեղադրել / զրպարտել Հիսուսի հետևորդներին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՆՁՆԱԿԱՆ ՉԱՐԸ

Սա շատ բարդ թեմա է մի քանի պատճառներով:

1. ՀԿ չի բացահայտում է բարու ուժերի թշնամուն, այլ ԵՀՈՎԱՅԻ սպասավորը, որը մարդկությանը առաջարկում է այլընտրանք և մեղադրում մարդկությանը անիրավության մեջ (A. B. Davidson, *Old Testament Theology*, էջ 300-306):
2. Աստծո անձնական ուժերի թշնամու գաղափարը զարգացել է միջաստվածաշնչյան (ոչ կանոնական) գրականության մեջ պարսկական կրոնի (զրադաշտության) ազդեցության տակ: Սա էլ, իր հերթին, մեծապես ազդել է ռաբունական հուդայական վրա:
3. ՆԿ զարգացնում է ՀԿ թեմաները զարմանալիորեն կատարյալ կերպով, բայց ընտրողաբար, ըստ կատեգորիաների:

Եթե մեկը մոտենում է չարի մասին ուսումնասիրությանը աստվածաշնչյան աստվածաբանության տեսանկյունից (յուրաքանչյուր գիրք կամ հեղինակ կամ ժանր ուսումնասիրվում և ուրվագծվում է առանձին), ապա չարի մասին շատ տարբեր տեսակետներ են բացահայտվում:

Եթե, այնուամենայնիվ, մեկը մոտենում է չարի մասին ուսումնասիրությանը համաշխարհային կրոնների կամ արևելյան կրոնների ոչ աստվածաշնչյան կամ լրացուցիչ աստվածաշնչյան մոտեցումով, ապա շատ նորկտակարանյան զարգացումներ սովորապես ստված են Պարսից դուալիզմով և հունա-հռոմեական սպիրիտիզմով/ոգեհարցությամբ:

Եթե մեկը կանխակարծիքորեն հավատարիմ է Սուրբ Գրքի աստվածային հեղինակությանը, ապա ՆԿ զարգացումը պետք է դիտարկել որպես առաջադեմ հայտնություն: Քրիստոնյաները պետք է զգուշանան հրեական բանահյուսությունից կամ անզլերեն գրականությունից (այսինքն, Դանթե, Միլթոն), որպեսզի ավելի հստակ լինի գաղափարը: Իհարկե, հայտնության այս ոլորտում կա առեղծված և անորոշություն: Աստված ընտրել է չբացահայտել չարի բոլոր ասպեկտները, նրա ծագումը, նրա նպատակը, բայց Նա հայտնել է նրա պարտությունը:

ՀԿ սատանա (BDB 966) կամ մեղադրող տերմինը կարծես թե, վերաբերվում է երեք առանձին խմբերի:

1. Մարդուն մեղադրողներ (I Թագ. 29: 4; II Թագ. 19:22, Գ Թագ. 11: 14,23,25; Սաղ. 109: 6)
2. հրեշտակի մեղադրողներ (Թվոց 22: 22-23; Զաք. 3: 1)
3. դևերին մեղադրողներ (I Մնաց. 21: 1; Գ Թագ. 22:21; Զաք. 13: 2)

Միայն ավելի ուշ միջկտակարանյան ժամանակահատվածում է Ծննդոց 3 օձը նույնացվեց

սատանայի հետ (տես Գիրք Իմաստության 2: 23-24; II Ենոք 31: 3) և նույնիսկ ավելի ուշ սա դարձավ ռաբունական տարբերակ (տես *Sot*9 և *Sanh*. 29): Ծննդոց 6 «Աստծո որդիները» դարձան I Ենովքի 54: 6 չար հրեշտակները: Նրանք դարձան չարի ծագումը ռաբունական աստվածաբանության մեջ: Ես սա նշում եմ, ոչ թե պնդելու դրա հոգևոր ճշգրտությունը, այլ ցույց տալու դրա զարգացումը: ՆԿ այս հինկտակարանյան գործողությունները վերագրված են հրեշտակային, անձնավորված չարին (այսինքն, սատանային) II Կորնթ. 11: 3; Հայտն 12: 9:

Անձնավորված չարի ծագումը դժվար կամ անհնար է (կախված ձեր տեսանկյունից) որոշել ՀԿ-ից: Պատճառներից մեկը Իսրայելի ուժեղ միաստվածությունն է (տես Գ Թագ. 22: 20-22; Ժող. 7:14; Ես. 45: 7; Ամովս 3: 6): Բոլոր պատճառահետևանքային կապը վերագրված էր ԵՀՈՎԱՅԻՆ ցույց տալու Նրա եզակիությունը և առաջնայնությունը (տես Ես. 43:11, 44: 6,8,24, 45: 5-6,14,18,21,22):

Հնարավոր տեղեկատվության աղբյուրներն են (1) Հոբ 1-2, ուր սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այսինքն, հրեշտակները), կամ (2) Եսայիա 14; Եզեկիել 28, որտեղ հպարտ հարևան արևելյան թագավորները (Բաբելոն և Տյուրոս) օգտագործվում են ցույց տալու սատանայի հպարտությունը (տես I Տիմ. 3: 6): Ես ունեմ խառը զգացմունքներ այս մոտեցման մասին: Եզեկիելը օգտագործում է Եդեմի Պարտեզի փոխաբերությունները ոչ միայն Տյուրոսի թագավորի համար որպես սատանա (տես Եզեկ. 28: 12-16), այլ նաև Եգիպտոսի թագավորի, որպես բարու և չարի գիտության ծառ (Եզեկիել 31): Մակայն, Եսայիա 14, մասնավորապես հհ. 12-14, նկարագրում են հրեշտակային խռովությունը հպարտության միջոցով: Եթե Աստված ուզում է բացահայտել մեզ համար սատանայի առանձնահատուկ բնությունն ու ծագումը, սա շատ անուղղակի ձև և տեղ է դա անելու համար: Մենք պետք է հսկենք սխտեմատիկ աստվածաբանության միտումը՝ վերցնելու տարբեր Կտակարաններից, հեղինակներից, գրքերց և ժանրերից փոքր, երկիմաստ մասեր եւ համադրել դրանք որպես մեկ աստվածային փազլի կտոր:

Alfred Edersheim (*The Life and Times of Jesus the Messiah*, հատ. 2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]) ասում է, որ ռաբունական Հուդայականության վրա արդեն չափազանց ազդել է Պարսից դուալիզմը և դիվային մտորմունքը: Ռաբբիներն ճշմարտության համար լավ աղբյուր չեն այս ոլորտում: Հիսուսը արմատապես տարբերվում է ժողովարանի ուսմունքներից: Ես կարծում եմ, որ հրեշտակային միջնորդության և ընդդիմության ռաբունական գաղափարը Մինա սարի վրա Մովսեսին օրենքը տալու ժամանակ, դուռ բացեց դեպի Եհովայի ինչպես նաև մարդու ռիտերիմ-հրեշտակային թշնամու գաղափարի համար: Կան երկու բարձր չաստվածներ Պարսից (զրադաշտական) դուալիզմի մեջ, *Ahkiman* և *Ormaza*, բարի և չար: Այս դուալիզմը զարգացավ Եհովայի և սատանայի հուդայական սահմանափակ դուալիզմի մեջ:

Անշուշտ ՆԿ կա պրոգրեսիվ հայտնություն, որպես չարի զարգացում, բայց ոչ այնպես մշակված ինչպես ռաբբիներն են հռչակում: Այս տարբերության լավ օրինակ է «պատերազմ երկնքում»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, բայց առանձնահատկությունները չեն տրված: Նույնիսկ այն, ինչ տրված է քողարկված է ապոկալիպտիկ ժանրի ներքո (տես Հայտ. 12: 4,7,12-13): Չնայած սատանան պարտվել է և արտաքսվել երկիրի, նա դեռ գործում է որպես Եհովայի սպասավոր (տես Մատթ. 4: 1; Ղուկաս 22: 31-32; I Կորնթ. 5: 5, I Տիմ. 1:20):

Մենք պետք է սանձենք մեր հետաքրքրասիրությունը այս ոլորտում: Կա զայթակողության և չարի անձնական ուժ, բայց կա միայն մեկ Աստված և մարդկությունը դեռ պատասխանատու է իր ընտրության համար: Կա հոգևոր պայքար, փրկությունից թե առաջ և թե հետո: Հաղթանակը միայն կարող է գալ և մնալ Եռյակ Աստծո միջոցով: Չարը արդեն պարտված է և վերանալու է:

▪ «**դուրս կ'զցուի**» Սա ԱՊԱՌՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է: Աստվածաշունչը չի նշում սատանայի երկնքից զցվելու ճշգրիտ ժամանակը: Սատանայի մասին հնարավոր քննարկում կա Եսայի 14 և Եզեկիել 28, բայց երկրորդական իմաստով: Մարգարեական հատվածները խոսում են Բաբելոնի և Տյուրոսի հպարտ թագավորների մասին: Նրանց մեղավոր ամբարտավանությունը արտացոլում է սատանային (տես Ես. 14: 12,15; Եզեկ. 28:16): Բայց Հիսուսն ասաց, «տեսնում էի

սատանային որ կայծակի պես երկնքիցը վայր էր ընկնում» յոթանասունին ուղղարկելու ժամանակ (տես Ղուկ. 10:18):

Կա Սատանայի զարգացում ողջ ՀԿ: Ի ծնե նա եղել է սպասավոր հրեշտակ, բայց հպարտության պատճառով դարձավ Աստծո թշնամին: Այս հակասական թեմայի լավագույն քննարկումը կարդալ A. B. Davidson's *Old Testament Theology*, էջ 300-306.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊԱՏԵՐԱԶՍ ԵՐԿՆՔՈՒՄ (վերցված է իմ Հայտնության մեկնաբանությունից)

Շատ քննարկումներ են եղել է այս առերեսման տարեթվի հետ կապված: Հիսուսը թվում է նշում է այս մասին Ղուկաս 10:18 և Հովհաննես 12:31: Բայց իրադարձությանը փորձել դնել ժամանակագրական տարեթիվ չափազանց դժվար է.

1. մինչև Ծննդոց 1: 1 (մինչև արարչագործությունը)
2. Ծննդոց 1: 1 և 1: 2 միջև (անդունդի, հեռավորության տեսությունը)
3. ՀԿ-ում Հոբ 1-2 հետո (սատանան երկնքում է)
4. ՀԿ-ում 3 Թագ. 22:21 հետո (սատանան երկնային ժողովում է)
5. ՀԿ-ում Չաք. 3 հետո (սատանան երկնքում է)
6. ՀԿ-ում ինչպես Ես. 14:12; Եզեկ. 28:15 և II Ենովք 29: 4-5 (արևելքի թագավորները դատապարտվում են)
7. ՆԿ-ում Հիսուսի փորձությունից հետո (տես Մատթ. 4)
8. ՆԿ-ում յոթանասունին ուղղարկելու ընթացքում (տեսնում էի սատանային երկնքից վայր ընկելուց, տես Ղուկաս 10:18)
9. ՆԿ-ում Երուսաղեմ հաղթական մուտքից հետո (այս աշխարհի իշխանը դուրս կգցվի, տես Հովհ. 12:31)
10. ՆԿ-ում Հիսուսի հարությունից և համբարձումից հետո (տես Եփես. 4: 8; Կող. 2:15)
11. ժամանակի վերջում (տես Հայտն 12: 7, հնարավոր է սատանան գրոհեց երկինք՝ Երեխային որոնելու համար)

Մենք պարզապես պետք է հասկանանք, որ դա հավիտենական պատերազմ է Աստծո և չարի միջև, այս հակամարտությունը վիշապի և նրա զորքի բացարձակ պարտությամբ է ավարտվելու: Հայտնություն 20 նրանք հեռացվելու են և մեկուսացվելու:

12:32 «Եւ ես երբոր բարձրանամ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Այս տերմինը կարող է նշանակել

1. բարձրանալ (տես 3:14)
2. խաչվել (տես 8:28)
3. վեհանալ, մեծարվել (տես Գործք 2:33; 5:31)
4. բարձր մեծարվել, փառաբանվել (տես Փիլիպ. 2: 9)

Հենց այս բազմակի իմաստով տերմինների առումով է (կրկնակի իմաստ) բնութագրվում Հովհաննեսի Ավետարանը:

▪ **«ամենքին կ'քաշեմ ինձ մօտ»** Սա կարող է ակնարկ լինել Իսրայելի ԵՀՈՎԱՅԻ ուխտի սիրո Երեմ. 31: 3, որը, իհարկե «նոր ուխտի» հաստատում է (տես Երեմ. 31: 31-34): Աստված շահում է մարդկանց Իր սիրով և գործում է ի օգուտ նրանց: Այս նույն փոխաբերական իմաստով այս տերմինն օգտագործում է Հովհ. 6:44 և բացատրվում է 6:65:

Այստեղ «բոլորը» համընդհանուր հրավեր է և փկության խոստումը (տես 3:15, 12: 3; Ելից 19: 5; Ես. 2: 2-4; Հովհ. 1: 9,12,29, 3 : 16, 4:42, 10:16, I Տիմ. 2: 4; 4:10; Տիտոս 2:11; Բ Պետ. 3: 9, I Հովհ. 2: 2; 4:14):

Կա զգալի տարբերակ այս արտահայտության մեջ: «Բոլորը» կարող է լինել ԱՐԱԿԱՆ, որը պետք է թարգմանվի «բոլոր մարդիկ» և հայտնաբերվել է հին հունարեն ձեռագրերում P^{75 (VID)}, Տ², B, L, և W P75 (VID), իսկ ՉԵԶՈՒՔԸ, որը թարգմանվում է «բոլոր բաները» հայտնաբերվել է P⁶⁶ և Տ: Եթե

դա ՉԵԶՈՔՆ է, ապա այն խոսում է Քրիստոսի տիեզերական փրկագնման մասին ինչպես Կող.1: 16-17, որը հավանաբար, արտացոլում է գնոստիկ հերետիկոսություն, որն այնքան ակնհայտ է I Հովհ.: UBS⁴ տալիս է ԱՐԱԿԱՆ «B» վարկանիշ (գրեթե):

12:33 «Եւ այս ասում էր, որ ցոյց տայ, թէ ինչպիսի մահով պիտի մեռնի» Սա ևս մեկ խմբագրական մեկնաբանություն է Հովհաննեսի կողմից: Սա կապված է Բ Օրին. 21:23 որտեղ ծառից կախվածը կոչվում «անիծված Աստծո կողից»: Սա էր պատճառը, որ կրոնական առաջնորդները ցանկացան Հիսուսին խաչել, այլ ոչ թե քարկոծել: Հիսուսը կրեց օրենքի անեծքը մեզ համար (տես Գաղ. 3:13):

12:34 «Ժողովուրդը պատասխանեց նորան...Քրիստոսը յախտեան կ'կենայ» Սա կարող է ակնարկ լինել Սաղ. 89: 4,29,35-37: ՀԿ ակնկալում էր Մեսիայի միայն մեկ գալուստ և Նրա պաղեստինյան գահակալության համաշխարհային խաղաղության հաստատումը (տես Սաղ. 110: 4; Ես. 9: 7, Եզեկ. 37:25 և Դան. 7:14): Տես «հավիտյան» Հատուկ Թեմա 6:58.

▪ **«մարդի Որդին»** Ամբոխը (տես կոնտեքստային ներբնութումներ, Գ. կետը) լսել էր Հիսուսի ուսմունքը/ քարոզը (հնարավոր է հհ. 23-24 անվան համար և հհ. 30-32 «բարձրանալ» ԲԱՅԻ համար), որովհետև նրանք օգտագործում են Նրա ուրույն ինքնաանվանումը: Սա միակ տեղն է, որ այն օգտագործվում է այլոց կողմից: Դա չի եղել ստանդարտ անվանում Մեսիայի համար հուդայականության մեջ:

12:35 «գնացեք, քանի որ լույսն ունիք» Հիսուսը կոչ է անում Իր ունկնդիրներին անհապաղ արձագանքել Իր խոսքերին: Նրա ժամանակը երկրի վրա սահմանափակ էր: Նրա վերջին շաբաթը երկրի վրա մոտեցել էր: Նրա կանխորոշված ժամը հասել էր (հ. 23):

Ինչ-որ իմաստով այս արտահայտությունը (քանի որ շատ է Հովհաննեսի Ավետարանում) ունի պատմական ռեֆերենտ և էքզիստենցիալ ռեֆերենտ: Այն, ինչ Հիսուսն ասաց, ճշմարիտ է բոլորի համար, ովքեր լսում են ավետարանը (այսինքն, Սերմնացանի առակը):

Սա «ման գալ, քայլել» որպես ապրելակերպի փոխաբերական օգտագործումն է (տես Եփես. 4: 1,17, 5: 2,15): Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է, որը շարունակում է Հիսուսի շեշտադրումը հավատքի վրա որպես շարունակական հարաբերություն և աշակերտություն, և ոչ միայն նախնական որոշում (տես հհ. 44-46):

12:36 Հիսուսի այս թեման, որպես աշխարհի լույս խոշոր հերթական շեշտն է Հովհաննեսի Ավետարանում (տես 1: 4,5,7,8,9, 3: 19,20,21; 5:35; 8:12; 9: 5, 11: 9,10; 12: 35,36,46): Խավարը և լույսը նույնպես հակապատկեր հոգևոր իրողություններ են հրեական Իմաստուն Գրականության և Մեռյալ ծովի ձեռագրերում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:36-43
Յիսուսը այս բանը խօսեց, եւ գնաց և թագուեցաւ նորանցից: ³⁷ Եւ թէպէտ նա այնքան նշաններ արել էր նորանց առաջին, նորանք չէին հաւատում նորան. ³⁸ Որ Եսայիա մարգարէի խօսքը կատարուի, որ ասեց. Տէր, ո՞վ հաւատաց մեր լուրին, եւ Տիրոջ բազուկը ո՞ւմ յայտնուեցաւ: ³⁹ Նորա համար չէին կարողանում հաւատալ. Որ Եսայիան դարձեալ ասում է. ⁴⁰ Նորանց աչքերը կուրացրեց, եւ նորանց սրտերը թմբացրեց, որ աչքով չ'տեսնեն, եւ սրտով չ'իմանան, եւ դառնան՝ եւ ես բժշկեմ նորանց: ⁴¹ Եսայիան սա ասեց, երբոր նորա փառքը տեսաւ, եւ նորա համար խօսեց: ⁴² Բայց եւ այնպէս իշխաններիցը շատերը հաւատացին նորան. սակայն Փարիսեցիների պատճառովը չէին դաւանում, որ ժողովարանիցը դուրս չ'գցուին: ⁴³ Որովհետեւ մարդկանց փառքն աւելի սիրեցին քան թէ Աստուծոյ փառքը:

12:37 Ինչպիսի տխուր մեկնաբանություն: Հոգևոր կուրությունը սարսափելի է (տես II Կորնթ. 4: 4): Սա համարը բնութագրում է աններելի մեղքը (տես Հատուկ Թեմա 5:21):

12:38 «Եսայիա մարգարեի խօսքը» Սա մեջբերում է տառապող ծառա հատվածից Ես. 53: 1.

12:39-40 Սրանք դժվար համարներ են: Արդյո՞ք Աստված կարծրացնում է մարդկանց սրտերը, որ նրանք չկարողանան արձագանքել: Ես տեղադրել եմ իմ մեկնաբանությունները Եսայի 6: 9-10 և Հռ.11: 7 (տես www.freebiblecommentary.org).

Եսայիա 6: 9-10 Ինչպես ԵՀՈՎԱՆ հայտնում է Իր նպատակը Եսայիայի ծառայության համար, Նա նաև հայտնում Եսայի Իր պատգամի պատասխանը Հուդայի վրա:

1. Գնա, հ. 9, BDB 229, KB, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. ասա, հ. 9, BDB 55, KB, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
3. լսելով կլսեք, հ. 9, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և *Qal* ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ ԲԱՑԱՐՁԱԿ BDB 1033, KB 1570
4. բայց չեք հասկանա, հ. 9, BDB 106, KB 122, *Qal* ԱՆԿԱՏԱՐ օգտագործվում է ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով, տես, 1: 3; 5:21; 10:13; 29:14
5. տեսնելով կտեսնեք, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և *Qal* ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ ԲԱՑԱՐՁԱԿ BDB 906, KB 1157
6. բայց չեք իմանա, հ. 9, BDB 393, KB 380, *Qal* ԱՆԿԱՏԱՐ օգտագործվում է ՀՐԱՄԱՅԱԿԱՆ իմաստով
7. թանձրացրու այս ժողովրդի սիրտը (բառաց. «գիրացնել»), հ. 10, BDB 1031, KB 1566, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
8. նրանց ականջները ծանրացրու, հ. 10, BDB 457, KB 455, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
9. և նրանց աչքերը ծեփիր, հ. 10, BDB 1044, KB 1612, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Այս ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻՆ հաջորդում են հետևանքները (երեք ԱՆԿԱՏԱՐՆԵՐ նախկինում օգտագործված ԲԱՅԵՐԻ «տեսնել», «լսել» և «ընկալել»): Աստված գիտի, (կամ Իր կանխագիտությամբ կամ Իր կարծրացնելով նրանց արդեն կամակոր սրտերը / մտքերը), որ նրանք չեն արձագանքելու և փրկվելու:

1. որպեսզի նրանք ապաշխարեն, BDB 996, KB 1427, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ժխտված
2. որպեսզի նրանք բժշկվեն, BDB 950, KB 1272, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ ժխտված

Եսայիան կբարոզի ու թեև ոմանք կարձագանքեն, բայց իր ժողովրդի / իր հասարակության ճնշող մեծամասնությունը չեն (տես Հռոմ 1: 24,26,28; Եփես. 4:19), կամ չեն կարող արձագանքել (հմմտ. 29: 9,10 ; Օրենք 29: 4; Մատթ. 13:13; Հռոմ. 11: 8): Եսայիան այստեղ ավետարանիչ չէ, այլ ուխտի մարգարե՝ անհնազանդություն / հետևանքներ (տես Մատթ. 13:13, Մարկ 4:12; Ղուկաս 8:10). Նրա հույսի պատգամը ապագայի համար է, ոչ թե իր օրերի:

Հռոմեացիս 11: 7 «միսները կուրացան» Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (հմմտ. II Կոր. 3:14): Ենթադրվում է, որ Աստված էր խստացրել նրանց (հմմտ. հհ. 8-10): Խստացման միջոցը շարն էր (հմմտ. II Կոր. 4:4): «Կարծրացած» (*poroō*) սա բժշկական տերմին է, որը նշանակում է կոպտություն, քարստություն կամ կուրություն (հմմտ. Հռ. 11:25; II Կոր. 3:14; Եփ. 4:18): Այս նույն տերմինը օգտագործված է առաքյալների հետ կապված Մարկ. 6:52: Այս բառը տարբերվում է մեկ ուրիշ հունարեն տերմինից 9:18 (*sklērunō*), որը իմաստը ողորմության հակառակն է (հմմտ. Եբր. 3:8,15; 4:7):

Այս համարը շատ պարզ է և 11:1-6-ի ամփոփումն է: Նրանք ովքեր ընտրված են եղել հավատացել են, իսկ նրանք ովքեր ընտրված չեն եղել կարծրացվել են: Ինչևէ, այս համարը չի գրվել մյուսներից առանձին, որպես աստվածաբանական լոզունգ: Այն կապակցված և շարունակական աստվածաբանական ապացույցի մասն է կազմում: Բայց գոյություն ունի որոշակի ներքին լարվածություն այս համարում գոյություն ունեցող հասատման և 10 գլխի տիեզերական/ընդհանրական փրկության հրավերքի միջև:

Այստեղ գաղտնիք կա: Բայց լուծումն այն չէ, որպեսզի ժխտելը կամ փոքրացնելը դիվենա/երկասյարաբանության երկու փաստարկներից մեկը, որոնք հանդիսանում են պարադոքսալ քննարկման տարեր բևեռները:

12:39 «Նորա համար չէին կարողանում հաւատալ» Սա ԱՆԿԱՏԱՐ ՉԵԶՈՔ (deponent) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ և ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Նրանք անկարող էին շարունակել հավատքով Հիսուսի հետ ունեցած հարաբերություններում: Նրա հրաշքները գրավել էր նրանց, բայց նրանց չտարավ փրկարար հավատքի / վստահության Հիսուսին որպես Մեսիա: Հովհաննեսի «հավատալը» ունի մակարդակներ: Բոլորը չեն հասնելու փրկության: Տես նշումներ 8: 31-59:

▪ «Որ Եսայիան դարձեալ ասում է» Եսայիա 6:10; 43: 8 վերաբերվում է հրեաների սրտերի կարծրությանը կապված Աստծո պատգամի հետ Եսայիի միջոցով (տես Երեմ 5:21; Եզեկ. 12: 2; Բ Օրին. 29: 2-4):

12:40 «սիրտ» ստորև Տես Հատուկ Թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍԻՐՏԸ

Հունարեն *kardia* տերմինը օգտագործվում է Սեպտուագինդում և Նոր Կտակարանում, որը անդրադարձնում է եբրայերեն *leb* տերմինը (BDB 523): Այն օգտագործվում է մի քանի ձևերով (հմմտ. Bauer, Arndt, Gingrich and Danker, *A Greek-English Lexicon*, էջ 403-404)

1. ֆիզիկական կյանքի կենտրոն, փոխաբերություն մարդու համար (հմմտ. Գործք 14:17; 2 Կորն. 3:2-3; Հակ. 5:5)
2. հոգևոր (բարոյական) կյանքի կենտրոն
ա. Աստված գիտի սիրտը (հմմտ. Դուկ. 16:15; Հն. 8:27; 1 Կորնթ. 14:25; 1 Թես. 2:4; Հայտ. 2:23)
բ. օգտագործվում է մարդու հոգևոր կյանքի համար (հմմտ. Մաթ. 13:18-19; 18:35; Հն. 6:17; 1 Տիմ. 1:5; 2 Տիմ. 2:22; 1 Պետ. 1:22)
3. մտային կյանքի կենտրոն (ինտելեկտ, բանականություն, հմմտ. Մաթ. 13:15; 24:48; Գործք 7:23; 16:14; 28:27; Հն. 1:21; 10:6; 16:18; 2 Կորնթ. 4:6; Եփես. 1:18; 4:18; Հակ. 1:26; 2 Պետ. 1:19; Հայտ. 18:7; սիրտը մտքի հոմանիշն է 2 Կորնթ. 3:14-15 և Փիլ. 4:7 համարներում)
4. կամքի, ցանկության կենտրոն (հմմտ. Գործք 5:4; 11:23; 1 Կորնթ. 4:5; 7:37; 2 Կորնթ. 9:7)
5. զգացմունքների, էմոցիաների կենտրոն (հմմտ. Մաթ. 5:28; Գործք 2:26, 37; 7:54; 21:13; Հն. 1:24; 2 Կորնթ. 2:4; 7:3; Եփես. 6:22; Փիլ. 1:7)
6. Հոգու գործունեության միակ վայրը (հմմտ. Հն. 5:5; 2 Կորնթ. 1:22; Գաղ. 4:6, (Քրիստոսը մեր սրտերում, Եփես. 3:17))
7. Սիրտը փոխաբերական ձև է, որը վերաբերում է ամբողջ անձին (հմմտ. Մաթ. 22:37, մեջբերված 2 Օրին. 6:5): Մտքերը, շարժառիթներն ու գործողությունները վերագրվում են սրտին, որոնք ամբողջությամբ հայտնում են թե ինչ տեսակի անհատ է նա: Հին Կտակարանը ունի տերմինների զարմանալի օգտագործում
ա. Ծննդ. 6:6; 8:21, «Աստված տրտմեց իր սրտում», նաև տես Ովս 11: 8-9
բ. 2 Օրին. 4:29; 6:5, «քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով»
գ. 2 Օրին. 10:16, «անթլպատ սիրտ» և Հն. 2:29
դ. Եզեկ. 18:31-32, «նոր սիրտ»
ե. Եզեկ. 36:26, «նոր սիրտ» հակառակը « քարե սիրտ»

12:41 «Եսայիան սա ասեց, երբոր նորա փառքը տեսաւ» Սա պնդում է, որ ՀԿ մարգարեները տեղեկացվել են Մեսիայի մասին (հմմտ Դուկ. 24:27): Տես ծանուցում «փառք» 1:14:

12:42 «Բայց եւ այնպէս իշխաններիցը շատերը հաւատացին նորան» Հիսուսի պատգամը պտուղ է բերում (տես հ. 11; Գործք 6: 7): Տես Հատուկ Թեմա 2:23

▪ «չէին դաւանում» Տես Հատուկ Թեմա: Խոստովանություն, դավանանք 9:22-23

▪ «որ ժողովարանիցը դուրս չ'գցուին» (հմմտ. 9:22; 16:2)

12:43 Դա նշանակում է, որ իսկական հավատքը կարող է լինել թույլ ու վախկոտ, նույնիսկ չհայտարարված: Հովհաննեսի Ավետարանը օգտագործում հավատալ (*pisteuō*) մի քանի առումներով, սկսած նախնական գրավչությունից դեպի էմոցիոնալ արձագանք, որն էլ տանում է դեպի ճշմարիտ փրկարար հավատքի:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 12:44-50

⁴⁴ Եւ Յիսուսը աղաղակում էր եւ ասում. Ինձ հաւատացողը չէ թէ ինձ է հաւատում, այլ ինձ ուղարկողին: ⁴⁵ Եւ ինձ տեսնողը, ինձ ուղարկողին է տեսնում: ⁴⁶ Ես լոյս եկայ աշխարհքը, որ ամեն ինձ հաւատացողը խաւարի մէջ չ'մնայ: ⁴⁷ Եւ եթէ մէկն իմ խօսքերին լսէ եւ չ'հաւատայ, ես չեմ դատիլ նորան. որովհետեւ ես չ'եկայ որ աշխարհքը դատեմ, այլ որ փրկեմ աշխարհքը: ⁴⁸ Ինձ անարգողը եւ իմ խօսքերը չ'ընդունողը ունի իրան դատողին. այն խօսքն որ ես խօսեցի, նա կ'դատէ նորան յետին օրը: ⁴⁹ Որովհետեւ ես իմ անձիցը չ'խօսեցի. Բայց ինձ ուղարկող Հայրը, նա պատուէր տուաւ ինձ, թէ ինչ պիտի ասեմ եւ ինչ պիտի խօսեմ: ⁵⁰ Եւ գիտեմ, որ նորա պատուիրանքը յաւիտենական կեանք է. Ուրեմն ինչ որ ես խօսում եմ, ինչպէս Հայրն ասեց ինձ՝ այնպէս եմ խօսում:

12:44 «Ինձ հաւատացողը չէ թէ ինձ է հաւատում, այլ ինձ ուղարկողին» Հավատքի նպատակն ի վերջո Հայրն է (տես I Կոր. 15: 25-27): Սա հերթական թեման է (տես Մատթ. 10:40; 5:24): Իմանալ կամ ճանաչել Որդուն նշանակում է իմանալ Հորը (տես I Հովհ. 5:10-12):

12:45 Ի՞նչ է Աստված: Տեսնել Հիսուսին նշանակում է տեսնել Աստծուն (տես 14: 7-10):

12:46 Աշխարհը խավարի մէջ է Ծննդոց 3 սկսած (հմմտ. 6: 5,11-12, 8:21; Սաղ. 14: 3; Ես. 53: 6; Հռոմ. 3: 9-23):

12:47 «Եւ եթէ մէկն իմ խօսքերին լսէ եւ չ'հաւատայ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը խոսում է պոտենցիալ գործողության մասին: Շարունակական հնազանդությունը նշան է մեր հավատքով շարունակվող անձնական հարաբերություններում: Վստահությունը (տես Հատուկ Թեման I Հովհ. 5:13) հիմնված է փոխված և փոփոխվող հնազանդ ու համբերատար կյանքի վրա (տես Հատուկ Թեմա 8:31, տես նաև Հակոբոս և I Հովհաննես գրքերը):

12:47-48 «որովհետեւ ես չ'եկայ որ աշխարհքը դատեմ, այլ որ փրկեմ աշխարհքը» Հիսուս եկավ հիմնականում փրկելու աշխարհը, բայց Իր գալստյան փաստը պարտադրում է մարդկանց որոշում կայացնել: Եթե նրանք մերժում են Նրան, նրանք դատում են իրենք իրենց (տես Հատուկ Թեմա 8:31, տես Հովհ. 3:17-21):

12:49-50 Հիսուսը խոսեց Աստծո իշխանությունով և ոչ թե Իր:

12:50

NASB, NKJV “Նրա պատվիրանը հավիտենական կյանք է”

NRSV, TEV,

NET “նրա պատվիրանը բերում է հավիտենական կյանք”

NJB “նրա պատվիրանները նշանակում են հավիտենական կյանք”

REB “նրա պատվիրանները հավիտենական կյանք են”

NIV “նրա պատվիրանը տանում է դեպի հավիտենական կյանք”

Net (footnote) “նրա պատվիրանի արդյունքը հավիտենական կյանք է”

Առաջին տարբերակը բառացի հունարեն տեքստն է: Մյուսները փորձում են մեկնաբանել դրա իմաստը:

NASB համարում է Հովհ. 6:68 որպես զուգահեռ հատված, իսկ Michael Magill’s *NT TransLine* Հովհ.17: 8-ը: Jerome Biblical Commentary (էջ 451) ունի Հովհ. 10:18 որպես զուգահեռ: Ակնհայտ է, որ արտահայտությունը երկիմաստ է:

Հովհաննեսում կա անկայունություն ԵԶԱԿԻ և ՀՈԳՆԱԿԻ «պատվիրանի» միջև՝ առանց էկզեգետիկ նշանակության:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՊԱՏՎԻՐԱՆ» ԲԱՌԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

1. Երբ օգտագործվում է Մովսիսական օրենքում, 8: 5
2. Հորից Հիսուսին^օ
 - ա. վերահսկողություն Իր փրկարար գոհաբերության վրա, Հովհ. 10:18; 12: 49-50; 14:31
 - բ. աշխարհը կիմանա Հիսուսի սերը դեպի Հայրը, Հովհ. 14:31
 - գ. Հիսուսը հնազանդվեց Հոր հրամանին, Հովհ. 15:10
3. Հիսուսից հավատացյալներին
 - ա. մնացեք Նրա սիրո մեջ, Հովհ. 14:15; 15:10
 - բ. սիրեցեք միմյանց, այնպես ինչպես Նա սիրեց, Հովհ. 13:34; 15: 12,17; I Հովհ. 2: 7-8; 3: 11,23; 4: 7,21; II Հովհ. 5
 - գ. պահեք Նրա պատվիրանը (այսինքն, բ. կետ), Հովհ. 14:15; 15: 10,14; I Հովհ. 2: 3,4; 3: 22,24; 5:1-3; II Հովհ.6
4. Հորից հավատացյալներին
 - ա. հավատալ Հիսուսին, I Հովհ. 3:23 (տես Հովհ. 6:29)
 - բ. սիրել միմյանց, I Հովհ. 3:23

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հատակ:

1. Ինչու՞ է Ղազարոսի քույր Մարիամը օծում Հիսուսի ոտքերը:
2. Ինչու՞ են Մատթեոսը, Մարկոսը և Հովհաննեսը մի փոքր տարբերվում այս դեպքի մասին իրենց ունեցած պատմություններով:
3. Ո՞րն էր Հիսուս հետ ամբոխի արմավենու ճյուղերով և սաղմոս 118 մեջբերումով հանդիպման նշանակությունը:
4. Ինչու՞ էր Հիսուսն այդքան հուզված հույների Իր հետ խոսելու խնդրանքից:
5. Ինչու՞ էր Հիսուսի հոգին այդքան խորապես տրտմած: (տես հ. 27)
6. Բացատրիր, թե ինչու՞ է Հովհաննեսն օգտագործում «հավատալ» բառը մի քանի իմաստներով:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 13

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS4	NKJV	NRSV	TEV	NJB
Աշակերտների ոտքերը լվանալը	Տերը դառնում է ծառա	Վերջին Ընթրիքը	Հիսուսը լվանում է Իր աշակերտների ոտքերը	Ոտքեր լվանալը
13:1-11	13:1-11	13:1-11	13:1 13:2-6 13:7 13:8ա 13:8բ 13:9 13:10-11	13:1 13:2-5 13:6-11
	Մենք նույնպես պետք է ծառայենք		13:10-11	
13:12-20	13:12-30	13:12-20	13:12-17 13:18-20	13:12-16 13:17-20
Հիսուսը կանխատեսում է Իր մատնությունը			Հիսուսը կանխատեսում է Իր մատնությունը	Հուդայի դավաճանության կանխագուշակումը
13:21-30		13:21-30	13:21 13:22-24 13:25 13:26-29 13:30	13:21-30
Նոր պատվիրան	Նոր պատվիրան		Նոր պատվիրան	Հրաժեշտի խոսքեր
13:31-35	13:31-35	13:31-35	13:31-35	13:31-35
Պետրոսի ուրացումը կանխատեսվում է	Հիսուսը կանխատեսում է Պետրոսի ուրացումը		Հիսուսը կանխատեսում է Պետրոսի ուրացումը	
13:36-38	13:36-38	13:36-38	13:36ա 13:36բ 13:37 13:38	13:36-38

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇՄԲՈՒՆՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆՈՒ 13:1-38

- Ա. Հովհաննեսի Ավետարանը եզրափակում է Հիսուսի նշանները Գլուխ 12-ի հետ: Գլուխ 13 սկսվում է վերջին չարչարանքի շարաթը:
- Բ. NASB Study Bible-ի ծանոթագրությունը հետաքրքիր մեկնաբանություն է անում «հունարեն *agapē* («սերը») գոյականի և *agapaō* («սիրել») բայի, որը հանդիպում է միայն ութ անգամ 1-12 գլխ. բայց 31 անգամ 13-17 գլխ.:
- Գ. Հովհաննեսը չի արձանագրել Տիրոջ ընթրիքը (Eucharist) այնպես ինչպես Սինոպտիկ Ավետարանները: Նա տալիս է միայն վերնատան այդ գիշերվա խոսակցությունը (13-17 գլխ. Հովհաննեսի Ավետարանի զգալի մասն է կազմում: Այն, հետևաբար, պետք է բացահայտի Հիսուսի անձն ու գործը գորավոր նոր ձևերով): Ոմանք այս բացթողումը համարում են միտումնավոր փորձ նսեմացնելու վաղ Եկեղեցու աճող շեշտադրությունը սակրամենտալիզմի վրա/sacramentalism: Հովհաննեսը երբեք չի մանրամասնում Հիսուսի մկրտությունը կամ Տիրոջ ընթրիքը:
- Դ. Հովհաննեսի 13 պատմական կոնտեքստը կարելի է տեսնել Ղուկաս 22:24: Աշակերտները դեռևս վիճում էին, թե ով է ամենամեծը:
- Ե. 13-17 գլուխների ֆիզիկական վայրը Վերնատունն է Երուսաղեմում (կամ, հնարավոր է 15-17գլխ. Գեթսեմանի ճանապարհին, տես 14:31), հնարավոր է, Հովհաննես Մարկոսի տունը, այն գիշերը, երբ Հիսուսը մատնվեց Հուդայի կողմից:
- Զ. Այստեղ կարծես թե Հիսուսի ոտնվայի արարողության երկու տարբեր նպատակներ կան
 1. հհ. 6-11 նախանշան, թե ինչ պետք է աներ մեզ համար խաչի վրա:
 2. հհ. 12-20 դաս խոնարհություն մասին (Ղուկաս 22:24-ի լույսի ներքո):

ԲԱՈՒ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 13:1-11
¹ Զատկի տոնիցն առաջ՝ Յիսուսը գիտաց, որ իր ժամը հասել է, որ այս աշխարհիցը փոխուի դեպի

Հայրը, իրաններին՝ որ այս աշխարհքումն են՝ սիրեց. Եւ մինչեւ վերջը սիրեց նորանց:² Եւ երբոր ընթրիք էր լինում, սատանան արդէն Յուդա Միմոնեան Իսկարիովտացու սրտի մէջ էր գցել, որ մատնէ նորան:³ Յիսուսը գիտենալով որ Հայրն ամեն բան իր ձեռն է տուել, եւ որ Աստուածանից դուրս եկաւ, եւ Աստուծոյ մօտ է գնում.⁴ Ընթրիքիցը վերկացաւ եւ հանդերձները վայր դրաւ, եւ մի ղենջակ առաւ իր մէջքը պատեց:⁵ Յետոյ ջուր ածեց կոնքը, եւ սկսեց աշակերտների ոտները լուանալ, եւ այն ղենջակովը սրբել որ մէջքին պատած էր:⁶ Եւ Միմոն Պետրոսի մօտ եկաւ. Եւ նա նորան ասեց. Տէր, դո՞ւ ես իմ ոտները լուանում:⁷ Յիսուսը պատասխանեց եւ ասեց նորան. Ինչ որ ես անում եմ, դու հիմա չես իմանում, բայց սորանից յետոյ կ'իմանաս:⁸ Պետրոսը նորան ասեց. Դու իմ ոտները չես լուանալ յաւիտեան. Յիսուսը պատասխանեց նորան. Եթէ քեզ չ'լուանամ, ինձ հետ բաժին չ'ունիս:⁹ Միմոն Պետրոսն ասեց նորան. Տէր, ոչ թէ իմ ոտները միայն, այլ իմ ձեռքերը եւ գլուխն էլ:¹⁰ Յիսուսը նորան ասեց. Լուացածին բան պէտք չէ, բացի ոտները լուանալ. Այլ բոլորովին մաքուր է. եւ դուք մաքուր էք, բայց ոչ թէ ամենքդ:¹¹ Որովհետեւ գիտէր իրան մատնիչին. Նորա համար ասեց, Ոչ թէ ամենքդ մաքուր էք:

13:1 «Զատկի տօնիցն առաջ» Հովհաննէսի և Սինոպտիկ Ավետարանները տարաձայնություն ունեն, արդյոք սա Զատկից մեկ օր առաջ էր, թե հենց Զատիկն էր: Նրանք երկուսն էլ կերակուրը ընդունում են հինգշաբթի, իսկ խաչելությունը՝ ուրբաթ (հմմտ 19:31, Մարկոս 15:43; Ղուկաս 23:54): Այս Զատկի ընթրիքը հիշեցում էր Իսրայելի ազատագրումը Եգիպտոսից (տես Ելից 12): Հովհաննէսը պնդում է, որ դա եղել է հերթական Զատիկից մեկ օր առաջ (տես 18:28, 19: 14,31,42):

Հնարավոր է, որ էսսենների համայնքը օգտագործվում էր ուրիշ օրացույց (այսինքն, արևային օրացույցը Հոբեյանների և Ենոփի գրքերից, որպես միջոց ցույց տալու, իրենց մերժումը ներկայիս քահանայության), որը Զատիկը դրել էր մի օր շուտ:

Jerome Biblical Commentary-ն ամփոփում է ընթացիկ գիտությունը (էջ 451) և ենթադրում, որ Հովհաննէսի «Մեկ օր առաջ»-ը ճիշտ է, և որ Սինոպտիկ Ավետարանները պնդում են Զատիկի ընթրիքի սիմվոլիկությունը: Մենք միշտ պետք է հիշենք, որ Ավետարանները արևմտյան չեն, պատճառ և հետևանք, ժամանակագրական պատմություններ: Պատմությունը գրվել է շատ ձևերով, ոչ թե ճիշտ կամ սխալ, ոչ ճշմարիտ կամ կեղծ: Պատմությունը անցյալի բացատրություն է՝ ծառայելու ընթացիկ խնդիրներին / կարիքներին / հեռանկարներին: Իրական խնդիրը ով/ինչու է գրել պատմությունը: Պատմական պատմաճքի և Ավետարանների ժանրի լավագույն քննարկումը տես, Gordon Fee and Douglas Stuart, *How To Read the Bible For All Its Worth*, էջ 89-126:

- **«Յիսուսը գիտաց, որ իր ժամը հասել է»** «Իմանալ» -ը ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾՄԱԿԱՆ ԴԵՐԲՄՅՔ (ինչպես հ. 3): Հիսուսը հասկացավ Իր ուրույն հարաբերությունը Հոր հետ առնվազն տասներկու տարեկանում (Ղուկաս 2: 41-51): Հույների գալը Իրեն տեսնելու համար 12: 20-23 ցույց տվեց Հիսուսին, որ Իր մահվան և փառավորվելու ժամը հասել էր (տես 2: 4, 7: 6,8,30; 8: 20, 12: 23,27; 17: 1):

- **«որ այս աշխարհքիցը փոխուի դէպի Հայրը»** Հովհաննէսի Ավետարանը շարունակում է ընդգծել ուղղահայաց դուալիզմը, վերը նշվածը ի տարբերություն ներքի (տես հ .3): Հիսուսն ուղարկվել էր (տես 8:42) Հոր կողմից և հիմա Նա կվերադառնա: Սինոպտիկ Ավետարանները պատկերում են Հիսուսին որպես երկու հրեական ժամանակաշրջանների հորիզոնական դուալիզմ ուսուցանող, Աստծո Թագավորության արդեն բայց ոչ դեռ լարվածությունը:

Կան բազմաթիվ հարցեր Ավետարանների մասին, որ ժամանակակից ընթերցողները պետք է ուղղեն, բայց երբ ամեն ինչ ասվել ու արվել է այս սուրբ գրվածքները բացահայտում են հետևողական աստվածաշնչյան աշխարհայացք:

1. կա մեկ սուրբ Աստված

2. Նրա հատուկ արարչագործությունը՝ մարդկությունը ընկավ մեղքի մեջ և ապստամբությունը
3. Աստված ուղարկել է մարմնացած Փրկչին (այսինքն, Մեսիան)
4. մարդկությունը պետք է արձագանքի հավատքով, ապաշխարությամբ, հնազանդությամբ և հարսնությամբ
5. կա անձնական չարի ուժ ընդդեմ Աստծոն և Նրա կամքին
6. բոլոր գիտակից ստեղծագործությունը Աստծուն հաշիվ է տալու իրենց կյանքերի համար «Մեկնել, հեռանալ» (*metabainō*) բայը ունի իմաստ Հովհաննեսի գրվածքներում՝ անցում ընկած ֆիզիկական գոյությունից (այսինքն, հին մեղքի և ապստամբության վիճակից) նոր Հոգու և հավիտենական կյանքի մեջ (հմմտ. 5:24; 13: 1; I Հովհ. 3:14; բացի 7: 3):

▪ **«իրանների...սիրեց»** Այս հունարեն արտահայտությունը օգտագործվում է եգիպտական պապիրուսիում (Moulton, Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*) համար «նրա մոտ» (հմմտ. Ղուկ. 8: 19-21):

▪ **«որ այս աշխարհքումն են»** Հովհաննեսը օգտագործում է աշխարհը (*kosmos*) տերմինը մի քանի տարբեր իմաստներով:

1. Այս մոլորակը (տես 1:10, 11: 9; 16:21, 17: 5,11,24; 21:25)
2. Մարդ արարածը (տես 3:16; 7: 4; 11:27; 12:19; 14:22; 18: 20,37)
3. ապստամբ մարդկությունը (տես 1: 10,29; 3: 16-21; 4:42; 6:33; 7: 7; 9:39; 12:31; 15:18; 17:25)

Տես Հատուկ Թեմա: *Kosmos*-ի օգտագործումն ըստ Պողոսի 14:17:

▪ **«Եւ մինչեւ վերջը սիրեց նորանց»** Սա հունարեն «*telos*» բառն է, որը նշանակում է իրականացված նպատակ: Սա վերաբերում է խաչի վրա մարդկության համար Հիսուսի կատարած փրկագնմանը: Այս նույն բառի ձևը Հիսուսի վերջին խոսքն էր խաչի վրայից (տես 19:30), «Կատարված է», որը մենք սովորում ենք եգիպտական պապիրուսներից, որոնք ունեցել են «վճարվել է ամբողջությամբ» իմաստը:

13:2 «Եւ երբոր ընթրիք էր լինում» Կա հունարեն ձեռագիր տարբերակ այս մտքի վերաբերյալ: Տարբերակը հունարեն բառի մեջ ներառում է ընդամենը մեկ տառ:

1. *ginomenou*, ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅ (այսինքն, ճաշի ժամանակ), MSS Ն, B, L, W
2. *genomenou*, ԱՕՐԻՍ ԴԵՐԲԱՅ (այսինքն, ճաշից հետո), MSS P⁶⁶, Ն², A, D

UBS⁴ տալիս է տարբերակ # 1 «B» վարկանիշ (գրեթե):

Սա հնարավոր է նշանակում է

1. ընթրիքից հետո
2. առաջին Օրհնության բաժակից հետո, երբ ընթացակարգը պահանջում է ձեռքեր լվանալը
3. երրորդ Օրհնության բաժակից հետո

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԶԱՏԿԻ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՈՒՄ ՀՈՒԴԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ

- Ա. Աղոթք
- Բ. Գինու գավաթ
- Գ. Ձեռքեր լվանալ տանտիրոջ կողմից և թասը փոխանցել մյուսներին
- Դ. Դառը դեղաբույսերով ստուսի մեջ թաթախել
- Ե. Գառը և հիմնական կերակուրը
- Զ. Աղոթք և երկրորդ դառը դեղաբույսերով ստուսի մեջ թաթախել
- Է. Երկրորդ գինու բաժակը հարց ու պատասխանի հետ երեխաների համար (տես Ելից 12: 26-27)

- Ը. Երգել 113-114 Ալեյուիաների Մաղմոսները և աղոթք
- Թ. Արարողության տերը պատառը է անում յուրաքանչյուրի համար՝ իր ձեռքերը լվանալուց հետո
- Ճ. Բոլորը ուտում են մինչև կշտանալը; ավարտում մի կտոր գառան մտով
- Ի. Երբորդ գինու բաժակը ձեռքերը լվանալուց հետո
- Լ. Երգել 115-118 Ալեյուիաների Մաղմոսները
- Խ. Չորրորդ գինու բաժակը, որը մատնանշում է Թագավորության գալուստը

Շատերը կարծում են, որ Տիրոջ ընթրիքի կառույցը տեղի է ունեցել «Բ»:

▪ **«սասանան արդեն Յուդա Միսոնեան Իսկարիովաացու սրտի մեջ էր գցել»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Հիսուսը սկզբից գիտեր Հուդայի մասին (տես 6:70): Չարը (տես Հատուկ Թեմա 12:31) փորձել էր Հուդային երկար ժամանակ է, բայց հ. 27-ում չարը նրան լիակատար վերահսկողության տակ առավ: Տես Հատուկ Թեմա: Միրտ 12:40: Տես ամբողջական ծանուցում Հուդայի մասին 18: 1

13:3 «Յիսուսը գիտենալով որ Հայրն ամեն բան իր ձեռն է տուել» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, ինչպես հ. 1, որին հաջորդում է ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սա Հիսուսի ցնցող հայտարարություններից մեկն է Իր ինքնափոխըմբռնման և իշխանության մասին (հմմտ. 3:35; 17: 2; Մատթ. 28:18): ԱՕՐԻՍ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԸ կարևոր է: Հայրը տվեց Հիսուսին «ամեն բան» մինչև խաչելությունը: Դրանք չտրվեցին բացառապես որպես պարգևատրում Իր հնազանդության համար, այլ Իր Ով լինելու համար: Նա գիտեր, թե Ով էր և լվաց նրանց ոտքերը, ովքեր վիճում էին, թե իրենցից ով էր մեծը:

- **«Աստուածանից դուրս եկալ»** Սա 3հ-ում նշված երեք նյութերից երկրորդն էր, որ Հիսուսը գիտեր,
 1. Հայրը ամեն բան տվել է Իր ձեռքը
 2. Նա եկել էր Աստծուց
 3. Նա վերադառնում էր Աստծո մոտ (հմմտ. 7:33, 14: 12,28; 16: 5,10,17:28, 20:17)

Վերջին երկուսը վերը նշվածի մասն են ի տարբերություն դուալիզմի, որն այնքան տարածված է Հովհաննեսի Ավետարանում:

Նյութի # 2 եզակի արտահայտություն է Հովհաննեսի Ավետարանում (հմմտ. 8:42, 13: 3; 16: 28,30; 17: 8): Այն ունի թե ծագման և թե տեղի եզրակացություն (այսինքն, Աստված երկնքից):

13:4 «Ընթրիքիցը վերկացալ» Հիշեք, որ նրանք նստել էին հենվելով իրենց ձախ արմունկների վրա, իրենց ոտքերը հետև տարածած, ոչ թե աթոռներին նստած:

▪ **«հանդերձները վայր դրալ»** ՀՈԳՆԱԿԻՆ վերաբերվում է Հիսուսի վերնահագուստին (հմմտ. 19:23; Գործք 8:16): Հետաքրքիրն այն է, որ այս նույն ԲԱՅԸ օգտագործվում է 10: 11,15,17,18-ում Հիսուսը դրեց Իր կյանքը (տես հ. 37): Սա կարող է լինել Հովհաննեսի մեկ այլ երկակի մտքերից: Հավանական է, որ այդ ոտնվան ավելին էր, քան պարզապես խոնարհության մասին առարկայական դասը (տես հհ. 6-10):

13:5 «աշակերտների ոտները լուանալ» Այս հունարեն բառն օգտագործվում էր «մարմնի միայն մի մասի լվանալուն»: 10հ -ի բառը օգտագործվում է ամբողջ լոզանքի համար: Ոտք լվանալը ծառայի պարտականությունն էր: Նույնիսկ ռաբբիները չէին ակնկալում դա իրենց աշակերտներից: Հիսուսը, գիտենալով Իր սեփական Աստվածությունը, պատրաստ էր լուանալու այդ նախանձահույզ և փառասեր աշակերտների ոտքերը (նույնիսկ Հուդայի):

13:6 Պետրոսի հարցը հռետորական էր՝ մերժելու համար Հիսուսի ժեստը: Պետրոսը հաճախ կարծում էր, որ գիտեր, թե Հիսուսը ինչ պետք է և չպետք է անի (տես Մատթ. 16:22):

13:7 Առաքյալները, որոնք ապրում էին Հիսուսի հետ, միշտ չէ, որ հասկանում էին Նրա գործողություններն ու ուսմունքները (տես 2:22; 10:6, 12:16, 14:26; 16:18): Այս թյուրիմացությունը միջոց է ուղղահայաց դուալիզմը արտահայտելու համար:

13:8 «Դու իմ ոտները չես լուանալ յախտեան» Սա ուժեղ ԿՐԿՆԱԿԻ ԲԱՅԱՍԱԿԱՆ է, որը նշանակում է «երբեք ու երբեք ցանկացած հանգամանքներում»: «Երբեք» տես Հատուկ Թեմա 6:58.

▪ «Եթե քեզ չ'լուանամ, ինձ հետ բաժին չ'ունիս» Սա ԵՐԲՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է: Այս համարը նշանակում է, որ այստեղ ավելին էր կատարվում, քան զուտ գործնական առարկայական դաս: 6-10hh-ում, կարծես թե վերաբերվում է խաչի վրա մեղքերի թողության Հիսուսի կատարած գործին:

Երկրորդ արտահայտությունը կարող է արտացոլել է ՀԿ իդիոմա կապված ժառանգության հետ (տես 2 Օր. 12:12; II Թագ. 20: 1, III Թագ. 12:12). Սա շատ ուժեղ բացառության իդիոմա է:

13:9 Հունարեն ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿԸ «չ» (M) ցույց է տալիս անուղղակի ՀՐԱՄԱՅԱԿԱՆ «վկա»:

13:10 «Լուացածին բան պետք չէ» Հիսուսը փոխաբերություն է օգտագործում խոսելով փրկագնման մասին: Պետրոսը արդեն լվացվել է (փրկվել, տես 15: 3; Տիտոս 3: 5), բայց պետք է շարունակել ապաշխարել (տես I Հովհ. 1: 9) մտերիմ հարաբերությունը պահպանելու համար:

Մյուս կոնտեքստային տարբերակն այն է, որ Հիսուսը խոսում Հուդայի մատնության մասին (տես հհ. 11 & 18): Այնպես որ, լվացվելու փոխաբերությունը վերաբերվում է կամ (1) Պետրոսի մարմնին կամ էլ (2) առաքյալների խմբին:

▪ «դուք մաքուր էք, բայց ոչ թե ամենքդ» «Դուք»-ը ՀՈԳՆԱԿԻ է, հղում անելով աշակերտների ներքին շրջանակին, բացառությամբ Հուդայի (տես հհ. 11,18; 6:70):

«Մաքուր» վերաբերվում է Հիսուսի պատգամին, որը նրանք ընդունել են (հմմտ. 15: 3): Նրանք «մաքուր» են, քանի որ նրանք հավատացել / վստահել / ընդունել են Նրան, ով մաքուր է՝ Հիսուսին: «Ոչ բոլորդ/ամենքդ» արտահայտության համար տես Հատուկ Թեմա: Ուրացություն Հովհաննես 6:64:

13:11 TEV և NET Աստվածաշնչերը այս համարը փակագծերի մեջ են դրել, մեկնաբանելով այն որպես հեղինակի բազմաթիվ խմբագրական մեկնաբանություններից մեկը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 13:12-20

¹² Եւ երբոր նորանց ոտները լուացաւ, իր հանդերձներն առաւ՝ եւ դարձեալ սեղան նստեց եւ նորանց ասեց. Գիտէ՞ք ես ինչ արի ձեզ: ¹³ Դուք ինձ կանչում էք Վարդապետ եւ Տէր, եւ լաւ էք ասում, որովհետեւ եմ: ¹⁴ Արդ եթէ ես Տէրս եւ Վարդապետս՝ ձեր ոտները լուացի, դուք էլ պետք է իրար ոտները լուանաք: ¹⁵ Որովհետեւ ես ձեզ օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզի արի, դուք էլ անէք: ¹⁶ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ծառան իր տերիցը մեծ չէ. Ոչ էլ ուղարկուածը մեծ է իրան ուղարկողիցը: ¹⁷ Եթէ այս գիտէք, երանելի էք՝ թէ որ այս անէք: ¹⁸ Ձեր բոլորիդ համար չեմ ասում. Ես գիտեմ նորանց, որ ընտրեցի. Բայց որ գրուածը կատարուի, թէ Նա որ ինձ հետ հաց էր ուտում, ինձ դէմ իրան կրունկը բարձրացրեց: ¹⁹ Հիմիկուց ասում եմ ձեզ լինելուց առաջ, որ երբոր լինի՝ հաւատաք թէ ես եմ: ²⁰ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Ով որ ընդունէ նորան, որ ես կ'ուղարկեմ, ինձ է ընդունում. Եւ ինձ ընդունողը ինձ ուղարկողին է ընդունում:

13:12-20 Ի տարբերություն հ. 6-10, այստեղ Հիսուսը նկարագրում է Իր արարքը որպես խոնարհության օրինակ: Առաքյալները վիճում էին, թե ով էր մեծը (տես Ղուկ. 22:24): Այս կոնտեքստում Հիսուսը ծառայի գործ է գործում և ապա բացատրում, թե ինչ է այն նշանակում և ինչպես պետք է դա կիրառել:

13:14 «Եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը, ենթադրվում է, որ ճշմարիտ է հեղինակային տեսանկյունից կամ իր նպատակների համար:

▪ **«Տերս եւ Վարդապետս»** Ուշադրություն դարձրեք ՈՐՈՇԻՉ ՀՈՂԻՆ հ. 13 և 14: Նաև նկատեք, որ անունները շրջված են: Նա խոսում է իշխանությունով: Նա հայտնում է Հորը և ակնկալում է հնազանդություն և նվիրվածություն: Ինչ Նա անում է, նրանք պետք է նմանակեն (հ. 15):

13:14-15 «դուք էլ պետք է իրար ոտները լուանաք» Արդյոք այս արտահայտությունը նշանակում է, որ խոնարհության այս գործողությունը կոչված է լինելու եկեղեցու երրորդ արարողակարգը: Շատ քրիստոնեական խմբեր ասել են ոչ, քանի որ

1. չկա որևէ արձանագրություն, որ դա արվել է որևէ եկեղեցու կողմից Գործք-ում
2. այն երբեք չի պաշտպանվում ՆԿ թղթերում
3. երբեք մասնավորապես չի ասվում, որ դա լինի շարունակական արարողակարգերում, ինչպիսիք են մկրտությունը (տես Մատթ. 28:19) և Տիրոջ ընթրիքը (հմմտ. I Կորնթ. 11: 17-34):

Սա չի նշանակում, որ դա կարող է լինել կարևոր երկրպագության իրադարձություն:

«Օրինակը», որ Հիսուսը տվեց նրանց ոչ միայն խոնարհություն էր, այլ նաև զոհաբերության ծառայություն (տես 15: 12-13): I Հովհ. 3:16 լավ է խոսում այդ մասին: Հիսուս սիրում է մինչև վերջ (տես հ. 1), նրանք նույնպես պետք է սիրեն մինչև վերջ (այսինքն, անձնագոհ կյանք, մեղքից հեռանալ):

13:16 «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ» Սա բառացիորեն «Ամեն, ամեն» է (ինչպես հ. 20): Սա ՀԿ տերմինի ձև է «հավատք» բառի համար (տես Ամբ. 2: 4): Հիսուսն էր միակը (ցանկացած հունական գրականության մեջ), որ երբևէ օգտագործել է այս բացատրությամբ: Այն սովորաբար ասվել է (1) համաձայնության կամ (2) միտքը կամ գործողությունը հաստատելու վերջում: Երբ օգտագործվում էր նախադասության սկզբում և կրկնվում, դա հեղինակության, ուշադրություն գրավելու միջոց էր: Տես Հատուկ Թեմա: Ամեն 1:51:

▪ **«Ծառան իր տերիցը մեծ չէ»** Սա ներածական արտահայտություն է՝ ճշմարտությունները փոխանցելու համար:

1. Հովհ. 13:16, ոչ էլ ուղարկվածը մեծ է իրեն ուղարկողիցը
2. Հովհ. 15:20
 - ա. եթե Ինձ հալածեցին, ձեզ էլ կհալածեն
 - բ. եթե Իմ խոսքը պահեցին, ձերն էլ կպահեն
3. Ղուկ. 6:40 (նման), աշակերտը վարդապետիցը բարձր չէ, եւ ո՛չ ծառան բարձր է իր տերիցը (տես Մատթ. 10:24):
4. Ղուկ. 22:27 (նման), բայց ես ձեր մեջ եմ իբրև սպասավոր

13:17 «Եթե այս գիտեք, երանելի էք՝ թե որ այս անեք» Առաջին «եթե» - ն ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, ենթադրվում է, որ ճշմարիտ է հեղինակային տեսանկյունից: Երկրորդ «եթե»-ն այս համարում ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Եթե գիտենք, ուրեմն մենք պետք է անենք (տես Մատթ. 7: 24-27; Ղուկաս 6: 46-49; Հռոմ. 2:13; Հակ. 1: 22-25; 4:11). Իմացությունը

նպատակը չէ, այլ Քրիստոսանման կյանքը: Սա արտացոլում է եբրայերեն *shema* ԲԱՅՑ «Լսիր, որ անես» (տես 2 Օրենք 6: 4):

13:18 «Բայց որ գրուածը կատարուի» Սա վերաբերվում է Հուդային: Սա նախասահմանության և մարդու ազատ կամքի հատման խորհուրդն է:

Հիսուսը և իր աշակերտները հավատացին Սուրբ Գրքի հավաստիությանը: Եթե ասվել է, ուրեմն պետք է վստահել (տես Մատթ. 5: 17-19): Մի քանի անգամ Հովհաննէսը մեկնաբանություն է անում «որ Սուրբ Գիրքը կատարվի» (հմմտ. 12:14; 13:18; 15:25, 17:12, 19: 24,36): Հաճախ ՀԿ տեքստը լիովին չի հասկացվում, մինչև որ դա տեսնում ենք Քրիստոսի կյանքում իրականացված (օր. տիպաբանություն, հմմտ. Ովս. 11: 1) կամ ՆԿ իրադարձություն Բազմիցս կատարված (այսինքն, Ես. 7:14 կամ Դան. 9:27 ; 11:31, 12:11):

▪ **«ինձ դէմ իրան կրունկը բարձրացրեց»** Սա մեջբերում է Սաղմոս 41: 9: Արևելյան սովորության համաձայն միասին ուտելը բարեկամության և ուխտի նշան էր, որն էլ մեծացնում է Հուդայի հանցանքը: Մերձավոր Արևելքում ոտքի ներքևի հատվածը ուրիշին ցույց տալը արհամարհանքի նշան էր:

3:19 Այս համարը ցույց է տալիս Հիսուսի հրաշքների, նշանների և կանխատեսումների նպատակը (տես 20:31): Հովհաննէսի Ավետարանում հավատքը աճող և շարունակական փորձառություն է: Հիսուսը շարունակաբար զարգացնում է Առաքյալների վստահությունը / հավատքը: Տես Հատուկ Թեմա 9: 7:

Հիսուսը զարգացնում է նրանց հավատքը

1. Իր խոսքերով
2. Իր գործերով
3. Իր կանխատեսությամբ

Հիսուսը բերեց Աստծո հետ ուղիղ լինելու արմատական «նոր» ճանապարհ: Այն կտրեց այս հրեական ավանդույթների և հավատալիքների կապը:

1. Նա էր, ոչ թե Մովսէսը, ուշադրության կենտրոնում
2. շնորհքը, այլ ոչ թե գործը

▪ **«թէ ես եմ»** Սա Աստծո անուն է «ԵՀՈՎԱ», որը կազմված է եբրայերեն «լինել» ԲԱՅ-ից (հմմտ. «Ես եմ» Ելից 3:14): Հիսուսը հստակ պնդում է Իր խոստացված Մեսիա լինելը աստվածային իմաստներով այստեղ (տես 4:26; 8: 24,28,58; 13:19 և 18: 5,6,8; նաև Մատթ. 24: 5; Մարկոս 13: 6; Ղուկաս 21: 8):

Տես Հատուկ Թեմա: Աստծո Անունները 6:20:

13:20 Սովորաբար Հովհաննէսն օգտագործում է «հավատալ» (*pisteuō*), «հավատալ մեկին» (*pisteuōeis*) կամ «հավատալ, որ» (*pisteuōhoti*) տերմինը՝ քրիստոնյաներին բնութագրելու համար, (տես Հատուկ Թեմա: Հովհաննէսի օգտագործումը «Հավատալ» բառի 2: 23), բայց նա նաև օգտագործում է այլ տերմիններ, ինչպիսիք են «ընդունել» կամ «ողջունել» (հմմտ. 1:12; 5:43; 13:20): Ավետարանը թե՛ անձի և թե՛ այդ անձի մասին՝ աստվածաշնչյան ճշմարտությունների ընդունումն է, ինչպես նաև այդ մարդուն նմանվելով ապրելու կյանք:

▪ **«Ով որ ընդունէ նորան, որ ես կ'ուղարկեմ, ինձ է ընդունում»** Ինչպիսի հզոր իշխանություն լիազորվեց Հիսուսի աշակերտներին: Այն կարող է գործել մի քանի մակարդակներով.

1. Տասներկուսի (Ղուկ. 10:16) և Յոթանասուներկուսի (Մատթ. 10:40) միսիոներական ճամփորդությունները

2. Եկեղեցու վկայությունը (տես 17:20)

Հիսուսի մասին պատգամը ունի կյանք փոխող գորություն, անկախ նրանից թե ով է հոչակում այն: Իշխանությունը պատգամի մեջ է (այսինքն, ավետարանի), ոչ թե երկրային պատգամի:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 13:21-30

²¹ Յիսուսն այս ասելով տրտմեց հոգովը, եւ վկայեց եւ ասեց. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ Ձեզանից մէկը կ'մատնէ ինձ: ²² Աշակերտներն էլ իրար մտիկ էին տալիս տարակուսած, թէ ո՞ւմ համար է ասում: ²³ Եւ նորա աշակերտներից մէկը Յիսուսի գոգին նստած էր, որին Յիսուսը սիրում էր: ²⁴ Միմօն Պետրոսը նորան ակնարկեց որ հարցնէ թէ նա ո՞վ է, որի համար ասում է: ²⁵ Եւ նա Յիսուսի լանջքովն ընկած, ասեց նորան. Տէր, նա ո՞վ է: ²⁶ Յիսուսը պատասխանեց. Նա է՝ որ ես պատառը թաց կ'անեմ եւ նորան կ'տամ. Եւ պատառը թաց արաւ եւ տուաւ Յուդա Միմօնեան Իսկարիովտացուն: ²⁷ Եւ պատառիցը յետոյ սաստանան մտաւ նորա մէջ. Եւ Յիսուսը նորան ասեց. Ինչ որ անում ես՝ շուտով արա: ²⁸ Եւ այս բանը սեղան նստողներից ոչ ով չ'իմացաւ, թէ ի՞նչ պատճառով ասեց նորան: ²⁹ Որովհետեւ ոմանք կարծում էին, թէ որովհետեւ Յուդան քսակն ունէր, Յիսուսը նորան ասեց, թէ առ՝ ինչ որ այս տօնին պէտք է մեզ. Կամ թէ աղքատներին բան տայ: ³⁰ Եւ նա երբոր պատառն առաւ, շուտով դուրս գնաց, եւ գիշեր էր:

13:21 «տրտմեց հոգովը» Հուդայի դավաճանությունն իրապես տրտմեցրեց Հիսուսին (Հիսուսի նույն բառն օգտագործված է 12:27): Հիսուսն ընտրեց Հուդային նրա հոգևոր ներուժի համար, սակայն այն երբեք չիրականացավ (տես հ. 18):

- «Ճշմարիտ ճշմարիտ» Տես ծանուցում 1:51.

13:22 Սա զարմանալի համար է: Ներքին շրջանակի աշակերտները վախենում էին, որ կանխորոշված պլանը կարող էր նրանց մատնիչ դարձնել (տես Մարկոս 14:19). Սա դետերմինիզմի/ determinism խնդիր է: Աստծո գործողությունները չեն ոտնահարում մարդու ազատ կամքը, այլ ընդգծում է և ավարտին հասցնում դրա հետևանքները:

13:23 «որին Յիսուսը սիրում էր» Կարծես թե սա վերաբերվում է հենց Հովհաննեսին (հմմտ. 13: 23,25; 19: 26-27,34-35; 20: 2-5,8; 21: 7,20-24): Գլուխ 19:26 հաստատում է դա: Հովհաննեսի անունը երբեք չի հայտնվում այս Ավետարանում: Արդյո՞ք Հիսուսն ուներ սիրելիներ: Դե, Նա ուներ ներքին շրջանակ (Պետրոս, Հակոբոս և Հովհաննես) և հատուկ ընտանիք (Ղազարոս, Մարիամ, Մարթա):

13:25 Այս կոնտեքստը արտացոլում է տիպիկ ուտելու արարողակարգը առաջին դարում Պաղեստինում: Աշակերտները պէտք է պառկեին ցածր, նալի ձև ունեցող սեղանին, հենվելով իրենց ձախ արմունկի վրա ոտքերը հետև ուղղված, ուտելով աջ ձեռքով: Հովհաննեսը Հիսուսի աջ կողմում էր իսկ Հուդան՝ ձախ (պատվավոր տեղ): Պատճառն այն է, որ նստելու կարգը չի տրված Մուրթ Գրքում: Հովհաննեսը հետ է թեքվում և Հիսուսին հարց տալիս:

13:26 «Նա է՝ որ ես պատառը թաց կ'անեմ եւ նորան կ'տամ» Սա պատվի նշան էր (տես Հուդա 2:14): Հուդան նստել էր Հիսուսի ձախ կողմում, որը նույնպես պատվավոր տեղ էր: Հիսուսը դեռ փորձում էր հասնել Հուդային:

Պատառը դառն խոտերով և սոռուով ուտեստ էր (տես Հատուկ Թեմա 13: 2): Մարկոսը զուգահեռ (14: 20) հաստատում է՝ ավելացնելով «ինձ հետ»: Սա սկանառեսի շփոթությունն է:

- «Իսկարիովտացուն» ստորև տես Հատուկ Թեմա և ծանուցումներ 6:71 և 18:2.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԻՄԿԱՐԻՈՎՍԱՑԻ

Հուդան լսել էր, տեսել և շփվել Տեր Հիսուսի հետ մոտ տարածությունից մի քանի տարի, բայց ըստ երևույթին, նա դեռ չունեի անձնական փոխհարաբերություն Նրա հետ հավատքով (տես Մատթ. 7: 21-23): Պետրոսը ենթարկվում է նույն ուժգնության փորձության ինչպես Հուդան, բայց կտրուկ տարբեր արդյունքներով: Շատ քննարկումներ են տեղի ունեցել Հուդայի դավաճանության շուրջ:

1. դա հիմնականում դրամի հետ էր կապված (տես Հովհ. 12: 6)
2. դա հիմնականում քաղաքական էր (տես William Klassen, *Judas Betrayer or Friend of Jesus?*)
3. դա հոգևոր էր (տես Հովհ. 13:27)

Սատանայական ազդեցության կամ դիվահարության թեմաներով կան մի քանի լավ աղբյուրներ (հերթականությամբ թվարկվածին վստահում եմ):

1. Merrill F. Unger, *Biblical Demonology, Demons in the World Today*
2. Clinton E. Arnold, *Three Crucial Questions About Spiritual Warfare*
3. Kurt Koch, *Christian Counseling and Occultism, Demonology Past and Present*
4. C. Fred Dickason, *Demon Possession and the Christian*
5. John P. Newport, *Demons, Demons, Demons*
6. John Warwick Montgomery, *Principalities and Powers*

Զգուշացեք մշակութային առասպելներից և սնահավատությունից: Սատանան ազդում է Պետրոսի վրա Մատթ. 16:23 փորձելու Հիսուսին հենց նույն կերպով՝ Նրա փոխանորդ մահով: Սատանան հետևողական է: Նա փորձում է հնարավոր կերպերով կանգնեցնել Հիսուսին՝ մեզ համար խաչվելուց:

1. Հիսուսի փորձությունը, Ղուկաս 4
2. օգտագործում է Պետրոսին
3. օգտագործում է Հուդային և աստանը

Հիսուսը նույնիսկ նկարագրում է Հուդային որպես սատանա Հովհ. 6:70. Աստվածաշունչը չի քննարկում դիվահարության և ազդեցության թեման կապված հավատացյալների հետ: Սակայն հավատացյալները ակնհայտորեն կարող են ենթարկվել դրան անձնական ընտրության և անձնական չարի պատճառով:

Այս բառի ստուգաբանությունը որոշ չափով անհասկանալի է, սակայն կան մի քանի հնարավոր տարբերակներ:

1. *Kerioth*, քաղաք Հուդայում (տես Հեսու 15:25)
2. *Kartan*, քաղաք Գալիլեայում (տես Հեսու 21:32):
3. *Karōides*, արմավենու պուրակ Երուսաղեմում կամ Երիթրովում
4. *scortea*, զոգնոց կամ կաշվե պայուսակ (տես Հովհ. 13:29).
5. *ascara*, խեղդել (եբրայերեն) Մատթ. 27: 5
6. մարդասպանի դանակ (հունարեն), նշանակում է, որ նա Սիմոն նման եղել է Նախանձահուզ (տես Ղուկաս 6:15).

13:27 «սատանան մտաւ նորա մէջ» Հովհաննէսի Ավետարանում միայն մեկ անգամ է օգտագործված «Սատանա» տերմինը: Եբրայերեն սա նշանակում է «հակառակորդ» (տես Ղուկաս 22:3 և Հովհ. 13:2): Տես Հատուկ Թեմա 12:31. Արդյո՞ք Հուդան պատասխանատու չէ, քանի որ Սատանան մտավ նրա մեջ: Աստվածաշնչում կա լարվածություն հոգևոր աշխարհի գործողությունների (Աստված խստացրեց փարավոնի սիրտը) և մարդկային պատասխանատվության ֆիզիկական հարթության միջև: Անշուշտ մարդիկ այնքան էլ ազատ չեն իրենց ընտրության մեջ, ինչպես իրենք են կարծում: Բոլորս պայմանավորված ենք պատմականորեն, փորձառությամբ և գենետիկորեն: Ֆիզիկական որոշիչներին ավելանում է հոգևոր աշխարհը (Աստված, Հոգի, հրեշտակներ, Սատանա և դևեր): Սա խորհուրդ է: Սակայն, մարդիկ ռոբոտներ չեն, մենք պատասխանատու ենք մեր գործողությունների, ընտրության և դրանց հետևանքների համար: Հուդան գործեց: Նա չի գործել միայնակ: Բայց նա

բարոյապես պատասխանատու էր իր արարքների համար: Հուդայի դավաճանությունը կանխատեսված էր (հ. 18): Սատանան հրահրողն էր (տես Հատուկ Թեմա: Անձնական Չարը 12:31): Ցավալի է, որ Հուդան երբեք լիովին «չճանաչեց» կամ չվստահեց Հիսուսին:

13:29 «Յուդան քսակն ունէր» Հուդան հավաքված գումարի պատասխանատուն էր (տես 12: 6): Տես ամբողջական ծանուցումը 18:1

13:30 «գիշեր էր» Արդյոք սա ժամանակ տարր է թե՞ հոգևոր գնահատում: Հովհաննէսը հաճախ է օգտագործում այսպիսի երկիմաստ արտահայտություններ, որոնք կարելի է հասկանալ մի քանի ձևով (օր. Նիկողեմոսը, տես 3: 2; 19:39):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 13:31-35

³¹ Եւ երբոր դուրս գնաց, Յիսուսն ասեց. Հիմա մարդի Որդին փառաւորուեցաւ. Եւ Աստուած նորանում փառաւորուեցաւ: ³² Եթէ Աստուած նորանում փառաւորուեցաւ, Աստուած էլ նորան կ'փառաւորէ իր անձումը. եւ շուտով կ'փառաւորէ նորան: ³³ Որդեակք, տակաւին մի քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ. Ինձ կ'որոնէք, եւ ինչպէս Հրէաներին ասեցի, թէ Որտեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող գալ. Եւ հիմա էլ ձեզ եմ ասում: ³⁴ Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. Ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք: ³⁵ Մորանով կ'գիտենան ամենքը թէ իմ աշակերտներն էք, եթէ իրար վերայ սէր ունենաք:

13: 31-38 Այս համարները մաս են կազմում աշակերտների կողմից տրված մի շարք հարցերի ավելի մեծ կոնտեքստը (տես 13:36, 14:5,8,22, 16:17-19) Վերնատան խոսակցության ժամանակ Տիրոջ ընթրիքի գիշերը: Ակնհայտ է, որ Հիսուսի հայտարարությունները հեռանալու մասին Առաքյալների մոտ բազմաթիվ հարցեր առաջացրեց Հիսուսի խոսքերի իրենց թյուրիմացության հիման վրա:

1. Պետրոս (13:36)
2. Թովմաս (14: 5)
3. Փիլիպոս (14: 8)
4. Հուդա (ոչ Իսկարիովտացին) (14:22)
5. Նրա աշակերտներից մի քանիսը (16: 17-19)

13:31 «մարդի Որդին» Սա էր Հիսուսի ընտրած ինքնակոչումը՝ հիմնվելով Եզեկ. 2: 1 և Դան. 7:13: Այն ենթադրում է մարդկային և աստվածային հատկանիշներ: Հիսուսն օգտագործեց դա քանի որ այդ տերմինը չօգտագործված էր ռաբունական հուդայականության մեջ, հետևաբար, այն չունէր ազգայնական կամ ռազմատենչ հետևանքներ և այն համատեղում էր Իր երկու բնությունները (տես I Հովհ. 4: 1-3):

13:32 Կա հունարեն ձեռագիրը տարբերակ այս համարում: Ամենաերկար տեքստը գտնվում է NASB, NKJV, NRSV, TEV և NJB: Դրան աջակցում են Տ^c, A, C², K և Textus Receptus ձեռագրերը: Դուրս է թողնված («Եթէ Աստուած նրանում փառաւորուեցաւ») MSS P⁶⁶, Տ^{*}, B, C^{*}, D, L, W և X: Դրանք, կարծես, ավելի լավ ձեռագրեր են: Բայց հնարավոր է, որ դպիրները շփոթվել են գուգահեռության պատճառով և պարզապես բաց են թողել առաջին արտահայտությունը:

▪ «**փառաւորուեցաւ**» Տերմինը օգտագործվում է չորս կամ հինգ անգամ հհ. 31 և 32; երկու կամ երեք անգամ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿՈՎ և երկու անգամ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿՈՎ: Այն վերաբերվում է փրկագնման Աստծո ծրագրին՝ Հիսուսի մահով և հարությանը (հմմտ. 7:39, 12: 16,23; 17: 1,5): Այստեղ խոսքը վերաբերվում է Հիսուսի կյանքի առաջիկա իրադարձություններին: Նրանք այնքան վստահ են հանդես գալիս, որ նրանք արտահայտվում են այնպես,կարծես թե դրանք անցած իրադարձություններ են (ԱՕՐԻՍՏՆԵՐ): Տես ծանուցում 1:14.

13:33 «Որդեակք» Հովհաննեսը, գրելով, որպես հին մարդ Եփեսոս քաղաքից կամ տարածքից, օգտագործում է այս նույն բառը անդրադառնալով իր ունկնդիրներին / ընթերցողներին I Հովհ. 2: 1,12,28; 3: 7,18; 4: 4; 5:21: Այստեղ, Հիսուսի փոխաբերությունը ևս մեկ միջոց է նույնացնելու Նրան Հոր հետ: Նա հայր է, եղբայր, Փրկիչ, ընկեր և Տեր: Կամ այլ կերպ ասած, Նա թե մշտագո Աստված է և թե մշտական ուղեկից:

- «տակալին մի քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ... եւ ինչպէս Հրեաներին ասեցի» Հիսուսն ասաց սա հրեա առաջնորդներին մի քանի ամիս շուտ (տես 7:33), այժմ նա ասում է Իր Առաքյալներին (տես 12:35, 14: 9, 16: 16-19): Հետևաբար, ակնհայտ է, որ ժամանակի տարրը երկիմաստ է:

- «Որտեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող գալ» Հրեա առաջնորդները չէին կարող գալ ընդհանրապես (հմտ. 7: 34,36; 8:21): Այն աշակերտները չէին լինի Իր հետ մինչև իրենց մահանալները: Մահը կամ հավիշտակությունը կմիավորի իր հետնորդներին Իր հետ (տես II Կորնթ. 5: 8; Ա Թեսաղ. 4: 13-18):

13:34 «Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք» «Որպեսզի իրար սիրեք» սա նոր պատվիրան չէր (տես Ղուկ. 19:18, «պատվիրան» տես Հատուկ Թեմա 12:50): Ինչն էր նոր, այն որ հավատացյալները պետք է սիրեին միմյանց, ինչպես Հիսուսը սիրեց նրանց (տես 15: 12,17; I Հովհ. 2: 7-8; 3: 11,16,23; 4: 7-8,10-12, 19-20; II Հովհ 5):

Ավետարանը մարդ է, որին պետք է ողջունել, ճշմարտությունների մարմինը, որոնց պետք է հավատալ և կյանք, որը պետք է ապրել (տես 14: 15,21,23; 15: 10,12; I Հովհ. 5: 3; II Հովհ. 5,6; Ղուկաս 6:46): Ավետարանը ընդունվել է, հավատացվել և կիրառվել: Այն կիրառվում է սիրով, կամ էլ չի կիրառվում:

Ինձ դուր է գալիս Bruce Corley-ի հայտարարությունը իր «Նոր Կտակարանի Աստվածաշնչյան Աստվածաբանության» հոդվածում հերմենևտիկայի *Foundations For Biblical Interpretation* գրքում «Քրիստոսի մարդիկ բնութագրվում են սիրո էթիկայով, որով շնորհքի «է-ություն»-ը կապվում է սիրո «պետք-ության» Հոգու գործի միջոցով (տես Գաղ. 5: 6,25; 6: 2; Հակ. 3: 17-18; Հովհ.13: 34-35; I Հովհ. 4: 7)» (էջ 562):

13:35 «Սորանով կ'գիտենան ամենքը թե իմ աշակերտներն էք» Սերը այն առանձնահատկություններից մեկն է, որը Մատանան չի կարող կեղծել: Հավատացյալները պետք է բնութագրվեն սիրով (տես I Հովհ. 3:14; 4: 7-21):

- «էթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Մեր գործողությունները մյուս քրիստոնյաների հանդեպ հաստատում է մեր հարաբերությունները Հիսուսի հետ (տես I Հովհ. 2: 9-11, 4: 20-21):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 13:36-38
³⁶ Միմօն Պետրոսը նորան ասեց. Տէր, ո՞ր ես գնում. Յիսուսը պատասխանեց նորան. Որ տեղ որ ես գնում եմ, դու հիմա չես կարող իմ ետեւից գալ. բայց յետոյ իմ ետեւից կ'գաս: ³⁷ Պետրոսը նորան ասեց. Տէր, ի՞նչու չեմ կարող հիմա քո ետեւից գալ. իմ անձը քեզ համար կ'դնեմ: ³⁸ Յիսուսը պատասխանեց նորան. Քո անձը կ'դնես ինձ համար. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ, որ հաւը դեռ չի խօսիլ, որ դու երեք անգամ կ'ուրանաս ինձ:

13:36 «Միմօն Պետրոսը նորան ասեց» Սա մի շարք հարցերից առաջինն է աշակերտների կողմից տրված Հիսուսի արտահայտություններին հհ. 31-35 (տես 13:36, 14: 5,8,22, 16: 17-19): Ես այնքան

ուրախ եմ, որ այդ աշակերտները տվեցին այս հարցերը և, որ Հովհաննեսը մտապահեց դրանք և արձանագրեց:

13:37 «Իմ անձը քեզ համար կ'դնեմ» Պետրոսը սա է նկատի ունեցել: Բայց դա ցույց է տալիս, թե որքան տկար է մեղավոր մարդկությունը և թե որքան նվիրված է մեր Տերը, որը դա իրականում արեց էլ:

13:38 «Ճշմարիտ ճշմարիտ» Տես ծանուցում 1:51.

▪ **«որ հաւր դեռ չի խօսիլ, որ դու երեք անգամ կ'ուրանաս ինձ»** Սա պետք է որ հռոմեական աքաղաղ լինէր: Հրեաները թույլ չեն տալիս կենդանիներին քաղաք, քանի որ դա սուրբ հող էր: Սա է պատճառը, որ շատ հարուստ մարդիկ ունեին այգիներ (որտեղ պետք էր պարարտանյութ) քաղաքի պատերից դուրս Ձիթենեաց լեռան վրա: Գեթսեմանի այգին այդպիսի այգիներից մեկն էր:

Հիսուսն օգտագործում է կանխատեսում՝ իրախուսելու Իր վրա ունեցած հավատքը: Նույնիսկ այսպիսի բացասական բանը հայտնում է Իր գիտելիքներն ու վերահսկողությունը հետագա միջոցառումների վրա (տես 18: 17-18, 25-27; Մատթ. 26: 31-35; Մարկ. 14: 27-31, Ղուկաս 22: 31-34):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ Հովհաննեսը չի արձանագրել Տիրոջ ընթրիքի փաստացի ծեսը:
2. Ինչու՞ է Հիսուսը լվանում աշակերտների ոտքերը: Արդյո՞ք մենք պետք է լվանանք միմյանց ոտքերը:
3. Ինչու՞ Հիսուսն ընտրեց Հուդային լինելու Իր աշակերտը:
4. Ինչպե՞ս կարող է անձն իմանալ, որ նա քրիստոնյա է:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 14

ԺԱՍՏՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսն է Հոր մոտ տանող ճանապարհը	Ճանապարհը, ճշմարտությունը և Կյանքը	Հավատացյալների կապը Փառավորյալ Քրիստոսի հետ	Հիսուսն է Հոր մոտ տանող ճանապարհը	Հրաժեշտի խոսքեր (13:31-14:31)
14:1-14	14:1-6	14:1-7	14:1-4 14:5 14:6-7	14:1-4 14:5-7
	Հայտնեց Հորը		14:6-7	
	14:7-11			
		14:8-14	14:8	14:8-21
	Պատասխանված աղոթք		14:9-14	
	14:12-14			
Հոգու խոստումը	Հիսուսը խոստանում է մեկ ուրիշ Օգնական		Սուրբ Հոգու խոստումը	
14:15-24	14:15-18	14:15-17	14:15-17	
	Հոր և Որդու բնակվելը	14:18-24	14:18-20	
	14:19-24		14:21	
			14:22	14:22-31
	Նրա Խաղաղության պարզելը		14:23-24	
14:25-31	14:25-31	14:25-31	14:25-26 14:27-31ա 14:31բ	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ՀՈՎՀԱՆՆԵՍ 14: 1-31 ՆԱԽԱԴՐՑԱԼՆԵՐԸ

Ա. Չպետք է գլուխների բաժանում լիներ Հովհաննես 13 մինչև 17 քանի որ սա մեկ գրական հատված է, Վերնատան երկխոսությունը Տիրոջ ընթրիքի զիշերը. Ակնհայտ է, որ Հիսուսի մտքերը հեռանալու մասին պետք է շատ հարցեր առաջացնեն աշակերտների մոտ: Այս կոնտեքստը կառուցված է մի շարք այսպիսի հարցերի վրա՝ հիմնվելով Հիսուսի խոսքերի Առաքյալների թյուրըմբռնման վրա

1. Պետրոս (13:36)
2. Թովմաս (14: 5)
3. Փիլիպոս (14: 8)
4. Հուդա (ոչ Բսկարիովտացին) (14:22)
5. Իր աշակերտներից ոմանք (16: 17-19)

Հիշեք, որ Հովհաննեսն օգտագործում է երկխոսություն՝ ճշմարտությունը փոխանցելու համար:

Բ. Այս հարցերը դեռևս օգնում են հավատացյալներին

1. Նրանք ցույց են տալիս, որ նույնիսկ Առաքյալները, ովքեր Հիսուսի հետ էին ֆիզիկապես միշտ չէ որ հասկացել են Նրան:
2. Հիսուսի առավել թանկարժեք և խորը խոսքերից որոշները ասվել են ի պատասխան այդ անկեղծ հարցերի թյուրըմբռնմանը:

Գ. Գլուխ 14-ը սկսվում է Հիսուսի քննարկում գալիք «օգնականի» մասին

1. Հիսուսի հղումները Սուրբ Հոգու մասին այս վերնատանը ուղղակիորեն կապված է (և սահմանափակվում) աշակերտների վախի և անհանգստության հետ՝ կապված Հիսուսի հեռանալու հետ (տես 13: 33,36):

Michael Magill, *New Testament TransLine* (էջ 355) ունի տրամաբանական ուրվագիծ կապված այդ մտավախություններին ուղղված Հիսուսի բովանդակային պատասխաններին.

- ա. «Դուք Ինձ հետ կլինեք մի օր, ուր ես եմ գնում», - հհ. 1-11
- բ. «Ձեզ համար լավ կլինի, որ ես գնամ», հհ. 12-17
- գ. «Ես կգամ ձեզ մոտ, որտեղ դուք եք և կհայտնեմ Ինձ ձեզ», հհ. 18-26
- դ. «Ես թողնում եմ ձեզ իմ խաղաղությունը», հհ. 27-31
2. Սուրբ Հոգու ծառայության այս քննարկումը սահմանափակվում է կենտրոնականով: Կան շատ կարևոր ասպեկտներ Նրա ծառայության մեջ, որ չեն քննարկվում այս կոնտեքստում:
3. Հոգու առաջադրանքը որպես
 - ա. ճշմարտությունը հայտնող և
 - բ. ընդգծված է անձնական մխիթարիչ լինելը

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 14:1-7
¹Ձեր սիրտերը թող չ'խռովին. Աստուծուն հաւատացեք, եւ ինձ հաւատացեք: ² Իմ Հօր տանը շատ բնակարաններ կան. Ապա թէ ոչ ես ձեզ կ'աւելի.Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: ³ Եւ եթէ գնամ եւ ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձեալ կ'գամ եւ ձեզ ինձ մօտ կ'առնեմ. որ ուր ես եմ, դուք էլ լինիք, ⁴Եւ որ տեղ որ ես գնում եմ՝ գիտեք, եւ ճանապարհը գիտեք: ⁵ Թովմասը նորան ասեց. Տէր, մենք չ'գիտենք թէ որ տեղ ես գնում. Եւ ի նշալէս կարող ենք ճանապարհը գիտենալ: ⁶ Յիսուսը նորան

ասեց. Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը. ոչ ով չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով: 7 Եթէ ինձ գիտենայիք, իմ Հօրն էլ կ'գիտենայիք. Եւ սորանից յետոյ կ'գիտենայք նորան եւ տեսայք նորան:

14:1 «Թող» Սա ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել արդեն իսկ ընթացքի մեջ եղող գործողությունը: «Մի թույլ տվեք, որ ձեր սրտերը խռովեն»: Հիսուսի մեկնաբանություններ հեռանալու մասին առաջացրել էր մեծ անհանգստություն:

- **«Ձեր սիրտերը»** Նկատեք ՀՈԳՆԱԿԻՆ: Հիսուսը խոսում էր բոլոր տասնմեկին: Եբրայերեն «սիրտ» բառի օգտագործումը ենթադրում է անձի ամբողջ միտքը, կամքը և զգացմունքները (տես 2 Օր.6:5; Մատթ. 22:37): Տես Հատուկ Թեմա 12:40.

- **«Աստուծուն հաւատացեք, եւ ինձ հաւատացեք»** Սրանք կամ երկու ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ են (NASB, REB) կամ երկու ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԱՆՆԵՐ կամ էլ երկուսի համադրություն (NKJV, NJB և NET Աստվածաշունչը ասում են, որ առաջինը ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է, իսկ երկրորդը՝ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Հավատքը շարունակական է և սովորույթ: Այս համարի քերականորեն հավասարակշռված կառուցվածքը ցույց է տալիս, որ Հիսուսը պնդում է հավասարությունը Աստծո հետ: Նաև հիշեք, որ սրանք հրեաներ էին, ովքեր ունեին մոնոթեիզմի (Մեկ Աստված) գաղափարը (տես Օր. 6:4-6) և դեռ ճանաչում էին Հիսուսի արած հայտարարության հետևանքները (տես Հատուկ Թեմա: Երրորդություն 14:26): Մի բան է հավատալ Գերագույն Էակի և բոլորովին այլ բան լինել քրիստոնյա: Այս արտահայտությունը կենտրոնանում է ոչ թե վարդապետական դավանանքի վրա, այլ Հիսուս Քրիստոսի անձի:

14:2 «Իմ Հօր տանը» «Տուն» - ը օգտագործվում է ՀԿ-ում Խորանի կամ Տաճարի համար (տես II Թագ. 7), սակայն այս կոնտեքստում ակնհայտորեն ենթադրում է Աստծո ընտանեկան բնակարանը երկնքում կամ բնակվելով Նրա հետ Իր տաճարում (տես Սաղ. 23:6, 27: 4-6):

- **NASB, NRSV** “բնակարաններ”
NKJV “բնակարաններ”
TEV “սենյակներ”
NJB “շատ տեղեր”

KJV թարգմանության մեջ «առանձնատներ» բառը խաբուսիկ է: Հունարեն տերմինը նշանակում է «Մշտական բնակության վայրեր» (տես 14:23) առանց ճոխության գաղափարի: Պատկերն այն է, որ Հոր տան մեջ բոլոր հավատացյալները պետք է ունեն իրենց սեփական սենյակները (տես TEV, NJB), շատ նման է գիշերօթիկ տանը, որտեղ բոլորը միասին են ուտում:

Հետաքրքիր է նաև, որ սա նույն հունարեն արմատից է ինչպես «մնալ», որը հանդիսանում է բանալի գաղափար (տես Հովհ. 15): Մեր մնալը Հոր հետ ավարտվում է Որդու մեջ մեր հաստատվելով:

- **«Թե»** Սա մասնակի ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է «հակասում իրականությանը»: Հասանելի են շատ սենյակներ: Այս արտահայտությունը դժվար է թարգմանել:

- **NASB, REB, NIV** “եթե դա այդպես չէր, ես կասեի ձեզ”

NKJV	“Եթե դա այդպես չէր, ես կասեի ձեզ”
TEV	“Ես չեի ասի, եթե դա այդպես չլիներ”
NJB, NET	“հակառակ դեպքում ես ձեզ կասեի”
Young’s literal translation	“և եթե ոչ, ես ձեզ կասեի”
New Berkley Version	“Եթե դա այդպես չէր, ես կասեի ձեզ”
Williams Translation	“Եթե չլիներ, ես կասեի ձեզ”

▪ **«Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու»** Սա չի նշանակում, որ պետք է ենթադրել այդ երկինքը ֆիզիկական իմաստով, որը պատրաստ չի եղել մինչ այդ, այլ Հիսուսի կյանքը, ուսմունքները և մահը թույլ է տալիս մեղավոր մարդկությանը մոտենալ ու բնակվել սուրբ Աստծո հետ: Հիսուսը գնում է հավատացյալների առջևից որպես նրանց ուղեցույց և նախակարապետ (տես Եբր. 6:20):

14:3 «Եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Հիսուսը նրանց ասել է. Նա շուտով վերադառնում է Հոր մոտ (այսինքն, 7:33, 16: 5,10,17,28) և Նա տեղ կպատրաստի նրանց համար:

Օգնություն Թարգմանիչներին Միացյալ Աստվածաշնչյան Ընկերություններից Հովհաննեսի Ավետարանի հետ կապված Newman և Wider կողմից ասվում է, որ այս հատվածը պետք է հասկանալ ժամանակային իմաստով «իմ գնալուց հետո» կամ «երբ ես գնամ» կամ «քանի որ ես գնում եմ» (էջ 456):

▪ **«դարձեալ կ’գամ եւ ձեզ ինձ մօտ կ’առնեմ»** Սա վերաբերում է Երկրորդ Գալստյանը կամ մահին (տես II Կորնթ. 5:8; I Թես. 4:13-18): Հիսուսի հետ այս դեմ առ դեմ հաղորդակցությունը արտացոլում է Հիսուսի և Հոր հաղորդակցությունը (տես 1:1-2): Քրիստոնյաները կմասնակցեն Հիսուսի և Հոր միջև գոյություն ունեցող մտերմությանը (14:23, 17: 1):

ԲԱՅՇ, որն օգտագործվում է այստեղ, ընդունել կամ առնել (*paralambanō*) նշանակում է «ողջունել մարդուն»: Երկինքը անձնական հաղորդակցությունն է Աստծո հետ: Սա տարբերվում է 1:12 (*lambanō*): Դժվար է պարզել այս երկու տերմինների ճշգրիտ իմաստային մասնակի համընկնումը: հաճախ նրանք հոմանիշներ են:

▪ **«որ ուր ես եմ, դուք էլ լինիք»** Երկինք, որտեղ որ Հիսուսն է (տես 17:24): Երկինքը իսկապես այն վայրն է, որտեղ կա դեմ առ դեմ հաղորդակցություն Եռյակ Աստծո հետ: ՆԿ-ը հստակ չէ, թե ստույգ երբ է տեղի ունենում ամբողջական հաղորդակցությունը.

1. մահվան ժամանակ, II Կոր. 5: 8
2. Երկրորդ Գալստյանը, I Թեսաղ. 4: 13-18

Աստվածաշունչը զարմանալիորեն լռում է այն կյանքի մասին: Լավ համառոտ գիրք է William Hendriksen’s, *The Bible On the Life Hereafter*.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ՉՏՆՎՈՒՄ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԸ

- I. Հին Կտակարան
 - Ա. Բոլոր մարդիկ գնում են *Sheol* (գերեզման, դժոխք) (ստուգաբանությունն անորոշ է, BDB 1066), որը ձև է վկայակոչելու մահը կամ գերեզմանը, հիմնականում Իմաստուն Գրականության և Եսայի մեջ: ՀԿ-ում դա եղել է սովորույթ, գիտակից, բայց տրտում վայր (տես Հոր 10:21-22; 38:17. Սաղ. 107: 10,14):
 - Բ. *Sheol* -ը բնութագրվում է
 1. կապված Աստծո դատաստանի հետ (կրակ) Բ Օրին. 32:22
 2. կապված պատժի հետ, նույնիսկ մինչև Դատաստանի Օրը, Սաղ. 18: 4-5

3. կապված *abaddon* (կործանում), որի մեջ Աստված նույնպես ներկա է, Հոբ 26: 6; Սաղ. 139: 8; Ամուս 9: 2
4. կապված է «Pit»-ի հետ (գերեզման), Սաղ.16:10; Ես. 14:15; Եզեկ. 31:15-17
5. ամբարիշտը ողջ-ողջ իջնում է *Sheol*, Թվ. 16: 30,33; Սաղ. 55:15
6. հաճախ անձնավորվում է որպես մեծ բերանով կենդանի, Թվ. 16:30. Ես. 5:14; 14:9; Ամբ. 2: 5
7. այնտեղ մարդիկ կոչվում են *Repha'im*, Ես. 14: 9-11)

II. Նոր Կտակարան

Ա. Եբրայերեն *Sheol* թարգմանվում է հունարեն *Hades* (անտեսանելի աշխարհ)

Բ. *Hades* բնութագրվում է

1. վերաբերում է մահվանը, Մատթ. 16:18
2. կապված է մահվան հետ, Հայտ. 1:18; 6: 8; 20: 13-14
3. հաճախ համանման է մշտական պատժի վայրին (*Gehenna* Գեհեն), Մատթ. 11:23 (ՀԿ մեջբերում); Ղուկ.10:15; 16: 23-24
4. հաճախ համանման է գերեզմանին, Ղուկ. 16:23

Գ. Հնարավոր բաժանում (ռաբբիական)

1. արդարների մասը կոչվում է դրախտ (իսկապես երկնքի մեկ այլ անուն, տես II Կորնթ. 12: 4, Հայտ. 2: 7), Ղուկ. 23:43
2. ամբարիշտների մասը կոչվում է *Tartarus* տարտարոս, II Պետ. 2: 4, որտեղ պահվում են չար հրեշտակները (տես Ծննդոց 6; I Ենոք)

Դ. *Gehenna* Գեհեն

1. Արտացոլում է հինկտակարանյան արտահայտությունը «Հիննոմի որդիների հովիտ», (Երուսաղեմից հարավ): Այն տեղը էր, որտեղ փյունիկիան կրակի աստվածը՝ Մոդոքին (*Molech* BDB 574) պաշտում էին երեխայի զոհաբերությամբ (տես Գ Թագ. 16: 3, 21: 6, II Մնաց. 28: 3, 33: 6), որն անթույլատրելի էր Ղև. 18:21; 20: 2-5.
2. Երեմիան այն փոխեց հեթանոսական պաշտամունքի վայրից ՅԱՀՎԵ-ի դատաստանի վայրի (տես Երեմ. 7:32, 19: 6-7): Այն դարձավ կրակի, հավիտենական դատաստանի վայր I Ենոք 90: 26-27 և Սիբ. 1: 103.
3. Հիսուսի օրերում հրեաներն այնքան էին ցնցված իրենց նախնիների երեխայի զոհաբերության հեթանոսական պաշտամունքից, որ նրանք այս տարածքը վերածեցին աղբանոցի Երուսաղեմի համար: Հիսուսի փոխաբերություններից շատերը հավիտենական դատաստանի մասին եկել է այս աղբանոցից (կրակ, ծուխ, որդեր, զարշահոտություն, տես Մարկ. 9: 44,46): Գեհեն տերմինը օգտագործվում է միայն Հիսուսի կողմից (բացառությամբ Հակ. 3: 6):
4. Հիսուսը օգտագործում է գեհենը
 - ա. կրակ, Մատթ. 5:22; 18: 9; Մարկ. 9:43
 - բ. մշտական, Մարկ. 9:48 (Մատթ. 25:46):
 - գ. Կորանման, ոչնչացման վայր (և հոգին և մարմինը), Մատթ. 10:28
 - դ. զուգահեռ է *Sheol* -ին, Մատթ. 5: 29-30; 18: 9
 - ե. ամբարիշտները բնութագրվում են որպես «գեհենի որդիք», Մատթ. 23:15
 - զ. դատական մեղադրանքի արդյունք, Մատթ. 23:33; Ղուկ.12: 5
 - է. Գեհենի գաղափարը զուգահեռ է երկրորդ մահվանը (տես Հայտ. 2:11, 20: 6,14) կամ կրակե լիճը (տես Մատթ. 13: 42,50; Հայտ. 19:20; 20:10, 14-15, 21:8): Հնարավոր է, որ կրակե լիճը դառնա մարդկանց մշտական բնակության վայրը (*Sheol*) և չար հրեշտակների (*Tartarus*, II Պետ. 2: 4, Հուդա հ. 6 կամ

անդունդը, տես Ղուկ. 8:31; Հայտ. 9 : 1-11, 20: 1,3):

ը. դա նախատեսված չէր մարդկանց համար, այլ սատանայի և նրա հրեշտակների, Մատթ. 25:41

- Ե. Հնարավոր է, քանի որ համընկնում են *Sheol*, *Hades* և *Gehenna*, որ
1. իսկզբանե բոլոր մարդիկ գնում էին *Sheol/Hades*
 2. նրանց փորձառությունը (լավ / վատ) խորանում է Դատաստանի Օրից հետո, սակայն ամբարիշտների տեղը մնում է նույնը (սա է պատճառը, որ KJV թարգմանված *hades* (գերեզման) որպես *gehenna* (դժոխք):
 3. միակ նորկտակարանյան տեքստը, որը նշում է տանջանքի մասին մինչև Դատաստանը, դա հետևյալ առակն է Ղուկ. 16:19-31 (Ղազարոսը և հարուստ մարդը): *Sheol* նաև նկարագրվում է որպես պատժի վայր հիմա (տես 2 Օր. 32:22, Սաղ. 18: 1-5): Սակայն, չի կարելի հաստատել վարդապետություն առակի հիման վրա:

III. Միջանկյալ վիճակ մահվան և հարության միջև

Ա. ՆԿ չի սովորեցնում «հոգու անմահություն», որը հանդիսանում է կյանքից հետո մի քանի հնագույն տեսակետներից մեկը:

1. մարդկային հոգիները գոյություն ունեն մինչև իրենց ֆիզիկական կյանքը
2. մարդկային հոգիները հավիտենական են ֆիզիկական մահից առաջ և հետո
3. հաճախ ֆիզիկական մարմինը դիտվում է որպես բանտ ու մահ, որը ազատ է արձակվում նախագոյության վիճակին

Բ. ՆԿ ակնարկում է անմարմին վիճակը մահվան և հարության միջև

1. Հիսուսը խոսում է մարմնի և հոգու միջև եղած բաժանության մասին, Մատթ. 10:28
2. Աբրահամը կարող է ունենալ մարմին հիմա, Մարկ. 12: 26-27; Ղուկ. 16:23
3. Մովսեսն ու Եղիան ունեն ֆիզիկական մարմին այլակերպության ժամանակ, Մատթ. 17
4. Պողոսը պնդում է, որ Երկրորդ Գալստյան ժամանակ Քրիստոսին միացող հոգիները նախ կստանան իրենց նոր մարմինները I Թեսաղ. 4: 13-18
5. Պողոսը պնդում է, որ հավատացյալները կստանան իրենց նոր հոգևոր մարմինները Հարության Օրը, I Կորնթ. 15: 23,52
6. Պողոսը պնդում է, որ հավատացյալները չեն գնա *Hades*, բայց մահվան ժամանակ կլինեն Հիսուսի հետ, II Կորնթ. 5:6,8; Փիլ. 1:23. Հիսուսը հաղթել է մահին և արդարներին Իր հետ երկինք տարել, I Պետ. 3: 18-22.

IV. Երկինք

Ա. Այս տերմինը Աստվածաշնչում օգտագործվում է երեք իմաստներով,

1. երկրից վեր մթնոլորտը, Ծննդ. 1: 1,8; Ես. 42: 5; 45:18
2. աստղազարդ երկինքը, Ծննդ. 1:14; 2 Օրի. 10:14. Սաղ. 148: 4. Եբր. 4:14; 7:26
3. Աստծո գահի տեղը, Բ Օրին. 10:14. III Թագ. 8:27; Սաղ. 148: 4. Եփ. 4:10; Եբր. 9:24 (երրորդ երկինքը, II Կորնթ. 12: 2)

Բ. Աստվածաշունչը շատ բան չի բացահայտում հանդերձյալ կյանքի մասին, հավանաբար այն պատճառով, որ մեղավոր մարդկությունը անկարող է դա հասկանալ (տես Ա Կորնթ. 2: 9):

Գ. Երկինքը թե վայր է (տես Հովհ. 14: 2-3) և թե անձ (տես II Կոր. 5: 6,8): Երկինքը կարող է լինել վերականգնված Եդեմի պարտեզը (Ծննդ. 1-2; Հայտ. 21-22): Երկիրը մաքրվելու է և վերականգնվելու (տես Գործք 3:21; Հռոմ. 8:21; II Պետ. 3:10): Աստծո պատկերը (Ծննդ. 1: 26-27) վերականգնվել է Քրիստոսով: Այժմ Եդեմի պարտեզում մտերմիկ հարաբերությունը նորից հնարավոր է դարձել:

Այնուամենայնիվ, դա կարող է լինել փոխաբերական (երկինքը որպես մեծ, քառակուսի քաղաք Հայտ. 21: 9-27) և ոչ բառացի: I Կորնթացիս 15 նկարագրում է ֆիզիկական մարմնի և հոգևոր մարմնի տարբերությունը, ինչպես հասուն բույսի սերմ: Կրկին I Կորնթ. 2: 9 (մեջբերում Ես. 64: 4 և 65:17) մեծ խոստում է և հույս: Ես գիտեմ, որ երբ մենք տեսնենք Նրան, Նրան նման կլինենք (տես I Հովհ. 3: 2):

V. Օգտակար ռեսուրսներ

Ա. William Hendriksen, *The Bible On the Life Hereafter*

Բ. Maurice Rawlings, *Beyond Death's Door*

14:4 «Ճանապարհը գիտեք» Հիսուսի արտահայտությունը պատճառ է հանդիսանում, որ Թովմասը արտահայտի իր կասկածը՝ ճանապարհը իմանալու մասին: Հիսուսի պատասխանը, որը արտահայտվում է երեք տերմիններով հաճախ օգտագործվում է ՀԿ-ում:

14:6 «Ես եմ ճանապարհը» ՀԿ-ում աստվածաշնչյան հավատքը խոսվում է որպես ապրելակերպի ուղի (տես Բ Օրին. 5: 32-33; 31:29; Սաղ. 27:11; Ես. 35: 8): Վաղ եկեղեցու անունը «Ճանապարհ» էր (տես Գործք 9: 2, 19: 9,23, 24: 14,22): Հիսուսն ընդգծում էր, որ Նա եղել է և կա Աստծուն տանող միակ ճանապարհը: Սա Հովհաննեսի Ավետարանի աստվածաբանական էությունն է: Բարի գործերով հարուստ կյանքը վկայում է անձնական հավատքի մասին (տես Եփես. 2: 8-9,10) և ոչ թե արդարանալու միջոց: Տես ծանուցում 8:12.

▪ **«Ճշմարտությունը»** «Ճշմարտություն» տերմինը հունական փիլիսոփայության մեջ ունեցել է «Ճշմարտություն» իմաստը ընդդեմ «կեղծիքի» կամ «իրականություն» ընդդեմ «պատրանքի»: Սակայն, սրանք Արամերեն-խոսող աշակերտներն էին, ովքեր պետք է որ հասկանային Հիսուսին, որը խոսում էր ճշմարտության մասին ՀԿ իմաստով, որն էլ նշանակում էր «հավատարմություն» կամ «անձնվիրություն» (տես Սաղ. 26: 3, 86:11, 119:30): Թե «Ճշմարտությունը» և թե «կյանքը» բնութագրում են «ճանապարհը»: «Ճշմարտություն» տերմինը հաճախ օգտագործվում է Հովհաննեսի մեջ՝ նկարագրելու աստվածային գործունեությունը (տես 1:14; 4: 23-24; 8:32; 14:17, 15 : 26; 16:13, 17: 17,19): Տես Հատուկ թեմաներ Ճշմարտություն 6:55 և 17: 3.

▪ **«կեանքը»** «կյանքը» *zoē* է, օգտագործվում է Հովհաննեսի կողմից՝ նկարագրելու նոր դարի կյանքը: ՀԿ-ում հավատացյալի հավատքի ապրելակերպը որպես կյանքի ուղի (տես Սաղ. 16:11, Առ. 6:23; 10:17): Բոլոր երեք տերմիններն էլ կապված են հավատքի ապրելակերպի հետ, որը գտնվում է միայն Հիսուս Քրիստոսի հետ ունեցած անձնական հարաբերության մեջ:

▪ **«ոչ ով չի գալիս Հոր մօտ, եթե ոչ ինձանով»** Ինչպիսի ցնցող պահանջ: Շատ խիստ է ասված, բայց նաև շատ ակնհայտ, որ Հիսուսը հավատում է, որ միայն Իր հետ ունեցած անձնական հարաբերության շնորհիվ մարդ կարող է ճանաչել Աստծուն (տես I Հովհ. 5: 10-12): Սա հաճախ կոչվում է քրիստոնեության էքսկլյուզիվիստիկ սկանդալ: Այստեղ միջին չկա: Կամ այս արտահայտությունը ճիշտ է կամ էլ քրիստոնեությունը կեղծ: Մի քանի առումներով սա նման է Հովհաննես 10:

14:7 «Եթե» Կա ձեռագիր տարբերակն կապված ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ տեսակի հետ: Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունները հունարեն տեքստը աջակցում է ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆԸ, ինչպես հին հունական ձեռագրերը P⁶⁶, Տ և D: Սա կարելի է թարգմանել, «եթե ինձ ճանաչեիք, ես եք, ապա դուք պետք է ճանաչեիք իմ Հորը, որն դուք դա անում եք»:

Դա կարող է լինել ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, որը հաճախ կոչվում է «հակասում իրականությանը»: Այդ ժամ թարգմանությունը կլինի այսպես «եթե ինձ ճանաչեիք, որը չեք, ապա դուք պետք է արդեն ճանաչեիք Իմ Հորը, որ դուք չեք»: A, B, C, D^b, K, L և X ձեռագրերը աջակցում են այդ նախադասությանը: Մա բարդ հայտարարություն է, քանի որ մենք ենթադրում ենք, որ Առաքյալները արդեն հավատացել էին ՅԱՀՎԵԻ կողմից ուղարկված Հիսուս Մեսիայի փրկության: Այս նոր և ի վերջո բացառիկ ճշմարտությունը պետք է շատ դժվար լիներ նրանց համար ըմբռնել: Հովհաննեսի Ավետարանը կարծես խոսում է հավատքի մակարդակների մասին: Կոնտեքստը թվում է, աջակցում է ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆԸ: Նաև նույն վիճակը երևում է 2 և 28hh-ում:

- **«ինձ գիտենայիք»** Հիսուսը ևս մեկ անգամ հասցեագրում է ամբողջ Առաքելական խմբին (տես հ. 9): «գիտենալ, իմանալ» տերմինը, որն օգտագործվում է ՀԿ իմաստով, ինչը խոսում է մտերմիկ անձնական հարաբերության մասին, այլ ոչ թե միայն ճանաչողական իմացության (տես Ծննդ. 4: 1, Երեմ. 1: 5):
- **«իմ Հորն էլ կ'գիտենայիք»** Հիսուսին տեսնել նշանակում է Աստծուն տեսնել (տես Հովհ. 1: 14-18; 5:24, 12: 44-45; II Կորնթ. 4: 4, 1:15, Եբր. 1:3): Հիսուսը անտեսանելի Աստուծու կատարյալ հայտնությունն է: Ոչ ոք, ով մերժում է Հիսուսին չի կարող պնդել, որ ճանաչում է Աստծուն (տես I Հովհ. 5: 9-12):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 14:8-14
⁸ Փիլիպպոսը նորան ասեց. Տէր, Հայրը ցոյց տուր մեզ, եւ բաւական է մեզ: ⁹ Յիսուսը նորան ասեց. Այսքան ժամանակ ձեզ հետ եմ, եւ ինձ չ'ճանաչեցիք, Փիլիպպոս. ինձ տեսնողը Հօրը տեսաւ. Եւ դու ի՞նչպէս ես ասում. Հայրը ցոյց տուր մեզ: ¹⁰ Չե՞ս հաւատում, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրն ինձանում է. Այն բանն՝ որ ես խօսում եմ ձեզ հետ, իմ անձիցը չեմ խօսում. Բայց Հայրը՝ որ ինձանում բնակած է, նա է գործում այդ գործերը: ¹¹ Հաւատացէք ինձ, որ ես Հօր մէջ եմ, եւ Հայրն ինձանում է: ¹² Ապա թէ ոչ, իսկ այն գործերի համար հաւատացէք ինձ. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ինձ հաւատացողը այն գործերն որ ես գործում եմ, նա էլ կ'գործէ, եւ նորանցից էլ աւելի մեծ բաներ կ'գործէ. Որովհետեւ ես իմ Հօր մօտ եմ գնում: ¹³ Եւ ինչ որ էլ խնդրէք իմ անունովը, այն կ'անեմ, որ Հայրը փառաւորուի Որդումը: ¹⁴ Եթէ իմ անունովը մի բան խնդրէք, ես կ'անեմ:

14:8 «Փիլիպպոսը նորան ասեց» Ըստ երևույթին Փիլիպպոսը (1) Աստվածային տեսլիք էր ուզում (Թեոֆանե/Աստվածահայտնություն) ինչպիսին Մովսեսը, Եսային կամ Եզեկիելը կամ (2) նա լիովին սխալ էր հասկացել Հիսուսի խոսքերը: Հիսուսը պատասխանում է հաստատելով, որ երբ Փիլիպպոս տեսավ և ճանաչեց Նրան, նա տեսավ և ճանաչեց Աստծուն (հմմտ. 1.15; Եբր. 1: 3):

-
- NASB “բավական է մեզ”
- NKJV “դա մեզ համար բավարար է”
- NRSV “մենք գոհ կլինենք”
- TEV “այդ ամենը մեզ պետք է”
- NJB “ապա մենք պետք է բավարարվենք”

Այս աշակերտները ցանկանում էին որոշակի տեսակի հաստատում ինչպես փարիսեցիները: Սակայն հոգևոր բաներում հավատացյալները պետք է քայլեն հավատքով և ոչ թե աչքի տեսածով (հմմտ. II Կորնթ. 4:18; 5: 7): Հարցը վստահությունն է:

14:9 «Այսքան ժամանակ ձեզ հետ եմ» Ուշադրություն դարձրեք, որ սա ՀՈԳՆԱԿԻ է: Փիլիպոսը մի հարց տվեց, որի շուրջ բոլորն էին մտածում:

▪ **«ինձ տեսնողը չօրը տեսաւ»** Սա ԿՍՏԱՐՅԱԼ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է և ԿՍՏԱՐՅԱԼ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ, որը նշանակում է «տեսել է և շարունակում է տեսնել»: Հիսուսը լիովին բացահայտում է Աստծուն (հմմտ. Կող.1:15; Եբր.1: 3):

14:10 Հիսուսի հարցը հունարենում ակնկալում է «այո» պատասխան: Տես Հատուկ Թեմա «կենալ» Հովհաննեսի գրվածքներում I Հովհ. 2:10.

▪ **«ձեզ. . . ձեզ»** Առաջին «ձեզ»ը ԵԶԱԿԻ է, վկայակոչելով Փիլիպոսին: Երկրորդ «ձեզ»ը ՀՈԳՆԱԿԻ է, նկատի ունենալով Առաքյալների խումբը (հմմտ. հհ. 7, 10): Տես Հատուկ Թեմա «կենալ» Հովհաննեսի գրվածքներում I Հովհ. 2:10.

▪ **«Այն բանն՝ որ ես խօսում եմ ձեզ հետ, իմ անձիցը չեմ խօսում»** Հիսուսը բոլոր բաներում գործում էր Հոր անունից (հմմտ. հ. 24, 5:19,30; 7:16-18, 8:28, 10:38, 12:49): Հիսուսի ուսմունքները հենց Հոր խոսքերն են (հմմտ. հ.24):

▪ **«Բայց Հայրը՝ որ ինձանում բնակած է, նա է գործում այդ գործերը»** Այս հաղորդակցությունը Հոր և Որդու միջև (այսինքն, 7:6, 8:28, 10:38), որն ընդգծվում է Հիսուսի քահանայապետական աղոթքում գլխում 17-ում, դառնում է հիմք հավատացյալների Քրիստոսի մեջ «կենալու» համար գլուխ 15-ում: Հովհաննեսի Ավետարանը բացահայտում է փրկությունը որպես (1) վարդապետություն; (2) հաղորդակցություն; (3) հնազանդություն և (4) հաստատակամություն կամ համբերություն:

14:11 «Հաւատացէք ինձ» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է կամ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ (հմմտ. 14:1):

Կա ձեռագիր տարբերակ որոշ նշանակությամբ այս հատվածում բացման արտահայտության վերաբերյալ: Որոշ վաղ հունարեն տեքստեր (P⁶⁶, P⁷⁵, Տ, D, L, և W) պարզապես ունեն «հավատալ» ԲԱՅԸ, որին հաջորդում է (*hoti*) «որ», ինչը ենթադրում է, որ նրանք պետք է ընդունեին Հիսուսի և Հոր միաբանության մասին ճշմարտությունը: Այլ հին տեքստեր (MSS A և B) ավելացնում են ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ «ինձ», ցույց տալով հավատքի անձնական օբյեկտը: Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունների հույն գիտնականները հավատում են, որ առաջին տարբերակն էր բնօրինակը (հմմտ. Bruce M. Metzger's *A Textual Commentary on the Greek New Testament*, որը տալիս այս տարբերակը «B» վարկանիշ [գրեթե որոշակի], էջ 244): Շատ ժամանակակից թարգմանություններ պահում են «ինձ», բայց լրացնելով «որ»ը (որը ցույց է տալիս, հավատալու բովանդակությունը):

▪ **«Ապա թե ոչ, իսկ այն գործերի համար հաւատացէք ինձ»** Հիսուսն ասում է նրանց, որ հավատան Իր գործերին (հմմտ. Հովհ. 5:36, 10:25,38): Նրա գործերն իրականացրեցին ՀԿ մարգարեությունը: Նրա գործերը հայտնում են Իր Ով լինելը: Առաքյալները, ինչպես բոլորս, պետք է աճեն հավատքի մեջ:

14:12 «Ճշմարիտ, ճշմարիտ» Տես ծանուցում 1:51.

▪ **«հաւատացողը... նա էլ կ'գործէ»** Հավատալը միայն մտային գործողություն չէ, այլ գործողության վրա կենտրոնացած բառ: «Նա կարող է անել, նույնիսկ ավելի մեծ բաներ» արտահայտությունը ԱՊԱՌՆԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը թարգմանվում է «նա կանի ավելի մեծ բաներ»: Սա հնարավոր վերաբերում է,

1. աշխարհագրական հորիզոնին (հմմտ. Մատթ. 28: 18-20)
2. հեթանոսների առաքելությանը
3. Հոգուն, որը յուրաքանչյուր հավատացյալի հետ է
4. Հիսուսի բարեխոսական աղոթքին (հմմտ Եբր. 7:25; 9:24):

Տես Հատուկ Թեմա: Աղոթք, Անսահմանափակ բայց և սահմանափակ I Հովհաննես 3:22,

Վերջին արտահայտությունը «նա կանի» շատ կարևոր է աստվածաշնչյան քրիստոնեության մեջ: Ինչպես Հայրն ուղարկեց Իր Որդուն, Որդին էլ ուղարկում է իր աշակերտներին: Լինելով «Քրիստոսի մեջ», ունենալով «հավիտենական կյանք» նշանակում է ունենալ «Մեծ Պատվիրանի» սիրտն ու միտքը: Քրիստոնեությունը դավանանք չէ կամ մի բան, որը մենք ստանում ենք անձրևոտ օրվա համար: Դա կյանքի մի նոր կողմնորոշում է, նոր աշխարհայացք: Այն փոխում է ամեն ինչ: Այն պետք է դառնա կանխամտածված, ամենօրյա, թագավորությանը ուղղված, գոհաբերվող ապրելակերպ:

Եկեղեցին պետք է վերագրավի

1. յուրաքանչյուր հավատացյալի ծառայությունը
2. Մեծ Պատվիրանի առաջնայնությունը
3. օրական կանխամտածված անձնուրաց ծառայություն
4. քրիստոսանմանություն հիմա

14:13-14 «Եւ ինչ որ էլ խնդրէք իմ անունովը, այն կ'անեմ» Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը պնդում է, որ Նա կպատասխանի մեր աղոթքներին հիմնվելով Իր էության վրա: Գործք 7:59 Ստեփանոսն աղոթում է Հիսուսին: II Կորնթ. 12: 8 Պողոսն աղոթում է Հիսուսին: 15:16 և 16:23 հավատացյալները պետք է դիմեն Հորը: Մեր աղոթքների վերջում աղոթել Հիսուսի անունով չի դա կախարդական բանաձև չէ, այլ դա նշանակում է աղոթել Հիսուսի կամքի և էությանը համաձայն:

Աստվածաշնչյան թեմաներով նախքան դոգմատիկ արտահայտություններ անելը լավ օրինակ է համեմատել զուգահեռ հատվածները: Մենք պետք է հավասարակշռենք «ինչ որ խնդրենք»-ը հետևյալի հետ

1. «Իմ անունով» (Հովհ. 14: 13-14; 15: 7,16; 16:23)
2. «շարունակենք խնդրել» (Մատթ. 7: 7-8; Դուկ. 11: 5-13, 18: 1-8)
3. «երկուսի համաձայնությամբ» (Մատթ. 18:19)
4. «հավատալով» (Մատթ. 21:22)
5. «առանց կասկածելու» (Մարկ. 11: 22-24; Հակ. 1: 6-7)
6. «Ոչ թե եսասիրաբար» (Հակ. 4: 2-3)
7. «Պահելով Նրա պատվիրանները» (I Հովհ. 3:22)
8. «ըստ Աստծո կամքի» (Մատթ. 6:10; I Հովհ. 5: 14-15)

Հիսուսի անունը ներկայացնում է Նրա հատկանիշը: Դա ևս մեկ մոտեցման միջոց է Հիսուսի մտքին և սրտին: Այս արտահայտությունը հաճախ հայտնվում է Հովհաննեսի մոտ (հմմտ. 14: 13-14,26, 15:16, 16: 23-26): Որքան շատ ես նմանվում Քրիստոսին, այնքան հավանականությունը մեծ է, որ աղոթքները հաստատ կպատասխանվեն: Ամենավատ բանը, որ Աստված կարող է հոգևորապես անել հավատացյալներին, դա պատասխանել նրանց եսասեր, նյութական աղոթքներին: Տես ծանուցում I Հովհ. 3:22.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐՁՅՈՒՆԱՎԵՏ ԱՂՈԹՔ

Ա. Կապված ինչ որ մեկի անձնական հարաբերությունները Եռյակ Աստուծո հետ

1. Համաձայն Հոր կամքի
 - ա. Մատթ. 6:10
 - բ. I Հովհ. 3:22
 - գ. I Հովհ. 5:14-15

2. Կենալ Հիսուսի մեջ
ա. Հովհ. 15: 7
 3. Աղոթել Հիսուսի անունով
ա. Հովհ. 14: 13,14
բ. Հովհ. 15:16
գ. Հովհ. 16: 23-24
 4. Աղոթել Հոգով
ա. Եփ. 6:18
բ. Հուդա 20
- Բ. Կապված մարդու անձնական դրդումներից
1. Առանց երկմտելու
ա. Մաթ. 21:22
բ. Հակ. 1: 6-7
 2. Չար կերպով խնդրել
ա. Հակ.4:3
 3. Խնդրել եասիրաբար
ա. Հակ.4:2-3
- Գ. Կապված մարդու անձնական ընտրության հետ
1. Հաստատակամություն, երկայնտություն
ա. Ղուկ. 18: 1-8
բ. Կոր. 4: 2
գ. Հակ. 5:16
 2. Անհամաձայնություն տանը
I Պետ. 3: 7
 3. Մեղք
ա. Սաղ. 66:18
բ. Ես. 59: 1-2
գ. Ես. 64: 7

Ամեն աղոթք պատասխանվում է, բայց ոչ բոլոր աղոթքներն են արդյունավետ: Աղոթքը երկկողմանի հարաբերություն է: Ամենավատ բանը, որ Աստված կարող է անել, այն է նվիրել հավատացյալներին անհամապատասխան խնդրանքները: Տես Հատուկ Թեմա: Բարեխոսական Աղոթք Կոր. 4: 3. Տես Հատուկ Թեմա: Բարեխոսական Աղոթք I Հովհ. 5:14.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ

Սա տարածված նորկտակարանյան արտահայտություն է եկեղեցում Աստված Երրորդության անձնական ներկայության և ակտիվ գործության համար: Դա կախարդական բանաձև չէր, այլ կոչ Աստծո բնավորությանը:

Հաճախ այս արտահայտությունը վերաբերում է Հիսուսին որպես Տեր (տես Փիլ. 2:11)

1. մկրտության ժամանակ, երբ անձը դավանում է Հիսուսին (հմմտ. Հո. 10:9-13; Գործք 2:38, 8: 12,16; 10:48. 19: 5; 22:16. I Կոր. 1 : 13,15; Հակ. 2: 7)
2. դևեր հանելու ժամանակ (տես Մաթ. 7:22, Մարկ. 9:38, Ղուկ. 9:49, 10:17; Գործք 19:13).
3. բժշկության ժամանակ (տես Գործք 3: 6,16; 4:10; 9:34; Հակ. 5:14).
4. ծառայության ժամանակ (տես Մատթ. 10:42, 18: 5; Ղուկ. 9:48)
5. եկեղեցու կարգապահության ժամանակ (տես Մատթ. 18: 15-20).
6. հեթանոսներին քարոզելու ժամանակ (տես Ղուկ. 24:47, Գործք 9.15; 15.17; Հռոմ. 1: 5)
7. աղոթքի մեջ (տես Հովհ. 14: 13-14; 15: 2,16; 16:23. I Կորնթ. 1: 2).

8. քրիստոնեությանը վկայակոչելու ձև (տես Գործք 26: 9, I Կոր. 1:10; Բ Տիմ. 2:19; Հակ. 2: 7, I Պետ. 4:14)

Այն, ինչ մենք անում ենք որպես քարոզիչներ, ծառայողներ, օգնականներ, բժշկողներ, դեր հանողներ և այլն, մենք անում ենք Նրա բնավորությամբ, Իր իշխանությունովը, Իր դրույթներով Իր անունով:

▪ **«Եթե»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն:

▪ **«իմ անունովը մի բան խնդրեք»** Սովորաբար հավատացյալները խրախուսվում են աղոթելով Հոգով Որդու միջոցով Հորը: Սա միակ համարն է Հովհաննեսի Ավետարանում, ուր Հիսուսը աղոթքը ինքն իրեն է ուղղորդում:

Սա կարող է պատճառ լինել, թե ինչու որոշ հին հունարեն ձեռագրեր բաց են թողել «Ինձ»-ը (այն է MSS, A, D, L, և որոշ հին լատիներեն, Վուլգատ, Ղպտի, Եթովպական և Սլավոնական տարբերակները): UBS⁴ գնահատում է իր ընդգրկումը որպես «B» (գրեթե որոշակի): Այն ընդգրկված է MSS P⁶⁶, P⁷⁵, Տ, B, W և որոշ հին լատիներեն, Վուլգատ և սիրիական տարբերակները:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 14:15-17

¹⁵ Եթե ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցեք: ¹⁶ Եւ եւ Հօրը կ'աղաչեմ եւ ուրիշ Մխիթարիչ կ'տայ ձեզ. Որ մնայ ձեզ հետ յաւիտեան: ¹⁷ Ճշմարտութեան Հոգին, որին աշխարհքս կարող չէ ընդունել. Որ չէ տեսնում նորան. Եւ ոչ. Էլ ճանաչում նորան. Բայց դուք նորան ճանաչում էք, որովհետեւ ձեզ մօտ է մնում եւ ձեզ հետ կ'լինի:

14:15 «Եթե ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցեք» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Քրիստոսով Աստծո հանդէպ սերը արտահայտվում է հնազանդությամբ: «Պահեցեք» ԱՊԱՌՆԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որն օգտագործվում է որպես ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (Friberg, *Analytical Greek New Testament*, էջ 337): Հնազանդությունը չափազանց կարևոր է (հմմտ. 8:51, 14:21,23-24, 15:10, I Հովհ. 2: 3-5, 3: 22,24; 5: 3, II Հովհ. 6, Ղուկ. 6:46): 21, 23 և 24 համարները նաև ընդգծում են այս նույն ճշմարտությունը: Հնազանդությունը վկայում է իսկական դարձի գալը (հմմտ Հակ. և I Հովհ.):

NKJV թարգմանության մեջ «իմ պատուիրանքները պահեցեք»-ը ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը աջակցում են MSS A, D, W ձեռագրերը, Վուլգատը և շատ Եկեղեցու Հայրեր: UBS⁴ ԱՊԱՌՆԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ տալիս է «C» վարկանիշ (դժվար է որոշել), որին աջակցում են MSS B, L ձեռագրերը և Ղպտի վարկածը, ինչպես նաև մի քանի եկեղեցական հայրեր:

14:16 «կ'տայ ձեզ» Տես ծանուցում 14:26.

-
- NASB, NKJV,
- TEV “ուրիշ Օգնական”
- NRSV “ուրիշ Բարեխոս, Պաշտպան”
- NJB “ուրիշ Բարեխոս”

«Մեկ այլ կամ ուրիշ» տերմին թարգմանում է հունարեն (*allos*)բառը, որը նշանակում է «մեկ այլ նույն տեսակի»: Սուրբ Հոգին կոչվել է «ուրիշ Հիսուս» (G. Campbell Morgan, տես Հատուկ Թեմա ստորև):

Երկրորդ տերմինը հունարեն «*paraklētos*» բառն է, որն օգտագործվում Հիսուսի համար I Հովհ. 2:1 (որպես բարեխոս) և Սուրբ Հոգու համար Հովհ. 14:26 և 16:7-14: Դրա ստուգաբանությունը «մեկը,

ով քայլում է կողքից՝ օգնելու համար» իրավաբանական իմաստով: Հետևաբար «փաստաբան» տերմինը ճշգրիտ թարգմանում է այս բառը:

Այս նույն հունարեն արմատի ձևը «մխիթարել» (*parakalēo*) որը օգտագործվում է Հոր համար II Կորնթ. 1: 3-11.

«Փաստաբան» (*paraklētōs*) ԳՈՅԱԿԱՆԻ թարգմանությունը գալիս է հռոմեական իրավական համակարգից: «Մխիթարիչը» թարգմանությունը առաջին անգամ օգտագործվել է Wycliffe-ի կողմից և արտացոլում է (*parakaleō*) ԲԱՅԱԿԱՆ ձևի օգտագործումը Սեպտուագինդի մեջ (այսինքն, Ես. 33: 7, 35: 4, 61: 1-2, 66: 10-19: տես, NIDOTTE, հատոր 1, էջ 570): Դա կարող է լինել սատանայի ՀԱԿԱՆԻՇԸ (մեղադրողը):

Երկուսն էլ թե Փիլոն և թե Յուսուփոսը օգտագործվել են այդ բառը «բարեխոս» կամ «խորհրդատու» իմաստով:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՀՈԳԻՆ

Կա սահուն համագործակցություն Հոգու և Որդու գործի միջև: Campbell Morgan-ը ասել է, որ լավագույն անունը Հոգու համար «ուրիշ Հիսուս»-ն է (ինչն է նրանք առանձին, հավիտենական անձեր են): Ստորև բերված է Որդու և Սուրբ Հոգու գործի և անունների համեմատության ուրվագիծը:

1. Հոգին կոչվում էր «Հիսուսի Հոգին» կամ նմանատիպ արտահայտություններ (տես Հո. 8: 9; II Կորնթ. 3:17; Գաղ. 4: 6, I Պետ. 1:11):
2. Երկուսն էլ անվանվում են նույն տերմիններով
 - ա. «ճշմարտություն»
 - 1) Հիսուս (Հովհ. 14:6)
 - 2) Հոգի (Հովհ. 14:17; 16:13)
 - բ. «փաստաբան»
 - 1) Հիսուս (I Հովհ. 2: 1)
 - 2) Հոգի (Հովհ. 14: 16,26; 15:26; 16: 7)
 - գ. «Սուրբ»
 - 1) Հիսուս (Ղուկ. 1:35; 14:26)
 - 2) Հոգի (Ղուկ. 1:35; 4:34)
3. Երկուսն էլ բնակվում են հավատացյալների մեջ
 - ա. Հիսուս (Մատթ. 28:20, Հովհ. 14: 20,23; 15: 4-5; Հռոմ. 8:10; Բ Կորնթ. 13: 5; Գաղ. 2:20; Եփես. 3:17: Կող. 1: 27)
 - բ. Հոգի (Հովհ. 14: 16-17; Հռոմ. 8: 9,11; I Կորնթ. 3:16; 6:19; Բ Տիմ. 1:14)
 - գ. Հայր (Հովհ. 14:23, II Կորնթ. 6:16)

▪ «Որ մնայ ձեզ հետ յախտեան» Երեք տարբեր նախդիրներ են օգտագործված Սուրբ Հոգու հետ կապված:

1. «*meta*» (հ. 16), «հետ»
2. «*para*» (հ. 17), «մոտ»
3. «*en*» (հ. 17), «մեջ»

Ուշադրություն դարձրեք, որ Սուրբ Հոգին մեզ հետ է, մեր մոտ է և մեր մեջ է: Նրա գործն է բացահայտել Հիսուսի կյանքը հավատացյալների մեջ: Նա կմնա նրանց հետ մինչև ժամանակի վախճանը (տես հ.18; Մատթ. 28:20):

Ուշադրություն դարձրեք, որ Հոգին կոչվում է «Նա»: Սա նշանակում է, որ Հոգին անձնական է: Հաճախ KJV թարգմանության մեջ Հոգին, հասցեագրված է «այն», բայց սա այն պատճառով է, որ «հոգի» տերմինը հունարենում ՉԵԶՈՔ է (տես Հովհ. 14: 17,26; 15:26): Նա Երրորդության երրորդ անձն է (տես Հատուկ Թեմա 14:26): Երրորդություն տերմինը աստվածաշնչյան տերմին չէ, բայց եթե Հիսուսն Աստված է, իսկ Հոգին անձ, ապա ինչ-որ տեսակի Եռյակ-միություն է ներգրավված:

Աստված մեկ աստվածային էություն է, սակայն երեք անփոփոխ, անհատական դրսևորումներ (տես Հատուկ Թեմա 14:26, հմմտ. Մատթ. 3: 16-17; 28:19; Գործք 2: 33-34; Հռոմ. 8: 9-10; I Կորնթ. 12: 4-6; II Կորնթ. 1: 21-22; 13:14. Եփես. 1: 3-14; 2:18, 4: 4-6; Տիտոս 3: 4-6, I Պետ. 1 : 2):

«Հավիտյան» տես Հատուկ Թեմա 6:58.

14:17 «Ճշմարտութեան Հոգին» «Ճշմարտություն» այստեղ ունի նույն իմաստը, ինչպես հ. 6 (տես 15:26; 16:13; I Հովհ. 4: 6): Տես Հատուկ Թեմա Ճշմարտություն 6:55 և 17: 3: Նա Սատանայի հակառակն է, ստույթյան հայրը (տես 8:44):

▪ **«որին»** «Այս» ՉԵԶՈՔ է, որը համաձայնեցված է «հոգի» (pneuma) տերմինի հետ: Սակայն ուրիշ տեղերում հունարենում ԱՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ է օգտագործվում (տես հհ. 26, 15:26, 16: 7,8,13,14): Սուրբ Հոգին իրականում ոչ արական է և ոչ էլ իգական: Նա հոգի է: Կարևոր է հիշել, որ Նա նաև հանդիսանում է առանձին անձնավորություն (տես Հատուկ Թեմա 14:26):

▪ **«աշխարհքս կարող չէ ընդունել»** Սուրբ Հոգին կարող է հասանելի լինել միայն նրանց, ովքեր ունեն հավատք առ Քրիստոս (տես 1: 10-12): Նա հոգում է հավատացյալի բոլոր կարիքները (տես Հռոմ. 8: 1-11): Անհավատ աշխարհը (*kosmos* տես, Հատուկ Թեմա ստորև), չի կարող հասկանալ կամ գնահատել հոգևոր բաները (տես I Կոր. 2:14; II Կոր. 4: 4):

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՂՈՍԸ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է *KOSMOS* (ԱՇԽԱՐՀ)

Պողոսն օգտագործում *Kosmos* տերմինը մի քանի ձևերով.

1. բոլոր ստեղծված համակարգը (տես Հռ. 1.20; Եփ. 1: 4, I Կորնթ. 3:22, 8: 4,5)
2. այս մոլորակը (տես II Կոր. 1.17; Եփես. 1.10; Կող. 1.20; I Տիմ. 1:15; 3:16; 6: 7)
3. մարդիկ (տես 1: 27-28, 4: 9,13; Հռոմ 3: 6,19; 11:15; Բ Կորնթ. 5:19; Կող 1: 6)
4. մարդիկ կազմակերպում և գործում են Աստծուց անջատ (հմմտ. 1: 20-21; 2:12; 3:19; 11:32. Գաղ. 4: 3, Եփ. 2: 2,12; Փիլիպ. 2:15; Կող. 2: 8,20-24): Այն շատ նման է Հովհաննեսի կիրառությանը (այսինքն, I Հովհ. 2: 15-17)
5. ներկայիս աշխարհի կառույցները (տես 7: 29-31; Գաղ. 6:14, նման է Փիլիպ. 3: 4-9, որտեղ Պողոսը նկարագրում է հրեական կառույցները)

Որոշ առումներով դրանք համընկնում են և դժվար է դասակարգել յուրաքանչյուր կիրառություն: Այս տերմինը, ինչպես շատերը Պողոսի մտքում, պետք է սահմանվի անմիջական կոնտեքստով և ոչ թե նախապես որոշված սահմանումով: Պողոսի տերմինաբանությունը էր հեղուկ (տես James Stewart *A Man in Christ*): Նա չի փորձում ստեղծել սիստեմատիկ աստվածաբանություն, այլ հռչակում է Քրիստոսին: Նա փոխում է ամեն ինչ:

▪ **«ճանաչում. . . ճանաչում»** Սա, թերևս, մեկ այլ երկակի իմաստ է Հովհաննեսի մոտ: Եբրայերեն իմաստը կլինի մտերիմ, անձնական հարաբերությունները (տես Ծննդ. 4: 1, Երեմ. 1: 5): Հունարեն իմաստը կլինի գիտելիքները, իմացությունը: Ավետարանը թե անձնական է և թե ճանաչողական:

▪ **«ձեզ մօտ է մնում»** Մնալը կամ կենալը բանալի գաղափար է Հովհաննեսի գրվածքներում (այսինքն, գլուխ 15, տես Հատուկ Թեմա I Հովհ. 2:10): Հայրը կենում է Որդու մեջ, Հոգին կենում է հավատացյալների մեջ իսկ հավատացյալները կենում են Որդու մեջ: Այս կենալը կամ մնալը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ է և ոչ թե մեկուսացված որոշում կամ զգացմունքային արձագանք:

▪ **«ձեզ հետ կ'լինի»** Սա կարելի է հասկանալ որպես «ձեր մեջ» (ՀՈԳՆԱԿԻ, տես NRSV ծանոթագրություն) կամ «ձեր ներսում» (ՀՈԳՆԱԿԻ, տես NASB, NKJV, NRSV, TEV & NJB):

Հավատացյալի բնակվելը Աստուծո հետ հրաշալի խոստում է: ՆԿ պնդում է, որ Երրորդության բոլոր երեք անձերն էլ բնակվում են հավատացյալների մեջ:

1. Հիսուսը (Մատթ. 28:20, Հովհ. 14: 20,23; 15: 4-5; Հռոմ. 8.10; Բ Կորնթ. 13: 5; Գաղ. 2:20; Եփես. 3:17; Կող. 1:27)
2. Հոգին (Հովհ. 14: 16-17; Հռոմ. 8:11; I Կորնթ. 3:16; 6:19; II Տիմ.1: 14)
3. Հայրը (Հովհ. 14:23, II Կորնթ. 6:16)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 14:18-24

¹⁸ Ձեզ որք չեմ թողիլ. կ'գամ ձեզ մօտ: ¹⁹ Մի փոքր ժամանակ էլ, եւ աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ, բայց դուք կ'տեսնէք ինձ. որովհետեւ ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կ'լինիք: ²⁰ Այն օրը դուք կ'ճանաչէք, որ ես իմ Հօր մեջ եմ, եւ դուք ինձանում, եւ ես ձեզանում: ²¹ Ով որ իմ պատուիրանքներն ունի եւ նորանց պահում է, նա է ինձ սիրողը. Եւ ինձ սիրողն իմ Հօրիցը կ'սիրուի. Եւ ես կ'սիրեմ նորան, եւ ինձ կ'յայտնեմ նորան: ²² Ասեց նորան Յուդան՝ ոչ թէ Իսկարիովտացին. Տէր, ի՞նչ է, որ մեզ կ'յայտնես քեզ՝ եւ աշխարհքին ոչ: ²³ Յիսուսը պատասխանեց եւ նորան ասեց. Եթէ մէկն ինձ սիրում է, իմ խօսքը կ'պահէ եւ իմ Հայրը կ'սիրէ նորան. եւ նորա մօտը կ'գանք եւ բնակութիւն կ'անենք նորա մօտ: ²⁴ Ինձ չ'սիրողը իմ խօսքերը չէ պահում. եւ այն խօսքը որ լսում էք՝ իմը չէ, այլ ինձ ուղարկող Հօրը:

14:18 «Ձեզ որք չեմ թողիլ. կ'գամ ձեզ մօտ» Հիսուսը կատարեց յուրաքանչյուր խոստում, որը տվել էր Իր աշակերտներին կիրակի երեկոյան Ջատիկից հետո Հարությունից հետո, երբ առաջին անգամ երևաց նրանց Վերնատանը (տես 20: 19-31): Որոշ մեկնաբաններ, սակայն, կոնտեքստը կապում են Սուրբ Հոգու գալստյան հետ Պենտեկոստեի օրը (Գործք 2) կամ էլ Երկրորդ Գալստյան հետ (տես հ. 3):

14:19 «Մի փոքր ժամանակ էլ, եւ աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ, բայց դուք կ'տեսնէք ինձ» Համար 20-ը ցույց է տալիս, որ սա վերաբերվում է Հիսուսի հետ- Հարության հայտնվելուն: Մա այն արտահայտությունն է, որը Հուդան տալիս է հ. 22-ում տալով Հիսուսին մեկ այլ հարց: Աշակերտները դեռևս սպասում էին Նրա երկրային Մեսիական Թագավորություն հիմնելուն (այսինքն, Մաթ. 20: 20-28, Մարկ. 10: 35-45) և սաստիկ շփոթված էին, երբ Նա ասաց, որ «աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ»: Հիսուսի պատասխանը Հուդային (ոչ Իսկարիովտացի) հարցին հհ. 23-ում և 24-ում, որ Նա կհայտնի Իրեն անհատ քրիստոնյաների կյանքում և դրանով աշխարհը կտեսնի Նրան նրանց միջոցով:

▪ **«որովհետեւ ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կ'լինիք»** Հիսուսի հարությունը Աստծո իշխանության և կյանքը տալու պատրաստակամության դրսևորումն էր (տես Հռոմ. 8: 9-11; I Կորնթ. 15: 20-23,50-58):

14:20 «Այն օրը» Այս արտահայտությունը սովորաբար օգտագործվում է վախճանաբանական իմաստով (տես Հատուկ Թեմա ստորև), սակայն այստեղ այն կարող է վերաբերել Հիսուսի հետ-Հարության հայտնվելուն կամ էլ Սուրբ Հոգու գալուստին Պենտեկոստեի օրը:

ՀԱՏՈՒՎ ԹԵՄԱ: ԱՅՆ ՕՐԸ

Այս արտահայտությունը «այն օրը» կամ «այդ օրը» ութերորդ դարի մարգարեների խոսելաձևն էր՝ Աստծո այցելության (ներկայության) մասին, ինչպես դատաստանի այնպես էլ վերականգնելու համար:

Ովսէէ		Ամովս		Միքիա	
դրական	բացասական	դրական	բացասական	դրական	բացասական
1:11	1: 5		1:14 (2)		2: 4
	2: 3		2:16		3: 6

2:15	3:14	4: 6	
2:16	3:18 (2)		5:10
2:21	3:20		7: 4
5: 9		6: 3	7:11 (2)
7: 5		8: 3	7:12
9: 5		8: 9 (2)	
		8:10	
10:14		8:13	
	9:11		

Այս օրինակը բնորոշ է մարգարեներին: Աստված մտադիր է հանդես գալ ընդդեմ մեղքի ժամանակին, սակայն Նա նաև առաջարկում է ապաշխարության և ներման օր նրանց, ովքեր փոխում են իրենց սրտերը և գործողությունները: Աստծո փրկագնման և վերականգնման նպատակը կավարտվի: Նա կունենա ժողովուրդ, ովքեր կարտացոլեն Իր հատկանիշները: Արարչագործության նպատակը (հաղորդակցությունը Աստծո և մարդկության միջև) կիրականանա:

- **«դուք կ'ճանաչեք»** Հաճախ «ճանաչել, իմանալ» ունի եբրայերեն իմաստ, որը նշանակում է անձնական հաղորդակցություն, մտերմիկ հարաբերություն, բայց այստեղ դրան հաջորդում է «որ» (*hoti*), որը պարզաբանում է ճանաչողական բովանդակությունը: Այս բառը «հավատալ» ունի կրկնակի իմաստ: Հովհաննեսն ընտրում է այս տեսակի բառերի ավետարանը արտահայտելու համար: Հավատացյալները ճանաչում են Նրան (հավատում են Նրան), բայց նաև գիտեն ճշմարտություններ Նրա մասին (հավատում են, որ): Տես Հատուկ Թեմա 2:23.

- **«որ ես իմ չօր մեջ եմ, եւ դուք ինձանում, եւ ես ձեզանում»** Հովհաննեսը հաճախ ընդգծում է Հիսուսի և Հոր միասնությունը (հմմտ. 10:38, 14: 10-11, 17: 21-23): Նա ավելացնում է այն ճշմարտությունը, որ ինչպես Հայրը և Հիսուսը սերտորեն կապված են, այնպես էլ Հիսուսը և Իր հետևորդները (տես Հովհ. 17):

14:21 «Ով որ իմ պատուիրանքներն ունի եւ նորանց պահում է» Սրանք երկու ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅԵՐ են: Հնազանդությունը շատ կարևոր է (տես ծանուցում հ. 15): Դա վկայում է ճշմարիտ դարձի գալը (տես հ. 23):

Առաքյալները հրեա էին և հաճախ օգտագործում էին հակահրեական արտահայտություններ իրենց գրվածքներում: Հրեական աղոթքը, որը սկսվում է ամեն պաշտամունքի ժամանակ Բ Օրին. 6: 4-5, կոչվում էր *Shema*, որը նշանակում է «լսել և անել»: Սա հենց Հովհաննեսի մեկնաբանության միտքն է (տես Հակոբոս 2: 14-26):

- **«եւ ինձ կ'յայտեն նորան»** Սա վերաբերում է կամ (1) հետ-Հարության հայտնվելուն (տես Գործք 10: 40-41) կամ (2) Սուրբ Հոգու ուղարկելուն, որը բացահայտեց և ձևավորեց Քրիստոսին հավատացյալների մեջ (տես հ. 26; Հռոմ. 8: 29; Գաղ. 4.19):

Հիսուսը հավատում էր և պնդում, որ Նա (1) ներկայացրեց (2) խոսեց և (3) հայտնեց Հորը: Հավատացյալների համար, Հիսուսի կողմից ասված այս հեղինակավոր խոսքը արձանագրված առաքելական գրողների կողմից միակ հստակ տեղեկատվության աղբյուրն է Աստծո և Նրա նպատակների մասին: Հավատացյալները պնդում են, որ Հիսուսի և Սուրբ Գրքի հեղինակությունը (պատշաճ կերպով մեկնաբանված) վերջնական հեղինակությունն են բանականությունը, փորձառությունը և ավանդույթ օգտակար են, բայց ոչ վերջնական:

Կա սահուն համագործակցություն Հոգու և Որդու գործի միջև: Campbell Morgan-ը ասել է, որ լավագույն անունը Հոգու համար «ուրիշ Հիսուս»-ն է: Տես Հատուկ Թեմա 14:16.

14:22 Տես ծանուցում հ.19

▪ «Յուդան՝ ոչ թե Իսկարիովտացին» Սա ևս մեկ անուն էր Թադեոսի համար (տես Մատթ. 10: 3; Մարկ. 3:18): Տես Հատուկ Թեմա 1:45

14:23 «Եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը խոսում է պոստենցիալ գործողության մասին: Աշակերտների սերը Հիսուսի հանդեպ կերևա, երբ սիրեն միմյանց (տես հհ. 15,21):

14:24 «էք՝ դուք» Էկզեգետիկ հարցն այն է, թե «Ում է այս «դու» վերաբերում»: Քերականորեն ԴԵՐԱՆՈՒՆԸ «լսել» ԲԱՅԻ մեջ է (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ, ԵՐԿՐՈՐԴ ԴԵՄՔ ՀՈԳՆԱԿԻ): Այն կարող է վերաբերել

1. մարդիկ աշխարհում, ովքեր մերժում են Հիսուսի պատգամը
2. աշակերտներին, քանի որ նրանք ընդունում են Հիսուսի խոսքերը ինչպես Հոր խոսքերը (տես հհ. 10-11):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 14:25-31

²⁵ Այս խօսքի ձեզ հետ քանի որ ձեզ մօտ եմ: ²⁶ Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կ'ուղարկվի իմ անունովը, նա ամեն բան կ'սովորեցնե ձեզ, եւ կ'յիշեցնե ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի: ²⁷ Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. Ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս եւ տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չ'խռովի եւ չ'վախենայ: ²⁸ Լսեցիք, որ ես ասեցի ձեզ, թէ Գնում եմ, եւ կ'գամ ձեզ մօտ. եթէ ինձ սիրէիք, ապա ուրախ կ'լինէիք՝ որ ասեցի, Հօր մօտ եմ գնում. որովհետեւ իմ Հայրը մեծ է ինձանից: ²⁹ Եւ հիմա ասեցի ձեզ՝ լինելուց առաջ. Որ երբոր լինի, հաւատաք: ³⁰ Այլ եւս շատ չեմ խօսիլ ձեզ հետ, և որովհետեւ այս աշխարհքի իշխանը գալիս է, եւ ինձանում ոչինչ չ'ունի: ³¹ Այլ որպէս զի աշխարհքը իմանայ, թէ ես սիրում եմ Հօրը. եւ ինչպէս Հայրը պատուիրեց ինձ, այնպէս եմ անում. Վեր կացեք, գնանք այս տեղից:

14:25 «Այս» Սա պետք է վերաբերի վերնատան ուսումնաբաններին (գլուխներ 13-17, սակայն այն արտահայտվում է մասնավորապես, հհ. 15:11, 16: 1,4,6,25,33):

14:26 «Սուրբ Հոգին» Այս տիտղոսը Երրորդության երրորդ անձի համար հանդիպում է միայն 1.33; 20:22, և այստեղ Հովհաննեսի մեջ (տես Հատուկ Թեմա: Սուրբ I Հովհ. 2:20): Սակայն, Նա կոչվում է ևս մի քանի այլ անուններով Հովհաննեսի Ավետարանում (Միսիթարիչը, Ճշմարտության Հոգին, Հոգին):

Նոր Կտակարանում կան մի քանի հատվածներ, որոնք վերաբերվում են Հոգուն անձնական առումով (տես Մարկ 3:29, Ղուկաս 12:12; Հովհ. 14:26; 15:26; 16:7-15, տես Հատուկ Թեմա ստորև): Կան նաև այլ տեքստեր, որտեղ ՉԵԶՈՔ ՍԵՌ է կիրառվում Հոգու համար, քանի որ հունարեն Հոգի (*pneuma*) բառը չեզոք է (տես 14:17, Հռոմ. 8:26):

Բացի այդ, այս պահին ընդամենը մի բառ Երրորդության գաղափարի մասին: «Երրորդություն» տերմինը աստվածաշնչյան բառ չէ, սակայն, մի քանի տեքստերում երեք անձերի միակ ճշմարիտ Աստծուն միասին դրսևորելը երևում է (տես, Հատուկ Թեմա ստորև): Եթե Հիսուսը Աստված է իսկ Հոգին անձ, ապա աստվածաբանորեն որպես միաստվածություն (տես 2 Օր. 6: 4-6), մենք մտնում ենք եռյակ-միության մեջ, ոչ թե առաջադեմ դրսևորումների, այլ հավիտենական անձերի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ուշադրություն դարձրեք Երրորդության բոլոր երեք Անձերի գործունեությանը: «Երրորդություն» տերմինը առաջինը օգտագործվել է Տերտուլիանի կողմից, այն աստվածաշնչյան չէ, բայց գաղափարը առկա է Սուրբ Գրքում:

1. Ավետարաններ

- ա. Մաթ. 3:16-17; 28:19 (և զուգահեռ տեքստերը)
 - բ. Հովհ. 14:26
 - 2. Գործք Առաքելոց - Գործք 2:32-33, 38-39
 - 3. Պողոս
 - ա. Հռ. 1:4-5; 5:1,5; 8:1-4,8-10
 - բ. I Կոր. 2:8-10; 12:4-6
 - գ. II Կոր. 1:21; 13:14
 - դ. Գաղ. 4:4-6
 - ե. Եփ. 1:3-14,17; 2:18; 3:14-17; 4:4-6
 - զ. I Թես. 1:2-5
 - է. II Թես. 2:13
 - ը. Տիտոս 3:4-6
 - թ. Պետրոս - I Պետ. 1:2
 - ժ. Հուդա - հհ. 20-21
 - 4. Հին Կտակարանը նույնպես ակնարկում է Երրորդության մասին
 - 1. Աստծո համար օգտագործված է հոգնակի թիվ
 - ա. *Elohim* անունը հոգնակի է, բայց երբ Աստծո համար է օգտագործվում միշտ եզակի թվի բայով է հանդես գալիս
 - բ. «Մեր» Ծննդ. 1:26-27; 3:22; 11:7
 - գ. «Մեկ» *Shema*-ում 2 Օրին. 6:4 հոգնակի է (ինչպես Ծննդ. 2:24; Եզ. 37:17)
 - 2. Տիրոջ հրեշտակը, որպես աստվածության տեսանելի ներկայացուցիչ
 - ա. Ծննդ. 16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16
 - բ. Ելից 3:2,4; 13:21; 14:19
 - գ. Դատ. 2:1; 6:22-23; 13:3-22
 - դ. Չաք. 3:1-2
 - 3. Աստված և Հոգին առանձին են , Ծննդ. 1:1-2; Սաղ. 104:30; Ես. 63:9-11; Եզ. 37:13-14
 - 4. Աստված (YHWH) և Մեսիան (*Adon*) առանձին են, Սաղ. 45:6-7; 110:1; Չաք. 2:8-11; 10:9-12
 - Մեսիան և Հոգին առանձին են, Չաք. 12:10
 - 5. Բոլոր երեքն էլ նշված են Ես. 48:16; 61:1
- Հիսուսի և Հոգու աստվածությունն ու Անձ լինելը լուրջ խնդիր էր ներկայացնում իրենից վաղ հավատացյալների համար, որոնք ուժեղ հարում էին միաստվածության/մոնոթեիստիկ գաղափարին:
- 1. Տերտուլիան – Որդուն ստորադասեց Հորից
 - 2. Օրիգեն – ստորադասեց Որդու և Հոգու աստվածային էությունը
 - 3. Արիստի – մերժեց Որդու և Հոգու աստվածությունը
 - 4. Միստրիստություն – հավատում էին նույն Աստծո հաջորդական արտահայտմանը
- Երրորդությունը դա պատմականորեն զարգացված ձևակերպում է, բայց աստվածաշնչյան նյութի հիմքի վրա:
- 1. Հիսուսի ամբողջական աստվածությունը և Նրա հավասարությունը Հորը հաստատվեց 325 Ք.Հ. Նիկիայի ժողովի ժամանակ
 - 2. Սուրբ Հոգու ամբողջական աստվածությունը և անձեղությունը, Նրա հավասարությունը Հոր և Որդու հետ հաստատվեց (381 Ք.Հ.) Կոնստանդնուպոլիսի ժողովի ժամանակ
 - 3. Երրորդության վարդապետությունը ամբողջությամբ արտահայտվում է Օգոստինոսի կողմից իր աշխատության մեջ «*De Trinitate*»:
- Իրականում այստեղ խորհուրդ կա: Բայց Նոր Կտակարանը լրիվ պնդում է մեկ աստվածային էությունը երեք հավիտենական անձերի արտահայտմամբ:

▪ **«որ Հայրը կ'ուղարկե»** Վաղ եկեղեցում կար հսկայական պայքար (չորրորդ դար) այն մասին, թե արդյոք Հոգին եկավ Հորից (տես Հովհ. 3:34; 14:16; 16:26) թե Որդուց (հմմտ. Հովհ. 15:26; 16:7; Դուկ. 24:49; Գործք 2:33): Արիոս - Աթանաս բանավեճում աստվածաբանական այս հարցը Հայր Աստծո և Հիսուս Որդու միջև եղած ամբողջական և հավիտենական աստվածության և հավասարության մասին էր:

- **«ամեն բան կ'սովորեցնէ ձեզ»** Մա պետք է որակել: Հոգին չի սովորեցնում հավատացյալներին գիտելիքի բոլոր ոլորտներում, այլ հոգևոր ճշմարտության մասին, հատկապես Հիսուսի անձի և գործի՝ ավետարանի մասին (տես 16: 13-14; Ա Հովհ 2: 20,27):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՈՐՊԵՍ ԱՆՉ

Հին Կտակարանում «Աստծո Հոգին» (այն է *ruach*) հանդիսանում էր այն ուժը, որը կատարում էր ԵՀՈՎԱ-յի նպատակը, բայց ոչ մի ակնարկ չկա, որ Նա Անձ էր (այն է, հինկտակարանյան մոնոթեիզմ/միաստվածություն): Ինչևէ, Նոր Կտակարանում Սուրբ հոգու անձեղությունն ու Նրա բնավորության առանձնահատկություններն արձանագրված են:

1. Նրան կարող են հայհոյել (հմմտ. Մաթ. 12:31; Մարկ. 3:29)
2. Նա սովորեցնում է (հմմտ. Դուկ. 12:12; Հովհ. 14:26)
3. Նա վկայում է (հմմտ. Հովհ. 15:26)
4. Նա հանդիմանում և խրատում է (հմմտ. Հովհ. 16:7-15)
5. Նա հաղես է գալիս «ով» դերանունով (այն է, *hos*) (հմմտ. Եփ. 1:14)
6. Նրան կարող են տրտմեցնել (հմմտ. Եփ. 4:30)
7. Նրան կարող են հանգցնել (հմմտ. Ի Թես. 5:19)

Մի շարք աստվածաշնչյան տեքստեր, որոնց վրա է հիմնված Երրորդության գաղափարը, նաև խոսում է երեք Անձերի մասին

1. Մաթ. 28:19
2. Ի Կոր. 13:14
3. Ի Պետ. 1:2

Սուրբ Հոգին կապված է մարդկային գործողությունների հետ

1. Գործք 15:28
2. Հռ. 8:26
3. Ի Կոր. 12:11
4. Եփ. 4:30

Գործք Առաքելոց գրքի հենց սկզբում ընդգծված է Սուրբ Հոգու դերը: Պենտեկոստի օրը Սուրբ Հոգու գործունեության սկիզբը չէր, այլ մի նոր փուլ: Հիսուսը միշտ ուներ Հոգին: Նրա մկրտությունը Սուրբ Հոգու գործունեության սկիզբը չէր, այլ մի նոր գլուխ: Դուկասը պատրաստում է եկեղեցուն մի նոր արդյունավետ ծառայության: Հիսուսը ուշադրության կենտրոնում է, Սուրբ Հոգին առաջվա պես հանդիսանում է գործող միջոց, իսկ նպատակը մնում է Աստծո սերը, ներողամտությունը և բոլոր մարդկանց վերականգնումը Իր պատկերին և նմանությամբ:

- **«Էս կ'իշխեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի»** Հոգու նպատակներն են

1. հանդիմանել մարդկանց մեղքի համար
2. նրանց բերել Քրիստոսին
3. մկրտել նրանց Քրիստոսի մեջ
4. ձևավորել Քրիստոսին նրանց մեջ (տես 16: 7-15)
5. օգնել Առաքյալներին հիշել բոլոր այն բաները, որ Հիսուսն ասել էր նրանց և հստակեցնել դրանց նշանակությունը, որպեսզի նրանք կարողանան դրանք արձանագրել Սուրբ Գրքում (տես 2:22; 15:26; 16:13):

Հիսուսը նույնպես հանձնարարեց Առաքյալներին Իր հարությունից հետո, մասնավորապես, այն մասին, թե ինչպես է ՀԿ ցույց տալիս Իրեն և այն կատարվում է Իրենով (տես Դուկ. 24:13):

14:27 «Խաղաղություն եմ թողում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ» Հավատացյալների խաղաղությունը կապված չէ հանգամանքներից, այլ Հիսուսի խոստումների և ներկայության հիման վրա (տես 16:33; Փիլիպ. 4: 7; Կող. 3:15):

«Խաղաղություն» բառն օգտագործվում է թե օբյեկտիվ իմաստով՝ վերականգնում Աստծո հետ, և թե սուբյեկտիվ իմաստով՝ անվտանգության և կայունության զգացում դժվարին հանգամանքներում: Այն արտացոլում է հրեական ողջույն, *Shalom*/Շալոմ, որը նշանակում է, թե խնդիրների

բացակայություն և թե գոհունակության ներկայություն (տե՛ս 20: 19,21,26; III Հովհ. 14; Եփես. 2:14; Թվեր 6:26; Սաղ. 29:11; Ես. 9: 6): Այն բնութագրում է նոր դարաշրջանը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Բնագրում հունարեն այս տերմինը նշանակում էր «միասին կապել այն, ինչը կոտրված էր»: Նոր Կտակարանում խոսվում է խաղաղության երեք իմաստների մասին

1. որպես օբյեկտիվ կողմ, մեր խաղաղությունը Աստծո հետ Քրիստոսի միջոցով (հմմտ. Կող. 1:20)
2. որպես սուբյեկտիվ կողմը մեր ուղիղ լինելը Աստծո առաջ (հմմտ. Հովհ. 14:27; 16:33; Փիլ. 4:7)
3. որ Աստված միավորել է մեկ նոր մարմնում, Հիսուս Քրիստոսի միջոցով, թե հավատացյալ հրեաներին և թե հույներին (հմմտ. Եփ. 2:14-17; Կող. 3:15):

«Խաղաղություն» բառի հետ կապված կա լավ մեկնաբանություն Նյումանի և Նիդայի գրքում «Թարգմանիչի տեղեկատու/ձեռնարկ Newman and Nida, *A Translator's Handbook on Paul's Letter to the Romans*, էջ 92:

«Թե Հին և թե Նոր Կտակարանում «խաղաղություն» բառը ունի շատ լայն իմաստային նշանակություն: Հիմնականում այն նկարագրում է մարդկային կյանքի բարեկեցությունը; սա նաև որդեգրվեց հրեաների կողմից որպես ողջունի ձև: Այս բառն ուներ այնքան խորը իմաստ, որ կարող էր օգտագործվել նաև հրեաների կողմից՝ Մեսիական փրկությունը նկարագրելու համար: Այդ իսկ պատճառով եղել են ժամանակներ, երբ այն նաև օգտագործվել է որպես հոմանիշ «Աստծո հետ ճիշտ հարաբերություն ունենալ» տերմինի: Այստեղ տերմինը հանդես է գալիս որպես ներդաշնակ հարաբերության նկարագրություն՝ հաստատված մարդու և Աստծո միջև ընկած այն հիմքի վրա, որ Աստված մարդուն Իր առջև արդար կանգնեցրեց»:

▪ **«Թողում»** Grant Osborne, *The Hermeneutical Spiral* (էջ 21) տալիս է հիանալի մեկնաբանություն կոնտեքստի առաջնայնության մասին՝ որոշելով բառի իմաստը:

«Տրամաբանական Կոնտեքստը

Շատ իրական իմաստով, տրամաբանական կոնտեքստը ամենահիմնական գործոնն է մեկնաբանության մեջ: Ես դասարանում ասում եմ, որ եթե որևէ մեկը կիսով չափ քնած է և չի լսել իմ տված հարցը, կա ճիշտ լինելու հիսուն տոկոս փոփոխությունը, եթե նա պատասխանում է «կոնտեքստ»: Տերմինը ինքնին ընդգրկում է ազդեցությունների մի հսկայական խումբ տեքստի վրա: Սրանք կարող են լավագույնս դիագրամա անել, որպես մի շարք համակենտրոն շրջանակներ, որոնք ընթանում են բուն հատվածից դուրս:

Ինչքան ավելի ենք մոտենում կենտրոնին, ներգործումը հատվածի իմաստի վրա մեծանում է: Ժանրը, օրինակ, նույնացնում է գրականության տեսակը և օգնում է թարգմանչին ճանաչել զուգահեռները, բայց սրանք այնքան էլ ազդեցիկ չեն, ինչպես Սուրբ Գրքի մնացած մասերի վրա: Մենք կարող ենք, օրինակ, բացահայտել Հայտնության գիրքը, որպես ապոկալիպտիկ; թեև միջկտակարանյան և հելլենիստական ապոկալիպտիկը տրամադրում է կարևոր զուգահեռներ, խորհրդանիշներից շատերը վերցված են Հին Կտակարանից: Սանդղակի մյուս ծայրին, անմիջական կոնտեքստը վերջնական մրցավար է բոլոր որոշումների համար կապված տերմինի իմաստից կամ գաղափարից: Ոչ մի երաշխիք չկա, որ Պողոսն օգտագործում է տերմինը նույն կերպ Փիլ. 1, ինչպես որ նա անում է Փիլ. 2: Լեզուն պարզապես չի աշխատում այդ կերպով, որովհետև ամեն մի բառ ունի բազմաթիվ իմաստներ և գրողի օգտագործումը կախված է սույն կոնտեքստից, այլ ոչ թե իր օգտագործման նախորդ կոնտեքստներից: Լավ օրինակ կարող է լինել *aphiemi* օգտագործումը Հովհ. 14:27-ում «Խաղաղություն եմ թողնում ձեզ», և 16:28-ում, «դարձյալ թողնում եմ աշխարհը»: Մենք հազիվ թե մեկնաբանենք մեկը մյուսի փոխարեն, քանի որ դրանց օգտագործումը հենց հակառակն է: Առաջինում Հիսուսն ինչ-որ բան է տալիս աշակերտներին, երկրորդում նա ինչ-որ բան է վերցնում (իրեն) հեռացնում նրանցից: Նույնիսկ ավելի քիչ մենք կկարդանք տերմինը դրա ընդհանուր օգտագործման ժամանակ (ինչպես I Հովհ. 1: 9) «ներման» համար: Մյուս հատվածներն օգնում են մեզ որոշելու

իմաստային շարքը (բառը կարող է նշանակել տարբեր բաներ), բայց միայն անմիջական կոնտեքստը կարող է սահմանափակել իրական իմաստի հնարավորությունները» (էջ 21):

- **«ձեր սիրտը չ'խռովի»** Սա ՆԵՐԿԱ ՊԱՍԻՎ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է բացասական մասնիկով, որը սովորաբար նշանակում է «դադարեցնել որևէ գործողություն, որն արդեն իսկ ընթացքի մեջ է», - կրկնել համար 1.

14:28 «Եթե ինձ սիրեիք» Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, ինչպես համար 7, որը կոչվում է «հակառակ այն հանգամանքին»: Ավելի լավ կլինի, որ Հիսուսը գնա Հոր մոտ և ուղարկի Հոգուն, բայց իհարկե, այս պահին նրանք դա չեն գիտակցում:

- **«որովհետև իմ Հայրը մեծ է ինձանից»** Սա այնպիսի արտահայտություն չէ, որը կենտրոնանում է Որդու անհավասարության վրա, այլ սա խոսում է Երրորդության Անձերի ֆունկցիաների մասին, ինչը վերաբերվում է մարդկության փրկությանը (տես 10: 29-30): Որդու այս ենթակայությունը միայն մի ժամանակահատվածի համար էր, երկրի վրա գտնվելու ընթացքում՝ իրականացնելու հայտնության և փրկագնման Եռյակ Աստծո ծրագիրը (հմմտ. 17: 4-5; Փիլիպ. 2: 6-11): Սակայն կա իմաստ, որ Հայրը, լինելով ուղարկողը, առաջնային է (տես 13:16, I Կորնթ. 15: 27-28; Եփես. 1: 3-14):

14:29 «Ես հիմա ասեցի ձեզ՝ լինելուց առաջ» Սա նրա համար էր, որ նրանց հավատքն ամրապնդվեր (տես 13:19; 16: 4):

14:30

- NASB “աշխարհի իշխանը”
- NKJV, NRSV,
- TEV “այս աշխարհի իշխանը”
- NJB “այս աշխարհի իշխանը”

Սա վերաբերում է սատանային, որի գործունեության ոլորտն այժմ երկիրն է (տես 12:31; 16:11; II Կորնթ. 4: 4, «այս աշխարհի աստվածը», Եփես. 2: 2, «ողի իշխանութեան իշխանը»): Հնարավոր է, Հիսուսը տեսավ հեռացող Հուդային որպես սատանայի գալուստը (տես 13:27): Տես Հատուկ Թեմա 12:31.

-
- NASB, NKJV “նա ինձանում ոչինչ չունի”
- NRSV, TEV,

NJB “նա գործություն չունի ինձ վրա”

Իմաստը նրանում է, որ սատանան չունի մեղադրանքի հիմքեր, ոչ առավել իշխանություն կամ բնավ ոչինչ ընդհանուր Հիսուսի հետ (տես Եբր. 4:15):

1. Ջեյմս Մոֆաթը/ James Moffatt այն թարգմանում է որպես «նա ոչ մի իշխանություն չունի ինձ վրա»
2. Ուիլիամ Ֆ. Բեքը /William F. Beck, որպես «նա չունի պահանջ ինձ վրա»
3. Նոր Անգլերեն Աստվածաշունչ/New English Bible, որպես «ոչ մի իրավունքներ ինձ վրա»
4. Քսաներորդ Դարի Նոր Կտակարանը, որպես «ոչ մի ընդհանուր բան ինձ հետ»

14:31 «Այլ որպես զի աշխարհքը իմանայ» Սատանան Աստծո կամքի մեջ է և մանիպուլյացվում է Աստծո վերջնական նպատակի համար մարդկության փրկագնման մեջ: Տես A. B. Davidson *The Theology of the Old Testament*, Հին Կտակարանի Աստվածաբանությունը, էջ 300-306:

- «Էւ ինչպէս Հայրը պատուիրեց ինձ, այնպէս եմ անում» Հոր կամքն էր, որ Հիսուսը մահանար (հմմտ Ես. 53: 10; Մարկ. 10:45; II Կորնթ. 5:21): Տես Հատուկ Թեմա: «Պատվիրանը» Հովհաննէսի Գրվածքներում 12:50.
- «Վեր կացեք, գնանք այս տեղից» Սա ՆԵՐԿԱ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սա շատ բարդ արտահայտություն է, քանի որ այն հայտնվում է Մատթեոսի և Մարկոսի ավետարաններում Գեթսեմանի այգում, երբ Հուդան և ոստիկանների խումբը մոտենում է Հիսուսին: Թե ինչու է այն օգտագործվում այս Վերնատան կոնտեքստում (գլուխները 13-17) անորոշ է: Հնարավոր է Հիսուսը հեռացել էր Վերնատանից և ուսուցանում էր Գեթսեման տանող ճանապարհին (տես 18:1):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Բացատրեք թեիզմի, դեիզմի և քրիստոնեության տարբերությունը հիմնվելով 1-ին համարի վրա:
2. Բացատրեք հինկտակարանյան նախապատմությունը երեք գոյականների վերաբերյալ, որոնք առկա են 6-րդ համարում:
3. Կարո՞ղ է մեկը աղոթքի աստվածաբանություն կառուցել ելնելով միայն 13 համարից:
4. Ո՞րն է Սուրբ Հոգու հիմնական նպատակը: (թե կորսվածի և թե փրկվածի հանդեպ)
5. Արդյո՞ք սատանան Աստծո կամքի մեջ է:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 15

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսը ճշմարիտ Որբ	Ճշմարիտ Որբը	Քրիստոնյա կյանքի օրինակը	Հիսուսը Իրական Որբ	Ճշմարիտ Որբը
15:1-10	15:1-8	15:1-11	15:1-4	15:1-17
	Կատարելության սերն ու ուրախությունը		15:5-10	
	15:9-17			
15:11-17		15:12-17	15:11-17	
Աշխարհի ատելությունը	Աշխարհի ատելությունը		Աշխարհի ատելությունը	Աշակերտները և աշխարհը
15:18-16:4ա				15:18-16:4ա
15:18-25	15:18-25	15:18-25	15:18-25	
	Գալիք մերժում			
15:26-16:4ա	15:26-16:4	15:26-27	15:26-16:4ա	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ և ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏԸ 15:1-27 հհ.

Ա. Սա հիանալի և հուզիչ հատված է: Այն հավատացյալներին քաջալերում է Աստծո սիրո և պտղատու լինելու խոստման մասին, բայց այստեղ կան նաև զգուշացումներ: Այս բաժնում շատ դժվար է քննարկել աստվածաբանական ավանդույթները, թույլ տվեք մեջբերում կատարել իմ ամենասիրելի մեկնաբաններից մեկին, Ֆ.Ֆ.Բրյուս «Հարցերի պատասխանները» գրքից, [F. F. Bruce in his book *Answers to Questions*].

Ի՞նչ են նշանակում «եթե ինձանում չմնաք» և «եթե մեկն ինձանում չէ մնում» արտահայտությունները Հովհ.15:4,6-ում: Հնարավո՞ր է չմնալ Քրիստոսի մեջ:

Այսպիսի հատվածներն ինքնին դժվար չեն հասկանալ, դժվարությունը առաջանում է այն ժամանակ, երբ մենք փորձում ենք դրանք և ուրիշ սուրբգրային հատվածներ դնել մեր աստվածաբանության շրջանակի մեջ, փոխարենը դրանք օգտագործել մեր աստվածաբանությունը հիմնավորելու համար: Այն ժամանակ, երբ մեր Տերը խոսում էր Իր աշակերտների հետ արդեն ուներ վառ օրինակ այն մեկի, ով չցանկացավ մնալ Նրանում՝ Հուդա Իսկարիովտացին, նա ով լքեց նրանց: Հուդան ընտրվեց ճիշտ այնպես ինչպես մնացած տասնմեկը (Ղուկ. 6:13; Հովհ. 6:70); և նրանց մտերմությունը Տիրոջ հետ ոչ մի արտոնություն չտվեց նրանց, բայց դա նրան հավասարաչափ չէր բացված: Այն սուրբգրային հատվածները, որոնք միանգամայն հստակ խոսում են սուրբերի վերջնական համբերության մասին, ոչ մի դեպքում չի կարելի սխալ օգտագործել նվազեցնելով իմաստը, որոնք ասում են ուրացության վտանգի մասին» (էջ 71-72):

- Բ. Չարմանալի է, թե որքան հաճախ է այս կոնտեքստում օգտագործվում ԱՕՐԻՍՏ ժամանակաձևը, նույնիսկ այնտեղ որտեղ աստվածաբանական տեսակյունից, կարելի էր սպասել ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ: Հնարավոր է, որ ԱՕՐԻՍՏ ժամանակաձևը տալիս է իմաստ մարդու ամբողջ կյանքի ամփոփման և ընկալման, որպես մեկ ամբողջ:
- Գ. Գլուխ 15-ը հնարավոր չէ ճիշտ բաժանել ըստ պարբերությունների: Հովհաննեսի Ավետարանը ինչպես նաև I Հովհաննու թուղթը մնան է բազմերանգ գրեթե մի: Նրա վրա կրկին ու կրկին հայտնվում են որոշակի նախշեր:
- Դ. «Կենալ, մնալ» (*menō*) տերմինը Նոր Կտակարանում հանդիպում է 112 անգամ: Քառասունը հանդիպում է Հովհաննեսի Ավետարանում, իսկ 26 իր թղթերում: Սա Հովհաննեսի գլխավոր աստվածաբանական թեման է: Չնայած գլուխ 15 իրենից ներկայացնում է Իր մեջ կենալու անհրաժեշտության Հիսուսի պատվերի դասական արտահայտումը, այս Ավետարանում այս տերմինն ունի ավելի լայն իմաստ:
 1. Օրենքը մնում է հավիտյան(Մաթ. 5:17-18) ինչպես նաև Քրիստոսը (12:34)
 2. Եբրայեցիս թղթում խոսվում է հայտնության նոր միջոցների մասին, ոչ թե ծառայի միջոցով այլ Որդու, որը կենում է Հոր մեջ (Եբր. 1:1-3, ինչպես նաև Հովհ.8:35)
 3. Հիսուսի մասին ասվում է, որ Նա կերակուր է տալիս, որը մնում է հավիտյան (6:27) և պտուղ է տալիս, որը մնում է (15:16): Այս երկու փոխարեություններն էլ արտահայտում են նույն ճշմարտությունը՝ Քրիստոսին ունենալու մեր կարիքը, թե (1) նախնականում, և թե (2) շարունակաբար (հմմտ. 6:53; 15:3)
 4. Հիսուսի մկրտության ժամանակ Հովհաննես Սկրտիչը տեսավ Հոգուն, որը իջավ վերևից և մնաց Հիսուսի վրա (1:32)
- Ե. Տես Հատուկ Թեմա: Կենալ, մնալ I Հովհ. 2:10.
- Զ. 11-16հհ-ում աշակերտներին խոստացվում է Հիսուսի ուրախությունը, իսկ 17-27հհ. նրանց խոստացվում է Հիսուսի հալածանքը: Հալածանքի թեման շարունակվում է մինչև 16:4ա: Ինչևէ, այս ամեն ինչի մեջ հավատացյալները պետք է սիրեն միմյանց այնպես ինչպես Նա սիրեց նրանց:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 15:1-11
¹Ես եմ ճշմարիտ որթը, ես իմ Հայրը մշակել եմ: ²Ամեն ճիւղ, որ ինձանում է ես պտուղ չէ բերում, Նա կտրում է նորան. ես ամեն պտուղ բերողին մաքրում է, որ էլ աւելի պտղաբեր լինի: ³Դուք արդէն մաքուր էք այն խօսքի համար, որ ձեզ հետ խօսեցի: ⁴Կացեք ինձանում՝ ես ես ձեզանում. ինչպէս որ ճիւղն իր անձիցը կարող չէ պտուղ բերել, եթէ որթումը չմնայ, այսպէս ոչ էլ դուք՝ եթէ ինձանում չմնաք: ⁵Ես որթն եմ՝ դուք ճիւղերը. նա որ ինձանում մնում է, ես ես նորանում, նա շատ պտուղ է բերում. որովհետեւ առանց ինձ չէք կարող ոչինչ անել: ⁶Եթէ մէկն ինձանում չէ մնում, նա դուրս կգցուի ինչպէս ճիւղը, եւ կչորանայ. եւ ժողովում

են նորանց եւ կրակի մէջ գցում, եւ այրվում է: ⁷Եթէ կենաք ինձանում՝ եւ իմ խօսքերը ձեզանում կենան, ինչ որ էլ կամենաք, կխնդրէք, եւ կլինի ձեզ: ⁸Մորանով փառատրուեցաւ իմ Հայրը, որ շատ պտուղ բերէք. եւ իմ աշակերտները լինիք: ⁹Ինչպէս իմ Հայրն ինձ սիրեց, եւ էլ ձեզ սիրեցի. կացէք իմ սէրի մէջ: ¹⁰Եթէ իմ պատուիրանքները պահէք, իմ սէրի մէջը կկենաք. ինչպէս ես իմ Հօր պատուիրանքները պահեցի, եւ կենում եմ նորա սէրի մէջ: ¹¹Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ իմ ուրախութիւնը ձեզանում մնայ, եւ ձեր ուրախութիւնը յցուած լինի:

15:1 «Ես եմ ճշմարիտ որբը» Սա Հիսուսի «Ես Եմ» հայտնի դրոյթներից մեկն է Հովհաննեսի Ավետարանում (հմմտ. 4:26; 6:35; 8:12; 10:7,9,10,11,14; 11:25; 14:6): Հին Կտակարանում խաղողի որթատունկը Իսրայելի խորհրդանիշն էր (Սաղ. 80:8-16; Ես. 5:1-7; Եր. 2:21; Եզ. 15; 19:10; Ովսիա 10:1; Մաթ. 21:33; Մարկ. 12:1-12, Հռ. 11:17): Հին Կտակարանում այս օրինակները միշտ ունեն բացասական լրացուցիչ իմաստ: Հիսուսը հաստատում է, որ Նա իդեալական, կատարյալ իսրայելացի էր (հմմտ. Եսայա 53): Ինչպէս Պողոսն է օգտագործում Քրիստոսի մարմին, Քրիստոսի հարս և Աստծո տուն արտահայտությունները որպէս փոխաբերություն եկեղեցու համար, այնպէս էլ Հովհաննեսը՝ որբը: Սա նշանակում է, որ եկեղեցին է ճշմարիտ Իսրայելը, Հիսուսի հետ ունեցած հարաբերության շնորհիվ, որպէս ճշմարիտ որթատունկ (հմմտ. Գաղ. 6:16; I Պետ. 2:5,9; Հայտ. 1:6): Տես Հատուկ Թեմա 6:55 և 17:3: Տես ծանուցում 8:12.

Որոշ մեկնաբաններ պնդել են, որ վերնատան պատմությունը ավարտվում է 14:31-ով, «վեր կացէք, գնանք այս տեղից»: Եթե այդպէս է, ապա 15-17 գլուխները ուսուցանվել են Գեթսեմանի ճանապարհին: Եվ եթե դա այդպէս, ուրեմն հնարավոր է «որթի» պատկերը վերցրել է տաճարից երևացող ոսկեփայլ որթատունկի օրինակից, երբ Հիսուսն ու տասնմեկ աշակերտները քայլում էին այդ գիշեր տաճարի գավիթով:

- «եւ իմ Հայրը մշակն է» Հիսուսը նորից պնդում է Հոր հետ ունեցած Իր մտերմիկ, սերտ և ջերմ հարաբերությունը և միառժամանակ Իր հնազանդությունը Հոր կամքին:

15:2 «Ամեն ճիւղ, որ ինձանում է եւ պտուղ չէ բերում, Նա կտրում է նորան. եւ ամեն պտուղ բերողին... որ էլ աւելի պտղաբեր լինի» Այս համարի մեջ երկու անգամ օգտագործված է ՆԵՐԿԱ ԳԵՐԲԱՅ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ: Պտուղ բերելը, և ոչ թե բողբոջելը, աճելը փաստում են փրկությունը (հմմտ. Մաթ. 7:16,20; 13:18; 21:18-22; Գուկ. 6:43-45): Ըստ կոնտեքստի Հիսուսը խոսում էր կամ(1) Հուդայի մատնության(հմմտ. հհ. 6; 13:10; 17:12) կամ էլ (2) անհավատարիմ աշակերտների մասին (հմմտ. 2:23-25; 8:30-47; I Հովհ. 2:19; II Պետ. 2): Հովհաննեսի Ավետարանում ներկայացված են հավատքի տարբեր մակարդակներ:

- «մաքրում է» Բառացիորեն սա «մաքրել» է: Այն գտնվում է միայն այստեղ Նոր Կտակարանում: Հովհաննեսը ուրիշ բառ էլ է օգտագործում այդ երկակի լրացուցիչ իմաստի համար (այն է, կոտրատել և մաքրել, հմմտ. հ. 3; 13:10): Սա ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿՁԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Հավատացյալների կյանքում տառապանքն ունի նպատակ (հմմտ. հհ. 17-22): Գրանք առավելագույնս ավելացնում են պտուղ բերելու հնարավորությունը, բացահայտում են կեղծիքը և ամրապնդում են հավատացյալի մշտական կախվածությունը Աստծուց (հմմտ. Մաթ. 13:20-23; Հռ. 8:17; I Պետ. 4:12-16): Այս շատ բարդ թեմային նվիրված կան երկու լավ գործնական գրքեր (1) Մ. Ստանֆորդ «Հոգևոր աճի սկզբունքները» [*Principles of Spiritual Growth* by Miles Stanford] և (2) Հ.Ու.Սմիթ «Քրիստոնյայի երջանիկ կյանքի գաղտնիքը» [*The Christian's Secret of a Happy Life* by Hannah Whithall Smith]:

Համաձայն 13-17 գլուխների կոնտեքստի, հնարավոր է «մաքրելը» կապել 13 գլխի ոտք լվալու հետ: Աշակերտներն արդեն լվացված էին (փրկված), բայց նրանց ոտքերը պետք է կրկին լվացվեր (շարունակական ներողամտություն): Այս ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎԻ ԲԱՅԸ հասցեագրված է Քրիստոսի աշակերտներին, ինչպէս I Հովհ.1:9, թվում է հաստատում է դա. «Մնալու» համար պահանջվում է ոչ միայն հնազանդություն և խոնարհություն, այլ նաև շարունակական խոստովանություն:

Հավատացյալի կյանքում տառապանքի նպատակը կարող է ունենալ մի քանի ասպեկտներ.

1. զարգացնել քրիստոսանմանություն (հմմտ. Եր. 5:8)
2. ժամանակավոր մեղքի պատիժ
3. պարզապէս միայն կյանքի արդյունք ընկած աշխարհում

Միշտ դժվար է որոշել Աստծո նպատակը, բայց #1 միշտ հնարավոր արդյունք է:

15:3 «Դուք արդեն մաքուր էք» 2-րդ համար «կոտրատել, տակից կտրել չորացած ճյուղերը» (*kathairō*) տերմինը ունի նույն հունարեն արմատը ինչ «մաքուր» (*katharos*) բառը: Այս ամբողջ կոնտեքստը խոսում է ճշմարիտ աշակերտության մասին: Հունարեն տեքստում շեշտը «արդեն» բառի վրա է դրված, որը վստահություն է ներշնչում տասնմեկ աշակերտներին, որ իրենք անվտանգ են Քրիստոսում (համեմատեք նույն արմատը, օգտագործված 13:10, որը վերաբերվում է Հուդա Իսկարիովտացուն):

- **«այն խօսքի համար, որ ձեզ հետ խօսեցի»** (հմմտ. 17:17; Եփ. 5:26; I Պետ. 1:23).

15:4

NASB, NKJV “Կացեք Ինձանում՝ և Ես ձեզանում”

NRSV “Կացեք Ինձանում ինչպես Ես ձեզանում”

TEV “Ինձ հետ միավորված մնացեք, և Ես էլ ձեր հետ միացած կմնամ”

NJB “Մնացեք իմ մեջ, ինչպես Ես ձեր մեջ”

Այստեղ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿՉԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ է (հմմտ. Հովհ. 6:56; I Հովհ. 2:6): Քերականական հարցը հետևյալն է. արտահայտության երկրորդ մասը նկարագրություն է թե՞ համեմատություն: Այս հատվածում մի քանի անգամ շեշտվում է ճշմարիտ սուրբերի համբերության աստվածաբանական վարդապետությունը (հմմտ. հհ. 4,5,6,7,9,10,14; Մարկ. 13:13; I Կոր. 15:2; Գաղ. 6:9; Հայտ. 2:7,11,17,26; 3:5,12,21; 21:7, տես Հատուկ Թեմա 8:31): Ճշմարիտ փրկությունը թե՛ նախնական արձագանք է, և թե՛ շարունակական կյանքի ընթացք: Այս աստվածաբանական ճշմարտությունը հաճախ անտեսում է մեր խանդավառությունը անձնական փրկության վստահության մասին: Աստվածաշնչյան փրկության վստահությունը կապված է

1. հավատքով համբերել
2. ապաշխարել և խոստովանել որպես ապրելակերպ
3. շարունակական հնազանդություն (հմմտ. Հակոբոս և I Հովհաննես)
4. պտուղ բերել (հմմտ. Մաթ. 13:23)

Տես Հատուկ Թեմա: Կենսալ, մնալ I Հովհ. 2:10.

- **«Ճիղն իր անձիցը կարող չէ պտուղ բերել»** Սա ցույց է տալիս Աստծո ներկայության և մասնակցության առաջնությունը: «Պտուղ» տես ծանուցում հ. 5.

- **«Եթե ... չմնայ, եթե ... չմնաք»** Այստեղ երկու դեպքում էլ ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոստենցիալ գործողություն: Մեր հոգևոր արդյունավետությունը կապված է Հիսուսի հետ ունեցած մեր շարունակական հարաբերության հետ:

15:5 «Ուս որ ինձանում մնում է, ես ես նորանում, նա շատ պտուղ է բերում» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱԿՉԵՎԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, որին հետևում է ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ: Շարունակական հաղորդակցությունը (այն է, անձնական հավատքի հարաբերություն) շարունակական պտուղ բերելու աղբյուրն է: Հավատացյալի պտուղ բերելը կախված է նրա վիճակից և արարքներից (հմմտ. Մաթ. 7:15-23; Գաղ. 5:22-23; I Կոր. 13): Հավատացյալներին խոստացված է արդյունավետ և մնայուն պտուղ այն դեպքում, երբ նրանք կմնան Քրիստոսում (հմմտ. հ. 16):

- **«որովհետև առանց ինձ չէք կարող ոչինչ անել»** Այս արտահայտությունը խիստ ԵՐԿԱԿԻ ԲԱՅԱՍԱԿԱՆ է: Այս դեպքում բացասական դրույթի միջոցով հաստատվում է դրական ճշմարտությունը, որի մասին խոսվում է հ. 5 և Փիլ. 4:13:

15:6 «Եթե մեկն ինձանում չէ մնում, նա դուրս կգցուի» Սա ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է: Որթատունկի փայտը անպիտան էր տնային որևէ նպատակներով (վառելափայտ) օգտագործման համար, որովհետև այն այրվում էր շատ արագ ու շատ ջերմություն էր տալիս (հմմտ. Եզ. 15): Թվում է սա վերաբերվում է Հուդային, կամ էլ Իսրայելին: Եթե ոչ, ապա դա պետք է վերաբերվի կեղծ հավատքին (հմմտ. Մաթ. 13:41-42,50; և I Հովհ. 2:19, տես Հատուկ Թեմա 17:12):

Իհարկե սա վախճանաբանական պատկեր է: Լինելու է «հավաքելու օր» և «վառելու օր»: Թե ինչպես ենք մենք ապրում ցույց է տալիս մեր կյանքերի աղբյուրը (այն է, Աստված թե Սատանա): Իրենց պտուղներիցը ճանաչեցեք նրանց (հմմտ. Մաթ 7; Գաղ. 6:7):

- «կրակ» ստորև Տես Հատուկ Թեմա

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿՐԱԿ

Կրակն ունի թե դրական և թե բացասական կողմեր Սուրբ Գրքում

Ա. Դրական

1. տաքացնում է (հմմտ. Ես. 44:15; Հովհ. 18:18)
2. լուսավորում է (հմմտ. Ես. 50:11; Մաթ.25:1-13)
3. նրա վրա եփում են(հմմտ. Ելից 12:8; Ես. 44:15-16; Հովհ. 21:9)
4. գտում է (հմմտ. Թվ. 31:22-23; Առ. 17:3; Ես. 1:25; 6:6-8; Եր. 6:29; Մաղ. 3:2-3)
5. այն խորհրդանշում է սրբություն (հմմտ. Ծննդ. 15:17; Ել. 3:2; 19:18; Եգ. 1:27; Եբր. 12:29)
6. այն խորհրդանշում է Աստծո առաջնորդությունը (հմմտ. Ելից 13:21; Թվ. 14:14; 3 Թագ. 18:24)
7. այն խորհրդանշում է Աստծո զորությունը (հմմտ. Գործք 2:3)
8. այն խորհրդանշում է Աստծո պաշտպանություն (հմմտ. Չաք. 2:5)

Բ. Բացասական

1. այրում է (հմմտ. Հեսու 6:24; 8:8; 11:11; Մաթ. 22:7)
2. կործանում է (հմմտ. Ծննդ. 19:24; Գև. 10:1-2)
3. այն խորհրդանշում է բարկություն (հմմտ. Թվ. 21:28; Ես. 10:16; Չաք. 12:6)
4. այն խորհրդանշում է պատիժ (հմմտ. Ծննդ. 38:24; Գև. 20:14; 21:9; Հեսու 7:15)
5. կեղծ վախճանաբանական նշան (հմմտ. Հայտ. 13:13)

Գ. Աստծո բարկությունը մեղքի դեմ արտահայտվում է կրակի փոխաբերություններով

1. Նրա բարկությունը վառվում է (հմմտ. Ովս. 8:5; Սոփ. 3:8)
2. Նա կրակ է թափում (հմմտ. Նաում 1:6)
3. հավիտենական կրակ (հմմտ. Եր. 15:14; 17:4)
4. վախճանաբանական դատաստան (հմմտ. Մաթ. 3:10; 13:40; Հովհ. 15:6; II Թես. 1:7; II Պետ. 3:7-10; Հայտ. 8:7; 16:8)

Դ. Աստվածաշնչում ինչպես շատ փոխաբերություններ (այն է, թթխմոր, առյուծ) կրակը կարող է լինել օրհնություն կամ անեծք, կախված կոնտեքստից:

15:7 «Եթե կենաք ինձանում՝ եւ իմ խօսքերը ձեզանում կենան» Սա ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ Է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Աղոթքն ավտոմատաբար չի պատասխանվում: Հիսուսը շեշտը փոխում է աշակերտներն Իր մեջ մնալուց Իր խոսքերի մեջ մնալուն: Հիսուսը մարդկանց հայտնում է Հորը, և նույնը երևում է Իր ուսմունքներում: Նրանք փրկության հավասարագոր աղբյուրներ են: Ավետարանը թե Անձ է և թե Լուր:

- «**ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, եւ կլինի ձեզ**» Այստեղ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿՉԵՎ ՉԵՉՈՔ ՍԵՌ ՀՐԱՍՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (հմմտ. հ. 16): Այս արտահայտությունը շատ հաճախ օգտագործել են իրենց սեփական համոզմունքները դարձնելով այն աստվածաշնչյան դրույթ: Եղեք շատ ուշադիր, որ չստեղծեք աստվածաշնչյան որևէ ճշմարտության մասին ձեր պատկերացումը, առանց հիմնվելու ամբողջ Սուրբ Գրքի վրա, այլ միայն առանձին հատվածների վրա (հմմտ. ծանուցում 14:13): Տես Հատուկ Թեմա: Աղոթք, Չսահմանափակված և Սահմանափակված I Հովհ. 3:22:

15:8 «Փառաորունցաւ իմ Հայրը» Հավատացյալների քրիստոսանման ապրելակերպը Աստծուն փառք է բերում և փաստում է, որ նրանք ճշմարիտ աշակերտներ են: Հովհաննու 13:31-32; 14:13; 17:4; և Մաթ. 9:8; 15:31 Հայրը փառավորվեց Որդու կատարած գործի միջոցով, իսկ հիմա հավատացյալների գործերում (հմմտ. Մաթ. 5:16): Տես ծանուցում 1:14.

▪	
NASB	“ուրեմն փաստեք որ իմ աշակերտներն եք”
NKJV	“ուրեմն դուք իմ աշակերտները կլինեք”
NRSV, TEV	“դարձեք իմ աշակերտները”
NJB	“եղեք իմ աշակերտները”
REB	“ուրեմն եղեք իմ աշակերտները”
NIV, Goodspeed	“ցույց տվեք, որ դուք իմ աշակերտներն եք”
NET Bible	“ցույց տվեք, որ դուք իմ աշակերտներն եք”
JB	“ուրեմն դուք իմ աշակերտները կլինեք”

Տարբերությունների պատճառը ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐՆ են.

1. ԱՕՐԻՍՍ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, MSS P⁶⁶, B, D, L
2. ԱՊԱՌՆԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, MSS Ց, A

Հավատացյալների կյանքերը (պտուղ) հայտնում են նրանց ով լինելը: ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԸ այնքան կարևոր չէ, որքան փոխված և արդյունավետ կյանքի իրականությունը, լի սիրով, հնազանդությամբ և ծառայությունով: Սրանք ճշմարիտ հավատացյալի նշաններն են: Մենք չենք փրկվում մեր սիրով, հնազանդությամբ, ծառայելով (հմմտ. Եփ. 2:8,9), բայց նրանք փաստում են մեր հավատացյալ լինելը (հմմտ. Եփ. 2:10):

Հովհաննեսի Ավետարանում օգտագործված է «աշակերտներ» տերմինը ցույց տալու համար թե ովքեր են ճշմարիտ հավատացյալները և հետևորդները, որոնք կատարում են Աստծո կամքն ու անդրադարձնում են Նրա կերպարը: Հովհաննեսը չի օգտագործում «եկեղեցի» տերմինը» (*ekklesia*) նույնիսկ մեկ անգամ, ուստի «աշակերտներ» բառով նա ցույց է տալիս քրիստոնեական հաղորդակցությունն ու հավաքույթները: Աշակերտությունը նոր դարի առօրյան է: Այն բնութագրվում է սիրով, լույսով, հնազանդությամբ և ծառայելով: Սրանցով կիմանան, որ դուք Հիսուսի աշակերտներն եք:

15:9 «Ինչպես իմ Հայրն ինձ սիրեց, ես էլ ձեզ սիրեցի» Այս սիրային հարաբերությունների շղթան առանձնահատուկ է Աստծո ընտանիքին; Հայրը սիրում է Որդուն, Որդին սիրում է Իր հետևորդներին, Իր հետևորդները սիրում են միմյանց:

▪ **«կացեք իմ սերի մեջ»** Սա ԱՕՐԻՍՍ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ-ՀՐԱՍՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է : Հավատացյալներին հրամայված է մնալ

1. աղոթքի մեջ (հ. 7; 14:14)
2. հնազանդության մեջ (հ.10,20; 14:15,21,23,24)
3. ուրախության մեջ (հ. 11)
4. սիրո մեջ (հ. 12; 14:21,22,24)

Սրանք բոլորը ապացույցներ են Աստծո հետ ունեցած անձնական հարաբերության: Տես Հատուկ Թեմա: Մնալ, կենալ I Հովհ. 2:10:

15:10 «Եթե իմ պատուիրանքները պահեք» Սա ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ Է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Հնազանդությունը ճշմարիտ աշակերտության ապացույցն է (հմմտ. 8:31; 14:15-21, 23-24; Դուկ. 6:46): Հիսուսը սա օգտագործում է որպես օրինակ Հոր հանդեպ ունեցած Իր հավատարմության:

▪ **«սեր»** Հունարեն տերմինը, որը սեր է նշանակում (*agapē*) գրականության մեջ, գրված դասական և հունարեն կոյնե լեզվով, լայն տարածում չի ունեցել մինչև այն ժամանակ, երբ եկեղեցին սկսեց այն օգտագործել իր հատուկ իմաստով: Այս սկսեց օգտագործվել որպես անշահախնդիր, զոհաբերվող, անձնվեր, գործնական սեր: Մերը գործողություն է, և ոչ թե զգացմունք (հմմտ. 3:16): Նորկտակարանյան *agapē* տերմինը աստվածաբանորեն հանդիսանում է հինկտակարանյան *hesed* տերմինի նմանությունը, որը նշանակում էր ուխտի սեր և անձնվիրություն:

▪ **«ինչպես ես իմ Հոր պատուիրանքները պահեցի»** Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ-ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Ինչպես Հիսուսն է վերաբերվում Հորը, այնպես էլ

հավատացյալները պետք է վերաբերվեն Նրան: Հոր և Որդու մեջ կա միաբանություն, որը նշանակում է, որ նույնը պետք է արտադրվի հավատացյալների մեջ (հմմտ. 14:23):

15:11 «ձեր ուրախությունը ցուած լինի» Հավատացյալները պետք է ունենան Հիսուսի ուրախությունը (հմմտ. 17:13): Ուրախությունը մի ուրիշ ապացույց է ճշմարիտ աշակերտության (հմմտ. 15:11 [երկու անգամ]; 16:20,21,22,24; 17:13): Այս աշխարհում կա ցավ ու ճգնաժամ, Քրիստոսի մեջ կա ուրախություն, ամբողջական ուրախություն, Իր ուրախությունը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 15:12-17

¹²Սա է իմ պատուիրանքը, որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի: ¹³Ոչ ով նորանից անելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնէ իր բարեկամների համար: ¹⁴Դուք իմ բարեկամներն էք, եթէ անեք ինչ որ ես պատվիրում եմ ձեզ: ¹⁵Այլ ես ծառայ չեմ ասում ձեզ, որովհետեւ ծառան չգիտէ, թէ իր տերն ինչ է գործում. բայց ձեզ բարեկամ ասեցի, որովհետեւ ամեն ինչ որ լսեցի իմ Հօրիցն, իմացրի ձեզ: ¹⁶Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք. այլ ես ընտրեցի ձեզ, եւ ձեզ դրի, որ դուք գնաք եւ պտուղ բերեք. եւ ձեր պտուղը մնայ. որպէսզի ինչ որ իմ Հօրիցը խնդրեք իմ անունովը, տայ ձեզ: ¹⁷Սա եմ պատուիրում ձեզ, որ իրար սիրեք:

15:12 «Սա է իմ պատուիրանքը» Հիսուսը հաճախ էր կրկնում այս թեման (հմմտ. 13:34; 15:17; I Հովհ. 3:11,23; 4:7-8, 11-12, 19-21; II Հովհ. 2:5):

▪ **«որ իրար սիրեք»** Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ- ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, շարունակական պատվեր, հրաման: Սերը Հոգու պտուղն է (հմմտ. Գաղ. 5:22): Սերը զգացմունք չէ, այլ գործողություն: Այն սահմանվում է գործնական տերմիններով (հմմտ. Գաղ. 5:22-23; I Կոր. 13):

▪ **«ինչպես որ ես ձեզ սիրեցի»** Այստեղ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿՉԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ- ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Հավանական է, այստեղ խոսքը գնում է խաչի մասին (հմմտ. հ. 13): Եվ նորից խոսվում է Հիսուսի ինքնա-գոհաբերող սիրո մասին, որը պետք է մասն ցուցաբերեն հավատացյալները (հմմտ. II Կոր. 5:14-15; Գաղ. 2:20; I Հովհ. 3:16):

15:13 «որ մեկն իր անձը դնէ իր բարեկամների համար» Սա վերաբերվում է Հիսուսի քավարար, փոխանորդ հանդիսացող գոհաբերության մասին (հմմտ. 10:11,15,17,18; Մարկ. 10:45; Հռ. 5:7-8; II Կոր. 5:21; Ես. 53) Սա սեր է որպես գործողություն: Աշակերտները կանչված են սրա մեջ (հմմտ. I Հովհ. 3:16):

15:14 «Դուք իմ բարեկամներն էք» Սա հունարեն *philos* ԳՈՅԱԿԱՆՆ է, որը հաճախ զուգակցվում է ընկերական սիրո (*phileō*) հետ: Կոյնե հունարենում «*agapō*» և «*phileō*» հաճախ հոմանիշ ԲԱՅԵՐ են աստվածային սիրո համար (համեմատիր 11:3 [*phileō*] և 5 [*agapō*]); *phileō* մասն օգտագործվում է Աստծո սիրո համար 5:20:

▪ **«եթէ անեք ինչ որ ես պատվիրում եմ ձեզ»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Այն տալիս է ընկերության պայմանը, որը հնազանդությունն է (հմմտ. 14:15, 23-24; 15:10; Դուկ. 6:46): Ինչպես Հիսուսը մնաց Հոր մեջ և Նրա սիրո մեջ, ուրեմն նույնը պետք է անեն Իր աշակերտները:

15:15 Հիսուսն հաղորդում է աշակերտներին (1) ճշմարտություններ Աստծո մասին և (2) գալիք իրադարձությունների մասին: Նա ցույց է տալիս Իր գործունեությունը, որ աշակերտներն աճեն հավատքի և վստահության մեջ: Հիսուսը կիսվեց Իր աշակերտների հետ այն ամենով, ինչ լսել էր Հորից (հմմտ. 3:32; 8:26,40; 12:49; 15:15); որ նրանք էլ փոխանցեին ուրիշներին (հմմտ. Մաթ. 28:20):

15:16 «Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք. այլ ես ընտրեցի ձեզ» Այս արտահայտության մեջ կան մի քանի բերականական պահեր.

1. երկու ԲԱՅԵՐՆ էլ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿՉԵՎ ՉԵԶՈՔ ՍԵՌ- ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են — Հիսուսն Ինքը ընտրեց նրանց մեկընդմիջտ (հմմտ. 6:70; 13:18; 15:16,19)
2. շատ խիստ ընդդիմական շաղկապ «*alla*» (բայց)
3. արտահայտիչ և գորավոր «*ego*» (I)

Ահա հավասարակշռությունը Աստծո ընտրության և մարդու արձագանքի միջև: Երկուսն էլ աստվածաշնչյան ուսմունքներ են: Աստված է միշտ նախաձեռնողը (հմմտ. 6:44,65; 15:16,19), բայց մարդիկ պետք է արձագանքեն (հմմտ. 1:12; 3:16; 15:4,7,9): Աստծո գործը մարդու հետ միշտ գտնվում է ուխտի հարաբերությունների շրջանակում («Եթե . . . ապա»): Տես հատուկ թեմա 3:16.

- **«որ դուք գնաք եւ պտուղ բերեք. եւ ձեր պտուղը մնայ»** Այստեղ երեք բայերն էլ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍՏՈՐԱԳՎԱՍԿԱՆ ԵՂԱՆԱԿ են (1) որ գնան; (2) պտուղ բերեն; և (3) որ պտուղը մնա (կենալ): Հավատացյալները առաքելություն ունեն (հմմտ. Մաթ. 28:19-20; Դուկ. 24:46-47; Գործք 1:8): «Հանձնարարել» տերմինի աստվածաբանական ասպեկտը կարելի է հանդիպել Գործք 20:28; I Կոր. 12:28; II Տիմ. 1:11: Այն նաև օգտագործվում էր հավատացյալների համար մահացած Քրիստոսի հետ կապված (հմմտ. 10:11,15,17-18; 15:13):

- **«իմ անունովը»** Հավատացյալները պետք է իրենց մեջ արտադրեն Հիսուսի կերպարը: Այս արտահայտությունը հոմանիշ է «Աստծո կամք»-ին I Հովհ. 5:14: Մերն ու պատասխանված աղոթքը կապակցված են այստեղ, ինչպես 14:13-15: Տես Հատուկ Թեմա: Տիրոջ Անունը Հովհ. 14:14.

15:17 «Սա եմ պատուիրում ձեզ, որ իրար սիրեք» Տես ծանուցում հ. 12. Աղոթքի պատասխանները կապված են քրիստոնյայի սիրո և առաքելության հետ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 15:18-25
¹⁸Եթե աշխարհքը ձեզ ատում է, զիտացեք, որ ինձ ձեզանից առաջ է ատել: ¹⁹Եթե այս աշխարհքիցը լինեիք, ապա աշխարհքն իրանը կսիրեր. բայց որովհետև աշխարհքիցը չեք, այլ ես ձեզ ընտրեցի աշխարհքիցը, նորա համար աշխարհքն ատում է ձեզ: ²⁰Յիշեցեք այն խօսքն, որ ես ասեցի ձեզ թե ծառան իր Տերիցը մեծ չէ. եթե ինձ հալածեցին, ձեզ էլ են հալածելու. եթե իմ խօսքը պահեցին՝ ձերն էլ կպահեն: ²¹Բայց այս ամենը կանեն ձեզ իմ անունի համար. որովհետև չճանաչեցին ինձ ուղարկողին: ²²Եթե ես չեի եկել եւ նորանց հետ խօսել, նորանք մեղք չէին ունենալ. բայց հիմա պատճառանք չունին իրանց մեղքի համար: ²³Ինձ ատողն իմ Հօրն էլ է ատում: ²⁴Եթե այն գործերը չեի գործել նորանց միջումը, որ մեկ ուրիշը չգործեց, մեղք չէին ունենալ. բայց հիմա տեսան էլ, եւ ատեցին ինձ էլ եւ իմ Հօրն էլ: ²⁵Այլ այս եղաւ որպէսզի այն խօսքը կատարուի, որ նորանց օրէնքումը գրուած է, թէ Չոր տեղն ատեցին ինձ:

15:18 «Եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳՎԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ընդունվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Աշխարհը, ընկած, մեղավոր մարդկային համակարգը ատում է Հիսուսի հետևորդներին:

- **«աշխարհքը»** Հովհաննեսն օգտագործում է այս տերմինը մի քանի ձևերով (1) մոլորակը, որպես փոխաբերություն ամբողջ մարդկության համար (հմմտ. 3:16) և (2) որպես մարդկային հասարակություն, որը գործում է Աստծուց հեռու (հմմտ. 10:8; I Հովհ. 2:15-17): Տես Հատուկ Թեմա 14:17.

- **«ձեզ ատում է»** Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է; աշխարհը շարունակում է ատել (հմմտ. հ. 20):

- **«զիտացեք»** Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Նորկատկարանյան ճշմարտությունների իմացությունը կօգնի հավատացյալներին դիմակայել մեղավոր աշխարհի հալածանքին:

- **«որ ինձ ձեզանից առաջ է ատել»** Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ՝ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: «Ինձ» ԳԵՐԱՆՈՒՆԸ շեշտված է (հմմտ. 7:7): Սա ցույց է տալիս աշխարհի հակառակությունը Աստծուն, Նրա Մեսիային և Իր ժողովրդին (հմմտ. 17:14; I Հովհ. 3:13):
Հավատացյալները թե սիրո մեջ են Քրիստոսի մետ մեկ և թե հալածանքների (հմմտ. Հռ. 8:17; II Կոր. 1:5,7; Փիլ. 3:10; I Պետ. 4:13): Նույնացումը Քրիստոսի հետ բերում է խաղաղություն, ուրախություն և հալածանք, անգամ մահ:

15:19 «Եթէ» Սա ԵՐԿՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ Է, որը կոչվում է «փաստին հակասող»: Սա պետք է թարգմանվեր «եթե աշխարհից լինեիք (բայց չեք), ապա աշխարհը կսիրեր ձեզ (բայց չի սիրում)»:

15:20 «Յիշեցէք» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ-ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է, ինչպես հ.18, կամ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ-ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ:

- **«ծառան իր Տէրիցը մեծ չէ»** Երբ այս համարը համեմատում ենք 13:16, ակնհայտ է դառնում, որ Հիսուսը օգտագործում էր ասացվածք տարբեր ձևերով:

- **«Եթէ ինձ հալածեցին...եթէ իմ խօսքը պահեցին»** Այստեղ երկու ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ են, որոնք ընդունվում են որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: «Հալածել» տերմինը նշանակում է հետապնդել ինչպես վայրի կենդանի: Մեղավոր աշխարհում հալածանքը նորմա է Քրիստոսի հետևորդների համար (Մաթ. 5:10-12; Հովհ. 16:1-3; 17:14; Գործք 14:22; Հռ. 5:3-4; 8:17; II Կոր. 4:16-18; 6:3-10; 11:23-30; Փիլ. 1:29; I Թես. 3:3; II Տիմ. 3:12; Հակ. 1:2-4; I Պետ. 4:12-16):

Չնայած, որ ոմանք կմերժեն Առաքյալների խոսքերը և նույնիսկ կհալածեն նրանց, կլինեն ուրիշները, ովքեր կլսեն և կարձագանքեն: Նրանք այդ իրականության ասացույցն են:

15:21 «որովհետև չճանաչեցին ինձ ուղարկողին» Ակնհայտ է, սա վերաբերվում է Հորը: Սա նշանակում է, որ թե հրեաները և թե հեթանոսները չեն ճանաչում Աստծուն: «Իմանալ, ճանաչել» տերմինը սեմիթական (հինկտակարանյան) իմաստով նշանակում էր անձնական հարաբերություն (հմմտ. Ծննդ. 4:1; Եր. 1:5): Կորսված աշխարհը հալածեց հավատացյալներին որովհետև (1) նրանք պատկանում են Հիսուսին, ում նույնպես հալածեցին և (2) աշխարհը չի ճանաչում Աստծուն:

15:22 «Եթէ ես չէի եկել» Սա մեկ ուրիշ ԵՐԿՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ Է, որը կոչվում է «փաստին հակասող»: Այն պետք է թարգմանվեր «Եթե ես չվերադառնայի և խոսեի նրանց հետ, որը ես արեցի, ապա նրանք մեղք չէին ունենա, ինչը նրանք ունեն»:

Պատասխանատվությունը կապված է գիտության հետ (տես Հատուկ Թեմա: աններելի մեղք 5:21): Այս կոնտեքստում անպատու ճյուղերը (այն է, Հուդան և հրեաները) ունեին մեծ հնարավորություն իմանալու, ճանաչելու, ավելի քան նրանք, ովքեր ունեին միայն բնական հայտնություն (այն է, հեթանոսներ, հմմտ. Սաղ. 19:1-6; Հռ. 1:18-20 կամ 2:14-15):

15:23 Քրիստոսին շարունակաբար հակառակվելը նույնն է Աստծուն հակառակվելուն (հմմտ. հ. 24; I Հովհ. 5:1):

15:24 «Եթէ» Սա մեկ ուրիշ ԵՐԿՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ Է, որը կոչվում է «փաստին հակասող»: Այն պետք է թարգմանվեր «Եթե ես չանեի այն գործերը, որ արեցի նրանց մեծ, որոնք ոչ ոք չէր կարող անել (բայց որը ես արեցի), ապա նրանք մեղք չէին ունենա, ինչը ունեն նրանք»:

Լույսը բերում է պատասխանատվություն(հմմտ. 1:5; 8:12; 12:35,46; I Հովհ. 1:5; 2:8,9,11; Մաթ. 6:23):

- **«հիմա տեսան էլ, ես առեցին ինձ էլ ես իմ Հօրն էլ»** Երկու բայերն էլ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ-ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ են, որոնք ցույց են տալիս ամուր, կայուն դիրք: Հիսուսին մերժել նշանակում է Հորը մերժել (հմմտ. I Հովհ. 5:9-13):

15:25 Չարմանալի է, որ «Օրենք» կամ «Թորա» տերմինը օգտագործվում է նկարագրելու համար Սաղ. 35:19; 69:4 մեջբերումը: Սովորաբար տերմինն օգտագործվում է Մովսեսի գրվածքների համար, Ծննդոցից մինչև 2 Օրինաց:

Հրեաների Հիսուսին մերժելու խորհուրդը, չնայած որ ունեին ակնհայտ հայտնություն, բացատրվում է իրենց ինքնակամ և գիտակցաբար անհավատությունով (հմմտ. Ես. 6:9-13; Եր. 5:21; Հռ. 3:9-18):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 15:26-27

26 Բայց երբոր Մխիթարիչը կգայ, որ ես Հօրիցը կողարկեմ ձեզ, ճշմարտութեան Հոգին, որ Հօրիցն է դուրս

15:26 «Բայց երբոր Մխիթարիչը կգայ, որ ես Հօրիցը կուղարկեմ ձեզ» Թե Հայրը և թե Ռոդին ուղարկեցին Հոգուն (հմմտ. 14:15, 26; 15:26; 16:7): Փրկության գործում Երրորդության բոլոր երեք անձերն էլ ներգրավված են:

- **«Ճշմարտության Հոգին»** Սուրբ Հոգին հայտնում է Հորը (հմմտ. 14:17,26; 15:26; 16:13): Տես Հատուկ Թեմա Ճշմարտություն 6:55 և 17:3:
- **«նա կվկայէ ինձ համար»** Հոգու գործն է վկայել Հիսուսին և Նրա ուսմունքները (հմմտ. 14:26; 16:13-15; I Հովհ. 5:7):

15:27 «Եւ դուք էլ կվկայէք» Շեշտված է «դուք... էլ, նույնպես»: Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Սա պետք է որ վերաբերվի Նոր Կտակարանի հեղինակների ներշնչանքին(այն է, առաքյալները և նրանց ընկերները) ովքեր Հիսուսի հետ էին՝ Նրա երկրային կյանքի ժամանակ (հմմտ. Գուկ. 24:48): Տես Հատուկ Թեմա: Վկայել Հիսուսին 1:8 և Սուրբ Հոգին որպես անձ 14:26.

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ի՞նչ է նշանակում «մնալ, կենալ» հասկացողությունը:
2. Ի՞նչ է տեղի ունենում, երբ հավատացյալը դադարում է մնալ Քրիստոսի մեջ: Իսկ եթե հավատացյալը պտուղ չի՞ քերում:
3. Թվարկեք ճշմարիտ աշակերտության ապացույցները:
4. Եթե տառապանքը նորմա է քրիստոնյայի համար, ապա ի՞նչ է դա ասում այսօր մեզ:
5. Բացատրիր հ. 16 քո խոսքերով:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 16

ԺԱՍՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Աշխարհի ատելությունը (15:18-16:4ա)	Գալիք մերժումը (15:26-16:4)	Քրիստոնեայի կապը աշխարհի հետ	(15:18-16:4ա)	Աշակերտները և աշխարհը (15:18-16:4ա)
Հոգու գործը 16:4բ-11	Սուրբ Հոգու գործը 16:5-15	16:1-4ա 16:4բ-11	Սուրբ Հոգու գործը 16:4բ-11	Մխիթարիչի գալուստը 16:4բ-15
16:12-15		16:12-15	16:12-15	
Տիրությունը կփոխվի ուրախության	Տիրությունը կփոխվի ուրախության	16:16-24	Տիրություն և ուրախություն 16:16 16:17-18 16:19-22 16:23-24	Հիսուսը շուտով կվերադառնա 16:16 16:17-28
Ես հաղթել եմ 16:25-33	Հիսուս Քրիստոսը հաղթել է աշխարհին 16:25-33	16:25-28 16:29-33	Հաղթանակ աշխարհի հանդեպ 16:25-28 16:29-30 16:31-33	16:29-33

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

16:1-33 համարների կոնտեքստի ներըմբռնումը

- Ա. Կոնտեքստը հանդիսանում է տվյալ հատվածը 15:18-16:4ա: Գլուխների բաժանումը ներշնչված չէ և ավելացվել են ավելի ուշ, ինչպես նաև պարագրաֆները, մեծատառերի օգտագործումը, կետադրությունը և համարակալումը:
- Բ. Սուրբ Հոգու առաջադրանքը կորսված մեղավորի հանդեպ սահմանված է հհ. 8-11, իսկ Նրա գործը փրկվածի հանդեպ հհ. 12-15: Սամուել Ջ. Միկոլասկին իր հոդվածում «Նոր Կտակարանի Աստվածաբանությունը» «Աստվածաշունը Մեկնաբանելու Վերլուծությունը» գրքում ունի հետաքրքիր ամփոփում Սուրբ Հոգու գործունեության վերաբերյալ [Samuel J. Mikolaski “The Theology of the New Testament” in *The Exposition Bible Commentary*, Vol. 1]:
- «Նորկտակարանյան վարդապետությունը սրբացման մասին, ինչքան էլ այն սերտորեն կապված լինի արդարացման հետ, այնուամենայնիվ տարբերվում է վերջինից: Ինչպես և Հին Կտակարանում սրբացումը, նախ և առաջ, ցույց է տալիս առանձնացում, բաժանում, Աստծո սուրբ տրանսցենդենտալությունը, իսկ երկրորդը բարոյական որակը և հարաբերությունը, որոնք կոչվում են աստվածանման: Սրբացումը Սուրբ Հոգու գործն է, Որը միավորում է մարդուն Քրիստոսի հետ և նորոգում է նրա կյանքը հոգևորապես: Նոր Կտակարանի լեզվում միասնական հանդես եկող արտահայտություններից են Հուգու մկրտությունը (I Կոր. 12:13); Հոգու կնիքը (Եփ. 1:13, 14; 4:30), Հոգու բնակվելը հոգևորի մեջ (Հովհ. 14:17; Հռ. 5:4; 8:9-11; I Կոր. 3:16; 6:19; 2 Տիմ. 1:14), Հոգու առաջնորդությունը հավատացյալի կյանքում (Հովհ. 14:26; 16:12-15), Հոգու լցվելը (Եփ. 5:18), և Հոգու պտուղը (Գաղ. 5:22,23): Սրբացումը կապված է արդարացման հետ, որը տալիս է իրավունք կանգնել Աստծո առաջ (Եբր. 10:10), և կարող է հասկացվել որպես հավատացյալի կերպարանափոխությունը նոր իղեալի» (էջ 474):
- Գ. Համար 17-ում, ինչպես 13:36; 14:5, 8, և 22-ում, հնչում է մեկ ուրիշ հարց առաքյալների կողմից:
- Դ. Շատերը հավատում են, թե 14:31-ի «վեր կացեք, գնանք այս տեղից» և 18:1-ը, որոնք գտնվում են 15-17գ-ում Հիսուսը ասում է Գեթսեմանի ճանապարհին և ոչ թե վերնատանը:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:1-4
¹Այս խօսեցի ձեզ հետ, որ չգայթակղիք: ²Իրանց ժողովարաններիցը ձեզ դուրս կհանեն. եւ ժամանակ էլ կգայ՝ որ ամեն ով որ սպանէ ձեզ, կկարծէ, թէ Աստուծուն պաշտօն է մատուցանում: ³Եւ սա կանեն ձեզ. որովհետեւ ոչ Հօրը ճանաչեցին եւ ոչ ինձ: ⁴Այս էլ խօսեցի ձեզ հետ, որ երբոր ժամանակը գայ, սորանք յիշեք, թէ ես ասեցի ձեզ: Բայց այս բաներն սկզբիցը չասեցի ձեզ. որովհետեւ ես ձեզ հետ էի:

- 16:1
NASB “այնպես, որ դուք կարողանաք հեռու մնալ գայթակղությունից”
NKJV “որ դուք չսայթաքեք”
NRSV “գայթակղությունից խուսափելու համար”
TEV “այնպես, որ դուք չհրաժարվեք ձեր հավատքից”
NJB “այնպես, որ դուք չընկնեք”

Այստեղ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է: Այս հունարեն տերմինը նշանակում էր խայծով ծուղակ՝ վայրի կենդանիներ բռնելու համար: Այն հաճախ թարգմանվում էր «անկման ուղի» (հմմտ. Մաթ. 13:21; 24:10; Մարկ. 4:17; 14:27,29): Տվյալ կոնտեքստումսս վերաբերվում է հավատացյալներին, որպեսզի նրանց համաքաղաքացիները, անգամ կրոնական առաջնորդները չար գործերի մեջ չզգեին:

16:2 «Իրանց ժողովարաններիցը ձեզ դուրս կհանեն» Խոսքը հուդայականությունից հեռանալու մասին է (հմմտ.9:22,34; 12:42):

Շատ քիչ բան է հայտնի հուդայական համայնքից հեռանալու/առանձնանալու գործողության մասին: Ժողովարանից հեռանալը կարող էր լինել թե ժամանակավոր և թե մշտական: Ավելի ուշ Երուսաղեմի անկումից հետո Ք.Հ.70թ.պաղեստինյան ռաբբիները ստեղծեցին «անեծքի բանաձև», որը կապված էր Քրիստոսի հետ, որի պատճառով ցանկանում էին քրիստոնյաներին հեռացնել ժողովարանի պաշտամունքներից: Վերջիվերջո սա հանգեցրեց նրան, որ Քրիստոսի հետևորդները առանձնացան տեղական հրեական ժողովարաններից:

▪ **«ամեն ով որ սպանե ձեզ, կկարծե, թե Աստուծուն պաշտօն է մատուցանում»** Հենց այսպես էին մտածում հրեա առաջնորդները (հմմտ. Ես. 66:5; Մաթ. 5:10-12; 10:32): Տարսուհացի Սողոմը (Պողոս) սրա լավագույն օրինակն է՝ մոլորված կրոնական մախանձավորություն (հմմտ. Գործք 26:9-11; Գաղ. 1:13-14):

16:3 «Եւ սա կանեն ձեզ» Գերագույնին նվիրված և անկեղծ լինել բավարար չէ: Չարը, սխալմունքը, մոլորության մեջ ընկնելը և մոլի/ֆանատիկ լինելը հաճախ հանդես են գալիս Աստծո անունով:

▪ **«որովհետև ոչ Հօրը ճանաչեցին եւ ոչ ինձ»** «Իմանալ/ճանաչել» տերմինը ունի հինկտակարանյան կոնտեքստ, որը պահանջում է մտերմիկ, անձնական հարաբերություն(հմմտ. Ծննդ. 4:1; Եր. 1:5): Սա խիստ շեշտադրում է այն փաստը, որ Հիսուսին մերժողը Աստծուն է մերժում(հմմտ. 8:19; 15:21; I Հովհ. 5:9-12):

Հովհաննեսը հաճախ ընդգծում է աշխարհի հոգևոր կուրությունն ու անտեղյակությունը (հմմտ. 1:10; 8:19,55; 15:21; 16:3; 17:25): Չնայած դրան, Որդու գալստյան նպատակը՝ աշխարհը փրկելն էր (հմմտ. 3:16) և հայտնել կամ ցույց տալ Հորը, որ աշխարհը ճանաչի Նրան (հմմտ.17:23) Քրիստոսի միջոցով:

16:4 Հիսուսի մարգարեությունները տրվել են՝ աշակերտների հավատքը/վստահությունը հավաճանքների և մերժումների մեջ որպես քաջալերանք լինելու համար (հմմտ.13:19; 14:29):

«Սկզբիցը» վերաբերվում է Հիսուսի բացահայտ ծառայության սկզբին և Տասներկուսի հատուկ կանչին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:5-11
⁵Բայց հիմա ինձ ուղարկողի մօտ եմ գնում. եւ ձեզանից ոչ մէկը չէ հարցնում ինձ, թէ Ուր ես գնում: ⁶Այլ որովհետև այս բաները խօսեցի ձեզ հետ, տրտմութիւնը լցրեց ձեր սիրտը: ⁷Բայց ես ճշմարտութիւնն եմ ասում ձեզ, թէ լաւ է ձեզ համար, որ ես գնամ. որովհետև եթէ չգնամ, Միսիթարիչը չի գալ ձեզ մօտ. բայց եթէ գնամ, նորան կուղարկեմ ձեզ մօտ: ⁸Եւ նա՛ երբոր գայ՝ աշխարհքին կյանդիմանէ մեղքի համար, եւ արդարութեան համար, եւ դատաստանի համար: ⁹Մեղքի համար, որովհետև ինձ չեն հաւատում: ¹⁰Արդարութեան համար, որովհետև ես իմ Հօր մօտ եմ գնում, եւ ինձ այլ ես չէք տեսնիլ: ¹¹Եւ դատաստանի համար, որովհետև այս աշխարհքի իշխանը դատաւարտուած է:

16:5 «ձեզանից ոչ մէկը չէ հարցնում ինձ, թէ Ուր ես գնում» Թվում է թե Պետրոսը այս նույն հարցը տվել է գլուխ 13:36, բայց անմիջապես նրա մտքերը սևեռվում են իրենցից Հիսուսի հեռանալու վրա և հարց էր ծագում, թե ինչ պետք է լիներ իրենց հետ (հմմտ. հ. 6): Հովհաննես 14:1-3 խոսվում է Հիսուսի երկինք համբարձվելու մասին(հմմտ. Գործք 1:9-11):

Այստեղ տեղին է հիշել, որ Ավետարանը Հիսուսի երկխոսությունների բառացի, բառ առ բառ արձանագրությունը չէ: Դրանք կատարված իրադարձությունների համառոտ գրառումներն են, որոնք արվել են շատ տարիներ անց՝ աստվածաբանական նպատակներով: Ավետարանի հեղինակները, ներշնչանքի ներքո, ունեին ընտրելու, դասակարգելու և Հիսուսի խոսքերը վերատադրելու հնարավորություն (տես Gordon Fee and Douglas Stuart, *How To Read the Bible For All Its Worth*): Սակայն ես չեմ հավատում, որ նրանք ունեին իրավունք բառեր դնելու Հիսուսի բերանում, որոնք Նա չի ասել: Հիսուսի խոսքերի, ուսմունքների և գործողությունների հենց այսպիսի աստվածաբանական կառուցվածքը, որը որոշակի թիրախային լսարանին ավետարանելու համար է, հավանական է բացատրում է շատ տարբերություններ կամ թվացյալ հակասություններ Ավետարանների միջև:

16:6 «տրտմութիւնը ցրեց ձեր սիրտը» Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱ է: Վերնատանը կատարվածը տրտմություններից մեկն էր (հմմտ. 14:1; 16:6,22): «Սիրտ» տերմինը օգտագործված է եբրայերեն իմաստով ամբողջ անձի միտքը, զգացմունքներն ու կամքը: Տես Հատուկ Թեմա: Սիրտ 12:40

16:7 «թէ լաւ է ձեզ համար, որ ես գնամ» Հիսուսի ֆիզիկական մարմինը կարող էր լինել միայն մեկ տեղում նույն ժամանակ, որը սահմանափակվում էր Նրա կարողությունը սովորեցնելու և ծառայելու Իր բոլոր աշակերտներին: Բացի այդ, Նրա երկրային կյանքի ընթացքում Նա հիմնականում կենտրոնացած էր Իսրայելի վրա (հմմտ. Մաթ. 10: 6; 15:24): Սուրբ Հոգու գալուստը բացելու էր նոր դարաշրջան, որը կարող է գործել ընդլայնված ծառայության մեջ (հմմտ. Եփ. 2: 11-3: 13):

«Առավելություն» տերմինը նշանակում էր «նպատակահարմար» և նաև օգտագործվում էր 11:50 և 18:14 կապված Հիսուսի մահվան հետ: «Հեռանալ, գնալ» արտահայտությունը կարող է ներառել Հիսուսի վերջին շաբաթվա բոլոր իրադարձությունները:

▪ **«որովհետեւ եթէ չգնամ, Միսիթարիչը չի գալ ձեզ մօտ»** Այս համարում կան երկու ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որը ենթադրում է պոտենցիալ գործողություն: Հիսուսը պետք է մեկնէր, որպեսզի Հոգին ամբողջությամբ գար: *paracētos* տերմինը կարող է թարգմանվել «փաստաբան», «մխիթարող» կամ «օգնական» (հմմտ. 14:16, 26; 15:26, տես ամբողջական ծանուցումը 14:16): Այս բառը հայտնվում է միայն Հովհաննեսի գրվածքներում: Այն օգտագործվում էր հունական գրականության մեջ փաստաբանի համար, որը կոչվում է կողքից օգնություն ցուցաբերել: 8-11hh-ում Հոգին հանդես է գալիս որպես դատախազ/դատավոր աշխարհում, սակայն 12-15hh-ում Հոգու պաշտպանությունը հավատացյալների օգտին է:

Այս նույն *paracētos* տերմինը օգտագործվում է Որդու համար I Հովհ. 2:1: Հունարեն արմատը կարող է թարգմանվել «մխիթարություն»: Այս առումով օգտագործվում է Հոր համար II Կոր. 1: 3-11:

▪ **«նորան կուղարկեմ ձեզ մօտ»** Հոգին եկավ թե Հորից և թե Որդուց(հմմտ. 14:26):

16:8 «Եւ նա՝ երբոր գայ՝ աշխարհքին կյանդիմանել» Ուշադրություն դարձրեք, որ բոլոր Սուրբ Հոգու երեք գործունեությունները (մեղք, արդարություն, դատաստան) համապատասխանում են մեղավոր մարդու պահանջներին և Հիսուս Քրիստոսի փրկարար գործին: «Հանդիմանել» բառը իրավական տերմին էր , որ բառացի նշանակում էր «խաչմերուկային քննություն»:

G. B. Caird, *The Language and Imagery of the Bible*, էջ 159, ունի հետաքրքիր պատկերացում այդ երեք ոլորտներում: Աշխարհին համոզել կամ հանդիմանել, որ

1. սխալ է եղել Հիսուսին դատել և ի կատար ածել
2. սխալ է եղել մեղքի իմաստը
3. սխալ է եղել արդարության իմաստը
4. սխալ է եղել դատաստանի իմաստը

Եթե այդպես է, ապա Հոգին ամբողջությամբ բացահայտում է ավետարանը Հիսուսի անձի միջոցով: Նրանց կրոնականությունը չի կարող փրկել նրանց: Վճիռը սպասում բոլոր նրանց, ովքեր մերժում են Հիսուսին: «Մեղքը» անհավատություն է: Հիսուսը միակ ճանապարհն է կյանքի Աստծո հետ:

«Աշխարհ» տերմինը վերաբերում է մարդուն, ընկած հասարակությունը, որը կազմակերպված գործում է առանց Աստծու: Տես Հատուկ Թեմա 14:17:

16:9 «Մեղքի համար, որովհետեւ ինձ չեն հաւատում» Ավետարանը սկսվում է մարդկու մեղավոր լինելու փաստով և Աստծո արդարության կարիքը ունենալով (հմմտ. Հռ. 3:9-18,23; 6:23; Եփ. 2:1-3): Մեղքը ինքնին չէ «գլխավոր» գործնական վեճը Գողգոթայի միջոցով փրկություն ստանալու համար, այլ մարդու անհավատությունը Հիսուս Քրիստոսի անձի և Նրա կատարած գործի հանդեպ (հմմտ. Հովհ. 3:6-21; 8:24,26): «Հավատք/հավատալ» տերմինը ունի իմացական և էմոցիոնալ տարրեր, բայց այն հիմնականում կամավոր է (տես Հատուկ Թեմա 2:23): Եվ հիմնական շեշտը դրված է ոչ թե հավատացյալի

արժանիության կամ գործերի վրա, այլ նրա հավատքով ապաշխարությամբ արձագանքելով Աստծու խոստումներին Հիսուս Քրիստոսում (հմմտ. Հռ. 3:21-30):

16:10 «Արդարութեան համար» Սա կարող է վերաբերվել

1. Գողգոթայի վրա Քրիստոսի կատարելիք փրկության գործին, Նրա Հարությանն ու Համբարձմանը, որը դիտվում է որպես մեկ ամբողջություն (հմմտ. հ. 10)
2. նրանց, ովքեր կարծում են թե ուղիղ են Աստծո առաջ, մերժելով Քրիստոսին, երբ իրականում հենց Քրիստոսն է, որ մեկ է Աստծո հետ:

16:11 «դատաստանի համար, որովհետև այս աշխարհի իշխանը դատապարտուած է» Գալու է այն օրը, երբ թե՛ ընկած հրեշտակները և թե՛ մեղավոր մարդկությունը պիտի կանգնի արդար Աստծո առաջ (հմմտ. Փիլ. 2:9-11): Սատանան, չնայած դեռ մեծ գորություն է այս աշխարհում, (հմմտ. 12:31; 14:30; II Կոր. 4:4; Եփ. 2:2; I Հովհ. 5:19), արդեն պարտված հակառակորդ է (ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍՆԱԿԱԶԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ): Նրա զավակները (հմմտ. 8:44; Մաթ. 13:38; I Հովհ. 3:8-10) կքաղեն Աստծո բարկությունն ու ցասումը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:12-15

¹² Տակաւին շատ բան ունիմ ձեզ ասելու, բայց հիմա չեք կարող տանիլ: ¹³ Բայց երբոր նա՝ ճշմարտութեան Հոգին կ'գայ, նա կ'առաջնորդէ ձեզ ամեն ճշմարտութեան մէջ. Որովհետև իր անձիցը չի խօսիլ, այլ ինչ որ կ'լսէ՝ կ'խօսի, եւ գալու բաները կ'պատմէ ձեզ: ¹⁴ Նա ինձ կ'փառաւորէ, որովհետև իմիցը կ'առնէ եւ կ'պատմէ ձեզ: ¹⁵ Ամեն ինչ որ Հայրն ունի՝ իմն է. Նորա համար ասեցի ձեզ, թէ իմիցը կ'առնէ եւ կ'պատմէ ձեզ:

16:12 «հիմա չեք կարող տանիլ» «Տանել, կրել» տերմինը օգտագործվում է, երբ կենդանին կրում կամ տանում է ֆիզիկական բեռ: Որոշ բաներ, որ նրանք չէին կարող հասկանալ

1. Քրիստոսի տառապանքը
2. Քրիստոսի հարությունը
3. Եկեղեցու առաքելությունը աշխարհում

Ժամանակակից ընթերցողները պետք է հիշեն, որ շատ առումներով Քրիստոսի կյանքը ներկայացնում է անցումային շրջան: Առաքյալները շատ բաներ չէին հասկանում մինչև հետ-հարության հայտնությունը և Հոգու գալուստն ամբողջությամբ Պենտեկոստեի ժամանակ:

Սակայն, մենք պետք է նաև հիշենք, որ Ավետարանները գրվել են տարիներ անց ավետարանչական նպատակներով որոշակի թիրախային լսարանների համար: Հետևաբար, նրանք արտացոլում են ուշ, հասունացած աստվածաբանություն:

16:13 «ճշմարտութեան Հոգին» Ճշմարտությունը (*alētheia*) օգտագործվում է իր հինկտակարանյան իմաստով որպես արժանահավատություն/վստահության արժանի և միայն երկրորդական իմաստով որպես ճշմարտացիություն: Հիսուսն ասաց, որ Նա էր ճշմարտությունը 14:6-ում: Մուրբ Հոգու այս տիտղոսն ընդգծում է իր դերը որպես Հիսուսին հայտնող (տես 14: 17,26, 15:26, 16: 13-14; I Հովհ. 4: 6, 5: 7): Տես Հովհաննես 6:55.

▪ **«նա կ'առաջնորդէ ձեզ ամեն ճշմարտութեան մէջ»** Սա չի վերաբերվում բացարձակ ճշմարտությանը ամեն ոլորտում, այլ միայն հոգևոր ճշմարտությանը և Հիսուսի ուսմունքներին: Հիմնականում սա վերաբերվում է ՆԿ գրքերի հեղինակների ներշնչմանը: Հոգին առաջնորդում էր նրանց եզակի, հեղինակավոր (ոգեշնչված) ձևերով: Երկրորդական իմաստով այն վերաբերվում է Հոգու ուշ ընթերցողներին Ավետարանի ճշմարտությունները լուսավորման գործին: Տես Հատուկ Թեմաներ Ճշմարտություն 6:55 և Հոգու Անձը 14:26.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

«Անցյալում Աստված գործել է Իրեն մարդկությանը հստակ հայտնելու համար: Աստվածաբանության մեջ սա կոչվում է հայտնություն: Նա ընտրեց որոշակի մարդկանց՝ արձանագրելու և բացատրելու այս ինքնահայտնությունը: Աստվածաբանության մեջ սա կոչվում է ներշնչում: Նա ուղարկեց Իր Հոգին՝ օգնելու ընթերցողներին հասկանալ Իր խոսքը: Աստվածաբանության մեջ սա կոչվում է լուսավորում: Խնդիրն առաջանում է այն ժամանակ, երբ մենք պնդում ենք, որ Հոգին ներգրավված է Աստծո խոսքը հասկանալու մեջ, ապա ինչու՞ են այդքան շատ մեկնաբանությունները:

Խնդրի մի մասը կախված է ընթերցողի նախա-փոխըմբռնումից կամ անձնական փորձառությունից: Հաճախ անձնական օրակարգը հասցեագրվում է՝ օգտագործելով Աստվածաշունչը ապացույց-տեքստային կամ ատոմիստիկ/atomistic նորաձևություն: Հաճախ աստվածաբանական ցանցը պարտադրում է Աստվածաշնչին, որը թույլ է տալիս խոսել միայն որոշ ոլորտներում և ընտրված ձևերով: Լուսավորումը պարզապես չի կարելի հավասարեցնել ներշնչանքի հետ, չնայած Սուրբ Հոգին ներգրավված է յուրաքանչյուրում:

Լավագույն մոտեցումը կարող է փորձել պնդել պարագրաֆի կենտրոնական գաղափարը և ոչ թե մեկնաբանել տեքստի յուրաքանչյուր մանրուք: Սա արդիական, թեմատիկ միտք է, որը փոխանցում է բուն հեղինակի կենտրոնական ճշմարտությունը: Ուրվագծելով գիրքը կամ գրական հաստվածը օգնում է հետևել բուն ներշնչված հեղինակի մտադրությունը: Ոչ մի մեկնաբան ներշնչված չէ: Մենք չենք կարող վերարտադրել աստվածաշնչյան գրողի մեկնաբանության եղանակը կամ մեթոդը: Մենք կարող ենք և պետք է փորձենք հասկանալ, թե ինչ էին նրանք ասում իրենց օրերում և հետո փոխանցում այդ ճշմարտությունը մեր օրերում: Կան աստվածաշնչյան հատվածներ, որոնք երկիմաստ, անորոշ կամ թաքնված են (մինչև մի որոշ ժամանակ կամ ժամանակաշրջան): Միշտ կլինեն տարաձայնություններ որոշ տեքստերի և թեմաների շուրջ, բայց մենք պետք է պարզորոշ հաստատենք կենտրոնական ճշմարտությունները և թույլ տանք ազատություն առանձին մեկնաբանությունների համար՝ բուն հեղինակի մտադրության սահմանի շրջանակներում: Մեկնաբանները պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո, միշտ բաց լինելով ավելի շատ լույսի համար Աստվածաշնչից և Հոգուց: Աստված դատելու է մեզ մեր հասկացողության մակարդակի հիման վրա, և թե ինչպես ենք ապրում այդ հասկացողությունը:

▪ **«Որովհետեւ իր անձիցը չի խօսիլ, այլ ինչ որ կ'լսէ՝ կ'խօսի, եւ գալու բաները կ'պատմէ ձեզ»** Այս գալիք բաներ անմիջականորեն վերաբերվում են փրկագնող իրադարձություններին՝ Գողգոթան, Հարությունը, Համբարձումը և Պենտեկոստեն: Սա չի վերաբերվում ապագան կանխագուշակելու մարգարեական ծառայությունը(այսինքն, Ագաբոսը, Գործք 21:10, տես Հատուկ Թեմա: Մարգարեություն 4:19):

Հոգին կստանա ճշմարտությունը Հորից, ինչպես Հիսուսը, և այն կփոխանցի հավատացյալներին, ինչպես Հիսուսն արեց: Դա ոչ միայն Հոգու պատգամի բովանդակությունն է, որը Հորից է, այլ նաև մեթոդաբանությունը (այսինքն անհատական, տես Հատուկ Թեմա 14:26): Հայրը ֆունկցիոնալ առումով գերագույն է (տես I Կոր. 15: 27-28):

16:14-15 «Նա ինձ կ'փառաւորէ, որովհետեւ իմիցը կ'առնէ եւ կ'պատմէ ձեզ» Հոգու առաջնային գործը՝ Հիսուս Մեսիային բարձրացնել/մեծացնելն ու բացատրելն է (տես հ. 15):

Հոգին երբեք չի փայլեցնում Իրեն ուշադրության կենտրոնում, այլ միայն Հիսուսին (տես 14:26):

▪ **«Ամեն ինչ որ Հայրն ունի՝ իմն է»** Ինչպիսի գարմանալի պնդում (տես 3:35; 5:20; 13:3, 12:10, Մատթ. 11:27): Սա նման է Մատթ. 28:18; Եփ. 1: 20-22; Կող. 2:10; I Պետ. 3:22.

Կա ֆունկցիոնալ հերթականություն կամ կարգ, ոչ թե անհավասարություն, Երրորդության մեջ: Այնպես ինչպես Հիսուսն արտացոլում էր Հորը, այնպես էլ Հոգին արտացոլում էր Հիսուսին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:16-24

¹⁶Մի քիչ ժամանակ էլ, եւ չէք տեսնիլ ինձ. Եւ դարձեալ մի քիչ, եւ կ'տեսնէք ինձ. որովհետեւ ես չօր մօտ եմ գնում:¹⁷ Նորա աշակերտներից ոմանք իրար ասում էին. Մա ի՞նչ է, որ ասում է մեզ. Մի քիչ ժամանակ՝ եւ չէք տեսնիլ ինձ, եւ դարձեալ մի քիչ, եւ կ'տեսնէք ինձ. Եւ, թէ Ես չօր մօտ եմ գնում:¹⁸ Եւ ասում էին. Ի՞նչ է այն որ ասում է՝ Քիչ ժամանակ. Մենք չ'գիտենք, թէ ինչ է խօսում:¹⁹ Եւ Յիսուսը իմացաւ, որ ուզում էին հարցնել իրան, եւ ասեց նորանց. Դորա՞ համար էք հարցնում իրար, որ ասեցի, թէ Մի քիչ ժամանակ, եւ չէք տեսնիլ ինձ, եւ դարձեալ մի քիչ, եւ կ'տեսնէք ինձ:²⁰ Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ. Որ դուք լաց կ'լինիք եւ կ'ողբաք եւ աշխարհքը կ'ուրախանայ. Դուք կ'տրտմիք, այլ ձեր տրտմութիւնն ուրախութիւն կ'լինի:²¹ Կինը, երբոր ծնում է, տրտմութիւն ունի, որ նորա ժամանակը հասել է, բայց երբոր երեխան ծնեց, նեղութիւնն էլ չէ յիշում այն ուրախութեան համար, որ մի մարդ ծնուեցաւ աշխարհքի մէջ:²² Եւ դուք էլ հիմա տրտմութիւն ունիք, բայց դարձեալ կ'տեսնեմ ձեզ, եւ ձեր սիրտը կ'ուրախանայ. Եւ ձեր ուրախութիւնը ոչ ոք չի առնիլ ձեզանից:²³ Եւ այն օրը ոչինչ չէք հարցնիլ ինձ. Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ինչ որ չօրիցը խնդրէք իմ անունովը, կ'տայ ձեզ:²⁴ Մինչեւ հիմա ոչինչ չ'խնդրեցիք իմ անունովը. Խնդրեցէք եւ կ'առնէք, որ ձեր ուրախութիւնը կատարեալ լինի:

16:16 «Մի քիչ ժամանակ էլ» Այս արտահայտությունը հաճախ է հանդիպում Հովհաննեսի Ավետարանում (տես 7:33, 12:35, 13:33, 14:19): Եղել են մի քանի տեսություններ, թե ինչ է այս բարբառային արտահայտությունը նշանակում.

1. հետ-հարության հայտնությունները
2. Երկրորդ Գալուստը
3. Հիսուսի գալուստի մեջ և Սուրբ Հոգու միջոցով

Կոնտեքստի լույսի ներքո, թիվ 1-ը միակ հնարավոր տարբերակն է (տես հ. 22): Աշակերտները շփոթված էին այս արտահայտությամբ (տես հհ. 17-18):

16:17 «Նորա աշակերտներից ոմանք իրար ասում էին» Մա ևս մեկ հարց է ինչպես 13:36; 14: 5,8,22. Հիսուսն օգտագործում է այս հարցերը նրանց հանգստացնելու համար և Իրեն բացահայտելու համար: Հատկանշական է Հովհաննեսին, որ նա օգտագործում է երկխոսություն՝ բացահայտելու ճշմարտությունը: Հովհաննեսի մեջ կան քսան յոթ զրույցները թե Հիսուսի հետ և թե Նրա մասին: Դա նաև բնորոշ է Հովհաննեսին, որ Հիսուսին լսողները չէին ընկալում Նրա ասածները: Նա վերևից է. նրանք ներքևից:

▪ «Եւ, թէ Ես չօր մօտ եմ գնում» Հիսուսն ասաց սա 16: 5-ում, ինչպես Նա արեց «մի քիչ» արտահայտության մեջ 16:10-ում: Ինչ-որ իմաստով, սա շատ կոնկրետ Մեսիական հղում է (տես 13: 1,3; 16:28; 17:24):

▪ «չէք տեսնիլ... կ'տեսնէք» Կան երկու տարբեր բառեր «տեսնել» բառի համար հհ. 16 և 17: Նրանք կարծես հոմանիշներ են: Եթե այդպես է, ապա կա միայն մեկը ժամանակահատված այդպես մտածելու և դա հավանաբար եղել է Հիսուսի խաչի մահվան և հարության առավոտի միջև ընկած ժամանակը:

Մյուսները կարծում են, որ երկու ԲԱՅԵՐԸ և ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ վերաբերում են «ֆիզիկական» և «հոգևոր» տեսողությանը և վերաբերում (1) Գողգոթայի և Կիրակի առավոտվա միջև ընկած ժամանակահատվածին կամ (2) Համբարձման և Երկրորդ Գալուստը միջև ընկած ժամանակահատվածը:

Այն փաստը, որ առաջին ԲԱՅԸ (*theōreō*) ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ է 16 և 17h-ում, իսկ երկրորդը (*horaō*) ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ 16 և 17-ում, կարծես թե աջակցում է հոմանիշի տեսությանը:

16:18 «Եւ ասում էին» Սա ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ է, որը կարող է նշանակել (1) նրանք ասում էին ու ասում կամ (2) սկսեցին ասել:

▪ **«Ի՞նչ է այն որ ասում է»** Նրանք, ովքեր եղել են Նրա հետ, ով լսել է Նրան և տեսել Նրա հրաշքները, միշտ չէ, որ հասկացել է (հմմտ. 8:27,43; 10:6, 12:16; 18:4): Սա այն է, ինչ Հոգու ծառայությունը կմեղմի:

16:19 «Եւ Յիսուսը իմացաւ, որ ուզում էին հարցնել իրան» Հիսուսը հաճախ գիտեր մարդկանց մտքերը (տես 2:25; 6: 61,64; 13:11): Դժվար է հաստատ իմանալ, թե դա (1) Նրա աստվածային բնությունն էր (2) ինտուիցիա մարդկանց և իրավիճակներում կամ (3) երկունսն էլ:

16:20 «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ ձեզ» Սա բառացիորեն «Ամեն, Ամեն» է (տես Հատուկ Թեմա 1:51): «Ամեն»-ը հինկտակարանյան տերմին էր «հավատք» բառի համար (*aman, emeth, emunah*) (տես Ամբ. 2: 4): Դրա հիմնական ստուգաբանությունն էր «լինել հաստատուն» կամ «վստահ լինել»: Այն սկսեց օգտագործվել փոխաբերական իմաստով Աստուծո վստահության արժանիության համար, որը հավատք/հավատարմություն աստվածաշնչյան գաղափարի ֆոնն է: Հիսուսը միակն է, ով երբևէ սկսել է նախադասությունը այս տերմինով: Թվում է, թե իմաստը այս է «սա կարևոր և վստահելի հայտարարություն կամ արտահայտություն է, ուշադիր լսեք»:

▪ **«դուք լաց կ'լինիք եւ կ'ողբաք»** Սա նշանակում էր բարձրաձայն և արտահայտչական վիշտ, որը բնորոշ էր հրեական վշտի, սգի պրակտիկային (տես 11: 31,33; 20:11): Երեք անգամ Հիսուսն օգտագործեց ընդգծված ՀՈԳՆԱԿԻ «դուք», երբ խոսում է աշակերտների տրտմության մասին (հ. 20 [երկու անգամ] և հ. 22): Առաջնորդություն նշանակում է

1. ծառա
2. մերժում աշխարհի կողմից
3. հալածանք

▪ **«Դուք կ'տրտմիք, այլ ձեր տրտմութիւնն ուրախութիւն կ'լինի»** Ինչպիսի մեծ խոստում աշակերտներին իրենց շփոթության և թերհասկացողության մեջ: Ամեն ինչ, որ Հիսուսը խոստացավ աշակերտների այս հիմնական խմբին կատարվեց Հիսուսի առաջին հետ- հարության հայտնվելը առաջին կիրակի գիշերը հարությունից հետո վերնատանը:

1. Նա չի թողնի նրանց (տես 14:18, 16: 16,19; 20:19)
2. Նա կգա նրանց մոտ (տես 14:18, 16: 16,19; 20:19)
3. Նա կտա նրանց խաղաղություն (տես 16:22; 20:19)
4. Նա կտա նրանց Հոգին (տես 15:26; 20:22)

16:21 «Կինը, երբոր ծնում է» Կնոջ ծննդաբերության փոխաբերությունը տարածված էր Հին և Նոր Կտակարաններում: Սովորաբար այն օգտագործվում է ընդգծելու անսպասելի կամ անխուսափելի ծնունդը, բայց այստեղ ուշադրության կենտրոնում է մոր կեցվածքը առաջ և հետո: Այս փոխաբերությունը հաճախ կապված է Նոր Դարի «ծննդյան-ցավերի» հետ (տես Ես. 26:17-18; 66:7-14, Մարկ. 13:8): Սա հենց այն էր, ինչ ի նկատի ունեւ Հիսուսը և սա հենց այն էր, թե ինչու նրա աշակերտները, ովքեր դեռ խաչի, հարության և համբարձման մյուս կողմում էին, չէին հասկանում Հիսուսի խոսքերը:

16:23 «այն օրը» Սա ևս մեկ երբայական բարբառային արտահայտություն է (ինչպես ծննդաբերությունը տես հ.21), որը սովորաբար կապված է Նոր Դարի գալստյան հետ (տես 14:20, 16: 25,26):

▪ «ոչինչ չէք հարցնիլ ինձ» Կան երկու տարբեր բառեր «հարց» կամ «խնդրել» բառերի համար այս համարում (տես հ. 26): Առաջինը ենթադրում է «հարցնել» (տես 16:5,19,30): Եթե սա պատշաճ թարգմանություն է, Հիսուսը նկատի ուներ նրանց բոլոր հարցերը՝ արտահայտված 13-17 գլուխների կոնտեքստում (տես 13:36; 14: 5,8,22; 16: 17-18): Երկրորդ տերմինը վերաբերում է Սուրբ Հոգու գալստյանը (տես 14: 16-31; 15: 26-27; 16: 1-15), ով կպատասխանի նրանց բոլոր հարցերին:

Որոշ առումներով այս արտահայտությունը հիշեցնում է ինձ «նոր ուխտի» խոստումը Երեմ. 31:31-34, որտեղ նոր դարի գալը կբերի ամբողջական գիտելիքներ բոլոր հավատացյալներին:

NASB “Եթե Հորից խնդրում ես Իմ անունով որևէ բան”

NKJV “ինչ որ խնդրեք Հորը Իմ անունով”

NRSV “Եթե իմ անունից Հորից որևէ բան խնդրեք”

TEV “Հայրը կտա ձեզ, ինչ խնդրում եք իմ անունից”

NJB “ինչ որ խնդրեք Հորից, նա կտա իմ անունովը”

Սա ԱՆՈՐՈՇ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, ոչ թե ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: Պետք է հասկանալ, որ Հիսուսի անունով խնդրելը, ոչ թե պարզապես մեր աղոթքների փակման ծիսական բանաձևն է, այլ աղոթել Հիսուս Քրիստոսի կամքով, մտքով և էությանը (տես I Հովհ. 5:13): Տես ծանուցում 15:16: Տես Հատուկ Թեմա: Աղոթք, Անսահմանափակ բայց և սահմանափակ I Հովհ. 3:22.

Կա ձեռագիր տարբերակ կապված է «Իմ անունով» արտահայտության հետ: Այն պետք է հասկանալ «խնդրել» թե՞ «տալ», թե՞ երկուսն էլ: Կոնտեքստը աղոթքն է, հետևաբար այն պետք է լինի «խնդրել», թեև իրականում ամեն ինչ Հորից է գալիս Հիսուսի միջոցով («Իմ անունը» տես 14: 13,14, 16: 15,24,26): Տես Հատուկ Թեմա: Տիրոջ Անունը Հովհ. 14:14.

16:24 «Խնդրեցեք եւ կ'առնեք» «Խնդրեցեք» ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է: Սա կենտրոնանում է հավատացյալների աղոթքների վրա, որը հետևողական ու շարունակական է: Մեկ կողմից հավատացյալները պետք է հարցնեն միայն մեկ անգամ՝ հավատալով, բայց մյուս կողմից աղոթքը շարունակական հաղորդակցություն է և վստահություն Աստծուն՝ շարունակելով խնդրել (տես Մատթ. 7: 7-8; Ղուկ. 11: 5-13, 18: 1 -8):

▪ «որ ձեր ուրախութիւնը կատարեալ լինի» Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՊԱՍԻՎ ԴԵՐԲԱՅ է (տես I Հովհ. 1: 4): Պատասխանված աղոթքը մեր ուրախության պատճառն է: Ուրախությունը բնորոշ է Հիսուսի հետևորդներին (տես 15:11, 16:20,21,24; 17:13):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:25-28

²⁵ Այս բաներն առակներով խօսեցի ձեզ հետ. Բայց ժամանակ կ'գայ, որ էլ առակով չեմ խօսիլ ձեզ հետ. Այլ յայտնապէս կ'պատմեմ ձեզ Հօր համար: ²⁶ Այն օրումն իմ անունովը կ'խնդրեք. Եւ չեմ ասում ձեզ, թէ ես ձեզ համար կ'աղայչեմ Հօրը: ²⁷ Նորա համար որ Հայրն ինքը սիրում է ձեզ. Որովհետեւ դուք ինձ սիրել էք եւ հաւատացել էք, թէ ես Աստուածանից դուրս եկայ: ²⁸ Հօրիցը դուրս եկայ եւ եկայ աշխարհք. Դարձեալ թողում եմ աշխարհքը եւ գնում եմ Հօր մօտը:

16:25 «առակներով» Հիսուսի ուսմունքներն ունեին կրկնակի ազդեցություն (1) այն բացում էր հասկացողությունը և (2) այն արգելափակում էր հասկացողությունը կամ պատկերացումը (տես Մարկ. 4: 10-11; Ես. 6: 9-10; Երեմ. 5:21): Լսողի սիրտը բանալին է արդյունավետ հասկացողության: Սակայն եղել են ճշմարտություններ, որ նույնիսկ փրկվածները չեն կարողացել հասկանալ մինչև Չատիկի շաբաթից հետո կատարված իրադարձությունները (խաչելություն, հարություն, հարության հայտնություններ, համբարձում) և Պենտեկոստը:

Հետ-հարության հայտնությունը Էմմաուսի ճանապարհին (տես Ղուկ. 24: 13-35) կարող է տալ բանալի, թե ինչպես Հիսուսը սովորեցրեց Առաքյալներին (տես հհ. 25-27,32): Նա Ինքն իր հետ-հարության հայտնությամբ ցույց է տվել, թե ինչպես է ՀԿ կիրառվում և սովեր գգում Իր ծառայության վրա: Սա օրինակ է Պետրոս քարոզչության համար Գործքում (*kerygma*, տես Հատուկ Թեմա 5:39):

▪ «Այլ յայտնապես կ'պատմեմ ձեզ» Տես Հատուկ Թեմա: Համարձակություն, քաջություն (*Parrhēsia*) 7:4.

16:26 «Այն օրումն իմ անունովը կ'խնդրեք. Եւ չեմ ասում ձեզ, թէ ես ձեզ համար կ'աղաչեմ Հօրը» Այս համարն արտահայտում է կարևոր ճշմարտություն: Շատ ժամանակակից քրիստոնյաներ զգում են, որ նրանք չեն կարող մոտենալ Աստծուն ուղղակիորեն: Սակայն Աստվածաշունչը սովորեցնում է, որ

1. Հոգին աղոթում է հավատացյալների համար (տես Հռ. 8: 26-27)
2. Որդին բարեխոսում է հավատացյալների համար I Հովհ. 2: 1
3. հավատացյալները կարող են մոտենալ Աստծուն ուղղակիորեն աղոթքով՝ Քրիստոսի շնորհիվ

16:27 «Նորա համար որ Հայրն ինքը սիրում է ձեզ» Այս «սիրո» տերմինը *phileō* է, որը նաև օգտագործվում է 5:20-ում Հիսուսի հանդեպ ունեցած Հոր սիրո համար: Ինչ հիանալի արտահայտություն, որը ամրապնդում է Հովհաննես 3:16 (որն օգտագործում է *agapaō*): Նա դիմադրող Աստված չէ, որին ուզում է Հիսուսը հանգստացնել, այլ սիրող Հայրը, ում հետ Հիսուսն աշխատում է՝ իրականացնելու Իրենց փրկագնող նպատակները:

▪
NASB “Հորից”
NKJV, NRSV,
TEV, NJB “Աստծուց”

Կան երկու հունարեն ձեռագիր տարբերակներ (1) «Աստված» կամ «Հայր» և (2) ՀՈԴԻ առկայություն կամ բացակայություն: «Աստված» հայտնվում է MSS P⁵, Ն², A և N, իսկ «Աստված» հայտնվում է MSS C³ և W: Սա կարծես թե շատ ավելի բարդ է և անսովոր ձևակերպում: Դա մեկն է այն տեքստային քննադատության (տես հավելված), որն առավել դժվար է, կամ անսովոր տեքստը թերևս բնօրինակն է, որը դպիրները հակված են փոխել: Միացյալ Աստվածաշնչի ընկերությունների Հունարեն Նոր Կտակարանը տալիս է «C» վարկանիշ (Բարդությունը որոշել):

Սակայն «Հայր» հայտնվում է Ն¹ իսկ «Հայրը» B, C *, D և L: Սա լավագույնն է համապատասխանում կոնտեքստին:

▪ «Որովհետեւ դուք ինձ սիրել էք եւ հաւատացել էք, թէ ես Աստուածանից դուրս եկայ» Սրանք երկու ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են: Հիսուսի սերն ու հավատքը հիմք են Հոր հետ հաղորդակցվելու համար: Barclay Newman-ի և Eugene Nida-ի *A Translator's Handbook on the Gospel of John* միտքը շատ հետաքրքիր է:

«Այս արտահայտությունները ցույց են տալիս, որ Հովհաննեսի համար սիրո, հնազանդության և հավատքի հասկացությունները պարզապես տարբեր կերպեր են՝ արտահայտելու անձի առնչությունը Որդու նկատմամբ» (էջ 518):

«Հավատաց»-ի համար տես Հատուկ Թեմա: Հովհաննեսի «հավատալ» բառի օգտագործումը 2:23:

16:28 «Հօրիցը դուրս եկայ եւ եկայ» Սա AORIST ԺԱՄԱՆԱԿ է, որին հաջորդում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ: Հիսուսը ծնվել է Բեթլեհեմում (մարմնավորում) և Նրա գալստյան արդյունքները մնալն է (այսինքն, «Ես ձեզ հետ եմ միշտ» տես Մաթ. 28:20):

Այն փաստը, որ Հիսուսը « դուրս եկավ Հոր մոտից» (տես հհ. 27,30, 8:42, 13:3, 17:8) պնդում է,

1. Նրա նախագոյությունը
2. Նրա աստվածությունը
3. Նրա ամբողջապէս Հորը բացահայտելը կամ հայտնելը

▪ «Դարձեալ թողում եմ աշխարհքը եւ գնում եմ Հօր մօտը» Սա վերաբերվում է առաջիկա համբարձմանը և «Օգնական»-ի ծառայության սկիզբը և Հիսուս միջնորդի ծառայությունը (տես Եբր. 7:25, 9:24, I Հովհ. 2: 1): Քանի որ նախագոյության մասին խոսում է Հովհ.1:1, ուստի Հիսուսի փառքի և իշխանության վերականգնումը երևում է այս համարում (տես 17: 5,24):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 16:29-33
²⁹ Աշակերտները նորան ասեցին. Ահա հիմա յայտնի ես խօսում, եւ ոչ մի առակ չես ասում: ³⁰ Հիմա գիտենք, որ դու բոլորը գիտես. Եւ պէտքդ չէ, որ մէկը հարցնէ քեզ. Սորանով հաւատում ենք, թէ դու Աստուածանից դուրս եկար: ³¹ Յիսուսը պատասխանեց նորանց. Հիմա հաւատում է՞ք: ³² Ահա ժամանակ կ'գայ, եւ հիմա եկած է, որ ամեն մէկդ կ'ցրուիք իր տեղը, եւ ինձ մինակ կ'թողէք. բայց ես մինակ չեմ. Որովհետեւ Հայրն ինձ հետ է: ³³ Այս բաները խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղութիւն ունենաք. աշխարհքումը նեղութիւն կ'ունենաք. բայց քաջացէք, եւ յաղթել եմ աշխարհքին:

16:29 «յայտնի ես խօսում» Տես Հատուկ Թեմա: Համարձակություն, քաջություն (*Parrh_esia*) 7:4.

16:30 Այս նախադասությունը պետք է հասկանալ Հիսուսի աշակերտների հարցն իմանալու լույսի ներքո, հ. 19: Նրանց կողմից արված այս արտահայտությունը արտացոլում է նրանց աճը, բայց և ոչ ամբողջական հավատքը: Նրանք այնքան շատ բան էին տեսել ու լսել, արդյոք այս իրադարձությունը (տես հ.19) իրոք գործում է որպես խոշոր շրջադարձային կետ իրենց հասկացողության հարցում: Ինձ համար սա հնչում է Պետրոսի լավ մտադրության բայց ուռճացված արտահայտությունների պես (տես Jerome Biblical Commentary, էջ 456):

16:31 «Հիմա հաւատում է՞ք» Սա կարող է լինել հարց կամ միտք: Շատ ժամանակակից անգլերեն թարգմանություններ դա հասկանում են որպես հարց: Նույնիսկ այս կարևոր ժամանակահատվածում, Առաքյալների հավատքը ամբողջական չէր: Ժամանակակից հավատացյալների նախնական, բայց տկար, հավատքը նույնպես ընդունվում է Աստծո կողմից, երբ նրանք արձագանքում են Հիսուսին՝ հիմնվելով իրենց ունեցած լույսի ներքո: Աշակերտների հավատքի պակասը ակնհայտ կլինի, երբ նրանք կլքեն Հիսուսին փորձությունների և խաչելության ժամանակ:

16:32 «ամեն մէկդ կ'ցրուիք իր տեղը, եւ ինձ մինակ կ'թողէք» Ըստ երևութիւն, միայն Հովհաննէսն է ներկա եղել փորձություններին և խաչելությանը (տես Մատթ. 26:31, Ձաք. 13:7): Հովհ. 21:1-3 ենթադրում է, որ Առաքյալներից մի քանիսը հետ էին գնացել ձկնորսության, որպես զբաղմունք:

Հիսուսը զրկված էր մարդկային ընկերակցությունից (տես Մատթ. 26: 38,40-41, 43,45), բայց ոչ աստվածային ընկերակցությունից (տես 8:16,29) մինչև խաչելությունը, երբ Նա կրեց ողջ աշխարհի մեղքը (տես Մատթ. 27: 45-46):

-
- NASB “իր սեփական տունը”
- NKJV “իր սեփական”
- NRSV “իր տունը”
- NJB “իր իսկ ճանապարհով”
- TEV “ձեր սեփական տունը”

REB, NET,

NIV “իր տունը”

NKJV բառացի է: Շատ անգլերեն թարգմանություններ ենթադրում են, որ դա վերաբերվում է ինչ որ մեկի տանը: Bultmann-ը պնդում է, որ այն վերաբերվում է «գույքին» կամ «ունեցվածքին» (NIDOTTE, հատոր 2, էջ 839), վկայակոչելով Հիսուսի որպես արարիչ (այսինքն, 1: 3, I Կոր. 8: 6; Կող. 1:16; Եբր. 1: 2):

16:33 «ինձանում խաղաղութիւն ունենաք» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է (տես 14:27): Թե օբյեկտիվ և թե սուբյեկտիվ խաղաղությունը գտնվում է և պահվում Քրիստոսում: Տես Հատուկ Թեմա: Խաղաղություն 14:27.

▪ **«աշխարհքումը»** Հովհաննեսն օգտագործում է «աշխարհ» այս կոնտեքստում, որպես մարդկային հասարակություն կազմակերպված և գործուն Աստուծոց առանձին: Տես Հատուկ Թեմա: *Kosmos* 14:17.

▪ **«նեղություն կ’ունենաք»** Հալածանքները, որը ունեցավ Հիսուսը, նրանք էլ կունենան (տես 15:18-25; Մատթ. 5: 10-12; Գործք 14:22, I Թես. 3:3): Հալածանքը (այսինքն, *thlipsis*) միջոց է՝ բացահայտելու Հիսուսի ճշմարիտ հետևորդներին:

Հայտնության մեջ կա աստվածաբանական տարբերություն «բարկության» և «հալածանքի» միջև: Աստուծու բարկությունը երբեք չի գալու հավատացյալների վրա, այլ անհավատների բարկությունն է գալիս հավատացյալների վրա: Աշխարհը բացահայտում է իրեն որպես սատանայի զավակներ՝ հարձակվելով «աշխարհի լույսի» վրա (հմմտ 1: 1-18; 3: 17-21):

▪ **«քաջացեք»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (տես Մատթ. 9:2,22; 14:27. Մարկ 6:50, 10:49, 23:11): Այն հնչում է, ինչպես ՅԱՀՎԵԻ խոսքերը Հեսուին (տես Հեսու 1: 6,9,18; 10:25):

▪ **«ես յաղթել եմ աշխարհքին»** Սա ԿԱՏԱՐՅԱԼ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հաղթանակն ապահովագրված է նույնիսկ մինչև Գեթսեմանը, նախքան Գողգոթան, նախքան դատարկ գերեզմանը (տես Հռ. 8:37, I Կոր. 15:57; II Կոր. 2:14; 4: 7-15): Չկա վերջնական դուալիզմ: Աստված վերահսկում է:

Ինչպես Հիսուսը հաղթեց աշխարհին սիրով ու Հորը հնազանդվելով, հավատացյալները նույնպես հաղթողներ են Նրանով (տես I Հովհ. 2: 13-14, 4: 4, 5: 4-5; Հայտ. 3:21; 12:11):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ի՞նչ կապ կա գլխի 15-ի և գլուխ 16-ի միջև:
2. Կապված համար 5-ի հետ, ինչպե՞ս ենք մենք հասկանում 13:36-ը:
3. Ո՞րն է Սուրբ Հոգու ծառայությունը կորսված աշխարհին:
4. Ո՞րն է Սուրբ Հոգու ծառայությունը հավատացյալներին:
5. Ինչու՞ 26-27 համարները այնպիսի կարևոր ճշմարտություն են, որ անհրաժեշտ է նայել ժամանակակից հարանվանական միտումների լույսի ներքո

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 17

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսի աղոթքը	Հիսուսն աղոթում է Իր համար	Հիսուսի քահանայապետական աղոթքը	Հիսուսն աղոթում է Իր աշակերտների համար	Հիսուսի աղոթքը
17:1-5	17:1-5	17:1-5	17:1-5	17:1-23
17:6-19	17:6-19	17:6-19	17:6-8 17:9-19	
17:20-26	17:20-26	17:20-24 17:25-26	17:20-23 17:24-26	17:24-26

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇԵՐՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆՈՒ 17:1-26 ՀԱՄԱՐՆԵՐԻ

Ա. Պատմական նախադրյալը

1. Այս գլուխը Հիսուսի Քահանայապետական աղոթքն է
 - ա. Իր համար (հհ.1-5)
 - բ. Իր աշակերտների համար (հհ. 6-19)
 - գ. հետագա հետևորդների համար (հհ. 20-26)

Այն ներկայացված է վստահության մթնոլորտում, այլ ոչ թե հրաժարական (տես 16:33):

2. Սա Հիսուսի ամենաերկար արձանագրված աղոթքն է:

3. Այս գլուխը դժվար է բաժանել թեմաների, քանի որ նույն հիմնական մտքերը հիշատակվում են կրկին ու կրկին, ինչը բնորոշ է Հովհաննեսի գրվածքներին: Մա նման է հերթական օրինաչափությունների օրինակների: Բանալի բառերն են «փառք», «տալ», «ճանաչել», «ուղարկել», «անուն», «աշխարհը» և «մեկ»:
4. Մույն գլխում չկա Մուրբ Հոգու մասին հիշատակում: Դա անսովոր է, քանի որ Նրա նշանավորությունը 14-16 գլուխներում:

Բ. Աշակերտների առանձնահատկությունները 6-19 համարներում

1. Նրանք ընտրված են
2. Նրանք հնազանդ են
3. Նրանք ճանաչում են Աստծուն և Քրիստոսին
4. Նրանք ընդունում են ճշմարտությունը
5. Նրանց համար աղոթում է Հիսուսը
6. Նրանք մնացին աշխարհում
7. Նրանք պահվում են Նրա գործությամբ
8. Նրանք մեկ են, ինչպես Հայրը և Հիսուսը մեկ են
9. Նրանք ունեն Նրա ուրախությունը
10. Նրանք այս աշխարհից չեն
11. Նրանք օժված են ճշմարտությամբ
12. Նրանք ուղարկված են ինչպես Նա էր ուղարկված
13. Նրանք սիրված են, ինչպես Հայրը սիրեց Հիսուսին

Գ. «Փառք» տերմինը Հովհաննեսի Ավետարանում

1. Եպտուազինդում (LXX) ավելի քան 25 եբրայերեն բառեր կան թարգմանված հունարեն «doxa» տերմինով: Ամենա մեծ ՀԿ տերմինը *kabod* է, որը նշանակում է «տարբեր», «քաջ», «ճանրություն», «արժանիություն», «հեղինակություն», «պատիվ» կամ «պայծառություն»:
2. Հունարեն *doxa* տերմինը առաջացել է «մտածել» ԲԱՅԻՑ՝ հեղինակության տեսանկյունից:
3. Հովհաննեսի Ավետարանում այս խոսքի շատ տարբերակներ կան
 - ա. Աստվածային փառք (տես 5: 24, 1:14, 12:40, 12:16)
 - բ. Հոր հայտնությունը Հիսուսի նշանների, ուսմունքների և Չարչարանքի շաբաթվա գործերի միջոցով (տես 4: 10,22, 1:14, 2:11, 7:18, 11: 4,40)
 - գ. մասնավորապես խաչը (տես հհ.1,4, 7:39, 13: 31-32)

Այս օգտագործման միջև ակնհայտորեն որոշակի կայունություն կա: Կենտրոնական ճշմարտությունն այն է, որ անտեսանելի Աստված հայտնվում է մարդու մեջ (այսինքն, Հիսուս Քրիստոսը) Նրա խոսքերով և գործերով:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 17:1-5
¹Յիսուսը այս խօսեց, եւ իր աչքերը բարձրացրեց դէպի երկինքը եւ ասեց. Հայր, ժամը հասել է, փառաւորիք քո Որդուն, որ քո Որդին էլ քեզ փառաւորէ. ²Ինչպէս նորան իշխանութիւն տուիր ամեն մարմնի վերայ որ յաւիտենական կեանք տայ այն ամենին՝ որ տուիր նորան:
³Եւ սա է յաւիտենական կեանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. Եւ նորան, որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին: ⁴Ես քեզ փառաւորեցի երկրի վերայ. այն գործը կատարեցի, որ տուիր ինձ՝ որ անեմ: ⁵Եւ հիմա, փառաւորիք ինձ դու, Հայր, քեզ մօտ այն փառքովը, որ աշխարհքի

17:1 «Յիսուսը այս խօսեց» Մա պետք է, որ վերաբերվի 13-16 գլուխների Վերնատան հանդիպումներին:

▪ **«իր աչքերը բարձրացրեց դեպի երկինքը»** Դա սովորական հրեայի աղոթքի կեցվածք է՝ ձեռքերը, գլուխը և բաց աչքերը բարձրացրած դեպի երկինք, կարծես Աստծո հետ զրուցում է (տես 11:41, Մարկ. 7:34, Ղուկ. 18:13, Մաղ. 123:1): Հիսուսը հաճախակի էր աղոթում: Մա կարելի է հստակորեն փաստագրել Ղուկասի Ավետարանից 3:21; 5:16; 6:12; 9:18, 28; 11: 1; 22: 41-45; 23:34:

▪ **«Հայր»** Հիսուսը սովորաբար դիմում էր Աստծուն այս տերմինով (տես 11:41, 12:27-28, Մատթ. 11:25-27, Ղուկ. 22:42, 23:34): Հիսուսը խոսում էր արամերեն: Հիսուսի արամերեն տերմինը Աբբան էր, որով երեխան իր հորն է դիմում տանը «պապա» (տես Մարկ. 14:36): Մա պետք է, որ ցնցեր և վիրավորեր Հիսուսի ոչ -աշակերտներին:

▪ **«Ժամը հասել է»** Մա ցույց է տալիս, որ Հիսուսը գիտեր Իր ծառայության նպատակն ու ժամանակները (տես 2: 4, 7: 6,8,30, 8:20, 12:23, 13: 1): Նա անհասկանալի հանգամանքներով չի առաջնորդվել:

▪ **«Փառատրիք քո Որդուն»** Մա ԱՕԲԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Հիսուսն անընդհատ խոսում է Իր մահվան մասին նույն տերմիններով Հովհաննեսի Ավետարանում (տես հ. 4: 7:39, 12:23, 13: 31-32): Այս տերմինը վերաբերում է նաև Հիսուսի նախագոյ աստվածությանը (տես 1:14 և հհ. 5,24): Հիսուսի գործերը փառավորեցին Հորը: Կար փոխադարձություն: Տեսեք ծանուցում 1: 14 և Կոնտեքստուալ ներքնաբանությունների Գ կետը.

«Որդու» համար տես Հատուկ Թեմա 1 Հովհաննես 3:8:

Կա ձեռագիր տարբերակ «Որդի» հետ կապված

1. Որդի, ՀՈԴ-ի հետ, հանդիպում է MSS P⁶⁰, Տ, B, C*, W

2. Որդի, ՍԵՆԱԿԱՆ ԴԵՐՄԱՆՈՒՆ-ի հետ, հանդիպում է MSS A, D, C²

UBS⁴-ը տալիս է # 1 ձև «B» վարկանիշ (գրեթե որոշակի):

17:2 «իշխանություն ամեն մարմնի վերայ» Մա գյուղացի ատաղձագործի կողմից արված զարմանալի հայտարարություն է (տես Հովհ. 5:27, Մատթ. 11:27, 28:18, Ղուկ. 10:22): «իշխանություն» տերմինը (*exousia*) նույնն է, որն օգտագործվում է 1:12; 5:27; 19: 10,11: Այն կարող է թարգմանվել «օրինական իրավունք», «իշխանություն» կամ «ուժ»:

«Բոլոր մարմին» արտահայտությունը ԵԶԱԿԻ է, (Էբրայերեն իդիոմա, որը վերաբերում է մարդկությանը, տես Ծննդ. 6:12, Մաղ. 65:2, 145: 21, Ես. 40:5, 66:23, Հովել 2:28):

▪ **«այն ամենին՝ որ տուիր նորան»** «Բոլորին կամ այն ամենին» տերմինը ՉԵԶՈՔ է և ԵԶԱԿԻ (տես 7,24), որը կենտրոնանում է աշակերտների, Քրիստոսի մարմնի վրա, ոչ թե անհատների: ԲԱՅՈՂ ՎԱՂԱԿԱՍԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ցույց է տալիս մնայուն նվեր: Այս արտահայտությունը հաստատում է կանխագուշակում և ընտրություն (տես հհ.6, 9, 12, 6:37, 39; Հռ. 8:29-30, Եփ. 1:3-14): ՀԿ-ում ընտրությունը ծառայության համար էր, իսկ ՆԿ-ում՝ հոգևոր, ապահով և հավիտենական փրկության համար: Հավատացյալներին նաև կանչված են ծառայություն անելու: Ընտրությունը միայն աստվածային արարք չէ, այլ պետք է պայմանականորեն կապված լինի մարդու պատասխանատվության հետ: Դա ոչ թե մահվան վրա է կենտրոնանում, այլ կյանքի վրա: Հավատացյալները ընտրված են «սրբության» համար (տես Եփ.1: 4), այլ ոչ թե արտոնյալ վիճակի

համար: Այս արտահայտությունը չպետք է ընկալվի, որպես թե Հայրը որոշ մարդկանց տվեց Հիսուսին, իսկ որոշներին ոչ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունը հիանալի վրադասպետություն է: Բայց ընտրությունը դա ֆավորիտ/սիրելի լինելը չէ, այլ որ հավատացյալը լինի ճանապարհ, գործիք կամ միջոց, որը կնպաստի ուրիշների փրկությանը: Հին Կտակարանում տերմինը հիմնականում օգտագործվում էր ծառայության համար; Նոր Կտակարանում այն հիմնականում օգտագործվում է փրկության համար, որին հաջորդում է ծառայությունը: Աստվածաշունչը երբեք չի հաշտեցնում թվացյալ կոնֆլիկտը Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև, բայց հաստատում է երկուսն էլ: Աստվածաշնչյան լարվածության լավ օրինակ կարող է լինել Հռ. 9-ը Աստծո գերիշխան ընտրության վերաբերյալ և Հռ. 10-ը մարդու անհրաժեշտ արձագանքի մասին (հմմտ. 10:11,13):

Այս աստվածաբանական լարվածության բանալին կարելի է գտնել Եփ. 1:4: Հիսուսը Աստծո ընտրյալ Մարդն է և բոլոր մարդիկ ըստ հնարավորին ընտրված են Նրանում (Կարլ Բարտ): Հիսուսն Աստծո «այո»-ն է՝ ուղղված մեղավոր մարդու կարիքին (Կարլ Բարտ): Եփեսացիս 1:4 օգնում է հստակեցնել այս վիճելի հարցը, պնդելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (քրիստոսանմանություն): Ավետարանում մեզ հաճախ գրավում է հավատացյալի շահն ու արտոնությունը, բայց մենք հակված ենք անտեսելու մեր պատասխանատվությունները: Աստծու կանչը (ընտրություն) թե երկրային կյանքի համար է, և թե հավիտենականության:

Աստվածաշնչյան վարդապետություններն ունեն սերտ համագործակցություն միմյանց հետ, և նրանցից ոչ մեկը անհատապես և անկախ հանդես չի գալիս: Ինչպես օրինակ համաստեղությունը և մեկ առանձին աստղը: Աստված ներկայացնում է Իր ճշմարտությունները արևելյան ժանրով և ոչ թե արևմտյան: Եվ մենք չպետք է հեռացնենք լարվածությունը, որ կան որոշ վարդապետական ճշմարտությունների մեջ, որ ակնհայտ գոյություն ունեն երկու դիալեկտիկական (պարադոքսալ) կողմերում; (Աստծո գերազանցությունը և Աստծո ներունակությունը; Հավատացյալների ապահովությունը և համբերատարության կարիքը; Հիսուսը հավասար է Հորը և Հիսուսը ենթարկվում է Հորը; Քրիստոնեական ազատություն և քրիստոնեական պատասխանատվություն և այլն):

«Ուխտ»-ի աստվածաբանական հասկացողությունը միավորում է Աստծո գերիշխանությունը (Ով միշտ նախաձեռնում և կանոններ է հաստատում) պարտադիր նախասկզբնական և շարունակական ապաշխարությունը և հավատքի արձագանքը մարդկանց կողմից(հմմտ. Մարկ. 1:15; Գործք 3:16,19; 20:21): Չգուշացեք փնտրելուց հաստատող տեքստ պարադոքսի միայն մեկ կողմը և նվազեցնել մյուսի իմաստը: Չգուշացեք հաստատելու միայն ձեր սիրելի վարդապետությունը կամ աստվածաբանական համակարգը:

▪ **«որ յալիտենական կեանք տայ»** Հավիտենական կյանքը պարզ և Քրիստոսի միջոցով Աստծո կողմից (տես 5: 21,26, 6: 40,47, 10:28; I Հովհ. 2:25, 5:11): Դա նշանակում է «Աստծո կյանք», «նոր ժամանակի կյանք» կամ «հարության կյանք»: Դա հիմնականում քանակական չէ, այլ որակական (տես 10:10):

17:3 «սա է յալիտենական կեանքը» Սա «հավիտենական կյանքի» սահմանումն է տեղադրված Հովհաննեսի կողմից: Այս համարը ցույց է տալիս քրիստոնեության երկու խոշոր ճշմարտությունները 1) միաստվածություն (տես 2 Օրին. 6: 4-6) և 2) Հիսուսը որպես Աստվածային Դավիթական Մեսիա (տես II Թագ. 7): Այս «հավիտենական կյանքը» ոչ թե ապագայի համար է, այլ հասանելի է նաև հիմա Հիսուս Քրիստոսում:

▪ **«որ ճանաչեն քեզ»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Սա ոչ միայն վերաբերում է Աստծո մասին իմացական գիտելիքին, թեև կա ճշմարտություն, որը հաստատվում է, բայց օգտագործվում է սեմիթական անձնական հարաբերությունների իմաստով: Այնուամենայնիվ, ճշմարտությունն այն է, որ Հիսուսը Մեսիան է՝ մեկ ճշմարիտ Աստծո լիակատար և

ամբողջական հայտնությունը (տես 1: 12,14; Կող. 1:15, Եբ. 1: 3), և որ մարդիկ պետք է հավատան, ընդունեն, ապաշխարեն, հնազանդվեն և հաստատական լինել Նրա մեջ:

▪ «միայն ճշմարիտ Աստուած» Հին Կտակարանը եզակի էր իր հավաստմամբ՝ մեկ և միայն մեկ Աստծո գոյության մասին (տես Ելից 8:10; 9:14; 2 Օրին. 4: 35,39; 6: 4, 33:26; I Թագ. 2:2; II Թագ. 7:22; III Թագ. 8:23; Ես. 37:20; 44: 6,8; 45: 6-7,14,18,21,22; 46:9; Հովհ. 5:44; I Կոր. 8: 4,6; I Տիմ. 1:17; 2: 5; Հուդա հ.25): Հանուն արդարության պետք է ասել, որ ՀԿ ներկայացնում է Աստծո յուրահատկությունն ու միասնությունը Հին Մերձավոր Արևելքի աշխարհայացքի ֆոնի վրա: Կա միայն մեկ Աստված, բայց այլ հոգևոր արարածներ (տես Ելից 15:11; 2 Օրենք 3:24, Սաղ. 86:88, 89:6):

Որոշ իմաստով ՀԿ հատվածներ կան, որոնք արտացոլում են բազմաստվածությունը/հենոթիմիզմը (շատ աստվածներ [*elohim/* էլոհիմ], բայց միայն մեկ Աստված՝ Իսրայելի համար): Մովսեսը ճանաչեց այլ հոգևոր արարածների գոյությունը: Սա չի նշանակում պնդել, որ ազգերի կուռքերը իրականություն են, բայց ֆիզիկական կուռքերի հետևում դիվականն էր (տես I Կորնթ. 10:19-20):

Մյուս ԱՕՄԿԱՆԸ «ճշմարիտ» է (*alēthinos*): Այս տերմինը և դրա հետ կապված տերմինները (*alēthēs*) հաճախ են օգտագործվում Հովհաննեսի գրվածքներում, սակայն դժվար է փակել դրանց իմաստները: Նրանք ունեն ընդարձակ լրացուցիչ իմաստ (իմաստաբանական դաշտ): ՀԿ փոխաբերական ֆոնն այն կլինի, որը վստահելի է, հավատարիմ, հուսալի (*emeth* -ից): Հունական ֆոնն այնպիսին էր, որը բացահայտվեց, հստակ դրսևորվեց: Որոշ իմաստով ճշմարտությունը ստի հակառակն է (հմտ. Տիտոս 1: 2): Հունարեն տերմին (*alēthinos*) *inos* ավարտվող բառերը նշանակում են, որ դրանցից մի բան է արվում: Հնարավոր է, որ հետևյալ կիրառությունները ընդհանուր իմաստ ունենան տերմինների համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՃՇՄԱՐԻՏ» (ՏԵՐՄԻՆԸ) ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

1. Հայր Աստված
 - ա. Աստված ճշմարիտ է/հավատարիմ (տես Հովհ. 3:33, 7: 18,28; 8:26; 17: 3; Հռ. 3: 4; Ա Թես.1: 9; Ա Հովհ. 5:20; Հայտ. 6: 10)
 - բ. Աստծո ուղիները ճշմարիտ են (տես Հայտ.15: 3)
 - գ. Աստծո դատաստանները ճշմարիտ են (տես Հայտ. 16: 7, 19: 2)
 - դ. Աստծո խոսքերը ճշմարիտ են (տես Հայտ. 19:11)
2. Որդի Աստված
 - ա. Որդին ճշմարիտ է/ճշմարտություն
 - 1) ճշմարիտ լույս (տես Հովհ. 1:9, 1 Հովհ. 2:8)
 - 2) ճշմարիտ որթատունկ (տես Հովհ. 15:1)
 - 3) լի շնորհքով և ճշմարտությամբ (տես Հովհ. 1:14, 17)
 - 4) Նա ճշմարտություն է (տես Հովհ. 14:6; 8:32)
 - 5) Նա ճշմարիտ է (տես Հայտ. 3: 7,14, 19:11)
 - բ. Որդու վկայությունը ճշմարիտ է (տես Հովհ. 18:37)
3. Այն կարող է ունենալ համեմատական իմաստ
 - ա. Մովսեսի օրենքը ընդդեմ Հիսուսի շնորհքի և ճշմարտության (տես Հովհ.1:17)
 - բ. Խորանը անապատում ընդդեմ երկնային խորանի (Եբր. 8:2, 9: 1)
4. Ինչքան հաճախ Հովհաննեսում այս բառն ունեին մի քանի իմաստներ (եբրայերեն և հունարեն): Հովհաննեսն այդ բոլորն օգտագործում է նկարագրելու Հորը և Որդուն, որպես անձինք, որպես բանախոսներ և նրանց ուղերձը, որը պետք է փոխանցվի իրենց հետևորդներին (տես Հովհ. 4:13; 19:35; Եբր. 10:22; Հայտ. 22: 6):
5. Հովհաննեսի համար այս երկու ածականները նկարագրում են Հորը, որպես մեկ և միակ ճշմարիտ Աստված (կարդա 5:44, I Հովհ. 5:20) և Հիսուսը որպես Իր ճշմարիտ

▪ «որ ուղարկեցիր՝ Յիսուսին Քրիստոսին» Դա կարող է Հովհաննեսի խմբագրական մեկնաբանությունը լինել: Այս շեշտը Հիսուսի վրա է, որպես Հորից «ուղարկված», կրկնվող ուղղահայաց դուալիզմ Հովհաննեսի Ավետարանում (տես 3: 17,34, 5: 36,38, 6: 29,38,57, 7:29, 8:42; 36: 11: 42; 17: 3,8,18,21,23,25, 20:21): Ռաբբիներն օգտագործում էին *apostellō* տերմինը՝ ներկայացնելով ուղարկվածին որպես պաշտոնական ներկայացուցիչ: Տես Հատուկ Թեմա Ուղարկել (*Apostellō*) 5: 24:

17:4 «Ես քեզ փառաւորեցի երկրի վերայ» (Տես ծանուցում 13: 31-32): «Փառք» տերմինը կարող է օգտագործվել (1) «փառք տալ» կամ (2) «բացահայտել փառքը» իմաստով: Համար 6 ենթադրում է # 2: Հիսուսի հիմնական խնդիրներից մեկն էր բացահայտել Հայրը (տես 1: 14,18):

▪ «այն գործը կատարեցի» Հունարեն *telos* արմատը ենթադրում է «լիովին ավարտել» (տես 4:34, 5:36, 19:30): Աշխատանքը եռապատկվեց:

1. Հոր հայտնությունը (տես 1: 14,18)
2. ընկած մարդկության փրկագնումը (տես Մարկ. 10:45, II Կորնթ.5:21)
3. ճշմարիտ մարդկության օրինակ (տես 13:31, Ա Պետրոս 2:21)
4. նաև Հիսուսի բարեխոսության գործը շարունակվում է (տես 1 Հովհ. 2: 1; Եբր. 7:25, 9:24):

17:5 «փառաւորիք փառքով» Այս համարն ընդգծում է Քրիստոսի նախապատմությունը կամ նախագոյությունը (հմմտ 1: 1,15, 6:62, 8:58, 16:28, 17: 11,13,24, II Կորնթ 8, 9; -11; Փիլ. 2:6-11; Կող. 1:17; Եբ 1: 3, 10: 5-8): Հիսուսը հայտնել էր «փառքը» աշակերտներին իր նշանների և հրաշքների միջոցով (տես 1:14, 2:11, 11: 4,40, 12:28): Այժմ վերջնական «փառքը» կլինի Նրա մահը, հարությունը և դեպի երկնքի փառքը համբարձվելը (հ. 24, Փիլ. 2: 5-6, 17): ԲԱՅԸ ԱՕՐԻՄՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է, որպես Հորը խնդրանք: Տեսեք «փառքի» մասին ամբողջական գրառում 1:14:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 17:6-19

⁶Քո անունը յայտնեցի այն մարդկանց, որ աշխարհքիցը տուիր ինձ. Քոնն էին, եւ ինձ տուիր նորանց. Եւ քո խօսքը պահեցին: ⁷Հիմա իմացան, որ այն ամենը որ ինձ տուիր՝ քեզանից է. ⁸Որովհետեւ այն խօսքն՝ որ ինձ տուիր, եւ նորանց տուի. Եւ նորանք ընդունեցին, եւ ճշմարտութեամբ իմացան, որ քեզանից դուրս եկայ. Եւ հաւատացին, թէ դու ուղարկեցիր ինձ: ⁹Եւ նորանց համար եմ աղաչում, ոչ թէ աշխարհքի համար եմ աղաչում. Այլ նորանց համար՝ որ ինձ տուիր, որ քոնն են: ¹⁰Եւ ինչ որ իմն է, բոլորը քոնն է. եւ ինչ որ քոնն է՝ իմն է. Եւ ես փառաւորուած եմ նորանցում: ¹¹Եւ ես՝ այլ եւս աշխարհքումս չեմ, իսկ նորանք աշխարհքումս են, եւ ես քեզ մօտ եմ գալիս. Ով Սուրբ Հայր, պահիր նորանց քո անունովը, որոնց տուիր ինձ, որ մէկ լինեն ինչպէս մենք: ¹²Երբոր ես աշխարհքումը նորանց հետ էի, եւ էի պահում նորանց քո անունովը. Նորանց որ տուիր ինձ, պահեցի. եւ նորանցից ոչ մէկը չ'կորաւ. Բայց միայն կորուստի որդին, որ գրուածը կատարուի: ¹³Բայց հիմա ես քեզ մօտ եմ գալիս. Եւ այս բանը խօսում եմ աշխարհքումը, որ իմ ուրախութիւնը կատարեալ ունենան իրանց անձերումը: ¹⁴Եւ քո խօսքը նորանց տուի, եւ աշխարհքը նորանց ատեց, որովհետեւ աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ աշխարհքիցը չեմ: ¹⁵Ես չեմ աղաչում, որ աշխարհքիցը վեր առնես նորանց. այլ որ նորանց պահես չարիցը: ¹⁶Այս աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ աշխարհքիցը չեմ: ¹⁷Նորանց սուրբ արա քո ճշմարտութիւնովը. քո խօսքը ճշմարտութիւն է: ¹⁸Ինչպէս դու ինձ ուղարկեցիր աշխարհք, եւ էլ նորանց ուղարկեցի աշխարհք: ¹⁹Եւ ես նորանց համար իմ անձը սուրբ եմ անում, որ նորանք էլ ճշմարտութիւնով սրբուած լինեն:

17:6 «Քո անունը յայտնեցի» Եբրայերեն անունները նախատեսված էին բնութագրելու բնույթ (տես հհ.11, 12, 25-26; Սաղ. 9:10): Այս արտահայտությունը նաև աստվածաբանորեն պնդում է, որ Հիսուսին տեսնել նշանակում է Աստծուն տեսնել (տես Հովհ. 1:18; 12:45, 14: 8-11, Կող. 1:15, Եբ 1: 3):

«Անուն»-ը կարևորագույն աստվածաբանական դեր է խաղում վերնատան երկխոսություններում (տես 14: 13,14,26, 15: 16,21, 16: 23,24,26, 17: 6, 11,12,26): Գլուխ 17-ում օգտագործվում են Աստծո երկու եզակի անվանումներ:

1. Սուրբ Հայր, հ. 11
2. Արդար Հայր, հ. 25

▪ **«այն մարդկանց, որ տուիր ինձ»** Աստվածաբանորեն սա խոսում է ընտրության մասին (տես հհ 2, 9, 24, 6: 37,39): Ոչ ոք չի կարող գա, եթե

1. Աստված չտա
2. Հոգին չքաշի (6: 44,65)
3. չընդունեն (1:12); չհավատան (3:16)

▪ **«Եւ քո խօսքը պահեցին»** Հնազանդությունը շատ կարևոր է (տես 8: 51,55, 14:23, 15: 10,20): Սա օգտագործվում է նույն իմաստով, ինչպես Հին Կտակարանում «անարատ» բառը (տես Նոյ, Ծննդ. 6: 9, Աբրահամ, Ծննդ.17: 1, Իսրայել, 2 Օրին. 18:13, Հոր, Հոր 1: 1): Դա չի նշանակում կատարյալ հնազանդություն կամ անմեղություն, այլ ցանկություն լսելու և անելու այն ամենը, ինչը բացահայտված է: Մինչդեռ դա վերաբերում է աշակերտների հավատքին, Հիսուսին հավատարիմ մնալու և միմյանց սիրելու, ինչպես Հիսուսը սիրեց նրանց:

17:7 «իմացան» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որին հետևում է «որ» (*hoti*), որը վերաբերում է պատգամի բովանդակությանը: Հովհաննեսի «*hoti*» օգտագործման համար տես Հատուկ Թեմա 2:23, # 4:

▪ **«որ այն ամենը որ ինձ տուիր՝ քեզանից է»** Հիսուսը խոսեց այն մասին, թե ինչ է հայտնվել Իրեն Հոր կողմից (հմմտ. հ 8, 7:16, 12: 48-49):

17:8 «նորանք ընդունեցին» Նրանք ստացան Հիսուսի պատգամը Աստծո մասին: Չկա սահմանված ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ: 1:12-ում ընդունել ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐԸ վերաբերում է Հիսուսին: Այստեղ, դա Աստծո մասին պատգամն է, որ Հիսուսը բերեց (հմմտ. հ. 4): Սա կարևորում է ավետարանի երկուական կողմերը որպես (1) անձ և (2) պատգամ:

▪ **«նորանք ընդունեցին... հաւատացին»** Սրանք ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են: Այս ճշմարտությունները վերաբերում են Հիսուսի աստվածային ծագմանը և պատգամին (տես 5:19, 6: 68-69, 12: 48-49, 16:30, 17: 18,21,23,25):

17:9 «Ես նորանց համար եմ աղաչում» Հիսուսը մեր միջնորդն է (տես 1 Տիմոթ. 2: 5, Եբր. 8:6, 9:15, 12:24) և բարեխոսը (տես 1 Հովհ. 2: 1): Հայրը նույնպես ներգրավված է այդ առաջադրանքների մեջ (տես 16:26-27), ինչպես Հոգին էլ (տես Հռ. 8: 26-27): Երրորդության բոլոր Անձերն էլ ներգրավված են փրկության բոլոր ոլորտներում:

- **«աշխարհքի»** *Kosmos* այս գլխում օգտագործվում է տասնութ անգամ: Հիսուսը հոգ է տանում (1) մոլորակի մասին (տես 17:5,24) և (2) հավատացյալների փոխհարաբերությունների մասին (տես 1:10, 17: 6,9,11,13,14, 15,16, 17,18,21,23): Հովհաննեսի գրվածքներում այս տերմինը միանգամայն նշանակում է «մարդկային հասարակություն, որը կազմակերպված է և գործում է Աստուծոց հետո»: Երբեմն դա ենթադրում է (1) մոլորակը 2) մոլորակի ողջ կյանքը կամ (3) կամ Աստուծոց հետո կյանքը: Տես Հատուկ Թեմա 14:17:

17:10 «Եւ ինչ որ իմն է, բոլորը քունն է. եւ ինչ որ քունն է՝ իմն է» Սա բացահայտում է Երրորդության միասնությունը (տես հհ.11, 21-23, 16:15): Երրորդության համար տես Հատուկ Թեմա 14: 26

- **«Ես փառաւորուած եմ նորանցում»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Աշակերտի կյանքը Հիսուսին պատիվ տալն է, ինչպես որ Նա Հորը պատվեց: Ինչպիսի՛ մեծ պատասխանատվություն:

17:11 «Ես՝ այլ եւս աշխարհքումս չեմ» Սա վերաբերում է (1) անմիջական ապագային (համբարձում), երբ Հիսուսը կվերադառնա Հոր մոտ (տես Գործք 1:9-10) կամ (2) Հիսուսի քարոզչական ծառայությանը:

- **«Սուրբ Հայր»** «Սուրբ» տերմինն օգտագործվում է Հոր համար Նոր Կտակարանում միայն այստեղ (այսինքն, «Սուրբ Մեկը», I Պետ. 1:16), ինչպես այն ՀԿ-ում է: Այս ԱԾԱԿԱՆԸ (*hagios*) հաճախ նաև վերագրվում է Սուրբ Հոգուն (տես 1:33, 14:26, 20:22): Նույն հունարեն արմատը կիրառվում է աշակերտների համար հ.17 (*hagiasmos*) և Հիսուս հ.19 (*hagiazō*):

Արմատի հիմնական ստուգաբանությունը «առաձևանալ Աստծո ծառայության համար» (տես հհ.17, 19): Այն օգտագործվում է մարդկանցից, վայրերից և այն բաներից, որոնք տրված են բացառապես Աստծո օգտագործման համար: Այն նկարագրում է Աստծո գերազանց առանձնահատկությունը (Իսրայելի Սուրբը) և տարբերությունը ֆիզիկական, երկրային, ընկած/մեղավոր բաներից: Հիսուսը սուրբ էր. Նրա հետևորդները ավելի շատ նմանվելով Նրան, նրանք էլ են արտացոլում «սրբություն»: «Սուրբ» տերմինի արմատը «սուրբ» հունարեն տերմինն է: Հավատացյալները սուրբ են, քանի որ նրանք Քրիստոսի մեջ են, բայց նրանք պետք է սուրբ լինեն՝ ապրելով Նրա համար, Նրա նման և դեպի Նա:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲ

I. Գործածությունը Հին Կտակարանում

- Ա. (*kadosh*) տերմինի ստուգաբանությունը անորոշ է, հնարավոր է քանանական: Շատ հնարավոր է, որ արմատի մասը (այսինքն *kd*) նշանակում է « բաժանել, սահման դնել»: Այստեղից առաջանում է հայտնի սահմանումը «առանձնացված (քանանական մշակույթից, հմմտ. 2 Օրին. 7:6; 14:2,21; 26:19) Աստծո գործածության համար:
- Բ. Տերմինը կապված է պաշտամունքային առարկաների, վայրերի, որոշակի ժամանակների և մարդկանց հետ, որոնք կապ ունեն այս ամենի հետ: Այն չի հանդիպում Ծննդոց գրքում, բայց լայն իրառություն է ունենում Ելից, Ղևտացոց և Թվոց գրքերում:
- Գ. Մարգարեական գրականության մեջ (հատկապես Եսայիա և Ովսիա) արդեն առկա է անձնական տարրը, բայց մղված չէ առաջին պլան: Այն դառնում է Աստծո էության անվանումը, նշանակությունը (հմմտ. Ես. 6:3): Աստված սուրբ է: Նրա անունը հայտնում է Իր առանձնահատկության, էության մասին: Եվ Իր ժողովուրդը, որը նշանակված է հայտնելու Նրա էությունն ու կերպարը Իր կարիքն ունեցող աշխարհում, նույնպես սուրբ է (եթե նրանք հնազանդվեն և հավատքով հետևեն ուխտին):
- Դ. Աստծո սերն ու ողորմությունը անբաժանելի են ուխտերի աստվածաբանական գաղափարներից, արդարությունից և Նրա էական կերպարից: Այստեղ կա հակասություն Աստծո և պիղծ, ընկած, ըմբոստ մարդկության միջև: Մի շատ հետաքրքիր հոդված կա կապված Աստված որպես «ողորմած» և Աստված որպես «սուրբ» լինելու միջև եղած կապի մասին Ռոբերտ Բ. Գորդլսթունի «Հին Կտակարանի հոմանիշները» գրքում [Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*], էջ. 112-113:

II. Գործածությունը Նոր Կտակարանում

- Ա. Նոր Կտակարանի հեղինակները ունեին հրեական մտածելակերպ (բացի Ղուկասից), որը քոյնե հունարենի ազդեցության տակ էր գտնվում (այսինքն Սեպտուագինդի): Հին Կտակարանի հունարեն թարգմանությունն էր, որ կառավարում էր նրանց բառարանը, և ոչ թե դասական հունարեն գրականությունը, մտածողները կամ կրոնը:
- Բ. Հիսուսը սուրբ է, որովհետև Նա Աստծուց է և Աստծո պես է (հմմտ. Ղուկ. 1:35; 4:34; Գործք 3:14; 4:27,30): Նա է Սուրբը և Արդարը (հմմտ. Գործք 3:14; 22:14): Հիսուսը սուրբ է, որովհետև Նա անմեղ է (հմմտ. Հովհ. 8:46; II Կոր. 5:21; Եբ. 4:15; 7:26; I Պետ. 1:19; 2:22; I Հովհ. 3:5):
- Գ. Քանի որ Աստված սուրբ է, Նրա զավակները նույնպես պետք է սուրբ լինեն (հմմտ. Ղև. 11:44-45; 19:2; 20:7,26; Մաթ. 5:48; I Պետ. 1:16): Քանի որ Հիսուսը սուրբ է, Իր հետևորդները նույնպես պետք է սուրբ լինեն (հմմտ. Հռ. 8:28-29; II Կոր. 3:18; Գաղ. 4:19; Եփ. 1:4; I Թես. 3:13; 4:3; I Պետ. 1:15): Քրիստոնեաները փրկվում են ծառայելու և քրիստոսանման լինելու համար(սրբություն):

▪ **«պահիր նորանց քո անունովը»** Հիսուսն աղոթում է (ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄՍՅԱԿԱՆ) պաշտպանությունը և անձնական ներկայությունը հզորացնելու համար, որը ՅԱՀՎԵՆ էր Իրեն տվել (ՎԱՂԱԿԱՍԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) աշակերտներին տալու համար (տես հ.12): Դա թույլ կտա նրանց ծառայել մեղավոր աշխարհում, ինչպես որ Նա է ծառայում մեղավոր աշխարհում (տես հ.18): Սա միաբանության օգուտներից մեկն է (հ. 21)

1. Հայրը
2. Որդին
3. աշակերտները

▪ **«որ մեկ լինեն ինչպես մենք»** Սա ՆԵՐԿԱ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Այն վերաբերում է Երրորդության միջև հարաբերական միաբանությանը (տես հհ.21, 22, 23, 10:30, 14:10): Սա նաև հրաշալի խնդրանք է և պատասխանատվություն քրիստոնյաների համար: Միաբանության այս կոչը բացակայում է մեր օրերում (տես Եփ. 4: 1-6): Միաբանությունը, ոչ թե միօրինակությունը, Աստծո պառակտված եկեղեցին վերամիավորելու ձևն է:

17:12 «պահում էի... պահեցի» Առաջին ԲԱՅԸ ԱՆԿԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿ է, իսկ երկրորդը՝ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ: Այս ԲԱՅԵՐԸ հոմանիշներ են: Հատվածի անցումը Հիսուսի շարունակական

պաշտպանությունն է (տես 1 Պետ. 1:3-9):

Իր *Word Studies in the New Testament*, հատոր 1, M. R. Vincent- ը տարբերություն է դնում այս երկու տերմինների միջև: Նա ասում է, որ առաջինը (*tēreō*) նշանակում էր պահպանել, իսկ երկրորդը (*phulassō*) պաշտպանել (էջ 496):

▪ **«նորանցից ոչ մեկը չ'կորաւ»** Սա ցույց է տալիս Հիսուսի գործության պաշտպանությունը (տես 6: 37,39, 10: 28-29):

Այս տերմինը (*apollumi*) դժվար է թարգմանել, քանի որ այն օգտագործվում է երկու տարբեր իմաստով: Իր գրքում *Theological Dictionary of the New Testament*, հատոր 1, Gerhard Kittel- ն խոսում է այս բառի մասին «Ընդհանուր առմամբ մենք կարող ենք ասել, որ 2-րդ և 4-րդ ընդգծված ենթադրությունները վերաբերում են այս աշխարհին ինչպես Սինոպտիկ Ավետարաններում է, մինչդեռ 1-ին և 3-րդի հիմքում ընկած են այն մարդիկ, որոնք վերաբերում են հաջորդ աշխարհին, ինչպես Պողոսի ու Հովհաննեսի գրվածքներում» էջ 394: Նա տալիս է հետևյալ սահմանումները, «ոչնչացնել կամ սպանել»
«կորցնել կամ վնաս կրել»
«պատժվել»
«կորցնել»

Այս տերմինը հաճախ օգտագործվել է հաստատելու ոչնչացման, վերանալու, բնաջնջման վարդապետությունը, այսինքն չփրկված մարդիկ դատաստանից հետո դադարում են գոյություն ունենալուց: Դա, կարծես ոտնահարում է Դան. 12: 2: Այն նաև բաց է թողնում տարբերությունը լրացուցիչ իմաստների միջև, որոնք օգտագործված են Սինոպտիկ Ավետարաններում, ի տարբերություն Հովհաննեսի և Պողոսի, որոնք օգտագործում են նրա հոգևոր կորստյան փոխաբերական իմաստը, այլ ոչ թե ֆիզիկական ոչնչացումը: Տես Հատուկ Թեմա 10:10:

▪ **«Բայց միայն կորուստի որդին»** Սա ակնհայտորեն վերաբերում է Հուդա Իսկարիովաացուն: Այս նույն արտահայտությունն օգտագործվում է II Թես. 2: 3 «անօրենության մարդը» (վերջին ժամանակվա հակաքրիստոսը): Սա երբայերեն բառակապակցությունն է, որը նշանակում է «այն, ով որոշված է կորստյան համար»: Սա բառախաղ է «կորել» տերմինի վերաբերյալ, որը նախկինում օգտագործվել է համարում «Ոչ ոք չկորավ, բացի այն, ով որոշված է կորստյան համար»: Տես Հատուկ Թեմա. Ուխտադրություն Հովհ. 6:64:

▪ **«որ գրուածը կատարուի»** Սա վերաբերում է Սաղ. 41:9, մեջբերված Հովհ.13:18-ում. 6: 70-71:

17:13 «Բայց հիմա ես քեզ մօտ եմ գալիս» Սա կարող է վերաբերել

1. Հիսուսի աղոթքին (Հովհ. 17)
2. Հիսուսի համբարձմանը (հ.11, Գործք 1)

▪ **«այս բանը խօսում եմ աշխարհքումը»** Այս արտահայտությունը հղում է կատարում

1. 11:42, Հիսուսը բարձրաձայն խոսում է, որ ուրիշները կարողանան լսել
2. 15:11, Հիսուսի խոսքերը ուղղակիորեն կապված են աշակերտների «ուրախության» հետ:

▪ **«որ իմ ուրախութիւնը կատարեալ ունենան իրանց անձերումը»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍՄԿԱՆ է և ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ: Ինչպիսի հիմնալի խոստում (տես 15:11; 16:24): Հովհաննեսը կրկին օգտագործում է այս արտահայտությունը (տես I Հովհ. 1: 4, II Հովհ. 12):

17:14 «քո խօսքը նորանց տուի» Այստեղ «խոսք» տերմինը *logos* է: Հունարեն *rhēma* հոմանիշն

օգտագործվում է հ.8: Սա աստվածային հայտնության հաստատումն է Հիսուսի անձի, ուսուցումների և օրինակի միջոցով: Հիսուսը տալիս է Խոսքը և Նա Խոսքը: Խոսքը թե անձնական և թե ճանաչողական բովանդակություն է: Մենք ողջունում ենք ավետարանի Անձին և հավատում ավետարանի ուղերձին:

- **«աշխարհքը նորանց ասեց»** Աշխարհի կողմից մերժումը Քրիստոսի կողմից ընդունվելու նշանն է (տես Հովհ.15: 18-20; Ա Հովհ. 3:13):
- **«որովհետև աշխարհքիցը չեն»** Հավատացյալներն աշխարհում են, բայց ոչ աշխարհից (տես հ.16; I Հովհ. 2: 15-17):
- **«ինչպես ես էլ աշխարհքիցը չեմ»** «Աշխարհը» վերաբերում է մեղավոր մարդուն և ապստամբած հրեշտակներին (տես 8:23): Սա Հովհաննեսի ուղղահայաց դուալիզմի մեկ այլ օրինակ է:

17:15 «Ես չեմ աղաչում, որ աշխարհքիցը վեր առնես նորանց» Քրիստոնյաներն ունեն առաքելություն աշխարհում (տես հ.18;Մատթ. 28:19-20, Ղուկ. 24:47, Գործք 1:8): Ժամանակ չէ, որ նրանք տուն գնան:

-
- | | |
|-------------------|-----------------|
| NASB, NKJV | “չարիցը” |
| NRSV | “չարիցը” |
| TEV, NJB | “Չարիցը” |

Այս տերմինը կամ ՉԵԶՈՔ է կամ ԱՐԱԿԱՆ: Այս գրական հատվածը հաճախ նշում է չարի անձնական ուժը (տես 12:31, 13:27, 14:30, 16:11), հետևաբար այս համարը, ինչպես Մատթ. 5:37; 6:13; 13:19,38, պետք է լինի «չարը» (հմմտ. II Թես. 3: 3, I Հովհ. 2: 13-14, 3:12, 5: 18-19): Տես Հատուկ Թեմա 12: 31:

17:17 «սուրբ արա» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, «սուրբ» (*hagios*) արմատից է: Դա կարող է նշանակել

1. Հավատացյալները կանչված են Քրիստոսանման լինելու (տես հ.19, Հռ. 8:24; Գաղ. 4:19, Եփ. 1: 4, I Թես. 5:23): Սա կարող է պատահել միայն ճշմարտության գիտության միջոցով, որը թե կենդանի խոսքն է (Հիսուս 10: 36) և թե գրավոր խոսքը (Աստվածաշունչ, հմմտ. 15:3):
2. «Սրբանալ», իր Հին Կտակարանյան առումով, նշանակում է « առանձնանալ Աստծո ծառայության համար»: Համար 18 հստակեցնում է «սրբանալու» նպատակը:

Հարցը այն չէ, թե արդյոք # 1 կամ # 2 է ճիշտ: Նրանք երկուսն էլ ճիշտ են: Հիսուսի կյանքը ցույց տվեց դրանց երկուսի անհրաժեշտությունը (տես հ.19):

Միանգամայն հնարավոր է, որ Հովհաննեսը ուներ աշակերտներ «սրբագործված» Աստծո ծառայության համար, որպես Աստծո ծառայության համար առանձնացված ՀԿ քահանաների նմանություն: Նրանք ծառայում էին որպես ՀԿ գոհաբերությունների միջնորդներ, իսկ աշակերտները ծառայում էին որպես ՆԿ կատարյալ, մեկ անգամ բոլոր համար գոհ եղած Քրիստոսին հայտնողներ (տես Եբրայեցիս թուղթը, որը համեմատում է ՀԿ և ՆԿ):

- **«Ճշմարտութիւնովը. քո խօսքը ճշմարտութիւն է»** Ճշմարտությունը վերաբերում է Աստծո մասին Հիսուսի պատգամին (տես 8: 31-32): Հիսուսը կոչվում է թե Աստծո խոսք (*Logos* հմմտ.1: 1, 14) և թե ճշմարտություն (տես 14:6): Հոգին հաճախ վերաբերվում է որպես Ճշմարտության Հոգի (տես 14:17, 15:26, 16:13):

Ուշադրություն դարձրեք, որ հավատացյալները նույնպես սրբանում են ճշմարտությամբ (տես հ.19, ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) և Հոգու կողմից (տես 1 Պետրոս 1: 2): Հունարեն արմատից բաղկացած «ճշմարիտ, ճշմարտություն» քննարկումները տես Հատուկ Թեմաներ Ճշմարտություն 6:55 և 17:3

Հնարավոր է, որ «Քո խոսքը ճշմարտություն է» կարող է լինել ենթադրություն կամ մեջբերում LXX-ից Սաղ. 118:142, «Քո արդարութիւնը յաւիտենական արդարութիւն է, եւ օրէնքը ճշմարտութիւն է»: Անշուշտ, հնարավոր է, որ Հիսուսը համարվում էր որպէս

1. նոր Մովսէսը (2 Օր. 18:15)
2. Նրա աշակերտները որպէս նոր քահանաներ («սրբանալ» ԲԱՅԻ օգտագործումը)
3. Նրա կյանքը որպէս ճշմարիտ Աստծո ճշմարիտ հայտնություն
4. Եռյակ Աստծո և աշակերտների միաբանություն, որպէս արարչագործության կատարված նպատակ (այսինքն, Ծննդ. 1: 26-27)
5. Հիսուսը, որպէս Ծննդ. 3:15 կատարող

17:18 «Ինչպէս դու ինձ ուղարկեցիր աշխարհք» Հիսուսի կյանքը հնազանդության և ծառայության կյանք էր, նույնիսկ ի մահ (II Կորնթ. 5: 14-15, Փաղ. 2:20, I Հովհ. 3:16), օրինակ է տալիս Իր հետևորդների համար (տես հ.19): Նա կուղարկի նրանց մեղավոր աշխարհ առաքելության համար այնպէս, ինչպէս Նա ուղարկվեց 20:21: Նրանք պետք է մտնեն աշխարհ, այլ ոչ թե մեկուսանան մենաստաններում: Տես Հատուկ Թեմա `Ուղարկել (*Apostellō*) 5: 24:

17:19 «Իմ անձը սուրբ եմ անում» Այս կոնտեքստում սա պետք է, որ վերաբերվի Գողգոթային: Հիսուսը Իր առջև դրեց կատարել Հոր կամքը (այսինքն, Մարկ.10:45):

▪ **«որ նորանք էլ ճշմարտութիւնով սրբուած լինեն»** Սա *hina* նախադասություն է (նպատակի մաս), որը կատարվում է ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ_ ով, ինչը ենթադրում է, որ արդյունքները արդեն կատարվել են և շարունակվում են ուժով: Այնտեղ, այնուամենայնիվ, հիմք է հանդիսանում անպատժելիության տարրը

1. Քրիստոսի առաջիկա գործը խաչի վրա, հարությունը և համբարձումը
2. նրանց շարունակական ապաշխարող հավատքի արձագանքը Հիսուսին և Նրա ուսմունքներին

Տես Հատուկ Թեմաներ Ճշմարտություն 6:55 և 17:3:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 17:20-24

²⁰Բայց ոչ թէ միայն նորանց համար եմ աղաչում, այլ նորանց համար էլ, որ նորանց խօսքովը կ'հաւատան ինձ: ²¹Որ ամենքը մէկ լինեն, ինչպէս դու, Հայր, ինձանում, եւ ես քեզանում, որ նորանք էլ մեզանում մէկ լինեն. Որ աշխարհքը հաւատայ, թէ դու ուղարկեցիր ինձ: ²²Եւ ես այն փառքն՝ որ ինձ տուիր՝ նորանց տուի, որ մէկ լինեն՝ ինչպէս մենք էլ մէկ ենք: ²³Ես նորանցում՝ եւ դու ինձանում, որ կատարեալ լինեն միութիւնում, որպէսզի աշխարհքը գիտենայ, թէ դու ուղարկեցիր ինձ. Եւ սիրեցիր նորանց՝ ինչպէս ինձ սիրեցիր: ²⁴Հայր, նորանք որ ինձ տուիր, կամենում եմ, որ ինչ տեղ որ ես եմ՝ նորանք էլ ինձ հետ լինեն. Որ իմ փառքը տեսնեն, որ տուիր ինձ. որովհետեւ աշխարհքի հիմնելուցն առաջ սիրեցիր ինձ:

17:20 «այլ նորանց համար էլ, որ նորանց խօսքովը կ'հաւատան ինձ» Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ է, որը գործում է որպէս ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ: Սա վերաբերում է բոլոր մյուս հավատացյալներին և 10:16-ում, նույնիսկ հեթանոսներին: Տես Հատուկ Թեմա 2: 23:

▪ **«նորանց խօսքովը»** Սա *logos* տերմինն է: 14 և 8 համարներում *rh_ma* օգտագործման պատճառով, դա պետք է որ վերաբերվի աշակերտներին, որոնք փոխանցում էին Հիսուսի հրաշալի պատգամը:

17:21 «Որ ամենքը մեկ լինեն» Այս միաբանությունը ոչ այլ ինչ է, քան Երրորդության միաբանությունը (տես հհ.11, 22, 23, Եփ. 4: 1-6): Սա Հիսուսի ուսմունքի մեկ ասպեկտ է, որ Նրա հետևորդները չեն հետևել:

▪ **«Որ աշխարհքը հաւատայ, թէ դու ուղարկեցիր ինձ»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Միաբանության նպատակը ավետարանչությունն է: Համար 23 գրեթե ճշգրիտ նույն կառուցվածքն է և շեշտադրությունը:

Հիսուսի աղոթքում լարվածություն կա: Նա չի աղոթում աշխարհի համար (հ.9), սակայն Նա ուղարկում է Իր հետևորդներին աշխարհի Իր պատգամով, որը կհանգեցնի նրանց հալածանքներին, քանի որ Աստված սիրում է աշխարհը (տես հհ.21: 23, 3:16): Աստված ցանկանում է, որ ամբողջ աշխարհը հավատա (տես I Տիմ. 2: 4; Տիտոս 2:11, II Պետ. 3:9): Աստված սիրում է բոլոր նրանց, ովքեր պատրաստված են Իր պատկերով և նմանությամբ: Հիսուսը մահացավ ողջ աշխարհի մեղքերի համար: Տես Հատուկ Թեմա `Ուղարկել (*Apostellō*) 5: 24:

17:22 «այն փառքն՝ որ ինձ տուիր՝ նորանց տուի» Սրանք երկուսն էլ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆՆԵՐ են: Փառքը պետք է վերաբերվի զարմանահրաշ պատգամին: Նրանք տանում են Նրա խոսքը աշխարհ, ինչպես Հիսուսը բերեց Հոր խոսքը: Սա կհանգեցնի նրանց, նաև կրելու Իր նախատիքը: A. T. Robertson-ը *Word Pictures in the New Testament*, հատոր V գրում է. «Դա մարմնավորված Խոսքի փառքն է (տես 1:14 և 2:11), ոչ թե 17:24 հիշատակված Հավիտենական Խոսքի փառքը» (էջ 280): Տեսեք «փառքի» ամբողջական ծանուցումը 1:14:

17:23 «որ կատարեալ լինեն միութիւնում» Սա *hina* նախադասություն է ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ_ ով, ինչպես հ.19, բայց ինչպես հ.19 կա հակասության տարր, որը հիմնված է (1) Քրիստոսի առաջիկա գործի կամ 2) նրանց շարունակական հավատքի վրա: Սա նշանակում է, որ նրանք արդեն միավորված են եղել Հիսուսի կատարած գործի միջոցով և որ այն մնայուն է: Միաբանության նպատակը ավետարանչությունն է:

▪ **«Եւ սիրեցիր նորանց՝ ինչպէս ինձ սիրեցիր»** Սա խոստում է (տես 16:27 և 14: 21,23), բայց այն ունի պայման: Աստված մարդկանց հետ գործում է ուխտերի միջոցով («Եթե ...ապա»):

Սեր (*agapeō*) հանդիպում է Հովհաննու 1-12-ում ութ անգամ, իսկ Հովհաննու 13-17-ում 31 անգամ: Վերնատան երկխոսությունը ընդգծում է Հայր Աստծո բացահայտված բնույթը Որդու խոսքերի և գործերի միջոցով և շուտով, հարությունը և հատկապես Պենտեկոստեն, աշակերտների միջոցով: Աստված սեր է (տես 1 Հովհ. 4: 7-21):

17:24 «ինչ տեղ որ ես եմ՝ նորանք էլ ինձ հետ լինեն» Հիսուսը վերադառնում է փառքով, որպեսզի տեղ պատրաստի Իր հետևորդների համար (տես 14:1-3): Այս աշխարհը մեր տունը չէ, ինչպես որ Նրանք չէր: Դա Նրա ստեղծագործությունն է (Օննոց 1-2) և այն վերականգնվելու է (Հայտնություն 21-22):

▪ **«Որ իմ փառքը տեսնեն, որ տուիր ինձ»** Ակնհայտ է, որ «փառք» տերմինը այս համարում չի կարող նշանակել այն, ինչ հ.22-ում: Այստեղ թվում է, որ ընդգրկում է Հիսուսի նախագոյ աստվածության մեծությունը:

- «աշխարհքի հիմնելուցն առաջ» Եռյակ Աստված ակտիվ էր փրկության մեջ նույնիսկ ստեղծագործությունից առաջ: Այս արտահայտությունը մի քանի անգամ օգտագործվում է ՆԿ (տես Մատթ .25:34, Ղուկ.11:50; Եփ. 1: 4, Եբր. 4: 3, 9:26; I Պետ. 1:20, Հայտ. 13: 8, 17: 8):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 17:25-26
²⁵Արդար Հայր, աշխարհքը չ'ճանաչեց քեզ. բայց ես ճանաչեցի քեզ, եւ սորանք ճանաչեցին որ դու ուղարկեցիր ինձ: ²⁶Եւ ես քո անունը ճանաչեցրի նորանց, եւ կ'ճանաչեցնեմ. Որ այն սերն, որով ինձ սիրեցիր՝ նորանցում լինի, եւ ես էլ նորանցում:

17:25 «Արդար Հայր» Այս վերնագիրը միայն այստեղ է հայտնվում ՆԿ- ում: Այն զուգահեռ է «Սուրբ Հոր» հ.11: Այն առաջացել է Եբրայերեն «չափելու եղեգ» բառից: Աստված դատաստանի չափանիշն է: Տես Հատուկ Թեմա I Հովհ. 2:29:

- «աշխարհքը չ'ճանաչեց քեզ» Աշխարհը, մարդկային հասարակությունը կազմակերպվել է գործել է Աստծուց հեռու (Հովհաննեսի յուրահատուկ օգտագործում), չի ճանաչում Աստծուն (տես 17:25), ոչ էլ Նրա Որդուն (տես 1: 10): Դա չար է (տես 3: 19-20, 7: 7):

- «բայց ես ճանաչեցի քեզ» Հիսուսը Աստծո մասին տեղեկատվության ամենաբարձր և ամենավաղ աղբյուրն է (տես 1:18, 3:11):

17:26 «Եւ ես քո անունը ճանաչեցրի նորանց» Սա վերաբերում է Հիսուսի հայտնած Հոր բնույթի և մարդկության համար փրկագնման պլանի (տես 6: 11,12, Գործք 2:23, 3:18, 4:28): «ճանաչեցնել» տերմինը օգտագործվում է հինգ անգամ հհ. 25-26:

- «Եւ կ'ճանաչեցնեմ» Սա կամ վերաբերում է (1) Հիսուսի շարունակական հայտնությանը Հոգու միջոցով, որը հստակեցնում է Նրա ուսմունքները կամ (2) սպասվող փրկության (Չարչարանքի Շարաթ) իրադարձությունները: Հատվածի կոնտեքստը նշանակում է #1: Փրկությունը ներառում է անձ և պատգամ, որոշում և ապրելակերպ, նախնական հավատք և շարունակական հավատք: Այն ներառում է թե հունարեն «ճանաչել/իմանալ» և թե եբրայերեն «ճանաչել/իմանալ» բառերը:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու է այս աղոթքը այդպես աստվածաբանորեն կարևոր:
2. Հուդա՞ն հավատացյալ էր, ով շնորհքից ընկավ:
3. Ի՞նչն է մեր միաբանության նպատակը:
4. Ինչու է Հիսուսի նախագոյությունը կարևոր:
5. Սահմանել այս կոնտեքստի բանալի տերմինները:
 - ա. «փառավորվել»
 - բ. «տալ»
 - գ. «իմանալ/ճանաչել»
 - դ. «ուղարկել»
 - ե. «անուն»
 - զ. «աշխարհ

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 18

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ^d	NKJV	NRSV	TEV	NJB
Մատնությունը և Հիսուսի ձերբակալումը	Մատնությունը և ձերբ. Գեթսեմանում	Հիսուսի ձերբակալումը, դատը, խաչելությունը (18:1-19:42)	Հիսուսի ձերբակալումը	Հիսուսի ձերբակալումը
18:1-11	18:1-11	18:1-11	18:1-4 18:5ա 18:5բ 18:5գ-7ա 18:7բ 18:8-9 18:10-11	18:1-9 18:10-11
Հիսուսը Քահանայապետի առջև	Քահանայապետի առջև		Հիսուսը Աննայի առջև	Հիսուսը Աննայի և Կայիափայի առջև,
18:12-14	18:12-14	18:12-14	18:12-14	18:12-14
Պետրոսը ուրանում է Հիսուսին	Պետրոսը ուրանում է Հիսուսին		Պետրոսը ուրանում է Հիսուսին	
18:15-18	18:15-18	18:15-18	18:15-17ա 18:17բ 18:18	18:15-18
Քահ-պետը Հիսուսին	Քահ-պետը Հիսուսին		Քահ-պետը Հիսուսին	
18:19-24	18:19-24	18:19-24	18:19-21 18:22 18:23 18:24	18:19-24
Պետրոսը նորից է ուրանում Հիսուսին	Պետրոսը ուրանում է ևս երկու անգամ		Պետրոսը նորից է ուրանում Հիսուսին	
18:25-27	18:25-27	18:25-27	18:25ա 18:25բ 18:26 18:27	18:25-27
Հիսուսը Պիղ-ի առջև	Պիղատոսի ատյանում		Հիսուսը Պիղ-ի առջև	Հիսուսը Պիղ-ի առջև
18:28-38ա	18:28-38	18:28-32	18:28-29 18:30 18:31ա 18:31բ-32	18:28-32
		18:33-38ա	18:33 18:34 18:35 18:36 18:37ա 18:37բ 18:38ա	18:33-19:3
Հիսուսը դատ. մահվան (18:38բ-19:16գ)	Բարաբբայի փոխարեն		Հիսուսը դատ. մահվան (18:38բ-19:16ա)	
18:38բ -19:7	18:39-40	18:38բ-19:7	18:38բ-39 18:40-19:3	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇԵՄՈՒՄՆԵՐԸ 18:1-40

- Ա. Հովհաննեսը բաց է թողնում Հիսուսի չարչարանքը Գեթսեմանում (թեև 17 գլուխը կարող է զուգահեռ լինել): Սա, ըստ երևույթին, այն պատճառով էր, որ նա ընդգծում է Հիսուսի դինամիկ բնույթը, որը վերահսկողության տակ է բոլոր հանգամանքներում: Նա Ինքը դրեց Իր կյանքը (տես 10: 11,15,17,18):
- Բ. Այս գլխի իրադարձությունների կարգը որոշ չափով տարբերվում է Սինոպտիկ Ավետարաններից: Այս անհամապատասխանությունը կարծես թե կապված է
1. ակնատեսների պատմությունների բնույթը
 2. հեղինակի աստվածաբանական նպատակները
- Գ. Հովհաննեսի Ավետարանը շատ է տարբերվում Սինոպտիկ Ավետարաններից: Ինչու և ինչպես հարցեր են, որ աստվածաբան գիտնականները չեն կարող պատասխանել: Լավագույն քննարկումները, որ ես տեսել եմ այս հարցում, Gordon Fee, Douglas Stuart, *How To Read the Bible For All Its Worth*, որտեղ այն մի քանի տեսություններ է տալիս: Ակնհայտ է, որ Ավետարանի հեղինակները, ներշնչվելով, ունեին ազատություն
1. ընտրելու
 2. որդեգրելու
 3. վերադասավորելու
- Հիսուսի խոսքերը և գործերը: Չեմ կարծում, որ նրանք կարող էին բառեր և գործեր կազմել, բայց կարող էին հարմարեցնել նրանց իրենց ավետարանչական նպատակների համար՝ օգնելու բացահայտել Հիսուսին տարբեր մարդկանց խմբերում: Հիշեք, որ Ավետարանները արևմտյան պատմություններ չեն (այսինքն պատճառ և ազդեցություն և ժամանակագրական), այլ արևելյան պատմություններ: Նրանք կենսագրություններ չեն, այլ ավետարանչական թերթիկներ:
- Դ. Այս գլխի վերաբերյալ լավ տեղեկագիր է, թե որքանով է Հիսուսի փորձությունները օրինական (այսինքն Սինեդրիոն, 4: 1) հանդիսանում է A. N. Sherwin-White's *Roman Society and Roman Law in the NT*.

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 18:1-11
 1Յիսուսը այս ասելուց յետոյ իր աշակերտների հետ դուրս գնաց Կեղրոն հեղեղատի միւս կողմը, որտեղ մի պարտեզ կար. Որի մէջ մտաւ ինքը եւ իր աշակերտները: 2Յուդան՝ նորան մատնողն էլ գիտէր այն տեղը. որովհետեւ Յիսուսը շատ անգամ ժողովուել էր այնտեղ իր աշակերտների հետ: 3Եւ Յուդան զինուորների գունդը եւ քահանայապետներից եւ Փարիսեցիներից սպասաւորներ առնելով եկաւ այնտեղ ջահերով եւ լապտերներով եւ զենքերով: 4Բայց Յիսուսը երբոր գիտաց այն ամեն բաները, որ գալիս էին իր վերայ, դուրս եկաւ նորանց ասեց. Ո՛ւմ էք ուզում: 5Պատասխանեցին նորան. Յիսուս նազովրեցուն. Յիսուսը նորանց ասեց. Ես եմ. Յուդան՝ նորան մատնողն էլ կանգնած էր նորանց հետ: 6 Երբոր ասեց նորանց թէ Ես եմ, նորանք ետ ետ գնացին, եւ գետնի վերայ ընկան: 7Եւ դարձեալ հարցրեց նորանց, Ո՛ւմ էք ուզում. Եւ նորանք ասեցին. Յիսուս նազովրեցուն: 8Յիսուսը պատասխանեց. Ձեզ ասեցի թէ Ես եմ. Արդ թէ որ ինձ էք ուզում, թող տուէք դորանց, որ գնան: 9Որ կատարուի այն խօսքը որ ասեց, թէ Նորանց որ ինձ տուիր, նորանցից ոչ մէկն էլ չ'կորցրի: 10Բայց Միսնոն Պետրոսը, որ սուր ունէր, քաշեց նորան եւ քահանայապետի ծառային զարկեց, եւ նորա աջ ականջը կտրեց գցեց. Եւ այն ծառայի անունը Մաղքոս էր: 11 Յիսուսն էլ Պետրոսին ասեց. Սուրդ դիր պատեանի մէջը. այն բաժակը որ իմ Հայրը տուաւ ինձ, ես այն չ'խմե՛մ:

18:1 «Կեղրոն հեղեղատի» «Հեղեղատ» տերմինը նշանակում էր «ձմեռային վտակ, առու» կամ «ճահճային, չորացած առու»: «Կեղրոն» (BDB 871) նշանակում է (1) մայրի ծառ կամ 2) սև: Սա ամառային ժամանակահատվածում ամբողջովին չոր առու էր, բայց ձմռանը հոսում էր: Դա այն վայրն է, որտեղ Մորիա լեռան վրայից լցվում էր զոհաբերությունների արյունը: Դրա համար էլ այն նկարագրվում է «սև»: Այն գտնվում էր տաճարի լեռան և Ձիթենյաց լեռան միջև (տես LXX II Թագ. 15:23, IV Թագ. 23: 4,6,12; II Մնաց. 15:16; 29:16; 30:14; Երեմիա 31:40):

- Այս մտքի վերաբերյալ կա հունարեն ձեռագիր տարբերակ.
1. «մայրիներ», (*kedrōn*) MSS Տ^c, B, C, L և մի քանի այլ երկաթագիր ձեռագրերում
 2. «մայրի», (*kedrou*) MSS Տ^{*}, D, և W
 3. «Կեղրոն», (*kedrōn*) MSS A և S

United Bible Society's չորրորդ հրատարակությունը օգտագործում է # 3

▪ **«պարտեզ»** Այս գլուխը լիովին անտեսում է Հիսուսի տառապանքը Գեթսեմանում, բայց ձեռքակալումը տեղի է ունենում այգում: Սա Հիսուսի սիրելի հանգստավայրն էր (հմմտ. հ. 2, Ղուկաս 22:39): Հիսուսը, հավանաբար, քնում էր այստեղ իր կյանքի վերջին շաբաթվա ընթացքում (հմմտ. Ղուկաս 21:37):
 Երուսաղեմում այգիներ չէին թույլատրվում, քանի որ անհրաժեշտ պարարտանյութը դրանք անմաքուր էր դարձնում: Հետևաբար շատ հարուստ մարդիկ ունեին խաղողի այգիներ, պտղատու այգիներ և այլն Ձիթենյաց լեռան վրա:

18:2 Սա Հովհաննեսի մեկ այլ խմբագրական մեկնաբանություն է:

▪ **«Յուդան»** Հուդայի և նրա դրդապատճառների վերաբերյալ շատ շահարկումներ կան: Նա հիշատակվում և հաճախ անարգվում է Հովհաննեսի Ավետարանում (տես 6: 70-71, 12: 4, 13:2,26,39, 18:2,3,5): Ժամանակակից «Յիսուս Քրիստոս Սուպերսթար» ներկայացումը նկարագրում է նրան որպես հավատարիմ, բայց հիասթափված հետևորդ, որը փորձում էր ստիպել Հիսուսին կատարել Հին Կտակարանի հրեական Մեսիայի դերը, այսինքն, հռոմեացիներին տապալելու, ամբարիշտներին պատժելու և Երուսաղեմը Աշխարհի մայրաքաղաք դարձնելու համար:

Այնուամենայնիվ, Հովհաննեսը պատկերում է իր դրդապատճառները որպես ազահ և սատանայի կողմից ներշնչված:

Հիմնական խնդիրը Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի աստվածաբանական խնդիրն է: Արդյո՞ք Աստված կամ Հիսուսը շահարկել են Հուդային: Արդյո՞ք Հուդան պատասխանատու է իր արարքների համար, եթե Մատանան կառավարում էր իրեն կամ Աստված նախասահմանել էր և առիթ տվել նրան դավաճանելու Հիսուսին: Աստվածաշունչը ուղղակիորեն չի անդրադառնում այս հարցերին: Աստվածը վերահսկում է պատմությունը: Նա գիտի հետագա իրադարձությունները, բայց մարդկությունը պատասխանատու է ընտրությունների և գործողությունների համար: Աստված արդար է, ոչ մանիպուլյատիվ:

Գոյություն ունի մի նոր գիրք, որը փորձում է պաշտպանել Հուդային - *Judas Betrayer or Friend of Jesus?* William Klassen, Fortress Press, 1996. Ես համաձայն չեմ այս գրքի հետ, քանի որ այն արժեզրկում է Հովհաննեսի վկայությունը Հուդայի մասին, բայց այն շատ հետաքրքիր է և մտածելու տեղիք տվող:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ/ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ

Ընտրությունը հիանալի վարդապետություն է: Բայց ընտրությունը դա ֆավորիտ/սիրելի լինելը չէ, այլ որ հավատացյալը լինի ճանապարհ, գործիք կամ միջոց, որը կնպաստի ուրիշների փրկությանը: Հին Կտակարանում տերմինը հիմնականում օգտագործվում էր ծառայության համար; Նոր Կտակարանում այն հիմնականում օգտագործվում է փրկության համար, որին հաջորդում է ծառայությունը: Աստվածաշունչը երբեք չի հաշտեցնում թվացյալ կոնֆլիկտը Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի միջև, բայց հաստատում է երկուսն էլ: Աստվածաշնչյան լարվածության լավ օրինակ կարող է լինել Հռ. 9-ը Աստծո գերիշխան ընտրության վերաբերյալ և Հռ. 10-ը մարդու անհրաժեշտ արձագանքի մասին (հմմտ. 10:11,13):

Այս աստվածաբանական լարվածության բանալին կարելի է գտնել Եփ. 1:4: Հիսուսը Աստծո ընտրյալ Մարդն է և բոլոր մարդիկ ըստ հնարավորին ընտրված են Նրանում (Կարլ Բարտ): Հիսուսն Աստծո «այո»-ն է՝ ուղղված մեղավոր մարդու կարիքին (Կարլ Բարտ): Եփեսացիս 1:4 օգնում է հստակեցնել այս վիճելի հարցը, պնդելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (քրիստոսանմանություն): Ավետարանում մեզ հաճախ գրավում է հավատացյալի շահն ու արտոնությունը, բայց մենք հակված ենք անտեսելու մեր պատասխանատվությունները: Աստծու կանչը (ընտրություն) թե երկրային կյանքի համար է, և թե հավիտենականության:

Աստվածաշնչյան վարդապետություններն ունեն սերտ համագործակցություն միմյանց հետ, և նրանցից ոչ մեկը անհատապես և անկախ հանդես չի գալիս: Ինչպես օրինակ համաստեղությունը և մեկ առանձին աստղը: Աստված ներկայացնում է Իր ճշմարտությունները արևելյան ժամրով և ոչ թե արևմտյան: Եվ մենք չպետք է հեռացնենք լարվածությունը, որ կան որոշ վարդապետական ճշմարտությունների մեջ, որ ակնհայտ գոյություն ունեն երկու դիալեկտիկական (պարադոքսալ) կողմերում.

1. Նախասահմանությունը և մարդու ազատ կամքը
2. Հավատացյալների ապահովությունը և համբերատարության կարիքը
3. Ադամական մեղքը և անձնական մեղքը
4. Ամենելություն (կատարելություն) և քիչ մեղանչելը
5. Նախասկզբնական ակնթարթային արդարացումն ու սրբացումը և աստիճանաբար սրբացումը
6. Քրիստոնեական ազատություն և քրիստոնեական պատասխանատվություն
7. Աստծո գերազանցությունը և Աստծո ներունակությունը
8. Աստված որպես անճանաչելի վերջնականապես և ամբողջությամբ և Աստված որպես ճանաչված Սուրբ Գրքի միջոցով
9. Աստծո Թագավորությունը ներկայում և վերջնական իրականացումը ապագայում
10. Ապաշխարությունը որպես Աստծո պարգև և ապաշխարությունը որպես ուխտի մարդու անհրաժեշտ արձագանք
11. Հիսուսը որպես Աստված և Հիսուսը որպես մարդ
12. Հիսուսը հավասար է Հորը և Հիսուսը ենթարկվում է Հորը

«Ուխտ»-ի աստվածաբանական հասկացողությունը միավորում է Աստծո գերիշխանությունը (Ուլ

միշտ նախաձեռնում և կանոններ է հաստատում) պարտադիր նախասկզբնական և շարունակական ապաշխարությունը և հավատքի արձագանքը մարդկանց կողմից: Ջգուշացեք փնտրելուց հաստատող տեքստ պարադոքսի միայն մեկ կողմը և նվազեցնել մյուսի իմաստը: Ջգուշացեք հաստատելու միայն ձեր սիրելի վարդապետությունը կամ աստվածաբանական համակարգը:

18:3

NASB “*հռմեական գումարտակ*”

NKJV “*գորքերի ջոկատ*”

NRSV “*զինվորների ջոկատ*”

TEV “*մի խումբ հռմեացի զինվորներ*”

NJB “*գումարտակը*”

Սա վերաբերում է հռմեական զորամասին, որը լեգեոնի տասներորդ մասն է և կարող էր ունենալ մինչև 600 մարդ տեղակայված Անտոնիո ամրոցում, Տաճարի կողքին (տես Գործք 21: 31,33): Անհավատալի է, որ այսչափ մեծ խումբ էր կանչված: Հռմեացիները պատրաստված էին Երուսաղեմում տեղի ունենալիք անկարգություններին այս տոների ժամանակ: Նրանք պետք է ձեռնարկեին անհրաժեշտ նախագուշական միջոցները, Կեսարիայից գորքերը տեղափոխելով ծովի կողմը: Հռմեացիները ներգրավված էին Հիսուսի դատավարությանը, քանի որ հրեաներն ուզում էին Հիսուսին խաչել: Դա սովորաբար տևում էր մի քանի օր: Նրանք կարող էին դա անել միայն Հռմեական կառավարության թույլտվությամբ և համագործակցությամբ:

▪ **«քահանայապետներից սպասաւորներ»** Ղևտական Տաճարի ոստիկանությունը ուղեկցում էր հռմեական կայագորը: Նրանք մեկ անգամ արդեն չէին կարողացել ձերբակալել Հիսուսին (տես 7: 32,45):

▪ **«զենքերով»** Սուրբ կրում էին հռմեացի զինվորները (տես 6:64, 13:1,11) իսկ մահակները՝ տաճարի ոստիկանները (տես Մատթ. 26:43, Մարկ. 14:43, Ղուկ. 22:52):

18:4 «Յիսուսը՝ երբոր զիտաց այն ամեն բաները» Սա ուժեղ շեշտադրում է նրա ձերբակալման, փորձությունների և խաչելության Հիսուսի սեփական զիտելիքներն ու հսկողությունը (տես 10:11,15,17,18): Պատահական չէ, որ Հիսուսը խաչվեց (տես Մարկ 10:45, Գործք 2:23, 3:18, 14:29): Այս թեման բնորոշ է Հովհաննեսի Ավետարանին և ահա, թե ինչու չի գրում Հիսուսի Գեթսեմանյան հակամարտության մասին:

18:5

NASB, NJB “*Հիսուս Նազովրեցի*”

NKJV, NRSV,

TEV “*Հիսուսը Նազարեթից*”

Որոշ քննարկումներ եղել են «Նազարեթ» տերմինի ստուգաբանության մասին: Հնարավոր է, որ դա կարող է նշանակել (1) Նազովրեցի, (2) ուխտավոր (տես Թվոց 6) կամ (3) Նազարեթից: ՆԿ օգտագործումը (Մատթ. 2:23) հաստատում է # 3-ը: Ոմանք նույնիսկ կապում էին եբրայերեն բաղաձայները *nzr*, Մեսիական «ճյուղ, շառավիղ» կոչման հետ (*nezer* հմմտ. Ես.11: 1, 14:19, 60:21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԻՍՈՒՍ ՆԱՉՈՎՐԵՑԻ

Կան մի քանի տարբեր հունարեն տերմիններ, որ օգտագործվում է Նոր Կտակարանում, որը հստակ մատնացույց է անում Հիսուս Քրիստոսին:

Ա. Նորկտակարանային տերմիններ

1. Նազարեթ – քաղաք Գալիլիայում (հմմտ. Ղուկ. 1:26; 2:4,39,51; 4:16; Գործք 10:38): Այս քաղաքը մասին չի հիշատակվում ժամանակակից աղբյուրներում, բայց այն հայտնաբերվել է ավելի ուշ արձանագրություններում:

Հիսուսի համար Նազարեթից լինելը հաճոյախոսություն չէր (հմմտ. Հովհ. 1:46): Հիսուսի խաչի վրայի նշանն ունեւորում էր այս քաղաքի անունը, որը ցույց էր տալիս Իր հանդէպ ունեցած հրեաների արհամարհանքը:

2. *Nazarēnos* - ամենայն հավանականությամբ այս բառը աշխարհագրական տեղանքի անուն է (հմմտ. Ղուկ 4:34; 24:19):
3. *Nazōraios* – կարող է նշանակել քաղաքի անուն, բայց նաև կարող է օգտագործվել է հին եբրայերեն «ճյուղ, շառավիղ» Մեսիական տերմինի համար (*netzer*, հմմտ. Ես. 4:2; 11:1; 53:2; Եր. 23:5; 33:15; Չաք. 3:8; 6:12; ՆԿ Հայտ. 22:16): Ղուկասն այս բառն օգտագործում է 18:37 և Գործք 2:22; 3:6; 4:10; 6:14; 22:8; 24:5; 26:9:
4. Կապված #3 *nāzir*, որը նշանակում է «սրբացած երդման միջոցով»:
Այս տերմինների կիրառության պատմական օրինակները Նոր Կտակարանում չկան: Նրանց նշանակությունը պատմականորեն այլ է.
 1. Այդպես կոչում էին հրեական համայնքներում գտնվող հերետիկոսների խմբին, որոնք գոյություն ունեին մինչև քրիստոնեությունը (արամերեն *nāsōrayyā*):
 2. Հրեական միջավայրերում Հիսուս Քրիստոսին հավատացողներին այդպես էին նկարագրում (հմմտ. Գործք 24:5,14; 28:22 *nosri*):
 3. Միրիական (Արամեական) եկեղեցիներում հավատացյալներին դիմելու ընդունված տերմին էր : Հավատացյալները «քրիստոնեա» անվանվում էին հունական եկեղեցիներում:
 4. Որոշ ժամանակ անց, Երուսաղեմի անկումից հետո փարիսեցիները Յամնիայում վերակազմավորեցին և ուժեղ թափով հրահրում էին բաժանումներ ժողովարանի և եկեղեցու միջև: «Տասնութ օրհնությունները» (the Eighteen Benedictions) աշխատությունում, Բերակոտի (*Berakoth*) 28բ-29ա տեքստում գտնվում է քրիստոնեաներին անիծելու տիպիկ բանաձևը, որտեղ հավատացյալներին անվանում են «նազովրեցիներ»:
«Թող որ բոլոր նազովրեցիներն ու հերետիկոսները անհետանան մեկ ակնթարթում; ջնջվեն կյանքի գրքից և հավատարիմների կողքին չախտի դասվեն»:
 5. Այն օգտագործվել է Justin Martyr-ի կողմից, *Dial.* 126:1 , որն օգտագործեց Եսայիայի *netzer* Հիսուսին:

Գ. Հեղինակի կարծիքը

Ես զարմացած եմ այսքան շատ քանակությամբ տարբերակների համար, որ այս բառն ունի, չնայած ես գիտեմ որ նման բան մեկ անգամ չի հանդիպում Հին Կտակարանում: Օրինակ «Հետու» բառը հին եբրայերենում ունի մի քանի տարբեր արտասանություններ: Բայց և այնպես,

1. սերտ կապը մեսիական տերմինի «Ճյուղ» հետ;
2. միացված բացասական իմաստի հետ;
3. բացակայող կամ շատ քիչ հաստատումը Գալիլիա քաղաքի մասին
4. այն հնչում է չար ոգու բերանից վախճանաբանական իմաստով («Դու եկել ես՞ մեզ կործանելու»):

Ամբողջական բիրլիոգրաֆիական/ մատենագրություն բառային սերտողության համար կարող եք օգտվել հետևյալ գրքից, Colin Brown (ed.), *New International Dictionary of New Testament Theology*, հատ. 2, էջ. 346 կամ or Raymond E. Brown, *Birth*, էջ 209-213, 223-225.:

- «Ես եմ» Սա բառացիորեն «Ես եմ» եբրայերեն «լինել» ԲԱՅՆ է (տես Հատուկ Թեմա 6:20), որը հրեաները կապում էին ՅԱՀՎԵԻ հետ, Աստծո Ուխտի անունը (տես Ելից 3:14 և Ես. 41: 4): Հիսուսը այդ զարմանալի աստվածության պնդումն է անում նույն խիստ քերականական կառուցվածքով (*ego eimi*) 4:26; 8:24, 28, 58 և 13:19: Այս կոնտեքստում շեշտը կրկնվում է երեք անգամ (հմմտ. հհ 6, 8): Այս քերականական կառուցվածքը տարբերվում է Հիսուսի հայտնի «Ես եմ» արտահայտություններից:

▪ «Յուզան՝ նորան մատնողն էլ կանգնած էր նորանց հետ» Սա մեկ այլ խմբագրական մեկնաբանություն է Ավետարանի հեղինակի՝ Հովհաննեսի ակնաստեսի կողմից:

18:6 «նորանք ետ ետ գնացին, եւ գետնի վերայ ընկան» Հովհաննեսը գրեց այս մասին՝ ընդգծելով Հիսուսի դինամիկ կերպարն ու ներկայությունը:

Սա չի նշանակում ակնածանք (խոնարհվել մեկի առաջ), այլ վախ:

18:7 «Եւ դարձեալ հարցրեց նորանց» Հավանական է, Հիսուսը ուշադրությունը հրավիրեց իր վրա և հեռու աշակերտներից: Սա կարծես համապատասխանում է 8-րդ համարի անմիջական կոնտեքստին:

18:8 «Արդ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է: Նրանք փնտրում էին Նրան:

▪ «թող տուէք դորանց, որ գնան» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Դա մարգարեության իրականացում է Ջաք. 13: 7 (հմմտ. Մատթ. 26:31; Հովհ. 16:32):

18:9 «Որ կատարուի այն խօսքը որ ասեց» Սա կարծես հղում է 16:32 է, սակայն 17:12 մեջքերում է:

18:10 «Սիմոն Պետրոսը, որ սուր ունէր, քաշեց նորան եւ քահանայապետի ծառային զարկեց, եւ նորա աջ ականջը կտրեց զցեց.» Պետրոսի նպատակը ականջը չէր, այլ գլուխը: Սա ցույց է տալիս Պետրոսի պատրաստակամությունը մահանալու Հիսուսի համար: Պետրոսի գործողությունը հնարավոր է գալիս էր Հիսուսի մասին թյուրիմացությունից Ղուկ. 22:36-38: Ղուկաս 22:51 տեղեկացնում է մեզ, որ Հիսուսը բժշկեց տղամարդու ականջը մի հպումով:

▪ «Եւ այն ծառայի անունը Մաղքոս էր» Միայն Հովհաննեսն է նշում նրա անունը այս խմբագրական մեկնաբանության մեջ: Սա վկայում է ակնաստեսի մասին: Ավետարանի հեղինակն այգում էր:

18:11 «Բաժակը» Սա ՀԿ օգտագործվող փոխաբերություն է, որպես մարդու ճակատագրի խորհրդանիշ, սովորաբար բացասական իմաստով (տես Մաղ. 11:6, 60:3, 75:8; Ես. 51:17; 22; Եր. 25:15,16,27-28):

Հիսուսի հարցերի քերականական ձևը ակնկալում է «այո» պատասխան: Պետրոսը կրկին հանդես է գալիս որպես մեկը, ով գիտի, թե որն է լավագույնը (տես Մատթ. 16:22, Հովհ. 13:8):

Այստեղ «բաժակը» այնքան տարբերվում է Սինոպտիկ Ավետարաններում նշված Գեթսեմանում Հիսուսի չարչարանքների «բաժակից»: Հովհաննեսի համար Հիսուսը լիովին վերահսկում է իրադարձությունները: Հովհաննեսը ներկայացնում է Հիսուսին որպես վստահ, ոչ թե վախկոտ (տես Ե. 4: 13: 1,11):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 18:12-14

¹²Եւ զինուորների գունդը եւ հազարապետը եւ Հրէաների սպասաւորները բռնեցին Յիսուսին, եւ կապեցին նորան. ¹³Եւ տարան նորան առաջ Աննայի մօտ. Որովհետեւ Կայիափայի աներն էր, որ այն տարուայ քահանայապետն էր: ¹⁴Սա այն Կայիափան էր, որ Հրէաներին խրատ տուաւ, թէ Լաւ է, մէկ մարդ կորչի ժողովրդի համար:

18:12

NASB “*հռմեակն* գումարտակը և հրամանատարը”

- NKJV “գորքերի ջոկատը և կապիտանը”
- NRSV “զինվորները, նրանց սպաները”
- TEV “հռոմեական զինվորները իրենց հրամանատարի հետ”
- NJB “գումարտակը և դրա տրիբունան”

Հռոմեական գորքերի ստորաբաժանումների անունները վերցված են ներգրավված գորքերի լիակատար լրացումներից:

1. համախումբ- վերաբերում է մինչև 600 հոգանոց տղամարդկանց խմբին (տես հ.3)
2. հրամանատար-1,000-ից է կազմված (*chiliarch*, Գործք 21:31, 22:24, 23:10, 24: 7)

Այս անունները ոչինչ չեն ասում, թե որքան մեծ կամ փոքր զորագունդ էր եկել Հիսուսին ձերբակալելու համար: Պաղեստինում # 2 ուղղակի նշանակում էր զինվորների փոքր խմբի առաջնորդ:

▪ «կապեցին նորան» Սա չի նշանակում, որ նրանք հատկապես վախենում էին Հիսուսից, բայց կարծես թե դա ընդունված ընթացակարգ էր (հմմտ.հ. 24):

18:13 «տարան նորան առաջ Աննայի մօտ» Կա շատ քննարկում այս Աննայի և Կայիափայի առջև դատավարությունների կարգերի մասին: Մինոպտիկ Ավետարանները երբեք չեն նշում Աննայի հետ հանդիպումը: 24 համարը, կարծես տողատակի ծանուցում լինի Հովհաննեսի Ավետարանում, բայց դա Հիսուսի փորձությունների անբաժանելի մասն է Մինոպտիկ Ավետարաններում (տես Մատթ 26:57, Մարկ. 14:53):

ՀԿ քահանայությունը կյանքի համար էր և յուրաքանչյուր մարդ պետք է լիներ Ահարոնի սերունդից: Սակայն հռոմեացիները այս պաշտոնը վերածել էին քաղաքական խայթոցի՝ գնված Ղևտական ցեղից: Քահանայապետը վերահսկում և իրականացնում էր առևտրային գործունեությունը Կանանց գավիթում: Հիսուսի տաճարի մաքրումը զայրացրեց այս ընտանիքին:

Ճլավիոս Յուսուփոսի խոսքերով, Աննան Քահանայապետն էր 6-14-րդ մ.թ: Նա նշանակվել էր Սիրիայի կառավարիչ Կյուրիոսի կողմից և հեռացվել Վալերիոս Գրատոսի կողմից: Նրա հարազատները (5 որդի և 1 թոռ) հաջորդեցին նրան: Կայիափան (18-36մ.թ.), նրա փեսան (տես Հովհ. 18:13), նրա անմիջական իրավահաջորդն էր: Աննան ուներ իրական ուժ, բացի իր պաշտոնից: Հովհաննեսը նկարագրում է նրան որպես առաջին մարդ, ով Հիսուսին բռնեց (տես 18: 13,19-22):

18:14 Սա ևս մեկ խմբագրական մեկնաբանություն է Հովհաննեսի կողմից, ինչպես 15 և 18 համարները:

▪ «Կայիափայի» Հովհաննեսի գլխավոր մտահոգությունը Կայիափան էր, որ նա չգիտեր, որ մարգարեացավ Հիսուսի մահվան մասին (տես 11.50): Նա Աննայի փեսան էր և քահանայապետը 18-36մ.թ: Տես ծանուցում 11:49:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 18:15-18

¹⁵Եւ Միմօն Պետրոսը եւ միւս աշակերտը գնում էին Յիսուսի ետեւից: Այն աշակերտը ծանօթ էր քահանայապետին, եւ Յիսուսի հետ մտաւ քահանայապետի սրահը: ¹⁶Պետրոսն էլ դռան մօտ կանգնած էր դուրսը. Այն միւս աշակերտը որ քահանայապետին ծանօթ էր, դուրս եկաւ եւ դռնապանին ասեց, եւ Պետրոսին ներս մտցրեց: ¹⁷Եւ այն աղջիկը՝ որ դռնապան էր Պետրոսին ասեց. Մի՞թէ դու էլ այն մարդի աշակերտներիցն ես. Եւ նա ասեց. Չեմ: ¹⁸Ծառաներն ու սպասաւորներն էլ կանգնել էին՝ կրակ արած, որովհետեւ ցուրտ էր, եւ տաքանում էին. Պետրոսն էլ նորանց հետ կանգնած էր եւ տաքանում էր:

18:15 «Միմօն Պետրոսը եւ միւս աշակերտը գնում էին Յիսուսի ետեւից» Այս մյուս աշակերտի ինքնության մասին շատ քննարկում է եղել:

1. Ավանդական տեսությունը այն է, որ դա եղել է Հովհաննէս առաքյալը 20: 2, 3, 4, և 8-ում օգտագործված նման արտահայտության պատճառով: Բացի այդ, ևս մեկ հնարավոր կապը կա Հովհ.19: 25-ի հետ է, որտեղ նշվում է Հովհաննէսի մայրը արտահայտությունը, որը հնարավոր է Մարիամի քույրն էր, այսինքն, նա կարող էր լինել ղևտացի և, հետևաբար, քահանայական ընտանիքից (հմմտ. Պոլիկարբի վկայությունը):
2. Դա կարող էր լինել տեղացի անանուն հետևորդ, ինչպես Նիկողեմոսը կամ Արիմաթացի Հովսէփը, իրենց քահանայապետի և նրա ընտանիքի հետ ունեցած կապի համար (տես հհ.15-16):

▪ **«Այն աշակերտը ծանօթ էր քահանայապետին»** Սա շատ ուժեղ տերմին է «ծանոթություն» և կարծես նշանակում է «մտերիմ բարեկամ» (տես Ղուկ. 2:44 և 23:49): Եթե Հովհաննէսը դա կարող է կապել իր ձկնորսության բիզնեսին, որը ներգրավում էր իր ընտանիքին, պարբերաբար ձուկ էր բերում Երուսաղեմ:

18:17 «այն աղջիկը՝ որ դռնապան էր՝ Պետրոսին ասեց. Մի՞թէ դու էլ այն մարդի աշակերտներիցն ես.» Այս քերականական ձևը, ինչպես հ.25-ը, ակնկալում է «ոչ» պատասխան: Այն ցույց է տալիս Հիսուսի անունը չօգտագործողների արհամարհանքը: Նա գուցե հարցրեց դա, (1) Պետրոսի կապը Հովհաննէսի հետ կամ 2) Պետրոսի Գալիլեայի խոսելառձի պատճառով:

▪ **«Չեմ»** Պետրոսը, հավանաբար, պատրաստ էր մահանալ Հիսուսի համար, բայց նա պատրաստ չէր ճշմարիտ կերպով պատասխանել մի ստրկուհու հարցին: Մինտպոիկ Ավետարաններում այս երեք ուրացումները միասին են դրված, բայց Հովհաննէսում դրանք բաժանվում են Աննայի կողմից Հիսուսի հարցաքննության միջոցով (հմմտ. հ. 24):
Պետրոսի «Ես եմ» արտահայտությունը Հիսուսի «Ես եմ» արտահայտության հակառակն է (տես հ. 5):

18:18 Այս պատմությունը պատմվում է վառ ականատեսների մանրամասների մասին: Երկու 18 և 25 համարներն էլ ունեն երկու ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 18:19-24
¹⁹Եւ քահանայապետը Յիսուսին հարցրեց նորա աշակերտների համար եւ նորա վարդապետութեան համար: ²⁰Յիսուսը պատասխանեց նորան. Ես յայտնի խօսեցի աշխարհքին. Ես միշտ սովորեցրի ժողովարանումը եւ տաճարումը, որտեղ ամեն տեղից Հրեաները ժողովվում են, եւ ծածուկ ոչինչ չ'խօսեցի: ²¹Ի՞նչու ես ինձ հարցնում. Լսողներին հարցրու, թէ ես ինչ խօսեցի նորանց. Ահա նորանք գիտեն, ես ինչ եմ ասել: ²²Երբոր նա սա ասեց, սպասաւորներից մէկը, որ այնտեղ կանգնած էր, Յիսուսին ապտակ տուաւ եւ ասեց. Այդպէ՛ս ես պատասխանում քահանայապետին: ²³Յիսուսը նորան պատասխանեց. Եթէ չար խօսեցի, վկայիր այն չարի համար. Բայց եթէ բարի, ի՞նչու ես զարկում ինձ: ²⁴Եւ Աննան նորան կապած ուղարկեց Կայիափա քահանայապետի մօտը:

18:19 «Եւ քահանայապետը Յիսուսին հարցրեց նորա աշակերտների համար եւ նորա վարդապետութեան համար» Սա վերաբերում է Աննային, ոչ թէ Կայիափային: Աննան գահի հետևից ուժ էր: Նա թագավորեց 6-15-րդ դդ.մ.թ.: Նրան անմիջապես հաջորդեց իր փեսան ու հետագայում նրա հինգ որդիները և թոռը: Աննան, որը տաճարի տարածքում առևտրային իրավունքներ ուներ, հավանաբար անհանգիստ էր հարցաքննելու տաճարը մաքրողին (հնարավոր է երկու անգամ): Հետաքրքիր է, որ Աննան մտահոգված էր Հիսուսի աշակերտների մասին, ինչպես նաև Նրա ուսմունքների:

18:20 Ճիշտ է, որ Հիսուսը մարդկանց սովորեցրեց հրապարակավ: Այնուամենայնիվ, ճշմարիտ է, որ Նրա ուսմունքներից շատերը ծածկված էին հանրության աչքից (տես Մարկ. 4: 10-12): Իրական խնդիրը Նրա ունկնդիրների հոգևոր կուրությունն էր:

Հիսուսի խոսքերն ու ուսուցման մեթոդները տարբերվում են Մինոպտիկ Ավետարանների և Հովհաննեսի միջև: Մինոպտիկներում չկան «Ես եմ» արտահայտությունները: Հիսուսը սովորեցնում է առակներով: Հովհաննեսում ոչ մի առակ չկա: Ինձ թվում է, որ տարբերությունները կարող են բացատրվել Մինոպտիկների կողմից, որոնք արձանագրում են Հիսուսի ուսմունքները, իսկ Հովհաննեսը՝ առանձին հանդիպումները:

18:21 «Ի՞նչու ես ինձ հարցնում» Համար 20-ում Հիսուսը հաստատում է իր ուսուցողական ծառայության հասարակական բնույթը: Հիսուսը մատնանշում էր Աննային, որ նրա հարցերը անօրինական էին, համաձայն հրեական օրենքի, ինչպես նաև հանրային գիտելիքների:

18:22 «սպասաւորներից մէկը, որ այնտեղ կանգնած էր, Յիսուսին ապտակ տուաւ» Այս տերմինը սկզբնապես նշանակում էր «ծեծել» կամ «զավազանով ծեծել»: Դա նշանակում էր «բաց ձեռքով կամ ափով ապտակ»: Սա օրինակներից մեկն է Հիսուսի մասին Ես. 50: 6: Հիսուսը պնդում է, որ եթե նա սխալ է արել, մեղադրեք Իրեն, հակառակ դեպքում, ինչու էր Նա ծեծվում:

18:23 «Եթէ. . . եթէ» Սրանք երկու ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ են, որոնք ենթադրվում են հեղինակային տեսանկյունից կամ նրա գրական նպատակների համար: Այստեղ առաջինը գրական ձև է, որը շեշտում է կեղծ իրականություն: Հիսուսը կոչ է անում Աննային իր ապացույցները ներկայացնելու համար:

18:24 Այս դատավարությունների հերթականությունը փոխված է Մինոպտիկ Ավետարաններում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 18:25-27
²⁵Եւ Միմօն Պետրոսը կանգնած տաքանում էր. նորան ասեցին, Մի՞ թէ դու էլ նորա աշակերտներիցն ես. Նա ուրացաւ եւ ասեց՝ Չեմ: ²⁶Եւ քահանայապետի ծառաներիցը մէկը, որ ազգական էր նորան, որի ականջը Պետրոսը կտրեց, ասեց. Չէ՞ որ ես տեսայ քեզ այն պարտէզումը նորա հետ: ²⁷Եւ Պետրոսը դարձեալ ուրացաւ. եւ շուտով հաւը խօսեց:

18:26 «Եւ քահանայապետի ծառաներիցը մէկը, որ ազգական էր նորան, որի ականջը Պետրոսը կտրեց, ասեց» Չորս Ավետարանների միջև կա որոշակի անհամապատասխանություն, այն հարցում, թե ով է հարցրել Պետրոսին:

1. Մարկոս- մի աղախին, ով տվեց առաջին հարցը (տես Մարկ. 14:69)
2. Մատթեոս-մի ուրիշ ծառա աղջիկ է (հմմտ. Մաթ.26:71)
3. Ղուկաս 22:58-ում- մի մարդ
4. Հովհաննես- քահանայապետի ծառան / սպասավորը

Պատմական տեղեկություններից ակնհայտ է, որ մի մարդ հարց տվեց կրակի մասին և ուրիշներն էլ միացան (տես հ.18):

18:26 «Չէ՞ որ ես տեսայ քեզ այն պարտէզումը նորա հետ» Ի տարբերություն առաջին երկու հարցերին 17 և 25 համարներում, այս քերականական ձևը ակնկալում է «այո» պատասխան:

18:27 «Պետրոսը դարձեալ ուրացաւ» Մարկոս 14:71-ից և Մատթ. 26:74 մենք հասկանում ենք որ Պետրոսը հերքեց դա հայեցելով ու երդվելով:

▪ «Եւ շուտով հար խօսեց» Բոլոր չորս Ավետարանների իրադարձությունների ժամանակագրությունը ենթադրում է, որ սա տեղի է ունեցել առավոտյան ժամը 12: 00-ից մինչև 3: 00-ը: Հրեաները թույլ չեն տվել, որ Երուսաղեմի սահմաններից ներս հավեր լինեն, ուստի այն պետք է, որ հռոմեական աքաղաղ լիներ:

Ղուկաս 22:61-ում ասվում է, որ Հիսուսը նայեց Պետրոսին: Ենթադրվում է, որ Աննան և Կայիափան ապրում էին նույն տանը և պահակները Հիսուսին տեղափոխում էին Աննայի հետ հանդիպումից, Կայիափայի և Սինեդրիոնի հետ հանդիպման վայրը: Այդ շարժման կամ տեղափոխման ժամանակ էր, երբ Հիսուսը նայեց Պետրոսին: Այս բոլորը ենթադրություններ են, քանի որ մենք չունենք բավականաչափ պատմական տեղեկատվություն դոգմատիկ լինելու համար՝ այս գիշերային դատավարությունների իրադարձությունների հաջորդականության մասին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 18:28-32
²⁸Եւ Կայիափայի մօտիցը Յիսուսին տարան պալատը. Եւ առաւօտ էր. եւ իրանք չ'մտան պալատի մեջ, որ չ'պղծուին, այլ որ գատիկն ուտեն: ²⁹Եւ Պիղատոսը դուրս եկաւ նորանց մօտ եւ ասեց. Այդ մարդի դէմ ի՞նչ գանգատ էք առաջ բերում: ³⁰Պատասխանեցին եւ ասեցին նորան. Եթէ սա չարագործ չ'լինէր, ապա նորան չէինք մատնիլ քեզ: ³¹Պիղատոսն էլ նորանց ասեց. Դուք առէք նորան, եւ ձեր օրէնքի համեմատ դատեցէք նորան: Հրեաներն էլ նորան ասեցին. Մեզ օրէնք չէ ոչ որի սպանել: ³²Որ Յիսուսի խօսքը կատարուի, որ ասեց, ցոյց տալով թէ ինչպիսի մահով է մեռնելու:

18:28

NASB, NKJV,

JB “կառավարչատուն/պրատորիում”

NRSV “Պիղատոսի շտաբը”

TEV “կուսակալի պալատը”

Սա լատիներեն տերմին է, որը վերաբերում է Հռոմի նահանգապետի պաշտոնական նստավայրին, երբ նրանք գտնվում էին Երուսաղեմում: Սա կարող էր լինել Անտոնիո ամրոցը, որը գտնվում էր Տաճարի կամ Հերովդես Մեծի պալատի կողքին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊԱԼԱՏԻ ԺԱՄԱՊԱՀԸ

Սկզբում պալատ տերմինը (*praetorian*), վերաբերվում էր հռոմեացի զենեարալի վրանին, բայց հռոմեական նվաճումից հետո այն օգտագործվում էր վարչական իմաստով՝ լինելով քաղաքական / ռազմական վարչակազմի գլխամասը կամ նստավայրը (հմմտ. Մաթ.27: 27; Հովհ.18: 28,33, 19: 9, Գործք 23:35):

Այնուամենայնիվ, առաջին դարում հռոմեական աշխարհը այդ վայրն օգտագործել է հատուկ իմպերիալիստական գվարդիայի սպաների համար: Այս էլիտար զինվորների խումբը սկսվեց Օգոստինոսի կողմից, բայց վերջում կենտրոնացավ Հռոմում Տիբերիոսի կողմից: Նրանք

1. բոլորը նույն կարգի էին, հարյուրապետներ
2. կրկնակի էին վարձատրվում
3. ունեին հատուկ արտոնություններ
4. այնքան զորավոր դարձան, որ իրենց ընտրությունը Կայսրի կողմից միշտ պատվի էր արժանանում:

Դա մինչև Կոնստանտինի ժամանակն էր, որ այս էլիտան՝ քաղաքականապես հզոր խումբը, վերջնականապես բաժանվեց:

▪ «առաւօտ էր» Հռոմեական արձանագրություններից մենք գիտենք, որ Պաղեստինում հռոմեացի պաշտոնյաները ցերեկով էին հանդիպում արքունիքում/գավիթ/դատարան: Ակնհայտ է, որ ճիշտ լուսաբացին էր, երբ Սինեդրիոնը հանդիպեց անօրինական գիշերային դատավարություններին

հավասարակշռության և օրինականության որոշակի տեսք տալու համար: Նրանք անմիջապես Հիսուսին տարան Պիղատոսի մոտ:

▪ **«Էւ իրանք չ'մտան պալատի մէջ, որ չ'պղծուին»** Մտնելով հեթանոսների գավիթ, նրանք պղծում էին Չատիկի ընթրիքի համար: Հեզնական է, որ նրանք այդքան բծախնդիր էին արարողակարգի հարցերում, բայց ոչ մի արգելք կամ մտատանջություն չունեին անօրինականորեն մարդուն մահվան մատնելու մեջ:

Այս համարը Սինոպտիկ Ավետարանների միջև ակնհայտ պատմական տարաձայնությունների վերաբերյալ հակասության կենտրոն է, որը պնդում է, որ Հիսուսը կերավ Չատիկը իր աշակերտների հետ (տես Մատթ 26:17; Մարկ. 14:12, Ղուկ. 22:1), իսկ Հովհաննեսը, որը պնդում է, որ դա տեղի է ունեցել նախօրեին (հինգշաբթի), ավանդական Չատիկ տոնի նախապատրաստման օրը: Հայտնի հռոմեական կաթոլիկ Հովհաննեսի Ավետարանի գիտակ Ռայմոնդ Բրաունն այս մեկնաբանություններն է անում Raymond Brown the Jerome Biblical Commentary-ում.

«Եթե դեպքերի ժամանակացույցը, որոնց մասին արձանագրված է Սինոպտիկ ավանդություն, միշտ պետք է նախընտրելի լինի քան Հովհաննեսը «պատմականության» տեսանկյունից, ապա հաջորդ հատվածը, որը ականատեսի վկայություն է, ով, իհարկե, գիտեր Սինոպտիկ ավանդույթը ներկայացնում է որոշ անհաղթահարելի դժվարություններ: Եթե, մյուս կողմից, մենք գիտակցում ենք, որ ականատեսի վկայությունը, որից օգտվել է Հովհաննեսը հաճախ ավելի մոտ է փաստացի իրադարձություններին, քան սխեմատիկ Սինոպտիկ ուրվագծին, հատվածը դառնում է ավելի հասկանալի»(էջ 458):

Կա նաև մի հնարավորություն երկու տարբեր ժամանակացույցների՝ Չատիկը դիտարկելու համար, հինգշաբթի և ուրբաթ: Կա նաև հավելյալ խնդիր, որ «Չատիկը» տերմինը կարող է օգտագործվել մեկօրյա տոնի և ութօրյա տոնի համար (Չատիկը զուգորդվում է Բաղարջակերացի հետ, տես Ելից 12):

▪ **«այլ որ գատիկն ուտեն»** Դեռևս կան խնդիրներ Վերջին Ընթրիքի ճշգրիտ օրվա շուրջ: Սինոպտիկ Ավետարանները կարծես թե ենթադրում են, որ դա Չատիկի ընթրիք էր, բայց Հովհաննեսը պնդում է, որ դա պաշտոնական Չատիկի ընթրիքից մեկ օր առաջ էր (հմմտ. Հովհ. 19:14 և այս համարը): Պատասխանը կարող է լինել

1. այն փաստը, որ «գատիկ» տերմինը կարող է վերաբերվել շաբաթվան, ճաշին կամ հատուկ Շաբաթին
2. այն փաստը, որ որոշ հրեական անջատողական խմբեր (այն է, Էսսեներ) հետևում են լուսնային օրացույցին վերցված հոբելյանական միջկտակարանյան գրքից
3. այն փաստը, որ Հովհաննեսի «կրկնակի իմաստները» ներկայացնում են Հիսուսին որպես Չատիկի գառի (1:29), որը մոթովեց Չատիկի նախօրեին

18:29 Աստված օգտագործեց Պիղատոսին այնպես ինչպես Նա օգտագործեց Փարավոնին Ելիցում: Նա նշանակված էր Հրեաստանի կուսակալ 26մ.թ Տիբերիոս կայսեր կողմից: Նա փոխարինել է Վալերիոս Գրատուսին (ով հեռացրեց Աննայի Քահանայապետ լինելուց): Պոնտացի Պիղատոսը հինգերորդ հռոմեցի կուսակալն էր: Նա կառավարում էր Արքեդայոսի թագավորությունը (Հերովդես Մեծի որդին), որն իր մեջ ներառում էր Սամարիան և Հրեաստանը, Գազան և Մեդյալ ծովը: Պիղատոսի մասին տեղեկատվության մեծ մասը գալիս է Փլավիոս Հովսեպոսի գրվածքներից:

ՀՍՏՈՒԿ ԹԵՄԱ: ՊՈՆՏՍՅՒ ՊԻՂԱՏՈՍ

I. Մարդը

Ա. Ծննդյան վայրը և ժամանակը անհայտ է

Բ. Հեծյալ կարգից (հռոմեական հասարակության վերին միջին դաս)

- Գ. Ամուսնացած էր, բայց հայտնի չեն երեխաները
- Դ. Ավելի վաղ վարչական նշանակումները (որոնք մի քանիսը պետք է լինեին) անհայտ են
- II. Նրա անձը
- Ա. Երկու տարբեր տեսակետներ
1. Philo (*Legatio and Gaium*, 299-305) և Յուստինոս (*Antiq.* 18.3.1 և *Jewish Wars* 2.9.2-4) պատկերում են նրան որպես դաժան ու անգութ դիկտատոր:
 2. ՆԿ (Ավետարաններ, Գործք) ներկայացնում է որպես թույլ, հեշտությամբ կեղծվող հռոմեական կուսակալ
- Բ. Paul Barnett, *Jesus and the Rise of Early Christianity*, էջ 143-148, տալիս է այս երկու տեսակետների հստակ բացատրություն:
1. Պիղատոսը կուսակալ չի նշանակվել 26մ.թ. Տիրերիոսի գահակալության օրոք, որը կողմ էր հրեաներին (հմմտ. Philo, *Legatio and Gaium*, 160-161), Մեյջանոսի խորհրդով, Տիրերիոս հակա-հրեա, գլխավոր խորհրդական:
 2. Տիրերիոսը քաղաքական իշխանության կորուստ է կրել Լե Աելիոս Սիժանոսին, նրա գահակալական կուսակալն էր, որը դարձավ գահի հետևում իրական իշխանություն, և որը ատում էր հրեաներին (Philo, *Legatio land Gaium*, 159-160):
 3. Պիղատոսը Սիժանոսի պաշտպանյալն էր և փորձեց նրա վրա տպավորություն թողնել
 - ա. բերելով Հռոմեական չափանիշները Երուսաղեմ (26մ.թ.), որը այլ կուսակալները չեն արել: Հռոմեական աստվածների այս խորհրդանիշները հրահրեցին հրեաներին (տես Հովսեպոս՝ *Antiq.* 18.3.1; *Jewish Wars* 2.9.2-3):
 - բ. ստեղծեց մետաղադրամ(29-31մ.թ.), որի վրա պատկերված էին հեթանոսական պաշտամունքի պատկերներ: Հովսեպոսն ասում է, որ նա դիտավորյալ փորձում էր տապալել հրեական օրենքներն ու սովորույթները (տես Հովսեպոս, *Antiq* 18.4.1-2):
 - գ. Տաճարի գանձարանից գումար վերցրեց՝ Երուսաղեմում ջրուղի կառուցելու համար (տես Հովսեպոս, *Antiq* 18.3.2, *Jewish Wars* 2.9.3):
 - դ. Երուսաղեմում Զատիկյին զոհաբերության ժամանակ սպանվեցին մի քանի Գալիլեացիներ (կարդա Ղուկ. 13:12):
 - ե. բերելով հռոմեական վահաններ Երուսաղեմ 31մ.թ.: Հերովդես Մեծի որդին դիմեց նրան, որպեսզի հեռացներ դրանք, բայց նա չէր ուզում, դրա համար էլ նրանք գրեցին Տիրերիոսին, որը պահանջեց դրանք վերադարձնել Կեսարիա ծովով (հմմտ, Philo, *Legatio and Gaium*, 299-305):
 - զ. Շատ սամարացիներ մորթվեցին Քորազին լեռան վրա (36/37մ.թ.), երբ նրանք փնտրում էին իրենց կրոնի սրբազան մասունքները, որոնք կորել էին: Մա պատճառ եղավ Պիղատոսի տեղական վերադասին (Վիտելլեոս, Սիրիայի Վարչապետ) նրան հեռացնել պաշտոնից և ուղարկել նրան Հռոմ (տես Հովսեպոս, *Antiq* 18.4.1-2):
 4. Սիժանոսը մահապատժի է ենթարկվել 31մ.թ. և Տիրերիոսը վերականգնվել է լիարժեք քաղաքական իշխանության մեջ: Հետևաբար, # ա, բ, գ և դ հնարավոր է կատարվել է Պիղատոսի կողմից՝ շահելու Սիժանոսի վստահությունը; #ե և զ Տիրերիոսի վստահությունը վաստակելու փորձեր կարող էին լինել, բայց հնարավոր է հակառակն է եղել:
 5. Պարզ է, որ վերականգնվեց հրեա կայսրը, ինչպես նաև Տիրերիոսի պաշտոնական նամակը կուսակալներին՝ հրեաների հետ քաղցր լինելու

համար (հմմտ. Philo, *Legatio and Gaium*, 160-161), որ Երուսաղեմի հրեա առաջնորդները օգտվեն Պիղատոսի քաղաքական խոցելիությունից Տիբերիոսի առաջ և մանիպուլացիա անել նրան, որ Հիսուսին խաչի: Բարնեթի այս տեսությունը Պիղատոսի երկու տեսակետները միասին է բերում:

III. Նրա վախճանը

Ա. Տիբերիոսի մահից անմիջապես հետո նրան նորից կանչում են Հռոմ (37մ.թ.):

Բ. Նա չվերընտրվեց:

Գ. Դրանից հետո նրա կյանքը անհայտ է: Շատ ավելի ուշ տեսություններ կան, բայց ոչ հավաստի փաստեր:

18:30 «Եթե սա չարագործ չ'լիներ, ապա նորան չէինք մատնիլ քեզ» Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը հաճախ կոչվում է «հակառակ իրականությանը»: Հիսուսը չարագործ չէր: Սա Պիղատոսի հեզնական դիտողությունն էր, որը հրաժարվեց հրեաներին «զգել» կրոնական մեղադրանքների մեջ:

Այս ԲԱՅՇ«փոխանցել» նույնն է, որը սովորաբար թարգմանվում է «ուրանալ», երբ օգտագործվում է Հուդայի կողմից (տես 6: 68,71, 12: 4, 13: 2,11,21, 18: 2,5): Տերմինը բառացիորեն նշանակում է «մեկին հանձնել իշխանությունների» կամ «փոխանցել ավանդույթ»: Հուդայի հետ կապված այս տերմինը նշանակալից է արտահայտվել անգլերեն թարգմանիչների շրջանում:

18:31 «Մեզ օրենք չէ ոչ որի սպանել» Հրեական ղեկավարությունը դատապարտեց Հիսուսին հայհոյության համար, բայց նրանք օգտագործեցին ապստամբության մեղադրանքը, որպեսզի Նրան մահապատժի ենթարկեն հռոմեացիները: Հրեա առաջնորդների համար շատ կարևոր էր, որ Հիսուսը խաչվեր ըստ 2 Օրին. 21:23 (այսինքն, խաչված լինելը 1-ին դարի ռաբբիների կողմից հասկացվում էր որպես անիծված լինել Աստծո կողմից): Հիսուսը կանխագուշակել էր սա հ.32; 3:14; 8:28; 12: 32,33 և Գաղ. 3:13.

18:32 «ցոյց տալով՝ թե ինչպիսի մահով է մեռնելու» Ինչու՞ էին հրեա առաջնորդները ցանկանում խաչել Հիսուսին: Գործք 7-ից ակնհայտ է, որ նրանք մարդկանց մահապատժի էին ենթարկում հայհոյության համար՝ անմիջապես քարկոծելով: Հնարավոր է, դա վերաբերվում է ՀԿ աստվածային անեծքին 2 Օրին. 21: 22-23: Սկզբում սա վերաբերում էր մահից հետո հրապարակավ ցցին հանելը, սակայն ժամանակակից ռաբբիներն այս համարը մեկնաբանել են հռոմեական խաչելության լույսի ներքո: Նրանք ուզում էին, որ Հիսուսը, այս Մեսիա ձևացնողը, Աստծո կողմից անիծվեր: Սա Աստծո ծրագիրն էր ընկած, մեղավոր մարդկության փրկության համար: Հիսուսը, Աստծո Գառը (այն է 1:29), Իրեն որպես փոխանորդ տվեց (տես Ես. 53, II Կորնթ. 5:21): Հիսուսը «անեծք» դարձավ մեզ համար (հմմտ. Գաղ. 3:13):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 18:33-38ա

³³Պիղատոսը դարձեալ մտաւ պալատը, Յիսուսին կանչեց եւ նորան ասեց. Դո՞ւ ես Հրէաների թագաւորը: ³⁴Յիսուսը նորան պատասխանեց. Դո՞ւ քեզանի՞ց ես ասում այդ, թէ ուրիշներն ասեցին քեզ ինձ համար: ³⁵Պիղատոսը պատասխանեց. Մի՞ թէ ես էլ Հրէայ եմ. Քո ազգը եւ քահանայապետները քեզ մատնեցին ինձ. Ի՞նչ ես արել: ³⁶Յիսուսը պատասխանեց. Իմ թագաւորութիւնն այս աշխարհքիցը չէ. Եթէ իմ թագաւորութիւնն այս աշխարհքիցը լինէր, ապա իմ ծառաները կո՞ի կ'անէին որ չ'մատնուիմ Հրէաների ձեռը. Բայց հիմա իմ թագաւորութիւնն այս տեղից չէ: ³⁷Պիղատոսն էլ ասեց նորան. Ապա ուրեմն դո՞ւ թագաւոր ես. Պատասխանեց Յիսուսը. Դո՞ւ ես ասում որ ես թագաւոր եմ. Ես դորա համար եմ ծնուել եւ եկել աշխարհք, որ ճշմարտութեանը վկայեմ. ամեն ով որ ճշմարտութիւնիցն է՝ իմ ձայնը լսում է: ³⁸Պիղատոսը նորան ասեց. Ի՞նչ է ճշմարտութիւնը:

18:33 «պալատը» Տես Հատուկ Թեմա 18:28.

▪ **«Ղո՞ւ ես Հրեաների թագաւորը»** Հիսուսը մեղադրվում էր դավաճանության մեջ (տես Մատթ 27: 1; Մարկ. 15 :2; Ղուկ. 23: 2 և Հովհ. 19: 3,12,15,19-22):

18:34 «Յիսուսը նորան պատասխանեց. Ղու քեզանի՞ց ես ասում այդ, թէ ուրիշներն ասեցին քեզ ինձ համար» Եթե Պիղատոսը հարց էր տալիս քաղաքական թագավորության վերաբերյալ, Հիսուսը հերքեց դա: Եթե հրեաներն էին առաջարկել դա, ապա այն վերաբերում էր Նրա Մեսիա լինելուն, և Հիսուսը հաստատել էր դա: Պիղատոսը, անկասկած, պատրաստ չէր քննարկելու հրեական կրոնական մտածողության ներշնչումները (հմմտ. հ.35):

18:35 Առաջին հարցն ակնկալում է «ոչ» պատասխան: Պիղատոսն արտահայտում է իր արհամարհանքը հրեական կրոնի հանդեպ:

18:36 «Եթէ իմ թագաւորութիւնն այս աշխարհիցը լինէր, ապա իմ ծառաները կռիւ կ'անէին» Մա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է «հակառակ իրականությանը»: Այն պետք է թարգմանվի «Եթէ Իմ թագավորությունը այս աշխարհից լինէր, և դա չէ, ուրեմն Իմ ծառաները կկռվէին, ինչը նրանք չեն անում»: «Իմ ծառաները» արտահայտությունը կարող էր վերաբերվել (1) աշակերտներին կամ (2) հրեշտակներին (տես Մատթ. 26:53):

18:37 «Պիղատոսն էլ ասեց նորան. Ապա ուրեմն դու թագաւոր ես» Մա ծայրահեղ հեգնանք էր երկրային իշխանության այս խորհրդանիշի շրթունքներին (այսինքն, Հռոմը), բաղդատելով Հիսուսին և Նրա հոգևոր թագավորությունը: Այս հարցն ակնկալում է «այո» պատասխան:

▪ **«Ղու ես ասում որ ես թագաւոր եմ. Ես դորա համար եմ ծնուել եւ եկել աշխարհք»** Առաջին արտահայտությունը դժվար է թարգմանել իր անորոշության պատճառով: Դա հաստատում է որակավորումներով (տես Մատթ. 27:11, Մարկ. 15:2, Ղուկ. 23:3): Հիսուսը գիտեր, թե ով է Ինքը (երկու ՎԱՂԱԿԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ ԲԱՅԵՐ) և ինչու էր եկել (տես Հովհ.13: 1,3, Մարկ. 10:35, Ղուկ. 2:49; Մատթ. 16:22): Պիղատոսը չէր հասկանում դա:

▪ **«Ես դորա համար եմ ծնուել»** Հիսուսի առաջադրանքն էր հայտնել Հորը (այն է « վկայել ճշմարտությանը»): Հիմնականում կան երեք պատճառներ, թե ինչու Հիսուսը եկավ.

1. լիովին և ամբողջապես բացահայտելու Աստծո բնությունը և նպատակը (տես 1:18, 3:32)
2. մահանալու որպես Աստծու անմեղ գառ, որ վերացնում է աշխարհի մեղքը (տես 1:29)
3. հավատացյալներին օրինակ ծառայելու, թե ինչպես ապրել և հաճեցնել Աստծուն

▪ **«ամեն ով որ ճշմարտութիւնիցն է՝ իմ ձայնը լսում է»** Ես միշտ խորը ցնցված եմ «բոլորը», «ցանկացած մեկը», «ով որ», «որքան որ»: Հիասքանչ է: ՅԱՀՎԵՆ իրականացնում է Ծննդ.3:15-ը Քրիստոսով: Հիսուսը վերականգնում է Աստծո պատկերը, որը վնասվել էր մեղքի պատճառով: Կրկին հնարավոր է, անձնական, մտերմիկ շփումը: Հաղորդակցությունը վերականգնված է (իրականացված վախճանաբանություն):

Միայն հոգևոր աչքեր և ականջներ ունեցողները կարող են հասկանալ ճշմարտությունը (հմմտ.Մատթ. 11:15, 13: 9,16,43; Մարկ. 4: 9,23; Ղուկ. 8: 8; 10: 23,24; 14:35; Հայտ. 2: 7,11,17,29; 3: 6,13,22): Հիսուսն է ճշմարտությունը (14: 6): Երբ Նա խոսում է Իր հետևորդների լսելու մասին (տես 10:1-5): Հովհաննեսի Ավետարանում «տեսնել» կամ «լսել» ճշմարտությունը աստվածաբանորեն համարժեք է «հավիտենականք» ստանալուն:

18:38 «Պիղատոսը նորան ասեց. Ի՞նչ է ճշմարտութիւնը» Պիղատոսն այս հարցը տվեց, բայց, ըստ երևույթին, հեռացավ մինչև պատասխան ստանալը: Պիղատոսը ուզում էր հավաստիանալ, որ Հիսուսը ոչ մի սպառնալիք չէր ներկայացնում հռոմեական կառավարությանը: Նա դա արեց: Այնուհետև նա փորձեց Հիսուսին ազատ արձակել, Ջատիկի ժամանակաշրջանում այդ օրվա հրեաների ավանդույթի համեմատ (հմմտ. հ.39, Մատթ. 27:15): Հովհաննէսը գրում է, ինչպես նաև Ղուկասը, ցույց տալու, որ քրիստոնէությունը վտանգ չի ներկայացնում Հռոմեական կայսրության համար (հմմտ. 18: 38բ, 19: 4, Ղուկ. 23: 4,14,22):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 18:38բ-40

Եւ սա ասելով դարձեալ դուրս գնաց Հրէաների մօտ եւ նորանց ասեց. Ես ոչ մի յանցանք չեմ գտնում նորանում: ³⁹Բայց ձեզ սովորութիւն է, որ զատկին մի մարդ արձակեմ ձեզ համար. Արդ կամենո՞ւմ էք, որ Հրէաների թագաւորն արձակեմ ձեզ համար: ⁴⁰Եւ ամենքը դարձեալ աղաղակեցին եւ ասում էին, Ոչ թէ դորան՝ այլ Բարաբբային. եւ այդ Բարաբբան մի աւագակ էր:

18:39 «ձեզ սովորութիւն է» Սա բացատրվում է Մատթ. 27:15 և Ղուկ. 23:17 (սակայն անհայտ է Նոր Կտակարանից դուրս պատմական փաստաթղթերում):

18:40 «Եւ ամենքը դարձեալ աղաղակեցին եւ ասում էին, Ոչ թէ դորան՝ այլ Բարաբբային» Հեգնական է, որ Բարաբբան, ըստ երևույթին, նախանձաժողովների կուսակցության անդամ էր և, հետևաբար, մեղավոր էր այն բանում, ինչի համար Հիսուսը դատապարտվեց (տես Մարկ. 15:7, Ղուկ. 23:19, 25): Այս բազմությունը, ըստ երևույթին, սպասում էր այնտեղ՝ աջակցելու իրենց տեղական ժողովրդական հերոսին: Հրեական իշխանությունները պարզապես հնարավորությունից օգտվելով պնդեցին Հիսուսի դատապարտումը (տես Մարկ. 15:11):

Նաև հեգնական է, որ «Բարաբբա» անունը նշանակում է «հոր որդին»: Հովհաննէսն օգտագործում է այս բառախաղը իր ողջ Ավետարանում: Ամբոխը ուզում էր, որ «Հոր Որդու» փոխարեն ազատվեր «հոր որդին»: Լիովին խավար էր:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ Հիսուսը գնաց մի տեղ, որտեղ Նա գիտեր, որ Հուդան կգտներ Իրեն:
2. Ինչու՞ է Հովհաննէսը ներկայացնում Հիսուսի չարչարանքը Գեթսեմանում:
3. Ինչու՞ Մինեդրիոնը Հիսուսին հանձնեց Պիղատոսին:
4. Ինչու՞ դեպքերի հաջորդականությունը խառն է Հովհաննէսի և Մինուպտիկ Ավետարանների մեջ:
5. Ինչու՞ է Հովհաննէսը նկարագրում Պիղատոսին, ով փորձում էր ազատ արձակել Հիսուսին:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 19

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ^d	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսը դատապարտվում է մահվան (18:38-19:16) 18:38-19:7	Զինվորները ծաղրում են Հիսուսին 19:1-4 Պիղատոսի որոշումը 19:5-16	(18:38-19:7) 18:38-19:7	Հիսուսը դատապարտվում է մահվան (18:38-19:16) 18:40-19:3 19:4-5 19:6 19:6 19:7 19:8-9 19:9-10 19:11 19:12	Հիսուսը Պիղատոսի առաջ (18:28-19:11) 18:33-19:3 19:4-7 19:8-11 Հիսուսը դատապարտվում է մահվան 19:12-16
19:8-12		19:8-12		
19:13-16		19:13-16	19:13-14 19:15 19:15 19:15 19:16	
Հիսուսի խաչելությունը 19:16-22	Թագավորը խաչի վրա 19:17-24	19:16-25	Հիսուսը խաչված է 19:16-21 19:22	Խաչելությունը 19:16-22
19:23-27	Ահա քո մայրը 19:25-27	19:25-27	19:23-24 19:25-26 19:27	Հիսուսի պատմուճանի կիսվելը 19:23-24 Հիսուսը և Նրա մայրը 19:25-27
Հիսուսի մահը 19:28-30	Ավարտված է 19:28-30	19:28-30	Հիսուսի մահը 19:28 19:29-30 19:30	Հիսուսի մահը 19:28 19:29-30
Հիսուսի կողը խոցելը 19:31-37	Հիսուսի կողը խոցվում է 19:31-37	19:31-37	Հիսուսի կողը խոցվում է 19:31-37	Խոցված կողը 19:31-37
Հիսուսի թաղումը 19:38-42	Հիսուսի թաղվում է Հովսեփի գերեզմանում 19:38-42	19:38-42	Հիսուսի թաղումը 19:38-42	Թաղումը 19:38-42

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 19:1-7

¹Այն ժամանակ Պիղատոսն առաւ Յիսուսին եւ ծեծեց: ²Եւ զինուորները փշերից պսակ շինեցին դրին նորա գլխին, եւ ծիրանի հանդերձ հագցրին նորան: ³Եւ ասում էին. Ողջ կաց, ով Հրէաների թագաւոր. Եւ ապտակներ էին տալիս նորան: ⁴Պիղատոսը դարձեալ դուրս գնաց եւ նորանց ասեց. Ահա նորան դուրս եմ բերում ձեզ մօտ, որ զիտենաք թէ ես ոչ մի յանցանք չեմ գտնում նորանում: ⁵Եւ Յիսուսը դուրս եկաւ, փշեղէն պսակը եւ ծիրանի հագուստը հագած. Եւ Պիղատոսը նորանց ասեց. Ահա այն մարդը: ⁶Երբոր քահանայապետները եւ սպասաւորները նորան տեսան, աղաղակեցին՝ եւ ասեցին. Խաչիր, խաչիր: Պիղատոսը նորանց ասեց. Դուք առէք դորան եւ խաչեցէք. Որովհետեւ ես յանցանք չեմ գտնում դորանում: ⁷Հրէաները պատասխանեցին նորան. Մենք օրէնք ունինք, եւ մեր օրէնքի համեմատ պէտք է մեռնի. որովհետեւ իր անձն Աստուծոյ Որդի արաւ:

19:1 «Պիղատոսն առաւ Յիսուսին եւ ծեծեց» Ժամանակի հաջորդականությունը և ծեծի հաշիվը կամ թիվը անորոշ է: Բոլոր բանտարկյալները, ովքեր դատապարտված էին խաչելության՝ ծեծի էին ենթարկվում: Դա այնպիսի դաժան փորձառություն էր, որից շատ մարդիկ էին մահանում: Սակայն կոնստեքստում Պիղատոսը, կարծես թե, Հիսուսին ծեծելու միջոցով ուզում է խղճահարություն առաջացնել մարդկանց մոտ՝ նպատակ ունենալով Նրան ազատ արձակել (հմմտ. Ղուկ 23: 16,22; Հովհ. 19:12): Սա կարող է մարգարեական իրականացում լինել Ես. 53: 5.

Հռոմեական ծեծը ահավոր ցավոտ, դաժան պատիժ էր՝ վերապահված ոչ հռոմեացիների համար: Կաշվե հյուսված մտրակը, ծայրին կապված ոսկորի կամ մետաղական կտորներ, օգտագործվում էր մարդուն ծեծելու համար, որը կոացած էր իսկ ձեռքերը կապված էին ցածր ցցին: Հարվածների թիվը չէր նշվում: Այն պարբերաբար արվում էր մինչև խաչելությունը (հմմտ. Livy XXXIII: 36):

Ավետարաններն օգտագործում են տարբեր բառեր՝ հռոմեացիների կողմից ծեծը նկարագրելու համար:

1. Մատթ. 27:26; Մարկ.15:15 - *phragelloō* - ձաղկել կամ մտրակել
2. Ղուկ. 23:16, 22 – *paideuō* - երեխային դաստեարակել (տես Եբր. 12: 6-7,10), բայց այստեղ, ինչպես II Կորնթ. 6: 9, ծեծել
3. Հովհ. 19: 1 – *mastigoō* - մտրակի սկզբնական անունը, Մատթ. 10:17; 20:19; 23:34; Գործք 22: 24-25; Եբր. 11:36

Նրանք բոլորն էլ կարող են լինել հոմանիշներ, կամ կարող են նշանակել երկու տեսակի ծեծ
ա. ավելի քիչ ծեծ Պիղատոսի կողմից
բ. մտրակում խաչելությունից առաջ

19:2 «զինուորները փշերից պսակ շինեցին դրին նորա գլխին» Սա խոշտանգման ձև էր, որով փշերը սեղմում էին Հիսուսի ճակատը: Սակայն, միանգամայն հնարավոր է, որ այն իրենից ներկայացնում է

մի լուսափայլ պսակ կազմված արմավենու տերևներից, որը ևս մեկ միջոց էր՝ Հիսուսին որպես թագավորի ծաղրելու (տես Մատթ. 27: 27-31; Մարկ. 15: 15-20):

Հունարեն «թագ, պսակ» բառը (*stephanos*) օգտագործվում էր որպես մարմնամարզական հաղթանակի ծաղկեպսակ կամ կայսրի կողմից սահմանված դափնեպսակ:

▪ **«Ծիրանի հանդերձ հագցրին նորան»** Ծիրանի գույնը (*porphyros*) թագավորական նշան էր, ներկը շատ թանկ էր, քանի որ այն պատրաստված էր կակղամորթ խեցիից: Ծիրանի(ալ կարմիր) գույնը թագավորական պաշտոնյաների զգեստների գույնն էր (Մարկ. 15: 17,20): Ծիրանի ներկը պատրաստվում էր կաղնու ծառեր վրայից գտած միջատի թեփուկից: Այս հանդերձը ակնարկ էր թագավորական ծիրանի պատմուճանին, բայց իրականում դա, թերևս, մի խունացած ծիրանի հոռմեական սպայի վերարկու էր (հմմտ Մատթ. 27:18):

19:3

NASB “ն նրանք սկսեցին Նրա մոտ գալ ու ասել”

NKJV “հետո նրանք ասացին”

NRSV “Նրանք գալիս էին նրա մոտ, ասելով”

TEV “ն եկան նրա մոտ ու ասացին”

NJB “Նրանք գալիս էին նրա մոտ ու ասում”

Սրանք ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ: Ակնհայտ է, որ զինվորները դա անում էին մեկը մյուսի հետևից: Այս ծաղրանքը ավելի արհամարհական էր հրեաների համար ընդհանուր առմամբ, քան Հիսուսին՝ մասնավորապես: Հնարավոր է Պիղատոսն ուզում էր դրանով կարեկցանք առաջացնել Հիսուսի հանդեպ, սակայն դա չաշխատեց:

Կրկին Հովհաննեսի գրվածքներում մարգարեական մտքերը հաճախ արտասանվում են հակառակորդների շուրթերից: Այս զինվորներն ասում էին ավելին, քան գիտակցում էին:

▪ **«Եւ ապտակներ էին տալիս նորան»** Այս բառը սկզբում նշանակում էր «ծեծել ճիպտներով», բայց դա սկսեց օգտագործվել, պարզապես «ձեռքով ապտակել»: Սա եղել է արքայական բարկելու ծաղրական ժեստ է ավելի քան դաժան ծեծ դեմքին:

19:4

NASB “Ես Նրա մեջ հանցանք չեմ գտնում”

NKJV “Ես Նրա մեջ մեղք չեմ գտնում”

NRSV “Ես նրա դեմ բան չեմ գտնում”

TEV “Ես չեմ կարող որևէ պատճառ գտնել նրան դատապարտելու համար”

NJB “Ես նրա դեմ բան չեմ գտնում”

Հովհաննեսի նպատակներից մեկն էր ցույց տալ, որ քրիստոնեությունը սպառնալիք չէր Հռոմեական կառավարության կամ նրա պաշտոնատար անձանց դեմ: Հովհաննեսն արձանագրում է, որ Պիղատոսը փորձեց ազատ արձակել Հիսուսին մի քանի անգամ (տես, 18:38, 19: 6; Դուկ. 23: 4,14,22):

19:5

NASB, NKJV “Ահա այն մարդը”

TEV, NET “տեսեք; Ահա այն մարդը”

NRSV, NJB,

REB “Ահա այն մարդը”

Այս արտահայտությունը հասկանալու մի քանի եղանակներ են եղել

1. Հիսուսը հագնված է, որպես ծաղրի ենթարկված թագավոր

2. Հիսուսին ծեծում են, որ խղճահարություն առաջացնեն
3. ակնարկ Զաք. 6:12 (Մեսիական գաղափար «Ճյուղը/շառավիղը»)
4. Հիսուսի մարդեղության ավելի ուշ հաստատում (այսինքն, Հովհաննեսի օրերի Գնտատիցիզմի հակահարվածը)
5. կապված արամերեն «մարդու որդու» *bar nashā* (մեկ այլ քողարկված Մեսիական գաղափար)

19:6 «աղաղակեցին՝ եւ ասեցին. Խաչիր, խաչիր» Պատճառն այն է, որ հրեա առաջնորդները ցանկացան խաչել Հիսուսին այնպես, որ Բ Օրին. 21:23 անեծքը դառնա արդյունավետ: Սա է պատճառներից մեկը, թե ինչու Պողոսը, հավանաբար, ունեցել նման լուրջ կասկածներ Հիսուս Նազովրեցին Աստծո Մեսիա լինելու մասին: Սակայն, մենք սովորում ենք Գաղ. 3:13 որ Հիսուսը կրեց մեր անեծքը խաչի վրա (տես, Կող. 2:14):

▪ **«Եւ յանցանք չեմ գտնում դորանում»** Պիղատոսը սա ասում է երեք անգամ (տես 18:38, 19: 4):

19:7 «պետք է մեռնի. որովհետեւ իր անձն Աստուծոյ Որդի արաւ» Հիսուսը իսկապես պնդում էր, որ Ինքը Աստծո հետ մեկ էր՝ Նրա Որդին: Հրեաները, ովքեր լսում էին Նրա հայտարարությունները և հասկանում նրանց մտադրությունը, ոչ մի կասկած չունեին, որ Իրեն Աստված է համարում (հմմտ 5.18; 8: 53-59; 10:33): Իրական հրեական մեղադրանքը Հիսուսի դեմ դա հայհոյությունն էր (տես Մատթ. 20: 6,65): Հայհոյությունը պատժվում էր քարկոծելով (տես Ղևտ. 24:16): Եթե Հիսուսը մարմնավորված, նախագոյ Աստված չէ, ուրեմն նա պետք է քարկոծվի:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 19:8-12

⁸Երբոր Պիղատոսը այս խօսքը լսեց, էլ աւելի վախեցաւ: ⁹Եւ դարձեալ մտաւ պալատը, եւ Յիսուսին ասեց. Դու ի՞նչ տեղից ես. եւ Յիսուսը չ'պատասխանեց նորան: ¹⁰Պիղատոսն էլ ասեց նորան. Ինձ հետ չէ՞ս խօսում. Մի՞ թէ չ'գիտես, որ ես իշխանութիւն ունիմ քեզ խաչելու, եւ իշխանութիւն ունիմ քեզ արձակելու: ¹¹Յիսուսը պատասխանեց. Դու ոչինչ իշխանութիւն չ'իր ունենալ ինձ վերայ, եթէ վերեւիցը տրուած չ'լինէր քեզ. Նորա համար՝ նա որ ինձ մասնեց քեզ, նորա մեղքն աւելի մեծ է: ¹²Եւ նորանից յետոյ Պիղատոսը որոնում էր նորան արձակել. Բայց Հրեաներն աղաղակում էին եւ ասում. Եթէ դորան արձակես՝ կայսրի բարեկամ չ'ես. ամեն ով որ իր անձը թագաւոր է կոչում, նա կայսրին հակառակ է խօսում:

19:8 «Երբոր Պիղատոսը այս խօսքը լսեց, էլ աւելի վախեցաւ» Պիղատոսի կինն արդեն զգուշացրել էր նրան Հիսուսի մասին (տես Մատթ. 27:19), և այժմ հրեա առաջնորդները պնդում էին, որ Նա պնդում էր Իր Աստծո Որդի լինելը: Պիղատոսը, լինելով սնահավատ, վախեցավ: Բավականին տարածված էր հունական և հռոմեական պանթեոնի չաստվածների համար այցելել մարդկանց մարդկային կերպարանքով:

19:9
NASB, NKJV,
NRSV “Որտեղից ես Դու”
TEV, NJB,
NIV “Որտեղից ես Դու գալիս”

Պիղատոսը չի հարցնում Հիսուսի հայրենի քաղաքի մասին, այլ Նրա ծագման: Պիղատոսը սկսում է զգալ իր առջև կանգնած անձի կարևորության մասին: Հիսուսը գիտեր 18:38 իր մեկնաբանություններից, որ Պիղատոսին չէր հետաքրքրում ճշմարտությունը, այլ քաղաքական նպատակահարմարությունը, այնպես որ նա չարձագանքեց:

Պիղատոսը միանում մի շարք մարդկանց, ովքեր զարմանում էին Հիսուսի համար, բայց չէին հասկանում Նրա ծագումը (տես 4:12; 6:42; 7: 27-28,41-42; 8:14, 9: 29-30): Սա Հովհաննեսի ուղղահայաց դուալիզմի մաս է կազմում: Հիսուսը վերից է և ներքևում ոչ ոք չի կարող իմանալ/ հասկանալ/ տեսնել/ լսել առանց Հոր միջամտության (այսինքն, 6: 44,65; 10:29):

▪ **«Յիսուսը չ'պատասխանեց նորան»** Պիղատոսը պետք է, որ հիշեր Հիսուսի պատասխանը (տես 18:37): Ոմանք սա տեսնում են որպես Ես. 53: 7 իրականացում:

19:10 «որ ես իշխանություն ունիմ քեզ խաչելու» Պիղատոսը պնդում է, որ նա ունի կյանքի և մահվան քաղաքական իշխանություն, սակայն ի դեմս անզուսպ ամբոխի նա թողեց այդ իրավունքը նրանց կամքին: Պիղատոսի հարցը քերականորեն ակնկալում է «այո» պատասխան:

19:11 «Ղու ոչինչ իշխանություն չէիր ունենալ ինձ վերայ, եթե վերելիցը տրուած չ'լինէր քեզ» Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է «ի հակասություն փաստի»: Պիղատոսը չէր ասիական Հիսուսին: Նա գիտեր, թե ով էր Նա և ինչու էր Նա եկել: Աստվածաշունչը պնդում է, որ Աստված է կարգում բոլոր մարդկային իշխանությունները (տես Հռոմ. 13: 1-7):

▪ **«նա որ ինձ մատնեց քեզ, նորա մեղքն աւելի մեծ է»** Առաջին ընթերցմամբ սա, կարծես, վերաբերում է Հուդա Բսկարիովտացուն (հմմտ. 6: 64,71; 13:11), սակայն մեկնաբանների մեծ մասը կարծում է, որ դա վերաբերում է Կայիափային, ով Հիսուսին պաշտոնապես հանձնեց հռոմեացիներին: Այս արտահայտությունը կարելի է հասկանալ հավաքականորեն, ինչպես նաև նկատի ունենալով, (1) ապօրինի հրեական առաջնորդները կամ (2) հրեա ժողովրդն ամբողջությամբ (տես Մատթ. 21: 33-46; Մարկ. 12: 1-12, Ղուկ. 20: 9-19; Հռ. 9-11):

19:12 «Պիղատոսը որոնում էր նորան արձակել» Սա ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ է, որը նշանակում է կրկնված գործողություն անցյալ ժամանակում: Նա փորձել էր մի քանի անգամ:

▪ **«Եթե դորան արձակես՝ կայսրի բարեկամ չես»** Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Հրեա առաջնորդները սպառնում էին Պիղատոսին, որ կտեղեկացնեն նրա վերադասին Հռոմում, եթե նա չհետևի իրենց ցանկություններին և Հիսուսին դատապարտի մահվան: «Կայսրի բարեկամը» արտահայտությունը իդիոմա էր, որն արտացոլում էր հարգալից տիտղոս տրված հռոմեական կայսրի կողմից (սկսած կամ Օգոստինոսից կամ Վեսպասիանոսից):

Կեսարը Հռոմի կայսեր տիտղոսն էր: Այն առաջացել է Հուլիոս Կեսարից և ընդունվել Օգոստինոսի կողմից:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 19:13-16
¹³Պիղատոսն էլ երբոր այս խօսքը լսեց, Յիսուսին դուրս բերաւ, եւ բեմի վերայ նստեց, այն տեղը՝ որ Քարայատակ էր կոչվում, եւ Եբրայեցերէն Կարբաթա: ¹⁴Եւ զատկի ուրբաթն էր՝ ժամը իբր վեցը, եւ Հրէաներին ասեց. Ահա ձեր թագաւորը: ¹⁵Իսկ նորանք աղաղակում էին, Վեր առ, վեր առ՝ եւ խաչիր դորան. Պիղատոսը նորանց ասեց. Ձեր թագաւորը իսպէմ: Քահանայապետները պատասխանեցին. **Մենք թագաւոր չ'ունինք բացի կայսրից:** ¹⁶Այն ժամանակ նորան տուաւ նորանց ձեռք, որ խաչուի:

19:13 «երբոր այս խօսքը լսեց, Յիսուսին դուրս բերաւ, եւ բեմի վերայ նստեց» Տեքստը երկիմաստ է այն առումով, թե ով է նստելու դատարանի աթոռին: Թե Williams և թե Goodspeed թարգմանությունները պնդում են, որ Հիսուսն էր, ծաղրանքի կերպ, որպես հրեաների թագավոր: Այնուամենայնիվ կոնտեքստը ենթադրում է Պիղատոսին, որը պատրաստ էր դատելու:

▪

NASB, NKJV,

NJB “որ Քարահատակ էր կոչվում, իսկ Եբրայերեն Կաբբաթա”

NRSV “կոչվում է սալահատակ կամ եբրայերեն Կաբբաթա”

TEV “կոչվում է «Քարե երթուղի» (եբրայերեն անունը, «Կաբբաթա»)

Եբրայերեն / արամերեն բառերի օգտագործումը իրենց սահմանումներով ցույց են տալիս, որ Հովհաննեսի Ավետարանի համար նախատեսված թիրախը հեթանոսներն էին (հ.17): Այս քարե երեսպատումը հռոմեական իրավական հայտարարությունների կողմն էր: Արամերեն Գաբբաթա տերմինը նշանակում է «բարձրացրած քարեր» կամ «բարձր տեղ»:

19:14 «Եւ զատկի ուրբաթն էր» Կա ակնհայտ անհամապատասխանություն Մինուպտիկ Ավետարանների և Հովհաննեսի Ավետարանի թվագրման միջև: Մինուպտիկ Ավետարաններում Հիսուսը կատարում է Չատկի ընթրիքը աշակերտների հետ, նախքան իր ձերբակալությունը (տեւ, Մարկ. 15:42), սակայն Հովհաննեսի Ավետարանում ընթրիքը տեղի է ունենում Ուրբաթ մինչև Տոնը: Տեւ ամբողջական ծանուցումը 18:28.

▪ «Ժամը իբր վեցը» Հիսուսի դատավարությունը Պիղատոսի առաջ և Նրա խաչելության ժամանակացույցը հետևյալն է.

	<u>Մատթևոս</u>	<u>Մարկոս</u>	<u>Դուկաս</u>	<u>Հովհաննես</u>
Պիղատոսի վճիռը				6-րդ ժամը 19:14
Խաչելությունը		3-րդ ժամը 15:25		
Մուրն ընկնելը	6-րդ և 9-րդ ժամերը 27:45	6-րդ եւ 9-րդ ժամերը 15:33	6-րդ եւ 9-րդ ժամերը 23:44	
Հիսուսի աղաղակելը	9-րդ ժամը 27:46	9-րդ ժամը 15:34		

Երբ այս ժամանակի նշումները համեմատվում են, երկու մեկնաբանական տարբերակներ են առաջանում:

1. նրանք նույնն են: Հովհաննեսն օգտագործում է հռոմեական ժամանակը, հաշվելով ժամը 12-ից (տեւ Gleason L. Archer, *Encyclopedia of Bible Difficulties*, էջ 364) իսկ Մինուպտիկներն օգտագործում են հրեական ժամը, հաշվելով ժամը 6-ից:
2. Հովհաննեսը տալիս է ավելի ուշ ժամանակ Հիսուսի խաչելության համար, որը ևս մեկ օրինակ է Մինուպտիկ և Հովհաննեսի Ավետարանների տարբերությունների միջև:

Հովհ. 1:39 և 4: 6-ից երևում է, որ նա օգտագործում է հրեական ժամանակ և ոչ թե հռոմեական (տեւ M. R. Vincent, *Word Studies*, հատոր 1, էջ 403):

Ժամանակի նշումները կարող են խորհրդանշական լինել բոլոր Ավետարաններում, քանի որ դրանք վերաբերում են

1. տաճարում ամենօրյա զոհաբերությունների ժամանակին (ժամը 9-ին և 3-ին, Գործք 2:15, 3: 1)

2. Նիսանի 14-ի կեսօրից սկսած, Չատկի Գառանը մորթելու ավանդական ժամանակն էր: Աստվածաշունչը, լինելով հնագույն արևելյան գիրք, չի կենտրոնանում ժամանակագրության վրա, ինչպես արևմտյան ժամանակակից պատմական իրողությունները:

▪ **«Ահա ձեր թագաւորը»** Ինչպես որ համար 5 կարող է ակնարկ լինել Չաք. 6:12, այս արտահայտությունն էլ կարող է ակնարկ լինել Չաք. 9: 9 (տես, F. F. Bruce, *Answers to Questions*, էջ 72):

19:14 Առաջին նախադասությունը ևս մեկ խմբագրական մեկնաբանություն է:

19:15 «Վեր առ, վեր առ՝ եւ խաչիք դորան» Այս արտահայտությունն ունի երեք ԱՕՐԻՍՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ: «Խաչել» բառի արմատը նշանակում էր «բարձրացնել» կամ «փառավորել»; սա կարող է Հովհաննեսի երկակի իմաստներից մեկը լինել (հմմտ 3:14; 8:28; 12:32):

▪ **«Քահանայապետները պատասխանեցին. Մենք թագաւոր չ'ունինք բացի կայսրից»** Հեզնանքը ցնցող է: Այս հրեա առաջնորդները հայտնաբերված հանցանքի մեջ էին, որով էլ մեղադրում էին Հիսուսի: Հին Կտակարանում միայն Աստված է Իր ժողովրդի Թագավորը (հմմտ. Ա. Թագ. 8):

19:16 «նորանց» Մատթ. 27: 26-27 և Մարկ.15: 15-16 ԴԵՐԱՆՈՒՆԸ վերաբերում է հռոմեացի զինվորներին: Հովհաննեսի եզրակացությունը կարող է լինել այն, որ Պիղատոսը հանձնեց Հիսուսին հրեա առաջնորդների և ամբոխի ցանկություններին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 19:17-22

¹⁷Եւ նորանք առան տարան Յիսուսին. եւ խաչափայտն ինքը վերկալած, դուրս գնաց այն տեղը, որ Գագաթն էր ասվում, որ Եբրայեցերէն Գողգոթա է կոչվում: ¹⁸Այնտեղ խաչ հանեցին նորան. Եւ նորա հետ երկու ուրիշին՝ այս կողմին եւ այն կողմին, եւ Յիսուսին՝ մէջտեղը: ¹⁹ Պիղատոսը մի տախտակ էլ գրեց, եւ խաչի վերայ դրաւ. Եւ գրուած էր. ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱԻՈՐ ՀՐԷԻՑ: ²⁰Եւ այս տախտակը Հրեաներից շատերը կարդացին. Որովհետեւ քաղաքին մօտ էր այն տեղը ուր որ Յիսուսը խաչուեցաւ. Եւ գրուած էր Եբրայեցերէն, Յունարէն եւ Լատիներէն: ²¹Եւ Հրեաների քահանայապետներն ասեցին Պիղատոսին. Մի գրիր Հրեաների թագաւոր, այլ թէ՛ Նա ասեց, թէ՛ Թագաւոր եւ Հրեաների: ²²Պիղատոսը պատասխանեց. Ինչ որ գրեցի գրեցի:

19:17 «խաչափայտն ինքը վերկալած» Առաջին դարում Պաղեստինի խաչի ձևը անորոշ է. Դա կարող էր լինել անգլերեն մեծատառ T-ի , փոքրատառ t-ի կամ X-ի տեսքով: Երբեմն մի փայտի վրա խաչվում էին մի քանի բանտարկյալ: Ինչպիսի ձև էլ, որ դա լիներ, նոր մտրակված դատապարտված բանտարկյալը ստիպված էր կրել փայտյա գործիքը մինչև խաչելության վայրը (հմմտ. Մատթ. 27:22, Մարկ. 15:21, Դուկ. 14:27, 23:26):

▪ **«այն տեղը, որ Գագաթն էր ասվում, որ Եբրայեցերէն Գողգոթա է կոչվում»** Այս արտահայտության ճշգրիտ իմաստն անորոշ է: Եբրայերեն / արամերեն տերմինը չի վերաբերում այն բլրին, որը նման էր ամբողջական գանգի, այլ ցածր բլրին, որը գտնվում էր Երուսաղեմի հիմնական մայրուղու վրա: Հռոմեացիները խաչում էին ապստամբներին: Ժամանակակից հնագիտությանն անորոշ է, թե որտեղ է քաղաքի հնագույն պատերի ճշգրիտ վայրը: Հիսուսը սպանվեց քաղաքի պատերից դուրս՝ հայտնի հրապարակային մահապատժի վայրում:

19:18 «Այնտեղ խաչ հանեցին նորան» Ավետարաններից ոչ մեկը չի ներառում հռոմեական խաչելության ֆիզիկական մանրամասները: Հռոմեացիները դա սովորել էին կարթագենացիներից, որոնք էլ իրենց հերթին սովորել էին պարսիկներից: Նույնիսկ խաչի ճշգրիտ ձևը անորոշ է: Սակայն

գիտենք, որ դա դաժան, երկարատև մահ էր: Այն մշակվել էր այնպես, որ մարդուն պահի կենդանի և ցավերի մեջ մի քանի օր: Մահը սովորաբար առաջանում էր շնչահեղձության պատճառով՝ ասֆիքսիա: Դա Հռոմի դեմ ապստամբությունը դադարեցնելու համար էր:

▪ **«երկու ուրիշին»** Իրականացավ Հիսուսի մասին մարգարեությունը Ես. 53: 9, արձանագրված Մատթ. 27:38; Մարկ. 15:27 և Ղուկ. 23:33:

19:19 «Պիղատոսը մի տախտակ էլ գրեց» Պիղատոսը կարող է ձեռքով է գրել այս տիտղոսը (*titlon*), որը ուրիշը գրել է փայտե վահանակի վրա: Մատթեոսն այն կոչում է «հանցանք» (*aitian*, հմմտ.Մարթ. 27:37), իսկ Մարկոսն ու Ղուկասը այն անվանում են արձանագրություն (*epigraphē*, Մարկ.15:26, Ղուկ. 23:28):

19:20 «Եւ գրուած էր Եբրայեցերէն, Յունարէն եւ Լատիներէն» «Եբրայերեն» բառը վերաբերում է արամերենին (տես 5: 2, 19: 13,17, 20:16, Հովսեփոս, *Անտիկ.* 2.13.1): Հետաքրքիր է նշել Ավետարանների միջև եղած տարբերությունը, որ վերաբերում է խաչի վրա Հիսուսի գլխի վրա դրված մեղադրանքի ճշգրիտ ձևակերպմանը:

1. Մատթ. 27:37 - «ԱՅՍ Է ՅԻՍՈՒՄ` ՀՐԷԻՑ ԹԱԳԱԻՈՐԸ»
2. Մարկ. 15:26 - «ՀՐԷԻՑ ԹԱԳԱԻՈՐԸ»
3. Ղուկ. 23:38 - «ԱՅՍ Է ՀՐԷԱՆԵՐԻ ԹԱԳԱԻՈՐԸ»
4. Հովհ. 19:19 - «ՅԻՍՈՒՄ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱԻՈՐ ՀՐԷԻՑ»

Յուրաքանչյուրը տարբեր է, բայց հիմնականում նույնն է: Սա վերաբերում է Ավետարանների մեջ պատմական մանրամասների բազմազանությանը: Յուրաքանչյուր գրող իր հիշողությունները մի փոքր տարբեր ձևերով է արձանագրել, մինևույն է դրանք նույնն ականատեսների վկայություններն են:

Պիղատոսը ուզում էր գրգռել հրեա առաջնորդներին, դնելով այդ տիտղոսը, որից իրենք վախենում էին, Հիսուսի խաչի վրա (հմմտ. հհ.21-22):

19:22 «Ինչ որ գրեցի՝ գրեցի» Սրանք երկու ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐ են, որոնք ընդգծում են գրվածի ավարտը և ամբողջացումը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 19:23-24
²³Բայց զինուորներն՝ երբոր Յիսուսին խաչ հանեցին, նորա հանդերձներն առան՝ եւ չորս բաժին արին, ամեն մեկ զինուորի համար մի բաժին. Բայց պատմուճանը՝ որովհետեւ առանց կարի էր, վերելիցը վայր բոլորը հիստուած. ²⁴Ուստի իրար ասեցին. Դորան չ'պատառենք, այլ վիճակ գցենք դորա վերայ, թէ ումը լինի. Որ զիրքը կատարուի, որ ասում է թէ իմ հանդերձներն իրանց մեջ բաժանեցին եւ իմ պատմուճանի վերայ վիճակ գցեցին. Եւ զինուորներն արին այդ բանը:

19:23 «չորս բաժին արին, ամեն մեկ զինուորի համար մի բաժին» Զինվորները վիճակ գցեցին Հիսուսի հագուստի համար: Սա վերաբերում է միայն նրա արտաքին հանդերձներին: Անորոշ է, թե ինչպես կարող էին Հիսուսի հագուստները բաժանվել չորս ձևով: Սա հնարավոր է վերաբերվի նրա կոշիկներին, աղոթքի շալին (*tallith*), գոտիին և արտաքին հագուստին(ներին): Անորոշ է, Հիսուսը չալմա/գլխափաթեթոց հագել է, թե ոչ: Հրեաներին ամբողջովին մերկացնելը վիրավորանք էր: Սա ևս մեկ կատարված մարգարեության մեջբերում է հ.24-ում (հմմտ. Մաղ. 22:18):

▪ **«պատմուճանը»** Հիսուսի արտաքին հանդերձը վերաբերվում է ՀՈԳՆԱԿԻ *himatia* տերմինին: Նրա երկար ներքնաշորը, որը հանգնում էր մարմնի վրա՝ տունիկա էր (*chitōn*): Նրանց միջև տարբերությունը կարելի է տեսնել Մատթ. 5:40 և Ղուկ. 6:29: Այծեմնիկն էր կարել հագուստի այդ

երկու կտորները (Գործք 9:38): Առաջին դարի հրեաներն, ըստ երևույթին, հագնում էին լրացուցիչ ներքնագգեստի մի կտոր, որը կոչվում էր ազդրաշոր: Հիսուսը ամբողջովին մերկացված չէր:

23 համարի վերջին արտահայտությունը մեկ այլ խմբագրական մեկնաբանություն է, որը ապրում էր Հիսուսի հետ:

▪ **«առանց կարի էր, վերելիցը վայր բոլորը հիսուսած»** Սա կարող է աստվածաբանական նշանակություն ունենալ: Նման թիկնոցը/պատմուճանն անսովոր էր և գուցե թանկ էր: Հիսուսի համար անսովոր էր թանկարժեք կտորից հագուստ ունենալը: Յուսուփոսից (Անտիկ 3.7.4) մենք գիտենք, որ քահանայապետը նման հագուստ էր կրում, ինչպես ռաբունական ավանդույթն է հաստատում Մովսեսի մասին: Կարող է դա հղում լինել Հիսուսի մասին

1. քահանայապետը (հմմտ. Եբրայեցիս)
2. նոր օրենք տվողը

Կրկնակի իմաստներ միշտ կարող են լինել Հովհաննեսի Ավետարանում, սակայն թարգմանիչները պետք է ջանասեր և զգույշ լինեն, որպեսզի այլաբանական իմաստավորում չտան բոլոր մանրամասնություններին:

19:24 «Որ գիրքը կատարուի» Սաղմոս 22 Հին Կտակարանում ձևավորեց խաչելության նախադրյալը:

1. Սաղմոս 22:1-2 – Մաթ. 27:64; Մարկ. 15:34
2. Սաղմոս 22:7-8 – Մաթ. 27:39,43; Մարկ. 15:29; Ղուկ. 23:35
3. Սաղմոս 22:15 – Մաթ. 27:48; Մարկ. 15:36; Ղուկ. 23:36; Հովհ. 19:28,29
4. Սաղմոս 22:16 – Մաթ.27:35; Մարկ. 15:24; Հովհ. 20:25
5. Սաղմոս 22:18 – Մաթ. 27:35; Մարկ.15:24; Ղուկ. 23:34; Հովհ. 19:24
6. Սաղմոս 22:27-28 – Մաթ. 27:54; Մարկ.15:39; Ղուկ. 23:47; (Հովհ. 20:31; Մաթ. 28:18-20; Ղուկ. 24:46-47; Գործք 1:8)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 19:25-27

²⁵Եւ Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նորա մայրը, եւ նորա մօր քոյրը՝ Մարիամը Կղեովպայի կինը, եւ Մարիամ Մագդաղենացին: ²⁶Յիսուսն էլ տեսնելով իր մօրը եւ այն աշակերտին՝ որ սիրում էր, որ մօտիկ կանգնած էր, իր մօրն ասեց. Ով կին, ահա քո որդին:

²⁷Յետոյ ասեց աշակերտին. Ահա քո մայրը. Եւ այն ժամանակից այն աշակերտն իրան մօտ առաւ նորան:

19:25 «Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նորա մայրը, եւ նորա մօր քոյրը՝ Մարիամը Կղեովպայի կինը, եւ Մարիամ Մագդաղենացին» Շատ քննարկում կա, թե այստեղ չորս անուն է թե երեք: Հավանական է, որ կա չորս անուն, քանի որ Մարիամ անունով երկու քոյրեր չէին կարող լինել: Մարիամի քոյրը, Մաղովմեն, հիշատակվում է Մարկ. 15:40 և Մատթ. 27:56: Եթե դա ճիշտ է, ապա դա նշանակում է, որ Հակոբոսը, Հովհաննեսը և Հիսուսը զարմիկներ էին: Երկրորդ դարի ավանդույթն (*Hegesippus*) ասում է, որ Կղեովպսը Հովսեփի եղբայրն էր: Մարիամ Մագդաղենացին այն մեկն էր, ումից Հիսուսը յոթ դև էր հանել, և առաջինը, ում Նա հայտնվեց Իր հարությունից հետո (տես 20: 1-2, 11-18; Մարկ. 16:1, Ղուկ. 24: 1-10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԱՆԱՅՔ ՈՎՔԵՐ ՀԵՏԵՎԵՑԻՆ ՀԻՍՈՒՄԻՆ

Ա. Առաջին հիշատակությունը Հիսուսին հետևող կանանց, ովքեր օգնեցին Նրան և Առաքյալների խմբին Ղուկ. 8: 1-3 համարներում է:

1. Մարիամը, որը կոչվում էր Մագդաղենացի (հ. 2)
 - ա. Մաթ. 27: 56, 61; 28: 1
 - բ. Մարկ. 15: 40,47; 16: 1,9

- գ. Ղուկ. 8:2; 24:10
- դ. Հովհ. 19:25; 20: 1,11,16,18
- 2. Հովհաննան, Քուզայի կինը (Հերովդեսի ծառա հ.3), թվարկված է նաև Ղուկ. 24:10
- 3. Շուշանը (հ. 3)
- 4. «և շատ ուրիշներ, որոնք իրենց նպաստը բերեցին իրենց սեփական միջոցներից» (հ. 3)
- Բ. Մի խումբ կանայք, ովքեր ներկա էին խաչելության ժամանակ
 - 1. Մատթեոս
 - ա. Մարիամ Մագդաղենացին (27:56)
 - բ. Հակոբոսի և Հովսեփի մայրը, Մարիամը (27:56)
 - գ. Ջեբեդիայի որդիների մայրը (27:56)
 - 2. Մարկոս
 - ա. Մարիամ Մագդաղենացին (15:40)
 - բ. փոքր Հակոբոսի և Հովսեփի մայրը, Մարիամը (15:40)
 - գ. Սաղովմե (15:40)
 - 3. Ղուկասը միայն ասում է, «կանայք, ովքեր ուղեկցում էին Նրան Գալիլեայից» (23:49)
 - 4. Հովհաննես
 - ա. Մարիամը, Հիսուսի մայրը (19:25)
 - բ. Նրա մոր քույրը (19:25)
 - գ. Կղեովպայի Մարիամը [KJ Կղեովպա, սա կարող է նշանակել Կղեովպայի կինը կամ Կղեովպայի դուստրը (19:25)
 - դ. Մարիամ Մագդաղենացին (19:25)
- Գ. Կանանց մի խումբ հիշատակվում է Հիսուսի գերեզմանի մոտ
 - 1. Մատթեոս
 - ա. Մարիամ Մագդաղենացին (27:61)
 - բ. Սյուս Մարիամը (27:61)
 - 2. Մարկոս
 - ա. Մարիամ Մագդաղենացին (15:47)
 - բ. Հովսեփի մայր Մարիամը (15:47)
 - 3. Ղուկասը միայն ասում է, «կանայք, որոնք նրա հետ եկել էին Գալիլեայից» (23:55)
 - 4. Հովհաննեսը ոչ մի արձանագրություն չունի գերեզման եկած կանանց մասին
- Դ. Կիրակի առավոտյան մի խումբ կանայք եկան գերեզման
 - 1. Մատթեոս
 - ա. Մարիամ Մագդաղենացին (28:1)
 - բ. Սյուս Մարիամը (28:1)
 - 2. Մարկոս
 - ա. Մարիամ Մագդաղենացին (16: 1)
 - բ. Հակոբոսի մայր Մարիամը (16: 1)
 - գ. Սաղովմե (16: 1)
 - 3. Ղուկաս
 - ա. «Նրանք եկան գերեզմանին» (24: 1-5, 24)
 - (1) Մարիամ Մագդաղենացին (24:10)
 - (2) Հովհաննան (24:10)
 - (3) Հակոբոսի մայր Մարիամը (24:10)
 - 4. Հովհաննեսը նշում է միայն Մարիամ Մագդաղենացին (20:1, 11)
- Ե. Կանայք, որոնք ներկա էին վերնատանը (Գործք 1:14)
 - 1. «կանայք» (1:14)

2. Հիսուսի մայր Մարիամը (1:14)

9. Այս տարբեր հատվածներում տարբեր կանանց միջև հստակ հարաբերություններն անորոշ են: Մարիամ Մագդաղենացին ակնհայտորեն ունի գերակշռող դեր: Լավ հոդված կա «կանայք» Հիսուսի կյանքում և ծառայության մեջ *Dictionary of Jesus and the Gospels* IVP- ի կողմից հրատարակած, էջ 880-886:

19:26 «այն աշակերտին՝ որ սիրում էր» Քանի որ Հովհաննեսը անունով չի հիշատակվում Ավետարանում, շատերը ենթադրում են, որ դա իր ինքնությունը բացահայտելու ձևն էր (տես 13:23, 19:26, 21: 7,20): Յուրաքանչյուրում նա օգտագործում է *agapaō* տերմինը, բայց 20: 2-ում նա օգտագործում է նույն արտահայտությունը, սակայն *phileō* -ով: Այս տերմինները հոմանիշ են Հովհաննեսի Ավետարանում. համեմատեք 3:35 *agapaō* և 5:20 *phileō*, որտեղ նրանք երկուսն էլ վերաբերում են Հոր սերը Որդու հանդեպ:

19:27 «Եւ այն ժամանակից այն աշակերտն իրան մօտ առաւ նորան» Սա չի նշանակում, որ Հովհաննեսն անմիջապես Մարիամին տարավ իր տունը, թեև սա հնարավոր փաստ է, քանի որ նա չի թվարկված մյուս կանանց հետ Մաթ. 27:56 և Մարկ. 15:40: Ավանդույթն ասում է, որ Հովհաննեսը Մարիամի մասին հոգ էր տանում մինչև նրա մահը, հետո տեղափոխվեց Փոքր Ասիա (հատկապես Եփեսոս), որտեղ նա ունեցավ երկար ու հաջողակ ծառայություն: Եփեսոսի երեցների հորդորն է, որ Հովհաննեսը, որպես ծեր, գրեց իր հիշողությունները Հիսուսի կյանքի մասին (այսինքն, Հովհաննեսի Ավետարանը):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 19:28-30

²⁸Սորանից յետոյ Յիսուսն իմանալով, որ ամեն բան արդէն լրացած է, որպէս զի գրուածը կատարուի՝ ասեց. Ծարաւ եմ: ²⁹Եւ մի աման կար քացախով լիքն. Եւ նորանք մի սպունգ լցրին քացախով եւ գոպայի մշտիկի վերայ դրած նորա բերանին մօտեցրին: ³⁰Եւ երբոր Յիսուսը քացախն առաւ՝ ասեց. Կատարուած է. Եւ գլուխը խոնարհեցրեց՝ հոգին աւանդեց:

19:28 «Յիսուսն իմանալով, որ ամեն բան արդէն լրացած է, որպէս զի գրուածը կատարուի՝ ասեց. Ծարաւ եմ» Դա սինթետիկորեն երկիմաստ է, թե արդյոք Սուրբ Գիրքը վերաբերում է «Ես ծարավ եմ» արտահայտությանը կամ «ամեն ինչ արդէն կատարվել է»: Եթե դա ընդունվի ավանդական կերպով, ապա «Ես ծարավ եմ», Սաղ. 69:21.

19:29 «Եւ մի աման կար քացախով լիքն» Սա էժան գինի էր, թթված գին: Դա կարող էր լինել ինչպես գինվորների, այնպես էլ խաչվածների համար: Նրանց տրվում էր փոքր քանակությամբ հեղուկ, որպեսզի ավելի երկարացնեն խաչելության պահը:

▪ **«քացախով»** Սա բառացիորեն «քացախ» է: Դա աղքատ մարդկանց խմիչք էր: Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը չիմեց գմռած գինին, որ Երուսաղեմի կանայք առաջարկեցին Նրան (տես Մարկ. 15:23; Մատթ. 27:34): Հնարավոր է, որ Նա ընդունեց այդ խմիչքը, որպեսզի կատարվեր Սաղմոս 22:15. Նա շատ խճճված էր խոսում, և նա մեկ բան էր ուզում ասել:

▪ **«գոպայի մշտիկի վերայ»** Ոմանք դա դիտում են որպես հատուկ բույս խորհրդանշական իմաստով, որն օգտագործում էր Զատիկի ծառայության մեջ (տես Ելից 12:22): Ուրիշներն էլ ենթադրում են, որ գոյություն ունեւր հին գրագիր տերմին և սկզբնապես նշանակում էր «նիզակ», «նետ» կամ «փայտիկ» (հմմտ. NEB սակայն REB- ն վերադառնում է բույսին): Մատթ. 27:48 և Մարկ. 15:36 «եղեգ» է:

Պատճառը, թե ինչու էին սխալ հասկանում գրվածը, այն էր որ այս բույսը շատ երկար ցողուն չուներ (միայն 2-ից 4 ոտնաչափ), բայց պետք է հիշել, որ խաչերը գետնից բարձր չէին բարձրացվում: Մեր ավանդական պատկերացումները բարձր խաչի մասին կարող են թյուրիմացությամբ հասկանալ 3:14: Հիսուսի ոտքերը կարող էին մեկ կամ երկու ոտքի չափ բարձր լինել երկրից:

19:30 «Կատարուած է» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սինոպտիկ Ավետարաններից մենք տեղեկանում ենք, որ Նա բարձրաձայն աղաղակեց (տես Մարկ. 15:37, Ղուկ. 23:46, Մատթ. 27:50): Սա վերաբերում է փրկագնման ավարտված գործին: Այս (*telos*) տերմինի տեսակը եգիպտական պապիրուսում (Moulton և Milligan) առևտրական գաղափար էր, որը նշանակում էր «վճարված է ամբողջությամբ»:

▪ **«Եւ գլուխը խոնարհեցրեց՝ հոգին աւանդեց»** «Խոնարհեց Իր գլուխը» արտահայտությունը «պատրաստվում է քնել» իդեոմատիկ տարբերակն է: Հիսուսի մահը հանգիստ պահ էր Նրա համար: Եզրակացությունն այն է, որ մահվան մեջ անձի հոգևոր ասպեկտը առանձնացված է ֆիզիկականից: Սա, կարծես պահանջում է անմարմին վիճակ հավատացյալների համար մահվան և հարության օրվա միջև (հմմտ. II Կոր. 5; I Թեմ. 4:13-18, տես William Hendriksen, *The Bible On the Life Hereafter*): Ավետարանի զուգահեռները Մարկ. 15:37 և Ղուկ. 23: 46 ունեն «Նա հոգին ավանդեց» Եբրայերեն «հոգի» և «շունչ» բառերը նույնն են: Նրա վերջին շունչը դիտվում է որպես Իր հոգին լքում է մարմինը (տես Ծննդ. 2: 7):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 19:31-37
³¹Բայց Հրեաները, որովհետև ուրբաթ օր էր, որպես զի մարմինները չ'մնան խաչի վերայ շաբաթ օրը, որովհետև այն շաբաթ օրը մեծ էր, Պիղատոսին աղաչեցին, որ նորանց սրունքները ջարդեն, եւ վեր առնուին: ³²Չինուորներն էլ եկան եւ առաջինի սրունքները ջարդեցին, այնպէս էլ միւսինը որ նորա հետ խաչուած էր: ³³Բայց երբոր Յիսուսի մօտ եկան եւ տեսան նորան արդէն մեռած, նորա սրունքները չ'ջարդեցին: ³⁴Այլ զինուորներից մէկը գեղարդով նորա կողը խոցեց. եւ շուտով արիւն եւ ջուր դուրս եկաւ: ³⁵Եւ նա որ այս տեսաւ՝ վկայեց. Եւ նորա վկայութիւնը ճշմարիտ է. Եւ նա գիտէ որ ճշմարիտ է ասում, որ դուք հաւաք: ³⁶Որովհետև այս բաները եղան, որ գրուածը կատարուի, թէ Նորա ոսկորը չ'պիտի փշրուի: ³⁷Եւ դարձեալ մի ուրիշ գրուած ասում է, թէ Մտիկ կ'տան նորան, որ խոցեցին:

19:31 «որպէս զի մարմինները չ'մնան խաչի վերայ շաբաթ օրը» Հրեաները շատ մտահոգված էին մեռած մարմինների համար, որոնք ծիսականորեն աղտոտում էին երկիրը (տես Բ Օրինաց 21:23), հասկապես Չատիկի մեծ Մուրբ Շաբաթ օրը:

- **«որովհետև այն շաբաթ օրը մեծ էր»** Սա թարգմանվել է երկու ձևով
 1. Չատիկի ընթրիքն ու Շաբաթը համընկել են այդ տարի (հրեաներն օգտագործում էին լուսնային օրացույց)
 2. Բաղարջակերաց տոնը համընկավ այդ տարվա Շաբաթ օրվա հետ Չատիկի և Բաղարջակերաց տոնը (տես Ելից 12) դարձավ ութ օրյա տոն:
- **«որ նորանց սրունքները ջարդեն, եւ վեր առնուին»** Ըստ երևույթին, այս իրավիճակը տեղի է ունեցել նախկինում: Խաչված անձանց ոտքերը կոտրելու համար օգտագործվել է մեծ թակ, փայտե մուրճ: Խաչելությունը սովորաբար առաջացնում էր շնչահեղձություն: Սրունքները կոտրելը գրեթե անմիջապես առաջացնում էր շնչահեղձություն, քանի որ մարդը չէր կարողանում ոտքերին հենվել և շնչել:

19:33 «տեսան նորան արդեն մեռած, նորա սրունքները չ'ջարդեցին» Սա նույնպես կարող է մարգարեության իրականացում լինել Ելից 12:46; Թվոց 9:12 և Սաղ. 34:20:

19:34 «զինուորներից մեկը գեղարդով նորա կողը խոցեց. եւ շուտով արին եւ ջուր դուրս եկաւ» Սա ակնատեսի բժշկական տվյալներ է, որը ցույց է տալիս, որ Նա իսկապես մեռած էր և դրանով իսկ հաստատելով Հիսուս Քրիստոսի ճշմարիտ մարդեղությունը: Հովհաննեսի Ավետարանը, ինչպես նաև Ա. Հովհանու թուղթը, գրվել են Գնոստիցիզմի զարգացման օրերում, որոնք հաստատում էին Հիսուսի Աստվածությունը, բայց մերժում Նրա մարդեղությունը:

19:35 Այս համարը Հովհաննեսի մեկնաբանությունն է, որը բոլոր իրադարձությունների միակ ակնատեսն է եղել (1) գիշերային մեղադրանքները 2) հռոմեական դատավարությունը և (3) խաչելությունը: Հիսուսի մահվան մասին այս մեկնաբանությունը զուգահեռ է 20: 30-31-ին, որը ցույց է տալիս Ավետարանի ավետարանչական նպատակը (տես 21:24): Տես Հատուկ Թեմա. Հիսուսի Վկաները 1: 8:

Կա հունարեն ձեռագիր տարբերակ ԲՄՅ վերջին նախադասության մեջ: Որոշ տեքստերում ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ է, իսկ որոշներում ԱՕՐԻՍՍ: Եթե դա ի սկզբանե ԱՕՐԻՍՍ ԺԱՄԱՆԱԿ էր, ապա այն կենտրոնանում է անհավատների վրա, ինչպես 20: 30-31: Այնուամենայնիվ, եթե դա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ է, ապա այն կենտրոնանում է շարունակական և զարգացող հավատքի վրա: Հովհաննեսի Ավետարանը կարծես թե ուղղված է երկու խմբերի:

- «Ճշմարիտ. . . ճշմարիտ» Տես Հատուկ Թեմաներ 6:55 և 17:3.

19:36 Սա կարող է ցույց տալ Ջատիկի Գառը Ելից 12: 46; Թվոց 9:12 կամ Սաղ. 34:20: Դա կախված է նրանից, թե որ արտահայտությունն է հղում (1) խոցված թե (2) կոտրված: Հիսուսն Ինքը վաղ եկեղեցուն ցույց տվեց այս Սուրբ Գրքերը, որ հարությունից հետո 40 օր Նա մնալու է երկրի վրա (տես Ղուկ. 24:27, Գործք 1: 2-3): Վաղ եկեղեցու քարոզչությունը (Գործքում) արտացոլում է ՀԿ մարգարեությունների իրականացումը, որոնք Հիսուսը ցույց տվեց նրանց:

19:37 Սա մեջբերում է Ջաբ.12:10, որը մեծ խոստումներից մեկն է

1. Իսրայելը մի օր հավատքով կվերադառնա Հիսուս Քրիստոսին (տես Հայտ. 1: 7)
2. շատ հավատացյալ հրեաներ սգում էին Հիսուսի մահը
3. սա վերաբերում է հռոմեական զինվորներին (տես Մատթ. 27:54), որոնք ներկայացնում են հեթանոս ազգերը (տես 12:32)

Հետաքրքիր է, որ այս մեջբերումը ակնհայտորեն Մագորեթիկ երբայերեն տեքստից է, այլ ոչ թե Սեպտուագինից, որը սովորաբար մեջբերվում է Ավետարանի հեղինակների կողմից: Սեպտուագինում «ծաղրվում է», սակայն Մագորեթիկ տեքստում՝ «խոցվում»:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 19:38-42

³⁸Սորանից յետոյ Պիղատոսին աղաչեց Յովսէփը, որ Արիմաթիայիցն էր, (որ աշակերտ լինելով Յիսուսին, բայց Հրէից վախի պատճառովը ծածկուած էր) որ Յիսուսի մարմինը վեր առնէ. Եւ Պիղատոսը հրաման տուաւ. Եւ նա եկաւ եւ վեր առաւ Յիսուսի մարմինը: ³⁹Նիկողեմոսն էլ եկաւ՝ (որ առաջ Յիսուսի մօտ էր եկել գիշերով.) եւ գնուռս բերաւ հալուէի հետ խառնած՝ հարիւր լիտրի չափ: ⁴⁰Եւ Յիսուսի մարմինն առան, եւ այն խնկերի հետ կտաններով պատեցին, ինչպէս Հրէաներին օրէնք էր պատել: ⁴¹Եւ այն տեղը, ուր որ խաչուեցաւ, մի պարտեզ կար, եւ այն պարտեզումը մի նոր գերեզման, որ նորանում երբէք ոչ ոք չէր դրուած: ⁴²Եւ այնտեղ դրին Յիսուսին Հրէաների ուրբաթի համար, որովհետեւ գերեզմանը մօտ էր:

19:38-39 «Յովսէփ. . . Նիկողէմոս» Մինեղրիոնի այս երկու հարուստ, ազդեցիկ անդամները Հիսուսի գաղտնի աշակերտներն էին, ովքեր այս կարևոր և վտանգավոր ժամանակին հրապարակավ էին ման գալիս:

19:39 «Էլ զմուռս բերաւ հայուէի հետ խառնած՝ հարիւր լիտրի չափ» Սա առաջին դարի հրեական ժողովրդի ավանդական անուշահոտ թաղման համեմունք էր: Գումարը մի քիչ ճոխ է: Շատերը դա խորհրդանշական են համար, որ Հիսուսը թաղվեց որպէս թագավոր (տես II Մնաց. 16:14): Տես Հատուկ Թեմա Օծություն 11: 2:

«Խառնուրդ» (*migma*) հունարեն բառը, որը գտնվում է MSS P⁶⁶, Տ², A, D, L և եկեղեցու հայրերի և տարբերակների մեծ մասում, զարմանալիորեն փոխվում է «փաթեթ, ծրար, կապոց» (*eligma*) MSS Տ^{*}, B, W և մի քանի Ղպտի տարբերակներում: UBS⁴ «խառնուրդ» տալիս է «B» վարկանիշ (գրեթե որոշակի):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԹԱՂՄԱՆ ՀԱՄԵՄՈՒՆՔՆԵՐ

- Ա. Զմուռս, արարական ծառերից բուրավետ մածուկ, խեժ
 - 1. Հին Կտակարանում այս համեմունքը հիշատակվում է տասներկու անգամ, հիմնականում իմաստուն գրականության մեջ որպէս օճանելիք
 - 2. Դա մոզերի կողմից Հիսուս մանուկին բերած նվերներից մեկն էր (Մատթ. 2:11)
 - 3. Նրա սիմվոլիկան զարմանալի է
 - ա. Օգտագործվում էր «սուրբ օծման յուղ» (Ելից 30: 23-25)
 - բ. Որպէս նվեր թագավորի համար (Մատթ. 2:11)
 - գ. Օգտագործվեց գերեզմանում Հիսուսին օծելու համար (տես Հովհ. 19:39 և խորհրդանշականորեն Հովհ. 11: 2): Սա Թալմուդում նկարագրված հրեական սովորույթների համաձայն էր (այսինքն, Բերակոթ 53 ա):
- Բ. Հալվե, փայտի անուշահոտ տեսակ
 - 1. կապված անուշահոտ օճանելիքի հետ (տես Թվոց 24: 6, Սաղ. 45: 8, Առ. 7:17, Երգ Երգոց 4:14)
 - 2. այն օգտագործվել է զմուռսի հետ խառնած եգիպտացիների կողմից, որպէս կախարհության գործընթացի մի մաս
 - 3. Նիկողէմոսը դրանից մեծ քանակությամբ բերեց Հիսուսի գերեզմանին և օճեց նրան (տես Հովհ.19:39): Սա Թալմուդում նկարագրված հրեական սովորույթների համաձայն է (այսինքն, Բեթսահ 6ա):

19:40 «Եւ Յիսուսի մարմինն առան, եւ այն խնկերի հետ կտաւներով պատեցին» Համեմունքները երկու նպատակի համար էին 1) հոտը սպանելու և (2) թաղման փաթույթները տեղում պահելու համար:

19:41 «Եւ այն տեղը, ուր որ խաչուեցաւ, մի պարտեզ» Կարևոր է, որ մենք հասկանանք շտապողականությունը, որով Հովսէփն ու Նիկողէմոսը գործեցին: Հիսուսը մահացավ ժամը 3-ին և պետք է գերեզմանում լիներ ժամը 6-ին, որը հրեական Զատիկի շաբաթվա սկիզբն էր:

▪ **«նոր գերեզման, որ նորանում երբեք ոչ ոք չէր դրուած»** Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ է: Մենք Մատթ. 27: 6 իմանում ենք, որ դա Հովսէփի սեփական գերեզմանն էր: Սա Եսայիա 53:9-ի իրականացումն է, մեջբերված Մատ. 27: 57-ում:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորոյթյան մեկնաբանութեան ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանութեան համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լոյսի ներքո: Մեկնաբանութեան մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնութիւնը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ զինվորները ծեծեցին և ծաղրեցին Հիսուսին:
2. Ի՞նչ է նշանակում Պիղատոսի կրկնվող փորձերը, որով ուզում էր Հիսուսին ազատ արձակել:
3. Ինչու՞ հրեական քահանայի հայտարարութիւնը 15-րդ համարում զարմանալի է:
4. Ինչու՞ են խաչելութեան մանրամասները տարբերվում Ավետարաններում:
5. Ինչպե՞ս է Բ Օրինաց 21:23-ը կապվում Հիսուսի խաչելութեան հետ:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ ԳԼՈՒԽ 20

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիտուսի Հարությունը	Դատարկ գերեզմանը	Հարությունը	Դատարկ գերեզմանը	Դատարկ գերեզմանը
20:1-10	20:1-10	20:1-10	20:1-10	20:1-2 20:3-10
Հիտուսը հայտնվում է Մարիամ Մագդաղենացուն	Մարիամ Մագդաղենացին տեսնում է հարուցյալ Տիրոջը		Հիտուսը հայտնվում է Մարիամ Մագդաղենացուն	Հայտնվելը Մարիամ Մագդաղենացուն
20:11-18	20:11-18	20:11-18	20:11-13ա 20:13բ 20:14-15ա 20:15բ 20:16ա 20:16բ 20:17 20:18	20:11-18
Հիտուսը հայտնվում է աշակերտներին	Առաքյալների հանձնարարականները		Հիտուսը հայտնվում է աշակերտներին	Հայտնվելը աշակերտներին
20:19-23	20:19-23	20:19-23	20:19-23	20:19-23
Հիտուսը և Թովմասը	Տեսնել և հավատալ		Հիտուսը և Թովմասը	
20:24-29	20:24-29	20:24-29	20:24-25ա 20:25բ 20:26-27 20:28 20:29	20:24-29
Գրքի նպատակը	Որ դուք հավատաք		Գրքի նպատակը	Առաջին ամփոփումը
20:30-31	20:30-31	20:30-31	20:30-31	20:30-31

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

1-29 համարների կոնտեքստի ներըմբռնումը

Ա. Յուրաքանչյուր խոստում, որ Հիսուսը տվեց առաքյալներին 14-17 գլուխներում իրականացավ Իր հարության առաջին կիրակի երեկոյան: Տես ծանուցում 16:20.

Բ. Ավետարաններում Հիսուսի հարության պատմությունները տարբեր են իրենց մանրամասնություններով, որովհետև

1. դրանք ականատեսների գրվածքներն էին
2. տարիներ էին անցել
3. յուրաքանչյուրը գրում էր իր համար թիրախ դարձած խմբի և ընդգծում էր տարբեր բաներ (հմմտ. Մաթ. 28; Մարկ. 16; Գուկ. 24)

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 20:1-10

¹Եւ միաշաբաթի օրը Մարիամ Մագդաղենացին առաւօտանց՝ տակաւին մութ՝ գալիս է գերեզմանը, եւ տեսնում է քարը գերեզմանից վեր առած: ²Ապա վազում է գալիս Սիմօն Պետրոսի եւ միւս աշակերտի մօտ, որին Յիսուս սիրում էր, եւ ասում նորանց. Տիրոջը վեր առան գերեզմանիցը, եւ չգիտենք թէ որտեղ դրին նորան: ³Եւ դուրս եկաւ Պետրոսը եւ միւս աշակերտը, եւ գալիս էին գերեզմանը: ⁴Եւ երկուսը միասին վազում էին. եւ միւս աշակերտը վազեց շուտով անցաւ Պետրոսիցը, եւ առաջ եկաւ գերեզմանը: ⁵Եւ ծռելով տեսնում է կտաւները դրած. բայց ներս չմտաւ: ⁶Սիմօն Պետրոսն էլ հասաւ որ նորա ետեւից գալիս էր, եւ մտաւ գերեզմանը, եւ տեսնում է կտաւները դրած. ⁷Եւ վարշամակը՝ որ նորա գլխի վերայ էր, կտաւների հետ չէր, այլ ջոկ ծալած մի առանձին տեղ: ⁸Այն ժամանակ միւս աշակերտն էլ ներս մտաւ, նա որ առաջ էր գերեզմանը եկել, տեսաւ եւ հաւատաց: ⁹Որովհետեւ տակաւին չգիտէին գիրքը, թէ Պէտք է նա մեռելներից յարութիւն առնէ: ¹⁰Եւ աշակերտները դարձեալ իրանց տունը գնացին:

20:1 «միաշաբաթի օրը» Կիրակի էր, առաջին աշխատանքային օրը, Չատկի շաբաթվա մեծ շաբաթը, երբ տաճար էին բերվում երեխայրիները՝ առաջին պտուղները: Հիսուսը մեռելների անդրանիկն էր (հմմտ. I Կոր. 15:23): Հիսուսի հայտնվելու երեք դեպքերը Կիրակի երեկոները առիթ դարձան հավատացյալների համար Կիրակի օրը պաշտամունքի օր սահմանելու համար (հմմտ. հհ. 19, 26; Գուկ. 24:36; Գործք 20:7; I Կոր. 16:2):

▪ «Մարիամ Մագդաղենացին» Նա այն մի քանի կանանցից մեկն էր, ովքեր ուղեկցում էին Հիսուսին ու առաքյալներին: Գալիլեայում Հիսուսը նրա միջից յոթը դև հանեց (հմմտ. Մարկ. 16:9 և Գուկ. 8:2): Նա ներկա էր խաչելությանը: Տես ծանուցում 19:25

Չնայած Հովհաննեսի Ավետարանում չի խոսվում Մարիամի այցի նպատակի մասին, Մարկ. 16:1 և Գուկ. 23:56 նշվում է, որ մի քանի կանայք (հմմտ. հ. 2) եկել էին Հիսուսի մարմինն օծելու անուշաբույր յուղերով: Ակնհայտ է, որ նրանք չգիտեին, որ Հովսեփն ու Նիկողեմոսն արդեն օծել էին նրան, կամ էլ եթե գիտեին, ապա կարող էին համարել, որ նրանց կողմից արվածը բավարար չէր:

▪ «տակաւին մութ» Ըստ երևույթին, երբ Մարիամն ու մյուս կանայք տնից դուրս եկան դեռ մութ էր, բայց երբ հասան գերեզման, արդեն բավականին լույս էր (հմմտ. Մաթ. 28:1; Մարկ. 16:2):

▪ **«քարը գերեզմանից վեր առած»** Բառացիորեն «հանել, հեռացնել» իր ակոսից, փորվածքից (հմմտ. Մաթ. 28:2): Հիշեք, որ քարը հեռացվել էր գերեզմանի մուտքից, և թույլատրվել ականատեսներին մտնել այնտեղ, և ոչ թե Հիսուսին այնտեղից դուրս թողնելու համար: Նրա նոր հարուցյալ մարմինը չուներ Իր երկրային մարմնի ֆիզիկական սահմանափակումները (օր. 20:19,26):

20:2 «Ապա վազում է» Հավանական է, նա շատ արագ հեռացավ գերեզմանից, որպեսզի ինչքան հնարավոր է շուտ հայտնի աշակերտներին՝ Հիսուսի այնտեղ չլինելու մասին (հմմտ. Մաթ. 28:5):

▪ **«միս աշակերտի մօտ, որին Յիսուսը սիրում էր»** Հունարեն *phileō* (սիրել) տերմինը, որը օգտագործված է այստեղ նշանակում է «եղբայրական սեր»: Ինչևէ կոյնե հունարենում (Ք.Ա.300թ. - Ք.Հ.300թ.) այն օգտագործվել է որպես *agapaō* տերմինի հոմանիշ: Այստեղ նշված աշակերտը Հովհաննեսն էր՝ Ավետարանի հեղինակը (հմմտ. հհ. 4-8 և 13:23): Այդ պահին նա Պետրոսի հետ էր:

▪ **«Տիրոջը վեր առան գերեզմանիցը»** Այստեղ ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (այն է, ավարտված գործողություն): Հիսուսն անհետացել էր: Մարիամի մտքում «նրանք» հրեա առաջնորդներն էին: Անկասկած, որ առաքյալներն ու մյուս աշակերտները, որոնք վերնատանն էին զարմացել էին հարության լուրը լսելով:

▪ **«չգիտենք»** Նրանք էին Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը, Սաղովմեն, Յովհաննան և ուրիշ կանայք (հմմտ. Մաթ. 28:1; Մարկ. 16:1; Գուկ. 24:10):

20:4 «Եւ միս աշակերտը վազեց շուտով անցաւ Պետրոսիցը, եւ առաջ եկաւ գերեզմանը» Հնարավոր է, որ Հովհաննեսը առաքյալների մեջ ամենափոքրն էր (այն է, ավանդություն):

20:5 «ծռելով» Այդ ժամանակներում գերեզմանները ունեին ցածր մուտք մոտ 3-ից 4 ոտնաչափ բարձրություն: Եվ ներս մտնելու համար մարդը պետք է կռահար (հմմտ. հ. 11):

▪ **«տեսնում է»** Բառացիորեն «կկոցել, շլացնել, որպեսզի տեսնել»: Ակնհայտ է, որ դա կտրուկ հակադրության արդյունք էր՝ առավոտվա լույսի և մութ գերեզմանի միջև:

▪ **«կտաւները դրած»** Թե ստույգ որտեղ և ինչպես էին դրված կտավները հունարեն տեքստում պարզ չի ասվում: Եթե մարմինը գողացված էր, ապա կտավները նույնպես պետք է տանեին, որովհետև նյութերը որով գնոսել էին սոսնձի հատկություն ունեին:

20:6 «Սիմօն Պետրոսն» Սիմոն (*Cephas*) նրա եբրայերեն (արամերեն) անունն էր, իսկ Պետրոս (*Petros*) նրա հունարեն անունն էր, որ կոչեց Հիսուսը: Հունարենում այն նշանակում է «անջատված քար կամ գլաժայռ, կոպիճ, մեծ քար» (հմմտ. Մաթ. 16:18): Արամերեն լեզվում չկա տարբերություն *Petros* և *Petra* անունների միջև:

20:7 «վարչամակը» Դեմքը փաթաթվում էր առանձին շորով (հմմտ. 11:44): Հավանական է, որ այս թաշկինակը օգտագործվել է (1) երեսը ծածկելու համար, (2) դեմքը փաթաթելու համար (հմմտ. NJB); կամ էլ (3) ներքին ծնոտը թեթևակի ֆիքսելու համար (հմմտ. TEV):

▪ **«այլ ջուկ ծալած մի առանձին տեղ»** Այստեղ ևս մեկ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԳԵՐԲԱՅ է, որը ենթադրում է, որ ինչ որ մեկը հատուկ խնամքով ծալել էր այդ շորը: Ըստ երևույթին Հովհաննեսի ուշադրությունը հենց դա գրավեց, որը և ստիպեց նրան հավատալ կատարվածին (հ. 8):

20:8 «տեսաւ եւ հաւատաց» Հովհաննեսը տեսավ ֆիզիկական ապացույցը և հավատաց, որ Հիսուսը կենդանի էր: Գուցե՞ ոչ (հմմտ. հհ. 11 և 19): Հարության հավատք դառնում է կարևոր աստվածաբանական թեմա

1. Հռոմեացի 10:9-13
2. I Կորնթացիներ 15

I Կորնթացիներ 15:12-19 ամփոփում է այն բոլոր հետևանքները, թե ինչ կլինեն եթե Հիսուսը հարություն առած չլիներ: Հարությունը դարձավ վաղ առաքյալների քարոզների կենտրոնական ճշմարտությունը Գործքում, որը կոչվում *kerygma*: Տես Հատուկ Թեմա 5:39.

20:9 «տակալին չգիտեին գիրքը» Սա հեղինակի մեկ ուրիշ խմբագրական մեկնաբանությունն է: Սա ակնարկ է Սաղ. 16:10-ից, որը Պետրոսը մեջբերում է Պենտեկոստեի օրը Գործք 2:27: Ինչևէ, այս բառերը կարող են նաև վերաբերվել Ես. 53:10-12 կամ Ովս. 6:2: Սենեղիոնը հասկացավ Հիսուսի կանխատեսումը Իր հարության մասին (հմմտ. Մաթ. 27:62-66), իսկ աշակերտները՝ ոչ: Ինչպիսի հեզմանք:

Աստվածաբանական տեսանկյունից այս համարը կարող է հենակետ ծառայել այն ճշմարտության համար, որ Սուրբ Հոգին այդ պահին դեռ չէր իջել աշակերտների վրա ամբողջությամբ: Սուրբ Հոգին, տրված մեկ անգամ, կօգնի հավատացյալներին հասկանալ Հիսուսի խոսքերն ու գործերը (հմմտ. 2:22; 14:26):

20:10 Սա կարող է նշանակել (1) նրանք վերադարձան Գալիլեա (հմմտ. Մաթ. 20:37; 28:7,10,16; Հովհ. 21-ում ասվում է, որ նրանք նորից ձկնորսությամբ էին զբաղված Գալիլեա ծովում) կամ (2) նրանք վերադարձան իրենց տները Երուսաղեմում: Քանի որ հետո հանդիպումներ եղան վերնատանը, ավելի շատ հավանականությունը #2 տարբերակն է:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 20:11-18
¹¹Բայց Մարիամը գերեզմանի մօտ կանգնած էր դուրսը եւ լաց էր լինում. եւ լաց լինելիս ծռուեց մտիկ մտաւ գերեզմանի մէջ. ¹²Եւ տեսնում է երկու հրեշտակ՝ սպիտակ հանդերձներով նստած, մէկը գլխի կողմին, եւ միւսը ոտների կողմին, որտեղ որ Յիսուսի մարմինը դրուած էր: ¹³Եւ նորանք ասեցին նորան. Ով կին, ի՞նչու ես լաց լինում. նորանց ասեց. Նորա համար որ իմ Տիրոջը վեր առան, եւ չգիտեմ՝ թէ ուր դրին նորան: ¹⁴Եւ երբոր սա ասեց, դարձաւ իր յետին կողմը, եւ Յիսուսին տեսաւ՝ կանգնած. եւ չը գիտէր թէ Յիսուսն է: ¹⁵Յիսուսը նորան ասեց. Կին, ի՞նչու ես լաց լինում, ու՞մ ես որոնում. նա էլ կարծելով թէ պարտիզպանն է, ասեց նորան. Տէր, եթէ դու վեր առար նորան, ասիր ինձ՝ ուր ես դրել նորան, որ ես վեր առնեմ նորան: ¹⁶Յիսուսը նորան ասեց. Մարիամ. եւ նա դարձաւ եւ ասեց նորան. Ռաբբունի, որ կթարգմանուի Վարդապետ: ¹⁷Յիսուսը նորան ասեց. Մի դպչիր ինձ, որովհետեւ դեռ չեմ վեր ելել իմ Հօր մօտ. բայց դու գնա իմ եղբայրների մօտ, եւ նորանց ասիր. Ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ եւ ձեր Հօր մօտ, իմ Աստուծոյ մօտ եւ ձեր Աստուծոյ մօտ: ¹⁸Մարիամ Մագդաղեմացին գալիս է աշակերտներին պատմում, թէ նա տեսաւ Տիրոջը, եւ թէ նա այս բաներն իրան ասեց:

20:11 «լաց էր լինում» Բառացիորեն «բարձրաձայն ողբալ» (հմմտ. 11:31): Այստեղ օգտագործված բայը ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ է, որը ցույց է տալիս անցյալում կատարված շարունակվող գործողություն: Արևելքում թաղման արարողությունները իրենց բնույթով շատ էմոցիոնալ էին:

20:12 «երկու հրեշտակ» Հովհաննեսը և Դուկասը (24:23) նշում են, որ կար երկու հրեշտակ: Մաթևոսը, ով սովորաբար ամեն ինչից երկու հատ ունի (հմմտ. 8:28; 9:27; 20:30), գրում է միայն մեկ հրեշտակի մասին: Սա մեկ անբացատրելի օրինակ է Ավետարանների միջև եղած տարբերությունների հարցում:

Ավետարանները ակնատեսների պատմածներն են, որտեղ ընտրված են, վերանշակված և դասավորված որոշակի հերթականությամբ Հիսուսի խոսքերն ու գործերը ըստ իրենց(ներշնչված) աստվածաբանական նպատակներով և թիրախային խմբերով: Ժամանակակից ընթերցողները հաճախ այսպիսի հարցեր են տալիս (1) որ Ավետարանն է պատմականորեն ճշգրիտ կամ (2) փորձում են փնտրել որևէ իրադարձության ավելի շատ պատմական մանրամասնություններ, քան որ արձանագրել է որևէ կոնկրետ ներշնչված Ավետարանի հեղինակ: Մեկնաբանները պարտավոր են, նախ և առաջ, ձգտել գտնելու բուն հեղինակի միտքը, որը նա արտահայտել է իր Ավետարանում: Ավետարանը հասկանալու համար մենք կարիք չունենք ավելի շատ պատմական մանրամասնությունների:

- **«սպիտակ»** Հոգևոր էակները կամ հոգևոր թագավորությունը՝ նկարագրված սպիտակ հագուստներով,
 1. Հիսուսի հագուստները՝ աշխարհայության ժամանակ – Մաթ. 17:2; Մարկ. 9:3; Դուկ. 9:29
 2. հրեշտակները՝ գերեզմանի մոտ – Մաթ. 28:3; Մարկ. 16:5; Դուկ. 24:4; John 20:12
 3. հրեշտակները՝ համբարձման ժամանակ – Գործք 1:10
 4. սուրբերը՝ փառավորված Քրիստոսի հետ – Հայտ. 3:4-5,18

5. երեցները՝ (հրեշտակները) Աստծո գահի առաջ – Հայտ. 4:4
6. մարտիրոսները՝ Աստծո գահի առաջ – Հայտ. 6:11
7. բոլոր փրկվածները – Հայտ. 7:9,13-14 (հմմտ. Գան. 12:10)
8. գորբերը՝ (հրեշտակների) երկնքում – Հայտ. 19:14
9. Հինկտակարանյան պատկեր՝ ներման հետ կապված – Սաղ. 51:7; Ես. 1:18 (խորհրդանշում է Աստծո մաքրությունը, հմմտ. Գան. 7:9)

20:14 «Եւ չը գիտէր թէ Յիսուսն է» Մարիամ Մագդաղենացին չճանաչեց Հիսուսին: Հնարավոր պատճառներն են.

1. նրա աչքերում արցունքներ կային
2. նա մթությունից դեպի լույսն էր նայում
3. Հիսուսի արտաքինը մի փոքր այլ էր (հմմտ. Մաթ. 28:17 և Գուկ. 24:16,37)

20:15 «Տէր» Սա հունարեն *kurios* տերմինն է: Այստեղ այն օգտագործված է ոչ աստվածաբանական իմաստով (հմմտ. 12:21): Այն կարող է նշանակել «պարոն», «տեր», «միստր», «ամուսին» կամ «Տէր»: Մարիամը կարծում էր թե խոսում է (1) այգեպանի կամ էլ (2) այգու տիրոջ հետ:

Բայց ծանուցումը նրա աստվածաբանական կիրառության տես 20:28-ում:

▪ **«Եթէ»** Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ընդունվում է որպես ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Նա հավատում էր, որ ինչ որ մեկը գողացել էր մարմինը:

20:16 «Մարիամ. . . Ռաբբունի» Այս երկու տերմիններն էլ արամերեն ծագում ունեն («երբայեքեն») նշանակում է «արամերեն», հմմտ.5:2; 19:13,17,20): Միանգամայն հնարավոր է, որ Հիսուսը անունը տվեց նրա կերպարին բնորոշ ձևով: Նա պետք է որ նույն կերպ վարված լիներ Էմմաուսի ճանապարհին երկու հոգու հետ աղոթք անելիս (հմմտ. Գուկ. 24:30-31): «Ռաբբունի» բառի վերջի «ի»-ն կարող է արտահայտել դիմելաձև «իմ ռաբբի», «իմ Տէր» կամ «իմ Ուսուցիչ»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՀԻՍՈՒՄԸ ՀԱՅՏՆՎԵՑ

Հիսուսն ինքն իրեն ցույց տվեց մի քանի մարդկանց՝ հստատելու Իր հարությունը, որ կասկած չլիներ.

1. կանանց գերեզմանի մոտ, Մաթ. 28:9
2. տասնմեկ աշակերտներին, Մաթ. 28:16
3. Սիմոնին, Գուկ. 24:34
4. երկու տղամարդկանց, Գուկ. 24:15
5. աշակերտներին, Գուկ. 24:36
6. Մարիամ Մագդաղենացուն, Հովհ. 20:15
7. տասը աշակերտներին, Հովհ. 20:17
8. տասնմեկ աշակերտներին, Հովհ. 20:26
9. յոթը աշակերտներին, Հովհ. 21:1
10. Կեփասին (Պետրոս), I Կոր. 15:5
11. Տասներկուսին (Առաքյալներ), I Կոր. 15:5
12. 500 եղբայրների, I Կոր. 15:6 (Մաթ. 28:16-17)
13. Հակոբին (Իր մարմնավոր եղբայր), I Կոր. 15:7
14. բոլոր առաքյալների, I Կոր. 15:7
15. Պողոսին, I Կոր. 15:8 (Գործք 9)

Պարզ է, որ սրանցից մի քանիսը կրկնվում են և նույն դեպքին են վերաբերվում: Հիսուսն ուզում էր, որ բոլորն իմանան, որ Ինքը կենդանի էր:

20:17

NASB

“Մի դպչիր Ինձ”

NKJV

“Մի փարվիր ինձ”

NRSV

“Մի կախվիր ինձանից”

TEV

“Մի կախվիր ինձանից”

KJV թարգմանության մեջ գրված է «մի կայիր/չկայնես ինձ»: Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՉԵԶՈՔ ՍԵՌ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է ԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱԾԱՆՅՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործողություն, որն արդեն գործընթացի մեջ է: Մարիամը կառչել էր Նրանից և շարունակում էր բռնած պահել: Այստեղ աստվածաբանական բացատրություն չկա կապված Հիսուսի մարմնին կայնելու մինչև համբարձվելը: Հովհաննեսի Ավետարանի 20:26-ում Հիսուսը թույլ է տալիս Թովմասին դիպչելու Իրեն, իսկ Մաթ. 28:9 Նա թույլ է տալիս կանանց բռնել Իր ոտքերից:

- **«դեռ չեմ վեր ելլել»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Հիսուսը չի համբարձվում երկինք ևս 40 օր Իր հարությունից հետո (հմմտ. Գործք 1:9):
- **«զմա իմ եղբայրների մօտ»** Հարուցյալ և փառավորյալ Տերը այս վախկոտ, փոքրասիրտ մարդկանց անվանում է «եղբայրներ» (հմմտ. Մաթ. 12:50):
- **«Ես վեր եմ ելնում»** Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ է: Իրականում սա տեղի կունենա քառասուն օր նրանց հետ լինելուց հետո (հմմտ. Գուկ. 24:50-52; Գործք 1:2-3): Հովհաննեսը շարունակաբար օգտագործում է ուղղահայաց դուալիզմ «վերև/վերևում» և «ներքև/ներքևում»: Հիսուսը եկել է Հոր մոտից (նախագոյություն) և Նա վերադառնում է Հոր մոտ(փառավորում):
- **«Իմ Հօր մօտ եւ ձեր Հօր մօտ»** Ինչպիսի հիանալի արտահայտություն: Ինչևէ, այստեղ պետք է նշել, որ սա չի հավասարեցնում հավատացյալների որդի լինելը Հիսուսի Որդի լինելու հետ: Նա Հոր Աստծո միակ Որդին է Իր տեսակի մեջ (3:16), ամբողջությամբ Աստված և ամբողջությամբ մարդ: Հավատացյալները դառնում են Աստծո ընտանիքի անդամ Նրա միջոցով: Նա թե Տեր է, թե Փրկիչ և թե եղբայր:

20:18 Մարիամը նույնպես ակնանատես է:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 20:19-23
¹⁹Եւ նոյն օրը, միաշաբաթի իրիկունը երբոր դռները փակուած էին, այնտեղ ուր որ աշակերտները ժողովուած էին Հրէաների վախիցը, Յիսուսը եկաւ եւ նորանց մէջ կանգնեց, եւ նորանց ասեց. Խաղաղութիւն ձեզ: ²⁰Եւ սա ասելով իր ձեռքերը եւ իր կողը ցոյց տուաւ նորանց. եւ աշակերտներն ուրախացան՝ երբոր Տիրոջը տեսան: ²¹Յիսուսը դարձեալ ասեց նորանց. Խաղաղութիւն ձեզ, ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, եւ էլ ձեզ եմ ուղարկում: ²²Եւ սա ասելով փչեց նորանց վերայ եւ ասեց. Առէք Սուրբ Հոգին: ²³Որոնց մեղքը որ թողէ՛ք թողուած կլինի նորանց. որոնց որ պահէ՛ք՝ պահուած կլինի:

20:19 «Եւ նոյն օրը ... իրիկունը» Հրեական ժամանակը սկսում և վերջանում է վերջալույսին կամ մթնշաղին (հմմտ. Ծննդ. 1:5), որը տվյալ դեպքում համապատասխանում է երեկոյան ժամը 6-ին, կիրակի էր:

- **«միաշաբաթի»** Կիրակին շաբաթվա առաջին աշխատանքային օրն էր, ինչպես մեր երկուշաբթին: Այս օրը դարձավ եկեղեցու համար պաշտամունքի օր ի հիշատակ Հիսուսի հարության: Նա Ինքը օրինակ թողեց՝ հայտնվելով Վերնատանը երեք կիրակի երեկոները շարունակ (հմմտ. հհ. 19,26; Գուկ. 24:36; Գործք 20:7; I Կոր. 16:2):
 Առաջին սերնդի հավատացյալները շարունակում էին հավաքվել շաբաթ օրերը տեղական ժողովարաններում իսկ տաճարում՝ տոն օրերին: Բայց և այնպես ռաբբիները սահմանել էին «անեծք», որը ժողովարանի անդամներից պահանջում էր մերժել Հիսուսին որպես Մեսիա: Այդ պատճառով էլ քրիստոնյաները դադարեցին հաճախել շաբաթօրյա հավաքություններին, բայց շարունակում էին հավաքվել ուրիշ հավատացյալների հետ կիրակի օրերին՝ ի հիշատակ Հիսուսի հարության:
- **«դռները փակուած էին»** Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԵՐԲԱՅ Է: ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՎ օգտագործված գոյականը ենթադրում է, որ փակված էին թե վերևի և թե ներքևի դռները: Այսպիսի մանրամասնությունը (1) հատուկ շեշտադրում է Հիսուսի արտաքինին, կամ էլ (2) ցույց է տալիս աշակերտների վախը ձեռքակալվելուց:

▪ **«աշակերտները»** Թովմասը ներկա չէր: Բացի տասանմեկ առաքյալներից սենյակում կային ուրիշ աշակերտներ (հմմտ. Բուկ. 24:33):

▪ **«Խաղաղություն ձեռք»** Սա ցույց է տալիս նրանց զարմանքն ու հնարավոր է նաև վախը: Հիսուսը խոստացել էր նրանց տալ խաղաղություն (հմմտ. 14:27; 16:33): Հավանական է այս արտահայտությունը արտացոլում է եբրայերեն ողջույնի խոսքը *shalom*: Հիսուսը կրկնում է այն երեք անգամ (հհ. 19,21,26):

20:20 «իր ձեռքերը եւ իր կողը ցոյց տուա նորանց» Հովհաննեսը, անկասկած, ամենաշատն է խոսում Հիսուսի խոցված կողի մասին քան մյուս Ավետարանները (հմմտ. 19:37; 20:25): Նրա ոտքերի մասին ոչ մի տեղ չի հիշատակվում, բացի Բուկ. 24:39 և Սաղ. 22:16: Հիսուսի փառավոր մարմինը կրում է Իր խաչելության նշանները (հմմտ. 1 Կոր. 1:23; Գաղ. 3:1):

▪ **«Տիրոջը»** Այստեղ այս տիտղոսը օգտագործված է աստվածաբանական իմաստով, որը կապված է Հին Կտակարանի ԵՀՈՎԱՅԻ հետ (հմմտ. Ելից 3:14): Կիրառելով Հայր Աստծո հինկտակարանյան տիտղոսը Հիսուսի համար միջոց էր Նոր Կտակարանի հեղինակաների համար պնդելու Հիսուսի ամբողջական Աստվածությունը: Տես Հատուկ Թեմա 3:19.

20:21 «ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց» Այստեղ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է (հմմտ. 17:18): Եկեղեցին ունի Աստվածային հրահանգ ու պատվեր (հմմտ. Մաթ. 28:18-20; Բուկ. 24:47; Գործք 1:8): Հավատացյալները նաև ուղարկվել են ինքնագոհաբերվող առաքելությամբ (հմմտ. II Կոր. 5:14-15; I Հովհ. 3:16):

Հիսուսն օգտագործում է երկու տարբեր տերմիններ «ուղարկել» բայի համար: Հովհաննեսի Ավետարանում դրանք հոմանիշներ են: Սա պարզ երևում է գլուխ 8-ում, որտեղ «*perempō*» բայը օգտագործվում է, երբ խոսքը գնում է այն մասին, որ Հայրն ուղարկեց Հիսուսին (հմմտ. 8:16,18,26,29), բայց «*apostellō*» բայը օգտագործված է 8:42: Նմանատիպ բան հանդիպում է և 5,6 գլուխներում: Տես Հատուկ Թեմա «Ուղարկել (*Apostellō*)» 5:24.

20:22 «փչեց նորանց վերայ» Սա բառախաղ է «փչեց» տերմինի շուրջ: Եբրայերեն *ruach* և հունարեն *pneuma* կարող են նշանակել «շնչել», «քամի», կամ «հոգի»: Այս նույն ԲԱՅԸ օգտագործված էր Սեպտուագիդում Հին Կտակարանում՝ Աստծո աշխարհը արարելու գործը նկարագրելու համար Ծննդ. 2:7 և Իսրայելի վերածնունդը Եզ. 37:5,9: «Նրանց» ԳԵՐԱՆՈՒՆԸ վերաբերվում է ավելի լայն խմբի մարդկանց, քան միայն առաքյալներին (հմմտ. Բուկ. 24:33):

▪ **«Առեք Սուրբ Հոգին»** Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: Պարզ չէ, թե սա ինչ կապ ունի Սուրբ Հոգու գալստյան հետ Պենտեկոստեի օրը: Հիսուսն իրականացրեց այն ամենը ինչ խոստացել էր Իր աշակերտներին՝ Իր առաջին հայտնվելով: Սրանով Հիսուսը սպառազինեց նրանց նոր ծառայության համար, ինչպես Հոգին սպառազինեց Իրեն Իր մկրտության ժամանակ:

Վաղ եկեղեցում այս համարը ակտիվ օգտագործվում էր որպես դիմադրություն այն հարցի շուրջ, թե Սուրբ Հոգին Հորից եկավ թե՞ Հորից ու Որդուց: Իրականում Երրորդության երեք անձերն էլ ներգրավված էին փրկության բոլոր գործողություններում:

Ջորջ Լեդն իր « Նոր Կտակարանի Աստվածաբանություն» գրքում [*A Theology of the New Testament*, George Ladd] ամփոփում է այս հատվածի հնարավոր մեկնաբանությունները.

«Այս հատվածը դժվարություններ է առաջացնում Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգու գալստյան լույսի ներքո, որը կարող է լուծվել երեք ձևերից մեկով: Կամ Հովհաննեսը չգիտեր Պենտեկոստեի մասին և նա մատուցում է այս պատմությունն այնպես, որ այն, ըստ էության, դառնում է Հովհաննեսյան Պենտեկոստե, կամ իրականում Սուրբ Հոգին աշակերտներին երկու անգամ է տրվել, կամ էլ աշակերտների վրա Հիսուսի փչելը ինչ որ այլաբանական գործողություն էր (առակ) կապված Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգու գալստյան խոստման հետ» (էջ 289):

20:23 «Որոնց մեղքը որ թողեք» Այստեղ երկու ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է *an* կապով, որը հաճախ օգտագործվում է ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, և ոչ թե *ean*: Այս խառը պայմանը ավելի մեծացնում է պատահականությունը, որը կապված է թե նրանց ովքեր բաժնեկցում են Ավետարանի լուրը և թե նրանք,

ովքեր արձագանքում են հավատքով: Ավետարան իմացողը որոշում է կայացնում բաժնեկցել այն, իսկ լսողը որոշում է ընդունել դա: Երկուսն էլ անհրաժեշտ պայման են: Այս համարը ոչ մի իրավունք չի տալիս քահանայությանը իրականացնելու բռնապետություն և բռնակալություն, այլ հիանալի կենսատու ուժ, որով լցնում է հավատացյալներին՝ Բարի Լուրը ավետարանելու համար: Այս ուժն ու իշխանությունը ի հայտ եկավ միսիոներական ծառայության մեջ յոթանասուն աշակերտների կողմից Հիսուսի կենդանության օրոք:

- **«թողութ կլինի նորանց»** Այս քերականական կառուցվածքը ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ- ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է: ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ-Ը ենթադրում է Աստծո ներումը, որը լիովին հասանելի է Ավետարանի հռչակման միջոցով: Հավատացյալներն ունեն արքայության բանալիները (հմմտ. Մաթ. 16:19) եթե միայն նրանք իրապես օգտվեն դրանից: Այս խոստումը եկեղեցու համար է և ոչ թե անհատ հավատացյալի: Աստվածաբանական առումով սա նման է «կապել/արձակել» խոստմանը, որի մասին խոսվում է Մաթ. 18:18:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 20:24-25
²⁴Բայց Թովմասը՝ տասներկուսից մեկը՝ Երկուորեակ կոչուածը, նորանց հետ չէր, երբոր Յիսուսը եկաւ:
²⁵Միս աշակերտներն ասում էին նորան, թէ Տիրոջը տեսանք. իսկ նա ասեց նորանց, Եթէ նորա ձեռքերումն բեռերի նշանը չտեսնեմ, եւ իմ մատը չդնեմ բեռերի տեղը, եւ իմ ձեռքը չկոխեմ նորա կողը, չեմ հաւատայ:

20:24 «Բայց Թովմասը՝ տասներկուսից մեկը՝ Երկուորեակ կոչուածը, նորանց հետ չէր, երբոր Յիսուսը եկաւ» Երկուորեակ բառը հունարեն «*Didymus*» (հմմտ. 11:16): Մարդիկ հաճախ օգտագործել են այս հատվածը՝ Թովմասին սկեպտիկ, կասկածամիտ, երկմտող անվանելու համար, բայց չմոռանանք թե ինչ է ասվում 11:16-ում: Հովհաննեսի Ավետարանում Թովմասը ավելի հաճախ է հիշատակվում քան մյուս ավետարաններում (հմմտ. 11:16; 14:5; 20:24,26,27,28,29; 21:21):

20:25 «Եթէ. . . չեմ հաւատայ» «Մինչև ես» մեր թարգմանության մեջ «Եթէ» ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է ուժեղ ԵՐԿԱԿԻ ԺԽՏՈՒՄՈՎ, «չեմ հաւատայ» առանց տեսնելու և դիպչելու: Հիսուսը այս խնդրանքին հասկանալով է մոտենում: Հիսուսը ձևավորում էր Իր աշակերտների հավատքը (1) Իր հրաշքների և (2) Իր կանխագուշակումների միջոցով: Հիսուսի պատգամը այնչափ արմատապես նոր էր, որ Իր աշակերտներին ժամանակ տվեց՝ հասկանալու և յուրացնելու ավետարանական պնդումներն ու ենթադրությունները:

- **«նշանը»** Տես Հատուկ Թեմա ստորև

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԿԵՐՊԱՐ/ՕՐԻՆԱԿ, ՉԵՎ (TUPOS)
 Տվյալ դեպքում խնդիրը բառի թարգմանությունն է, քանի որ tupos բառը ունի բավականին շատ իմաստներ:

1. Մուլթոն և Միլլիգան «Հունարեն Նոր Կտակարանի բառարան» [Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*], էջ 645:
 - ա. օրինակ, մոդել
 - բ. պլան
 - գ. ձև, ոճ, գրելաձև
 - դ. հրամանագիր, որոշում, վճիռ կամ հրաման
 - ե. դատավճիռ կամ որոշում
 - զ. մարդու մարմնի մակերևույթ, որը օգտագործվում է բժիշկ չաստծուն զոհ մատուցելու ծեսի համար
 - է. բայ, որն օգտագործվում է որոշակի օրենքի որևէ կետի իմաստն ուժեղացնելու համար
2. Լաուր և Նիդա «Հունարեն-Անգլերեն բառարան» [Louw and Nida, *Greek-English Lexicon*], հատ. 2, էջ 249:
 - ա. սայի (հմմտ. Հովհ. 20:25)
 - բ. պատկեր, նմանություն (հմմտ. Գործք 7:43)
 - գ. մոդել, օրինակ, մակետ (հմմտ. Եբր. 8:5)

- դ. օրինակ (հմմտ. I Կոր. 10:6; Փիլ. 3:17)
 - ե. նախատիպ (հմմտ. Հն. 5:14)
 - զ. տեսակ, ցեղ, կարգ (հմմտ. Գործք 23:25)
 - է. բովանդակություն, պարունակություն (հմմտ. Գործք 23:25)
3. Հարովրդ Կ. Մոուլթոն «Հունարեն լեզվի վերլուծական բառարան» (վերահրատարակված) [Harold K. Moulton, The Analytical Greek Lexicon Revised], էջ 411
- ա. փշում, տպավորություն, նշան (հմմտ. Հովհ. 20:25)
 - բ. ուրվագծում, նկարագրություն
 - գ. պատկեր, նմանություն (հմմտ. Գործք 7:43)
 - դ. ֆորմուլա, պլան, գծագիր, սխեմա (հմմտ. Հն. 6:17)
 - ե. ձև, իմաստ, բովանդակություն (հմմտ. Գործք 23:25)
 - զ. կազմվածք, պատկեր, նմանություն, պատճեն (հմմտ. I Կոր. 10:6)
 - է. ակնկալվող կերպար, պատկեր, տեսակ, տիպ (հմմտ. Հն. 5:14; I Կոր. 10:11)
 - ը. մոդել, օրինակ, նմուշ (հմմտ. Գործք 7:44; Եբր. 8:5)
 - թ. բարոյական օրինակ (հմմտ. Փիլ. 3:17; I Թեա. 1:7; II Թեա. 3:9; I Տիմ. 4:12; I Պետ. 5:3)

Համաձայն կոնտեքստի կարելի է ենթադրել, որ (երեքից) առաջին տարբերակը իմաստով ամենալավն է համընկնում: Ավետարանն իր մեջ ունի թե վարդապետություն և թե գործնական ապրելակերպի ուսմունքներ: Քրիստոսով փրկության ճրի պարզևը հավատացյալից պահանջում է քրիստոսանման կյանք:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 20:26-29

²⁶Եւ ուք օրից յետոյ աշակերտները դարձեալ ներսումն էին, եւ Թովմասն էլ նորանց հետ. Յիսուսը՝ դռները փակ լինելով՝ եկաւ եւ նորանց միջումը կանգնեց եւ ասեց. Խաղաղութիւն ձեզ: ²⁷Յետոյ Թովմասին ասեց. Բեր քո մատը այստեղ, եւ տես իմ ձեռքերը, եւ քո ձեռքը բեր եւ իմ կողը կոխիր, եւ մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ: ²⁸Եւ Թովմասը պատասխանեց եւ ասեց նորան. Ով իմ Տէրը, եւ ով իմ Աստուածը: ²⁹Յիսուսը նորան ասեց. Որովհետեւ տեսար ինձ՝ հաւատացիր. երանի նորանց, որ չեն տեսել եւ հաւատում են:

20:26 «ուք օրից յետոյ» Սա արդեն հաջորդ կիրակիի երեկոն էր: Հիսուսը հայտնվեց աշակերտներին վերնատանը (հնարավոր է Հովհաննես Մարկոսի տանը) երեք Կիրակիներ շարունակ և այդ կերպ նախադեպ ստեղծեց քրիստոնյաների կիրակի պաշտամունքի համար: Տես ծանուցում հ. 19.

20:27 «եւ մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ ՉԵԶՈՔ ՍԵՌՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ Է ԺԽՏԱԿԱՆ ՆԱԽԱԾԱՆՅՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործողություն, որն արդեն գործընթացի մեջ է: Բոլոր հավատացյալները իրենցից ներկայացնում են տարօրինակ խառնուրդ կասկածի և հավատքի:

20:28 Աստվածաբանական իմաստով Թովմասի խոստովանությունը կապված է Հիսուսի խոսքերի հետ հ.17-ում: Թովմասի խոստովանությունը հնարավոր է ունեցել է հինկտակարանյան կիրառություն, և որտեղ որ հայտնվում էր ԵՀՈՎԱ *Elohim* անունը միասին (օր. Ծննդ. 2:4), անունը թարգմանվում է «Տեր Աստված»: Հիսուսն ամբողջությամբ ընդունում է Իր հասցեին ուղված Իր Աստվածության այս անսովոր պնդումը: Հովհաննեսի Ավետարանում սկսած 1գլուխ, 1 հ-ից, պնդում է որ Հիսուս Նազովրեցին Աստված է:

Հովհաննեսի Ավետարանում Հիսուսն Ինքն է մի քանի անգամ հայտնում Իր Աստվածության մասին (հմմտ. 8:58; 10:30; 14:9; 20:28) և հեղինակն էլ պնդում է Նրա Աստվածությունը 1:1,14-18; 5:18 համարներում: Ուրիշ աստվածաշնչյան հեղինակներ նույնպես պարզ հռչակում են որ Հիսուսն Աստված է (հմմտ. Գործք 20:28; Հն. 9:5; Փիլ. 2:6-7; Կող. 1:15-17; II Թեա. 1:12; Տիտոս 2:13; Եբր. 1:8; II Պետ. 1:1,11; I Հովհ. 5:20):

20:29 Այս համարի առաջին նախադասությունը կարող է լինել թե պնդում և թե հարց, որը ակնկալում է «այո» պատասխան: Քերականական կառուցվածքը երկիմաստ է: Սա նման է 17:20-ի օրինությանը (հմմտ. I Պետ. 1:8):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 20:30-31

³⁰Յիսուսը ուրիշ էլ շատ նշաններ արաւ իր աշակերտների առաջին, որ չեն գրուած այս գրքումը: ³¹Բայց տրանք գրուեցան՝ որ հաւատաք, թէ Յիսուսն է Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին. եւ որ հաւատալով կեանք ունենաք նորա անունովը:

20:30 30-31 համարներում հստակ երևում է Ավետարանի թեման ու գրվելու նպատակը: Այն ավետարանչական տրակտատ է: Ավետարանի հեղինակները, ներշնչանքի ներքո, ունեին իրավունք և աստվածատուր կարողություն ընտրելու, դասավորելու, մշակելու և ամփոփելու Հիսուսի գործերն ու խոսքերը, որպեսզի հասկանալի լինեի որոշակի ընտրված լսարանին՝ հրեաներին, հռոմեացիներին և հեթանոսներին, Հիսուսի մասին մեծամեծ ճշմարտությունները: Նոր Կտակարանը քրիստոնեական Թալմուդը չէ:

Կարլ Ֆ. Հ. Հենրին H. Henry, իր բացման հոդվածում «Աստվածաշնչի հեղինակությունն ու ներշնչվածությունը» «Աստվածաշնչյան մեկնաբանություն մեկնիչների համար» [Carl F. H. Henry, “The Authority and Inspiration of the Bible”, The Expositor’s Bible Commentary], հատոր 1, ասում է.

«Աստվածաշունչը նպատակ չունի ներկայացնել իրադարձությունների ամբողջ ժամանակագրությունը, լինի դա արարչագործության պատմությունը, փրկության պատմությունը կամ էլ թե մարմնավորման պատմությունը: Բայց անկասկած աստվածաշնչյան պատմությունների նպատակն է մարդուն տալ այն ամենը ինչ անհրաժեշտ և բավարար է իր փրկության համար՝ իր Արարչի քավության և հնազանդության ծառայության շնորհիվ: Եվ չնայած երբեմն Աստվածաշնչի հեղինակները դիտարկում են Աստծո փրկության կոնկրետ մեկ գործողություն տարբեր տեսանկյուններից և տարբեր նպատակների համար, այն ինչ նրանք պատմում են մեզ վստահելի են, հուսալի և աղեկվատ: Մաթևոսի համար Հիսուսի ծառայության ժամանակագրությունը երկրորդական է համեմատած թեմատիկ սիստեմատիկության, որը օգտակար է սովորեցնելու համար: Դուկասը Մարկոսից շատ նյութեր չի ընդգրկում, որպեսզի իր հերթականությամբ գրված պատմությունը հիմք դառնա կատեխիզիսի՝ առաքյալների վարդապետության (հմմտ. 1:4): Հովհաննեսը բացահայտ մեկնաբանում է ընտրողականության սկզբունքը, որի հիմքում ընկած է չորրորդ Ավետարանը (20:30,31)» (էջ 27-28):

- **«ուրիշ էլ շատ նշաններ արաւ իր աշակերտների առաջին»** Այս նշանները կարելի է հասկանալ մի քանի տարբեր ձևերով.
 1. նշանները, որ Նա իրապես կենդանի էր
 - ա. նրանց կայնելը Իր վերքերին
 - բ. Նրա ուտելը իրենց հետ (հմմտ. Դուկ. 24:43)
 2. հատուկ ոչ արձանագրված նշաններ արվեցին վերնատանը նրանց ներկայությամբ
 3. վերաբերվում է Նրա կյանքի գործերին (կենտրոնանալով անցյալի վրա) պատրաստելով նրանց Ավետարանը գրելու համար (հմմտ. Դուկ. 24:46-48)

20:31

**NASB, NKJV, TEV, NJB
NRSV**

**“որ դուք հավատաք”
“որ դուք հավատքի գաք”**

Մի քանի վաղ հունարեն ձեռագրերում, P⁶⁶, Ն^{*}, B, և հունարեն տեքստերում, որոնցից օգտվում էր Օրիգենը, օգտագործված է ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎ ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, որը ենթադրում է, որ Հովհաննեսը գրեց սա հավատացյալներին քաջալերելու համար՝ հավատքի մեջ հաստատ մնալու համար:

Ուրիշ հունարեն ձեռագրերում (Ն², A, C, D, L, N, W) ԱՕՐԻՍՏ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎ ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ է, որը ենթադրում է, որ Հովհաննեսը գրում էր անհավատներին: Այս համարում ձևավորված է Ավետարանը գրվելու նպատակը: Հովհաննեսը, ինչպես մյուս ավետարանիչները, ավետարանչական տրակտատ է:

- **«Քրիստոսը»** Սա եբրայերեն «Մեսիա» տերմինի հունարեն թարգմանությունն է, որը բառացիորեն նշանակում է «Օծյալ»: Մեսիան Դավիթի հինկտակարանյան սերունդն էր, և մարգարեության համաձայն Նա պետք է արդարություն բերեր այս նոր դարաշրջանի մեջ: Հիսուս Նազովրեցին (հմմտ. 1:45) հրեական Մեսիան է (հմմտ. 11:27):

Հիսուսի անվան հետ կապված այս տիտղոսը օգտագործված է Ավետարանի սկզբում (հմմտ. 1:41): Միայն թե հեթանոսների շրջապատում «Մեսիա» տիտղոսի փոխարեն օգտագործվում էր «Տեր» տիտղոսը (հմմտ. Հռ. 10:9-13; Փիլ. 2:9-11):

«Մեսիա» գաղափարը ուներ վախճանաբանական ենթատեքստ(1) փարիսեցիների համար այն ուներ քաղաքական, ազգային ակնկալիքներ, իսկ (2) հրեական ապոկալիպտիկ գրականության մեջ այն ուներ տիեզերական ակնկալիքներ:

▪ **«Աստուծոյ Որդին»** Այս տիտղոսը ժլատորեն է օգտագործված Սինոպտիկ Ավետարաններում (հավանական է պատճառը դրա ոչ ճիշտ ընկալումն էր հեթանոսների կողմից), Բայց Հովհաննեսի Ավետարանի սկզբում հաճախ է հանդիպում (հմմտ. 1:14,34,49): Սա միջոց էր, որով Հովհաննեսն ընդգծում էր Հիսուսի և Հոր միջև եղած փոխհարաբերության յուրահատկությունը (օգտագործվում է *huios*): Հովհաննեսն օգտագործում է այս ընտանեկան փոխաբերությունները մի քանի ձևերով,

1. որպես տիտղոս
2. կապված «միածին» հասկացողության հետ (*monogenēs*, հմմտ. 1:18; 3:16; I Հովհ. 4:9)
3. կապված «Հայր» տիտղոսի օգտագործման հետ (հմմտ. 20:17)

Տես Հատուկ Թեմա: Աստծո Որդի I Հովհաննես 3:8.

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ո՞վ եկավ գերեզման: Ե՞րբ: Ինչու՞:
2. Ինչու՞ աշակերտները չէին սպասում հարություն: Թե՞ ինչ որ մեկը սպասում էր:
3. Ինչու՞ Մարիամը չճանաչեց Հիսուսին:
4. Ինչու՞ Հիսուսն ասաց Մարիամին չկանել Իրեն:
5. Բացատրեք 22-23 համարները ձեր բառերով:
6. Արդարացի՞ է Թովմասին անվանել կասկածամիտ:
7. Սահմանեք «հավատալ» բառը այնպես ինչպես դա հասկանում էին Հիսուսի օրերում, և ոչ թե մեր:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԼՈՒԽ 21

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հիսուսը հայտնվում է յոթ աշակերտներին	Նախաճաշ ծովի մոտ	Վերջաբան	Հիսուսը հայտնվում է յոթ աշակերտներին	Հայտնվելը Տիբերիայի ծովի մոտ
21:1-14	21:1-14	21:1-3 21:4-8 21:9-14	21:1-3a 21:3b-5a 21:5բ 21:6 21:7-10 21:11-14	21:1-3 21:4-8 21:9-14
Հիսուսը և Պետրոսը	Հիսուսը վերականգնում է Պետրոսին	21:15-19	Հիսուսը և Պետրոսը	21:15-19
21:15-19	21:15-19	21:15-19	21:15ա 21:15բ 21:15գ-16ա 21:16բ 21:16գ-17ա 21:17բ 21:17գ-19	21:15-19
Հիսուսը և սիրելի աշակերտը	Սիրելի աշակերտը և նրա գիրքը	21:20-23	Հիսուսը և մյուս աշակերտը	21:20-23
21:20-23	21:20-25	21:20-23	21:20-21 21:22 21:23	21:20-23 Երկրորդ եզրակացությունը
21:24		21:24-25	21:24 Ամփոփում	21:24
21:25			21:25	21:25

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես

Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ և ՊԱՏՄԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏԸ 1-25 հհ.

- Ա. Շատ քննարկումներ են եղել այն մասին, որ գլուխ 21-ը հետագայում է ավելացվել, իսկ Ավետարանը ավարտվում է 20:31-ով: Չնայած չկա մի հունարեն ձեռագիր, որի մեջ այս գլուխը չիմի:
- Բ. Հաճախ կարծիք է հնչում, որ համար 25-ը ավելի ուշ է ավելացվել, որովհետև որոշ ձեռագրերում Հովհ. 7:53 - 8:11-ը դրված է համար 24-ից հետո: Նաև, հին սինայական ձեռագրում արտագրողը սկզբում բաց է թողել համար 25-ը, իսկ հետո նորից ձեռագրում դնելու համար ստիպված է եղել ջնջել դեկորատիվ վերջնագրի մի մասը:
- Գ. Գլուխ 21, չնայած այն չի հանդիսանում Ավետարանի անբաժանելի մասը, անկասկած առաքյալի ձեռքով է գրված: Սա պատասխանում է վաղ եկեղեցու երկու հարցերին:
1. Պետրոսը վերականգնվե՞ց իր դիրքում:
 2. Ինչպե՞ս վերաբերվել Հովհաննես առաքյալի երկարակեցության լեգենդին:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 21:1-3

¹Սորանից յետոյ Յիսուսը դարձեալ իր անձը յայտնեց իր աշակերտներին Տիբերեայ ծովի եզրին մօտ. եւ այսպէս յայտնեց: ²Միասին էին Միմօն Պետրոսը, եւ Երկուորեակ անուանուած Թովմասը, եւ Նաքանայէլը՝ որ Գալիլեայի Կանայիցն է, եւ Չերեղիայի որդիքը, եւ նորա աշակերտներիցն ուրիշ երկուս էլ: ³Միմօն Պետրոսը նորանց ասեց. Ես գնում եմ ձուկ բռնելու. նորան ասեցին. Մենք էլ գանք քեզ հետ. գնացին եւ շուտով մտան նաւը, եւ այն գիշերը ոչինչ չբռնեցին:

21:1 «Տիբերեայ ծովի» Տիբերիա քաղաքը Գալիլեայի հռոմեական վարչական կենտրոնն էր: Տիբերիայի ծովը հայտնի է նաև որպես «Գալիլեայի ծով» (հմմտ. 6:1) կամ «Գեներեսարեթի լիճ» (հմմտ. Մաթ. 14:34; Մարկ. 6:35; Դուկ. 5:1) իսկ Հին Կտակարանում «Բենեերեթի ծով» (հմմտ. Թվ. 34:11; 2 Օրին. 3:17; Հեսու 11:2; 12:3; 13:27; 19:35; 3 Թագ. 15:20):

▪ «**իր անձը այսպէս յայտնեց**» Այս ԲԱՅԸ ունի լրացուցիչ իմաստ, որը նշանակում է «ցույց տալ ամբողջությամբ կամ հստակ ու պարզ» (հմմտ. 1:31; 2:11; 7:4; 9:3; I Հովհ. 1:2; 2:28; 3:2; 4:9): Մաթևոսի Ավետարանում այդ հանդիպումը տեղի ունեցավ լեռան վրա (հմմտ. 16:32; 28:7,10,16), հենց այդտեղ Նա տվեց «Մեծ Պատվիրանը»: Հովհաննեսի Ավետարանում Հիսուսն Իր անձը հայտնեց Տիբերիայի ծովի մոտ: Այս պատմության մեջ Հիսուսը պատասխանում է այն երկու հարցերին, որոնք մտահոգում էին վաղ եկեղեցուն,

1. Պետրոսը վերականգնվե՞ց իր դիրքում:
2. Ինչպե՞ս վերաբերվել Հովհաննես առաքյալի երկարակեցության լեգենդին:

21:2 «**Երկուորեակ անուանուած Թովմասը**» Տես Հատուկ Թեմա «Առաքյալների անունները» 1:45 Ըստ երևույթին տասնմեկից յոթը գնացին ձկնորսության:

▪ **«Ձերեղիայի որդիքը»** Խոսքը Հակոբոսի (Հակոբ) և Հովհաննեսի մասին է (Հոհանան, հմմտ. Մաթ. 4:21): Ոչ Հակոբոսը և ոչ էլ Հովհաննեսը անունով չեն հիշատակվում Հովհաննեսի Ավետարանում:

21:3 «Միմօն Պետրոսը նորանց ասեց. Ես գնում եմ ձուկ բռնելու» Այստեղ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎ է: Կան մի քանի վարկածներ այս ձկնորսության հետ կապված.

1. հնարավորություն էր հանգստանալու և ժամանակ անցկացնելու, մինչև Հիսուսի հետ հանդիպելը (հմմտ. Մաթ. 26:32; 28:7,10)
 2. հնարավորություն էր գումար վաստակելու համար
 3. հնարավորություն էր Պետրոսի համար նորից իր գործին վերադառնալ
- Այս գլուխը շատ նման է Բուկաս 5-ին:

▪ **«այն գիշերը ոչինչ չբռնեցին»** Ուշադրություն դարձրեք, որ այս մարդիկ, ովքեր ունակ էին բժշկություն անելու և դեր հանելու, ոչ բոլոր դեպքերում և ոչ բոլոր նպատակների համար էր այդ հրաշագործ գործությունը օգտագործվում: Ուրիշ ոչ մի տեղ Նոր Կտակարանում այս ԲԱՅԸ չի օգտագործվում ձուկ բռնելու համար: Սովորաբար այն օգտագործվում է մեկին ձեռքակալելու համար:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 21:4-8

⁴Երբոր արդէն առաւօտ եղաւ, Յիսուսը ծովի եզրումը կանգնած էր, սակայն աշակերտները չճանաչեցին, թէ Յիսուսն է: ⁵Իսկ Յիսուսը նորանց ասեց. Տղերք, ուտելու քան ունի՞ք. պատասխանեցին նորան, Ոչ: ⁶Նա էլ ասեց նորանց. Ուռկանը նախ աշ կողմը զցեցէք, եւ կգտնէք. նորանք էլ զցեցին, եւ՝ էլ չէին կարողանում քաշել՝ ձկների շատութեան պատճառովը: ⁷Այն աշակերտը որ Յիսուսը սիրում էր նորան՝ Պետրոսին ասեց, Տերն է նա: Միմօն Պետրոսը երբոր լսեց՝ թէ Տերն է, վերարկուն իրան վերայ առաւ, որովհետեւ մերկ էր, եւ զինքը ծովը զցեց: ⁸Իսկ միս աշակերտները եկան նստակովը. որովհետեւ ցամաքիցը հեռու չէին. այլ երկու հարիւր կանգունի չափ, եւ ուռկանը ձկներովը քաշում էին:

21:4 «սակայն աշակերտները չճանաչեցին, թէ Յիսուսն է» Գոյություն ունի մի քանի վարկած, թե ինչու աշակերտները չճանաչեցին Հիսուսին.

1. շատ մութ էր
2. Նա շատ հեռու էր նրանցից
3. նրանք շատ հոգնած էին
4. Հիսուսի արտաքինը մի քիչ ուրիշ էր (հմմտ. Հովհ. 21:12; Մաթ. 28:16-17; Բուկ. 24:13)
5. աստվածային ներգործությունը թույլ չտվեց նրանց ճանաչել Հիսուսին (հմմտ. Բուկ. 24:16)

21:5 «Տղերք» Այստեղ օգտագործված է փոխաբերական իմաստով: Նոր Կտակարանում սովորաբար օգտագործվում է երկու տերմին «փոքրիկ երեխաներ» բառակապակցության համար: *Paidion* բառը, ինչպես այս դեպքում ավելի քիչ է հանդիպում քան *teknion* բառը, որը օգտագործվում է Հովհաննեսի Ավետարանում և I Հովհաննու թղթում: *Paidion* բառը Ավետարանում հանդիպում է միայն 4:49; 16:21, և այստեղ: Թվում է, թե I Հովհաննու թղթում այս տերմինները օգտագործվում են որպես հոմանիշներ, *paidion* 2:13,18, իսկ *teknion* 2:1,12,28.

▪ **«ուտելու քան ունի՞ք»** Իրականում *prosphagion* տերմինը նշանակում է ցանկացած ուտելիք, որն օգտագործում են հացի հետ, բայց տվյալ կոնտեքստում պահանջվում է հենց «ձուկ»: Հարցն ինքնին, իր քերականական կառուցվածքով, ակնկալում է «ոչ» պատասխանը:

21:6 Այս դեպքում Հիսուսը գործում է ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ Նա առաջին անգամ կանչեց նրանց ծառայության Բուկաս 5:1-11: Ինչպես բնորոշ է այս գլխին (տես ծանուցում հ. 15) երկու տարբեր հունարեն տերմիններ են օգտագործված՝ նավակ բառի համար, *plouion* հ. 3 և 6, և *plouaron* (փոքրիկ նավակ) հ. 8: Հովհաննեսն այս գլխում մի քանի անգամ ցույց է տալիս նմանատիպ գրական տարբերություն:

21:7 «Այն աշակերտը որ Յիսուսը սիրում էր նորան» Այս բառերը վերաբերվում են Հովհաննես առաքյալին՝ Ավետարանի հեղինակին (հմմտ. 13:23; 20:2,3,8; 21:20): Ոչ մի տեղ Ավետարանում Հովհաննեսը չի նշում իր անունը:

▪

- NASB “նա հազավ իր վերարկուն (քանի որ *աշխատանքից* զրկված էր)”
- NKJV “Հազավ իր հանդերձանքը (քանի որ հանել էր այն)”
- NRSV “նա հազավ որոշ հագուստներ, քանի որ նա մերկ էր”
- TEV “իր հանդերձը փաթաթեց իր շուրջը (քանի որ նա հանել էր իր հագուստները)”
- NJB “Պետրոսը իր հանդերձը կապեց նրա վրա (քանի որ նա ոչինչ չուներ հագած)”

Առաջին դարում Պաղեստինում մարդիկ հագնում էին ազատ վերնագգեստ և կիպ ցատած և թափանցիկ ներքնագգեստ: Պետրոսը հանել էր իր վերնագգեստը (թիկնոց, խալաթ) իսկ ներքնագգեստը ծալել էր մինչև գոտկատեղը:

▪ «Տերն է նա» «*kurios*» տերմինը հունարենում ուներ մի քանի իմաստ «պարոն/միստր», «պարոն/սրբ», «տեր, պարոն/վարպետ», «տեր, սեփականատեր» կամ «պարոն, տեր/լորդ»: Որոշ կոնտեքստերում այն պարզապես քաղաքավարի դիմելաձև է, իսկ ուրիշ դեպքերում այն հաստատում է Հիսուսի աստվածությունը: Տվյալ կոնտեքստում այս ձևորոշումը ճանաչեցին ափին կանգնած փառավորյալ, հարուցյալ ՏԻՐՈՋԸ:

Այս թարգմանությունը ծագել է Հին Կտակարանում, որտեղ ԵՀՈՎԱ-ն թարգմանվում է որպես ՏԵՐ: Սա արվում էր այն պատճառով, որ հրեաները վախենում էին արտասանել Աստծո Ուխտի անունը, և դրա համար էլ նրանք դա փոխարինեցին ուրիշ եբրայերեն տերմինով, *Adonai*, որը համապատասխանում է հունարեն *kurios* բառին: Տես Հատուկ Թեմա 3:19.

«Տեր» - տիտղոս է, որը վեր է ամեն անունից Փիլ. 2:9-11: Այն մկրտության ժամանակ դավանության մասն էր կազմում վաղ եկեղեցում, «Հիսուսը Տեր է» (հմմտ. Հռ. 10:9-13):

21:8 «միս աշակերտները» Ակնհայտ է, որ ամբողջ ներքին օղակը գնացել էր ձկնորսության Պետրոսի և Հովհաննեսի հետ՝ որոշ գումար վաստակելու նպատակով (նրանք այլևս չէին կարող կախում ունենալ կանանցից, որոնք ճամփորդում էին Հիսուսի հետ):

- «**ուռկանը ձկներովը քաշում էին**» Անգամ այս ուշ ժամին Հիսուսը նորից
 1. գորացնում է նրանց հավատքը
 2. հոգում է նրանց կարիքները
 3. հաստատում է Իր հարությունն ու իշխանությունը (բնության վրա)

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 21:9-14
 Թրբոր դուրս եկան ցամաքը, տեսան ածուխի կրակ վառած, եւ նորա վերայ դրած ձուկ եւ հաց: ¹⁰Յիսուսը նորանց ասեց. Բերէք այդ ձկներից՝ որ հիմա բռնեցիք: ¹¹Միմօն Պետրոսը մաւր մտաւ եւ ուռկանը քաշեց դէպի ցամաքը՝ մեծ մեծ ձկներով լիքը՝ հարիւր յիսուններէք հատ. եւ այդքան լինելով՝ ուռկանը չպատահուեցաւ: ¹²Յիսուսը նորանց ասեց. Եկէք ճաշեցէք. եւ աշակերտներիցը ոչ ով չէր համարձակում հարցնել՝ թէ Դու ո՞վ ես. որովհետեւ գիտէին, որ Տերն է: ¹³Յիսուսն էլ եկաւ՝ եւ հացն առաւ՝ եւ նորանց տուաւ, եւ նոյնպէս էլ ձուկը: ¹⁴Սա երբորդ անգամն է որ Յիսուսը իր աշակերտներին երեսցաւ, մեռելներից յարութիւն առնելուց յետոյ:

21:9 «տեսան ածուխի կրակ վառած, եւ նորա վերայ դրած ձուկ եւ հաց» Այս վաղ առավոտյան նախաճաշի նպատակն էր եղբայրական հաղորդակցությունը և աստվածաբանական խորհրդածումը: Աստվածաբանակ իմաստն այստեղ սա է,

1. Այս հատվածում Պետրոսի ուրացումը տեղի է ունենում մեկ ուրիշ խարույկի շուրջ (հմմտ. 18:18): Այս տերմինը հանդիպում է միայն այստեղ և այնտեղ:
2. Հովհաննեսի Ավետարանը և I Հովհաննու թողթը գրվել են գնոստիցիզմի հերետիկոսության դեմ պայքարելու համար, որը մերժում էր Հիսուս Մեսիայի մարդեղության ճշմարտությունը: Հիսուսը կերավ նրանց հետ:

21:10 Այս պարբերության մեջ օգտագործված են երկու տարբեր տերմիններ «ձուկ» բառի համար, (1) հհ. 9,10, և 13 *opsarion* բառը, որը նշանակում է փոքր ձուկ և (2) հհ. 6,8 և 11 *ichthus* բառը, որը նշանակում է մեծ ձուկ: Բայց այս կոնտեքստում նրանք միմյանց փոխարինելով են հանդես գալիս:

21:11 «Քարիւր յիսուններեք» Դատելով կոնտեքստից, այս թիվը չունի ոչ մի սիմվոլիկ իմաստ, պարզապես այն իրենից ներկայացնում է ականատեսի մանրամասն վկայություն: Ինչևէ, վաղ եկեղեցին ունենալով կեղծ հակումներ, այլաբանորեն նայելու թվերին և դեպքերի մանրամասնություններին, այս համարին էլ է տվել տարբեր իմաստներ.

1. Կիրիլը հաստատում էր, որ 100-ը հեթանոսներն են, 50-ը հրեաները իսկ 3-ը Երրորդությունն է:
2. Օգոստինոսը պնդում էր, որ այս թիվը վերաբերվում է Տասը Պատվիրաններին և Հոգու յոթը պարզևներին, որը հավասար է տասնյոթի: Եթե ավելացնենք 1-17 ընկած թվերն իրար ապա կստանանք 153: Օգոստինոսն ասում էր, որ այս թիվը ցույց է տալիս օրենքով և շնորհքի միջոցով Քրիստոսին հավատացողների քանակը:
3. Ջերոմը ասում էր, որ կան 153 տարբեր տեսակի ձկներ, ուստի սա խորհրդանշում է այն բոլոր ազգերը, ովքեր կփրկվեն Քրիստոսին հավատալով: Մեկնաբանության այլաբանական այս մեթոդը խոսում է մեկնաբանի մտային կարողությունների և խելացիության մասին, և ոչ թե ճշմարիտ ներշնչված հեղինակի մտադրության մասին:

▪ **«Եւ այդքան լինելով՝ ուռկանը չպատառուեցաւ»** Այս բառերը կամ ականատեսի մանրամասնություն է, կամ էլ հրաշքի ակնարկ:

21:14 «Սա երրորդ անգամն է որ Յիսուսը իր աշակերտներին երեւեցաւ» Պետք է որ, սա վերաբերվի նախորդ երկու պատմություններին, որոնք արձանագրված են գլուխ 20-ում:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 21:15-19
¹⁵Եւ երբոր ճաշեցին, Յիսուսն ասեց Միմօն Պետրոսին. Միմօն Յովնանի որդի, սիրու՞մ ես ինձ դորանցից աւելի, նորան ասեց. Այո, Տէր, դու գիտես՝ որ ես սիրում եմ քեզ, նորան ասեց. Արածեցրու իմ գառները:
¹⁶Դարձեալ ասեց նորան. Միմօն Յովնանի որդի, սիրու՞մ ես ինձ. նորան ասեց. Այո, Տէր, դու գիտես որ ես սիրում եմ քեզ, նորան ասեց, Արածեցրու իմ ոչխարները: ¹⁷Երրորդ անգամն ասեց նորան. Միմօն Յովնանի որդի, սիրու՞մ ես ինձ: Պետրոսը տրտմեցաւ. որովհետեւ երրորդ անգամ նորան ասեց՝ թէ Սիրու՞մ ես ինձ. եւ նորան ասեց. Տէր, դու ամեն բան գիտես, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ. Յիսուսը նորան ասեց. Արածեցրու իմ ոչխարները: ¹⁸Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ, երբոր պատանի էիր՝ ինքդ էիր գօտիդ կապում՝ եւ ման գալիս որտեղ որ ուզում էիր. բայց երբոր կծերանաս, ձեռքերդ կմեկնես. եւ ուրիշը գօտի կկապէ, եւ կտանէ՝ որտեղ որ չես ուզի: ¹⁹Սա ասեց՝ ցոյց տալով թէ նա ինչ մահով կփառատարէ Աստուծուն. եւ սա ասելուց յետոյ, նորան ասեց. Իմ ետեւիցը եկ.

21:15 «Միմօն Յովնանի որդի» Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը նրան չի կոչում «Միմօն Պետրոս»; այս մարդն ամեն ինչ էր, բացի ժայռից:

▪ **«սիրու՞մ ես. . . սիրու՞մ ես. . . սիրու՞մ ես»** Այս եռակի կրկնողությունը, ամենայն հավանականությամբ, ունի անմիջական կապ Պետրոսի երեքանգամյա ուրացման հետ քահանայապետի տան բակում (հմմտ. 18:17,25,27): Այս հատվածում հանդիպում են մի քանի գուգահեռներ ու հակադրություններ.

1. սիրել (*phileō*) և սիրել (*agapaō*)
2. գառներ և ոչխարներ
3. իմանալ (*ginoskō*) և իմանալ (*oida*)

Եղել են շատ քննարկումներ այն մասին, թե արդյոք դա եղել է պարզապես գրական զանազանություն, թե՞ հեղինակը դիտավորյալ է ընտրել հակասող տերմիններ: Հովհաննեսը հաճախ է օգտագործում զանազանություն, հատկապես այս գլխում (երկու տարբեր տերմիններ «երեխաներ», «նավակ» և «ծուկ» բառերի համար): Տվյալ կոնտեքստից ելնելով, կան մի քանի տարբերություններ հունարեն *agapaō* և *phileō* տերմինների միջև, բայց կարիք չկա այն ընդգծելու, որովհետև կոյնե հունարենում այս երկու բառերը հոմանիշներ են (հմմտ. 3:35; 5:20; 11:3,5):

▪ **«սիրու՞մ ես ինձ դորանցից աւելի»** Շարահյուսական կառուցվածքը կարող է լինել երկիմաստ, և այն կա նաև այս հարցում: Ոմանք պնդում են, որ այն վերաբերվում է.

1. ձկնորսությունը որպես զբաղմունք

2. Պետրոսի նախորդ հայտարարությանը, որ նա Հիսուսին ավելի շատ է սիրում քան մյուս աշակերտները (հմմտ. Մաթ. 26:33; Մարկ. 14:29 և Հովհ. 13:37)
3. որ առաջինը պետք է ծառայի ինչի բոլորին (հմմտ. Ղուկ. 9:46-48; 22:24-27)

▪ **«Արածեցրու իմ գառները»** Այստեղ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ, ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎ է: Բոլոր երեք հրամայականներն էլ ունեն նույն քերականական կառուցվածքը (հմմտ. հհ. 16 և 17), բայց թեթևակի տարբեր բառերով (հովվիր Իմ ոչխարներին և արածեցրու Իմ ոչխարներին):

21:17 «Տէր, դու ամեն բան գիտես» Պետրոսը սովորում է դանդաղ խոսել: Նա արտահայտում է լավ ընկալած աստվածաբանություն (հմմտ. 2:25; 6:61,64; 13:11; 16:30):

▪ **«դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»** «Գիտես» բայը այստեղ արտահայտված է ուրիշ հունարեն տերմինով հ. 16 (*oida*) և հ. 17 (*oida* և *ginoskō*): Ստույգ պատճառը անհայտ է, և հնարավոր է, որ այն պարզապես լեզվական զանազանություն է:

21:18 «ձեռքերդ կմեկնես» Շատ հավանական է սա հատուկ իդիոմա էր, որն օգտագործվում էր (1) վաղ եկեղեցում և (2) հունարեն գրականության մեջ «խաչելություն» բառի համար:

21:19 «ցոյց տալով թէ նա ինչ մահով կփառատորէ Աստուծուն» Ավանդությունը պնդում է, որ Պետրոսը խաչվել է գլխիվայր: Յուսուփոսը «Եկեղեցական Պատմություն», հատոր 3:1, ասում է, «Պետրոսը, հավանական է, քարոզել է հրեաներին ցվրված Պոնտոսի, Գաղատիայի, Բութանիայի, Կապադովկիայի և Ասիայի մեջ: Իր կյանքի վերջում նա գնաց Հռոմ, որտեղ էլ և գլխիվայր խաչվեց ըստ իր ցանկության»: Տես ծանուցում 1:14:

▪ **«Իմ ետեիցը եկ»** Այստեղ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ, ՆԵՐԿԱ ԺԱՍԱՆԱԿԱԶԵՎ է, ինչպես հ. 22: Այս բառերը վերաբերվում են Պետրոսի կանչի նորոգմանն ու վերահաստատմանը որպես առաջնորդ (հմմտ. Մաթ. 4:19-20):

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 21:20-23
²⁰Պետրոսն էլ դարձաւ՝ տեսաւ այն աշակերտին, որին Յիսուսը սիրում էր, որ ետեիցը գալիս էր, նա՛ որ էլ նորա լանջքովն ընկաւ ընթրիքի ժամանակին եւ ասեց. Տէր, ո՞վ է քեզ մատնողը: ²¹Պետրոսը սորան տեսնելով, Յիսուսին ասեց. Տէր, բայց սա ի՞նչ: ²²Յիսուսը նորան ասեց. Եթէ ես կամենում եմ, որ դա կենայ, մինչեւ ես գամ. քե՞զ ինչ. դու իմ ետեիցը եկ: ²³Եւ այս խօսքը դուրս եկաւ եղբայրների մէջ, թէ այն աշակերտը չի մեռնիլ. բայց Յիսուսը չասեց նորան, թէ չի մեռնիլ. այլ եթէ կամենում եմ որ դա կենայ մինչեւ ես գամ. քե՞զ ինչ:

21:20 «այն աշակերտին, որին Յիսուսը սիրում էր» Այս համարում այն մանրամասնությունն է, որի մասին պատմվում է 13:25: Անհայտ է, թե ի՞նչու Հովհաննեսը այստեղ հանդես է գալիս գաղտնի իմաստով (հմմտ. 13:23; 19:26; 20:2; 21:7,20): Հնարավոր վարկածներն են

1. առաջին դարի հրեական ավանդական գրվածքներում հեղինակի անունը չէր նշվում
2. Հովհաննեսը շատ երիտասարդ էր, երբ նա դարձավ Հիսուսի հետևորդը
3. Հովհաննեսը առաքյալներից միակն էր, ով մնաց Հիսուսի հետ չարչարանքների և խաչելության ժամանակ

21:22 «Յիսուսը նորան ասեց. Եթէ ես կամենում եմ, որ դա կենայ, մինչեւ ես գամ. քե՞զ ինչ» Այստեղ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆ է: Մենք պետք է հիշենք, որ մենք պատասխանատու ենք մեր սեփական պարզկների և ծառայությունների համար, և ոչ թե մտահոգվենք այն բանով թե ինչ է Աստված պլանավորել ուրիշների համար: Հավանական է գլուխ 21 ավելացման պատճառն այն էր, որ պաշտպաներ քրիստոնյաներին այս հարցը սխալ ընկալելուց: Ակնհայտ էր, որ լուր էր տարածված (հնարավոր է գնոստիկների կողմից), որ Հովհաննեսը պետք է ապրեր մինչև Երկրորդ Գալուստը (Հովհաննեսն իրոք խոսում է *Parousia* մասին, հմմտ. 14:23; I Հովհ. 3:2):

- «**ին ետեիցը եկ**» Սա գրեթե ամփոփում է Հովհաննեսի Ավետարանի անձնական հրավերքը (հմմտ. 1:43; 10:27; 12:26; 21:19,22): Սա ընդգծում է ավետարանի անձնական ասպեկտը, իսկ «որպեսզի հավատան, որ» արտահայտությունը ընդգծում է Ավետարանի բովանդակության ասպեկտը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 21:24

²⁴Սա այն աշակերտն է, որ այս բաները համար վկայում է, եւ այս բաներն էլ գրեց, եւ գիտենք որ նորա վկայութիւնը ճշմարիտ է:

21:24 «**այս բաներն էլ գրեց**» Սա վերաբերվում է (1) հհ. 20-23: (2) գլուխ 21; թե՞(3) ամբողջ Ավետարանին: Պատասխանն անորոշ է:

- «**գիտենք որ նորա վկայութիւնը ճշմարիտ է**» Հայտնի չէ, թե որ մարդկանց է վերաբերվում «անք» ԳԵՐԱՆՈՒՆԸ: Միանգամայն ակնհայտ է, որ Հովհաննեսի Ավետարանի ճշմարտացիության վկաները ուրիշներն էին: Հավանական է, սա վերաբերվում է Եփեսոսի երեցներին: Սա այն տարածքն էր, որտեղ ապրեց, ծառայեց և մահացավ Հովհաննեսը: Վաղ ավանդությունը պնդում է, որ Եփեսոսի առաջնորդներն են համոզել Հովհաննես առաքյալին գրելու իր սեփական Ավետարանը, հաշվի առնելով այն, որ մյուս առաքյալներն այդ ժամանակ արդեն չկային, և նաև Հիսուսի մասին աճող հերետիկոսության համար: Տես Հատուկ Թեմա, Վկայություն Հիսուսի մասին 1:8:

Արևելահայերեն Աստվածաշունչ Գլուխ 21:25

²⁵Բայց ուրիշ էլ շատ բաներ կան, որ Յիսուսը արաւ, որոնք եթէ մէկ մէկ գրուած լինէին, կարծում եմ թէ աշխարհքս էլ բաւական չէր յինիլ այն գրուած գրքերը տանելու: Ամէն

21:25 Համար 25-ի քննարկումներն ունեն երկու պատճառ (1)մի քանի ձեռագրերում Հովհ.7:53 - 8:11 տեղադրված է 24 և 25հհ-ի միջև (2) Սինայական ձեռագրում (Տ) արտագրողը ջնջել է դեկորատիվ հասվածը (Colophon) և տեղադրել հ. 25 ավելի ուշ: Այս համարը մեզ տալիս է հատուկ հստակ պատկերացում այն մասին, որ Ավետարանների հեղինակներն ընտրողական էին իրենց գրվածքներում: Հերմենևտիկական հարցը հետևյալն էր, «Ինչու՞ են գրել հենց սա, և գրել են ճիշտ այդպես, և չեն ձգտել միավորել բոլոր չորս Ավետարանները»:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞վ է Հովհաննու 21-ը նման Գուկաս 5-ին:
2. Ինչու՞ աշակերտներն անմիջապես չճանաչեցին Հիսուսին:
3. Ո՞վ է Հիսուսի սիրելի աշակերտը:
4. Ինչու՞ Հիսուսը երեք անգամ հարցրեց Պետրոսին Իրեն սիրելու մասին:
5. Հիսուսը պնդե՞ց, որ Հովհաննեսը կենդանի կմնա մինչև Իր վերադարձը:
6. Ու՞մ մասին է խոսում համար 24-ը:
7. Կա՞ր բնագրում համար 25-ը:

I ՀՈՎՀԱՆՆԵՍ

I ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՂԹԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԹԻ ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆԸ

- Ա. I Հովհաննու թուղթը անձնական նամակ չէ և ոչ էլ որևէ մեկ եկեղեցուն հասցեագրված նամակ, քանի որ այն իրենից ներկայացնում է «անհանգստացած և կրակոտ ծառայողական գրություն ուղղված գրասենյակից» (ընդհանրական նամակ):
1. Այն չունի ավանդական ներածություն (ումից, ում):
 2. Այն չունի անձնական ողջուններ կամ վերջաբան:
- Բ. Այստեղ չկան նշված մարդկանց անուններ: Սա ծայրահեղ անսովոր բան է, որը հանդիպում է միայն շատ եկեղեցիներին ուղղված թղթերում, ինչպես օրինակ Եփեսացիս կամ Հակոբոս թղթերը: Միակ նորկտակարանյան թուղթը, որը չի նշում հեղինակի անունը դա Եբրայեցիս թուղթն է: Ինչևէ, ակնհայտ է, որ I Հովհաննու թուղթը գրվել է այն ժամանակվա հավատացյալներին, ովքեր ունեին ներքին եկեղեցական խնդիրներ կեղծ վարդապետների հետ կապված (գնոստիկներ):
- Գ. Այս թուղթը հզոր աստվածաբանական տրակտատ, քննախոսություն է, որը պնդում է
1. Հիսուսի կենտրոնական լինելը
 - ա. ամբողջությամբ Աստված և ամբողջությամբ մարդ
 - բ. փրկությունը Հիսուս Քրիստոսի վրա ունեցած հավատքով է, և ոչ թե միստիկ, խորհրդավոր փորձառությունով կամ գաղտնի գիտությամբ (կեղծ վարդապետներ)
 2. Քրիստոնեական կյանքի ապրելակերպի պահանջը (ճշմարիտ քրիստոնեության երեք ստուգաքարները)
 - ա. եղբայրական սեր
 - բ. հնազանդություն
 - գ. մերժել ընկած, մեղավոր աշխարհի համակարգը
 3. Հավիտենական փրկության վստահություն Հիսուս Նազովրեցու հավատքի միջոցով («ճանաչել, գիտենալ» բայը օգտագործված է 27 անգամ)
 4. Ինչպես ճանաչել կեղծ վարդապետներին
- Դ. Կոյնե հունարենի տեսանկյունից Հովհաննեսի գրվածքները (հատկապես I Հովհաննեսը) հանդիսանում են ամենահեշտը համեմատած նորկտակարանյան ցանկացած ուրիշ գրքի հետ, և նաև այս թուղթը բացահայտում է Աստծո կատարած և հավիտենական ճշմարտությունները Հիսուս Քրիստոսի մասին (այն է, Աստված Լույս է, 1:5; Աստված Սեր է, 4:8,16; Աստված հոգի է, Հովի. 4:24):
- Ե. Հնարավոր է, որ I Հովհաննես թուղթը հանդիսացավ ուղեկցող/հարակից նամակ Հովհաննու Ավետարանի համար: Առաջին դարի գնոստիկ հերետիկոսությունը հիմք հանդիսացավ այս երկու գրքերը գրվելու համար: Ավետարանը ունի ավետարանչական շեշտադրություն, իսկ I Հովհաննես թուղթը գրվել է հավատացյալների համար (այն է, աշակերտություն):
- Հայտնի մեկնաբան Վեստքոթը [Westcott] հայտնեց, որ Հովհաննու Ավետարանը պնդում է Հիսուսի Աստվածությունը, իսկ I Հովհաննեսը պնդում է Նրա մարդեղությունը: Այս երկու գրքերը անբաժանելի են:
- Զ. Հովհաննեսը գրում է, օգտագործելով հակադրող (դուալիստիկ) տերմիններ (սև/սպիտակ): Այս մոտեցումը հատուկ է Մեռյալ Ծովի մագաղաթներին և գնոստիկ կեղծ վարդապետներին: I Հովհաննու կառուցողական- գրական դուալիզմը թե բառային է (լույսն ընդդեմ խավարի) և թե ոճային (դրական դրույթին հետևում է բացասականը): սա տարբերվում է Հովհաննու Ավետարանից, որն ընդգրկում է ուղղահայաց դուալիզմ (Հիսուսը վերևից ի հակառակ բոլոր մարդիկ ներքևից):
- Է. Շատ դժվար է ուրվագծել I Հովհաննու թղթի բովանդակության պլանը, քանի որ Հովհաննեսը պարբերաբար օգտագործում է շոշափված թեմաներ: Այս գիրքը նման է նկարահյուս գործվածքի,

որտեղ կան կրկնվող ճշմարտություններ (հմտ.Բիլ Հենդրիկս «Ճշմարտության գորգը. Հովհաննեսի թղթերը» [Bill Hendricks, *Tapestries of Truth, The Letters of John*]):

ՀԵՂԻՆԱԿ

- Ա. I Հովհաննեսի թղթի հեղինակի մասին հարցը քննարկման մաս է կազմում, Հովհաննես Առաքյալի կողմից գրված բոլոր գրքերում - Ավետարանը, I Հովհաննես, II Հովհաննես, III Հովհաննես և Հայտնություն:
- Բ. Գոյություն ունեն երկու հիմնական հայացքներ
1. Ավանդական
 - ա. Վաղ եկեղեցու հայրերի մոտ կար ընդհանրական կարծիք, որ հենց սիրելի առաքյալը Հովհաննեսն է՝ I Հովհաննես թղթի հեղինակը:
 - բ. Վաղ եկեղեցու փաստերի ապացույցները
 - (1) Կլիմենտ հռոմեացին (90 Ք.Ա.) հաճախակի է ակնարկում I Հովհաննես թղթից
 - (2) Պոլիկարպ գմյուռնիացին մեջբերում է անում I Հովհաննես թուղթը փիլիպեցիներին ուղված իր ուղերձում 7(Ք.Հ. 110-140)
 - (3) Սուրբ Հուստինոսը, *Dialogue* 123: 9 (150-160թթ.) մեջբերում է եմ I Հովհ.
 - (4) I Հովհ. մասին ակնարկներ արել են
 - ա) Իգնատիոս Անտիոքեցին (նրա գրվածքների ամսաթիվը անորոշ է, բայց մոտ 100-ականների սկզբին)
 - բ) Պապիաս Հերափոլիսցի (ծնված 50-60թթ. և մարտիրոսված մոտ 155թ.)
 - (5) Իռենեոսը Լիոնից (130-202թթ.) բնութագրում է I Հովհ. Հովհաննես առաքյալին: Տերտուլիանը, վաղ ապոլոգետ, որը 50 գրքեր է գրել հերետիկոսների դեմ, հաճախ մեջբերում է I Հովհ.:
 - (6) Այլ վաղ գրվածքներ բնորոշում են Հովհաննես Առաքյալի հեղինակությունը, Կլեմենտը, Օրիգենն ու Դիոնիսոսը, Ալեքսանդրիայից երեքը, Մուրատոբյան հասվածը (180-200թթ.) և Եուսեբիոսը (III դար):
 - (7) Ջերոմը (չորրորդ դարի երկրորդ կեսը) հաստատեց Հովհաննեսի հեղինակությունը, սակայն խոստովանեց, որ այն մերժվել է իր օրերում:
 - (8) Մոստուեստիայի Թեոդորոսը, 392-428 թթ. Անտիոքի եպիսկոպոսը, ժխտեց Հովհաննեսի հեղինակությունը:
 - գ. Եթե Հովհաննեսը, ապա ինչ գիտենք Հովհաննես առաքյալի մասին:
 - 1) Նա Ջերեդեոսի և Սալմեի որդին էր
 - 2) Նա ձկնորս էր Գալիլեայի ծովում իր եղբոր հետ, Հակոբոսի (հավանաբար մի քանի նավակներ ունեին)
 - 3) Ոմանք հավատում են, որ նրա մայրը Հիսուսի մայր Մարիամի քույրն էր, (տես Հովհ. 19:25; Մարկ. 15:20)
 - 4) Ըստ երևույթին նա հարուստ էր, քանի որ նա ուներ
 - ա) վարձու ծառայողները (տես Մարկ.1:20)
 - բ) մի քանի նավակներ
 - գ) տուն Երուսաղեմում (տես Մատթ. 20:20)
 - 5) Հովհաննեսը իրավունք ուներ մտնելու Երուսաղեմի Քահանայապետի տունը, որը ցույց է տալիս, որ նա որպես մարդ հայտնի էր (տես Հովհ. 18: 15-16)
 - 6) Հովհաննեսն էր, ում խնամքին հանձնված Մարիամը՝ Հիսուսի մայրը
 - դ. Եկեղեցու վաղ ավանդույթը անանուն մեկը վկայում էր, որ Հովհաննեսը մյուս բոլոր առաքյալներից երկար է ապրել, և Երուսաղեմում Մարիամի մահից հետո նա տեղափոխվեց Փոքր Ասիա և բնակվեց այդ շրջանի ամենախոշոր քաղաքում՝ Եփեսոսում: Այս քաղաքից նա աքսորվել է Պատմոս կղզի (անմիջապես ծովափի մոտ և հետագայում ազատ արձակվեց և վերադարձավ Եփեսոս (Եուսեբիոսը մեջբերում է Պոլիկարպ, Պապիաս և Իռենեոս):

2. Ժամանակակից գիտնական-աստվածաբաններ
 - ա. Ժամանակակից գիտնականների ճնշող մեծամասնությունը ճանաչում է Հովհաննեսի բոլոր գրվածքների միջև եղած նմանությունը, հատկապես բանավոր, բառապաշարի և քերականական ձևերի մեջ: Դրա լավ օրինակն է սուր հակադրությունը, որը բնութագրում են այդ գրվածքները՝ կյանք- մահ, ճշմարտություն-կեղծիք: Այս նույն սուր դիխոտոմիան կարելի է տեսնել այդ օրվա այլ գրքերում, Մեռյալ ծովի գրքերում և սկանակ գնոստիկ գրվածքներում:
 - բ. Մի քանի տեսություններ կան Հովհաննեսին ավանդաբար վերագրված հինգ գրքերի միջև փոխհարաբերությունների մասին: Որոշ խմբեր պնդում են մեկ մարդու հեղինակությունը, երկու մարդու, երեք մարդու և այլն: Թվում է, ամենավստահելի դիրքորոշումն այն է, որ Հովհաննեսի բոլոր գրվածքները մի մարդու մտքի արդյունք են, նույնիսկ եթե, միգուցե, նրա աշակերտներից մի քանիսը գրած լինեն:
 - գ. Իմ անձնական համոզմունքն այն է, որ Հովհաննեսը, տարեց Առաքյալը, գրել է բոլոր հինգ գրքերը, Եփեսոսում իր ծառայության ավարտին:
3. Հեղինակության խնդիրը հերմենևտիկայի խնդիր է, այլ ոչ թե ներշնչման: Ի վերջո, Գրքի հեղինակը Աստված է:

SULԵԹԻՎԸ - Ակնհայտ է, որ դա կապված է հեղինակության հետ

- Ա. Եթե Հովհաննես Առաքյալն է գրել այս նամակները, և հատկապես I Հովհ., ապա մենք խոսում ենք առաջին դարի վերջում որոշակի ժամանակի մասին: Դա ժամանակ կտար գնոստիկ կեղծ աստվածաբանական / փիլիսոփայական համակարգերի զարգացման համար, ինչպես նաև կհամապատասխաներ I Հովհ. տերմինաբանությանը («փոքրիկ երեխաներ»), որն, ըստ երևույթին, ենթադրում է մի մեծահասակ մարդ, որը խոսում է հավատացյալների կրոստեր խմբի հետ: Ջերման ասում է, որ Հովհաննեսն ապրել է Հիսուսի խաչելությունից 68 տարի անց: Սա, կարծես, համապատասխանում է այս ավանդույթին:
- Բ. Ա. Տ. Ռոբերտսոնը կարծում է, որ I Հովհ. գրվել է 85-95թթ. միջև, իսկ Ավետարանը գրվել է 95թ.-ին:
- Գ. I. Howard Marshall *The New International Commentary Series on I John*, պնդում է, որ 60-100թթ. միջև ընկած ժամանակահատվածը այնքան մոտ է, որքան ժամանակակից գիտնականների տված թվականը, որը ցանկանում է հասկանալ Հովհաննեսի գրվածքների ամսաթիվը:

USԱՑՈՂՆԵՐԸ

- Ա. Ավանդույթը պնդում է, որ այս գիրքը գրվել է Փոքր Ասիայի (արևմտյան Թուրքիա) հռոմեական նահանգում, Եփեսոսի հետ `դրա հիմնական մայրաքաղաքը:
- Բ. Նամակը, կարծես, ուղարկվել է Փոքր Ասիայում գտնվող եկեղեցիների կոնկրետ մի խմբի, որոնք սուտ ուսուցիչների (օրինակ, Կողոսացիները և Եփեսացիները) հետ կապված խնդիր ունեն, մասնավորապես
 1. դոկետիկ գնոստիկները, ով հերքում էին Քրիստոսի մարդեղությունը, բայց հաստատում Նրա աստվածությունը
 2. անտոնոմիան գնոստիկները, ովքեր բաժանում էին աստվածաբանությունը էթիկայից / բարոյականությունից

- Գ. Օգոստինոսն (IV դ.) ասում է, որ գրվել է Պարթևների (Բաբելոն): Հետո հաջորդում է Կասիոդորուսը (վաղ VI դ.): Սա, հավանաբար, առաջացել է «ընտրյալ տիկին» արտահայտության շփոթությունից և «Բաբելոնում գտնվող կինը» արտահայտությունը, որոնք օգտագործվում են I Պետ. 5:13 և II Հովհ. 1:
- Դ. Սորատինյան հատվածը, վաղ կանոնական ՆԿ գրքերի ցանկը, որը գրվել է Հռոմում 180-200թթ. միջև, պնդում է, որ այս նամակը գրվել է «իր աշակերտների և եպիսկոպոսների հորդորից հետո» (Փոքր Ասիայում):

ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ

- Ա. Նամակը ինքնին ակնհայտորեն արձագանք է մի տեսակի կեղծ ուսմունքի դեմ (այսինքն « Եթե մենք ասենք ... », 1: 6 և « նա, ով ասում է ... »2: 9; 4:20[սուր քննադատություն]):
- Բ. Մենք կարող ենք իմանալ որոշ հերետիկոսության հիմնական դրույթների մասին I Հովհաննեսի ներքին ապացույցներից:
1. Հիսուս Քրիստոսի մարմնավորման մերժումը
 2. Հիսուս Քրիստոսի փրկության կենտրոնականության ժխտումը
 3. համապատասխան քրիստոնեական ապրելակերպի բացակայությունը
 4. շեշտը գիտելիքի վրա (հաճախ գաղտնի)
 5. բացառիկության միտումը
- Գ. Առաջին դարի իրավիճակը
 Առաջին դարի հռոմեական աշխարհը Արևելյան և Արևմտյան կրոնների միջև էկլեկտիկ մի ժամանակ էր: Հունական և հռոմեական պանթեոնների աստվածները վատ համբավ ուներին: Միստիկ կրոնները շատ տարածված էին, քանի որ նրանք շեշտը դնում էին աստվածության հետ անձնական հարաբերություններին և գաղտնի գիտելիքների վրա: Աշխարհիկ հունական փիլիսոփայությունը տարածված էր և միավորում էր այլ աշխարհայացքներ: Էկլեկտիկ կրոնի այս աշխարհում առաջ եկավ քրիստոնեական հավատքի բացառիկությունը (Հիսուսն է Աստծո մոտ տանող միակ ճանապարհը, Հովհ.14:6): Ինչպիսին էլ լինեք հերետիկոսության հստակ ֆոնը, քրիստոնեության թվացյալ նեղությունը՝ դարձնելու ավելի հստակ և ինտելեկտուալ առումով ընդունելի հունա-հռոմեական լսարանի համար:
- Դ. Հնարավոր տարբերակներ, թե գնոստիկների որ խմբին է հասցեագրված
1. Սկսնակ գնոստիցիզմ
 - ա. Առաջին դարի սկսնակ գնոստիկների հիմնական ուսմունքները, կարծես, շեշտը դնում էին օնթոլոգիական(հավիտենական) դուալիզմի վրա՝ հոգու և նյութի միջև: Հոգին (Բարձր Աստված) համարվում էր բարի, իսկ նյութը չար էր: Այս երկհերձվածությունը/դիխոտոմիա հիշեցնում է Պլատոնիզմի իդեալականը և ֆիզիկականը, երկնայինը և երկրայինը, անտեսանելին և տեսանելին: Կար նաև գաղտնի գիտելիքների կարևորությունը (գաղտնաբառերը կամ գաղտնի ծածկագրերը, որոնք թույլ են տալիս, որ հոգին անցնի հրեշտակային ոլորտներով [aeons] մինչև բարձր աստված) փրկության համար:
 - բ. Կան սկսնակ գնոստիկների երկու ձևեր, որը, ըստ երևույթին, կարող է լինել I Հովհ. ֆոնը
 - (1) Դոկետիկ Գնոստիցիզմ, որը ժխտում է Հիսուսի իսկական մարդեղությունը, քանի որ նյութը չար է

- (2) Քերրինթիան Գնոստիցիզմ, որը նույնացնում է Քրիստոսին բազմաթիվ *aeons*-ներից մեկի կամ հրեշտակային մակարդակների հետ՝ բարի բարձր աստծո և չար նյութի միջև: Այս «Քրիստոս Հոգին» բնակություն հաստատեց Հիսուսի մեջ, իր մկրտության ժամանակ, և հեռացավ մինչև նրա խաչելությունը:
- (3) այս երկու խմբերում որոշները գործածել են ասկետիզմ (եթե մարմինը ցանկանում է, դա չար է), մյուսները անտինոմիանիզմ (եթե մարմինը դա ուզում է, տուր): Առաջին դարի գնոստիցիզմի զարգացած համակարգի մասին գրավոր ապացույց չկա: Դա չի եղել մինչև երկրորդ դարի կեսը, որ արձանագրված վկայությունն է եղել: Լրացուցիչ տեղեկությունների համար «Գնոստիցիզմի» մասին նայեք
 - (ա) *The Gnostic Religion* by Hans Jonas, published by Beacon Press
 - (բ) *The Gnostic Gospels* by Elaine Pagels, published by Random House
 - (գ) *The Nag Hammadi Gnostic Texts and the Bible* by Andrew Helmbold

2. Իգնատիուսը առաջարկում է հերթական հերետիկոսության աղբյուրը իր գրվածքներում *to the Smyrnaeans iv-v*: Նրանք ժխտում էին Հիսուսի մարմնացումն ու ապրում էին անտինոմիան ապրելակերպով:
3. Հերետիկոսության աղբյուրի մեկ այլ պակաս հավանական հնարավոր տարբերակ է Մեանդեր Անտոքեցին, որը հայտնի է Իռենաուսի *Against Heresies XXIII* գրվածքներից: Նա Սիմոն Սամարացու հետևորդն էր և գաղտնի գիտության բարեխոսը:

Ե. Հերետիկոսությունն այսօր

1. Այս հերետիկոսության հոգին այսօր մեզ հետ ներկա է, երբ մարդիկ փորձում են քրիստոնեական ճշմարտությունը համատեղել մտածողության այլ համակարգերի հետ:
2. Այս հերետիկոսության հոգին այսօր մեզ հետ է, երբ մարդիկ շեշտում են «ճիշտ» վարդապետությունը՝ մերժելով անձնական հարաբերությունները և հավատքի կենսակերպը:
3. Այս հերետիկոսության հոգին այսօր մեզ հետ ներկա է, երբ մարդիկ քրիստոնեությունը դարձնում են բացառիկ մտավոր էլիտայինը:
4. Այս հերետիկոսության հոգին այսօր մեզ հետ ներկա է, երբ կրոնական մարդիկ վերադառնում են ասկետիզմի կամ անտինոմիանիզմի:

ՆՊԱՏԱԿԸ

Ա. Այն ունի գործնական կենտրոնացում հավատացյալների համար

1. նրանց ուրախություն տալու համար (տես 1: 4)
2. խրախուսել նրանց ապրելու աստվածահաճո կյանքով (տես 1: 7; 2: 1)
3. պատվիրել նրանց (և հիշեցնել նրանց) սիրել միմյանց (տես 4: 7-21), այլ ոչ թե աշխարհին (տես 2: 15-17)
4. նրանց փրկության վստահություն տալու Քրիստոսում (տես 5:13)

Բ. Այն ունի վարդապետական կենտրոնացում հավատացյալների համար

1. հերքել Հիսուսի աստվածությունը և մարդեղությունը բաժանելու սխալը
2. հերքել հոգևորը մտքի մեջ, աստվածային կյանքից զուրկ բաժանելու սխալը
3. հերքել այն սխալը, որը մարդը կարող է փրկվել ուրիշներից մեկուսացված

ԸԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ (տես էջ 4)

Սա սերտորոշյալ մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես

Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (ժանրը)

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 4)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

I ՀՈՎՀԱՆՆԵՍ 1:1-2:2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Կյանքի Խոսքը	Ինչ լսեցինք, տեսանք և շոշափեցինք	Ներածություն	Կյանքի Խոսքը	Մարմնավորված Բառը և կիսվելը Հոր և Որդու հետ
1:1-4	1:1-4	1:1-4	1:1-4	1:1-4
Աստված Լույս է	Հողորդակցության հիմքերը Նրա հետ	Ճիշտ Կեցվածք Մեղքի դեմ	Աստված Լույս է	Քայլել Լույսի մեջ (1:5-2:28)
1:5-10	1:5-2:2	1:5-10	1:5-7	1:5-7
			1:8-10	Առաջին Պայմանը; Քանդել Մեղքը 1:8-2:2

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

*Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և վերլուծել է առաջին գլուխը: Ամեն մի պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Այս թեման յուրաքանչյուր թարգմանված տարբերակում ձևավորվում է իր իսկ ձևով: Կարդալով տեքստը, հարցեր տվեք ինքներդ ձեզ, թե թարգմանություններից, որ մեկն է ավելի համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձեր հասկացողությանը:

Յուրաքանչյուր գլխի ժամանակ դուք նախ պետք է կարդաք Աստվածաշունչը և փորձեք որոշել թեմաները (պարբերությունները): Հետո ձեր հասկացողությունը համեմատեք ժամանակակից թարգմանությունների հետ: Միայն այդ ժամանակ, երբ հասկանաք հեղինակի մտադրությունը, հետևելով նրա տրամաբանությանն ու շարադրանքին, դուք կկարողանաք ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Միայն հեղինակն է ներշնչված – ընթերցողներն իրավունք չունեն փոխել կամ խեղաթյուրել նրա պատգամը/ ուղերձը: Աստվածաշնչի ընթերցողներն պարտավոր են կիրառել ներշնչված ճշմարտությունը ժամանակակից իրավիճակի և իրենց կյանքերի մեջ:

Բոլոր տեխնիկական տերմիններն ու հասպտումները ամբողջությամբ ներկայացված են Հավելված 1,2 և 3 –ում:

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Այս հատվածը վերաբերում է Հովհաննեսի Ավետարանի նախաբանին (1: 1-18, ֆիզիկական ստեղծագործությունից առաջ), որը վերաբերում է Ծննդ.1: 1 (ֆիզիկական ստեղծագործություն): Այնուհանդերձ, այստեղ դա վերաբերում է Հիսուսի հրապարակային ծառայությանը:

Բ. Շեշտը դրվում է

1. Հիսուս Քրիստոսի կատարյալ մարդ լինելու վրա
 - ա. ԴԵՐԲԱՅԵՐԸ կապված են մարդկային զգայարանների հետ՝ տեսողություն, ձայն, հպում (տես հհ.1,3): Հիսուսն իսկապես մարդ էր և ֆիզիկական
 - բ. Հիսուսի ամբողջական տիտղոսները
 - (1) Կյանքի Խոսքը (տես հ.1)
 - (2) Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը (տես հ.3)
2. Հիսուս Նազովրեցու աստվածությունը
 - ա. Նախագոյ (հհ.1,2)
 - բ. Մարմնավորում (հ.2)

Այս ճշմարտություններն ուղղված են գնոստիկ կեղծ ուսուցիչների աշխարհայացքի դեմ:

ՇԱՐՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Համարներ 1-4

1. 1-3 համարները հունարենում մեկ նախադասություն են կազմում:
2. Հիմնական «հոչակել» ԲԱՅԸ գտնվում է հ.3: Շեշտը Առաքելական քարոզչության բովանդակության վրա է:
3. Գոյություն ունեն չորս ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ հ.1, որոնք շեշտադրման համար նախադասության սկզբում են դնում:
 - ա. «Այն որ սկզբիցն էր»
 - բ. «որ լսեցինք»
 - գ. «որ մեր աչքերովը տեսանք»
 - դ. «որին նայեցինք և մեր ձեռքերը շոշափեցին»
4. 2-րդ համարը, կարծես, պարունակում է Քրիստոսի մարմնացում: Փաստն այն է, որ դա այնքան անհարմար է քերականապես ուշադրություն դարձնելու համար:
5. 3-րդ և 4-րդ համարները սահմանում են Հովհաննես Առաքյալի հոչակագրի նպատակը՝ հաղորդակցություն և ուրախություն: Առաքյալի վկայությունները եղել են քրիստոնեության վաղ եկեղեցու չափանիշներից մեկը:
6. Ծանոթացեք ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ հետ 1-ին համարում
 - ա. ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ (նախագոյ)
 - բ. ՎԱՂԱԿԱՏԱՐ, (մնայուն ճշմարտություն)
 - գ. ԱՕՐԻՍՏ, (կոնկրետ օրինակներ)

Բ. 1: 5-2: 2 համարներ

1. 1: 5-2: 2 ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ շատ երկիմաստ են, բայց կարծում եմ, գրեթե բոլորը, բացառությամբ հ.5, վերաբերում են Հորը (նույնն է Եփ. 1:3-14)
2. Բոլոր «եթե»ները ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ են, որոնք խոսում են հնարավոր գործողությունների մասին:
3. Կարևոր աստվածաբանական տարբերություն կա
 - ա. ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՐԸ ՆԵՐԿԱՆ և ԱՕՐԻՍՏ վերաբերվում է «մեղքին»
 - բ. ԵԶԱԿԻ և ՀՈԳՆԱԿԻ, «մեղք» և «մեղքեր»

ՀԵՐԵՏԻԿՈՄՆԵՐԸ

- Ա. Հերետիկոսների կեղծ մեղադրանքները կարելի է տեսնել հհ. 1: 6,8,10; 2: 4,6,9:
- Բ. 5-10 համարները վերաբերում են աստվածաբանական փորձին՝ առանձնացնել Աստծուն ճանաչելը (աստվածաբանությունը) Աստծուն հետևելուց (էթիկա): Այն ներկայացնում է անհարկի գնոստիկ ծայրաստիճան ուշադրություն գիտելիքի հանդեպ: Նրանք, ովքեր ճանաչում են Աստծուն, կբացահայտեն Նրա հատկությունները իրենց ապրելակերպի մեջ:
- Գ. 1: 8-2: 2 համարները պետք է պահվեն հավասարակշռության մեջ 3: 6-9 հետ: Դրանք մետադադրամի երկու կողմերն են: Նրանք, հնարավոր է, հերքում են երկու տարբեր սխալներ.
1. աստվածաբանական սխալ (մեղք չկա)
2. բարոյական սխալ (մեղքը կարևոր չէ)
- Դ. I Հովհ. 2: 1-2 փորձում է հավասարակշռությունը ցույց տալ՝ մեղքը աննշան բան համարելու(անտիստիանիզմ) և քրիստոնեական դատավարության, մշակութային օրինականության կամ ասկետիզմի հերթական խնդիրը վերացնելու միջև:

ԲԱՈՒ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ 1:1-4

¹Այն որ սկզբիցն էր, որ լսեցինք, որ մեր աչքերովը տեսանք, որին նայեցինք, եւ մեր ձեռքերը շօշափեցին՝ կեանքի Բանի համար. ²(Եւ կեանքը յայտնուեցաւ, եւ մենք տեսանք, եւ վկայում ենք, եւ պատմում ենք ձեզ յաիտենական կեանքը, որ Հօր մօտ էր եւ երեւեցաւ մեզ): ³Այն որ տեսանք եւ լսեցինք, պատմում ենք ձեզ, որ դուք էլ հաղորդութիւն ունենաք մեզ հետ. Եւ մեր հաղորդութիւնը Հօր հետ եւ նորա Որդի Յիսուս Քրիստոսի հետ: ⁴Եւ սա գրում ենք ձեզ, որ ձեր ուրախութիւնը կատարեալ լինի:

1:1 «Այն որ» Գիրքը սկսվում է ՉԵԶՈՔ ԴԵՐԱՆՈՒՆՈՎ: Այն խոսում է Աստծո պատգամի երկակի ասպեկտների մասին, որոնք են

1. Հիսուսի մասին պատգամը
2. Հիսուսի անձը (տես 1: 8,10; 2: 20,24; 3: 11,14)

Ավետարանը պատգամ է, մարդ և կենսակերպ:

▪ **«էր»** Սա ԱՆՅՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այն հաստատում է Հիսուսի նախագոյությունը (այսինքն, սա Հովհաննեսի գրվածքներում կրկնվող թեմա է, կարդա հ.2, Հովհ. 1: 1,15; 3:13; 8: 57-58; 17: 5): Սա Իր Աստվածությունը հաստատելու մի ձև էր: Հիսուսը հայտնում է Հորը, քանի որ Նա սկզբից Հոր հետ էր:

▪ **«սկզբիցն»** Սա ակնհայտ բացատրություն է Օննդոց 1 և Հովհաննու 1, սակայն այստեղ այն վերաբերում է Հիսուսի հրապարակային ծառայությանը (տես Հատուկ Թեմա. Arch Հովհ.1: 1): Հիսուսի գալուստը «Պլան Բ» չէր: Ավետարանը միշտ Աստծո փրկագնման պլանն էր (տես Օննդ. 3:15; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29): Այս կոնտեքստում այս արտահայտությունը վերաբերում է Հիսուսի հետ Տասներկու Առաքյալների անձնական հանդիպմանը:

Հովհաննեսը հաճախ օգտագործում է «սկզբում» (*arch*) գաղափարը: Դեպքերի մեծ մասը հիմնականում բաժանվում է երկու կատեգորիաների:

1. ստեղծագործությունից
ա. Հովհ. 1: 1,2 (Հիսուսը սկզբում)

- բ. Հովհ. 8:44; III Թագ. 3: 8 (սկզբից սատանան մարդասպան էր և ստախոս)
- գ. Հայտ. 3:14; 21: 6,12 (Հիսուսը սկիզբն է և վերջը)
- 2. Հիսուսի մարմնավորման և ծառայության ժամանակից
 - ա. Հովհ. 8:25; 16:4; I Հովհ. 2: 7 (երկու անգամ); 3:11; II Հովհ. 5,6 (Հիսուսի ուսմունքները)
 - բ. Հովհ. 15:27; 16: 4 (Հիսուսի հետ)
 - գ. I Հովհ. 1: 1 (Հիսուսի ծառայության սկիզբը)
 - դ. I Հովհ. 2: 13,24 [երկու անգամ] (Հիսուսին հավատալուց)
 - ե. Հովհ. 6:64 (Հիսուսին մերժելուց)
- 3. կոնտեքստի բարեհաճությունները # 2

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՎՀԱՆՆՈՒ 1 ՀԱՄԵՄԱՏՈ 1 ՀՈՎՀԱՆՆՈՒ 1 ՀԵՏ

Ավետարան

1. Սկզբում (1: 1,2)
2. Բառ (*logos*) (1: 1)
3. Կյանք (*zōē*) (1: 4)
4. Լույսը Հիսուսի մեջ (1: 4)
5. Լույսը հայտնվեց (1: 4)
6. Խավար (1: 5)
7. Լույսի վկան (1: 6-8)
8. Մարդիկ Աստծուն եկան (1: 7,12-13)
9. Նրա փառքը երևաց (1:14)

Նամակ

1. Սկզբից (1: 1)
2. Բառի (*logos*) (1: 1)
3. Կյանք (*zōē*) (1: 1,2)
4. Լույսը Աստծո մեջ (1: 5)
5. Լույսը հայտնվեց (1: 5)
6. Խավար (1: 5)
7. Լույսի վկան (1: 3,5)
8. Մարդիկ Աստծուն եկան (1: 3)
9. Նրա փառքը երևաց (1: 1-3)

▪ **«մենք»** Սա ենթադրում է Առաքյալների կոլեկտիվ և անձնական վկայությունը (այսինքն, ՆԿ հեղինակները): Այս հավաքական վկայությունը բնորոշ է I Հովհաննու Թղթին: Այն օգտագործվում է ավելի քան 50 անգամ:

Ոմանք այս հավաքական ԴԵՐԱՆՈՒՆԸ համարում են «Հովհաննեսի ավանդույթը»: Սա նշանակում է, որ Հովհաննեսի յուրահատուկ աստվածաբանական տեսանկյունից, նրանք ինամակալներ կամ ուսուցիչներ էին:

▪ **«լսեցինք. . . տեսանք»** Սրանք երկուսն էլ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՆ, որոնք ընդգծում են կայուն արդյունքներ: Հովհաննեսը պնդում էր Հիսուսի մարդեղությունը իր ԴԵՐԲԱՅԵՐԻ հերթական օգտագործմամբ կապված հինգ զգայարանների հետ հի 1,3: Նա այդպիսով պնդում է Հիսուս Նագովրեցու կյանքին և ուսուցմանը ականատես լինելը:

▪ **«նայեցինք. . . շոշափեցին»** Սրանք երկուսն էլ ԱՕՐԻՍՏ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են, որոնք շեշտում են որոշակի իրադարձություններ: «Նայեցինք» նշանակում է «մոտիկից դիտել» (տես Հովհ. 1:14), «շոշափեցինք» նշանակում է «զգալով մոտիկից քննել» (տես Հովհ. 20:20,27; Ղուկ. 24:39):

«Շոշափել» կամ «դիպչել» (*psēlaphaō*) հունարեն տերմինը գտնվում է ՆԿ միայն երկու համարներում՝ այստեղ և Ղուկ. 24:39: Ղուկասում այն օգտագործվում է Հիսուսի հետ-հարության պատմության մեջ: I Հովհ. օգտագործում է այն նույն իմաստով:

▪ **«կեանքի Բանի»** *logos* տերմինի օգտագործումը հույն կեղծ ուսուցիչների ուշադրությունը գրավելու համար էր, ինչպես որ Հովհաննեսի Ավետարանի նախաբանում (տես 1: 1): Այս բառը լայնորեն օգտագործվում էր հունական փիլիսոփայության մեջ: Այն նաև ուներ հատուկ նախադրյալներ եբրայական կյանքում (տես Ներածություն Հովհ.1, Գ): Այս արտահայտությունը այստեղ վերաբերում է թե՛ ավետարանի բովանդակությանը և թե՛ ավետարանի անձին:

1:2 Այս համարը «կյանքի» սահմանման պարունակությունն է:

- **«կեանքը»** «*Zōē*» (հ.2 2 անգամ) օգտագործվում է սիստեմատիկորեն Հովհաննեսի գրվածքներում հոգևոր կյանքի, հարության կյանքի, նոր դարի կյանքի կամ Աստծո կյանքի համար (տես Հովհ. 1:4; 3: 15,36 [երկու անգամ]; 4:14,36; 5:24[երկու անգամ], 26 [երկու անգամ], 29,39,40; 6: 27,33,35,40,47,48,51,53,54,63,68; 8:12; 10: 10,28; 11:25; 12: 25,50; 14: 6; 17: 2,3; 20:31; I Հովհ. 1: 1,2, 2: 25, 3: 14-15; 5:11,12,13,16,20): Հիսուսը իրեն անվանեց «կյանք» (տես Հովհ. 14:6):
- **«յայտնուեցաւ»** Այս ԲԱՅԸ օգտագործվում է երկու անգամ այս համարում, և երկուսն էլ ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են: ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ հաճախ օգտագործում է Հայր Աստծո գործի համար: Այս տերմինը (*phanerōd*) նշանակում է «բերել դեպի լույսը այն, ինչը արդեն ներկա էր»: Սա Հովհաննեսի սիրելի տերմինն էր (հմմտ. Հովհ. 1:31, 3:21, 9: 3, 12: 6; I Հովհ. 1: 2 [երկու անգամ]; 2:19, 3: 5, 8, 10; 4: 9): ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿԸ ընդգծում է մարմնացումը (տես Հովհ. 1:14), որը կեղծ ուսուցիչները հերքեցին:
- **«վկայում ենք»** Սա վերաբերում է Հովհաննեսի անձնական փորձառությանը (այսինքն ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ): Այս տերմինը դատական գործի ժամանակ հաճախ օգտագործվում էր ցուցմունքներ տալիս: Տես Հատուկ Թեմա. Վկայել Հիսուսին Հովհ. 1: 8
- **«պատմում ենք»** Սա վերաբերում է Հովհաննեսի հեղինակավոր վկայությանը (այսինքն, ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ), որը հայտնվել և արձանագրվել է իր քարոզչության և գրվածքներում: Սա հհ. 1-3 հիմնական ԲԱՅՆ է: Այն կրկնվում է երկու անգամ (հ. 2 և 3):
- **«Հօր մօտ էր»** Ինչպես հ.1, սա հաստատում է Հիսուսի նախագոյությունը: Արտահայտությունը նման է Հովհ. 1: 1: Աստված մարմնավորվել է որպես մարդ (տես Հովհ.1:14): Հիսուսին ճանաչել նշանակում է Աստծուն ճանաչել (տես Հովհ. 14:8-11): Սա Հովհաննեսի ուղղահայաց դուալիզմի օրինակ է:

1:3 «Այն որ տեսանք եւ լսեցինք, պատմում ենք ձեզ» Սա հինգերորդ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը վերսկսում է հ. 1 միտքը, հ. 2 պարունակությունից հետո: Այն կրկնում է հ. 1 հայտնաբերված ԲԱՅԵՐԻ ընկալումը:

- **«պատմում ենք ձեզ»** Սա հհ. 1-3 հիմնական ԲԱՅՆ է: Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Աստվածճանաչությունը պահանջում է հաղորդակցություն Իր զավակների հետ:
- **«որ դուք էլ հաղորդութիւն ունենաք մեզ հետ»** Սա ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է (*hina*) ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ: Ավետարանի հաստատված նպատակը այն էր, որ նրանք, ովքեր երբեք չեն լսել կամ տեսել Հիսուսին, կարողանան փրկվել Առաքելական վկայության միջոցով (տես Հովհ.17:20, 20: 29-31): Դա հայտնված շնորհքի այս հաղորդակցությունն է, որը բերում է «ուրախություն», «խաղաղություն» և «հավաստիացում»: Եկեղեցին հավատացյալների համայնք է, հավատացյալների մարմին: Ավետարանը ամբողջ աշխարհի համար է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: KOINŌNIA

«Հաղորդակցություն» տերմինը (*koinōnia*) նշանակում է

1. Մտերմիկ հարաբերություն անձի հետ
 - ա. Որդու (հմմտ. I Հովհ. 1:6; I Կոր. 1:9)
 - բ. Մուրք Հոգու (հմմտ. II Կոր. 13:13; Փիլ. 2:1)
 - գ. Հոր և Որդու (հմմտ. I Հովհ. 1:3)

- դ. հավատակից եղբայրների/քույրերի հետ (հմմտ. I Հովհ. 1:7; Գործք 2:42; Գաղ. 2:9; Փիլիմոն 17)
 - 2. Մտերմիկ հարաբերություն իրերի կամ մարդկային խմբերի հետ
 - ա. ավետարանի (հմմտ. Փիլ. 1:5; Փիլիմոն 6)
 - բ. Քրիստոսի արյան (հմմտ. I Կոր. 10:16)
 - գ. ոչ թե խավարի (հմմտ. II Կոր. 6:14)
 - դ. տառապանքի (հմմտ. Փիլ. 3:10; 4:14; I Պետ. 4:13)
 - 3. պարզ կամ նվիրատվություն արված առատաձեռնությամբ (հմմտ. Հռ. 12:13; 15:26; II Կոր. 8:4; 9:13; Փիլ. 4:15; Եբր. 13:16)
 - 4. Աստծո շնորհքի պարզև Քրիստոսի միջոցով, որը վերականգնում է մարդու հաղորդակցությունն Աստծո և իր եղբայրների ու քույրերի հետ:
- Սա հաստատում է հորիզոնական կապը (մարդ - մարդ), որը հետևանք է ուղղահայաց կապի (մարդ - Արարիչ): Այն նաև ընդգծում է քրիստոնեական համայնքի կարիքն ու ուրախությունը: Այս բայի ժամանակաձևը շեշտը դնում է համայնքում այս տեսակ փորձառության սկսման և շարունակման վրա (հմմտ. 1:3 [երկու անգամ],6,7): Քրիստոնեությունը դա համագործակցություն է:

- ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ Է**
- Ա. Պողոսի և Պետրոսի բազմակի փոխաբերությունները
 - 1. մարմին
 - 2. դաշտը
 - 3. շենք
 - Բ. «Սուրբ» տերմինը միշտ ՀՈԳՆԱԿԻ է (բացի Փիլ. 4:21, բայց նույնիսկ այնտեղ դա նաև համագործակցող է)
 - Գ. Բարեփոխությունը շեշտադրում է Մարտին Լյութերի «հավատացյալի քահանայությունը», որ իսկապես աստվածաշնչյան չէ: Դա հավատացյալների քահանայությունն է (տես Ելից 19:6, I Պետ. 2: 5, 9; Հայտ. 1: 6):
 - Դ. Յուրաքանչյուր հավատացյալ օժտված է պարզևով ընդհանուր բարիքի համար (տես I Կորնթ. 12: 7)
 - Ե. Միայն համագործակցությամբ կարող է Աստծո ժողովուրդը արդյունավետ լինել: Ծառայությունը կորպորատիվ է (տես Եփ. 4: 11-12):

- **«Հօր հետ. . . նորա Որդի Յիսուս Քրիստոսի հետ»** Այս արտահայտությունները քերականորեն գուգահեռ են ԴԵՐԱՆՈՒՆԻ և ՈՐՈՇԻՉ ՀՈՂԻ մեջ: Այս շարահյուսությունը հաստատում է Հիսուսի հավասարությունը և աստվածությունը (տես Հովհ. 5:18; 10:33; 19: 7): Անհնար է ունենալ Հորը (Բարձրյալ Աստված) առանց Որդու (մարմնացյալ Աստված) ինչպես կեղծ ուսուցիչներն էին ենթադրում (տես I Հովհ. 2:23; 5: 10-12):
 Հոր և Որդու հետ հաղորդակցությունը շատ նման է փոխադարձ «ներկառուցված» Հովհ.14:23 հաստվածին:

1:4 «սա գրում ենք ձեզ» Սա կարող է վերաբերել ամբողջ գրքին կամ կոնկրետ հհ. 1-3: Այս նույն անորոշությունը երևում է 2:1: Այստեղ հեղինակը նշում է իր նպատակներից մեկը (տես 2: 1):

- **«որ ձեր ուրախությունը կատարեալ լինի»** Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է (տես Հովհ. 15:11; 16:20,22,24; 17:13, II Հովհ. 12, III Հովհ. 4): Հավատացյալների ուրախությունը ամբողջանում է Հոր, Որդու և Հոգու հետ հաղորդակցվելու միջոցով: Սա կարևոր տարր էր կեղծ ուսուցիչների պառակտումների լույսի ներքո: Հովհաննեսի հաստատ նպատակը այս գրքում
 - 1. հաղորդակցություն Աստծո և Նրա զավակների հետ

2. ուրախություն
3. վստահություն
4. բացասական կողմից, նրա նպատակն էր սպառազինել հավատացյալներին գնոստիկ ուսուցիչների կեղծ աստվածաբանության դեմ

Այս համարում կա հունարեն տարբերակ

1. «մեր ուրախությունը», MSS Ն, B, L; NASB, NRSV, NJB, REB, NIV
2. «ձեր ուրախությունը», MSS A, C; NKJV

UBS⁴ գերադասում է # 1: Արդյոք «մեր» վերաբերում է առաքելական ականատեսներին թե հավատացյալներին: Քանի որ I Հովհ. քրիստոնեական վստահության աստվածաբանական ոգեշնչումը, ես ենթադրում եմ, որ այն ուղղված է բոլոր հավատացյալներին:

Արևելահայերեն Աստվածաշունչ 1:5-2:2

⁵Եւ սա է այն աւետիքը, որ նորանից լսեցինք եւ պատմում ենք ձեզ, թէ Աստուած լոյս է, եւ ոչ մի խաւար չ'կայ նորանում: ⁶Եթէ ասենք թէ հաղորդութիւն ունինք նորա հետ, եւ խաւարի մէջ ման գանք, սուտ ենք ասում եւ ճշմարտութիւնը չենք անում: ⁷Բայց եթէ լոյսի մէջ ման գանք ինչպէս նա է լոյսի մէջ, հաղորդութիւն ունինք իրար հետ, եւ նորա Որդի Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ սրբում է ամեն մեղքից: ⁸Եթէ ասենք թէ մեղք չ'ունինք, մեր անձերը խաբում ենք եւ ճշմարտութիւնը չ'կայ մեզանում: ⁹Ապա թէ մեր մեղքերը խոստովանենք, նա հաւատարիմ է եւ արդար որ մեր մեղքերը թողէ մեզ, եւ սրբէ մեզ ամեն անիրաւութիւնից: ¹⁰Եթէ ասենք թէ մեղք չ'գործեցինք, ստախօս ենք անում նորան, եւ նորա խօսքը մեզանում չէ:

2:1 Իմ որդեակներս, սա գրում եմ ձեզ որ չմեղանչեք, եւ եթէ մէկը մեղանչէ, բարեխօս ունինք Հօր մօտ Յիսուս Քրիստոս արդարին: **2**Եւ նա քաւութիւն է մեր մեղքերի համար. Եւ ոչ միայն մերինների բայց բոլոր աշխարհքի է:

1:5 «այն աւետիքը, որ լսեցինք» «Մենք» ԴԵՆԱՆՈՒՆԸ վերաբերվում է Հովհաննեսին և մյուս ականատեսների լսողներին և Հիսուսի հետևորդներին Իր երկրային կյանքի ընթացքում: Հովհաննեսը ուղղակիորեն խոսում է իր ընթերցողներին («դուք») 2: 1, հավանաբար նկատի ունենալով Փոքր Ասիայի եկեղեցիներին:

«Լսեցինք» ԲԱՅԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սա արտացոլում է 1:1-4 ֆիզիկական զգայարանների հետ կապված ակնհայտ հերթական տերմինը: Ինչ-որ իմաստով սա Հովհաննես Առաքյալն է, ով հաստատում է իր անձնական ներկայությունը Հիսուսի ուսուցումների ժամանակ: Հովհաննեսը փոխանցում է Հիսուսի հայտնությունները, ոչ թե իր սեփականը: Հնարավոր է նույնիսկ, որ Ավետարանների եզակի «Ես եմ» արտահայտությունները Հովհաննեսի հիշողություններն են՝ Հիսուսի անձնական ուսուցումներից:

▪ **«նորանից»** «Նրանից» միակ ԴԵՆԱՆՈՒՆԸ է 1: 5-2: 2 ամբողջ բաժնում, որը վերաբերում է Հիսուսին: Հիսուսը եկավ հայտնելու Հորը (տես Հովհ.1:18): Աստվածաբանորեն ասած, Հիսուսը եկավ երեք նպատակների համար:

1. Հայրը բացահայտելու համար (տես 1: 5)
2. հավատացյալներին Իրեն հետևելու օրինակ տալու համար (տես 1: 7)
3. մահանալ մեղավոր մարդկության համար (տես 1: 7, 2: 2)

▪ **«Աստուած լոյս է»** ՀՈԴ չկա: Սա ընդգծում է Աստծո բնության զարմանահրաշ և էթիկական կողմերը (տես Մաղ. 27:1; Ես. 60:20; Միքիա 7:8; I Տիմ. 6:16; Հակոբոս 1:17): Գնոստիկ կեղծ ուսուցիչները պնդում էին, որ լոյսը վերաբերում է գիտելիքին, բայց Հովհաննեսը պնդում է, որ այն նաև վերաբերում է էթիկական մաքրությանը: «Լոյս» և «խավար» ընդհանուր տերմիններ էին (այս տերմինները օգտագործելով էթիկական դուլիզմը նաև հայտնաբերված է Մեռյալ Ծովի

մագաղաթներում և վաղ գնոստիցիզմի մեջ): Դա վերաբերում է բարի և չար դուալիզմին (այսինքն, Հովհ. 1:5; 8:12; 12:46) և, հնարավոր է, հոգի և նյութ գնոստիկ դուալիզմին: Մա Հովհաննեսի պարզ, բայց խորը աստվածաբանական պնդումներից է աստվածության մասին: Մյուսներն են (1) «Աստված սեր է» (տես 4: 8, 16) և 2) «Աստված հոգի է» (տես Հովհ. 4:24): Աստծո ընտանիքը, ինչպես Հիսուսը (տես Հովհ. 8:12; 9:5), պետք է արտացոլի Իր բնավորությունը (Մատթ. 5:14): Այս փոխված և փոփոխվող սիրո, ներողամտության և մաքրության կյանքը ճշմարիտ փոխակերպման վկայություններից մեկն է:

- **«ոչ մի խաւար չ'կայ նորանում»** Մա շեշտը դնելու համար ԿՐԿՆԱԿԻ ԲԱՅԱՍԱԿԱՆ է: Դա հաստատում է Աստծո անփոփոխ սուրբ բնույթը (տես I Տիմ. 6:16; Հակ. 1:17; Սաղ. 102:27; Մաղ. 3: 6):

1:6 «Եթէ ասենք» Մա առաջինն է ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, որոնք վերաբերում են կեղծ ուսուցիչների պահանջներին (տես 1:8,10; 2:4,6,9): Այս արտահայտությունները կեղծ ուսուցիչներին պնդումները բացահայտելու միակ ձևն են: Նրանք, կարծես, վաղ (սկսած) գնոստիկներն են:

Գրագ կամ առարկիչի գրական տեխնիկան բառը կոչվում է սուր քննադատություն: Դա հարց-պատասխան ձևաչափով ճշմարտությունը ներկայացնելու ձև էր: Այն կարելի է հստակ տեսնել Մաղ. (տես 1, 2, 6, 7, 12; 2: 14,17; 3: 7,14) և Հռ. (տես 2: 3,17,21-23; 1,3,7-8,9,31; 4: 1; 6: 1; 7: 7):

- **«հաղորդութիւն ունինք նորա հետ»** Հերետիկոսները պնդում էին, որ հաղորդակցությունը հիմնված էր միայն գիտելիքների վրա: Մա Պլատոնի հունական փիլիսոփայության մի տեսակ էր: Սակայն Հովհաննեսը պնդում է, որ քրիստոնյաները պետք է ապրեն Քրիստոսանման կյանքով (տես հ. 7; Ղև. 19:2; 20: 7; Մատթ. 5:48): Տես Հատուկ Թեմա 1: 3:

- **«եւ խաւարի մէջ ման գանք»** «Քայլել» ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Մա աստվածաշնչյան փոխաբերություն է, որն արտահայտում է բարոյական կենսակերպ (տես Եփ. 4: 1,17; 5: 2,15): Աստված լոյս է, առանց խավարի: Նրա զավակները պետք է լինեն Նրա նման (Մատթ. 5:48):

- **«սուտ ենք ասում եւ ճշմարտութիւնը չենք անում»** Սրանք երկուսն էլ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐ են: Հովհաննեսը մի քանի կրոնական մարդկանց կոչում է ստախոսներ (տես 1:10; 2: 4,20; 4:20; Ես. 29:13): Կենսակերպի գործողություններն իսկապես բացահայտում են սիրտը (տես Մատթ. 7): Տես Հատուկ Թեմա: Ճշմարտությունը Հովհաննեսի Գրվածքներում 6:55:

1:7 «Բայց եթէ լոյսի մէջ ման գանք» Մա ևս մեկ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ օրինակ է, որն ընդգծում է շարունակական գործողությունը: «Քայլել» ՆԿ փոխաբերություն է քրիստոնեական կյանքի համար (այսինքն, Եփ. 4: 1,17; 5: 2,15):

Ուշադրություն դարձրեք, թե որքան հաճախ է «քայլել» և ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԸ կապված քրիստոնեական կյանքի հետ: Ճշմարտությունն այն է, ինչ մենք ապրում ենք, ոչ թե ինչ-որ գիտենք: Ճշմարտությունը Հովհաննեսի հիմնական գաղափարն է: Տես Հատուկ Թեմա: Հովհ. 6:55 և 17:3:

- **«ինչպէս նա է լոյսի մէջ»** Հավատացյալները պետք է մտածեն և ապրեն Աստծո նման (տես Մատթ. 5:48): Մենք պետք է արտացոլենք Նրա բնավորությունը կորած աշխարհի հանդեպ: Փրկությունը Աստծո պատկերի վերականգնումն է մարդկության մեջ (այսինքն, Ծննդ. 1: 26,27), որը վնասվել է Ծննդոց 3 մեղքի մեջ ընկնելու ժամանակ:

- **«հաղորդութիւն ունինք իրար հետ»** «Հաղորդակցություն» տերմինը հունարեն *koinōnia* տերմինն է, որը նշանակում է երկու անձանց միջև համատեղ մասնակցություն (տես Հատուկ Թեմա 1: 3):

Քրիստոնեությունը հիմնված է Հիսուսի կյանքը բաժանող հավատացյալների վրա: Եթե մենք ընդունում ենք Նրա կյանքը ներվելով, մենք պետք է ընդունենք Նրա սիրո ծառայությունը (տես 1 Հովհ. 3:16): Աստծուն ճանաչելը վերացական ճշմարտությունն է, այլ նախաձեռնում է հաղորդակցություն և աստվածահաճո կյանք: Քրիստոնեության նպատակը ոչ միայն երկինքն է, երբ մահանում ենք, այլ Քրիստոսանմանությունը հիմա: Գնոստիկ հերետիկոսները միտում ունեին բացառիկության հանդեպ: Այնուամենայնիվ, երբ մարդը ճիշտ է վերաբերում Աստծուն, նա ճիշտ կվարվի իր քույր եղբայրների հետ: Միտո պակասը այլ քրիստոնյաների նկատմամբ Աստծո հետ մեր փոխհարաբերություններում խնդրի մի շողացող նշան է (տես 4: 20-21 և նաև Մատթ. 5: 7; 6: 14-15; 18: 21-35):

▪ **«Ցիսուս Քրիստոսի արհիւր»** Սա վերաբերում է Քրիստոսի զոհաբերվող մահվանը (տես Ես. 52:13-53:12; Մարկ. 10:45; II Կորնթ. 5:21): Դա շատ նման է 2: 2, «մեր մեղքերի համար քավող զոհաբերությունը (քավություն)»: Սա Հովհաննես Մկրտչի հարվածն էր «ահա Աստծո Գառը, որը վերցնում է աշխարհի մեղքը» (տես Հովհ. 1: 29): Անմեղը մահացավ մեղավորների փոխարեն:

Վաղ գնոստիկները հերքեց Հիսուսի ճշմարիտ մարդեղությունը: Հովհաննեսի «արյան» օգտագործումը ամրապնդում է Հիսուսի ճշմարիտ մարդեղությունը:

Անունի հետ կապված հունարեն ձեռագրերում փոփոխություն կա:

1. Հիսուս - NASB, NRSV, NJB, REB, NET
2. Քրիստոս - MSS Ն, B, C
3. Հիսուս Քրիստոս - NKJV

Սա մի օրինակ է Bart D. Ehrman, *The Orthodox Corruption of Scripture*, էջ 153, ցույց տալու, թե ինչպես հին դպիրները փորձել են տեքստը ավելի կոնկրետ դարձնել՝ հերքելու առկա հերետիկոսներին: Տարբերակ # 3 MSS տարբերակը միջնորդություն փորձ էր:

▪ **«մեզ սրբում է ամեն մեղքից»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: «Մեղք» տերմինը ԵԶԱԿԻ է, որը ոչ մի ՀՈԴ չի պարունակում: Սա ենթադրում է ամեն տեսակ մեղք: Ուշադրություն դարձրեք, որ այս համարը չի կենտրոնանում մեկ անգամ մաքրվելուն (փրկություն, հ. 7), այլ շարունակական մաքրմանը (քրիստոնեական կյանք, հ. 9): Երկուսն էլ քրիստոնեական փորձառության մասն են կազմում (տես Հովհ. 13:10):

1:8 «Եթե ասենք թե մեղք չ'ունինք» Սա ևս մեկ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է: Մեղքը հոգևոր իրականություն է ընկած աշխարհում, նույնիսկ հավատացյալների համար (տես Հռ. 7): Հովհաննեսի Ավետարանը այս հարցին հաճախ է անդրադարձնում (տես 9:41; 15:22,24; 19:11): Այս համարը մերժում է բոլոր հին և ժամանակակից պահանջները, որոնք ժխտում են անհատական բարոյական պատասխանատվությունը:

▪ **«մեր անձերը խաբում ենք»** Այս հունարեն արտահայտությունը վերաբերում է ճշմարտության անձնական, կամավոր մերժմանը, ոչ թե անտեղյակությանը:

1:8,9 «Ապա թե» Սրանք երկուսն էլ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ են, որոնք նշանակում են պոտենցիալ գործողություն:

1:9 «խոստովանենք» Սա բարդ հունարեն տերմին է՝ կազմված «խոսել» և «նույն» բառերից: Հավատացյալները շարունակում են համաձայնվել Աստծո հետ, որ նրանք խախտել են Նրա սրբությունը (տես Հռ. 3:23): Սա ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ է, որը նշանակում է շարունակական գործողություն: Խոստովանություն նշանակում է

1. մեղքերի կոնկրետ անունները (հ. 9)
2. մեղքերի հրապարակային ընդունում (տես Մատթ. 10:32; Հակ. 5:16)

3. շրջվել, հեռանալ կոնկրետ մեղքերից (տես Մատթ. 3:6; Մարկ. 1:5; Գործք 19:18; Հակոբ. 5:16)

I Հովհ. օգտագործում է այս տերմինը շատ հաճախ (տես 1: 9; 4: 2, 3, 15; II Հովհ. 7): Հիսուսի մահը ներման միջոց է, բայց մեղավոր մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն հավատարմ արձագանքել, որպեսզի փրկվեն (տես Հովհ. 1:12; 3:16): Տես Հատուկ Թեմա: Խոստովանություն Հովհ. 9:22-23:

- **«մեր մեղքերը»** Տեսք ՀՈԳՆԱԿԻՆ: Սա վերաբերում է մեղքի հատուկ գործողություններին:
- **«նա հաւատարիմ»** Սա վերաբերում է Հայր Աստծուն (տես 2Օրին. 7: 9; 32: 4; Մաղ. 36:5; 40:10; 89: 1,2,5,8; 92: 2; 119: 90; Ես. 49:7, Հռ. 3: 3; 1 Կորնթ. 1: 9; 10:13; II Կորնթ. 1:18; I Թեո. 5:24, II Տիմ. 2:13): Հայր Աստծո անփոփոխ, ողորմած, հավատարիմ բնավորությունը մեր վստահելի հույսն է: Այս արտահայտությունն ընդգծում է Աստծու հավատարմությունը Իր Խոսքին (տես Եբր.10:23; 11:11): Սա կարող է վերաբերել նաև Աստծո Նոր Ուխտի խոստմանը, որը արվել է Եր. 31:34, որը խոստացել էր մեղքերի թողություն:
- **«եւ արդար»** Այս տերմինը անսովոր է սուրբ Աստծո առնչությամբ համատեքստում, որը ազատորեն ներում է անմաքուր մարդկանց: Այնուամենայնիվ, դա աստվածաբանական ճշգրիտ է, քանի որ Աստված մեր մեղքերը լրջորեն է ընդունում, սակայն Նա միջոցներ է տրամադրել մեր մեղքերի թողության համար՝ Քրիստոսի փոխանորդ մահվան միջոցով (կարդա Հռ. 3: 21-31): Տես Հատուկ Թեմա 2: 29:
- **«թողէ . . . սրբէ»** Սրանք երկուսն էլ ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆԵՐ են: Այս երկու տերմինները հոմանիշ են այս կոնտեքստում: Նրանք վերաբերվում են թե մեղավորի փրկությանը, և թե Աստծո հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ շարունակական մաքրմանը (տես Ես. 1:18; 38:17; 43:25; 44:22; Մաղ. 103: 3, 11-13; Միքիա 7:19): Կեղծ ուսուցիչները, ովքեր հերքեցին ավետարանը, թրկության կարիք ունեն: Հավատացյալները, ովքեր շարունակում են մեղք գործել, պետք է փոխհարաբերության վերականգնում ունենան: Հովհաննեսը, կարծես թե, անդրադառնում է առաջին խմբին անուղղակիորեն իսկ երկրորդին՝ ակնհայտորեն:

1:10 «Եթէ ասենք» Տես ծանուցում 1:6.

- **«մեղք չ'գործեցինք»** Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ենթադրում է, որ մարդը նախկինում երբեք մեղք չի գործել և ոչ էլ ներկայում: «Մեղանչել» տերմինը ԵԶԱԿԻ է և վերաբերում է ընդհանուր առմամբ մեղքին: Հունարեն տերմինը նշանակում է «բաց թողնել, վրիպել նշանը»: Սա նշանակում է, որ մեղքը Աստծո Խոսքում հայտնված բաների թե պատվերն է և թե բացթողումը: Կեղծ ուսուցիչները պնդում էին, որ փրկությունը կապված է միայն գիտելիքի հետ, այլ ոչ թե կյանքի:
- **«ստախոս ենք անում նորան»** Ավետարանը հիմնված է ողջ մարդկության մեղավորության վրա (տես Հռ. 3: 9-18,23; 5: 1; 11:32): Կամ Աստված (կարդա Հռ. 3: 4) կամ նրանք, ովքեր պնդում են անմեղությունը, սուտասան են:
- **«նորա խօսքը մեզանում չէ»** Սա ներառում է «logos» տերմինի երկկողմանի ասպեկտը, թե որպես պատգամ և թե որպես անձ (տես 1:1,8; Հովհ. 14:6): Հովհաննեսը հաճախ արդրադառնում դրան որպես «ճշմարտություն»:

2:1 «Իմ որդեակներս» I Հովհ. մեջ Հովհաննեսն օգտագործում է երկու տարբեր շատ փոքրիկ տերմիններ «երեխաների» համար :

1. *teknion* (տես 2: 1, 12, 28; 3: 7,18; 4: 4; 5:21; Հովհ. 13:33)
2. *paidion* (տես 2: 14,18)

Սրանք հոմանիշ են, որոնք չունեն աստվածաբանական տարբերություններ: Այս սիրալիր տերմինները, հավանաբար, գալիս են գրելու պահին Հովհաննեսի ծեր տարիքից:

Հիսուսն օգտագործեց «երեխաներ» տերմինը Հովհ. 13:33՝ անդրադառնալով աշակերտներին:

▪ **«սա գրում եմ ձեզ որ չմեղանչեք»** Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Հովհաննեսը որոշակի տարբերություն է դնում ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ, մեղք գործելու սովորություն դարձած շարունակական կենսակերպի (տես 3: 6,9) և մեղքի անհատական գործողությունների, որոնց դեմ պայքարում և փորձվում են քրիստոնյաները: Նա փորձում է հավասարակշռել երկու ծայրահեղությունները

1. մեղքը չափազանց թեթև կամ աննշան բան համարելը (տես Հռ. 6: 1; I Հովհ. 1: 8-10; 3: 6-9; 5:16)
2. Քրիստոնյայի խստությունը և նրբանկատությունը անձնական մեղքերի նկատմամբ

Այս երկու ծայրահեղությունները, հավանաբար, արտացոլում են գնոստիկ ուսմունքների երկու տարբեր դպրոցներ: Մի խումբն ասում էր, որ փրկությունը ինտելեկտուալ խնդիր էր: Կարևոր չէ, թե մարդն ինչպես է ապրել, քանի որ մարմինը չար էր: Գնոստիկների մյուս խումբը նույնպես հավատում էր, որ մարմինը չար էր և, հետևաբար, պետք է սահմանափակվեր դրա ցանկություններով:

▪ **«եթե մեկը մեղանչե»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը խոսում է պոտենցիալ գործողությունների մասին: Նույնիսկ քրիստոնյաներն են մեղք գործում (տես Հռ. 7):

▪ **«բարեխօս ունինք Հօր մօտ»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը վերաբերում է Հիսուսի շարունակական բարեխոսությանը, որպես մեր երկնային Փաստաբան, պաշտպան (*paraklētos*): Սա իրավաբանական տերմին էր իրավապաշտպանի համար կամ «մեկը կանչված քայլելու կողքից օգնության համար» (-ից *para*, կողքին և *kaleō*, կանչել): Այն օգտագործվում է Հովհաննեսի Ավետարանում Վերնատանը հանդիպման ժամանակ, Սուրբ Հոգու համար, մեր երկրային, մեր մեջ բնակվող բարեխոսի համար (տես Հովհ. 14: 16,25; 15:26; 16: 7): Այնուամենայնիվ սա Հիսուսի համար օգտագործվող միակ տերմինն է (թեև այն ակնարկվում է Հովհ. 14:16; Հռ.8:34; Եբր. 4:14-16; 7:25; 9:24): Պողոսը նույն գաղափարը օգտագործեց Քրիստոսի՝ միջնորդ հանդիսացող գործի համար Հռ.8:34: Այս նույն հատվածում նա նաև խոսում է Սուրբ Հոգու բարեխոսության մասին Հռ. 8:26: Մենք ունենք փաստաբան/բարեխոս երկնքում (Հիսուս) և փաստաբան/բարեխոս մեր մեջ (Հոգին), երկուսին էլ ուղարկեց սիրառատ Հայրը Իր անունից:

▪ **«Յիսուս Քրիստոս արդարին»** Այս բնութագիրը օգտագործվում է Հայր Աստծո համար 1: 9-ում: Նոր Կտակարանի հեղինակները օգտագործում են մի քանի գրական մեթոդներ, որպեսզի հաստատեն Հիսուսի աստվածությունը:

1. օգտագործելով կոչումներ Հիսուսի համար, որոնք Աստծո համար են օգտագործված
2. հաստատելով Աստծո գործողությունները՝ կատարված Հիսուսի կողմից
3. օգտագործելով քերականորեն զուգահեռ արտահայտություններ, որոնք վերաբերում են երկուսին էլ (ԲԱՅԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ կամ ՆԱԽԴԻՐՆԵՐ)

Այն խոսում է Քրիստոսի անմեղության (սրբության, Աստծո նմանության) մասին (տես 3: 5: II Կորնթ. 5:21; Եբր. 2:18; 4:15; 7:26; I Պետ. 2:22: Նա Հոր միջոցն էր՝ բերելու «արդարություն» ժողովուրդ:

2:2

NASB, NKJV “Նա քավություն է մեր մեղքերի համար”

NRSV “նա քավության գոհ է մեր մեղքերի համար”

TEV “Քրիստոսն Ինքը միջոցն է, որով մեր մեղքերը ներվում են”

NJB, RSV “Նա է գոհը մեր մեղքերը քավելու համար”

hilasmos տերմինը օգտագործվում է Մեպտուագինդում Ուխտի Տապանակի կափարիչի համար, որը կոչվում էր ողորմության նստատեղ կամ քավության տեղ: Հիսուսը իրեն դրեց մեր մեղավոր տեղը Աստծո առաջ (հմմտ. 4:10; Հռ. 3:25):

Հունա-հռոմեական աշխարհում այս խոսքը կրում էր փոխհարաբերության վերականգնման գաղափար մեկուսացած Աստծո հետ, որի գինը վճարված էր, բայց բառը Մեպտուագինդում այս իմաստով չի (հիշեք ՆԿ հեղինակներին, բացառությամբ Ղուկասի), երբայդեհ մտածողներ էին, գրում էին Կոյնե հունարեն): Այն օգտագործվել է Մեպտուագինդում և Եբր. 9: 5 թարգմանել է «ողորմության նստատեղ», որը Ուխտի Տապանակի կափարիչն էր Սրբության Սրբոցում, այն տեղը, որտեղ քավություն էր ձեռք բերվել ազգի անունից Քավության օրվա առթիվ (տես Ղն.16):

Այս տերմինը պետք է այնպես հասկացվի, որ չի նվազեցնի Աստծու զոջումը մեղք գործելու համար, սակայն հաստատի մեղավորների հանդեպ Իր դրական վերականգնողական վերաբերմունքը: Լավ քննարկումներ կան James Stewart’s *A Man in Christ*, էջ 214-224: Սրան հասնելու միջոցներից մեկն այն է, թարգմանել տերմինը այնպես, որ այն արտացոլի Աստծո գործը Քրիստոսի մեջ՝ «քավության գոհ» կամ «քավչարար գործությունով»:

Ժամանակակից անգլերեն թարգմանությունները տարբերվում են, թե ինչպես հասկանալ այս գոհաբերության տերմինը: «Քավություն» տերմինը նշանակում է, որ Հիսուսը հանգստացրեց Աստծո բարկությունը (տես Հռ.1:18; 5:9; Եփ. 5:6; Կող. 3:6): Աստծո սրբությունը վիրավորված է մարդկանց մեղքի պատճառով: Սրան անդրադարձավ Հիսուսը Իր ծառայության ժամանակ (տես Հռոմ. 3:25; II Կորնթ. 5:21; Եբր. 2:17):

Որոշ գիտնականներ (այսինքն, C.H. Dodd) կարծում են, որ հեթանոսական (հունական) հասկացությունը (մեղմել Աստծո բարկությունը) չպետք է կիրառվի ՅԱՀՎԵԻ համար, ուստի նրանք նախընտրում են «քավություն», որով Հիսուսի ծառայությունը առնչվեց մարդկության մեղքին (տես Հովհ.1:29; 3:16) Աստծո առջև և ոչ թե Աստծո զայրույթը մեղքի դեմ: Սակայն երկուսն էլ աստվածաշնչյան ճշմարտություն են:

- «մեր մեղքերի համար. Եւ ոչ միայն մերինների բայց բոլոր աշխարհքի էլ» Սա վերաբերում է անասմանափակ քավության ներուժին (տես 4:14; Հովհ. 1:29; 3: 16,17; 12:47; Հռ. 5:18; I Տիմ. 4:10; Տիտոս 2:11; Եբր. 2:9, 7:25): Հիսուսը մահացավ մեղքի և ողջ աշխարհի մեղքերի համար (տես Ծննդ. 3:15): Միակ բանը, որը ողջ աշխարհը պահում է փրկվելուց, ոչ թե մեղքն է, այլ անհավատությունը: Սակայն մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել հավատքով, ապաշխարությամբ, հնազանդությամբ և հաստատակամությամբ:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ինչու՞ է Հովհաննեսն օգտագործում այսքան շատ բայեր, որոնք ներառում են հինգ զգայարանները:
2. Թվարկեք զոհաբերության տերմինները, որոնք գտնվում են հհ.7 և 9:
3. Բացատրեք հերետիկոսների համոզմունքները, որոնց դեմ է պայքարում Հովհաննեսը:
4. Ինչպե՞ս է հ.9 վերաբերվում թե գնոստիկներին և թե հավատացյալներին:
5. Նկարագրեք և սահմանեք «խոստովանություն»-ը:

I ՀՈՎՀԱՆՆԵՍ 2:3-27

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՄԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Քրիստոս մեր Բարեխոսը	Իր հետ համագործակցելու հիմքերը (1:5-2:2)	Հնազանդություն	Քրիստոս մեր Օգնականը	Քայլել Լույսի մեջ (1:5-2:28) Առաջին պայմանը: Քանդել, կոտրել մեղքը (1:8-2:3)
2:1-6	Նրան ճանաչելու փորձը	2:1-2	2:1-2	Երկրորդ պայմանը. Պատվիրանները պահել, հատկապես սիրո պատվիրանը
	2:3-11	2:3-6	2:3-6	2:3-11
Նոր Պատվիրան		Սիրեք միմյանց	Նոր Պատվիրան	
2:7-14		2:7-11	2:7-8	
	Նրանց հոգևոր վիճակը	Ճշմարիտ հարաբերություն Աստծո հետ Քրիստոսով	2:9-11	Երրորդ պայմանը: Անջատվել աշխարհից
	2:12-14	2:12-14	2:12-13	2:12-17
	Մի սիրեք աշխարհը	Աշխարհի ճշմարիտ գնահատումը	2:14	
2:15-17	2:15-17	2:15-17	2:15-17	
Հակաքրիստոսը	Վերջին ժամի կեղծիքները	Ճշմարիտ հավատքի հավատարմությունը	Քրիստոսի թշնամին	Չորրորդ պայմանը. պաշտպանվել հակաքրիստոսներից
2:18-25	2:18-23	2:18-25	2:18-19 2:20-21 2:22-23	2:18-28
	Թող ճշմարտությունը մնա ձեզանում		2:24-25	
2:26-27	2:24-27	2:26-27	2:26-27	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ

նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇՄԲՈՒՈՒՄՆԵՐ 2:3-27

- Ա. Շատ դժվար է ուրվագծել I Հովհաննեսը՝ իր հերթական թեմաների պատճառով:
Այնուամենայնիվ, շատ մեկնաբաններ համաձայն են, որ 2-րդ գլուխը շարունակում է գլուխ 1-ի թեմաները, որոնք Աստծո հետ հաղորդակցման առանձնահատկություններն են, ինչպես դրական, այնպես էլ բացասական:
- Բ. Կա կառուցվածքային զուգահեռ 1 և 2 գլուխների միջև: Հովհաննեսը ներկայացնում է պատգամը ի տարբերություն գնոստիկների կեղծ պնդումների:

Գլուխ 1

1. եթե ասենք... (հհ. 6-7)
2. եթե ասենք... (հհ. 8-9)
3. եթե ասենք... (հ. 10)

Գլուխ 2

1. Ով որ ասում է... (հհ. 4-5)
2. Ով որ ասում է... (հ. 6)
3. Ով որ ասում է... (հհ. 8-11)

- Գ. Այս կոնտեքստը թվարկում է մի քանի թեստեր կամ փաստեր, որոնք հայտնում են ճշմարիտ հավատացյալին (2: 3-25)
1. Մեղքը խոստովանելու պատրաստակամություն (նախապես և շարունակաբար) (1: 5; 2:22)
 2. Կենսակերպ՝ հնազանդություն (2: 3-6)
 3. Կենսակերպ՝ սեր (2: 7-11)
 4. Հաղթանակ չարի վրա (2: 12-14)
 5. Աշխարհը թողնել (2: 15-17)
 6. Հաստատակամություն (2:19)
 7. Ճիշտ վարդապետություն (2: 20-24; 4: 1-3)

- Դ. Հատուկ աստվածաբանական գաղափարներ (2: 18-19)

1. «վերջին ժամանակը» (հ.18)
 - ա. Այս արտահայտությունը և նմանատիպ արտահայտությունները, ինչպես օրինակ «վերջին օրերը», վերաբերում են Բեթլեհեմում Հիսուսի ծնվելու ժամանակաշրջանից մինչև Երկրորդ Գալուստը: Թագավորությունը եկել է, բայց դեռևս լիովին չի ավարտվել:
 - բ. Իսրայելի ժողովուրդը միջաստվածաշնչյան ժամանակաշրջանում սկսեց հավատալ երկու դարաշրջանների, ներկա չար ժամանակաշրջանը և արդարության դարաշրջանը, որը առաջ է եկել Հոգու կողմից, որը դեռ ապագայում էր: Այն, ինչը պարզ չէր բացահայտում ՀԿ, դա Մեսիայի երկու գալուստներն էին, առաջինը որպես Փրկիչ իսկ երկրորդը որպես Վերացնող: Այս երկու ժամանակաշրջանները համընկնում են: Տես Հատուկ Թեմա 2: 17:
 - գ. Սա «ժամ» (*kairos*) տերմինի փոխաբերական օգտագործումն է որպես չճշտված ժամանակահատված (տես Հովհ. 4: 21,23; 5: 25,28; 16: 2):

2. «Նեոը/հակաքրիստոսը» (հ.18)
- ա. Միայն Հովհաննեսն է օգտագործում «Նեո» տերմինը (տես 2: 18,22; 4: 3; II Հովհ. 7): Ուշադրություն դարձրեք 2:18, այն թե ՀՈԳՆԱԿԻ է, և թե ԵԶԱԿԻ (տես II Հովհ. 7):
- 1) Այլ աստվածաշնչյան գրողների մոտ կան համարներ ուղղված նույն վերջին ժամանակվա անձին:
 - ա) Դանիել «Չորրորդ գագանը» (տես 7: 7-8,23-26, 9: 24-27)
 - բ) Հիսուսը «ավերածի պղծությունը» (տես Մարկ.13; Մատթ.24)
 - գ) Հովհաննես «ծովից դուրս եկող գագանը» (տես Հայտ. 13)
 - դ) Պողոս «մեղքի մարդը» (տես II Թեա. 2)
 - 2) Հովհաննեսը նաև տարբերություն է դնում վախճանաբանական անձի և կրկնվող հոգու կամ կեցվածքի, որը միշտ առկա է աշխարհում (տես 2:18; 4: 3; II Հովհ.7; Մարկ.13: 6,22; Մատթ. 24:5, 24):
 - 3) *anti* ՆԱԽԱԴԻՐԸ հունարենում կարող է նշանակել (1) դեմ կամ (2) փոխարեն: Սա նշանակալի է, քանի որ օգտագործվում է ինչպես ԵԶԱԿԻ, այնպես էլ ՀՈԳՆԱԿԻ հ.18: Պատմությունը լի է այն մարդկանցով, ովքեր հակառակվել են Աստծուն և Իր Քրիստոսին (օգտագործ. # 1)
 - ա) Անտիոքոս IV Եպիփանեսը (փոքրիկ եղջյուրը, Դան.8; 11: 36- 45)
 - բ) Ներո և Դոմիցիան (պնդում էին աստվածությունը, բայց ոչ Մեսիա լինելը)
 - գ) Աթեիստական կոմունիզմ
 - դ) Աշխարհիկ հումանիզմ
 Բայց սա նաև համապատասխանում է նրանց, ովքեր դեմ չեն Քրիստոսին, բայց պնդում են, որ Քրիստոսն են (օգտագործ. # 2):
 - ա) կեղծ ուսուցիչները Մարկ.13: 6,22 և Մատթ. 24: 5,24
 - բ) ժամանակակից աղանդների առաջնորդներ
 - գ) Նեոը (Դան.7: 8; 9: 23-26,24-27; II Թեա. 2: 3; և Հայտ. 13)
 - 4) Քրիստոնյաները յուրաքանչյուր ժամանակաշրջանում կփորձառեն թե կեղծ ուսուցիչների, ովքեր մերժում են Քրիստոսին և կեղծ Մեսիաներին, ովքեր պնդում են, որ Քրիստոսն են: Սակայն, մի օր, վերջին օրը, չարի հատուկ մարմնացումը (այսինքն, Հակաքրիստոսը) կկատարի երկուսն էլ:
4. «Մնում է ձեր մեջ» (տես հհ.19, 24, 27, 28)
- ա. Շատ ժամանակակից ավետարանականներ շեշտում են Քրիստոսին հավատալու / վստահելու անձնական նախնական որոշման անհրաժեշտությունը, և սա, անկասկած, ճշմարիտ է: Սակայն Աստվածաշնչի շեշտադրումը ոչ թե որոշումների վրա է, այլ աշակերտության մեջ (տես Մատթ. 28:19-20):
- բ. Հավատացյալի ապահովության / պաշտպանվածության վարդապետությունը պետք է անբաժանելիորեն կապված լինի հաստատականության վարդապետության հետ: Տես Հատուկ Թեմա. Համբերելու Կարիքը Հովհ. 8:31: Դա ոչ թե / կամ տարբերակ է, այլ երկուսն էլ/և աստվածաշնչյան իրականություն: Իրականում «մնալը» աստվածաշնչյան նախազգուշացում է (տես Հովհ. 15):
- գ. Այլ հատվածներ մնալու մասին Մատթ. 10:22; 13: 1-9,18-23; Մարկ. 13:13; Հովհ. 8:31; 15:1-27; I Կոր. 15:2; Գաղ. 6:1; Հայտ. 2: 2,7,11,17,26; 3:5,12,21;21:7. Տես Հատուկ Թեմա «մնալ, կենալ» 2: 10:

ԲԱՈՒ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ 2:3-6

³Եւ սորանով գիտենք որ ճանաչեցինք նորան, եթէ նորա պատուիրանքները պահենք: ⁴Ով որ ասում է թէ ճանաչեցի նորան եւ նորա պատուիրանքները չէ պահում, ստախօս է, եւ ճշմարտութիւնը չ'կայ նորանում: ⁵Բայց ով որ նորա խօսքը պահէ, իրաւի Աստուծոյ սէրը նորանում կատարեալ է. սորանով ճանաչում ենք որ նորանում ենք: ⁶Ով որ ասում է թէ նորանում եմ բնակվում, պէտք է, ինչպէս որ նա գնաց, ինքն էլ այնպէս գնայ:

2:3 «սորանով գիտենք որ ճանաչեցինք նորան» Բառացիորեն սա «մենք գիտենք, որ մենք ճանաչել ենք Նրան»: Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որին հետևում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆԸ՝ ընդգծելով, որ այդ տրավմատիզացված եկեղեցիների քրիստոնյաները կարող են լիովին ապահով լինել իրենց փրկության համար գնաստիկ կեղծ ուսմունքների լույսի ներքո:

«Իմանալ, ճանաչել» բառը օգտագործվում է անձնական հարաբերությունների իր իսկ եբրայերեն իմաստով (տես Ծննդ. 4: 1; Եր. 1: 5) և իր հունարեն իմաստով՝ փաստեր ինչ-որ մեկի կամ որևէ մեկի մասին: Ավետարանը թե անձ է և թե ճշմարտության մարմին: Այս արտահայտության շեշտադրումները հետևյալն են

- 1. մենք կարող ենք իմանալ Աստծուն
- 2. մենք կարող ենք իմանալ, թե ինչ է Նա ուզում մեր կյանքերի համար
- 3. մենք կարող ենք իմանալ, որ մենք գիտենք (տես 5:13)

Աստծո հետ մեր փոխհարաբերությունների հավաստիացումներից մեկը բացահայտվում է մեր գործողությունների և դրդապատճառների միջոցով (տես Մատթ. 7; Հակոբոս, I Պետրոս): Սա I Հովհ. կրկնվող թեմա է (տես 2: 3,5; 3:24; 4:13; 5: 2,13):

Հովհաննեսի գրվածքները հաճախ են օգտագործում երկու հունարեն բառեր «ճանաչել, իմանալ» (*ginōskō* և *oida*) (27 անգամ I Հովհ. հինգ գլուխներում) և դրա հոմանիշները: Կոյնե հունարենում այս տերմինների միջև կարծես թե նկատելիորեն իմաստային տարբերություն չկա: Ընտրությունը ոճական է: Հետաքրքիր է, որ Հովհաննեսը չի օգտագործում ուժեղացված *epiginōsk* տերմինն է:

Հովհաննեսը գրում է հավատացյալներին քաջալերելու, ինչպես նաև հերետիկոսությունը հերքելու համար: Հովհաննեսի Ավետարանը և I Հովհաննեսը օգտագործում են «ճանաչել, իմանալ» տերմինները ավելի, քան ՆԿ գրված այլ գրքեր: I Հովհ. հավատքի գիրք է, հիմնված ավետարանի գիտելիքների և համեստ ապրելակերպի՝ սիրո և հնազանդության վրա (տես Հակոբոս Գիրք):

▪ **«եթէ»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է հնարավոր գործողություն:

▪ **«նորա պատուիրանքները պահենք»** Ուշադրություն դարձրեք պայմանական տարրին (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ): Աստծո առաջարկած նոր ուխտը անպայմանական է, սակայն պայմանական է այն առումով, որ մարդը պէտք է հավատքով ապաշխարի և արձագանքի հնազանդությամբ (տես 2: 3-5; 3: 22,24; 5: 2,3; Հովհ. 8: 51-52; 14:15, 21,23; 15:10; Հայտ. 2:26; 3: 8,10; 12:17; 14:12): Ճշմարիտ դարձի գալու վկայություններից մեկը Լույսին հնազանդվելն է (Հիսուսին և ավետարանին, հմմտ. Դուկ. 6:46): Նույնիսկ ՀԿ հնազանդությունը ավելի լավ էր, քան զոհաբերական ծեսը (տես I Թագ. 15:22; Երեմ. 7:22-23): Հնազանդությունը չի բերում կամ ապահովում փրկություն, այլ ապացուցում է փրկության փաստը: Դա հիմք չէ (տես Եփես. 2: 8-9), այլ պտուղը (տես Եփ. 2:10):

2:4 «Ով որ ասում է» Սա Հովհաննեսի սուր քննադատության ձևաչափի տեքստային նշանն է:

▪ **«Ճանաչեցի նորան»** Սա կեղծ ուսուցիչների մի քանի պնդումներից մեկն է (տես 1, 6, 8, 10; 2: 4, 6, 9): Սա սուր քննադատություն է («ով ասում է ...»), ինչպես Մադաքիայի, Հռոմեացիների և Հակոբոս Գրքերում: Կեղծ ուսուցիչները պահանջում էին Աստվածճանաչություն (ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ), բայց փորձում էին փրկությունը առանձնացնել աստվածահաճո կյանքից: Նրանք արդարացումը բաժանում էին սրբացումից: Նրանք պնդում էին Աստծո գերագույն (այսինքն, գաղտնի) գիտելիքները, բայց նրանց ապրելակերպը բացահայտում էր իրենց իսկական շարժառիթները:

▪ **«Էս նորա պատուիրանքները չէ պահում»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը խոսում է սովորական ապրելակերպի գործողությունների մասին: Մեր կյանքը բացահայտում է մեր հոգևոր կողմնորոշումը (տես Մատթ.7): 4-րդ համարը բացասաբար է արտահայտում ճշմարտությունը, իսկ 5-րդ համարը նույն ճշմարտությունը արտահայտում է դրականորեն:

▪ **«ստախոս է»** Ավելի վատ բան չկա, քան ինքնախաբեությունը: Հնազանդությունը ճշմարիտ ապաշխարության վկայությունն է: Դուք կճանաչեք նրանց իրենց պտուղներից (տես Մատթ. 7):
 Հովհաննեսը մի քանի կրոնավորների կոչում է (ուսուցիչ, քարոզիչներ) ստախոսներ (տես 1: 6,10; 2: 4,20; 4:20): Նրանք կրոնավոր են, բայց ուղիղ չեն Աստծո հետ:

2:5 «Բայց ով որ նորա խօսքը պահէ» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, որը խոսում է սովորական ապրելակերպի գործողությունների մասին: UBS ձեռնարկի հեղինակները *A Handbook on The Letters of John* (Haas, Jonge, and Swellengrebel) առաջարկում են հետաքրքիր մեկնաբանություններ այս հունարեն կառուցվածքի շուրջ «հարաբերական դերանուն հունարեն մասնիկով, «an» կամ «ean» և հետևյալ բայը ստորադասական իմաստով, որը հանդիպում է 3: 17,22; 4:15; 5:15; III Հովհ. 5: Թվում է, ընդհանուր առմամբ, տեղի է ունենում հանգամանքները» (Էջ 40): Հնազանդությունը ուխտի հավատքի կարևորագույն կողմն է: Սա I Հովհ. և Հակոբոս Թղթի կենտրոնական ուղերձն է: Մարդը չի կարող ասել, որ ճանաչում է Աստծուն և դեռևս հրաժարվում է Կենդանի Խոսքից և գրավոր Խոսքից՝ մեղքով ապրելով (տես 3: 6,9):

▪ **«իրաւի Աստուծոյ սերը նորանում կատարեալ է»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը խոսում է ավարտված գործողությունների մասին (տես 4: 12,17,18): Դա անորոշ է, քերականորեն խոսելիս
 1. Աստծո սերը մեզ համար (տես 4:12)
 2. մեր սերը Աստծո համար (տես 5.3)
 3. պարզապես Աստծո սերը ընդհանրապես մեր սրտերում
 «Կատարյալ» տերմինը (*telos* հմմտ. 4: 12,17,18) նշանակում է հասուն, ամբողջական կամ լիովին հազեցած հանձնարարված աշխատանքի համար (տես Եփ. 4:12), առանց մեղքի (տես 1: 8,10):

▪ **«սորանով ճանաչում ենք որ նորանում ենք»** Այստեղ կրկին շեշտը հավատացյալների ունակության վրա է, հավատք ունենալ Աստծո հետ փոխհարաբերությունների հանդեպ: Մեր Նրա մեջ լինելու գաղափարը (մնալ, կենալ, հմմտ. հ.6) Հովհաննեսի գրվածքների հերթական թեման է (տես Հովհ. 14:20-23, 15: 4-10; 17:23,23,26; I Հովհ. 2: 24-28; 3: 6,24; 4: 13,16):

2:6 «եւ բնակվում» Տես Հատուկ Թեմա 2: 10: ՆԿ նաև պնդում է, որ Հայրը մեր մեջ է մնում (տես I Հովհ. 5:20) և որ Հայրը և Որդին մնում են մեր մեջ (տես Հովհ.14:23 և 17:21): Ուշադրություն դարձրեք, որ նույնիսկ նախադասության մեջ, որը կարևորում է հավաստիությունը, անհրաժեշտ կա նախազգուշացմանը «պարտադիր» լինելու մասին (տես 2: 6, ՆԵՐԿԱ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ, «մնում է Նրան»): Ավետարանը պայմանական ուխտ է՝ իրավունքներով և պարտականություններով:

▪ **«պէտք է, ինչպէս որ նա գնաց, ինքն էլ այնպէս գնայ»** Մա եւ մեկ շեշտադրում է «ճշմարիտ հավատքի», հավատք `որպէս ապրելակերպ (կարդա Հակ. 2:14-26): Հավատքը ոչ միայն որոշում է, այլև շարունակական անձնական փոխհարաբերություն Հիսուսի հետ, որը, բնականաբար, ամեն օր պէտք է երևա քրիստոնէական ապրելակերպում: Հավիտենական կյանքը ունի տեսանելի հատկանիշներ: Մա զուգահեռ է 1: 7: Քրիստոնէության նպատակը ոչ միայն երկինքն է, երբ մահանանք, այլ քրիստոսանմանություն հիմա (տես Հռ. 8: 29-30; II Կորնթ.3:18; Գաղ. 4:19; Եփ.1: 4; I Թես. 3: 13; 4: 3, I Պետ.1: 15): Մենք փրկվել ենք ծառայելու համար: Մենք ուղարկվում ենք առաքելության, ինչպէս որ Նա ուղարկվեց առաքելության: Երբ Նա Իր կյանքը դրեց ուրիշների համար, այնպէս էլ մենք պէտք է տեսնենք ինքներս մեզ որպէս ծառաներ (տես I Հովհ. 3:16):

«Նա» բառացիորեն «այն Մէկը», որը տարածված իդիոմա է Հովհաննէսի գրվածքներում Հիսուսի համար (այսինքն, Հովհ. 2:21; 19:35; I Հովհ. 2: 6; 3: 3,5, 7, 16; 4:17): Հաճախ այն օգտագործվում է անհարկի ձևով (տես Հովհ. 7:11; 9: 12,28; 19:21):

Եթե «այն Մէկը» վերաբերում է Հիսուսին, ապա ում է վերաբերում հ. 6 «Նրա մեջ»: Հովհաննէսը հաճախ օգտագործեց նպատակաուղղված անորոշություն: Դա կարող էր վերաբերել Հորը (տես Հովհ. 15: 1-2, 9-10) կամ Որդուն (տես Հովհ. 15: 4-6): Այս նույն անորոշությունը կարող է պատկերված լինել հ. 20 «Սուրբը»:

Արևելահայերեն Աստվածաշունչ 2:7-11
⁷Եղբայրներ, ոչ թէ մի նոր պատուիրանք եմ գրում ձեզ, այլ հին պատուիրանքը որ սկզբիցն ունէիք եւ հին պատուիրանքն այն խօսքն է որ լսեցիք սկզբիցը: ⁸Դարձեալ նոր պատուիրանք եմ գրում ձեզ, որ ճշմարիտ է նորանում եւ ձեզանում. որ խաւարն անցնում է, եւ ճշմարիտ լոյսն արդէն երեւում է: ⁹Ով որ ասում է, թէ լոյսի մէջ է եւ իր եղբօրն ատում է, մինչեւ հիմա խաւարի մէջ է: ¹⁰Նա որ իր եղբօրը սիրում է, լոյսի մէջ է մնում, եւ գայթակղութիւն չ'կայ նորանում: ¹¹Բայց նա որ իր եղբօրն ատում է, խաւարումն է, եւ խաւարի մէջ է ման գալիս, եւ չ'գիտէ թէ ուր է գնում, որովհետեւ խաւարը կուրացրեց նորա աչքերը:

2:7 «Եղբայրներ» Հովհաննէսը հաճախ իր ընթերցողներին կանչում է սիրալիք տերմիններով (տես 2: 1): Այս տերմինը սովորաբար օգտագործվում էր Հոր կողմից Հիսուսին ուղղված Նրա մկրտության (տես Մատթ. 3:17) և այլակերպության ժամանակ (տես Մատթ. 17:5): Դա Հովհաննէսի նամակների մեջ փրկվածների ընդհանուր նշանն է (տես 3: 2,21; 4: 1,7,11; և III Հովհ. 1,2,5,11):

Textus Receptus- ն ունի «եղբայրներ» (MSS K, L, NKJV), բայց I Հովհ. դա օգտագործում է միայն 3:13: «Սիրելիներ» բառին աջակցում են երկաթագիր հունարեն ձեռագրերը (Տ, A, B, C, P, և Վուլգատ, Փեշիթա, Ղպտի և հայերեն տարբերակները (տես Bruce Metzger, *A Textual Commentary On the Greek New Testament*, էջ 708):

▪ **«ոչ թէ մի նոր պատուիրանք եմ գրում ձեզ, այլ հին պատուիրանքը»** Մա Հովհաննէսի գրվածքների առանձնահատկությունն է (տես Հովհ. 13:34, 15:12,17): Պատվերը ժամանակի առումով նոր չէ, այլ նոր էր որակի առումով: Հավատացյալներին պատվիրված է սիրել միմյանց, ինչպէս Հիսուսը սիրեց նրանց (հմմտ. Հովհ. 13:34):

- «Հին պատուիրանք» կարելի է հասկանալ երկու իմաստով,
1. Մովսէսի Օրենքը (այսինքն, Ղևտ. 19:18)
 2. Հովհաննէսի Ավետարանում արձանագրված Հիսուսի ուսմունքները (այսինքն, Հովհ. 13:34; 15:12,17)

▪ **«հին պատուիրանքը»** 2: 3-ում «պատվիրան» բառը ՀՈԳՆԱԿԻ է, բայց այստեղ այն ԵԶԱԿԻ է: Մա կարծես, նշանակում է, որ սերը կատարում է բոլոր մյուս պատվիրանները (Գաղ.5:22; I Կորնթ 13:13): Սերը ավետարանի մանդատն է:

▪ **«որ սկզբիցն ունէիք»** Սա ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը վերաբերում է լսողի առաջին հանդիպմանը ավետարանի պատգամի հետ (հմմտ. հ. 24; 1: 1; 3:11; II Հովհ. 5-6):

▪ **«լսեցիք»** Textus Receptus- ը ավելացնում է «սկզբից» արտահայտությունը (օգտագործված է համարի ավելի վաղ մասում):

2:8 «որ ճշմարիտ է նորանում» Այս ԴԵՐԱՆՎԱՆ սեռը հ. 7 ԻԳԱԿԱՆԻՑ փոխվում է, որը համապատասխանում է «հրաման», ՉԵԶՈՔԻ, որը վերաբերում է ամբողջ ավետարանին: ԴԵՐԱՆՎԱՆ հետ կապված նման փոփոխություն կա Եփ. 2: 8-9:

▪ **«խաւարն անցնում է»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է (ըստ A. T. Robertson's *Word Pictures in the New Testament*, էջ 212): Նրանց համար, ովքեր Աստծուն ճանաչում են Քրիստոսում, նոր դարաշրջանը սկսվել է և շարունակում է լույս բացել նրանց սրտերում և մտքերում (այսինքն՝ իրականացվող վախճանաբանություն):

▪ **«ճշմարիտ լոյսն արդէն երեւում է»** Հիսուսը աշխարհի լույսն է (տես Հովհ. 1: 4-5,9; 8:12), որը աստվածաշնչյան փախաբերություն է ճշմարտության, հայտնության և բարոյական մաքրության համար: Տես ծանուցումներ 1: 5 և 1: 7: Նոր դարաշրջանը սկսվել է:

2:9 «եւ իր եղբօրն ատում է» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը խոսում է հաստատված շարունակական վերաբերմունքի մասին: Աստվածությունը խավարի վկայությունն է (տես Մատթ. 5:21-26):

2:10 «Նա որ իր եղբօրը սիրում է, լոյսի մէջ է մնում» Այս կոնտեքստում գերակշռում են ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԸ: Սերը հավատացյալի փրկության և ճշմարտության և լույսի հետ անձնական փոխհարաբերությունների ապացույցն է: Սա նոր, բայց դեռևս հին պատվիրան է (տես 3: 11,24; 4: 7,11,21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: «ՄՆԱԼ, ԿԵՆԱԼ» ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Հովհաննեսի Ավետարանը նկարագրում է Հայր Աստծո և Որդու՝ Հիսուսի միջև առանձնահատուկ հարաբերությունները: Դա փոխհարաբերություն է, որը հիմնված է ենթակայության և հավասարության վրա: Ավետարանի ողջ ընթացքում Հիսուսը խոսում է այն մասին, Հայրը խոսում է Ինքը լսում է, անում է այն, ինչ Նա տեսնում է Հորը անելիս: Հիսուսը չի գործում Իր սեփական ցանկությամբ, այլ Հոր կամքով:

Այս մտերմիկ ընկերակցությունն ու սպասավորությունը Հիսուսի և Նրա հետևորդների միջև փոխհարաբերության օրինակ է տալիս: Այս մտերմիկ ընկերակցությունը ոչ թե անձի կլանում է (ինչպես արևելյան միստիցիզմը), այլ իմացության էթիկական, բարոյական կենսակերպ էր: Ընկերակցությունը (1) ճանաչողական էր (ավետարանի աշխարհայացքը, որպես Աստծո Խոսք); (2) հարաբերական (Հիսուսը Աստծո խոստացած Մեսիան էր, որը վստահություն էր ներշնչում և հենարան էր); և (3) էթիկական (Նրա բնավորությունը վերարտադրվում է աստվածավախ հավատացյալների մեջ):

Հիսուսը իդեալական մարդ է, ճշմարիտ Իսրայելացի, մարդկության չափանիշը: Նա բացահայտում է այն, ինչը պետք է Ադամը լիներ և կարող էր լինել (մարդկային կերպով ասած): Հիսուսը Աստծո վերջնական «պատկերն է»: Նա վերականգնում է մարդկության ընկած պատկերը՝ 1) բացահայտելով Աստծուն, (2) մահանալով մեր համար (փոխարինող քավություն); և (3) մարդկանց օրինակ տալով: «Մնալ, կենալ» տերմինը (*menō*) արտացոլում է Քրիստոսանմանության նպատակը

(Հո. 8:29), ընկած, մեղավոր մարդկության վերականգնումը (հմմտ. Ծննդ. 3):

Աստծո և Նրա գերագույ ստեղծագործության մարդկության այս վերամիավորումը հաղորդակցության նպատակն է Պողոս Առաքյալի «Քրիստոսում» և Հովհաննես Առաքյալի «կացեք Ինձանում»:

Ծանուցում Հովհաննեսի գործածության,

1. Մնալը Հոր և Որդու միջև
 - ա. Հայրը Որդու մեջ (Հովհ. 10:38; 14: 10,11,20; 17: 21,23)
 - բ. Որդին Հոր մեջ (Հովհ. 10: 38; 14: 10,11,20; 17:21)
2. Մնալը Աստծո և հավատացյալի միջև
 - ա. Հայրը հավատացյալի մեջ (Հովհ.14: 20,23; I Հովհ. 3:24; 4: 12-13,15)
 - բ. հավատացյալը Հոր մեջ (Հովհ. 14.20,23; 17:21; I Հովհ. 2: 24,27; 4: 13,16)
 - գ. Որդին հավատացյալի մեջ (Հովհ. 6:56; 14: 20,23; 15: 4,5; 17: 21,23)
 - դ. հավատացյալը Որդու մեջ (Հովհ. 6:56; 14:20,23; 15: 4,5,7; I Հովհ. 2: 6,24,27,28)
3. Այլ մնալու տարրեր (դրական)
 - ա. Աստծո խոսքը
 - 1) բացասական (Հովհ. 5:38; 8:37; I Հովհ. 1:10; II Հովհ. 9)
 - 2) դրական (Հովհ. 8:31; 15: 2; I Հովհ. 2: 14,24; II Հովհ. 9)
 - բ. Աստծո սերը (Հովհ. 15:9-10; 17:26; I Հովհ. 3:17; 4:16)
 - գ. Աստծո Հոգին
 - 1) Որդու վրա (Հովհ.1:32)
 - 2) հավատացյալի մեջ (Հովհ.14:17)
 - դ. Հնազանդությունը մնում է (Հովհ. 15:10; I Հովհ. 3:24)
 - ե. Սերը մնում է լույսի մեջ (I Հովհ. 2:10)
 - զ. Աստծո կամքը կատարելը մնում է (I Հովհ. 2:17)
 - է. Օծումը մնում է (I Հովհ. 2:27)
 - ը. Ճշմարտությունը մնում է (II Հովհ. 2)
 - թ. Որդին մնում է (Հովհ. 8:35; 12:34)
4. Այլ մնալու տարրեր (բացասական)
 - ա. Աստծո բարկությունը մնում է (Հովհ. 3:36)
 - բ. Մնալ խավարի մեջ (Հովհ. 12:46)
 - գ. Նետվում է...այրվում է(չի մնում) (Հովհ.15: 6)
 - դ. Մեղք գործողը (չի մնում) (I Հովհ.3:6)
 - ե. Չսիրողը (չի մնում) (I Հովհ. 3:14)
 - զ. Մարդասպանը (հավիտենական կյանք չունի) (I Հովհաննես 3.15)
 - է. Մահվան մեջ (I Հովհ. 3:14)

■ **NASB, NKJV “և գայթակղություն չկա նրանում”**

NRSV “այսպիսի անձի մեջ պատճառ չկա գայթակղվելու”

TEV “մեր մեջ ոչինչ չկա, որը պատճառ կլինի որևէ մեկին մեղանչելու”

NJB “նրանում ոչինչ չկա, որ իրեն գցի”

Այս համարը երկու հնարավոր թարգմանություններ ունի:

1. հավատացյալը, ով սիրո մեջ է քայլում, անձամբ չի գայթակղվի (տես հ.11)
2. հավատացյալը, ով սիրո մեջ է քայլում, ուրիշներին գայթակղություն չի պատճառի (տես Մատթ.18:6; Հո.14:13; I Կորնթ.8:13)

Երկուսն էլ ճիշտ են: Ավետարանը օգուտ է տալիս հավատացյալին և մյուսներին (ինչպես մյուս հավատացյալներին, այնպես էլ կորածներին):

ՀԿ «գայթակղություն» հավատքի հակառակն է (համոզված ուտքով, կայուն դիրքորոշում): Աստծո կամքը և հրամանները պատկերավոր կերպով էին նկարագրված: Այսպիսով, «քայլելը» կարող է փոխաբերություն լինել ապրելակերպի համար:

Տես Հատուկ Թեմա. Հավատքը և հավատարմությունը Հին Կտակարանում Հովհ.1:14:

2:11 «Բայց նա որ իր եղբորն ատում է, խաւարումն է, եւ խաւարի մէջ է ման գալիս» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է (ատում է), որին հաջորդում է ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ (քայլում է): Ատելությունը անհավատության նշան է (տես 3:15; 4:20): Լույս և խավար, սեր և ատելություն չեն կարող լինել նույն անձի մէջ: Սա բնորոշ է Հովհաննէսի սև կամ սպիտակ դրոյթներին: Նա արտահայտում է իդեալականը: Հաճախ, սակայն, հավատացյալները պայքարում են անարդարության, չսիրելու և անտեսելու դեմ: Ավետարանը բերում է ինչպես ակնթարթային փոփոխության, այնպես էլ առաջադիմական փոփոխության:

▪ **«խաւարը կուրացրեց նորա աչքերը»** Սա կարող է վերաբերել կամ հավատացյալների մնայուն մեղքի բնույթին (տես II Պետ.1:5-9) կամ սատանայի գործողություններին (II Կորնթ. 4: 4): Մարդը երեք թշնամի ունի 1) մեղավոր աշխարհի համակարգը, 2) անձնական հրեշտակային փորձիչը սատանան, և 3) մեր ընկած, մեղավոր Ադամական բնույթը (տես Եփ. 2: 2-3, 16; Հակ. 4):

Արևելահայերեն Աստվածաշունչ 2:12-14
¹²Գրում եմ ձեզ, որդեակներ, որ ձեր մեղքերը թողուած են ձեզ նորա անունի համար: ¹³Գրում եմ ձեզ, հայրեր, որ ճանաչեցիք նորան որ սկզբիցն է. Գրում եմ ձեզ, երիտասարդներ, որ դուք յաղթեցիք չարին: ¹⁴Գրում եմ ձեզ, մանկունք, որ ճանաչեցիք Հօրը. Գրեցի ձեզ, հայրեր, որ ճանաչեցիք նորան որ սկզբիցն է. Գրեցի ձեզ, երիտասարդներ, որ դուք զօրաւոր էք. Եւ Աստուծոյ խօսքը բնակվում է ձեզանում, եւ դուք յաղթել էք չարին:

2:12-14 Այս համարներում բոլոր ԲԱՅԵՐԸ (բացի «Ես գրում եմ» [NASB 1970], «Ես գրել եմ» [NASB 1995], UBS⁴ տալիս է երկրորդ տարբերակը «A» վարկանիշը [որոշակի] ՎԱՂԱԿԱՍԱՐ ԺԱՄԱՆԱԿ, որը խոսում է անցյալում արդյունք ունեցող գործողության մասին, որը ունի շարունակական գոյություն ունեցող: Քանի որ նախորդ կոնտեքստը հասցեագրված էր կեղծ ուսուցիչներին, այս կոնտեքստը անդրադառնում է հավատացյալին: Հավատացյալներին տրվում են երեք տարբեր անուններ՝ «փոքր երեխաներ», «հայրեր» և «երիտասարդներ»: Այս պարբերությունը չի համապատասխանում հավաստիացման ապրելակերպի ապացույցների կոնտեքստին: Հնարավոր է, որ մենք գործ չենք ունենում երեք խմբերի հետ, բայց գրական բաժանումը նկարագրում է բոլոր քրիստոնյաների կարգավիճակը:

Կան չորս բաներ, որոնք հավատացյալները գիտեն:

1. որ նրանց մեղքերը ներված են (հ. 12)
2. որ Քրիստոսի միջոցով նրանք հաղթել են չարին (հ. 13)
3. որ նրանք «գիտեն», որ իրենք հաղորդակցություն ունեն Հոր (հ.14) և Որդու հետ (հ.13-14)
4. որ նրանք ուժեղ են Աստծո Խոսքի մէջ (հ. 15)

Այս ցանկը արտահայտվում է քերականորեն (1) «Ես գրում եմ ձեզ» արտահայտությունը և (2) վեց *hoti* (որովհետև) ՀԱՏՎԱԾՆԵՐԸ:

2:12 «որ ձեր մեղքերը թողուած են ձեզ նորա անունի համար» Հիսուսի ծառայությունը մարդկության միակ հույսն է ներման համար (ՎԱՂԱԿԱՍԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ): Եբրայերեն հասկացողության մէջ անունը հավասար է բնույթին և անձնավորությանը (տես 3:23; III Հովհ. 7; Հռ. 10: 9-13; Փիլ. 2: 6-11):

Գոյություն ունի մի շարք վեց *hoti* ՀԱՏՎԱԾՆԵՐ հ. 12-14: Դրանք կարող են լինել ՆՊԱՏԱԿԻ

ՀԱՏՎԱԾՆԵՐ (NASB, NRSV, NJB, «որովհետև») կամ պարզապես գրական ձևով ներկայացնել փաստերի դրույթները (NET, «որ»):

2:13 «նորան որ սկզբիցն է» ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ I Հովհ. մեջ երկիմաստ են և կարող են վերաբերվել Հայր Աստծուն կամ Որդի Աստծուն: Կոնտեքստում այս մեկը վերաբերում է Հիսուսին: Սա նախագոյության դրույթ է և, այսպիսով, Նրա Աստվածությունը (այսինքն, Հովհ.1: 1,15; 3:13; 8: 48-59; 17: 5,24; II Կորնթ 8: 9; Փիլ. 2:6-7; Կող. 1:17; Եբր. 1: 3):

▪ **«դուք յարթեցիք»** Սա I Հովհ. կրկնվող խոստում է և նախագոյության (տես 2:14, 4: 4, 5: 4-5, 18-19): Սա արտահայտվում է ՎԱՂԱԿԱՍԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը խոսում է գործընթացի զագաթնակետի մասին: Այստեղ կրկին Հովհաննեսը գրում է սև ու սպիտակ առումով (այս կատարված վախճանաբանական հաղթանակ հիշեցնում է Հովհաննեսի Ավետարանը): Հավատացյալները հաղթողներ են, սակայն Աստծո Թագավորության «արդեն, բայց ոչ դեռ» լարվածության պատճառով, նրանք դեռ պայքարում են մեղքի, գայթակղության, հալածանքի և մահվան դեմ:

▪ **«չարին»** Սա հղում է սատանայի մասին, որը կրկին հիշատակվում է հ.14: 13 և 14 համարները գուցա հեն են: Տես Հատուկ Թեմա: Հովհ.12:31:

▪ **«որ ճանաչեցիք չորը»** «Իմանալ» աստվածաշնչյան գաղափարը ներառում է մտերմիկ անձնական հարաբերության երբայերեն իմաստը (տես Ծննդ.4: 1; Եր. 1: 5) և հունարեն «փաստերի մասին» գաղափարը: Ավետարանը թե անձ է, որին պետք է ողջունել (Հիսուսը), և թե պատգամ (վարդապետություն) ընդունելու և գործելու և կյանքը ապրելու համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՃԱՆԱԶԵԼ, ԻՄԱՆԱԼ (հիմնականում օգտագործված է 2 Օրինացում որպես օրինակ)
Երբայերեն բառը «ճանաչել, իմանալ» (BDB 393) ունի մի քանի իմաստ (իմաստային բաժիններ) *Qal*.

1. հասկանալ բարին ու չարը - Ծննդ. 3:22; 2 Օրին. 1:39; Ես. 7:14-15; Հովնան 4:11
2. ճանաչել հասկանալով – 2 Օրին. 9:2,3,6; 18:21
3. ճանաչել փորձառելով - 2 Օրին. 3:19; 4:35; 8:2,3,5; 11:2; 20:20; 31:13; Հեսու 23:14
4. մտածել, կարծել, համարել - 2 Օրին. 4:39; 11:2; 29:16
5. իմանալ անձնապես
 - ա. անձ - Ծննդ. 29:5; Ել. 1:8; 2 Օրին. 22:2; 33:9
 - բ. աստված - 2 Օրին. 11:28; 13:2,6,13; 28:64; 29:26; 32:17
 - գ. ՅԱՀՎԵ - 2 Օրին. 4:35,39; 7:9; 29:6; Ես. 1:3; 56:10-11
 - դ. սեքսուալ – Ծննդ. 4:1,17,25; 24:16; 38:26
6. սովորած հմտություն կամ գիտելիք - Ես. 29:11,12; Ամովս 5:16
7. լինել իմաստուն - 2 Օրին. 29:4; Առ. 1:2; 4:1; Ես. 29:24
8. Աստծո իմացությունը
 - ա. Մովսեսի մասին - 2 Օրին. 34:10
 - բ. Իսրայելի մասին - 2 Օրին. 31:21,27,29

2:14 «դուք զօրառը էք» Ուշադրություն դարձրեք, որ նրանց ուժը հիմնված է Աստծո մնայուն Խոսքի վրա: Սա նման է Պողոսի հորդորներին Եփ. 6:10-18: Մնացող բառը ավետարանն է: Սա թե գաղափարական է և թե անձնական, Աստված նախաձեռնեց եւ անհատապես ընդունեց, թե որոշումը և թե աշակերտությունը, թե ճշմարտությունը և թե հավատարմությունը:

▪ **«Աստուծոյ խօսքը բնակվում է ձեզանում»** Սա բնութագրում է Աստծո Խոսքի գաղափարը (ավետարանը, տես հ.24): Սա ակնարկում է Հովհ. 15: Այն օգտագործվում է բացասական իմաստով Հովհ. 5:38 և 8:37:

- «**դուք յաղթել էք չարին**» Սա շեշտադրում է ճշմարիտ սրբերի հաստատակամությունը: Այն նորից երևում է հհ. 17,19,24,27,28; 5:18 և II Հովհ. 9. Հավատացյալի անվտանգության վարդապետությունը պետք է հավասարակշռված լինի ճշմարտության հետ, որ նրանք, ովքեր իսկապես փրկագնված են, կպահպանվեն մինչև վերջ (տես Հայտ. 2: 7,11,17,26; 3: 5): , 12,21): Տես Հատուկ Թեմա. Համբերելու Կարիքը Հովհ.8:31: Սա հիմա չի ենթադրում անմեղություն, թեև դա տեսականորեն հնարավոր է Քրիստոսի ավարտված աշխատանքի շնորհիվ (տես Հռ.6):

Արևելահայերեն Աստվածաշունչ 2:15-17

¹⁵Մի սիրեք աշխարհքը. եւ ոչ էլ այն որ աշխարհքի մեջ է: ¹⁶Եթէ մէկն աշխարհքը սիրէ, Հօր սէրը նորանում չէ. Որովհետեւ ամեն ինչ որ աշխարհքումն է՝ մարմնի ցանկութիւնը, աչքերի ցանկութիւնը եւ այս կեանքի ամբարտաւանութիւնը, Հօրիցը չէ, այլ աշխարհքիցն է: ¹⁷Եւ աշխարհքը անցնում է եւ նորա ցանկութիւնն էլ, բայց Աստուծոյ կամքն անողը մնում է յաւիտեան:

2:15 «Մի սիրեք» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը նշանակում է դադարեցնել այն գործողությունը, որն արդեն ընթացքի մեջ է: Աշխարհի սերը բնորոշվում է գնոստիկ կեղծ ուսուցիչների մի խմբի:

- «**աշխարհքը**» Այս տերմինը օգտագործվում է ՆԿ երկու տարբեր իմաստով 1) ֆիզիկական մոլորակը և (կամ) ստեղծված տիեզերքը (տես Հովհ. 3:16; 16:33; I Հովհ. 4:14) և (2) մարդկային հասարակություն, որը կազմակերպված և գործում է Աստուծոց անջատ (տես I Հովհ.2: 15-17; 3:1,13; 4:45; 5:4-5,19): Առաջինը վերաբերում է նախնական ֆիզիկական ստեղծագործությանը (տես Ծննդոց 1-2), իսկ երկրորդը, ընկած ստեղծագործությանը (տես Ծննդոց 3): Տես Հատուկ Թեմա: *Kosmos* 14:17:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
 - Ա. Սահմանումը – Կառավարությունը դա մարդկային հասարակության մեջ ձևավորված ներքին համակարգ է, որի նպատակն է հայթայթել և պաշտպանել նրա ֆիզիկական կարիքները (Ծննդ.4 և 11): Մարդիկ սոցիալական արարածներ են(անգամ մինչև անկումը (հմմտ. Ծննդ.2:18): Ընտանիքներ, ցեղեր, ազգեր տալիս են մեզ հասարակություն:
 - Բ. Նպատակը - Աստծո կամքն էր, որ լիներ կարգ ու կանոն, և ոչ թե անարխիա:
 1. Մովսեսական օրենսդրությունը, մասնավորապես Գեկալոզը Աստծո կամքն է մարդու համար հասարակության մեջ: Այն հավասարազոր է անում Աստծուն երկրպագելն ու կյանքը:
 2. Սուրբ Գիրքը չի առաջարկում կամ պաշտպանում որևէ իշխանության կառավարման ձև կամ կառուցվածք, չնայած հին իսրայելական թեոկրատիան դա այն նախատեսված ձևն է, որը կլինի երկնքում: Ո՛չ դեմոկրատիան, և ոչ էլ կապիտալիզմը աստվածաշնչյան ճշմարտություն չեն: Քրիստոնյաները պետք է վարվեն համապատասխան կերպով, աստվածահաճո, անկախ այն բանից, թե իշխանության կառավարման ինչ համակարգի մեջ են նրանք գտնվում: Քրիստոնյայի նպատակը ավետարանչությունն ու ծառայություն է, և ոչ թե հեղափոխությունը: Բոլոր կառավարությունները անցողիկ են:
 - Գ. Մարդկային իշխանության ծագումը
 1. Հռոմեական կաթոլիկությունը պնդում է, որ մարդկային իշխանությունը դա մարդում մեջ դրված բնության պահանջ է մույնիսկ մինչև Անկումը: Թվում է, Արիստոտելը այսպիսի ենթադրության կողմնակից էր: Նա ասում է, «մարդը դա քաղաքական, պետական կենդանի է» և դրանից ելնելով, նա համարում էր, որ կառավարությունը «լավ կյանք զարգացնելու, կարգավորելու համար է»:
 2. Բողոքականությունը, հատկապես Մարտին Լյութերը, պնդում է, որ մարդկային իշխանությունը ստեղծվել է Անկման ժամանակ: Նա դա կոչում է «Աստծո

- Թագավորության ճախ ձեռքը»: Նա ասում է, որ «Վատ մարդկանց կառավարելու Աստծո միջոցը դա վատ մարդկանց որոշակի սահմանների մեջ պահելն է»:
3. Կարլ Մարքսը պնդում էր, որ կառավարությունը դա միջոց է, որի օգնությամբ ոչ այնքան շատ էլիտան կառավարում է մարդկային հոծ զանգվածը: Իր կարծիքով կառավարությունն ու կրոնը նմանատիպ դեր են կատարում:

II. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՆՅՈՒԹ

Ա. Հին Կտակարան

1. Իսրայելը դա օրինակ է, որը կօգտագործվի երկնքում: Հին Իսրայելում Յեզեկիա-ն էր Թագավորը: Թեոկրատիա տերմինը օգտագործվում է նկարագրելու համար Աստծո ուղղակի կառավարումը (հմմտ. I Թագ. 8:4-9):
2. Աստծո սուվերենությունը/գերիշխանությունը մարդկային իշխանությունների մեջ հստակ երևում է
 - ա. բոլոր թագավորները, Գան. 2:21; 4:17,24-25
 - բ. Մեսիական թագավորությունը, Գան. 2:44-45
 - գ. Նաբուգոդոնոսոր (նեո-բաբելոնյան), Եր. 27:6; Գան. 5:28
 - դ. Կյուրոս II (Պարսից), II Մնաց. 36:22; Եզրաս 1:1; Ես. 44:28; 45:1
3. Աստծո ժողովուրդը պետք է խոնարհ լիներ և հարգալից նույնիսկ նվաճող և զավիթիչ իշխանություններին:
 - ա. Գանիել 1-4, Նաբուգոդոնոսոր (նեո-բաբելոնյան)
 - բ. Գանիել 5, Բաղդասար (նեո-բաբելոնյան)
 - գ. Գանիել 6, Գարեհ (Պարսից)
 - դ. Եզրաս և Նեեմիա (Պարսից)
4. Վերականգնված Հուդան պետք է աղոթեր Կյուրոսի համար և նրա սերունդների թա գավորության համար
 - ա. Եզրաս 6:10; 7:23
 - բ. Հրեաները պետք է աղոթեին քաղաքացիական իշխանության համար Միշնա, Avot. 3:2

Բ. Նոր Կտակարան

1. Հիսուսը հարգանք ցուցաբերեց մարդկային իշխանություններին
 - ա. Մատթևոս 17:24-27; վճարեց Տաճարի հարկը (կրոնական և քաղաքացիական իշխանությունները համարվում էին մեկ, հմմտ. I Պետ. 2:17)
 - բ. Մատթևոս 22:15-22; Մարկ. 12:13-17; Գուկ. 20:20-26, պաշտպանեց կայսրին հարկ տալը և այդպիսով հարգանք ցուցաբերեց հռոմեական քաղաքացիական իշխանությունների հանդեպ
 - գ. Հովհաննես 19:11, Աստված է դնում քաղաքացիական իշխանություն
2. Պողոսի խոսքերը կապված մարդկային իշխանություններին
 - ա. Հռոմեացիս 13:1-7, հավատացյալները պետք է հնազանդվեն և աղոթեն քաղաքացիական իշխանությունների համար:
 - բ. Հռոմեացիս 13:6-7, հավատացյալները պետք է վճարեն հարկերը և հարգեն քաղաքացիական իշխանություններին
 - գ. I Տիմոթեոս 2:1-3, հավատացյալները պետք է աղոթեն քաղաքացիական իշխանությունների համար
 - դ. Տիտոս 3:1, հավատացյալները պետք է հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին
3. Պետրոսի խոսքերը կապված մարդկային իշխանություններին
 - ա. Գործք 4:1-31; 5:29, Պետրոսն ու Հովհաննեսը Սենեդրիոնի առջև (սա ցույց է տալիս քաղաքացիական անհնազանդությունը)
 - բ. I Պետրոս 2:13-17, հավատացյալները պետք է հնազանդվեն քաղաքացիական իշխանություններին՝ հասարակության օգտի և ավետարանչության համար
4. Հովհաննեսի խոսքերը կապված մարդկային իշխանություններին
 - ա. Հայտնություն 17, Բաբելոնի պռռնիկը աջակցում է մարդկային

իշխանությունը, որը հակառակվում է Աստծուն
բ. Հայտնություն 18, Բաբելոնի պոռնիկը կործանված է

III. ԱՄՓՈՓՈՒՄ

- Ա. Մարդկային իշխանությունները դրված են Աստծո կողմից: Սա նշանակում, թե թագավորներն ունեն «աստվածային իրավունք» այլ Աստծո կողմից տրված հատուկ տեղ և դեր ունեն նրանք: Ոչ մի կառավարման ձև մյուսից առավել չէ:
- Բ. Հավատացյալների կրոնական պարտականությունն է հնազանդվել և աղոթել քաղաքացիական իշխանությունների համար:
- Գ. Հավատացյալների համար միանգամայն պատշաճ է աջակցել մարդկային իշխանություններին՝ հարկեր վճարելով:
- Դ. Մարդկային իշխանությունները կարգ ու կանոն հաստատելու և պահպանելու համար են: Նրանք Աստծո ծառայներն են հենց այս առաջադրանքը կատարելու համար:
- Ե. Մարդկային իշխանությունները վերճանակալի և գերագույն համակարգը չէ: Այն սահմանափակված է իր իսկ իշխանության մեջ: Հավատացյալները պարտավոր են գործել իրենց խղճի համեմատ և չկատարեն իշխանությունների պահանջները, եթե դրանք անցնում են Աստծո դրած սահմանները: Օգոստինոսը իր «Աստծո քաղաքը» գրքում (*The City of God*) ասում է, որ մենք հաղիսանում ենք երկու պետության քաղաքացի, որից մեկը ժամանակավոր է, իսկ մյուսը հավիտենական (հմմտ.Փիլ. 3:20): Երկուսում էլ մենք ունենք պատավորություններ և պատասխանատվություններ, բայց Աստծո թագավորությունն է գերագույնը: Աստծո առաջ ունեցած մեր պատասխանատվությունը այս հարցում թե անհատական է և թե համընդհանուր, համատեղ:
- Զ. Մենք պետք է քաջալերենք հավատացյալներին դեմոկրատական համակարգի մեջ ակտիվ մասնակցության համար կառավարման գործընթացի մեջ և դրան կիրառության մեջ, որտեղ որ հնարավորն է Սուրբ Գրքի ուսմունքները:
- Է. Սոցիալական փոփոխությունը պետք է նախորդի անհատի դարձի գալը: Կառավարության մեջ չկա իրական վախճանաբանական հույս: Բոլոր մարդկային իշխանությունները չնայած գոյություն ունեն Աստծո կամքով և օգտագործվում են Աստծո կողմից, հանդիսանում են մեղավոր համակարգ առանց Աստծո: Այս գաղափարը լավ արտահայտվում, այնպես ինչպես Հովհաննես առաքյալն է օգտագործում «աշխարհ» բառը (այն է, I Հովհ. 2:15-17):

▪ **«ոչ էլ այն որ աշխարհքի մեջ է»** Սա, կարծես, վերաբերում է նյութը սիրելուն (տես հ.16) կամ այն բաները, որոնք աշխարհին է առաջարկում՝ իշխանություն, հեղինակություն, ազդեցություն և այլն (կարդա Հռ. 12:2; Հակ. 1:27): Այս ընկած աշխարհի համակարգը փորձում է հոգալ բոլոր մարդկանց կարիքները Աստծուց հեռու: Այն կյանքը այնպես է կառուցում, որ մարդիկ անկախ լինեն: Այն բոլոր հաստատությունները, որոնց համար բոլորս էլ երախտապարտ ենք, կարող են կուռք դառնալ, երբ թույլ են տալիս, որ Աստծուց անկախ լինեն: Օրինակներն ընդգրկում են՝ (1) մարդկային կառավարման համակարգեր, 2) մարդկային կրթական համակարգեր, 3) մարդկային տնտեսական համակարգեր, (4) բժշկական համակարգեր և այլն:

Ինչպես Օգոստինոսն է շատ լավ ասել, «մարդը ունի Աստծո կողմից ձևավորված փոս» իր կյանքում: Մենք փորձում ենք այդ փոսը լցրել երկրային բաներով, բայց մենք կարող ենք խաղաղություն և իրականացում գտնել միայն Նրա մեջ: Անկախությունը Եդեմի անեծքն է:

▪ **«Եթե»** Սա ԵՐԲՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է հնարավոր գործողություն: Այն, ինչ մենք սիրում ենք, վկայում է, թե ումն ենք մենք՝ Աստծունը թե սատանայինը:

2:16 «մարմնի ցանկությունը» Սա վերաբերում է մեղավոր մարդկության ինքնավստահ կեցվածքին (Գաղ. 5:16-21; Եփ. 2: 3; I Պետ. 2: 11): Տես Հատուկ Թեմա. Մարմին (*sarx*) Հովհ.1:14:

▪ **«աչքերի ցանկությունը»** Հրեաներն ընդունում էին, որ աչքերը հոգու պատուհաններն են: Մեղքը սկսվում է մտքի կյանքի և գործերի մեջ և արտահայտվում է գործողությամբ: մարդու գործողությունները զարգանում են կենսակերպի մեջ (օրինակ, Հովհ. 19:13):

▪ **«եւ այս կեանքի ամբարտաւանութիւնը»** Սա վերաբերում է մարդու հպարտությանը Աստուծոց ջոկ (այսինքն, մարդիկ վստահում են իրենց սեփական ռեսուրսներին): *The Jerome Bible Commentary*, հատ. II, Raymond Brown, հայտնի կաթոլիկ Հովհաննեսագետ, ասում է արտահայտության մասին.

«Սակայն *alazoneia*, կա նաև Հակ.4:16, ունի ավելի ակտիվ իմաստ, քան հպարտություն: Դա նշանակում է ամբարտավանություն, պարծանք, ինքնաբավության համոզմունք» (էջ 408):

Կյանք տերմինը *bios* է, որը վերաբերում է այս մոլորակի երկրային, ֆիզիկական, ժամանակակալից կյանքին (այն, ինչ մարդկությունը կիսում է բույսերի և կենդանիների հետ, տես I Հովհ. 3:17): Այս բնութագրերը նկարագրում են գնոստիկ կեղծ ուսուցիչների երկու խմբերը և անհայտ կորած մարդկությունը: Աստված մեզ օգնում է, նրանք նաև նկարագրում են ոչ հասուն քրիստոնյաներին:

▪ **«Հօրիցը չէ, այլ աշխարհիցն է»** Կան երկու պատճառներ, թե ինչու քրիստոնյաները չպետք է սիրեն աշխարհը:

1. այդ սերը Հորից չէ (տես հ.16)
2. աշխարհը անցնում է (տես հ.17)

2:17 «աշխարհքը անցնում է» Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է (հմմտ.տես 2: 8): Սա վերաբերում է հրեական երկու ժամանակաշրջաններին: Նոր և վերջնական ժամանակաշրջանը գալիս է. Մեղքի և ապստամբության հին շրջանը անցնում է (տես Հո. 8: 18-25):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՅՍ ԴԱՐԸ ԿԱՄ ԳԱԼԻՔ ԴԱՐԸ

Հին Կտակարանի մարգարեները ապագան պատկերացնում էին որպես ներկայի ընդարձակում: Նրանց համար ապագան դա Իսրայելի աշխարհագրական սահմանների վերկանգնումն էր: Ինչևէ, նույնիսկ նրանք տեսան նոր օր (հմմտ. Ես. 65:17; 66:22): Քանի որ Աբրահամի սերունդները շարունակում էին մերժել ՅԱՀՎԵ-ին (նույնիսկ գերությունից հետո) հրեական միջկտակարանային վախճանաբանական/ապոկալիպտիկ գրականության մեջ (այն է, I Ենովք, IV Եգրա, II Բարուք) նոր օրինակ/պարադիգմ զարգացավ: Այս գրվածքները բաժանություն են դնում երկու դարաշրջանների միջև՝ ներկա չար դարաշրջան, որտեղ տիրում է Սատանան և գալիք արդարության դարաշրջանը, որը տիրում է Սուրբ Հոգին և հաղթանակը, որը կլինի Մեսիայի գալուստով (հաճախ ուժեղ և գործուն պատերազմող):

Աստվածաբանության (վախճանաբանություն) այս բնագավառում կա համապատասխան զարգացում: Աստվածաբանները սա կոչում են «զարգացող, պրոգրեսիվ հայտնություն»: Նոր Կտակարանը հաստատում է երկու դարաշրջանների այս նոր տիեզերական իրականությունը (այն է, ժամանակավոր դուալիզմ):

<u>Հիսուս</u>	<u>Պողոս</u>	<u>Եբրայեցիս</u>
Մաթ. 12:32	Հռ. 12:2	1:2
Մաթ. 13:22 և 29	I Կոր. 1:20; 2:6,8; 3:18	6:5
Մարկ. 10:30	II Կոր. 4:4	11:3
Դուկ. 16:8	Գաղ. 1:4	
Դուկ. 18:30	Եփ. 1:21; 2:1,7; 6:12	
Դուկ. 20:34-35	I Տիմ. 6:17	
	II Տիմ. 4:10	
	Տիտոս 2:12	

Նոր Կտակարանի աստվածաբանության մեջ այս երկու հրեական դարաշրջանները մասամբ իրար ծածկել են, որովհետև Մեսիայի երկրող գալստյան մասին կան անհասկանալի և անսպասելի կանխագուշակություններ: Հիսուսի մարմնացումը իրականացրեց Հին Կտակարանի մարգարեությունները, որը սկիզբ դրեց նոր դարի (Գան. 2:44-45): Ինչևէ, Հին Կտակարանը Նրա գալուստը դիտում էր որպես Գատավոր և Նվաճող, սակայն Նա եկավ նախ որպես Տառապող Ծառա (հմմտ. Ես. 53);

Չար. 12:10), խոնարհ ու հեզ (հմմտ. Չար. 9:9): Նա կվերադառնա գործությունով ինչպես Հին Կտակարանը մարգարեսցավ (հմմտ. Հայտ. 19): Այս մարգարեության իրականացման երկու փուլերը ցույց են տալիս Աստծո Թագավորության ներկա գոյությունը (հռչակված է նրա սկիզբը), բայց նաև գալիք թագավորությունը (դեռ չավարտած): Սա Նոր Կտակարանի հսկասությունը «արդեն», բայց «դեռ ոչ»:

- **«բայց Աստուծոյ կամքն անողը մնում է յաիտեան»** Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է հավիտենական կյանքը (այսինքն բառացիորեն «մնում է դարաշրջանում») կապված է սիրո ապրելակերպի հետ, այլ ոչ թե հավատքի անցյալի խոստովանության (տես Մատթ. 25:31-46, Հակ. 2:14-26): Տես Հատուկ Թեմա: Աստծու Կամքը Հովհ.4:34

Արևելահայերեն Աստվածաշունչ 2:18-25

¹⁸Որդեակներ, վերջի ժամանակն է, եւ ինչպէս լսեցիք թէ Նեոը գալիս է, եւ այժմ շատ նեոեր են եղել, որ սորանից իմանում ենք թէ վերջի ժամանակն է: ¹⁹Մեզանից դուրս գնացին, բայց մեզանից չէին. որովհետեւ եթէ մեզանից լինէին, ապա մեզ հետ մնացած կ'լինէին. բայց որ յայտնի լինեն թէ նորանք ամենը մեզանից չեն: ²⁰Եւ դուք օծութիւն ունիք այն սուրբիցը եւ ամեն բան գիտէք: ²¹Չ'գրեցի ձեզ իբր թէ ճշմարտութիւնը չ'գիտէք, այլ թէ գիտէք նորան, եւ թէ ամեն ստութիւն այն ճշմարտութիւնիցը չէ: ²²Ո՞վ է ստախօսը, եթէ ոչ նա որ ուրանում է թէ Յիսուսը չէ Քրիստոսը. Նա Նեոն է, որ ուրանում Հօրը եւ Որդուն: ²³Ամեն ով որ Որդուն ուրանում է, Հօրն էլ չ'ունի. նա որ Որդուն դաւանում է, Հօրն էլ ունի: ²⁴Արդ այն որ դուք լսեցիք սկզբիցը, թող բնակուէ ձեզանում. Եթէ բնակուէ ձեզանում այն որ սկզբիցը լսեցիք, դուք էլ կ'բնակուէք Որդու եւ Հօր մէջ: ²⁵Եւ սա է այն խոստմունքը որ նա անտարանեց մեզ, այսինքն յաիտենական կեանքը:

2:18 «Որդեակներ» Տես ծանուցում 2:1.

- **«վերջի ժամանակն է»** Բառացիորեն սա «վերջին ժամը», առանց ՀՈԴԻ (գտնվում է միայն այստեղ): «Վերջին օրերի» նման, սա ՆԿ-ում օգտագործված արտահայտություններից մեկն է՝ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը նկարագրելու համար (տես Հովհ. 6: 39-40,44): Սա կարևոր գաղափար է Հովհաննեսի մեջ, քանի որ մեր օրերում շատ թարգմանիչների վրա ազդեցություն է ունեցել C. H. Dodd «իրականացված վախճանաբանություն» (հիմնական սկզբունքը ոչ հազարամյայի): Ճշմարիտ է, որ Հովհաննեսը բացառիկ և ստիպողաբար ուսուցանում է, որ Աստծու Թագավորությունը եկել է Հիսուսով: Այնուամենայնիվ, այս տեքստը ցույց է տալիս, որ գոյություն ունի նաև ապագայում իրականացվող(դեպք կամ ժամանակաշրջան): Երկուսն էլ ճշմարիտ են: Սա ՆԿ լարվածության (պարադոքս) մեկ այլ արտահայտություն է երկու հրեական շրջանների «արդեն, բայց դեռ ոչ» (այսինքն « գալիս է ») միջև, որոնք ժամանակին համընկնում են:

- **«Նեոը. . . նեոեր»** Այս նկարագրող արտահայտությունը թե ԵԶԱԿԻ է, և թե ՀՈԳՆԱԿԻ; ոչ մեկն էլ չունի ՀՈԴ (MSS Ն*, B, C): Միայն Հովհաննեսն է օգտագործում այս տերմինը ՆԿ- ում (տես 2: 18,22; 4: 3; II Հովհ. 7): Տես ամբողջական ծանուցումը Կոնստեքստային Ներըմբնում 2: 3-27, Դ.

- **«գալիս է»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ (deponent) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Կոյնե հունարենում որոշ հունարեն ԲԱՅԱԶԵՎԵՆ հանվել են գործածությունից և այլ ձևերն են վերցրել են նրանց ֆունկցիան: Deponent ԲԱՅԵՆԸ ՉԵԶՈՔ են կամ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՈՎ, սակայն թարգմանվում են որպես ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ իմաստով: Այստեղ ՆԵՐԿԱՆ օգտագործվում է ներկայացնելու գալիք իրադարձությունների որոշակիությունը: Հակաքրիստոսը, ԵԶԱԿԻ, գալիս է և նրա նման շատ կեղծ ուսուցիչներ կամ կեղծ մեսիաններ արդեն հայտնվել են (հակաքրիստոսներ):

Դա ուղղակի աստվածաբանորեն հնարավոր է, քանի որ սատանան չգիտի Քրիստոսի վերադարձի ժամանակը, նա արդեն իսկ պատրաստել է մեկին՝ մտնելու աշխարհի առաջնորդության մեջ ամեն հնարավոր պահի:

▪ **«են եղել»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: «Հակա» - Քրիստոսի հոգին արդեն ներկա է և ակտիվ այս ընկած աշխարհում (այսինքն՝ կեղծ ուսուցիչները), սակայն դեռևս ապագա դրսևորում կա: Որոշ մեկնաբաններ դա համարում են Հովհաննեսի օրոք հռոմեական կայսրությունը, իսկ մյուսները՝ որպես վերջին օրվա ապագա աշխարհի կայսրություն: Շատ իմաստներով դա երկուսն էլ է: Վերջին ժամը սկսվեց Մարմնավորմամբ և կշարունակվի մինչև ավարտը (Քրիստոսի Երկրորդ Գալուստը):

2:19 «Մեզանից դուրս գնացին, բայց մեզանից չէին» Սա կատարյալ օրինակ է կեղծ ուսմունքների և կեղծ խոստովանությունների տեսանելի եկեղեցում (տես Մատթ. 7: 21-23; 13: 1-9,18-23,24-30): Նրանց ճշմարտության, սիրո և հաստատակամության պակասը վկայում է, որ նրանք հավատացյալ չեն: Հերետիկոսությունը միշտ գալիս է ներսից:

I Հովհ. հեղինակը շատ զգույշ է իր ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ընտրության հարցում: Համար 19 ցույց է տալիս

1. կեղծ ուսուցիչները հեռացել են (ԱՕՐԻՍՍ)
2. նրանք երբեք իսկապես մասն չեն եղել (ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ)
3. եթե նրանք մաս լինեին, ապա նրանք չեն լքի (ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅՈՎ)

Տես Հատուկ Թեմա. Ուխտադրություն Հովհ.7:12

▪ **«եթե»** Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կոչվում է հակառակ փաստի: Այն պետք է թարգմանվի, «Եթե նրանք մեզ պատկանեին, ինչը չեն, ապա նրանք մեզ հետ էին մնալու, որը նրանք չեն արել»:

▪ **«ապա մեզ հետ մնացած կ'լինեին»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը խոսում է անցյալում ավարտված գործողության մասին: Սա հաստատակամության/համբերության վարդապետության մի քանի հղումներից մեկն է (հմմտ. հհ 24,27,28): Ճշմարիտ հավատքը մնում է և պտուղ է տալիս (տես Մատթ. 13:1-23): Տես Հատուկ Թեմա Հովհ. 8:31

2:20 «դուք օծութիւն ունիք այն սուրբիցը» «Դուք» ՀՈԳՆԱԿԻ է, որն ընդգծվում է հունարեն տեքստում, ի հակասություն նրանց, ովքեր հեռացել էին քրիստոնեական ընկերակցությունից: Հնարավոր է, որ գնոստիկների վրա ազդեցություն ունեցավ արևելյան «առեղծվածային» կրոններն և սովորեցնում հատուկ օծություն, որը բերում է գիտություն և նույնականացում աստվածության հետ: Հովհաննեսը պնդում է, որ հավատացյալներն էին, այլ ոչ թե գնոստիկները, որ ունեին օծություն Աստծուց (հատուկ նախաձեռնություն):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՍՈՒՐԲԸ

«Սուրբը» կարող է լինել

1. Հայր Աստված (հմմտ. բազմաթիվ ՀԿ հատվածներ «Իսրայելի Սուրբը»)
2. Որդի Աստված (տես Մարկ.1:24; Ղուկ.4:34; Հովհ. 6:69; Գործք 3:14)
3. Հոգի Աստված (Նրա կոչումը, «Սուրբ Հոգի», հմմտ. Հովհ. 1:33; 14:26; 20:22):

Գործք 10: 38 մի համար է, որտեղ Աստվածային բոլոր երեք անձերն էլ ներգրավված են օծման մեջ: Հիսուսը օծվեց (կարդա Ղուկ.4:18; Գործք 4:17; 10:38): Այստեղ գաղափարը ընդլայնվում է՝ ներգրավելով բոլոր հավատացյալներին (տես I Հովհ. 2:27): Օծյալը դարձել է օծյալները: Դա կարող է զուգահեռ լինել հակաքրիստոսի և հակաքրիստոսների (տես I Հովհ. 2:18): ՀԿ յուրով ֆիզիկական օծման խորհրդանշական գործողությունը վերաբերում է նրանց, ովքեր կանչվել և սպառազինվել են Աստծո կողմից հատուկ առաջադրանքի համար (այսինքն, մարգարեները, քահանաները և

- **«օծութիւն»** Տես Հատուկ Թեմա: Օծությունը Աստվածաշնչում Հովհ. 11:2.

▪
NASB “և ամեն բան գիտեք”
NKJV “և դուք ամեն բան գիտեք”
NRSV “և դուք բոլորդ ունեք գիտություն”
TEV “և դուք բոլորդ գիտեք ճշմարտությունը”
NJB “և բոլորդ ստացել եք գիտություն”

Սա կարևոր արտահայտություն էր գնոստիկ կեղծ ուսուցիչների ամբարտապան հայտարարությունների լույսի ներքո իրենց գաղտնի գիտելիքների մասին: Հովհաննեսը պնդում է, որ հավատացյալները ունենան քրիստոնեական հիմնական գիտելիքներ (հ.27 և Հովհ.16:7-14 և Եր.31:34), այլ ոչ թե կրոնով կամ այլ բնագավառներում կամ գիտելիքներում (տես 3:2): Հովհաննեսի համար, ճշմարտությունը թե գաղափարական և թե անձնական, ինչպես օծության մեջ, որը կարող է վերաբերել ավետարանին կամ Հոգուն:

Այս արտահայտության մեջ կա հունարեն ձեռագիր տարբերակ: NKJV հետևում է երկաթագիր ձեռագրեր A, C և K, որոնք ունեն *panta*, ՉԵԶՈՔ ՀՈԳՆԱԿԻ որ օգտագործվում է որպես ՈԻՂԻԴ ԽՆԴԻԲ, իսկ NASB հետևում է Ն, B, և P ձեռագրերին, որոնք ունեն *pantes*, ԱՐԱԿԱՆ ՀՈԳՆԱԿԻ, որը կենտրոնանում է ԱՌԱՐԿԱՅԻ վրա «դուք բոլորդ»: Մուտ ուսուցիչների բացառիկ գաղափարների լույսի ներքո վերջին տարբերակն ամենալավն է: UBS⁴ տալիս է «B» վարկանիշ (գրեթե որոշակի): Օծությունը և գիտելիքը տրվում են բոլոր հավատացյալներին, այլ ոչ թե մի քանի ընտրված, հատուկ, մտավոր, հոգևոր մարդկանց:

2:21 Սա շատ համարներից մեկն է, որը հաստատում է, որ Հովհաննեսի ընթերցողները ունենան փրկարար հավատք և իմանան ճշմարտությունը: Այս համարում հավաստիացումը հիմնված է Հոգուց օծված լինելու վրա, որը սովել է հավատացյալներին սով ավետարանի գիտության հանդեպ:

2:22 «Ո՞վ է ստախօսը» Այս արտահայտությունը ունի ՈՐՈՇԻԶ ՀՈԴ, հետևաբար, Հովհաննեսն էլ հղում է կատարում կամ

1. կոնկրետ կեղծ ուսուցչի (հնարավոր է Քերիթոսը)
2. «մեծ սուտը» և ավետարանի ժխտումը (տես 5:10)

«Մուտասանը» զուգահեռ է «հակաքրիստոսին»: Հակաքրիստոսի հոգին ներկա է բոլոր ժամանակներում: Հիմնական սահմանումը սա է («հակա» ՆԱԽԴԻԲԻ երկու լրացուցիչ իմաստները) «այն, ով հերքում է, որ Հիսուսն է Քրիստոսը» կամ «մեկը, ով փորձում է փոխարինել Քրիստոսին»:

- **«Թե Յիսուսը չէ Քրիստոսը»** The Jerome Biblical Commentary, էջ 408, լավ կետ է տալիս, «Հեղինակը նկատի չունի պարզապես ՀԿ Հիսուսի իրականացումը կողմից և հրեական ակնկալիքը Մեսիայի մասին: Այստեղ «Քրիստոսը» ունի իր լիակատար իմաստը որպես Հիսուսի նախընտրած ՆԿ նշանակումը, որի խոսքերն ու գործերը հոչակել են նրան, որպես մարդկության աստվածային Փրկիչ (հմմտ.Գործք 2:31; 1: 4):

Հնարավոր է, որ այս վարդապետական հաստատումը գործի

1. որպես բանավեճ գնոստիկների դեմ
2. Պաղեստինյան հավատամքի բանաձև, որը հստակ բաժանեց Ժողովարանը Եկեղեցուց; այն կարող է արտացոլել պոստ-Ջամնիայի (70մ.թ.) ռաբբիների անեծքի բանաձևերը
3. ինչպես «Հիսուսը Տեր» է, հավանաբար ունեցել է մկրտության հաստատում

2:22-23 «Ամեն ով որ Որդուն ուրանում է» Ակնհայտ է, որ գնոստիկ կեղծ ուսուցիչները պնդում էին, որ ճանաչում են Աստծուն, բայց նրանք ժխտում էին, ապակենտրոնացնում և արժեզրկում էին Հիսուս Քրիստոսի տեղը (տես 4: 1-6; 5: 11-12; Հովհ.5:23):

Հիմնվելով երկրորդ դարի գնոստիկների գրվածքների վրա, ՆԿ մեկնաբանությունները և վաղ եկեղեցու հայրերը, առաջ են քաշում հետևյալ համոզմունքները:

1. Գնոստիկները փորձեցին քրիստոնեությունը միացնել հունական փիլիսոփայությանը (Պլատոն) և արևելյան միստիկ կրոններին:
2. Նրանք սովորեցնում էին, որ Հիսուսը Աստված էր, բայց ոչ մարդ, քանի որ հոգին բարի էր, իսկ նյութը՝ (մարմինը) չար: Հետևաբար, անհնարի է, որ Աստված ֆիզիկական մարմին ստանա:
3. Նրանք երկու բան էին սովորեցնում փրկության մասին
 - ա. Մի խումբը պնդում էր, որ հրեշտակային ուղորտների (*aeon*) հատուկ գիտելիքը բերեց հոգու փրկություն, որը կապված չէ ֆիզիկական դաշտում մարմնի գործողությունների հետ:
 - բ. Մեկ այլ խումբը ընդգծեց ֆիզիկական ասկետիզմը (հմմտ.Կող. 2: 20-23): Նրանք պնդում էին, որ մարմնի ցանկությունների և կարիքների ամբողջական մերժումը վճռորոշ է իրական փրկության համար:

2:23 Այս համարը, Textus Receptus-ում, հետևում է K և L երկաթագիր ձեռագրերին, պատահականորեն կրճատել է բնագրի տեքստը, անտեսելով Հորն ուղղված երկրորդ զուգահեռ հղումը, որին խիստ աջակցում է հունարեն երկաթագիր Տ, A, B, և C ձեռագրերը:

- **«նա որ դաւանում է»** Սա լիրվ հակառակն է «ով որ ուրանում է» արտահայտության հ. 22 [երկու անգամ] և հ.23 [մեկ անգամ] և հ.26 [մեկ անգամ]: Տես Հատուկ Թեմա. Խոստովանություն Հովհ.9:22-23:
- **«Որդուն»** Հաղորդակցություն Աստծո հետ միայն հնարավոր է Որդուն հավատալով (տես 5: 10-12,13): Հիսուսին հավատալը տարբերակ չէ: Նա է Հոր մոտ տանող միակ ճանապարհը (տես Հովհ. 5:23; 14: 6; Դուկ.10:16):

2:24 «Արդ այն որ դուք» Սա ցույց է տալիս շատ շոշափելի հակադրությունը Հովհաննեսի ընթերցողների, կեղծ ուսուցիչների և նրանց հետևորդների միջև, որոնք հեռացան (տես հ.27):

- **«թող բնակուէ ձեզանում այն որ սկզբիցը լսեցիք»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է քերականական շեշտադրմամբ «դուք, ձեր» (որը հունարեն արտահայտության սկզբում է) կեղծ ուսուցիչների պատգամի հակասող արտահայտությամբ է: Ավետարանը անձնավորված է և նկարագրվում է որպես բնակվող հյուր: Սա առաջին երկու պատճառներից մեկն է, որոնք տրվում են քրիստոնյաների հաղթանակի համար կեղծ ուսուցիչների (ստախոսների) հանդեպ: Երկրորդը գտնվում է հհ. 20 և 27, որտեղ հիշատակվում է Հոգու օծությունը: Կրկին, ավետարանը ինչպես պատգամ է, այնպես էլ անձ, և կապված են «սկզբից» արտահայտությամբ (տես հհ.13,14,24 [երկու անգամ]): Աստծո խոսքը բովանդակություն է և անձնական, գրված և կենդանի (տես 1: 8,10; 2: 20,24): Տես Հատուկ Թեմա: Մնալ, Կենալ 2: 10:
- **«Եթէ»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Սա շարունակվում է «մնալ, կենալ»-ու հետ կապված նախազգուշացումն ու հորդորը: Մնալու դադարեցումը բացահայտում է, որ նրանք երբեք մաս չեն կազմել (տես 2: 18-19): Մնալու ապրելակերպը բերում է հավատքի հավաստիացում (տես Հովհ.15):

Մնալը դա պատգամ է լսելու, ընդունելու և հաղորդակցվելու Որդու և Հոր հետ (հմմտ. Հովհ. 14:23), որը բացահայտվում է ապրելակերպի ընտրության մեջ, ինչպես դրական(սեր), այնպես էլ բացասական (աշխարհի մերժումը):

2:25 «սա է այն խոստմունքը որ նա անտարանեց մեզ, այսինքն յաւիտենական կեանքը» Կրկին հ.25 ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ շատ անորոշ են և կարող են վերաբերվել Հայր Աստծուն կամ Որդի Աստծուն: Գուցե սա նպատակային էր (ինչպես II Պետրոս 1): Ըստ երևույթին, այս հայտարարությունը շատ նման է Հովհ. 3: 15-16 և 6:40: Հավատացյալի հույսը Աստծո բնության և խոստումների վրա է (տես Ես. 45:33; 55:11): Մեր մտերմիկ հաղորդակցությունը Երրորդության Աստծո հետ հավիտենական կյանքի խոստման հույսով է (տես 5:13): Հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկանիշներ:

Արևելահայերեն Աստվածաշունչ 2:26-27

²⁶Այս բաները գրեցի ձեզ՝ ձեզ մուրեցնողների մասին: ²⁷Եւ այն օծութիւնը, որ դուք նորանից ընդունեցիք բնակվում է ձեզանում. Եւ դուք պէտք չ'ունիք որ մէկը սովորեցնէ ձեզ. այլ ինչպէս այն օծութիւնը սովորեցնում է ձեզ ամեն բանի համար, ճշմարիտ էլ է եւ սուտ չէ. Եւ ինչպէս նա սովորեցրեց ձեզ, կացէք նորանում:

2:26 «ձեզ մուրեցնողների մասին» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Բոլոր ժամանակներում խաբեբաներ եղել են (տես Մատթ. 7:15; 24: 11,24; II Հովհ.7): Սրանք հաճախ անկեղծ կրոնասեր են, ովքեր հաճախում են և ակտիվորեն մասնակցում են քրիստոնեական հավաքություններին:

2:27 «օծութիւնը» Սա, կարծես, ընդգծում է օծության արդյունքը, այլ ոչ թե միջոցներին (Հոգին) կամ տարրերին (ավետարանի ճշմարտությունները): Օծությունը ՀԿ գաղափար էր, որը հատուկ կոչում էր և սպառազինում էր մարդուն Աստծո հանձնարարության համար: Մարգարեները, քահանաները և թագավորները օծվում էին: Այս տերմինը ստուգաբանորեն կապված է «Մեսիա» տերմինի հետ: Այստեղ այն վերաբերում է այն կայունությանը, երբ Սուրբ Հոգին լուսավորում է սիրտը և միտքը, երբ ավետարանը հասնում է հավատացյալներին: Տես Հատուկ Թեմա: Օծությունը Աստվածաշնչում Հովհ.11:2:

Կեղծ ուսուցիչները պահանջում էին Աստծուց հատուկ հայտնություն (այսինքն, հատուկ օծություն): Հովհաննեսը պնդում է, որ բոլոր հավատացյալներն արդեն ունեն իրական օծություն, երբ նրանք հավատում են Օծյալին, լցվում են Նրա Հոգով և մնում են Աստծո խոսքի մեջ:

▪ **«որ դուք ընդունեցիք»** Սա ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ցույց է տալիս որոշակի ավարտված անցյալի գործողություն: «Օծվելը» զուգահեռ է «դուք լսել էք» հ.24-ում: Ավետարանը պետք է ընդունվի (1) անհատապես հավատքով (տես Հովհ.1:12; 3:16) և (2) որպես ճշմարտության մարմին (հմմտ. II Հովհ. 9-10; I Կորնթ. 15:1-4, Հուդա 3): Այս երկու գործողությունների միջնորդը Սուրբ Հոգին է:

▪ **«Եւ դուք պէտք չ'ունիք որ մէկը սովորեցնէ ձեզ»** 27 համարը զուգահեռ է հ.20 (այսինքն, Նոր Ուխտը, տես Եր. 31:34): Հովհաննեսն օգտագործում է հերթական թեմաները (հհ 20,24,27): Սուրբ Հոգին է, և ոչ թե գնաստիկ կեղծ ուսուցիչները, մեր գերագույն և անփոխարինելի ուսուցիչը (հմմտ. Հովհ.14:26): Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ ուսուցչի գործն ու պարզևր ակտիվ չեն վաղ եկեղեցում և այսօր (տես Եփ. 4:11; Գործք 13:1; II Կորնթ 12:28): Դա պարզապես նշանակում է, որ փրկության մասին հիմնական բաները գալիս են Սուրբ Հոգուց և Աստվածաշնչից, ոչ թե հատուկ, պարզներով օժտված, մարդկային ուսուցչից, չնայած Նա հաճախ օգտագործում է նրանց որպես միջոց:

▪ «այլ ինչպես այն օծութիւնը սովորեցնում է ձեզ ամեն բանի համար, ճշմարիտ էլ է եւ սուտ չէ»
Սա վերաբերում է հոգևոր ճշմարտությանը: Յուրաքանչյուր քրիստոնյա ունի Սուրբ Հոգի, որն առաջնորդում է իր խիղճը: Մենք պետք է զգայուն լինենք Հոգու նուրբ առաջնորդության հարցում ճշմարտության և էթիկայի ոլորտներում:

▪ «Եւ ինչպես նա սովորեցրեց ձեզ, կացեք նորանում» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է: Հովհաննէսն օգտագործում է «մնայ» գաղափարը ընդարձակված այս նամակում, ինչպես հավատքի վստահության տարրը իր ընթերցողների համար (տես Հովհ. 15): Աստվածաշնչյան հավատքը այն ուխտն է, որտեղ Աստված նախաձեռնում է և օրակարգ սահմանում, սակայն մարդիկ պետք է ի սկզբանէ արձագանքեն և շարունակեն (մնայ): Մնալու մեջ կա թէ աստվածային ասպեկտը և թէ մարդկային: Տես Հատուկ Թեմա: Մնալ 2: 10:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորոյան մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Նկարագրեք կեղծ ուսուցիչների համոզմունքները:
2. Տվեք ապացույցները, որոնցով մենք կարող ենք իմանալ, որ մենք իսկապես փրկված ենք:
3. Բացատրեք սովորական մեղքի և մեղքի մեկուսացված արարքների միջև փոխհարաբերությունները:
4. Բացատրեք սրբերի համբերության և հավատացյալների անվտանգության միջև փոխհարաբերությունները:
5. Թվարկեք և սահմանեք մարդու երեք թշնամիները:

I ՀՈՎՀԱՆՆԵՄ 2:28-3:24

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո որդիներ (2:28-3:10)	Աստծո որդիները	Ճշմարիտ հավատքի հավատարմությունը (2:18-29)	Քրիստոսի թշնամին (2:18-29)	Ապրել որպես Աստծո որդիներ (2:29-4:6)
2:28-3:3	2:28-3:3	2:28 2:29 հարաբերությունները արտահայտվում են ճիշտ վարքի մեջ 3:1-10	2:28-29 Աստծո որդիներ 3:1-3	2:29-3:2 Առաջին Պայմանը; Քանդել, կոտրել մեղքը 3:3-10
3:4-10	Մեղքը և Աստծո գավակը 3:4-9 Միրո հրամայականը		3:4-6 3:7-8 3:9-10	
3:11-18	Միրո աշխատանքը	3:11-18	3:11-12 3:13-18	3:11-24
Համարձակություն Աստծո առաջ	3:16-23	Քրիստոնյայի Վստահությունը	Քաջություն Աստծո առաջ	
3:19-24	Ճշմարտության Հոգին և Մխայի Հոգին 3:24-4:6	3:19-24	3:19-24	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն

4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇՄԲՈՒՆՈՒՄՆԵՐ

- Ա. Գլուխ 2-ը ուղղված է գնոստիկ կեղծ ուսուցիչներին (հատկապես դոկետիկ գնոստիկներին, ովքեր ժխտում էին Հիսուսի մարդեղությունը):
- Բ. Գլուխ 3-ը շարունակում է ակնարկել կեղծ ուսուցիչներին, ովքեր բաժանում էին փրկությունը (արդարացում) էթիկայից և բարոյականությունից (սրբագործում): Սակայն գլուխ 3-ը նույնպես ուղղակիորեն անդրադառնում է հավատացյալին:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ 2:28-3:3
²⁸Եւ հիմա, որդեակներ, կացեք նորանում. որ երբոր նա կ'յայտնուի, համարձակութիւն ունենանք, եւ չ'ամաչենք նորանից նորա գալուստի ժամանակումը: ²⁹Եթէ գիտեք որ նա արդար է, կ'իմանաք թէ ամեն ով որ արդարութիւն է անում, նորանից է ծնուած:
¹Տեսեք թէ Հայրն ինչպիսի սեր շնորհեց մեզ, որ Աստուծոյ որդիք կոչուինք, սորա համար աշխարհքը չէ ճանաչում մեզ, որ նորան չ'ճանաչեց: ²Սիրելիներ, հիմա Աստուծոյ որդիք ենք, եւ տակաւին յայտնուած չէ թէ ինչ պիտի լինենք. Բայց գիտենք թէ, երբոր նա կ'յայտնուի, նորան նման կ'լինենք, որովհետեւ կ'տեսնենք նորան ինչպէս որ է: ³Եւ ամեն ով որ այս յայտնուի իրանում, սրբում է իր անձն ինչպէս որ նա սուրբ է:

2:28 Մեկնաբանների շրջանում շատ քննարկում կա, արդյոք նոր պարբերություն պետք է սկսվի հ.հ.28, 29 թե 3:1: Քանի որ հ.հ.27 և 28 միջև կրկնություն կա, ապա պարբերությունների բաժանումը հավանաբար այստեղ է լինելու:

- «որդեակներ» Տես ծանուցում 2:1.
- «կացեք նորանում» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՈՒԿԱՆ է: Սա երրորդ ՀՐԱՄԱՅՈՒԿԱՆՆ է, որն օգտագործվում է քրիստոնեական հաստատակամությունը խթանելու համար (տես հ.հ.15, 24): Տես Հատուկ Թեմաներ. Համբերելու Կարիքը Հովհ.8:31 և Մնալ, կենալ I Հովհ. 2: 10:

ՆԱԽՈՐԴՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ հաճախ դժվար է բացահայտել, բայց այս պարբերությունում դրանք ակնհայտ են:

1. «Նորանում», հ.28, Հիսուս
2. «Նորանից», հ.28, Հիսուս
3. «Նորա», հ.28 Հիսուս
4. «Նա արդար է», հ.29, Հայրը
5. «Նորանից է ծնուած», հ.29, Հայրը (տես ծանուցումը)
6. «Նորան չճանաչեց», 3:1 Հայրը (տես Հովհ.15:21; 16: 2-3)
7. «Նա կյայտնուի», 3: 2, Հիսուս
8. «Նորան նման է», 3: 2, Հիսուս
9. «կտեսնենք նորան», 3: 2, Հիսուս
10. «Նա է», 3: 2, Հիսուս
11. «Նորա վրա», 3: 3, Հիսուս
12. «ինչպէս որ նա սուրբ է», 3: 3, Հիսուս

Կոնտեքստ, կոնտեքստ, կոնտեքստ:

▪ «**երբոր նա կ'յայտնուի**» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ Է, ինչպես հ.29, և նաև «երբ Հիսուսը վերադառնա» 3: 2: Սա ոչ թե անորոշ իրադարձություն է, այլ անորոշ է ժամանակի առումով (նման ՆԿ «հույս» տերմինին, հմմտ. 3: 3):

▪ «**համարձակություն ունենանք**» Հունարեն «համարձակություն» (*parrhēsia*) բառը «ազատ խոսել» արմատից է: Վստահությունը ներկայիս ապրելակերպ է, որը հիմնված է հավատացյալի Հիսուս Քրիստոսի ավետարանի գիտելիքի և վստահության վրա:

Տես Հատուկ Թեմա. Համարձակություն Հովհ. 7: 4:

▪

NASB “**և չքաշվենք հեռու՝ ամաչելով Նրանից**”

NKJV “**և չամաչենք նրա առաջ**”

NRSV “**և ամոթը իր առաջ դրեց**”

TEV “**և ամաչելով չթաքնվենք նրանից**”

NJB “**և չքաշվենք հեռու՝ ամաչելով Նրանից**”

Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ (deponent) ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, որը կարելի է հասկանալ

1. հավատացյալը ամաչում է (NASB, TEV, NJB)

2. հավատացյալին ամաչեցրել են (NRSV)

Հավատացյալները սպասում են և ուրախանում Քրիստոսի վերադարձով, բայց նրանք, ովքեր ապրում են եսասեր, աշխարհային կյանքով, անշուշտ անակնկալի կգան և խայտառակվեն Նրա ներկայությամբ: Կլինեն հավատացյալների դատաստան (տես II Կորնթ. 5:10):

▪ «**նորա գալուստի ժամանակումը**» Սա Երկրորդ Գալստյան մասին է: Այս բառը, *Parousia*, օգտագործվում է միայն այստեղ բոլոր Հովհաննեսի գրվածքներում և նշանակում է անմիջական արթայական այց:

Սա բառացիորեն «մինչև *Parousia*», որը նշանակում է «ներկայություն» և օգտագործվում էր արթայական այցի համար: Ուրիշ ՆԿ տերմիններ էլ են օգտագործվում Երկրորդ Գալստյան համար

1. *epiphaneia*, «դեմ առ դեմ հայտնվել»

2. *apokalypis*, «բացահայտում»

3. «Տիրոջ օրը» և այս արտահայտության տարբերակները

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՄԱՐ

Վախճանաբանական շեշտադրում հատուկ գալիք օրվա վրա, երբ մարդիկ կհանդիպեն Հիսուսին (որպես Փրկիչ և Դատավոր), Պողոսի գրվածքներում մի քանի անուններով է հանդես գալիս:

1. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրը» (տես I Կոր. 1:8)
2. «Տիրոջ օրը» (տես I Կոր. 5: 5; I Թես.5:2; II Թես.2: 2)
3. «Տեր Հիսուսի օրը» (տես I Կոր. 5:5; II Կոր.1:14)
4. «Հիսուս Քրիստոսի օրը» (տես Ֆիլ. 1: 6)
5. «Քրիստոսի օրը» (տես Ֆիլ.1:10; 2:16)
6. «Նրա օրը (Մարդի Որդին)» (տես Ղուկ.17:24)
7. «այն օրը, երբ Մարդու Որդին կհայտնվի» (տես Ղուկ.17:30)
8. «մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությունը» (տես I Կոր. 1:7)
9. «երբ Տեր Հիսուսը հայտնվի երկնքից» (տես II Թես. 1:7)
10. «Տեր Հիսուսի ներկայությամբ Իր գալստյան ժամանակ» (տես I Թես. 2:19)

Առնվազն չորս կերպ կա, որոնցում ՆԿ հեղինակները խոսում են Հիսուսի վերադարձի մասին:

1. *epiphaneia*, որը վերաբերում է կուրացնող պայծառությանը, որը աստվածաբանորեն

(թե ոչ ստուգաբանորեն) կապված է «փառքի» հետ: II Տիմ. 1:10; Տիտ. 2:11 և 3:4 վերաբերում է Հիսուսի առաջին գալստյանը (այսինքն, մարմնավորմանը) և Նրա Երկրորդ գալուստին: Այն օգտագործվում է II Թես. 4: 8, որը ներառում է Երկրորդ Գալստյան բոլոր երեք հիմնական տերմինները. I Տիմ.6:14; II Տիմ. 4: 1,8; Տիտոս 2:13:

2. *arousia*, որը նշանակում է ներկայություն և ի սկզբանե վերաբերվում էր արքայական այցին: Սա ամենատարածված տերմինն է (տես Մատթ. 24:3,27,37,39; I Կոր.15:23; I Թես. 2:19; 3:13; 4:15; 5:23; II Թես.2: 1,8; Հակ.5: 7,8; II Պետ.1: 6; 3: 4,12; I Հովհ. 2:28):
3. *apokalupsis* (կամ *apocalypsis*), որը նշանակում է մերկացնել, ծածկոցը հանել՝ բացահայտելու նպատակով: Սա ՆԿ վերջին գրքի անունն է (տես Ղուկ.17:30; I Կոր. 1: 7; II Թես. 1: 7; I Պետ. 1: 7; 4:13):
4. *phaneroō*, որը նշանակում է թեթև կամ հստակ բացահայտում կամ դրսևորում: Տերմինը հաճախ օգտագործվում է ՆԿ Աստծո հայտնության բազմաթիվ ասպեկտների համար: Սա, ինչպես *epiphaneia*, կարող է վերաբերել Քրիստոսի առաջին գալստյանը (տես I Պետ. 1:20; I Հովհ. 1: 2; 3: 5,8; 4: 9) և Նրա երկրորդ գալստյանը (տես Մատթ. 24:30; Կող. 3: 4; I Պետ. 5: 4; I Հովհ. 2:28; 3: 2):
5. «Եկեք», «Էխմայ» հասկացության ընդհանուր տերմինը երբեմն օգտագործվում է նաև Քրիստոսի վերադարձի համար (տես Մատ.16:27-28; 23:39; 24:30; 25:31; Գործք 1:10-11; I Կոր. 11:26; Հայտ. 1: 7,8):
6. Այն նաև օգտագործվում է «Տիրոջ օրը» արտահայտությամբ (տես I Թես. 5:2), որը Աստծո օրվա օրհնության (հարության) և դատաստանի ՀԿ անվանումն է: ՆԿ ամբողջությամբ գրված է ՀԿ աշխարհայացքի շրջանակներում, որը պնդում է
 - ա. ներկայիս չարը, ապստամբ ժամանակաշրջանը
 - բ. Արդարության գալիք նոր դարաշրջանը
 - գ. Մեսիայի (Օծյալի) կատարած գործի միջոցով Հոգու կողմից բերված ժամանակաշրջանը,

Պրոգրեսիվ հայտնության աստվածաբանական ենթադրությունը պարտադիր, քանի որ ՆԿ հեղինակները թեթևակի կերպով փոխում են Իսրայելի ակնկալիքները: Մեսիայի զինվորական, ազգայնական (Իսրայել) գալստյան փոխարեն, երկու գալուստ կա: Առաջին գալուստը դա աստվածության մարմնավորումն է Հիսուս Նագովրեցու հասկացության և ծնունդով: Նա եկավ որպես ոչ զինվորական, ոչ դատական «տառապող ծառա» Ես.53: Նա եղի (ոչ թե պատերազմական ձիու կամ թագավորական ջորու) ավանակի վրա հեծած, Չաք. 9: 9: Առաջին գալուստը սկսեց Նոր Մեսիական Ժամանակաշրջանով՝ Աստծո Թագավորությունը երկրի վրա: Մի առումով Թագավորությունը այստեղ է, բայց, իհարկե, մյուս առումով այն դեռ հեռու է: Այս լարվածությունը, Մեսիայի երկու գալուստների միջև, որը, մի իմաստով, երկու հրեական ժամանակաշրջանների համընկնումն է, որը ՀԿ-ից անտեսանելի էր, կամ, գոնե անհայտ: Իրականում, այս երկակի շեշտը ընդգծում է ՅԱՀՎԵԻ բոլոր մարդկությանը փրկելու պարտավորությունը (տես Ծննդ. 3: 15; 12: 3; Ելից 19: 5 և մարգարեների քարոզչությունը, հատկապես Եսայիա և Հովնան):

Եկեղեցին չի սպասում ՀԿ մարգարեության կատարմանը, քանի որ շատ մարգարեություններ վերաբերում են առաջին գալուն (տես, *How to Read the Bible For All Its Worth*, էջ 165-166): Հավատացյալներն ակնկալում են հարուցյալ Թագավորների Թագավորի և Տերերի Տիրոջ փառահեղ գալուստը, արդարության նոր ժամանակաշրջանի ակնկալվող պատմական իրականացումը երկրի վրա այնպես, ինչպես երկնքում է (հմմտ.Մատթ. 6:10): ՀԿ ներկայացումները սխալ չէին, բայց ոչ էլ լիարժեք: Նա կվերադառնա այնպես, ինչպես որ մարգարեները կանխատեսել էին՝ ՅԱՀՎԵԻ իշխանությունով և գորությունով:

Երկրորդ գալուստը աստվածաշնչյան տերմինն չէ, բայց գաղափարը ամբողջ ՆԿ աշխարհայացքն

է և շրջանակը: Աստված բոլորը ուղղելու է: Աստծո և Իր պատկերով ստեղծված մարդու միջև հաղորդակցությունը կվերականգնվի: Չարը դատապարտվելու է և հեռացվելու: Աստծո նպատակները ոչ, չեն կարող, չկատարվել:

2:29 «Եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոստենցիալ գործողություն: Այստեղ այն վերաբերում է հավատացյալի ստացած գիտելիքին, սակայն կեղծ ուսուցիչները բաց են թողել դա:

- **«գիտեք»** Քերականորեն սա կամ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը նշանակում է ընթացիկ գիտելիքներ կամ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ, որը խոսում է հավատացյալի անհրաժեշտ գիտելիքների մասին: Հովհաննեսն օգտագործում է «իմանալ, գիտենալ, ճանաչել» է, բոլոր նրանց համար, ովքեր ունեն ճշգրիտ, որն էլ թելադրում է, որ դա ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է:

- **«նա»** 28 համարը; 2:1 և 3:7 ցույց է տալիս, որ սա վերաբերում է Հիսուսին: Այնուամենայնիվ, «Նրանից ծնված» վերջին ԴԵՐԱՆՈՒՆԸ, կարծես, վերաբերում է Հայր Աստծուն, քանի որ «Աստծուց ծնված» արտահայտությունը շատ հաճախ է օգտագործվում (տես 3: 9; 4: 7; 5: 1,4,18; Հովհ. 1:13):

- **«արդար. . . արդարություն»** Սա ակնկալվող ընտանեկան առանձնահատկություն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԳԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արդարություն»ը այնքան վճռական/կրիտիկական թեմա է, որ Աստվածաշնչի ուսանողը ինքը պետք է իր անձնական ընդարձակ սերտողությունն անի տվյալ գաղափարի շուրջ:

Հին Կտակարանում Աստծո կերպարը բնութագրվում է որպես «ուղիղ» կամ «արդար» (BDB 841): Միջագետքյան տերմինը ինքնի առաջացել է գետի եղեգից, որը օգտագործվում էր որպես շինարարական գործիք պատերի կամ ցանկապատերի հորիզոնական ուժը գնահատելի/ստուգելու համար: Աստված ընտրեց տերմինը փոխաբերական իմաստով Իր բնությունը ցույց տալու համար: Նա է ուղիղ ծայրը (քանոնը) որով բոլոր բաները գնահատվում են: Այս գաղափարը հաստատում է ինչպես Աստծո արդարությունը այնպես էլ Նրա ուղիղ դատելը:

Մարդը ստեղծված էր Աստծո պատկերով (հմմտ. Ծննդ. 1:26-27; 5:1,3; 9:6): Մարդը ստեղծված էր Աստծո հետ հարաբերություն ունենալու համար: Ամբողջ արարչագործությունը բեմ կամ ֆուն/նախադրյալ Աստծո և մարդու փոխադարձ ներգործության համար: Աստված ուզում էր, որ Իր ամենաբարձր արարչագործությունը ճանաչի Իրեն, սիրի Իրեն, ծառայի Իրեն և Իր նման լինի: Մարդու հավատարմությունը/օրինապահությունը ստուգման ենթարկվեց (հմմտ. Ծննդ. 3) և առաջին զույգը ձախողվեց ստուգաբեկից: Սա բերեց Աստծո և մարդու միջև եղած հարաբերության պառակտմանը/խզում (հմմտ. Ծննդ. 3; Հն. 5:12-21):

Աստված խոստացավ նորոգել և վերականգնել հաղորդակցությունը (հմմտ. Ծննդ. 3:15). Նա անում է սա Իր կամքի և Իր Որդու միջոցով: Մարդիկ անընդունակ էին վերականգնելու ճեղքվածքը/ խախտումը (հմմտ. Հն. 1:18-3:20):

Մարդու անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար ուխտի գաղափարն էր՝ հիմնված Իր հրավերքի և մարդու ապաշխարած, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա: Անկման պատճառով մարդիկ համապատասխան գործողության անընդունակ էին (հմմտ. Հն. 3:21-31; Գաղ. 3): Աստված պետք է նախաձեռնությունը վերցնեք վերականգնելու մարդկանց քանդած ուխտը: Նա դա արեց

1. Հռչակելով մարդուն արդար՝ Քրիստոսի կատարած գործի միջոցով (դատական կարգով արդարություն):
2. մարդուն ճրի արդարություն տալով Քրիստոսի կատարած գործի միջոցով (վերագրված արդարություն):
3. ապահովելով Հոգու բնակվելը մարդու մեջ, որը բերում է արդարություն (քրիստոսանմանություն, Աստծո պատկերի վերականգնում)

Ինչևէ, Աստված պահանջում է ուխտային պատասխան: Աստված վճռում է (այն է, ձրի տալիս) և մատակարարու/ապահովում, բայց մարդիկ պետք է արձագանքեն և շարունակեն արձագանքել

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդ կյանք ապրելով
4. համբերությամբ/հաստատակամությամբ

Արդարությունը, ուստի, ուխտին պատկանող է, փոխադարձ գործողություն Աստծո և Իր ամենավեհ ստեղծագործության միջև: Այն հիմնված է Աստծո կերպարի, Քրիստոսի գործի և Հոգու իրավունքի վրա, որին ամեն մի անհատ պետք է անձնապես և շարունակաբար պատշաճ/յուրահատուկ արձագանքի: Գաղափարը/հասկացողությունը կոչվում է «հավատքով արդարացում»: Գաղափարը հայտնվում է Ավետարաններում, բայց ոչ այս տերմիններով: Այն հիմնականում սահմանվում է Պողոսի կողմից, որը օգտագործում է հունարեն «արդարություն» տերմինը իր զանազան տարբերակներով ավելի քան 100 անգամ:

Պողոսը, լինելով կրթված ռաբբի, օգտագործում է *dikaioisunē* տերմինը իր եբրայերեն *SDQ* իմաստով օգտագործված Սեպտուագինդում: Հունական գրվածքներում տերմինը կապված է մեկին, որը համապատասխանում է աստվածության և հասարակության սպասումներին/ակնկալիքներին: Եբրայերեն իմաստով այն միշտ կառուցված է ուխտի տերմիններով: Եհովան արդար, բարոյական Աստված է: Նա ուզում է, որ Իր ժողովուրդը արտացոլի Իր կերպարը: Փրկված մարդը դառնում է նոր արարած: Այս նորությունը բերում է աստվածաշնորհության նոր ապրելակերպ (Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին կենտրոնանում է արդարացման վրա): Քանի որ Իսրայելը թեոկրատական էր, չկար պարզ ուրվագիծ աշխարհիկի (հասարակության նորմեր) և հոգևորի (Աստծո կամք) միջև: Այս տարբերությունը արտահայտվում է եբրայերեն և հունարեն տերմիններում թարգմանվելով անգլերեն որպես «արդար/ուղիղ» (կապված հասարակության հետ) և «արդարություն» (կապված կրոնի հետ):

Հիսուսի ավետարանը (բարի լուրը) այն է, որ ընկած մարդկությունը վերականգնվի Աստծո հետ ունեցած հարաբերության մեջ: Պողոսի պարադոքսն այն է, որ Աստված, Քրիստոսի միջոցով, արդարացնում է հանցավորին: Սա իրականացվում է Հոր սիրո, ողորմության և շնորհքի միջոցով; Որդու կյանքի, մահվան և հարության միջոցով; և Հոգու սիրատեծելու և դեպի ավետարանը քաշելու միջոցով: Արդարացումը Աստծո ձրի գործն է, բայց այն պետք է աստվածաշնորհությամբ արտահայտվի (Օգոստոսի վերաբերմունքը/դիրքը, որը անդրադարձնում է թե Բարեփոխման շեշտը ավետարանի ձրի լինելու վրա և թե հռոմեական Կաթոլիկի շեշտը սիրո և հավատարմության փոխված կյանքի վրա): Բարեփոխիչների համար “Աստծո արդարություն” տերմինը ՕԲՅԵԿՍԱՅԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ է (այսինքն, գործողություն, որով մեղավոր մարդը ընդունելի է դառնում Աստծո համար [positional սրբացում]), այնինչ կաթոլիկների համար ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ, որը Աստծուն ավելի մմանվելու գործընթաց է (գործնական առաջընթացային սրբացում): Իրականության մեջ այն, անշուշտ, և նա է և նա:

Իմ կարծիքով ամբողջ Աստվածաշունչը Ծննդ. 4 – Հայտ. 20, արձանագրությունն է Աստված վերականգնում է Եդեմի պարտեզի հարաբերությունը: Աստվածաշունչը սկսում է Աստված-մարդ հարաբերությունով երկրային միջավայրում (հմնտ. Ծննդ. 1-2) և Աստվածաշունչն ավարտվում է նույն միջավայրով (հմնտ. Հայտ. 21-22): Աստծո պատկերն ու նպատակը կվերականգնվի:

Վերը նշած քննարկումները ապացուցելու համար տես հետևյալ Նոր Կտակարանային հատվածները պարզաբանված հունարեն բառախմբով:

1. Աստված արդար է (հաճախ կապվում է Աստված որպես Գատավոր)
 - ա. Հռ. 3:26
 - բ. II Թեա. 1:5-6
 - գ. II Տիմ. 4:8
 - դ. Հայտ. 16:5
2. Հիսուսն արդար է
 - ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի տիտղոսը)
 - բ. Մաթ. 27:19
 - գ. I Հովհ. 2:1,29; 3:7
3. Աստծո կամքը Իր արարչագործության համար արդարությունն է
 - ա. Ղևտ. 19:2
 - բ. Մաթ. 5:48 (հմնտ. 5:17-20)
4. Աստծո օժանդակությամբ մատակարարել և արտահայտել արդարություն

- ա. Հն. 3:21-31
- բ. Հն. 4
- գ. Հն. 5:6-11
- դ. Գաղ. 3:6-14
- ե. Տրված Աստծո կողմից
 - 1) Հն. 3:24; 6:23
 - 2) I Կոր. 1:30
 - 3) Եփ. 2:8-9
- զ. Հավատքով ստացած/ընդունած
 - 1) Հն. 1:17; 3:22,26; 4:3,5,13; 9:30; 10:4,6,10
 - 2) I Կոր.5:21
- է. Որդու կատարած գործի միջոցով
 - 1) Հն. 5:21-31
 - 2) II Կոր. 5:21
 - 3) Փիլ. 2:6-11

5. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն

- ա. Մաթ. 5:3-48; 7:24-27
- բ. Հն. 2:13; 5:1-5; 6:1-23
- գ. I Տիմ. 6:11
- դ. II Տիմ. 2:22; 3:16
- ե. I Հովհ. 3:7
- զ. I Պետ. 2:24

6. Աստված կրատի աշխարհը արդարությունով

- ա. Գործք 17:31
- բ. II Տիմ. 4:8

Արդարությունը Աստծո առանձնահատկությունն է, ձրի տրված մեղավոր մարդուն Քրիստոսի միջոցով: Դա

1. Աստծո վճիռն է
2. Աստծո պարզևն է
3. Քրիստոսի գործն է

Բայց դա նաև արդար դառնալու գործընթացն է, որը պետք է լինի եռանդուն և հաստատուն հետևողականությամբ; մեկ օր այն կավարտվի Երկրորդ Գալուստով: Աստծո հետ հարաբերությունը վերականգնվում է փրկության ժամանակ, բայց զարգանում է կյանքի ընթացքում, դառնում դեմ առ դեմ անսպասելի հանդիպում/բախում մահվան ժամանակ կամ *Parousia*:

Ահա մի լավ մեջբերում վերցված *Dictionary of Paul and His Letters*, IVP հրատարակչություն ; *Dictionary of Paul and His Letters from IVP*

«Կալվինը, ավելին քան Լյութերը, ընդգծում է Աստծո արդարության հետ կապված տեսակետը: Լյութերի տեսակետը՝ կապված Աստծո արդարության հետ թվում է թե պարունակում է արդարացման/պարտքից ազատվելու տեսակետը: Կալվինը ընդգծում է հաղորդակցության սքանչելի բնությունը կամ Աստծո արդարությունը մեզ տալը» (Էջ. 834):

Ինձ համար հավատացյալի հարաբերությունը Աստծո հետ ունի 3 տեսակետ

1. ավետարանը անձ է (Արևելյան Եկեղեցին և Կալվինի շեշտը/ընդգծումը)
2. ավետարանը ճշմարտություն է (Օգոստոսի և Լյութերի շեշտը/ընդգծումը)
3. ավետարանը փոխված կյանք է (Կաթոլիկ շեշտը/ընդգծումը)

Դրանք բոլորն էլ ճշմարտություն են և պետք է միասին պահվեն առողջ, հուսալի աստվածաշնչյան քրիստոնեության համար: Եթե մեկն ու մեկը ավելի է ընդգծվում կամ թերագնահատվում, խնդիրներ են առաջ գալիս:

Մենք պետք է ողջունենք Հիսուսին

Մենք պետք է հավատանք ավետարանին

Մենք պետք է հետապնդենք քրիստոսանմանությանը:

▪ «**ծնունդ**» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը նշանակում է պայմանավորված պայման, որն արտահայտվում է արտաքին գործիչով՝ Հայր Աստծով (տես Հովհ. 3:

3): Ուշադրություն դարձրեք մեկ այլ ընտանեկան փոխաբերության օգտագործմանը՝ (տես 3:9) քրիստոնեությունը նկարագրելու համար (դա ընտանիք է): Տես ծանուցում 3: 1:

3:1 «Տեսեք թե ինչպիսի սեր» Այստեղ և ամբողջ I Հովհ. օգտագործված են սիրո տերմինները՝ *agapaō* (ԲԱՅ) կամ *agapē* (ԳՈՅԱԿԱՆ, հմմտ.2: 5,15; 3: 1,16,17; 4: 7,8,9,10,12, 16,17,18; 5: 3): Այս տերմինը օգտագործվել է դասական հունարենում, բայց ոչ հաճախ: Թվում է, որ վաղ եկեղեցին վերաիմաստավորեց այն ավետարանի լույսի ներքո: Այն եկավ ցույց տալու խորը մնայուն սերը: Արդարացի չէ ասել «Աստվածային տեսակի ինքնագոհաբերվող սեր», քանի որ Հովհաննեսի Ավետարանում այն օգտագործվում է հոմանիշներով *phileō* հետ (տես 5:20; 11: 3,36; 12:25; 15:19; 16:27; 20: 2; 21:15,16,17): Այնուամենայնիվ, հետաքրքիր է, որ այն միշտ օգտագործվում է (I Հովհ.) հավատացյալը հավատացյալին սիրելու հետ կապված: Հավատքը և Հիսուսի հետ հաղորդակցությունը փոխում են մեր փոխհարաբերությունները Աստծո և մարդկանց հետ:

▪ **«Հայրն շնորհեց մեզ»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ օգտագործումը կապված է Աստծո փրկության պարզև՝ Քրիստոսի հետ, որը աստվածաշնչյան հիմք է հավատացյալների անվտանգության վարդապետության համար (տես Հովհ. 6:35-40; 10:1; Եփ. 2:5,8; 3:14; 5:1): Տես Հատուկ Թեմա: Քրիստոնեական հավաստիացում Հովհ.6:37:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՊՍՑՈՒՅՑԸ ԱՆՁԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
Այն հիմնված է Հիսուսով Նոր Ուխտի վրա (տես Եր.31: 31-34; Եզեկ 36:22-38).

1. Հոր բնույթը (տես Հովհ. 3:16), Որդու գործողությունը (II Կոր. 5:21) և Հոգու ծառայությունը (տես Հռ. 8: 14-16) ոչ թե մարդու կատարած որևէ գործ, հնազանդության համար վճարված, այլ պարզապես հավատք:
2. Դա պարզ է (տես Հռ. 3:24; 6:23; Եփ. 2: 5, 8-9)
3. Դա նոր կյանք է, նոր աշխարհայացք (տես Հակոբոս և I Հովհաննես)
4. Դա գիտելիք է (ավետարանը), հաղորդակցություն (հավատք առ Հիսուսին) և նոր կենսակերպ (Հոգու առաջնորդությամբ Քրիստոսանմանություն) բոլոր երեքը, ոչ միայն մեկն ու մեկը
5. Տեսեք ճշմարիտ փրկության թեստերը, I Հովհ. 2: 3-3: 3, Կոնտեքստային Ներդրումումներ Գ.

▪ **«որ կոչուինք»** Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍՍԱԿԱՆ է, որն օգտագործվում է Աստծո կողմից տրված պատվավոր կոչման («Աստծո զավակներ») իմաստով:

▪ **«Աստուծոյ որդիք»** Սա 2:9-3:10 կենտրոնում է: Այն հաստատում է Աստծո նախաձեռնությունը մեր փրկության մեջ (տես Հովհ.6:44-65): Հովհաննեսն օգտագործում է ընտանեկան տերմիններ՝ նկարագրելու հավատացյալի նոր հարաբերությունները Աստծո հետ (տես 2:29; 3: 1,2,9,10; Հովհ.1:12):
Հետաքրքիր է, որ Հովհաննեսը (Հովհ.3: 3) և Պետրոսը (I Պետ.1: 3,23) օգտագործում են ընտանեկան փոխաբերություն «կրկին ծնված» կամ «ծնված վերևից», իսկ Պողոսը «որդեգրություն» (հմմտ. Հռ. 8:15,23; 9:4; Գաղ. 4:15; Եփ. 1:5) իսկ Հակոբոսն օգտագործում է «ծնել» ընտանեկան փոխաբերությունը (տես Հակ. 1:18) կամ «արտադրել, առաջ բերել»՝ նկարագրելու հավատացյալի նոր հարաբերությունները Աստծո հետ Քրիստոսի միջոցով: Քրիստոնեությունը ընտանիք է:

▪ **«սորա համար»** Սա ՆԵՐԿԱ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս արտահայտությունը չկա Աստվածաշնչի King James տարբերակում, քանի որ այն ընդգրկված չէր ուշ հունարեն ձեռագրերում (այսինքն, K և L), որի վրա հիմնված է KJV: Այնուամենայնիվ, այս արտահայտությունը հայտնվում է հնագույն հունարեն ձեռագրերում (P⁴⁷, Տ, A, B, և C): UBS⁴ ներառում է «A» վարկանիշը (որոշակի): Տես Հավելված 2 Տեքստային Քննադատություն:

▪ **«աշխարհքը չէ ճանաչում մեզ»** «Աշխարհ» տերմինը օգտագործվում է աստվածաբանական կերպով, ինչպես 2:15-17: Աշխարհը ցույց է տալիս մարդկային հասարակությունը, որը կազմակերպված է և գործում է Աստծուց հեռու(կարդա Հովհ.15: 18-19; 17: 14-15): Աշխարհի կողմից հալածվելն ու մերժվելը ևս մեկ ապացույց է Քրիստոսի մեր դիրքորոշմանը (տես Մատթ. 5: 10-16):

▪ **«որ նորան չճանաչեց»** Սա, ըստ երևույթին, հղում է Հայր Աստծուն, քանի որ Հովհաննեսի Ավետարանում Հիսուսը կրկին ու կրկին ասում է, որ աշխարհը Իրեն չի ճանաչում (տես Հովհ.8: 19,55; 15: 18,21; 16: 3): I Հովհ. ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ երկիմաստ են (տես ծանուցում 2:28): Այս կոնտեքստում քերականական նախադեպը Հայրն է, բայց հ.2 աստվածաբանական վկայակոչումը Որդին է: Սակայն Հովհաննեսում դա կարող է նշանակալից երկիմաստություն լինել, քանի որ Հիսուսին տեսնել նշանակում է Հորը տեսնել (տես Հովհ. 12:45; 14: 9):

3:2 «եւ տակաւին յայտնուած չէ թէ ինչ պիտի լինենք» Սա խոսում է Հովհաննեսի այս վերջին ժամանակաշրջանի իրադարձությունները նկարագրելու անկարողության մասին (տես Գործք 1: 7) կամ հարություն առած մարմնի ճշգրիտ բնույթը (տես I Կոր.15:35-49): Սա ևս ցույց է տալիս, որ 2:27-ը չի նշանակում սպառիչ գիտելիքներ յուրաքանչյուր ոլորտում: Նույնիսկ Հիսուսի այս իրադարձության մասին գիտելիքը սահմանափակ էր, մինչ Նա մարմնի մեջ էր (տես Մատթ.24:36; Մարկ.13:22):

▪ **«երբոր նա կ'յայտնուի»** «Երբ» տերմինը ներկայացնում է ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ: Այն օգտագործվում է այստեղ, ոչ թե Երկրորդ Գալստյանը կասկածելու համար, այլ արտահայտելու դրա անորոշ ժամանակը: Հովհաննեսը, թեև այժմ ընդգծում է լիակատար փրկությունը, նաև ակնկալում է Երկրորդ Գալուստ:

▪ **«նորան նման կ'լինենք»** Սա ներառում է մեր Քրիստոսանմանության վախճանը (հմմտ. II Կորնթ. 3:18; Եփ. 4:13; Ֆիլ 3:21 և Կող.3:4): Սա հաճախ կոչվում է «փառավորում» (տես Հո. 8: 28-30): Սա մեր փրկության գագաթնակետն է: Այս վախճանաբանական վերափոխումը կապված է Աստծո պատկերի լիակատար վերականգնումը մարդկանց մեջ, որոնք ստեղծված են Նրա նմանությամբ (տես Ծննդ. 1:26; 5: 1,3; 9: 6): Կրկին հնարավոր է մտերմիկ հարաբերություն Աստծո հետ:

▪ **«որովհետեւ կ'տեսնենք նորան ինչպես որ է»** Հորը ցանկացավ տեսնել Աստծուն (տես Հոբ 19: 25-27): Հիսուսը մեզ ասաց, որ սրտով մաքուրը կտեսնի Աստծուն (տես Մատթ. 5: 8): Նրան տեսնել Իր ամբողջ հմայքով, նշանակում է, որ մենք կփոխվեն Նրա նմանությանը (տես I Կորնթ. 13:12): Սա վերաբերում է հավատացյալի փառավորմանը (հմմտ. Հո. 8:29), Երկրորդ Գալստյան ժամանակ: Եթե «արդարացում» նշանակում է ազատություն մեղքի պատժից իսկ «սրբացում» նշանակում է ազատություն մեղքի ուժից, ապա «փառավորում» նշանակում է ազատություն մեղքի ներկայությունից:

3:3 «ամեն ով» Հունարեն *pas* տերմինը յոթ անգամ է երևում 2:29-ից մինչև 3:10: Բացառություններ չկան: Հովհաննեսը ճշմարտություն է ներկայացնում աննկատ, սև կամ սպիտակ կատեգորիաներում: Մարդը կամ Աստծո զավակ է կամ Սատանայի (տես 2:29; 3: 3, 4, 6 [երկու անգամ] 9, 10):

▪ **«այս յոյսն»** Պողոսի գրվածքներում այս տերմինը հաճախ վերաբերում է Հարության օրվան (տես Գործք 23:6; 24:15; 26:6-7; Հո. 8:20-25; I Թեո. 2:19; Տիտոս 2:13; I Պետ. 1:3,21): Այն արտահայտում է իրադարձության վստահությունը, սակայն երկիմաստ ժամանակի տարրով:

Հովհաննեսը չի խոսում Երկրորդ Գալստյան «հույսի» մասին, այնպես հաճախ, ինչպես մյուս ՆԿ հեղինակները: Սա իր գրվածքներում տերմինի միակ օգտագործումն է: Նա շեշտը դնում է հիմա Քրիստոսի մեջ «մնալու, կենալու» օգուտների և պարտականությունների վրա: Սակայն դա չի նշանակում, որ նա չի սպասում չարի վերջնական դատաստանին (տես 2:18) և հավատացյալի վերջնական փառավորմանը (տես 3: 1-3):

▪ **«սրբում է իր անձն ինչպես որ նա սուրբ է»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Մաքրությունը/սրբությունը կարևոր է (տես Մատթ. 5:8,48): Մենք պետք է համագործակցենք սրբագործման գործընթացում (տես II Կորնթ. 7:1; Հակ.4:8; I Պետ.1:22; II Պետ.3:13,14), ինչպես Հովհ. 1:12 խոսում է արդարացման գործընթացում մեր համագործակցության մասին: Այս նույն լարվածությունը՝ Աստծո բաժինը (գերիշխանություն) մեր փրկության մեջ և մեր բաժինը (մարդու ազատ կամքը) կարելի է հստակ տեսնել, համեմատելով Եզ.18:31 և 36: 26-27: Աստված միշտ նախաձեռնում է (տես Հովհ. 6: 44,65), սակայն Նա պահանջել է, որ ուխտի ժողովուրդը պետք է արձագանքի նախնական ապաշխարությամբ և հավատքով, ինչպես նաև շարունակելու ապաշխարելով, հավատքով, հնազանդությամբ, ծառայելով, երկրպագությունը և հաստատականություն ցուցաբերելով:

Սա կարող է լինել Հիսուս Քրիստոսի քահանայապետական աղոթքը Հովհ. 17, հատկապես հհ. 17,19: Նա սրբացնում է Իրեն, Իր հետևորդները սրբացնում են իրենք իրենց: Մի փոքր զարմանալի է, որ նույն հիմնական արմատից կազմված տարբեր ձևեր են օգտագործվում:

1. Հովհ.17: 17,19 - *hagiazō* (*hagios*, հմմտ.Հովհ. 10:36)
2. Հովհ.3: 3 - *hagnizō* (*hagnos*, տես Հովհ. 11:55)

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՈՄԲՆՈՒՄՆԵՐ 3:4-10

Ա. Այս հատվածը եղել է քրիստոնեական պերֆեկցիոնիզմի հակասությունների կենտրոնում (հմմտ.Հռ.6), երբեմն կոչվող ամբողջական սրբացման և քրիստոնյաների շարունակական մեղանչելու միջև (հմմտ. Հռ.7):

Բ. Մենք չպետք է թույլ տանք, որ մեր աստվածաբանական կողմնորոշումը ազդի այս տեքստի մեր էկզեգետիկայի վրա: Բացի այդ, մենք չպետք է թույլ տանք, որ մյուս տեքստերը ազդեն այս տեքստի վրա, մինչև այս տեքստի մեր անկախ ուսումնասիրությունը լիարժեք չլինի, և մենք պարզել ենք, թե Հովհաննեսը ինչ էր ասում գլուխ 3-ում և ամբողջ I Հովհաննես գրքում:

Գ. Այս տեքստը հստակ ներկայացնում է այն նպատակը, որ բոլոր հավատացյալները փափագում են մեղքից ամբողջությամբ ազատվել: Այս նույն իդեալը ներկայացված է Հռ. 6: Քրիստոսի գործությամբ մենք ունենք անմեղ ապրելու ներուժ:

Դ. Այս հատվածը, ինչևէ, պետք է համապատասխանի ամբողջ I Հովհ. գիրքի մեծ կոնտեքստին:

1. Այս հատվածը մեկնաբանել առանց հաշվի առնելու 1: 8-2: 2 (քրիստոնյաները էլ մեղք գործում են) կլինեք հիմարություն:
2. Այս հատվածը մեկնաբանել այնպես, որ I Հովհ. ընդհանուր նպատակը հաղթություն ունենա, փրկության վստահությունը կեղծ ուսուցիչների պնդումների դեմ նույնպես հիմարություն կլինի:
3. Այս հատվածը պետք է կապված լինի կեղծ ուսուցիչների անմեղության կամ մեղքի աննշան պահանջների հետ: Հավանաբար, 1: 8-2: 2 խոսում է կեղծ ուսուցիչների մի ծայրահեղության հետ, իսկ 3: 1-10՝ մի ուրիշի: Հիշեք, որ ՆԿ նամակներ մեկնաբանելը նման է հեռախոսագրույցի մի կողմին լսելուն:

- Ե. Այս երկու հատվածների միջև կա պարադոքսալ հարաբերություն: Քրիստոնյայի կյանքում մեղքը ՆԿ հերթական խնդիրն է (հմմտ. Հռ. 7): Սա ձևավորում է նույն երկխոսության լարվածությունը որպես նախասահմանություն և ազատ կամք և անվտանգություն և հաստատակամություն: Պարադոքսը տալիս է աստվածաբանական հավասարակշռություն և հարձակվում է ծայրահեղ դիրքերի վրա: Կեղծ ուսուցիչները ներկայացնում էին երկու սխալ մեղքի ոլորտում:
- Զ. Այս ամբողջ աստվածաբանական քննարկումը հիմնված է թյուրիմացության տարբերության վրա
1. մեր դիրքորոշումը Քրիստոսում
 2. առօրյայում մեր ձգտումն է կատարել այդ դիրքորոշումը փորձառու կերպով
 3. խոստումը, որ հաղթանակը մի օր մերը կլինի:
- Քրիստոսով մենք ազատ ենք մեղքի պատժից (արդարացում), բայց մենք դեռ պայքարում ենք դրա զորության դեմ (պրոգրեսիվ սրբացում) և մի օր մենք ազատ կլինենք դրա ներկայությունից (փառավորում): Այս գիրքը, որպես ամբողջություն, սովորեցնում է մեր մեղքի ընդունման և անմեղության ձգտման առաջնայնությունը:
- Է. Մեկ այլ տարբերակ գալիս է Հովհաննեսի գրական դուալիզմից: Նա գրել է սև ու սպիտակ կատեգորիաներում (նաև հայտնաբերվել է Մեռյալ Օովմագաղաթներում): Նրա համար, եթե մեկը Քրիստոսում է, ուրեմն նա արդար է, իսկ սատանայի մեջ լինողը՝ մեղավոր: Չկա երրորդ տարբերակ: Սա ծառայում է որպես «արթնացնող զանգ» ծայրամասային, մշակութային, մասնակի, միայն թաղմանը, միայն Զատիկին քրիստոնեության համար:
- Ը. Այս բարդ հարցի վերաբերյալ որոշ հղումներ կան.
1. Այս հատվածի յոթ ավանդական մեկնաբանության համար տես “The Epistles of John” in *The Tyndale New Testament Commentaries* by John R. W. Stott, published by Eerdmans’s (էջ 130-136):
 2. Կատարելության դիրքի վերաբերյալ լավ բացատրության համար տես *Christian Theology*, հատոր II, էջ 440 by H. Orton Willie, published by Beacon Hill Press:
 3. Քրիստոնյաների կյանքում շարունակվող մեղքի վարդապետության բացատրության համար “Perfectionism” by B. B. Warfield published by The Presbyterian and Reformed Publishing Company:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ 3:4-10
⁴Ամեն ով որ մեղք է գործում, նա անօրենություն էլ է անում, եւ մեղքն է անօրենությունը: ⁵Եւ գիտեք որ նա յայտնուեցաւ որ մեր մեղքերը վեր առնէ. Եւ նորանում մեղք չ'կայ: ⁶Ամեն ով որ նորանում մնում է՝ չէ մեղանչում. Եւ ամեն ով որ մեղանչում է, չէ տեսել նորան եւ ոչ էլ ճանաչել նորան: ⁷Մանկունք, ոչ որ ձեզ չ'խաբէ. նա որ արդարութիւն է անում, արդար է, ինչպէս Նա էլ արդար է: ⁸Եւ նա որ մեղք է անում, սատանայիցն է. Որովհետեւ սատանան հէնց սկզբիցը մեղանչում է, նորա համար յայտնուեցաւ Աստուծոյ Որդին, որ սատանայի գործերը քանդէ: ⁹Ամեն ով որ Աստուածանից է ծնուած, մեղք չէ անում. որովհետեւ նորա սերմը նորանում մնում է, եւ չէ կարող մեղանչել, որովհետեւ Աստուածանից է ծնուած: ¹⁰Սորանով են յայտնի Աստուծոյ Որդիքը եւ սատանայի որդիքը: Ամեն ով որ արդարութիւն չէ անում, նա Աստուածանից չէ, եւ ոչ էլ նա որ իր եղբորը չէ սիրում:

- 3:4
 NASB “Յուրաքանչյուր որ, ով մեղք է գործում, նաև գործում է անօրենություն”
 NKJV “Ով մեղք է գործում, նաև անօրենություն է գործում”
 NRSV “Յուրաքանչյուր որ, ով մեղք է գործում, մեղավոր է անօրենության մեջ”
 TEV “Ով որ մեղք է գործում, մեղավոր է Աստծո օրենքը խախտելու համար”

NJB “Ով մեղք է գործում, չարիք է գործում”

«Բոլորը» ԴԵՐԱՆՈՒՆԸ գլխավորում է այստեղ և 6-ում: Այս կոնտեքստը վերաբերում է բոլոր մարդկությանը:

Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵԲԱՅ է և ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ: Հատկանշական է, որ այս ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԸ ընդգծում են սովորական, շարունակական, կենսակերպի գործողությունը, հակասելով ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻՆ 2:1-2: Սակայն, այս հատվածի աստվածաբանական խնդիրը (համեմատել 1: 7-10-ը 3: 6-9 հետ) չի կարող լինի լուծվել ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԻ միջոցով: Այն լուծվում է երկու տեսակի գնոստիկ կեղծ ուսուցիչների և գրքի ընդհանուր կոնտեքստի պատմական շրջանակը:

Այս հատվածի մեկ այլ տարբերակն այն է, որ այն օգտագործվում է «անօրինականություն» տերմինով: Սա խոսում է ոչ թե օրենքի խախտման (Մովսիսական օրենքի կամ հասարակական նորմերի), այլ ապստամբ կեցվածքի մասին: Այս նույն բառը օգտագործվում է նկարագրելու համար հակաքրիստոսին II Թեա. 2: 3,7: Դա կարող է լինել մեղքի ամբողջական սահմանումը (տես Հովհ. 9:41; Հռ. 14:23; Հակ. 4:17; I Հովհ. 5:17), Քրիստոսանմանության հակառակը (հմմտ. հ. 5), ոչ միայն կանոն, օրենքի կամ ստանդարտի խախտում:

3:5 «նա յայտնուեցաւ» Սա ԱՕՐԻՍ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը խոսում է Հիսուսի մարմնավորման մասին (տես հ.8; II Տիմ. 1:10): Նույն ԲԱՅԸ, *phaneroō*, երկու անգամ է օգտագործվում հ.2 Երկրորդ Գալատյան համար: Առաջին անգամ Նա եկավ որպես փրկիչ (տես Մարկ. 10:45; Հովհ.3:16; II Կորնթ. 5:21), բայց Նա կվերադառնա որպես Վերացնող: Իմ սիրած ուսուցիչներից մեկը՝ Bill Hendricks-ը իր *The Letters of John* մեկնաբանության մեջ ասում է.

«Քրիստոսի գալուստի նպատակի առավել ներթափանցող երկու դրոյթները գտնվում են այս համարում և 8-րդ համարում: Նա ուղարկվեց Աստծո կողմից՝ մեղքը վերցնելու համար (3:5), և հայտնվեց, որ սատանայի գործերը քանդի (3:8): Մյուս տեղերում Ղուկասը գրեց, որ Հիսուսի գալու նպատակը էր փնտրել և փրկել կորածին (Ղուկ. 19:10): Հովհաննեսի Ավետարանը նշում է, որ Հիսուսը եկավ, որ իր ոչխարներն ունենան առատ կյանք (Հովհ. 10:10): Մատթեոսը Հիսուսի գալու նպատակը նշում է Հիսուսի անունը մեկնաբանելու մեջ: Նա կփրկի իր ժողովրդին իրենց մեղքերից (Մատթ. 1:21): Հիմնական փաստը այս բոլոր արտահայտություններում այն է, որ Հիսուս Քրիստոսը ինչ-որ բան արեց մարդու համար, որը մարդը չէր կարող անել իր համար» (էջ 79-80):

▪ **«մեղքերը վեր առնե՛ք»** Սա ԱՕՐԻՍ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Գործողությունը պայմանավորված է մարդկային արձագանքով (այսինքն՝ ապաշխարություն և հավատք): Այս արտահայտության ֆոնը կապված է երկու հնարավոր աղբյուրների հետ:

1. Քավության Օրը (տես Ղևտ. 16), որտեղ երկու սպանվածներից մեկը խորհրդանշական կերպով հեռացնում էր մեղքը Իսրայելի ճամբարից (տես Հովհաննես Մկրտչի օգտագործումը Հովհ.1:29)
2. հղում այն բանի, թե ինչ արեց Հիսուսը խաչի վրա (տես Ես. 53: 11-12; Հովհ.1:29; Եբր. 9:28; I Պետ. 2:24)

▪ **«Եւ նորանում մեղք չ'կայ»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հիսուս Քրիստոսի անմեղսունակությունը (տես Հովհ. 8:46; II Կորնթ. 5:21; Եբր. 4:15; 7:26; I Պետ.1: 19; 2:22) հիմքն է Իր փոխարինող, փոխարինող քավության համար մեզ համար (Ես. 53):

Ուշադրություն դարձրեք, որ «մեղքը» ՀՈԳՆԱԿԻ է հ.5 առաջին մասում և ՀՈԳՆԱԿԻ վերջին մասում: Առաջինը վերաբերում է մեղքի գործերին, երկրորդը՝ Նրա արդար կերպարին: Նպատակն այն է, որ հավատացյալները ունենան նախնական սրբացում և պրոգրեսիվ սրբացում Քրիստոսով: Մեղքը օտար բան է Քրիստոսի և Նրա հետևորդների համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՄՐԲԱՑՈՒՄ

Նոր Կտակարանը պնդում է, որ երբ մեղավորը դարձի է գալիս դեպի Հիսուսը՝ ապաշխարելով և հավատալով, նա մեկ ակնթարթում, անմիջապես արդարացվում և սրբվում է: Սա նրա նոր դիրքն է Քրիստոսում: Նրա արդարությունը դրվում է նորադարձի վրա (Հռ. 4): Նա հռչակվում է արդար և սուրբ (Աստծո կողմից ընդունված դատական որոշումը):

Բայց Նոր Կտակարանը նաև ստիպում է հավատացյալներին սրբացման ընթացքը պահել: Սա թե աստվածաբանական դիրք է Հիսուս Քրիստոսի կատարած գործի միջոցով և թե կոչ է քրիստոսանման լինելու վարքով և գործերով առօրյա կյանքում: Եթե փրկությունը ձրի պարզ է և նոր, հիանալի և անգին ապրելակերպ, ապա նաև սա նույնն է սրբության համար:

Սկզբնական արձագանք

Պրոգրեսիվ քրիստոսանմանություն

Գործք 20:23; 26:18

Հռոմեացիս 6:19

Հռոմեացիս 15:16

II Կորնթացիս 7:1

I Կորնթացիս 1:2-3; 6:11

Եփեսացիս 1:4; 2:10

II Թեսաղոնիկեցիս 2:13

I Թեսաղոնիկեցիս 3:13; 4:3-4,7; 5:23

Եբրայեցիս 2:11; 10:10,14; 13:12

I Տիմոթեոս 2:15

I Պետրոս 1:12

II Տիմոթեոս 2:21

Եբրայեցիս 12:14

I Պետրոս 1:15-16

3:6 «Ամեն ով որ նորանում մնում է՝ չէ մեղանչում» Ինչպես 3: 4, սա ևս մեկ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՄԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է և ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՄԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ: Այս հատվածը պետք է հակադրվի 1: 8-2: 2 և 5:16:

▪ **«ամեն ով որ մեղանչում է, չէ տեսել նորան եւ ոչ էլ ճանաչել նորան»** Այս համարն ունի մեկ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՄԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, որին հաջորդում է երկու ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾՄԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ: Շարունակաբար սարսափելի մեղք գործելը ցույց է տալիս, որ անձը Քրիստոսը չգիտի և երբեք չի էլ ճանաչել Քրիստոսին: Երբ քրիստոնյաները մեղք են գործում, նրանք

1. խափանում են Քրիստոսի առաքելությունը
2. խոչընդոտում են Քրիստոսանմանության նպատակը
3. բացահայտում են անհատի հոգևոր ծագումը (տես Հովհ.8:44)

3:7 «ոչ ոք ձեզ չ'խաբէ» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՄԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործընթացը: Կեղծ ուսուցիչների առկայությունը (հմմտ. 2:26) սահմանում է պատմական իրավիճակը I Հովհ. ամբողջական աստվածաբանական հասկացության համար և մասնավորապես 1:7-10 և 3:4-10 համարները:

▪ **«նա որ արդարութիւն է անում, արդար է»** Այս համարը չի կարելի մեկուսացնել ընդհանուր կոնտեքստից և կիրառել վարդապետական դիրքորոշումը («արդարություն գործել») պաշտպանելու կամ դատապարտելու համար: ՆԿ հստակ ասում է, որ մարդիկ չեն կարող մոտենալ Սուրբ Աստծուն իրենց անձնական արժանապատվությամբ: Մարդիկ չեն փրկվում ինքնուրույն ջանքերով: Այնուամենայնիվ, մարդիկ պետք է արձագանքեն Աստծո փրկության առաջարկին, Քրիստոսի ավարտած գործի շնորհիվ: Մեր ջանքերը մեզ չեն բերում Աստծու մոտ: Դրանք ցույց են տալիս, որ մենք հանդիպել ենք Նրան: Դրանք հստակորեն հայտնում են մեր հոգևոր վիճակը (տես Հայտ. 22:11) և հասունությունը փրկությունից հետո: Մենք չենք փրկվում «բարի գործերով», այլ «բարի գործերի» համար: Աստծո ձրի պարզևի նպատակը Քրիստոսում Քրիստոսանման հետևորդներ ունենալն է (տես Եփ.2: 8-9,10): Աստծո վերջնական կամքը յուրաքանչյուր հավատացյալի համար ոչ միայն երկինքն է, երբ նա մահանա (դատական արդարացում), այլև Քրիստոսանմանությունը հիմա (ժամանակավոր սրբացում) (տես Մատ. 5:48; Հռ. 8:28-29; Գաղ. 4:19): Արդարության մասին բառային սերտողությունը տես Հատուկ Թեմա 2:29:

3:8 «Եւ նա որ մեղք է անում, սատանայիցն է» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՆԲԱՅ է: Աստծո զավակները հայտնի են իրենց ապրած կյանքով, ինչպես նաև սատանայի զավակները (տես 3:10; Մատթ. 7:13; Եփ. 2: 1-3):

▪ **«Որովհետև սատանան հենց սկզբիցը մեղանչում է»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սատանան շարունակում է մեղք գործել հենց սկզբից (տես Հովհ. 8:44): Արդյոք դա վերաբերում է ստեղծագործությանը, թե՞ հրեշտակային ապստամբությանը:

Դժվար է աստվածաբանորեն որոշել, թե երբ սատանան ապստամբեց Աստծու դեմ: Հոբ 1-2; Զաքարիա 3 և III Թագ.22:19-23 կարծես ցույց են տալիս, որ սատանան Աստծու ծառան է և հրեշտակ խորհրդականներից մեկը: Հնարավոր է (բայց ոչ հավանական), որ արևելյան թագավորի հպարտությունը, ամբարտավանությունը և ձգտումը (Բաբելոնի, Ես. 14:13-14 կամ Տյուրոսի, Եզ.28:12-16) օգտագործվում են՝ հռչակելու սատանայի ապստամբությունը (ըստ երևույթին, ծածկող քերովբե, Եզ. 28: 14,16): Սակայն Դուկաս 10: 18-ում Հիսուսն ասաց, որ տեսավ, թե ինչպես է սատանան երկնքից ընկնում կայծակի նման, բայց, թե երբ հայտնի չէ: Չարի ծագումը և զարգացումը պետք է անորոշ մնա՝ հայտնության բացակայության պատճառով: Զգուշացեք համակարգված և դոգմատիզացնող մեկուսացումից, երկիմաստ, փոխաբերական տեքստերից: ՀԿ-ում սատանայի զարգացման մասին՝ սպասավորից մինչև ծանր թշնամի լինելը, լավագույն քննարկումը կարելի է տեսնել A. B. Davidson's *Old Testament Theology*, published by T & T Clark, էջ 300-306: Տես Հատուկ Թեմա: Անձնական Չարը Հովհ.12:31:

▪ **«Աստծո Որդին»** ստորև տես Հատուկ Թեմա.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՍԾՈՆ ՈՐԳԻՆ

Նոր Կտակարանում սա ամենազխտավոր կոչումներից մեկն է Հիսուսի վերաբերյալ/մասին: Այն անշուշտ ունի աստվածային լրացուցիչ իմաստներ: Այն ներգրավում է Հիսուսին որպես «Որդին» կամ «Իմ Որդին» և Աստված որպես «Հայր»: Նոր Կտակարանում այն հայտնվում է ավելի քան 124 անգամ: Նույնիսկ Հիսուսի ինքնաանվանումը որպես «Մարդու Որդի» ունի Աստվածային լրացուցիչ իմաստ Դ-անիել 7:13-14:

Հին Կտակարանում «որդի» անվանումը կարող էր վերաբերվել երեք հատուկ խմբերի:

1. հրեշտակներ (սովորաբար ՀՈԳՆԱԿԻ թվով, հմմտ. Ծննդ.6:2; Հոբ 1:6; 2:1)
2. Իսրայելի Թագավորը (հմմտ. 2 Թագ.7:14; Սաղմ. 2:7; 89:26-27)
3. Իսրայել ազգը որպես մեկ ամբողջ(հմմտ.Ել. 4:22-23; 2Օրին.14:1; Ովս.11:1; Մաղ. 2:10)
4. Իսրայելի դատավորները (հմմտ. Սաղմ.82:6)

Սա երկրորդ կիրառումն է, որ կապվում է Հիսուսի հետ: Այս ձևով «Դավթի Որդի» և «Աստծո որդի» երկուսն էլ վերաբերվում են 2 Թագ. 7; Սաղմ. 2 և 89: Հին Կտակարանում «Աստծո որդի» երբեք չի օգտագործվում հատուկ Մեսիայի համար, բացի որպես վախճանաբանական թագավոր որպես Իսրայելի «օծյալներից» մեկը: Ինչևէ, Մեռյալ ծովի մագաղաթների մեջ Մեսիական ներիմաստներով տիտղոսը/կոչումը սովորական է: Նաև «Աստծո Որդի» Մեսիական տիտղոսը երկու ներաստվածաշնչյան Հրեական ապոկալիպտիկ գործերում (հմմտ. 2 Եզրաս 7:28; 13:32, 37,52; 14:9 և 1 Ենովք 105:2):

Նոր Կտակարանում այն վերաբերվում է Հիսուսին ամենալավ ձևով ամփոփվում է մի քանի կատեգորիաներում:

1. Նրա նախա-գոյությունը (հմմտ. Հովհ. 1:1-18)
2. Նրա եզակի, կուսական ծնունդը (հմմտ. Մաթ.1:23; Դուկ. 1:31-35)
3. Նրա մկրտությունը (հմմտ. Մաթ. 3:17; Մարկ. 1:11; Դուկ. 3:22: Երկնքից եկող Աստծո ձայնը միավորում է Սաղմ.2-ի թագավորին Եսայի 53-ի տառապող ծառայի հետ) :
4. Սատանայի կողմից Իր փորձվելը (հմմտ. Մաթ. 4:1-11; Մարկ 1:12,13; Դուկ. 4:1-13: Նրան փորձում է Սատանան, որ կասկածի Իր որդի լինելու վրա կամ համենայն դեպս ավարտել դրա նպատակը ուրիշ իմաստով քան իսաչը):
5. Նրա հաստատումը անրնդունելի խոստովանողների կողմից

- ա. դներ (հմմտ. Մարկ. 1:23-25; Ղուկ. 4:31-37; Մարկ. 3:11-12)
- բ. անհավատներ (հմմտ. Մաթ.27:43; Մարկ.14:61; Հովհ.19:7)
- 6. Նրա հաստատումը Իր աշակերտների կողմից
 - ա. Մաթ. 14:33; 16:16
 - բ. Հովհ. 1:34, 49; 6:69; 11:27
- 7. Նրա ինքնահաստատումը
 - ա. Մաթ. 11:25-27
 - բ. Հովհ.10:36
- 8. Նա օգտագործում է ընտանեկան փոխաբերություն Աստծո մասին որպես Հայր
 - ա. Նա օգտագործում է «*abba*» Աստծո համար
 - 1) Մարկ. 14:36
 - 2) Հռոմ. 8:15
 - 3) Գաղ. 4:6
 - բ. Նա պարբերաբար օգտագործում է Հայր (*patēr*)նկարագրելու համար Իր կապը աստվածության հետ

Ամփոփելով «Աստծո Որդի» տիտղոսը ուներ մեծ աստվածաբանական իմաստ նրանց համար , ովքեր գիտեին Հին Կտակարանը և նրա խոստումներն ու կատեգորիաները, բայց Նոր Կտակարանի գրողները նեարդայնացած էին դրանց օգտագործումը հեթանոսների հետ իրենց հեթանոս ակունքների պատճառով, երբ «աստվածները» կանանց էին վերցնում սերունդ տալու նպատակով լինելով «հսկաներ»:

▪ **«յայտնուեցաւ»** Սա հունարեն *phaneroō* տերմինն է, որը նշանակում է «բերել լուսավորել այնպես, որ պարզ լինի»: 5 և 8 համարները զուգահեռ են, և երկուսն էլ օգտագործում են տերմինը ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՈՎ, որը խոսում է Քրիստոսի իրապես հայտնվելու՝ մարմնավորվելու մասին (հմմտ. 1: 2): Կեղծ ուսուցիչների խնդիրը այն չէր, որ ավետարանը նրանց համար անհասկանալի էր, այլ որ նրանք ունեին իրենց աստվածաբանական / փիլիսոփայական օրակարգը:

▪ **«որ սատանայի գործերը քանդէլ»** Ժամանակի և մարմնի Հիսուսի դրսևորման նպատակն էր «ոչնչացնել, քանդել» (ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ *luō*), ինչը նշանակում է «կորցնել», «քանդել» կամ «ոչնչացնել»: Հիսուսը հենց դա արեց Գողգոթայում, բայց մարդիկ պետք է արձագանքեն Նրա կատարած գործին և ձրի պարզեին (տես Հռ. 3:24; 6:23; Եփ. 2:8), ընդունելով Նրան հավատքով (տես Հովհ.1:12; 3:16):

ՆԿ «արդեն,բայց դեռ ոչ» լարվածությունը նույնպես վերաբերում է չարի ոչնչացմանը: Սատանան պարտվել է, բայց նա դեռ ակտիվ է աշխարհում, մինչև Աստծո արքայության լիարժեք կատարումը:

3:9 «Ամեն ով որ Աստուածանից է ծնուած» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է (այսինքն, զուգահեռ հ.9; 2:29; և 5:18), որը խոսում է արտաքին գործոնի (Աստված) կողմից ստեղծված վիճակի մասին:

▪ **«մեղք չէ անում»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է ի հակասություն 2:1, որտեղ երկու անգամ օգտագործվում է ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ: Այս արտահայտության նշանակության մասին կա երկու տեսություն:

1. այն վերաբերում է գնոստիկ կեղծ ուսուցիչներին, հատկապես այն խմբակցությանը, որը փրկությունը իջեցրեց մտավոր հասկացություններին, դրանով իսկ հանելով բարոյական կենսակերպի անհրաժեշտությունը
2. ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԸ ընդգծում է շարունակական, սովորույթ դարձած, մեղավոր գործունեությունը (տես Հռ. 6: 1), ոչ թե մեղքերի առանձին գործողություններ (տես Հռ. 6: 15)

Այս աստվածաբանական տարբերությունը պատկերված է Հռ. 6-ում (պոտենցիալ անմեղություն Քրիստոսում) և Հռ.7-ում (հավատացյալի շարունակական պայքարը քիչ մեղք գործելու մեջ):

1 պատմական մոտեցումը լավագույնն է, բայց դեռևս մնացել է այս ճշմարտությունը այսօր կիրառելու անհրաժեշտությամբ, որը հասեագրում է # 2: Այս դժվար համարի շուրջ լավ քննարկում կա *Hard Sayings of the Bible* by Walter Kaiser, Peter Davids, F. F. Bruce, and Manfred Brauch, էջ 736-739:

- **«որովհետև նորա սերմը նորանում մնում է»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Եղել են մի քանի տեսություններ, թե ինչ է նշանակում հունարեն «Նրա սերմը» արտահայտությունը
 1. Օգոստինոսը և Լյութերը ասել են, որ դա վերաբերում է Աստծո Խոսքին (տես Ղուկ.8:1; Հովհ.5:38; Հակ.1:18; I Պետ.1:23)
 2. Կալվինը ասել է, որ դա վերաբերում է Սուրբ Հոգուն (տես Հովհ.3: 5, 6, 8; Հովհ. 3:24; 4: 4, 13)
 3. ոմանք ասում են, որ դա վերաբերում է Աստվածային Բնությանը կամ նոր ինքնությանը (հմմտ. II Պետ. 1:4; Եփես. 4:24)
 4. Հնարավոր է, դա վերաբերում է Քրիստոսին որպես «Աբրահամի սերունդ» (տես Ղուկ.1:55; Հովհ.8:33,37; Գաղ. 3:16)
 5. ոմանք ասում են, որ դա հոմանիշ է «Աստծուց ծնվել» արտահայտությանը:
 6. ակնհայտորեն սա գնոստիկների կողմից օգտագործվող տերմին էր, որը խոսում է բոլոր մարդկանց մեջ գոյություն ունեցող աստվածային կայծի մասինԹիվ 4, հավանաբար, այս բոլոր տեսությունների ամենալավ կոնտեքստային տարբերակն է, բայց Հովհաննեսը ընտրեց իր բառապաշարը՝ հերքելով առաջացող գնոստիկներին (այսինքն, # 6):

3:10 Սա հհ.4-9 ամփոփումն է: Այն պարունակում է երկու ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ և երկու ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, որոնք վերաբերում են ընթացքի մեջ եղող գործողությանը: Աստվածաբանորեն սա զուգահեռ է Հիսուսի լեռան քարոզին (տես Մաթ. 7: 16-20): Մարդու ապրած կյանքը բացահայտում է նրա սիրտը, հոգևոր կողմնորոշումը: Սա 2: 29 բացասական հակասությունն է:

- **«Աստուծոյ Որդիքը...սաստանայի որդիքը»** Սա ցույց է տալիս Հովհաննեսի սեմիթական ֆոնը: Եբրայերենը, առանց ԱԾԱԿԱՆՆԵՐԻ հին լեզու, օգտագործեց «որդի»՝ որպես մարդկանց նկարագրելու միջոց:

Արևելահայերեն Աստվածաշունչ 3:11-12
¹¹Որովհետև սա է պատուիրանքը, որ սկզբիցը լսեցիք, որ իրար սիրենք: ¹²Ոչ թե այնպես ինչպես որ Կայենն էր չարիցը եւ իր եղբորն սպանեց. Եւ ի՞նչու համար սպանեց նորան, որովհետև իր գործերը չար էին եւ իր եղբորինը արդար:

3:11 «պատուիրանքը» Այս հունարեն տերմինը (*aggelia*, սովորաբար գրադարձվում է *angelia*) օգտագործվում է միայն I Հովհ. 1: 5 և 3:11: Առաջին օգտագործումը կարծես վարդապետական է, իսկ երկրորդը՝ բարոյական: Սա հավասարակշռության մեջ է պահում Հովհաննեսի քրիստոնեության այս երկու ասպեկտները (տես 1: 8,10; 2: 20,24; 3:14):

- **«որ սկզբիցը լսեցիք»** Այս արտահայտությունը գրական սխեմա է, որը վերաբերում է Հիսուսին որպես Աստծո կենդանի Խոսք (տես Հովհ.1: 1) և բացահայտում է Աստծո Խոսքը (տես 1: 1; 2: 7,13,14,24; II Հովհ. 5,6):
- **«որ իրար սիրենք»** Սա ապացույց է այն բանի, որ հավատացյալները գիտեն, որ իրենք իսկապես փրկված են (տես հհ.10, 14): Այն արտացոլում է Հիսուսի խոսքերը (տես Հովհ.13: 34-35; 15: 12,17; I Հովհ. 3:23; 4: 7-8, 11-12, 19-21):

3:12 «Կայենն» Կայենի կյանքի պատմությունը արձանագրված է Ծննդ.4: Ծննդ. 4:4 (այսինքն, Եր.11: 4) հակադրվում են Կայենի ու Աբելի ընծաները: Կայենի գործողությունները բացահայտում են մարդկության անկման ազդեցությունը (տես Ծննդ. 4: 7; 6: 5, 11-12, 13): Հրեական և քրիստոնեական ավանդույթներում (տես Եբր. 11:4; Հուդա 11) Կայենը չար ապստամբության օրինակ է:

- **«որ ... էր չարիցը»** Այս քերականական կառուցվածքը կարող է լինել ԱՐԱԿԱՆ ԵԶԱԿԻ (չարը, հ.10) կամ ՉԵԶՈՔ ԵԶԱԿԻ (չար): Այս նույն քերականական երկիմաստությունը գտնվում է Մաթ. 5:37; 6:13; 13: 19,38; Հովհ. 17:15; II Թես. 3: 3; I Հովհ. 2: 13,14; 3:12; և 5:18-19: Մի քանի դեպքերում կոնտեքստը ակնհայտորեն վերաբերվում է սատանային (տես Մատթ. 5:37; 13:38; Հովհ. 17:15):

Արևելահայերեն Աստվածաշունչ 3:13-22

¹³Մի զարմանաք, եղբարքս, եթէ աշխարհքս ատէ ձեզ: ¹⁴Մենք գիտենք որ մահիցը ի կեանք փոխուեցանք. Որովհետեւ եղբայրներին սիրում ենք. Բայց ով որ չէ սիրում եղբօրը, մնում է մահի մէջ: ¹⁵Ամեն ով որ իր եղբօրն ատում է, մարդասպան է եւ գիտէք որ ամեն մարդասպան յախտենական կեանք չ'ունի հաստատուած իրանում. ¹⁶Սորանով գիտացինք [Քրիստոսի] սէրը, որ նա իր անձը տուաւ մեզ վերայ. Եւ մենք պարտենք մեր եղբայրների վերայ դնել մեր անձերը: ¹⁷Ով որ այս աշխարհքի ապրանքն ունենայ, եւ տեսնէ իր եղբայրը կարօտ մի բանի, եւ իր գութը փակէ նորանից, ի նչպէս Աստուծոյ սէրը բնակուած կ'լինի նորանում: ¹⁸Որդեակներ, չ'սիրենք խօսքով եւ ոչ էլ լեզուով, այլ գործով եւ ճշմարտութիւնով: ¹⁹Եւ սորանով ենք ճանաչում թէ ճշմարտութիւնիցն ենք, եւ նորա առաջին հանդէս բերենք մեր սրտերը. ²⁰Որ եթէ մեր սիրտը մեղադրէ մեզ, այլ Աստուած մեր սրտիցն աւելի մեծ է եւ ամեն բան գիտէ: ²¹Միրելիներ, եթէ մեր սրտերը չ'մեղադրեն մեզ, համարձակութիւն ունինք առ Աստուած: ²²Եւ ինչ որ խնդրենք կ'առնենք նորանից. Որովհետեւ նորա պատուիրանքները պահում ենք, եւ նորա առաջին հաճոյ եղածները անում ենք:

3:13 «Մի զարմանաք» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը հաճախ նշանակում է դադարեցնել գործընթացի մեջ գտնվող գործողությունը (տես I Պետ. 4:12-16): Սա անարդար աշխարհ է: Սա այն աշխարհը չէ, որ Աստված նպատակ էր դրել:

- **«եթէ»** Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ճիշտ է հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար:
- **«աշխարհքս ատէ ձեզ»** Այն ատում էր Հիսուսին, այն կատի Նրա հետևորդներին: Սա ընդհանուր թեմա է ՆԿ-ում (տես Հովհ.15:18; 17:14; Մատթ. 5:10-11; II Տիմ. 3:12) և ևս մեկ ապացույց է, որ անձը հավատացյալ է:

3:14 «Մենք գիտենք» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է (*oida* ունի ՎԱՂԱԿԱՏԱՐ ձև, բայց ՆԵՐԿԱ իմաստ): Սա ևս մեկ ընդհանուր թեմա է: Աստծո զավակների վստահությունը կայանում է 1) մտքի փոփոխության և 2) գործողությունների փոփոխության վրա, որոնք «ապաշխարել» տերմինի արմատական իմաստներն են հունարենում և եբրայերենում:

- **«մահիցը ի կեանք փոխուեցանք»** Սա ևս մեկ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է (տես Հովհ. 5:24): Մահից կյանքի անցնելու փաստերից մեկը (այսինքն, քրիստոնեական վստահություն, տես Հատուկ Թեմա Հովհ. 6:37) այն է, որ մենք սիրում ենք միմյանց: Մյուսը այն է, որ աշխարհն ատում է մեզ:
- **«Որովհետեւ եղբայրներին սիրում ենք»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սերը Աստծո ընտանիքի հիմնական առանձնահատկություններից է (տես Հովհ.13: 34-35; 15: 12,17; II Հովհ. 5; I Կոր. 13; Գաղ. 5:22), քանի որ դա բնորոշ է հենց Աստծուն (հմմտ. 4: 7-21): Սերը Աստծո հետ

մարդկային փոխհարաբերության հիմքը չէ, այլ արդյունքը: Մերը փրկության հիմքը չէ, այլ դրա ապացույցն է:

▪ **«Բայց ով որ չէ սիրում մնում է մահի մեջ»** Սա ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅ է, որն օգտագործվում է որպես ԵՆԹԱԿԱՆ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԲԱՅԻ հետ: Ինչպես հավատացյալներն են շարունակում մնալ սիրո մեջ, այնպես էլ անհավատները մնում են ատելության մեջ: Ատելությունը, ինչպես սերը, վկայում է անձի հոգևոր կողմնորոշման մասին: Հիշեք Հովհաննեսի բացարձակ, դուալիստիկ կատեգորիաները՝ մնալ սիրո մեջ կամ մնալ մահավան մեջ: Միջանկյալ ճանապարհ չկա:

3:15 «Ամեն» Հովհաննեսն օգտագործել է այս տերմինը (*pas*) 8 անգամ սկսած 2:29-ից: Սրան շանակությունը այն է, որ բացառություն չկա Հովհաննեսի ասածներում: Կան երկու տեսակի մարդիկ, սիրողներ և ատողներ: Հովհաննեսը կյանքը տեսնում է սև կամ սպիտակ գույներով, ոչ թե գունավոր:

▪ **«Ամեն ով որ իր եղբորն ատում է, մարդասպան է»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է (այսինքն՝ շարունակական, արմատացած ատելություն): Մեղքը առաջինը հայտնվում է մտքում: Լեռան քարոզում Հիսուսը սովորեցրեց, որ ատելությունը հավասարազոր է սպանությանը, ինչպես որ ցանկանալը հավասար է շնությանը (տես Մատթ. 5:21-22):

▪ **«Էս գիտեք որ ամեն մարդասպան յախտենական կեանք չ'ունի հաստատուած իրանում»** Սա չի նշանակում, որ ով որ սպանություն է գործում, չի կարող լինել քրիստոնյա: Մեղքը ներելի է, բայց ապրելակերպը բացահայտում է սիրտը: Ասվում է, որ նա, ով շարունակ ատում է, չի կարող քրիստոնյա լինել: Մերը և ատելությունը փախադարձ բացառիկ են: Ատելությունը կյանք է վերցնում, բայց սերը կյանք է տալիս:

3:16 «գիտացինք» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հունարեն տերմինը, որն օգտագործվում է *h.15 oida* էր, այստեղ այն *ginōskō*: Դրանք հոմանիշներով են օգտագործվում Հովհաննեսի գրվածքներում:

▪ **«Սորանով... սերը»** Հիսուսը ցույց տվեց, թե ինչ է սերը: Հավատացյալները պետք է նմանվեն Նրա օրինակին (տես II Կոր. 5: 14-15):

▪ **«նա իր անձը տուաւ մեզ վերայ»** Սա ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ է, որը վերաբերում է Գողգոթային, օգտագործելով Հիսուսի խոսքերը (տես Հովհ. 10:11,15,17,18; 15:13):

▪ **«մենք պարտենք»** Հավատացյալները կապված են Հիսուսի օրինակով (տես 2: 6; 4:11):

▪ **«մեր եղբայրների վերայ դնել մեր անձերը»** Քրիստոսը օրինակ է: Ինչպես Նա Իր կյանքը դրեց ուրիշների համար, քրիստոնյաներն էլ պետք է դնեն իրենց կյանքը եղբայրների համար, եթե անհրաժեշտ լինի: Մեռնել եսակենտրոնությանը, դա

1. մեղքի հակառակն է
2. Աստծո կերպարի վերականգնումն է
3. համընդհանուր բարիքի համար ապրել է (հմմտ. II Կորնթ. 5:14-15; Ֆիլ. 2: 5-11; Գաղ.2:20; I Պետ.2:21)

3:17 «Ով որ այս աշխարհքի ապրանքն ունենայ, եւ տեսնէ իր եղբայրը կարօտ մի բանի» Սրանք ՆԵՐԿԱ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԲԱՅԵՐ են: 16-րդ համարում կյանքը դնել նշանակում է ներուժի

գործնականորեն օգնել եղբորը: Այս համարներն այնքան նման են Հակոբոսի խոսքերին (տես Հակ. 2: 15,16):

▪ **«Եւ իր գուրը փակէ նորանից»** Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍՍԱԿԱՆ է: «Սիրտ, գուր» տերմինը բառացիորեն «աղիքներ» է, եբրայերեն իդիոմա էմոցիաների համար: Կրկին, մեր գործողությունները բացահայտում են մեր Հորը:

▪ **«Աստուծոյ սերը»** Կրկին սա ՆՊԱՏԱԿ է կամ ՍՏՈՐԱԴԱՍՍԱԿԱՆ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ կամ նպատակալաց երկիմաստություն:

1. մեր սերը Աստծո հանդեպ
2. Աստծո սերը մեր հանդեպ
3. երկուսն էլ

Թիվ 3-ը համապատասխանում է Հովհաննեսի գրվածքներին:

3:18 «չ'սիրենք խօսքով եւ ոչ էլ լեզուով» Գործողություններն ավելի բարձր են խոսում, քան բառերը (տես Մատթ. 7:24; Հակ.1: 22-25; 2: 14-26):

▪ **«այլ գործով եւ ճշմարտութիւնով»** «ճշմարտություն» տերմինը զարմանալի է: «Գործի» հոմանիշը գործողությունն է: Տերմինը, կարծես, նշանակում է իրական (NJB) կամ ճշմարիտ (TEV), ինչպես «պատգամը» 1:5 և 3: 11, որն ընդգծում է թե վարդապետությունը և թե ապրելակերպը, այնպես էլ «ճշմարտությունը»: Գործը և դրդապատճառները պետք է մղված լինեն ինքնագոհաբերվող սիրուց (Աստծո սերը) և ոչ միայն ցուցադրող գործեր լինեն, որոնք կերակրում են տվողի եսը:

3:19 «սորանով ենք ճանաչում» Սա վերաբերում է նախկինում հիշատակված սիրո գործերին: Սա ԱՊԱՌՆԻ ՉԵԶՈՔ (deponent) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ևս մեկ վկայություն է ճշմարիտ ապաշխարության:

▪ **«թե ճշմարտութիւնիցն ենք»** Հավատացյալների սիրալիր ապրելակերպը ցույց է տալիս երկու բան. 1) նրանք ճշմարտության կողմն են և 2) նրանց խիղճը մաքուր է: Տես Հատուկ Թեմա. Ճշմարտությունը Հովհ. 6:55:

3:19-20 Կա շատ շփոթություն, թե ինչպես թարգմանել այս երկու համարների հունարեն տեքստը: Մեկ հնարավոր մեկնաբանություն ընդգծում է Աստծու դատաստանը, իսկ մյուսը շեշտում է Աստծու կարեկցանքը: Կոնտեքստից բխում է, որ երկրորդ տարբերակը առավել հարմար է թվում:

3:20-21 Այս երկու համարներն էլ ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ են:

3:20

NASB “ինչի մեջ որ մեր սիրտը դատում է մեզ”

NKJV “եթե մեր սիրտը դատում է մեզ”

NRSV “երբ որ մեր սրտերը դատում են մեզ”

TEV “եթե մեր խիղճը դատում է մեզ”

NJB “անգամ եթե մեր սեփական զգացմունքները դատում են մեզ”

Բոլոր հավատացյալները, չհամապատասխանելով «ստանդարտին», փորձառել են ներքին վիշտ, քանի որ գիտեն Աստծո կամքը իրենց կյանքի համար (տես Հո.7): Խղճի ցավերը կարող են լինել Աստծո Հոգուց (ապաշխարության պատճառ) կամ սատանայից (ինքնառնչացմա կամ վկայության կորստյան պատճառ): Կա թե պատշաճ հանցանք և թե ոչ պատշաճ մեղք: Հավատացյալներն

իմանում են տարբերությունը՝ Աստծո գիրքը կարդալով (կամ լսելով Նրա պատգամները): Հովհաննեսը փորձում է միախառնել հավատացյալներին, ովքեր ապրում են սիրո չափանիշով, բայց դեռ պայքարում են մեղքի դեմ (նվիրում և բացթողում): Տես Հատուկ Թեմա: Սիրտը Հովհ. 12:40:

▪ **«Եւ ամեն բան գիտե՛ք»** Աստված գիտի մեր իրական շարժառիթները (տես I Թագ. 2: 7; 16: 7; III Թագ. 8:39, I Մնաց. 28: 9; II Մնաց. 6:30; Սաղ. 7:9; 44:21; Առ. 15:11; 20:27; 21: 2; Եր. 11:20; 17: 9-10; 20:12; Ղուկ. 16:15; Գործք 1:24; 15: 8; Հռ. 8:26,27):

3:21 «Եթէ մեր սրտերը չ'մեղադրեն մեզ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ Է: Քրիստոնյաները դեռ պայքարում են մեղքի և եսի դեմ (տես 2:1; 5:16-17):

Նրանք դեռ հանդիպում են գայթակղությունների և գործում են անհարիր կոնկրետ իրավիճակներում: Հաճախ նրանց խիղճը դատապարտում է նրանց: Ինչպես մեթոդիստական օրհներգն է նշում (անհայտ վերնագիր և հեղինակ)

«Եվ ոչ ոք, ով Տեր, կատարյալ հանգիստ չունի,
Որովհետեւ ոչ ոք ամբողջովին ազատված չէ մեղքից,
Իսկ նրանք, ովքեր թույլ էին, լավագույնս ծառայում էին քեզ
Գիտակցում են, որ ամենից շատ են սխալվում»:

Ավետարանի գիտելիքը, Հիսուսի հետ քաղցր հաղորդակցությունը, Հոգու առաջնորդությունը և Հոր ամենագիտությունը հանգստացնում է մեր սրտերը փոշուց (տես Սաղ. 103:8-14):

▪ **«համարձակություն ունինք առ Աստուած»** Սա խոսում է Աստծո ներկայության մեջ լինելու բաց և ազատ հասանելիության մասին: Դա Հովհաննեսի միտումնավոր կրկնվող տերմինն ու գաղափարն է (տես 2:28; 3:21; 4:17; 5:14; Եբր. 3:6; 10:35, տես Հատուկ Թեմա 2:28): Այս արտահայտությունը ներկայացնում է հավաստիության երկու առավելությունները:

1. որ հավատացյալները լիովին վստահում են Աստծուն
2. նրանք ստանում են Նրանից, ինչ խնդրում են

3:22 «Եւ ինչ որ խնդրենք կ'առնենք նորանից» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է և ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ: Սա արտացոլում է Հիսուսի խոսքերը Մատթ. 7: 7; 18:19; Հովհ. 9:31; 14: 13-14; 15: 7,16; 16:23; Մարկ. 11:24; Ղուկ. 11:9-10: Այս Սուրբ Գրքի խոստումները շատ տարբեր են հավատացյալի աղոթքի փորձառությունից: Այս համարը կարծես խոստանում է անսահմանափակորեն պատասխանել աղոթքին: Հենց այստեղ է այլ համապատասխան տեքստերի համեմատությունը բերում աստվածաբանական հավասարակշռություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՂՈԹՔ, ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ

- Ա. Մինոպտիկ Ավետարաններ
1. հավատացյալներին խրախուսվում է աղոթքի մեջ հարատևել և Աստված կտա «բարի բաներ» (Մատթ.) կամ «Իր Հոգին» (Ղուկ.) Մատթ. 7: 7-11; Ղուկ. 11: 5-13)
 2. եկեղեցական կարգապահության կոնտեքստում հավատացյալները (երկու) խրախուսվում են միավորվել աղոթքի մեջ (Մատթ. 18:19)
 3. հուդայականության հավատացյալների դատաստանի կոնտեքստում պետք է հավատքով խնդրել առանց երկմտելու (Մատթ. 21:22; Մարկ. 11:23-24)
 4. երկու առակների կոնտեքստում (հհ. 1-8, անիրավ դատավորը և հհ. 9-14, փարիսեցին և մեղավորը) հավատացյալները խրախուսվում են չնմանվել անաստված դատավորին և ինքնավստահ փարիսեցուն: Աստված լսում է խոնարհին և զղջացողին (Ղուկ. 18: 1-14)
- Բ. Հովհաննեսի գրվածքները

1. Հիսուսի բժշկած իծնէ կույրի կոնստեքստում փարիսէյիների իսկական կուրությունն է բացահայտվում: Հիսուսի աղոթքները (ինչ ամեն մեկինը) պատասխանվում են, քանի որ Նա գիտեր Աստծուն և ապրում էր համապատասխանաբար (Հովհ. 9:31):

2. Հովհաննէսի Վերնատան պատմությունը (Հովհ.13-17)

ա. 14: 12-14 - հավատքով աղոթքը բնութագրվում է

- 1) հավատացյալների կողմից է արվում
- 2) խնդրելով Հիսուսի անունով
- 3) ցանկանալով, որ Հայրը փառավորվի
- 4) պահելով պատվիրանները (հ. 15)

բ. 15: 7-10 - հավատացյալի աղոթքը բնութագրվում է

- 1) մնալով Հիսուսի մեջ
- 2) Նրա խոսքը մնում է նրանց մեջ
- 3) ցանկանալով, որ Հայրը փառավորվի
- 4) շատ պտուղ բերող
- 5) պահելով պատվիրանները (հ. 10)

գ. 15: 15-17 - հավատացյալների աղոթքը բնութագրվում է

- 1) նրանց ընտրությունը
- 2) նրանց պտուղ բերելը
- 3) խնդրելով Հիսուսի անունով
- 4) միմյանց սիրելու պատվերը պահելը

դ. 16: 23-24 - հավատացյալների աղոթքը բնութագրվում է

- 1) խնդրելով Հիսուսի անունով
- 2) ցանկանալով, որ ուրախությունը լիարժեք լինի

3. Հովհաննէսի առաջին նամակը (I Հովհ.)

ա. 3: 22-24 - հավատացյալների աղոթքը բնութագրվում է

- 1) պահելով Նրա պատվիրանները (տես հհ.22, 24)
- 2) պատշաճ կերպով ապրելու համար
- 3) հավատալով Հիսուսին
- 4) սիրել միմյանց
- 5) մնալով Նրանում և Նա մեր մեջ
- 6) ունենալով Հոգու պարզևը

բ. 5: 14-16 - հավատացյալների աղոթքը բնութագրվում է

- 1) վստահություն Աստծուն
- 2) ըստ Նրա կամքի
- 3) հավատացյալները աղոթում են միմյանց համար

Գ. Հակոբոս

1. 1-5-7 - հավատացյալները տարբեր փորձությունների առջև են կանգնում,

պետք է իմաստություն խնդրել առանց երկմտելու

2. 4: 2-3 - հավատացյալները պետք է խնդրեն համապատասխան դրդապատճառներով

3. 5: 13-18 - խրախուսվում են առողջական խնդիրներ ունեցող հավատացյալները

ա. Խնդրել երեցներին աղոթել

բ. Հավատքով աղոթելը կփրկի

գ. Խնդրել, որ իրենց մեղքերը ներվեն

դ. Մեղք խոստովանել միմյանց և աղոթել միմյանց համար (նման է I Հովհ. 5:16)

Արդյունավետ աղոթքի բանալին Քրիստոսանման լինելն է: Սա է նշանակում Հիսուսի անունով

աղոթել: Ամենավատ բանը, որ Աստված կարող էր անել շատ քրիստոնյաների համար, պատասխանել նրանց եսասիրական աղոթքներին: Մի առումով բոլոր աղոթքները պատասխանվում են: Աղոթքի ամենաարժեքավոր ասպեկտը այն է, որ հավատացյալը ժամանակ է անցկացրել Աստծո հետ՝ վստահելով Աստծուն:

▪ **«Որովհետև նորա պատուիրանքները պահում ենք, եւ նորա առաջին հաճոյ եղածները անում ենք»** Նշենք, որ այս կոնտեքստում աղոթքը պատասխանվելու համար կա երկու պահանջ

1. հնազանդություն
2. գործել այնպիսի բաներ, որոնք հաճելի են Աստծուն (տես Հովհ. 8:29)

Ի Հովհ. «ինչպես» գիրք է՝ արդյունավետ քրիստոնեական ապրելակերպի և ծառայության մասին:

Արևելահայերեն Աստվածաշունչ 3:23-24

²³Եւ սա է նորա պատուիրանքը, որ հաւատանք նորա Որդի Յիսուս Քրիստոսի անունին, եւ իրար սիրենք, ինչպէս նա պատուիրանք տուաւ մեզ: ²⁴Եւ նա որ նորա պատուիրանքները պահում է, մնում է նորանում եւ նա սորանում. եւ սորանից գիտենք թէ բնակվում է մեզանում՝ այն Հոգուցը որ տուաւ մեզ:

3:23 «Եւ սա է նորա պատուիրանքը...որ հաւատանք... եւ սիրենք» Ուշադրություն դարձրեք, որ «պատուիրան» տերմինը ԵԶԱԿԻ է երկու ասպեկտներով: Առաջին ասպեկտը անձնական հավատքն է; «հավատալ» ԲԱՅԸ ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է (տես Հովհ. 6:29,40): Երկրորդ ասպեկտը էթիկական է; «սիրել» ԲԱՅԸ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է (տես 3: 11: 4: 7): Ավետարանը պատգամ է, որին պետք է հավատալ, անձ, որին պետք է ընդունել և կյանք, որը պետք է ապրել:

▪ **«որ հաւատանք նորա Որդի Յիսուս Քրիստոսի անունին»** «Հավատալ» հասկացությունը կարևոր է աստվածաշնչյան հավատքի ընկալման համար: ՀԿ *aman* տերմինը արտացոլում էր «անձնվիրություն», «վստահելիություն», «հուսալիություն» կամ «հավատարմություն» (տես Հատուկ Թեմա ՀԿ բառը I Հովհ. 2:10): ՆԿ հունարեն (*pisteuō*) տերմինը թարգմանվում է երեք տարբեր անգլերեն բառերով՝ հավատալ, հավատք կամ վստահություն (տես Հատուկ Թեմա Հովհ. 2:33 հունարեն բառի): Տերմինը այնքան էլ չի արտացոլում քրիստոնյայի հավատարմությունը, ինչքան Աստծունը: Դա Իր բնույթն է, հայտնությունը և խոստումները, ոչ թե մեղավոր մարդկության անձնվիրությունը կամ հավատարմությունը կամ հավատարմությունը, անգամ փրկված մեղավոր մարդիկ, որոնք ստեղծում են անսասան հիմք:

«Անվանք» հավատալ կամ «անունով» աղոթելու գաղափարը արտացոլում է Մերձավոր Արևելքի հասկացողությունը, որ անունը ներկայացնում է մարդուն:

1. Հիսուսը Մաթ. 1: 21,23,25; 2:22; 10:22; 12:21; 18: 5,20; 19:29; 24: 5,9; Հովհ.1:12; 2:23; 3:18; 14:26; 15:21; 17:6; 20:31
2. Հայրը Մատթ. 6:9; 21:9; 23:29; Հովհ. 5:43; 10:25; 12:13; 17:12
3. Երրորդությունը Մաթ. 28:19.

Մի կարճ տեխնիկական ծանուցում այս համարի մասին: *Word Pictures in the New Testament* (էջ 228) A. T. Robertson նշում է մի հունարեն ձեռագրի խնդիր, որը վերաբերում է «հավատալ» ԲԱՅԻՆ: B, K և L հունարեն երկաթագիր ձեռագրերն ունեն ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆԵՐ, իսկ Ց, A և C ունի ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆԵՐ: Երկուսն էլ համապատասխանում են Հովհաննեսի կոնտեքստին և ոճին:

3:24 «նա որ պահում է, մնում է...» Սրանք երկուսն էլ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ են: Հնազանդությունը կապված է մնալու հետ: Մերը ապացույցն է, որ մենք Աստծո մեջ ենք, և Աստված էլ մեր մեջ է (կարդա 4: 12,15-16; Հովհ.14:23; 15:10): Տես Հատուկ Թեմա 2:10:

▪ **«այն Հոգուցը որ տուալ մեզ»** Հովհաննեսն օգտագործում է որոշակի վկայություններ՝ ճշմարիտ հավատացյալներին գնահատելու համար (տես Հո. 4:13; 8: 14-16, տես 2: 3-27, Կոնստեքստային ներըմբռնում, Գ): Երկուր կապված են Սուրբ Հոգու հետ:

1. խոստովանել Հիսուսին (տես Հո. 10: 9-13; I Կոր. 12: 3)
2. Քրիստոսանման ապրելակերպ (տես Հովհ.15; Գաղ. 5:22; Հակ. 2:14-26)

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորոյթյան մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Ո՞րն է 11-24 համարների միավորող թեման (տես Հովհ. 2: 7-11):
2. Բացատրեք 16 և 17 համարների կապը: Ինչպե՞ս է մեր կյանքը դնելը համեմատվում կարիքի մեջ գտնվող մեր եղբորը օգնելու հետ:
3. Արդյոք 19-20 համարները շեշտում են Աստծու դատաստանի խստությունը թե՞ Աստծո մեծ կարեկցանքը, որը հանգստացնում է մեր մտավախությունները:
4. Ինչպե՞ս ենք մենք կապում 22 համարի աղոթքի մասին Հովհ. խոսքերը մեր ամենօրյա փորձառության հետ:
5. Ինչպե՞ս կարելի է հասկանալ Հովհաննեսի թվացյալ պարադոքսալ շեշտը քրիստոնյայի կարիքի՝ ընդունելու և մեղքը խոստովանելու և նրա անարատ կատարելության մասին հայտարարությունը:
6. Ինչու՞ է Հովհաննեսն այդքան ծանր շեշտ դնում ապրելակերպի վրա:
7. Բացատրեք աստվածաբանական ճշմարտությունները, որոնք ընդգրկված են «վերստին ծնվելու» մեջ:
8. Ինչպե՞ս է այս հատվածը վերաբերում ամենօրյա քրիստոնեական կյանքին:

I ՀՈՎՀԱՆՆԵՍ 4

ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո շոգին և Նեոի շոգին	Ճշմարտության շոգին և Խաբեության շոգին	Ճշմարտության խաթարումը և սխալը	Ճիշտ շոգի և Կեղծ շոգի	Երրորդ պայմանը: Անջատվել աշխարհից և պաշտպանվել հակաքրիստոսներից
4:1-6	3:24-4:6	4:1-6	4:1-3 4:4-6	4:1-6 Սիրո և հավատքի աղբյուրը (4:7-5:13)
Աստված սեր է	Ճանաչել Աստծուն սիրո միջոցով	Սիրո օրհնությունը	Աստված սեր է	Սիրո աղբյուրը
4:7-12	4:7-11 Տեսնել Աստծուն սիրո միջոցով 4:12-16	4:7-12	4:7-10 4:11-12	4:7-5:4
4:13-16ա		4:13-16ա	4:13-16ա	
4:16բ-21	Սիրո կատարելություն 4:17-19 Հավատքի հնազանդություն 4:20-5:5	4:16բ-21	4:16բ-18 4:19-21	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԿՈՆՏԵՔՍՏԱՅԻՆ ՆԵՐՇՄԲՈՒՆՈՒՄՆԵՐ 4:1-21

Ա. Հովհ. 4 շատ մասնագիտացված գրական բաժին է, թե ինչպես են քրիստոնյաները գնահատում և ստուգում նրանց, ովքեր պնդում են թե Աստծոց են խոսում: Այս հատվածը վերաբերում է

1. այս կեղծ մարգարեները կոչվում են հակաքրիստոսներ (տես 2: 18-25)
2. նրանք, ովքեր փորձում են խաբել (տես 2:26; 3: 7)
3. Հնարավոր է, նրանք, ովքեր պնդում են հատուկ հոգևոր ճշմարտությունների գիտության մասին (տես 3:24)

Վաղ քրիստոնյաների անախորժությունը ճիշտ հասկանալու համար, պետք է ընդունել, որ շատերը պնդում էին, որ խոսում են Աստծուց (տես 1 Կոր.12:10; 14:29; I Թես. 5:20-21; I Հովհ. 4: 1-6): Չկար ամբողջական և մատչելի Նոր Կտակարան: Հոգևոր զանազանությունը ներգրավում է ինչպես վարդապետական, այնպես էլ սոցիալական փորձեր (տես Հակ. 3: 1-12):

Բ. I Հովհ. չափազանց դժվար է ուրվագծել թեմաների կրկնվող օրինակի պատճառով: Մա, անշուշտ, ճշմարիտ է 4-րդ գլխում: Թվում է, թե այս գլուխը վերընդգծում է այնպիսի ճշմարտություններ, որոնք ուսուցանվել են ավելի վաղ գլուխներում, հատկապես հավատացյալները միմյանց սիրելու անհրաժեշտությունը (տես հհ.7-21; 2:7-12 և 3: 11-24):

Գ. Հովհաննեսը գրում է թե կեղծ ուսուցիչների դեմ պայքարելու և թե ճշմարիտ հավատացյալներին խրախուսելու համար: Նա դա անում է, օգտագործելով մի քանի թեստեր.

1. վարդապետական թեստ (հավատալ Հիսուսին, տես Հովհ. 2: 18-25; 4:1-6,14-16; 5: 1,5,10)
2. ապրելակերպի թեստ (հնազանդություն, տես I Հովհ. 2: 3-7; 3: 1-10, 22-24)
3. սոցիալական թեստ (սեր, տես I Հովհ. 2: 7-11; 3: 11-18; 4: 7-12,16-21; 5: 1-2)

Սուրբ Գրքի տարբեր մասերը վերաբերվում են տարբեր կեղծ ուսուցիչներին:

I Հովհ. անդրադառնում է գնոստիկ կեղծ ուսուցիչների հերետիկոսությանը: Տես I Հովհ. Ներածություն, հերետիկոսությունը: ՆԿ ուրիշ հատվածներ հասցեագրված են այլ ոչ ճշմարտություններին (տես Հովհ.1:13; Հռ.10: 9-13; I Կոր.12:3): Յուրաքանչյուր կոնտեքստ պետք է ուսումնասիրել առանձին՝ պարզելու, թե որ սխալին է ուղղված: Մի քանի աղբյուրներից սխալ կար

1. Հրեա օրինապաշտները
2. Հույն փիլիսոփաները
3. Հույն անտիոմիանները
4. նրանք, ովքեր ունեին հատուկ հոգևոր հայտնություն կամ փորձառություններ:

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ 4:1-6
¹Միրելիներ, ամեն հոգու մի հաւատաք. այլ փորձեցէք հոգիները թէ արդեօք Աստուածանից են. որովհետեւ շատ սուտ մարգարէներ են դուրս եկել աշխարհք: ²Սորանով ճանաչեցէք Աստուծոյ Հոգին. ամեն հոգի որ խոստովանում է Յիսուս Քրիստոսին մարմնով եկած, Աստուածանից է: ³Եւ ամեն հոգի որ չէ խոստովանում Յիսուս Քրիստոսին մարմնով եկած, Աստուածանից չէ. Եւ նա Նեոի հոգին է, որ լսեցիք թէ գալիս է, եւ հիմա արդէն աշխարհքումն է: ⁴Դուք Աստուածանից էք,

որդեակներ, եւ յաղթեցիք նորանց. Որովհետեւ անլի մեծ է նա որ ձեզանում է, քան թէ նա որ աշխարհքիս մէջ է: ⁵Նորանք աշխարհքիցն են. Նորա համար աշխարհքիցն են խօսում. եւ աշխարհքը լսում է նորանց: ⁶Մենք Աստուածանից ենք. ով որ Աստուծուն ճանաչում է՝ լսում է մեզ, ով որ Աստուածանից չէ, չէ լսում մեզ. Սորանից ենք ճանաչում ճշմարտութեան Հոգին եւ խաբէութեան հոգին:

4:1 «մի հաւատարք» Սա ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել գործընթացում եղող գործողությունը: Քրիստոնյաների միտումն է ընդունել ուժեղ անձնավորություններ, տրամաբանական փաստարկներ կամ հրաշք իրադարձություններ ինչպես Աստուծուց: Ըստ երևույթին, կեղծ ուսուցիչները պնդում էին, թե (1) խոսում են Աստուծուց կամ 2) Աստծո կողմից հատուկ հայտնություն ունեին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԱՐԴՅՈ՞Ք ԶՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԴԱՏԵՆ ՄԻՄՅԱՆՑ

Այս խնդրին պետք է նայել երկու կողմից:

1. Նախ, հավատացյալներին կոչ է ուղղված չդատել միմյանց (հմմտ. Մաթ. 7:1-5; Դուկ. 6:37,42; Հն. 2:1-11; Հակոբոս 4:11-12):
2. Բայց նույն ժամանակ հավատացյալները պետք է գնահատեն իրենց առաջնորդներին (հմմտ. Մաթ. 7:6,15-16; I Կոր. 14:29; I Թեա. 5:21; I Տիմ. 3:1-13; և I Հովհ. 4:1-6):

Ծիշտ գնահատման համար որոշ չափանիշներ կարող են օգտակար լինել

1. գնահատելու նպատակը հաստատելն է (հմմտ. I Հովհ. 4:1 - «փորձել» համոզվելու համար)
2. գնահատել պետք է խոնարհությամբ և հեզությամբ (հմմտ. Գաղ. 6:1)
3. գնահատումը չպետք է լինի անձնական նախապատվության հիմքի վրա (հմմտ. Հն. 14:1-23; I Կոր. 8:1-13; 10:23-33)
4. գնահատման ժամանակ պետք է ի հայտ բերել այն առաջնորդներին, ովքեր քննադատելու առիթ չեն տալիս եկեղեցու ներսում կամ համայնքում (հմմտ. I Տիմ. 3):

▪ **«ամեն հոգու»** Հոգին օգտագործվում է մարդու անձի իմաստով: Տես ծանուցում 4: 6: Սա վերաբերվում է Աստծո կողմից ենթադրյալ պատգամին: Հերետիկոսությունը գալիս է եկեղեցու ներսից (տես 2:19): Կեղծ ուսուցիչները պնդում էին, որ խոսում են Աստուծուց: Հովհաննեսը պնդում է, որ կան երկու հոգևոր աղբյուրներ՝ Աստված կամ Սատանան, մարդկային խոսքի և գործողության հետևում:

▪ **«այլ փորձեցեք հոգիները»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սա թե հոգևոր պարզ և (տես I Կոր. 12:10; 14:29) և թե անհրաժեշտ յուրաքանչյուր հավատացյալի համար, ինչպիսիք են աղոթքը, ավետարանչությունը և տալը: Այս հունարեն *dokimazō* բառը նշանակում է «փորձել՝ հավանություն ստանալու համար»: Հավատացյալները պետք է մտածեն մյուսներից լավագույնը, եթե ամենավատը չի ապացուցվել (տես I Կոր. 13:4-7; I Թեա. 5.20-21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՀՈՒՆԱՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ «ՓՈՐՉՈՒԹՅՈՒՆ, ՓՈՐՉ» և ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԱՆԳՆԵՐԸ

Գոյություն ունեն երկու հունարեն տերմիններ, որոնք ունեն ինչ որ մեկին նպատակի համար փորձելու գաղափարը.

1. *Dokimazō, dokimion, dokimasia*

Այս տերմինը մետալուրգիական տերմին է, որն օգտագործվում է ինչ որ բանի կրակով փորձելու համար իրական լինելը ստուգելու պայմանով (փոխաբերական իմաստով նաև մարդուն): Կրակը հայտնում է մետաղի իսկական լինելը այրման, թրծման միջոցով (մաքրելով, գտելով): Ֆիզիկական գործընթացը դարձավ գորեղ իդիոմա Աստծո և/կամ մարդկանց համար ուրիշներին փորձելու համար: Այս տերմինը օգտագործվում է միայն դրական իմաստով՝ պիտանի լինելու փորձով.

Նոր Կտակարանում օգտագործվում է փորձելու համար

- ա. եզներ, Դուկ. 14:19
- բ. ինքներս մեզ, I Կոր. 11:28
- գ. մեր հավատքը, Հակոբոս 1:3
- դ. նույնիսկ Աստծուն, Եբր. 3:9

Ենթադրվում էր, որ այս փորձությունների արդյունքները կլինեն դրական (հմմտ. Հռ. 1:28; 14:22; 16:10; II Կոր. 10:18; 13:3; Փիլ. 2:27; I Պետ. 1:7): Ուստի, տերմինը տալիս է գաղափար, երբ ինչ որ մեկը փորձվում է և ապացուցվում է որպես

- ա. արժանի, կարևոր
- բ. լավ, բարի
- գ. անկեղծ, ազնիվ
- դ. թանկագին, կարևոր
- ե. պատվավոր

2. *Peirazō, peirasmos*

Այս տերմինն ունի ստուգման լրացուցիչ իմաստ, որը սխալը գտնելու կամ մերժելու համար է: Սա հաճախ օգտագործվում է կապված անապատում Հիսուսի փորձության հետ:

- ա. Նկարագրում է Հիսուսին ծուղակը զցելու փորձի մասին (հմմտ. Մաթ. 4:1; 16:1; 19:3; 22:18,35; Մարկ. 1:13; Դուկ. 4:2; 10:25; Եբր. 2:18):
- բ. Այս տերմինը (*peirazō*) օգտագործվում է սատանայի անվան համար Մաթ. 4:3; I Թեո. 3:5.
- գ. Սա օգտագործում է Հիսուսը, երբ խոսում է Աստծուն չփորձելու մասին (հմմտ. Մաթ. 4:7; Դուկ. 4:12; [կամ Քրիստոսին տես I Կոր. 10:9): Գա նաև նշանակում է փորձել մի բան անել, որը ձախողել է (տես Գործք 9:20; 20:21; Եբր. 11:29):
- դ. Սա օգտագործվում է նաև այն ժամանակ, երբ խոսքը գնում է հավատացյալների փորձանքների և փորձությունների մասին (հմմտ. I Կոր. 7:5; 10:9,13; Գաղ. 6:1; I Թեո. 3:5; Եբր. 2:18; Հակոբոս 1:2,13,14; I Պետ. 4:12; II Պետ. 2:9): Աստված թույլ է տալիս մարդու երեք թշնամիներին (այսինքն՝ աշխարհը, մարմինը և սատանան) հայտնվել կոնկրետ ժամանակի մեջ և վալորում:

▪ **«որովհետև շատ սուտ մարգարեներ են դուրս եկել աշխարհք»** Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է (տես Եր. 14:14; 23:21; 29:8; Մատթ. 7:15; 24: 11,24; Գործք 20:28-30; II Պետ. 2:1; I Հովհ. 2: 18-19,24; 3: 7; II Հովհ. 7): Պատճառն այն է, որ նրանք թողել էին եկեղեցին (տնային եկեղեցիները), սակայն շարունակում են պնդել, որ նրանք Աստծոց են խոսում:

Տես Հատուկ Թեմա: Նոր Կտակարանի Մարգարեությունը Հովհ. 4:19

4:2 «Սորանով ճանաչեցէք Աստուծոյ Հոգին» Այս քերականական ձևը կամ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է (դրույթ) կամ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (հրաման): Այս նույն տեսակի անորոշությունը կա «մնալ, կենալ» 2:27 և «իմանալ, ճանաչել» 2:29: Սուրբ Հոգին միշտ մեծարում է Հիսուսին (տես Հովհ.14:26; 15:26; 16: 13-15): Այս նույն ստուգաբանը կարելի է տեսնել նաև Պողոսի գրվածքներում, I Կոր. 12: 3:

▪ **«ամեն հոգի որ խոստովանում է»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ցույց է տալիս շարունակական դավանություն, այլ ոչ թե հավատքի հավաստիացում: Հունարեն «խոստովանություն» տերմինը «միևնույն» և «խոսել» բառերի բարդ ձևն է, որը նշանակում է «նույն բանը ասել»: Սա կրկնվող թեմա է I Հովհ. (տես I Հովհ.1: 9; 2:23; 4: 2-3; 4:15; Հովհ. 9:22; II Հովհ.7): Այս տերմինը նշանակում է կոնկրետ, հանրային, բանավոր ճանաչում Հիսուս Քրիստոսի ավետարանին մարդու հավանության և հավատարմության մասին: Տես Հատուկ Թեմա, Հովհ. 9:22:

▪ **«Յիսուս Քրիստոսին մարմնով եկած, Աստուածանից է»** Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սա էական վարդապետական թեստ է կեղծ ուսուցիչների համար (այսինքն,

գնոստիկներին), որոնց դեմ Հովհաննեսը պայքարում էր այս գրքում: Նրա հիմնական պնդումն այն է, որ Հիսուսը ամբողջովին մարդ է (այսինքն, մարմին, որը հերքում էին գնոստիկները), ինչպես նաև ամբողջովին Աստված (տես 1:1-4; II Հովհ. 7, Հովհ.1:14; I Տիմ.3:16): ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ հաստատում է, որ Հիսուսի մարդեղությունը ժամանակավոր չէր, այլ մշտական: Սա փոքր հարց չէր: Հիսուսը իսկապես մարդ է և Աստված:

4:3 «ամեն հոգի որ չէ խոստովանում Յիսուս Քրիստոսին» Աստվածաբանորեն հետաքրքիր է, որ ՆԿ հին լատիներեն տարբերակը և Քրիստոսյա գրողներ՝ Կլեմենտը, Օրիգեն Ալեքսանդրիացին, Իռենաոսը և Տերտուլիանը ունեն *leui* (արձակել, քանդել), ինչը ենթադրում է «առանձնացնել Հիսուսին», ըստ երևույթին, մարդկային հոգու և առանձին աստվածային հոգու մեջ, որը բնութագրում էր երկրորդ դարի գնոստիկ գրվածքները: Բայց սա տեքստային լրացում է, որը արտացոլում է վաղ եկեղեցու կյանքի և մահվան պայքարը հերետիկոսության դեմ (տես Bart Erhart, *The Orthodox Corruption of Scripture*, էջ 125-135):

▪ **«Նեոի հոգին է»** Այստեղ տերմինը (հմմտ. 2:18-25) օգտագործվում է, որպես Քրիստոսին ուրացող, ոչ թե՛ Նրա դիրքը զավթելու փորձ:

▪ **«որ լսեցիք թե՛ գալիս է, եւ հիմա արդէն աշխարհքումն է»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ենթադրում է, որ Հովհաննեսն ավելի վաղ քննարկել էր այդ թեման և դրանց համապատասխանությունը: Հունարենում «սա, դա, այն» ԴԵՆԱՆՈՒՆԸ համապատասխանում է ՉԵԶՈՔ «հոգուն»: Ինչպես 2:18, այս արտահայտությունը արտացոլում է, որ հակաքրիստիանների հոգին և արդէն եկել է և, որ գալու է: Այս գնոստիկ կեղծ ուսուցիչները դարերի ընթացքում կեղծ տեղեկությունների, կեղծ ապրելակերպի և կեղծ դավանությունների շղթա են կազմում, Ծննդ. 3-ի չարից մինչև չարի մարմնավորումը և վերջին ժամանակի հակաքրիստոսը (այսինքն, II Թեո. 2; Հայտ.13):

4:4-6 «Դուք . . . Նորանք . . . Մենք» Այս բոլոր ԴԵՆԱՆՈՒՆՆԵՐԸ ընդգծված են: Առկա են երեք խմբեր:

1. ճշմարիտ հավատացյալներ (Հովհաննեսը և իր ընթերցողները)
2. կեղծ հավատացյալներ (գնոստիկ ուսուցիչները և նրանց հետևորդները)
3. Հովհաննեսի միսիոներական թիմը կամ աստվածաբանական խումբը

Այս նույն տեսակի խմբավորում երևում է Եբր. 6 և 10:

4:4 «յաղթեցիք նորանց» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սա կարծես թե հղում է ինչպես վարդապետական հակասությունների, այնպես էլ հաղթական քրիստոնեական կյանքի մասին: Ինչ հրաշալի քաջակերանքի խոսք նրանց և մեզ համար:

Հովհաննեսը մտահոգված է մեղքի և սատանայի դեմ քրիստոնյաների հաղթանակի մասին: Նա օգտագործում է այս տերմինը (*nikaō*) 6 անգամ I Հովհ. (տես 2: 13,14; 4: 4; 5: 4,5), 11 անգամ Հայտնության մեջ և մեկ անգամ Ավետարանում (տես 16:33): «Հաղթանակ» տերմինը օգտագործվել է միայն մեկ անգամ Ղուկասի Ավետարանում (տես 11:22) և երկու անգամ Պողոսի գրվածքներում (տես Հռ. 3: 4; 12:21):

▪ **«Որովհետեւ անելի մեծ է նա որ ձեզանում է, քան թե նա որ աշխարհքիս մեջ է»** Այստեղ շեշտը բնակվող Աստծո վրա է: Այստեղ, կարծես, շեշտը բնակվող Հոր վրա է (տես Հովհ.14:23; II Կոր. 6:16): ՆԿ նաև ընդգծում է (1) բնակվող Որդուն (տես Մաթ. 28:20; Կող. 1:27) և (2) բնակվող Սուրբ Հոգին (տես Հռ. 8: 9; I Հովհ. 4:13): Հոգին և Որդին սերտորեն նույնացվում են (տես Հռ. 8: 9; II Կոր. 3:17; Գաղ. 4:6, Փիլ. 1:19; I Պետ. 1:11): Տես Հատուկ Թեմա, Հովհ.14:15:

«Նա, ով աշխարհում է» արտահայտությունը վերաբերվում է սատանային (տես Հովհ. 12:31; 14:30; 16:11; II Կոր. 4:4; Եփ. 2: 2, I Հովհ.5:19) և նրա հետևորդներին: I Հովհ. «աշխարհ» տերմինը

միշտ բացասական նշանակություն ունի (այսինքն, մարդկային հասարակություն, որը կազմակերպված է և գործում է Աստուծուց հեռու, տես Հատուկ Թեմա: *Kosmos* Հովհ.14:17):

4:5 «Նորանք աշխարհքիցն են» Սա աղբյուրի ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ է: «Աշխարհ» տերմինը այստեղ օգտագործվում է այն իմաստով, որ ընկած մարդկային հասարակությունը փորձում է հոգալ իր բոլոր կարիքները Աստուծուց հեռու (տես 2: 15-17): Դա վերաբերվում է մեղավոր մարդու հավաքական անկախ հոգուն: Դրա օրինակը Կայենն է (տես 3:12): Այլ օրինակներ կարող են լինել (1) Եդիան և Բահադի մարգարեները (III Թագ.18) և 2) Երեմիան ընդդեմ Անանիայի (Եր.28):

▪ **«աշխարհքը լսում է նորանց»** Ի տարբերություն քրիստոնյա ուսուցիչների կեղծ ուսուցիչներին լսում են (տես Հովհ.15:19; I Տիմ.4: 1):

4:6 «ով որ Աստուծուն ճանաչում է՝ լսում է մեզ» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Ճշմարիտ հավատացյալները շարունակում են լսել և արձագանքել առաքելական ճշմարտությանը: Հավատացյալները կարող են ճանաչել ճշմարիտ քարոզիչներին / ուսուցիչներին, թե նրանց պատգամի բովանդակությամբ, և թե ովքեր են լսում և արձագանքում նրանց:

▪ **«Սորանից ենք ճանաչում ճշմարտութեան Հոգին և խաբէութեան հոգին»** Սա կարող է վերաբերել Սուրբ Հոգուն (տես Հովհ.14:17; 15:26; 16:13; I Հովհ. 4:6; 5: 7) և չար հոգուն՝ սատանային: Հավատացյալները պետք է կարողանան հասկանալ պատգամի աղբյուրը: Հաճախ դրանք երկուսն էլ տրվում են Աստծո անվան մեջ, ենթադրաբար Աստծո խոսողների կողմից: Մեկը բարձրացնում է Հիսուսին և Քրիստոսանմանությունը, իսկ մյուսը՝ մարդու շահարկումը և անձնական ազատությունը:

Robert Girdlestone, *Synonyms of the Old Testament*, ունի հետաքրքիր քննարկում ՆԿ «հոգի» տերմինի օգտագործման մասին:

- «1. Չար հոգիներ
2. մարդու հոգի
3. Սուրբ Հոգի
4. այն բաները, որոնք Հոգին առաջացնում է մարդկային հոգու ներսում և միջոցով
 - ա. «ոչ թե ծառայության հոգի այլ որդեգրության»- Հռ. 8:15
 - բ. «հեզության հոգի»- I Կոր. 4:21
 - գ. «հավատքի հոգի» - II Կորնթ. 4:13
 - դ. «իմաստության հոգի և հայտնությունը Նրա գիտության մեջ»- Եփ. 1:17
 - ե. «Ոչ թե երկչոտության հոգի, այլ զորության, սիրո և կարգապահության» - II Տիմ. 1: 7
 - զ. «խաբէության հոգի և Ճշմարտության հոգի» - I Հովհ. 4: 6 (էջ 61-63):

Արևելահայերեն Աստվածաշունչ 4:7-14

⁷Միրելիներ, իրար սիրենք, որ սերն Աստուածանից է. Եւ ամեն ով որ սիրում է Աստուածանից է ծնուած, եւ ճանաչում է Աստուծուն: ⁸Նա որ չէ սիրում, Աստուծուն չէ ճանաչել. որովհետեւ Աստուած սեր է: ⁹Սորանով Աստուծոյ սերն երեւեցաւ մեզանում, որ Աստուած իր միածին Որդուն ուղարկեց աշխարհք, որ նորանով կեանք ունենանք: ¹⁰Սորանում է սերը, որ ոչ թէ մենք սիրեցինք Աստուծուն, այլ որ նա սիրեց մեզ, եւ ուղարկեց իր Որդուն քաւութիւն մեր մեղքերի համար: ¹¹Միրելիներ, եթէ Աստուած այսպէս սիրեց մեզ, ապա մենք էլ պէտք է իրար սիրենք: ¹²Աստուծուն երբէք մեկը չէ տեսել. Եթէ իրար սիրենք Աստուած մեզանում է բնակվում, եւ նորա սերը կատարեալ է մեզանում: ¹³Սորանով գիտենք, որ մենք նորանում ենք բնակուած եւ նա մեզանում. Որ իր Հոգուցը տուաւ մեզ: ¹⁴Եւ մենք տեսանք եւ վկայում ենք, որ Հայրն իր Որդուն ուղարկեց աշխարհքի Փրկիչ լինելու:

4:7 «իրար սիրենք» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Կենսակերպը, ամենօրյա սերը բոլոր հավատացյալների ընդհանուր հատկանիշներից մեկն է (այսինքն, I Կոր 13; Գաղ. 5:22): Սա Հովհաննեսի գրվածքներում կրկնվող թեմա է և էթիկական թեստի էությունը (տես Հովհ.13:34; 15: 12,17; I Հովհ. 2: 7-11; 3: 11,23; II Հովհ. 5, տես Կոնտեքստային Ներմբնումներ, Գ): ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ նշում է պատահականությունը:

- **«որ սերն Աստուածանից է»** Աստված է, ոչ թե մարդկային բարեգործությունը, խղճահարությունը կամ զգացմունքը, սիրո աղբյուրը (տես հ.16): Դա առաջին հերթին զգացմունքային չէ, այլ նպատակաուղղված գործողություն (այսինքն, Հայրը, որ ուղարկեց Որդուն՝ մեր փոխարեն մահանալու համար, տես հ.10, Հովհ.3:16):

- **«ամեն ով որ սիրում է Աստուածանից է ծնուած, եւ ճանաչում է Աստուծուն»** ԲԱՅԵՐԸ ՎԱՂԱԿԱՍԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ և ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են: Հովհաննեսի սիրելի տերմինները հավատացյալ դառնալու համար կապված են ֆիզիկական ծննդի հետ (տես 2:29; 3: 9; 5: 1; 4:18; Հովհ. 3: 3, 7, 31; 19:11):

«Իմանալ» տերմինը արտացոլում է շարունակական, մտերմիկ հաղորդակցման երբայերեն իմաստը (տես Ծննդ. 4: 1; Եր. 1: 5): Դա I Հովհ. կրկնվող թեման է, որն օգտագործվում է 77 անգամ: Տես Հատուկ Թեմա Հովհ. 1:10:

4:8 «Նա որ չէ սիրում, Աստուծուն չէ ճանաչել. որովհետեւ Աստուած սեր է» Սիրո կենսակերպը Աստվածճանաչության ճշմարիտ ստուգարքն է:

Սա Հովհաննեսի խորապես պարզ արտահայտություններից մեկն է. «Աստված սեր է» համապատասխանում է «Աստված լույս է» (տես 1: 5) և «Աստված հոգի» է (տես Հովհ. 4:24): Աստծո սերը և Աստծո զայրույթը հակադրելու լավագույն եղանակներից մեկը, դա համեմատել 2 Օրին. 5: 9-ը 5:10 և 7: 9 հետ:

4:9 «Սորանով Աստուծոյ սերն երեւեցաւ մեզանում» Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է (տես Հովհ. 3:16; II Կոր. 9:15; Հռ. 8:32): Աստված հստակ ցույց տվեց, որ Նա սիրում է մեզ, ուղարկելով իր Միածին Որդուն՝ մահանալու մեր փոխարեն: Սերը գործողություն է, ոչ միայն զգացմունք: Հավատացյալները պետք է արտացոլեն այն իրենց ամենօրյա կյանքում (տես I Հովհ. 3:16): Աստծուն ճանաչել նշանակում է սիրել այնպես ինչպես Նա է սիրում:

- **«Աստուած իր միածին Որդուն ուղարկեց աշխարհք»** Սա ՎՍՂԱԿԱՍԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Մարմնավորումն ու դրա հետևանքները մնում են: Աստծո բոլոր օգուտները գալիս են Քրիստոսի միջոցով:

«Միածին» տերմինը *monogenēs*, որը նշանակում է «եզակի», «մի տեսակ, յուրահատուկ», ոչ թե ծնված, ինչպես սեռական վերարտադրողականության միջոցով: Կուսական ծնունդը սեռական փորձ չէր Աստծու կամ Մարիամի համար: Հովհաննեսը Հիսուսին վերաբերող այս տերմինը օգտագործում է մի քանի անգամ (տես Հովհ. 1: 14,18; 3: 16,18; I Հովհ. 4: 9): Տես ևս մեկ ծանուցում Հովհ. 3:16: Հիսուսը Աստծո Որդին է եզակի (օնթոլոգիական) իմաստով: Հավատացյալները Աստծո զավակներն են միայն ժառանգության իմաստով:

- **«որ նորանով կեանք ունենանք»** Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, որը նշանակում է պատահականություն, անհրաժեշտ է հավատքով արձագանքել: Մարմնավորման նպատակը հավիտենական կյանքն ու առատ կյանքն էր (տես Հովհ. 10:10):

4:10 «Սորանում է սերը» Աստծո սերը ակնհայտորեն դրսևորվում է Հիսուսի կյանքի եւ մահվան մեջ (տես Հռ. 5: 6, 8): Հիսուսին ճանաչել նշանակում է Աստծուն ճանաչել: Գիտենք, որ Աստված սիրում է:

▪ **«որ ոչ թէ մենք սիրեցինք Աստուծուն»** Նոր Կտակարանը եզակի է աշխարհի կրոնների մեջ: Սովորաբար ցանկացած կրոնի մեջ մարդը փնտրում է Աստծուն, բայց քրիստոնեության մեջ Աստված է փնտրում մեղավոր մարդուն: Հրաշալի ճշմարտությունը Աստծո հանդեպ մեր սերը չէ, այլ Նրա սերը դեպի մեզ: Նա փնտրել է մեզ մեր մեղքի և եսի, մեր ըմբոստության և հպարտության միջոցով: Քրիստոնեության փառահեղ ճշմարտությունն այն է, որ Աստված սիրում է ընկած մարդկությանը և նախաձեռնել է և պահում է կյանք փոխող շփումներ:

Կա տարբերակ ԲԱՅԱԶԵՎԻ հետ կապված:

1. սիրել է և շարունակում է սիրել, ՎԱՂԱԿԱՏԱՐ - MS B
2. սիրեց, ԱՕՐԻՍՍ - MS Ն

UBS⁴ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ տալիս է «B» վարկանիշ (գրեթե որոշակի):

▪ **«ուղարկեց իր Որդուն քառօրյա մեր մեղքերի համար»** Տես ծանուցում 2:2.

4:11 «Եթէ» Սա ԱՌԱԶԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Աստված սիրում է մեզ (տես Հռ.8:31):

▪ **«Աստուած այսպէս սիրեց մեզ»** «Այնպես» բառը պետք է հասկանալ «այնպիսի ձևով», ինչպես Հովհ.3:16:

▪ **«ապա մենք էլ պետք է իրար սիրենք»** Քանի որ Նա սիրեց մեզ, մենք էլ պետք է սիրենք միմյանց (տես 2:6; 3:16; 4:1): Անհրաժեշտության մասին այս հայտարարությունը արտացոլում է կեղծ ուսուցիչների կործանարար գործողությունները և վերաբերմունքը:

4:12 «Աստուծուն երբէք մեկը չէ տեսել» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԶԵԶՈՔ (deponent) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս խոսքը նշանակում է, որ «սևեռուն հայացքով նայել որևէ մեկի կամ ինչ որ մի բանի» (տես Ելից 33:20-23; Հովհ. 1:18; 5:37; 6:46; I Տիմ. 6:16): Հնարավոր է, որ արևելյան միասնիկ կրոնների ազդեցության տակ գտնվող գնոստիկ ուսուցիչները պնդում էին, որ որոշ տեսակի տեսիլք ունեին Աստծուց կամ Աստծո մասին: Հիսուսը եկավ լիովին բացահայտելու Հորը: Նայելով Նրան, մենք ճանաչում ենք Աստծուն:

▪ **«Եթէ»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն:

▪ **«Աստուած մեզանում է բնակվում»** Տես Հատուկ Թեմա: Մնալ, Կենալ 2:10.

▪ **«նորա սերը կատարեալ է մեզանում»** Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սիրող քրիստոնյաները վկայում են Աստծո մնայուն և կատարյալ սիրո մասին (տես 2: 5; 4:17):

4:13 «Որ իր Հոգուցը սուաւ մեզ» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Բնակվող Սուրբ Հոգին (տես 3:24; Հռ. 8: 9) և Նրա փոխակերպող ազդեցությունը վկայում է մեր ճշմարիտ փրկության մասին (տես Հռ. 8:16): Թվում է, թե հ.13 Հոգու սուրբեկտիվ վկայությունն է, իսկ հ.14 `առաքելական վկայության օբյեկտիվ վկայությունը: Երրորդության երեք անձերը հստակ երևում են հհ. 13-14: Տես Հատուկ Թեմա. Երրորդությունը Հովհ.14:26:

4:14 «մենք տեսանք եւ վկայում ենք» ԲԱՅԵՐԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՉԵԶՈՔ (deponent) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ են, որը կապված է ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ հետ: Այն խոսում է Հովհաննեսի ականատեսի վկայության մասին Քրիստոսի անձի մասին, ճիշտ այնպես, ինչպես 1: 1-3:

«Տեսանք» տերմինը նույն հունարեն բառն է, ինչպես հ.12, որը նշանակում է «ուշադրություն դարձնել, սևեռուն հայացք գցել»: Տես Հատուկ Թեմա. Վկայել Հիսուսին Հովհ.1: 8:

▪ **«որ Հայրն իր Որդուն ուղարկեց»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այն փաստը, որ Հայր Աստվածը աշխարհ ուղարկեց Որդի Աստծուն (տես Հովհ. 3:16), հերքում է գնոստիկ կեղծ ուսմունքը թվացյալ դուալիզմի մասին՝ հոգու (բարի) և նյութի (չար) միջև: Հիսուսը իսկապես Աստված էր և Նա ուղարկվեց մեղքի չար աշխարհ, այն փրկելու համար և նաև մեզ (տես Հո. 8: 18-25) Ծննդոց 3-ի անեծքից (տես Գաղ. 3:13):

▪ **«աշխարհքի Փրկիչ լինելու»** Այն փաստը, որ Հայրը ընտրեց օգտագործել Հիսուսին, որպես փրկության միջոց, հերքում է գնոստիկ կեղծ ուսմունքը, որ փրկությունը ձեռք է բերվում հրեշտակային մակարդակների հետ կապված հատուկ, գաղտնի գիտելիքների միջոցով: Նրանք այս հրեշտակային մակարդակները *eons* կոչում էին երկնքի կամ երկնային իշխանության տիրույթներ, բարձր Աստծո և փոքր աստծու միջև, որը աշխարհը ձևավորեց նախագոյ նյութից:

«Աշխարհի Փրկիչ» արտահայտությունը (1) աստվածների կոչումն էր (այսինքն՝ Չեսս) և (2) հռոմեական կայսրի ընդհանուր կոչումը: Քրիստոնյայի միայն Հիսուսը կարող էր կրել այդ կոչումը (տես Հովհ. 4:42; I Տիմ. 2:4; 4: 10): Սա հենց այն է, ինչ տեղի է ունեցել Փոքր Ասիայում տեղական պատրիարքների հետապնդումների հետ:

Ուշադրություն դարձրեք, որ բոլորը ներառված են: Նա բոլորի փրկիչն է (ոչ միայն ոմանց), եթե միայն նրանք արձագանքեն (տես Հովհ.1:12; 3:16; Հո. 5:18; 10: 9-13):

Արևելահայերեն Աստվածաշունչ 4:15-21

¹⁵Ով որ դուանէ թէ Յիսուսն է Աստուծոյ Որդին, Աստուած նորանում է բնակվում եւ նա Աստուածանում: ¹⁶Եւ մենք ճանաչեցինք եւ հաւատացինք այն սերը, որ Աստուած ունի մեզ վերայ. Աստուած սեր է, եւ ով որ մնում է սերի մէջ, Աստուծոյ մէջ է բնակվում, եւ Աստուած նորանում: ¹⁷Սորանում է սերը կատարեալ մեզ հետ, որ համարձակութիւն ունենանք դատաստանի օրումը. որովհետեւ ինչպէս նա է, այնպէս էլ մենք ենք այս աշխարհքումը: ¹⁸ Վախ չ'կայ սերի մէջ. Այլ կատարեալ սերը հեռացնում է վախը. Որովհետեւ վախը տանջանք ունի. Բայց նա որ վախենում է, կատարեալ չէ սերի մէջ: ¹⁹Մենք սիրենք նորան, որովհետեւ առաջ նա սիրեց մեզ: ²⁰Եթէ մէկն ասէ թէ Միրում եմ Աստուծուն եւ իր եղբօրն ասէ, նա ստախօս է. Որովհետեւ նա որ իր տեսած եղբօրը չէ սիրում, Աստուծուն որ չէ տեսել ի նչպէս կարող է սիրել: ²¹Եւ այս պատուիրանքն ունինք նորանից, թէ նա որ Աստուծուն սիրում է, իր եղբօրն էլ սիրէ:

4:15 «Ով որ դուանէ թէ Յիսուսն է Աստուծոյ Որդին» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: «Խոստովանություն» բառի համար տես ծանուցում հ. 2: Հովհաննեսի ճշմարիտ քրիստոնյայի երեք թեստերից մեկը աստվածաբանական ճշմարտությունն է Հիսուսի անձի և աշխատանքի մասին (տես 2: 22-23; 4: 1-6; 5: 1,5): Սա նաև համապատասխանում է I Հովհ. եւ Հակոբոսին՝ սիրո ապրելակերպով և հնազանդությամբ: Քրիստոնեությունը մարդ է, ճշմարտության մարմին և ապրելակերպ: Տեսեք Կոնստեքստուալ Ներըմբումներ, Գ.

Ընդգրկուն տերմինը «ով որ» Աստծո մեծ հրավերն է յուրաքանչյուրի համար և բոլորն էլ կարող են Նրան մոտենալ: Բոլոր մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով (տես Ծննդ. 1: 26-27; 5: 3; 9: 6): Աստված խոստացավ փրկել մարդկային ցեղը, Ծննդ. 3:15: Նա կանչեց Աբրահամին՝ աշխարհին հասնելու համար (տես Ծննդ. 12:3; Ելից 19:5): Հիսուսի մահը առընչվում էր մեղքի խնդրին (տես Հովհ. 3:16): Յուրաքանչյուր ոք կարող է փրկվել, եթե նրանք արձագանքեն ուխտի պահանջին՝

ապաշխարություն, հավատք, հնազանդություն, ծառայություն և համբերություն: Աստծո խոսքը բոլորի համար «եկեք» է (տես Ես.55):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԲՈՒԲ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ

Ես պետք է խոստովանեմ ձեզ՝ ընթերցողներին, որ ես կողմնակալ եմ այս պահին: Իմ սխտեմատիկ աստվածաբանությունը Կավիինիզմը կամ Դիսպենսացիոնալիստական չէ, այլ Մեծ Պատվիրանի՝ ավետարանչական (տես Մատթ. 28: 18-20; Ղուկ. 24: 46-47; Գործք 1: 8): Ես հավատում եմ, որ Աստված ուներ հավիտենական ծրագիր մարդկության փրկության համար (օրինակ, Ծննդ. 3:15; 12:3; Ելից 19: 5-6; Եր.31:31-34; Եզ.18; 36: 22-39; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29; Հռ.3:9-18,19-20,21-31), բոլոր նրանց, որոնք ստեղծված են Նրա պատկերով և նմանությամբ (տես Ծննդ. 1: 26-27): Ուխտերը միավորված են Քրիստոսում (տես Գաղ.3: 28-29; Կող. 3:11): Հիսուսը Աստծո առեղծվածն է, թաքնված, բայց այժմ հայտնված (տես Եփ. 2: 11-3: 13): Սուրբ Գրքի հիմնական բանալին Նոր Կտակարանի ավետարանն է, ոչ թե Իսրայելը:

Այս նախնական հասկացողությունը գունագարդում է իմ բոլոր մեկնաբանությունները: Ես բոլոր տեքստերը կարդում եմ դրա միջոցով: Դա, անշուշտ, մի շեղում է (բոլոր մեկնաբաններն ունեն դրանք), բայց դա Աստվածաշնչով տեղեկացված ենթադրություն է:

▪ **«Աստուած նորանում է բնակվում եւ նա Աստուածանում»** Սա արտացոլում է Աստծո փոխհարաբերության ուխտի կառուցվածքը մարդկության հետ: Աստված միշտ ձեռնարկում է նախաձեռնությունը, սահմանում է օրակարգը և հիմք է տալիս ուխտի համար, սակայն մարդիկ պարտավոր են նախապես արձագանքել և շարունակել պատասխանել:

Մնալը դա ուխտի պահանջ է, բայց նաև հրաշալի խոստում (տես Հովհ.15): Պատկերացրեք տիեզերքի Ստեղծիչին, Իսրայելի Սուրբին, ով ապրում է մեղավոր մարդկանց մեջ (տես Հովհ. 14:23): Տեսեք Հատուկ Թեմա: Մնալ, Կենալ 2: 10:

4:16 «մենք ճանաչեցինք եւ հաւատացինք» Այս ԲԱՅԵՐԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ էն: Հավատացյալների վստահ հավատքը Աստծո սիրո արտահայտումն է Քրիստոսում, ոչ թե գոյատևման հանգամանքները, նրանց հարաբերությունների հիմքն էն: Տես Հատուկ Թեմա: Վստահություն 5:13:

▪ **«որ Աստուած ունի մեզ վերայ»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որն արտահայտում է Աստծո շարունակական սերը:

▪ **«Աստուած սէր է»** Այս կարևոր ճշմարտությունը կրկնվում է (տես հ.8):

4:17 «Սորանում է սէրը կատարեալ» Սա հունարեն *telos* բառից է (հմմտ. հ. 12): Այն ենթադրում է լրիվություն, հասունության և ավարտ, այլ ոչ թե անմեղություն:

▪ **«մեզ հետ»** Այս ՆԱԽԴԻՐԸ (*meta*) կարելի է հասկանալ որպես «մեր մեջ» (TEV, NJB), «մեր մեջ» (NKJV, NRSV, NIV, REB) կամ «մեզ հետ» (NASB):

▪ **«որ համարձակութիւն ունենանք»** Սկզբում այս տերմինը նշանակում էր խոսքի ազատություն: Հովհաննեսը լայնորեն օգտագործում է սա (տես 2:28; 3:21; 5:14): Սա խոսում է համարձակությամբ սուրբ Աստծուն մոտենալու մասին (տես Եբր. 3:6; 10:35): Տես Հատուկ Թեմա 2: 28:

▪ **«դատաստանի օրումը. որովհետեւ ինչպէս նա է, այնպէս էլ մենք ենք այս աշխարհքումը»** Քրիստոնյաները պետք է սիրեն այնպես, ինչպես Հիսուսը սիրեց (տես 3:16; 4:11): Նրանք կարող է մերժվեն և հալածվեն, ինչպես որ Նա էր, բայց նաև սիրված և հաստատված Հոր և Հոգու կողմից,

ինչպես որ Նա էր: Մի օր բոլոր մարդիկ հաշիվ են տալու Աստծուն՝ կյանքի պարզևի համար (տես Մատթ. 25:31-46; II Կոր. 5:10; Հայտ. 20: 11-15): Դատաստանի օրը վախ չունեն նրանք, ովքեր Քրիստոսի մեջ են:

4:18 «Վախ չ'կայ սերի մեջ» Երբ մենք ճանաչում ենք Աստծուն որպես Հայր, մենք այլևս չենք վախենում Նրանից որպես դատավոր: Շատերը, եթե ոչ բոլորը, քրիստոնեության փոխակերպումը ներառում է վախը՝ վախ դատաստանից, դատապարտությունից, դժոխքից: Մակայն հրաշալի բան է տեղի ունենում փրկված մարդկանց կյանքում. Ինչը սկսվում է վախով, չի ավարտվում վախով:

▪ **«Վախը տանջանք ունի»** Սա հազվագյուտ բառ է օգտագործված միայն այստեղ և Մատթ. 25:46 (ԲԱՅԱԶԵՎԸ II Պետ. 2:9 է), որը նաև վախճանաբանական նշանակություն ունի: ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԸ ենթադրում է, որ Աստծո բարկության վախը թե ժամանակավոր է (ժամանակի մեջ) և թե վախճանաբանական (ժամանակի վերջում) է: Մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով (տես Ծննդ. 1: 26-27), որը վերաբերվում է անձի, գիտելիքի, ընտրության և հետևանքների ասպեկտներին: Սա բարոյական տիեզերք է: Մարդիկ չեն խախտում Աստծո օրենքները: Նրանք խախտում են իրենց Աստծո օրենքների մեջ:

4:19 «Մենք սիրենք» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է: NKJV ավելացնում է ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ «մենք սիրում ենք» հետո: ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ համար ձեռագրերի տարբերակները հետևյալն են.

1. մեկ երկաթազիր հունարեն ձեռագրում (Տ) «Աստված» (*ton theon*) տրամադրվում է
2. Մ «Նրան» (*auton*) տրամադրվում է (KJV)
3. Վուլգատում «մեկը մյուսին» տրամադրվում է

Այս ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ կարող են հետագայում լրացումներ լինել: UBS⁴ ԲԱՅԻՆ տալիս է միայն «A» վարկանիշ (որոշակի):

▪ **«որովհետև առաջ նա սիրեց մեզ»** 10 համարը կրկնվող շեշտադրում է: Աստված միշտ նախաձեռնում է (տես Հովհ. 6: 44,65), բայց մեղավոր մարդը պետք է արձագանքի (տես Հովհ. 1:12; 3:16): Հավատացյալները վստահում են Նրա հուսալիությունը և հավատում են Նրա հավատարմությանը: Սուրբ Երրորդության սիրող, գործող, հավատարիմ բնույթը փրկված մարդկության հույսն ու հավատն է:

4:20 «Եթե մեկն ասէ» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Սա Հովհաննեսի մեկ այլ օրինակ է, մեջբերելով կեղծ ուսուցիչների հայտարարությունները, որպեսզի հասկացնի իր ասելիքը (կարդա 1: 6,8,10: 2: 4,6): Այս գրական տեխնիկան կոչվում է սուր քննադատություն (կարդա Մաղաքիա, Հոմեացիս և Հակոբոս):

▪ **«Միրում եմ Աստուծուն եւ իր եղբորն ասեմ»** Մեր սիրո ապրելակերպը հստակորեն բացահայտում է մեր քրիստոնյա լինելը (տես Մարկ. 12:28-34): Կոնֆլիկտը հնարավոր է, բայց արմատացած ատելությունը՝ ոչ (ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ): Տես Հատուկ Թեմա: Ռասիզմ Հովհ. 4: 4:

▪ **«նա ստախոս է»** Հովհաննեսը մի քանի «ենթադրյալ» հավատացյալների կոչում է ստախոսներ (տես 2: 4,22; 4:20): Հովհաննեսը նաև ասում է, որ նրանք, ովքեր քարոզում են կեղծ ճշմարտությունները, Աստծուն ստախոս են դարձնում (տես 1: 6,10; 5:10): Նրանք, անշուշտ, ինքնախաբոյ կրոնասերներ են:

4:21 Այս համարը ամփոփում է գլուխը: Մերը ճշմարիտ հավատացյալի ոչ կեղծ լինելու վկայությունն է: Ատելությունը չարի գավակի վկայությունն է: Կեղծ ուսուցիչները բաժանում էին հոտը և առաջացնում էին հակամարտություն:

- «եղբորը» Պետք է ընդունել, որ «եղբայր» տերմինը երկիմաստ է: Դա կարող է նշանակել «հավատակից քրիստոնյա» կամ «ընկեր»: Սակայն Հովհաննեսի «եղբայր» կրկնակի օգտագործումը հավատացյալների համար նշանակում է առաջին իմաստը (տես I Տիմ.4:10):

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտորոյթյան մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Թվարկեք ճշմարիտ քրիստոնեության երեք հիմնական ստուգարքները:
2. Ինչպե՞ս իմանալ, թե ով է իսկապես խոսում Աստծուց:
3. Թվարկեք ճշմարտության երկու աղբյուրները (սուբյեկտիվ և օբյեկտիվ):
4. Ի՞նչ է նշանակում «Աշխարհի Փրկիչ» անունը:
5. Թվարկեք այն գործողությունները, որոնք բացահայտում են ստախտսներին (այսինքն, կեղծ հավատացյալներին):

I ՀՈՎՀԱՆՆԵՄ 5

ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՍԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հավատքը հաղթանակ է աշխարհի վրա	Հավատքով հնազանդություն 4:20-5:5	Հաղթական հավատք	Մեր հաղթանակը աշխարհի վրա	
5:1-5		5:1-5	5:1-5	Հավատքի աղբյուրը
Որդին վերաբերվող վկայությունը	Աստծո վկայության անտարակուսելի փաստը		Վկայություն Հիսուս Քրիստոսի մասին	5:5-13
5:6-12	5:6-13	5:6-12	5:6-12	
Հավիտենական կյանքի գիտությունը		Եզրափակում	Հավիտենական կյանք	
5:13-15	Վստահության և կարեկցանք աղոթքի մեջ 5:14-17	5:13 5:14-17	5:13-15	Աղոթք մեղավորների համար 5:14-17
5:16-17	Իմանալ ճշմարտությունը, մերժել սուտը		5:16-17	Նամակի ամփոփումը
5:18-21	5:18-21	5:18-20	5:18 5:19 5:20	5:18-21
		5:21	5:21	

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի թո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ 5:1-4

¹ Ամեն ով որ հաւատում է թէ Յիսուսն է Քրիստոսը, Աստուածանից է ծնուած եւ ամեն ով որ ծնողին սիրում է, նորանից ծնուածին էլ սիրում է: ²Սորանով ենք ճանաչում թէ Աստուծոյ որդիներին սիրում ենք, երբոր սիրում ենք Աստուծուն, եւ նորա պատուիրանքները պահում: ³Որովհետեւ սա է Աստուծոյ սերը որ նորա պատուիրանքները պահենք. եւ նորա պատուիրանքները ծանր չեն: ⁴Որովհետեւ ամեն ով որ Աստուածանից է ծնուած յաղթում է աշխարհքին. Եւ սա է յաղթութիւնն, որ աշխարհքին յաղթեց, այսինքն մեր հաւատքը:

5:1 «Ամեն ով որ» (Երկու անգամ) *pas* տերմինը կրկնվում է I Հովհ. (տես I Հովհ. 2:29; 3: 3,4,6 [երկու անգամ] 9,10; 4: 7; 5: 1): Ոչ որ դուրս չի մնում Հովհաննեսի սև կամ սպիտակ աստվածաբանական կատեգորիաներից: Սա Աստծո համընդհանուր հրավերն է, որ ընդունեն Հիսուս Քրիստոսին (տես Հովհ.1:12; 3:16; I Տիմ. 2: 4; II Պետ. 3:9): Սա նման է Պողոսի հրաշալի հրավերին Հռ. 10: 9-13:

▪ **«հաւատում է»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սա հունարեն (ԳՈՅԱԿԱՆ - *pistis*, ԲԱՅ - *pisteuō*) բառն է, որը կարող է թարգմանվել «հավատք», «վստահություն» կամ «հավատամք»: Սակայն, I Հովհ. և Հովվական Թղթերում (I & II Տիմոթեոս, Տիտոս) հաճախ օգտագործվում է վարդապետական բովանդակության իմաստով (տես Հուդա հհ 3,20): Ավետարաններում և Պողոսի Թղթերում այն օգտագործվում է անձնական վստահության և նվիրվածության համար: Ավետարանը դա և ճշմարտություն է, որին պետք է հավատալ, և թե անձ, ում կարելի է վստահել, ինչպես I Հովհ. և Հակոբոսը հստակեցնում են, որ կյանքն ու ծառայությունը պետք է ապրել: Տես Հատուկ Թեմա Հովհ. 2:23:

▪ **«թէ Յիսուսն է Քրիստոսը»** Կեղծ ուսուցիչների սխալների էությունը կենտրոնում է Հիսուսի անձի և գործի շուրջ, ով նաև կատարյալ Աստված էր (հմմտ. հ. 5): Հիսուս Նագովրեցին խոստացված Մեսիան է: Մեսիան զարմանալիորեն (այսինքն ՀԿ-ից) նաև Աստված էր: Այս արտահայտությունը երդում էր, հնարավոր է, մկրտության ժամանակ (տես 2:22), ավելացված արտահայտությամբ «Աստծո Որդին» (տես 4:15; 5: 5): Հավանական է այս պնդումը Հիսուսի Մեսիա լինելը կապված է Հին Կտակարանի մարդկանց հետ (այսինքն, հրեաներ, նորահավատներ և աստվածավախ մարդիկ):

▪ **«Աստուածանից է ծնուած»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որն ընդգծում է գործողության գազաթնակետը, արտաքին ուժի կողմից ստեղծած (Աստված, հմմտ. հհ.4, 18, 2:29) մշտական վիճակի:

-
- NASB “սիրում է Իրենից ծնված զավակին”
- NKJV “նրանից ծնվածին էլ սիրում է”
- NRSV “սիրում է ծնողին սիրում է զավակին”
- TEV “սիրում է հորը սիրում է նաև իր զավակին”
- NJB “սիրում է հորը սիրում է որդուն”

Այս արտահայտությունը, հավանաբար, վերաբերում է Հիսուսին սիրող Հորը, քանի որ օգտագործում է (1) ԵԶԱԿԻ ԹԻՎ, (2) ԱՕՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ և 3) կեղծ ուսուցիչների փորձերը աստվածաբանորեն Հիսուսին բաժանում են Հորից: Այնուամենայնիվ, դա կարող էր վերաբերել քրիստոնյաների միմյանց սիրելու կրկնվող թեմաներին (տես հ.2), որովհետև մենք բոլորս ունենք մեկ Հայր:

5:2 Այս համարը, 3-րդ համարի հետ միասին, կրկնում է I Հովհ. հիմնական թեմաներից մեկը: Սերը՝ Աստծո սերը արտահայտվում է շարունակական սիրով (տես 2: 7-11; 4: 7-21) և հնազանդությամբ (տես 2: 3-6): Ծանոթացեք ճշմարիտ հավատացյալի փաստերին:

1. սիրում է Աստծուն
2. սիրում է Աստծո զավակին (հ.1)
3. սիրում է Աստծո զավակներին (հ.2)
4. հնազանդվում է (հհ. 2,3)
5. հաղթահարում է (հհ.4-5)

5:3 «Որովհետև սա է Աստուծոյ սերը որ նորա պատուիրանքները պահենք» ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ կարող է լինել ՕԲՅԵԿՏԻՎ կամ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ կամ համադրություն: Մերը զգացմունքային չէ, այլ գործողություն, թե Աստծու կողմից և թե մեր: Հնազանդությունը շատ կարևոր է (տես 2: 3-4; 3: 22,24; Հովհ.14: 15,21,23; 15:10; II Հովհ. 6; Հայտ. 12:17; 14:12):

▪ **«նորա պատուիրանքները ծանր չեն»** Նոր ուխտը ունի պատասխանատվություններ (տես Մատթ. 11: 29-30, որտեղ Հիսուսն օգտագործում է «լուծ» բառը, ռաբբիներն օգտագործում էին այն Մովսեսական օրենքների համար, Մատթ. 23:4): Դրանք առաջանում են Աստծո հետ մեր փոխհարաբերություններից, բայց չեն ձևավորում այդ հարաբերությունների հիմքը, որը հիմնված է Աստծո շնորհք ի վրա, այլ ոչ թե մարդու գործերի կամ արժանիքների վրա (տես Եփ. 2: 8-9,10): Հիսուսի ուղեցույցները շատ տարբեր են կեղծ ուսուցիչներից, որոնք կամ չունեն կանոններ (հակօրինական) կամ ունեն չափից շատ կանոններ (օրինականներ): Ես պետք է խոստովանեմ, որքան ավելի երկար եմ ծառայում Աստծուն, ծառայելով Իր ժողովրդին, ես ավելի ու ավելի վախենում եմ ազատականության և օրինականության երկու ծայրահեղություններից:

Տես Հատուկ Թեմա: Հովհաննես գրվածքներում «Պատվիրան» բառի օգտագործումը Հովհ. 12:50:

5:4

NASB, NKJV,

NRSV

“Որովհետև ամեն ով որ Աստծուց է ծնված”

TEV, NJB

“դարձավ Աստծո ամեն զավակ”

Հունարեն տեքստը «բռնորը» (*pas*) բառը դնում է սկզբում շեշտադրման համար, ինչպես հ. 1: ԶԵՁՈՔ ԵԶԱԿԻՆ (*pan*) օգտագործվում է, որը թարգմանվում է «ինչ որ»: Այնուամենայնիվ, կոնտեքստը պահանջում է անձնական նշանակություն (այսինքն, ընդհանուր իմաստ), քանի որ այն համակցված է «ծնված» բառի հետ, որն էլ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Նա, ով հավատում է Հիսուսին և ծնվել է Աստծուց, հաղթում է աշխարհին (տես 4: 4; 2: 13,14):

▪ **«յաղթում է աշխարհին»** «Հաղթում է» *nikaō* բառի ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆՆ է (տես 2: 13,14; 4: 4; 5: 4,5): Նույն արմատը օգտագործվում է երկու անգամ հ.4:

1. ԳՈՅԱԿԱՆԸ, «հաղթանակ», *nikē*
2. ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, *nikaō*, «հաղթել է»

Հիսուսն արդեն նվաճել է աշխարհը (ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ, տես Հովհ.16:33): Քանի որ հավատացյալները գտնվում են Նրա հետ միության մեջ, նրանք նաև ունեն ուժ հաղթելու աշխարհին (տես 2: 13-14; 4: 4):

«Աշխարհ» տերմինը այստեղ նշանակում է «մարդկային հասարակություն, որը կազմակերպված է և գործում է Աստծուց հեռու»: Անկախության վերաբերմունքը մեղքի և մարդկային ապստամբության էությունն է (տես Ծննդ. 3): Տես Հատուկ Թեմա: Հովհ.14:17:

▪ **«յաղթութիւնն»** Սա (*nikos*) ԲԱՅԻ ԳՈՅԱԿԱՆԻ ձևն է «հաղթել է»: Համար 4-ի վերջում օգտագործվում է նույն արմատից ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԸ: Այնուհետև հ.5 օգտագործվում է *nikos* բառի մեկ այլ ԴԵՐԲԱՅԻ ձև: Հավատացյալները հաղթողներ են և շարունակում են հաղթել աշխարհում Քրիստոսի հաղթանակով: «*nike*» բառը, որն այսօր հայտնի է որպես թենիսի կոշիկ արտադրող ընկերություն, հաղթանակի աստվածուհու հունարեն անունն է:

- **«մեր հաւատքը»** Սա Հովհաննէսի բոլոր գրվածքներում «հավատք» (*pistis*) տերմինի ԳՈՅԱԿԱՆ ձևի միակ օգտագործումն է: Հնարավոր է, Հովհաննէսն անհանգստացած էր «ճիշտ աստվածաբանության» վրա դրված շեշտադրության համար, քան (որպես հավատալիքների համակարգ) ամենօրյա Քրիստոսանմանության: (*pisteuō*) ԲԱՅՇ լայնորեն օգտագործվում է Հովհաննէսի կողմից: Մեր հավատքը հաղթանակ է բերում, քանի որ
 1. դա կապված է Հիսուսի հաղթանակի հետ
 2. դա կապված է Աստծո հետ մեր նոր հարաբերությունների հետ
 3. դա կապված է բնակվող Սուրբ Հոգու գործության հետ
 Տես Հատուկ Թեմաներ: Հովհ.1:7; 2:23; և I Հովհ. 2:10:

Արևելյահայերեն Աստվածաշունչ 5:5-12

⁵Եւ ո՛վ է որ յաղթում է աշխարհքին, եթէ ոչ նա, որ հաւատում է, թէ Յիսուսն Աստուծոյ Որդին է: ⁶Սա է որ եկաւ ջրով եւ արինով՝ Յիսուս Քրիստոսը. Ոչ թէ միայն ջրով, բայց ջրով եւ արինով. Եւ Հոգին է վկայողը. Որովհետեւ Հոգին է ճշմարտութիւնը: ⁷Որովհետեւ երեք են որ [երկնքումը վկայում են, Հայրը եւ Բանը եւ Սուրբ Հոգին. Եւ այս երեքը մի են: ⁸Եւ երեք են որ երկրումը] վկայում են. Հոգին, եւ ջուրը, եւ արինը. Եւ այս երեքը միաբան են: ⁹Եթէ մարդկանց վկայութիւնն ընդունում ենք, Աստուծոյ վկայութիւնն աւելի մեծ է. որովհետեւ սա է Աստուծոյ վկայութիւնն, որ վկայեց իր Որդու մասին: ¹⁰Ով որ հաւատում է Աստուծոյ Որդուն, վկայութիւնն ունի իր անձումը. Ով որ չէ հաւատում Աստուծուն, ստախօս է արեւ նորան. Որովհետեւ չ'հաւատաց այն վկայութեանն, որ Աստուած վկայեց իր Որդու մասին: ¹¹Եւ սա է վկայութիւնը, որ Աստուած յաւիտենական կեանք տուաւ մեզ. եւ այս կեանքը նորա Որդու մէջ է: ¹²Ով որ Որդուն ունի, նա կեանքն ունի. Եւ ով որ Աստուծոյ Որդուն չ'ունի, կեանքը չ'ունի:

5:5 «Յիսուսն Աստուծոյ Որդին է» Այս համարը հստակորեն սահմանում է մեր հավատքի բովանդակությունը, որը հիշատակվում է հ.4: Մեր հաղթանակը մեր դավանության / վստահության խոստովանությունն է Հիսուսի հանդեպ, որը կատարյալ մարդ է և կատարյալ Աստված (տես 4: 1-6): Ուշադրություն դարձրեք, որ հավատացյալները հաստատում են, որ Հիսուսն է (1) Մեսիան (հ.1), (2) Աստծո զավակ (հ. 1); 3) Աստծո Որդին (հ.5, 10); և (4) Կյանքը (տես 1: 2; 5:20): Տես Հատուկ Թեմա 2: 23, որը թվարկում է բոլոր *hoti* բառերը, որոնք կապված են «հավատալ» ԲԱՅԻ հետ:

- **«Աստուծոյ Որդին»** Տես Հատուկ Թեմա 3:8.

5:6 «Սա է որ եկաւ» Սա ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը ընդգծում է Մարմնավորումը (Հիսուսը որպես մարդ և Աստված) և Նրա զոհաբերական մահը, և այս երկուսն էլ կեղծ ուսուցիչները մերժում էին:

- **«ջրով եւ արինով»** Թվում է, թե «ջուրը» վերաբերվում է Հիսուսի ֆիզիկական ծննդին (տես Հովհ. 3: 1-9) իսկ «արյունը»՝ Նրա ֆիզիկական մահվանը: Գնտառիկ կեղծ ուսուցիչների մերժումը Հիսուսի ճշմարիտ մարդեղության կոնտեքստում այս երկու փորձառությունները ամփոփում և բացահայտում են Նրա մարդեղությունը:

Գնտառիկ կեղծ ուսուցիչների (Քերրինթոս) հետ կապված մյուս տարբերակն այն է, որ «ջուրը» վերաբերում է Հիսուսի մկրտությանը: Նրանք պնդում էին, որ «Քրիստոս հոգին» եկավ Հիսուս մարդու վրա Նրա մկրտության ժամանակ (ջուր) և հեռացավ մինչև Հիսուսի մահանալը խաչի վրա (արյուն, տես լավ ամփոփում NASB Study Bible, էջ 1835):

Երրորդ տարբերակը կապված է Հիսուսի մահվան արտահայտության հետ: Գեղարդը պատճառ հանդիսացավ, որ «արյունը և ջուրը» թափվեն (հմմտ. Հովհ. 19:34): Կեղծ ուսուցիչները արժեզրկել էին Հիսուսի փոխանորդ հանդիսացող մահը:

- «**Հոգին է վկայողը**» Սուրբ Հոգու դերն է ավետարանը հայտնել: Նա Երրորդության այն անձն է, որը դատապարտում է մեղքը, առաջնորդում է Քրիստոսին, մկրտում է Քրիստոսի մեջ և հավատացյալի մեջ ձևավորում է Քրիստոսին (հմմտ. Հովհ. 16:7-15): Հոգին միշտ վկայում է Քրիստոսին, ոչ թե Իրեն (հմմտ. Հովհ. 15:26):
- «**Հոգին է ճշմարտութիւնը**» (հմմտ. Հովհ. 14:17; 15:26; 16:13; I Հովհ. 4:6): Տես Հատուկ Թեմաներ 6:55 և 17:3:

5:7 Անգլերեն թարգմանություններում որոշ շփոթմունք կա, թե որտեղ են հհ. 6,7 և 8-ը սկսվում և ավարտվում: KJV 7-րդ համարը ասում է «երկնքում, Հայրը, Բանը և Սուրբ Հոգին և այս երեքը մեկ են», որը բացակայում է ՆԿ հին հունարեն երկաթագիր խոշոր ձեռագրերում՝ Ալեքսանդրիինիուս (A), Վատիկանուս (B) կամ Սինաիթիկոս (Տ), բայց ոչ բյուզանդական ընտանիքի ձեռագրերում: Այն ընդամենը հայտնվում է չորս ուշ փոքրատառ ձեռագրերում:

1. MS 61, 16 դար
2. MS 88, 12 դար, որտեղ հատվածը ձեռագիր տեղադրված է լուսանցքում ավելի ուշ
3. MS 629, 14 կամ 15 դար
4. MS 635, 11 դար, որտեղ հատվածը ձեռագիր տեղադրված է լուսանցքում ավելի ուշ

Այս համարը մեջբերված չէ վաղ Եկեղեցու հայրերից որևէ մեկի կողմից, նույնիսկ Երրորդության վերաբերյալ նրանց վարդապետական բանավեճերում: Այն բացակայում է բոլոր հնագույն տարբերակներից, բացառությամբ վերջին լատիներեն ձեռագրերի ընտանիքից (Սիքստո-Կլեմենտյան/Sixto-Clementine): Այն չկա հին լատիներենում կամ Ջերոմի Վուլգատում: Այն առաջին անգամ հայտնվում է իսպանացի հերետիկ Պրիսկիլայի կողմից, որը մահացել է 385մ.թ: Այն մեջբերվում է Հյուսիսային Աֆրիկայի և Իտալիայի 5-րդ դարում Լատինական հայրերի կողմից: Այս համարը պարզապես ընդգրկված չէ I Հովհ. բնագրի ներշնչված խոսքերում: Մեկ Աստծո (մոնոթեիզմ) աստվածաշնչյան վարդապետությունը, բայց երեք անձերով դրսևորումներով (Հայր, Որդի և Հոգի) չի ազդում այս համարի մերժման վրա: Թեև ճշմարիտ է, որ Աստվածաշունչը երբեք չի օգտագործում «երրորդություն» բառը, շատ աստվածաշնչյան հատվածներ խոսում են Աստվածության բոլոր երեք անձերի մասին, որոնք միասին են գործում:

1. Հիսուսի մկրտության ժամանակ (Մատթ. 3:16-17)
2. մեծ պատվիրանը (Մատթ. 28:19)
3. Հոգին ուղարկվեց (Հովհ.14:26)
4. Պետրոսի Պենտեկոստեի քարոզը (Գործք 2: 33-34)
5. Պողոսի քննարկումը մարմնի և հոգու մասին (Հռ. 8: 7-10)
6. Պողոսի խոսքը հոգևոր պարզկների մասին (I Կոր. 12:4-6)
7. Պողոսի ճանապարհորդական ծրագրերը (II Կոր. 1: 21-22)
8. Պողոսի օրհնությունը (II Կոր. 13:14)
9. Պողոսի խոսքը ժամանակի վախճանի մասին (Գաղ. 4: 4-6)
10. Պողոսի փառաբանության աղոթքը Հորը գովաբանելու համար (Եփ. 1: 3-14)
11. Պողոսի խոսքը հեթանոսների նախկինում օտար լինելու մասին (Եփ. 2:18)
12. Պողոսի քննարկումները Աստծո մեկ լինելու մասին (Եփ. 4:6-6)
13. Պողոսի խոսքը Աստծո բարության մասին (Տիտ. 3: 4-6)
14. Պետրոսի ներածությունը (I Պետ. 1: 2)

Տես Հատուկ Թեմա: Երրորդություն Հովհ. 14:26:

5:8 «Հոգին, եւ ջուրը, եւ արինը. Եւ այս երեքը միաբան են» Հին Կտակարանում երկու կամ երեք վկաներ էին հարկավոր՝ մի հարց հաստատելու համար (տես 2 Օրին. 17:6; 19:15): Այստեղ Հիսուսի կյանքի պատմական իրադարձությունները տրվում են որպես վկայություն, Նրա կատարյալ մարդ և կատարյալ Աստված լինելու մասին: Այս համարում «ջուր» և «արյուն» կրկին հիշատակվում են «Հոգու» հետ միասին: «Ջուր» և «արյուն» տերմինները նշված են հ.6: 6: «Հոգին» կարող է վերաբերել Հիսուսի մկրտությանը, երբ աղավնին իջավ ներքև: Որոշ տարաձայնություն կա հստակ պատմական ակնարկի, թե այդ երեքից յուրաքանչյուրը ինչ է ներկայացնում: Դրանք պետք է, որ կապված լինեն կեղծ ուսուցիչների Հիսուսի ճշմարիտ մարդ լինելու մերժման հետ:

5:9 «Եթէ» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրվում է ճշմարտություն հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Այն եկեղեցիները, որոնց գրում էր Հովհաննեսը շփոթված էին, քանի որ, ըստ երևույթին, լսել էին գնոստիկ ուսուցիչների քարոզչությունը կամ ուսուցումը:

▪ **«Եթէ մարդկանց վկայութիւնն ընդունում ենք, Աստուծոյ վկայութիւնն աւելի մեծ է»** կոնտրաստում այս աստվածային վկայությունը վերաբերում է

1. Սուրբ Հոգու վկայությանը
2. Առաքյալի վկայությունը, Հիսուսի երկրային կյանքի և մահվան մասին (օրինակ, 1: 1-3)

▪ **«որ վկայեց իր Որդու մասին»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ենթադրում է անցյալում գործողություն, որն արդեն հասել է զագաթնակետին և մնում է: Սա կարող է վերաբերել Աստծո ձայնի հաստատմանը Հիսուսի մկրտության ժամանակ (տես Մատթ. 3:17) կամ Նրա այլակերպության (տես Մատթ. 17:5; Հովհ. 5:32, 37; 8:18) կամ երկուսն էլ, որոնք արձանագրված են Սուրբ Գրքում (այսինքն, Ավետարանները): Տես Հատուկ Թեմա: Վկայել Հիսուսին Հովհ. 1: 8:

5:10 «վկայութիւնն ունի իր անձումը» Հնարավոր է մեկնաբանել այս արտահայտությունը երկու ձևով:

1. Հոգու սուբյեկտիվ ներքին վկայությունը հավատացյալների մեջ (տես Հռ. 8:16)
2. ավետարանի ճշմարտությունը (տես Հայտ. 6: 10; 12:17; 19:10)

Տես Հատուկ Թեմա. Վկայել Հիսուսին Հովհ. 1: 8:

▪ **«ստախոս է արել նորան»** Սա ևս մեկ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Նրանք, ովքեր մերժում են Հիսուսի մասին առաքյալների վկայությունը, մերժում են Աստծուն (տես հ.12), քանի որ նրանք Աստծուն ստախոս են դարձնում:

▪ **«Որովհետեւ չ'հաւատաց»** Սա ևս մեկ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որն ընդգծում է չձվածի կարգավիճակ:

5:11-12 «որ Աստուած յաիտենական կեանք տուաւ մեզ» Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը խոսում է անցյալի գործողության կամ ավարտված գործողության մասին (տես Հովհ.3:16): Հավիտենական կյանքը սահմանվում է Հովհ.17:3: Որոշ դեպքերում արտահայտությունը վերաբերում է Հիսուսին (տես 1: 2; 5:20), ուրիշ դեպքերում դա Աստծո պարզն է (տես 2:25; 5:11; Հովհ. 10:28), որը ստացվում է Քրիստոսի հավատքի միջոցով (տես 5:13; Հովհ. 3:16): Մարդը չի կարող լինել Հոր հետ, առանց Որդու հետ անձնական հավատք ունենալու:

Արևելահայերեն Աստվածաշունչ 5:13-15

¹³Այս բաները գրեցի ձեզ՝ Աստուծոյ Որդու անունին հաւատացեալներիդ, որ գիտենաք թէ յաւիտենական կեանք ունիք: ¹⁴Եւ սա է այն համարձակութիւնը որ ունիք դէպի նորան, թէ ինչ որ նորա կամքի պէս խնայուիմ ենք, լսում է մեզ: ¹⁵Եւ եթէ գիտենք թէ լսում է մեզ, ինչ որ խնայուիմ ենք, գիտենք որ առնում ենք մեր խնայուածքներն, որ խնայեցինք նորանից:

5:13 «անունին հաւատացեալներիդ» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որն ընդգծում է շարունակական հավատքը: Սա անվան օգտագործման կախարդական կամ առեղծվածային ձևը է (ինչպես հրեական միստիկներն էին հիմնվում Աստծո անունների վրա, *Kabbalah*), բայց ՀԿ անունը փոխարինում է այն անձին: Տես Հատուկ Թեմա Հովի. 2:23:

▪ **«որ գիտենաք»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ Է (*oida* ՎԱՂԱԿԱՏԱՐ է, սակայն թարգմանվում է որպես ՆԵՐԿԱ): Մարդու փրկության վստահությունը բանալի գաղափար է և I Հովի. հաճախ արտահայտված նպատակը: Կան երկու հունարեն հոմանիշներ (*oida* և *ginōskō*), որոնք օգտագործվում են նամակում / քարոզներում, որոնք թարգմանվում են որպես «գիտենալ, իմանալ»: Ակնհայտ է, որ վստահությունը բոլոր հավատացյալների ժառանգությունն է: Ակնհայտ է նաև, որ այն ժամանակվա տեղական իրավիճակի և մշակութային կոնտեքստի պատճառով հիմա, որ կան ճշմարիտ հավատացյալներ, որոնք չունեն փրկության վստահություն: Այս համարը աստվածաբանորեն նման է Հովհաննես Ավետարանի փակման խոսքերին (տես 20:31):

I Հովի. (5:13-20) փակման կոնտեքստը թվարկում է յոթ բան, որոնք գիտեն հավատացյալները: Ավետարանի ճշմարտությունների մասին նրանց գիտելիքները ապահովում են աշխարհայացք, որը Քրիստոսի հանդեպ անձնական հավատքի հետ համադրված ստեղծում է վստահության հիմք:

1. հավատացյալներն ունեն հավիտենական կյանք (հ.13, *oida*, ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ)
2. Աստված լսում է հավատացյալների աղոթքները (հ.15, *oida*, ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ)
3. Աստված պատասխանում է հավատացյալների աղոթքներին (հ.15, *oida*, ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ)
4. հավատացյալները ծնվում են Աստծուց (հ. 18, *oida*, ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ)
5. հավատացյալները Աստծուց են (հ. 19, *oida*, ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ)
6. հավատացյալները գիտեն, որ Մեսիան եկել է և նրանց տվել է հասկացողություն (հ. 20, *oida*, ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ)
7. հավատացյալները ճանաչում են ճշմարիտին՝ կամ Հորը կամ Որդին (հ. 20, *ginōskō*, ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

- Ա. Կարո՞ղ են քրիստոնյաներն իմանալ, որ իրենք փրկված են (տես I Հովի. 5:13):
I Հովի. ունի երեք ստուգարք կամ փաստեր:
1. Վարդապետական (հավատք) (հհ. 1,5,10; 2: 18-25; 4: 1-6,14-16; 5: 11-12)
 2. Կենսակերպ (հնազանդություն) (հհ. 2-3; 2: 3-6; 3: 1-10; 5:18)
 3. Սոցիալական (սեր) (հհ. 2-3; 2: 7-11; 3: 11-18; 4: 7-12, 16-21)
- Բ. Վստահությունը դարձել է հարանվանական խնդիր
1. Ջոն Կալվինը վստահությունը հիմնավորում է Աստծո ընտրության վրա: Նա ասաց, որ այս կյանքում մենք երբեք չենք կարող վստահ լինել:
 2. Ջոն Ուեյլին վստահությունը հիմնավորում է կրոնական փորձառության վրա:

- Նա հավատում էր, որ մենք ունակ ենք ապրելու վերը նշված մեղքից:
3. Հռոմեական կաթոլիկները և Քրիստոսի Եկեղեցին վստահությունը հիմնավորում է հեղինակավոր Եկեղեցու վրա: Խումբը, որին պատկանում է, վստահության բանալին է:
 4. Ավետարանչականների մեծամասնությունը վստահությունը հիմնավորում է Աստվածաշնչի խոստումների վրա, կապված հավատացյալների կյանքում Հոգու պտուղի հետ (տես Գաղ. 5: 22-23):
- Գ. Կարծում եմ, մեղավոր մարդու հիմնական վստահությունը կապված է ընկնում է Երրորդության կերպարի հետ
1. Հոր Աստծո սերը
 - ա. Հովհ. 3:16; 10: 28-29
 - բ. Հռ. 8: 31-39
 - գ. Եփ. 2: 5, 8-9
 - դ. Փիլ.1:6
 - ե. I Պետ.1: 3-5
 - զ. Հովհ. 4: 7-21
 2. Որդի Աստծո գործերը
 - ա. մահ մեր փոխարեն
 - 1) Գործք 2:23
 - 2) Հռ. 5: 6-11
 - 3) II Կոր. 5:21
 - 4) I Հովհ. 2: 2; 4: 9-10
 - բ. քահանայապետական աղոթք (Հովհ.17:12)
 - գ. շարունակելով միջնորդությունը
 - 1) Հռ. 8:34)
 - 2) Եբր. 7:25)
 - 3) I Հովհ. 2: 1
 3. Հոգի Աստծո ծառայությունը
 - ա. կանչել (Հովհ. 6:44,65)
 - բ. կնքել
 - 1) II Կոր. 1:22; 5: 5
 - 2) Եփ. 1:13-14; 4: 3
 - գ. վստահեցնել
 - 1) Հռ.8: 16-17
 - 2) I Հովհ. 5: 7-13
- Դ. Բայց մարդիկ պետք է արձագանքեն Աստծո ուխտի առաջարկին (սկզբում և շարունակաբար)
1. Հավատացյալները պետք է ետ դառնան մեղքից (ապաշխարություն) դեպի Աստծուն Հիսուսի միջոցով (հավատք)
 - ա. Մարկ.1:15
 - բ. Գործք 3:16, 19; 20:21
 2. հավատացյալները պետք է ընդունեն Աստծո առաջարկը Քրիստոսում
 - ա. Հովհ. 1:12; 3:16
 - բ. Հռ. 5: 1 (և նմանաբանություն 10: 9-13)
 - գ. Եփ. 2: 5, 8-9
 3. հավատացյալները պետք է շարունակեն հավատքով
 - ա. Մարկ. 13:13

- բ. I Կոր. 15:2
- գ. Գաղ. 6:9
- դ. Եբր. 3:14)
- ե. II Պետ. 1:10
- զ. Հուդա 20-21
- է. Հայտ. 2: 2-3,7,10,17,19,25-26; 3: 5,10,11,21
- 4. հավատացյալները երեք թեստերի են ենթարկվում
 - ա. վարդապետական (հհ. 1,5,10; 2: 18-25; 4: 1-6, 14-16)
 - բ. կենսակերպ (հհ 2-3; 2: 3-6; 3: 1-10)
 - գ. սոցիալական (հհ, 2-3; 2: 7-11; 3: 11-18; 4: 7-12, 16-21)
- Ե. Վստահությունը դժվար է քանի որ
 1. հաճախ հավատացյալները փնտրում են որոշակի փորձառություններ, որոնք խոստացված չեն Աստվածաշնչում
 2. հաճախ հավատացյալները լիովին չեն հասկանում ավետարանը
 3. հաճախ հավատացյալները շարունակում են կամայականորեն մեղանչել (տես I Կոր. 3: 10-15; 9:27; I Տիմ. 1:19-20; II Տիմ. 4:10; II Պետ.1:8-11)
 4. որոշակի անհատականության տեսակներ (այսինքն, պերֆեկցիոնիստները/ կատարելության հավատացողները) երբեք չեն կարող ընդունել Աստծո անպայմանական ընդունումը և սերը
 5. Աստվածաշնչում կան կեղծ խոստովանությունների օրինակներ (տես Մատթ. 13:3-23; 7:21-23; Մարկ. 4:14-20; II Պետ. 2:19-20; I Հովհ. 2:18- 19)

5:14 «համարձակութիւնը որ ունինք դէպի նորան» Սա հերթական թեման է (տես 2:28; 3:21; 4:17): Այն արտահայտում է համարձակությունը կամ ազատությունը, որ մենք ունենք Աստծուն մոտենալու համար (տես Եբր.4:16): Տես Հատուկ Թեմա 2: 28:

- **«թէ»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն:
- **«ինչ որ նորա կամքի պէս խնդրում ենք»** Հովհաննեսի խոսքերը, կարծես, անսահմանափակ են, հավատացյալի Աստծուն աղաչելու, կանչելու ունակության մեջ: Ինչպես և ինչի համար է աղոթում ճշմարիտ հավատացյալը մեկ այլ ապացույց է: Այնուամենայնիվ, հետագա քննության ընթացքում հասկանում ենք, որ աղոթքը չի պահանջում մեր կամքը, այլ խնդրում Աստծո կամքը մեր կյանքում (տես 3:22; Մատթ. 6:10; Մարկ. 14:36): Տես լրիվ ծանուցումը 3:22: Տես Հատուկ Թեմա: Աստծո Կամքը Հովհ. 4:34: Տես Հատուկ Թեմա: Աղոթք, Անսահմանափակ, բայց և սահմանափակ 3:22:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԲԱՐԵՆՈՍԱԿԱՆ ԱՂՈՒՔ

- I. Ներածություն
 - Ա. Աղոթքը կարևոր է Հիսուս Քրիստոսի օրինակով
 1. անձնական աղոթք, Մարկ. 1:35; Դուկ. 3:21; 6:12; 9:29; 22:29-46
 2. տաճարի մաքրումը, Մաթ. 21:13; Մարկ. 11:17; Դուկ.19:46
 3. աղոթքի օրինակ, Մաթ. 6:5-13; Դուկ. 11:2-4
 - Բ. Աղոթքը դա հնարավորություն է մեզ համար արտահայտել հստակ գործողությամբ մեր հավատքը, հոգատար Աստծո անձի հանդեպ, որը ներկա է, պատրաստ է և կարող է գործել ի օգուտ մեզ և ուրիշ հավատացյալների, մեր աղոթքների միջոցով:
 - Գ. Աստված Ինքը որոշակի ձևով սահմանափակել է Իրեն, որպեսզի գործի շատ հարցերում և դեպքերում հատկապես Իր զավակների աղոթքներում (հմտ. Հակ.4:2):
 - Դ. Աղոթքի գլխավոր նպատակը դա Եռյակ Աստծո հետ հաղորդակցվել և ժամանակ անցկացնել է:

Ե. Աղոթքի առարկան ինչ որ բան կամ ինչ որ մեկն է, որը վերբերում և մտահոգում է հավատացյալներին: Մենք կարող ենք հավատքով մեկ անգամ աղոթել, կամ էլ կարող ենք աղոթել կրկին անգամներ երբ մտքերը և մտահոգությունները վերադառնում են:

Զ. Աղոթքը կարող է ներգրավել մի քանի տարրեր

1. փառաբանություն և երկրպագություն Եռյակ Աստծուն
2. Գոհություն Աստծուն Իր ներկայության, հաղորդակցության և մեր կարիքները հոգալու համար
3. մեր մեղքերի խոստովանություն, թե անցյալի և թե ներկայի
4. խնդրանք մեր կարիքների կամ փափագների համար
5. բարեխոսություն ուրիշի կարիքների համար Հոր Աստծո մոտ

Է. Բարեխոսական աղոթքը գաղտնիք է: Աստված ավելի շատ է սիրում նրանց, ում համար մենք աղոթում ենք քան մենք, բայց և այնպես մեր աղոթքները հաճախ ենթարկվում են փոփոխության, արձագանքի, կամ կարիքի, ոչ միայն մեր այլ նաև նրանցն էլ:

II. Աստվածաշնչյան նյութ

Ա. Հին Կտակարան

1. Բարեխոսական աղոթքի օրինակներ
 - ա. Աբրահամը բարեխոսում է Սողոմի համար, Ծննդ. 18:22-ից
 - բ. Մովսեսի աղոթքները Իսրայելի համար
 - (1) Ելից 5:22-23
 - (2) Ելից 32:31-ից
 - (3) 2 Օրինաց 5:5
 - (4) 2 Օրինաց 9:18,25-ից
 - գ. Սամուելի աղոթքները Իսրայելի համար
 - (1) I Թագ. 7:5-6,8-9
 - (2) I Թագ. 12:16-23
 - (3) I Թագ. 15:11
 - դ. Ղափիթը աղոթեց իր որդու համար, II Թագ. 12:16-18
2. Աստված փնտրում է բարեխոսողների, Եսայի 59:16
3. Հայտնի, չխոստովանված մեղքը կամ չապաշխարած վիճակը ազդում է մեր աղոթքների վրա
 - ա. Սաղմոս 66:1
 - բ. Առակաց 28:9
 - գ. Եսայի 59:1-2; 64:7

Բ. Նոր Կտակարան

1. Որդու և Սուրբ Հոգու բարեխոսական ծառայությունը
 - ա. Հիսուս
 - (1) Հռոմեացիս 8:34
 - (2) Եբրայեցիս 7:25
 - (3) I Հովի. 2:1
 - բ. Սուրբ Հոգի, Հռոմեացիս 8:26-27
2. Պողոսի բարեխոսական ծառայությունը
 - ա. Աղոթում է հրեաների համար
 - (1) Հռոմեացիս 9:1-ից
 - (2) Հռոմեացիս 10:1
 - բ. Աղոթք եկեղեցիների համար
 - (1) Հռոմեացիս 1:9
 - (2) Եփեսացիս 1:16
 - (3) Փիլիպեցիս 1:3-4,9
 - (4) Կոդոսացիս 1:3,9
 - (5) I Թեսաղ. 1:2-3
 - (6) II Թեսաղ. 1:11
 - (7) II Տիմոթեոս 1:3
 - (8) Փիլեմոն, հ. 4

գ. Պողոսը խնդրում է եկեղեցիներին աղոթել իր համար

- (1) Հռոմեացիս 15:30
- (2) II Կորնթացիս 1:11
- (3) Եփեսացիս 6:19
- (4) Կողոսացիս 4:3
- (5) I Թեսաղ. 5:25
- (6) II Թեսաղ. 3:1

3. Եկեղեցու բարեխոսական ծառայությունը

ա. Աղոթք միմյանց համար

- (1) Եփեսացիս 6:18
- (2) I Տիմոթեոս 2:1
- (3) Հակոբոս 5:16

բ. Աղոթքի խնդրանքներ հատուկ խմբերի համար

- (1) մեր թշնամիների, Մաթ. 5:44
- (2) քրիստոնյա ծառայողների, Եբր. 13:18
- (3) իշխանավորների, I Տիմ. 2:2
- (4) հիվանդների, Հակ. 5:13-16
- (5) հավատքից ընկածների, I Հովհ. 5:16

գ. Աղոթք բոլոր մարդկանց համար, I Տիմ. 2:1

III. Պայմաններ պատասխանված աղոթքի

Ա. Մեր հարաբերությունը Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ

1. Նրա մեջ մնալով, Հովհ. 15:7
2. Նրա անունով, Հովհ. 14:13,14; 15:16; 16:23-24
3. Հոգով, Եփ. 6:18; Հուդա 20
4. Համաձայն Աստծո կամքի, Մաթ. 6:10; I Հովհ. 3:22; 5:14-15

Բ. Մղող շարժառիթները

1. չտատանվելով, Մաթ. 21:22; Հակ. 1:6-7
2. Խոնարհություն և ապաշխարություն, Դուկ. 18:9-14
3. Չար կերպով խնդրել, Հակ. 4:3
4. Եսասիրություն, Հակ. 4:2-3

Գ. Ուրիշ առանձնահատկություններ

1. Համառություն, համբերատարություն
ա. Դուկաս 18:1-8
բ. Կողոսացիս 4:2
գ. Հակոբոս 5:16
2. Շարունակել աղոթել
ա. Մաթեոս 7:7-8
բ. Դուկաս 11:5-13
գ. Հակոբոս 1:5
3. Անհամերաշխություն ընտանիքում, I Պետրոս 3:7
4. Հայտնի մեղքի բացակայություն
ա. Սաղմոս 66:18
բ. Առակաց 28:9
գ. Եսայի 59:1-2
դ. Եսայի 64:7

IV. Աստվածաբանական եզրակացություն

Ա. Ինչպիսի առանձնաշնորհում: Ինչպիսի հնարավորություն: Ինչպիսի պարտավորություն և պատասխանատվություն:

Բ. Հիմուսը մեր օրինակն է: Սուրբ Հոգին մեր ուղեկցորդն է: Հայրը մեզ անհամբեր սպասում է:

Գ. Այն կարող է փոխել քեզ, քո ընտանիքը, քո ընկերներին և աշխարհը:

5:15 «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է (սակայն, *ean* և ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ հետ, տես A. T. Robertson, *Word Pictures in the New Testament*, էջ 243), որը

ենթադրվում է ճշմարիտ հեղինակի տեսանկյունից կամ իր գրական նպատակների համար: Սա անսովոր պայմանական նախադասություն է:

1. *ei* փոխարեն այն ունի *ean* (տես Գործք 8:31; I Թես. 3:8)
2. այն ունի *ean* կապված ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ հետ (այսինքն՝ հարցնել), որը հանդիսանում է սովորական քերականական կառուցվածք ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆԻ համար
3. կան ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՆԵՐ հհ.14 և 16
4. քրիստոնեական աղոթքի աստվածաբանությունը կապված է Աստծո կամքի (հ.14) և Հիսուսի անվան հետ (հ.13)

▪ **«գիտենք»** Սա մեկ այլ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, թարգմանված որպես ՆԵՐԿԱ, որը զուգահեռ է հ.14: Դա հավատացյալի հավաստիացումն է, որ Հայրը լսում և արձագանքում է Իր գավակներին:

Արևելահայերեն Աստվածաշունչ 5:16-17

¹⁶Եթե մեկը տեսնել իր եղբորը որ մեղանչել է եւ այնպիսի մեղքով որ դէպի մահ չէ, թող խնդրէ, եւ Աստուած կեանք կ'տայ նորան այսինքն նորան որ մեղանչել է ոչ թէ դէպի մահ. կայ մեղք որ դէպի մահ է, նորա համար ես չեմ ասում որ խնդրես: ¹⁷Ամեն անիրաւութիւն մեղք է. Եւ կայ մեղք որ դէպի մահ չէ:

5:16 «Եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Համար 16 ընդգծում է, որ անիրաժեշտ է աղոթել մեր հավատակիցների համար (տես Գաղ. 6:1; Հակ. 5:13-18) որոշ առաջարկված սահմանափակումներով (ոչ թե մահացու մեղքի համար), որը, կարծես, կապված է կեղծ ուսուցիչների հետ (տես. II Պետ.2):

▪ **«տեսնել իր եղբորը որ մեղանչել է եւ այնպիսի մեղքով որ դէպի մահ չէ»** Հովհաննեսը թվարկել է մեղքի մի քանի կատեգորիաներ: Ոմանք վերաբերում են (1) մարդու հաղորդակցությունը Աստծո հետ, (2) մարդու հաղորդակցությունը այլ հավատացյալների հետ; և (3) մարդու հաղորդակցությունը աշխարհի հետ: Հիմնական մեղքը՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ վստահության / հավատքի մերժումն է: Սա մեղք է, որը տանում է մահվան: W. T. Connors *Christian Doctrine*, ասում է.

«Սակայն սա չի նշանակում անհավատություն՝ վարդապետությունը կամ դոգման չընդունելու իմաստով: Դա անհավատություն է, երբ մարդը մերժում է բարոյական և հոգևոր լույսի մեջ, մասնավորապես, երբ այդ լույսը մարմնավորում է Հիսուս Քրիստոսում: Դա Աստծո վերջնական Իր մասին հայտնության մերժումն է, որը կատարվել է Քրիստոսի մեջ: Երբ այս մերժումը դառնում է հստակ և ցանկալի կամավոր, այն դառնում է մահացու մեղք (I Հովհ. 5: 13-17): Դա դառնում է բարոյական ինքնասպանություն: Այն արտահայտում է սեփական հոգևոր աչքերը: Դա տեղի չի ունենում, բացառությամբ բարձր լուսավորման դեպքում: Դա դիտավորյալ, հոժարակամ և չարամտորեն Քրիստոսին մերժել է, որպես Աստծո հայտնություն՝ իմանալով, որ նա այդպիսի հայտնություն է: Այն դիտավորյալ կոչում է սպիտակ սև» (էջ 135-136):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ՈՐՆ Է ՄԱՀԱՅՈՒ ՄԵՂՔԸ

Ա. Հերմենևտիկ նկատառումներ

1. պատշաճ ինքնորոշումը պետք է կապված լինի I Հովհ. պատմական իրավիճակի հետ
ա. գնոստիկ կեղծ ուսուցիչների ներկայությունը եկեղեցիներում (տես 2:19,26; 3:7, II Հովհ.7)
(1) «Քերրինթուսյան/Cerinthian» գնոստիկները սովորեցնում էին, որ Հիսուսը մարդը ստացավ Քրիստոսի հոգին իր մկրտության ժամանակ և Քրիստոսի

- հոգին հեռացավ մինչև խաչի վրա մահանալը (տես 5: 6-8)
- (2) դոկետիկ գնոստիկները սովորեցնում էին, որ Հիսուսը աստվածային հոգի էր, ոչ թե իրական մարդը (տես 1: 1-3)
- (3) Երկրորդ դարի գրվածքներում հայտնաբերված գնոստիցիզմը արտացոլում էր երկու տարբեր տեսակետներ մարդու մարմնի մասին
- ա) քանի որ փրկությունը ճշմարտությունն էր՝ բացահայտված մտքում, մարդկային մարմինը հոգևորին չէր համապատասխանում: Հետևաբար, ինչ էլ որ ցանկանար, կարող էր ունենալ: Դրանք հաճախ անվանվում են անտիֆիզիկական կամ ազատամիտ գնոստիկներ:
- բ) մյուս խումբը եզրակացնում էր, քանի որ մարմինը իրականում չար է (այն է, հունական միտք), ցանկացած մարմնական ցանկությունից պետք է հեռու մնալ: Դրանք կոչվում են ասկետիկ գնոստիկներ:
- բ. այդ կեղծ ուսուցիչները թողել են եկեղեցին (տես 2:19), բայց նրանց ազդեցությունը ոչ պատշաճ ինքնորոշումը պետք է կապված լինի ամբողջ գրքի գրական կոնտեքստին
2. ա. I Հովհ. գրվել է կեղծ ուսմունքների դեմ պայքարելու և ճշմարիտ հավատացյալներին հավատացնելու համար
- բ. այս երկու նպատակները կարելի է տեսնել ճշմարիտ հավատացյալների փորձությունների մեջ
- (1) վարդապետական
- ա) Հիսուսը իրական մարդ էր (տես 1: 1-3; 4:14)
- բ) Հիսուսը իրական Աստված էր (տես 1: 2; 5:20)
- գ) մարդիկ մեղավոր են և պատասխանատու են սուրբ Աստծուն (տես 1: 6, 10)
- դ) մարդիկ նույնպես ներվում են և ուղիղ են կանգում Աստծո առաջ
- i. Հիսուսի մահը (տես 1: 7; 2: 1-2; 3:16; 4: 9-10,14, 5: 6-8)
- ii. հավատք Հիսուսին (տես 1: 9; 3:23; 4:15; 5: 1,4-5,10-12,13)
- (2) գործնական (դրական)
- ա) հնազանդության ապրելակերպ (տես 2: 3-5; 3: 22,24; 5: 2-3)
- բ) սիրո ապրելակերպ (2:10; 3: 11,14,18,23; 4: 7,11-12,16-18,21)
- գ) Քրիստոսանման ապրելակերպ (մեղք չի գործում, տես 1:7; 2:6,29; 3:6-9; 5:18)
- դ) հաղթելով չարին ապրելակերպ (տես 2: 13,14, 4: 4, 5: 4)
- ե) Նրա խոսքը մնում է նրանց մեջ (տես 1:10; 2:14)
- զ) նրանք ունեն Հոգին (տես 3:24; 4: 4-6, 13)
- զ) պատասխանված աղոթք (կարդա 5: 14-15)
- (3) գործնական (բացասական)
- ա) մեղքով ապրելակերպ (տես 3: 8-10)
- բ) ատելության ապրելակերպ (տես 2: 9,11; 3:15; 4:20)
- գ) անհնազանդության ապրելակերպ (տես 2: 4; 3: 4)
- դ) սիրում է աշխարհը (տես 2: 15-16)
- ե) ուրանում է Քրիստոսին (մերժում է Հորը և Որդուն, 2: 22-23; 4: 2-3; 5: 10-12)
3. պատշաճ ինքնորոշումը պետք է կապված լինի համապատասխան տեքստում որոշակի թեմաների հետ (տես 5: 16-17)
- ա. արդյոք հ. 16 «եղբայր» տերմինը վերաբերում է թե մահացու մեղք գործողին և, թե նրանց, որոնց մեղքերը մահացու չեն:
- բ. անարգողներ էին, մի ժամանակ եկեղեցու անդամներ (տես 2:19):
- գ. ինչ է տեքստային նշանակությունը.

- (1) «մեղք» բառի հետ հոդ չկա
- (2) «տեսնել» ԲԱՅԸ որպես ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ հետ:

դ. ինչպես կարող են մեկ քրիստոնյայի աղոթքները (տես Հակ. 5: 15-16) վերականգնել հավիտենական կյանքը «zōē» մի ուրիշ համար՝ առանց մեղավորի անձնական ապաշխարության:

ե. ինչպես է հ.17 կապվում մեղքի տեսակներին (աններելի, ներելի):

Բ. Աստվածաբանական խնդիրները

1. Արդյոք թարգմանիչը պետք է փորձի այս տեքստը կապել

ա. Ավետարանների «աններելի» մեղքը

բ. Եբրայեցիս 6 և 10 «մի անգամ» մեղքը

I Հովհ. կոնտեքստը կարծես զուգահեռ է Հիսուսի օրվա փարիսեցիների աններելի մեղքին (տես Մատթ. 12:22-37; Մարկ. 3: 2-29), ինչպես նաև Եբր. 6 և 10 գլուխների անհավատ հրեաներին: Բոլոր երեք խմբեր (փարիսեցիները, անհավատ հրեաները և գնոստիկ կեղծ ուսուցիչները) հստակ լսեցին ավետարանը, բայց հրաժարվեցին հավատալ Հիսուս Քրիստոսին:

2. Արդյոք ժամանակակից դավանաբանական հարցերը աստվածաբանական ցանցն են՝ այս տեքստը դիտելու համար:

Ավետարանչականությունը չափից շատ ընդգծեց քրիստոնեական փորձառության սկիզբը և անտեսեց ճշմարիտ հավատքի շարունակական ապրելակերպի ապացույցները: Մեր ժամանակակից աստվածաբանական հարցերը կցնցեին առաջին դարի քրիստոնյաներին: Մենք ցանկանում ենք «համոզվածություն» հիմնված ընտրված աստվածաշնչյան «ապացուցող- տեքստերի» և մեր իսկ տրամաբանական եզրակացությունների կամ դավանաբանական կողմնակալության վրա:

Մեր աստվածաբանական հարցերը, ցանցերը և առանձնահատկությունները արտացոլում են մեր անվստահելիությունները: Մենք ուզում ենք ավելի շատ տեղեկություններ և պարզաբանումներ, քան որ Աստվածաշունչն է տալիս, ուստի մեր սիստեմատիկ աստվածաբանությունները վերցնում են աստվածաշնչյան որոշ փոքրիկ կտորներ և վերածում տրամաբանական, արևմտյան, կոնկրետ վարդապետությունների հսկայական ցանցերի:

Մատթ. 7 և Մարկ. 7 Հիսուսի խոսքերը բավարար էին վաղ եկեղեցու համար: Հիսուսը փնտրում էր աշակերտներ, ոչ թե որոշումներ, երկարաժամկետ հավատքի ապրելակերպ, այլ ոչ թե կարճաժամկետ էմոցիոնալ հավատք (տես Մատթ. 13:10-23; Հովհ. 8: 31-59): Քրիստոնեությունը մեկուսացած անցյալի գործողություն չէ, այլ շարունակական ապաշխարություն, հավատք, հնազանդություն և հաստատակամություն: Քրիստոնեությունը երկնքի տոմս չէ, անցյալում ձեռք բերված, ոչ էլ հրդեհային ապահովագրության քաղաքականություն՝ պաշտպանելու եսասեր, անաստված ապրելակերպից:

3. Արդյոք մահացու մեղքը վերաբերում է ֆիզիկական մահվանը, թե՞ հավիտենական: Այս կոնտեքստում Հովհաննեսը օգտագործումը է zōē, նշանակում է, որ հակադրությունը վերաբերում է հավիտենական մահվանը: Հնարավոր է արդյոք, որ Աստված տուն ընդունի (ֆիզիկական մահ) մեղավոր զավակների: Այս կոնտեքստի իմաստն այն է, որ (1) հավատակից եղբայրների աղոթքները և 2) մեղավորի անձնական ապաշխարությունը միավորվելով վերականգնում են հավատացյալներին, բայց եթե նրանք շարունակում են ապրել այնպիսի կյանքով, որը նախատինք է բերում հավատացյալ համայնքին, ապա արդյունքը կարող է լինել այս կյանքից վաղաժամ ֆիզիկապես հեռանալը (տես *When*

▪ **«Աստուած կեանք կ'տայ նորան»** Այստեղ աստվածաբանական և բառային խնդիրն այստեղ «կյանքի» (*zoē*) տերմինի իմաստն է: Սովորաբար Հովհաննեսի գրվածքներում սա վերաբերում է հավիտենական կյանքին, բայց այս կոնտեքստում կարծես թե նշանակում է առողջության վերականգնում կամ ներում (այսինքն, շատ նման է Հակոբոսի «փրկել» բառին Հակ. 5: 13-15): Այն անձը, ում համար աղոթք է արվել կոչվում է «եղբայր», որը հասակորեն նշանակում է հավատացյալ (Հովհաննեսը օգտագործում է տերմինը իր ընթերցողների համար):

5:17 Բոլոր մեղքերը լուրջ են, բայց բոլոր մեղքերը կարող են ներվել ապաշխարության միջոցով (սկզբնական, տես Մարկ.1:15; Գործք 20:21; շարունակական, տես I Հովհ.1: 9) և Քրիստոսին հավատալով, բացի անհավատության մեղքը:

Արևելահայերեն Աստվածաշունչ 5:18-20

¹⁸Գիտենք որ ամեն ով որ Աստուածանից է ծնուած, մեղք չէ գործում, բայց նա որ Աստուածանից է ծնուած, իր անձը պահում է, եւ չարք չէ մօտենում նորան: ¹⁹Գիտենք որ Աստուածանից ենք, եւ բոլոր աշխարհքը չարութեան մէջ է կենում: ²⁰Եւ գիտենք որ Աստուծոյ Որդին եկաւ եւ մեզ միտք տուաւ, որ ճշմարիտը ճանաչենք. Եւ ճշմարիտումն ենք, այսինքն նորա որդի Յիսուս Քրիստոսումը, նա է ճշմարիտ Աստուածը եւ յաիտենական կեանքը:

5:18 «Գիտենք» Տեսք նշումները երկրորդ պարբերությունում 5: 13

▪ **«ամեն ով որ Աստուածանից է ծնուած, մեղք չէ գործում»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սա 3: 6 և 9 սև և սպիտակ հավաստիացումն է: Հավիտենական կյանքը ունի տեսանելի հասկանիչներ: Անտիոնիան կեղծ ուսուցիչների պարելակերպը բացահայտում է նրանց չփոխված սրտերը (տես Մատթ. 7):

Հովհաննեսը դիմում էր երկու տարբեր կեղծ ուսուցիչների: Նրանք, ովքեր մերժում էին մեղքի ներգրավվածությունը (տես 1: 8-2: 1) և մեկ այլ խումբ, որը պարզապես մեղք չէին գործում (տես 3: 4-10 և այստեղ): Մեղքը պետք է նախապես խոստովանվի և բացառապես խուսափվի: Մեղքը խնդիրն է, խնդիր է և մշտական խնդիր (տես 5:21):

Bruce Metzger, *A Textual Commentary of the Greek New Testament* (էջ 718) հաստատում է, որ ձեռագրերի տարբերակը հիմնված է այն բանի վրա, թե արտագրողը ինչ էր մտածում «Աստծուց ծնված» արտահայտության մասին:

1. Հիսուսը, ապա *auton* համապատասխանում է լավագույնը (A *, B *)
2. հավատացյալները, ապա *eauton* համապատասխանում է լավագույնը (Տ, A^o)

UBS⁴ # 1-ին տալիս է «B» վարկանիշ (գրեթե որոշիչ):

▪ **«բայց նա որ Աստուածանից է ծնուած, իր անձը պահում է»** Առաջին ԲԱՅՑ ԱՕՐԻՍ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը ենթադրում է ավարտված գործողություն, որը կատարվում է արտաքին գործող անձի կողմից (այսինքն, Հոգին, տես. Հռ. 8:11): Սա վերաբերվում է Մարմնացմանը:

Երկրորդ ԲԱՅՑ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է «նրան» (*auton*) հետ: Սա բառացիորեն «Աստծուց ծնվածը շարունակում է պահել իրեն»: Սա վերաբերում է Քրիստոսի մշտական հավատացյալին պահելու մասին: Այս թարգմանությունը հետևում է A * և B * հին հունարեն երկարազիր ձեռագրերին: Այս մեկնաբանությունը գտնվում է NASB, RSV և NIV անգլերեն թարգմանություններում:

Տ և A^o ձեռագրերը ունեն ևս մեկ ԴԵՐԱՆՈՒՆ, «պահում է իրեն» (*eauton*), ինչը ենթադրում է, որ Աստծուց ծնվածն ունի որոշակի պատասխանատվություն իրեն պահելու համար: «Ծնվել է» ԲԱՅՑ,

որն օգտագործված է այստեղ է, ուրիշ ոչ մի տեղ չի օգտագործվում Հիսուսի համար: Անդրադարձ գաղափարը օգտագործվում է հավատացյալների համար 3: 3 և 5:21: Սրան հետևում է KJV և ASV անգլերեն թարգմանությունները:

-
- NASB “և չարը չի դիպչի նրան”
- NKJV “անօրենը չի դիպչի նրան”
- NRSV “չարը չի դիպչում նրանց”
- TEV “Չարը չի կարող վնասել նրանց”
- NJB “Չարը չի պահում նրան”

Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, ինչը նշանակում է, որ չարը չի կարող շարունակել «նրան դիպչել»: Այս տերմինի միակ այլ օգտագործումը Հովհաննեսի գրվածքներում գտնվում է իր Ավետարանում, 20:17: Դա ակնհայտ է Աստվածաշնչից և փորձից, որ քրիստոնյաները գայթակղվում են, փորձվում են: Այս արտահայտության իմաստի վերաբերյալ երեք խոշոր տեսություններ են եղել:

1. հավատացյալները ազատ են չարի դատապարտությունից, որը հիմնված է օրենքի ոտնահարման վրա (արդարացում)
2. Հիսուսը մեզ համար աղոթում է (տես I Հովհ. 2: 1; Ղուկ. 22: 32-33)
3. Սատանան չի կարող խլել մեզանից մեր փրկությունը (տես Հռ. 8:31-39), թեև նա կարող է խոչընդոտել Աստծո վկայությունը մեր կյանքում և, հնարավոր է, հիմնվելով հհ.16-17, հավատացյալին վաղաժամ տանելու այս աշխարհից:

5:19 «Գիտենք որ Աստուածանից ենք» Սա հավատքի հավաստիացում է, Քրիստոս Հիսուսում հավատացյալի աշխարհընկալումը (տես 4: 6): Բոլորը հիմնված են այս հրաշալի ճշմարտության վրա (տես հ.13): Տես ծանուցում 5: 13:

▪ **«բոլոր աշխարհքը չարութեան մեջ է կենում»** Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ (deponent) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է (տես Հովհ.12:31; 14:30; 16:11; II Կոր.4:4; Եփ. 2: 2; 6:12): Դա հնարավոր է դարձել (1) Ադամի մեղքի պատճառով, 2) սատանայի ապստամբության և (3) յուրաքանչյուր մարդու անձնական մեղքի ընտրության պատճառով:

5:20 «գիտենք» Տեսեք 5: 13 երկրորդ պարբերության ամբողջական նշումը:

▪ **«Աստուծոյ Որդին եկաւ»** Այս ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆԸ հաստատում է Աստծո Որդու մարմնացումը: Մարդկային մարմնով Աստվածը գլխավոր խնդիր էր գնոստիկ կեղծ ուսուցիչների համար, ովքեր պնդում էին նյութի չար լինելը:

▪ **«մեզ միտք տուաւ»** Սա ևս մեկ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հիսուսը, ոչ թե գնոստիկ կեղծ ուսուցիչները, Աստծո մասին անհրաժեշտ պատկերացումն է տվել մարդկանց: Հիսուսը լիովին հայտնեց Հորը Իր կյանքի, Իր ուսմունքների, Իր գործողությունների, Իր մահվան և Իր հարության միջոցով: Նա Աստծո կենդանի Խոսքն է; ոչ ոք չի գալիս Հոր մոտ առանց Նրա (տես Հովհ. 14:6; I Հովհ. 5: 10-12):

▪ **«Ճշմարիտումն ենք, այսինքն նորա որդի Յիսուս Քրիստոսումը եւ, նա է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը»** Առաջին արտահայտությունը «Նրանում, ով ճշմարիտ է», վերաբերում է Հայր Աստծուն (տես Հատուկ Թեմաներ 6:55 և Հովհ.17:3), սակայն երկրորդ արտահայտության մեջ «ճշմարիտ Աստված» ասվածը դժվար է բացահայտել: Կոնտեքստում, ըստ երևույթին, վերաբերում է նաև Հորը, բայց աստվածաբանորեն կարող է վերաբերել Որդուն: Քերականական անորոշությունը կարող է նպաստակային լինել, ինչպես հաճախ է հանդիպում Հովհաննեսի գրվածքներում, որ Հոր մեջ

լինելու համար պետք է լինել Որդու մեջ (տես հ.12): Հոր և Որդու Աստված և ճշմարիտ լինելը (ճշմարտություն) կարող են լինել աստվածաբանական հարված (տես Հովհ. 3:33; 7:28; 8:26): Նոր Կտակարանը հաստատում է Հիսուս Նազովրեցու կատարյալ Աստված լինելը (տես Հովհ.1:1,18; 20:28; Փիլ 2: 6; Տիտ. 2:13 և Եբր. 1:8): Այնուամենայնիվ, գնուստիկ ուսուցիչները նույնպես հաստատել են Հիսուսի աստվածությունը (գոնե աստվածային հոգու բնակվելով):

Արևելահայերեն Աստվածաշունչ 5:21

²¹Որդեակներ, պահեցեք ձեր անձերը կուռքերից:

5:21

NASB “պահեցեք ձեր անձերը կուռքերից”

NKJV, NRSV “պահեք ձեր անձերը կուռքերից”

TEV “ձեզ ապահով պահեք կեղծ աստվածներից”

NJB “հսկեցեք կեղծ աստվածների դեմ”

Սա ԱՕՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է, որն ընդգծում է ընդհանուր ճշմարտությունը: Սա վերաբերում է քրիստոնյաների ակտիվ մասնակցությանը սրբացման մեջ (տես 3: 3), որն արդեն վայելում են Հիսուս Քրիստոսում (տես Եփ.1: 4, I Պետ.1:5):

Կուռքեր տերմինը (որն ընդամենը երկու անգամ է օգտագործվում Հովհաննեսի գրվածքներում, այստեղ և Հայտ. 9:20 ՀԿ մեջբերումը), կամ վերաբերվում է կեղծ ուսուցիչների ուսմունքներին և ապրելակերպին, կամ, քանի որ Մեռյալ Ծովի մագաղաթները օգտագործում են այս տերմինը «մեղքի» իմաստով, «կուռք» և «մեղք» տերմինները կարող են հոմանիշներ լինել:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Թվարկեք երեք խոշոր ստուգարքներ, որոնք հավատացյալներին հավաստիացնում են, որ իրենք Քրիստոսում են:
2. Ի՞նչ են նշանակում «ջուր» և «արյուն» տերմինները հհ. 6 և 8:
3. Կարո՞ղ ենք իմանալ, որ մենք քրիստոնյա ենք: Կա՞նք քրիստոնյաներ, ովքեր չգիտեն:
4. Ո՞ր մեղքն է տանում մահվան: Կարո՞ղ է հավատացյալը գործել այդպիսի մեղք:
5. Արդյո՞ք Աստծո պահող գործությունն է, թե մեր ջանքերը, որ մեզ ազատում են գայթակղությունից:

II ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ *

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ողջույն	Ողջունելով ընտրեալ սիկնոջ		Ներածություն	Ողջուններ
hh. 1-3	hh. 1-3	hh. 1-2 h. 3	hh. 1-3	hh. 1-3
Ճշմարտություն և սեր	Քայլել Քրիստոսի պատվիրանների մեջ		Ճշմարտություն և սեր	Սիրո Օրենքը
hh. 4-11	hh. 4-6 Զգուշացեք հակաքրիստոսի մոլորեցնողներից	hh. 4-6	hh. 4-6	hh. 4-5 h. 6 Քրիստոսի թշնամիները
	hh. 7-11	hh. 7-11	hh. 7-8 hh. 9-11	hh. 7-11
Եզրափակիչ ողջուններ	Հովհաննեսի հրաժեշտի ողջուններ		Եզրափակիչ Խոսքեր	
hh.12-13	hh. 12-13	h. 12 h. 13	h. 12 h. 13	h. 12 h. 13

ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

II Հովհաննեսը ակնհայտորեն կապված է I Հովհաննեսի պատգամին և գրական ոճին: Նրանք, ամենայն հավանականությամբ նույն հեղինակին են՝ գրված միևնույն ժամանակ: Դա բնորոշ է առաջին դարի անձնական նամակներին, քանի որ այն գրվել է մի շարք ձևով և կարող է տեղավորվել մեկ պապիրոսի մեջ:

Քանի որ I Հովհաննեսը գրվել է մի շարք եկեղեցիներին (և որոշ իմաստով, բոլոր եկեղեցիներին), II Հովհաննեսը հասցեագրված է մեկ տեղական եկեղեցու և նրա առաջնորդին (թեև, ՆԿ անձնական նամակների մեծ մասը կարդացվել է ամբողջ եկեղեցում): Դա մի հրաշալի փոքրիկ պատուհան է դեպի առաջին դարի եկեղեցու կյանք Փոքր Ասիայում (Թուրքիա):

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ (տես էջ 4)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Սեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (ժանրը)

*Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և վերլուծել է առաջին գլուխը: Ամեն մի պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Այս թեման յուրաքանչյուր թարգմանված տարբերակում ձևավորվում է իր իսկ ձևով: Կարդալով տեքստը, հարցեր տվեք ինքներդ ձեզ, թե թարգմանություններից, որ մեկն է ավելի համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձեր հասկացողությանը:

Յուրաքանչյուր գլխի ժամանակ դուք նախ պետք է կարդաք Աստվածաշունչը և փորձեք որոշել թեմաները (պարբերությունները): Հետո ձեր հասկացողությունը համեմատեք ժամանակակից թարգմանությունների հետ: Միայն այդ ժամանակ, երբ հասկանաք հեղինակի մտադրությունը, հետևելով նրա տրամաբանությանն ու շարադրանքին, դուք կկարողանաք ճիշտ հասկանալ Աստվածաշունչը: Միայն հեղինակն է ներշնչված – ընթերցողներն իրավունք չունեն փոխել կամ խեղաթյուրել նրա պատգամը/ ուղերձը: Աստվածաշնչի ընթերցողներն պարտավոր են կիրառել ներշնչված ճշմարտությունը ժամանակակից իրավիճակի և իրենց կյանքերի մեջ:

Բոլոր տեխնիկական տերմիններն ու հասպտումները ամբողջությամբ ներկայացված են Հավելված 1,2 և 3 –ում:

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 4)

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Կարդալով տեսար, հարցեր տվեք ինքներդ ձեզ, թե թարգմանություններից, որ մեկն է ավելի համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձեր հասկացողությանը: Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Ամեն մի պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

ԲԱՈՒ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 1-3

¹Երեցը, ընտրեալ Կիրիային, եւ նորա որդիներին, որոնց ես սիրում եմ ճշմարտութիւնով, (եւ ոչ միայն ես, այլ այն ամենն էլ որ ճշմարտութիւնը ճանաչել են:)²Այն ճշմարտութեան պատճառով որ մեզանում մնում է, եւ մեզ հետ կ'լինի յաւիտեան: ³Ձեզ հետ լինի շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն Աստուած Հօրիցը, եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը՝ Հօր Որդուցը, ճշմարտութիւնով եւ սիրով:

h. 1 «Երեցը» Այս կոչումը (*presbuteros*) օգտագործվում է բացահայտելու II և III Հովհաննեսի հեղինակին: Այն ունի լայն իմաստներ Աստվածաշնչում.

Հովհաննեսի գրվածքները ցուցադրում են հեղինակային նշանակումները տարբեր ձևերով:

1. Ավետարանը օգտագործում է թաքուն արտահայտություն «սիրելի աշակերտը»
2. Առաջին նամակը անանուն է
3. Երկրորդ եւ երրորդ նամակներն ունեն «երեց» տիտղոսը կամ կոչումը
4. Հայտնությունը, որը ոչ առանձնահատուկ ապոկալիպտիկ գրվածք է, թվարկում է հեղինակին որպես «Իր Հովհաննես ծառային»

Եղել են շատ քննարկումներ մեկնաբանների և գիտնականների շրջանում այս գրվածքների հեղինակության մասին: Նրանք բոլորն էլ ունեն շատ լեզվական և ոճական նմանություններ և տարբերություններ: Այս պահին չկա ոչ մի բացատրություն՝ ընդունված բոլոր Աստվածաշնչի ուսուցիչների կողմից: Ես պնդում եմ, որ բոլորի հեղինակը Հովհաննես Առաքյալն է, բայց սա հերմենևտիկ հարց է և ոչ թե ներշնչանքի հարց: Իրականում Աստվածաշնչի վերջնական հեղինակը Աստծո Հոգին է: Դա վստահելի հայտնություն է, բայց ժամանակակիցները պարզապես չեն ճանաչում կամ հասկանում դրա գրվածքի կամ ժողովածուի գրական գործընթացը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ: ԵՐԵՑ

1. օգտագործվում է Աստծու հրեշտակների համար, որոնք կազմում են հրեշտակային խորհուրդը (տես Ես. 24:23): Այս նույն տերմինաբանությունն օգտագործվում է Հայտնության հրեշտակային արարածների համար (տես 4: 4,10; 5: 5,6,8,11,14; 7: 11,13; 11:16; 14: 3; 19: 4):
2. օգտագործվում ցեղային առաջնորդների համար (*zaqen*) ՀԿ-ում (տես Ելից 3:16; Թվոց 11:16): Ավելի ուշ ՆԿ-ում այս տերմինը կիրառվում է մի խումբ առաջնորդների համար Երուսաղեմից, ովքեր կազմել են հրեաների բարձր դատարանը՝ Սենեդրիոնը (տես Մատթ. 21:23, 26:57): Հիսուսի օրերում այս յոթանասուներկու անդամներից բաղկացած մարմինը կառավարվում էր կոռումպացված քահանայության կողմից:
3. օգտագործվում ՆԿ եկեղեցու տեղական առաջնորդների համար: Դա երեք հոմանիշ տերմիններից մեկն էր (հովիվ, վերակացու և երեց տես Տիտոս 1: 5,7; Գործք 20: 17,28): Պետրոսն ու Հովհաննեսը օգտագործում են այն՝ ներառելով իրենց ղեկավարության խմբի մեջ (տես I Պետ. 5: 1; II Հովհ. 1; III Հովհ. 1):
4. օգտագործվում եկեղեցում մեծահասակ տղամարդկանց համար, պարտադիր չէ, որ ղեկավարության մեջ (տես I Տիմ. 5: 1; Տիտոս 2: 2):

- **«ընտրեալ Կիրիային, և նորա որդիներին»** Եղել են շատ քննարկումներ այս կոչման շուրջ: Շատերը փորձել են պնդել, որ սա գրվել է կամ *Electa* անունով տիկնոջ, հունարեն նորընտիր կամ ընտրյալ բառից (Կղեմես Ալեքսանդրացի) կամ *Kyria*, հունարեն տիկին տերմինից (Աթանաս): Սակայն, ես համաձայն եմ Ջերոմի հետ, որ սա վերաբերում է եկեղեցուն, հետևյալ պատճառներով.
 1. եկեղեցի բառը հունարենում ԻԳԱԿԱՆ է (հ. 1)
 2. LXX-ի մեջ «ընտրել» վերաբերում է մարդկանց խմբին (տես I Պետ. 2: 9)
 3. դա կարող է վերաբերել եկեղեցուն, որպես Քրիստոսի հարս (հմմտ. Եփ. 5:25-32; Հայտ. 19:7-8; 21:2)
 4. այս եկեղեցին ունի անդամների, որոնց մասին խոսվում է որպես երեխաներ (հմմտ. հ. 13)
 5. այս եկեղեցին ունի քույր, որը կարծես անդրադառնում է մեկ այլ տեղական եկեղեցու (հմմտ. հ. 13)
 6. կա բառախաղ ԵԶԱԿԻ և ՀՈԳՆԱԿԻՆԵՐԻ միջև ամբողջ գլխում (ԵԶԱԿԻ հհ. 4,5,13; ՀՈԳՆԱԿԻ հհ. 6,8,10,12)
 7. այս տերմինը օգտագործվում է նույն կերպով եկեղեցու համար I Պետ. 5:13
- **«որոնց»** Չարմանալի է, որ սա ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՀՈԳՆԱԿԻ ԴԵՐԱՆՈՒՆ է, քանի որ այն կապվել է կամ «տիկին» բառի հետ, որը ԻԳԱԿԱՆ է կամ «երեխաներ», որը ՉԵԶՈՔ է: Ես կարծում եմ, որ դա Հովհաննեսի արտահայտությունը որպես խորհրդանշական նշելու կերպերից է:
- **«ես սիրում եմ»** Հովհաննեսը օգտագործում է *phileō* որպես հոմանիշն *agapaō* հետ Ավետարանում և Հայտնության Գրքում է, բայց I, II և III Հովհաննեսի մեջ նա օգտագործում է միայն *agapaō* (տես հհ. 3,5,6, I Հովհաննես 3:18):

▪ **«Ճշմարտութիւնով»** Ճշմարտությունը հաճախակի կրկնվող թեմա է (տես հհ. 1 [երկու անգամ], 2,3,4): «Այս ուսմունքը կամ վարդապետությունը» արտահայտությունը հհ. 9 [երկու անգամ], իսկ հ. 10-հոմանիշ է «Ճշմարտությանը»: Այս տերմինը, հավանաբար ընդգծված է տեղական հերետիկոսության պատճառով, որը ակնհայտ է այս փոքրիկ նամակում (տես հհ. 4,7-10), ինչպես նաև I Հովհաննես:

«Ճշմարտությունը» կարող է վերաբերել երեք բաներից մեկին (1) Սուրբ Հոգին Հովհաննեսի գրվածքներում (տես 14:17); (2) Հիսուս Քրիստոսն Ինքը (տես Հովհ. 8:32, 14: 6) և (3) Ավետարանի բովանդակությունը (տես I Հովհ. 3:23): Տես Հատուկ Թեմաներից 6:55 և 17: 3.

հ. 2 «որ մեզանում մնում է» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է Հովհաննեսի սիրած տերմիններից մեկը՝ հավատացյալների «մնալ, կենալը» նկարագրելու համար: Տես Հատուկ Թեմա 2:10. Սա, կարծես, վերաբերում է Սուրբ Հոգու մնալուն կամ բնակվելուն (տես Հո. 8: 9, կամ Որդու, Հո.8:9-10): Երրորդության բոլոր անձերն էլ մնում են հավատացյալների մեջ / հետ / կողմից (տես Հովհ. 14:23):

▪ **«եւ մեզ հետ կ'լինի յաիտեան»** Ճշմարտությունը բնակվում և մնում է բոլոր հավատացյալների հետ ընդմիջտ: Ինչպիսի հավաստիացման հզոր արտահայտություն: Տես Հատուկ Թեմա I Հովհ. 5:13. Ճշմարտությունը, թե ավետարանի անձն է և թե ավետարանի պատգամը: Այս «Ճշմարտությունը» միշտ հիմնախնդիր է սիրո մեջ, Աստծուն սիրելու, հոգևոր եղբայրներին / քույրերին սիրելու մեջ և կորսվող աշխարհը սիրելու մեջ (տես I Հովհ. 4: 7-21):

▪ **«Հավիտյան»** բառացիորեն նշանակում է «ժամանակի մեջ» (տես Հովհ. 4.14; 6:51,58; 8:35,51; 10:28; 11:26, 12:34, 13: 8; 14:16. I Հովհ. 2:17): Տես Հատուկ Թեմա: Հավիտյան Հովհ. 6:58.

հ. 3 «շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն» Սա առաջին դարի տիպիկ հունարեն նամակի ներածություն է՝ երկու բացատրություններով. Առաջին հերթին, դա արդեն մի փոքր փոփոխվել է՝ այն դարձնելով բացառիկ քրիստոնեական: Հունարեն «ողոյն» տերմինը *chairein* է: Այն փոփոխվել է *charis* -ի, որը նշանակում է «շնորհք»: Այս ներածությունը շատ նման է Հովվական թղթերին, I Տիմ. 1: 2; II Տիմ. 1: 2; տերմիններից երկուսը կրկնվում են Պողոսի Գաղատացիս և I Թեսաղոնիկեցիս թղթերի ներածության մեջ:

Երկրորդ, նորմալ քերականական կառուցվածքը առողջության համար աղոթք կամ ցանկություն: Սակայն, II Հովհ. Ճշմարտության դրույթ է, Աստծո հետ կանգնելու խոստում, ցանկալի Աստվածային արդյունքի հետ միասին:

Աստվածաբանորեն մտածում ենք, կա՞ արդյոք կանխամտածված պատվեր կամ կամ այս տերմինների միջև: Շնորհքն ու ողորմությունը արտացոլում են Աստծո առանձնահատկությունը, որը բերում է ձրի փրկություն Քրիստոսի միջոցով ընկած մարդկությանը: Խաղաղություն արտացոլում է Աստծո նվեր ստացողը: Հավատացյալները փորձառում են ամբողջական վերափոխում: Ինչպես Անկումը ազդեց մարդկային կյանքի բոլոր ասպեկտների վրա, այնպես էլ փրկությունը վերականգնում է, նախ դիրքի միջոցով (հավատքով արդարացում), ապա աշխարհայացքի ռադիկալ փոփոխությունների միջոցով՝ Սուրբ Հոգու բնակվելովը, որը հանգեցնում է պրոգրեսիվ քրիստոսանմանությանը (պրոգրեսիվ սրբացում) Աստծու պատկերը մարդկու մեջ (տես Ծննդ. 1: 26-27) վերականգնվել:

Մյուս հնարավոր տարբերակը վերաբերում է այս երեք տերմինների անհրաժեշտությանը՝ կեղծ ուսուցիչների լույսի ներքո: Նրանք կասկածի տակ էին դնում «շնորհք» և «ողորմություն» և բերում ամեն ինչ, բացի «խաղաղությունից»: Սա նաև հետաքրքրություն է բերում նշելով, որ սա միակ օգտագործումն է «ողորմություն» (*eleeōi*) Հովհաննեսի բոլոր գրվածքներում: «Շնորհք» (*charis*) օգտագործվում է միայն այստեղ, Ավետարանում 1: 14,16,17 և Հայտնության գրքում (տես 1: 4, 22:21):

Ջերոմ Աստվածաշնչյան Մեկնաբանությունը նշում է այն փաստը, որ այս երեք տերմիններն ունեն հինկտակարանյան ուխտի կապեր (էջ 412): Նորկտակարանյան հեղինակները (բացառությամբ Ղուկասի) Հրեա մտածողների էին, գրելով Koine հունարեն: ՆԿ բառապաշարի մեծ մասը ունի Սեպտուագիդյան ծագում:

- **«Աստուած Հօրիցը, եւ Տէր Յիսուս Քրիստոսիցը»** Երկու ԳՈՅԱԿԱՆՆԵՐՆ էլ ունեն (*para*) ՆԱԽԴԻՐԸ, որը քերականորեն նրանց հավասար է դասում: Սա քերականական ձև է՝ Հիսուս Քրիստոսի ամբողջական Աստված լինելը պնդելու համար:
- **«Հօր Որդուցը»** Շարունակական շեշտադրումը I Հովհաննէսում այն է, որ չես կարող Հորը ունենալ առանց Որդու (տես I Հովհ. 2:23; 4:15; 5:10): Կեղծ ուսուցիչները պնդում էին եզակի և հատուկ փոխհարաբերություն Աստծու հետ, սակայն աստվածաբանորեն արժեզրկում Որդու անձն ու գործը: Հովհաննէսը կրկին ու կրկին կրկնում է, որ Հիսուսը (1) Հոր լրիվ բացահայտումն է և (2) Հոր մոտ տանող միակ ճանապարհը (տես Հովհաննէս 14: 6):

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 4-6
⁴ Շատ ուրախացայ որ քո որդիներիցը գտայ որ ճշմարտութիւնով են գնում, ինչպէս որ հրաման առանք Հօրիցը: ⁵ Եւ հիմա աղաչում եմ քեզ, Կիւրիայ, ոչ իբր թէ մի նոր պատուիրանք եմ գրում քեզ, այլ այն որ սկզբիցն ունէինք, որ իրար սիրենք: ⁶ Եւ սա է սէրը, որ նորա պատուիրանքների համեմատ գնանք, եւ սա է պատուիրանքը, որ ինչպէս լսեցիք սկզբիցն՝ այնպէս գնաք:

h. 4 «Շատ ուրախացայ» Սա ԱՕՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ (deponent) ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հնարավոր է, որ Երեցը լսել էր այս եկեղեցու մասին իր ճանապարհորդող անդամներից մեկից:

- **«քո որդիներիցը գտայ որ ճշմարտութիւնով են գնում»** Սա վերաբերում է կամ
 1. ոմանց բարեպաշտ, սիրող կյանքը եկեղեցու մեջ (տես II Հովհ. 3-4)
 2. գիտակցելով հերետիկոսների ներկայությունը համայնքի ներսում, ովքեր որոշներին մոլորեցրել էին
- **«ինչպէս որ հրաման առանք Հօրիցը»** Սա ԱՕՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը վերաբերում է պատվիրան տալուն՝ սիրել միմյանց, ինչպէս Հիսուսը սիրեց նրանց (տես Հովհ. 13: 34-35; 15:12; I Հովհ. 3:11, 4: 7,11- 12,21):

h. 5 «այն որ սկզբիցն ունէինք» Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը վերաբերում է Հիսուսի վարդապետության սկզբին (տես I Հովհ. 2:7,24; 3:11): Պատվիրանի բովանդակությունը վերահաստատվում է որպէս «սիրել միմյանց» (տես h. 5) և «ընդունել Հիսուս Քրիստոսին մարմնով եկած» (տես h.7): Ուշադրություն դարձրեք, որ այն բովանդակալից է, անձնական և ապրելակերպ:

- **«որ իրար սիրենք»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է (ինչպէս վերջին ԲԱՅՑ այս համարում, քայլել): Այն բնորոշ էր հերետիկոսներին՝ լինել բացառող և չսիրող: Սա ձևավորում է Հովհաննէսի երեք ստուգարքներից առաջին, թե ինչպէս մարդը կարող է իմանալ, որ նա քրիստոնյա է: I Հովհաննէսի գրքում այս երեք ստուգարքներն են՝ սեր, ապրելակերպ և վարդապետություն: Այս երեք ստուգարքները կրկնվում են II Հովհ.-ում:
 1. սեր (տես h. 5, I Հովհ. 2: 7-11; 3: 11-18, 4: 7-12,16-21, 5: 1-2)
 2. հնազանդություն (տես h. 6; I Հովհ. 2: 3-6, 3: 1-10; 5: 2-3):
 3. վարդապետական բովանդակություն (տես h.7, I Հովհ. 1: 1, 2: 18-25, 4: 1-6,14-16, 5: 1,5,10)

h. 6 «Եւ սա է սէրը» Սէրը (*agapē*) շարունակական (ՆԵՏԿԱ ԺԱՄԱՆԱԿ) գործողություն է և ոչ թե պարզապես զգացմունք: Սէրը բոլոր ճշմարիտ հավատացյալների «նշանն» է (տես I Կոր. 13; Գաղ. 5:22; I Հովհ. 4: 7-21):

- **«սկզբիցն»** Տես ծանուցում I Հովհ. 1: 1. Կարծում եմ, որ արտահայտությունը օգտագործվում է I Հովհ. և II Հովհ. որպես հղում Հիսուսի հրապարակային ծառայության սկզբին:
- **«այնպես զնաք»** Քրիստոնեությունը նախնական հանձնառություն կամ նվիրում է և ապրելակերպի փոփոխություն (տես I Հովհ. 2: 6): Սէր ապրելակերպը չի փրկում մեզ, բայց այն հաստատում է, որ մենք փրկված ենք (տես Եփ. 2: 8-9 և 2:10):

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 7-11

⁷ Որովհետև շատ մոլորեցուցիչներ դուրս եկան աշխարհք որ չեն դաւանում Յիսուս Քրիստոսին մարմնով եկած. նա է մոլորեցուցիչը եւ Նեռը: ⁸ Զգոյշ կացեք ձեր անձերին որ չ'կորցնենք այն որ վաստակեցինք. Այլ որ բոլոր վարձք առնենք: ⁹ Ամեն ով որ յանցանք է գործում, եւ չէ կենում Քրիստոսի վարդապետութեան մեջ, Աստուած չ'ունի. Ով որ կենում է Քրիստոսի վարդապետութեան մեջ, նա ունի Որդուն էլ Հօրն էլ: ¹⁰ Եթէ մէկը ձեզ մօտ գայ եւ այս վարդապետութիւնը չ'բերէ, մի ընդունիք նորան ձեր տունը, եւ բարեւ մի տաք նորան: ¹¹ Որովհետև ով որ բարեւ ասէ նորան, մասնակից կ'լինի նորա չար գործերին:

h. 7 «շատ մոլորեցուցիչներ» «մոլորեցնողներ» բառը գալիս է հունարեն *planē* բառից, որտեղից մենք ստանում ենք անգլերեն «մոլորակ» տերմինը: Հին աշխարհում երկնային մարմինների շարժումը քարտեզագրվել և ուսումնասիրվել է (*zodiak*): Աստղերը տեղավորվում են կայուն նախշերով, բայց որոշ աստղեր (այսինքն, մոլորակները) շարժվում են անհամաչափ: Նախնիքը նրանց կոչել են «թափառականներ»: Սա զարգացավ փոխաբերականորեն նրանց մեջ, ովքեր թափառում էին ճշմարտությունից:

Այս կեղծ ուսուցիչները ոչ միայն անկեղծորեն սխալ էին կամ մոլորեցնող անձիք, ովքեր անտեղյակ էին ավետարանից: Հովհաննեսի գրվածքներում թե փարիսեցիները և թե կեղծ ուսուցիչները ապստամբում էին հստակ լույսի դեմ, որը ստացել էին: Սա է պատճառը, որ նրանց ըմբոստությունը բնութագրվում է որպես «աններելի մեղք» կամ «մահացու մեղք» (տես նշումները I Հովհ. 5:16): Ողբերգությունն այն է, որ նրանք պատճառ էին դարձել ուրիշներին՝ հետևելու նրանց կործանմանը: ՆԿ հստակ ցույց է տալիս, որ սուտ ուսուցիչներ կհայտնվեն և կառաջացնեն մեծ խնդիրներ (տես Մատթ. 7:15, 24; 11,24; Մարկ. 13:22, I Հովհ. 2:26, 3: 7, 4: 1):

«դուրս եկան աշխարհք» Այստեղ աշխարհը պարզապես մեր ֆիզիկական մոլորակն է: Այս կեղծ ուսուցիչները կամ հեռացել էին քրիստոնեական եկեղեցուց (տես I Հովհ. 2:19) կամ էլ նրանք միսիոներական հանձնարարությունների մեջ էին (տես III Հովհ.):

- **«որ չեն դաւանում»** Սա *homologeō* տերմինն է, որը ենթադրում է Քրիստոսի հավատքի հրապարակային մասնագիտացում ու խոստովանություն: Տես Հատուկ Թեմա: Խոստովանություն 9: 22-23:
- **«Յիսուս Քրիստոսին մարմնով եկած»** Այս մոլորեցնողներ շարունակում են իրենց կեղծ ուսմունքները Քրիստոսի անձի մասին: Այս համարը կրկնում է «փորձեցեք հոգիները» հորդորը I Հովհ. 4:1-6, հասկապես, երբ դա վերաբերվում է Հիսուսի ամբողջությամբ մարդ լինելուն (տես Հովհ. 1:14; I Տիմ. 3:16): Գնոստիցիզմը հաստատել է հավիտենական դուալիզմը «հոգու» (Աստված) և «նյութի» (մարմնի) միջև: Նրանց համար Հիսուսը չէր կարող լինել ամբողջությամբ Աստված և ամբողջությամբ մարդ:

Կարծես թվում է, թե եղել են առնվազն երկու աստվածաբանական հոսքեր՝ վաղ Գնոստիկ մտածելակերպի մեջ.

1. Հիսուսի մարդ լինելու ժխտումը (Դոկետիկ/Docetic) Նա թվում էր, թե մարդ է, բայց հոգի էր
2. Քրիստոսի խաչի մահի ժխտումը, այս խումբը (Սերինթիան/Cerinthian) պնդում էր, որ «Քրիստոսի հոգին» իջավ Հիսուս մարդու վրա իր մկրտության ժամանակ և թողեցին Նրան մինչ Նա կմահանար խաչի վրա:

Հնարավոր է, որ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ «մարմնով եկած» Հովհաննեսի ձևն է՝ մերժելու Cerinthian Գնոստիցիզմը և I Հովհ. 4: 1-6՝ Docetic Գնոստիցիզմը:

▪ **«նա է մուրեցուցիչը եւ Նեոը»** I Հովհ. 2:18 կա տարբերություն ՀՈԳՆԱԿԻ «հակաքրիստոսներ» և ԵԶԱԿԻ «հակաքրիստոս»-ի միջև: ՀՈԳՆԱԿԻՆ առաջ է եկել Հովհաննեսի օրերում և նրանք թողել էին եկեղեցիները (տես Ա Հովհ. 2:19), բայց ԵԶԱԿԻՆ ապագայի համար է (տես «անօրենության մարդը» բառը II Թես. 2). Սակայն, այս համարում օգտագործված է ԵԶԱԿԻՆ, ինչպես ՀՈԳՆԱԿԻՆ I Հովհ. 2: 18-25:

հ. 8 «Զգոյշ կացիք ձեր անձերին» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Սա «տեսնել» (*blepō*) տերմինն է, որն օգտագործվում է փոխաբերականորեն՝ չարի դեմ նախազգուշացնելու համար (տես Մատթ. 24: 4, Մարկ. 13: 5; Դուկ. 21: 8; Գործք 13:40, I Կոր. 8: 9; 10:12, Գաղ. 5:12; Եբր. 12:25): Հավատացյալները պատասխանատու են մտահոգիչ սխալի համար, քանի որ

1. նրանք գիտեն ավետարանը
2. նրանք ունեն Հոգին
3. նրանք ունեն շարունակական հաղորդակցություն Քրիստոսի հետ

- NASB** “որ դուք չկորցնեք այն, ինչ մենք կատարել ենք”
NKJV “որ մենք չկորցնենք այն բաները, ինչի համար աշխատեցինք”
NRSV “ուրեմն, որ դուք չկորցնեք այն, ինչի համար մենք աշխատել ենք”
TEV “ուրեմն, որ դուք չկորցնեք այն, ինչի համար մենք աշխատել ենք”
NJB “քանի որ մեր բոլոր աշխատանքը կկորի”

Կա հունարեն ձեռագրի փոփոխություն այս համարում կապված առաջին ԴԵՐԱՆՈՒՆԻ հետ: Այն պետք է լինի «Դուք» (NASB, NRSV, TEV) կամ «մենք» (NKJV): UBS4 տեքստը աջակցում է «դուք»-ին, ինչը նշանակում է, որ հավատացյալները չեն իրականացրել առաքյալների կողմից իրենց հասցեագրված ավետարանի նպատակները:

▪ **«Այլ որ բոլոր վարձք առնենք»** Սա ԱՕՐԻՍՍ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, որը մատնանշում է վերադառնալ իրենց ավետարանի ընդունելությանը: ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ պատահականությունը կապված չէ նրանց փրկության հետ, այլ ավետարանի հասունության և ընդլայնմանը նրանց միջոցով (տես I Կոր. 9.27, 15: 10,14,58; II Կորնթ. 6: 1, Գաղ. 2: 2 ; Փիլ. 2:16, I Թես. 2: 1, 3: 5):

հ. 9

- NASB** “Ով որ շատ հեռուն է գնում և չի մնում Քրիստոսի ուսմունքի մեջ”
NKJV “Ամեն ով որ հանցանք է գործում և չի մնում Քրիստոսի վարդապետության մեջ”
NRSV “Ամեն ոք ով չի մնում Քրիստոսի ուսմունքի մեջ”
TEV “Ով չի մնում Քրիստոսի ուսմունքի հետ, այլ հեռուն է գնում”
NJB “Եթե որևէ մեկը չի մնում Քրիստոսի ուսմունքի մեջ, բայց հեռուն է գնում”

Նախ, նկատեք *pas*-ի բացասական օգտագործումը: Ավետարանի հրավերը «բոլորի» համար է, բայց ցավոք նաև ներուժ հերետիկոսության համար: Այս պոտենցիալ հերետիկոսությունը բնութագրվում է երկու ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐՈՎ «հեռուն է գնում» և «չի մնում»:

Առաջինը «հեռուն է գնում» կարող է լոգունգ է եղել սուտ ուսուցիչների համար՝ ենթադրելով, որ նրանք ունեցել են զարգացող ճշմարտություն ակնաստես Առաքյալներից դուրս: Հավատացյալները բնութագրվում են ճշմարտության խոսքով՝ հաստատվելով, կենսավով նրանցում (տես Հովհ. 8:31, 15:7, I Հովհ. 2:14, բացասական Հովհ.5:38, I Հովհ. 1:10): Տես Հատուկ Թեմա Համբերություն կամ հարատևություն Հովհ. 8:31 և Ուրացություն Հովհ. 6:64.

ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ «Քրիստոսի» կարող է վերաբերել

1. Քրիստոսի ուսմունքները
2. Քրիստոսի մասին ուսմունքները
3. Հովհաննեսի ընդհանուր կրկնակի իմաստները

ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԸ բազմաթիվ են և անորոշ: Միայն կոնտեքստը կարող է որոշել նախատեսված իմաստները, բայց հաճախ, ինչպես այստեղ, նրանք համընկնում են:

▪ **«Աստուած չ'ունի»** «Քրիստոսի վարդապետությունը» և «ճշմարտությունը» հ. 2-ի զուգահեռ են: Կեղծ ուսուցիչները և նրանց հետևորդները վարձք չունեն (տես հ. 8): Նրանք հոգևորապես կորած են և Աստծո հետ չեն, քանի որ Հորը ունեցողը պետք է ունենա Որդուն (տես I Հովհ. 5:10-12): «ունի» ԲԱՅԻ օգտագործումը (երկու անգամ, ՆԵՐԿԱՅԻ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) Աստծո հետ ակա է միայն այստեղ և I Հովհ. 2:23.

հ. 10 «Եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, ենթադրվում է, որ ճշմարիտ է հեղինակային տեսանկյունից կամ իր գրական նպատակներով: Սուտ ուսուցիչներ կզան:

▪ **«մի ընդունիք նորան ձեր տունը»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը հաճախ ենթադրում է գործընթացի մեջ եղած գործի կանգնեցում (կոնտեքստը պետք է որոշի):

«տունը» կարող է վերաբերել քրիստոնեական հյուրընկալությանը (տես Մատթ. 25:35, Հռոմ. 12:13; I Տիմ. 3: 2, Տիտոս 1: 8; Եբր. 13: 2, I Պետ. 4: 9 կամ III Հովհ. 5-6), բայց կոնտեքստում, այն, հավանաբար, վերաբերում է հրավիրել ճանապարհորդող ծառայողներին՝ խոսելու տնային եկեղեցում (տես Հռոմ. 16: 5, I Կոր. 16:19, Կող. 4:15; Փիլիմոն 2):

▪ **«եւ բարեւ մի տաք նորան»** Սա մեկ ուրիշ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ: Մի խառնվեք կամ մի նույնացեք այդ «այսպես կոչված քրիստոնյայի» հետ: Ցանկացած մտերմության ակնարկ կարող է սխալ հասկացվել որպես հաստատում (տես հ. 11): Այս դրույթը շատ դժվար է կիրառել այսօր: Այնքան շատերը պնդում են, որ քրիստոնյա են: Դեռ փորձելով կիսվել նրանց հետ, մենք պետք է հոգեհարազատ և գրավիչ գրույցի բռնվենք: Այդուհանդերձ, քրիստոնյա առաջնորդները պետք է խուսափեն հերետիկոսություն հետ որևէ առընչություն ունենալուց: Սա, իհարկե, չի տարածվում քրիստոնեական հարանվանությունների վրա:

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 12-13
¹² Շատ բան ունեի ձեզ գրելու, բայց չ'կամեցայ թղթով եւ թանաքով գրել. Այլ յոյս ունիմ գալ ձեզ մօտ. Եւ բերանէ բերան խօսել, որ մեր ուրախութիւնը կատարեալ լինի: ¹³ Բարեւ են տալիս քեզ քո ընտրեալ քրոջ որդիքը:

հ. 12 «Շատ բան ունեի ձեզ գրելու» Այս վերջավորությունը նման է III Հովհ.13-14.

▪ **«որ մեր ուրախութիւնը կատարեալ լինի»** Սա ՎԱՂԱԿԱՍԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ նպատակ ունի (նպատակի պարագան ցույց է տալիս

պատահականություն): Սա տարածված թեմա էր Հովհաննեսի մոտ (տես Հովհ. 3:29, 15:11, 16:24, 17:13, I Հովհ. 1: 4): Սա ուրախությունը հիմնված էր

1. ուսուցչի ներկայության վրա
2. նրա բերած ճշմարտության գիտության վրա

Հովհաննեսը նշեց իր «ուրախությունը» հ. 4-ում սիրո և հնազանդության ընթացքի ժամանակ:

հ. 13 Այս համարը, ինչպես հ.1, օգտագործում է փոխաբերական լեզու, երբ խոսում է քույր եկեղեցու և նրա անդամների հետ:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Թվարկեք այն երեք ստուգաբաները, որոնք գտնվում են I Հովհաննեսում և որոնք կրկնվում են II Հովհաննեսում:
ա.
բ.
գ.
2. Այս նամակը գրվել է մի տիկնոջ թե՛ եկեղեցուն:
3. Ինչպե՞ս գիտեք, այս կարճ նամակից, որ համայնքում կային հերետիկոսներ:
4. Ո՞վ կամ ի՞նչն է մոլորեցուցիչը ու նեղը հ 7-ի.
5. Արդյո՞ք 10 և 11 համարները չեն հակասում նորկտակարանյան մանդատին՝ ցույց տալ հյուրընկալություն և սեր նույնիսկ մեր թշնամիներին:

III ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ *

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ողջույն	Ողջույն Գայիոսին		Ներածություն	Ողջուններ
h. 1	hh. 1-4	h. 1	h. 1ա h. 1բ	hh. 1-4
hh. 2-4		hh. 2-4	hh. 2-4	
Համագործակցություն և Ընդդիմություն	Գնահատել առատաձեռնությունը		Գայիոսը գովվում է	
hh. 5-8	hh. 5-8	hh. 5-8	hh. 5-8	hh. 5-8
	Դիտորեփես և Դեմետրիոս		Դիտորեփես և Դեմետրիոս	Զգուշանալ Դիտորեփեսի օրինակից
hh. 9-10	hh. 9-12	hh. 9-10	hh. 9-10	h. 9-11
hh. 11-12		hh. 11-12	h. 11 h. 12	Գովասանք Դեմետրիոսին h. 12
Վերջին ողջույն	Հրաժեշտի ողջույն		Վերջին ողջուններ	Վերջաբան
hh. 13-15	hh. 13-15	hh. 13-14 h. 15	hh. 13-14 h. 15ա h. 15բ	hh. 13-15

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ (տես էջ 4)

Սա սերտողության մեկնաբանության ուղեգույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ձեր խոսքերով գրեք ամբողջ գրքի կենտրոնական թեման:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրականության տեսակը (ժանրը)

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 4)

Սա սերտողության մեկնաբանության ուղեգույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու

չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Երկրորդ անգամ մեկ շնչով կարդացեք Աստվածաշնչյան այս գիրքը: Ուրվագծեք հիմնական թեմաներն ու թեման արտահայտեք մեկ նախադասությամբ:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման
5. և այլն

ԸԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ (տես էջ 5)

Հետևել բուն հեղինակի մտադրությանը պարբերությունների մակարդակով

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է դա թողնես մեկնաբանի վրա:

Մեկ շնչով կարդացեք առաջին գլուխը: Կարդալով տեքստը, հարցեր տվեք ինքներդ ձեզ, թե թարգմանություններից, որ մեկն է ավելի համապատասխանում թեմաների և համարների բաժանումների ձեր հասկացողությանը: Չնայած պարբերությունների բաժանումները ներշնչված չեն, բայց դրանք օգնում են հասկանալ և հետևել հեղինակի մտադրությանը: Ամեն մի պարբերություն ունի մեկ կենտրոնական թեմա, ճշմարտություն կամ միտք:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. և այլն

III ՀՈՎՀԱՆՆԵՄԻ ԿՈՐՏԵՔՍԱՅԻՆ ՆԵՐԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- Ա. Այս փոքր նամակը վերնագրված է պարզապես III Հովհաննես, որովհետև աննշան կարճ է քան II Հովհաննեսը: Ես իրապես կարծում եմ, որ թե II Հովհաննեսը և թե III Հովհաննեսը ձևավորում են հավասարակշռված պատգամ ուղղված տեղական եկեղեցուն, հավանական է, ինչ-որ տեղ հռոմեական նահանգի Փոքր Ասիայում, առաջին դարի վերջում:
- Բ. II Հովհաննեսը հերետիկոսական, շրջիկ քարոզիչների խնդրին է առնչվում, իսկ III Հովհաննեսը՝ հորդոր օգնելու թափառաշրջիկ քրիստոնյա քարոզիչներին:
- Գ. Գոյություն ունեն երեք տարբեր մարդիկ, մասնավորապես III Հովհ-ում:
 1. Գայիոս (բարեպաշտ մարդ ընդունող եկեղեցում)
 - ա. Կա երեք Գայիոս նշված Աստվածաշնչի այլ հատվածներում: Գայիոսը Մակեդոնիայից Գործք 19:29; Գայիոս Դերբացին 20:4 և Գայիոսը Կորնթոսից Հռոմ. 16:23; I Կոր. 1:14
 - բ. Այն գրվածքները, որոնք հայտնի են որպես «Առաքելական սահմանադրություններ» թվարկում են III Հովհաննեսի Գայիոսին որպես Պերգամոնի եպիսկոպոս՝ նշանակված Հովհաննեսի կողմից:

2. Դիտորեփես (անաստված անհանգստություն ստեղծող ընդունող եկեղեցում)
 - ա. Սա միակ հիշատակումն է այս մարդու մասին ՆԿ-ում: Նրա անունը շատ հազվագյուտ անուն է, որը նշանակում է «կերակրվեց Ձևսի կողմից», Որքան հեզնական է, որ «Ձևս» անունով մարդը կարող էր դեմ լինել ճանապարհորդներին, այն ինչ «Ձևսը» «ճանապարհորդների պահապանն էր»:

բ. Նրա վերաբերմունքը երևում է 9-10հհ.

3. Դեմետրիոս (Հովհաննեսի նամակի կրողը կամ տանողը այս տեղական եկեղեցի)

ա. Ըստ երևույթին, նա ճանապարհորդող միսիոներներից մեկն է և Հովհաննեսի Առաքյալի նամակը Եփեսոս տանողը:

բ. Ըստ ավանդության «Առաքելական սահմանադրություններ»-ը Դեմետրիոսին թվարկում է որպես Ֆիլադելֆիայի եպիսկոպոս՝ նշանակված Հովհաննես Առաքյալի կողմից:

Դ. Վաղ եկեղեցին պայքարել է, թե ինչպես պետք է գնահատել և աջակցել ճանապարհորդող քարոզիչներին / ուսուցիչներին / ավետարանիչներին: Երկրորդ դարի սկզբում վաղ, ոչ կանոնական քրիստոնեական գրվածքներից մեկը, որը կոչվում էր *The Didache* կամ *The Teaching of the Twelve Apostles* ունի այս ուղեցույցները.

Գ Լ ՈՒ Խ XI- ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ով որ, հետևաբար, գա և սովորեցնե՛ս ձեզ այդ բոլոր բաները, որոնք ասել ենք մենք, ընդունե՛ք նրան: Բայց եթե ուսուցիչը ինքն է փոխվում և ուսուցանում մեկ ուրիշ վարդապետություն, որը տարբերվում է սրանից՝ մի լսե՛ք նրան: Բայց եթե նա սովորեցնի այնպես որ ավելացնի Տիրոջ արդարությունն ու գիտությունը՝ ընդունե՛ք նրան՝ որպես թե՛ Տիրոջը: Սակայն, ինչ վերաբերում է առաքյալներին ու մարգարեներին, ըստ Ավետարանի հավատամքի, սա արեք: Թող ամեն Առաքյալ, որ գալիս է ձեզ մոտ՝ ընդունվի ինչպես Տիրոջը: Բայց նա չպետք է մնա մեկ օրից ավել, բայց եթե հարկավոր է, թող մնա հաջորդ օրն էլ. բայց եթե նա մնա երեք օր, նա կեղծ մարգարե է: Եվ երբ առաքյալը հեռանա, թող ոչինչ չվերցնի իր հետ, բայց միայն հաց, բայց եթե գումար ուզի, նա կեղծ մարգարե է (էջ 380):»

Գ Լ ՈՒ Խ XII- ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

«Բայց ով որ Սուրբ Հոգով է խոսում, ասելով թե, Տվե՛ք ինձ գումար, կամ որևէ այլ բան, դուք չպետք է լսե՛ք նրան. բայց եթե նա դա ուզում է ուրիշներին, կարիքավորների տալու միտումով, թող ոչ ոք չդատի նրան: Սակայն, ամեն մեկը, որ կգայ Տիրոջ անունով է թող ընդունվի, բայց հետո դուք պետք է ստուգե՛ք և ճանաչե՛ք նրան. քանզի դուք պետք է տարբերե՛ք աջն ու ձախը: Եթե եկողը անցորդ է, աջակցե՛ք նրան, քանի դեռ դուք, ի վիճակի եք. բայց նա չպետք է մնա ձեզ հետ, բացառությամբ երկու կամ երեք օրվա ընթացքում, եթե անհրաժեշտություն լինի: Սակայն, եթե նա ցանկանում է մնալ ձեր մոտ, լինելով արհեստավոր, թող աշխատի և ուտի. բայց եթե նա չունի արհեստ, ըստ ձեր հասկացողության հոգ տարե՛ք նրա մասին, որ որպես քրիստոնյա, նա չմնա անգործ: Սակայն, եթե նա չի կամենում դա անել ապա նա հանդիսանում է Քրիստոսի անունը շահագործող: Այդպիսիներից հեռու մնացե՛ք (էջ 381):»

ԲԱՌԻ ԵՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 1

¹ Երեցը, սիրելի Գայիոսիդ, որին ես սիրում եմ ճշմարտութիւնով:

հ. 1 «Երեցը» Երեց տերմինը հոմանիշ է «հովիվ» և «եպիսկոպոս» տերմինին (տես Տիտոս 1: 5,7; Գործք 20: 17,28): Տես ամբողջական գրառումը II Հովհ. հ.1.

- **«սիրելի»** Սա բնորոշ է Հովհաննեսի նամակներին (տես I Հովհ. 2: 7, 3: 2,21, 4: 1,7,11; III Հովհ 1,2,5,11), սակայն չի ասվում հավատացյալների համար Ավետարանում կամ Հայտնության մեջ:
- **«Գայիոսիդ»** Եղել է շատ քննարկում, թե արդյոք Գայիոսը կամ Դիոտրեփեսը այս տեղական եկեղեցու հովիվն է: Դժվար է ցանկացած դոգմատիկ արտահայտություն անել այս քիչ տեղեկատվությամբ, որը հասանելի է: Քանի որ հ.9-ում, որտեղ «եկեղեցին» և «նրանց» բառերն են նշված, հնարավոր է, որ Դիոտրեփեսը տնային եկեղեցու առաջնորդն էր իսկ Գահիոսը մեկ այլ տնային եկեղեցու առաջնորդ, որը շատ մոտ է, բայց սա ուղակի ենթադրություն է:
- **«որին ես սիրում եմ ճշմարտութիւնով»** «Մեր և ճշմարտություն» հաճախ միասին են հանդես գալիս Հովհաննեսի նամակներում (տես II Հովհ. 1,2,3,4, III Հովհ. 1,3,4,8,12): Ճշմարտությունը կարող է վերաբերել
 1. Սուրբ Հոգուն (տես Հովհ. 14:17)
 2. Որդի Հիսուսին (տես Հովհ. 8.32, 14: 6)
 3. Ավետարանի բովանդակությանը (տես I Հովհ. 2: 2; 3.23)

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 2-4

² Միրելի, աղօթք եմ անում որ ամեն բանի մեջ յաջող եւ առողջ լինես, ինչպէս քո հոգին յաջող է: ³ Որովհետեւ շատ ուրախացայ երբոր եղբարքն եկան, եւ քո ճշմարտութիւնը վկայեցին, ինչպէս որ դու ճշմարտութեան մեջ գնում ես: ⁴ Մորանից աւելի մեծ ուրախութիւն չ'ունիմ, որ լսում եմ թէ իմ որդիները ճշմարտութեան մեջ են գնում:

հ. 2 «աղօթք եմ անում» Սա տիպիկ հունական նամակի բացման ձև է: Դա աղոթք է / ցանկություն հասցեատիրոջ բարգավաճման և առողջության համար: Սա եղել է սիրելիին ողջունելու ձև: Սա չի կարող օգտագործվել որպես ապացույցող տեքստ «առողջ, հարուստ ավետարանի» համար, որն այնքան հայտնի է ժամանակակից Ամերիկայում: Տես Gordon Fee (խարիզմատիկ գիտնական), *The Disease of the Health, Wealth Gospel*. Իմ կարծիքը բուժշկության մասին, կարող էք նայել Հակոբոս 5-ում առցանց www.freebiblecommentary.org.

- **«որ ամեն բանի մեջ յաջող եւ առողջ լինես»** Սա տիպիկ աղոթքի բացման ձև է հունահռոմեական աշխարհում առաջին դարում: Այն երբեք չի համարվել որպես ապացույց-տեքստ «առողջություն, հարստություն և բարգավաճում» քարոզիչների համար: Աստվածաշնչի տեքստերը հանելով կոնտեքստից կարող է օգտագործվել ցանկացած բան պնդելու համար: Տեքստը չի կարող նշանակել մի բան այսօր, ինչը երբեք չի նշանակել իր օրերում: Միակ ներշնչված մարդը՝ բնագրի հեղինակն է: Մենք պետք է հետևենք նրա մտքերին, ոչ թե դիտողություններով առաջ քաշենք մեր սեփական:
- **«հոգին»** Այս տերմինը «*psuche*» (հոգի) գրեթե հոմանիշ է «*pneuma*»: Նրանք օգտագործվում են խոսելու անձի կամ ես-ի էության մասին: Սա չի վերաբերում մարդու մեկուսացված մասին (մարմին, հոգի, շունչ): Մարդիկ միասնություն են (տես Ծննդ. 2: 7): Մենք շունչ ենք. մենք չունենք շունչ:

h. 3 «շատ ուրախացայ» (տես II Հովհ. 4; Փիլ. 4.10)

- **«եկան...վկայեցին»** Սրանք երկուսն էլ ՆԵՐԿԱ ԴԵՐԲԱՅՆԵՐ են, ինչը ենթադրում է, որ
 1. Այս եկեղեցու անդամները կանոնավոր ճանապարհորդել են Եփեսոս և տեղեկություն բերել Հովհաննեսին
 2. այդ վերադարձող միսիոներները հաղորդել են Գալիոսի առատաձեռնության մասին

Հնարավոր է ծերունի Հովհաննեսը չի կարողացել ճանապարհորդել, բայց նա ցանկացել է իմանալ եկեղեցիների վիճակի և աճի մասին:

- **«Ճմարտութեան մեջ են գնում»** Այս արտահայտությունը աստվածաբանորեն զուգահեռ է «քայլել լույսի մեջ» արտահայտությանը (տես I Հովհ. 1:7): Քրիստոնեությունը հիմնականում դավանանք, ծես կամ համակարգ չէ, որին պետք է միանալ, այլ կյանք, որը պետք է ապրել է՝ Հիսուս Քրիստոսի հետ հարաբերություն ունենալով: Վաղ եկեղեցին սկզբում կոչվել է "The Way" (տես Գործք 9: 2, 19: 9,23; 24.22). Ճմարտությունը ոչ միայն ինտելեկտուալ/մտային (բովանդակություն) է, այլ նաև հարաբերություն (նախ Աստծո հետ, Հիսուս Քրիստոսի միջոցով, որի արդյունքում սիրելով ուրիշների): Տես Հատուկ Թեմաներ Ճմարտության մասին Հովհաննես 6:55 և 17: 3.

h. 4 «իմ որդիները» Սա ընդհանուր անվանում է Հովհաննեսի նամակներում (տես I Հովհ. 2: 12,13,18,28; 3:7,18, 4:4, 5:21): Շեշտադրումն այստեղ (1) Հովհաննեսի առաքելական իշխանության վրա է կամ (2) Հովհաննեսի սիրո արտահայտության տերմինն է եկեղեցիների և քրիստոնյաների հանդեպ Հռոմեական մարզի Փոքր Ասիայի (Արևմտյան Թուրքիա), որտեղ նա անցկացրել է իր ծառայության վերջին օրերը:

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 5-8
⁵ Միրելի, հաւատարմաբար ես գործում այդ՝ ինչ որ անում ես եղբայրներին եւ օտարականներին. 6 Որոնք վկայեցին քո սերի համար եկեղեցու առաջին, որ լաւ կ'անես եթէ նորանց Աստուծոյ արժանաւոր կերպով ճանապարհ գցես: 7 Որովհետեւ նորա անունի համար դուրս եկան առանց մի բան առնելու հեթանոսներից: 8 Արդ պետք է մենք ընդունենք այսպիսիներին, որ գործակից լինենք ճմարտութեանը:

h. 5 «հաւատարմաբար ես գործում» Գալիոս այս գործողությունները լիրձ հակառակն են Դիոտրեփեսի գործողություններից հհ. 9-10: Տես Հատուկ Թեմաներ: Հավատալ, վստահել, հավատք և հավատարմություն Հովհաննես 1: 7 և Հովհաննես 1:14:

- **«ինչ որ անում ես»** Սա հարաբերական ԴԵՐԱՆՈՒՆ է *ean*-ի հետ և ԱՕՐԻՍ ՉԵԶՈՔ ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, որն արտահայտում է պայման՝ կատարվելու հեռանկարով: Գալիոսը օգնել էր միսիոներներին ճանապարհորդել ամեն առիթով և ամեն հնարավոր կերպերով:
- **«եւ օտարականներին»** Եկեղեցին պետք է ողջուներ և աջակցեր այդ շրջիկ քրիստոնյա միսիոներներին, բայց տեղական իրավիճակի պատճառով, Գալիոսը մենակ էր օգնում այդ եղբայրներին, որոնց նա չգիտեր, բացի նրանից, որ նրանք նույնպես ծառայում և սիրում էին Հիսուս Քրիստոսին:

h. 6 «Որոնք վկայեցին քո սերի համար եկեղեցու առաջին» Ակնհայտ է, որ Եփեսոսում վաղ եկեղեցին ունեցել է միսիոներական հաշվետվության ժամանակ իրենց համատեղ պաշտամունքի ընթացքում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՍԱ: ԵԿԵՂԵՑԻ (EKKLESIA)

Այս հունարեն տերմինը, *ekklesia*, երկու բառերից է կազմված, «դուրս» և «կանչված» ուստի, տերմինը նշանակում է աստվածային կերպով կանչված մարդիկ: Վաղ եկեղեցին վերցրեց այս բառը աշխարհիկ իմաստով (հմմտ. Գործք 19:32,39,41) և որովհետև Սեպտուագինդումը օգտագործում է սա Իսրայելի «համայնք/ժողովուրդ» համար (հմմտ. Թվոց. 16:3; 20:4):

Նրանք օգտագործեցին դա իրենց համար, որպես Հին Կտակարանի Աստծո ժողովուրդ: Նրանք նոր Իսրայելն էին (հմմտ. Հռ. 2:28-29; Գաղ. 6:16; I Պետ. 2:5,9; Հայտ. 1:6), Աստծո համաշխարհային միսիայի/առաքելության իրականացումը (հմմտ. Ծննդ. 3:15; 12:3; Ելից. 19:5-6; Մաթ. 28:18-20; Դուկ. 24:47; Գործք 1:8):

Այս տերմինը օգտագործվում է մի քանի իմաստներով Ավետարաններում և Գործք Առաքելոցում:

1. աշխարհիկ քաղաքային ժողով, Գործք 19:32,39,41
2. Աստծո տիեզերական/ամբողջական ժողովուրդը Քրիստոսում, Մաթ. 16:18 և Եփեսացիս
3. Քրիստոսում հավատացյալների տեղական համայնք, Մաթ. 18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին)
4. Իսրայելի հավաքական ժողովուրդը, Գործք 7:38, Ստեփանոսի քարոզի մեջ
5. Աստծո ժողովուրդը մարզում, Գործք 8:3 (Հուդա կամ Պաղեստին)

▪ **«լաւ կ'անես»** Սա հունարեն իդիոմա է, որը հայտնաբերվել է եգիպտական պապիրուսներում (տես Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek Testament*) «խնդրում եմ» բառի համար (տես Գործք 10:33):

▪ **«նորանց ճանապարհ գցես»** Սա տեխնիկական իդիոմա է, որը նշանակում է սպառազինել, աղոթել և հոգալ կարիքները ճանապարհորդող միսիոներներին (տես Գործք 15: 3; Հռոմ. 15:24, I Կոր. 16: 6, II Կորնթ. 1:16; Տիտոս 3:13):

▪ **«Աստուծոյ արժանաւոր կերպով»** Սա նշանակում է արժանի, սիրող, առատ ձևով (տես Կող. 1:10, I Թեա. 2:12): Հավատացյալները պետք է վարվեն ավետարանի ծառայողների հետ արժանավայել կերպով՝ իմանալով, թե նրանք ում են ծառայում (տես Եփ. 4:1):

h. 7

NASB, REB “նրանք դուրս եկան”

NKJV “նրանք գնացին”

NRSV “նրանք սկսեցին իրենց ընթացքը”

TEV, NJB “նրանք մեկնեցին”

Սա շատ տարածված ԲԱՅՇՈՒ օգտագործվում է

1. կեղծ ուսուցիչները թողնելով եկեղեցին I Հովհ. 2:19
2. սուտ մարգարեները դուրս գալով աշխարհի I Հովհ. 4: 1
3. շատ մոլորեցնողներ դուրս եկան աշխարհի II Հովհ. h. 7
4. ճշմարիտ Առաքելական վկաները դուրս գալով (աշխարհի) III Հովհ. 7

▪ **NASB** “Անվան համար”

NKJV “Նրա անվան համար”

NRSV “Քրիստոսի համար”

TEV “Քրիստոսին ծառայելու մեջ”

NJB “ամբողջությամբ անվան համար”

Սա օրինակ է «անուն»-ի համար, որը նաև օգտագործվում է Հիսուս Քրիստոսի անձի և գործի համար: Հավատացյալները հավատալով Նրա անվանը (տես Հովհ. 1:12; 3:18; Հռոմ. 10: 9, I Կոր. 12: 3,

Փիլ. 2: 9-11), նրանք ներված են Նրա անունով (I Հովհ. 2 : 13), նրանք նաև գործում են Նրա անվան համար (տես Մատթ. 10:22; 24: 9; Մարկ. 13:13, Ղուկ. 21:12,17; Հովհ. 15:21, 20:31, Գործք 4:17; 5:41; 9:14; Հռ. 1:5, I Պետ. 4:14,16; Հայտ. 2:3):

-
- NASB** “ոչինչ չընդունելով հեթանոսներից”
- NKJV** “ոչինչ չվերցնելով հեթանոսներից”
- NRSV** “աջակցություն չընդունելով անհավատներից”
- TEV** “առանց ընդունելու որևէ օգնություն անհավատներից”
- NJB** “առանց հենվելու անհավատների վրա որևէ բանի համար”

Այս արտահայտությունը վերաբերվում է այն վկաներին, ովքեր վստահում էին Աստծուն Իր հոգատարության համար, շատ նման է Հիսուսի խոսքերին Տասներկուսին Մատթ. 10:5-15 և Յոթանասունին Ղուկաս 10: 4-7:

Սա առաջին դարի վերջում օգտագործվող «հեթանոսներ» բառն է, որպես ակնարկ հեթանոսներին կամ անհավատներին (տես Մատթ.5:47, I Պետ. 2:12; 4: 3): Հավատացյալները պետք է աջակցեն ավետարանի գործին: Ով օգնում է մեկին բացահայտում է իր սիրտը:

Հովհաննեսի օրերում շատ ճամփորդող ուսուցիչներ սովորեցրել են փողի ու հեղինակության համար: Աստծո ուսուցիչներին / քարոզիչներին / ավետարանիչներին պետք է օգնեին ոչ թե նրանց խոսքերի համար, այլ իրենց Տիրոջ պատճառով, ում առաքելության մեջ նրանք զոհաբերվելով ներգրավված էին:

h. 8 «պետք է մենք» Սա հաճախ կրկնվող բարոյական հորդոր է (հմմտ. Հովհ. 13:14, 19: 7, I Հովհ. 2:6, 3:16, 4:11): *opheilō* տերմինը նշանակում բառացիորեն լինել ֆինանսական պարտքի մեջ, բայց դա հետագայում օգտագործվել է փոխաբերական իմաստով, որը նշանակում է պարտավոր կամ պարտական լինել որևէ մեկին:

▪ **«ընդունենք այսպիսիներին»** Հյուրասիրությունը կարևոր պարտականություն էր վաղ եկեղեցում՝ տեղական պանդոկների անմխիթար բարոյական պայմանների պատճառով (տես Մատթ. 25:35, Հռոմ. 12.13; I Տիմ. 3: 2, 5:10, Տիտոս 1: 8, Եբր. 13: 2, I Պետ. 4: 9):

▪ **«որ գործակից լինենք ճշմարտութեանը»** Հավատացյալներն օգնելով միսիոներներին, ներգրավվում էին նրանց հավատքի և ճշմարտության գործին: Սա ավետարանի սկզբունք է: Նորկտակարանյան ուղեցույցները քրիստոնյաներին գտնվում է II Կորն. 8-9:

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 9-10
⁹ Ես գրեցի եկեղեցուն. Բայց Դիոտրեփեւը որ ուզում է նորանց միջումը առաջինը լինել, մեզ չէ ընդունում: ¹⁰ Սորա համար եթէ գամ նորա գործերը կ'իջեմ որ չար խօսքերով շատախօսութիւն է անում մեզ վերայ, եւ սորանով էլ չ'բաւականացած՝ ոչ ինքն է ընդունում եղբայրներին, եւ նորանց էլ որ ուզում են ընդունել, արգելում է եւ եկեղեցուցը հանում:

h. 9 «Ես գրեցի եկեղեցուն» Սա կարող է վերաբերել I կամ II Հովհաննեսին կամ կորած նամակին; ամենայն հավանականությամբ, դա վերաբերում է II Հովհաննեսին: Տես Հատուկ Թեմա: Եկեղեցի (*Ekklesia*)h. 6.

▪ **«Դիոտրեփեւը որ ուզում է նորանց միջումը առաջինը լինել»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾՍԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սա բարդ տերմին է «սեր» (*phile*) և «առաջին տեղը զբաղեցնելու համար» (*prōteuō*): Այն օգտագործվում է միայն այստեղ ՆԿ-ում, սակայն երկրորդ տերմինը օգտագործվում է Կող. 1:18 Քրիստոսի համար, որ ամեն ինչում նա լինի առաջինը: Այս մարդը առաջին արձանագրողն է

«իշխանություն-տեր» կամ «եկեղեցու շեֆ» հասկացողության: Մենք չգիտենք, թե նա հովիվ է եղել կամ թե պարզապես կարևոր աշխարհիկ մարդ: Սակայն, սա ցույց է տալիս նրա շարժառիթները: Այսպիսի ինքնասիրահարված անհատ եղել է եկեղեցում ամեն ժամանակ: Արդյոք նա նաև գնոստիկ էր անորոշ է և անհաստատ, բայց հնարավոր է:

▪ **«մեզ չէ ընդունում»** Դիտորեփեսը ոչ միայն մերժում էր Հովհաննեսի առաքելական իշխանությունը, այլ նաև ագրեսիվորեն ներգրավված էր առաքելական քաղաքականությունը մերժելու մեջ և նույնիսկ վրեժխնդրությամբ էր լցվում նրանց հանդեպ, ովքեր հետևում էին նրանց:

h. 10 «եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն:

▪ **«գամ նորա գործերը կ'իշեմ»** Հովհաննեսը ցանկանում է հստակորեն սահմանազատել այս մարդու դրդապատճառները (տես h. 9) և գործողությունները (տես h. 10):

1. NASB – «Անարդարացիորեն մեղադրելով մեզ չար խոսքերով»
NKJV – «Դատարկաբանելով մեր դեմ չարասիրտ խոսքերով»
NRSV – «Կեղծ մեղադրանքներ մեր դեմ»
TEV – «Սարսափելի բաներ է նա ասում մեր մասին և սուեր է նա պատմում»
NJB – «Չար մեղադրանքներ է նա շրջանառում մեր դեմ»
2. «նա ինքը չի ընդունում եղբայրներին»
3. «Նա արգելում է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են դա անել»
4. «Նա նրանց հանում է եկեղեցուց դուրս»

Այս մարդը ցանկանում է ուշադրություն և չի կիսվի ուշադրության կենտրոնացում ոչ մեկի հետ: Նա նաև հեռացնում է եկեղեցուց նրան, ով համաձայն չէ կամ կարող է չհամաձայնել նրա հետ:

▪ **«եկեղեցուցը հանում»** Այս նույն ուժեղ ԲԱՅՈՒ (*ekballō*) օգտագործվում է Հովհ. 9: 34,35 է կույր մարդու համար, ում Հիսուսը բուժեց, ով արտաքսված էր ժողովարանից: Այն նաև օգտագործվում է սատանայի վտարտած լինելու համար Հովհ. 12:31.

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 11-12
¹¹ Միրելի, չարին նմանող մի լինիր, այլ բարիին. ով որ բարի է գործում Աստուածանից է, եւ ով որ չարիք է գործում Աստուծուն չէ տեսել: ¹² Դեմետրիոսը վկայութիւն ունի ամենից եւ նոյն իսկ ճշմարտութիւնիցն էլ, եւ մենք էլ վկայում ենք. Եւ գիտէք որ մեր վկայութիւնը ճշմարիտ է:

h. 11 «չարին նմանող մի լինիր» Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ (*deponent*) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը հաճախ ենթադրում է դադարեցնել մի գործողությունը, որը գործընթացի մեջ է: Մենք անգլերեն «նմանակող» տերմինը ստանում ենք հունարեն այս բառից (*mimomai*): Մենք պետք է ուշադիր ընտրենք մեր դերերը: Նրանք պետք է լինեն հասուն քրիստոնյա անձինք եկեղեցում (տես Բ Թես. 3:7,9; Եբր. 6:12; 13:7): Դեմետրիոսը լավ օրինակ է, Դիտորեփեսը՝ վատ օրինակ:

▪ **«ով որ բարի է գործում Աստուածանից է»** Հովհաննեսի նամակներն ունեն երեք թեստեր, որոնցով կարելի է իմանալ, թե նրանք քրիստոնյա են: Սա վերաբերում է հնազանդության թեստին (տես I Հովհ. 2: 3-6,28-29; 3: 4-10; 5:18; Բ Հովհ. 6): Կան նաև ակնարկները մյուս երկու թեստերին՝ (1) վարդապետություն (հհ. 3-4) և (2) սեր (հհ. 1-2,6):

▪ **«ով որ չարիք է գործում Աստուծուն չէ տեսել»** Կեղծ վարդապետները պնդում էին, թե Աստուծուն ճանաչում են անձնապես, բայց ապրում էին անասոված ու անսեր կյանքով: Սա արտացոլում են

անտիևոմյան, ազատամիտ գնոստիկների, ովքեր հավատում էին, որ փրկությունը մտավոր ճշմարտություն էր, որը կարելի է հաստատել, սակայն ոչ մի կապ չունենալով առօրյա կյանքի հետ:

հ.12 «Դեմետրիոսը վկայություն ունի ամենից» Սա ԿԱՏԱՐՅԱԼ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սա իրոք, կարծես նամակ երաշխավորագիր լինի Հովհաննեսի կողմից Գայիոսին՝ միսիոներ Դեմետրիոսի մասին, ով բերել էր III Հովհ. թուղթը Գայիոսին: ՆԿ-ում ուրիշ նամակ երաշխավորագրեր կան, տես Գործք 18:27; Հռ. 16:1; I Կոր. 16: 3; II Կոր. 3: 1; 8: 16-24; Կող. 4:10.

- «Եւ նոյն իսկ ճշմարտութիւնիցն էլ» ճշմարտությունը (տես Հատուկ Թեմաներ Հովհաննես 6:55 և 17: 3) անձնավորված է որպես ևս մեկ լավ վկայություն Դեմետրիոսի մասին:
- «Եւ գիտէք որ մեր վկայութիւնը ճշմարիտ է» Հովհաննեսը հաստատում է իր սեփական հավաստի վկայություն Քրիստոսի մասին (տես Հովհ. 19:35; 21:24):

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 13-14
¹³ Շատ բան ունեի քեզ գրելու, բայց չեմ կամենում թանաքով եւ գրիչով գրել քեզ: ¹⁴ Բայց յոյս ունիմ շուտով քեզ տեսնել, եւ բերանէ բերան կ'խօսենք:

հ. 13 Սա շատ նման է II Հովհ. 12-ին:

Արևելահայերեն Աստվածաշունչ Համար 15
¹⁵Խաղաղութիւն լինի քեզ հետ. Բարեւ են տալիս քեզ սիրելիքը. Բարեւ տուր մեր սիրելիներին անուն անուն:

հ. 14 «Խաղաղութիւն լինի քեզ հետ» Սա ակնհայտորեն հղում է ուղղված երբայերեն իղրոմա հանդիսացող *shalom* Շալոմ բառին (տես Ղուկ. 10: 5): Դա կարող է նշանակել «բարև» կամ «Ցտեսություն»: Այն արտահայտում է ոչ միայն խնդիրների բացակայություն, այլ Աստծո օրհնությունների ներկայություն: Սրանք հարուցյալ Քրիստոսի առաջին խոսքերը էին աշակերտներին վերնատանը (տես Հովհ. 20: 19,21,26): Թե Պողոսը (տես Եփ. 6:23) և թե Պետրոսը (տես I Պետ. 5:14) օգտագործել են սա որպես փակման աղոթք Աստծու ժողովրդի համար:

- «անուն անուն» Սա իդեոմա է անհատապես, անձամբ և ջերմորեն ողջունելու համար: Այն հաճախ օգտագործվում էր եգիպտական պապիրուսներում:

ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության մեկնաբանության ուղեցույց է, որը նշանակում է, որ դու պատասխանատու ես Աստվածաշնչի քո իսկ մեկնաբանության համար: Մեզանից ամեն մեկը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ դու, Աստվածաշունչն ու Սուրբ Հոգին եք առաջնությունը համարվում: Դու չպետք է սա թողնես մեկնաբանի վրա:

Այս քննարկվող հարցերը քեզ օգնելու համար են , որ դու մտածես գրքի այս բաժնի գլխավոր խնդիրների շուրջ: Սրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և ոչ թե հստակ:

1. Եղել են բազմաթիվ տեսություններ, թե ինչու Գայիոսն ու Դիոտրեփեսը հակասում էին միմյանց: Որոշ առաջարկություններ են եղել
 - ա. աստվածաբանական պատճառներ
 - բ. սոցիալական պատճառներ

գ. եկեղեցական պատճառներ

դ. բարոյական պատճառներ

Բացատրեք յուրաքանչյուր հնարավոր տարբերակները և թե ինչպես կարող են առնչվել III Հովհաննեսին:

2. Ինչպե՞ս են կապված II Հովհաննեսը և III Հովհաննեսի հետ:

3. Թվարկեք երեք թեստեր քրիստոնեական հավաստացման վերաբերյալ, որը գտնվում է I Հովհաննեսում, որոնք կրկնվում են II Հովհաննեսում և III Հովհաննեսում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՈՒՆԱՐԵՆ ԼԵԶՎԻ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՍՆՈՒՑ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոյնե հունարենը, որը հաճախ կոչվում էր հելլենական հունարեն Միջերկրականի ընդհանուր բարբառն էր՝ սկսած Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով (մ.թ.ա. 336 - 323 թթ.) ընդհուպ մինչև հաջորդ ութ հարյուր տարիների ընթացքում (մ.թ.ա. 300 - 500 մ.թ.): Դա ընդամենը պարզեցված, դասական հունարենը չէր, այլ շատ առումներով հունարենի ավելի նոր ձևը, որը դարձավ հնագույն Մերձավոր Արևելքի և Միջերկրականի երկրորդ լեզուն:

Նոր Կտակարանի հունարենը որոշ առումով եզակի էր, որովհետև այն օգտագործողների հիմնական լեզուն, բացառությամբ Դուկասի և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակի, արամեերենն էր: Ահա թե ինչու նրանց գրություններում առկա էին արամեերենի բարբառային և կառուցվածքային ձևերը: Բացի այդ նրանք կարդում էին և մեջբերում անում Սեպտուագինտայից կամ Յոթանասնից (Հին Կտակարանի հունարեն թարգմանությունն էր), որը նույնպես գրված էր կոյնե հունարենով: Սակայն Սեպտուագինտան նույնպես գրել էին հրեա դպրագետները, որոնց մայրենին հունարենը չէր:

Սա հիշեցնում է մեզ, որ մենք չենք կարող դիտարկել Նոր Կտակարանը խիստ քերականական կառուցվածքի տեսանկյունից: Նրա քերականական կառուցվածքը եզակի է, սակայն այն շատ ընդհանրություններ ունի (1) Սեպտուագինտայի հետ, (2) հրեական ստեղծագործությունների հետ, ինչպես օրինակ՝ Ջոզեֆ Ֆլավիոսի գործերն են, ինչպես նաև (3) Եգիպտոսում գտնված պապիրուսների հետ: Ուրեմն ինչպիսի՞ մոտեցում պետք է ունենանք Նոր Կտակարանի քերականական վերլուծությանը:

Կոյնե հունարենի և նորկտակարանյան կոյնե հունարենի քերականական առանձնահատկություններն անկայուն են: Շատ առումներով այն քերականության պարզեցման ժամանակամիջոց էր: Նախ և առաջ մենք կառաջնորդվենք կոնտեքստով: Բառերն իմաստ են ձեռք բերում միայն կոնտեքստում, այդ պատճառով քերականական կառուցվածքը կարելի է միայն հասկանալ (1) որոշակի հեղինակի ոճային առանձնահատկությունների լույսի ներքո, և (2) որոշակի կոնտեքստից: Հնարավոր չէ տալ հունարենի ձևերի և կառուցվածքների հստակ և վերջնական սահմանումները:

Կոյնե հունարենը գլխավորապես բայական լեզու է: Հաճախ մեկնության բանալին է՝ բայածանցյալների տեսակը և ձևը: Գլխավոր նախադասությունների մեծամասնությունում բայը դրվում է սկզբում՝ մատնանշելով դրա կարևոր նշանակությունը: Հունարեն բայը վերլուծելիս պետք է նշել երեք կարևոր բան. (1) ժամանակի, սեռի և եղանակի հիմնական շեշտադրությունը (ձևաբանություն), (2) տվյալ բայի հիմնական իմաստը (բառարանագրություն), և (3) կոնտեքստի էությունն ու զարգացումը (շարահյուսություն):

I. ԺԱՍԱՆԱԿ

Ա. Ժամանակը կամ կերպը ցույց է տալիս բայի հարաբերությունը կատարյալ կամ անկատար գործողությանը: Այն համապատասխանաբար կոչվում է «կատարյալ» և «անկատար» ժամանակ:

1. Կատարյալ ժամանակը կենտրոնանում է գործողության կատարման վրա: Ուրիշ որևէ տեղեկություն չի տրվում, այլ միայն այն, որ որևէ բան է տեղի ունեցել: Ոչինչ չի ասվում գործողության սկզբի, դրա ընթացքի կամ զագաթնակետի մասին:
2. Անկատար ժամանակը կենտրոնանում է գործողության ընթացքի վրա: Այն կարող է նկարագրվել իբրև գծային, շարունակական և սաստկացող:

Բ. Ժամանակը կարող է դասակարգվել ըստ այն բանի, թե ինչպես է հեղինակը դիտարկում գործողության ընթացքը:

1. Այն տեղի ունեցավ = ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ
2. Այն տեղի ունեցավ, իսկ հետևանքները դեռ շոշափելի են = ԿԱՏԱՐՅԱԼ
3. Այն տեղի էր ունեցել անցյալում, և հետևանքները շոշափելի էին, բայց ոչ հիմա = ԳԵՐԱԿԱՏԱՐ
4. Այն տեղի է ունենում = ՆԵՐԿԱ

5. Այն տեղի էր ունենում = ԱՆԿԱՏԱՐ

6. Այն տեղի կունենա = ԱՊԱՌՆԻ

Կոնկրետ օրինակը, թե ինչպես են այս ժամանակաձևերն օգնում մեկնաբանելու՝ «փրկել» տերմինն է: Այն օգտագործվում էր մի քանի տարբեր ժամանակաձևերով՝ ցույց տալով, թե՛ դրա ընթացքը, թե՛ գագաթնակետը:

1. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված» (հմմտ. Հն. 8:24)

2. ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված են, և հետևանքը շարունակվում է» (հմմտ. Եփ. 2:5, 8)

3. ՆԵՐԿԱ - «փրկվում են» (հմմտ. I Կոր. 1:18; 15:2)

4. ԱՊԱՌՆԻ - «կփրկվեն» (հմմտ. Հն. 5:9, 10; 10:9)

Գ. Ուշադրություն դարձնելով բայի ժամանակների վրա՝ մեկնիչները փնտրում են պատճառը, որով բնագրի հեղինակը նախընտրել էր իր մտքերն արտահայտելու համար օգտագործել կոնկրետ ժամանակաձևը: Ստանդարտ «ստանց ավելորդությունների» ժամանակաձևն՝ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ էր: Այն սովորական, ոչ կոնկրետ, «աննշան» կամ «ոչնչով չթուլացող» բայական ձև էր: Այն կարող է օգտագործվել տարբեր կերպերով՝ կախված կոնտեքստից: Այն պարզապես հաստատում էր, որ ինչ-որ բան էր տեղի ունեցել: Անցյալ ժամանակի կերպն ունեին միայն ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ բայերը: Եթե որևէ այլ ժամանակ էր օգտագործվում, հեղինակը շեշտադրում էր ավելի կոնկրետ որևէ բան: Բայց ի՞նչ:

1. ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ. Այն ցույց է տալիս կատարված գործողություն, որի հետևանքները շոշափելի են: Որոշ առումով դա ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԻ և ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ գույքորոշություն է: Սովորաբար շեշտը դրվում է գործողության շոշափելի հետևանքների կամ ավարտման վրա: Օրինակ՝ Եփ. 2:5 և 8 «շնորհքով եք փրկված և շարունակվում եք փրկվել»:

2. ԳԵՐԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. Այն նման էր ԿԱՏԱՐՅԱԼԻՆ, բայց շոշափելի հետևանքներն արդեն վերջացել են: Օրինակ՝ «Պետրոսն էլ դռան մոտ կանգնած էր» (Հովհ. 18:16):

3. ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ. Խոսքը վերաբերում է անավարտ կամ անկատար գործողությանը: Սովորաբար շեշտը դրվում է իրադարձության շարունակության վրա: Օրինակ՝ «Ամեն ով որ նրանում մնում է՝ չէ մեղանչում», «Ամեն ով որ Աստվածանից է ծնված, մեղք չէ անում» (I Հովհ. 3:6 և 9):

4. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. Այս ժամանակաձևի հարաբերությունը ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻՆ համեմատական է ԿԱՏԱՐՅԱԼԻ և ԳԵՐԱԿԱՏԱՐԻ միջև հարաբերությանը: ԱՆԿԱՏԱՐԸ ցույց է տալիս անավարտ գործողություն, որը տեղի էր ունեցել, բայց դադարել էր ներկա պահին կամ էլ գործողության սկիզբին անցյալում: Օրինակ՝ «Այն ժամանակ դուրս էին գնում նրա մոտ Երուսաղեմը» (Մաթ. 3:5):

5. ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ. Այն ցույց է տալիս գործողություն, որը տեղի կունենա ապագայում: Այն շեշտադրում է առավել պոտենցիալ, քան իրական իրողությունը: Այն հաճախ ցույց է տալիս իրադարձության որոշակիությունը: Օրինակ՝ «Երանի... նրանք...» (Մաթ. 5:4-9):

II. ՍԵՌ-

Ա. Սեռը ցույց է տալիս հարաբերությունը բայի գործողության և դրա սուբյեկտի (ենթակայի) միջև:

Բ. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԸ նորմալ, սպասված և ոչ շեշտադրված միջոցն է՝ ցույց տալու, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը:

Գ. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ նշանակում է, որ ենթական կրում է բայի արտահայտած գործողությունը՝ կատարված արտաքին գործող անձի կողմից: Գործողությունը կատարող արտաքին գործող անձին էին մատնանշում հետևյալ նախդիրները և հոլովները հունարեն Նոր Կտակարանում:

1. Անհատական ուղղակի գործող անձ՝ *hupo* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (հմմտ. Մաթ. 1:22; Գործք 22:30):

2. Անհատական միջնորդ գործող անձ՝ *dia* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ (հմմտ. Մաթ. 1:22):

3. Անորոշ գործող անձ սովորաբար՝ *en* ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ:

4. Երբեմն անհատական կամ անորոշ գործող անձ միայն ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՎ:

Դ. ՉԵԶՈՔ ՍԵՌԸ նշանակում է, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը,

ինչպես նաև ուղղակիորեն ներգրավված է բայի գործողության մեջ: Այն հաճախ կոչվում է անձնական սուր հետաքրքրվածության սեռ: Այս քերականական կառույցն ուժեղացնում էր ենթակայի նշանակությունը նախադասության մեջ: Անգլերենում նման քերականական կառույց չկա: Հունարենում այն ունի բազմաթիվ նշանակություններ և թարգմանություններ: Այս ձևի որոշ օրինակներն են.

1. ԱՆԴՐԱԴԱՐՁ - ենթակայի ուղղակի գործողությունն ինքն իր վրա: Օրինակ՝ «...ինքնիրան խեղդեց» (Մաթ. 27:5):
2. ԻՆՏԵՆՍԻՎ - ենթական կատարում է գործողությունն ինքն իր համար: Օրինակ՝ «Սատանան ինքն էլ լույսի հրեշտակի կերպարանքն իրան վրա է առնում» (II Կորնթ. 11:14):
3. ՓՈԽԱԴԱՐՁ - երկու սուբյեկտների փոխազդեցությունը: Օրինակ՝ «Եվ խորհուրդ արին իրար հետ...» (Մաթ. 26:4):

III. ԵՂԱՆԱԿ

Ա. Կոյնե հունարենում կա չորս եղանակ: Դրանք ցույց են տալիս բայի հարաբերությունը իրականությանը, համեմայն դեպս հեղինակի սեփական տեսանկյունից: Եղանակները բաժանվում են երկու մեծ խմբի՝ իրական գործողություն ցույց տվող (ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) և պոտենցիալ գործողություն ցույց տվող (ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, ՀՐԱՍԱՅԱԿԱՆ և ԸՂՁԱԿԱՆ):

Բ. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ցույց էր տալիս ստանդարտ եղանակ, որը ցույց էր տալիս գործողություն, որը տեղի էր ունեցել կամ տեղի էր ունենում առնվազն հեղինակի տեսանկյունից: Սա միակ հունարեն եղանակն էր, որն արտահայտում էր որոշակի ժամանակ, եթե նույնիսկ այդ ասպեկտը երկրորդական էր:

Գ. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում էր հնարավոր գործողությունն ասպագայում: Ինչ-որ մի բան դեռ տեղի չի ունեցել, բայց հնարավորությունները մեծ են, որ տեղի կունենա: Այն շատ ընդհանրություն ունի ԱՊԱՆՆԻԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ հետ: Տարբերությունն այն է, որ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆ արտահայտում է որոշակի աստիճանի կասկած: Անգլերենում սա հաճախ արտահայտվում է *could*, *would*, *may* կամ *might* տերմիններով (կարող էր, կկարողանար):

Դ. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում էր ցանկություն, որը թերապես կարող էր ի կատար ածվել: Այն դիտարկվում էր մի քայլ առաջ իրական գործողությունից ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ համեմատ: ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում էր գործողության հնարավորությունը որոշ պարագաների ներքո: Նոր Կտակարանում ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հազվադեպ էր հանդիպում: Դ-ա ամենից հաճախ օգտագործվում է Պողոսի հայտնի արտահայտությունում՝ «Քավ լիցի», որը հանդիպում է ավելի քան տասնհինգ անգամ (հմմտ. Հռ. 3:4, 6, 31; 6:2, 15; 7:7, 13; 9:14; 11:1, 11; I Կորնթ. 6:15; Գաղ. 2:17; 3:21; 6:14): Մյուս օրինակներն են՝ Թես. 1:38, 20:16, Գործք Առաք. 8:20, և I Թես. 3:11:

Ե. ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ցույց էր տալիս հրաման, որի կատարումը հնարավոր էր, բայց շեշտը դրվում էր խոսողի մտադրության վրա: Այն հաստատում էր միայն կամային հնարավորությունը և պայմանավորված էր մեկ ուրիշ անձի ընտրությամբ: ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հատկապես օգտագործվում էր աղոթքներում և երրորդ անձի խնդրվածքներում: Նոր Կտակարանում այս հրամաններն ունեին միայն ՆԵՐԿԱ և ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ժամանակաձևեր:

Զ. Որոշ քերականություններում ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ դասակարգվում են որպես առանձին եղանակ: Դրանք շատ են հունարեն Նոր Կտակարանում և սովորաբար սահմանվում էին որպես բայաձանցյալներ: Դրանք թարգմանվում են գլխավոր բայի հետ միասին, որի հետ առնչվում են: Ածական դերբայները թարգմանելիս հնարավոր էին բազմաթիվ տարբերակներ: Լավագույն տարբերակն է դիտարկել և հաշվի առնել Աստվածաշնչի մի քանի թարգմանությունները: Այս հարցում շատ օգտակար կարող է լինել «Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով» ձեռնարկը, Բեյքերի հրատարակության (*The Bible in Twenty Six Translations*, Baker):

Է. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼՆ օգտագործվում

էր որպէս գործողության ստանդարտ կամ «աննշան» միջոց իրողությունն արձանագրելու համար: Յանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակն ունեին կոնկրետ նշանակություն մեկնության համար, որը հեղինակն ուզում էր հաղորդել:

IV. Հետևյալ ձեռնարկները կարող են օգտակար լինել նրանց համար, ովքեր չեն տիրապետում հունարենին.

- Ա. Բարբարա և Տիմոթի Ֆրայբերգ, «Անալիտիկ Հունարեն Նոր Կտակարան» [Friberg, Barbara and Timothy. *Analytical Greek New Testament*. Grand Rapids: Baker, 1988 թ.:
- Բ. Ալֆրեդ Մարշալ, «Նոր Կտակարանի Տողամիջյան Հունարեն-Անգլերեն Թարգմանություն» [Marshall, Alfred. *Interlinear Greek-English New Testament*. Grand Rapids: Zondervan, 1976 թ.:
- Գ. Ուիլյամ Դ. Մաունս, «Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծական Բառարան» [Mounce, William D. *The Analytical Lexicon to the Greek New Testament*. Grand Rapids: Zondervan, 1993 թ.:
- Դ. Ռեյ Սամերս, «Նորկտակարանյան Հունարենի Կարևոր Առանձնահատկությունները» [Summers, Ray. *Essentials of New Testament Greek*. Nashville: Broadman, 1950 թ.:
- Ե. Դուք կարող եք նաև օգտվել կոյնե հունարենի ուսումնասիրության ուսումնական դասընթացներից, որոնք հասանելի են Չիկագոյի Մուդիի Աստվածաշնչյան Ինստիտուտի հետ նամակագրության միջոցով:

V. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ա. Շարադասությամբ գոյականները դասակարգվում են ըստ հոլովների: Հոլովը գոյականի խոնարհվող ձևն էր, որը ցույց էր տալիս դրա հարաբերությունը բային և նախադասության մյուս անդամներին: Կոյնե հունարենում նախդիրները ցույց էին տալիս հոլովի շատ ֆունկցիաներ: Քանի որ հոլովական ձևը կարող էր վկայել մի քանի տարբեր տեսակի հարաբերությունների մասին, նախդիրներն օգնում էին ավելի հստակ սահմանափակել այս հնարավոր ֆունկցիաները:

Բ. Հունարենում գոյություն է ունեցել ութ հոլով:

1. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր առարկաներն անվանելու համար, և այն սովորաբար կատարում էր նախադասության ենթակայի ֆունկցիան: Այս հոլովում կարող էին օգտագործվել նաև բաղադրյալ գոյականները և ածականները «լինել» կամ «դառնալ» օժանդակ բայերի հետ:
2. ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր նկարագրության համար և սովորաբար մատնանշում էր այն բառի հատկանիշը կամ որակը, որի հետ այն առնչվում էր: Այն պատասխանում էր «ի՞նչ տեսակ» հարցին: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *of* նախդիրի օգնությամբ:
3. ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՄԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ նույն խոնարհված ձևը, բայց այն օգտագործվում էր անջատում նկարագրելու համար: Սովորաբար այն նշանակում էր անջատում ըստ ժամանակի, տարածության, աղբյուրի, ծագման կամ աստիճանի: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *from* նախդիրի օգնությամբ:
4. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր անձնական հետաքրքրվածությունը նկարագրելու համար: Սա կարող էր նշանակել դրական կամ բացասական ասպեկտը: Հաճախ սա անուղղակի լրացումն էր: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *to* նախդիրի օգնությամբ:
5. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆԻ նույն խոնարհված ձևը, բայց այն նկարագրում էր դիրք կամ տեղայնք տարածության, ժամանակի կամ տրամաբանական սահմանների մեջ: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *in, on, at, among, during, by, upon* և *beside* նախդիրների օգնությամբ:
6. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆ և ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԻ նույն խոնարհված ձևը: Այն նշանակում էր միջոց կամ կապ: Այն հաճախ թարգմանվում էր անգլերեն *by* և *with* նախդիրների օգնությամբ:

7. ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր գործողության ավարտը նկարագրելու համար: Այն արտահայտում էր սահմանափակում: Գոյականն այս հոլովում հիմնականում օգտագործվում էր որպես ուղիղ լրացում: Այն պատասխանում էր «որքա՞ն», «ի՞նչ աստիճան» հարցերին:
8. ԿՈՉԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր որևէ մեկին ուղղակի դիմելու համար:

VI. ՇԱՂԿԱՊՆԵՐ և ԿԱՊԱԿՑՈՂ ԲԱՌԵՐ

- Ա. Հունարենը շատ ճշգրիտ լեզու է, որովհետև այն ունի շատ կապակցող բառեր: Դրանք կապում են մտքերը (նախադասությունները, արտահայտությունները և պարբերությունները): Դրանք այնքան տարածված են, որ դրանց բացակայությունը (անշղկապությունը) հաճախ կարևոր է մեկնաբանության համար: Փաստացի, այս շղկապները և կապակցող բառերը մատնանշում են հեղինակի մտքի ուղղությունը: Հաճախ դրանք կարևոր են որոշելու համար, թե ինչ է հեղինակը փորձում հաղորդել:
- Բ. Ստորև ներկայացված է որոշ շղկապների, կապակցող բառերի և դրանց իմաստների ցուցակը (այս տեղեկությունը հիմնականում հավաքված է Հ. Բ. Դանայի և Ջուլիուս Բ. Մենթեյի «Հունարեն Նոր Կտակարանի Քերականության Չեռնարկ» գրքից [H. E. Dana and Julius K. Mantey's *A Manual Grammar of the Greek New Testament*]):
1. Ժամանակային կապակցող բառեր
 - ա. *epei, epeidē, hopote, hōs, hote, hotan* (ստորադասական եղ.) - «երբ»
 - բ. *heōs* - «մինչդեռ»
 - գ. *hotan, epan* (ստորադասական եղ.) - «երբ էլ որ»
 - դ. *heōs, achri, mechri* (ստորադասական եղ.) - «մինչև»
 - ե. *priv* (ինֆին.) - «նախքան»
 - զ. *hōs* - «այն ժամանակից ի վեր», «երբ», «այն ժամանակ երբ»
 2. Տրամաբանական կապակցող բառեր
 - ա. Նպատակ
 1. *hina* (ստորադասական եղ.), *hopōs* (ստորադասական եղ.), *hōs* - «որպեսզի»
 2. *hōste* (ինֆինիտիվը հայցական հոլովով հողի հետ) - «որպեսզի», «որ»
 3. *pros* (ինֆինիտիվը հայցական հոլովով հողի հետ) կամ *eis* (ինֆինիտիվը հայցական հոլովով հողի հետ) - «որպեսզի», «որ»
 - բ. Հետևանք (սերտ կապ կա նպատակի և հետևանքի քերականական ձևերի միջև)
 1. *hōste* (ինֆինիտիվ, սա ամենատարածվածն է) - «որպեսզի», «այսպիսով»
 2. *hiva* (ստորադասական եղ.) - «այնպես որ»
 3. *ara* - «այնպես»
 - գ. Պատճառ
 - (1) *gar* (պատճառ/հետևանք կամ պատճառ/եզրահանգում) - «քանզի», «որովհետև»
 - (2) *dioti, hotiy* - «որովհետև»
 - (3) *epei, epeidē, hōs* - «քանի որ»
 - (4) *dia* (հայցական հոլովով) և (ինֆինիտիվով և հողով) - «որովհետև»
 - դ. Եզրակացություն
 - (1) *ara, poinun, hōste* - «հետևաբար»
 - (2) *dio* (ամենաուժեղ հետևանքային շղկապը) - «ինչի կապակցությամբ», «ինչի համար», «հետևապես»
 - (3) *oun* - «ուստի», «այսպիսով», «այն ժամանակ», «որպես հետևանք»
 - (4) *toinoun* - «համապատասխանաբար»
 - ե. Ընդդիմական կամ հակադրություն
 - (1) *alla* (ուժեղ ընդդիմական) - «բայց», «բացառությամբ»
 - (2) *de* - «բայց», «սակայն», «բայց և այնպես», «մյուս կողմից»
 - (3) *kai* - «բայց»
 - (4) *mentoi, oun* - «սակայն»
 - (5) *plēn* - «այնուամենայնիվ» (հիմնականում Գլուկասի Ավետարանում)
 - (6) *oun* - «սակայն»

- զ. Համեմատություն
 - (1) *hōs, kathōs* (ներմուծվում է ստորադասական շաղկապներում)
 - (2) *kata* (բաղադրյալ բառերում՝ *katho, kathoti, kathōsper, kathaper*)
 - (3) *hosos* (Եբրայեցիներին ուղղված թղթում)
 - (4) *ē* - «բան»
- է. Շարունակական կամ հաջորդություն
 - (1) *de* - «և», այժմ»
 - (2) *kai* - «և»
 - (3) *tei* - «և»
 - (4) *hina, oun* - «որ»
 - (5) *oun* - «այն ժամանակ» (Հովհաննեսի Ավետարանում)
- 3. Էմֆատիկ (շեշտված) օգտագործում
 - ա. *alla* - «անշուշտ», «այո», «հրականում»
 - բ. *ara* - «իրապես», «անշուշտ», «իսկապես»
 - գ. *gar* - «բայց իսկապես», «անշուշտ», «իսկապես»
 - դ. *de* - «իսկապես»
 - ե. *ean* - «նույնիսկ»
 - զ. *kai* - «նույնիսկ», «իսկապես», «իրապես»
 - է. *mentoi* - «իսկապես»
 - ը. *oun* - «իրապես», «ամեն դեպքում»

VII. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՊԳՐԿՈՒՄ Է մեկից ավելի պայմանական ստորադասական նախադասություններ: Այս քերականական կառույցը օգնում է մեկնաբանությանը, քանի որ այն տալիս է պայմանները կամ պատճառները, թե ինչու հիմնական բայով արտահայտված գործողությունը տեղի է ունենում կամ տեղի չի ունենում: Կար պայմանական նախադասությունների չորս տեսակ: Դրանք կարող էին արտահայտել գործողությունների մի ամբողջ սպեկտր՝ նրանք, որոնք իրական էին հեղինակի կամ նրա մտահաղացման տեսանկյունից ընդհուպ մինչև ցանկալին:
- Բ. ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆ արտահայտում էր գործողություն կամ վիճակ, որն իրական էր համարվում հեղինակի կամ նրա մտահաղացման տեսանկյունից, թեև այն արտահայտվում էր «եթե» շաղկապի միջոցով: Որոշ կոնտեքստներում այդ շաղկապը կարող էր թարգմանվել «քանի որ», «ապա» (հմմտ. Մաթ. 4:3; Հռ. 8:31): Բայց սա չի նշանակում, որ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ պարտադիր նկարագրում են իրապես տեղի ունեցած իրադարձություններ: Դրանք հաճախ օգտագործվում էին բանավեճի մեջ տեսակետ արտահայտելու կամ մոլորությունը բացահայտելու համար (հմմտ. Մաթ. 12:27):
- Գ. ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ հաճախ կոչվում է «իրականությանը հակասող»: Այն արտահայտում էր մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը և չէր կարող ապացույցել արտահայտած տեսակետը կամ որպես փաստ ընդունվել: Օրինակներ.
 - 1. «Սա եթե մի մարգարե էր, ապա կգիտենար՝ թե ով կամ ինչպիսի կին է նա, որ իրան մոտենում է, որովհետև մեղավոր է (իսկ նա չգիտի)» (Գուկ. 7:39):
 - 2. «Որովհետև եթե դուք Մովսեսին հավատալիք, ինձ էլ կհավատալիք (իսկ դուք չեք հավատում) (Հովհ. 5:46):
 - 3. «Եթե տակավին մարդկանց հաճո լինեի (իսկ ես դա չեմ անում), Քրիստոսի ծառայ չեի (Գաղ. 1:10):
- Դ. ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆ ասում է հնարավոր գործողության մասին ապագայում: Այն հաճախ ենթադրում է այդ գործողության հավանականությունը և հիմնականում չնախատեսվածությունը: Հիմնական բայով արտահայտված գործողությունը

պայմանավորված է այն բանով, թե արդյոք տեղի կունենա ստորադասականում նկարագրված գործողությունը: Օրինակ՝ I Հովհ. 1:6-10; 2:4, 6, 9, 15, 20, 21, 24, 29; 3:21; 4:20; 5:14, 16:

Ե. ՉՈՐՐՈՐԳ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆ ամենահեռուն է գործողության կատարման հնարավորությունից: Այն հազվադեպ է հանդիպում Նոր Կտակարանում: Փաստացի, չկա լիարժեք ՉՈՐՐՈՐԳ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, որում գլխավոր և ստորադասական նախադասությունները կհամապատասխանեին իրենց սահմանմանը: Մասնակի ՉՈՐՐՈՐԳ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ օրինակ է՝ I Պետր. 3:14-ի բացող խոսքը: Մասնակի ՉՈՐՐՈՐԳ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ մեկ այլ օրինակ է՝ Գործք Առ. 8:31-ի եզրափակիչ խոսքը:

VIII. ԱՐԳԵԼՔՆԵՐ

Ա. ՆԵՐԿԱ ՀՐԱՍԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ *ME* ՍԱՄՆԻԿԻ հետ հաճախ (բայց ոչ միմիայն) շեշտադրում է արդեն տեղի ունեցող գործողության դադարը: Որոշ օրինակներ են՝ «ձեզ համար գանձեր մի դիզեք երկրիս վրա...» (Մաթ. 6:19); «հոգս մի՛ անեք ձեր կյանքի համար...» (Մաթ. 6:25); «և ձեր անդամները անիրավության գործիք մի ներկայացնեք մեղքին...» (Հռ. 6:13); «և մի տրտմեցնեք Աստուծո Սուրբ Հոգին...» (Եփես. 4:30); և «մի արբենաք գինով...» (5:18):

Բ. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ *ME* ՍԱՄՆԻԿԻ հետ շեշտադրում է, որ «նույնիսկ մի սկսեք կատարել որոշակի գործողություն»: Որոշ օրինակներ են՝ «Մի կարծեք...» (Մաթ. 5:17); «հոգս մի անեք...» (Մաթ. 6:31); «ամոթ մի համարիր...» (II Տիմ. 1:8):

Գ. ԿՐԿՆԱԿԻ ԺԽՏՈՒՄԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ հետ շատ ուժգին ժխտում է՝ «երբեք, ոչ երբեք» կամ «ոչ մի դեպքում»: Որոշ օրինակներ են՝ «Նա մահ չի տեսնիլ հավիտյան» (Հովհ. 8:51); «ես հավիտյան միս չեմ ուտիլ» (I Կորնթ. 8:13):

IX. ՀՈԳ

Ա. Կոյնե հունարենում որոշիչ հոդն ունի նույն իմաստն, ինչ անգլերենի որոշիչ հոդը: Նրա հիմնական ֆունկցիան էր որպես «ցուցիչ»՝ միջոց հանդիսանալ ուշադրությունը գրավելու բառին, անվանը կամ արտահայտությանը: Դրա օգտագործումը տարբեր է Նոր Կտակարանի տարբեր հեղինակների մոտ: Որոշիչ հոդը կարող էր նաև կատարել հետևյալ ֆունկցիան.

1. որպես առանձնացում ըստ հակասության սկզբունքի, ինչպես ցուցական դերանունն է
2. որպես նշան՝ ավելի վաղ հիշատակված առարկայի կամ անձի
3. որպես միջոց՝ նախադասության մեջ որոշելու ենթական կապող բայի հետ: Օրինակներ՝ «Աստված Հոգի է» Հովհ. 4:24; «Աստված լույս» I Հովհ. 1:5; «Աստված սեր է» 4:8,16:

Բ. Կոյնե հունարենը չունի անորոշ հոդ՝ ի տարբերություն անգլերենի: Որոշիչ հոդի բացակայությունը կարող էր նշանակել.

1. առարկայի առանձնահատկության կամ որակի շեշտադրում
2. առարկայի դասակարգի շեշտադրում

Գ. Նոր Կտակարանի հեղինակները տարբեր կերպ էին օգտագործում հոդը:

X. ՇԵՇՏԱԴՐՄԱՆ ԿԵՐՊԵՐԸ ՀՈՒՆԱՐԵՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Ա. Շեշտադրման տեխնիկան տարբեր է Նոր Կտակարանի տարբեր հեղինակների մոտ: Ամենահետևողական և խիստ գրողներն էին Դուկասը և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակը:

Բ. Ավելի վաղ մենք նշել էինք, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ստանդարտ էր և չէր շեշտադրվում, մինչդեռ ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակ իրենց նշանակությունն ունեին մեկնության համար: Սա անշուշտ չի նշանակում, որ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՍԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ հաճախ չէր օգտագործվում որպես կարևոր քերականական ձև: Օրինակ՝ Հռ. 6:10 (կրկնակի):

Գ. Բառային հաջորդականությունը կոյնե հունարենում

1. Կոյնե հունարենը թեքական (ֆլեկտիվ) լեզու էր, որն ի տարբերություն անգլերենի կախված չէր բառային հաջորդականությունից: Հետևաբար հեղինակը կարող էր փոխել բառային ստանդարտ հաջորդականությունը, որպեսզի ցույց տար:
 - ա. ինչ էր հեղինակն ուզում ընդգծել ընթերցողի համար
 - բ. ինչը կարող էր, ըստ հեղինակի, զարմանալի լինել ընթերցողի համար
 - գ. այն, ինչը թանկ էր և կարևոր հեղինակի համար
2. Բառային ստանդարտ հաջորդականությունը հունարենում դեռևս անլուծելի խնդիր է: Այնուամենայնիվ, ենթադրվում է բառային ստանդարտ հաջորդականությունը հետևյալն է.
 - ա. կապող բայերի համար
 - (1) բայ
 - (2) ենթակա
 - (3) լրացում
 - բ. անցողական բայերի համար
 - (1) բայ
 - (2) ենթակա
 - (3) ուղիղ խնդիր
 - (4) անուղղակի խնդիր
 - (5) նախդրավոր արտահայտություն
 - գ. անվանական արտահայտությունների համար
 - (1) գոյական
 - (2) որոշիչ
 - (3) նախդրավոր արտահայտություն
3. Բառային հաջորդականությունը կարող է ծայրահեղ կարևոր լինել մեկնաբանության համար: Օրինակներ.
 - ա. «Ինձ և Բառնաբասին աջ ձեռը տվին հաղորդակցության համար» (Գաղ. 2:9): «Աջ ձեռը հաղորդակցության համար» արտահայտությունը դրված է սկզբում՝ ցույց տալով դրա կարևորությունը:
 - բ. «Քրիստոսի հետ» (Գաղ. 2:19) առջևում էր դրված *[հուն. Ես Քրիստոսի հետ խաչված եմ]*: Նրա մահը կենտրոնական իրադարձություն էր:
 - գ. «Շատ մասերով և շատ կերպերով» (Եբր. 1:1) առջևում էր դրված: Շեշտադրվում էր այն, թե ինչպես Աստված հայտնեց Իրեն, ոչ թե՝ հայտնության փաստն ինքնին:

Գ. Սովորաբար շեշտադրման համար նաև օգտագործվում էր

1. Դերանվան կրկնությունը, որն արդեն առկա էր բայի խոնարհված ձևում: Օրինակ՝ «Եվ ահա ես ձեզ հետ եմ...» (Մաթ. 28:20):
2. Սպասված շաղկապի կամ մեկ ուրիշ կապակցող բառերի, արտահայտությունների կամ նախադասությունների միջև բացակայությունը: Սա կոչվում է անշաղկապություն («չկապված»): Սպասվում էր, որ շաղկապը պետք է լիներ, այդ պատճառով դրա բացակայությունն ուշադրություն կհրավիրեր իր վրա: Օրինակներ.
 - ա. Երանելիները, Մաթ. 5:3 և այլն (շեշտադրվում էր հերթականությունը)
 - բ. Հովհ. 14:1 (նոր թեմա)
 - գ. Հռ. 9:1 (նոր բաժին)
 - դ. II Կորնթ. 12:20 (շեշտադրվում է հերթականությունը)
3. Տրված կոնտեքստում առկա բառերի և արտահայտությունների կրկնությունը: Օրինակներ՝ «Իր փառավոր շնորհքի գովասանքի համար» (Եփես. 1:6, 12 և 14): Այս արտահայտությունն օգտագործվում էր՝ շեշտադրելու սբ. Երրորդության յուրաքանչյուր անձի գործը:
4. Բարբառային արտահայտությունների կամ բառախաղերի օգտագործումը
 - ա. Սեղմատությունները տարուի ենթարկված բառերի փոխարինող բառերն են, ինչպիսիք են՝ «ննջել» մահ բառի փոխարեն (Հովհ. 11:11-14) կամ «ոտքեր» տղամարդու արնանդամի փոխարեն (Հուրթ 3:7-8; I Թագ. 24:3):

- բ. Շրջաբանություններն Աստծու անվան փոխարինող բառեր են, ինչպիսիք են՝ «երկնքի թագավորություն» (Մաթ. 3:21) կամ «ձայն երկնքից» (Մաթ. 3:17):
- գ. Փոխաբերություններ
- (1) անհավանական չափազանցություններ (Մաթ. 3:9; 5:29-30; 19:24)
 - (2) մեղմ չափազանցություններ (Մաթ. 3:5; Գործք Առ. 2:36)
 - (3) անձնավորում (I Կորնթ. 15:55)
 - (4) հեզմանք (Գաղ. 5:12)
 - (5) բանաստեղծական հատվածներ (Ֆիլ. 2:6-11)
 - (6) բառախաղ
 - (ա) «եկեղեցի»
 - (i) «եկեղեցի» (Եփես. 3:21)
 - (ii) «կոչում» (Եփես. 4:1, 4)
 - (iii) «կանչված» (Եփես. 4:1, 4)
 - (բ) «ազատ»
 - (i) «ազատ կին» (Գաղ. 4:31)
 - (ii) «ազատություն» (Գաղ. 5:1)
 - (iii) «ազատել» (Գաղ. 5:1)
- դ. Բարբառային լեզուն որոշակի մշակույթին և լեզվին բնորոշ յուրահատուկ արտահայտություններն են:
- (1) «Կերակուր» բառի փոխաբերական օգտագործումը (Հովհ. 4:31-34):
 - (2) «Տաճար» բառի փոխաբերական օգտագործումը (Հովհ. 2:19; Մաթ. 26:61):
 - (3) Կարեկցանքի երբայերեն բարբառն էր՝ «ատել» (Ծննդ. 29:31; II Օր. 21:15; Թես. 14:36; Հովհ. 12:25; Հռոմ. 9:13):
 - (4) «Ամենքս» բառն՝ ի համեմատություն «շատերը» բառի: Համեմատություն՝ Եսայիա 53:6 («ամենքս»), իսկ 53:11 և 12 («շատերը»): Այս տերմինները հոմանիշներ են, ինչպես ցույց են տալիս Հռ. 5:18 և 19:
5. Մեկ բառի փոխարեն լիակատար լեզվաբանական արտահայտության օգտագործում: Օրինակ՝ «Տեր Հիսուս Քրիստոս»:
6. *autos* բառի օգտագործումը
- ա. Հոդի հետ (որոշի դիրք) այն թարգմանվում էր որպես «նույն»:
- բ. Առանց հոդի (ստորոգյալի դիրք) այն թարգմանվում էր որպես ուժգնացող անդրադարձ դերանուն՝ ինքն իրեն:
- Ե. Աստվածաշունչ ընթերցողը, որը չգիտի հունարեն կարող է գտնել շեշտադրված տեղերը հետևյալ կերպ:
1. Օգտվելով վերլուծական բառարանից և հունարեն-անգլերեն տեքստի տողամիջյան թարգմանությունից:
 2. Համեմատելով անգլերեն թարգմանությունները, հատկապես նրանք, որոնք հիմնված են թարգմանության տարբեր տեսությունների վրա: Օրինակ՝ կարելի է համեմատել «բառացի» թարգմանությունները (KJV, NKJV, ASV, NASB, RSV, NRSV) «համարժեք դիմամիկ» թարգմանությունների հետ (Williams, NIV, NEB, REB, JB, NJB, TEV): Չեզ նաև մեծապես օգտակար կլինի «Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով», Բեյքերի հրատարակության գիրքը [*The Bible in Twenty-Six Translations*, Baker]:
 3. Օգտվելով Ջոզեֆ Բրայանթ Ռոթերհեմի գրքից՝ «Հատուկ Շեշտադրումն Աստվածաշնչում» [*The Emphasized Bible*, Joseph Bryant Rotherham (Kregel)], 1994 թ.:
 4. Օգտվելով Աստվածաշնչի հետևյալ բառացի թարգմանություններից.
 - ա. «Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ» [*The American Standard Version*], 1901 թ.:
 - բ. «Աստվածաշնչի Բառացի Թարգմանություն Ըստ Յանգի» [*Young's Literal Translation of the Bible* (Guardian Press)], 1976 թ.:

Քերականություն ուսումնասիրելը հոգնեցուցիչ է, բայց անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանության համար: Այս համառոտ սահմանումները, մեկնաբանությունները և օրինակները նպատակ ունեն քաջալերելու և սպառազինելու հունարեն չիմացող անձանց, որպեսզի օգտվեն այս գրքի քերականական բացատրություններից: Անշուշտ, այս սահմանումները չափազանց պարզեցված են: Գրանք չպետք է

օգտագործել դոգմատիկ և ոչ ճկուն կերպով, այլ որպես մի քայլ նորկտակարանյան շարահյուսությունն ավելի լավ հասկանալու ուղղությամբ: Հուսով ենք, որ այս սահմանումները կօգնեն նաև ընթերցողներին հասկանալու մյուս ուսումնական ձեռնարկների մեկնաբանությունները, ինչպիսիք են՝ Նոր Կտակարանի հատուկ ուսումնասիրությունները:

Մենք պետք է կարողանանք ստուգել մեր մեկնաբանությունն աստվածաշնչյան տեքստերի տեղեկատվության հիման վրա: Քերականության հասկացումը ծայրահեղ կարևոր է, բայց մեզ նաև օգնում են պատմական և գրական կոնտեքստները, ինչպես նաև բառերի ժամանակակից օգտագործման և գուգահեռ տեքստերի օգտագործման մասին իրազեկությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՏԵԶՍՏԱՅԻՆ ԶՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մենք այս թեման կնայենք այնպես, որ բացատրենք տեքստային ծանուցումները՝ բերված այս մեկնաբանության մեջ: Մենք կհետևենք հետևյալ պլանին

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

Բ. Նոր Կտակարան

II. Խնդիրների և «ցածր քննադատության» կամ այսպես կոչված «տեքստային քննադատության» տեսությունների համառոտ բացատրությունը:

III. Գրքեր լրացուցիչ ընթերցանության համար

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

1. Մագորեթիկ տեքստ (MT) – Սա հին հրեական կոնսոնանտ (բաղաձայն տառերով գրված) տեքստ էր խմբագրված բաբբի Ակուիբայի կողմից 100թ. Ք.Հ. Չայնավոր հնչյունները, շեշտերը, լուսանցքի նշումները, կետադրությունը և ապարատային նշանները սկսեցին ավելացվել 6-րդ դարում և վերջնականապես ձևավորվել 9-րդ դարում: Դա արվեց հայտնի հրեա գիտնականների կողմից, ովքեր հայտնի էին որպես մագորեթներ: Տեքստը, որը նրանք օգտագործեցին, նույնն էր ինչ որ Միշնան, Թալմուդը, Թարգումները, Փեշիթան և Վուլգատան:
2. Սեպտուագինդա (LXX) - Ավանդույթն ասում է, որ Սեպտուագինդան կազմվել է 70 հրեա գիտնականների կողմից 70 օրվա ընթացքում Ալեքսանդրիան գրադարանի համար Պտղոմեոս II թագավորի հովանավորությամբ (285-246թթ. Ք.Ա.): Ենթադրվում է, որ թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում ապրող մի հրեա առաջնորդի խնդրանքով: Այս ավանդույթը հիմնված է «Արիստեսի ուղերձի» վրա: LXX հաճախ հիմնվում էր եբրայերեն ուրիշ տեքստային ավանդության վրա, համեմատվելով բաբբի Ակուիբայի (MT) տեքստի հետ:
3. Մեռյալ Ծովի մագաղաթները (DSS) - Մեռյալ Ծովի մագաղաթները գրվել են Հռոմում Ք.Ա. (200թ. Ք.Ա. մինչև 70թ. Ք.Հ.) հրեա անջատողական խմբավորման կողմից, որոնք կոչվում էին «Էսսեններ» (սրանք փարիսեցիների նախահայրերն էին): Մեռյալ Ծովի տարբեր հատվածներից գտնված եբրայերեն ձեռագրերը պատկանում են եբրայերեն ուրիշ տեքստային ընտանիքին, չտարբերվելով MT և LXX:
4. Ահա մի քանի հստակ օրինակներ, թե ինչպես են այս տեքստերի համեմատությունները օգնել մեկնաբանել Հին Կտակարանը հասկանալու մեջ.
 - ա. LXX օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) LXX, Ես. 52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՆՐԱ վրա»
 - (2) MT, Ես. 52:14, « Ինչպես որ շատերը ապշեցին ՔԵԶ վրա»
 - (3) դատելով Ես. 52:15-ից ճիշտ տարբերակը LXX –ն է
 - (ա) LXX, «նույնպես պիտի շատ ազգեր զարմանան Նրանով»
 - (բ) MT, «այնպես շատ ազգեր Նա բերում է զարմանքի»
 - բ. DSS օգնել են թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) DSS, Ես. 21:8, «հետո տեսանողը աղաղակեց, դիտարանի վրա են կանգնել Ես. . .»
 - (2) MT, Ես. 21:8, «Եւ առիւծօրէն աղաղակեց. Ով Տէր, ես միշտ ցերեկը կանգնած եմ դիտանոցի վերայ. . .»
 - գ. LXX և DSS օգնել են հասկանալ Ես. 53:11
 - (1) LXX և DSS, « Իր անձի աշխատութեունից հետո նա կստենի լույսը և կկշտանա»
 - (2) MT, «Իր անձի աշխատութեան պտուղը պիտի տեսնէ եւ կշտանայ»

Բ. Նոր Կտակարան

1. Գոյություն ունեն հունարեն ամբողջական Նոր Կտակարանի կամ նրա մասերի ավելի քան 5300 ձեռագրեր: Մոտավորապես 85 գրված են պապիրուսների վրա, իսկ 268 ձեռագրեր գրված են բոլորը մեծատառերով (ունիցիալներ): Ավելի ուշ, մոտավորապես 9-րդ դարում Ք.Հ., հայտնվեցին գրչագիր՝ ձեռագիրները (փոքրատառերը միջնադարյան ձեռագրերում): Հաշվվում է մոտ 2700 հունարեն ձեռագրեր: Մենք նաև ունենք Սուրբ Գրքի մոտ 2100 օրինակներ, որոնք օգտագործվել են պաշտամունքների ժամանակ, որոնք կոչվում են բնագրի

տարբերակներ:

2. Մոտ 85 հունարեն ձեռագրեր, պարունակելով Նոր Կտակարանի առանձին հատվածներ, գրված պապիրուսների վրա, գտնվում են թանգարաններում: Նրանցից մի քանիսը պատկանում են Ք.Հ. 2-րդ դարին, բայց մեծամասնությունը 3-րդ և 4-րդ դարերին Ք.Հ.: Այս ձեռագրերից ոչ մեկը չի պարունակում Նոր Կտակարանի ամբողջությամբ: Եվ չնայած որ նրանք հանդիսանում են Նոր Կտակարանի ամենահին օրինակները, դա ավտոմատ կերպով չի նշանակում, որ նրանցում քիչ տարբերակներ կան: Այդ օրինակներից շատերը արվել են արագորեն՝ տեղական օգտագործման համար, որոնց վրա այդքան էլ ուշադրություն չեն դարձրել: Այդ իսկ պատճառով նրանց մեջ կան շատ տարբերակներ:
3. Սինայական հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է եբրայերեն *α* (*aleph*) տառով կամ (01), գտնվել է Թիբաշենդորֆի կողմից Սինա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինայի վանքից: Այն պատկանում է Ք.Հ. 4-րդ դարին և պարունակում է LXX թե Հին Կտակարանի և թե հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
4. Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «A» կամ (02), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս:
5. Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «B» կամ (03), գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում և պատկանում է Ք.Հ. 4-րդ դարի կեսերին: Այն պարունակում է LXX թե Հին Կտակարանի և թե հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
6. Եփրեմի հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «C» կամ (04), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, որը մասամբ ոչնչացվել է:
7. Բեզայի հին ձեռագրերի ժողովածու, որը հայտնի է որպես «D» կամ (05), 5-րդ կամ 6-րդ դարի հունարեն ձեռագիր է: Սա այսպես կոչված «արևմտյան» տեքստի գլխավոր ներկայացուցիչն է: Այն պարունակում է շատ լրացումներ և հանդիսացել է հիմնական հունարեն ձեռագիրը՝ անգլերեն Հակոբոս թագավորի թարգմանության ժամանակ:
8. Նոր Կտակարանի ձեռագրերը կարող են բաժանվել երեք, հնարավոր է նաև, չորս ընտանիքների, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ.
 - ա. ալեքսանդրիան տեքստը Եգիպտոսից
 - (1) P⁷⁵, P⁶⁶ (մոտ Ք. Հ. 200թ.), պարունակում են Ավետարանները
 - (2) P⁴⁶ (մոտ Ք. Հ. 225թ.), պարունակում են Պողոսի նամակները
 - (3) P⁷² (մոտ Ք. Հ. 225-250թթ.), պարունակում են Պետրոսի և Հուդայի նամակները
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու B, որը կոչվում է Վատիկանյան (մոտ Ք. Հ. 325թ.), ամփոփում է Հին և Նոր Կտակարանը ամբողջությամբ
 - (5) Օրիգենի մեջբերումը այս տեսակի տեքստից
 - (6) ուրիշ ձեռագրեր, որոնցում ներկայացված է այս տեսակի տեքստը *α*, C, L, W, 33
 - բ. արևմտյան տեքստ Հյուսիսային Աֆրիկայից
 - (1) հյուսիս-աֆրիկյան եկեղեցու հայրերի մեջբերումները. Տերտուլիանոս, Կիպրիանոս և հին լատիներեն թարգմանություն
 - (2) Իրինիոսի մեջբերումները
 - (3) Տացիանոսի մեջբերումները և հին սիրիական թարգմանություն
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու «D» Բեզայի - այս տեսակի տեքստ
 - գ. Արևելյան բյուզանդական տեքստ Կոնստանդնուպոլսից
 - (1) այս տեսակի տեքստը ներկայացված է 5300 ձեռագրերից ավելի քան 80%-ի մեջ
 - (2) Սիրիայի Անտիոքի եկեղեցու հայրերի մեջբերումները. կապադովկիացիներ, Ոսկեբերան և Թեոդոսեթ
 - (3) հին ձեռագրերի ժողովածու A, միայն Ավետարաններում
 - (4) հին ձեռագրերի ժողովածու E (8-րդ դար) ամբողջ Նոր Կտակարանը
 - դ. չորրորդ հնարավոր տեսակը «կեսարիան» Պաղեստինից
 - (1) այն հիմնականում հանդիպում է միայն Մարկոսի Ավետարանում
 - (2) մասամբ հանդիպում են P⁴⁵ և W ձեռագրերում

II. «Ցածր քննադատության» կամ «տեքստային քննադատության» խնդիրներն ու տեսությունները

Ա. Ինչպե՞ս են հայտնվել տարբերակները

1. ոչ դիտավորյալ կամ պատահական (մեծամասամբ, շատ դեպքերում)

- ա. վրիպակ, երբ երկու միանման բառեր (կամ նույնանման վերջավորություն ունեցող բառեր) իրար կողք կողքի դրված, արտագրողը նայել է երկրորդին և բաց է թողել այդ երկուսի միջև գտնվող ամբողջ տեքստը, (հոմեոտելեուտոն/homoioteleuton)
 - (1) աչքի վրիպում, երբ բաց է թողնվել նույն տառերով բառի մի մասը կամ ամբողջ արտահայտությունը (հապլոգրաֆիա/haplography)
 - (2) հունարեն տեքստի արտահայտության կամ տողի կրկնողություն (դիտոգրաֆիա/dittography)
 - բ. լսողական վրիպում, տեքստը թելադրության միջոցով արտագրելու ժամանակ, բառերի սխալ գրելաձև (իտացիզմ/itacism): Հաճախ գրվել է նույն ձևի հնչող հունարեն բառի ուրիշ բառ:
 - գ. Շատ հին հունարեն տեքստերում գլոխների և համարների բաժանումները չկան, համարյա բացակայում է կետադրությունը և բառերի միջև բաժանումներ չկան: Հնարավոր է բաժանել տեքստը տարբեր տեղերում, որի արդյունքում ստացվում են նոր բառեր:
2. դիտավորյալ
- ա. փոփոխություններ են արվել արտագրված տեքստի քերականական ձևի բարելավման համար
 - բ. փոփոխություններ են արվել այն բանի համար, որ համաձայնեցվի տեքստը ուրիշ աստվածաշնչյան տեքստերի հետ (գուգահեռ տեքստերի համաձայնեցում)
 - գ. փոփոխություններ են մտցվել, որպեսզի կապակցեն ընթերցանության երկու կամ ավելի տարբերակների մեկ երկար կապակցված տեքստում(միաձուլում)
 - դ. փոփոխություններ են մտցվել, որպեսզի ուղղեն անհասկանալի թվացող տեքստը (հմմտ. I Կոր. 11:27 և I Հովհ. 5:7-8)
 - ե. մի արտագրող լրացուցիչ տեղեկություն է մտցրել լուսանցքներում պատմական կոնտեքստի վերաբերյալ կամ տեքստի ճիշտ մեկնաբանության մասին, իսկ մյուս արտագրողը դա մտցրել է հենց տեքստի մեջ (հմմտ. Հովհ. 5:4)
- Բ. Տեքստային քննադատության հիմնական սկզբունքները (տրամաբանական միջոցներ՝ տեքստի բնագրի ընթերցանությունը որոշելու համար, երբ կան տարբերակներ)
1. ամենատարօրինակ կամ ոչ սովորական քերականական տեքստը, ավելի շուտ բնագիրն է
 2. ամենակարճ տեքստը, ավելի շուտ բնագիրն է
 3. ավելի հին տեքստին ավելի շատ կշիռ է տրված, նրա պատմականորեն բնագրին մոտ լինելու համար, մնացած ամեն ինչում հավասար են
 4. ձեռագրեր, որ աշխարհագրականորեն բաժանված են, սովորաբար մոտ են բնագրին
 5. վարդապետականորեն ավելի թույլ տեքստեր, հատկապես նրանք, որոնք վերաբերվում են մեծ աստվածաբանական քննարկումներին ձեռագրերի փոփոխության ժամանակաշրջանում, օրինակ Երրորդության թեման I Հովհ. 5:7-8,
 6. գերադասելի է այն տեքստը, որը օգնում է բացատրել ուրիշ տարբերակների գոյությունը
 7. երկու մեջբերումներ, որոնք օգնում են ցույց տալ հավասարակշռությունը այսպիսի մտահոգող տարբերակներում
- ա. Ի. Հարոլդ Գրինլի «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը» (J. Harold Greenlee's book, *Introduction to New Testament Textual Criticism*,) (էջ 68). «Ոչ մի քրիստոնեական վարդապետություն չի հիմնվում վիճաբանական տեքստի վրա և Նոր Կտակարանը ուսումնասիրող յուրաքանչյուր անձ պետք է զգուշանա իր տեքստը ավելի օրթոդոքսային կամ վարդապետական չդարձնի, քան ներշնչված բնագիրն է»:
 - բ. Ու. Է. Կրիստելը ասաց Գրեգ Գարիսոնին «*Բիբլիկոհեն Նյուզ*»-ից, որ նա (Կրիստելը) չի հավատում, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր բառ ներշնչված է, «համենայն դեպս, ոչ ամեն բառ, որը հասել է ժամանակակից հրատարակման թարգմանիչների բազմադարյան գործունեությունից հետո»: Եվ ավելացրեց, «Ես հավատում եմ տեքստի քննադատությանը: Եվ, որպես դրան հավատացող, ես կարծում եմ, որ Մարկոսի Ավետարանի 16-րդ գլխի երկրորդ կեսը հերետիկոսություն է, այն ներշնչված չէ, այլ ակնհայտ հորինվածք է... Եթե համեմատենք հին ձեռագրերը, կտեսնենք, որ Մարկոսի Ավետարանը այդպիսի վերջաբան չունի: Ինչ-որ մեկն այն ավելացրել է...»:
- SBC* [*"Southern Baptist Convention"*]-ի անսխալականության հետազոտողներից այս նախահայրը նաև պնդում է, որ «ինտերպոլացիան (այն է հեղինակին չպատկանող և տեքստը աղավաղող բառեր մտցնել ձեռագրի մեջ)» ակնհայտ է նաև Հովհ. 5-ում,

Բեթեզդայի ավագանի մոտ Հիսուսի պատմությունը: Խոսելով Հուդայի ինքնասպանության հետ կապված երկու տարբեր պատմությունների մասին (հմմտ. Մաթ. 27 և Գործք 1), Կրիստելն ասաւ, - «Սա պարզապէս ինքնասպանությանը նայելու մի ուրիշ հայացք է: Եթէ դա կա Աստվածաշնչում, ապա այն ունի բացատրություն: Իսկ Աստվածաշնչում կա երկու պատմություն Հուդայի ինքնասպանության մասին»: Կրիստելն ավելացրեց, - «Տեքստային քննադատությունը ինքնին հիանալի գիտություն է: Այն անցողիկ չէ, և այն անհեթեթ չէ: Այն դիմամիկ է և շատ կարևոր...»:

III. Չեռագրերի խնդիրները (տեքստային քննադատություն)

Ա. Գրքեր հետագա ընթերցանության համար

1. *Biblical Criticism: Historical, Literary and Textual*, by R.H. Harrison [Ռ. Հ. Հարիսոն, «Աստվածաշնչյան քննադատություն՝ պատմական, գրական և տեքստային»]:
2. *The Text of the New Testament: Its Transmission, Corruption and Restoration* by Bruce M. Metzger [Բրյուս Մ. Մեցգեր, «Նոր Կտակարանի տեքստաբանությունը՝ ձեռագրերի ավանդությունը, խեղաթյուրում և բնագրի վերականգնում»].
3. *Introduction to New Testament Textual Criticism*, by J. H. Greenlee [Ջ. Հ. Գրինլի, «Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը»].

ՀԱՎԵԼՎԱԾ 3 ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ալեքսանդրիան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Ալեքսանդրիայում, Եգիպտոս 2-րդ դարում Ք.Հ.: Այնտեղ օգտագործվում է Փիլոնի հիմնական մեկնաբանական սկզբունքները, որը Պլատոնի հետևորդն էր: Այն հաճախ կոչվում է այլաբանական մեթոդ: Եկեղեցին մինչև բարեփոխությունը ընդունում էր այս մեթոդը: Սրա ամենակարող կողմնակիցները եղել են Օրիգենը և Օգոստինոսը: Տես Սիլվա Մալխեսի «Եկեղեցին ճիշտ չի՞ կարդացել Աստվածաշունչը» գիրքը (See Moises Silva, *Has The Church Misread The Bible?* (հրատ. Academic, 1987):

Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու. Սա 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս, որը ներառում է Հին Կտակարանը, Անկանոն գրքերը և Նոր Կտակարանից շատ գրքեր: Սա ամբողջ հունարեն Նոր Կտակարանի գլխավոր օրինակներից մեկն է (բացի որոշ մասեր Մաթևոսից, Հովհաննոս ավետարանից և II Կորնթացիսից): Գիտնականներից շատերը շատ դեպքերում համարում են, որ երբ այս ձեռագիրը, որը հայտնի է որպես «A» համընկնում է «B» (Վատիկանյան) ձեռագրի հետ, ուրեմն տեքստը բնագիր է:

Այլաբանություն. Սա Աստվածաշնչի մեկնաբանության տեսակ է, որը սկիզբ է առել ալեքսանդրիան հուդայականության մեջ: Այն հանրաճանաչ է դարձել Փիլոնոս Ալեքսանդրիացու կողմից: Սրա հիմնական յուրահատկությունն է Սուրբ Գիրքը համապատասխանեցնել որևէ մեկի մշակույթային կամ փիլիսոփայական համակարգին, անտեսելով Աստվածաշնչի պատմական և/կամ գրական կոնտեքստը: Նրա մեջ փնտրում են թարգմանաբար հոգևոր իմաստ յուրաքանչյուր սուրբգրային տեքստի ետևում: Պետք է խոստովանել, որ Հիսուսը, Մաթ. 13-ում, և Պողոսը, Գաղ. 4-ում, օգտագործել են այլաբանություն՝ ճշմարտությունը փոխանցելու համար: Գ-ա, ինչևէ, սիմվոլիկ լեզու էր, և ոչ թե խիստ այլաբանություն:

Աշխարհի պատկերը և աշխարհայացքը. Սրանք ընկերական տերմիններ են: Այս երկու փիլիսոփայական գաղափարները կապված են արարչագործության հետ: «Աշխարհի պատկեր» տերմինը վերաբերվում է «ինչպես» է ստեղծվել աշխարհը հարցին, իսկ «աշխարհայացք»-ը թե «ով» է ստեղծել այն: Այս տերմինները կարևոր են Ծննդ. 1-2 գլուխները մեկնաբանելու համար, որտեղ խոսքը գնում է , նախ և առաջ, այն մասին, թե Ով է ստեղծել երկիրը, և ոչ թե ինչպես է այն ստեղծվել:

Անտիոքյան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացվել է Անտիոքում, Սիրիայում 3-րդ դարում Ք.Հ. որպես ռեակցիա Ալեքսանդրիայի, Եգիպտոս այլաբանական մեթոդին: Նրա հիմնական իմաստը՝ ուշադրություն դարձնել Աստվածաշնչի պատմական նշանակությանը: Այն թարգմանեց Աստվածաշունչը որպես սովորական, մարդկային գրականություն: Այս դպրոցը ներգրավեց բանավեճի մեջ, արդյոք Քրիստոսն ուներ երկու բնություն (նեստորականություն) թե մեկ բնություն (ամբողջությամբ Աստված և ամբողջությամբ մարդ): Հռոմի կաթոլիկ եկեղեցին այն հերետիկոսություն հռչակեց և նրա ներկայացուցիչները բնակություն հաստատեցին Պարսկաստանում, բայց ունեին քիչ ազդեցություն: Այս դպրոցի հիմնական հերմենևտիկական սկզբունքները ավելի ուշ սկսեցին օգտագործվել դասական բողոքական Ռեֆորմատորների կողմից (Լյութեր և Կալվին):

Ապոկալիպտիկ գրականություն. Առավելապես, գուցե նույնիսկ բացառապես հրեական ժանր էր: Սա գրվածքի գաղտնի տեսակ էր, որը հրեաները օգտագործում էին օտար աշխարհակալների կողմից նվաճումների և գրավումների ժամանակ: Ենթադրվում էր, որ անձ հանդիսացող Փրկիչ Աստվածը ստեղծեց և կառավարում է աշխարհի իրադարձությունները, և որ Աստված հատուկ ուշադրություն և խնամք է ցուցաբերում Իսրայելի հանդեպ: Այս գրականությունը Աստծո ժողովրդին խոստանում է վերջնական հաղթանակ Աստծո հատուկ ջանքերի շնորհիվ:

Սա շատ խորհրդավոր և ֆանտաստիկ ժանր է՝ շատ հանելուկային տերմիններով: Այստեղ ճշմարտությունը հաճախ արտահայտվում է գույների, թվերի, տեսիլքների, երազների, հրեշտակների, գաղտնագրերի տեսքով, հաճախ կա նաև սուր դուալիզմ չարի և բարու միջև:

Այս ժանրի մի քանի օրինակներ (1) Հին Կտակարանում, Եզեկիել (գլուխներ 36-48), Գ-անիել

(գլուխներ 7-12), Չաքարիա; և (2) Նոր Կտակարանում, Մաթ. 24; Մարկ. 13; II Թեա. 2 և Հայտնություն:

Ապոլոգետ (ապոլոգետիկա/հավատքի պաշտպանություն). Տերմինը առաջացել է հունարեն «օրինական պաշտպանություն» բառի արմատից: Սա հատուկ դիսցիպլինա է աստվածաբանության մեջ, որը ձգտում է ներկայացնել ապացույցներ և ռացիոնալ փաստարկներ քրիստոնեական հավատքի օգտին:

Արիոսականություն. Արիոսը Ալեքսանդրիայի, Եգիպտոս, եկեղեցու երեցն էր, 3-րդ և 4-րդ դարի սկզբին: Նա պնդում էր, որ Հիսուսը հավիտենական էր, բայց ոչ աստվածային (Հոր նույն էությունը չուներ), հնարավոր է հենվելով Առակաց 8:22-31: Նրան մարտահրավեր է նետում Ալեքսանդրիայի եպիսկոպոսը, և վեճը սկսվում է (Ք.Հ. 318), որն էլ շարունակվում է երկար տարիներ: Արիոսականությունը դարձավ նույնիսկ հավատքի պաշտոնական խորհրդանիշը արևելքի եկեղեցում: Ք.Հ. 325 Նիկիայի Ժողովը դատապարտեց Արիոսին և հռչակեց Հոր և Որդու աստվածության ամբողջական հավասարությունը:

Արիստոտել. Հին հունական փիլիսոփաներից էր, Պլատոնի աշակերտը և Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը: Նրա ներգործությունը մինչ այսօր զգացվում է ժամանակակից ուսումնասիրություններից շատերի մեջ: Որովհետև նա շեշտը դնում էր հետազոտության և դասակարգման միջոցով կատարվող գիտության վրա: Սա գիտական մեթոդների սկզբունքներից մեկն է:

Աստվածաշնչյան հեղինակություն. Այս տերմինը օգտագործվում է շատ մասնագիտացված իմաստով: Այն սահմանվում է որպես հասկացողություն, թե ինչ էլ ասել բնօրինակի հեղինակը իր օրերում և այդ ճշմարտության կիրառությունը մեր օրերում: Աստվածաշնչյան հեղինակությունը սովորաբար սահմանվում է որպես Աստվածաշնչին նայելու ձև, որպես մեր միակ հեղինակային ուղեցույց: Ինչևէ, լայն տարածում ունեցող, սխալ մեկնաբանությունների լույսի ներքո, ես սահմանափակել եմ Աստվածաշնչի գաղափարը թարգմանված պատմական-քերականական մեթոդով:

Անհատական կարծիքի հաստատում աստվածաշնչյան տեքստի միջոցով. Սուրբ Գրքի մեկնաբանության գործածություն, երբ մեջբերվում է որևէ համար առանց ուշադրություն դարձնելու անմիջական տեքստին կամ գրական հատվածի ընդհանուր կոնտեքստին: Արդյունքում մոռացվում են բնօրինակի հեղինակի մտադրությունները և հաճախ փորձ է կատարվում հաստատելու որևէ անձնական կարծիք իր աստվածաշնչյան հեղինակությամբ:

Բնագրի հեղինակը. Սա վերաբերվում է Սուրբ Գրքի իրական հեղինակներին/գրողներին:

Բնագրեր. Սա Աստվածաշնչի բնօրինակի գրվածքներին տրված անունն է: Այս բնագիր, ձեռագիր մատյանները բոլորն էլ կորել են: Միայն օրինակների օրինակներն են մնացել: Սա եբրայերեն և հունարեն ձեռագրերի և հին տարբերակների շատ տեքստային տարբերակների աղբյուրն է:

Բեզայի հին ձեռագրերի ժողովածու. 6-րդ դարի Ք.Հ. հունարեն և լատիներեն ձեռագիր է, որը հայտնի է որպես «D»: Պարունակում է բոլոր Ավետարանները և Գործք Առաքելոցը, և նաև մի քանի թղթեր: Այն պարունակում է շատ լրացումներ, որոնք արվել են գրիչների կողմից: Սա հիմք է հանդիսացել «Textus Receptus» հիմնական հունարեն ձեռագրի համար, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել անգլերեն Հակոբոս թագավորի Նոր Կտակարանի թարգմանության համար:

Բարձր քննադատություն. Աստվածաշնչյան մեկնաբանության ընթացակարգ, որը կենտրոնանում է աստվածաշնչյան առանձին գրքի պատմական կոնտեքստի և գրական կառուցվածքի վրա:

Բառացի թարգմանություն. Սա ուսումնասիրության միջոց է, որը թույլ է տալիս մարդկանց, որոնք չեն տիրապետում աստվածաշնչյան լեզվին, վերլուծել նրա նշանակությունը և կառուցվածքը: Սա բառացի թարգմանություն է, որը դրվում է աստվածաշնչյան լեզվով անմիջապես բնագրի տեքստի տակ: Այս ձևը, ինչպես նաև վերլուծական բառարանը տալիս է մեզ Աստվածաշնչի հին եբրայերեն և հունարեն տեքստի հիմնական նշանակությունները և ձևերը:

Բառացի ընթերցանություն. Եվս մեկ անուն հերմենևտիկական պատմական և կենտրոնացած տեքստի

մեթոդի համար, որը զարգացել է Անտիոքում: Սա նշանակում է, որ մեկնաբանությունը ներառում է մարդկային լեզվի սովորական և ակնհայտ իմաստ, չնայած ընդունում է պատկերավոր լեզվի առկայությունը:

Բնական հայտնություն. Մարդուն Աստծո հայտնության կատեգորիաներից մեկն է: Սրա մեջ մտնում է բնության երևույթների հաջորդականությունը (Հն. 1:19-20) և բարոյական խղճմտանքը (Հն. 2:14-15): Այդ մասին խոսվում է Սաղ. 19:1-6 և Հն. 1-2: Այն տարբերվում է հատուկ հայտնությունից, որը Աստծո հատուկ հայտնությունն է Աստվածաշնչում և կարևորագույնը՝ Հիսուս Նազովրեցու մեջ:

Այս աստվածաբանական կատեգորիան կրկին վերընդգծվել է «հին աշխարհ» քրիստոնյա գիտնականների շարժման կողմից (օր., Հյու Ռոսի գրվածքները (Hugh Ross): Նրանք օգտագործում են այս կատեգորիան պնդելու համար, որ ցանկացած ճշմարտություն Աստծուց է ծագում: Բնությունը բաց դուռ է Աստծո մասին գիտություն ունենալու համար, այն տարբերվում է հատուկ հայտնությունից (Աստվածաշունչը): Այդպիսով ժամանակակից գիտությունը կարող է հետազոտել բնության երևույթների հաջորդականությունը: Իմ կարծիքով, սա նոր հիմնալի հնարավորություն է վկայելու Աստծու մասին ժամանակակից արևմտյան գիտական աշխարհում:

Գնոստիցիզմ. Այս հերետիկոսության մասին ունեցած մեր իմացության մեծամասնությունը գալիս է 2-րդ դարի գնոստիկ գրվածքներից: Բայց համապատասխան գաղափարները զոյություն են ունեցալ դեռևս առաջին դարում (և դրանից առաջ):

2-րդ դարի գնոստիկներ Վալենտինյանի և Կերնիթիանի որոշ հաստատված հավատամքներ այսպիսիսն են; (1) նյութն ու հոգին հավասարապես հավիտենական են (օնթոլոգիական դուալիզմ): Նյութը չար է, հոգին բարի: Աստված, որ Հոգի, չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել մեղավոր նյութի ձևավորման գործընթացում; (2) Աստծո և նյութի միջև կան էմանացիաներ (*eons* կամ հրեշտակային մակարդակներ): Դրանցից վերջինը կամ ամենացածրը Հին Կտակարանի Եհովան էր, ով ստեղծեց տիեզերքը (*kosmos*); (3) Հիսուսը էմանացիա էր, ինչպես Եհովան, բայց ավելի բարձր մակարդակի վրա, ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք Նրան ամենաբարձրն էին համարում, բայց Աստծուց ցածր, և անշուշտ ոչ մարմնացած Աստված (հմմտ. Հովհ. 1:14): Քանի որ նյութը չար է, Հիսուսը չէր կարող ունենալ մարդկային մարմին և Աստված լինել: Նա հոգևոր ուրվական էր (հմմտ. I Հովհ. 1:1-3; 4:1-6); և (4) փրկությունը հասնում է Հիսուս Քրիստոսին հավատալով, գումարած հատուկ գիտություն, որն ունեն միայն հատուկ մարդիկ: Գիտությունը (ծածկագրեր) անհրաժեշտ էր, որպեսզի անցնեիր երկնային մարմինների միջոցով: Հրեական օրինապաշտությունը նույնպես անհրաժեշտ էր՝ Աստծուն փնտրելու համար:

Գնոստիկ կեղծ վարդապետները երկու հակադիր էթիկական համակարգերի կողմնակիցներ էին. (1) ոմանք կարծում էին, որ մարդու ապրելակերպը ոչ մի բանով կապ չունի փրկության հետ: Նրանց համար փրկությունն ու հոգևորությունը սահմանափակվում էին գաղտնի գիտությամբ (ծածկագրեր), որը կատարվում էր հրեշտակային մարմինների միջոցով (*eons*); կամ (2) ուրիշների համար էլ ապրելակերպը խիստ անհրաժեշտ էր փրկության համար: Նրանք համարում էին, որ ասկետիկ ապրելակերպը ապացույց էր ճշմարիտ հոգևորության:

Գրական ժանր. Հատուկ ձևեր, որոնք կարող են ինֆորմացիա փոխանցել մարդկային հասարակություններին, ինչպես օրինակ պոեզիան կամ պատմական արձակը: Գրականության յուրաքանչյուր տեսակ մեկնաբանվում է հատուկ հերմենևտիկական սկզբունքների վրա, ընդհանուր սկզբունքների հիման վրա, որոնք վերաբերվում են ցանկացած գրավոր գրականությանը:

Գրական բաժին. Սա վերաբերվում է աստվածաշնչյան գրքի գլխավոր մտքի բաժանումներին: Այն կարող է կազմված լինել մի քանի համարներից, պարբերություններից կամ գլուխներից: Այն ինքնաբավարար տեքստ է կենտրոնական թեմայով:

Գեղուկտիվ. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որը ընդհանուր սկզբունքներից գնում է դեպի առանձին կիրառությունները: Սա հակառակ է ինդուկտիվ դատողությանը, որը ցույց է տալիս գիտական մեթոդը, որը փոխվում է առանձին դեպքերի դիտարկումներից դեպի ընդհանուր եզրակացությունները (տեսություններ):

Գիպեկտիկական. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որտեղ թվացյալ հակասությունները կամ

պարադոքսները գտնվում են լարվածության մեջ՝ ամբողջական որոշում կայացնելու ժամանակ, որն իր մեջ ամփոփում է պարադոքսի երկու կողմերն էլ: Շատ աստվածաշնչյան վարդապետություններ ունեն դիպլեկտիկական գույգեր, նախասահմանություն—ազատ կամք; ապահովություն—երկայնմտություն; հավատք—գործեր; Աստծուն ընդունելու որոշում—աշակերտություն; քրիստոնեական ազատություն—քրիստոնեական պատասխանատվություն:

Դինամիկ համագոր. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսությունն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես կոնտինում, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում», որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխությանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագոր»-ի տեսությունը, որը լրջությամբ է մոտենում բնօրինակի տեքստին, բայց թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ձևեր և իղիմաներ: Իրական լավ քննարկում թարգմանության տարբեր տեսությունների մասին գտնվում է Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչն իր ամբողջ ճոխությամբ» (*Fee and Stuart's How to Read the Bible For All Its Worth*), էջ 35 և Ռոբերտ Բրեչերի «Ժամանակակից անգլերեն Աստվածաշնչի թարգմանության ներածությունը» գրքում (*Robert Bratcher's Introduction to the TEV*):

ԵՀՈՎԱ. Հին Կտակարանում սա Աստծո Ուխտի անունն է: Սահմանումը գտնվում է Ելից 3:14: Այն եբրայերեն «լինել» բայի ՊԱՏՃԱՈՒԱԿԱՆ ձևն է: Հրեաները վախենում էին արտասանել այդ անունը, որ զուր տեղը չլիներ, ուստի դա փոխարինեցին եբրայերեն *Adonai*, «Տեր» բառով: Ահա թե ինչպես է թարգմանվում այս ուխտի անունը շատ լեզուներում:

Երկինաստություն. Տեքստի անհասկանալի մասեր, որտեղ գրավոր փաստաթղթում կան ընթերցանության երկու կամ ավելի հնարավորություններ, կամ երբ երկու կամ ավելի բաներ առկա են միառժամանակ: Հնարավոր է, որ Հովհաննեսը դիտավորյալ օգտագործել է երկինաստ արտահայտություններ:

Չուգահեռ հատվածներ. Մրանք այն գաղափարի մասն են, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և, ուստի, ինքն է ամենալավը օգնում մեզ մեկնաբանել իրեն և հավասարեցնել պարադոքսալին ճշմարտությունները: Սա նաև օգտակար է, երբ մեկը փորձում է մեկնաբանել անհասկանալի կամ բազմիմաստ հատվածները: Նրանք նաև օգնում են գտնել ամենահստակ հատվածները տվյալ թեմայի, և ինչպես նաև բոլոր մյուս սուրբգրային հատվածները նույն թեմայի վերաբերյալ:

Էյզեզետիկա. Էյզեզետիկայի հակադարձը: Եթե էյզեզետիկան հիմնվում է հեղինակի միտումների փնտրման վրա, ապա էյզեզետիկան ենթադրում է մուտքագրում տեքստի մեջ այնպիսի միտք կամ կարծիք, որը խորթ է հեղինակին:

Էկզեզետիկա. Հատուկ տերմին է, որը նշանակում է որոշակի հատվածի տեքստի մեկնաբանություն, բառացի - այդ հատվածի իրական մտքի՝ ասելիքի դուրսբերում, այսինքն հասկանալ հեղինակի միտումները պատմական իրավիճակի, գրական կոնտեքստի՝ հատվածի, սինտաքսիսի՝ քերականության և բառերի նշանակությունների լույսի ներքո:

Էկլեկտիկա. Այս տերմինի օգտագործումը պայմանավորված է տեքստի քննադատության հետ: Այն ենթադրում է տեքստերի ընթերցանությունից տարբեր ձեռագրերի ավանդույթների հետ կապված տարբերակների դուրսբերում, որպեսզի ի հայտ բերվի այն տեքստը որը որ ավելի մոտ կգտնվի բնօրինակին: Այս դեպքում հերքվում է այն կարծիքը, որ հունարեն ձեռագրերի ամեն մի խումբ ունի մեկ բնօրինակ:

Էտիմոլոգիա. Բառերի ուսումնասիրման բնագավառ, որտեղ ի հայտ է բերվում բառի սկզբնական նշանակությունը: Մեկնաբանության ժամանակ բառերի էտիմոլոգիան ամենակարևորը չէ, ավելի կարևոր է նրանց նշանակությունը և օգտագործումը որոշակի դարաշրջանի մեջ:

Թալմուդ. Գրքերի ժողովածուի անվանումն է, որտեղ շարադրված է հրեական բանավոր ավանդույթը: Հրեաները հավատում են, որ այն բանավոր կերպով տրվել է Աստծո կողմից Մովսեսին Սինա լեռան

վրա: Իրականում սրանք հրեա վարդապետների իմաստուն ասացվածքներն են, որոնք հավաքվել են տարիների ընթացքում: Գոյություն ունեն Թալմուդի երկու տարբեր գրավոր ավանդույթներ՝ Բաբելոնյանը և ավելի կարճը, թերի մնացած Պաղեստինյանը:

Թեմայետություն/Parochialism. Սա վերաբերվում է այն հիմքերին, որոնք միացվում են տեղական աստվածաբանական/մշակույթային կոնտեքստին: Սրանք չեն ընդունում աստվածաշնչյան ճշմարտության կամ նրա կիրառության միջմշակույթային բնությունը:

Թորա. Եբրայերեն տերմին է, որը նշանակում է «ուսուցում, ուսմունք»: Այսպես պաշտոնական կոչվել են Մովսեսի գրվածքները (Ծննդոցից մինչև 2 Օրինաց): Հրեաների համար սա եբրայական կանոնի ամենահեղինակավոր մասն է:

Ժանր. Ֆրանսերեն տերմին, որը նշանակում է գրական ստեղծագործության տարբեր տեսակներ: Աստվածաշնչյան գրական ձևերը բաժանվում են մի քանի կատեգորիաների, որոնք ունեն ընդհանուր առանձնահատկություններ: պատմական արձակ, պոեզիա, առակներ, ապոկալիպտիկ/վախճանաբանական և օրենսդրություն:

Իդիոմա. Արտահայտություն, որը տվյալ մշակույթին համապատասխան ունի հատուկ նշանակություն, որը կապ չունի առանձին վրեցրած բառերի սովորական իմաստի հետ: Ժամանակակից օրինակներ. «դա սարսափելի լավն էր» կամ «դու պարզապես սպանում ես ինձ»: Աստվածաշունչը նույնպես պարունակում է այս տեսակի արտահայտություններ:

Իմաստային դաշտ. Սա վերաբերվում է իմաստի ամբողջ ոլորտին, կապված կոնկրետ բառի հետ: Հիմնականում սրանք իմաստի տարբեր երանգներն են, որն ունի բառը տարբեր կոնտեքստներում:

Իմաստուն գրականություն. Գրական ժանր, տարածված էին Մերձավոր Արևելքում (և ժամանակակից աշխարհում): Նպատակն է երիտասարդ սերնդին պոեզիայի, առակի կամ ակնարկի միջոցով սովորեցնել կյանքի իմաստությունը: Այն ավելի ուղիվ է առանձին անհատների, քան խմբակային համայնքին: Այն հիմնված չէ պատմական ակնարկների վրա, այլ կյանքի փորձառությունների և դիտարկումների վրա: Աստվածաշնչում, Հոբից մինչև Երգ Երգոցը ենթադրվում է ԵՀՈՎԱՅԻ ներկայությունը և Նրան երկրպագությունը, բայց կրոնական աշխարհայացքը հստակ չի արտահայտվում:

Որպես ժանր, այն արտացոլում է ընդհանուր ճշմարտություններ: Բայց այս ժանրը չի կարող օգտագործվել ամեն մի կոնկրետ իրավիճակում: Սրանք ընդհանուր մտքեր են, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են անհատական իրավիճակներին:

Իմաստունները համարձակվել են բարդ հարցեր տալ կյանքի մասին: Հաճախ նրանք մարտահրավեր են նետել ավանդական կրոնական հայացքներին (Հոր և Ժողովողի): Այդպիսով նրանք հավասարակշռություն և լարվածություն են ստեղծում կյանքի ողբերգությունների հետ կապված հեշտ պատասխանների միջև:

Ինդուկտիվ. Տրամաբանական դատողության մեթոդ է, որը մասնավորից տանում է դեպի ընդհանուրը: Սա ժամանակակից գիտության էմպիրիկական/փորձով հաստատված մեթոդ է: Հիմնականում սա Արիստոտելի մոտեցումն է:

Լուսավորում. Աստծո դիմելը մարդկությանը: Այս հասկացության ամբողջ նշանակությունը ամփոփվում է երեք տերմինների համախմբվածությամբ. 1. հայտնություն - Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; 2. ներշնչանք – Նա տվեց է Իր գործերի ր դրանց նշանակությունների ճշգրիտ մեկնությունը ընտրված մարդկանց, որպեսզի նրանք գրանցեին այն մարդկության համար; և 3. լուսավորում- Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի Նա օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Կանխակարծիք. Որևէ թեմայի շուրջ նախօրոք ձևավորված պատկերացում: Հաճախ մենք ունենք կարծիքներ կամ դատողություններ ինչ որ հարցերի շուրջ մինչև Սուրբ Գրքին անդրադառնալը: Այս կանխակարծիքը հայտնի է նաև որպես թեքվածություն, պնդում, իսկ priori-ը նախօրոք ձևավորված

կարծիք:

Կանոն. Տերմինը օգտագործվում է այն գրվածքների համար, որոնք անկասկած համարվում են ներշնչված: Այն թե Հին և թե Նոր Կտակարանի գրքերի համար է:

Հակադիր. Սա երեք բնութագրող տերմիններից մեկն է, որը ցույց է տալիս եբրայերեն պոեզիայի տողերի միջև գոյություն ունեցող կապը: Սա պոեզիայի տողերին է վերաբերվում, որոնք իմաստով հակադիր են միմյանց (հմմտ. Առ. 10:1, 15:1):

Համաբարբառ. Աստվածաշունչը ուսումնասիրելու միջոց: Այստեղ բերվում են գործնականում յուրաքանչյուր բառ Հին և Նոր Կտակարաններից: Սա օգնում է մեզ (1) սահմանել եբրայերեն կամ հունարեն բառը, որը ընկած է հատուկ բառի թարգմանության ետևում; (2) համեմատել հատվածները, որտեղ օգտագործվում էր նույն եբրայերեն կամ հունարեն բառը; (3) ի հայտ բերել հատվածներ, երբ երկու տարբեր եբրայերեն կամ հունարեն տերմիններ թարգմանվում են նույն բառով; (4) տեսնել տարբեր բառերի կիրառությունը տարբեր գրքերում կամ տարբեր հեղինակների մոտ; (5) Աստվածաշնչում գտնել որոշակի հատվածը (հմմտ. Վալտեր Կլարկի «Ինչպես օգտագործել հունարեն Նոր Կտակարանի օժանդակ ձեռնարկը» (Walter Clark's *How to Use New Testament Greek Study Aids*), էջ 54-55):

Հայտնություն. Աստծո ղիմելը մարդկությանը: Այս հասկացության ամբողջ նշանակությունը ամփոփվում է երեք տերմինների համախմբվածությամբ. 1. հայտնություն - Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; 2. ներշնչանք – Նա տվեց է Իր գործերի և դրանց նշանակությունների ճշգրիտ մեկնությունը ընտրված մարդկանց, որպեսզի նրանք գրանցեին այն մարդկության համար; և 3. լուսավորում- Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի Նա օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Հերմենևտիկա. Սկզբունքներ նշանակող հատուկ տերմին, որն օգտագործում են մեկնաբանության ժամանակ: Սա թե յուրահատուկ ուղեցույցների շարք է և թե արվեստ/պարզ: Աստվածաշնչյան, կամ սուրբ հերմենևտիկան սովորաբար բաժանվում է երկու կատեգորիաների; ընդհանուր սկզբունքներ և հատուկ սկզբունքներ: Նրանք կապված են Աստվածաշնչում եղած գրական տարբեր տեսակների հետ: Յուրաքանչյուր տարբեր տեսակ (ժանր) ունի իր հատուկ սկզբունքը, բայց մեկնաբանության մի քանի ընդհանուր ենթադրությունների և ընթացակարգերի հիման վրա:

Հոմանիշ. Սա վերբերում է այն բառերին, որոնք իմաստով նույնն են կամ համընկնում են (չնայած իրականում երկու բառերի իմաստաբանական մասը երբեք ամբողջությամբ չեն համընկնում): Նրանք իմաստով այնքան մոտ են իրար, որ կարող են նախադասության մեջ իրար փոխարինել՝ առանց իմաստը կորցնելու: Այս տերմինը նաև օգտագործվում է հին եբրայերեն բանաստեղծական գույզահեռականության երեք տեսակներից մեկի համար: Այս իմաստով, այն նշանակում է երկու բանաստեղծական տողեր, որոնք արտահայտում են նույն ճշմարտությունը (հմմտ. Սաղ. 103:3):

Ձեռագիր. Այս տերմինը վերաբերվում է հունարեն Նոր Կտակարանի տարբեր օրինակներին: Սովորաբար նրանք բաժանվում են տարբեր տեսակների (1) նյութ, ինչի վրա, որ գրվել են (պապիրոս, կաշի), կամ (2) գրվածքի ձև (բոլորը մեծատառերով կամ սահուն ձեռագիր): Կրճատ կոչվում է «MS» (եզակի) կամ «MSS» (հոգնակի):

Մագորեթիկ տեքստ. Հին Կտակարանի եբրայերեն ձեռագիր է (9-րդ դար): Դա արվել է հայտնի հրեա գիտնականների կողմից, որը պարունակում է ձայնավոր հնչյուններ և ուրիշ տեքստային նշումներ: Նրանք հիմք են հանդիսանում Հին Կտակարանի թարգմանության համար: Նրա տեքստը պատմականորեն հաստատված է եղել հին եբրայերեն ձեռագրերով, հատկապես Եսայի մարգարեությունը, հայտնի որպես Մեռյալ ծովի գլանաձև մագաղաթներ: Կրճատ կոչվում է «MT»:

Մարդակերպություն. Ունի առանձնահատկություններ, որոնք կապված են մարդու հետ: Այս տերմինը օգտագործվում է նկարագրելու համար մեր կրոնական լեզուն, որով մենք խոսում ենք Աստծո մասին:

Տերմինը առաջացել է հունարեն բառից, որը նշանակում էր մարդկություն: Սա նշանակում է, որ մենք խոսում ենք Աստծո մասին այնպես, կարծես Նա մարդ է եղել: Աստված նկարագրվում է, որպես ֆիզիկական, սոցիոլոգիական և հոգեբանական տերմիններով, որոնք վերաբերվում են մարդկանց և հասկանալի են մարդուն (հմմտ. Ծննդ. 3:8; 3 Թագ. 22:19-23): Իհարկե, սա միայն համանմանություն է : Ինչևէ, մարդիկ ունակ են օգտվել միայն մարդկային տերմիններով կամ հասկացողություններով: Ուստի, Աստծո մասին ունեցած մեր գիտությունը, չնայած ճիշտ է, բայց և սահմանափակ:

Մեկնաբանություն. Աստվածաշունչը ուսումնասիրող հատուկ տեսակի գիրք: Այն տալիս է աստվածաշնչյան գրքի ընդհանուր կոնտեքստը: Հետո բացատրում է գրքի յուրաքանչյուր բաժնի նշանակությունը: Որոշ մեկնաբանություններ հատուկ ուշադրություն են դարձնում ճշմարտության կիրառության վրա, ուրիշներն էլ տեքստին նայում են տարբեր հատուկ հարցերի տեսանկյունից: Այս գրքերը օգտակար են, բայց պետք է օգտագործվեն միայն ինքնուրույն մոտավոր սերտողությունից հետո: Մեկնաբանի մեկնությունները երբեք չպետք է ընդունվեն առանց քննադատության: Սովորաբար օգտակար է համեմատել մի քանի մեկնաբանություններ, որոնց հեղինակները ունեն տարբեր աստվածաբանական տեսանկյուններ:

Մեռյալ Ծովի մագաղաթները. Սա վերաբերվում է մի շարք երրայերեն և արամեերեն հին տեքստերին, որոնք գտնվել են Մեռյալ ծովի մոտակայքից 1947թ.: Դրանք պատկանում էին 1-ին դարի հուդայական աղանդավորների կրոնական գրադարաններին: Հռոմի տիրապետության ճնշումը և 60-ականների կրոնական պատերազմները պատճառ հանդիսացան, որ նրանք մագաղաթները հերմետիկորեն տեղավորեին գլանաձև կավե ամանների մեջ և թաքցնեին քարանձավներում և հորերում: Այս մագաղաթները օգնել են մեզ հասկանալու 1-ին դարի պատմական իրավիճակը Պաղեստինում, և հաստատել են Մագորեթիկ ձեռագիրը, որպես շատ ստույգ, համեմայնդեպս, համեմատած մեր դարի սկզբի հետ: Կրճատ նշվում է «DSS»:

Մուրատորիան հատվածներ. Սա Նոր Կտակարանի կանոնի գրքերի ցանկն է: Գրվել է Հռոմում մինչև 200թ. Ք.Հ.: Այն պարունակում է նույն 27 գրքերը, ինչպես Բողոքական Նոր Կտակարանում: Սա պարզ ցույց է տալիս, որ հռոմեական կայսրության տարբեր տեղերում գտնվող տեղական եկեղեցիները «փորձնականում» կանոն են որոշել մինչև 4-րդ դարի գլխավոր եկեղեցական խորհուրդը:

Նախատիպ. Մեկնաբանության յուրահատուկ ձև: Սովորաբար այն ներգրավում է նորկտակարանյան ճշմարտություն, որը գտնվում է հինկտակարանյան հատվածներում նույնանման սիմվոլի տեսքով: Հերմենևտիկայի այսպիսի տեսակը ավեքսանդրիան մեթոդի գլխավոր տարրն է եղել: Եվ քանի որ մեկնաբանության այսպիսի մեթոդը հեշտ է աղավաղել, պետք է սահմանափակել դրա օգտագործումը կոնկրետ օրինակներով՝ արձանագրված Նոր Կտակարանում:

Նեստորականություն. 5-րդ դարում Նեստորը Կոստանդնուպոլսի նախահայրերից էր: Նա սովորել է Սիրիայի Անտիոքում և պնդել է, որ Հիսուսն ուներ երկու բնություն՝ ամբողջությամբ մարդ և ամբողջությամբ Աստված: Այդ կարծիքը տարբերվում էր ավեքսանդրիան դպրոցի, միայն մեկ բնություն, օրթոդոքս/ուղղափառ կարծիքից: Նեստորի հիմնական մտահոգությունը «Աստվածամայր» տիտղոսն էր՝ տրված Մարիամին: Նեստորի ուսմունքը հակասում էր ավեքսանդրիացի Կիրիլին և, ըստ իմաստի, իր իսկ սեփական անտիոքիան դպրոցի ուսմունքին: Անտիոքը աստվածաշնչյան մեկնաբանության պատմա-քերականական-տեքստային մոտեցման կենտրոնն էր, իսկ Ալեքսանդրիան մեկնաբանության քառասյուսիկ (այլաբանական) դպրոցը: Նեստորը պաշտոնագրվել է և վտարվում:

Ներշնչանք. Աստված խոսել է մարդու հետ աստվածաշնչյան հեղինակների միջոցով, ովքեր հստակ և ճշգրտորեն արձանագրել են Իր հայտնությունը: Սովորաբար ամբողջ գաղափարը արտահայտվում է երեք տերմիններով.(1) հայտնություն—Աստված գործել է մարդկային պատմության մեջ; (2) ներշնչանք—Նա տվել է հատուկ մեկնաբանություն Իր գործողություններին և նրանց նշանակությանը որոշակի ընտրված մարդկանց՝ արձանագրելու մարդկության համար; և (3) լուսավորում—Նա տվել է Սուրբ Հոգին օգնելու մարդուն հասկանալ Աստծո բացահայտումը Իր մասին:

Նկարագրող լեզու. Օգտագործվում է իդիոմաների հետ, որոնց օգնությամբ գրվել է Հին Կտակարանը: Այն խոսում է մեր աշխարհի մասին այնպես, ինչպես այն ընկալվում է մեր հինգ զգայարաններով: Դա գիտական նկարագրություն չէ, և չպետք է լինի էլ:

Շարահյուսություն/Syntax. Սա հունարեն տերմին է, որը վերաբերվում է նախադասության կառուցվածքին, թե ինչպես են նախադասության տարբեր անդամները միացված իրար՝ ավարտված միտք ստանալու համար:

Շեղություն. Ուժեղ հակվածություն դեպի որոշակի կարծիքի կամ տեսակետի: Մտածելակերպ, որն անհնարին է դարձնում կոնկրետ թեմայի կամ դիրքորոշման նախապաշարումը:

Ոգեշնչում. Տեքստին խորհրդանշական իմաստ տալ: Աստվածաշնչի այլաբանական մեկնաբանության հոմանիշն է, քանի որ այստեղ նույնպես անտեսվում է հաստատված պատմական և գրական կոնտեքստը, իսկ մեկնաբանությունը հիմնվում է ուրիշ չափանիշների վրա:

Որդեգրություն. Սա վաղ կարծիքներից մեկն էր Աստծո հետ Հիսուսի ունեցած կապի մասին: Այն պնդում էր, որ Հիսուսը սովորական մարդ էր բոլոր առումներով և հատուկ կերպով որդեգրված Աստծո կողմից մկրտության պահին (հմմտ. Մաթ. 3:17; Մարկ. 1:11) կամ հարության ժամանակ (հմմտ. Հռ. 1:4): Հիսուսն այնպիսի օրինակելի կյանքով ապրեց, որ Աստված ինչ որ պահի (մկրտություն, հարություն) որոշեց որդեգրել Նրան որպես Իր «որդի» (հմմտ. Հռ. 1:4; Փիլ. 2:9): Սա վաղ եկեղեցու և 8-րդ դարի փոքրամասնության կարծիքն էր: Ոչ թե Աստված մարդ դարձավ (Մարմնացում) այլ ընդհակառակը մարդը դարձավ Աստված:

Դժվար է ասել, որ Հիսուսը, Որդի Աստվածը, հավիտենական Աստվածը, վարձատրվեց կամ փառավորվեց Իր օրինակելի կյանքի համար: Եթե Նա արդեն Աստված էր, ինչպես կարող էր Նա վարձատրվել: Եթե Նա ուներ հավիտենական աստվածային փառք, ինչպես կարող էր ավելի պատվի արժանանալ: Չնայած դժվար է մեզ համար սա ըմբռնել, Հայրը ինչ որ կերպով պատվեց Հիսուսին, այն ժամանակ երբ Հիսուսը կատարյալ կերպով կատարեց Հոր կամքը:

Պապիրոս. Գրվող նյութի տեսակ, որը օգտագործվել է Եգիպտոսում: Այն պատրաստել են գետի եղեգից: Այդ նյութի վրա գրվել են հունարեն Նոր Կտակարանի հնագույն օրինակները:

Պարադոքս. Սա վերաբերվում է այն ճշմարտություններին, որոնք թվում է թե իրար հակասող են, բայց և երկուսն էլ ճշմարտություն, չնայած իրար մեջ ունեն ներքին լարվածություն: Նրանք փոխանցում են ճշմարտություն՝ ներկայացնելով նրա երկու կողմերը: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են պարադոքսային (կամ դիալեկտիկական) զույգերով: Աստվածաշնչյան ճշմարտությունները առանձին աստղեր չեն, այլ համաստեղություններ՝ ձևավորած առանձին պատկեր:

Պարբերություն. Սա արձակի հիմնական մեկնաբանության գրական բաժինն է: Այն ունի մեկ կենտրոնական միտք և դրա զարգացումը: Եթե մենք մնանք դրա գլխավոր մտքին հենված, մենք չենք փոքրացնի կամ մեծացնի կամ էլ բաց թողնի բնօրինակի հեղինակի մտադրությունը:

Պլատոն. Հին Հունաստանի փիլիսոփաներից մեկն է: Նրա փիլիսոփայությունը մեծ ազդեցություն է թողել վաղ եկեղեցու վրա Ալեքսանդրիայի և Եգիպտոսի գիտնականների միջոցով, իսկ ավելի ուշ Օգոստինոսի միջոցով: Պլատոնը պնդում էր, որ երկրի վրա ամեն ինչ երևակայական է և հանդիսանում է հոգևոր աշխարհի բնօրինակը: Ավելի ուշ շրջանի աստվածաբանները Պլատոնի ձևերը/գաղափարները նմանեցրել են հոգևոր արքայության հետ:

A priori. Սա հիմնականում հոմանիշ է «կանխակարծիք» տերմինին: Այն ենթադրում է քննարկում նախապես ընդունված սահմանումների, սկզբունքների կամ դիրքերի հիման վրա, որոնք ենթադրվում են որպես ճշմարտություն: Սա այն է, ինչը ընդունվում է առանց քննության կամ վերլուծության:

Սեպտուագինդ. Այսպես է կոչվում եբրայերեն Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը: Ավանդությունն ասում է, որ այն գրվել է 70 օրում 70 հրեա գիտնականների կողմից Եգիպտոսի

Ալեքսանդրիան գրադարանի համար: Գրվելու ընդունված տարեթիվը 250 Ք.Ա. (իրականում թարգմանության համար, ավելի շուտ, պահանջվել է ավելի քան հարյուր տարի): Այս թարգմանությունը ունի մեծ նշանակություն, որովհետև (1) այն մեզ տալիս է հին տեքստ, որը կարող ենք համեմատել Մագորեթիկ եբրայերեն տեքստի հետ; (2) այն մեզ ցույց է տալիս հրեական մեկնաբանության վիճակը 3-րդ և 2-րդ դարերում Ք.Ա. (3) այն մեզ տալիս է հրեական մեսիական հասկացողություն՝ մինչև Հիսուսին մերժելը: Կրճատ նշվում է «LXX»:

Սինայական հին ձեռագրերի ժողովածու. Ք.Հ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Այն գտնվել է գերմանացի գիտնական Թիսշենդորֆի կողմից Ջերեկ Մուսա լեռան վրա գտնվող Մուրբ Եկատերինայի վանքից, որն ըստ ավանդության համընկնում է Սինա լեռան հետ: Այս ձեռագիրը հայտնի է եբրայերեն ալֆբետի առաջին *x* (*aleph*) տառով: Այն պարունակում է թե Հին Կտակարանը և թե ամբողջ Նոր Կտակարանը: Սա ամենահին երկաթագիր ձեռագրերին:

Սինթետիկ. Եբրայերեն պոեզիայի տեսակներին պատկանող երեք տերմիններից մեկն է: Այս տերմինը վերաբերվում է պոեզիայի տողերին, որոնք կառուցվում են մեկը մյուսի վրա ընդհանուր իմաստով, երբեմն այս տեսակի պոեզիան անվանում են «կոլմիմացիոն» (հմմտ. Սաղ. 19:7-9):

Միստեմատիկ աստվածաբանություն. Սա մեկնաբանության փուլ է, որը փորձում է կապել աստվածաշնչյան ճշմարտությունները ավելի կապակցված և ռացիոնալ ձևերով: Սա ավելի տրամաբանական բնույթ ունի, քան պատմական՝ ներկայացնելով քրիստոնեական աստվածաբանությունն ըստ կատեգորիաների (Աստված, մարդ, մեղք, փրկություն և այլն):

Մուրբ Գրքի համանմանությունը. Արտահայտություն, որը նշանակում է, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է, հետևաբար, նրա տարբեր տեքստերը չեն հակասում իրար, այլ լրացնում են միմյանց: Այս նախապայմանը հիմք է օգտագործելու զուգահեռ հատվածներ՝ աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու համար:

Սփյուռք/Diaspora. Հատուկ հունարեն տերմին, որն օգտագործում էին Պաղեստինի հրեաները, այն հրեաների համար, ովքեր ապրում էին Խոստացյալ երկրի աշխարհագրական սահմաններից դուրս:

Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու (Vaticanus). Ք.Հ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում: Սկզբում պարունակել է ամբողջ Հին Կտակարանը, անկանոն գրքերը և Նոր Կտակարանը: Բայց, որոշ մասեր կորել են (Ծննդոց, Սաղմոսներ, Եբրայեցիս, հովվական թղթեր, Փիլեմոն և Հայտնություն): Սա շատ օգտակար ձեռագիր է՝ հեղինակային բնագրերը իմանալու համար: Այն նշվում է մեծատառ «B»-ով:

Վերափոխում. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես կոնտինում, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում», որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխությանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագործ»-ի տեսությունը, որը լրջությամբ է մոտենում բնօրինակի տեքստին, բայց թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ձևեր և իդիոմաներ: Իրական լավ քննարկում թարգմանության տարբեր տեսությունների մասին գտնվում է Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչն իր ամբողջ ճոխությամբ» (Fee and Stuart's *How to Read the Bible For All Its Worth*), էջ 35:

Վերլուծական քառարան. Սա ուսումնասիրություն անելու միջոց է, որը թույլ է տալիս որոշել բոլոր հունարեն ձևերը Նոր Կտակարանում: Սա հիմնական սահմանումների ժողովածու է, հունարեն ալֆբետիկ կարգով գրված: Բառացի թարգմանության հետ միասին օգնում է հունարեն լեզուն չիմացող հավատացյալին, վերլուծել Նոր Կտակարանի հունարեն քերականական և շարահյուսական ձևերը:

Վուլգատա. Սա Հերոմի կողմից թարգմանված Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունն է: Սա Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հիմնական թարգմանությունն է: Այն արվել է 380 ականներին Ք.Հ.:

Տեքստային քննադատություն. Աստվածաշնչի ձեռագրերի ուսումնասիրություն: Տեքստային քննադատությունը անհրաժեշտ է, որովհետև բնագրերը մեզ չեն հասել, իսկ արտագրությունները տարբերվում են միմյանցից: Մենք փորձում ենք բացատրել տարբերակներն ու մոտենալ (որքան հնարավոր է մոտ) Հին և Նոր Կտակարանների հեղինակների բնագրերին: Այն հաճախ կոչվում է «ցածր քննադատություն»:

Textus Receptus. Անվանումը վերցված է Էլզևիրի հունարեն Նոր Կտակարանի հրատարակչությունից 1633թ. Ք. Հ.: Հիմնականում հունարեն Նոր Կտակարանի այս տարբերակը հիմնված է մի քանի ուշ հունարեն ձեռագրերի վրա և Երասմոսի(1510-1535), Ստեփանոսի (1546-1559) և Էլզևիրի (1624-1678) լատիներեն թարգմանությունների վրա: Ա. Թ. Ռոբերտսոնը (Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը) [A. T. Robertson, *An Introduction to the Textual Criticism of the New Testament*], էջ 27), ասում է, որ «բյուզանդական տեքստը գործնականորեն Textus Receptus-ն է»: Բյուզանդական տեքստը հին հունարեն ձեռագրերի երեք խմբերից ամենաարժեքավորն է (արևմտյան, ավեքսանդրիան և բյուզանդական): Այն պարունակում է սխալներ, որոնք հարյուրամյակներ շարունակ արել են արտագրողները: Ինչևէ, Ա. Թ. Ռոբերտսոնը նաև ասում է, որ «Textus Receptus տեքստը մեզ է հասել հիմնականում ճշգրիտ տեսքով» (էջ 21): Սա հունարեն ձեռագրային ավանդույթ է (հատկապես Էրասմոսի երրորդ հրատարակությունը, 1522) հիմք է հանդիսանում Հակոբոս թագավորի Թարգմանության համար 1611թ.:

Բարբիական հուդայականություն. Շրջան, որը սկսվել է բաբելոնյան գերության ժամանակ (586-538թթ. Ք.Ա.): Երբ քահանաների և տաճարի ազդեցությունը դադարեց, հրեաների կյանքը սկսեց կառուցվել տեղական սինագոգի (ժողովարան) շուրջ: Այդ հրեական մշակույթի տեղական կենտրոնները, հաղորդակցությունները, երկրպագությունները և Աստվածաշնչի ուսուցումները դարձան հրեական կյանքի կենտրոնները: Հիսուսի օրերում այս «դպիրների կրոն» զուգահեռ էր քահանաների կրոնի հետ: Ք.Հ 70թ. Երուսաղեմի անկումից հետո դպիրների կրոնը, որում գերիշխում էի փարիսեցիները, սկսվեց կառավարվել հուդայական կրոնական կյանքով: Այն բնութագրվում է Թորայի գործնական, օրինապաշտական մեկնաբանությամբ ինչպես բացատրվում է բանավոր ավանդության մեջ (Թալմուդ):

Ցածր քննադատություն. Տես «տեքստային քննադատություն».

Փոխանություն/մետոնիմիա. Սա պատկերավոր լեզու է, երբ մի բանի անունը օգտագործվում է մի ուրիշ բան ներկայացնելու համար: Օր. «թեյնիկը եռում է» այնինչ թեյնիկի միջի ջուրն է եռում, և ոչ թե թեյնիկն ինքը:

Քրիստոսակենտրոն. Այս տերմինը ընդգծում է Քրիստոսի կենտրոնական դերը: Ես այն օգտագործում եմ, կապված այն գաղափարի հետ, որ Հիսուսը Տերն է ամբողջ Աստվածաշնչի: Հին Կտակարանը մատնանշում է Նրան; Նա է կատարողն ու նպատակը Հին Կտակարանի (հմմտ. Մաթ. 5:17-48):

Օրինականություն. Դիրք, որին բնորոշ է ծայրաստիճան ուշադրություն կանոններին կամ ծեսերին հետևելը: Շեշտը դրվում է մարդու կողմից կատարված որոշակի օրենքների վրա, որով ուզում են Աստծուն հաճելի գտնվել: Հարաբերությունների նշանակությունը որևէ մեկի կամ ինչ որ մեկի հետ, սրտի վիճակը, շարժառիթները փոքրանում են և ավելանում է դրանց նշանակության կատարումը, այն ժամանակ երբ, երկուսն էլ կարևոր ասպեկտներ են ուխտի հարաբերության համար՝ սուրբ Աստծու և մեղավոր մարդկության միջև:

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

Ես հատուկ ուշադրություն չեմ դարձնում հավատքի խորհրդանիշերի վրա, այլ գերադասում եմ հաստատել Աստվածաշունչը ինքն իրենով: Ինչևէ, ես գիտակցում եմ, որ հստակ ձևավորված հավատքի սկզբունքները մարդկանց թույլ կտան, նրանք, ովքեր ծանոթ չեն ինձ, գնահատել իմ վարդապետական հայացքները: Մեր ժամանակներում այնքան շատ աստվածաբանական սխալներ ու շփոթություններ կան, որ ես կարևոր եմ համարում առաջարկել իմ աստվածաբանության հետևյալ համառոտ վերլուծությունը:

1. Աստվածաշունչը, թե Հին և թե Նոր Կտակարանները, ներշնչված, անսխալական, հեղինակային, հավիտենական Աստծո Խոսքն է: Այն Աստծո ինքնա-հայտնությունն է, արձանագրված մարդկանց կողմից Իր գերբնական առաջնորդության ներքո: Այն մեր միակ Աստծո և Նրա նպատակների հստակ ճշմարտության աղբյուրն է: Այն նաև մեր միակ հավատքի աղբյուրն է և Իր Եկեղեցու ուղեցույցը:
2. Կա միայն մեկ հավիտենական Աստված, Արարիչ և Փրկիչ: Նա է ամեն բաների ստեղծիչը, տեսանելի և թե անտեսանելի: Նա Իրեն հայտնել է որպես սիրող և գթացող, չնայած որ Նա նաև արդար է և սուրբ: Նա Իրեն հայտնել է երեք տարբեր անձերով; Հայրը, Որդին և Սուրբ Հոգին; Նրանք տարբեր Անձեր են, բայց միևնույն էությամբ:
3. Աստված ներգործուն կերպով կառավարում է Իր աշխարհը: Նրա արարչագործության համար գոյություն ունի հավիտենական ծրագիր, որը անփոփոխ է և անհատապես կենտրոնացած է այնպես, որ թույլ է տալիս մարդու ազատ կամքը: Ոչինչ տեղի չի ունենում առանց Աստծո գիտության և թույլտվության, բայց Նա թույլ է տալիս թե հրեշտակներին և թե մարդկանց իրականացնելու իրենց անձնական ընտրությունը: Հիսուսը՝ Աստծո Ընտրյալը, և մենք բոլորս, ըստ հնարավորին, ընտրված ենք Նրանում: Դեպքերի մասին Աստծո կանխատեսությունը չի նշանակում, որ մարդիկ պետք է ամեն բան անեն այնպես, ինչպես կանխատեսված է եղել: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր մտքերի և գործերի համար:
4. Մարդկությունը, չնայած ստեղծվեց Աստծո պատկերով և առանց մեղքի, գերադասեց ըմբոստանալ Աստծո դեմ: Չնայած Ադամին ու Եվային փորձեց գերբնական արարածը, նրանք պատասխանատու էին իրենց գիտացաբար եսակենտրոնության համար: Նրանց ըմբոստությունը ազդեց մարդկության և արարչագործության վրա: Մենք բոլորս Աստծո ողորմության և շնորհքի կարիքն ունենք, թե ադամական մեղքի հետ համագործակցելու և թե մեր անձնական կամավոր ըմբոստության համար:
5. Աստված հոգացել է մեղավոր մարդկության ներման և վերահաստատման միջոցը: Հիսուս Քրիստոսը, Աստծո Միածին Որդին, մարդացավ, ապրեց անմեղ կյանքով և քավչարար մահով վճարեց բոլոր մարդկանց մեղքի փոխարեն: Նա է միակ ճանապարհը Աստծու հետ վերահաստատվելու և հաղորդակցվելու համար: Չկա ուրիշ փրկության միջոց բացի Նրա ավարտած գործի վրա ունեցած հավատքի միջոցով:
6. Մեզանից յուրաքանչյուրը անձնապես պետք է ընդունի Աստծո առաջարկած ներումն ու վերածնունդը Հիսուս Քրիստոսում: Սա իրականանում է գիտակցաբար վստահելով Աստծո խոստումներին Հիսուսի միջոցով և ինքնակամ հրաժարվում է մեղքից:
7. Մենք բոլորս ստանում ենք ամբողջական ներում և վերածնունդ Քրիստոսի վրա ունեցած մեր հավատքի հիման վրա և մեղքի ապաշխարություն: Ինչևէ, այս նոր հարաբերության ապացույցը հանդիսանում է փոխված և փոփոխվող կյանքը: Աստծո նպատակը մարդկության համար ոչ միայն երկինքն է ապագայում ապաստվող, այլ նաև քրիստոսանմանությունը հիմա ներկայում: Նրանք, ովքեր իրապես փրկված են, երբեմն ընդունակ են մեղանչելու, բայց նրանք կշարունակեն հավատքով և ապաշխարությամբ ամբողջ իրենց կյանքի ընթացքում:
8. Սուրբ Հոգին «երկրորդ Հիսուսն է»: Նա ներկա է աշխարհում, կորածին դեպի Քրիստոսն առաջնորդելու և զարգացնելու քրիստոսանմանություն փրկվածի մեջ: Հոգու պարզները տրվում են փրկության ժամանակ: Պարզները Քրիստոսի կյանքի և ծառայության իմաստն է, որոնք բաժանված են Իր ամբողջ մարմնով մեկ՝ եկեղեցում: Պարզները, որոնք հիմնականում Հիսուսի վերաբերմունքներն ու շարժառիթներն են, պետք է գործի դրվեն Հոգու պտուղներով: Հոգին գործում է մեր ժամանակներում, ինչպես գործում էր աստվածաշնչյան ժամանակաշրջանում:
9. Հայրը հարուցյալ Հիսուս Քրիստոսին դարձրել է ամեն բաների Գ-ատավորը: Նա վերադառնալու է երկիր՝ դատելու ամբողջ մարդկությանը: Նրանք, ովքեր վստահել են Հիսուսին և որոնց անունները գրված են Գ-առան կյանքի գրքում, կստանան իրենց հավիտենական փառավորյալ մարմինները

Նրա գալստյան ժամանակ: Նրանք Նրա հետ կլինեն հավիտյան: Ինչևէ, նրանք ովքեր մերժել են արձագանքել Աստծո ճշմարտությանը հավիտյան պիտի բաժանված լինեն Եռյակ Աստծո ջերմ հաղորդակցությունից: Նրանք կդատապարտվեն սատանայի և նրա հրեշտակների հետ միասին: Անշուշտ այսբանը ամբողջը չէ, բայց հույսով եմ այն ձեզ կտա իմ սրտի աստվածաբանական ուղղությունը: Ես սիրում եմ այս արտահայտությունը:

«Գլխավորը—միաբանություն, երկրորդականը—ազատություն, ամեն ինչում—սեր»: